Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1979

Ար 1
Ա 44

Խմբագիր՝ Բ. Հ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Ա $\frac{70303\ (563)}{705\ (01)\ 79}$ 79 «Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմով համար, 1979

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1862

ՀԱՐԿԱՎՈՐ Է ՕԳՆԵԼ ՉՔԱՎՈՐՆԵՐԻՆ

Անուշիկ գարնան զվարթ օրերում
Կրավեցին իմ սիրտ ծաղկազարդ վայրեր,
Նաև միտքս ընկան էնտեղի եղբարքս,
Կամեցա գնալ մենակ, անընկեր։
Մնաս բարյավ ասի բազմամարդ տեղին,
Սկսա շրջել ազատ հավերում,
Ելա մի բարձր բլուրի վերա
Դիտել, թե՝ ինչ կան նորա չորս կողմում։
Իսկույն երևցան աչքս առաջև
Կանաչած, ծաղկած, ընդարձակ դաշտեր,
Շենք և շինություններ, մարդիք, անասուններ,
Առուք և վտակք, որքնթաց գետեր։
Լցված ցնծությամբ իրա վերևից,
Չբոսնում էի նորա ստորատում,
Էսքան բարձրությանց վայելողների
Տեսությանն էի միայն փափագում։
Հանկարծ մի ծեր մարդ տեսա առաջիս,
Որ ման էր գալիս գլուխը քաշ գցած.
Ուներ նա հագին հին մաշված շորեր
Եվ իրա ձեռքին գավազան բռնած։

Մոտեցա նորան և բարովեցի,
Նա էլ քաղցր խոսքով բարևս կրկնեց,
Տեսա, որ հայ է, շատ ուրախացա,
Նա էլ հրճվանքով հոր պես ինձ գգվեց։
Ինձանից հարցրուց, թե ի՞նչ պատճառով
Ես ման եմ գալի սար ու ձոր ընկած,
Պատասխան տվի, թե ծեր տեսության
Կարոտը բերավ, որով եմ էրված։
«Հայրիկ,— ասացի,— ասա ինձ խնդրեմ,
Ինչպե՞ս եք այստեղ դուք կառավարվում,
Ունի՞ք կայք, կալված և հանդիստ կենցաղ,
Թե՞ միշտ եք այդպես ստոր վիճակում»։
Գլուխը շարժեց ծերունին տխուր։
«— Ցավ է ինձ ասել,— ասաց նա լալով,—
Ահա անցանեն իմ կյանքի օրեր,
Բոլորն էլ սրտիս ցավ ու վիշտ տալով։
Տեսնո՞ւմ ես դու այդ սիրուն դաշտերը,
Որոնք գրավում են շատերի հոգին,
Չկարծես, թե դրանց մենք ենք վայելում,
Այլ մեր ոսոխներն ու մեր թշնամին։
Իսկ մենք այս փոքրիկ տեղումը սխմված
Մնացել ենք անշարժ-տխուր վիճակում.
Արհեստ, գիր, լեզու, օրենք ասած բանդ
Չգիտենք թե ինչ են նշանակում։
Թե կամիս բոլոր մեր պակասության
Եվ մեր նեղության դառն պատճառներն
Իմանալ, որդյակ, այդ դժվարին է,
Վասն զի լուռ են մեր լեզուներն»։
Լռեց ծերունին, ցողաց արտասուքն,
Տխրության ամպը աչքունքը պատեց՝
Ես էլ մնացի նրա մոտ շվարած,
Էստ որում սրտիս մեծ ցավ պատճառեց։
Եվ համբուրելով ծերունվո աջը,
Դարձա այնտեղից դեպի մյուս գյուղեր.
Բոլոր փորձանքներն աչքիս տակն առած,
Էնկա մեմածեծ սարեր ու ձորեր։
Ինչե՞ր եմ տեսնում, ո՞վ կարե պատմել,

Հայ կանայք բոկոտն՝ սուր-սուր քարերում
Մանգալիս տեսա, սիրտս, հոգիս թնդաց.
Տեսնում եմ շատ բան, բայց լուռ անցկենում։
Անցկացա, եկի իմ խեղճ բնակարան,
Տեսածիս վերա սկսա մտածել,
Թե ի՞նչ միջոցով կարող են արդյոք
Ազգասեր անձինքն այն որբոց օգնել,
Ո՛չ դրամ, ո՛չ նյութ, չէ ինչ հարկավոր,
Միայն թե տեսնեն քննեն, իմանան,
Թե ի՞նչ է պատճառն, որ նրանք աղքատ,
Կարոտ են մնում արհեստի, ուսման։
Եկեք, իմ եղբարք, որդիք արամյան,
Միմյանց անխտիր կերպով մենք օգնենք,
Թե՛ քաղաքացի և թե՛ շինական
Նոր հոգի առած՝ իրարու գգվենք։

1862

1882—1890

ԾԻՏԸ ԵՎ ԲԱՂԵՆ

(Մանկական խաղ)

Ծիտը ծառին ծլվլում է.
— Ծի՛վ, ծի՛վ, ծի՛վ.
Բաղեն գլխին պտրտվում է.
— Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ...
Ծիտը լռեց, ծիտը վախեց.
— Վա՛յ, վա՛յ, վա՛յ...
Բաղե՛, թը՛ռռ, բաղե՛, թը՛ռռ.

— Հա՜յ, հա՜յ, հա՜յ...
Բազեն թռավ,
Բազեն փախավ,
Ի՜նչ լավ էլավ..
— Հե՜-հե՜-հե՜...
Միտի՜կ միտի՜կ, պիծի՜կ միծիկ,
Պրտպրտուրի՜կ, չըլպըլտուրիկ,
Դու լա՜վ պրծար չար բազեի
Սուր ճանկերից, հա՜-հա՜-հա՜...

1882

ԱՔԱՂԱՂ

(Մանկական խաղ)

Աքաղաղը կանչում է.
— Սուղրուղո՜ւ,
Ղու-ղու-ղո՜ւ.
Պառավ նանը զարթնում է.
— Տա-տա-տա՜,
Պա-պա-պա՜...
Աքլա՜ր, ինչո՞ւ կանչեցիր,
Ինչո՞ւ նանին զարթեցրիր.
Ա՜խ դու-դո՜ւ,
Ա՜յ ջու-ջո՜ւ
Ա՜յ նանի, ջա՜ն նանի,
Մեզ մի վեր կացրնի,
Թող մի քիչ էլ մնանք,
Քնից լավ կշտանանք։

Աքլաթը շատ է կանչում,
Աքլաթը քեզ է խաբում,

Աքլա՜ր, ինչո՞ւ կանչեցիր,
Ինչո՞ւ նանին զարթեցրիր.
Ա՜խ դու-դո՜ւ,
Ա՜յ ջու-ջո՜ւ։

1882

ԱՌԱՎՈՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ

(Մանկական)

Արեգակը դուրս է եկել
Պսպըղալով.
Շողքը հերթից ներս է ընկել
Շողշողալով.
Միտը ծառին կըշկըշում է
Ծըլվըլալով.
Ջորումն առուն քըշքըշում է
Վըշվըշալով.
Ծույլ աղայի քունն է տարել
Խռըմփալով.
Տրեխները շունն է տարել
Մըռմըռալով։

1882

ՀՈՎՎԻ ԱՆԿՈՂԻՆԸ

Սարի լանջն է մահճակալ,
Ջեյոտ քարը՝ գլխակալ.
Մի հին կապերտ ուսերին,—
Այս է Հովվի անկողին։

Երբ անձրև է կաթկաթում,
Եվ կապերտը՝ թրխկթրխկում,
Հովիվն անուշ քնի մեջ
Քաղցրը երազ է տեսնում,
Եվ խնդում, ծիծաղում.
Ուխա՜յ, ուխա՜յ, սիրո՛ւն հովիվ,
Քունդ անո՛ւշ...

1882

ԱՐԵԳԱԿ

(Մանկական)

Արև՛, արև՛, ե՛կ, ե՛կ.
Զիզի քարին վե՛ր եկ.
Սև-սև ամպեր, հեռացեք,
Արևին ճամփա տրվեք։

Թողեք դա գա մե՛զ մոտ,
Դրա լույսին ենք կարոտ.
Կարմի՛ր արև, ե՛կ, ե՛կ,
Նախշուն քարին վե՛ր եկ։

Արևն հաղթեց ամպերին,
Շողքը ձգեց սարերին,
Զիզի քարը տե՛ս, տե՛ս,
Պսպղում է ոսկու պես։

Սիրուն արև, մի՛շտ եկ,
Զիզի քարին վե՛ր եկ։

1882

ՃԱԽԱՐԱԿ

Մանի՛ր, մանի՛ր, ի՛մ ճախարակ,
Մանիր սիպտակ մալանշներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցավեր։

Ձեթ եմ ածել ականջներդդ,
Նոր շինել եմ շրտըվիկ,
Դե՛հ, շո՛ւտ շարժիր լայն թևերդդ,
Ոստեր շինիր սըրուլիկ։

Մանի՛ր, մանիր, ի՛մ ճախարակ,
Լիսեռնիկդդ պտըտիր,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Իլկիդ վըրա փաթաթիր։

Տիգրանիկըս գուլպա չունի,
Հանդ է գնում ոտաբաց,
Կաբրիելըս չուխա չունի,
Միշտ անում է սուգ ու լաց։

Մանի՛ր, մանի՛ր, ի՛մ ճախարակ,
Մանիր սիպտակ փաթիլներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցավեր։

Զրվալ չունինք, չաթու չունինք,
Ոչ սամոտեն, ոչ պարան,
Այսպես աղքատ դեռ եղած չենք,
Կտրվել է ամեն բան։

Դեռ հարս էի, որ գործեցի
Քանի կարպետ, խալիչա,
Բայց դրանցից շուտ զրկվեցի,
Հիմա չունիմ մի քեչա։

Կարմիր օրըս երբ մնացավ
Իվ պարտք մնաց թեև քիչ,
Պարտատիրոջ սիրտն էլ սնցավ—
Ծիծաղ տարավ ամեն ինչ։

Մանի՛ր, մանիր, ի՞մ ճախարակ,
Մանիր սիպտակ քուլաներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հագամ իմ ցավերը։

1882

ՍԵՐՄՆԱՑԱՆ

Ահա եկան աշնանային թուխպ օրեր,
Մաղմղում են մանրահատակ կաթիլներ.
Ծառերն իրանց տերևներից մերկացան,
Կռունկները շարան-շարան անց կացան։

Անացել է դաշտը անթիվ ցեղերով,
Բայց մի կողմից գեռ վարում են արորով,
Սերմնացանը գոգնոցն ածած սերմնացուն,
Սերմ է ձրգում ապաշելով աստրծուն.

«Ո՛վ, տեր աստված, դո՛ւ իմ ցանքը պահպանես,
Առատ անձրև, կարմիր արև չընկնայես.
Մեկ բուռն ահա ես տալիս եմ մկներին,
Այս մեկ բուռն էլ ագռավներին, ծառերին։

Բայց մարախը գոհ չի մնալ մի բռնով,
Երկու կըտաճ, թող կշտանա սրանով.
Մեկ բան էլ կա, որ անունը չեմ տալիս,
Այն դու գիտես... վերևից է նա գալիս։

Դու սրանցից արտըս պահիր անվնաս,
Ես տերտերից չեմ խնայել կալամաս.
Վանականներ, գործակալներ ինչքան գան,
Բոլորեքյանք առատ բաժին կըստանան։

Կերթամ Մարաս խունկ ու մոմով, մատաղով,
Միայն արտըս դու պահպանիր ապահով։
Էլ ի՞նչ ասեմ, աստված, ինքդ լավ գիտես,
Թե ինչ պարտքի, պատուհասի մեջ եմ ես.

Գող-ավազակ մի կողմից են կողոպտում,
Պարտատերըս մյուս կողմից է ինձ խեղդում։
Դրանց ձեռքից եթե մի բան է մնում,
Այն էլ գայլի կամ ցավի է զոհ դառնում։

Մի տուն լիքը երեխեքս մերկ, քաղցած,
Տարին առատ, բայց ես չունիմ կորեկ հաց.
Հույսըս ահա ոտքիդ տակին փռած է,
Ֆո սուրբ աչք ուրբա վրբա տարածե»։

1882

ՏԱՎԱՐԱԾԻ ՃԱՇԸ

Մի խամ տավարած,
Բավական քաղցած,
Աղբրի մատ նստած,
Ուտում էր շոր հաց։
— Ցամաք մի՛ ուտիլ,
Ասաց ընկերը։
— «Բա ինչո՞վ ուտեմ,
Ուրիշ բան չունեմ»։

— Դանակո՜վ, եղբա՜յր, դանակո՜վ...
— «Այդ լավ ասացիր.
Դանակով կտրեմ,
Ջրումը թրջեմ,
Էլ ցամաք չուտեմ...»։

1882

ՊԱՐՏԻԶՊԱՆ

Ամառն է. կարծես կրակ է բարձրանում
Դեռնի երեսից և հուրհրատում.
Ոչ շունն է հաչում, ոչ ճիճին երգում,
Գորտն էլ է լռել, էլ չի կռկռում։

Ամենքն էլ փախել, հով տեղ են գտել,
Իրանց բներում լռվել պապանձվել.
Միայն մի հատիկ մարդ է երևում,
Խոր ընկած դաշտում, առվի եզերքում։

Կանգնած է մարդը արևի տակին,
Ոտն ու ծունկը բաց, բահը դրած ուսին,
Մի շապիկ միայն ունի նա հագին
Եվ մի սպիտակ թասակ կա գլխին։

— Բայց ի՞նչ մարդ է նա և ի՞նչ է շինում,
Արևի տակին ինչո՞ւ է այրվում։
— Նա պարտիզպան է, պարտեզ է ջրում,
Սեխն ու ձմերուկը այնպես է հասցնում։

1882

ՊԱՌԱՎԻ ՀՈՐԹԸ

Ջյուն էր գալիս փաթիլ-փաթիլ,
Հետն էլ անձրև կաթիլ-կաթիլ.
Այս միջոցին մի պառավ կին
Հորթ էր փնտրում դաշտի միջին։

Կովը եկավ տավարիցը,
Կուրծ ու ծրծեր կաթով լիքը.
«Հորթուկս ո՜ւր է»,— նա բառաչեց,
Խեղճ պառավին լացացրեց։

Մինչդեռ այսպես պառավ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Հանկարծ լսվեց մի բարակ ձայն,
Կովն իմացավ, որ հորթն է այն։

Կովը վազեց բառաչելով,
Պառավն ետքից տրնքտրնքալով,
Կորած հորթը մորը գտավ,
Լիք ծրծերը բերանն առավ։

Ծրծեց բոլոր կաթն ու տկզեց,
Տանտիկնոջը բան չըթողեց.
Բայց պառավը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին։

1882

ԱՄԻՍՆԵՐ ԵՎ ՁՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը կապույտ մանուշակ,
Մայիսին բացվում է վարդը,
Սոխակն երգում անուշակ։

Հունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ հուլիսը առատ ցորեն,
Օգոստոսը՝ տանձ ու խնձոր
Եվ ուրիշ շատ հատուն մրգեր։

Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը.
Հոկտեմբերը՝ կաքմեր գինին,
Նոյեմբերը՝ քաղին ու տակը։

Դեկտեմբերին ձյուն է գալիս,
Հունվարին ծածկվում սար ու ձոր,
Փետրվարին սկսվում է
Փոփոխակի ցուրտ ու տաք օր։

Ահա այսպես բոլոր տարին
Թավալվում է չորս շրջանում,
Այս պատճառով չորս ժամանակ,
Չորս եղանակ է մեզ բերում։

1882

ՋԱՂԱՑՊԱՆԻ ՆՆՋԱՐԱՆԸ

Երեք-չորս հատ ջաղացքար
Կարգով շարված պտրտվում են,
Իրանց ահեղ գոռոցով
Ամբողջ շենքը դղրդում են.

Չախչախների չրխչրխկոցից
Մարդի ականջ խլանում է,
Իսկ ջաղացպանն ալրաթափախ.
Խոր քունն ընկած խլրտմփում է։

Բայց ջաղացը եթե հանկարծ
Կտրեն ձայները, լռեն, սառչի,
Ինչպես մի թունդ թնդանոթից՝
Ջաղացպանը վեր կրթռչի...

1882

ՄԱՆՈՒՇԱԿ

Սիրո՛ւն մանուշակ, ինչո՞ւ ես թոռմել,
Կապույտ աչիկներդ ինչո՞ւ ես փակել,
Քեզ ո՞վ նեղացրեց, ո՞վ վատ բան ասեց,
Քո անուշ հոտովդ ո՞վ չի զմայլեց։

— Սիրուն մանուկներ, դուք ինձ սիրեցիք,
Իմ ծաղիկներից փնջեր կապեցիք,
Բայց կոշտ ձեռներից, կոպիտ ճանկերից
Ինձ չազատեցիք, չըպահպանեցիք։

Քնքուշ սրտերը շուտ են կոտրվում,
Քնքուշ ծաղիկները քաստով թառամում.
Քանի որ անխիղճ մարդիկ կըլինին,
Երկար չեմ ապրիլ ես այս աշխարհում։

1882

ՀՆՁՎՈՐՆԵՐ

(Մանկական խաղ)

Ահա եկավ խոտ հարողը,
Ուսին դրած գերանդին.
Բոլոր խոտը սա հարել է,

Բան չի թողել մեր հանդին։
— Ա՛յ խոտ հարող, ասա տեսնենք,
Դու ի՞նչպես ես խոտ հարում։
— Այսպես ահա, լա՛վ նայեցեք,
Ես այսպես եմ խոտ հարում—
Հե՛պ, հո՛պ,
Հե՛պ, հո՛պ։
— Ա՜խ, ի՜նչ լավ է, եկեք սովրենք,
Մենք էլ այսպես խոտ հարենք—
Հե՛պ, հո՛պ,
Հե՛պ, հո՛պ։

◆◆◆

Ահա՛ եկավ մեր հնձողը,
Ձեռքին փայտե մատնոցներ,
Պատրաստել է սուր մանգաղը,
Պետք է հնձե մեր արտեր։
— Հնձո՛ղ եղբայր, ասա տեսնենք,
Դու ի՞նչպես ես հունձ անում։
— Այսպե՛ս ահա, լա՛վ նայեցեք,
Ես այսպես եմ հունձ անում—
Հե՛պ, հո՛պ, հե՛պ,
Հե՛պ, հո՛պ, հե՛պ,
— Ա՜խ, ի՜նչ լավ է, եկեք սովրենք,
Մենք էլ այսպես հունձ անենք.
Հե՛պ, հո՛պ, հե՛պ։
Հե՛պ, հո՛պ, հե՛պ։

1882

ՑԱԽԱՎԼԻ ԳԱՂՏՆԻՔԸ

(Հին վրույց)

Շատ հին ժամանակ մի թագավոր կար
Զորեղ, իմաստուն և շատ էլ արդար։
Դա որ ծերացավ, մոտեցավ մահվան,
Չըգիտեր, թե ո՛վ կըհաջորդե իրան.
Թեպետ նա ուներ տասներկու որդի,
Բայց չէր իմանում, թե որին ընտրի։
Մեծը ուժով էր, բայց անգութ ու չար,
Նըրանից փոքրը՝ թույլ և ցավագար.
Երրորդը՝ անհոգ ու խելքից պակաս,
Չորրորդը՝ անմիտ, թեև անվնաս.
Այսպես ոչ մեկը հոր սրտովը չէր,
Ոչ մեկը նըրա բնույթը չուներ.
Միայն մի քիչ հույս կրտսերն էր տալիս,
Բայց նա էլ հոր մոտ չէր գնում գալիս,
Այս պատճառով էլ հայրը չգիտեր,
Թե արդյոք նա ի՞նչ շնորհքի տեր էր։

◆◆◆

Թագավորն այսպես շատ որ մտածեց,
Հանելուկի պես մի բան հնարեց.
Մի թարմ ցախավել իր առջև դրած,
Որդոցը կանչեց և նրանց ասաց.
— «Սիրելիք, այսօր ես ձեզ կանչել եմ,
Որ վերջին կամքս ամենքիդ հայտնեմ.
Ինչպես տեսնում եք, ես ծերացել եմ,
Եվ բավական է, որքան ապրել եմ.
Շուտով իմ նախնյաց ճամփովը կերթամ,
Նրանց պես ես էլ սև հող կըդառնամ.

Բայց քանի ողջ եմ, շունչս բերնումը,
Կուզեմ ձեզ հայտնել՝ ի՞նչ կա մտքումը.—
Ահա ձեր առջև մի թարմ ցախավել,
Որ ես հենց այսօր կապել եմ տրվել.
Ձեզանից ով որ կըկոտրե սըրան,
Իմ թագն ու գահը ես կըտամ նրան։
Դե՛հ, հառաջ եկեք, ուժերդ փորձեցեք,
Տեսնեմ ձեզանից ո՞ըդ կըկոտրեք»։

◆◆◆

— Հա՛յր, ես կըկոտրեմ,— ասաց մեծ որդին,
Եվ վստահությամբ մոտեցավ ավլին.
Վեր առավ ավելն ու ծունկը կալավ,
Քաշեց, քաշքըշեց, ոչինչ չի եղավ.
Շատ քրտինք թափեց, շատ չարչարվեցավ,
Դեղնեց, սփրթնեց և ետ քաշվեցավ։
Հետո երկրորդը եկավ վեր առավ,
Նա էլ իր ճղբոր դառն օրին հասավ.
Երրորդն էլ եկավ իր ուժը փորձեց,
Բավական տանջանք չորրորդն էլ կրեց,
Մյուսներն էլ իրանց բախտը փորձեցին,
Բայց ցախավելը չի էլ ծռեցին.
Ամենից վերջը փոքրը մոտեցավ
Եվ իր հոր առջև այսպես խոսեցավ.

◆◆◆

— Հա՛յր, ես չե՞մ ուզում իմ ուժը փորձել,
Իմ եղբարց նման իզուր չարչարվել.
Ես եբեխա չեմ, որ ձեռքս մեկնեմ
Դեպի լուսինը, որ նրան բռնեմ.

Ջուրը կըխեղդե, կրակը կայրե,
Ով այս չըգիտե, թող նա փորձ անե։
Ես ուժ տեսնում եմ ամենայն բանում,
Թե՛ երկրիս վրա և թե՛ երկնքում.
Առ մեկ բարակ ծեղ, մի մազ կամ մի թել,
Մեծ ուժ կըգտնես ամենի մեջ էլ.
Թե՛ փոքրիկ միջատ, թե՛ ուղտ ահագին,
Ամենքն էլ ուժից մեկ բաժին ունին։
Կա և խելքի ուժ, ինչպես և սրտի,
Աչքի, ականջի, ձեռքի և ոտքի.
Ուժ չի ունենալ ոչ մի առարկա,
Եթե մասներում միություն չըկա.
Մասներն իրար հետ երբ սերտ կապ ունին,
Նըրանք անկասկած ուժով կըլինին.
Այսպես շատ անհատ երբ որ միանան,
Մեծ և չափազանց մեծ ուժ կըստանան.
Մեզ լավ օրինակ մրջիմն ու մեղուն,
Թե նրանք խմբով ինչեր են անում.
Նրանց պես եթե մարդիկ միանան,
Լեռներ կըշրջեն, եթե կամենան.
Եվ ի՞նչքան լճեր, ի՞նչքան ջրանցքներ
Միացած ուժով կարող են շինել։
Ես քո տերության ցրված ուժերը,
Ինչպես ցախավլիդ ճկուն ճղները,
Ամուր կապերով կապած կըպահեմ,
Այս է քո միտքը, ես ինչքան գիտեմ.
Բայց որ իմ միտքը լավ հասկացնեմ,
Տեսե՛ք ավելը ինչպես կըկոտրեմ»։
Եվ այս ասելով՝ նա վեր է առնում,
Ավլի կապերը քանդում, արձակում.
Ճըկուն ճղները վերցնում է հատ-հատ,
Ամենի առջև կոտրտում զատ-զատ։
— Ապրի՞ս, որդյա՛կս,— ասում է հայրը,—
Քե՛զ է արժանի իմ թագն ու գահը։
Գրկում է որդուն, ճակատից պաչում,
Եվ թագն իր ձեռքով գլխին է դնում։
— Տեսե՛ք,— ասում է մյուս եղբայրներին,—

Դուք չընախանձեք ձեր երբոր փառքին.
Եթե սրրա հետ սերտ սիրով մնաք,
Ավելի մեծ ուժ և փառք կըստանաք.
Իսկ եթե զատվիք և ջոկ-ջոկ լինիք,
Քանդված ավելի պես շուտ կըկոտրտվիք։
— Մենք հնազանդ ենք,— ասում են նրանք,—
Տալով եղբորը պատիվ ու հարգանք.
Իմաստուն որդին հասավ մուրազին,
Դուք էլ նրա պես հասնիք ձերինին։

ՊԱՐԶԱՄԻՏ ՀՈՎԻՎ

Օգոստոսին էր, թե հուլիս ամսում,
Լավ չեմ հիշում,
Մի անմեղ հովիվ, քաղաք չըտեսած,
Մտավ բազարը, մահակն ուսին դրած,
Ելըշկոտալով, զարմանալով։
Խրտնած պախրի պես շատ դես-դեն ընկավ,
Վերջը կանգ առավ
Մրգավաճառի խանութի առջև
Եվ աչքը ձըգեց լիք թաբախներին,
Հասուն մրգերին։
Ի՞նչ պտուղ ասես, որ նա չըտեսավ,
Չըհիացավ.
Տեսակ-տեսակ տանձ ու խնձոր,
Թուզ ու սալոր, ունաբ ու հուն,
Կարմիր, փայլուն։
Հովիվը նայեց մրգավաճառին
Ու մնաց ապշած,
Որ այնքան հասուն մրգերի միջին,
Չեռք չի դիպցնում մեկին կամ մյուսին.
«Սա կույր կըլինի», ինքն իրան ասեց
Եվ փորձել ուզեց.
Դեպի բախկալը մահակը մեկնեց

Եվ քիչ էր մնում, աչքն էր կ«խում.
— Է՛յ, ի՞նչ ես անում,— բախկալը գոռաց
Սաստիկ բարկացած։
— Բա՛... ես հենց իմացա, դու կույր կըլինիս,—
Հովիվը ասաց.—
Բայց եթե կույր չես, լավ ես նկատո՞ւմ,
Բա այդ մրգերից ինչի՞ չես ուտում...

ԱՆՎՆԱՍ ՀԱԳՈՒՍՏ

Իմ գլխին պետք է մի թեթև գլխարկ,
Որ ինձ պահպանե ցրտից, արևից,
Թեկուզ ճակատը աննշան լինի,
Այդ վնաս չունի։
Մի բաճկոն է պետք պինդ շալից կարած,
Որ ինձ պահպանե ցրտից, արևից,
Թեկուզ կոճակը ոսկըրից լինի,
Այդ վնաս չունի։
Ոտքերիս համար պետք են կոշիկներ,
Որ ինձ պահպանեն ցրտից, արևից,
Թեկուզ հասարակ և անբիտ լինի,
Այդ վնաս չունի։
Որքա՞ն խեղճեր կան մերկ, ոտաբոբիկ,
Չունին հագնելիք և ոչ ուտելիք.
Ինձ հարկավոր է հասարակ հագնել
Եվ նրանց օգնել։

1884

Եկար բարով,
Երթաս բարով.
Եկեք, երեխե՛ք, եկեք,
Չեռք ձեռքի տանք, պար բռնենք.

Այսօր տարին նորոգվեց,
Նոր օր, նոր ժամ մեզ բերեց,
Հինն անցավ,
Նորն եկավ
Բարո՜վ, բարո՜վ, բարո՜վ.
Մայրիկն այսօր մեզ տրվեց
Մեղր ու չամիչ ու ասեց.
— Քաղցր ու անուշ պառավեք,
Ալևորիք և տեսնեք
Շա՜տ տարի,
Շա՜տ բարի,
Բարո՜վ, բարո՜վ, բարո՜վ,
Շնորհավո՜ր նո՜ր տարի,
Քո գալուստըդ շնորհավոր,
Դու մեզ համար այս տարի
Բարի եղիր ամեն օր,
Մինչև կաս,
Ու կերթաս
Բարո՜վ, բարո՜վ, բարո՜վ։

ՁՄԵՌ

Ձմեռն է, ձմեռն, սիրուն երեխեք,
Ձմեռն է, և դուք դողում, մրսում եք.
Բայց դուք մենակ չեք, ես էլ եմ մրսում,
Ես էլ եմ ձեզ պես դողում, սարսռում։
Բայց գիտե՞ք արդյոք ի՞նչ է ձմեռը,
Այդ պատկառելի համարված ծերը.
Օ՜հ, մի՛ հարցրնեք, դուք կզսպասափեք,
Երբ դրա բարքը պատմեմ ձեզ մեկ-մեկ։
Այդ անիրավը ուր ոտք է դնում,
Առանց խղճալու մահ է տարածում։
Երեսին առած ըսպիտակ գիմակ,
Մեջնից ծածկում է սև դեմքն այլանդակ։

◆◆◆

Շատ ժամանակ չէ ինչ որ դա եկավ,
Եվ դուք լավ տեսաք, թե ինչե՛ր արավ.
Դրրա երկյուղից ջուրը քար կտրեց,
Քշքշան առուն լռվեց, պապանձվեց,
Դալար բույսերը սառան, փետացան,
Նախշուն հավքերը թռան հեռացան.
Բայց էլի շատին իր ճանկը ձրգեց,
Բուք-բորան արավ, բոլորին խեղդեց.
Սիրուն վարդենու թուփը չորցրրեց,
Մոխակի լեղուն տակիցը կտրեց։

◆◆◆

Ո՞վ դու կեղծավոր փարեխեցի ծեր,
Դու ունիս, գիտենք, շողոքորթներ էլ,
Որոնք բորանքդ, թիկնիդ չեն տեսնում,
Ոչ բուք-բորյազիդ տակ ցրտահարվում.
Սառցեղեն սրտին ի՞նչ բուք, ի՞նչ բորան
Կարե՞ ներգործել, կամ ի՞նչ ցուրտ, ի՞նչ բան.
Նրրանք սրղղում են ինչպես անզգա
Ձյունով պատանած զոհերիդ վրրա.
Եվ դու, երեսպաշտ, լավ ես որոշում
Հարրստին խեղճից և ջոկ-ջոկ որսում.
Մեկին տալիս ես կճյա վառարան,
Մյուսին և ոչ մի խեցյա կրակարան.
Մեկին՝ թանկագին մազեղեն մուշտակ,
Մյուսին՝ և ոչ մի ցնցոտի մաշկյակ,
Մեկին տալիս ես մի սիրտ սառցեղեն,
Մյուսի թոքերը հանում ես կրծքեն.
Մեկին տալիս ես մեջոց զվարճության,
Մյուսին՝ դառն օրեր, օրե՞ր հեծության.

Մեկին տանում ես դեպի մոլություն,
Իսկ մյուսին՝ դեպի դառն ստրկություն.
Մեկին կաշառով, մյուսին երկյուղով
Թակարդ ես ձգում դիվական ցանցով...

◆◆◆

Անմե՞ղ պատանիք, սիրուն երեխեք,
Փոքր-ինչ հեռացա, դուք ինձ կընկերեք.
Եթե իմանաք, թե այս բոպեիս
Ի՞նչ պատկերներ են առաջըս գալիս.
Տեսե՞լ եք արդյոք խախուտ խրճիթներ,
Բոբիկ, գլխաբաց, տկլոր մանուկներ,
Դատարկ ամբարներ, հորեր, մարաքներ,
Աղի պես լիզված երկայն մսուրներ.
Աչքերը պլըշած՝ քաղցած տավարներ,
Սիրտ պատրոտորող մայեր, բառանչներ...
Ջրաղաց չըկա,— ջուրը սառել է.
Ճանապարհ չըկա,— ձյունը կապել է.
Թե՛ մարդ, թե՛ տավար՝ միակերպ քաղցած,
Ողբում, լալիս են մահվան դուռն ընկած։

◆◆◆

Օրը կարճացել, գիշերն երկարել,
Լույսը նըվաճվել, խավարն է տիրել,
Երկինքն ամպապատ, գետինքը սառած,
Գարունը հեռու, ցուրտը կատաղած—
Այսպե՞ս է ահա սոսկալի ձմրան
Ալիքով ծածկած պատկերը դաժան...

◆◆◆

Ցուրտ է, սաստիկ ցուրտ, սիրուն երեխեք,
Եթե ինձ նման դուք էլ մրսում եք,
Եկեք միասին մի հնար գտնենք,
Ձմռան ճանկերից մեր գլուխն ազատենք։
Դուք ձեր մանկական անարատ մտքով,
Ես իմ հասակիս բազմամյա փորձով,
Եթե կամենանք, խելք խելքի կըտանք,
Եվ ինչից ասես՝ կրակ կստանանք,—
Կրակ լուսատու, պայծառ, անստվեր,
Որ տաքացնե սառցեղեն սրտեր,
Որ կենդանացնե գոսացած ձեռներ,
Որ հալեցնե սառցապատ լեռներ.—
Օրինակ առնենք մեզ կիզ-ապակին,
Եվ մենք կըհասնենք մեր նպատակին։

1884

ԱՐԵՎ

Արև՛, արև՛, դու մեզանից
Երբ հեռացար դեպ հարավ,
Ձմեռն եկավ և ամեն ինչ
Հափշտակեց ու տարավ։

Աստված սիրես, էլ մի՛ գնար,
Մի՛ թողնիր մեզ քեզ կարոտ,
Քեզ կըպատվենք, քեզ կըգովենք
Միշտ, իրիկուն, առավոտ։

Որքան գոհ ենք, որ դու բերքեր
Գարնան անուշ եղանակ,

Ա՜խ, երանի գարուն լինի
Տարին բոլոր ժամանակ։

Տես թե ինչպե՞ս փթթթել են
Սառ ու ծաղիկ, կանաչ խոտ,
Տես թե ինչպես տարածվել է
Ամենայն տեղ անուշ հոտ։

Քեզ են գովում թռչնիկները
Իրանց քաղցր դայլայլով,
Հովիվը իր մեղմ սրինգով,
Հոտաղն անուշ հոլոլով։

Չէ՛, արև ջան, էլ չըգնաս,
Էլ չըթողնես մեզ կարոտ,
Գնա քնի՛ր գիշերները,
Առավոտը եկ մեզ մոտ։

1884

ԳԱՐՈՒՆՔԻ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ

Սիծեռնակը համբավ բերավ նոր գարունքից,
Թե՝ ահա նա մոտենում է մեզ դաշտերից.

Այս համբավը երբ որ լսեց ծեր ձմեռը,
Փընթփընթալով քաշվեց գնաց ցուրտ լեռները.

Բայց գարունը գնաց հասավ հետևիցը
Եվ դուրս հանեց ձյունով պատած լեռներիցը.

Ձեռք ու ոտքը պինդ շղթայով լավ կապոտեց,
Մասիս լեռան սառնարանի բանտը ձրգեց.

Բայց ափսոս որ այս պատիժը շատ թեթև էր,
Որովհետև միայն ութ ամիս պիտի տևեր։

ԼՈՒՍՆԱՀԱՅ

— Հայրի՛կ, ինչո՞ւ մեր Բողարը
Միշտ հաչում է լուսնի վրան.
Մի՞թե պայծառ լուսնյակը
Մեկ վնա՞ս է տալիս նըրան։

— «Ո՛չ, որդյակ իմ, ոչ թե վնաս,
Այլ լույս, միայն լույս է տալիս,
Իսկ շանն՝ իբրև գայլի ցեղի՝
Լույս գիշերը գուր չի գալիս։

Բայց լուսինը խում չըգիտե՞,
Որ իր վրա հաչողներ կան,—
Նա լուռ ու մունջ՝ բակ բոլորած՝
Շարունակում է իր ճամփան։

Մենք էլ, որդյա՛կ, լուսնի նման
Պետք է լույս տանք մութ աշխարհին,
Եվ համարենք, թե չենք լսում
Մեզ վըրա գուր հաչողներին»։

1885

◆◆◆

Նասրադդին խոջան մեկ օր ուզեցավ
Անմեղ ամբոխին խաբել ու ծաղրել,
«Գիտե՞ք,— ասաց նա,— այս-ինչ բլբի տակ
Հնուց մնացած գանձ է լույս քնկել.

Հենց որ մոտենանք այն-ինչ բեռ քարին,
Ավազի նման կըտեսնենք փռված

Արծաթ ու ոսկի, պեսպես ակնեղեն.
Եվ ուրիշ զարդեր հակներով դարսած...»

Այս որ լսեցին՝ թե մեծ, թե փոքրը,
Մի-մի պարկ առած վազել սկսան,
Որն էլ ձի հեծավ, որը սայլ լծեց,
Որ անբավ գանձից մեծ մասն ստանան։

Երբ տեսավ խոջան մարդկանց վազելը,
Կասկածի եկավ, զարմացավ սաստիկ,
«Երևի ասածս ուղիղ է,— ասաց,—
Որ գլխապատառ վազում են մարդիկ...»
Ինքն էլ շտապով մի պարկ վերցրրեց,
Իր խաբած մարդկանց հետևից վազեց...

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ծիծեռնակը բույն էր շինում,
Ե՛վ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շյուղ կպցնելիս՝
Առաջվան բույնն էր հիշում։

Մեկ անգամ էր նա բույն շինել
Եվ շատ անգամ կարկատել,
Բայց այս անգամ վերադարձին
Բույնն ավերակ էր գտել։

Այժմ նորից բույն էր շինում,
Ե՛վ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շյուղ կպցնելիս՝
Առաջվան բույնն էր հիշում։

Նա հիշում էր անցած տարին
Իր սնուցած ձագերին,

Որոնց ճամփին հափշտակեց
Արյունարբու թշնամին։

Բայց նա կրկին բույն էր շինում,
Ե՛վ շինում էր և՛ երգում,
Ամեն մի շյուղ կպցնելիս՝
Առաջվան բույնն էր հիշում։

1886

1887

Արի՛ դու, արի՛,
Քո գալըդ բարի՛,
Սիրուն նոր տարի,
Նոր օրեր բեր մեզ։
Զյուն տուր սարերին,
Անձրև՝ արտերին,
Կարկուտը՝ չարին,
Ջով արևը՝ մեզ։
Անթուփ ծաղիկից,
Աններկ կարմրուկից,
Բարի ցավերից
Ազատ պահիր մեզ։
Մայրական գթով,
Գրկաբաց ձեռքով,
Ուրախ ժպիտով
Առ քո գիրկը մեզ։
Տարին բոլորեց,
Երեսը շրջեց,
Նոր դիմակ դրավ,
Նոր դեմք ցույց տրվավ։
Մարդիկ խնդացին,

Կերան, խմեցին,
Նորադեմ տարուն
Դիմավորեցին,—
Մինչ շատ թշվառներ՝
Այրիք ու որբեր
Ցամաք չոր հացի
Կարոտ մնացին...

ՄԱՆԿԱԿԱՆ ԹՈԹՈՎԱՆՔ

Աշխարհիս վրա մեկը կար միայն,
Որ ինձ սիրում էր հոգվով անարատ.
Նա իմ մայրիկն էր— իմ անուշ Ազին,
Հոգվույս ու մարմնույս ծնողն հարազատ։

Միտքս թռչում է միշտ դեպի երկինք,
Երբ որ հիշում եմ մայրիկիս անուն,
Այդ նրանից է, որ չեն երկրային
Ո՛չ նրբա ստինք, ո՛չ նրա լեզուն։

Նա ինձ կաթ տրվավ, տրվավ և լեզու,
Մինը քան ըզմյուսն ավելի անուշ,
Մեկով իմ փափուկ մարմինն էր սնվում,
Մյուսով զարգանում իմ հոգին քնքուշ։

Ի՞նչ կա այնքան քաղցր ու սննդարար,
Որքան անարատ կաթն է մայրական,
Ո՛վ կարա խոսիլ այնպես սրտաբուխ,
Ինչպես որ մայրն է թոթովում մանկան։

Կարծես հիմա էլ տեսնում եմ մորս,
Ես իբրև մանուկ գրկումն եմ ահա,

Նուրբ շրթունքներիս զարկում է մատով,
Որ իր հետ ձայնեմ «աղո՛ւ» կամ «ագա՛»

Ես թոթովում եմ, հրճվում է մայրս,
Իմ մեջ գտնում է շնորհքի նշան,
Չար աչքից ազատ պահելու համար՝
Վրրաս կարում է պես-պես թալիսման։

ՀՈՆԻ ԿՈՐԻԶԸ

Տարեմուտի երեկոյին
Մայրս թխեց կարկանդակ,
Մեջը դրավ հոնի կորիզ,
Իբրև բախտի նշանակ։

«Կորիզն,— ասաց,— ում որ ընկնի,
Դովլաթավոր կըդառնա,
Ո՛ւր որ գնա, ի՞նչ գործ բռնե,
Փառք ու պատիվ կըստանա»։

Կարկանդակը բաժանեցինք,
Կորիզն ընկավ ինձ բաժին,
Եղբայրներս սրահեղելով՝
Նախանձեցան իմ բախտին։

«Կույր է բախտը, սուտ չէ ասած»,
Մեծ եղբայրս փնթփընթաց,
«Մի՞թե սա է ամենիս մեջ
Աշխատավոր, բանիմաց...»

Մեկէլներն էլ հավանեցան
Մեծ եղբորս ասածին.—
«Իրա՛վ, իրա՛վ, չէր արժանի»,
Միաբերան ձայնեցին...

◆◆◆

Մայրըս ասաց. «Խելոք կացեք,
Ահա կըգա Նոր-Տարին,
Նա որ տեսնե ձեզ կռվելիս՝
Պարգև չի տալ ոչ մեկին։

Բայց որ տեսնե դուք սիրով եք
Եվ խռով չեք իրարից,
Այնուհետև ինչ որ ուզեք,
Չի խնայիլ ձեզանից»։

Այս ասելով՝ նա մեզ տըվավ
Տեսակ-տեսակ մրգեղեն,
Չիր ու չամիչ, տանձ ու խնձոր
Եվ զանազան քաղցրեղեն։

Քաղցրը կերանք ու քաղցրացանք
Եվ խնդացինք շատ ու շատ,
Չարազ արինք նուռ, սերկևիլ,
Ունաբ, սալոր, թուզ, փշատ։

«Հոնի կորիզն» այնուհետև
Բոլորովին մոռացանք,
Եվ շատ սիրով իրար գրկած,
Պառկոտեցանք, քնեցանք...

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Երբ տեսնում եմ խաղալիս
Անմեղ, անհոգ մանուկներ,
Իսկույն միտըս են գալիս
Իմ մանկության քաղցր օրեր,

Օր ու գիշեր անհանգիստ
Խաղում էի անդադար,
Աշխարհային հոգ ու վիշտ
Անհայտ էին ինձ համար։
Իմ ընկերն էր ամեն ինչ—
Թե՛ շնչավոր, թե՛ անշունչ,
Չըկար համր և ոչինչ—
Չըկար մի բան անմըռունչ։
Աղբյուրն ինձ հետ խոսելիս՝
Լսում էին քարերը,
Անտառն իր մոտ կանչելիս՝
Թնդում էին ձորերը։
Բարի էին ամենքը,
Չըկար մի հետք չարության,
Նույնիսկ օձն ու կարիճը
Տիպար էին բարության։
Քանի անգամ բռնել եմ
Օձի պոչից ու գլխից
Եվ գազանը — ապշել եմ—
Հեռացել է ինձանից.
Ինչ էր երկյուղ կամ ամոթ
Չըգիտեի բնավին,
Ամենքն էին ինձ ծանոթ,
Ես բարեկամ ամենին։
Իմ առաջին ծանոթը
Մեր կեղծավոր փիսոն էր,
Շատ անգամ անամոթը
Ձեռիս հացը կը խլեր։
Նրա նման չէր Ջանգին՝
Մեր իմաստուն մեծ շունը,
Նա իմ դայակն էր անգին,
Չեմ մոռանում անունը։
Ինչպես արթուն պահապան՝
Գիտեր վըրաս միշտ հսկել.
Երբ մոտըս էր այդ հսկան,
Էլ ո՞վ կարար ինձ դիպչել։
Բայց և օտար շները

Չէին գաղտուկ խնձոր վիրա-
Մեղավորն ու անմեղը
Տեսնում էին աշկոտաս-
Զին ինձ քացի չէր տալիս,
Թեկուզ բրանդի ագին,
Նա, որ մեծին տեսնելիս
Պատրաստ ոներ աքացին։
Այսպես եղն էլ կամ կովը,—
Որ շատ էլ չէր հյուրընկալ,—
Երբ կանցնեի մոտովը՝
Չէր հանդգնիլ հարու տալ։
Այս երջանիկ վիճակս
Շուտով անցավ հեռացավ.
Վարդանանց աշխարհըս
Փուշ ու տատասկ փոխվեցավ...

1889

ՄԱՆՈՒՇԱԿ

Ասա ինձ, մանուշակ։
Ինչո՞ւ ես այդպես վիշտ
Դուրս եկել մեն-մենակ։
Դեռևս չի բացվել
Ոչ մի տեղ քեզ նման
Հոտավետ մի ծաղիկ։
— Ես չունիմ մյուսների
Գեղեցիկ հասակը,
Ոչ նրանց հոտաստուգ
Զարդարուն ու շքեղ։
Դուք ինձ չեք նկատիլ,
Երբ ես կանգնում
Նրանց հետ մի տեղում։

ՏԻԳՆԻՆԻՆ

(Մանրուկան խաղ)

Հռիփսիկը կշանել էր
Իր մի աղջիկ տիկնիկին,
Պետք է շիներ գահը ու բաժինք,
Պետք է զուգեր հարմնացվին։
Օր ու գիշեր աշխատում է
Մեր Հռիփսոն անդադար,
Ինչե՞ր ասես, որ չի շինում
Կտորներից անհամար։
Տարիներով տանը պահած
Չրթի պատառ չըմնաց,
Ինչ կար մաշված կամ կիսամաշ՝
Բաժինքումը կուլ գնաց։

◆◆◆

Ահա եկան խնամիքը—
Անոն, Եղսոն ու Նուշին,
Պիտի տեսնեն նոր բաժինքը,
Որ պատկեն տիկնիկին։
Խնամիքը մատուցվան
Տան դահլիճումը ծալապատակ,
Հռիփսոն նրանց թեյ է տալիս
Ինքնաեռից անհատակ։
Կոտրած գլուխ էլ ինքնաեռը,
Բաժակները՝ խնամատներ։
Շաքարի տեղ քարի մանրուքը,
Բայց խմում են մեր հյուրերը։

Բավականին օդ կուլ տրվին,
Կում անելով թեյի տեղ,
Իրանց օրում չէին խմած
Այսպես եփած թեյ համեղ։
Պռոշները լպստելով՝
Թեյի սարքը վերցրին,
Տեսակ-տեսակ քաղցրավենիք
Կոտրած խոնչով մոտ բերին։
Մի խնձոր էլ մաս-մաս արած,
Ինչպես հաղորդ փրկության,
Գդալիկն էլ ավլի շյուղ էր,
Նրանով կերան քաղցրացան։

◆◆◆

— Բաժինքը բե՛ր, խնամի Հուռի,
Ասաց մեկը նրանցից,
Ութ տարեկան պառավ Եղսոն,
Որ մեծն էր ամենից։
Հռիփսիկը մեջտեղ դրավ
Մի բավական մեծ բոխչա,
Առաջ հանեց ցանցով գործած
Մի մատնաչափ խալիչա։
— Շա՛տ սիրուն է,— ասաց Եղսոն,—
Դալար կենան մատները...
Իսկ Աննիկը չը հավանեց,
Թուխ են,— ասաց,— թելերը։
Բայց կողինքին հավանեցին,
Խաս կտորից էր կարած.
Բալիշները բմբլով լցրած,
Ուլունք կոճակներ արած։
Մախմուր երեսը մութաքի,
Աբրեշումի փունջերը,

Նախշուն վերմակը ատլասի
Իռոլաո տարավ խելքները։
— Ապրի՛, ապրի՛ Հռիփսիկը,—
Մեր խնամիքն ասացին,
Ամեն կտոր վերցնելիս՝
«Բարով մաշեն» կրկնեցին։
— Տեսե՛ք,— ասաց Հռիփսիկը,—
Դեռ էլի կան շատ բաներ.
Մեջտեղ բերավ հազար ու մեկ
Մանր մժուր կտորներ։
Սպիտակեղեն ուներ կարած
Մի դյուժինից էլ ավել,
Եվ այդ բոլորն ինքն իր ձեռքով
Լվացել էր, օսլայել։
Քանի՛ թղթի արկղիկներում
Բաներ ուներ պատրաստած,
Արծաթեղեն ու ոսկեղեն,
Բայց ոչ մետաղ ժանգոտած։
Սոխի կճպից ոսկեղենն էր,
Սխտորինից՝ արծաթին.
Փող էլ ուներ սոխի կճպից
Տասը ոսկի շատ գեղին...

◆◆◆

— Դե բե՛ր, դե բե՛ր մեր հարսնացուն,
Տեսնենք ինչպես ես զուգել.—
Տեսան հարսին. շատ սիրուն էր,
Բայց սկսան շշշնջել.
Խնամիքանց մեկն ասում էր՝
Դեղ է քսել երեսին.
Մյուսն ասում էր՝ ոչ, երեսը
Դեմ է արել կրակին։

— Տեսե՞ք,— ասաց Հոգեսիրին,—
Ահա աղջիկ փաշվաշա,
Ունքերը խաս աբրեշում է,
Նախշուն աչքերն է շուշա։
Կրծքի քորոցն ադամանդ է,
Իսկ ճակտինը զուտ ոսկի,
Ակնջի օղերը զմրուխտ են,
Մատնիքները փիրուզի։
— Շա՞տ մի գովիր, քորոցնե՞ր են
Տեսակ-տեսակ գույներով,
Անցյալ օրը չաքշի Գևոն
Տան էր տալիս մի հացով։...

◆◆◆

— Բավակա՛ն է, բերեք, տղեն,
Նստեցրեք միասին.
Նարոտ բերեք կանաչ-կարմիր,
Կապենք վզերն երկուսին։
Եղսոն հանեց իր ծոցիցը
Մեր տիկնիկի նոր-փեսան,
Մեկն իր ձեռքը զուռնա շինեց,
«Դո՛ւ-դո՛ւ» կանչեց բարձրաձայն։
Հավաքվեցան աղջիկ, տղա,
Ծրգ երգեցին, պարեցին,
Ինչպես կարգն էր հարսանիքի՝
Պակաս ոչինչ չըթողին...

◆◆◆

Խաղացե՛ք, ո՛վ մանուկներ,
Շատ խաղացեք,
Բայց թե տիկնիկ և թե բաժինք
Ձեր իսկ ձեռքով շինեցեք։

1889

ԱՌ ՂԵՎՈՆԴ ՀԱՅՐ ԱԼԻՇԱՆ

Ով դու հիասքանչ սոխակ եդեմին,
Հանճարեղ երգիչ բյուր ելևէջով,
Որ սավառնում ես անհունս ի վեր,
Եվ մերթ ոստոստում գողտրիկ տոտերով։

Ով խորազնին նկարիչ հոգվո,
Որ սերովբեի հրեղեն թևով
Նկարագրում ես անտեսանելին
Երկնային լուսո աննյութ գույներով։

Ով դու Պրոմեթևս, մեծազոր հսկա,
Անտխեղծ լուսո հրույն սիրահար,
Եվ դու կաշկանդված մի ժայռի վրայ
Սևագլուխ անգղից սիրտդ կոցահա՞ր...

Ով դու Նահապետ հազար թոռների,
Որ չունիս մի հատ ժառանգ քեզ նման,
Որ քո հանճարից ունենար բաժին,
Որին վայելեր քո գահն անմահ։

Դու միայն գիտես լեզուն բնության,
Քեզ հետ են խոսում շնչավոր, անշունչ,
Հայրենի երկրի ամեն մի թռչնիկ
Քո գովքն է երգում այսպես սրտառուչ...

1889

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

(Մանկական մաղթանք)

Դաշտը սիրուն է դալար բույսերով,
Եվ անուշահոտ գույն-գույն ծաղկներով.
Ուսումնարանը նույնքան սիրուն է
Իր ուշիմ, խելոք ժիր մանկիկներով։

Սիրուն է ծառը կանաչ ճղներով,
Փունջ-փունջ կախոտված իր պտուղներով,
Ուսումնարանը նույնքան սիրուն է
Իր առաքինի խելոք սաներով։

Ճաշված, պահպանիր դու շատ օրերով
Մեր անդաստանը իր մշակներով,
Եվ մենք նրանում զուգվինք, զարգարվինք
Դեղեցիկ ուսման գույն-գույն փունջերով...

1887

ՀՐԱՎԵՐ

Աքլորը կանչեց, օրը լուսացավ,
Արևն էլ վառ-վառ ելավ, բարձրացավ,
Մարդ և անասուն, գազան և թռչուն,
Ամենքն էլ իրենց գործին են գնում։

Մրջյունը բերնով իր կերն է տանում,
Մեղուն ծաղիկներից հյութեր է ծծում,
Դաշտը գույնզգույն ծաղկով է զուգվել,
Մարգագետինը կանաչ հագնվել։

Անտառը ձմեռվա քնից արթնացած,
Իր տերևները շարժում է կամաց,
Ձկնորսներն իրենց ուռկանն են քաշում,
Հոտաղներն իրենց եզները քշում։

Դուք էլ, մանուկներ, շուտ հագնվեցեք,
Ձեր գրքերն առեք, դպրոց գնացեք,
Դպրոցում կառնեք ուսում, կրթություն,
Դպրոցը կտա ձեզ բարություն։

1906—1910

ՓԻՂՆ ՈՒ ՉԱՏԻԿԸ

Փի՛ղն հսկա մի կենդանի,
Ջո՛րս ուղտի չափ հե՛շտ կլինի,
Ի՛նքն զգայուն
Ե՛վ իմաստուն,
Վրան կառնե մի ամբողջ տուն։
Թե ինչպե՞ս է տեսքովն էլ նա,
Պատկերի՛ մեջ լա՛վ կերևա,—
Գլուխը հաստ մի ծառաբուն,
Քի՛թը երկար յո՛թը կանգուն,
Մյուս կողմերն էլ սրանց նման
Կո՛շտ ու կոպիտ, հսկայական։

◆◆◆

Այսպես մի փիղ ժամանակով
Ա՛նց էր կենում մե՛ծ քաղաքով։
Հե՛նց որ տեսան այդ կենդանին,
Ե՛զն ու գոմեշ, ձի՛ն ու ջորին,

Ո՛ւղտն ու ե՛զը, շո՛ւնն ու կատուն,
Սարսափելով՝ փախան իսկույն.
Չվախեցավ միայն մի շուն,
Կամ՝ ճիշտն ասած՝ փոքրիկ շնիկ.
Փոքրիկ շնիկ,
Բայց շատ ճարպիկ,
Պստիկ—
Ջստիկ...
Ջստիկն աղմուկ բարձրացրեց
Եվ հաչելով հասկացրեց
Մե՛ծ շներին,
Բողարներին,
Թե՝ փախչելը ամոթ բան է,
Փիղն ի՞նչ է, որ մեզ սպանե։
Այս ասելով՝ վրա վազեց,
Փղի ոտքից մի պինդ կծեց։
Փիղն այդ զգաց,
Բայց լուռ մնաց։
Երբ Ջստիկը մեկ էլ խածեց,
Փիղը արագ պտույտ գործեց,
Որ շնիկին բռնե շուտով,
Կամ մի զարկ տա երկայն քթով։
Ջստիկ շնիկն այդ հասկացավ,
Ճարպկությամբ մի կողմ անցավ.
Կրկին աղմուկ բարձրացրեց,
Մեծ շներին խրախուսեց։
Հավաքվեցին մեծ շները,
Ջանգին, Ջրանգին և մյուսները,
Հարայ-հրոց բարձրացրին
Եվ բլրաչափ զանգի փղին
Վախեցրին
Ու փախցրին։

◆◆◆

Ճշմարիտ է, մեր Ջստիկին
Հին ժամանակ տնաց արին,
Մեղադրեցին
Ու ասացին,
Թե ինչպե՞ս է հանդգնացել
Ու մեծ փղի վրա հաչել։
Բայց երբ խելքով հասունացան,
Գլխի ընկան
Ու իմացան,
Որ մեծե՛րն են լինում վախկոտ,
Իսկ փոքրե՛րը՝ քաջ ու սրտոտ,
Թե ա՛յս բանը բնակա՛ն է,
Իսկ պատճա՛ռը պատմակա՛ն է։

◆◆◆

Բայց դուք, փոքրեր, երբ մեծանաք,
Ո՛չ մի բանից չվախենաք,
Թո՛ղ լինի փիղ, ա՛րջ ու վարազ,
Գա՛յլ ու առյուծ, վա՛գր ու հովազ,
Հարձակվեցեք անահ սրտով,
Եվ անխոռոչ՝
Թե՛ միայնակ
Եվ թե՛ խմբով...

1906

ԱՐՄԻԿՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ

— Նայի՛ր, Արմիկ, դեպի վեր,—
Ասաց մայրը որդեսեր,—
Տե՛ս, լուսինը երկնքում
Ինչքա՜ն սիրուն է փայլում։
— Այո, մայրիկ,—
Ասաց Արմիկը,—
Խնդրիր, թող գա,
Մեզ մոտ մնա...

ՍԱԳ

Սագիկ-մագիկ, իմ սիրունիկ,
Ես քեզ կտամ քաղցր ջուտիկ,
Որ դու ուտես, շուտ մեծանաս,
Ուրախ ապրես, զվարճանաս։
Երբ մեծանաս, մեծ սագ դառնաս,
Ես կխնդրեմ իմ մայրիկիս,
Որ նա ժողվե քո փետուրներ
Եվ ինձ համար շինե բարձեր։

ԿԱՏՈՒ

Կատուն եկավ,
Փխսի՜կ, փխսի՜կ,
Հազար նազով,
Ինչպես հարսիկ,
Դունչը սրբեց
Թաթիկներով,
Մազը սանդրեց
Ջանչիկներով.
— Կատու, կատու,
Է՞ր ես տրտում.
Թե՞ մկներն են
Հիմա արթուն։
Կատուն ասեց.
— Միաո՜, միաո՜.
Այսինքն թե՝
— Այո՛, այո՛։

ԳԼՈՒԽ, ԹԵ ԳԼԽԱՐԿ

(Նվեր կաթողիկոսական պատգամավորներին)

Երբ որ ընտրության լինեք ձեռնամուխ
Դուք գլխարկ կընտրեք և ոչ թե գլուխ։
Ի՞նչ է վեղարը, եթե ոչ գլխարկ,
Որ պարփակում է մի գլուխ դատարկ։

Կուզեք ընտրեցեք մի աշխարհական,
Թող լինի անգամ մի մեծ գիտնական,
Բայց չէ՞ որ նա էլ վեղար պիտ կրի,
Եվ ինչ որ սև է, նրան համակրի.
Ուրեմն էլ ի՞նչ հարկ մտմտալ իզուր,
Թե վեղարներից ո՞րն է բութ կամ սուր։

1908

ԱՂՎԵՍՆ ՈՒ ԳԱՅԼԸ

(Նոր առակ)

Աղվեսն ու Գայլը շատ մտերմացան
Եվ ընկերացան.
Եվ ահա մեկ օր սրանք կամեցան,
Որ գնան դառնան
Մեկը՝ ոչխարած,
Մյուսը՝ սագարած։
Ու պետք էր հովվի հագուստ հագնեին,
Բայց ո՞ւր գտնեին։
Խելոք աղվեսը չհուսահատվեց,
Գայլ ընկերոջ հետ նա այսպես խոսեց.
— Սիրելի ընկեր, իմացած կենաս,
Որ ինչ շուլ-փալաս
Հագիդ ունենաս,
Հովիվ կրդառնաս,
Մենք գազաններս մեր բունակներով,
Կերակուրներով
Մեկս մեկէլից չենք զանազանվում,
Իսկ մարդ աւածդ իր ոչ մի բանում
Մեզ չի նմանում։
Մարդկանց մեկն ունի սարի նման տուն,
Իսկ մյուսը չունի գետնափոր մի բուն.
Մեկը լափում է հազար տեսակ բան,
Մյուսը չի ճարում ոչ մի շերեփ թան.
Մեկը ծփում է զառ ու ղումաշում,
Մյուսը մերկ, բոբիկ, ոտներն է ճաշում.
Այս խեղճերիցն է սարի հովիվն էլ,
Հագուստ ու կապուստ նրան ո՞վ է տվել.
Մի հին թաղիք է վիզն անցկացրած,
Մի մոթալ փափախ՝ բուրդը դուրս պրծած.
Իսկ այդ ի՞նչ է, որ մենք ձեռք չբերենք,
Հովիվից էլ լավ մեզ չզարդարենք...

Հենց այս խոսքում
Մեկ էլ էն տեսնեմ՝
Ահա գալիս է մի ձի չափ ընկած,
Գուլը փորն ընկած...
Սրանց որ տեսավ՝ ավելի խրտնեց,
Գուլը վայր գցեց,
Իսկ ինքը փախավ գլուխն ազատեց։
Գայլն ուզեց վազել, որ ձիուն հասնի,
Իր բանը տեսնի,
Աղվեսը նրան չթույլատրեց,
Այլ խորհուրդ տվեց,
Թե՝ «ահա մեզ լավ յափնջացուներ,
Էլ ժամանակդ զուր մի՛ կորցներ.
Թաղիքն արա երկու կտոր,
Որ գյուղ չերթանք այսպես տկլոր.
Յափնջու մեջ որ փաթաթվենք,
Էլ ո՞վ կասի որ մենք մարդ չենք»։
Եվ ձևեցին,
Կապկըպեցին
Մի-մի յափնջի, մի մոթալ փափախ,
Բայց փաչեքնին բաց, պոչերնին կախ-կախ...

Իրիկվա մթին այս նոր տարազով,
Նազով ու սազով
Գայլն ու Աղվեսը որ գյուղ չըմտա՞ն,
Մեկ էլ ի՞նչ տեսան...
Ահա երկու շուն՝ Զանգի-Զրանգի
Առյուծի հանգի...
Սրանց առաջը կտրում են, հաչում,
Հետն էլ կլանչում,
Բոլոր շները մի տեղ հավաքում։
Գազանահաչ էր, գեղացոց ծանոթ,
Ինչպես անգուման տրաքած թնդանոթ,
Ամենքին հանկարծ ոտքի կանգնեցրեց
Եվ ամեն զենքով սպառազինեց.
Որը վեր առավ մի քրդի նիզակ,
Որը՝ մի եղան կամ հասած գազանակ.

Մեկը՝ մի բհիր չափարից հանած,
Մյուսը՝ մի կացին երկայն կոթ արած,
Որը՝ մի հին թուր
Ածլու նման սուր,
Որը՝ մի դաշույն կամ երկայն շամփուր.
Բոլորն էլ հանկարծ
Ոտքի են կանգնած,
Թե մարդ, թե կնիկ,
Թե մանչ, թե աղջիկ։
Եվ ի՜նչ ճղավոց, ի՜նչ գոռյուն-գոչյուն,
Այստեղ չէր լսված այսպես դղրդյուն...
Մեկ մարդ մոտ գնաց,
Տեսավ ու գոռաց.
— Մեկն աղվես է, մեկը գե՜լ,
Բայց դառել են մարդագե՜լ...
— Վա՜յ, մարդագե՜լ, մարդագե՜լ,—
Բղավեցին ամենքն էլ,
Եվ շատերը վախեցան,
Մութ տեղերում թաք կացան։

◆◆◆

Աղվեսն ու Գայլը շատ շշկլվեցին,
Ապուշ կտրեցին,
Բայց էլի շուտով ուշքի եկան
Ու ետ-ետ փախան,
Շներին տալով նոր յափնջիքը,
Մոթալ փափախնին ու պոչերնիքը...

◆◆◆

Այդ անցքից դեսը
Գայլն ու աղվեսը
Իրար տեսնելիս՝
Բարև չեն տալիս։

Մարդ թե գազան իրար նման
Ենթարկվելով դժբախտության,
Մեղադրում են մեկը մյուսին—
Հայկն՝ Ամոյին,
Գայլն՝ Աղվեսին...

1909

ԱՆԵԾՔ

Երկու հոգի՝
Հայր ու որդի
Խորհուրդ արին
Եվ վճռեցին,
Որ վեր կենան,
Որսի գնան։
Եվ գնացին...

Ու նրես մտան
Մի խիտ անտառ,
Ու երբ գտան
Մի որբ կխտար...

Որդին ասեց՝
Թող ե՛ս խփեմ.
Հայրն արգելեց.
Մե՜ղք է, ասեց,
Թող ե՛ս խփեմ.
Թող ես ընկնեմ
Անեծքի տակ,
Եվ ոչ թե դու
Ջահել օրով.
Դու ո՛ղջ մնա
Հորով-մորով։

Հայրը խփեց,
Կլ։տարն ընկավ։
Ոդին շալկեց,
Ճանփա ընկավ
Մի նեղ շավղով,
Խոր ձորերի
Անդունդներով...

Մեկ էլ հանկարծ
Մի քարա-այծ
Քերծի գլխից
Փախած տեղից
Գլորեց մի քար
Դեպի ներքև։
Եվ հոր առջև
Մոր մինուճար
Որդուն դիպավ,
Լույսը հանգա՛վ...

1909

ԱՏԱՄԸ ՓԱԽԱԾ

(Մանկական երգ)

Ատամ, ատամ,
Իմ կաքնատամ,
Գնա՛ս քարով
Հարյուր տարով...
Իսկ դու արի՛,
Գալրդ քարի՛,
Իմ նո՛ր ատամ։

Ես քեզ կրտամ
Հարյուր տարի
Հազար բարի—
Էլ դավուրմա՛,
Էլ բաստուրմա՛,
Ջամչով փլա՛վ,
Հնդու խուրմա,
Տանձ ու խնձոր
Մի՛շտ, ամեն օ՛ր
Փրստա՛, բադա՛մ,
Էլ որ մեկի
Անունը տամ,
Ոսկի՛ ատամ...

1909

ՀՈՎՎԻ ՍՐԻՆԳԸ

(Ավանդություն)

(Նվեր երաժշտագետ Մուշիկին)

Հովիվը ծարին՝
Ոչխարն առաջին՝
Ոչ շուն և ոչ զենք
Չունի նա կշտին։

Եվ ահա եկան
Օրը ցերեկով
Սոված գայլերը՝
Ամբողջ ոհմակով։

Հովիվն ի՞նչ աներ,
Ինչպե՞ս ազատեր
Իր ամբողջ հոտը,
Փրան էլ հետը։

Նա ճարը կտրած՝
Սրինգը հանեց
Եվ աղիողորմ
Մի երգ նվագեց։

Եվ ինչպե՞ս քնքուշ,
Ինչպե՞ս մեղմանուշ,—
Բոլոր գայլերը
Կտրեցին ապուշ...

Եվ լսում էին
Սառած, քարացած,
Սրնգի ձայնից
Թովված ու դյութված։

Բայց ի՞նչ էր երգում
Հովիվն այնպես լո՞ւրջ,
Որպես մի հառա՞չ,
Որպես մի մրմո՞ւնջ։

Նրրա նվագը՝
Ջիլ ու քաղցրաձայն՝
Մի աղերսանք էր,
Մի գոչ օգնություն։

Սրինգն ածելիս՝
Նա ձայն էր տալիս
Իր կտրիճներին՝
Ջալում շներին.—
Ա, Ջամբա՞ր,
Ա, Ղայթա՞ր,
Եկե՞ք, հա՞, եկե՞ք,

Ա՛, Քյասա՞ր,
Ա՛, Բասա՞ր,
Հասե՞ք, հե՞յ, հասե՞ք...

Հանկարծ թնդում է
Ցուրթն[1] ամեն տեղից.
Ի՞նչ հարայ-հրո՞ց,
Ի՞նչ ո՞ղբ, ի՞նչ ոռնո՞ց...

Շները թև առած՝
Ինչպե՞ս են թռչում,
Հասնում են հովվին
Մի ակնթարթում...

Այսպես մի հովիվ,
Սրնգի շնորհիվ՝
Փրկում է հոտը,
Իրան էլ հետը
Չար գազաններից՝
Սոված գայլերից...

1909

ԾԻԾԵՌՆԱԿԻ ԳԱԼՈՒՍՏԸ

(Մանկական խաղ)

Դերձակներ. *Երկու մանուկ, մեկը ծիծեռնակի դերում. մի երգեցիկ խումբ. բոլորը միասին իբրև նորեկ ծիծեռնակներ։*

Մանուկը.— *Բարով ես եկել, սիրուն ծիծեռնակ.*
Բայց ասա խնդրեմ, ինչո՞ւ ես մենակ։
Ծիծեռնակը.— *Ո՜հ, մի՛ հարցընիլ, սիրելի մանկիկ,*
Ճամփին բարձրացավ մի մեծ փոթորիկ...
Խումբը *(զարմացած).— Օ՛յ-օ՛յ-օ՛յ, ո՛ւյ-ո՛ւյ-ո՛ւյ.*

---

1 Ցուրթ կամ յուրդ ասվում է.սարվորների բնակատեղին։

Մանուկը.— *Հետո՞... երկի ամենքիդ, ցըեց-*
Ով գիտե՝ որին ո՞ր ձորը գցեց...
Միծեռնակը.— *Այո, ո՞վ գիտե, ո՞վ ողջ, ո՞վ մեռած.*
Քանիսը մնացին ձյունի տակ սառած...
Խումբը *(տխուր).*— *Վա՛յ-վա՛յ-վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ-վո՛ւյ...*
Մանուկը *(կուտ է ածում առաջը).*— *Խե՜ղճ իմ միծեռնակ,*
Կեր, հանգստացիր,
Եկ մտիր բունըդ, մեկ լավ տաքացիր։
Միծեռնակը.— *Շնորհակալ եմ, ես կուշտ եմ հիմա.*
կարծես մերոնք էլ պիտի դան ահա։
Խումբը *(ուրախ).*—*Վա՛-վա՛-վա՛, վի՛-վի՛-վի՛...*
Մանուկը.— *Բան չի երևո՞ւմ, այդ ի՞նչ ես ասում,*
Գուցե հեռվիցը մի ձայն ես լսում։
Միծեռնակը.— *Ո՛չ, ես զգում եմ, թեև չեմ լսում,*
«Գալիս են ահա՛», իմ սիրտն է ասում։

Բոլոր աշակերտները ներս են թափվում կոները թափահարելով, իրար թռչում են և շրջապտույտ գործելով երգում են,—

Եկա՜նք, եկա՜նք ողջառո՜ղջ
Մենք անկորուստ և ամբողջ,
Լե՛-լե՛-լե՛, հա՛յ լե՛-լե՛,
Լո՛-լո՛-լո՛, հա՛յ լո՛-լո՛,
Հելելե՛, հոլոլո՛...

1910

ՏՈՐՔ ԱՆԳԵՂ ԵՎ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳԵՂԵՑԻԿ

(Հին զրույց)

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Բացվել է գարունը, ջրերը պղտորվել,
Սար ու ձոր կանաչել, ծաղկով զարդարվել.
Միծեռը գտել է իր բույնը հերվան,
Շինում է, կարկատում, դնում նոր ձվան.
Պաղ օձը տաքցել է, թողել է իր բույն,
Ոտակը մնում է վարդի բացվելուն.
Գուգարաց աշխարհը նոր կյանք է առել,
Լոքի ու Կարվարի ձյունները հալվել.
Գետակը Բողնիքի վաղ արշալույսին
Հորդացած վազում է փրփուրն երեսին.
Անտառում Ոսիրները՝ ամրոցն Արամյան,
Զուգվել է, զարդարվել նոր հարսի նման.
Բուրգերից խնդությամբ արցունք է հոսում,
Կարծես թե սիրարժան հյուրի է սպասում։
Ամրոցի տիրուհին՝ չքնաղ ՀԱՅԿԱՆՈՒՇ,
Դեռ փոփոկ անկողնում քնած է մուշ-մուշ.
Տեսնում է երազում մի մարդ ածգահա,
Մի գերան ուսին դրած՝ գալիս է ահա.
Գալիս է ածգահան ընկնում ոտքերը,
Ասում է՝ «Հա՜յկանուշ, դո՜ւ ես իմ սերը.
«Կա՛մ ինձ այս գերանով զարկիր, սպանիր,
«Եվ կա՛մ իմ խնդությունը լսիր, ընդունիր»։
Վեր կացավ տիրուհին փոփոկ անկողնից.

Ինչպես մի նոր արև ծովի խորքերից.
Ոսկեմազ ծամերը՝ ճաճանչի նման՝
Ծածկեցին մինչև ոտք հասակն աննման.
Երեք-չորս նաժիշտներ մոտեցան կուսին,
Տոն օրվա հագուստով նրան զուգեցին։
Նոր տեսած երազը գրավել է նրան,
Մտքիցը չի ընկնում ահռելի հսկան.
«Մենք շուտով, ասում է, մեկ հյուր կունենանք.
«Պետք է նրա առջև դուռը չբանանք.
«Ես տեսա երազում մի մարդ ահարկու,
«Եկել էր ոտքս ընկել՝ իբրև փեսացու»...
— «Այդ հսկան, թե կուզես իմանալ ճիշտը,
Ասում է ժպտալով նրբա նաժիշտը,—
Երեկվա գուսանի երգի հերոսն է,
Պասքամյան աժդահա Անգեղյան Տորքն է։
Պարխարյան լեռներում՝ երգչի ասելով՝
Կենում է մի հովիվ քաջ Տորք անունով.
Նա մի շատ հաղթանդամ հսկա է զորեղ,
Բայց սիրտը բարի է, թեև դեմքն ահեղ.
(Թող մարդս կոշտ լինի անհարթ սարի պես,
Բայց սիրտը չըլինի անշունչ քարի պես).
Նրան շատ սիրում են թե մարդ, թե գազան,
Առյուծ ու վագրեր են հոտին պահապան,
Նա խում քո ցեղից է, քեզ մոտ ազգակից,
Մի պապի թոռներ եք և մեկ արյունից.
Գուսանի ներբողը ազդել է վրրաս,
Երազում տեսել ես ազգակից հսկաս»։
— «Դուք պատրաստ մնացեք, ինչ էլ որ լինի,
Թող վրաս ունենամ իմ թուրն հավլունի.
Ամրոցի դռները ամուր փակեցեք,
Լրվացեք գլխներդ, մաքուր հագնվեցեք.
Ես գիտեմ, երազս պիտի կատարվի,
Մենք հյուրին կընդունենք, եթե ներս մտնի։
Թե փակած դռնովը ներս գալ կարենա,
Այդ նշան կըլինի, որ քաջ Տորքն է նա»։
Իրավ որ քաջ Տորքն էր երազի հսկան,
Ե՛կ գնանք, ընթերցող, և բերենք նրան։

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Շատ դարեր առաջ՝ հին Հայաստանում
Տորք-Անգեղյանվամբ մի մարդ էր կենում։
Տորքը չէր նման հասարակ մարդու,
Այլ մի աժդահա և շատ ահարկու.
Աչքերը կասես մի-մի կապույտ ծով,
Ճաճանչավորված արևի լույսով.
Սև-սև ունքերը՝ մութ ամպի նման՝
Բարդ-բարդ կուտակված աչքերի վրան.
Քիթը կորընթարթ, իբրև մի բլուր,
Ատամներն ուրագ, եղունգները թուր.
Կուրծքը կասենաս մի լանջ է լեռան,
Մեջքը սարաժայռ, կոները գերան,
Մի խոսքով՝ մի դև և ոչ թե հսկա,
Ոչ ոք տեսած չէր այնպես աժդահա։
Տգեղ էր դեմքը և այնքան դաժան,
Որ զարհուրում էր, ով նայում էր վրան.
Ահռելի էր նա և այնքան ուժեղ,
Որ հիսուն գոմեշ չունեին մեկտեղ։

Նա դեռ պատանի ժայռեր էր ճեղքում,
Ճեղքում էր ձեռքով, ձեռքով էլ կոկում.
Ճեղքում, հղկում էր քարե տախտակներ։
Եղունգով փորում պես-պես նկարներ։
Նա մի հովիվ էր, հովիվ լեռնական,
Բայց ոչ հասարակ, այլ դյուցազնական,
Առյուծ ու վագր նրան տեսնելիս՝
Սովոր շան նման մոտն էին գալիս.
Կարծում էին, թե նա էլ է գազան,
Եվ նա է իրենց զորավոր արքան.
Փաթաթվում էին քաջի ոտներին
Եվ կաղկանձելով աղերսում բաժին.
Նա էլ տալիս էր անունդ բավական
Եվ հոտի վրան կարգում պահապան։
Ինքն ամենուհետև գնում էր անտառ,

Որ սնունդ գտնե իր ուժի համար։
Նա պոկոտում էր մեծ ծառեր հատ-հատ
Ու շինում նրանցից մի մեծ ցանկապատ.
Անտառի շուրջը պարիսպ էր դառնում.
Մեջը վայրենիք կաշկանդված մնում.
Եվ նա բռնում էր, բռնոտում այսպես,
Եղնիկ, եղջերու և այլ ինչ ասես։
Քսան, երեսուն էրե շալակած,
Գնում էր հոտը հոգնած ու քրտնած.
Առյուծն ու վագրը դեմն էին գալիս,
Քաջի ոտքն ընկնում և բարև տալիս,
Եվ խնդրում էին դյուցազն Տորքին,
Մասնակից անել համեղ ընթրիքին։
Նա չէր շատակեր Շարայի նման.
Սիրում էր կաթը և մածուն ու թան.
Եվ չէր բարկացկոտ, այլ հեզ ու խոնարհ,
Բայց Տերն ազատեր, թե որ բարկանար...

Բ

Մեկ անգամ գյուղում Տորքին զայրացրին,
«Անգե՜ղ, գե՜ղ Անգեղ», հետքից գոչեցին.
Էլ չդիմբերեց. պոկեց մի մեծ ծառ,
Ավլեց նրանով ամբողջ գյուղն իտպառ.
Ասում եմ՝ ավլեց, չկարծեք սրբեց,
Այլ տուն, գոմ, մարագ գետնին հավասարեց.
Փախան մարդիկը ճանճերի նման,
Էլ ո՞վ կբկանգներ Տորքին հանդիման.
Այսպես, երբ նրա բնությունն իմացան,
Էլ այնուհետև սրտին չդիպան,
Այլ մեծ հարգանքով պատվասիրեցին,
Պարերգ շինելով, գովաբանեցին.
Տղեք. աղջկեք՝ ձեռք ձեռի տված՝
Ե՛վ պարում էին, և՛ գովում Տորքին։
Էլ այնուհետև նրա գեմքն ահեղ

Առաջվա նման չէր թվում տգեղ։
Անգութ չէր Տորքը և ոչ էլ անգետ,
Լավ որմնադիր էր և ճարտարապետ.
Ահագին վեմեր նա բերավ տաշեց,
Իր քանդած գյուղը նորմեկանց շինեց.
Եվ այնուհետև իր ուժն ահագին
Նա գործ էր դնում միշտ դեպի բարին։
Նրանից առաջ շատ քաղաք ու գյուղ
Թալանում էին գողերն աներկյուղ,
Բայց երբ լույս ընկավ Անգեղ Տորք հսկան,
Ավազակները ծակրծուկ մտան։
Նա չէր գործ ածում ոչ թուր և ոչ նետ,
Միայն իր տեսքով անում էր անհետ.
Բայց երբ թշնամին երես էր առնում,
Նա այն ժամանակ ուժին էր դիմում.
Վերցնում էր քարեր, քարեր ահագին
Եվ կարկուտի պես թափում գլխներին։
Սև ծովի կրղմից օտար թշնամիք
Թալանում էին և գերում մարդիկ,
Միշտ գալիս էին անթիվ նավերով։
Այն էլ աշկարա, օրը ցերեկով։
Կողոպտում էին անթիվ գյուղերեք,
Եվ գերի տանում սիրուն աղջկերք։
Մեկ անգամ եկան խնդրեցին Տորքին,
Որ գնա օգնե խեղճ ժողովրդին.
Գնաց մեր հսկան, բայց նավերն արդեն
Հեռացել էին Սև ծովի ափեն։
Զայրացավ Տորքը, գոռաց, մռնչաց,
Իբրև մի առյուծ նետահար եղած.
Բլրաչափ ժայռեր սարերից պոկեց,
Փախչող նավերի հետքից շըպրտեց.
Դղրդաց ծովը, բարձրացան ալիք,
Նավերը դառան շարժուն խաղալիք.
Ահա դարձյալ ժայռ, դարձյալ դղրդոց,
Շրջվում են նավերն իբրև օրորոց.
Էլի մեկ բլուր, մեծ քան զառաջին՝
Ընկնում է ուղիղ նավերի գլխին։

Գնում են կրկին ժայռերը գունդ-գունդ,
Ջարկվում նավերին և տանում անդունդ։
Ողջ կորան այսպես ավազակները,
Դեպի անհատակ ծովի խորքերը.
Նրանցից միայն մեկն ազատվեցավ,
Գլուխը պատռած՝ իր երկիրն հասավ.
Եվ այնտեղ այնպես հրաշքներ պատմեց,
Որ լսողներին սարսափեցրեց։
Ահա այս անգութ բարբարոսության
Վերջ տվավ իսպառ մեր զորեղ հսկան։

Գ

Տորքի անունը շատ հռչակվեցավ.
Մինչև արքայի ականջը հասավ.
Մեծ թագավորը կանչում է Տորքին,
Որ պարգևներ տա և նայե դեմքին։
Գնում է Տորքը՝ մի ծառ ուսին դրած.
Ծառի ճյուղերից էրեներ կախած.
Այնտեղ կար այծյամ ու վայրի ոչխար,
Եղնիկ, եղջերու, վարազ ու կխտար...
Տորքի համբավը առաջ էր գնացել
Եվ քաղաքացոց նախապատրաստել.
Խանութ ու կրպակ ողջ կողոպտեցին,
Փողով, փողհարով դիմավորեցին.
«Եկա՜վ, հա՜ եկա՜վ, գալի՜ս է, գալի՜ս»։
Ամենքն էլ իրար իմաց են տալիս.
Թե՛ ծեր, թե՛ մանուկ, թե՛ աղջիկ, թե՛ կին,
Եկան տեսնելու նորեկ հսկային։
Երբ Տորքը մտավ մեծ մայրաքաղաք,
Նրան կալծեցին շարժուն աշտարակ.
Իրավ՝ նա ցած չէր աշտարակներից,
Բուրգ էր նա՝ շինված անտաշ քարերից։
Ծառն ուսին դրած գավազանի պես,
Քայլեր էր անում չորս կանգուն ու կես։

Այսպես նա հասավ մինչև ապարանք,
Արքայի վերա ազդեց մեծ զարմանք.
Վայր դրավ բեռը, բարձրացավ վերև,
Ծնկաչոք ընկավ արքայի առջև։
Թագավորն ասաց. «Ապրի՛ս, ապրի՛ս, Տորք,
Դու չես մի հատ մարդ, այլ մի ամբողջ զորք»։
Արքայի ծունկը Տորքը համբուրեց,
Արքան էլ նրա ուսին ձեռք դրրեց։

Դ

Լսել էր արքան, որ հսկա մարդիկ
Չեն լինում խելոք և ոչ էլ ճարպիկ,
Բայց երբ Տորքի հետ լավ ծանոթացավ,
Նա այս կողմանե մի նոր գյուտ արավ։
Տորքին նա պահեց մոտ երեք ամիս,
Հետն էր նստեցնում միշտ ճաշ ուտելիս.
— «Ինչպե՞ս ես կարծում, մեկ օր հարցրեց,—
(Հսկայի խելքը նա փորձել ուզեց)։
Մ՞րն է գերազանց, ո՞ւժը, թե՞ խելքը».
— «Երկուսն էլ լավ են,— ասաց քաջ Տորքը.
«Փոքրիկ ուժի մեջ չի լինիլ մեծ խելք,
Ոչ էլ ուժեղը կլինի անխելք.
Բայց ի՞նչ է խելքը,— ոչ ոք չըգիտե,
Անխելքի համար խելոքն անմիտ է։
Ուրիշ է խելքը գլխապահության,
Եվ ուրիշ՝ խելքը հափշտակության.
Այդ ամենքն ունին՝ թե մարդ, թե գազան,
Թե խելոք լինի, թե անմիտ անբան։
Բայց կա մի այլ խելք, խելք դյուցազնական,
Որ հնարում է, ստեղծում է բան,
Որ մեզ տանում է միշտ դեպի բարին
Եվ մոտեցնում արարչի գահին,
Որ բանեցնում է օդին ու ջրին,
Ծառայեցնում կրակին, հողին,

Շինում է գութան, կամն ու ճախարակ,
Հերկում, մշակում դաշտ ու ագարակ.
Որ քարին, փայտին տալիս է նոր ձև.
Նոր գործադրություն, և այն հարատև.
Այս է ճշմարիտ խելքն իմ կարծիքով,
Մարդը գազանից վեհ է միայն սրանով»...
Զարմացավ արքան, այլև հիացավ,
Երբ հսկա Տորքից այս բանն իմացավ։

Ե

Մեկ օր էլ արքան տեսավ մեր Տորքին՝
Մեկ բլրաչափ ժայռ բռնել է ձեռքին,
Ահագին ժայռը շուռ-մուռ է տալիս,
Կարծես երեխա լինի խաղցնելիս.
Ժայռը ճեղքում էր Տորքը ձեռքերով,
Փորում, փորփրում սուր եղունգներով.
Փորեց, փորփրեց, ուռշեց, տաշտրշեց,
Վերջն արքայի պես մի արձան շինեց.
Եվ ինչքա՜ն նման, ինչքա՜ն գեղեցիկ,
Շորն այնպես կարել չէր կարող դերձիկ.
Արքա՜ն կատարյալ,— ծիրանի հագած,
Բոլոր զարդերով զուգված, զարդարված,
Գահի վրա բազմած, թագը դրած գլխին,
Թուրը քարշ արած, գավազան ձեռքին,
Փառահեղ մրրքով, մարգարտով հյուսած,
Երբ տեսավ արքան, մնաց հիացած։

Զ

«Այս ի՜նչ հրաշք է», մեկ օր էլ արքան,
Տորքին նայելով, ասաց ինքն իրան.
«Փիղը խելոք է, թեև ահագին,
Բայց ո՞վ կրկարծե, որ այս հսկային

Աստված տվել է և խելք, և հասակ,
Այլև նկարչի հրաշալի ճաշակ.
Արդյոք՝ սեր էլ կա՞ այս մարդու սրտում,
Բայց ո՞վ կըսիրե սրան աշխարհքում.
Որտե՞ղ կըգտնվի այնպիսի մի կին,
Որ ուզի դառնալ սրան ամուսին.
Բայց լավ կըլիներ, եթե հաջողեր,
Մենք կունենայինք քաջ հպատակներ»։
Այսպես մտածեց արքան ինքն իրան
Եվ կանչեց Տորքին, որ խոսեցնե նրան։
— «Տո՛րք,— ասաց արքան,— ես չեմ հավատում,
Որ սեր ունենաս քո կարծր սրտում»։
Ժպտաց մեր հսկան ինչպես մի ծծկեր,
Երբ մորից լսեր, թե արի ծիծ կեր.
Եվ սրտի սերը իր վառ կայծերով
Փուվեց երեսին վարդի թերթերով։
— «Իսկ ես, արքա՜ քաջ,— ասաց մեր հսկան,
Ինձ որ ասեին, թե կա մի գազան,
Մի օձ, մի ծաղիկ, կամ մի անշունչ քար,
Չէի հավատալ, որ սեր չունենար.
Երկինք ու գետինք, թե ցամաք, թե ծով,
Բոլոր տիեզերք լցված է սիրով»։
— Տորք, դու խոսում ես իբրև սիրահար։
Ընտրե՛լ ես անշուշտ մեկին քեզ համար»։
— Ո՞ւմ պետք է ընտրեմ հարմար իմ սրտին,
Ես դեռ չեմ գտել ինձ համար մի կին,
Հեռու աշխարհում մեր սերնդից կան,
Բայց ես չգիտեմ այն երկրի ճանփան.
Մեկին տեսնում եմ այնտեղ երազում,
Որպես թե մի խոր ձորում է կենում.
Ինձ նման անբախտ, ինձ նման մենակ,
Բայց ոչ ինձ նման տգեղ, այլանդակ.
Նա գեղեցիկ է և շատ գեղեցիկ,
Ինչպես նոր ծագած կարմիր արևիկ»։
— «Բայց ի՞նչ ես կարծում, այդ գեղեցիկուհին
Կըդառնա՞ արդյոք քո ընկերուհին»։
— Նա ինձ երազում հաստատ խոսք տվավ,

Եվ խոստանալով մի պայման դրավ.
«Եթե գաս», ասաց, «կովես ու հաղթես,
Դու ինձ կըստանաս, կառնես կըբերես»։
Հիմա չըգիտեմ ո՛րտեղ կըգտնեմ,
Որ կովեմ, հաղթեմ ու առնեմ բերեմ»։
— «Ես իմաց կըտամ իմ բդեշխներին,
Նրանք կըդտնեն քո գեղեցկուհին»։
Տորքն ուրախացավ, բայց և ամաչեց,
Տղայի նման նա կարմրատակեց.
Արքայի ծնկան նա համբույր տվավ,
Եվ իսկույն ևեթ մոտիցը փախավ։
Թագավորն ինքն էլ շատ ուրախացավ,
Որ Տորքի սիրո գաղտնիքն իմացավ։

Է

Արքան հրավիրեց կուսակալներին,
Որ այդ ժամանակ պալատումն էին.
«Կուզեմ իմանալ, ասաց, մեր երկրում
Ինչպե՞ս ցեղեր կան, ինչպե՞ս են ապրում»։
(Թագավորն ինքը չէր մեր աշխարհից,
Այլ հրավիրված մի ուրիշ երկրից)։
«Արդյոք մեր երկրում վաղվա պես չըկա՞ն
Խոշոր հսկաներ մեր Տորքի նման»։
Ամենից առաջ խոսեց Առանը՝
Բաղաց աշխարհի զորեղ իշխանը.
— Ո՛ղջ լեր, թագավոր, մեր երկրում դեռ կան
Հաղթանդամ մարդիկ՝ ճիշտ Տորքի նման.
Նրանք կենում են լեռնախորշերում,
Մթին ձորերում և քարայրերում.
Պնդոցն են քաշվում, որ ազատ մնան,
Քյոխվի ու գզրի ոչինչ հարկ չըտան.
Տներ են շինում և գետնի տակին
Անքար ու անփայտ, սարերի միջին.
Տեսնում ես նաև՝ հարթ գետնի տակից

Ծուխ է դուրս գալիս քառասուն տեղից.
Շըշկլվում է մարդ, թե սա ի՞նչ բան է
Մի՞թե սա գյուղ է.— ո՞վ կարծիք կանե։
Մի գուռն ես գտնում, մտնում, և ահա
Քսան, երեսուն մարդիկ ածդահա,
Մի քանի գերան կրակին դրած,
Նստած են շուրջը մրոտթնրս կախած.
Իսկ նրանց մայրը՝ պառավ ածդահան՝
Դրել է կրակին քառականթ կաթսան,
Երեք-չորս վարազ ողջ-ողջ մեջն ածած,
Ճաշ է պատրաստում մեկ թի ձեռքն առած.
Խառնում է կաթսան թիաշերեփով,
Ինչպես մեր կանայք՝ փոքրիկ չամչիկով,
Տունն ունի նաև անթիվ մաղարեք,
Այնտեղ են լցված հարսն ու աղջըկեք.
Բոլորն էլ խոշոր, բոլորն էլ հսկա,
Թե մարդ, թե կնիկ, աղջիկ, թե տղա.
Բայց չեն Տորքի պես անսարշ ու անկաղմ,
Այլ շատ գեղեցիկ և վայելչակազմ»...
— «Ուղիղ է ասածն Առան իշխանի,
Ասաց բդեշխը Գուգարաց երկրի.—
Մեր հսկաներն էլ ձորերը մըտան,
Որ գզիրներին ոչինչ հարկ չըտան.
«Ով որ, ասում են, որ գզրի ձայն լըսի,
«Նա տեղնուտեղը ձյան պես կըհալի.
«Մարդիկ էնդուր են այնչափ մանրացել,
«Ու մեջքներից թեքվել, կըռացել,
«Որ հարկ են տալիս գզրին ու քյոխվին,
«Այն էլ դրամով, որ բնավ չունին։
«Մենք չունինք գզիր, քյոխվա, քյաթխուդա,
«Էնդուր ենք մնացել այսպես ածդահա»։
— «Բայց մի՞թե իրանք դրամի պետք չունին».
Հարցըրեց արքան Լոռու բդեշխին։
— «Դրամը պետք է սնունդի համար,
Որ գնեն սնունդ և հագուստ հարմար.
Երկուսն էլ ունին, ունին վար ու ցան,
Ունին խոզ, ոչխար, լծկան ու կթան.

Ունին վուշ, բամբակ և որդ շերամի,
Զանազան ներկեր և որդն կարմրի.
Կանայք մանում են, ներկում ու գործում,
Սիրուն հագուստով զուգվում, զարդարվում.
Նույնպես հագցնում են բոլոր մյուսներին,
Գործում են գորգ, շալ և տան անկողին,
Եվ այլ ամենայն մանր ու խոշոր բան,
Ինչ որ գործվում է և պետք է մի տան։
Ունին եղ ու մեղր և մածուն ու թան,
Միրգ, հունդ, արմտիք, բանջար զանազան.
Աղբյուրներ ունին վճիտ, սառնորակ,
Վիրաբուժության գիտեն դեղ, ճարակ.
Իսկ ինչ որ չունին և պետք է իրանց,
Փոխանակելով տալիս են միմյանց։
Գինի և օղի նրանք չեն խմում,
Մոլություններից հեռու են կենում.
Եվ ապրում էլ են նրանք շատ երկար.
Ոչ մեկը չկա հիվանդոտ, տկար։
Բոլոր անդամներն ամբողջ համայնքի
Ջավակ են կարծվում մի ընտանիքի.
Այսպես միաբան, սերտ սիրով կապված,
Մեկմեկու համար գլուխ ետ դրած,
Շատ հյուրասեր են և մեծահոգի.
Խիստ ավանդապահ և առաքինի»...
— «Բայց մեզ ի՞նչ օգուտ այդ հսկաներից,
Երբ որ փախչում են հարկահաններից»։
— «Հարկից խորշում են, բայց ոչ կռվելուց.
Ո՛չ հայրենիքի պաշտպան լինելուց.
Ունին ահագին աղեղ, պարսատիկ,
Կռիվ են գնում — ինչպես հարսանիք.
Քարեր ու նետեր կարկրտի նման
Թափում են կռվող թշնամու վրան.
Իսկ երբ քար ու նետ չունին ձեռներին,
Դիմում են իրանց ուժեղ կոներին.
Մեկը հարյուրին, տասը՝ հազարին,
Ջարդում են, ինչպես գայլը՝ ոչխարին»։
— «Եթե այդպես է, ազատ թողնենք,

Այդ հսկաներից էլ հարկ մի՛ առնենք.
Բայց «մե՛կ պայմանով», — ասում է արքան,
Որ մեր քաջ Տորքին մի հարսնացու տանք։
— «Այդ շատ դժվար է, — ասաց իշխանը, —
Թեև կատարեն քո խիստ հրամանը.
Նրանց մեջ առանց սենամարտելու
Սովորույթ չկա աղջիկ ուզելու.
Մրցել են տալիս փեսացուներին,
Որ աղջիկն ընկնի վերջին հաղթողին.
Բայց գործը դրանով դեռ չի վերջանում,
Հետո աղջիկն ու տղան են մրցում.
Եթե փեսացուն չի հաղթում աղջկան,
Էլ այն աղջիկը չի գնում նշան»։
— «Ուղիղ մեր Տորքի նրազի նման, —
Ասաց խնդալով մեծազոր արքան, —
Մենք էլ կուղարկենք մեր հսկա Տորքին,
Թող գնա փորձե իր ուժն ահագին»...

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Ա

Այստեղ, ո՛վ դու Աեր, ո՛վ հին բարեկամ,
Տո՛ւր հոգուս թռիչք, որ ես կարենամ
Նկարել չքնաղ պատկերդ երկնային
Իմ թույլ վրձինով՝ գրչով մարդկային։
ՀԱՅԿԱՆՈ՛ՒՇ և ՏՈ՛ՐՔ, — ի՞նչ նմանություն,
Բայց սերը չունի ոչինչ խտրություն.
«Սերը, ասած է, աթարին կրպավ,
Ինչ արին չարին, էլ պուկ չի եկավ»։
Շատ անգամ առյուծ, արջ, օձ, բորենի,
Արծիվ ու ագռավ և այլ կենդանի —
Փեսա են դառնում սիրուն աղջկան,

Եվ առնում տանում իրենց բնակարան,
Բայց՝ սովորաբար՝ այս դեպքի վերա
Նրանք դառնում են շատ սիրուն տղա.
Ճշմարիտ սերը կախարդված անձին
Նորից տալիս է իր դեմքն առաջին.
Թռչուն ու սողուն, ամեհի գազանք
Նորից առնում են մարդու կերպարանք։
Գեղեցկությունը արևի նման
Լուսավորում է խավար առարկան,
Իսկ սերը քարշում շատ ճառագայթներ,
Սրտի հնոցում վառում է լապտեր.
Խփվում է աչքը, որ տեսնե հեռուն,
Սիրան է խոսողը, լռում է լեզուն.
Եվ այնուհետև երազներ պես-պես
Ուղեղի խորքում գալիս են հանդես.
Սիրահար սիրտը թողում է գետինք,
Սիրո թևերով թռչում է երկինք»...

Բ

Ամառնամուտ է. Լոք սարն իր գագաթ
Դաշտեցոց համար շինել է դրախտ.
Որ կողմ նայում ես՝ տեսնում ես հրմվանք,
Անմեղ, երկնային սիրո փաղաքշանք.
Ծաղիկներ գույն-գույն և անուշաբույր
Տալիս են իրար քնքուշիկ համբույր.
Անթիվ աղբյուրներ, վճիտ, սառնորակ,
Իրար գրկելով՝ մտնում են ձորակ.
«Սե՛ր-սե՛ր» է կանչում հովվի սրինգ,
Կայտառում են ուլեր, խայտում են գառինք,
Այդ սարի գլխին կանգնած է ահա
Մի պանդխտական անծանոթ հսկա.
Բայց ուրիշ մարդ չէ այդ նոր վիթխարին
Այլ մեր բարեկամ Տորքն է ահագին.
Հսկայի առջև մինչև բյուր մղոն

Բացվել է մի լայն, շքեղ հորիզոն.
Նրա ոտքի տակ մեծամեծ լեռներ
Փռված են ինչպես անհաշիվ թումբեր.
Հսկայն լեռների, Կովկասի շղթան,
Ինչպես ցամաքի մի լեփաթան,
Գլուխը թաղել է Եվքսինյան ծովում,
Պոչը Վրկանա ծովումն է շարժում.
Ամենի մի պատ, բուսած անդունդից,
Մինչից կտրում է հարավն հյուսիսից.
Ինչպես մի քամար ալմազ քարերով,
Շրջապատվել է գետնքի փորով.
Տե՛ս, Արևն ահա Վրկանա ծովից
Իր բոլոր շքով ծագում է մորից.
Նա իր շափաղը՝ ցնցուղն առաջին
Լրփռում է Կովկաս հսկայի դեմքին.
Ի՞նչ տեսարան է, ինչքա՞ն փառահեղ,
Հափշտակվեցավ մեր պանդուխտն ահեղ.
Այս տեսարանից վերացավ հսկան,
Եվ խսկույն շոքնց դեմ Արեգական.
Նա ահեղ ձայնով երգեց մի մաղթանք,
Լեռներ ու ձորեր տվին արձագանք։

Գ

Այստեղ մի հովիվ մուտեցավ Տորքին,
Մի ոչխարակալ դավազան ձեռքին.
Կարծես ուշարկեց նրան արեգակ
Մեր հսկայի մոտ իբրև հրեշտակ.
— Ո՞վ ես դու,— ասաց,— հսկա՛յդ մեծազոր,
Եվ ո՞ւմ ես կանչում ձայնովդ հզոր.
— Ես մի պանդուխտ եմ,— ասաց մեր հսկան,—
Ինչպես մոլորված մի Թափառական.—
Այս ի՞նչ երկիր է մեր առջև ընկած,
Ի՞նչ ավաններ են դաշտ ու ձոր լցված».
— Ճշմարիտն ասած, ես լավ չգիտեմ

Սրանց անունը, որ մեկ-մեկ թվեմ.—
Եվ հովիվն անմեղ՝ իր գավազանով
Ցույց տվավ Տոքքին իրանց անունով
Մի քանի քաղաք և մեծ-մեծ ավան.
Թե՝ «այն Գաջենքն է և այն՝ Մոշավան.
Իսկ այս քաղաքն էլ, որ երկարումեկ
Բողնոփորի մեջ ձգված է բեկ-բեկ,
Ցուրտավ քաղաքն է, հարուստ, այգեներ,
Իսկ այս էլ ահա ամրոցն է Ուփրեթ,
Որ պատկանում է մի շատ աննման
Եվ շատ գեղեցիկ մի որբ աղջկան։
— «Այդ ի՞նչ աղջիկ է, ի՞նչ է նրա անուն»,
— Նրա անունն է «Հայկանուշ-Սիրուն».
Ինքը մի չքնաղ և չնաշխարհիկ,
Ոչ ոք ծնված չէ այնքան գեղեցիկ.
Նա աննման է, չափազանց սիրուն՝
Դեռ չի լրացել տասնևութ գարուն։
— «Մթթե նա չունի՞ ծնողք, ազգական»,—
Հարցրեց հուզված սիրտհար հսկան։
— Բդեշխը նրանց Գաջինը է տալիս,
Մնացել են այնտեղ, էլ ետ չեն եկել։
— «Ուրեմն ո՞ղջ են նրանք Գաջենքում։
— Ոչ, նրանք ողջ են գուցե երկնքում»։
— «Ուրեմն մեռե՞լ են, էլ նրանք չկա՞ն»։
— Եվ միշտ կրմեռնին, երբ սարը չըգան։
Ինչպես է եղել, նրանք մեկ ամառ
Սարը չեն եկել, և դրա համար
Արևը նրանց ամբողջ գերդաստան
Զրկել է սարից, որ երբեք չըգան։
— «Բա ո՞վ է պահում այդ սիրուն աղջկան,
Եթե նա չունի ոչ մի ազգական».
— Ուրիշներին է, նա ինքն է պահում,
Ամեն կարոտյալ նրան է գիմում.
Ունի նաժիշտներ, անթիվ ծառաներ,
Մի նույնքան շներ, բյուրավոր հոտեր.
Նա մի հսկա է, թեև ոչ քեզ պես,
Հասակին նայես՝ սոսի է կարես.

Եվ շատ զորեղ է. մեզանում չկա
Նրա չափ ուժեղ և ոչ մի հսկա։
— «Ինչո՞ւ ուրեմն մարդու չի գնում»։
— Իր անվան վայել փեսա չի գտնում.
Ասում են՝ շուտով նրա մոտ կըգա
Հեռու աշխարհից մի մարդ ածդահա.
Այսպես ։ երգել մի պանդուխտ գուսան.
Մեր Հայկանուշն էլ մնում է նրան։
Հուզվեցավ Տոքքը, երեսը փայլեց.
Պարզամիտ հովիվն անգամ նկատեց,
Որ կուր գուսանի երգած ածդահան
Պետք է որ լինի այս պանդուխտ հսկան։
— Երանի՞ նրան,— ասաց պատանին,—
Ով Հայկանուշին կառնե ամուսին.
Նա շատ բարի է և այնքան գրթած,
Որ մեր կանանց մեջ դեռ չի տեսնըված,
Ով լծկան չունի, լծ՛լան է տալիս,
Շատերին լրծած գութան է տալիս,
Ցուղ է, թե պուսիր, նա բոլոր տարին
Միշտ բաժանում է չունեցողներին։
— «Ինդրեմ ցույց տաս ինձ,— ասաց մեր հսկան,
Ուփրեթ գնացող կարճառոտ ճանփան»։
— Այս ճանփան ահա թե ոդիղ բռնես,
Դեռ կեսօր չեղած՝ Ուփրեթ կըհասնես։

Դ

Մոտ է կեսորը, ժամ է ճաշելու,
Փորի պահանջը լրացնելու.
Հայկանուշն այսօր շատ լավ ճաշ ունի,
Լավ ձուկ, լավ խորված, թեև անգինի.
Շատ է ցանկանում, որ հյուր գա իրան,
Թեկուզ երազում տեսած ածդահան։
Բերդի դռները բախում են ահա,
Եվ այդ բախողն է մի մարդ ածդահա.

Բախում է բախում, բայց չեն բաց անում։
Կարծես նրա հետ մի խաղ են խաղում.
— Սո՜ւսս, ձայն չըհանեք, դուռը չըբանաք.
Ասաց տիրուհին, բայց... ա՜յ ձեզ հանաք.
Երկաթե դուռը հսկան խորտակեց,
Ինչպես գեչի թուղթ նրան ծալծլեց.
Եվ վեր բարձրացավ քառե սանդուղքով,
Ինչպես մի մանուկ մորիցը խրոով,
Կամ ինչպես աղքատ քաղցած ու տկլոր,
Սանդուղքի գլխին նստեց գլխակոր.
Աղախինները երբ Տորքին տեսան,
Սաստիկ վախեցած՝ փախան ներս մտան։
— Ինչո՞ւ եք վախում, ասաց տիրուհին,
Պետք է հրավիրել նորեկ հսկային։
Եվ՝ ինքը գնաց Տորքին մոտեցավ,
Եվ՝ իբր ինքն իրան՝ այսպես խոսեցավ.
«Ո՞վ պետք է լինի արդյոք այս հսկան,
Սա չէ՞ աժդահա Տորքը Պասչամյան.
Էլ ուրիշ ի՞նչ մարդ կարեր հանդգնել
Իմ բերդի դուռը այսպես խորտակել»։
Տորքն էլ ըսկսեց, իբրև ինքն իրան,
Տալ Հայկանուշին այսպես պատասխան.
«Երբ ճանաչում է Անգեղյա Տորքին,
Դուռն ինչո՞ւ փակեց նրա երեսին.
Սա մի խաղ խաղալ միայն ուզեցավ։
Եվ հետևանքն էլ այն էր, որ տեսավ.
Տորքն ահա կերթա, դուռը կըշտկե,
Ինչպես առաջ էր, այնպես կըկողպե»։
Եվ Տորքը գնաց դուռը լավ կոփեց,
Սուր եղունգներով հղկեց ու կոկեց.
Ժանգոտած դուռը այնպես պըլպլաց,
Կարծես արծաթից լիներ նոր ձուլած։
Երբ նորից գնաց իր տեղը նստեց,
Հայկանուշը նրան քաղցր աչքով նայեց.
— Ինչո՞ւ ես նստում, ասաց, չոր քարին,
Պետք է լավ ճաշ տալ քեզ պես ճարտարին.
Ճանապարհորդ ես, քաղցած կըլինիս,

Թե՞ հաց ուտելու ախորժակ չունիս...
— «Քաղցած եմ, այո՛, բայց շա՜տ եմ քաղցած,—
Հոգոց քաշելով՝ մեր հսկան ասաց.—
Ի՞նչ հաց պիտի տաս, որ ես կշտանամ,
Ի՞նչ ջուր պիտի տաս, որ ես զովանամ.
Իմ հացն ու ջուրը,— գիտե՞ս որն է այն—
Քո սե՛րն է, հոգիս, քո սե՛րն է միայն.
Մի՛ նայիր որ ես կոպիտ եմ ու բիրտ,
Այս կոպտության մեջ կա մի քնքուշ սիրտ,
Որ քեզ գլխովին իր մեջ կամփոփե
Եվ միշտ քեզ համար միայն կըտրոփե.
Ահա եկել եմ ընկել ոտքերըդ,
Կամ ինձ սպանիր, կամ տուր ինձ սերըդ».
— Դեռ ժամանակ չէ,— ասաց տիրուհին,
Հետո կըխորհինք քո սիրո մասին։—
— «Ես քո ըստրուկն եմ. դու ինձ հրամայիր.
Թէկուզ քո շան տեղ դրռանըդ կապիր,
Որ քեզ պահպանեմ աչքիս լուսի պես,
Ոչ մի փորձանքի դու չըհանդիպես»։
— Դու ինձ կազատես շատ փորձանքներից,
Բայց ո՞վ կազատե ինձ քո ճանկերից։—
Այս խոսքի վրրա Տորք և Հայկանուշ
Քա՜հ-քա՜հ խնդացին, և խինդն էր անուշ.
Եվ իբրև վաղուց ծանոթ իրարու,
Կուշտ-կուշտ ճաշեցին, առանց ուտելու։

Ե

Սիրում էր Տորքը, սիրում էր անկեղծ,
Սիրում էր սիրով անբիծ, անտխեղծ.
Եվ կոպտատարազ իր դեմքը մթին
Դառել էր սիրո ցոլացող լուսին.
Այն կերպարանքը և հայացքն ահեղ,
Որ քարուցնում էր մարդկանց տեղնուտեղ,
Այժմ դառել է մի վճիտ աղբյուր,

Որից բխում է սեր հեզահամբույր...
Ի՞նչ քաղցր ժպիտ, ի՞նչ քնքուշ շարժվածք.
Ե՞րբ է ունեցել անճոռնի կազմվածք...

Զ

Որքան կրակը վառվում է, այրում,
Այնքան տաքցողը հեռու է կանգնում.
Երբ վարուժանը շատ է կչկչում,
Մարին փախչում է, թուփի մեջ թաքչում.
Տորքն ինչպես սոխակ երգում է պես-պես.
Իսկ Հայկանուշը լուռ է վարդի պես.
«Այո» «ոչ», «գուցե», երկդիմի խոսքով
Պատասխանում է անորոշ մտքով։
Խոհեմությունը՝ հատուկ իր սեռին՝
Իբրև մի սուր զենք՝ պահում է ձեռին.
Եվ ասում է նա Տորքին վերջապես.
— Աղջիկ առնելը չի լինի այդպես.
Դու շատ ուժով ես, այդ ես լավ գիտեմ,
Բայց ի՞նչ էլ լինիս, ես պետք է կռվեմ։
Քո եղունգները, այո՛, շատ են սուր,
Բայց ես էլ ունիմ վահանի թուր,
Որին չի դիմնալ և ոչ մի հսկա,
Թեկուզ նա լինի քեզ պես ուժգահա...
— Սիրուն Հայկանուշ,— ասում է հսկան.—
Արի մի՛ անիր դու ինձ խելքահան.
Ես վախեցող չեմ և ոչ մի թրից,
Թեկուզ նա լինի ընկած երկնքից.
Բայց ինչպե՞ս զորե իմ ձեռքը կոպիտ
Քնքուշ նազելվույդ առնել իր խստիտ,
Խոստովանում եմ ինձ հաղթահարված,
Ես քո գերին եմ, քո ոտքերն ընկած.
Դու քո փոխանակ ցույց տուր հարյուրին,
Թեկուզ հազարին, տասը հազարին,
Հրամայիր ինձ՝ շարժեմ այս լեռը,

Ասա՝ պոկոտեմ ամբողջ անտառը,
Վարարած գետի ընթացքը փոխեմ,
Սաթեր ու ձորեր իրար հետ խառնեմ,
Լեռներ կարող են իմ ձեռքով փլչել.
Բայց քեզ, Հայկանուշ, չեմ կարող դիպչել...
— Եթե այդպես է, ուրեմն գնա՛
Եվ բեր ինձ համար քսան ուժգահա.
Կերթաս Զորոփոր, ուր քարայրերում
Քեզ պես հաղթանդամ մարդիկ են կենում,
Եթե նրանցից քսանին գերես,
Դրանով իմ անվան պատիվ կբերես.
Եթե ոչ՝ գիտե՞ս մերոնք ինչ կասեն,
Ի՞նչ բամբասանքներ վրրաս կբարդեն.
Կասեն փախցրել է, փախցրել է նրան
Լեռներից փախած մի թափառական...

ԵՐԳ ԵՐԲՈՐԴ

Ա

Գնաց մեր հսկան՝ ձեռքին մի գերան,
Որ գործ էր դնում իբրև գավազան։
Հասավ Զորոփոր հսկաների մոտ,
Մտավ մի խրամ խոր ու քարքարոտ.
Առյուծի նման այնպես մռնչաց,
Նրա ահեղ ձայնից ձորը դղրդաց.
Դուրս եկան հսկայքն իրանց բներից,
Խրամի ժայռի պատառվածներից.
Նայեցան՝ տեսան մեր հսկա Տորքին
Ներքևում կանգնած, մի գերան ուսին.
Ձեռքով են անում։— Արի վեր մեզ մոտ,—
Ասում են հսկայքն հյուրերի փարոս։
Վերև բարձրացավ մեր անհաղթ հսկան,

Մտավ ձորեցոց քարե բնակարան։
Տան նահապետը՝ առույգ ծերունին,
Պատվով ընդունեց իր պանդուխտ հյուրին.
Հատակի վրա նոր գորգ փռեցին,
Եվ վերի ծայրին նրան նստեցրին.
Տան երեխեքը՝ թե մեծ, թե փոքր,
Մոտեցան կարգով՝ ձեռքը պաչեցին.
Տաշտակը բերին ջահել հարսները,
Մաքուր լվացին հյուրի ոտքերը։
Մի բոպե չանցած, մոտ հարյուր հիսուն
Հսկաներ եկան հյուրին տեսություն.
Խոր ու լայնարձակ ժայռե մաղարան
Դարձավ հսկայից մի ժողովարան։
— «Բարո՜վ ես եկել. մեր աչքի լո՜ւյսն ես»։
Ամեն նոր մտնող ասում էր այսպես։
«Դու ո՞վ ես կամ ի՞նչ» էլ չեն հարցընում.
Այս տեսակ կանոն չըկա նրանցում.
Մինչև երեք օր հյուրին կըպատվեն,
Հետո այդ բանը նրան կըհարցնեն։
Ամբողջ երեք օր տո՜ն կատարեցին,
Այնպե՜ս փառավոր հյուրին պատվեցին.
Մեկը բերում էր ձուկը նոր բռնած,
Մյուսը մի քանի էրե շալակած,
Մեկը վայրենի թռչուններ պես-պես,
Մյուսը՝ տանու հավ և մածնի երես.
Բոլոր համայնքը բերում էր սեղան,
Սեր ու արաժան, թխվածք զանազան։
Նվագում էին քնար ու սրինգ,
Պարում ու երգում տղա ու աղջիկ.
Պար էին բռնում և պառավ ու ծեր.
Այսպես սեր, հրճվանք Տորքը տեսած չէր։

Բ

«Երբ վայելեցի այսքան աղ ու հաց»,
Մեր Տորքն ինքն իրան այնպես մտմտաց,
«Էլ ինչպե՞ս կարամ սրանց հետ կռվել,
Մեկի կամ մյուսի մի մազին դիպչել։

Թող Հայկանուշը ա՛յլ բան պահանջե,
Եվ ոչ իմ եղբարց արյունը ուզե.
Ինչ որ կարող է մարդ անել սիրով,
Նույնն անել կարող չէ նա իր ուժով։
Թող ուժը լինի մարդուս օգնական,
Բայց սերը լինի միշտ գործածական.
Այս մարդիկն ահա անխարդախ սիրով
Ինձ կաշկանդեցին սուրբ աղ ու հացով»։

Գ

Չորս օրից հետո Տորքը բացվեցավ,
Հսկաների հետ այսպես խոսեցավ,—
— Սիրելի եղբայրք, չորս օր է անցել,
Բայց դուք իմ մասին բան չեք իմացել,
Թե ի՞նչ պատճառով, ինչի՞ց ստիպված,
Ես թափառում եմ սար ու ձոր ընկած։
Դուք ինձ ցույց տվիք սեր, ուրախություն,
Քաջերին վայել հյուրասիրություն.
Աստված չե՞ն պահե ձեր տուն ու տեղը,
Հաստատ պահե ձեր սերունդն ու ցեղը.
Ձեզ մոտ եկել եմ ես մի խնդիրքով,
Պատմեմ ահա ձեզ մի քանի խոսքով։
Ուփրեթ բերդումը,— տեղյակ կըլինիք,—
Կենում է մենակ մի սիրուն աղջիկ,
Նրան ընտրել եմ ես ինձ հարսնացու,
Ուզում եմ առնել առանց կռվելու.
Եկել եմ հիմա ձեր ոտքն ընկել,
Ձեր օգնությանն ու խորհրդին դիմել։
Կա՛մ ինձ մորթեցեք, թաղեցեք այստեղ,
Կա՛մ եկեք գնանք ինձ հետ միատեղ,
Որ առանց կռվի առնենք մի աղջիկ,
Խաղաղ ու սիրով կատարենք հարսնիք։
Լռեց մեր հսկան, խոսեց ծերունին.

— Տղերք,— ասաց նա մյուս հսկաներին.—
Հին հեքիաթներում լսած կլլինիք,
Երբ մարդուկները ուզում են աղջիկ,
Եվ այն աղջկան փախցնում են դևեր,
Տանում մութ աշխարհ կամ մթին ձորեր,
Մարդուկն այնտեղից հանում է նրան,
Եվ դառնում նրա քաջագործ փեսան։
Մի մեծ պարծանք է, երբ թվուկ մարդիկ
Ուժով ու կռվով առնում են աղջիկ.
Բայց ի՞նչ պարծանք է, որ զորեղ հսկան
Իր ուժը ցույց տա ապագա կնկան.
Դրա հակառակ՝ եթե ցույց տար սեր,
Այդ ճշմարիտ որ պարծանք կլլիներ։
Ես շատ հավան եմ մեր հյուրի մտքին,
Այսպե՞ս է վայել վեհանձն հսկային։
Մեր Հայկանուշը չէ՛ մութ աշխարհում,
Եվ ոչ գերի է դևերի ձեռքում.
Նա ինքնագլուխ, անկախ, ինքնիշխան,
Կենում է բերդումն իր հայրենական.
Գնացեք ուրեմն քաղցրությամբ, սիրով,
Ուրախ ու զվարթ, երգով ու պարով,
Առաջարկեցեք համառ աղջկան,
Որ տեղիք չըտա մենամարտության։
Ես էլ ձեր հետքից խոնջացած ոտքով
Կըգամ օրհնելու պսակն իմ ձեռքով.
Թողեք ձեր հետ դան տղերք, աղջըկերք,
Որ այնտեղ սարքեն գեղեցիկ պարերգ։
Լռեց ծերունին, քարայրը թնդաց.
Գնա՞նք, հա՞յ գնանք,— ամեն ձայն գոռաց.
— Ես համաձայն չե՞մ,— գոչեց մի հսկա,
Որ թիկն էր տված մի ժայռի վրա,—
Հայկանուշն ունի քսան փեսացու,
Մինը մեկէլից զորեղ, ահարկու.
Այդ գազանները գլուխ վեր առած,
Միշտ թափառում են սար ու ձոր ընկած.
Ծոբոփորցիք են, անխելք ու անբան.
Մարդավարության չունին հետք, նշան։

Ինչպե՞ս հասկացնենք այդ անմիտներին,
Որ քար չդցեն երեխաներին.
Ես հաստատ գիտեմ, որ առանց կռվի
Անհնարին է, ոչինչ չի վինիլ։—
— «Դուք ի՛նձ պահ տվեք երեխաները,—
Պատասխանում է բարեսիրտ ծերը,—
Ես կըպահպանեմ սրանց անվնաս,
Ոչ մեկի գլխից չի պակսիլ մի մազ.
Մենք այսօր կերթանք բերդը կըմտնենք,
Իսկ դուք վաղն եկեք, մենք ձեզ կըսպասենք.
Եթե հավան եք դուք իմ ասածին,
Էլ մի՛ արգելեք երեխաներին»։
Ծիր երեխերքը այս որ լսեցին,
Ալևոր պապի վզին փարվեցին.
«Պապի, մեզ ունինք շատ նետ ու աղեղ,
Կուզե՞ս զորք կազմենք շատ քաջ ու ահեղ»։
Խնդաց ծերունին, ինքն էլ մանկացավ,
Անդենք փոքրերին մի-մի զենք տվավ,
Որին՝ նետաղեղ, որին պարսատիկ,
Որին՝ մի կոպալ գլուխը հաստիկ,
Որին՝ մի դաշույն, որին՝ մի նիզակ,
Մեկին մի ձողի, մյուսին մի մահակ.
Իսկ նրվագածու երգեցիկ աղջկունք
Վերցրին իրենց հետ փող, սրինգ, թմբուկ։
Երեխերքն այսպես մի զորք կազմեցին,
Եվ իրանց պապին շրջապատեցին.
«Հա՜պա, ե՛րեխերք, մի՛ հառաջ, մի՛ ետ»,
Կանչեց ծերունին իրրև զորապետ.
Խնդացին բոլոր հսկայքն ահավոր,
Երբ տեսան մանկանց բանակ զորավոր։

Դ

Գնաց բանակը. կեսօրին ահա
Լուր եկավ արդեն, որ բերդումն է նա.
Բերդումն ըսկսվեց սրինգ ու թմբուկ,
Եվ ամբողջ գիշեր բարձրացավ աղմուկ.

Թնդաց Ուփրեթը, դղրդաց սար, ձոր,
Եվ ձայնը հասավ մինչև Ծոբոփոր։
Ծոբոփորեցի քսան ամդահա
Լույսը չբացված՝ եկել են ահա.
Բերդի պատի տակ իրարից հեռու
Շնթռել են իբրև գազան ահարկու։
Մերոնք էլ եկան Տորքի հետ մեկտեղ
Մինչև երեսուն հսկաներ ահեղ։
Ծոբոփորեցոց Տորքը բարևեց,
Ոչ ոք բարևին չըպատասխանեց.
— «Բարև՛ ձեզ, եղբայրք», կրկնում է Տորքը,
Որ տեսնի նրանց մարդկության շնորհքը.
Դարձյալ լռություն, ոչի՛նչ ձայն, ծպտուն.
Կարծես մարդիկ չեն, այլ համր անասուն։
— «Ես ազգականն եմ այս Հայկանուշի,
Եվ այսօր սրան պիտի տամ մարդի.
Եթե դուք էլ եք փեսացուներից,
Պետք է չըփախչիք ըմբշական մարտից.
Մեկը կը հաղթե մեկէլ ուզողին,
Աղջիկը կըմնա վերջին հաղթողին.
Եթե ուզող եք, եկեք ներս գնացեք,
Աղջկա առջև մենամարտեցեք»։
Ծոբոփորեցիք իսկույն վեր թռան,
Եվ ներս խուժեցին փղերի նման։
Բոլոր հյուրերը բարձրացան վեր։
Իսկ ըմբիշները կանգնեցին ներքև.
Ամենից վերջը Տորքը վեր ելավ,
Եվ Հայկանուշին զեկուցում տվավ.—
— «Բացի հյուրերից եկել են ահա
Իրանց կամքովը քսան ածդահա.
Թող սրանք կռվեն, իսկ մենք կընայենք,
Եվ վերջինի հետ հաշիվ կըտեսնենք»։
— «Հիմա թողեք ինձ,— ասաց ծերունին,
Որ հասկացնեմ մեր այս քաջերին
Ուղիղ կանոնը մենամարտության,
Որ արգելք չըլնին մեր ուրախության.
Եվ հասկացրեց, որ վիճակ ձրգեն,

Վիճակն ում ընկնի, նախ նրանք մրցեն։
Փողեր հնչեցին, թմբուկներ զարկին,
Եվ ըմբիշներին աշխույժի բերին.
Իսկ Հայկանուշը պատշգամբի վրա
Նստած է իբրև մրցման առարկա.
Երբ նայում են նրան փեսացուները,
Կրկնապատկվում է նրանց ուժերը։
Ահա երկուքը ասպարեզ մտան,
Կռվարար ցուլի ու գոմշի նման.
Պըտտեցին երկար, մինչև վերջապես,
Իրար ճանկեցին երկու արջի պես.
Մինը մեկէլից խիզախ, համարձակ,
Թնդաց գետինը նրանց ոտքի տակ.
Մերթ բարձրանում են, մերթ գետնին քսվում,
Մերթ գոմշի նման գլուխ գլխի զարկում.
Ջոքում ու կանգնում, վայր ընկնում կրկին.
Ոչ մեկի մեջքը չի խփվում գետնին.
Ամբողջ երեք ժամ այսպես կռվեցան,
Եվ հետըզհետե ավելի տաքցան.
Իրար միս բռնած առյուծի ճանկով,
Գլորտում էին ինչպես աքցանով։
Վերջն ինչպես եղավ՝ մեկը սայթաքեց,
Մեկէլը նրան հաղթած համարեց.
Բայց ընկած հսկան վեր թռավ կրկին
Եվ նորից բռնեց իր ախոյանին,
Բռնեց, բարձրացրեց, և այնպես զարկեց,
Որ մեկ թզաչափ գետնի մեջ թաղեց։
Եվ նա հաղթվեցավ, հաղթվեցավ իսպառ,
Մեռածի նման մեկնվեց շնչասպառ.
«Ապրի՛ս, քա՛ջ, ապրի՛ս»,— հյուրերն ասացին.
Եվ հաղթող ըմբշին գովաբանեցին.
Բայց մյուսներին էլ նա պիտի հաղթեր,
Որ նպատակին հասած համարվեր.
Եվ հեշտ չէր հաղթել բոլոր քսանին,
Նա հաղիվ հաղթեց միայն երեքին.
Հինգերորդ հսկան չորս հոգու հաղթեց,

Իսկ տասներորդը տանին վայր ձգեց.
Անունն Ավագ էր, ամենից զորեղ,
Սա պիտի հաղթեր և Տորքին ահեղ։

Ե

Տորքը վեր կոչեց Ավագ հսկային,
Եվ նստեցրեց նրան իր կողքին.
— «Դո՛ւ եղար հաղթող,— ասաց մեր հսկան։—
Քեզ արժանի է պարգև պատվական.
Բայց դարձյալ մեկին դու պիտի հաղթես,
Որ մրցանակը լրիվ վաստակես.
Եթե դու ինձ հետ կռվել չուզենաս,
Դարձյալ մեր այս տան փեսա կըդառնաս.
Այս աղջիկներից մեկը քեզ կըտամ,
Եվ քեզ հետ սիրով եղբայր կըդառնամ»։
— «Իսկ Հայկանուշին դու ինքըդ կառնես,
Եվ խաղ ու պարով հարսանիք կանես.
Ես համաձայն չեմ. կըկռվենք մեկտեղ,
Թեկուզ դու լինիս ինձանից զորեղ.
Թող Հայկանուշի համար ես մեռնիմ,
Բայց ոչ ուրիշի ամուսին լինիմ.
Կամ պետք է հաղթել և կամ թե մեռնել,
Հաղթահարություն չեմ կարող տանել»։—
— Հոգնած ես այսօր, դեռ հանգստացիր,
Ու ինձ հետ փոքր-ինչ մոտ ծանոթացիր,
Եվ այնուհետև երբ որ ուզենաս,
Ինձ միշտ հրամանիդ պատրաստ կունենաս։—
— «Շատ լավ պայման է,— ասաց ծեր հսկան,—
Ձեր մրցությունը կըթողնենք վաղվան»։—
Մեր հսկայի խոսքն ըմբիշն ընդունեց,
Եվ իսկույն մի ճոխ սեղան պատրաստվեց,
Կանչեցին և մյուս աժդահաներին,
Որ հացկերույթին մասնակից լինին.
Կերան, կշտացան և զվարթացան,
Հոգնածությունները իսպառ մոռացան։

Զ

Ճաշելուց հետո ծերունի հսկան
Կանչեց ամենին մարմնամարզության.
Խաղեր խաղացին, խաղեր զվարճալի,
Բայց հսկայական և շատ ահռելի,
Այս խաղերի մեջ մեր Տորք աժդահան
Ցուներ ախոյան հավասար իրան.
Ուժ էր ցույց տալիս նա այնքան ահեղ,
Որ բոլոր հսկայք չունեին մեկտեղ.
Գնդա՛կ էր ձեռքին, թե լա՛խտ ահագին,
Կաշկանդե՛լ էր պետք, թե հրե՛լ մեկին.
Յատկելո՛ւ խաղ էր, թե վա՛զ մի ոտքով,—
Տորքն էր միշտ հաղթում, իսկ նրան՝ ոչով։
Երբ ուզում էին գնդակը խլել,
Թափվում էին վրան քսանից ավել.
Որը թիկունքին, որն ուսին նստում,
Մի քանի հոգի ոտքերից բռնում,
Բայց հսկան այսպես փղի պես բարձված,
Վազում էր ինչպես ճանճահար եղած։
Իբրև կարգադրիչ հսկա ծերունին
Խաղից հեռացրեց Անգեղ հսկային.
— Եկ ինձ մոտ նստիր,— ասաց խնդալով,—
Դու խանգարում ես սրանց քո խաղով։
Տորքը հեռացավ, խաղն էլ վերջացավ.
Բայց իսկույն մի նոր հանդես սարքվեցավ։
Ծերունին արդեն տվել էր պատվեր,
Որ մեջտեղ բերեն կաղնու թարմ ոստեր.
Տղա ու աղջիկ եկան խմբովին,
Շրջապատեցին մեր Տորք հսկային.
Իսկ փոքրիկները Տորքի գիրկն ընկան,
Նրանց փայփայեց քնքշացած հսկան.
Մի երգ երգելով ձայնով ներդաշնակ,
Կաղնու ոստերից հյուսեցին պսակ.
— Այս մեկ պսակը,— ասաց ծերունին,—
Պետք է ընծայեմ Ավագ հսկային։

— Ես արժանի չեմ,— ասաց Ավագը,—
Քանի որ մեր մեջ կա հզոր Տորքը.
Նա բարձր է կանգնած ամեն նախանձից,
Այդ երևեցավ հիմիկվան խաղից.
Սա մարմնեղեն չէ, այլ ժայռից կազմված,
Կամ թե՝ ո՞վ գիտե՝ մա՞րդ է, թե՞ աստված.
Մենք պաշտել միայն կարող ենք սրբան,
Եվ ոչ թե դառնալ ախոյան մրցման։—
— Ես զարմանում եմ,— ասաց ծերունին,—
Ծոբոփորեցիք այդչափ խելք չունի։
— Ծոբոփորեցի չե՛մ, ասաց Ավագը,
Մեր գյուղն է Բողնու Երկաթահանքը։
— Այդպե՞ս ասեիր,— ուրեմն հիմա՝
Ինչպես Տորքն ասաց՝ կդառնաս փեսա,
Կընտրես քսանից որին կամենաս,
Եվ հզոր Տորքին եղբայր կդառնաս։
— Դեռ ժամանակ չէ, երբ Տորքն ուզենա,
Ես ուրախությամբ կդառնամ ծառա։
Հուզվեցավ Տորքը, իսկույն վեր կացավ,
Հսկայի ճակտին մի համբույր տվավ.
«Եղբայր ենք», ասաց, և գգվեց նրան,
Ինչպես գթոտ մայր՝ իր սիրուն մանկան.
— «Իսկ դու, Հայկանուշ,— դարձավ ծերունին
Ուրախ ժպիտով դեպի տիրուհին,—
Ի՞նչ առիթ ունիս հիմա բերելու.
Միտք չունի՞ս արդյոք մենամարտելու։
— Ես հնազանդ եմ, ինչպես որ վճռես,
Կըմենամարտեմ, եթե հրամայես։
— Ես կըհրամայեմ, որ մեր օրենքով
Մրցեք իրար հետ, բայց... սիրո՛ զենքով.
Թող սերը լինի ձեր զենքը մի հատ,
Սիրեցեք միմյանց մինըդ մյուսից շատ.
Դու նրան պաշտպա՛ն, նա քեզ պահապա՛ն,—
Ահա օրենքը սուրբ ամուսնության։
Ծերունու առջև Տորք և Հայկանուշ
Ջոքեցին ինչպես երեխայք քնքուշ.

Կաղնի պսակներն առավ ծերունին
Օրհնելով դրավ երկուսի գլխին.
— Հա՜պա, ե՜րեխերք, թմբուկ ու փողեր
Հնչեցեք մեկտեղ, թող թնդան ձորեր...

Է

Այսպիսի երկար զրույցի վերջում
Երկնքից երեք խնձոր է ընկնում.
Բայց մեր զրույցի վերջումն այս անգամ
Վերևից եկավ մի հզոր պատգամ։
Գուգարաց բդեշխն իր այրուձիով,
Եկավ արքայի հրովարտակով.
Ահա բաց արավ մի երկայն գլան,
Միջիցը հանեց գիրն արքայական.
Իր այդ գրովը արքայն ինքնակալ
Կարգել էր Տորքին հզոր կուսակալ,
Եվ իր աշխարհի մասն արևմտյան
Հանձնել էր նրա կառավարության։
Կարդացին գիրը առանձին պատվով,
Տորքն էլ ընդունեց մեծ պատկառանքով։
Եվ այլ թանկագին ընծաներ պեսպես,
Հանեց բդեշխը և բերավ հանդես.
Բերել են մանյակ, գինդ, ապարանջան,
Գոհար ակներով մատնիք պատվական,
Կարմիր մաշիկներ մեր Տորքի համար,
Իր նոր ստացած պաշտոնին հարմար.
Մի հսկայական սամուրե մուշտակ,
Ոսկի և արծաթ մի հարյուր քսակ.
Իսկ Հայկանուշին՝ շղարշ ծիրանի,
Եվ արքայական հակինթ մատանի.
Եվ մանըր մըժուր զարդեր զանազան
(Որ թագուհին էր ուղարկել նրան)։
Ինքը բդեշխը՝ մեծազանձ, հարուստ,
Ընծայեց Տորքին իշխանի հագուստ։

Հսկա հյուրերը մնացին ապշած,
Երբ տեսան Տորքին այսպես մեծարած.
— «Ես ձեզ չասացի՞,— ասաց Ավագը,—
Որ ուրիշ բան է մեր զորեղ Տորքը»։
Հարսնիքն ըսկսվեց մի նոր խնդումով,
Նոր զվարճությամբ ու կերուխումով.
Արքայից եկած արծաթն ու ոսկին
Հորդ անձրևի պես տեղաց գլխներին...

1888

ՎԵՊԵՐ

ԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆՎԵԼ

(Ազգային վեպ)

ԱՌԱՋԻՆ ԳՐՔՈՒՅԿ

Ա

ՈՒԽՏԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Օգոստոս ամսին՝ մի շաբաթ առավոտ՝ Շամշուլդա գյուղի ծխատեր քահանան՝ տեր Պետրոսը, առավոտյան ժամերգությունն ու կից պատարագն ավարտելուց հետո մի համառոտ ծանուցումով հայտնեց ժողովրդին, թե մյուս օրն Աստվածածնի վերափոխման տոնն է, պատարագը պետք է լինի Բերդի ս. Աստվածածնի եկեղեցումը, ուր պիտի օրհնվի և խաղողը։

Այս լուրը թեպետ մի անսովոր լուր չէր, բայց մեծ տպավորություն գործեց լսողների վերա, և ամենքը սրտի մտոք մի-մի խնդրվածք ուղղեցին դեպի Բերդի ս. Աստվածածինը...

Երբ եկեղեցուց դուրս եկած տուն էր գնում տեր հայրը, նրա հետքից գնում էր մի պատանի, որ՝ ինչպես երևում էր ձեռքում բռնած հաբիգայից, որի մեջ դրված էին տեր հոր մաշտոցն ու մասնատուփը, տերտերի մոնթն էր, այսինքն աշակերտը և փոքրիկ տիրացուն։ Արություն էր նրա անունը (և ոչ Հարություն, ինչպես շատերը կոչում էին նորան սխալմամբ)։

Արությունը այս գյուղից չլինելով՝ շատ ուրախ էր, որ մյուս օրը յուր ազգականներից շատերը մոտակա գյուղերից. կգան ուխտ և նրանց կտեսնի։ Չկարողանալով անտարբեր մնալ մի այսպիսի ուրախ բոպեում, պատանի Արությունը մոտեցավ տերտերին և մանկական ժպիտով հարցրեց.

— Տերտե՛ր, էգուց էլ՝ ամեն տարվա նման՝ շատ տեղերից ուխտավորներ կգան, չէ՞։

Տեր հայրը փոխանակ լեզվով պատասխանելու, գլխով արավ, որովհետև նա իր կիսատ թողած սաղմոսներն էր մտքումը մրմնջում, բայց Արությունին այդքանն էլ բավական էր։ Նա իսկույն մի ուրիշ ճանապարհով վազեց մինչև տուն, որ մի բոպե առաջ հայտնե մյուս երեխաներին, թե ինչքան ուրախ է ինքը...

Մյուս օրը՝ կյուրակի առավոտուն՝ կարելի էր տեսնել ուխտավորների մեծ բազմություն։

Շամշուլդու եռանկյունի բերդը, որի հիմնարկության ժամանակը պատմությունը տալիս է Հայկ դյուցազնի որդուն՝ Քարթլոս նահապետին, ընկած է մեջտեղը խրամ և ճավճավ ասված գետերի, որոնք իրանց խառնուրդով պատում են բերդի երեք կողմից անդրնդաձև բնական պարիսպներով։ Բերդի արևմտյան կողմից միայն՝ կիսով չափ փլած հաստ պատի մեջտեղով՝ բացած էր մի մեծ դուռն, որով ներս էին մտնում ջերմեռանդ ուխտավորները և հավաքվում Աստվածածնի դռանը։

Այս եկեղեցին մի փոքրիկ մատուռաձև շինություն է, և ներսը ավագ կողմին կանգնեցրած է մի սևագույն, բավականին լայն ու երկայն որձաքար։ Քարի վերա եղած արձանագրության խոսքով նա անվանվում է «Ջուհար խաչ» և շինած է Սմբատ իշխանի ձեռով մեզանից մի հազար տարի առաջ, բայց ժողովրդի մեջ եղած ավանդությունը այդ քարին տալիս է հրաշալի ծագումն։ «Այդ քարը բուսել է ինքն իրան, ասում է ավանդությունը, և սկսել է օրեցօր երկայնանալ»։ Ուզենալով յուր նշանակությունը հայտնել ժողովրդին, մեկին երևացել է երազումը և ասել է նրան՝ «Եթե ինձ վերա եկեղեցի չեք շինել, ես այնքան կբարձրանամ, որ գլուխս կհասնի մինչև երկինք»... Երազատեսը պատմել է ժողովրդին, և ժողովուրդն էլ՝ վախենալով՝ թե միգուցե՝ ճշմարիտ՝ ասածի չափ բարձրանա և ժամանակով վայր ընկնի իրանց գլխին, շտապել են եկեղեցի շինել, և քարը դադարեցրել է իր երկայնանալը։

Մի կողմից տղա ու աղջիկ, հարսն ու երիտասարդ, պառավ ու ծեր միմյանց սեղմելով՝ մոմեր էին վառում հիշած քարի վերա, մյուս կողմից տեր հայրը կատարում էր պատարագի սրբազան արարողությունը։ Իսկ Արությունը՝ բուրվառը ձեռին՝ համ սարկավագություն էր անում; համ վառոտած մոմեր էր պոկոտում գցում ջրով դրած ամանի մեջը...

Պատարագն ավարտելուց հետո եկեղեցուց դուրս եկան տերտերն ու տիրացուները՝ խաչով, խաչվառով, և դուրսը կատարեցին խաղողի օրհնությունը։

Այս ընդարձակ տեղը, պարզ երկնքի կամարի տակ, կարելի էր տեսնել այժմ բազմաթիվ հոգիք, ամենքն էլ, որքան կարելի էր նրանց, մաքուր հագնված։ Առջևը կանգնած էին տղամարդիկ, իսկ նրանց քամակին կանայք, որոնք իրանց տեսակ-տեսակ հագուստովը հովիտի ծաղկունքների էին նմանում։ Բոլոր գյուղացիք, գաղթական ժողովուրդ լինելով, ով գիտե, ո՛ր գյուղը ո՛ր տեղից եկած, ամենքն էլ պահպանել էին իրանց բուն հայրենիքի հագուստի տարազը։ Շատ կանանց բերան փաթաթած էր սպիտակ տարուբերով, երեսները զանդրուկ գցած, երեսի երկու կողմից հուլունքաշար ճարսանուց կապած ճակատներին շարք, որինն արծաթե և որինը ոսկե, շարքի մեջտեղը՝ ջնաղ. կուրծքերին ու բազուկներին ձվաձև արծաթե կոճակներ. հաղներին՝ որինը միճքանա, որինը դերիս և որինը Քաթիբա։ Շատերի բերանը բաց էր և գլուխը շինած վրացնակ. նշանած ու նշնելու աղջիկերքը. նորահարս ու միջահաս կանայք որոշվում էին միմյանցից իրանց հագուստով։ Կային և սպիտակ հագած կանայք, շլինքներին ու բիլակներին կապած արծաթ դրամներ և կլորացրած մեղրամոմեր։ Դրանք Աստվածածնի աղախիններն էին և ասվում էին «խաչի դուլ», այսինքն սուրբի գերի։ Տղամարդիկ հագուստի կողմանե շատ նման էին միմյանց. միևնույն ձևի դաշույնը կապած ունեին ամենքը և միևնույն ձևի տրեխները հագած բոլորը...

Բայց էլի մի կողմից անընդհատ գալիս էին նոր-նոր ուխտավորներ, որը մի աքաղաղ՝ ոտերը կապած՝ ձեռին, ո՛րը մի քանի ջուխտ տանը ոլորած մոմ ձեռնափայտի վերա թելով փաթաթած, ուսին դրած կամ փափախի դաթը խրած՝ շտապում էին դեպի եկեղեցին, ուր մտնում, վառում էին թե չէ՝ Արությունը հասնում էր իսկույն ու վառած մոմերը պոկոտում գցում ջուրը։ Շատերին դուր չէր գալիս, որ մոմերն այսպես շուտով հանգցնում էին և բարկանալով ասում էին.

— Օրհնվա՜ծ, էս ի՞նչ բան է, որ դու անում ես. թող մի քիչ երվի է՛...

— Վնաս չունի,— պատասխանում էր Արությունը, էս մոմերն էլի ժամումը պիտի երվին, սրանց վարձքը էլի ձեր մեռելների հոգուն կերթա... Հապա ուրիշ տեղեր չե՞ք տեսել, որ ոչ առողջ աք-

բաներն ու ոչխարները ուխտավորների ձեռներիցը խլում են. մենք թամամ էնպես չե՞նք անում... Մի՛ վախենաք, էս մոմերն էլի ձեր մեռելների հոգու համար պիտի էրվին... Այս տեսակ խոսքերով նրանց սիրտը շահում էր պարզամիտ Արությունը, նրանք էլ հավատալով՝ գալիս էին գալիս մի ջեֆմեռանդ աղոթք անելուց հետո։

Վերջապես հոգևոր արարողությունն ավարտեցավ, ամենքն էլ քաշվեցան ծառերի տակը, մատաղները մորթոտեցին, կրակները վառոտեցին և բարեկամ բարեկամի գտնելով, ծանոթ ծանոթի, կազմեցին բազմաթիվ խնջույքներ։ Տեր հորն ու Արությունին էլ հրավիրեցին մե սեղանի վրա, ուր հավաքված էին մինչև տասը-քսան դերդաստան, բոլորն էլ զանազան գեղերից, բայց ամենքն էլ միմյանց մոտիկ բարեկամ։ Աղջկերքն ածում էին դահիրանա-ղարան և պարում, աշըղ Մավջութն ու իր աշակերտ Զուլային էլ իրանց սազի ու քյամանչի ձայները խառնում էին նաղարի դըմբ-դըմբոցի հետ, և երբ աղջկերանց պար գալն ընդհատվում էր, ե-գում էին հայերեն և թուրքերեն տեսակ-տեսակ խաղեր։ Ամենքի մեջ

եք, պիտի իմ տակին կենաք։ Էս տեղեր էլ ասում են խաչին է։ Դրա համար էլ գեղացիք վախում են խաչիցը, ինչ որ ուզում է մովրովը՝ տալիս են։

— Հա՜... Բա տերտերն ի՞նչ է ասում։

— Մեր տերտերն էլ է վախենում. ինչ-որ էրի-մորթի է ստանում, մեծ մասը նրանց է տալիս. ասում է «երկյուղալի է», խաչին կդանգատվին»։

— Հա... Ասում են էդ տերտերը շատ գիտուն մարդ է, երնեկ ես էլ դրա աշակերտը լինեի։ Արություն, խոմ չի՞ ծեծում քեզ։

— Ո՜չ, ահա չորս տարի է ես դրա մոտ եմ, դեռ ոչ մի անգամ մատով դիպած չէ ինձ։

— Ի՞նչ լավ մարդ է։ Ի՞նչ է սորվեցնում քեզ։

— Հին ու նոր Կտակարան, շարական, քերականություն, աստվածաբանություն, էլի ուրիշ հազար ու մի բան...

— Ո՜ւհ, էդ բոլորն էլ գիտե՞ս։

— Ինչպե՞ս չէ։ Ես շարադրություն էլ եմ անում, ոտանավորներ էլ եմ գրում։

— Հա՜... — բացականչեց Մանվելը, առանց հասկանալու, թե ինչ բան է շարադրությունը կամ ոտանավորը, բայց այդ չգիտենալը նրան ավելի զարմացրեց և համոզեց, որ Արությունը մի չնաշխարհիկ բան է, և նրա ձայնն ու գիտությունը երկնային մի ձիրք։

— Այստե՞ղ ով է կենում,— հարցրեց Մանվելը, ձեռքը մեկնելով դեպի մի փոքրիկ խուղ։

— Այստեղ էլ մի հիվանդ մարդ է կենում իրա կնկա հետ։

— Ինչո՞վ է հիվանդ։

— Ոտներից սկսած մինչև գոտկատեղը չորացած է։ Մովրովը թասին մտիկ է տվել, ասել է՝ «մեր խաչիցն է, պիտի սրա տակին օխտը տարի կենաս, որ պրծնես»։

— Երևի խաչին բարկացրել է էդ մարդը։

— Հա՜։ Ասում են դա մի թերահավատ մարդ է էլել. խաչի չի էլել հավատալիս։ Մեկ օր մի հարս նղավել է, ու սկսել է դրան սպառնալիք տալ խաչի բերանից, դա էլ բարկացել է, բռնել է հարսի մազերիցը քաշքշել, ասել է՝ «դու սատանություն ես անում, քեզ խաչը չէ խոսացնում»։ Սրա վերա խաչը բարկացել է ու դրան էդպես պատժել։

— Հա՜... մեռնեմ խաչի ողորմությունին, իմ երեսս դրա ոտի տակը...— ասաց Մանվելը երկյուղից սփրթնելով և երեսին խաչ անելով, և սկսեցին ավելի հեռանալ մինչև հասան Խրամի ձորափը։

— Արի էստեղ մի քիչ նստենք, Արություն,— ասաց Մանվելը։

— Ո՜չ, Մանվել, գնանք, տեսնո՞ւմ ես էն մեկմեկու վրա դրված երեք քարերը, գնանք նրանց վերա նստենք...

— Ո՜ւհ, էս ինչպե՞ս են իրար վերա դրել էս ահագին քարերը...

— Սրանց համար ասում են՝ «երկու եղբայր են եղել, մեկ էլ մեկ քույր են ունեցել։ Երկու եղբայրները երկուսով ներքևի երկու քարը իրար վրա են դրել, երրորդը չեն կարացել. հետո իրանց քույրը եկել է մի ձեռով վերցրել դրել դրանց վերա...

— Ո՜ւհ, ինչքա՜ն ուժով է եղել... ով գիտե, որ երեք գյուղ հավաքվեն մեծով փոքրով, էլի չկարենան տեղիցը շարժել։

Մեր պատանիքը վեր բարձրացան, նստեցան երեք քարի վերա և սկսեցին նայել իրանց առաջով ընկած անդնդաձև խորության վրա, որի միջով Խրամ գետը փրփրուն երեսին գնում էր վշշալով...

— Տեսնո՞ւմ ես ինչ լավ տեղ է,— ասաց Արությունը, ձեռք մեկնելով դեպի Խրամի պատերը։— Ահա էն քարքարուտ տեղը լիքն է նոնով ու թզնով, բայց ոչ ոք չի կարող գնալ քաղելու, ճանապարհ չկա։ Տեսնո՞ւմ ես էն ծակերը, նրանք գաղեք են (քարայրեր), ահ ժամանակներին նրանցում մարդիկ են էլել կենալիս, երևի առաջ հեշտ է էլել էդպես տեղեր բարձրանալը։ Հիմի էլ ով որ քաջ քարագնաց է, կարողանում է գնալ էդպես տեղերը։ Ասում են՝ շատ անգամ արծաթ, պղինձ, հին գրվածքներ շատ են գտնում դրանցում...

— Բայց մեկը որ վեր ընկնի էդ ահագին բարձրությունից, ով գիտե մեծ պատառն ականջը մնա։ Մի բան ասե՞մ, Արություն. էստեղ ամեն ինչ զարհուրելի է։ Մի կողմից էս անդունդները, էս ավերակ վանքերը, էս ահագին բուրգերը, որ ով գիտե քաջքերով լիքն են բոլորն էլ, մեկէլ կողմից էդ թասի մտիկ տվող կնիկը։ Եթե նա ամեն դարտակ բանի համար խաչին գանգատվի, խաչն էլ ում ասես՝ կպատժի։ Դու պետք է զգույշ կենաս, էդ կընկանը չչգրացնես...

— Ինչո՞ւ պիտի չգրացնեմ։ Նա ինձ շատ սիրում է։ Անցյալ օրը կանչեց ինձ, թուշիցս պաչեց, ու թե՝ «ես ձեր գեղումն էի, քու

մերն ասեց՝ որ գնաս, իմ տեղակ երեխիս թուշիցը կպաչես։ Ես էլ նրա ծծիցը պաչեցի, հետո ասեցի՝ «դեղի, մեկ ինձ համար էլ մատիկ տաս թասիդ»։ Նա թե «ջատ լավ»։ Վեր կալավ թասը, ջրով լցցրուց, թասի պռունկներին երկու մոմ վառեց ու սկսեց մատիկ տալ։ Մի քիչ պրկշտոտաց, գլուխը թափ տվեց, մտածեց, հետո ծիծաղեց, թե՝ «լա՛վ, լա՛վ, շատ լավ բախտ ունիս։ Տերտեր կըդառնաս, բայց կնիկդ կմեռնի, կերթաս վարդապետ կդառնաս, հետո եպիսկոպոս կդառնաս, հետո կաթող...», ուզեց թե ասել էր, կաթողիկոս կդառնաս, մեկ էլ խոսքը փոխեց, թե՝ «է՛, դու տերտեր չես դառնալ, քո մոր սրտինը չի կատարվիլ, ձեր տանը քեզ կատեն, դու կերթաս հեռու աշխարհքներ, բայց աստված քեզ չի կորցնիլ, դու էլի ետ կգաս ու անվանի մարդ կդառնաս»։ Էս ասեց ու սուս կացավ, մեկ էլ թե՝ «էս չլինի, էն կլինի, էն չլինի, էս կլինի...»։ Ես հիմի չգիտեմ, թե որը պիտի լինի։

— Էլ դրա համար ինչու ես մտածում, նրա ասած՝ կամ էս կլինի, կամ էն։ Ես իմ բախտին չեմ մատիկ տալ տված, բայց հայրըս ասում է՝ «քեզ պիտի տերտեր օրհնիլ տամ»։ Ինձ հիմի մեր գեղի տերտերի տղան է գիր սորվեցնում, ամեն օր ծեծում է, բայց ես ձեռք չեմ վերցնում։ Հայրս ասում է՝ «Մի քիչ համբերի. ես քեզ էդ խոզարածի ձեռիցը կազատեմ, կտանեմ քաղաք, էնտեղ լավ կսովրեցնեն»...

— Երանի՜ քեզ, Մանվել, կերթաս քաղաքը կտեսնես։ Իմ քույրն էնտեղ է մարդի տված, բայց ես չեմ տեսել...

— Էդ լա՛վ է։ Իմ քույրն էլ է էնտեղ։ Հորդ ասա, թող քեզ էլ բերի քաղաք։ Ասում են՝ քաղքի տղերքը շատ չար տղեք են, գեղացի երեխանցը ծեծում են, մենք որ միասին լինենք, մեզ ո՞վ կարող է ձեռք տալ։ Արություն ջան, արի ընկեր դառնանք, ես իմ օրումը քեզ մտիցս չեմ գցիլ։

— Էդ շատ լավ ասեցիր, Մանվել ջան, ես դեռ իմ օրումս ոչ մի ընկեր չեմ ունեցել. մեր գեղումը մենակ էի կարդում, էստեղ էլ մենակ եմ կարդում. սիրտս շատ է ուզեցել, որ մի ընկեր ունենամ, բայց չեմ ունեցել։ Ո՞ւր էր, եթե աստված տա, մենք միասին լինենք, ես ինչ որ գիտեմ, բոլորն էլ քեզ կսովրեցնեմ։

Ինչպես Արությունի, նույնպես և Մանվելի սրտի մեջ ընկերության զգացմունքը սաստիկ վառ էր, բայց նրանց լեզուն գեռևս տկար էր այդ զգացմունքի հայտարարը լինելու համար։ Նրանց երկար ընդարձակ խոսակցության հետևանքն այն եղավ վերջապես, որ բոլորովին վերացյալ հոգվով իրանց գլխներից մի-մի մազ պոկեցին, և իրար հետ փաթաթելով՝ թաղեցին երեք քարի տակին, առանց մի բան ասելու, բայց կարծես յուրաքանչյուրի սիրտը հետագա խոսքերն էր բարբառում. «Մեր ընկերասիրության ուխտը պիտի անխզելի մնա մինչև այն օրը, երբ մեզ էլ այս փաթույթի պես կթաղեն հողումը»։ Հետո վեր կացան և քայլեցին դեպի իրանց գերդաստանը, երբ Արությունը սկսեց բնազդմամբ երգել հրեշտակային ձայնով Շնորհալու երգերից հետագա տունը

Սիրո քո հուր արկյալ հերկիր,
Բորբոքեսցի ի հոգիս մեր,
Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցե,
Զլույս գիտության քո փայլեսցն
Ի քնո մահու զմեզ զարթուսցե,
Զմիաս բոցովն քո վառեսցե...

Ը

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արությունը ծնվել է Թիֆլիսի մոտակա Խաչին անվանյալ գյուղումը։ Անցյալ դարի վերջերից սկսած մինչև ներկա դարուս սկզբները Ղարաբաղից շատ հայեր գաղթեցին դեպի ամեն կողմ, դրանցից մեկ հատված էլ Խաչենու մհալից եկավ և Բոլնսու ձորումը հաստատեց իր բնակությունը, որտեղից դարձյալ սկսեցին ցրվել. մի քանի տուն միայն գնացին շենացրին մի հին գեղատեղ, և ի հիշատակ իրանց հայրենիքի՝ Խաչենու, նոր գյուղի անունը դրին Խաչեն։ Մի կողմ դնելով պատմական ու աշխարհագրական նյութը, որ մեր խոսակցության թելը շատ չերկարանա, մենք խոսինք միայն այն անձանց վերա, որոնք որևիցե կերպով ազդեցություն են ունեցել Արությունի կյանքի վերա մինչև այն օրը, որ օրը որ պատահեցանք մենք նրան։

Արությունի մայրը՝ Հռիփսիմեն, որի տոհմումը ժառանգա-

կան կերպով շարունակվում էր քահանայությունը, ցանկանում էր, որ ինքն էլ քահանա որդի ունենա։ Այս իսկ պատճառով Արուբյունի ծննդյան քառասունքը կատարելուց հետո, երբ Հռիփսիմեն գնաց ժամ նորածին մանկան համար կյանք մաղթելու, Արուբյունի պորտն ամփոփեց եկեղեցու պատի մեջ և մի ջերմեռանդ աղոթքով նրա կյանքի տնտեսությունը հանձնեց աստծուն և նորա սուրբերին։

Փոքրիկ Թյունին հինգ տարեկան դառած չդառած՝ մայրը տարավ նրան և հանձնեց տեր Ղուկասի աղջկանը՝ Մանիշակին, որ գրագիտության մեջ մի գյուղական տիրացուից պակաս չէր։

Արուբյունը հազար անգամ լսած լինելով յուր մորից, որ նա գիր պիտի սովորի, կարծում էր, թե այդ մի շատ քաղցր բան պետք է լինի, ուստի ինքն ևս շտապում էր, որ մի օր առաջ վայելեր իր երազած չիր ու չամիչը։

Մեծ պասի առաջին երեքշաբթի օրը նա արդեն փափախը վերցրած և Մանիշակի առջև չոքած՝ սովորում էր «Հանուն հորը» և «Խաչ, օգնյա՛ ինձ» ասելը։ Այդ դժվար չթվաց Արուբյունին՝ առաջուց սովորած լինելով յուր մորից, և ոչ այբ, բեն, գիմ ասելը դժվարացավ, որ իր սուր հիշողության շնորհիվ խաղի պես սովորել էր առանց նրանց պատկերը տեսնելու, բայց երբ որ Մանիշակը, երկու մատի մեջ առավ այս և այն գիրը և ստիպեց Արուբյունին, որ ճանաչե, այս այնքան դժվար թվաց Արուբյունին և անհնարին մի բան, որ երբ գնաց տուն ճաշելու, էլ չուզեց վերադառնալ դեպի այբ-բենը։ Այդ նկատեց մայրը և խսկույն լուծիցը մի սամի հանեց, որ Արուբյունին մի լավ խրատե, բայց Արուբյունն աղաչեց մորը, որ չծեծե։— Կերթամ, կերթամ,— ասաց Մանիշակը լավ է քեզանից, նա ինձ չի ծեծիլ։

Եվ ճշմարիտ՝ այնուհետև էլ փախչելու մասին չմտածեց Արուբյունը և հարկարդվեցավ սովորել ամբողջ հեգարանը, որ երբ ավարտեց, Մանիշակը կապոտեց Արուբյունի ոտները և ապսպրեց Հռիփսիմեին, որ գա իր որդու ոտները արձակե։

Հռիփսիմեին այդ սովորությունը ծանոթ լինելով՝ շտապեց իր որդու վարժուհու մոտ և խոստացավ նրան մի ճոխ սեղան։ Մյուս օրը պատրաստեց յուղալի թխվածք, հալվա, հավ, մրգեղեն ու գինի։ Այդ բոլորը մի մեծ խոնչում դարսած՝ դրավ ուսին, գավով գինին էլ տվավ Արուբյունի ձեռքը, տարավ Մանիշակին ու հայտնեց նրան իր անկեղծ շնորհակալությունը։

Մանիշակը շատ գովեց Արուբյունի սրամտությունը, խոստացավ շուտով սովորեցնել ժամագիրքը և գիր գրելը։ Մանիշակն իր խոսքը կատարեց։ Արուբյունը բոլոր ժամագիրքն ավարտեց, էլ մի հատ ալելուա չթողեց, բոլորն էլ անգիր արավ, բայց Մանիշակը էլ չկապոտեց Արուբյունի ոտները, որովհետև էլ ուրիշ սովորեցնելու գիրք չուներ։ Ժամագիրքն էլ ով գիտե որ քունջ ու պուճախից էին գտել։ Դա մի պապական ժառանգություն էր Հռիփսիմեի հորանց տանը մնացած, մի քանի անգամ կազմած, մեջեմեջ պակասած տեղերը կազմարարների ձեռքով գրված։ Բայց Արուբյունի ձեռքումը բոլորովին քրքրվեցավ և նա էլ տարավ թաղեց մի տեղ, հավատալով շատերի կատակով ասածին, թե՝ «գիրքրդ որ թաղես, նրանում ինչ որ կա կթաղվի մտքումդ, էլ ետ չի դուրս գալ»...

Զարմանալի պարզամիտ էր Արուբյունը։ Նա ուներ շատ սուր հիշողություն, իր չհասկացած երկար աղոթքներն ու սաղմոսները շատ հեշտությամբ անգիր էր անում, նմանապես և ամեն մի լսած խաղ, երգ, թեկուզ լիներ թուրքերեն, պարսկերեն կամ զանազան լեզուների մի խառնուրդ, նրա համար միևնույն էր, բառ առ բառ դասավորվում էին նրա մտքումը. այսպես և ամեն մի լսած առակ, հեքիաթ։ Ինչպես որ ուներ սուր հիշողություն, նույնպես ուներ և յուր հիշողությունն ամբարելու մի անկուշտ փափագ։ Բայց գալով նրա դատողությանը, նրա խելքին, շատ միամիտ էր։ Իր հասակակից բոլոր երեխայքը նրանից խելոք էին. նրանք դատելու, հավանելու, չհավանելու, ընտրելու, մերժելու հատկություն ունեին։ Բայց պետք է ասենք, որ Արուբյունի հիմարությունը մի բախտավորություն էր և ոչ անբախտություն։ Ուսումնատվության այդ բարբարոս և խավար ժամանակը ոչ մի խելոք երեխա գիր չէր սովորում, նրա խելքումը չէր մտնում, նրա խելքը հակառակում էր, թեև բնազդմամբ, որ այդ ձևով սովորել անհնարին է։ Այդ պատճառով այդ հիմար ձևի տակ ընկճվում էին մեկ այն երեխաները, որոնք լինում էին դատողությունից զուրկ, խեղճ և միամիտ, և մեկ էլ այն երեխաները, որոնք կարգե դուրս հիշողություն էին ունենում։

Արուբյունը բախտավոր էր և այն կողմից, որ նա չընկավ կոպիտ խալիփաների ձեռք, այլ Մանիշակի, որ շատ քնքուշ մի էակ էր։ Նա սիրեց Արուբյունին մորից առավել։ Ճշմարիտ է, Մանիշակի քնքշությունը Արուբյունին ավելի ևս քնքշացրեց և

շինեց մի սնմեղ գառն գայլերի մեջ, բայց և շատերի աչքն էր ընկնում նա իբրև մի անսովոր շնորհալի երեխա։

Այսպես, երբ որ Արութիւնը տասը տարեկան էր արդեն, մեկ անգամ Շամշուլդու նորընծա տեր Պետրոս քահանան եկավ Խաչեն և իջավ Արութիւնի հոր՝ Ավետիքի մոտ։ Տեր հայրը յուր ուսումն ստացել էր Սանահնի վանքումը, ուր նրա ժամանակ մի քանի գիտուն վարդապետներ կային։ Սա տեսավ Արութիւնին, տեսավ նրա ժամասացութիւնը, գրավարժութիւնը, ձայնի հաչողակութիւնը և շատ հավանեց, համարելով նրան մի ինքնաբույս ծաղիկ Խաչեն անապատում։ Ինքն իրան մի հանճարավոր համանկավարժ կարծելով՝ Արութիւնի երեսի գծագրութիւնը համեմատեց էֆիմերտեի դիմաղնական բացատրութիւնների հետ ու եզրակացրեց, որ նա մի անսովոր ընդունակության տեր տղա պետք է լինի, ուստի ինքն առաջարկեց Ավետիքին, որ Արութիւնի կրթության շարունակությունը իրան հանձնե։

Ավետիքն ուրախությամբ կատարեց տեր հոր առաջարկությունը, որովհետև յուր ծանոթ քահանաներից ամենից բարձր էր համարում նրան թե՛ վարք ու բարքի և թե՛ գիտության կողմից։ Եվ այդպես էլ էր։ Հռիփսիմեի ուրախությանն ևս չափ ու սահման չկար, թեև մի կողմից նրա մայրական զգացմունքը՝ կարոտելու մասին՝ տրորվում էին։

Այսպես ահա, Արութիւնը մի նոր վարժապետ ունեցավ, որի մոտ ստացավ վանական ուսումն, Աստվածաշունչ, շարական, քրիստոնեական վարդապետություն, քերականություն։ Իսկ ազատ կարդալու գրքերն էին՝ Հարանց վարք, Այսմավուրք, Պղնձե քաղաքի պատմություն, Յոթն իմաստասիրաց գիրքը, Տաթևացու հատորները և ուրիշ զանազան բարոյական բովանդակություն ունեցող գրքեր։ Այսպես լրացավ երեք տարին, և տեր հայրն ասաց, որ էլ բան չի թողել, բոլորն էլ սովրեցրել է Արութիւնին։ Եվ ճշմարիտ՝ տեր հայրը ծույլ չէր բան սովրեցնելումը։ Նա ուզում էր մի լավ աշակերտ թողնել իրանից հետո իբրև հիշատակ, և այդպես էլ նայում էր Արութիւնի վերա։ Ոչ մի բան չէր ծածկում նրանից և ամեն բան, ինչ որ գիտեր, սովրեցնում էր։ Նա գիտեր գերեզմանի քար գրել, կազմարարություն, այդ էլ սովրեցրեց Արութիւնին։ Վերջը, երբ ամեն բան հատավ, երբ սովրեցրել էր նաև մատնատումարը, ճյուղագրություն անելու ձևը, ինչ որ յուր կյանքումը մի հեքիաթ, առակ, հանելուկ ու առած

էր լսել, բոլորն էլ ասել էր Արութիւնին, այնուհետև սկսեց մի այնպիսի բան սովրեցնել, որ ինքն էլ պիտի նոր սովորեր. դա էր Ալբերտի Աստվածաբանությունը, որ պիտի ըմբռներ տասներեք տարեկան երեխան։ Միայն Արութիւնը չէր, որ, իբրև մանուկ, շատ միամիտ էր, նրա վարժապետը, որ հիսուն տարեկան մարդ էր, նրանից ավելի միամիտ էր։

Ալբերտի Աստվածաբանության սովորելը պետք է հիմնվեր մի շատ առաքինի վարք ու բարքի վերա և սուրբ կուսին պետք էր միջնորդ ունենալ, ինչպես սկզբումը մի ոտանավորի մեջ ասում է.

Նաև հավետ աղթեսցես,
Զկույսն միջնորդ քեզ արասցես.
Ոչինչ շնորհ ինչ լիցի քեզ,
Թե կույսն իցե առ քեզ անտես։

Այս պատճառով Արութիւնի խաչ ու Ավետարանը դարձավ Աստվածածնի միակ պատկերը, որի առջև ստեպ-ստեպ ծունկ չոքելով՝ միշտ այս էր կրկնում. «Դո՛ւ, ո՛վ տիրամայր, դո՛ւ, որ բթամիտ Ալբերտին տվել ես այնպիսի հիանալի շնորհք, ինձ էլ տուր»... Արութիւնի հոգին վերանում էր Աստվածածնի պատկերի առջև և նրա աչքերը լցվում արտասուքով։ Նա չէր ուզում վեր կենալ տեղից, մինչև չէր զգում մի հանկարծակի տաքություն և աչքերի մթնումն։

Տեսնելով, որ Արութիւնը շատ է ճնշում իրան, մանավանդ պահելով ս. Կարապետի պասը, որ նրան զարդարեր հիանալի շնորհքով, հետզհետե նվազում է և կորցնում առողջությունը, տեր հայրն ազատեց նրան Ալբերտի ձեռից և թույլ տվավ, որ ազատ ման գա, խաղա, որքան կամենում է։ Բայց մտածողությունն արդեն սկսել էր ներս սողալ Արութիւնի ուղեղի մեջ։ Նա յուր ազատ ժամանակը ծառերի տակ, զովարար ստվերներում նրստած քարոզներ էր գրում կամ ոտանավորներ հյուսում, որ տեսնե, թե ս. Կարապետը կամ Աստվածածինը որքան շնորհք են ավելացրել։

Այսպես՝ թեպետ տեր հայրն այլևս չէր դաս տալիս Արութիւնին, բայց երբ գյուղից քեթխուդաները պարապությունից՝ հավաքվում էին տերտերի մոտ զրույց անելու, տեր հայրն այդ

ժամանակ կանչում էր Արությունին և հարցնում արդեն սովորած դասերից։

Այսպես. տեր հայրը մի քանի բառ հոլովել ու մի քանի բայ խոնարհել տալուց հետո հարցնում էր Արությունին.

— Ի՞նչ կնշանակե բառս՝ վարունգ։

— Խի՛ր,— պատասխանում է Արությունը։

— Խարբուզակին գրաբար ի՞նչ կասեն.

— Սե՛խ։

— Զմերուկի՞ն։

— Մեղրա՛պոպ։

— Ըստ մասանց բանի զի՞նչ է բառս՝ «հուշկապարիկ»։

— Է անուն,— պատասխանում է Արությունը, բայց քեթխուդեքն ուզում են իմանալ, թե ի՞նչ ասել է «հուշկապարիկ». ընդհատում են տերտերի հարցաքննությունը և խնդրում են, որ նա առաջ մեկ բացատրե այդ բառի ստուգաբանությունը։ Տեր հայրն իսկույն նույն բառի նշանակությունը հարցնում է Արությունին, որով ուզում է ցույց տալ, թե այն, ինչ որ իրանից են ուզում իմանալ, իր աշակերտն էլ գիտե։

— Ի՞նչ ասել է «հուշկապարիկ», Արություն։

«Հուշկապարիկ» են ասվում այն կենդանիքը, որոնք կեսից վեր ուրիշ կենդանի են, կեսից վայր՝ ուրիշ։ Օրինակ՝ կան այնպիսի կենդանիք, որոնք գոտկից վերև կնկա նման են, իսկ գոտկից ներքև՝ ձկան, թռչունի, իշի և այլն։

Այս բացատրությունը լսելով քեթխուդաներից շատերը զարմանում էին, իսկ ավելի մեծերը այդպես բաներ շատ լսած լինելով՝ շատ չէին զարմանում և ասում էին.

— Աշխարհքումս ինչ ասես, թե չկա. ասած է՝ «Շատ ապրողը չի շատ բան գիտենալ, շատ ման եկողը կգիտենա»։ Մեկ անգամ մի մդրսի էր եկել մեր գեղը, էլ աշխարհք չէր թողել, չիմ էլ ման էր եկել, Հնդստան, Արաբստան, Հաբեշստան, Ջինմաչին, Փռանգստան... մի խոսքով՝ էլ աշխարհք չէր թողել, չիմ էլ ոտի տակն էր տվել։ Ի՞նչ ասես, թե նրա գլխովը չէր անց կացել։ Է՛ն բաներն էր պատմում, որ լսելիս մարդի մազերը փշաքաղվում էին։ Ասում էր մի աշխարհք ընկա, էնտեղի մարդիքը շների նման էին...

— Էդ ճշմարիտ է. «շնագլուխների» աշխարհքն է եղել,— ասաց տեր հայրը։

— Տերտեր ջան, քու կարգին մեռնեմ, նա մդրսի մարդ էր, Երուսաղեմի լուսը տեսած, մեռնեմ զորությունին, սուտ ի՞նչպես կասեր։ Ասում էր մի աշխարհք ընկա, էնտեղի մարդիկը հատ աչքանի էին։

— Ճշմարիտ է,— հաստատեց տեր հայրը,— նրանց կասեն «քյալլա-գյոզ», «թափա-գյոզ», որ կնշանակե «ճակատ-աչք», որովհետև ունեցածները մի աչք է, էն էլ ճակատի մեջտեղը։

— Ասում էր՝ մի աշխարհք ընկա, էնտեղի մարդոց հասակը մի թիզ էր...

— Ճշմարիտ է, դա ասվում է «Թզկաց աշխարհ»...

— Ես ի՞նչ գիտեմ, էնքան բաներ էր ասում, որ ես ո՞ր մեկն ասեմ... Հապա՞. մենք ի՞նչ ենք տեսնում էս ձորի միջին։ Ուսում չլա չունինք, որ բան գիտենանք. հիմի մենք էդ երեխի չափ բան չենք գիտում... Ա՛յ, մեր տերտերը, ճշմարիտ է, շատ տեղեր չի ման եկած, բայց գետնքի տակ ու գլուխը գիտե. ինչո՞ւ, որովհետև ինչ ասես գրքերումը գրված է...

Տեր հայրը շարունակում էր յուր հարցաքննությունը։ Հարցնում էր աստվածաբանությունից և ուրիշ դասերից, Արությունն էլ համարձակ պատասխանում էր և զարմացնում քեթխուդաներին։

— Սա կամ իր մուրազին չի հասնիլ, կամ թե որ ապրեց, տերտերիցն անց է կենալու... զարմանք չան է, էսքան պստիկ տղե՞ն էլ էսքան բան կգիտենա,— ասում էին քեթխուդաները իրար մեջ՝ Արությունի քամակին։

Տերտերակինը, որ շատ անգամ իր ականջով լսում էր այդ խոսքերը, նեղանալով տերտերի վերա, ասում էր նրան.

— Էս գեղրցիք չտես են, հրեխին աչքով կուտեն. պառավ Գևոյի աչքը քար կպատռի, դրանց մոտ ո՞ւր ես բան հարցնում...

Թեպետ տեր հայրն ևս հավատում էր այդպիսի նախապաշարմունքների, բայց «կնկա խուքին չլսելու» նախապաշարմունքն ավելի զորեղ լինելով նրա մեջ, շարունակում էր իր հարցաքննությունները, մանավանդ որ դրանով իր անունն ու պատիվը ավելի ևս բարձրանում էր և հաստատվում ժողովրդի կարծիքը, թե նրան հայտնի է գետնքի տակ ու գլուխը։

Պետք է ասել, որ տեր Պետրոսը որքան որ հարգելի և պատկառելի էր ժողովրդի աչքում իբրև գիտնական, մի նույնքան և առավել ևս նա սիրելի էր դարձել իր անընչասիրությունովը։ Նա սովորություն չուներ նայելու, թե ինչ են տալիս իրան։ Ջտված ժա-

մանակն ևս դարձյալ ոչինչ չէր խոսում։ Շատ չքավոր էր, բայց իր չքավորությունից դարձյալ բաժին էր հանում կարոտյալներին և ինքը ցամաք հացով էր բավականանում։ Նրա հավատի պարզությունը մնացել էր անարատ և անխախտ, եթե միայն կարելի է հավատ անվանել սնահավատությունը։ Նա անխտիր հավատում էր ամեն գրված և տպված գրքի, ամեն մի պառավական խոսքի, ամեն մի հիմար նախապաշարմունքի։ Նա մի ժամանակ պարապում էր «Սողոմոնի» ասված թալիսմանագրով, ինչպես և իր ժամանակի բոլոր գիտնական համարված վարդապետներն ու տերտերները, թեև ծածկաբար։ Այս հանգամանքը ոչ միայն չէր պակասեցնում տերտերի պատիվը, այլ, ընդհակառակն, նրան ավելի ևս բարձրացնում և դասավորում էր աստղաբաշխների կարգումը։ Այս բանը հայտնի եղավ Արությունին բոլորովին դիպվածաբար։

Մեկ օր Արությունը տերտերի առջև շոքած դաս էր առնում Ալբերտի Աստվածաբանությունը։ Խնդիրը աստծո էության և երրորդության մասին էր. խոսքերը խրթին, միտքն անըմբռնելի։ Արությունի աչքերը մթնեցան ու նա վայր ընկավ նվաղած։ Սառը ջուր ածեցին Արությունի վերա և ուշքի բերին։ Այս դիպվածից մի քանի ժամ չանցած՝ տեր հայրը բաց առավ մի հին սնդուկ և նրա միջից հանեց մի մեծ կապոց ձեռագրեր։ Տեր Պետրոսը ծանոթացրեց Արությունին այս նոր մատենադարանի հետ։ Ջոկ-ջոկ տետրակներ էին գունդգունդ մելանով գրված վերնագրերով —«Գիր հոպոպի», «Գիր համասփյուռ ծաղկի», «Գիր հավախոսի», «Գիր չբերք կնոջ» և այլն մանր-մունր գրքեր, իսկ մի մեծ հատորի վերա գրած էր՝ «Գիր Սողոմոնի»...

Արությունը, լսած լինելով այս գրքերի մասին, թե՝ «ով որ ունենա, նա ինչ որ ուզենա աշխարհիս երեսին՝ կանե», նրա երեսի գույնը թռավ սաստիկ ուրախությունից, թե այժմ պիտի ստանա այն վերին գիտությունը, որ էլ ոչ մի հոգեղեն չպիտի կարողանա իրեն հասնել...

Մյուս օրը՝ դեռ արեգակը չծագած՝ տեր հայրը հրամայեց Արությունին, որ հիշյալ մեծ հատորը վեր առնե երթա այգին, ինքն էլ շուտով կերթա։ Արությունն ստանալով յուր ցանկալի առարկան, մինչև այգին մի շնչում վազեց, որ մի րոպե առաջ տեսներ, թե ի՞նչ կա, ի՞նչ չկա նրա մեջ։ Նա գտնելս իր հետաքրքրությունը կես մի չլցուցած՝ տերտերը հասավ երկեն տերոզորմյան ձեռքն առած։

— Արություն, որդի, դու որ «ազա՛ր» ես ունեցել, ինչո՞ւ մինչև հիմա ինձ չես ասել։— Այս ասելուց հետո տեր հայրը բացեց գիրքը, կարդաց մի խլատ՝ թե ժամի քանիսին պետք է գիր անել, և նախ և առաջ մի ժամացույց շինեց։ Թղթից մի շրջանակ կտրեց և քսանչորս հավասար բաժին արավ, յուրաքանչյուր բաժնի վերա մի թվանշան դնելով։ Շրջանակի մեջտեղը ցցեց մի շյուղ և սպասեց արեգակի ծագելուն, որ ծագեց թե չէ, թուղթն այնպես հարմարեցրեց, որ շյուղի ստվերն ընկավ 1 թվանշանի վրա։ Այդ արդեն կնշանակեր, որ ժամի մեկն է առավոտյան։ Գիրը պետք է աներ ժամի երկուսից սկսած։ Արեգակը քիչ-քիչ բարձրանալով՝ շյուղի ստվերը հասցրեց 2 թվանշանին։ Իսկ տերտերը մինչև այդ ախտարք էր անում, որ գտնե Արությունի աստղը։

— Մորդ անունն ի՞նչ է,— հարցրեց տեր հայրը։

— Հռիփսիմե,— պատասխանեց Արությունը։

— Հոն՝ երեք, ոան՝ մեկ, ինին՝ ութ, փյուրը՝ չկա, սեն՝ չորս... Այսպես համրելով և տերոզորմյան գցելով՝ ախտարք արավ տերտերը, այսինքն մոր և որդու անունների տառերի թվերը գրքի աղյուսակի մեջ նշանակած թվերի համեմատ հաշվեց, բոլոր գումարը եղավ քսանինը։ Այդ քսանիններից տասներկուտասներկու դուրս գալով, տեղը մնաց հինգ, որ ասել է Արությունի աստղը հինգերորդ կենդանակերպն էր, որ էր Առյուծը։ Բացեց Առյուծը, որ տեսնե, թե այդ կենդանակերպի տակ ծնված մարդի ցավին ի՞նչ դեղ է ասել դևը Սողոմոնին։ Չարը պատասխանել էր Սողոմոնի հարցին այսպես. եթե այսինչ երեք թիլիսիմները գրվին սև հավի կամ աննշան սև ոչխարի արյունով, մեկով լվացվի հիվանդը, մյուսով ծուխ տա իրան, և երրորդը կարել տա իր աջ բազուկին, այնուհետև նա կառողջանա, և նրան այլևս ոչ մի վնաս չի տալ դևը։

Չար դևի բարի խորհուրդը կատարելուց հետո տեր հայրն սկսեց սովորեցնել Արությունին այս ամեն գաղտնիքները, որ պարունակվում էին այդ գրքի մեջ և պատմեց իր արած փորձերի մասին։ Նա ասում էր, թե եղել է մի Հակոբ անունով պատրիարք, որ շատ լավ է իմանալիս եղել ոչ միայն Սողոմոնի, այլև «Վեցհազարյան» ասված թալիսմանագրի գործ դնելը, որով երես առ երես հարաբերություն է ունենում չարերի հետ։ Նա պատմում էր, որ յուր վարժապետներից մինը ևս՝ Գիրսաս անունով՝ նրանից ետ չէ, որ վարդապետ մարդ լինելով, ուրեմն և հարուստ, թանկ գնով

ձեռք է բերում այն ամեն հատերն ու դեղերը, որ դյուրչության համար կարևոր են, որ եթե մոտ քաղաքներում չեն գտնվում, նա բերել է տալիս Ստամբոլից, Հնդստանից և ուրիշ հեռավոր տեղերից։ Ծեր հայրը հայտնում էր, որ հոգևորականներին արգելված է այդպիսի բաներով պարապելը, բայց նա չէր ասում, որ այդ արգելելու պատճառն այն է, որ այդպես բաները ստություն են միանգամայն և խաբեբայություն, այլ թե քրիստոնյաներին փրկելու համար սուրբեր կան, խաչեր կան և թե ով որ սատանայի զորությունով կփրկե մարդու, նա գերի կընկնի այն սատանայի ձեռքը, զոր երախտահաս է եղել նրան։

— Բայց այս էլ կա,— ավելացնում է տերտերը,— որ եթե գժերի և հիվանդների կլավացնես, էդ մեղք չէ, վարձք է, բայց եթե «չիլա» կմտնես, չարերի հետ պայման կանես, որ ինչ հրամայես, ասածդ կատարեն, և այնուհետև դու էլ սկսես սիրո գրեր անես, կնանիք մերկացնես, մարդիկ գժվացնես, երկինքը կապես, ահա այդ ժամանակը հոգիդ կընկնի նրանց ձեռքը...

Բայց ինչ ուզում է լինի, գիտենալը մեղք չէ, անելն է մեղք։ Միայն ինչ որ անես, պետք է թաքուն անես, որ չիմանան, եթե ոչ՝ էլ տերտեր չեն օրհնիլ, ինչպես որ ինձ չէին օրհնում...

Հիրավի, Ներսես կաթողիկոսն արգելել էր հոգևորականներին կախարդական գրքերի գործադրությունը, հավաքել էր տալիս այդ գրքերը և տերտերին պատժում, բայց հավաքող վարդապետները կամ գործակալները շատ անգամ իրենք էին սեփականում այդ գրքերը՝ հավատալով նրանց հրաշքներին։ Չէին ասում «սուտ է», այլ թե «մեղք է»։ Մեր եկեղեցին նզովում է այդ գործով պարապողներին, իբրև չարագործների, բայց ոչ իբրև խաբեբաների և խաբվածների, որովհետև սատանայի գոյությունն ընդունելուց հետո կարող չէ չընդունել և նրա չարագործությունը...

Արությունը, որ անհագ սիրով հավատ էր ընծայում տեր Պետրոսի բոլոր ասածներին, աշխատում էր, որ ինչ գիտե-չգիտե տերտերը, բոլորն էլ ամբարե իր հիշողության մեջ։ «Գիտենալը խոմ մեղք չէ, անելն է մեղք», կրկնում էր Արությունը տերտերի ասածը և միշտ հարցնում էր տերտերին այն բաների մասին, որոնք շարժում էին նրա հետաքրքրությունը։ Սակայն ոչ մի անգամ չէր պատահում, որ տերտերն ասեր, որ այդ բանի մասին տեղեկություն չունի ինքը։ Նա ամեն բան գիտեր, այսինքն հավատացած էր, որ գիտե։ Եթե, օրինակ՝ Արությունը հարցնում էր երկնային

մարմինների մասին, արեգակի, լուսնի, աստղերի, տեր հայրը պատասխանում էր, որովհետև Գրիգոր լուսավորիչը և Բարսեղ Կեսարացին մի հարց ու պատասխանով լուծել էին այդ խնդիրը։ Եթե խնդիրը վերաբերում էր այն կյանքին, այդ ավելի պարզ էր տերտերի համար, քան թե այս կյանքը. «արդարոց կյանք հավիտենական և մեղավորաց տանջանք հավիտենական»։ Այսպիսով ահա Արությունը տերտերի բոլոր փիլիսոփայությունը սովորեց և ինքն էլ դարձավ մի փոքրիկ փիլիսոփա, մեծ բաներ գիտցող, փոքրիկ բաներին անտեղյակ։ Հայոց պատմագիրներին ծանոթ չէր տեր հայրը, նա չէր տեսել և ոչ կարդացել Խորենացի, Եղիշե, Փարպեցի, Եզնիկ, Դավիթ և այլն, այդ պատճառով ազգ, հայ, հայրենիք, Հայաստան բառերը Արությունի ականջին չդիպան ոչ մի օր։ Խոսք էր լինում միայն հայոց կրոնի մասին, և տերտերն ասում էր՝ «աշխարհիս երեսին միակ ճշմարիտ կրոնը հայոց կրոնն է, բայց հայերն իրանք անմիաբան ազգ են, դրա համար էլ կորցրել են իրանց թագավորությունը։ Հայոց թագավորները շատ գոռող են եղել, շատ ամբարտավան, ձիով են եղել գնալիս եկեղեցի։ Անի քաղաքացիք էնքան գոռոզացել են, որ ծաղրում են եղել բոլոր վարդապետներին։ Ասում են՝ եթե գալիս էր մի երկայնահասակ վարդապետ, նրա առջև դնում էին շատ ցածր գրքակալ, որ վարդապետը կռանա, և իրանք ծիծաղեն, իսկ եթե կարճահասակ էր լինում, բարձր գրքակալ էին դնում, որ վարդապետը վեր-վեր ձգվի։ Մեկ անգամ էլ ահա էդ վարդապետներից մինը անիծեց, ու քաղաքը քանդվեց իսկույն երկրաշարժով։ Հիմա էդ քաղաքը կա, բայց ոչ ոք չի կարող բնակիլ այնտեղ, որովհետև «անիծված է»։

— Ափսո՜ս,— ասում էր Արությունը, սաստիկ բարկանալով ամբարտավանությունն անողների վերա և ընկնում էր մի խորին և անբացատրելի տխրության մեջ։

Գ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Երբ որ Արությունը գնաս-դարով ասաց Մանվելին և հեռացավ, ապա հետև սկսեց երևակայել մի բոլորովին իրան անծանոթ աշխարհ։ Նա գիշերը երազումը տեսնում էր, որ իբր թե քաղաքումն

է, ման է գալիս նրանում, որ Մանվելին գտնի, տեսնում էր նրան իրանից հեռու կանգնած, կանչում էր, բայց Մանվելը չէր լսում. սկսում էր բարձր բղավել, և իր ձայնն ինքը լսելով՝ զարթնում էր և ափսոսում, որ զրկվեցավ Մանվելի տեսությունից։ Շուտով աչքերը խփում էր, որ էլի պատահի Մանվելին, բայց՝ իր ցանկության հակառակ՝ պատահում էր օձերի, վիշապների, որոնցից սաստիկ վախենալով՝ սկսում էր փախչել, բայց օձերը նրա շորս կողմը կտրում էին, նա մնում էր շփոթված, ուզում էր թռչել դեպի վեր և թռչում էր թռչունի պես։ Թռչում էր Արությունը և սկսում էր բարձրից ծիծաղել օձերի վերա և նրանց գլխին օփսուն կարդալ, որ սովորել էր տեր հորից։ Այսպես լողալով օդի մեջ, իջնում էր Արությունը մի բլուրի կամ բարձր քարի վերա, բայց խկույն զարթնում էր և ափսոսում, որ զրկվեցավ թռչելուց։— Ինչո՞ւ, ասում էր, դեպի քաղաք չէի թռչում։ Դարձյալ աչքերը խփում էր, որ երազի մեջ թռչի դեպի քաղաք, բայց, սրա հակառակ, իր գրքերի մեջ գտնում էր զանազան ձեռագիր մատյաններ, որոնց մեջ գրված էին լինում փակագրերով արձանագրություններ, խրթին շարադրություններ, զարհուրելի ճիվաղական պատկերներ, թալիսմաններ, անըմբռնելի աղոթքներ, շարշարվելով, տանջվելով կարդում էր, բայց ոչ մի բառ կարդացածիցը չէր հասկանում. սաստիկ նեղանալուցը հանկարծ զարթնում էր և տեսնում, որ շատ քրտնել է։ Հիշում էր իր երազը. բայց ոչ մի բառ կարդացածիցը միտը չէր ընկնում։

Այսպես մի քանի ամիս անցած՝ տեր հայրը մի երեկո հայտնեց Արությունին, թե վաղը առավոտյան պիտի երթա քաղաք, և նրան էլ ուզում է հետը տանել, ցույց տալ քաղաքը։

Արությունի երեսի գույնը թռավ սաստիկ ուրախանալուցը. և մի քանի րոպե ոչինչ չխոսեց, կարծելով թե երազումն է լսում այս խոսքերը։ Էլ ընթրիք անել չկարողացավ. ուրախությունը հացի տեղ բռնեց, բայց վերահաս գիշերը տարի դարձավ Արությունի համար, նրա քունը երկինք փախավ։

Վերջապես լուսացավ, տեր Պետրոսը հեծավ ձին, Արությունին էլ առավ գավակը և մի քաղքր խռսակցությունով վարժապետ ու աշակերտ ճանապարհ ընկան դեպի Թիֆլիս։

— Տերտե՛ր...(Բան է ուզում հարցնել Արությունը)։

— Ի՞նչ է, որդի... լանդու-լանդու մի՛ անիլ. թամքը կծռես, ձիու մեջքին կգթպչի։

— Չէ՛, ես շիտակ եմ նստած։

— Ի՞նչ էիր ուզում ասել։

— Էն օրը Դարզանց Օսեփը մի բան հարցրեց, չիմացա թե պատասխան էի տվել, շատ ամաչեցի։

— Ի՞նչ հարցրեց.

— Հարցրեց, թե՝ «գժոխքումը քանի՞ հոգի կան», ասացի՝ չգիտեմ...

— Էդ ի՞նչ բան է, որ չես գիտացել. մի՞թե ես չեմ ասել քեզ։

— Ո՛չ, դու ինձ չես ասել, և ոչ էլ կարդացել եմ։

— Էդ ես էլ չեմ կարդացել, որդի. ամեն բան որ գրեին, ոչ թուղթ հերիք կաներ, ոչ թանաք։ Ականջ արա, ես քեզ ասեմ։ Երբ որ Քրիստոս Հոգվովն ի դժոխս իջավ, բոլոր հոգիքն ազատեց, միայն թողեց չորսը,— Կայենին, Հուդային, Սողոմոնին ու Անակին։ Գրիգոր Լուսավորիչը, որ ձեռքը Քրիստոսին տված՝ դժոխքի դռնովը դուրս էր գալիս, ետ մտիկ տվավ։ Քրիստոս իմացավ, որ Գրիգորն իր հոր համար է մտիկ տալիս,— էը՞, ասաց, մեզքդ է գալի՞ս. թող քո խաթրու դժոխքի սյունը ականջիցը հանեն, աչքումը դընեն։ Էնպես էլ արին. նա մնաց էնտեղ։ Գրիգոր Լուսավորիչը չկարաց իր հորն ազատել դժոխքիցը։ Բայց Սողոմոնն իր իմաստությունը դժոխքումն էլ բանեցրեց։ Երբ որ տեսավ, թե Քրիստոսը նրան թողեց էնտեղ, սկսեց գլուխը քաշ գցած ետ ու առաջ անցուդարձ անել դժոխքումը սաստիկ բարկացած... Սատանաները, որ Քրիստոսի ներս մտնելիս փախել էին, նրա գնալուց հետո էլ ետ թափվեցան դժոխքը. դրանք որ Սողոմոնին տեսան, մնացին զարմացած, թե սա ինչո՞ւ է մնացել այստեղ, բարի բանի համար չի լինիլ, երևի Քրիստոսի պակաս թողածը սա է ուզում լրացնել։ Հետո մատենալով Սողոմոնին, հարցրին.— Է՛յ, ուստա Սողոմոն, էստեղ ի՞նչ էս շինում, էդ ի՞նչ ես չափում, չափչփում մտքիդ խորն ընկած։

— Ձեզ համար գերեզմանատեղ եմ չափում,— պատասխանում է Սողոմոնը,— Քրիստոս ինձ հրամայեց, որ այս գժոխքի տեղը մի մեծ տաճար շինեմ, իմ Երուսաղեմում շինած տաճարիս ձևով, այն զանազանությունով միայն, որ այս տաճարն իր հիմքի տակ պիտի ունենա մի կամարակապ խոր անդունդ, ուր պիտի ամփոփեմ ձեզ, որ այնտեղ մնաք հավիտյան և էլ լույս աշխարհ չտեսնեք։ Սատանեքն ասում են.

— Ի՞նչ ես ասում, Սողոմոն, այդ ինչ անգութ մարդ ես դու.

աշխարհի վերա մեզ քի՞չ տանջեցիր, հիմա էլ էստե՞ղ ես ուզում տանջել։ Ո՛չ, այդ քեզ չի հաջողվիլ, այս մեր բնակարանն է... եկե՛ք, եկե՛ք, Ուրիել, Սաղայել, Դակուել... բոլոր դևերն իմաց են տալիս մեկմեկու, հավաքվում են և Սողոմոնին ցիմ-ցիմ վեր են կալնում, դժոխքիցը հանում ու դնում դրախտի ճանապարհի վերա։ Այսպես գնաց Սողոմոնը, որ դրախտն ընկնի, ճանապարհին՝ Զի-թենյաց սարի տակով անց կենալիս՝ վերև մտիկ տվավ, տեսավ Ադամին Քրիստոսի կողքին նստած։ Սողոմոնը Ադամին որ տեսավ, ասեց՝ «Օրհնյա՛ տեր». Ադամն էլ, իր ձեռքը Քրիստոսի կուրծքին դնելով՝ ասեց՝ «Աստված օրհնե»... Քրիստոսն էլ Սողոմոնի իմաստությունը գովեց, թե՝ «ես ինքս գիտեի, որ դու դժոխքումը կենող պտուղ չես»... Ահա էսպես, հիմա իմացա՞ր։

— Իմացա՛, իմացա... ես հիմա երկու բան սովորեցի. մեկ՝ թե դժոխքումը քանի հոգի կան, մեկ էլ որ՝ թե «օրհնյա տերն ու աստված օրհնեն» ինչ ժամանակից է մնացել և ով է եղել դրա առաջին ասողը... Հիմա ես ամեն բան էլ գիտեմ, մնացել են էն բաները միայն, որ գրքերումը չկան։

— Չէ՛, որդի, էլի շատ գրքեր կան, որ դու դեռ չես տեսել... ճարտասանություն, տրամաբանություն, Սաղմոսի մեկնություն, էլի ուրիշ հազար ու մեկ մեկնություններ կան։ Ես չունիմ էդ գրքերը, թե չէ ես ինքս կսովրեցնեի։ Բայց էլ ինչի՞դ է պետք, որդի, շատ կարդալը. չես լսե՞լ, որ ասում են՝

Հաստ ու բարակն է մի գին,
Վայ գա բարակ մանողին...

Տեր Կիրակոսի տղին ճանաչո՞ւմ ես, էն խոզարածին,— ի՛նչ խոզարած, բռի արջ է։— Մի դարտակ «և ևս խաղաղության» է սովորել, ուզում է տերտեր դառնալ։ Ինձ խնդրում են, որ գործակալին հայտնեմ, որ գնա առաջնորդին բարեխոս ըլի։ Հիմի էլ հենց նրա համար եմ գնում։ Եկան հայր ու որդի աղաչանք արին, ես էլ չկարողացա «չէ» ասել... է՛հ, իմ ինչի՞ս է հարկավոր, մեղքն օրհնողի շլնքին... Բայց ես մնացել եմ զարմացած։ Ասում եմ՝ «եկեղեցու յոթը խորհուրդը գիտե՞ս», ասում է՝ «չէ». «շարական ասել գիտե՞ս»,— «չէ». կարդալ, գրել, Տոնացույցի մտիկ տա՞լ—«չէ»։ Օրհնվա՛ծ, ասում եմ, էլ ուրեմն դու ինչպե՞ս պետք է քահանայություն անես։— Ես ի՞նչ անեմ, ասում է, հայրս ինձ ստիպում է, թե

պիտի տերտեր դառնաս, որ իմ տեղը քեզ մնա. չե՞ս կարող, ասում է, սաղը կնքել, մեռածը թաղե՞լ. էդ ես հետո էլ կսովրեցնեմ, մի տասը թուման է առաջնորդի ջանը, ի՞նչ կասի, որ չի ձեռնադրիլ. «կաշառքը դրախտի դուռը բաց կանի»...

Մեկ ասող ըլի դրան, թե դու ինքդ ի՞նչ գիտես, որ դրան ի՞նչ սովրեցնես։ Աղոթքներն ու մաղթանքները բոլորը կիսատ է թողնում, տիրացուի կողքին բոթում, որ շուտով քարոզն ասի։ Ավետարան կարդալիս մի գլուխ հաղում ու նմնմացնում է, ոչ մի բառ ամբողջ չի դուրս թողնում բերնիցը, տառերի մեծ մասը կուլ է տալիս։ Դրանց եկեղեցու շարականի մեծ մասին դեռ ձեռք չի տված. հարության օրերին ապաշխարության շարական է ասում։ Բայց ինչպես թանկ է ծախում իր տերտերությունը, ամեն մի ծես կատարելիս փողն էս գլխիցն է առնում, էն էլ մեկն երկուսով. ում ուզում է՝ հաս է գրում, ում ուզում է՝ չհաս... Չէ՛, դա անիրավություն շատ է անում, դրա համար քահանայությունը մի սուրբ պաշտոն չէ, այլ մի տեսակ շարչություն։ Ես գործակալի պաշտոնակատար եմ, որ ուզենամ, դրան պատժել կտամ, բայց ինչի՞ս է պետք, մենակ դա չէ էդպես, բոլորն էլ էդպես են, մեղավորը դրանց ձեռնադրողներն են... Հապա՛, որդի, էսպես բաներ էլ կան աշխարհքիս վերա, աստված պահի, կմեծանաս, շատ բան կտեսնես...

— Ես որ տերտեր դառնալու լինեմ, մինչև ամեն բան լավ չգիտենամ, չեմ դառնալ։

— Որդի, մարդս պետք է բնական ուսում ունենա, շատ կարդալով ոչինչ չի սովորիլ։ Տես՝ ինչքան մարգարեք են եղել, ինչքան առաքյալներ են եղել, նրանցից ոչ մեկն ուսում չի առել, բայց աստված տվել է նրանց շնորհք, իմաստություն, լեզվագիտություն...

— Բայց մեկ անգամ դու չասացի՞ր, տերտեր, թե մարգարեքն ու առաքյալները որ կան, աստծու աշակերտներն են, նրա ընտրածները, բայց մենք, հասարակ հողեղեններս պետք է հողեղեններից բան սովորենք, պետք է աշխատենք... ես ինչքան պաս եմ պահում, աղոթք եմ անում, բայց որ չեմ սովորում դասս, ինքն իրան անգիր չի լինում։ Ճշմարիտ է, շատ գիշերներ երազումս կարդում եմ զանազան գրքեր, շարադրություններ, բայց միտս չեն մնում։

— Ես էնպես ասել եմ, որ դու աշխատես, չծուլանաս, խոսք էր, բերանս եկավ, ես էլ ասացի. բայց դու հավատա, որ եթե

մեկը ասածը տված խելքիցը զուրկ լինի, նա ինչքան էլ ուսում առած, ոչինչ չի դառնալ։ Հիմա տես, դու սիրում ես ուսում առնելը, էդ սեր ասածդ է գցել քո մեջ. բայց էնպեսները կան, որ ուսման սեր չունին, զորով ստիպում են նրանց, որ մի բան սովորեն։ Բայց դու ուզում ես, այնպես չէ՞, դու ուզում ես շատ ուսում առնես, շատ բան գիտենաս...

— Երբ որ ասում ես, դեռ էլի շատ բան կա, որ ես չեմ կարդացել, ինչի՞ չկարդամ...

— Շատ լավ, հիմի գնում ենք քաղաք, եթե կուզես, ես քեզ կթողնեմ էնտեղ, որ մտնես ուսումնարան և շատ բան սովորես...

Մեր տերտերը հազարից մեկ անգամ մի ուղիղ բան էր ասել, բայց դուրս է գալիս, որ էդ էլ պատահմամբ է եղել. «Խոսք էր, ասում է, բերանս եկավ, ես էլ ասացի»։ Մեր տերտերը, որ գիտե, թե դժոխքումը քանի հոգի կան, բայց չգիտե, որ Գրիգոր Լուսավորիչն այդ ժամանակ դեռ ծնված չէր, մեր գիտնական հոգևորականների ներկայացուցիչն էր յուր ժամանակին, եթե ոչ շատ, գոնե մի քանի նահանգի վերաբերությամբ, և մի քանի վանքերի, որոնց միաբանների բոլոր փիլիսոփայությունը Տաթևացու հատորների մեջն էր ամփոփված։ Այս հանգամանքի վերա կարժե մի փոքր ուշադրություն դարձնել։ Թող հնագետն ու պատմաբանը իրենց հետազոտությունն անեն, իսկ նրանք, որոնք կոչված են լույս սփռելու մեր աշխարհի խավար անկյուններում, թող տեսնեն գրքերի ազդեցությունը ժողովրդի մտավոր զարգացման վերա...

Մեր տերտերը և նրա հետ բոլոր փոքրիշատե աչքի ընկնող նշանավոր կամ անհայտ աբեղաբաններն ու քարոզիչները ի մանկութենե ձգտում են ունեցել դեպի բարին, դեպի կատարյալը, բայց այդ ձգտումը նրանց տարել է դեպի խավարի խորքը, որովհետև խավար էր նրանց շրջապատող կյանքը։ Այդ բանը հառաջ է գալիս ահա ինչպես.— մեկ երեխայի մեջ ինչ-ինչ պատճառով գոյանում է ձգտումն դեպի գրագիտությունը։ Ստիպում է նա իր ծնողացը, որ նրան տան գեղի տիրացուին կամ տերտերին՝ գիր սովորելու համար։ Ծնողքը կատարում են նրա խնդիրքը, տեսնելով, որ, հիրավի՛, նա շատ սրամիտ է, տան մեջ ինչ որ երգում են, իսկույն սովորում է, հեքիաթ, առակ են ասում, նա կրկնում է և աշղների երգածները. այս հանգամանքն արդեն համարվում է առանձին ընդունակության հատկանիշ, որովհետև

ինչպես մեծերի, նույնպես և փոքրերի աշխարհում կան զանազան տիպեր, որոնք թեև դեռ լավ չկազմակերպված, բայց շատ լավ որոշվում են միմյանցից։ Պատանի տաղանդը տիրացուի կամ խալիփայի գիտությունը սեփականելուց հետո համարվում է ուսումնավարտ։ Գնում է նա այնուհետև տերտերի հետ թաղման, մկրտության, հարսանիքի, մի խոսքով վաղորոք ընկնում է հասարակության մեջ, ընկնում է ծերերի շարքը, քեթխուդաների հետ է նստում վեր կենում։ Այս հանգամանքից մեծ օգուտ է քաղում նրա հիշողությունը, նրա դյուրազգացությունը. նա դառնում է շատերի խորհրդակիցը, երաղների մեկնողը, բախտի նայողը, նամակի, պարտամուրհակի, պայմանաթղթի գրողը։ Պատահում է սրա-նրա տանը հին գրքերի, որդոց որդի ժառանգություն մնացած, որ զգուշությամբ և ահ ու դողով պահում են այն հուսով, որ իրանց տանից երբեմեն մինը կարդալ կսովորի և մեծ օգուտ կքաղի նրա հոգեշահ խրատներից կամ խորհրդավոր գիտություններից։ Այս գրքերն առհասարակ լինում են կրոնական կամ իբր բարոյական բովանդակություն ունեցող գրքեր։ Հավաքում է պատանին այդ տեսակ գրքերը և սկսում է գիշերցերեկ կարդալ։ Մոռանում է տնային գործը, ուշ չի դարձնում ոչ մի բանի վերա. գիշերը նրան ճրագ չեն տալիս, նա կարդում է կրակի շեղջի լուսով։ Տաքանում է նրա գլուխը, վառվում է երևակայությունը, ավելանում է ուսման փափագը, հղանում է վերջապես իր ուսման ծարավը զորացնելու զանազան հնարքներ, որոնցից ամենահեշտը և դյուրահասը համարում է վանականությունը։ Եվ նա հասնում է իր այս նպատակին։ Մի քանի տարվա մեջ ամբարվում է բազմակողմանի առասպելներով և սև գլխով վերադառնում ու սևացնում շատերի խելքն ու միտքը։ Դյուրազգաց բնավորության վերա մեծ ազդեցություն են գործում ամենահասարակ համարված դեպքերը. նրան պատահած այս կամ այն գաղափարի տեր մարդը, այս կամ այն ուղղություն ունեցող գիրքը տակնուվրա է անում նրա մտավոր աշխարհը։ Այսպիսի դիպվածների ենթարկվել էր և մեր տեր հոր հանճարը։ Մտաբերելով իր երբեմն ունեցած ուսման փափագը, նույնը տեսնում էր այժմ և Արությունի մեջ և ցավակցում նրան։ Նա չէր կարող երևակայել, որ Արությունի ապագա վարժապետները կարող են բոլորովին այլ ուղղության և գաղափարի տեր մարդիկ լինել, որոնք ոչ միայն չեն շարունակիլ իր կիսատ թողածը, այլ

ինչ որ տվել է, այն էլ կաշխատեն մի կողմ մղել, որ իրանց տալիք ուսումը մի մաքուր անկյուն գտնի նրա ուղեղում...

Տեր հայրն սկսեց պատմել իր տեսած ու լսած բաներից, մինչև հասան Թելեթի սարի ստորոտը։

— Դե հիմի վեր արի,— ասաց տեր հայրը,— ձին մեղք է։ Որ բարձրանանք էս սարի գլուխը, քաղաքը կերևա։

Արությունն իջավ ձիուց և մի քանի քայլ ծանր փոխելուց հետո զառիվեր թռավ արագավազ եղջերվի նման և տերտերին շատ ցած թողնելով՝ ինքը բարձրացավ սարի գլուխը, որտեղ երևեցավ նրան քաղաքը։

Թիֆլիս քաղաքը Նավթլուղից սկսած մինչև Վերա հանկարծ բացվելով Արությունի առջև, ապշեցրեց նրան։ Ջտես, երևակայության աշակերտ, դյուրազգաց և դյուրագրգիռ Արությունը մնաց տեղնիտեղը մեխված, էլ չկարողացավ մի քայլ հառաջ փոխել...

— Հրաշալի՜ տեսարան,— բացականչեց վերջապես Արությունը։— Սա ինքն է «Պղնձե քաղաքը»,— ասում է Արությունը և քիչ է մնում Տալիփի նման «շաբա՜շ-շաբա՜շ» աղաղակելով թռչել սարի գլխից և ընկնել իր ներքև ընկած խորերն ու ձորերը։— էս անպատճառ Սողոմոնի հրաշագործությունովը կլինի էսպես պայծառացած... Ա՜խ, աստված թե տար ինձ, էս բոպեիս կթռչեի ու կսկսեի սրա վրա պտույտ-պտույտ գալ։ Քաղաքացիք կզարմանային, կասեին՝ «էս ո՞վ է, երկնքից է գալիս»... Տերտերը Եղիսեի նման կաղաղակեր. «Հա՜յր, հա՜յր, կառքդ Իսրայելի և հեծյալդ դորա»... հենց կիմանար, թե Եղիայի նման երկինքն են տանում ինձ...

Մինչև Արությունն այսպես մի քանի բոպե կզվարճանար քաղաքի երևույթով, տեր հայրն էլ հասավ, իջավ ձիուցը և մտրակի կոթը դեպի քաղաքը մեկնելով, ցույց տվավ Արությունին, թե ինչ տեղ է առաջնորդարանը, ինչ տեղ է կենում գործակալը, թե այն՝ այսինչ եկեղեցին է ու այս՝ այնինչ։ Վերջապես մտան քաղաքը։ Վախենալով, որ միգուցե Արությունը մոլորվի ու կորչի կամ դրոշկի տակ ընկնի, տերտերն առաջուց զգուշացրեց նրան, որ այս ու այն կողմ չնայի։ Այսպես հասան մինչև Հավլաբար, ուր ձին մի թավլում կապելուց հետո, Արությունի ձեռով ուղարկեց գործակատարի համար բերած թխվածքն ու մեղրահացերը։ Գործակատարի տունը ցույց տալու համար՝ տեր հայրը կանգնեց-

բեց Արությունին մի փողոցում, ձախ ձեռը դրավ նրա ուսին և աջ ձեռը մեկնելով դեպի մի կողմ, ասաց.

— Էսպես կե՛րթաս, հետո աջու կռանդ վրա շուռ կգաս, էնտեղ մի նեղ քուչա կա, էն նեղ քուչովն էլ որ մի քիչ կերթաս, էլի մի ուրիշ քուչա կգա առաջդ, նրանով էլ մի քիչ որ կերթաս, մի տուն կտեսնես՝ մի փոքր բախչա առաջին։ Էնտեղ կհարցնես, կասես՝ տեր Փիլիպոսենց տունը ո՞րն է. կասեն՝ «ա՛յ էս է»։ Կմտնես տուն, փափախդ վեր կալնես ու էդ կտաս իրանց, կասես՝ տերտերն ուղարկեց. Իմացա՞ր։

— Իմա՛ցա, իմացա... էսպես կերթամ, հետո աջի կռանս վերա շուռ կգամ... Կգտնեմ, կգտնեմ...

— Ես գիտեմ, որ կգտնես... էս տեղը մտքիցդ չգցես, ես էստեղ կսպասեմ քեզ։ Դե գնա՛, մի՛ վախենար։ Տեր ուղղեսցե զգնայս քո ի ճանապարհ խաղաղության...

Դ

ՎԻՊԱԿԱՆ ԱՆՑՔԵՐ

Հավլաբարի տներից մինի մեջ թախտի վերա ծալապատիկ նստած՝ խոսում էին իրար հետ երկու մատաղահաս կանայք։ Սրանցից մեկն էր Արությունի քույրը՝ Օսանան, իսկ մյուսը Մանվելի քույրը՝ Հռոմսիմը, որ Օսանին մոտիկ դրացի լինելով՝ եկել էր նրա մոտ գյուղից ստացած մի տխրալի լուր հաղորդելու։

Շատ անգամ աշխարհիս երեսին այնպիսի դեպքեր են կցորդվում միմյանց, որ կարծես մի աներևույթ ձեռք մի որևիցե նպատակով նրանց իրար հետ շաղկապած լինի։ Արությունն ու Մանվելը միմյանց հանդիպում են դիպվածաբար, բարեկամության ուխտ են դնում բնազդմամբ, նրանց քույրերն էլ՝ դարձյալ դիպվածաբար՝ վաղուց արդեն պատահել են միմյանց։ Երկուսն էլ հարս են քաղաքումը, երկուսն էլ դրացի, երկուսն էլ շատ սիրով կապված միմյանց։

— Օսանա՛, գիտե՞ս էս քանի օրս ի՞նչ է պատահել Դաղեթումը։

— Ոչինչ չեմ լսել, ի՞նչ է պատահել։

— Մագթաղի տղան՝ Սոսին, ինքն իրան սպանել է...

— Ի՞նչ ես ասում... Խե՜ղճ տղա. ի՞նչ է պատահել տեսնես, ինչո՞ւ է սպանել...

— Մի չլսված բան. Շամիրն էլ իր կնիկանը՝ Մարիամին է սպանել. Մարիամի նշնելու քուրը՝ Հերիքն էլ գժվել է, նա էլ էնտեղ է գլուխը մահու տվել. բոլոր անբախտությունը նրանից է պատահել, որ Սոսին ուզում է եղել նշանվի Հերիքի վերա, կամ թե նշանած է եղել, չգիտեմ, միայն Հերիքը կենում է եղել իր քվոր կշտին, Սոսին նրանց մոտ թաքուն գնալ գալ է ունենում, Շամիրն էդ տեսնում է, վատ կարծիք է տանում Մարիամի վերա, վերջն սպանում է, տանում է կախ տալիս մերումը, որ ասեն՝ «ինքն է խեղդել իրան»։ Հերիքը գնում է գտնում, վախենում է, թե ինչ է պատահում, գժվում է. Սոսին էլ որ իմանում է, թե ինչ բան է պատահել իր պատճառով, թվանքով խփում է ինքն իրան սպանում. Շամիրն էլ որ հետո իմանում է, թե անմեղ է եղել Մարիամը, նա էլ էնտեղ է ինքն իրան սպանում...

— Ի՞նչ անբախտություն է, տեր աստված, ես հենց իմանում էի, թե մենակ ինձ է պատահել էդպես մի բան, հիմի տեսնում եմ, որ ուրիշներին ավելի վատ է լինում։

— Քեզ ինչ է պատահել, փառք աստծու, դու ողջ-առողջ ես։

— Չէ՛, ես ուրիշ բան էի ուզում ասել, միտքս ուրիշ տեղ գնաց... Խեղճ Մագթա՜ղ, մինուճար մեկ տղա ուներ, աչքի սևն ու սպիտակը, նրանից էլ զրկվեց. էլ ի՞նչ կապրի նա։

— Ի՞նչ ապրել... Գիշեր-ցերեկ տղի գերեզմանիցը չի հեռանում, ասում են, ոչ ուտում, ոչ խմում է, միշտ աղի արտասուք է թափում։ Ով գիտե, հիմա նա էլ գժված կլինի կամ մեռած...

— Նարգիզի նման...

— Ո՞վ է էդ Նարգիզը...

— Դրա պատմությունը երկար է, Հոռոմսիմ։ Սխալ իմ գլուխն էլ է էդպես մի բան անց կացել... Տեղը չի եկել, որ պատմեմ քեզ։

— Աստ, մեկ ասա,— ստիպեց Հոռոմսիմը.— ես նկատել եմ, թեպետ քեզ չեմ ասել, որ մի հին ցավ կա քո սրտումը։ Ինչո-

վա արեգակի նման շուտ-շուտ ամպի տակ ես մտնում, էնպես ես տխրում։ Միտք եմ անում, ասում եմ, ի՞նչ պիտի լինի սրա դարդը...

— Ականջ դիր, հիմի ասեմ. «Ես դեռ օրորոցում, մեր հարեվան Նարգիզը մի խաչ է քաշում իմ օրորոցի վերա, թե Օսանին իմ Ռոստոմի համար պիտի ուզեմ։ Մերս էլ ասում է, շատ լավ։ Զորս տարեկան դառած-չդառած՝ Նարգիզը մեկ օր եկավ, ոսկե զնջիլով մի մեծ խաչ մանեթ կախ տվավ շլինքիցս, թուշիցս էլ պաչեց, թե՝ դու իմ Ռոստոմի նշանածն ես։ Ես էլ շատ ուրախացա, մտքումս ասում էի, էս ի՜նչ լավ բան է. բայց թե ի՜նչ բան է, ես ինչ կգիտենայի։ Ռոստոմն էլ ճշմարիտ է, ինձանից երեք թե չորս տարով մեծ էր, բայց նա էլ ինձ նման ոչինչ չէր հասկանում. անմեղ սրտով մենք շատ սիրում էինք մեկմեկու։ Օր չէր լինիլ, որ կամ ես չերևայի նրա աչքին, կամ նա՝ իմ։ Էսպես մենք իրար սիրով վառված՝ հեքիաթներում ասածի նման՝ ով տարով կմեծանար, մենք օրով էինք մեծանում։ Ռոստոմը դեռ տասնհինգ-տասնվեց տարեկան չկար, տեսնողն ասում էր՝ քսան տարեկան կլինի, բեղատեղերը սևացած, հասակը չինարի դառած... Օր ու գիշեր աշխատում էր, որ ոչ մեկ տղից ետ չմնա թե՛ խաղալում, թե՛ կպչելում, թե՛ որս անելում, թե՛ մարդավարությունում, թե՛ տանուտեղի հոգս քաշելում։ Քանի որ փոքր էի, ես չէի փախչում նրանից, խոսում էլ էի հետը։ Մեկ օր հարցրի, ասեցի՝ «Բա չե՞ս հոգնում, որ էդքան դես ու դեն ես ընկնում»... Նա թե՝ «Չէ՛, Օսան ջան, երբ որ քեզ տեսնում եմ, թե հոգնած եմ լինում, հանգստանում եմ, թե քաղցած՝ կշտանում, թե տխուր՝ ուրախանում...»։

— Օ՜... սերն ի՜նչ ասես, թե չի անիլ... Ես էլ եմ սիրել, ես գիտեմ,— ասաց Հոռոմսիմը...

— Մեկ օր,— շարունակեց Օսանան,— մեկ օր իմ մորաքրոջ տանիցը գալիս էի,— իմ մորաքույրը մի շատ պատվական կնիկ էր, գիր էլ գիտեր, նա ինձ համ գիր էր սովորեցնում, համ կար ու գործ.— հա, իմ մորաքրոջ տանիցը գալիս էի գուլպա անելով, գիրս էլ կռանս տակին, հենց որ հասա մեր տան ներքևը մի ձոր կա, էն ձորը, մեկ էլ տեսնեմ Ռոստոմը, թվանքն ուսին, եկավ առաջս։ Տեղ չկար, որ թաք էի կացել, մնացի սառած, աչքերս գետնին գցած, կանգնած։ Ես հիմի հասկանում էի ամեն բան, գիտեի, որ նշանածիցը պետք է փախչել, պետք է

չխոսկան կենալ։ Ռոստոմը տեսավ, որ ես շատ ամաչեցի, մի քիչ ետ կանգնեց ու թե՝ «Մի՛ ամաչիլ, Օսանա ջան... էդ ի՞նչ է կռանդ տակին դրած, գիր ես սովորո՞ւմ, կուս խոմ չե՞ս դառնալու»։ Ես գլուխս շարժեցի։ Նա թե՝ «էլ ինչո՞ւ ես գլուխդ օրորում, կամ հա՛ ասա, կամ չէ՛»։ Վերջը երբ որ տեսավ, թե ես ոչ խոսում եմ, ոչ գլուխս բարձրացնում, «Ականջ դիր, ասեց, Օսանա, տես ինչ եմ ուզում ասել քեզ։ Ես ոչ հեր ունեմ, ոչ քույր, ոչ ախպեր, մի մեր ունիմ միայն, որ ինչքան ինձ է սիրում, էնքան էլ քեզ։ Մենք դեռ շատ փոքր ենք էլել, որ մեզ նշնել են, հիմի մեծացել ենք, խելքի հասել, կարող ենք ես էլ դու էլ չհամաձայնել, եթե չուզենանք, չսիրենք մեկմեկու։ Ես լսել եմ, որ քո հերը մի քանի տեղ ասել է. «Իմ աղջիկը նշնած չէ»։ Քո հերը մեկ շատ իր ասածի մարդ է, մեկ որ «չէ» ասեց, էլ ողջ աշխարհը նրան չի կարող «հա» ասել տալ։ Բայց ես չեմ վախում, քանի որ ես կենդանի եմ, ոչով կարող չէ քո մեկ մազին դիպչիլ, միայն թե ես գիտենամ, որ քո խոսքն ու սիրտն ինձ հետ է։ Դե հիմի ինձ ասա, մեկ իմանամ, տեսնեմ դու էլ ինձ սիրո՞ւմ ես, թե՞ մենակ ես եմ գժվել, որ ոչ գիշերն ունիմ քուն, ոչ ցերեկը հանգիստ... Ա՜խ, կրակն էլի լավ է, մեկ անգամ էրում է պրծնում»...

«Ես, ճշմարիտ է, շատ ամաչում էի, բայց սիրտ արի. գլուխս բարձրացրի, որ մտիկ տամ Ռոստոմի երեսին, ասեմ. «Ես քեզ սիրում եմ, իմը դու ես որ կաս, ինչ անելու ես, արա. կուզես փախցրու, կուզես սպանիր, որ ուրիշի ձեռք չընկնիմ...»... Բայց Ռոստոմի սփրթնած երեսը, աչքերից կաթկթելիս արտասունքը որ չտեսա՜, գլուխս շշմեց, ձեռներս թուլացավ, գուլպեն ձեռիցս վեր ընկավ, կռացա թե վեր կալնեմ, աչքերս մթնեց, վեր ընկա... հետո իմացա, որ երբ որ ես թուլացած վեր եմ ընկել, Ռոստոմն ամաչել է թե վերցնի, վազել է մորն իմաց տվել, որ շուտ գա ինձ օգնի...

Վերջապես՝ էլ ի՛նչ գլուխդ ցավացնեմ. իմ հերն էստեղ մի բարեկամ ունի, Օվակիմ է ունունը։ Պետք է որ ճանաչես, մեզանից մոտիկ են կենում...

— Սոփիոյի մարդին չես ասո՞ւմ. գիտեմ, ինչպե՛ս չէ...

— Հա՛, հենց նա ինքը։ Դա մի շատ կարդացած մարդ է. իրանից գրքեր է հանում, բաներ է գրում... Ինչևիցե։ Էդ Օվակիմը ամեն բաղաքաղի ժամանակ գալիս էր մեր տուն, մի քանի օր

մնում էր, ինձ դաս էր ասելիս, քաղքիցը բաներ էր առնում ուղարկում, մի խոսքով ինձ շատ էր սիրում, ասում էր՝ քեզ ես պիտի մայրդի տամ, բայց ում որ դու հավանես, ես էլ հավանեմ, նրան կտամ։ Մի բաղաքաղի ժամանակ էլ եկավ մեր տուն։ Իրիկնահացից հետո՝ իմ հերն ու դա մի-մի բարձի վերա թինկը տվին ու սկսեցին զրից անել։ Վերջն էս Օվակիմը խոսքն ինձ վերա բերավ, թե՝ «Գիտե՞ս ինչ է, Ավետիք, մեր Օսանեն գեղի հարմար աղջիկ չէ։ Ափսոս չէ՞ էսպես սիրուն շարմաղ աղջիկը գեղումը թողնել»։

Օվակիմի էս խոսքի վերա հերս մի առակ ասեց, թե՝ «Մի թագավոր երեք տղա է ունեցել, երեքին էլ խրատ է տվել, թե՝ ո՛ր քաղաք, ո՛ր գեղ որ գնաք, ամեն տեղ ձեզ համար մի տուն շինեցեք։ Մեծ ու միջնակ տղերքը ամեն տեղ էլ ահագին պալատներ են շինում, մեծ փող ծախսում, բայց փոքր տղեն ոչ մի տուն չի շինում, միայն ուր որ գնում է, մեկին իրան բարեկամ է շինում։ Մեկ տեղ խաչեղբայր է դառնում, մի տեղ կնքահայր, մի տեղ մեկին մի բարերարություն է անում, մի ուրիշ տեղ ուրիշ տեսակ բարություն անում։ Էսպեսով ամեն տեղ էլ իր լավությունով մի պատրաստի տուն է գտնում իր համար։ Թագավորը վերջը փոքրին է գովում, թե «իմ միտքն էլ հենց էդ էր»... Հիմի նրանը չլինի, Օվակիմ, իմ միտքն էլ հենց էդ է։ Ուզում եմ Օսանին քաղաքումը մարդի տամ, որ քաղաք գնացած ժամանակս էնտեղ մի տուն ունենամ, չգնամ թավլումը վեր գամ, ախոռումը քնեմ ուրիշների պես։ Շնորհակալ եմ, քո տան դուռը միշտ բաց է ինձ համար, բայց քո կնիկը ոչ իմ տրեխներս կհանի, ոչ ոտներս կլվանա. երբ որ աղջիկս կըլի, նա ամեն բան էլ կանի»։ Էս ասաց հերս ու դուրս գընաց, որ տեսնի՝ շներն ո՞ւմ վրա են հաչում...

— Դու ուրիշ տեղ տուն չես կարող շինել, անմեղ տեղը քու տունն էլ կքանդես...

«Էս իմ մոր ասած խոսքն է, որ մտիցս չի ընկնում։ Էն օրվանից մինչև հիմի, որ ահա տասը տարի է, իմ հերը չորս տեղ տուն է շինել, բայց ոչ մեկումը իր սիրտը չի տալիս, որ մի գիշեր պառկի... Ինձ տվավ էստեղ, որ տեսնում ես ինչպես խալխն են, մարդի բերնի թիքեքը համբրում են, մյուս երեք քվորս էլ տվել է ուրիշ գեղերում, մեկը մեկէլից վատ տեղ, օրվան հացի կարոտ։

«Երբ որ հերս դուրս գնաց դուռը, Օվակիմն սկսեց. — Հիմի

դու ի՞նչ կասես Օսանա, կուզե՞ս, որ քեզ համար քաղաքումը լավ տղա, խելոք տղա գտնեմ...

«Ես առաջ չխոսեցի, մտիկ տվի մորս երեսին, տեսա, որ նա հավան չէ նրանց ասածին, բայց վախում է, ոչինչ չի ասում։ Դրա վերա, ես սիրտ արի ասեցի՝ բիձա, դու խոմ գիտես, որ ես նշնված եմ, ինչո՞ւ ես իմ հոր սիրտը պղտորում։ Նա թե՝ գիժ խոմ չե՞ս, աղջի, փոքր ժամանակդ օրորոցիդ վրա թուրքի պես խաղ են քաշել, էդ ի՞նչ նշնել է. հիմի դու մեծացել ես, խելքի ես հասել, կարող ես քո սրտի ուզածին գնալ։ Հիմա դու սիրո՞ւմ ես Ռոստոմին։

— Ռոստոմը շատ լավ տղա է, բիձա, ո՞վ չի սիրիլ նրան,— ասացի...

— Հա՜... դե որ բանն էդտեղ է հասել, էլ ես չեմ խառնվիլ, ես մեղա աստծու... Ես ու իմ աստվածը, գիժ գեղցի պիտի ըլի, որ քաղքցուն երանի տա, քաղաքին թամահ անի։ Խելոք մարդը գեղումը հազար փառքով լավ կապրի, քան թե քաղքումը, բայց որ գեղըցիք իրանք կոպիտ են, չեն իմանում մարդավարի ապրիլը, ո՞վ է մեղավոր։ Մեկ ասող լինի դրանց՝ ա՛յ օրհնված մարդիկ, ջուրը խոմ փողով չէ, ինչո՞ւ չեք ձեզ իստակ, մաքուր պահում... Մի կարգ, մի կանոն չկա. անասունի պես ուտում են, անասունի պես մեծանում։ Որը բուղի նման շլինքը հաստացնում է, գոռում, գոչում, գլուխը հողերին, քարերին խփում, կատաղում մարդի միս ուտում, որը լղարանում է, քոստ ձիու նման սրան-նրան կեղտոտում, ցավով գցում...

«Էս խոսքի վրա հերս դռնիցը տուն մտավ։

— Էդ ի՞նչ է, Օվակիմ, էլի չարացել ես։

— Չեմ չարացել, Օսանին խրատում եմ, որ դու ինչպես կհրամայես, նա էլ էնպես անի...

— Տեսնես Օսանի բերնին ո՞վ է մտիկ անում, ո՞վ է նրան բան հարցնում։ Իմ աղջիկը չի՞, ձեռիցը կբռնեմ, ում ուզենամ, նրան կտամ...

— Դու կտաս, ես գիտեմ քո բնությունը. մեկ որ բարկանաս, էլ աջ ու ձախ չես մտիկ տալ։ Բայց չմոռանաս, որ դու էլ ես ջահելություն ունեցել, դու էլ ես մի ժամանակ սիրել ու սիրվել...

— Ինչեր ես խոսում, Օվակիմ, չըլնի՞ թե քեզ ջադու արին, քեզ բան ասեցին, միջնորդ գցեցին... Քո խաթրը չլիներ, ես հիմա դրանց կոտորել էի...

«Հորս էս խոսքերի վերա մենք իրար երեսի մտիկ տվինք, թե

սա ինչի՞ է բարկացած, մեզ ինչի՞ պիտի կոտորեր։ Նրա բարկանալու պատճառը շների հաչոցն էր։ Ռոստոմը մթնի մեջը թաքուն եկել էր մեր տան հերթի մոտ կուչ եկել, որ իմանա, տեսնի իրան օգուտ են խոսում, թե վնաս։ Շները չէին ճանաչել, սկսել էին հաչել։ Հերս վրա էր հասել, ճանաչել։

«Մյուս օրը, երբ որ Օվակիմը վաղ առավոտուն ճանապարհ ընկավ դեպի քաղաք, հերս սկսեց երևացնել իր բարկությունը։ Հացի ժամանակ էր, մերս կերակուրը պատրաստել էր, ինձ էլ ասաց, որ սուփրեն գցեմ։ Սուփրեն գցեցի, հաց, սոխ, պանիր, մածուն, ինչ կար-չկար տանը, մեջտեղ բերի, որ նրանով հորս սիրտը շահեմ։ Բայց նա հացի չնստեց։

«Ինչպես որ երկինքը, երբ որ կարկուտ կամ սելավ է լինում տալու՝ առաջ մթնում է ու սևանում, ամպերն սկսում են գոռալ, ու էստեղ-էնտեղ պեծին-պեծին են անում, էդպես էլ իմ հոր երեսը ամպեց ու մթնեց, որոտաց, աչքերը պեծին-պեծին արին. ինչ ասաց, ինչ չասաց, չգիտեմ, խանչալը որ կայծակի նման պսպղաց, ես թռա ընկա հորս գիրկը... էլ չգիտեմ, ինչպես էլավ, որ աստված էդպես շուտ ինձ խելք ու միտք, ուժ ու զորություն տվավ... մի աչքաճպելումը մորս գլուխը պիտի թռչեր, թե որ մի քիչ ուշ կտրեի հորս առաջը...

«Հորս ձեռիցը խանչալը վեր ընկավ... մի կես ժամ ոչինչ չխոսեց, գույնը դեղնեց, սփրթնեց, երեսը շուռ տվավ դեպի աղոթարանը, խաչահանեց, «Նահլաթ քեզ, չար սատանա» ասաց ու խանչալը վեր կալավ դրավ տեղը՝ դուրս գնաց...

«Մերս ինչպես նստած էր, էնպես էլ մնաց նստած, քարացածի նման։ Երբ որ հերս դուրս գնաց, մերս բարկացավ ինձ վերա, թե՝ «քեզ ո՞վ ասաց մեջ ընկնիս, կթողնեիր մեկ անգամից կազատվեի դրա ձեռիցը»...

«Մորս թողեցի տանը նստած, ես դուրս եկա դուռը, որ տեսնեմ ուր է գնում հերս։ Նա գնաց գեղամեջ, որտեղ մի քանի ուրիշ մարդիկ էլ կային։ Հետո դրանք ամենքն էլ միատեղ գնացին մը-տան մի տուն։ Տան տերը գինու նոր կարաս էր բաց արել, նրանց կանչեց, թե՝ եկեք մի համն առնենք, տեսնենք ինչպես գինի է։ Մեկ-մեկ չափ գինի պիտի խմեն, էդ՝ նրանց մտքով՝ համը պիտի առնեն...

«Ճրագ վառելու ժամանակն էր, որ հերս եկավ։ Դեռ տուն չմտած, տավարածի վերա բարկացավ, նա էլ մի բան մահանա

արավ, կշտիցը հեռացավ, որ ծեծ չուտի, հետո հերս տուն մտավ։ Մի երկու փետ դրավ կրակի վերա, կշտին նստեց ու սկսեց ինքն իրան խոսել։ Ինչ էր խոսում, ես չէի իմանում, երևում էր միայն, որ ինքն իրան շատ էր վիրավորված համարում, որ իր իշխանությունն ուզում են ոտի տակ տալ, որ իրան մարդի տեղ չեն դնում, չեն խոնարհում, չեն հնազանդում առանց ձայն ծպտուն հանելու։ Վերջը խոսքը դեպի մորս դարձրեց։

— Քեզ եմ ասում, ա՛յ կնիկ, դու ի՞նչ իրավունքով ես առանց իմ կամքի աղջիկ նշնում. գիշերվա կեսին էն անպիտանն ի՞նչ ունի մեր հերթի վերա. կարելի է թե մենք մեր տանը մի թաքուն բան ունինք, չենք ուզում, որ աշխարհք իմանա...

«Մերս տեսավ, որ սուս կենալով ավելի կբարկացնե, սկսեց խոսել ու ասաց.

— Ինչի՞ ես քարացրել սիրտդ, ա՛յ մարդ, ինչի՞ ես մոլորվել, խալխին էլ դու ես խրատում, հիմի ինչի՞ քո գլխին չես խրատում։ Ի՞նչ ես ուզում դու ինձանից, ես քեզ ի՞նչ եմ արել։ Էս դու, էս քո աղջիկը, ի՞նչ ուզում ես արա, ո՞վ է քո ձեռիցը բռնում։ Է՛հ, ես կարծում էի, թե ես էլ սրա մերն եմ, որ սա ինչքան որ քոնն է, էնքան էլ իմն է. ինչպես դու, էնպես էլ ես, չենք ուզում, որ սա անբախտ լինի։ Թե որ կուզես, էլի միտք անենք միասին, խելք խելքի տանք, ինչպես որ լավ կլինի մեր աղջկան համար, էնպես անենք։ Հենց համարենք, թե նշնված չէ, նոր ենք ուզում նշնել։ Ինձ որ մնա ես Ռոստոմիցը լավ տղա չեմ ճանաչում մեր գեղումը, մեզ մոտիկ, մեր ձեռի տակին, մեր աչքի առաջին, մեր աղջիկն էլ նրան է հավանում, նրան է սիրում։ Դու ինքդ էլ նրանում մի փուտ չես գտնում, հենց ուզում ես, որ անբախտացնես երկուսին էլ...

«Մի խելոք մարդ որ լսի էս խոսքերը, կասի՝ «Մի՞թե էնպես մարդ կգտնվի, որ դրա հակառակ մի բան ասե... թե որ կգտնվի, պետք է որ էդ մարդը շատ հիմար լինի»։ Դու ի՞նչ կասես, Հոռոմսիմ...

— Ես քո հոր մասին մի հազար անգամ լսած կլինեմ իմ հորից, թե նրա նման խելոք, ճարտար մարդ չկա մեր գեղերումը,— ասեց Հոռոմսիմը։— Իմ մտքով, պետք է ոչինչ չխոսի, պետք է որ հավանի մորդ ասածին։ Բայց որ իմ հերը լիներ, հենց իրա ձին կքշեր, թեպետ նա էլ հիմար մարդ չէ։ Մեր մարդիկն ամեն բանում խելոք են, բայց մեզ հետ հիմար։ Էդ նրանից է, որ

մեզ հիմարի տեղ են դնում կամ ոչինչ բանի տեղ չեն դնում։ Առաջ իրանք գժվում, մեզ ուզում են, հետո ասում են, դուք սատանա եք, մեզ խաբեցիք։ Դե արի դրանց բան հասկացրու։ Միտս է, շատ անգամ որ մերս մի խելոք բան էր ասում, հերս չէր հավանում, թե՝ «կնկա մազն էրկեն կըլի, խելքը կարճ»։ Կնիկն ու ձին, ասում էր, մի հանգի են, կապը որ ձեռքիցը թողեցիր, էլ նրանից քեզ խեր չկա։ Կնիկը որ կա, սատանա է, էնդուր չեն վարդապետները կնիկ ուզում։ Եվան աշխարհքի տունը քանդեց, ամենքին էլ դժոխք տարավ։ Կնիկ չէ՞ր, որ Օհաննես Մըկըրտչի գլուխը կտրել տվավ, որ մինչև հիմա էլ ոչ մի կնիկ չի կարող ս. Կարապետի եկեղեցին ներս գնալ։ Մեկ օր ես իմ մարդին ասացի, ասում եմ՝ թե որ կնիկը սատանա է, մարդը հրեշտակ, բա ինչի՞ դժոխքումը ոչ մի կնիկ չկա, դիփ տղամարդիկ են։ Նա մնաց սուս կացած, հետո թե՝ էդ անկարելի է, երևի լավ չեն փնտրել դժոխքի քունջ ու պուճախը, մեկ էլ թե՝ սատանեն սատանի ինչի՞ն է պետք, նրա հացը կկտրի... Ինչ որ է, հետո քու հերն ի՞նչ ասաց.

— Այ կնիկ, ասաց, էդ էր մնացե՞լ, որ դու ինձ խրատ տաս։ Դու քիչ-քիչ ինձ մարդությունն էլ կանես, քու լաչակը կգցես իմ գլխին, իմ փափախը կդնես քո գլխին։ Էդ չէ՞ քու ուզածը։ Բայց դու չես գիտում, որ ես կնկա խելքով ապրողներից չե՞մ... Հանեցեք էդ մանեթը, ետ ուղարկեցեք, թե չէ՝ էս սհաթիս երկուսիդ էլ կտորկտոր կանեմ»։ Հետո ինձ վերա բարկացավ, թե՝ «գիտե՞ս քեզ ինչ կանեմ, թե որ այսուհետև տանից դուրս ես եկել կամ էն տղի աչքումն երևացել, քեզ ոչ թե խանչալով, այլ սլոցով կմորթեմ։ Դե՛ շո՛ւտ, հանիր էդ փողը շլնքիցդ։

«Ես մնացի սառած, սփրթնած, չիմացա թե ինչ անեմ։ Մերս արտասուքն աչքերին վեր կացավ, հանեց նշանս, տվավ իրան, նա էլ տվավ տավարածին, որ տանի ետ տա։ Էդ ժամանակը էլ ես չիմացա, թե ինչ ասաց մերս, մեկ էլ էն տեսա, որ գետնի վերա փռվեց։ Ես քանի ջանումս ջան կար, բղավեցի ու ընկա հորս խտիտը. հերս ինձ շպրտեց, պատովը տվավ։ Էլ այնուհետև ես չեմ իմացել, թե ինչ է անց կացել մեր տանը։ Երեք օր անց կացած լսեցի ամեն բան։ Երբ հերս ինձ պատովն է տալիս, գլուխս պատրվում է, ես մնում եմ թուլացած, վեր ընկած։ Հարևանները լսում են, գալիս են տեսնում ես մի տեղ եմ վեր ընկած, մերս մի տեղ, հերս մնացել է երկուսիս մեջտեղը շվարած կանգնած... Մեր

հիմար տավարածն էլ, որ տեսնում է բանն ինչպես է, համ տանում է նշանը տալիս Ռոստոմին, համ ասում. «էլ այսուհետև ապրում ես ի՞նչ անես, Ավետիքը քու խաթրու իր կնկանն էլ սպանեց, աղջկանն էլ»... Ռոստոմի խելքը գլխիցը թռչում է։ Վրա է ընկնում լիքը դաբանչեն տեղիցը վեր բերում, սրտին բռնում, «Ղորթ ես ասում, ասում է, էլ այսուհետև ո՞ւմ համար պիտի ապրեմ, էս ասելն ու դաբանչի կրակ տալը մեկ է անում»...

— Վա՜յ, վա՜յ, վա՜յ... Խե՜ղճ տղա,— բացականչեց Հոռոմսիմը։— Հիմի նրա մերն ի՞նչ կաներ, մինուճար որդուց զրկված...

— Մերը գժվեց... Ինչ որ նա էր անում, ասուված ոչ նշանց տա... Լավ էր որ շատ չապրեց, մի շաբաթ չքաշեց, նա էլ մեռավ։

— Խե՜ղճ կնիկ։ Լավ է որ մերդ ազատվել է մահից։

— Մերս շուտ չլավացավ. գրա վերա նա մեկ տարուց ավելի պառկած մնաց. հերս բժիշկ բերել տվավ լավացրեց։ Ինձ էլ հետո բերին էստեղ մարդու տվին...

— Դուք որ շատ սիրում էիք մեկմեկու, ինչո՞ւ Ռոստոմը քեզ չէր փախցնում։

— Էդ անկարելի էր, իմ հերն էն ժամանակը ինձ էլ նրա հետ կսպաներ... Հապա՞ Հիմի տասը տարի է, որ ես մեր տանը չեմ էլել, մորս երեսը չեմ տեսել, ախպեր ունիմ, որ ասում են գեղումը լավ կարդում է, չեմ տեսել. որ միտս է ընկնում մեր սարերի հով-հով տեղերը, ցուրտ-ցուրտ աղբյուրները, ալվան-ալվան ծաղիկները, հալվում, մաշվում եմ կարոտից։ Էս քանի ժամանակ է, հազում եմ, արտիցս արյուն է գալիս, ես գիտեմ, որ շատ չեմ ապրիլ։

— Դե լավ է, դարդ մի՛ անիլ։ Մեր Մանվելն ասում է, Արուքյունը պիտի գա քաղաք, գլուխս տարել է, ասում է Օսանին հարցրու, տես ե՞րբ պիտի գա։ Դե լավ է, աչքերդ սրբի... Կոպիտ են, կոպիտ մեր գեղացիք։ Մանվելը նրանց լավ է նախշում։ Էսօր մեյդանումն էի, ասում է, մեր գեղիցը մարդիկ էին եկել. ասում եմ՝ «բարով եք եկել, ի՞նչ եք անում, ինչպե՞ս եք». «Փառք աստուծո, ասում են, լավ ենք, պահել է բարի աղոթքդ, դու ինչպես ես, ինչքան փող ես աշխատել»... Էդ ախմախներն, ասում է, էլ չեն ասում, թե ի՞նչ ես սովորել, ասում են՝ ինչքա՞ն փող ես աշխատել։ Ասում եմ՝ հորս ասացեք մի քիչ ալյուր, բան ուղարկի, էստեղ քաղաք տեղ է, ամեն բան փողով են առնում։ Քեզ, ասում են,

ախպերք ունիս, նրանք քո նոքարը խոմ չե՞ն, որ քեզ համար վարեն, ցանեն, կալսեն, աղան, բերեն քեզ տան, որ դու ուտես քեզ համար մարդ դառնաս, հետո գաս ասես, ինչ որ հորական ապրանք ունիք, կեսն իմն է։ Հրեն, ասում են, Ներկարարի տղեն էլ է ուսում առել, էլ հորն ու մորը չի ճանաչում. հոր վերա բարկանում է, թե՝ «երբ որ տեսնում ես, թե ինձ հետ աղա մարդիկ են խոսում, դու ինչի՞ ես միրուքդ տմբտմբացնելով մեջտեղ գալիս, որ տեսնեն, թե ես ում տղեն ե՞մ...»։ Ասում եմ՝ ես էնպես հիմար չեմ լինի, թող ես լավ մարդ դառնամ, ես իմ հոր տղեն լինելս ինձ համար պարծանք կհամարեմ, ձեզ ամեն մեկիդ աչքիս լուսի նման կսիրեմ... Ինձ չեն հավատում, ասում են՝ «Միշտ էդպես են ասում, հետո գալիս են մեր գլխին աղա դառնում»...

Դեռ Հոռոմսիմն իր պատմությունը չէր ավարտել, հանկարծ ներս վազեց մի պատանի՝ կարմրած, քրտնած, երևում էր, որ շատ էր վազել, որովհետև չէր կարողանում շնչառությունը հանդարտեցնել։

— Ահա եկավ մեր աղան,— ասաց Հոռոմսիմը,— ասած է՝ «Անունը տուր, խալիչեն գցիր»... Ի՞նչ կա, ինչի՞ ես էդպես կարմրել, Մանվել...

— Եկել եմ «անկաշաբռնուկ»,— ասաց Մանվելը, և վրա ընկավ Օսանի ականջիցը պինդ բռնեց։— Ասա՛, անկաշաբռնուկ ի՞նչ պիտի տաս։

— Մանվել ջան, կամաց հուպ տուր, հենց ապրես, ականջս ցավում է,— ասաց Օսանան։

— Ես էդպես բաներ չգիտեմ, ասա՛...

— Եթե լավ բան կըլի, կամ ախպերս կըլի եկած, կամ մերս, ես քեզ համար մի շատ լավ ժամաշապիկ կկարեմ. խաչերով, զառերով, նախշերով... Դե ասա՛...

— Արուքյունը եկել է...

— Ղորթ ես ասո՞ւմ. բա դու որտե՞ղ տեսար, ինչի՞ չբերիր ինձ մոտ...

— Ա՜յ ինչպես տեսա, ականջ դրեք, պատմեմ։ Ուսումնարանից դուրս եկած՝ տուն էի գալիս, մեկ էլ տեսնեմ մի տղա, խուրջինը շալակին, մնացել է Շամքոռեցոց եկեղեցու մոտ, շլինքը դես ու դեն ծռմռելով՝ կանգնած։ Սիրտս ասաց՝ մեկ գնա տես էդ ով է։ Վազեցի մոտը, տեսնեմ՝ մեր Արուքյունը...

— Վո՛ւյ քոռանամ ես, ով գիտե ճամփեն կորցրել էր...

— Դե համբերիր ասեմ է՞... Արություն, ասում եմ, էդ դո՞ւ ես... էլ ի՞նչ ասեմ, էլ ո՞վ կարա մեր ուրախությունը լեզվով ասել։ Վերջապես հարցնում եմ, թե՝ էդ ինչ է, ո՞ւր ես տանում։ Նա թե՝ «Գործակալի մոտ պիտի տանեմ էս բաները, տունը չեմ գտնում»... Խուրջինը ձեռիցն առա, ուսովս գցեցի, ասեցի՝ դու հոգնած կըլիս, թող մի քիչ էլ ես տանեմ։ Բաները տարանք գործակալենց տունը, էնտեղից էլ գնացինք թավլեն գտանք։ Տերտերին ասում եմ՝ մենակ ինչու էիր ուղարկում էս խամ երեխին. նա թե՝ «Ճշմարիտ է, ուղարկեցի, բայց մեկ էլ փոշմանեցի, ասած է՝ «երեխին բանի դիր, եղնեն գնա»... Ապրես, ապրես, ասում է, որ Արությունիս օգնել ես»։ Հետո հարցրեց, թե՝ դու ո՞ւմ տղեն ես, ես էլ ասեցի, նա էլ գլխիս պահպանիչ ասեց, շատ լավ տերտեր է...

— Հետո ո՞ւր գնացին, բա ինչո՞ւ չբերիր Արությունին...

— Հետո նրանք գնացին Օվակիմենց տունը, ես էլ՝ միտս չընկավ, որ ուրիշի տուն են գնում, ինքս էլ գնացի Արությունի հետ։ Ուզեցի էնտեղից շուտ գամ, քեզ իմաց տամ, Սոփիոն չթողեց, թե՝ կաց Արությունի մոտ, միասին չայ կխմեք... Շատ լավ կնիկ է էդ Սոփիոն... Օվակիմն էլ է լավ մարդ, ասում են, շատ գիտուն է... Արությունից մի քանի բան հարցրեց. Արությունն էլ շատ լավ պատասխան տվավ... արա ի՞նչ պիտի ասեն նրան, որ նա չգիտենա, աշխարհքիս տակ ու գլուխը գիտե... Օվակիմը շատ գովեց. «Ապրե՛ս, ապրե՛ս, ասեց, ես գիտեի, որ դու խելոք տղա պիտի դառնաս, ասած է՝ լավ եզը մոր ծծին կերևա, լավ երեխեն՝ օրորոցումը»...

— Դե աչքդ լուս, Օսանա,— ասաց Հոռոմսիմը։— Հիմի ախպերդ եկավ, էլ էնքան չես տխրիլ, պահիր մոտդ, Մանվելի հետ միասին կերթան Վանքի ուսումնարանը... Դե, մնա՛ս բարով, հիմի սկեսուրդ կգա, կասի՝ էս ի՞նչ է, միշտ մեր տանն է նստած, ով գիտե՝ ինչե՞ր կըլի խրատ տալիս հարսիս...

— Ես հիմի կերթամ կտեսնեմ ախպորս, թե որ տերտերը կըթողնի, կբերեմ ինձ մոտ... Ապրե՛ս, ապրե՛ս, Մանվել ջան, որ ինձ ուրախացրիր... Ժամաշապիկդ չեմ մոռանալ, ասածս ասած է...

— Քեզանից ժամաշապիկ չեմ ուզում, միայն թե Արությունին պահես մոտդ, էլ չթողնես գեղը գնա,— ասաց Մանվելը և դուրս գնաց քրոջ հետ...

Ե

ՆԱԽԸՆԹԱՑ ԳԼԽԻ ՍԿԻԶԲԸ

Շաբաթ երեկոյին Հավլաբարի մեյդանից մոտիկ տներից մինի պատշգամբի վերա նստել էր Արությունը և անակնթարթ նայում էր մեյդանում անց ու դարձ անող մարդկանց, որոնցից որը դրոշկում նստած, փափախը թեք դրած, պապիրոսը բերնին՝ շտապեցնում էր դրոշկապանին, որը ոտով էր վազում դես ու դեն։

Քիչ-քիչ մութը վրա հասավ, մեյդանի չորս կողմով շարված դուքաններում սկսան վառվիլ ճրագները և կշեռքները մին քան զմյուսը բարձր ձայնով չրխկալ։ Որն սկսավ կանչել— «Մոթալի՞... կա՛յի մոթալի՞...», որը՝ «Խրամուլի՞... խրամուլի՞...», որն էլ՝ «Աբա՞, ահա՞» բղավելով՝ զրնգացնում էր կախ տված փոքրիկ զանգակը և կշեռքը դարտակ չրխկացնում...

Ով ինչ բարիք որ ուներ վաճառելու, յուր ձայնի ուժովը հրավիրում էր գնողներին։ Կանաչի ծախողն անգամ, յուր ձայնի բոլոր ուժը մի տեղ հավաքած, բղավում էր.— Լա՛վ կանանչին, լավ կանանչին, օ-հո-հո-հո... սլա՞ն է՞... Մի բարակ և քաղցր եղանակ միայն մանրուքի խանութների առջևից էր լսվում, ուր նստած էին երեխայք և մի սեղան՝ խունկ ու մոմ վերան՝ առաջները դրած՝ հրավիրում էին տուն գնացող պարոն ուստաներին, որ խունկ ու մոմ առնեն և հրավիրում էին երգելով՝

Համեցե՞ք, ո՞ւստե՞ք,
Խունկ ու մոմ տա՞րե՞ք,
Հոգու վարձք ա՞րե՞ք...

Այսպես, բարակ ու հաստ, քաղցր ու կոպիտ, բարձր ու ցածր ձայները, դրոշկաների դոգոցի ու զանգակների ղողանջյունի հետ խառնված՝ դրմբացնում էին քաղաքը և ապշեցնում Արությունին։ Այն՝ որ մի նուրբ ճաշակ ունեցողին կարող էր ձանձրություն պատճառել, Արությունին հիացնում էր։ Նա ինքն իրան մոռացել էր և դեռևս շատ կնստեր դրսում, եթե ներսից Օվակիմը չկանչեր նրան։

— Արի՛ ներս, Արություն, արի,— ասաց Օվակիմը.— ես

էգուց քեզ կտանեմ քաղաքը ման կածեմ, ինչ կա, չկա, դիպ էլ կտեսնես։

Վեր կացավ Արությունը և մտավ ներս, ուր տեր հայրը նըստած էր թախտի վերի ծայրին։ Թախտի դիմաց դրված էին մի քանի հասարակ աթոռներ և մի գրասեղան։ Արությունը նստեց գրասեղանի մոտ, ուր մի քանի հատոր գրքեր կային դրված։ Արությունը հետաքրքրությամբ նայեց գրքերի վերնագրերին, նրանցից մեկը վերցրեց և սկսեց լուռ կարդալ։ Գիրքն հասարակ բարբառով էր գրված։ Առաջին անգամ պատահելով իրան բոլորովին հասկանալի բարբառով գրված մի գրքի, Արությունը չկարողացավ յուր զգացած հոգեկան զվարճությունն այնքան ծածկել, որ Օվակիմը չնկատեր։

— Արություն, ես տեսնում եմ, որ քեզ շատ գրավեց էդ գիրքը, աբա մեկ բարձր կարդա, տեսնեմ ինչպե՞ս ես կարդում։

— Ո՞ր երեսից սկսեմ,— հարցրեց Արությունը։

— Հենց է՛դ կարդա, ինչ որ կարդում էիր...

Արությունն սկսեց կարդալ հետևյալ տողերը.

«Քաղաք որ մտնում եմ, հենց իմանաս, թե աշխարհք սով ա ընկել. էլ ոչ խեր կա, ոչ բարաքյաթ։ Հացն ու ջուրն էլ որ փողով ըլին ծախում ու առնում, էլ ում դուռը գնաս, ո՞ւմ ձեռդ դեմ անես։ Բազի վախտ էլ տեսել եմ, որ դուքաններում կիտուկ-կիտուկ մանեթները, ոսկին ածած, ամեն մեկ փող համբրելիս էնպես գիտես, թե փողատիրոջ հոգին հետն ա դուս գալիս. էնպես են սրթսրթում իրանց խազինի վրա, հենց իմանաս, թե առաջներիցը թև կառնի, կթռչի։ Մեկ ձեռդ դեմ արա՛, շան որդի ըլիմ, ո՛չ մեկ բուռը հողի արժանանամ, թե սուտ ըլիմ ասում, աստված, երկինք, գետինք, ծով, ցամաք, մեկ ծեղ էլ չեն տալ, որ աչքդ կոխես։ Թո՛ւհ, մարդ իրա հոգին պետք է ծախի, որ փողի թամահ անի։ Հազար տարի էլ որ քու ազիզ սիրելու դառնն էլ շլինքդ ծռես, կանգնես, սովու մեռնիս, հազար տարի անոթի փորով զկոտաս, մեկն էլ ա քեզ ուսն չի կանչիլ, մեկ սառը ջուր խմացնիլ։

«Էն մարդն էլ, որ քու տանը կերել, խմել, ամսով, տարով քու աղ ու հացի վրա է ելել, աչքը աչքիդ առնելիս՝ հենց գիտես, թե գյուլլով խփեցին։ Եղևն ա քեզ դեմ անում ու աչքը քամակը գցում։ Տո՛, փողդ էլ չհանդամը գնա, դու էլ, տո՛, զուռումսաղ, ասենք թե աչքդ ա քոռացել, ինձ չես ուզում որ ճանաչես կամ սուփրիդ դրաղը նշանց տաս, տո՛, գլխիդ քար ընկնի, ինչ կերել ես, քթովդ դուրս գա, խնդրել եմ աստվածածնից՝ զահրմար ըլի, էն դինյումը առաջդ գա, աչքերդ բռնի, տո՛, մեկ բարով-աստծո բարին էլ ա գլխիցդ ղհաթ էլե՞լ, որ դունդդ ցցում ես ու եդ փախչո՞ւմ։ Մեկ բարի լիս, բարի օր էլ ա տուր է՛. հո բերնիցդ քրեհ չե՞ն ուզում, ի՞նչ ես քարացել, էգ էլ հո փողով չի՞, ա՛յ փողակեր, հողակեր...

— Էդ ի՞նչ գիրք է,— հարցրեց տեր հայրը, միջահատելով Արությունի կարդալը։

— «Վերք Հայաստանի»,— պատասխանեց Օվակիմը, վերք բառին մի ցավակցական ձայն տալով,— դա մի շատ պատվական գիրք է, նոր է տպվել, բայց ափսո՛ս, որ մեր ժողովրդի մեջ չի տարածվում էդպես գիրքը։

— Թե որ էժան է, ես մի հատ կառնեմ, և կտրծեմ ամեն մարդ էլ կառնի։

— Բանն էժանության վրա չէ, տեր հայր, մեր ժողովրդի ճաշակը խանգարված է, նա ստացել է մթնասեր ու խավարասեր բնություն, նրան եթե էնպես բան է ասվում, որ իրա խելքիցը բարձրը է ու ինքը չի հասկանում ոչ նրա լեզուն, ոչ միտքը, բերանիցը ջուր է գնում, զմայլում, զարմանում է, գովում, բարձրացնում, թե տեսեք, էնպես բան ասեց, որ ոչով չհասկացավ, բայց եթե իրան օգուտ, հասկանալի ու խելքիցը մոտիկ բան ես ասում, ծիծաղում է վերադ, ասում է, էդ ով չգիտե, որ էդպես է, էդպես հեքիաթներ ես հազարը գիտեմ... Բայց, իհարկե, երբ որ էդպես գրքերը կշատանան, մեր նոր սերնդի աչքը կբացվի, կտեսնի, որ հնիցն էլ օգուտ չկա, գրաբարը ետ կքաշվի, իր տեղն աշխարհաբարին կտա, էն ժամանակն էդպես գրքերն էլ կնստանան իրանց վայելուչ հարգն ու պատիվը։ Դրա գրողը մի ճշմարիտ ազգասեր, մի երևելի տաղանդի տեր մարդ է եղել։ Պետք է մի հարյուր տարի անց կենա, որ էդպես մի գրող էլի դուրս գա հայերից։ Ով որ մոտիկ ծանոթ է մեր ժողովրդի կյանքին, մի զարգացած խելք ու միտք ունի ու սիրող սիրտ, միայն նա՛ կարող է հասկանալ, որ էդ գրքի խոսքերը հեղինակի սրտի արյունովն է գրված։ Էդ հեշտ բան չէ, բայց ռամիկ ժողովուրդը ծիծաղում է է՛ն խոսքերը կարդալիս, որ հեղինակի աչքերից արտասունք են բերել... Էհ, ինչևիցե... Դու, Արություն, հավանո՞ւմ ես էդ գիրքը։

Արությունը ոչինչ չխոսեց, բայց այն անմեղ ժպիտը և ամոթխածությունով լի անկաեոն շարժվածքը, որ նա երևացրեց, գա նշան էր խորին համաձայնության...

— Քեզ եմ բաշխել էդ գիրքը,— ասաց Օվակիմը,— քանի որ փոքր ես, էդ գիրքը քեզ համ կուրախացնի, համ կտրտմացնի. բայց երբ որ կմեծանաս, էն ժամանակն էլ ուրիշ տեսակ մտածմունքների մեջ կձգի քեզ...

Արությունն իր հոգու մեջ անչափ շնորհակալ եղավ Օվակիմից, բայց բերանացի չկարողացավ արտահայտել։

Այս միջոցին ներս մտավ Օվակիմի կինը՝ Սոփիոն, նրա հետ մտավ և մի ուրիշ ջահել կինարմատ մաքուր ու պարկեշտ հագնված, քնքուշ ու գեղեցիկ դեմքով և գգվեց Արությունին մի այնպիսի ջերմ սիրով, որպիսին սակավ եղբայր ստացած կլինի իր քրոջից։ Այո, անծանոթուհին, Արությունի քույրը՝ Օսանան էր, որի աչքերի հորդ արտասուքը, քաղցր ժպիտի հետ խառնված, ցույց էր տալիս նրա ուրախության, հուզմունքի անչափությունը։ Մի քանի րոպե տիրեց լռություն, և ապա խոսեց Օսանան և խնդրեց տեր հորից, որ թույլ տա Արությունին իր մոտ տանելու։ Տեր հայրը կատարեց նրա խնդիրը, և մի քառորդ ժամ չանցած, Արությունը դուրս եկավ Օվակիմի տանից՝ մի ձեռքում «Վերք Հայաստանին» բռնած, իսկ մյուս ձեռքը իր քվորը տված...

— Օվակիմ, էդ աղջիկը ձեռիցս չխլի՞ Արությունիս,— հարցրեց տեր հայրը, երբ որ քույր ու եղբայր դուրս էին եկել արդեն...

— Խլում են, թող խլեն, ի՞նչ ես դարդ անում,— ասաց Օվակիմը.— Էստեղ քաղաք տեղ է, նրան շատ չեն պահիլ։ Շատ էլ որ ուզենա Օսանան, նրան ով մտիկ կանի։ Նա մի սկեսուր ունի, որ, աստված ազատե, գյանջեցի է՝ քաղքցի դառած. որ մի բանի վերա խոսում է, էլ չի լռում... Չէ, տեր հայր, նա գեղի տղա է, կուշտ ուտել ու խմելու սովոր, էստեղ ո՞վ նրան էնչան հաց կտա, որ նրա աչքը կշտանա։

— Ի՞նչ է ասում, քա՜,— մեջ ընկավ Սոփիոն.— մաշ ինչկլի հիմի ո՞վ է պահի նրան, գանա չի՞ն կանա էստի էլ պահի...

— Պահիլ էլ կա, պահիլ էլ, մարդ իրա երեխին հո չի դեն գցիլ։ Իրանց գեղումը մի երկու մարդու այբ-բեն էին սովրեցրիլ, էլ ուրիշ բան չգիտեին. մեկ օր տավարն էին ուղարկում, մյուս օր հորթեր, մեկէլ օր՝ գութան. էսպիսությունով նա էլածն էլ մտիցը կգցեր, թե որ նրա բախտիցը տերտերը չէր պատահել։

Ահա չորս տարի է, որ տերտերի մոտն է, դեռ նրա հերը մի քերթ թուղթ չի առած նրա համար... Մերը շատ խելոք, ժրագլուխ

կնիկարմատ է, թե մի բան արել է, էլի նա է արել. բայց հերը ոչինչ բանում չի խառնվել...

— Ես էլ էնենց իմ իմացի, վուր շատ խելոք դեդա ունե, կոսե Օսանեն։

— Ես նկատել եմ, տեր հայր, որ գեղի կնանիքը ավելի շատ բան են շինում, քան թե տղամարդիկը. բայց ինչ որ Հռիփսիմեն է անում, հարյուրից մեկը կարող չէ անել։ Քանի անգամ ես նրանց տանը պատահել եմ, շաբթով, ամսով կացել եմ, մի րոպե ես նրան պարապ չեմ տեսել։ Մի բան մանավանդ, որ աչքովս է ընկել, ես շատ եմ հավանել, իբրև նրանց անընդհատ աշխատության մի օրինակ, որ, իհարկե, դու էլ կլինես նկատած, բայց քեզ զգալի չի լինիլ եղած... Կուժը շալակած ջուրը գնալիս՝ ձեռքները չեն ուզում պարապ թողնել, գուլպա գործելով են գնում։ Կամ երբ որ աղբյուրի նոբաթը ուշ է հասնում իրանց, նրանք պարապ ու անգործ չեն կանգնում. էդ միջոցին էլ կամ գուլպա են գործում, կամ իլիկ մանում։ Գյուղերումը առհասարակ ծույլ տղամարդիկ խիստ շատ կան, բայց ծույլ կնիկարմատ շատ հազիվ կպատահի։ Խոսքս մասնավորցնեմ Արությունի մոր վերա, որ մեր Սոփիոն իմանա, թե նա ինչ է անում։

Մանդր երեխանց տեր, աղջկակոխ էլած, հիմի արի նրանց շորերը կարիր, կարկատիր, լվա, թափ տուր, հագցրու, տունը սրբիր, տեղերը գցիր, հավաքիր, օրը երկու թոնիր հաց թխիր, կուժն ուսիդ դիր, գնա հեռու գետիցը հինգ վեց անգամ ջուր բեր, կերակուրն եփիր, մշակներին, հյուրերին հաց տուր, տանցոց գլխները շաբաթը մեկ անգամ լվա, երեխանցը լողացրու շալակով բերած ջրովդ, մարդի ոտներն ամեն իրիկուն լվա, տրխնին հանիր։ Հիմի արի աղջկերանցդ համար բաժինք շինիր, շվալ, խալիչա, կարպետ, խուրջին, մափռաշ, աղաքսակ, մեզար, ջեջիմ, ղջարի գործիր, նոքարի ու տղերանց համար՝ հորագործ շալ ու շալվար գործիր, մարդի համար՝ տափագործ. ներկիր, կարիր, հագցրու... Հիմա արի ճիճու պահիր, աբրեշում քաշիր, քեզ համար ու աղջկերանցդ համար աբրեշումե դերիացու գործիր, տղերանց համար շապկացու, գոտկացու... Հիմի արի կովերը կթիր, հորթերը կապոտիր, դուրս արա, օրը մեկ-երկու խնոցի հարիր, եղը հալիր... Հիմի կալի-կոտի ժամանակ է, գնա արեգակի տակին, երեխեն ձեռիդ, կանգնիր, կամը քշիր, եղիր, հաշան արա, քամելուն օգտիր, կալը սրբիր, պաճն ավլով քաշիր, քոչալն խոտկիր, ցորենը շատարարի, աղունի

համար խախալիր տեփրիր, քարերը չոկիր, ձավարի համար ընտրիր, ծեծիր, քամիր, աղա... Հիմի բաղաքաղի ժամանակ է... Հիմի ոտար պետք է գնալ... էհ, ինչ եմ ասում, որ մի շաբաթ օր ու գիշեր ասեմ, էլի նրա արածի համառոտ ցուցակը չի կազմվիլ։ Գեղի մեկէլ կնանիքն էլ ներքի Թաղիցն սկսած մինչև վերի Թաղը խեղճին չեն հանգստացնում։ Մեկն ասում է՝ մի արի մինթանաս ձևիր, մեկն ասում է՝ մեկ արի չեչիմս հիներիր, որն էլ գալիս է՝ Թե ասպս մեռնվել է, մեկ արի շտկիր. էսպես հազար ու մի բան։ Որ մի շմրտածող ու անգետ կնիկ լիներ, կասեինք՝ է՞, ինքն էլ չի իմանում, Թե ինչ օրում է, բայց չէ՝ նա տեր Օհանի Թոռն է, Հեղինե կուսի քվոր աղջիկը։ Լուսահոգի Հեղինեն մի աշխարհք ման եկած շնորհքով կուս էր, նրա ձեռին է մեծացել։ Ղորդ է, գիր չսովրեցրեց, որ կուս չդառնա էն սիրուն, շարմաղ աղջիկը, բայց անգիր աղոթքներ էր սովրեցնում ու կար, ձև, գործ, որ Հեղինեն լավ գիտեր։ Նրա կարովի սրբերի պատկերները որ մարդ տեսնի, կմնա զարմացած։

— Գեթաղվա՞... — բացականչեց Սուփհան,— էլ չիս գիտի՞ իմքին վուր ասիս, Թե էլի ինչ է անում... մաշ էդ Թավուր աղջիկը ինչի՞ մե լավ մարդու չէին տալի...

— Ինչի՞, ի՞նչ պակաս մարդ է Ավետիքը։ Կուզե՞ս պատմեմ, Թե ինչպես է ուզել նա էդ աղջկանը...

— Ափսոս չէ՞ Ավետիքը, շատ պատվական մարդ է,— ասաց տեր հայրը,— նրա պես անունով, նրա պես աղուհացով, նրա պես հասկացող ո՞վ կա մեր գեղումը։

— Բայց Ավետիքն առաջ էդպես չէր. նա առաջ ուրիշ գազան էր, հիմա ուրիշ։ Մի բան որ նրանում չի փոխվել, այդ նրա բրոնակալությունն է. առաջ զենքով էր բռնանում մարդկանց վերա, իսկ հիմա՝ խոսքով, գաղափարով կամ, ավելի ուղիղն ասած՝ մոլեռանդությունով... Ես ու նա կաթնեղբայր ենք. ես նրան շատ լավ եմ ճանաչում։ Ես մի ամսական եմ էլել, որ իմ մայրը վախճանվել է. նրա մերն է ինձ ծիծ տվել, պահել. օղորմի իրան, լուսահոգին մի բոյով բուսաթով կնիկարմատ էր. տղամարդից ետ չէր մնալ, էնքան ուժով էր։ Շատ անգամ, որ խոսք էր բաց ըլում, ասում էի. «Ինձ քիչ ես ծիծ տվել, Ավետիքին շատ, էնդուր է նա ինձնից ուժով»։ Խեղճն ասում էր. «Ես միշտ մի ծիծս քու բերնում էի դրնում, մեկէլն՝ Ավետիքի, բայց նա շատ նախանձոտ երեխա էր, միշտ երեսը չանգռում էր, չէր Թողնում, որ հալալ ծիծ ուտեմ»... Ես նրանց տանն եմ մեծացել երեխա ժամանակս. էն ժամանակը

նրանք էլ, մենք էլ Գորի էինք։ Հետո մենք եկանք քաղաք, հերս Ավետիքին էլ ինձ հետ բերավ Հավլաբարի մեծ տեր Օհանի մոտ աշակերտ տվավ, որ գիր սովորենք։ Խեղճ հերս ուզեց, որ ինչպես նրանք ինձ լավություն են արել, պահել, մեծացրել, նա էլ փոխարենը Ավետիքին ուսման տա, մարդ շինի։ Բայց Ավետիքը գիր սովորելու ոչ սեր ուներ, ոչ հավես. երբ որ մի Թուր կամ Թվանք էր տեսնում, սիրտը Թրթռում էր, ե՞րբ կլինի, ասում էր, որ ես էլ կունենամ Թուր ու Թվանք. ե՞րբ կլինի, որ մի լավ ձի ունենամ, լավ յարաղ, ասպաբ։ Տեր Օհանն էլ աշակերտի սրտի մեջ ուսման սեր գցելու ոչ շնորհք ուներ, ոչ կամք. նա մի կատարյալ դահիճ էր աշակերտների համար։ Ժամանակն էդպես էր պահանջում, նա էլ իր ժամանակի մարդն էր։ Մեկ օր փալախկա գցեց Ավետիքի ոտները. չար Ավետիքը քիչ մնաց Թե կատաղի. վրա ընկավ մրքիցն էնպես քաշեց, որ տերտերի աչքերիցն արտասուք եկավ։ Տերտերը դեղնեց, սփրթնեց, Թե՝ «էս լավ նշան չէ, սա մարդասպան կդառնա»... Բռնել տվավ Ավետիքին մեկ լավ ծեծեց, հետո դուրս արավ։ Նա էլ կարծես էդ էր ուզում. փախավ գնաց, էլ ետ չեկավ։

«Ճշմարիտ է, Ավետիքը գեղումը մեծացավ, բայց էնպես մի տղա դառավ, որ ամենքն էլ նրա արևովն էին երգում ուտում. ուրիշ գեղ գնացած ժամանակն էլ մեկմեկու մատով էին նշանց տալիս. մի խոսքով՝ մի գեղ էր, մի Ավետիք։ Հասան-խանի տարին նա շուլավրեցի Սոսի աշի կուռն էր։ Երբ որ քուրդ ու զզլբաշ շափմիշ արին, Թալանեցին Ռատևանա նեմեցներին, նրա չորս կողմի գեղերի ժողովուրդը փախել էին, հավաքվել Դաղեթի տակը, Խրամաումը։ Ավետիքն էլ իր ընկերներով գրսից ամեն բան հասցընում էր նրանց, որ քաղցած չմնան։ Հարս ու աղջիկ, ծեր ու պառավ, ամենքն էլ փրկչի տեղ էին դնում նրան, սիրում, պաշտում։ Նա էլ հենց աշխարհքի էդ խառնված ժամանակը մեկ օր Խրամաումը տեսնում է Հռոմսիմին մի քանի աղջկերանց հետ, արյունը գլուխն է ընկնում, քիչ է մնում Թե ձիուցը վեր ընկնի։ Վեր է գալիս ձիուցը, աղջկա կուռը պինդ բռնում։ Նրա կշտի աղջկերքը, որ Ավետիքից էդպես բան չէին սպասիլ, երբ որ տեսնում են, Թե նա ուզում է փախցնել, վազում են, խմաց տալիս նրա ազգականներին։ Հռոմսիմը մի քիչ հառբա զուռբա էր անում, որ Ավետիքի ձեռիցն ազատվի. նա ասում է՝ անմեղ մի՛ չարչարվիլ, ես էնպես զուզդում էիմ, որ ձեզանց ընկած

ճուտը բաց թողնեմ. մի՛ վախենալ, ես քեզ չեմ փախցնելու, միայն ինձ ասա՛, տեսնեմ դու ո՞ւմ աղջիկն ես, որ էդքան սիրուն ես, անումդ ի՞նչ է, ես քեզ պիտի ուզեմ, ինձ չես հավանո՞ւմ... Աղջիկը նրան պատասխան չի տալիս, այլ միայն ազի՛ ու ամի՛ է կանչում, որ օգնության հասնեն... վերջապես գեղջիք հասնում են, որ ձեռքիցը խլեն, հենց կարծում են, թե ուզում է փախցնի, բայց Ավետիքը հենց որ նրանց տեսնում է՝ ամաչում է, խելքը գլխին է բերում, ձին նստում, հեռանում...

«Կարմրատակած Հոռոմսիմին որ տեսնում են նրա ախպերքը՝ կատաղում են, ուզում են հասնեն, Ավետիքին գյուլլախորով անեն, բայց նրանց մերն ու կուսը, որ վաղուց աչքադրած են ըլում Ավետիքին, արգելում են նրանց, չեն թողնում որ մի վատ բան ըլի։ Ավետիքն էլ իմանում է, թե նա ով է, ով չի, իր մեջ փքվում է, որ էնպես լավ աչք է ունեցել և հենց էն օրը մինից մի մատանի է առնում, տալիս մի պառավի, թե տար նշան տուր։ Նշանը սիրով ընդունում են մերն էլ, ախպերքն էլ, միայն նրանց հորեղբայր Արզումանը, որ իրանց տան մեծն էր, շատ չգրվում է, թե ինչու իրան մարդի տեղ չեն դրել. չեն գնացել մի քանի ալևոր մարդիկ իրանից խնդրել, թե՝ «ուզում ենք ձեր օջախիցը մի բուռ մոխիր վերցնենք»... Բայց լռում է, որովհետև ժամանակն էնպես էր, որ շունը տիրոջը չէր ճանաչում, մի գյուլլա էր նրա ջանը, եթե ընդդիմանար...

«Հետո, երբ որ ժամանակը հանդարտվում է, ամենքն էլ քաշվում են իրանց գեղերը, իրանց տները, հարսանիքների ժամանակը որ գալիս է, «ճանփակտրեքի» իրիկունը Ավետիքը մի ոչխար է ուղարկում, վերջն ինքն էլ է գնում, որ տեսնի ինչ պիտի տա։ Հացը որ ուտում են, պրծնում, ասում է՝ «Դե ասեցե՛ք, ի՞նչ պիտի տամ»։ Ախպերքն ասում են՝ «Մենք քեզանից ոչինչ չենք ուզում, աստծու տվածիցը մենք ամեն բան էլ ունինք. կիսին չենք արժանի, մեր քվորը չենք ծախիլ։ Մենք էլ, է՛հ, որքան կարող ենք, մեր քվորը չենք զրկիլ»։

«Բիձա Արզումանը, որ Ավետիքի արարմունքը դեռ չէր մարսել, հիմի էլ արխայինն էր ընկել, աչքերը մեկ էնպես ոլորում է իր ախպոր տղերանց վերա, որ նրանք քիչ է մնում, թե պատերից կպչեն։

— Դուք ո՞վ եք,— ասում է,— ո՞ւմ շունն եք, ի՞նչ իշխանություն ունիք, որ մեջ եք ընկնում աղջիկ մարդու տալիս. որ

կամ առնեք, կամ չառնեք, ում աշխատանքիցը պիտի ձեր քվոր համար բաժինք անեք»... ու էսպես շատ բաներ։ Ամենքն էլ մընում են լուռ ու մունջ նստած։ Ավետիքը չի ուզում ցույց տալ, որ նրա խոսքերը գյուլլի պես դիպան իր սրտին, սառը, սառը հարցնում է. «Դե դու ասա, բիձա Արզուման, ի՞նչ պիտի տամ»...

«Արզումանը տերողորմյան հանում է ջեբիցը ու մորուքը տմբացնելով ասում.— մեկ լավ մսացու՝ չաղ ու զոր կով, մի լավ ղոչ էլ հետը»։ Ասում է ու տերողորմյան էլ հետը չրխկացնում, իբր թե հաշիվ է անում, կովի վրա ոչխար է ավելացնում։ «Հարյուր թունգի Շուլավերու լավ գինի»։ Իրանց գինին ավելի լավ է, բայց էնպես է ասում, որ Ավետիքը գնա նոր մեկանց փողով գինի առնի։ Հարսնախպոր համար մի լավ մահուդ չուխա, քսանրհինգ մանեթանոց։ Գինն ընդուր է ասում, որ եթե չուխեն էժանագին լինի ու չհավնի, ետ դարձնե, քսանհինգ մանեթն առնե։ «Հարսնամոր համար մի լավ քաթիբա՝ երեք թումնանոց։ Տասներկու ջուխտ Գյանջու սաղրի քոշեր՝ բարեկամ կնանքոնց համար։ Հինգ թուման սպիտակ արծաթ։ Մեկ էլ ինձ համար մի շիրմայի մրքի սանդր կառնես, կդաս ձեռս կպաչես, կասես մեղա աստուծու, ես էլ ձեզ կօրհնեմ, կերթաք ձեր մուրազին կհասնեք...»։

Ավետիքը զոռով բերնին հուփ է տալիս, մինչև Արզումանը պրծնում է իր հաշիվը, բայց որ «մեղա աստծուն» էլ վերջիցն է կպցնում, Ավետիքի աչքերն արնով լցվում է։ Էսպես ժամանակը մեր գեղացիք կամ առհասարակ բոլոր անկիրթ մարդիկը բանական արարածներ չեն, այլ խոսուն գազաններ, արջ, գայլ, վարազ...

«Ավետիքը վեր է թռչում տեղիցը, ձեռքն էնպես շրխկացնում է խանչալի դաստին, որ բոլոր տան երեխեքն ու հարսները տան պուճախներն են պրծնում... Գոռում է Ավետիքը.— դու ո՞վ ես, որ ես քեզ մեղա ասեմ, ես իսկի տերտերին մեղա չեմ ասում։ Ես իմ հոր տղեն եմ, քեզ պես մարդի գլուխը ինձ համար մի սոխ չարժե. ոչինչ չեմ տալու, աղջիկն էլ տանելու եմ. թե որ զոչաղ մարդ ես, չտաս։ Էս գիշեր քեզ ժամանակ, մենք էգուց կհանդիպենք մեկմեկու»... Էս ասում է Ավետիքն ու կատաղած դուրս ընկնում. տան դուռն էլ էնպես շրխկացնում է, որ դուռը կրնկահան է ըլում, վեր ընկնում։ Դրսումը շները վրա են թափվում, որ մի լավ քրքրեն,

Ավետիքը մթնումը խանչալն ագամ-ագամ է անում, դիպչում է շքեղներին, առյուծի պես կծառողները կլանչելով վեր են թափվում։

Արզումանը, որ իր ամեն մի կծոտողին մի սուրու ոչխարի հետ չէր փոխիլ, երբ որ տեսնում է կտրտած, վեր ածած, էն սհաթին հրամայում է իրանց թուրք նոքարներին, որ ձիաները թամքեն։ Ասում է՝ «Ես աղջիկը կտանեմ Շորագյալու թոսովներումը մարդի կտամ կամ թե չէ՝ կտանեմ ջուրը կգցեմ, էդ գազան մարդասպանին չեմ տալ»... Տան մեծն ինքն էր, ով կհամարձակեր նրա ձեռքիցը բռնել։ Ասելն ու անելը մեկ է անում։ Մոտ կես գիշերին նրանք Էամփա են ընկնում թե չէ՝ մեկը գնում է Ավետիքին իմաց տալիս. «Ք՚ու տունը քանդվի, ասում է, վե՛ր կաց, նշանածիդ փախցրին»։ Էս որ լսում է քնաթաթախ Ավետիքը, փափախն էլ է մոռանում, տրխնին էլ, դուս է ընկնում գժվածի նման շապկանց, ոտ ու գրլուխը բաց, էն ցուրտ կես գիշերին, վազում է մի քանի տան հերթից իմաց է տալիս իր ընկեր տղերանցը, «հասեք, ասում է, նշանածս ձեռից խլում են»։ Մինչև նրանք վեր կկենային, թվանքի աղզաթուն, բանին մտիկ կաներին, Ավետիքը վազում է, գոմիցը տկլոր ձին դուրս քաշում, նստում ու դուրս թռչում գեղամիջովը։ Թռած տեղը ձեռքը գցում է ու մի չափարի միջից մի մեծ բհիր է հանում, որ նրանց հասնելն ու մի երկու թուրք նոքարի խփելը մեկ է անում։ Հենց որ նրանք վեր են ընկնում, «վայ մեռա» կանչում, մեկէլները փախչում են ցաքուցռումը թաք կենում։ Մեկ էլ որ բհիրն ուզում է վրա բերի Արզումանի գլխին, Հռոմսիմը, որ նրա թարքին նստած է ըլում, թռչում է Ավետիքի շլնքովը կախ ընկնում, «Քեզ մատաղ, ասում է, արյուն մի՛ անիլ»։ Ավետիքն էլ բարձրացնում է Հռոմսիմին, դնում է իրա թարքին, ետ դառնում։ Հենց էդ միջոցին նրա ընկերներն էլ ասլանների պես դուրս են թափվում մերուցը, որը ձիով, որը ոտով՝ «հա՛յ ո՞ւրտեղ է, հա՛յ ո՞ւր է», կանչում... Ավետիքը նրանց հանդարտեցնում է, չի թողնում, որ Արզումանին դիպչեն։ Ասում է, որ էն թուրքերին էլ վերցնեն տանեն, որ մի վնաս չըլի։ Նրանք էլ՝ որը չուխեն է տալիս Ավետիքին, որ չմրսի, որն իր փափախն է դնում նրա գլխին... Մի շաբաթ էր դիփ սրա վրա էին խոսում, հետո շուտ արին պատկեցին, որ գեղջցիք մի քիչ հանդարտվեն։ Ա՜յ ինչպես է ուզել նա էդ աղջիկը, Սոփո ջան», վերջացրեց Օվակիմը ծիծաղելով։

— Մաշ գուն ասում իս, էնիկը նրանց համար գրոշ չարժե... Էնով էի դալի գառաչա ին էլի սարքում էնիկա հոռա, ո՞...

— Իհարկե, գրոշ չարժե։ Ամեն օր հո ջահել չի մնում մարդ, միշտ հո մի խելքի չի մնում, չէ՞ որ մարդի խելքն էլ է փոխվում, նրա վարմունքն էլ։ Պատկվեց թե չէ՝ իրա ծերունի հայրը, որ մինչև էն ժամանակը ոչինչ չէր խոսում, տան մեծությունը նրան էր տվել, ինքը մի կողմ քաշվել, հիմի սկսեց քարոզ կարդալ նրա գլխին ու խրատել։—Որդի,—ասում է,—ինչ որ ես արել եմ, դու ոչ կարող ես անել, ոչ կարող ես մտքովդ անց կացնել։ Չէ՛, որդի,— ասում է,— աննպատակ դոչաղությունը մի տեսակ ավազակություն է, էդ լավ բան չէ։ Հիմի կնկա տեր ես դառել, էգուց էլոր որդոց տեր կդառնաս, նրանց պահել, պահպանել է հարկավոր։ Բաղդ մեծացրու, տավարդ ավելացրու, ղոնաղ սիրի, խեղճի օգնիր։ Թե որ ուզում ես անուն ոնենաս, հացով կաց, հացի ձենը Հնդոստան կհասնի։ Ժամ գնա, աղոթք արա, հաղորդվիր...

«Տեր հայր, էդ ծեր մարդը, Ավետիքի հերը՝ Վերդին,— կարելի է տեսած կլինիս, մի տարօրինակ մարդ էր։ Նա տարին մեկ անգամ էր մտնում ժամ, որ հաղորդվի, մնացած ժամանակը ժամի դրսումը մի փոշնի ծառ կար, միշտ էն ծառի տակին էր կանգնում։ Մեռնելու ժամանակն էլ կտակ արավ, որ իրան էն ծառի տակին թաղեն։ Էնպես էլ արին։ Հետո եկեղեցին վերանորոգելիս մեծացրին, նրա գերեզմանն ընկավ եկեղեցու խորանը։ Էն մարդը, որ կենդանի ժամանակը եկեղեցի չէր մտնում, մեռնելուց հետո մշտապես ընկավ եկեղեցին։ Նա գրագետ մարդ էր, որ մի զարմանալի բան էլ էդ էր, որովհետև հասարակ գրագետ չէր, հայոց պատմության տեղյակ մարդ էր, մինչդեռ նրա ժամանակի հոգևորականները պատմությունից ոչ մի տեղեկություն չունեին։ Նա մեր վարդապետներին աչքով աչք չուներ տեսնելու։ Ասում էր «մեր ազգի տունը սրանց ձեռին է, բայց չեն շինում, քանդում են»... Իրա մասին ինքը ոչինչ չէր խոսում, բայց նրա հասակակից մարդիկը շատ բան էին ասում նրա վերա, որ մի ահագին պատմություն կդառնա, եթե մարդ գրելու լինի։ Հիմիկվան խաղաղ ժամանակում ապրող մարդիկս մեզ չենք կարող ներկայացնել մեր պապերի քաշածը ու արածը, մի ժամանակ, երբ մարդու գլուխն ու ստինքը գլուխը մի գին է ունեցել։ Սով, սրածություն, արհավիրք, մահտարաժամ, փախուստ, գաղթականություն, և այդ էլ շարունակ. մեկը պակասում է, մեկէլն է գալիս, մեկէլն անցնում է, մյուսն է վրա հասնում։ Հերա պատմում էր, թե Վերդին հաղորդ մարդից

ավելի է սպանել, բայց ինքն ասում է՝ ես միայն մեկ մարդ եմ սպանել, որովհետև էդ մեկ մարդուն քնած ժամանակն էր սպանել, և դրա համար էր ապաշխարում եկեղեցու դրսումը... Ինչևիցե, աստված ողորմի հոգուն, իգիթ մարդ էր... Մեր Ավետիքն էլ ուղիղ իր հորն էր քաշել։ Քանի որ ազապ էր՝ ամսով, տարով տանը չէր կենում. մեկ լսվում էր, թե՝ Երևան է, մեկ թե՝ Ղարաբաղ, մեկ էլ թե՝ Քարթլ է, որտեղ մի ապստամբություն, մի շարժում էր լինում, նա իսկույն հասնում էր։ Ուրիշներից որ իմանում էր, թե իր հերը, պապը շատ քաջ տղամարդիկ են էլել, խաների, բեգերի գլուխ չեն էլել վեր բերելիս, նա գժվում էր, չոլերն ընկնում, որ քաջությունում նրանցից անց կենա, որ չասեն, թե՝ «դու քո հոր տղեն չես». բայց պսակվեց թե չէ, էլ տանիցը դուրս չեկավ, թե՝ «Իգիթի ապրանքն իր աչքի առջևը պետք է լինի»։ Սերի էդ տաքտաք ժամանակ Հոռոմսիմն էլ սկսեց նրան քարոզել, հավատի բերել. ինչ որ աղոթք գիտեր, դիփ էլ սովրեցրեց... սկսեց պատմել ճգնավորներից, սուրբերից, մի խոսքով ինչ որ լսել էր Հեղինեից։ Ժամ գնաց, հաղորդվեց. լուսահոգի տեր Ղուկասը նրա խղճմտանքն անհանգստացրեց, մեղքերը շլնքին դարսեց, ծանր ապաշխարանքներ դրավ վերան և էդպես էն առյուծ տղային շինեց մի գառ։ Շատ տեղեր էր ման եկել, քիչ շատ քաղաքավարություն էր սովորել, վրացերեն, թուրքերեն ճարտար խոսում էր, ռուսերեն էլ կոտրտում էր։ Մարդամեջ ընկավ, մարդիկն սկսեցին պատվել, պաշտել, մոդրովի ու նաչալնիկի մոտ միշտ նրան ուղարկել, նրան քյոխվա շինել, նա էլ տեսավ, որ ոչով իրա չափ խելք ու շնորհք չունի, սկսեց նրանց գլխին փիլիսոփա դառնալ։ Նա որ մի ժամանակ ոչ հավատ ուներ, ոչ հույս, որովհետև նրա հավատն ու հույսը իր թուրն ու թվանքն էին, հիմի, ինչպես կասեն՝ «Օխտը վարպապետի ղադամ բան գիտե»։ Հիմի որ հազար թուման տաս, նա պար չի գա, թե ինչ է՝ պար գալով՝ Օհաննես Մկրտչի գլուխը կտրել են տվել. ոչովի հետ պոռշտի չի անիլ, իր երեխին չի պաշիլ, թե ինչ է՝ պաշելով՝ Հուդան Քրիստոսին մատնել է։ Մորթ անելը նրան հազար ու մեկ նզովքներով ու ապաշխարանքներով արգելված է։ Մեկ մարդ, որ էսպես տուտուց բաների գերի դառնա, նրանից էլ ի՞նչ սեր կարող ես պահանջել, քանի որ սիրալիր հարաբերությունը նա մեղք է համարում...

— Օվակիմ, քո ասածը կարելի է ճշմարիտ է, բայց իմ խելքումը չի տեղավորվում։ Դու մեր Ավետիքին բոլորովին հիմարացնում ես։ Ես դեռ նրա պես խելոք մարդ չեմ տեսել։ Հիմի մի՞թե նա էնքան հիմար է, որ եթե հասկացնես բանի զորությունը, եթե հասկացնես ուսման նշանակությունը, նա իրա որդուն չի օգնիլ։

— Բանն էս է, տեր հայր, որ մենք չենք իմանում, թե ում ենք հիմար ասում և ում՝ խելոք։ Ավետիքը հիմար չէ, ես համաձայն եմ քեզ հետ։ Բայց ես կասեմ, որ եթե նա հիմար լիներ, ավելի շուտ կհամոզվեր, որ պետք է օգնի իր որդուն, քան թե հիմա, որ քու կարծիքով՝ խելոք է։ Նա խելոք է, այո՛, նա համառություն ունի կարծելու, որ խելոք է. նա կարող չէ կասկածել, որ իր գլխում եղածը խելք չէ, այլ համառություն, կամապաշտություն, ինքնասիրություն, մոլեռանդություն և, վերջապես, բարբարոսություն. սրանց ամեն մեկը մյուսի հետևանքն է։ Նա քեզ կասե, որ Սողոմոնն էլ էր շատ իմաստուն, բայց կռապաշտ դառավ, կնկանը գլուխ վեր բերավ, դժոխք գնաց։ Նա քեզ կասե՝ որդին հոր հոգուն ոչ մի շահ չի տալ։ Գրիգոր Լուսավորիչը, որ մեր հավատի գլուխն է, չկարաց իրա հորը դժոխքիցը հանել, էնքանն արավ միայն, որ դժոխքի սյունը ականջիցը հանեցին, աչքումը դրին։ Հիմար ու տգետ մարդոց գլխումը էսպես առասպելներ չկան, և ես զարմանում եմ, որ ում գլուխը որ քացախով ու դարմանով լիքն է, նքան խելոք են ասում....

Տեր հայրն Օվակիմի խոսքերի մեջ տեսնելով իր պատկերը՝ լռեց։ Այդ նկատեց Օվակիմը և ուզենալով փոքր-ինչ մեղմացնել իր ասածները, ավելացրեց.

— Իհարկե՝ ես շատ էլ չեմ մեղադրում Ավետիքին. նրա նախապաշարմունքներն էնքան զորություն չունին, որ կարողանան Արությունի ուսման առաջը փակել, եթե միայն նրա սրտի մեջ կընկնի մի ուսումնասիրության կայծ։ Բայց եթե առհասարակ խոսելու լինենք գեղացոց վերա, էդ ուրիշ բան է։ Պետք է քաղաքը քիչ թե շատ ուսումով լցնվի, «որ լափունը տա՝ ածի գեղերը»։ Բայց դեռ մեր քաղքցիք իրանք չեն իմանում ուսման հարգն ու կարևորությունը, դեռ իրանք են մի բան առնում, որ իրանց երեխին ուսման տան, գեղացիք ի՞նչ տեղից կիմանան, կամ, վերջապես, նրանք ի՞նչ գիտեն, թե ուսումն ինչ է։ Զոռով բան չի լինիլ, տեր հայր, ամեն բան իրա ժամանակն ունի, իրա պատճառը։ Շատ անգամ գարունքը գալիս է, որ ծառերի ծաղկելու ժամանակն է, բայց շատ ծառեր չեն ծաղկում, պատճառն ի՞նչ է.— ցուրտը տարած է լինում նրանց։ Մենք որ կանք հիմա՝ մեկ ցրտատար, ջրա-

տար ազգ ենք. մեզանից եթե հազարից մեկը ծաղկե, էն էլ մեծ բան է... Հասկանո՞ւմ ես իմ ասածը, տերտեր ջան...

— Ինչպե՞ս չեմ հասկանում, օրհնված, դու հենց մեզ ամենքիս էլ երեխի տեղ ես դրել...

— Դե որ հասկանում ես, էլ ի՞նչ ասեմ, «զի որ ունիցի ականջս լսելո, լվիցե»։ Ասած է. «Ականջը նրա համար չի շատ մեծանում, որ շատ բան է լսում»։ Ես շատ խոսեցի, հոգնեցա. ի՞նչ անեմ էրված տեղեր ունեմ, ասած է՝ «Դարդ ունեցողը յանգշաղ կլինի»։ Հիմի ես մի տեսակ յանգշաղ եմ դառել. հույս ունիմ, որ դու կներես, տեր հայր... Սուփիս ջան, շուտ արա, սուփրեն գցիր...

Զ

ՔՈՒՅՐ ՈՒ ԵՂԲԱՅՐ

Երբ որ Օսանան եղբորը տարավ իր մոտ, սկսեց պատմել նրան, թե՝ ի՞նչ են դառնում գյուղից քաղաք եկողները. թե՝ քաղաքի ուսումնարանները լավ են, սովորեցնում են մի քանի լեզու. թե՝ շատ անգամ գյուղից աղքատ երեխեք են գալիս և ուսում առնելով՝ դառնում են վարժապետներ, գրագիրներ, չինովնիկներ. թե ինչպես նրանք հարուստ մարդի աղջիկ են ուզում և իրանք էլ հարստանում, թե ինչպես այս և այն անձ աղա է դառել, որ էլ ոչովի չի հավանում, մոռացել է իր ստոր ծագումն ու չքավորությունը...

Այսպես՝ երբ տան մյուս անդամները գնացել էին իրանց գործին, քույր ու եղբայր առանձնացած՝ մտածում էին, թե ի՞նչպես լավ կլիներ Արությունի համար — մնա՞լ քաղաքումը, թե՞ էլի ետ դառնալ դեպի գյուղ։

— Չէ՛, լավ կանես, որ էլ գեղը չգնաս,— ասաց Օսանան.— էնտեղ ինչ պետք է սովորես. էդ տերտերն ինքն ի՞նչ գիտե, որ քեզ ինչ սովորեցնե...

— Էդ մի՛ ասիլ,— պաշտպանեց Արությունը իր տերտերին,— էդպես տերտեր էս քաղաքումը չի լինիլ։ դա մեկ անհայտ փիլիսոփա է, կաթոգիկոսը որ փոխենա, դրան եպիսկոպոսի խալաթ կտա...

— Ի՞նչ ես ասում, ա՛ տղա,— բեղդիմախոսեց Օսանան։— Դա մեր Օվակիմի մորաքրոջ որդին է, ես մի՞թե չեմ ճանաչում դրան։ Մեկ օր խոսք բացվեցավ, ես հարցրի Օվակիմին, նա թե՝ «ճգնավոր, բարեսիրտ մարդ է, բայց գլխումը խելք չկա. դրա համար սուտն ու ճշմարիտը մեկ է, երկուսն էլ հավատում է»... Էստեղ գիմնազիումն էնպես բաներ են սովրեցնում, որ դա իր օրումը լսած չի լինիլ։ Մեր հարևան Սառի տղա Յագորը հիմի գիմնազիի վրա շորս կլասումն է։ Նրա մերն էնպես բաներ է ասում նրանից, որ մարդ լսի, կմնա զարմացած...

— Ի՞նչ բաներ է ասում։

— Ասում է՝ իմ տղեն հիմի գիտե, թե էստեղից մինչև Մոսկով տրոյկի ակը քանի անգամ պտույտ կգա։ Նա, ասում է, գիտե, թե Ադամից մինչև հիմի քանի միտուտ է անցել։ Աբա քո տերտերն էդ գիդի՞, քեզ ասել է՞...

— Ես որ քաղքումը մնամ, էդ բաները կսովորե՞մ։

— Իհարկե, կսովորես։ Որ մտնես Վանքի ուսումնարանը, հետո տերտեր կդառնաս. ուզենաս, գրագիր կգառնաս Կոնձիստորումը, կամ թե չէ՝ վարժապետություն կանես, ժամումն էլ տիրացություն։ Թե որ խելոք կըլես, մի հարուստ մարդ քեզ փեսա կշինի, կաշխատի, ձեռնադրել կտա մի հարուստ եկեղեցու վերա։ Կամ թե չէ՝ թե որ կուզես, կմտնես գիմնազիա, էնտեղ լավ ոսերեն կսովորես, հետո թագավորական զուլլուղ կմտնես, չինովնիկ կդառնաս, տարեցտարի չինդ կավելանա, մեծ մարդ կդառնաս, համ քեզ կըլիս շահ, համ թագավորին... Հաբա՞...

— Որ գիմնազիումը լավ սովորեմ, հետո մողրով էլ կդառնամ, չէ՞...

— Մողրո՞վն ինչ է, դու նրանից էլ մեծ մարդ կդառնաս, ենարալ կդառնաս...

— Ո՜ւհ, ամա մեծ մարդ կըլիմ հա՞... Ղորդ, էդքան կբարձրանա՞մ... Էհ, ենարալ չէ, որ եթե մի հասարակ դիլբանդ էլ դառնալու ըլիմ, ես կմտնեմ գիմնազիա։ Ա՜յ մեր գեղցիք, լեղու չգիտեն, օրենք չգիտեն, մի հասարակ յասավուլի առաջ փափախին վեր են կալնում, կշտին կուչ գալիս։ Քանի անգամ եմ տեսել մողրովին իմ հորը ծեծելիս։ Նոր չէ՞ր, որ բերդն էլ գցեցին, ուզում էին Սիբիր ուղարկեն։ Մեկ անգամ տարել էր մոտը, էլ բաց չէր թողնում, թե՝ դու ինձ պետք ես, լեզու գիտես, դաչաք մարդ ես, դու ինձ պետք է

օգնես, որ բոլոր գողերին բռնոտենք։ Վար ու ցանքի ժամանակ է, խալխն իրանց բանը վերջացրել են, մենք դեռ մի հատ ցորեն չենք գցել հողը։ Մեկ էլ տեսանք, հրես մողրովը եկավ մի հարյուր ձիավորով։ Եկան մեր դռանը վեր եկան։ Երբ որ գնալու էին, հերս ասեց.— Աղա, խնդրեմ ինձ մուրախաս անես, ես մենակ մարդ եմ, տանս ուրիշ աշխատող չունիմ, հիմի էլ ուրիշներին տար, թե որ բեգառ է, պետք է ամենքն էլ քաշեն։ Նա թե՝ չի կարելի, պետք է գաս։ Չեմ գալ, պիտի գաս, մի քիչ ընդդիմացավ հերս։ Մողլովը չիբխի գլուխը հանեց ու նրա կոթովը մին թե երկու, հորս գլխին ու երեսին... էնքան խփեց, որ արնակոլոլ արավ։ Էնպես բարկությունը եկա՜վ. մի մեծ քար վեր կալա, որ տանեմ մողրովի գլխին գցեմ, մեր մարդիկը խլեցին ձեռիցս, թե՝ էդ ի՞նչ ես անում, գիժ, ուզում ես, որ մեր սաղ գեղը կրակ տան, էրե՞ն... Հապա՜։ Էնպես բաներ եմ տեսել, որ սիրտս արնով լցվել է, աչքերս պեծին-պեծին արել, հիմի էլ ամեն միտս գալով՝ ջանս սոսոում է, մազերս փշաքաղում։ Ես միշտ աստծուն աղաչանք եմ անում, որ հոգիս չառնի, ինձ լեզու տա, շնորհք տա, որ ես դրանց բոլորի ջիգրը հանեմ, սիրտս հովացնեմ... Ես որ չինովնիկ դառնամ, որ էլ ոչով իրավունք չունենա ինձ վրա ձեռք վեր բերել, այնուհետև ես գիտեմ, թե ինչեր կանեմ...

— Չէ՛, ես քեզ էլ չեմ տալ տերտերին, որ տանի, ես նրան պատասխան կտամ։ Մանվելի հետ միասին կերթաք Վանքի ուսումնարանը, կամ թե չէ՝ գիմնազիա, որտեղ որ ձեզ հարմար կլինի, էնտեղ կերթաք։

— Շատ լավ, էդպես արա։ Ես էլ մի գիր կգրեմ, որ մեր տանիցը ալյուր, բան ուղարկեն։ Դու ինձ մի թուղթ ու թանաքաման տուր...

Արությունը դեռ չէր ավարտել իր նամակը, որ տեր Պետրոսը ներս մտավ։

— Արություն, որդի, մենք ուշանում ենք. էստեղ քաղաք տեղ է, գարին, դարմանը թանկ է,— ասաց տեր հայրը, նստելով աթոռի վերա, որ Օսանան առաջ քաշեց։

— Տեր հայր, խնդրեմ Արությունին թողնեք մնա այստեղ,— ասաց Օսանան։

— Ես հենց երազումս տեսա, որ դու Արությունին պիտի ձեռիցս խլես։ Հետո՞, քո հերն էլ համաձայն կլինի՞ այդ բանին, գիտես, նրա համար քաղաքը մի սարսափելի բան է։

— Ես իմ հորը կհամաձայնեցնեմ։

— Լավ, որդի, ես հո չկամություն չեմ անում։ Ես Արությունին որդու պես եմ պահել. ես ինքս էլ եմ ուզում, որ լավ ուսում առնի, լավ տղա, խելոք տղա դառնա.— ասաց տեր հայրը և ապա դառնալով Արությունին՝ հարցրեց.

— Արություն, որդի, ուզո՞ւմ ես մնալ։

— Հա՛,— ասաց Արությունն ամաչելով։

— Լա՛վ, որդի... դե խելոք կաց, առավոտ, իրիկուն ժամ գնա՛, ժամ ասա, անառակ տղոց հետ ընկերություն չանես, կոճի չխաղաս, չգնաս Քոռումը լողանալու կամ Օրթաճալա՝ ման գալու։ Դո՛ւ գիտես, ինձ չամաչացնես, էնպես արա, որ մի ժամանակ ես էլ պարծենամ։ Ինձ շուտ-շուտ նամակ գրիր, մի նեղություն ունենաս, ինձ հայտնիր։ Մնա՛ս խաղաղությամբ, տեր ընդ քեզ։

Արությունը համբուրեց տեր հոր աջը, տերտերն էլ նրա գլխին մի «պահպանիչ» ասաց և բոլորին խաղաղություն մաղթելով, դուրս գնաց...

Վերջ առաջին գրքույկի

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

Ա

ՄՏԱՎՈՐ ՀԵՂԱՇՐՋՈՒՄՆ

Արութիւնն ու Մանվելը մտան Ներսիսյան դպրոց, իբրև երթեվեկ աշակերտներ։

Ներսես կաթողիկոսի միակ ցանկությունն էր, որ իր ուսումնարանը փայլի, և նա փայլում էր մերթ պոչավոր աստղի լուսով և մերթ... լուսատիկի։ Երբ փայլում էր պոչավոր աստղը, աներևույթ անձինք երևելի ձեռքերով կտրում էին նրա պոչը, և այնուհետև փայլում էր լուսատիկը։

Արութիւնն ու Մանվելը երբ որ մտան դպրոց, այն ժամանակ փայլում էր պոչավոր աստղը, և արդեն մեծ պատրաստության վրա էին, որ կտրեն նրա պոչը։ Այդ աստղն էր Պ. Շանշյանցը, որ տեսուչ լինելով, միևնույն ժամանակ և մի օրինակելի դաստիարակ, ամենայն ճիգ թափում էր ուսումնարանի փայլն ավելացնելու, բայց չէր կարողանում։ Այդ բանին արգելք էր լինում մի եպիսկոպոս, որ մեծ ազդեցություն ուներ կաթողիկոսի վրա։

Ներսես կաթողիկոսին իր այդ ծերության ժամանակ խաբում էին անխիղճ կերպով, և այնքան ավելի էին խաբում, որքան նա շատ էր հավատում, որ ոչ ոք չի համարձակիլ իրան խաբելու։ Նրան խաբում էին իր նշանակած աշխարհական գործակալ գանձապետները, որոնք անգթաբար կեղեքում էին ժողովրդին, նրան խաբում էին իր ուսումնարանի հոգաբարձուները...

Ուսման առարկաներն էին այդ ժամանակ հայոց լեզու, ընդարձակ, և կրոն իր բոլոր մասներով, ռուսաց լեզու, մասամբ կամավոր, և մի կտոր թվաբանություն, և այն էլ ավանդվում էր չինական մեթոդով։ Դպրոցի բոլոր ջանքը երկու առարկայի վրա էր դարձրած՝ կրոնի ու լեզվի, և այդ վատ չէր այն ժամանակվա

ամենանշանավոր պահանջին նայած։ Այդտեղ հայախոս էին դառնում և լավ գրում, կարդում ուտեախոս, չեքքեզախոս և վրացախոս պատանիք։ Մի երկրորդ լավ բանն էլ այն էր, որ սովորություն ունեին բարձր դասատան աշակերտներին քարոզներ գրել տալու։ Ամեն շաբաթ կեսօրից հետո կարդացնել էին տալիս այդ քարոզները, որին շատ անգամ ներկա էր լինում ինքը՝ կաթողիկոսը մի քանի պատվավոր հյուրերի և հոգաբարձուների հետ։

Տեսուչը հարցաքննեց Արութիւնին հայերենից և կրոնից, և շատ բավական մնալով՝ ասաց. «Դու կարող ես երրորդ դասատուն մտնել (այդ վերջին դասատունն էր, և ամենից բարձրը), բայց որովհետև տարվա սկիզբը չէ և հասակդ էլ փոքր է, քեզ կընդունենք երկրորդ դասատուն։» Իսկ Մանվելին էլ նախ որոշեց առաջին դասատուն, բայց հետո նրա հասակն էլ մեծ համարելով՝ նմանապես ուղարկեց երկրորդ դասատուն, ուր տասներեք տարեկանների մոտ երեսուն և քառասուն տարեկան տիրացուներ ևս կային նստած իբրև կամավոր լսողներ...

Այսպես կարգադրելուց հետո՝ Արութիւնին էլ պարտավորեցրեց, որ օգնե Մանվելին, և խոսեց նրանց հետևյալ խրատը.

— Ուսումնարանը մի սուրբ ավազան է, որից մենք մկրտվում ենք կրկին, բայց մկրտվում ենք ոչ ջրով, այլ հոգվով սրբով։ Դուք պարտավոր եք ձեզ սուրբ պահել. սուրբ ու մաքուր պիտի պահեք մանավանդ ձեր լեզուն։ Լեզվով ենք աղոթք անում մենք աստուծուն, լեզվով ենք խնդրում նրա ողորմությունն ու շնորհը։ Կարելի չէ սուտերով ու հայհոյանքներով աղտոտած լեզվով դիմել աստուծուն, խոսել նրա հետ, խնդրել նրանից մի բան։ Ո՛չ։ Այն ժամանակ աստված չի լսել մեզ, ետ կդարձնե մեզանից իր երեսը և մեզ կբողնե անհոգ ու անխնամ, զուրկ իր ողորմությունից, իր շնորհքից... Ուրեմն, այս տասներս միտներդ պահեցեք և ձեր սիրտը, ձեր լեզուն մաքուր պահեցեք...

Արութիւնը բարոյական խրատներ շատ էր լսած, բայց այս փոքրիկ խրատն իր բովանդակությամբ և ասելու ձևի շնորհիվ այնպիսի ազդեցություն գործեց նրա քնքուշ և հավատով ու չերմեռանդությամբ լի սրտի վրա, որ քիչ մնաց լաց լինի...

Հիրավի, մի կախարդական ազդեցություն ուներ տեսուչը բոլոր աշակերտների վրա, թե մեծերի և թե փոքրերի։ Նրա շարժվածքը, նայվածքը, խոսվածքը, բոլոր իր անձնավորությամբ որոշվում էր

ոչ միայն բոլոր դաստիարակներից, այլև քաղաքի ամբողջ հասարակության բոլոր մարդկանցից։ Նա պատկառելի էր թե՛ դպրոցում և՛ թե դուրսը, թե՛ հայերի և թե՛ օտարների առջև, թե՛ զարգացածների և թե՛ տգետների համար։ Նրա բնավորությունից՝ իբրև մի օրինակ՝ մի անցք կարելի է բերել։ Մի չար աշակերտ կար, շատ չար, անուղղելի մի սրիկա։ Այդ աշակերտին պետք էր պատժել։ Այդ ժամանակ պատիժ կար, թեև մեղմ, բայց վարժապետները տեսչից թաքուն պատժում էին անխնա և բարբարոսաբար։ Մի քանի վարժապետ և վերակացուք հաղիվ կարողացան չար աշակերտին ներս գցել դահլիճը և դուռը ծածկել։ Դահլիճում, գրասեղանի մոտ, նստած էր տեսուչը։ Երբ որ չար աշակերտին ներս մղեցին ուժով, տեսուչը գլուխը չբարձրացրեց, տղայի երեսին չնայեց, չբարկացավ, չհանդիմանեց, այլ քթի տակին ինչ-որ ասաց շատ մեղմ կերպով, որից չար տղան կարմրեց ու սփրթնեց և ի վերջո այն աստիճան գառը դառավ մի քանի րոպեի մեջ, որ ինքն իր կամքով գնաց պահապանին ասաց, թե՝ տեսուչը հրամայել է, որ իրան տասը զարկ տա։ Երբ որ պահապանը պատրաստվում էր արդեն իր պարտավորությունը կատարելու, տեսուչն ուղարկեց վերակացվին, որ հայտնե նրան, թե ներված է նրա հանցանքը... Այդ սրիկա աշակերտը վերջը դարձավ մի օրինակելի աշակերտ...

Մեր նորեկները նստեցան երկրորդ դասատան առաջին բաժնումը։ Մի քանի օրից հետո Արությունը շուտով աչքի ընկավ։ Կրոնի վարժապետ քահանան նրան տեղափոխեց երկրորդ բաժինը։ Նա սովրեցնում էր համառոտ քրիստոնեական վարդապետություն և ավելի ևս համառոտ սրբազան պատմություն, մինչդեռ Արությունը Աստվածաշունչն ամբողջապես գիտեր, և յուր սուր հիշողության շնորհիվ ինչ տեղից էլ ուզենային, նա կպատմեր բառ առ բառ։ Սրբազան պատմությունը սովրեցնում էին աշխարհաբար, իսկ քրիստոնեական վարդապետությունը՝ գրաբար։ Հին վարժապետներն ընդդեմ էին աշխարհաբարի, բայց տեսուչն արդեն մտցրել էր աշխարհաբար շարադրություն և քարոզներ գրել տալը։ Նա ուզում էր, որ կրոնի բոլոր դասագրքերը աշխարհաբար լինին, թարգմանել էր տալիս և Ավետարանը։ Եվ բոլոր այդ բաներին շատ խորթ էին նայում եպիսկոպոսն ու իր արբանյակները։ Նրանք դրանում գտնում էին ոչ ուղիղ դաստիարակության մի ոճ, այլ կրոնական մի նորամուծություն, օտար կրոնի հետևողություն։

Հայկաբանության ուսուցիչն ևս գոհ էր Արությունից, քանի որ նա դեռ լավ չէր ցույց տվել իր գրաբարագիտության աստիճանը։ Բայց մեկ անգամ մի աշակերտ սխալվեցավ, և երբ վարժապետը հանդիմանեց նրան, որ ինքն այդպես չի ասել, փոքրոգի աշակերտը՝ իր հանցանքը թեթևացնելու համար՝ զրպարտեց Արությունին, թե՝ ինքն անցյալ դասին ներկա չի եղել, դիմել է Արությունին, և նա այդպես է սովորեցրել։

— Հա՜, ուրեմն բացի ինձանից այստեղ ուրիշ վարժապետ էլ կա,— բացականչեց վարժապետը և Արությունին դուրս կանչեց գրատախտակի մոտ, որ մի փորձով իր գիտությունը նրա անգիտությունովը փայլեցնե։ Վարժապետն ինքը մի նախադասություն գրեց և լուծել տվավ բառ առ բառ իբրև մասունք բանի։ Նախադասության բայի դեմքը ուղիղ չասաց Արությունը։ Բայն էր «ասէն»։ Արությունը ուշ չդարձնելով է գրի վրա, ասաց՝ ասէն՝ բայ, ներգործական, հոգնակի երրորդ դեմք»... Վարժապետն էլ այդ էր ուզում։ Էլ չստիպեց, որ Արությունն ուշադրություն դարձնե բայի կազմության վրա, և ոչ գրաբար նախադասությունը աշխարհաբարի դարձնել տվավ նախապես, որով կիմացվեր, որ բայը եզակի է և ոչ հոգնակի, թե՝ նուն դիմորոշ տառ է. ոչ այս արավ և ոչ այն, այլ հանկարծ Զամչյանի ահագին քերականությունն այնպես թրխկացրեց Արությունի գլխին, որ նա վայր ընկավ ուշաթափ։ Աշակերտներն իսկույն ջուր հասցրին, ածեցին վրան և այնքան շատ ածեցին, որ շինեցին մի անձրևի տակ ընկած լիսպոր ճուտ։ Դրանով վարժապետի գազանությունը չմեղմացավ, բայց Արությունի սիրտը քիչ էր մնում տրաքեր, իր կյանքում առաջին անգամ ստանալով վարժապետից մի պատիժ և այն էլ այդպես խիստ ու բարբարոսաբար։ Նրա պատվասիրությունը սաստիկ վիրավորվեցավ և այնուհետև սկսեց ատելով ատել այդ վարժապետին։

Հայկաբանության այդ վարժապետից շատ վախենում էին բոլոր աշակերտները և շատ էլ ատում նրան։ Դա վարժապետ էր և միևնույն ժամանակ գիշերօթիկ ավագ վերակացու։ Դա մի խաչագող էր Թմբուլ գյուղից։ Իր ուսումն ավարտել էր միևնույն Ներսիսյան դպրոցումը, բայց դպրոցը նրան չէր բարոյականացրել, այլ ավելի ևս անբարոյականացրել էր։ Նա ուսում չառած՝ գուցե մի անշնորհք խաչագող կլիներ, ոչ այնքան վտանգավոր, բայց այժմ նա ավելի էր ճարպիկացել և ավելի հնար ուներ վտանգավոր լինելու։

Հիրավի, նա արդեն իր լրտեսությունով եպիսկոպոսի հոխանավորությունն ու պաշտպանությունը գրավել էր. նա արդեն հոր էր փոքրում տեսչի համար և ամենայն կեղտոտություն և չարություն գործ էր դնում ուսումնարանումը, և... բոլորն էլ անց էր կենում, բոլորն էլ մարսում էր...

Ռուսաց լեզվի այդ դասատան վարժապետը մի խելագար երիտասարդ էր։ Դրա դասին ծիծաղ էր, որ այստեղից—այնտեղից բարձրանում էր, որից խելագար վարժապետն ավելի ևս գժվում էր։ Նա վերջը իսկապես գժվեցավ և մեռավ։

Թվաբանության ուսուցիչը մի խենեշ արարած էր։ Նա իր դասը թողած՝ նստում էր իր ընտրած կամ ընտրելի աշակերտի կողքին, չեքերը պտտում, գլուխը շփում...— Աշակերտներից շատերն այդ փորձերին ենթարկվելով՝ ամոթից լաց էին լինում... Կային և վարք ու բարքով ապականված աշակերտներ, որոնք վարակում էին և ուրիշ շատերին։

— Այս ի՞նչ խայտառակություն է,— հարցնում էր Արությունը Մանվելին, քանի որ դեռ նոր էր։

— Մեզ ի՞նչ, եղբայր, երևի սրանց աղաթն էլ այսպես է,— պատասխանում էր Մանվելը, և այնուհետև լռում էին Երկուսն էլ, թե՛ ներսը և թե՛ դուրսը։

Դպրոցի բոլոր բարոյական և կրթական թերությունները չէին կարող ծածուկ մնալ տեսչի նկատողությունից։ Նա ուզում էր դուրս անել վատ վարժապետներին, բայց դուրս անել քրիստոնեաբար, առանց հայտնելու, որ նրանք այս կամ այն թերությունն ունին և անհարմար են վարժապետության։ Նա մոռանում էր, որ քրիստոնեության հիմնադիրն ինքը այդպիսիների համար խարազան ուներ ձեռին։ Պարոն տեսչի քրիստոնեաբար վարվելու հետևանքն այն եղավ, որ ինքը մեղադրվեցավ քրիստոնեական ջերմեռանդության մեջ և քրիստոնեաբար հեռացավ ուսումնարանից, իբրև մի քրիստոնյա հերետիկոս...

Այսպես հեռացավ պոչավոր աստղը և մեջտեղ կրկին պծպծացին լուսատուները։ Շատ աշակերտներ հեռացան այնուհետև ուսումնարանից առանց ուսումն ավարտելու։ Դրանց թվումն էին և Արությունն ու Մանվելը, որոնք նոր էին փոխադրվել վերջին դասատուն։ Դուրս եկող աշակերտներից շատերը մտան արքունական ուսումնարան, նրանց օրինակին ուզեցան հետևել և Արությունն ու

Մանվելը, և հարցաքննություն տալու համար սկսեցին պատրաստվել տանը։ Մի քանի հայ աշակերտներ գիմնազիայի վեցերորդ դասարանից դաս էին տալիս նրանց ձրիաբար։ Այս ժամանակ ահա մեր տղայոց համար, մանավանդ Արությունի, բացվեցավ մի նոր աշխարհ։

Ուսուցանող ուսանողները մի առավելություն ունեին պաշտոնական վարժապետներից, և այդ այն էր, որ նրանց հարաբերությունն ընկերական էր, նրանց ուսուցումը մի օգնություն էր։ Այստեղ ուսանողի ազատ մտածմունքը չէր ընկճվում, այստեղ զարգանում էր նրանց ինքնօգնությունը. այստեղ աշակերտի մտքի զբոսանքն արգելքի չէր հանդիպում. նա չէր դրված մի նեղ վանդակի մեջ, այլ մի ընդարձակ պարտեզի՝ ուր ամեն ծաղկից հոտ առնելու իրավունք ուներ և կարող էր ընտրել իր ուզած ծաղիկը։ Ճշմարիտ է, սա մի շեղմունք է, որ կարող է հեռացնել մտադրյալ նպատակակետից, բայց աճելությունն այստեղ բնական է և կատարյալ։ Նպատակակետին չհասնելը կամ ուշ հասնելը մի դժբախտություն չէ, այլ բախտավորություն, որովհետև նա արհեստական է ու շինծու և չի համապատասխանում մարդուս բնականապես զարգանալու օրենքներին։

Ուսուցանող ուսանողներն իրանք ցանկանալով ավելի լավ յուրացնել իրանց սովորածը, ցանկանալով վարժվել նաև դասավանդության մեջ, ճշմարիտ է, խամություն շատ էին անում, նոր փորձեր էին փորձում, բայց առհասարակ պարապում էին շատ բարեխղճաբար։ Ազատ և տոն օրերին էլ ավելի շատ հոգով զբոսնելու էին գնում միասին, և այդ ժամանակն էլ նրանց խոսակցությունը մեծ մասամբ լինում էր կրթական, օրինակ՝ բացատրություն բնության այս կամ այն երևույթի, մի պատմական անցք, մի երևելի մարդու կենսագրություն, մի նոր գյուտի պատմություն, դատողություն ժողովրդի մեջ արմատացած նախապաշարմունքների մասին, որ նրանց ավելի հեռու էր տանում, և սկսում էին հեշտությամբ լուծել վերացական շատ խնդիրներ, առանց կասկածելու, որ նրանց վրա շատ փիլիսոփաներ են գլուխ կոտրել և գտել են անվճռելի։ Ուսման հոտը մատաղ գլուխներն էր ընկել և մի քիչ հարբեցրել։

Հիմա պետք է երևակայել, թե ինչ կզգար այժմ Արությունը Ալբերտի աստվածաբանության տակ ճնշվելուց հետո։ Ի՞նչ կզգա մեկը, երբ չոր ու ավազոտ անապատում երկար թափառելուց հե-

տո՝ ընկնի մի դալար հովիտ՝ լի ականակիտ աղբյուրներով, հոտավետ ծաղիկներով, բնության ամեն բարիքով և կենդանությունով,— ահա այսպիսի մի զգացումն տիրեց Արությունին։ Բնությունն և մարդ, որոնք մի բառով կարող են և կյանք անվանվել,— ահա այդ կյանքը չուներ նրա ստացած ուսմունքը։ Բնագիտության անխախտ օրենքները, թվաբանության ճիշտ կանոնները, պատմության երևելի անցքերը, աշխարհագրության գեղեցիկ նկարագրությունները, բանաստեղծական սրտաշարժ գրվածքները, թեև փոքր սահմանի մեջ, իբրև մի փնջիկ միայն, բայց բավական է մի մատաղահաս և դեռ փոքր գլխի մեջ ահագին հեղաշրջում ձգելու։

Ես Արությունին այդ ժամանակ,— գուցե և անհարմար, չհոգեբանական,— նմանեցնում եմ աղբով պարարտացրած մի հողի, որի մեջ ընկած ամեն մի բեղմնավոր սերմը կարող էր միուն հարյուր տալ։ Հիրավի՛, ի՞նչ էին նրա մինչև այս ժամանակ սովորածները, ստացած տպավորությունները, հավաքած տեղեկությունները, լսած առարկաներն ու առասպելները, եթե ոչ ճշմարիտ ուսմունք աճեցնելու համար շատ օգտակար աղբ, որ եթե առանց բարի սերմի մնար, մոլախոտ կբուսցներ և կապականեր նրա ուղեղը։ Ոչ ոք իր միտքը չի հեղաշրջիլ, եթե հեղաշրջելու ոչինչ չունի նա իր մտքումը։

Գիտությունով ճոխանալու պահանջն այնքան սաստիկ էր Արության մեջ, որ նա թեև դեռ անորոշ ու մութ, զգաց, որ մարդս կատարյալ մարդ չէ, եթե նա չէ զարգացած մտավորապես այնքան, որքան որ ընդունակ է զարգանալու մարդ արարածը իր ժամանակին։ Բախտավորապես աճելության ընդունակ դարձած լավ միտք ուներ ինքը, թե ի ծնե և թե ծննդից հետո։ Գտնվեցան մարդիկ, որ թեև անգիտակցաբար, այդ մտքի մեջ ձգեցին բեղմնավոր սերմեր։ Ասում եմ՝ անգիտակցաբար, որովհետև շատ անգամ քամին ու ջուրն էլ են մի սերմ մի տեղից մյուս տեղ փոխադրում, շատ անգամ թռչուններն էլ են միևնույն պաշտոնը կատարում։ Շատ վարժապետներ ոչ այլ ինչ են, եթե ոչ մի տեղից մյուս տեղ մի սերմիկ փոխադրողներ։

Քանի որ ուսումը տրվում և ստացվում է փոխառփոխ, այդտեղ գլխավոր առարկան անուշադիր է մնում, այն է՝ անհատի զարգացումը, նրա մտքի բեղմնավորվիլը։ Մանկավարժությունը ձգտում ունի այդ նպատակին հասնելու, բայց դեռ հասած չէ. որովհետև

ժողովուրդների դաստիարակության ղեկը մանկավարժության ձեռին չէ. նա մի հրամանակատար է միայն, ինչ լավ բան որ անում է՝ թաքուն է անում... Առայժմ քանի որ անհատը կարող է զարգանալ միայն ինքն իրան, իր ներքին ուժովը, բավական է, եթե մանկավարժը սանիկի այդ ներքին ուժերը չթուլացնե, ինչպես որ թուլացնում են մեր ժամանակումը՝ մանուկների թույլ ուսերի վրա բարձելով անտանելի և անկրելի բեռն, որի տակ նրանք ընկճվում, ոչնչանում են։

Համոզում կերակուրները ո՞ւմ չեն դյուր գալ, բայց դրա համար քաղց և ախորժակ է պետք, այլև մարսելու ընդունակ մի քստամոքս։ Արությունն ուսման քաղց և ախորժակ ուներ. նա անխիտիր կուլ էր տալիս ամեն ինչ և մարսում էր։ Բայց այդպես չէր Մանվելը. նա, ինչպես կասեն՝ «ցեխծամ» էր տալիս. ուտում էր ակամա և չէր էլ մարսում։ Նա շատ էր սիրում, որ բերանացի նրան պատմեն զարմանալի, հրաշալի, զվարճալի և առհասարակ սրտի վրա ազդող բաներ, բայց միտքը լծի տակ չէր դնում։ Միտքը հոգնեցնելու, վարժելու, ինքնուրույնաբար մի բան սովորելու տրամադրություն չուներ։ Սրա հակառակ Արությունը մի բանի համառոտը լսելով՝ նրա ընդարձակն ինքն էր սովորում. նրա այս տրամադրությունն այնքան կրթվեց և զարգացավ, որ ինքն իր վրա բարկանում էր, երբ ուրիշներից էր լսում այն, ինչ որ կարող էր ինքն էլ գիտենալ ու ինքն ասեր նրան։ Վերջապես Արությունն «ասողիկ» էր, ձգտում ուներ ասող լիներ՝ քան լսող, իսկ Մանվելն այդ նախանձի ցավը չուներ. նա տրամադիր էր միայն լսելու և դրանում էր գտնում նա իր ցանկության լրումն։ Մտքերի այս տարբերությունը նրանց ավելի էր մոտեցնում և օրեցօր ավելի սերտ սիրով կապում։ Մանվելը հիանում էր Արության ընդունակությունով և նրան պաշտելու չափ սիրում։ Արությունն էլ, տեսնելով Մանվելի առ ինքն ունեցած անկեղծ սերը՝ երջանիկ էր համարում իրան, որ մի համակրող ունի և փոխադարձաբար սիրում էր նրան. միայն ինքն իշխող էր հանդիսանում միշտ, իսկ Մանվելն իշխված։ Բայց այդ թվելի չէր ոչ մեկին և ոչ մյուսին, որովհետև հառաջ էր գալիս բնականապես և ոչ գիտությամբ։ Երկուսն էլ ազատ էին ցուցամոլությունից, սնափառությունից և ապրում էին ինչպես մեծ ու փոքր եղբայրներ։

Բ

ՍԿԻԶԲՆ ԵՐԿԱՆՑ

Մեկ օր՝ կեսօրից հետո՝ Արությունն ու Մանվելը ման էին գալիս Խոջի վանքի գերեզմանատանը, որ այն ժամանակ հավքաբարոց միակ զբոսատեղին էր, կարդում էին այս և այն գերեզմանաքարը և գովում կամ փնտրում էին շարադրողին կամ փորագրողին։

— Արություն, տեսնես աշխարհքիս մեռելնե՞րը շատ կլինեն, թե՞ սաղերը,— ասաց Մանվելը, նստելով մի գերեզմանաքարի վրա։

— Քո տունը շինվի, Մանվել, բա էդ էլ չգիտե՞ս։

— Իմ մտքով՝ պետք է որ սաղերը շատ լինին, որովհետև մարդիկ տարեցտարի ավելանում են, հո չեն պակասում. մեկ խոսքով՝ ծնվողների թիվը շատ է, քան մեռնողների։

— Զարմանալի մարդ ես դու, Մանվել. ինչքան մեծանաս, էլի պիտի երեխա մնաս։

— Ինչպե՞ս։

— Ասում ես՝ ծնվողների թիվը շատ է, քան թե մեռնողների, բայց չես մտածում, որ աշխարհի ստեղծելուց մինչև հիմա որքա՞ն մարդիկ կլինին հողի տակն անցած, որ եթե հանկարծ վեր կենային՝ չէին տեղավորվիլ հողագնդի վրա։ Վերցնենք՝ օրինակի համար՝ հենց մեր քաղաքը։ Ո՞վ գիտե՝ քանի անգամ կլինի սա մեծացած, էլի ոչնչացած. ժանտախտ է գալիս, սով է լինում, պատերազմ է լինում, բայց գրանք էլ որ չլինեն, բավական է, որ բոլոր ծնվողները՝ շատ ապրեն թե քիչ՝ պիտի մեռնին, բայց մեռածները նոր մեկանց վեր չեն կենում...

— Ես լավ չեմ հասկանում. ինձ թվում է, որ մարդիկ տարեցտարի շատանում են, չեն պակասում։ Մեր գեղն ուրաջ տասը տուն էր, հիմի գառել է քսան տուն, էնպես էլ ամեն տեղ։

— Դու սաղերը սաղերի հետ ես համեմատում։ Ի՞նչպես ես կարծում ուրեմն. եթե աշխարհիս երեսին մահ տասած չլիներ, մարդիկ երկու էնքան կլինեին, ինչքան հիմա կա՞ն, թե՞ ավելի շատ։

— Սպասիր մտածեմ... Չէ՛, մեռածները շատ կլինեն, որովհետև դու լավ ասացիր՝ ծնվածները բոլորն էլ մեռնում են։ Եթե համարենք, որ մարդ շա՜տ, շա՜տ որ ապրի, հարյուր տարի պիտի ապրի. եթե դրանից վաղ մեռնողներին չհաշվենք էլ, էլի բանից դուրս է գալիս, որ մեզանից հարյուր տարի առաջ սկսած մինչև աշխարհիս ստեղծվիլը ինչքան որ ծնվածներ են եղել, բոլորն էլ մեռել են... Օ՜հ... իրավ որ, ինչքա՜ն շատ պիտի լինին մեռածները։ Զարմանալի մարդ եմ ես, Արություն, սրանից հետո բան չի լինիլ, բայց չեմ կարողանում իսկույն հասկանալ։ Մի աշակերտ էլ էն օրն ինձ մի բան հարցրեց, չիմացա. հետո տեսա, թե ինչքան հեշտ է եղել։

— Ի՞նչ հարցրեց.

— Մի հասարակ խնդիր։ Ասում է՝ «Եթե հայրը քսանհինգ տարեկան է, իսկ որդին՝ մեկ, քանի՞ տարուց հետո որդին հոր տարիքի կիսին կհասնի, եթե միասին ապրելու լինին»։ Ասեցի՝ էդ ինչպե՞ս կարելի է։ Հետո որ բացատրեց, նոր իմացա, որ կարելի է եղել։

— Իհարկե կարելի է։ Երբ որ որդին հոր ներկա տարիքին հասնի, նրա կիսի չափ հասակ կունենա, որովհետև հայրը կդառնա հիսուն տարեկան, իսկ որդին՝ քսանհինգ, որ հիսունի կեսն է։ Բայց քեզ որ անհնարին է թվացել, դրա պատճառն էն է, որ դեռ կիսի ու քանիպատիկ լինելու վրա չես մտածել, այլ թե՝ հայրը որ հիմի քսանհինգ տարով մեծ է որդուց, միշտ էլ էնքան մեծ կմնա...

— Ճշմարիտ ես ասում, հենց էդպես էի մտածում. էլի միտս չեկավ, թե մի թվի մեկէլ թվից քանիսով շատ լինելն ուրիշ է, քանիպատիկ մեծ լինելն ուրիշ։ Էդ հետո իմացա, բայց էլ ի՞նչ կօգներ... Գիտե՞ս ինչ կա, Արություն, ես թվաբանության վրա շատ էլ չեմ մտածում. բան է էլի՞, թե որ կսովորեմ, լավ, թե որ չէ, մի մեծ զրկողություն չի լինի ինձ համար...

— Բա էլ ուրիշ ինչի՞ վրա ես միտք անում։

— Ես մտածում եմ, թե ինչպես անեմ, որ սատանի հավատը չքացնեմ...

— Ինչպե՞ս թե «սատանի հավատը», երևի ուզում ես ասել՝ «սատանին հավատալը»...

— Իհարկե՝ սատանին հավատալը. թե չէ՝ սատանան ի՞նչ հավատ ունի, որ չքացնեմ...

— Հետո՞, ինչպե՞ս ես չքացնելու։

— Ահա՛ ինչպես։ Երբ որ մենք հավատում ենք էնպես բաներ, որ աներևույթ են, գերբնական են, մենք չենք կարող ոչ տեսնել ինքներս, ոչ ցույց տալ ուրիշին,— պետք է էն ժամանակ հավատանք միայն էն էակներին, որ մեզ օգուտ են տալիս, իսկ վնասակարներին չհավատանք, հերքենք, չընդունենք։ Օրինակ՝ ասում ենք՝ սատանա էլ կա, հրեշտակ էլ։ Սատանան մեր թշնամին է, հրեշտակը՝ մեր բարեկամը։ Եթե հրեշտակը ճշմարիտ որ մեզ լավություն է անում, մեր աղոթքը երկինք է հասցնում, մեզ չարից, փորձանքից ազատում է, մեր հոգին սատանի ձեռից խլում է, արքայություն տանում, թող ուրեմն էդ բարի հրեշտակի կյանքը երկար պահի մեզ համար աստված։ Բայց սատանան, որ միշտ մեզ խաբում է, փորձանքների մեջ է գցում, որ մի ահագին լեգեոն ունի մեզ համար, էլ քաջք ասես, դև ասես, ալք, խթեթիշ, մեզնից լավեր... Թող ինքն էլ, դրանք էլ չքվին անհետանան. չքվին մեր մրտքից, լեզվից, գրից. որովհետև դրանց հավատալը մեզ վնաս է տալիս և ոչ օգուտ։ Մի բան որ իսկապես չկա, էլ ինչո՞ւ ենք հավատում, քանի որ էդ հավատալովը մենք մեզ համար մի նոր ցավ ենք ստեղծում, մի նոր պատիժ...

— Մանվել, դու դեռ քու օրումը էդպես խելոք բան չէիր մտածել։ Ես ու իմ աստվածը՝ շատ լավ ես ասում, շատ ուղիղ։ Իհարկե՝ մարդուս տունը շինողն ու քանդողը նրա հավատն է։ Սուտ հո չի՞ գրած Ավետարանի մեջ, թե «Ըստ հավատոց քոց եղիցի քեզ»։

— Հիմի դու ականջ դիր, ես էդ հավատալու վնասն ասեմ։ Մեր գեղի տղերքը շատ քաջ, շատ աներկյուղ են, ոչ թրից ետ կկենան, ոչ սրից. մի տասը տարեկան երեխի էլ որ ասես, առյուծի բերան կընկնի. մի խոսքով՝ տղերք եմ ասում, որ Սամփսոնը քեզ օրինակ։ Բայց էդ սրտոտ տղերքը գիշերները գերեզմանատան կամ մի քանդված եկեղեցու մոտով անց կենալիս, որ մի ցից քար են տեսնում կամ մի շվաք, էդ հասարակ բաները նրանց աչքումն էնպես բաներ են դառնում, որ չափազանց երկյուղից սիրտները ճաքում է, լեղիները պատռվում, մի քանի օր չի քաշում, մեռնում են։ Հետո ասում են՝ սատանեն տվել է, այսինքն խփել է։ Ասում էլ են, թե խփած տեղը մեռելի վրա երևում էր, կապտել սևացել էր։ Էս չիք սատանեքը գործակալներ էլ ունին. գիտե՞ս ովքեր են դրանց հրամանակատար գործակալները։

— Չէ՛, էդ չեմ իմացել։

— Դու որտեղի՞ց կիմանաս. ես եմ նրանց անունը սատանի գործակալ դրել. նրանց ասում են՝ ջինդար, ջադուքյար, փալչի, գրբաց, թասի մտիկ տվող...

— Հա՛, դրանք գիտեմ ես։

— Բայց գիտե՞ս դրանք ինչպես են խաբում ժողովրդին, ինչքան վնաս են տալիս։ Ժողովուրդը ինչպես որ սատանին է հավատում ու մտքովը չի անցկացնում, որ սատանա չկա, էնպես էլ դրանց ասածին ու արածին է հավատում։ Մեկ անգամ մեր գեղը մի գրբաց էր եկել, «բախտի» գիր էր անում մի երկեն զոլոլակ թղթի վրա ու հինգ-հինգ մանեթով ծախում։ Մեր մարդիկն էլ առնում էին մեջքներին, կռներին կարում, որ բախտները բանի, լեզուները կըտրուկ ըլի, խոսքերն անց կենա մողրովի մոտ, դիվաններումը։ Իհարկե ոչինչ էլ չէր լինում, ամեն տեղից քոթկում դուրս էին անում, բայց նրանք էլի չէին կարծիք տանում, որ գրբացի թուղթը ոչինչ զորություն չունի։ Էդ ջինդարը մեկ երկու մարդի էլ ասել էր, թե ես որտեղ որ հին ժամանակներում թաղած փող ըլի, կգտնեմ։ Մեր շուտ ու հեշտ հարստանալ ուզեցողներն էլ հավատում են. ջինդարին տանում են մի հին գեղատեղ, ասում են՝ էստեղ պետք է որ շատ փող ըլի, քարով որ խփում ենք, դրնգդրնգում է. դե գտիր, երեք բաժին կանենք, մեկը քեզ, երկուսը մեր շորս հոգուն։ Ջինդարն ասում է.— ես դեղեր պետք է առնեմ, պետք է ճաշ պատրաստեմ դևերի համար, նրանց սիրտը շահեմ, որ նրանք էլ իմ խնդիրքս կատարեն։ Բերեք մի երեսուն մանեթ տվեք, եթե սուտ դուրս գա՝ ձեր փողն էլի ետ ձեզ կտամ, դեռ մեկ էնքան էլ կավելցնեմ վրան։ Մեր մարդիկը գնում են մի տեղից պարտք անում երեսուն մանեթը, բերում տալիս նրան։ Նա էլ մի երկու օրից հետո նրանց հետ գնում է առաջվա տեղը, մի թղթի վրա մի քիչ բան է գրում ու շպրտում։ Թուղթը քամումը մի քիչ դես ու դեն փոփոխելուց հետո վեր է ընկնում մի տեղ։ Ջինդարն ասում է՝ դե էդ տեղը փորեցեք, փողն էդտեղ է. երկու կամ երեք արշին որ փորեք, բավական է։ Էդ ասում է ու ինքը գնում գեղը։ Երբ որ մթնում է (ցերեկով չեն փորում, որ ոչով չտեսնի), սկսում են փորելը։ Փորում են մինչև առավոտ, բայց բան դուրս չի գալիս։ Ջինդարին տանում են փորածները ցույց տալիս, թե՝ դու ինչքան որ ասել էիր, մենք երկու էնքան ենք փորել, բան չերևաց։ Կարելի է մեր աչքին չի երևում, եթե որ դու տեսնում ես, հանիր մեզ տուր։ Ջինդարը գլուխը թափ է տալիս, մի քիչ

մտածում, հետո ասում է՝ պետք է քառասուն օր սպասեք, եթե երևաց, երևաց, եթե ոչ, ես դրա ճարը կգտնեմ։ Մարդկանցից մինը չի համաձայնում, ասում է՝ դու մեզ խաբեցիր, սաղ գիշերը բանեցրիր, հիմի էլ ուզում ես փախչիս, մեր փողը հետդ տանես։ Բեր մեր փողը ետ տուր, թե չէ՝ տեսնում ե՞ս, քեզ կգցենք էս մեր փորած փոսը, հողը վրեդ կածենք, դու կմնաս էս գերեզմանումը, էլ ոչովի չես խաբիլ... Էս որ լսում է ջինդարը, սաստիկ բարկանում է. «Դու, ասում է, ինչպե՞ս կհամարձակիս էդպես խոսք հանել բերանիցդ. էս ահաթիս ձեռս բարձրացնեմ, հարյուր հազար սատանա կգան, քո մեծ պատառը ականջդ կթողնեն, գիտե՞ս թե չէ»... Էս սուտ սպառնալիքից էնպես վախում են մեր մարդիկը, որ ասում են. «Խալիփա, մեր տված փողը քեզ հալալ ըլի, միայն թե մեզ մի վատ բան չանես»...

— Այ թե խաբել է, հա՜...— բացականչեց Արությունը։— Իրանց որդոց կարդացնելու համար փող չեն տալիս, թե աղքատ ենք, ջինդարներին թումաններով են տալիս։ Մանվել, ես էդ ջինդարի գրերից էնքան ժողովել էի, էնքան արտագրել, որ ով գիտե մի փութից ավելի լիներ։ Ոչովից չէի թաքցնում. ամենքն էլ գիտեին, որ իմ վարժապետն էդ բանը լավ էր իմանում։ Բայց ես գործ չէի դնում, վախենում էի. ասում էի՝ վա՜յ թե սատանան իր գիշատեսիլ դեմքով առաջիս կանգնի, լեզիս պատռե։

— Զարմացք բան է, շատ անգամ հո տեսնո՞ւմ են, որ խաբում են, սուտ են ասում, էլ ինչո՞ւ են հավատում։

— Էդ էդպես է, բայց շատ անգամ էլ ուղիղ է թվում։ Որտեղ որ չկա առողջ դատողություն, ինչ մարդ որ հասուն խելք չունի, այլ երևակայություն և վառ երևակայություն, նա իսկ և իսկ կախարդվում է,— սիրահարվում է, գժվում է, մինչև անգամ առողջանում է։ Էդպես դեպքեր, թեպետ քիչ, բայց պատահում են, էդ քիչն էլ բավական է, որ մի հարյուր սուտ նրա հետ անց կենա։

— Ես էդ չեմ հասկանում։

— Ի՞նչ կա չհասկանալու։ Դու ինքդ չասացի՞ր, որ ձեր գեղի քաջ տղեքը մի շվաքից վախենում են և սարսափահար մեռնում։ Էդպես էլ մեկէլ բաներն իմացիր։ Նա էդպես դեպքերում տեսնում է էն, ինչ որ չկա. նա ձայն էլ է լսում, թեպետ ոչ մի ձայն հանող չկա։ Նրա երևակայությունը խանգարվում է, և ինչ որ պիտի զգայարանքներից ստանար, երևակայությունն է թեշագրում զգայարանքներին։ Նա տեսնում է գիշերվա մթնումը մի հասարակ շվաք։ Նրա երևակայությունն էդ շվաքից մի հրեշ է ստեղծում, աչքն էլ էդպես է տեսնում։ Կարծես շարժո՞ւմ լինի, երևակայում է նա, և սկսում շարժիլ, կարծես գլո՞ւխ ունենա. բռնում է մի ահագին գլուխ՝ ի՞նչ երկայն ձեռներ ունի, ձեռները մեկնվում են՝ օ՜... ուզում է բռնել ինձ. բռնվում է, ընկնում է հրեշի ճանկը և ուշաթափ վայր ընկնում...

— Էդ ես հասկանում եմ. «վախի աչքերն, ասած է, մեծ-մեծ կլինին»։ Բայց ինչպե՞ս կարելի է սիրահարվիլ...

— Էլի միևնույն կերպով։ Նա լսում է, որ իր համար սիրո գիր են արել։ Նա հավատում է. երևակայում է, որ արդեն բռնված է, ընկել է վանդակի մեջ. նա զգում է, որ սիրահարված է. գիշեր-ցերեկ դրա վրա է մտածում. շարի միջամտությունը նրա հանցանքը թեթևացնում է հասարակաց կարծիքի առաջ, և նա թուլանում է. ազատություն է տալիս իր սերին, եթե մանավանդ առաջ էլ իրանում մի քիչ հակում է եղել։ Վարպետ ջինդարները հեշտությամբ սիրո գիր չեն անում։ Նրանք առաջ իմանում են, թե ի՞նչ հանգամանքի մեջ են դրված երկու ապագա սիրողները։ Նրանք էդ վարպետությունը ցույց չտալու համար գտնում են նրանց աստղերը, որ տեսնեն ինչ հարաբերության մեջ են նրանց աստղերը, իրար կմոտենա՞ն, թե ոչ։ Երբ որ տեսնում են, թե բանը շատ հեշտ է, միայն մի քիչ վստահություն է պետք, էդ վստահությունն էլ հառաջ է գալիս ջինդարի գրի ազդեցությամբ։ Իսկ երբ որ տեսնում են, որ դրժվար է կամ անհնարին, ասում են՝ «ձեր երկուսի աստղերը իրար չեն մոտենում, չեն բռնում»... Բայց մի հասարակ դեպքը, պատահմունքը հազարավոր սուտեր է ստեղծել տալիս, մինը քան զմյուսը հրեշավոր և հավատացնում ժողովրդին։ Օրինակ՝ ասում են ջինդարը երես առ երես խոսում է դևերի հետ։ Էդ իրավունքը նա ձեռք է բերում շքլա մտնելուց հետո։ Նա փակվում է մի առանձին տեղ, քր շորս կողմով մի խազ է քաշում գետնի վրա և սկսում կարդալ գրքի աղոթքները, որ անհասկանալի բառեր են և անթիվ դևերի անուններ։ Դևերը սարսափում են, որովհետև պիտի գերի ընկնին էդ մարդու ձեռքը, որ այնուհետև ինչ հրամայե՝ կատարեն։ Նրանք ամեն հնար գործ են դնում, որ աղոթող մարդուն վախեցնեն կամ խաբեն։ Բարձրացնում են ահագին որոտմունք, կռիվ, աղաղակ, քարեր է՝ որ նետում են, կրակ է՝ որ թափում են, բայց էդ բոլորը

միայն թվում են էդպես, մարդը չպիտի վախենա, թե որ վախենցավ, նրա բանը պրծած է։ Վերջը մոտենում են, բայց չեն կարողանում խազից անց կենալ։ Ուրեմն սատանեքն էլ են վախենում ոչինչ բանից։ Գետնի վրա փետով քաշած հասարակ գիծը մի անպաշարելի բերդի տեղ է բռնում միջի նստած խորամանկ մարդու համար։ Մոտեցող դևերն այնքան դաժան, այնքան զարհուրելի ու սոսկալի դեմքով են երևում, որ մարդ ինչքան երևակայե, նրանից ավելի սարսափելի պատկեր չի կարող ստեղծել։ Մարդը չպիտի վախենա, գլուխը չպիտի բարձրացնե. աղոթքի կարդալը չպետք է դադարեցնե։ Սոսկալի դևերը երբ որ ոչ մի կերպով չեն կարողանում վախեցնել, փոխում են իրենց դեմքերը, և հրեշական կերպարանքները դիմակի պես մի կողմ են ընկնում, և տակիցը դուրս է գալիս ամենաչքնաղ աղջկա պատկերը։ Լեղու պետք է, որ հիմի նկարագրե էդ աննման գեղեցկությունը։ Գեղեցկուհին շատ գեղեցիկ է, բայց շատ էլ պարկեշտ չէ։ Նա թույլ է տալիս իրան ասելու ամեն խոսք, իհարկե հաճոյական, ականջի դյուրեկան, սիրաշարժ. նա գործ է դնում անպարկեշտ ձևեր, բայց երիտասարդ մարդուն շատ հաճելի. մեկ խոսքով՝ եթե հողեղեն մի գեղեցիկ կնիկարմատ կարող է խաբել ումը կամենա, ի՞նչ կանե ուրեմն սատանան ինքը, քանի որ ուրիշներին էլ ինքն է սովորեցնում խաբելու կերպը։ Բայց մարդը չպետք է խաբվի... Վերջը, երբ որ ամեն հնար գործ են դնում ու չեն կարողանում մարդուն խաբել, իսկ նա իր աղոթքով նրանց տանջում, չարչարում է ավելի, քան թե դժոխքի կրակը, այնուհետև շոքում են նրա առաջին, աղ ու հաց բերում մեջտեղ, նրանով երդվում, թե՝ այսուհետև մենք քո ծառաներն ենք, երբ որ կանչես մոտդ, պատրաստ ենք, ինչ որ հրամայես, պատրաստ ենք կատարելու։ Մարդը սատանաներից երդմնագիր է առնում և արձակում նրանց։

Հիմա դու ինձ ասա, Մանվել, մեկ մարդ որ բոլոր դևերի զորությունը իր կողմը լինի քաշած. ի՞նչ չի կարող անել այնուհետև։ Սա է հրաշագործության աղբյուրը, հիմքը, քանի որ սրան հավատում է ժողովուրդը, բոլոր մնացածները չնչին բաներ են։ Սատանան ի՞նչ չի անիլ, պրծավ գնաց։

Այնուհետև հավատում են, որ այսինչ չինդարը իր երկենացրած եղունգի վրա մի քանի խազ է քաշում թե չէ, ով ինչ արած է լինում, իսկույն ասում է։ Եղունգն էլ մի խորամանկ տնտեսություն է հնարագետ չինդարի համար, է։ Թղթի ծախս չի անիլ։ Նա, ասում

են, եղունգի վրա մի քանի խազ է քաշում թե չէ՝ իր ուզած կնիկը փողոցով անց կենալիս բոլոր խալխի միջին տկլորվում է, հենց իմանում է, թե ինքն է Եվան՝ դրախտի մեջ կանգնած։ Նրա աչքին, ասում են, ոչ մի մարդ չի երևում, ականջը ոչ մի ձայն չի լսում, հենց իմանում է, թե դրախտի մարմարե ավազանների մոտն է կանգնած, մերկանում է, որ լողանա...

Էս դեռ ոչինչ. անշունչ առարկաների վրա էլ է ներգործում նրանց արած գրի զորությունը։ Ասում են՝ մի չինդար խալիփա իր աշակերտի մորը հավանել է. աշակերտին սովրեցրել է, թե՝ «Որ գնաս տուն, մորդ գլխի մազիցը մինը թաքուն պոկիր, բեր»։ Միամիտ աշակերտը որ գնում է տուն, մերը գլուխը լվանում է եղել. ձեռքը մեկնում է, մի մազ պոկում։ Խորամանկ մայրը հասկանում է իսկույն, իմանում է, որ բանի միջին բան կա, չի խոսում, բայց երեխի ձեռիցը մազն առնում է, մտնում տուն, մի գոմշի կաշվից մի մազ է պոկում ու տալիս տղին։ Երեխեն մազը տանում է վարժապետին է տալիս, ասում է՝ «Մորս գլխիցն է»։ Վարժապետը գործ է դնում մազը թլիսմի հետ, մեկ էլ տեսնում են՝ հրես... ո՞վ հրաշք... գոմշի կաշին գեղամիջովը թրա՞խկ հա թրա՞խկ, վազում է սիրահարված ու գժված դեպի չինդար խալիփի տունը...

— Ո՜ւհ, ի՞նչ ծիծաղ կլիներ, թե որ ըղորթ լիներ,— ասաց Մանվելը ծիծաղելով...

— Հապա՜... Էսպես հազար ու մեկ առասպելներով ժողովրդի մեջ բույն է դրել սնահավատությունը։ Բայց դու զարմանում ես, ասում ես՝ ինչի՞ են հավատում։ Միտդ չէ՞, թե մենք ինչպես էինք հավատում թասի մտիկ տվող պառավին Շամշուլդու բերդումը։

— Ճշմարի՞տ որ... Ասենք մենք երեխա էինք, չէինք հասկանում, բայց զարմանալին էս է, որ պառավներն ավելի են հավատում։ Էդպես բաներով լիքն են մեր գեղերը, էլ ասեղ վեր գցելու տեղ չկա, էնպես է տարածված նախապաշարմունքը։ Նստում են, թե վեր կենում, ուտում են, թե հագնում, երազ են տեսնում, թե մի անսովոր բան, փոշտում են, թե հազում, աչքն է խաղում, թե գլուխը ցավում, բայղուշն է ծվծվացնում, թե շունը ոռնում, աղվես է պատահում, թե նապաստակ, մի խոսքով՝ էլ չար աչք ասես, չար հրեշտակ ասես, ամեն բանում, ամեն քայլափոխում մի նոր փորձանք են ստեղծում իրանց համար ու տխրում, տրտմում։ Խելոք մարդկերանց համար կարելի է դրանք ոչինչ բաներ են, բայց այդ

խելոքները չեն իմանում, որ էդ ոչինչ բաները մի-մի ախտ, մի-մի ցավ են։ Վերցնենք հենց խաչի դուլերին, նզավող հարսներին։ Մեզ մի ճոն հարեան ունինք, խեղճը քանդվել է իրա կնկա ձեռիցը՝ շատ էս խաչն ու էն խաչը տանելով։ Ես ինչպես տեսնում եմ, էս քաղքցիք ավելի են հիմար, քան թե մեր գեղցիք։ Արություն, դու նզավող հարս չես տեսե՞լ։ Տեսնես դրանք ճշմարիտ խոսելու ցավ ունի՞ն, թե՞ ջինդարների պես դրանք էլ են խաբում։

— Դրանք երեք տեսակ են, իմ տեսածների համար եմ ասում. կարելի է շատ տեսակներ կան։ Մի տեսակը կա, որ միայն նզավում է իսկապես և ոչինչ չի խոսում։ Մի տեսակ էլ կա, որ աստված հեռու տանե. տեսնելիս մարդ զարհուրում է։ Նրա մարմնի մեջ ընկնում է մի սոսկալի ցնցում, դող. ձեռք ու ոտքը էնպես են ցնցվում, շարժվում շուտ-շուտ, որ խելքը գլխին մարդը իր կամքով, որքան կուզի ճարպիկ ու արագաշարժ լինի, չի կարող էդպես շուտ-շուտ շարժել։ Նոր մորթած հավն ինչպես է թեպերին տալիս կամ նոր մորթած ոչխարն ինչպես է շարժվում, դողդողացնում ոտները, ահա էդպես շարժվում են նրա բոլոր անդամները։ Բայց շատ չի քաշում, միայն կես ժամ, ավելի չէ։ Էդպեսները առաջ ապշում են, հետո սկսում են երգել, բայց հետզհետե երգի եղանակը փոխվում է, սկսում են օռնալ, ղլղլացնել, բլբլացնել, հետո սկսում են ձեռք ու ոտքը գետնին զարկել կամ ձեռներով իրանց կուրծքին խփել։ Դա շատ քիչ է պատահում, բայց պատահած ժամանակ փորձառու մարդիկը ձեռք չեն տալիս, չեն բռնում, գիտեն, որ բռնելն ավելի վատ է։ Տանջանքն անցնելուց հետո նա իսկույն ուշքի է գալիս, կարծես խոր քնից կամ մի զարհուրելի երազից։ Ուրիշ բան չեն ղգում, բացի հոգնածությունից։ Բայց երրորդ տեսակը մի կատարյալ հարսանիք է, մի ճարպկություն, խորամանկություն է՝ ուրիշ ոչինչ։ Ներկայացրու քեզ մի տուն։ Նրա մեջտեղը յորղան դոշակի մեջ ձգվել է մի սիրուն, շարմաղ կամ մի դեղնած սփրթնած բոշի կերպարանքով, մարդիցը գժգոհ մի հարս, կամ տանը մնացած մի պառավ աղջիկ։ Թաղի կնանիքը, հարսներն ու աղջկերքը հավաքվել են տունը լցվել, որ կենդանի մեռելի սուգն անեն. և հենց սգում էլ են շատերը։ Հարսի մարդը գլխավերևը կանգնել է, ձեռները խաչ արել, վիզը ծռել, մի խոսքով՝ իր դեմք ու կերպարանքին մի այնպիսի տեսք է տվել, որ կասես իր կյանքի վերջին բոպեն եկել հասել է, հիմի ուր որ է պիտի զատավճիռը կարդան երեսին ու տանեն կախ տան, խեղդեն։ Հենց էսպես էլ պատա-

հում է։ Հարսն սկսում է մի քիչ շարություն անել, իր երեսին սիլլա է տալիս, մազերիցը քաշում։ Մոտը նստող կնանիքը շուտով ձեռներիցը բռնում են, նա էլ իբր թե ակամա հանդարտվում է։ Ուղարկում են Նարեկի, Ավետարանի հետևից, որ գլխի տակին դնեն, ով մի աղոթագիրք ունի, մի աստվածաղերս, մի Եփրեմ-Խորի, մի Կիպրիանոս կամ մի Թլիսիմ, մի բժժանք, բերում են գլխի տակին դնում։ Պատերին մոմեր են վառում իր հասակի երկայնությունով, խունկ են ծխում, կասկարանքը ոտնիվեր են դնում, շամփուրը կամ մի քոռամեխ գետնին ցցում։ Հարսը որ տեսնում է իրան անհոգ չեն թողում, ամեն բան պատրաստեցին, կատարեցին, բոլոր թամաշավորները հավաքվեցան, այնուհետև սկսում է խոսիլը...— Կորե՞ք, կորե՞ք, անիծվածներ, իմ աչքը ձեզ չտեսնի... Ես քու աչքերդ կհանեմ, անզգամ, էլ լայեղ չես անում մոտս գաս հա՞... Չեն թողնում հա՞... Ո՞վ չի թողում... մարդդ չի թողում, հա՞... Ես դրան նշանց կտամ. դրա աչքերը կհանեմ. չոքեչոք մոտս կբերեմ. դա շատ է կատաղել. էլ ո՞չ խաչի է հավատում, ո՞չ նրա ղուլին... քեզ թակում է, հա՞... Ես դրան թակել նշանց կտամ. ես դրան էնպես թակեմ, որ օխտը տարի տեղիցը վեր չկենա... էհե՞յ, ա՞յ քիթը ծուռ կնիկ, ինչի՞ ես խալխի միջին ասել, թե Ազիզը (հարսի անունն է) իրանց բաղվանչու հետ շատ է բարեկամացել. եկ իմ կշտին չոքեչոք մեղա ասա, թե չէ՝ քու. տունն ու տեղը կհանգցնեմ, ծուխդ կկտրեմ... Ախչի՞, Եղանա, դու ինչի՞ ես Խեչոյի (հարսի մարդու անունը) հետ քչփչ... Հենց իմանում ես, ես չեմ տեսնում, հա՞...

«Վերջապես էլ ինչ երկարացնեմ. դու ինքդ էլ կլինիս տեսած. գեղ չկա, որ սրանցից մի քանի հատ չլինին։ Էսպես շարունակում է դարդոտ հարսը, մեկին սպառնում է խաչի բեքանով, մեկելի մեղքերը երեսով տալիս ամենի մոտ։ Ջրերք ու հիվանդոտ կնանիքն էլ՝ հարսի ոգևորված դելը տալիս ժամանակը, կամաց-կամաց, երեսներին խաչ հանելով, գնում են կողքումը նստում, մատիցը բռնում, որ իրանց դարդի, իրանց ցավի համար խաչը մի բան ասի իր գուշակող հարսի բերանովը։ Նա էլ ոբին հույս է տալիս, որի վրա քարկանում է, մինչև ամեն խաղ հատնում է, հետո թուլանում է, սուտ քուն է դնում իրան։ Հավաքվածներն սկսում են քաշվիլ աստծուն փառք տալով, սուրբերին խունկ ու մոմ, մատաղ խոստանալով... էսպես, հապա՞, Մանվել։ Էնդուր է ասել խեղճ Աղասին, թե «աստված, քո փառքդ շատ բլի. էլ ո՞ւր ենք ասում, թե մարդը քո սուրբ

հոգին ունի, երբ որ նրա միտքը քարից պինդ ա, գլուխը հաստ»։ Էնքան բաներ եմ տեսել, Մանվել, որ հիմի դժվարս գալիս է թե հավատամ, որ ճշմարիտ տեսած կլինիմ, ասում եմ, երևի լավ չեմ նկատել. ինչպե՞ս կարելի է, որ բանական մարդը էսքան անխելք լինի։ Էս նղավող աղջկերքը էլած սուրբերը քիչ են համարում, նոր-նոր սուրբեր էլ են գնում։ Մեկ անգամ էսպես մի նոր խաչի պատահեցա ուխտավորներով լիքը։— Էստեղ ես առաջ սուրբ չեմ տեսել, ասացի, էս որտեղի՞ց լիս ընկավ։ Թե՝ բաս չես ասի՝ Սուրշանանց Եղսանն է գտել։ Եղսանին ինքս տեսա, հարցրի, ասում եմ՝ «Գտած խաչիդ անումն ի՞նչ է. թե՝ «Աստվածածին է»։ «Ինչի՞ց գիտես». «Երազումս եմ տեսել»։ «Ինչպե՞ս տեսար». «Էրկեն սպիտակ մորուքով մի ծեր մարդ էր»։ «Ախչի՛, Աստվածածինը տղամարդ հո չի՞, որ մորուք ունենա». «Դե ես ի՞նչ անեմ, ինքն ասաց, թե Աստվածածինն եմ, էս էլ իմ Ծաղկավանքն է, պիտի շինել տաս»։ Նրա ասած վանքատեղն էլ մի ավերակ թուրքի մատուռ էր։

Հապա՜, Մանվել, իզուր չի Աղասին արտասուքն աչքերին ասում. «Մարդս որ ծնվում է, մեկ գունդ մսից ավելի ոչինչ չենք տեսնում. տարիք են անց կենում, որ քիչ-քիչ ոտն է ըլում, քիչ-քիչ լեզու, ուշ ու միտք գալիս... Բայց վա՜յ էն էրեխին, վա՜յ էն ազգին, որ աչքը էնպես գոգում բաց կանի, որ լսի տեղ խավար կտեսնի, աչքը բաց՝ դուզ ճամփեն կթողա, քարեքար կընկնի. վա՜յ էն ազգին. որ բնական օրենքը կթողա, անբնականին կհետևի, որ էնպես խրատ ովող չի ունենալ, որ նրան հոգի տա, և ոչ հոգին էլ հանի։ Ծարաբ. որ լավ կարդացնող էր էլել, էրեխեքանց ջոկ, ժողովրդին ջոկ, գիշեր-ցերեկ խրատ էր տվել, կարդացրել, լուսավորել էր. հիմիկ մեր ազգը է՞ս հալին կլիներ, է՞ս տեղը կընկներ»...

— Իհարկե, էն ժամանակն էլ էսպես չէր լինիլ,— ասաց Մանվելը,— բայց ո՞ւր են մեզանում նրա ուղած կարդացնողները. էլածներն էլ ավելի խավար են տարածում. քան թե լույս, ունքը շտկելու տեղ՝ աչքն էլ են հանում։ Գնանք, գնանք, Արուիյուն, վեր կաց գնանք, մութն ընկնում է...Մենք մեր դարդը թողած՝ գեղցոնց վրա ենք միտք անում, նրանց դարդն ենք քաշում...

— Մենք ի՞նչ դարդ ունինք, փառք աստուծո,— ասաց Արուիյունը և սկսեցին քաշվիլ դեպի տուն։

— Ինչպե՞ս թե ինչ դարդ ունինք։ Շորերս մաշվել է, գրքի փող չկա։ Ախպերքս չեն օգնում, հերս կենդանի չէ, ուտելիք չեն ուղարկում, որ գոնե կերածս աչքներին չերևա։ Դու հո լավ գիտես սրանց

բնությունը, մարդի բերնի թիքեք համբրողներ են։ Խեղճ քույրս իր կարավարձը դիփ ինձ վրա է մսխում, բայց դրանով ի՞նչ պիտի դառնա։ Դու էլ հո իմ օրումն ես, էլ ինչո՞ւ ես ասում, թե դարդ չունինք։ Դե արի խելք խելքի տանք, մտածենք, տեսնենք ի՞նչ պիտի լինի մեր ճարը։

— Ես շատ եմ մտածել, Մանվել, բայց ոչինչ հնար չեմ գտել։ Էգուց գնանք Օվակիմի մոտ, նա փորձված մարդ է, կարելի է մի ճանապարհ ցույց կտա մեզ։

Ազատ մտածելու առաջին քայլը երկմտելն է։ Մարդ մինչև չերկմտի, թե ուղի՞ղ է արդյոք իր այս կամ այն համոզմունքը, չի էլ կարող նրա սուտն ու ճշմարիտն իմանալ, և ոչ ուրեմն ինքնաճանաչության կգա։ Բայց երկմտելն այնքան հեշտ բան չէ. դա հազարից մեկի հետ չի պատահում։ Երկմտությունը մի տարակուսություն, մի կասկած է հառաջ բերում, հետո դառնում է մի հուզմունք, մի խռովություն և ի վերջո մի պատերազմ, որ անխնա քարուքանդ է անում դարերով սրբացած մի մտավոր ու բարոյական աշխարհի բոլոր խախուտ շենքերը։ Այդ պատերազմն այնքան ահեղ է լինում, որքան պատերազմողը ինքն իրան մինչև այն օրը խաբված է համարում, որքան նա զգում է, որ ինքը մի ստրուկ, մի գերի է եղել։ Մեր պատանիները դեռ չէին հասել այս աստիճանին, դեռ նոր էր ծլում մանանխո հատը նրանց մատաղ ուղեղի մեջ, նրանց պահանջը դեռ շատ փոքր էր։ Բայց Արուիյունի մեջ ապագա կռվասեր զինվորի նշաններն երևում էին արդեն։ Մի ծայրահեղությունից դեպի մյուսը թռչելու հակումն ուներ նա։ Տեսնե՞նք։ Տարաբախտաբար նրանք ապրում էին մի այնպիսի ժամանակ, երբ ուսումնառությունը մի անհրաժեշտ պահանջ չէր. երբ չքավոր աշակերտներին օգնելու, կարեկցելու սովորություն չկար. երբ չկար գնահատություն շնորհքի, տաղանդի, և հանճարի տեր մարդը համարվում էր խելագար կամ, առնվազն՝ հերետիկոս։ Ամեն ոք ինքը պետք է իր համար ճանապարհ բաց աներ հայկական խոպանացած անդաստանի վրա, և այդ էլ շատ քչերին էր հաջողում...

Դ

ՕՎԱԿԻՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Առավոտյան ժամի տասնին Օվակիմը նոր արդեն վեր էր կացել տեղից և խալաթը հագին՝ գրասեղանի մոտ նստած՝ թեյ էր խըմում. բայց ընկղմած լինելով մի խոր մտածության մեջ, թեյը նրա աչքին չէր երևում։

Նախընթաց երեկոյին մինչև կես գիշեր նա մի նոր գիրք էր կարդացել և նրանում գտնելով իր իսկ մտածմունքների հաստատությունը՝ սկսել էր ավելի ևս հափշտակվիլ և հիմա էլ դեռ նրա վրա էր մտածում և ինքն իրան մմռռում, խոսում, ողևորվում։ Վերջապես երբ նրա խելքն ու միտքը մի ճարտար հռետորի դեր սկսեցին կատարել, նա այդ միջոցին տաք թեյի լիքը բաժակը թեբատ կարծելով՝ հանկարծ վրա բերավ թե չէ՝ այնպես վեր թռավ տեղից, ինչպես տաք ջուր գլխին ածած...

— Վա՜յ ես քու չայ մոգոնողին ի՞նչ ասեմ,— ասաց Օվակիմը բերան-մերանը սրբելով, բայց չկարողանալով թույլ տալ իր մտածությունը, որ իրան սաստիկ գրավել էր, սկսավ սենյակի մեջ անց ու դարձ անել ու ինքն իրան խոսել։ Ցույց տալու համար, թե ինչպես էր Օվակիմը երբեմն ինքն իրան դելը տալիս, մեջ բերենք նրա այժմյան կցկտուր և խառնափնթոր դատողությունը։ Սակայն պետք եմ համարում առաջուց ասել, որ Օվակիմը մեծ ուսում չուներ, և ո՞վ ուներ այն ժամանակ մեծ ուսում, որ նա ունենար։ Նա իր ժամանակի ընթերցասեր և ընթերցասիրություն տարածող մարդկանցից մեկն էր։ Օվակիմը և ուրիշ մի քանիսը անձամբ կամ գրավոր հարաբերություն ունեին իրանց ժամանակակից ուսումնական և բանասեր հայերի հետ, ինչպես Թաղիադյանցի, Աբովյանցի, Շահնազարյան Կարապետ վարդապետի, որոնք մասամբ նոր ուղղության տեր էին և այդ ցույց էին տալիս ոչ այնքան իրանց տպագրություններովը, որքան բերանացի խոսելով և նամակագրությունով։ Օվակիմը Թաղիադյանցի գրավոր աշխատությունների ջերմեռանդ տարածողն էր. նա երբեմն աշակերտակից էր եղել Խ. Աբովյանցին և վերջերումը նրա մերձ բարեկամներից և համակրողներից մեկն էր։ Այսպես՝ մեր Օվակիմը մի ուսումնասեր մարդ

էր և ոչ ուսումնական։ Նա վերացական խնդիրների վրա մտածող մարդ չէր, նա գիտնական չէր և ոչ բանաստեղծ։ Նրա փիլիսոփայությունը վերաբերում էր առօրյա կյանքի երևույթներին, բայց նա այդ երևույթները շատերի նման մի պատահական բան չէր համարում և ոչ մի աներևույթ ձեռքում խաղալիք, այլ նշմարում էր նրանց մեջ մի անխախտ օրենք, եղած դժբախտությունները համարում էր անհրաժեշտ չարիքներ, որովհետև դրանք նույն օրենքի ազդեցությամբ էին կատարվում, ինչպես և բոլոր բարիքները նրանից էին հառաջ գալիս։ «Չկա, ասում էր նա, աշխարհիս երեսին ոչ մեղավոր և ոչ արդար մարդ»։ Ասում էր՝ «Մեղավորը մեղավոր չէ, որ ինքը մեղավոր է, և ոչ արդարն է արդար, որ ինքն արդար է»։ Ահա այսպիսի մի տարօրինակ ոճ ուներ Օվակիմի փիլիսոփայությունը։

... Այո՜, այո՜, ո՞վ կարող է սրա ընդդեմ բան ասել. այս անհերքելի ճշմարտություն է. այսպես խոսում էր ինքն իրան Օվակիմը։ Ո՜վ ինչպես կա՝ կա. նա ուրիշ կերպ լինել կարող չէ. ուրեմն «մեղադրել» և «գովել» բայերը պետք է իմ մտքի քերականությունից հեռանան։ Պիտի ասեն՝ «Եթե մեղադրել կամ գովել կարելի չէ, էլ ի՞նչ ասել է ուրեմն դատաստան, դատապարտություն, վարձատրություն, չար և բարի, մոլություն և արդարություն, վերջապես դժոխք և արքայություն»... «Եղբայր սիրելի, կասեի ես այդպես ասողին, դու իմ գլխին Նարեկ մի՜ կարդար, ես խենթ չեմ. դու առաջ լա՜վ հասկացիր, տես ես ի՞նչ եմ ասում։ Իմ ասելս այն է, որ մարդուս կյանքը մեկ է, և նրա նպատակը մեկ։ Բայց ի՞նչ է նրա նպատակը։ Չգիտե՞ս։ Շատ լավ։ Ինչո՞ւ է ծնվել։ Էլի չգիտես։ Բայց ի՞նչ կա այստեղ չգիտենալու։ Չգիտես նրա համար, որ չես ուզում գիտենալ այն, որ կարող ես գիտենալ, բայց ուզում ես այնպես բան գիտենալ, որ ոչ ոք չի կարող գիտենալ։ Ծնվել է երեխան. այստեղ հարկավոր չէ փիլիսոփայություն. նա ուտել կուզի, նա ապրել կուզի. նա ծնվել է ապրելու համար։

«Ամենայն կենդանի բնականաբար, աստվածային անխախտ օրենքով, նրա մի անգամ ընդմիշտ դրված հրամանով, պետք է մի գործով զբաղի, մի նպատակի դիմե, այն է՝ աշխատի ապրել, որովհետև նա ստեղծված է ապրելու համար։ Չապրել՝ կնշանակե ընդդեմ գնալ ստեղծողի կամքին. բայց այդպիսի ընդդիմություն չի ցույց տալ ոչ մի էշ, ոչ մի գազան, ոչ մի թռչուն, այդ տեսակ հիմարություն միայն մարդը կարող է անել, բայց ոչ առողջամիտ

մարդը։ Մարդը բանական կենդանի լինելով՝ առավել ևս ընդունակ է հեշտությամբ բարելավացնելու իր ապրուստի հնարները։ Այս նրա ճակատագիրն է, այս նրա նպատակն է. քաղցածությունը մի խթան է, և նրան միշտ կստիպի ուտելու բան ձեռք բերել ապրելու համար։

«Ամեն ինչ առուտուրի պես մի բան է։ Ո՛ւմ ի՛նչ պետք է, էն կառնե, ո՞վ ի՛նչ ունի՝ էն կծախե։ Կպատահի, որ ոչ առնող լինի, ոչ ծախող. կպատահի, որ ծախողի ձեռինը մի անգին մարգարիտ լինի, բայց ոչովի համար նա մի բան չարժենա։ Ո՞վ կուզի որ իր աչքը կույր լինի. ամեն մարդ էլ իր կարողության չափ աշխատում է լավ ապրել. մեկն ուզում է աղա դառնալ, մյուսն ուզում է ստրկությունից ազատվել, մեկն ուզում է շատ փող հավաքել, մյուսն ուզում է լավ ուսումնական դառնալ, մեկն արհեստ է սովորում, մյուսը մշակությունով է բավականանում։ Ամենքը միևնույն բանը դառնալ չեն կարող և չեն էլ մտածել այդ մասին։ Կյանքի մեջ ինքն իրան մի տեսակ հավասարակշռություն է պահպանվում։ Ի՞նչ կըլիներ, եթե ամենքն էլ փափախ կարող լինեին կամ ամենքն էլ կոշիկ կարեին։ Այն կլիներ, որ փափախ կարելիս փափախը կէժանանար, իսկ մյուս կողմից կոշիկը կթանկանար, այնուհետև փափախ կարողների կեսը կոշկակար կդառնար։ Բայց և այնպես հետզհետե բան գիտցող մարդկանց թիվը այնքան շատանում է, որ մի տեղ մնալով՝ սկսում են իրար հաց կտրել, իրար դուրս մըղել, սփռվել, տարածվել։ Այդ ցրվելովն է, որ թե՛ արհեստ է, թե՛ ուսում է, թե՛ մի պտուղ է, թե՛ մի բույս է՝ հետզհետե տարածվում է ամեն տեղ։

«Ճշմարիտ է, մարդուս կյանքը կախում ունի ինչպես բնական, նույնպես և դրական օրենքից։ Եթե մարդս իր ապրելու տեղը փոխե, ընկնի իր առաջվան բնակած տեղին չնման մի տեղ, անհնարին է, որ այդ հանգամանքը նրա ապրելու կերպի մեջ մի փոփոխություն չձգե։ Նմանապես եթե նրա դրական օրենքները փոխեն, դարձյալ անհնարին է, որ այդ նրա մտածելու կերպի մեջ մի փոփոխություն չձգե։ Բայց այդ փոփոխություններ անելը այնպես հեշտ չէ, որ երբ կամենաս՝ փոխես։ Կյանքի հանգամանքները զուտնի ծակեր չեն, որ երբ ուզենաս՝ փչես և ինչպես ուզենաս՝ այնպես ածես։ Բոլոր փոփոխությունները, որ պատահում են մի ժողովրդի մեջ, կախումն ունին ժամանակից, նրա հասունությունից, զանազան արտաքին և ներքին հանգամանքներից։ Եթե

այս բոլորն այսպես է, ուրեմն մարդս չի կարող չլինել այնպես՝ ինչպես նա կա։ Հովիվ է արդյոք թե ճգնավոր, միլիոնատեր է թե չքավոր, գիտնական է թե տգետ, դրանք ամենքն էլ մի գին պիտի ունենան իմաստուն դատավորի առջև. դրանց ոչ մեկը գովական չէ և ոչ արհամարհական, մեկը մեղավոր չէ և մյուսն արդար, որովհետև դրանց ոչ մեկը և ոչ մյուսը չլինել այն՝ ինչ որ են, չէին կարող։— Բայց բարեկրթված մարդը ավելի առաքինի կլինի։ Իհարկե։— Բայց մեկը որ գողություն է անում, նրան չպե՞տք է պատժել։— Նա է՞լ բարեկրթված է։— Ո՛չ։— Ուրե՞մն, պետք է այն մարդին, որ մեկին բարեկրթել է, իսկ մյուսին ոչ՝ նրան էլ գողի հետ ի միասին պատժել։ Երբ որ գիտե, թե բարեկիրթ մարդը գողություն չի անիլ, ինչո՞ւ ամենին էլ չի բարեկրթել...»։

— Ուրեմն...

Այս միջոցին Օվակիմի դուռը բախեցին դրսից։

— Նե՛րս եկեք, ո՞վ եք,— ասաց Օվակիմը և գրասեղանին մոտենալով՝ մի գիրք վեր առավ և սկսեց շուռ ու մուռ տալ նրա թերթերը։

Դուռը բացվեց, և ներս մտան Արությունն ու Մանվելը։

— Բարո՛վ, բարո՛վ,— ասաց Օվակիմը մի ձեռքով մինի՝ մյուսով մյուսի ձեռքը սեղմելով և ապա հրավիրեց նստել, և մի փիլիսոփայական հայացք տալով իր ճաղատ ճակատով դեմքին՝ սկսավ հարց ու փորձ անել։

— Ինչպե՞ս եք, ուսմունքներդ ինչպե՞ս է առաջ գնում։ Լսեցի, որ ձեր ուսումնարանի մեջ խառնակություն է պատահել, աշակերտներից շատերը ցրվել են, կարծեմ դուք էլ չեք ազատ մնացել էդ հոլածանքից։ Ես ուզեցի էդ մասին մի բան գրել, մի քանիսին մեղադրել, բայց մեկ էլ լռեցի, երբ ինձ ու ինձ միտք արի, տեսա, որ ինչ որ պատահում է, չի կարող չպատահել. եթե երբեմն էլ պատահմունքի առաջքն առնվում է, այդ ևս չի կարող այդպես չլինել։ Բայց եթե կքննես գործի բուն եղելությունը իր բոլոր շրջապատ ազդեցություններովն ու պատճառներովը, բերնիդ էնպես կխփեն, որ լեզուդ հավիտյան կկտրես։ Ուրեմն, դեռ ժամանակը չի հասել։ Ասած է՝ «ժողովուրդը որ հավաքվի, գերան կկոտրի», բայց մեր ժողովրդի գլուխը որ հաստ է, իրան իրավունքն ու պարտականությունը չի ճանաչում, իր լավն ու վատը չի հասկանում, սուտը ճըշմարտի տեղ է ընդունում, ճշմարիտը՝ սուտի տեղ, էլ ի՞նչ ասես, էլ ո՞ւմ խոսք հասկացնես։ Թեկուզ իմաստունին մի հիմար բան

ասած, թեկուզ հիմարին՝ մի խելոք բան. երկուսն էլ մեկ է։ Իմաստունը հիմար բանի վրա կծիծաղի, հիմարը՝ խելոք բանի։ Հայը օրուշը չի պահիլ, թուրքը՝ մեծ պաս։ Ինչ որ մեկի համար սուրբ է, մյուսի համար պիղծ է։ Թուրքն ևս նույնքան առողջ դատողություն ունի, ինչքան և հայը։ Բայց ոչ մեկը չի կարող չլինել այն, ինչ որ է։ Ով ինչ կարող է լինել, չի կարող չլինել, ով ինչ կարող է անել, չի կարող չանել։ Ազգասեր մարդը չի կարող ազգասեր չլինել, ինչպես որ բարակացավ ունեցողը չի կարող չունենալ այդ ցավը։ Ոչ ոք թող չպարծենա, թե՝ ես այս արի և այն չարի, որովհետև նա չէր կարող չանել, ինչ որ արավ, և անել՝ ինչ որ չարավ։ Սրա պատճառը պետք է փնտրել նույն մարդի մտքումը, հոգումը, մարմնումը, նրա շրջապատ դրդող հանգամանքներումը. բայց այս դեռ բավական չէ, պետք է փնտրես նրա հոր մեջ, մոր մեջ, պապի, ապուպապի, տատի, ատուտատի և այլն, մինչև կհասնես Ադամին ու Եվային, հետո էնտեղից ետ կդառնաս նոր մեկանց ու կամաց-կամաց, ուշի ուշով, մեծ հետաքրքրությունով ու նկատողությունով առաջ գալ, քննելով նրանց եկած ճանապարհը, որ տեսնեն նրա նախնիքների գլխով ինչե՞ր են անց կացել, որտե՞ղ է նրանց ոտը փուշ մտել, որտե՞ղ ձեռքը կամ ոտքը կոտրվել, որտե՞ղ ինչ արել, ի՞նչ խոսել, ի՞նչպես մտածել, ինչի՞ց զրկվել, ի՞նչ ավելացնել և այլն և այլն։ Ինչևիցե, իմ խոսքը ձեր ուսումնարանի վրա էր, բայց ես հեռու գնացի. երևի չէի կարող չհեռանալ։ Ձեր վերատեսուչը մի շատ պարկեշտ ու բարոյական մարդ է, կարծես հին Հունաստանից եկած մի նոր Սոկրատ լինի։ Խոսք չունիմ, բավական խոհեմ ու գիտնական մարդ էլ է, բայց շատ է խեղճ։ Թեպետ էս էլ պետք է ասեմ, որ թեկուզ խեղճ էլ չլինի, էդ գազանների մեջ ոչինչ չի կարող անել։ Շատ ափսոսացի, որ հրաժարվել է կամ հրաժարեցրել են։ Հապա դուք ի՞նչ էիք անում մինչև հիմա կամ ի՞նչ եք մտադիր անելու այսուհետև։

— Ինչպես որ դուք խորհուրդ կտաք, մենք էլ էնպես կանենք,— ասացին մեր պատանիքը միաբերան, որ մինչև այն բոպեն լուռ ու մունջ և ուշի ուշով լսում էին Օվակիմի խոսքերը և տեղավորում իրանց մտքի մեջ, որ հետո իրանք էլ նույն խոսքերն ուրիշներին ասեն և լուսավորեն ժողովրդին...

— Ես թեպետ սիրում եմ զանազան խորհուրդներ տալ մարդկանց, բայց ձեզ պես անփորձ մարդկանց խորհուրդ տալը երբեմն անօգուտ է և երբեմն վտանգավոր։ Ես երբ որ ձեր չափ էի, շատ

խորհուրդ տվողներ ունեի, բայց չէի կարողանում կատարել նրանց խորհուրդները։ Ես շատ լավ գիտեմ, որ դուք չեք կարող չլինել այն, ինչ որ լինելու եք, բայց թե ի՞նչ եք լինելու, առաջուց գուշակել չեմ կարող։ Ես չգիտեմ ո՞րքան է ձեր մեջ ուսման սերը կամ ուրիշ ի՞նչ բանի ձգտում ու հակումն ունիք։ Մեր աշխարհքը խավար, կեղտոտ աշխարհք է. դուք դեռ ծանոթ չեք այդ աշխարհին, և շարժե ծանոթանալ. այդ դեռ վաղ է ձեզ համար։ Ես հիմա մեկ խոսք կասեմ ձեզ. գնացեք, համոզեցեք ձեր ծնողներին, ձեր եղբայրներին, որ ձեզ օգնեն։ Ավարտեցեք ձեր ուսման ընթացքը, հասունացրեք ձեր միտքը, այնուհետև կարող եք ձեզ համար ապրելու վիճակ ընտրել։ Ի՞նչ պիտի լինի ձեզ վրա անելիք ծախսը։ Եթե տարին մեկ օրավար ցանեն ձեզ համար, նրա արդյունքովը դուք կհոգաք ձեր բոլոր ծախսերը։ Ճշմարիտ է, նրանք կոպիտ մարդիկ են. մեկի հայրն է ասում՝ տղես կփչանա, էլ ինձ չի մտիկ տալ, մյուսի եղբայրքն են ասում, թե նա իր համար աղա պիտի դառնա, մենք էստեղ կոռ ու բեգյար քաշենք, ջանը դուրս գա, թող ինքն էլ գա մեզ հետ աշխատի։ Հին նահապետական նախա՞նձ, կե՞ղտ, ատելություն, սեր չկա, բան չկա... Ես ձեզանից լավ եմ ճանաչում ձերոնց. անխելք, անպետք մարդիկ են, բանական մարդու վսեմ զգացմունքներից զուրկ են, մարդակերպ կենդանիներ, գազաններ են... բայց ի՞նչ արած. ուրիշ կերպ լինել կարող չեն, հանգամանքները դրանց էդպես են կազմակերպել։ Դրանց պետք է շողոքորթել, չպետք է ծիծաղել նրանց կոպտության, կեղտոտության, սնահավատության վրա, գուցե դրանով շահեք նրանց սիրտը։ Առհասարակ՝ իմացած լինիք, որ քոռին եթե խուլ ասեք, նա չի նեղանալ, բայց եթե քոռ ասեք, այդ միևնույն է, թե դանակով հանեք նրա աչքը։ Ցավագար տեղին չեն դիպչիլ։ Էսպես։

— Ուրեմն ես վաղը կերթամ։ Սայլով ուխտ գնացողներ կան դեպի մեր կողմը, նրանց հետ կերթամ,— ասաց Արությունը։

— Մեր գեղիցն էլ այլուր ծախողներ են եկել, ես էլ նրանց հետ կերթամ։

— Աստված բարի ճանապարհ տա,— ասաց Օվակիմը և ճանապարհ ձգելով պատանի մարդոցը՝ ինքն ընկավ մի խոր մտածության մեջ և հետո բացականչեց.— Մտեք աշխարհ, անմեղ հոգիք, դուք չեք կարող ձեր գլխի անցքերի առաջքն առնել... ուսում էլ առնեք՝ ի՞նչ պիտի դառնաք, ավելի վատ ձեզ համար... Ավելի լավ չէ՞ր լինիլ, որ բնավ չճաշակեիք այդ բարվո և չարի գիտու-

թյան ծառի պտղից, որից հետո մինչև այժմ ձեզ դրախտ երևցած աշխարհս պիտի դժոխքի կերպարանք ստանա...

— Արություն, արի գնանք էսօր մեր տանը մի լավ քեփ անենք։ Մեր տանեցիք բոլորն էլ գնացել են ուխտ, մենակ քուրս է մնացել տանը. Օսանին էլ կկանչենք մեզ մոտ ու մի լավ քեփ կանենք։ Ո՞վ գիտե ի՞նչ կանցնի գլխներովս, շո՞ւտ կտեսնենք մեկմեկու, թե՝ ուշ,— ասաց Մանվելը, երբ մի քանի քայլ լռությամբ հեռացել էին Օվակիմի տանից։

— Երանի՜ քեզ, Մանվել, որ դարդ չունիս, քեփն է աչքիդ երևում...

— Տո ինչի՞ եմ դարդ անում, գիժ հո չե՞մ. բա չլսեցի՞ր, որ Օվակիմն ասաց. զոռով բան չի լինիլ. ամեն բան իր կարգովն է գնում. թե որ ուզում ես պատճառն իմանաս, գնա մեր պապ Ադամին հարցրու, որ նրանից մի ուղիղ լուր բերես... Ինչ որ դառնալու ենք, չենք կարող չդառնալ. պրծա՞նք, գնա՞ց...

— Օվակիմի ասածը ճակատագրի պես մի բան է,— ասաց Արությունը.— մեր պառավներն էլ են ասում, թե՝ «Ինչ որ ճակատիդ գրված է, էն պիտի ըլի»։ Ասում էլ են, թե՝ «լինելու բանի առաջը չի առնվիլ»... Կամ թե՝ «ինչ որ լինելու է, պետք է լինի, դրան հար չկա»... Բայց կարելի է թե Օվակիմի ասածը ավելի խոր միտք ունի, որովհետև նա ուսումնականի ոճով է խոսում, պատճառներ է փնտրում...

— Արություն, ինչի՞դ է պետք, ինչ ուզում են թող ասեն. մենք էլ որ կմեծանանք, լավ ուսում կառնենք, մենք էլ ուրիշ ձևով կասենք էդ միևնույն բանը, կամ թե չէ՝ կհերքենք բոլորովին. իսկ հիմա, քանի որ գլխներումս դեռ դարտակ տեղ շատ կա, էսօր գընանք էդ դարտակ տեղը գինով լցնենք, խելքներս ղվարթանա, սրտներս ուրախանա. աշխարհքիս դարդը հո մեզ չե՞ն տվել։ Մի գլուխ ունինք, ինչպես լինի, կպահենք, նոր չենք հագնիլ, հին կըհագնինք, ո՞վ պիտի մեր ձեռքիցը բռնի, մենք չե՞նք մեր գլխի տերը։ Հրեն ղազախեցի Մարտիրոսը, որ մեր կիսի չափ բան չի իմանում, վարժատուն է բաց արել, երեխեք է կարդացնում։ Դու չե՞ս տեսել նրա վարժատունը...

— Ի՞նչպես չեմ տեսել։ Անցյալ օրը պատահեցա. ասում եմ՝ ի՞նչպես ես, ուսումնարանդ ի՞նչպես է հառաջ գնում. թե՝ լա՛վ, փառք աստուծո, կիսին չեմ արժանի. հիսուն աշակերտ ունիմ։ Աշակերտներիս հայրերը ամենքն էլ շնորհակալ են։ Մի կյուրակի

օր մեկն է հրավիրում, մի տոն օր՝ մյուսը. ես էլ սկսում եմ գրաբար խոսիլ, որքան կարելի է՝ խրթին, որ կարծիք չտանեն, թե ես շատ գիտուն չեմ. բայց հիմի եմ ափսոսում, որ ռուսերենումը շատ եմ բորիկ. մտիկ եմ տալիս Իրիցփուխովի բառարանումը, որ տեսնեմ ո՛ր տառի վրա է շեշտ դրած, բայց մինչև ամեն բառի վրա մտիկ կանեմ, գլխիս մաղը կսիպտակի։ Հետո ինձ խնդրեց, թե՝ մեկ արի «Դրուգ դետեյ»-ին բառերի վրա շեշտեր դիր. ես էլ գընացի, մի քանի երեսի վրա շեշտեր դրեցի. ասացի. «Դու հայերեն սովրեցրու, ռուսերեն երբ լինի՝ կսովորեն։ Թվաբանություն սովրեցրու, որ հաշիվ անել գիտենան», թե՝ «Թվաբանություն չեմ գիտում»...

— Ի՞նչ թվաբանություն, ի՞նչ բան,— ասաց Մանվելը,— գընրանք ոչ մի բան չեն իմանում։ Հրեն տիրացու Սարգիսը, կազմարար Մարգարը, երկենամիրուք տերտերը.... ամենքն էլ վարժատուն ունին, երեխեք են կարդացնում, բայց ի՞նչ կարդացնել. մեկ օր մեղի վրա են, մյուս օր՝ կնունքի, մեկէլ օր՝ մի ուրիշ բանի. էսպես քելեխ ուտելով ման են գալիս, երեխեքը տուն դառած իրար միս են ուտում, իրար շորեր պատռտում։ Ի՞նչ վարժատուն, խոզատունը քեզ օրինակ։ Օրը մեկ ժամ կամ կես ժամ նստում են մոտներին, էդ ժամանակն էլ քանոնը ձեռքներն առած՝ դարտակ բղավում են՝ ս... ո՜ւ...ս կա...ցե՛ք... Մի քանի ամիս մի այբբեն են սովորեցնում, մի քանի ամիս էլ մի «անա-բանա» կամ «էն՝ էրթի փուլի, ման՝ օրի բիստի»... Ծիծաղ է, ծիծաղ, Արություն, տեսնո՞ւմ ես ինչպես մարդիկ են ապրում աշխարհիս վրա։ Էդպես նները որ հաց են գտնում ուտում, մեզ ի՞նչ է էլել, փառք աստուծո, որ գընրանց կտանենք ջուրը՝ ծարավ ետ բերենք. ինչի՞ ենք դարդ անում։ ուրիշ ոչինչ որ չկարողացանք, բա դրանց պես է՞լ չենք կարող մի բան անել...

— Ի՞նչ ես ասում, Մանվել... Մարդ որ էնպես վարժապետ չըլի, որ էս քաղքումը հատը չլինի, էլ ի՞նչ նշանակություն ունի։

— Արություն, աղվեսը որ աղվես է, բերանը որ խաղողին չի հասնում, ասում է՝ խակ է. բայց դու մի աղվեսի չափ էլ չունիս խելք...

— Արջն էլ որ արջ է, Մանվել, երբ որ թաթը տանձին չի հասնում, ասում է. «Լավ, կենա իմ հոր խերին, մի ուրիշը կուտի, իմ հորն օղորմի կտա»... Բայց մի՞թե մենք աղվես ենք կամ արջ. մենք մարդիկ ենք, բանական մարդիկ. մենք պարտական ենք գը-

նալ դեպի հառա՜ջ, հառա՜ջ, օ՜ն անգր հառա՜ջ, մի ձախ, մի աջ, դեպի կատարյալն և դեպի բարին, որ անհրաժեշտ լցուցանելու պարտք է մարդկային։

— Օ՜... դու ոգևորվեցար, էլի «Բամ փորոտանն» սկսեցիր... էդպես կանենք ուրեմն, առա՜ջ կերթանք, առա՜ջ, էլ աջ ու ձախ չենք մտիկ տալ, մինչև գլխներս մի պատի կդիպցնենք կամ գըլխիվայր կընկնինք մի անհատակ ձորի մեջ...

Գ

ՍԵՐ, ԳԻՆԻ ԵՎ ԵՐԳ

— Դե շուտ արա, Հոռոմսիմ,— ասաց Մանվելն իր քրոջը,— շուտ արա սուփրեն գցիր, հիմա ուր որ է Արուքյունն ու Օսանեն էլ կգան։ Էսօր պիտի մի լավ քեփ անենք, խաղ, տաղ, Քյոռօղլի, մուխամբազ, դիփ պիտի իրար խառնենք։ Մեր Արուքյունը շատ խաղ գիտե, իրանից էլ շատ ունի ասած, էսօր պիտի մի քանիսն ասել տամ,... Դե շո՜ւտ արա, շո՜ւտ (երգում է).

Եղբարք, մի շուրջ ժողովվեցեք,
Քաջ հայոց կերպի կռիվեցեք,
Թաժակները դարդրկեցեք
Մեր հայ ազգի կենացը...

— Հոռոմսիմ ջան, գինի՜, գինի՜. էսօր գինի պիտի խմենք անպատճառ. Արուքյունին էլ պիտի խմացնեմ... Շատ դարդ անող տղա է, կասեմաս բոլոր աշխարհքի դարդը նրան ըլին տված... էսօր պիտի ուրախացնեմ, պիտի քեփը բաց անեմ։ Դավիթ մարգարեն ասել է իր սաղմոսումը, թե՝ «Գինի ուրախ առնե զմարդ, յուղ զվարթ, իսկ հաց հաստատե զսիրտ մարդոյ»։ Շատ ուղիղ է ասել։ Գինին էնպես զորություն ունի, որ նրան տեսնողը առանց խմելու էլ ուրախանում է։ Էնգուր են ասում, թե՝ մեկ իմերել մի էծ է տեսել, շատ ուրախացել է ու ծիծաղել. ասել են՝ ինչի՞ ես ծիծաղում,

ինչի՞ վրա ես էդենց ուրախանում։ Ասել է. «Էծ տեսնելիս գինին է միտս գալիս, որովհետև գինին դրա տգումն է լինում» (երգում է).

Արաքսա շրով ցողած,
Հայոց արևով հասած,
Հայոց աղջիկ է քաղել,
Քնքուշ ձեռներով քամել...

— Հրեն գալիս են... շո՜ւտ արա, շո՜ւտ արա, ես դուրս գնամ, Օսանին առոք փառոք ներս համեցեք անեմ։ Բարո՜վ, բարո՜վ, Օսանա՜, օրհնյա՜լ, որ գալոցդ ես... համեցե՜ք, համեցե՜ք վերև, էն փափուկ տեղը քեզ համար ենք պատրաստել...

— Ապրիս, ապրիս, Մանվել,— ասաց Օսանան,— աստված քեզ միշտ էդենց ուրախ պահի, մեր Արուքյունն էլ քեզանից մի քիչ ուրախանալ սովորի։

— Արուքյունին ինչի՞ ես մեղադրում,— ասաց Հոռոմսիմը,— դու նրա նման, նա էլ քեզ նման. կասենաս մի խնձոր ըլիք կես արած. երկուսիդ բնությունն էլ մեկ է...

— Սպասիր, սպասիր, Հոռոմսիմ,— խոսքը կտրեց Մանվելը,— ես քեզ մի նոր բան ասեմ։ Գիտեք ի՞նչ կա։ Ով ինչպես կա, չի կարող ուրիշ կերպ լինել, թե որ ուզում եք դրա պատճառն իմանալ, պիտի երկաթե տրեխներ հագնեք, էն վաղվա մարդի նման, որ աստծու մոտ է գնացել, մե երկաթե գավազան էլ ձեռքներիդ բռնեք, գնաք ձեր տատ Եվայի մոտ, նրան կհարցնեք, նա ձեզ պատճառը կասի... Օվակիմն էսպես չասե՞ց, Արուքյուն։

Արուքյունը ժպտաց։

— Հոռոմսիմ, գինին բեր, գինին...

(երգում է).

Այս բերքն է հայոց երկրին,
Հայաստան անկած նոյեն,
Անմահ, երկնային գինին
Նա խմեց, երբ իջավ սարեն։

— Ինչպե՞ս ես հավանում, Օսանա, լա՞վ եմ երգում, թե չէ...

— Լա՜վ, լա՜վ, շատ լավ ես երգում...

— Դեռ սպասիր մեկ ամեն բան դարսենք սուփրի վրա, մեկ թաս գինի կոնծեմ, մեկն էլ Արուքյունին խմացնեմ, որ քեփը բաց

ըլի, ձայն պահի, հետո ավելի լավ երգեր պիտի երգեմ։ Տո Արություն, ի՞նչ ես ունքերդ կիտել, ձեր տանը հո չե՞նք, քե՛փ արա, փլավ էլ ունինք, շատ մի՛ մտածիր. «Աշխարհքս հինգ օր է, հինգն էլ սև»։ Պետք է էդ սև օրերը սպիտակացնել, գիտե՞ս ինչով— ըսպիտակ գինով. որ ուզենաս կարմրացնել, կարմիր գինով կներկես, թե չես հավատում, փորձիր. մի բաժակ գինի որ խմես, աշխարհքումս ինչ կա, չկա, դիփ կսպիտակի... ապա մեկ էս խիզիլալի համը տե՛ս, էս ձկան հոտն առ... Ո՜ւհ... ո՜ւհ... ո՜ւհ... Արություն, Արություն, էս խորովածին է՛... թլթլում է... թլթլում... ձեռներդ ուտեմ, ձե՛ռներդ, Հոռոմսիմ, քուրն էլ ըլի, քեզ նման, քո ստեղծողին մեռնիմ... մեկ հազարփեշեն տուր... Արություն, ալլա՜հ-վերդի...

— Խմի, վեր դի,— պատասխանեց Արությունը ժպտալով։

— Գիտե՞ս ում կենացն եմ խմում, Արություն, որ գիտենաս, կխմես իսկույն...

— Ո՞ւմ կենացն ես խմում, դե ասա տեսնենք...

— Նրա՜ կենացն եմ խմում, նրա՜, էն որ ես ու դու գիտենք... Քույրերն աչքով են անում միմյանց...

— Դե որ «նրա» կենացն ես խմում, մի լավ խաղ էլ որ ասես, ես էլ կխմեմ։

— Քու հոգուն մատաղ, Արություն, ես քու խաթրը կկոտրե՞մ, խաղ էլ որ չգիտենամ, աշըղ կդառնամ քեզ համար։ Ականջ դրեք, ականջ դրեք, Հոռոմսիմ, Օսանա, մի մուխամբազ պիտի ասեմ, մեր Արությունի նոր շինած մուխամբազը պիտի ասեմ. (երգում է).

Բացվել եմ վարդի պես, բայց չունիմ սոխակ,
Սիրահար խոսնակ.
Նըրա տեղ երգում է մի ուրիշ թռչնակ,
Բուի եղանակ.
Չեմ տեսնում նրա մեջ ոչ մի ժամանակ
Սիրո նշանակ։
Սիրել մինչև ի մահ շատն է խոստանում,
Երդմամբ ուխտ գնում,
Բայց այս ուխտի վրա շատ օր չի անցնում,
Մեկ էլ ես տեսնում
Պատրաստած քեզ համար սոսկալի վանդա՜կ.
Ո՜հ, թշվա՜ռ վիճակ։
Ասում ես. «Այս ի՞նչ է, այս ի՞նչ արեցիր,
Դու ինձ գերեցիր.
Շողոքորթ խոսքերով ինձ գրավեցիր,
Վերջը խաբեցի՞ր».

Ասում է. «Այսպես է աշխարհս բովանդակ,
Դու հո չե՞ս մենակ»...
Դե լսի՛ր, հա՜յ աղջիկ, էլ չես գովական
Եվ ոչ անանուն.
Պահիր սրտիդ խոցը մինչ օր քո մահվան,
Մտցրու գերեզման.
Չասես ուխտազանցիդ մի խոսք հակառակ,
Չդատնաս առակ։

— Ապրի՛ս, ապրի՛ս, Մանվել, շատ ապրիս,— ասաց Օսանան, սրբելով արտասուքը, որ հառաջ էր եկել երգի ներգործությունից։

— Ռոմա՜ն, Արություն, ռոմա՜ն,— բղավեց Մանվելը։— Տեսա՞ր իմ երգելն ինչպես ներգործեց Օսանի վրա. չէ, ես լավ աշըղ եմ էլել, ով գիտե, կարելի է ժամանակով երևելի բանաստեղծ էլ դառնամ... Օսանա ջան, քու կենացը, աստված սիրտդ ուրախ պահի, աստված որդիքդ քեզ բախշի, դիփունանց կանաչ-կարմիրն էլ կապես։ Հոռոմսիմ ջան, սաղ ըլիս, մարդդ ապրի, սկեսուրիդ հոգին Գաբրիել հրեշտակն առնի տանի արքայության մեջ դցի. Արություն ջան, քե՛զ ինչ ասեմ, թող որը որ լավ է, էն անի աստված, դե վեր կալ թասրդ, Հոռոմսիմ, դու էլ Օսանա, դու էլ, վեր կաք թասերդ. Արություն, «Հայոց աղջիկնե՞ր», միասին (երգում են).

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս եք գալիս, ասում եմ ես ա՞խ։

— Կեցցե՜ն հայոց աղջկերքը,— բղավում են մեր պատանիքը միաբերան, երբ վերջացնում են երգը և բաժակները դատարկում։

— Ապրի՛ք, ապրի՛ք,— ասում են քույրերը, սրտանց ուրախանալով, որ այնպես «ուսումնական» եղբայրներ ունին։

— Արդյոք հայոց աղջկերանց նման սիրուն, շարմաղ էլ ո՞ր աշխարհքում, ո՞ր ազգում կլինի,— ասաց Մանվելը։— Ուրիշ ազգի աղջկերքը— որը շեկ է լինում, որը դեղնած, որը սև, որը քթատ, որը շլինքը կարճ, որի ուսերքը հաստ, որի մեջքը թիկունքին հավասար. մի խոսքով՝ մի սիրուն պատկեր, մի սիրուն կազմվածք չես գտնիլ նրանցում։ Հայ աղջկա վառվռուն աչքերը, կամարունքերը, լուլա շլինքը, բարակ մեջքը, շահմար ծամերը, Նրա նուրբ պռոշները, մարգարտե ատամները, մոմի պես մատնե-

ը, մարմար կուրծքը, շամամ ծծերը, նրա մեկ բոյն ու բուսաթը սաղ աշխարհքի հետ չեմ փոխիլ։ Իզուր հո չեն մեր աշըղները ջունուն դառել, նրանց սիրովը վառվել, հենց գովել են ու գովել, մի գլուխ գովել։ Ի՞նչ անեն խեղճերը. մի բան որ տեղնուտեղը լավ ըլի, ոտից մինչև գլուխ, գլխից մինչև ոտք, պիտի առաջին չոքես, ձեռներդ սրտիդ դնես, շլինքդ ծռես, աղաչես, պաղատես, գովես, փառաբանես, մինչև բերանիդ ջուրը գնա, զմայլիս, վերանաս. աչքերդ մթնի, ուշաթափվիս, վեր ընկնիս դելը տաս... Ա՛յ ինչպես (երգում է)...

Յաղութ յաման ես, լալ մերջան ես,
Շատ անմման ես,
Աննմանութիւններդ, բարկութիւններդ
Ինձի զայ չանես.
Ինձ՝ Նախշունյանցիս, սիրովդ էրվածիս
Թաք հեռդ տանես,
Կամ չոքիս ջանիս, հոգիս հանես
Կիսամեռ չանես,
Ինչ կուզե անես, թեկուզ սպանես,
Իմ ճարը դուն ես...

— Կեցցե՛ Նախշունյանցը, մեր ազգային երգիչը,— բղավեցին պատանիքը վերջացնելով պարոն Նախշունյանցի մուխամբազը և կոնծեցին նրա կենացը։

— Մանվե՛լ, քու կենացը, Մանվե՛լ,— ասաց Օսանան,— աստված քեզ էդպես ուրախ պահի միշտ։ Արություն ջան, զորանաս։ Ձեր երկուսի կենացը, աստված ձեր սերն անխզելի ու հաստատ պահե, թագներիդ արժանի ըլիք, թշնամու սրտով չըլիք, մուրազներիդ հասնեք։ Ա՛ստվածատուր, Հո՛ռոմսիմ...

— Վայելե, ինձ տուր,— պատասխանեց Հռոռոմսիմը։

— Ա՛ստվածատուր, Ա՛ստվածատուր,— բղավեց Մանվելը։— Նախշունյանցի անունը մոռացել էի, հիմի Աստվածատուր ասացին, միտս ընկավ։ Արություն, էդ Աստվածատուրի տաղանդն էլ է աստվածատուր, դրա չափ խաղեր, ով գիտե՝ ոչ մի աշըղ ասած չըլի...

— Ես տեսել եմ դրա խաղերի դավթարները, դիփ էլ կարդացել եմ։ Դա մի զարմանալի մարդ է, ուրիշ աշըղների պես թուրքերեն չի ասում, դրա բոլոր խաղերը հայերեն են, բայց ձևն էլի թուրքերենի է։ Միևնույն ավալ-ախբերը, դիլ-թարփանմազը, դոդազդագմազը։

— Բայց էդ ի՞նչ տեսակ խաղեր են, էդ որ ասում ես... Ի՞նչ ասեցի՞ր...

— Ավալ-ախբեր։

— Հա՛, հա՛, ավալ-ախբեր... դրանք ի՞նչ բաներ են, մեկ մեզ հասկացրու։ Օսանա, Հռոռոմսիմ, ականջ դրեք, ականջ դրեք, Արությունը պիտի մեզ աշըղների ճարտասանությունը սովրեցնե։ Դե մեկ ասա՛, Արություն, տեսնենք էդ ի՞նչ բաներ են։

— Ավալ-ախբեր բառը թուրքերեն է, կնշանակե սկզբնավերջ. էսպես խաղի բոլոր տողերի սկզբի ու վերջի տառը միևնույնը պետք է լինի։ Օրինակ՝

Ջհալ իքյան ջաննաթ թափտըմ ջաննաթ թաջ,
Ջան դյալդի օ սահաթտա յասար աջ,
Ջովրաթ օվեդանդըմ, ջանդա չաքտըմ ջան-նաթ
թաջ,
Ջըհադ օլդում ջամալընա յաս արաջ։

Ջանըմ դա վար ջյուքյամ, չոխ վար յանար գյուջ,
Ջամջափա աթեշտա չոխ վար յանար գյուջ,
Ջաննաթ դյազար Քյուչուկ — — Նովա յանար գյուջ,
Ջամ էյլադըմ, փեշամ օլդի յա սարաջ։

— Սպասիր, սպասիր, Արություն, ես ոչ մի բան չեմ հասկանում, հենց բերանս բաց մտիկ եմ տալիս...

— Ո՞վ է հասկանում, որ դու հասկանաս։ Մեր աշըղները իրանց բոլոր խաղերը՝ բացի խրատականից՝ էնպես են շինում, որ ոչով չհասկանա։ Հենց էդ չհասկանալն է, որ զարմացնում է մեր ժողովրդին, նրանք զմայլում են, հիանում են էդպես խաղերիցը։ Ի՞նչ լա՞վ է ասել. ինչ խո՞րն է ասել... էսպես հիացնում են մեկ մեկու։ Բայց ինչի՞դ է պետք. դու տեսնում ես, որ սա ջիմ ավալ-ախբը է, այսինքն բոլոր տողերի սկիզբն էլ, վերջն էլ ջե տառն է։ Ասողն էլ հայ է, արհեստով սարաջ, թամքը կարող, էնդուր է ասում «ջամ էյլադըմ, փեշամ օլդի յա սարաջ»։ Հիմի տես Նախշունյանցի ասածը, որ հայերեն է և հասկանալի, բայց էլի ջե ավալ-ախբը է։

Ջավահիր, նաջիվան նազանի,
սիրով ինձ անիս իլլաջ,
Ջիգարս էշխեմեդ վառվիլ է,
ռահմով ինձ անիս իլլաջ,
Ջհուդ խոմ չի՞ս, ա՞յ բեմուրվաթ,

Ո՞ւր թողիր այլոց մոհտաջ,
Ջաղա տալովդ բեզար եկա,
վախտով ինձ անիս իլլաջ։
Ջիվան ջան իս, անման իս,
մանուշակ իս կապած փունջ,
Ջուխտ աչքիրդ է վառ չամ-չրաղ
նահախ ո՞ւր իս մտնում քունջ,
Ջուռաթ արա մեկ իզրար տուր,
մի լինիր համեշա մունջ,
Ջունուն իմ սաստիկ սերիցդ
շուտով ինձ անիս իլլաջ։
Ջհել ժամանակս իմ խնդրում,
քանի ծառ իմ դալար, գեջ,
Ջահտ արա սիրով հաստատվինք,
շուտ գոյանա բար ի մենջ,
Ջանլլաթի պես զաղաբ մի տար,
ինձ մի կարմիր չար, բնվնջ,
Ջանքս խնայիր Նաշխունյանցիս,
քեզմով ինձ անիս իլլաջ...

— Տեսնո՞ւմ եք, Օսանա, Հոռոմսիմ, դիփ չե է, դիփ,— ասաց Մանվելը։

— Դիփ չէ, Մանվել, միայն տողերի մեկ սկզբի տառը, մեկ էլ վերջի։ Հիմի ականջ դրեք, դիլ թարփանմազն ասեմ։ Դիլ բարփանմազ, կնշանակե «լեզուն չի շարժիլ»։ Էսպես խաղերը պետք է էնպես բառերից լինին շինված, որ ասելիս լեզուն չշարժի։ Օրինակ.

Բափա ո՞ւմ կա, ում կամում իմ, մե վա՛ է։
Մըգա՞մ քի հաում իմ խափով ու գափով,
Իմ համբավ է խափը, կամը մե վա է,
Կամում իմ քի ուղիղ փափագով բափով։
Քի իմ կամում, եկ քու կամով, ո՛վ աղա,
Կամում իմ քու բուգով, բուխախով խաղա,
Քի իմ կամում եկ հիմա է, կամ վաղ ա,
Կակուղ խումով պահե քիմով ու համով...

— Սպասիր, սպասիր, Արուքյուն,— միջահատեց Մանվելը և սկսեց երգի բառերն արտասանելով փորձել, որ տեսնի իրա՞վ լեզուն չի շարժում ասելիս։ Բափա... բափա... աղա, վաղ ա, խա-

փով, գափով... էս ի՞նչ զարմանալի բան է... ճշմարիտ որ լեզուն չի շարժում... Ապա էն մեկէլը։ Ի՞նչ էիր ասում։

— Դոդաղ-դագմազ։ Դա էլ կնշանակե պռոշներն իրար չեն դիպչիլ։ Էդպես խաղերն ասողը մի ասեղ է դնում բերնումն ուղղահայաց, այսինքն մեկ ծայրը վերի պռոշի տակին, մյուս ծայրը՝ ներքևի, որ աշկարա տեսնվի, թե պռոշներն իրար չեն դիպչում, որովհետև եթե դիպչելու լինեն, ասեղը կծակե իսկույն։ Տեսե՛ք, ահա՛ երևելի Քեշիշ-օղլու «ալիփ ավալ-ախբր» դոդաղ-դագմազը։

Ա դիլի յար, ալ դաստրնի, այընա,
Անընդհնան սաղբր էյլա յար յարա։
Ալ ալընի այընա,
Ալ դաստրնի այընա,
Ախլի դայիլ օլանա
Ասլան նա՞ դրր, այը նա՞։
Աղ գեյգի՛նան յարար զագդա այընա,
Աջիշլարն սաղբր էյլա յար յարա։

— Արուքյուն ջան, հայերե՛ն ասա, հայերե՛ն. էդպես հայերեն չկա՞ միթե...

— Հայերեն էլ կա, ինչպե՞ս չէ, բայց միևնույն է, էլի ոչինչ չի հասկացվի։ Ահա՝ օրինակ.

Ահա հղե, հղի հայող ա, աղ ա։
Այո՛, օղիա է, հոյ աղա հաղ ա։

— Էս խաղը մի երկայն խաղ է և ունի վեց նշանակություն։ Առաջին՝ որ այբ սկզբնավերջ է, երկրորդ՝ շրթունքն անհպելի (դոդաղ-դագմազ), երրորդը՝ անլեզվաշարժ է (դիլթար-փանմազ), չորրորդ՝ շատ խրթին է, հինգերորդ՝ ասածի միտքը ծածկված է հանելուկի պես, և վեցերորդ՝ աղեղ բառը յոթն անգամ կրկնված է, բայց ամեն մեկն առանձին նշանակություն ունի։ Օրինակ՝ մեկ աղեղը կանաչ-կարմիրն է, մեկը՝ նետ նետելու աղեղն է, մեկը՝ բուրդ գզելու աղեղն է, մեկը՝ աղ ու եղ է նշանակում, մի քանի բառում աղը լյունի տեղ է դրված։ Ես հիմա սրա մեկ տողը մեկնեմ։ Աստվածատուրն ասում է՝ էսպես խաղերը որ կան, աղաքար են. որ գցես աշրղի փորը, օխտը տարի չի հալվիլ։ Հիմա լսեցեք.

Ահա հղե, հղի հայող ա, աղ ա։

Կնշանակե՝ ահա ճանապարհ, երկու-հոգիս մտիկ տրվող է, աղ է։

Հիմի պետք է իմանալ, թե էս ինչ ճանապարհ է կամ ի՞նչ երկու-հոգիս է մտիկ տրվողը և ի՞նչ աղ։ Ահա ինչ։ Ղովտի կինը, որ Սոդոմից փախչելիս երկու-հոգիս է եղել (որից պիտի ծնվի Նեռը) ետ է մտիկ տվել ու իսկույն աղեքար է դառել։— Ահա հղե, հղի հայող ա, աղ ա...

— Ո՜ւհ, դրա տունը շինվի,— բացականչեց Մանվելը,— ես էլ եմ ասում՝ ինչի՞ է էդքան շատ խոսում... Արություն, էդ աշրղներն ի՞նչի են էդպես դժվար բաների հետևից ընկնում...

— Ո՞վ գիտե. ուղիղ ճանապարհը թողած՝ Ղովտի ճանապարհն են փնտրում. լույս, օրը կեսօրը թողած՝ մթնում են խարխափում։ Մի բան, ասում են, որ ամեն մարդ էլ հասկանա, էլ նա ի՞նչ ասելու է։ Խաղն ու աղոթքը մեղանում մի հանգի բաներ են. ինչքան մութն ըլի, էնքան լավ է համարվում։ Ես անցյալ օրը մեր խաղ ու պարի վրա մի ոտանավոր գրեցի. ապա ասեմ, տեսնեմ կհավանե՞ս։

— Ի՞նչպես թե «կհավանես». դու էնպես բան կասե՞ս, որ ես չհավանեմ։ Ականջ դրեք, Օսանա, Հռոմսիմ։ Ախչի՛, արի, դեռ փլավի ժամանակը չէ, էստեղ ուրիշ փլավ է եփել մեր Արությունը, մեկ արի առաջ սրա համը տեսնենք։ Արություն ջան, ասա տեսնենք։

Մեր քաղքումը ամեն մի հայ
Պար է գալիս հանգի-հանգի,
Նրա ոտներն արագ-արագ
Կոտրվում են լեզգիհանգի.
Աշտարակցին ծանր ու բարակ
Ցալու ծերը սկսում է։
Քաղցրիկ «լելեն» բերանն առած,
Ուրախ դեմքով պտտվում է.
Ղարաբաղցուն պետք է տեսնել
Ամեն տեսակ խաղ անելում,
Ջարկի՛ր լախտով որքան կամիս,
Ոտն առջևից չի վեր կալնում.
Հապա չասե՞մ չխկլդանեն,
Մի հատ ոտով պտույտ գալուն,
Կորեկ-կորեկ, ցորեն-ցորեն,
Հա գյան-գյալա, դուշ գտնելուն.

Թող գեն ձգենք հարամոլյան,

Ովովվեն ու մյուսները,
Հալի տալն ու կասկարենքին
Ցեռ՞ն գրավում մեր ուշքերը։

Առհասարակ ամեն մի հայ
Գիտե խաղալ տեսակ-տեսակ,
Ամեն դժվար մի ասպարեզ
Դուրս է գալիս նա համարձակ.

Երբ նստում է նժույգ ձիուն,
Բաց մեյդանում նա խաղում է,
Ջրիդ ասված հաստ մահակը
Ձեռի միջին դողդողում է։

Այս խաղումը նա փոխվում է,
Կարմրում է ու սիրթնում,
Իր հրաբուխ թուխ աչքերը
Ցորս կողմն է նա ձրգձրգում.

Հանդեպինը թե պարսիկ է,
Վառված քաջի որսն է այն,
Ո՞վ կարող է սանձել հային,
Թե նա կամի ցույց տալ իրան։

— Կեցե՜ն քաջազունք հայոց,— բղավեց Մանվելը իր ձայնի բոլոր ուժովը...

— Ա՛ տղա Մանվել, կամաց բղավի, թե չէ հենց կիմանան, թե տունը կրակ է ընկել...

— Ի՞նչ եք ասում,— պատասխանեց Մանվելը.— «Ո՞վ կարող է սանձել հային, թե նա կամի ցույց տալ իրան»։ Ախր մեկ էդպես բարձրացրո՛ւ, գովի՛ր մեր քաջերին, որ հոգիս փառավորվի, սիրտս ուրախանա, ախորժակս բաց ըլի, մեր քաջերի կենացը կոնձեմ,— ասաց Մանվելը և մի բաժակ գինի դատարկելով՝ սկսեց երգել.

Երկինք զվարթ ակնարկեն,
Նահապետն ի սիրտ ցնծա.
Ջանձն աստուծո ի նրվեր,
Յար ու կենոք ճոխանա.
Աստվածապաշտն ի հասպարեզ,
Գոռոզն ինքնին կորանա...

— Սպասիր, սպասիր, Մա՛նվել. ես դեռ չեմ վերջացրել,— ասաց Արությունը և շարունակեց իր ոտանավորը.

Հայի լեզուն շատ ճարտար է,
Նրա երգերն անհամար են,
Բայց իր տաղանդն ու հանճարը
Դժբախտ կյանքին հավասար են.
Թե երգում է նա դիվանի,
Ավալ-ախբր կամ հասարակ,
Պարզ խոսքերով հայտնում է նա
Ամեն մի բան ծանր ու բարակ,

Արաբերեն ու ֆարսերեն
Թեժնիսի մեջ նա խառնում է,
Շատ հանելուկ, շատ խոր մտքեր
Նա սրրա մեջ ամփոփում է.

Շրթունքի մեջ ասեղ դրած՝
Նա երգում է դոդաղ-դագմազ,
Երբ վառվում է սերի էշխով.
Երգում է և դիլ-թարփանմազ.

Հետզհետե կրակվելով
Երգում է նա գյուղալլամա,
Իր ընկերի հետ միասին
Սկսում է կից ղոշամա։

Այս խաղերում գանգատվում է
Եվ այրվում է Քյարամի պես,
Երբ հասնում է մուխամբազին,
Իր յարին չի անում անտես.

Նրան գովում, մեծարում է,
Շինում է մի աստվածուհի,
Աղաչում է, աղերսում է,
Որ իր վրա գթով նայի.

Ո՞ւր էր թե մեր վեհ հոգի հայն
Գործով էլ տար այս խեղճ սեռին
Ազատություն, որ նա չունի,
Այլ գերի է մարդու ձեռին...

— Ազատությո՞ւն կանա՞նց... հա՞-յե՞ր...— բղավեց Մանվելը։— Արություն, դու պրծա՞ր քո ոտանավորը։

— Պրծա... հավանեցի՞ր...

— Հրաշալի՞ է, անհա՞ղ, անմա՞ն. էդպես բան միայն դու կարող ես գրել, էլ ուրիշ ոչ ոք. բայց ուրիշի մոտ չկարդաս, թե չէ կծիծաղին. կասեն՝ էս ի՞նչ է. տուտուց-տուտուց դուրս է տվել գլխիցը. դեռ պահիր, մի ժամանակ պետք կգա. հիմա մենք շատ խելոք բան էլ որ ասենք, խելոք մարդիկն անգամ չեն հավանիլ. կասեն... է՞հ, ինչի՞դ է պետք, թող ինչ ուզում են՝ ասեն, դու քո ձին քշիր, հալբաթ մեկ էլ մեր մորուքը կբսնի, մեր խոսքն էլ անց կկենա...

Հիմա ականջ դրեք, ես պիտի սուփրեն օրհնեմ աշըղի օրհնանքով.

Երեք հարյուր տասնութ հայրապետք,
Քսանըչորս մարգարեք,
Տասներկու առաքյալք,
Տասը պատվիրանք,
Ինն դաս հրեշտակք,
Ութ կանոն սաղմոսք,
Յոթնանուն սուրբ Կարապետ,
Վեցթևյան սերովբեք,
Հինգ նավակատիք,
Չորս գլուխ Ավետարանը,
Երեք՝ երրորդությունը,
Երկու՝ երկինք-գետինքը,
Մեկ՝ ստեղծող աստվածը,
Ձեր տուն ու բնակարանն օրհնի,
Ձեր հանդ ու հանդաստանն օրհնի,
Ձեր արտ ու այգեստանն օրհնի,
Ձեր տաքար ու հնձանն օրհնի,
Ձեր կեռ ու գութանն օրհնի,
Ձեր կով ու կթանն օրհնի,
Ձեր օջախը շեն պահի. ա՞մեն։

— Դե վե՛ր կաց, Հոռոմսիմ, սուփրեն շե՛ն արա,— ասաց Մանվելը և սկսեց երգել.

Ինձ համար չէ գարնան գալը,
Ինձ համար չէ ծառի ծաղկիլը,
Ուրախության սրտի գրգիռը

Ոչ մի բերկրանք չէ ինձ համար.
Բայց ինձ համար կգա ժամը,
Կերթամ թշնամյաց պատերազմը,
Եվ մահառիթ սպանիչ գնդակը
Անդ պատրաստած է ինձ համար...

Ե

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԻ ՓՈՐՁ

Ճաշելուց հետո մեր պատանիները շատ տխրությամբ և երկմտությամբ բաժանվեցին միմյանցից։ Մյուս օրը Մանվելը ճանապարհ ընկավ դեպի իրանց գյուղը, իսկ Արությունը՝ դեպի Բոլնրսու սուրբ Գեորգը։

Սայլապան վրացի Գիորգին հարկադրում էր եղներին, որ շուտաքայլ երթան դեպի իր անվանակից Ծմինդա Գիորգին, իսկ սայլի մեջ նստող ուխտավորները՝ արք և կանայք՝ խոսում էին զանազան սուրբերից, նրանց արած հրաշքներից և խաչակնքում էին երեսներին ամեն մի սուրբի անուն տված ժամանակ։ Մինչդեռ աստուծո անունը տալիս ոչ մեկ անգամ չէին խաչակնքում երեսներին։

Արությունը, որ դեռևս խորամանկությամբ իր կարծիքը ծածկել չգիտեր, ծիծաղում էր նրանց վրա և հերքում նրանց ասածները։ Իսկ նրանք էլ, որ Արությունի այդ արարմունքը մի անսովոր հերետիկոսություն էին համարում և մինչև անգամ սրբապղծություն, ո՞րն արհամարհում էր նրա ասածները, ասելով՝ «Դեռ անփորձ է, խաչի թակարդը չի ընկած», ո՞րն էլ՝ խղճալով նրան՝ աղաչում էր, որ այդպես արհամարհանքով չնայե խաչի հրաշքներին, եթե ոչ՝ հետևանքը կարող է շատ վատ լինել իր համար։ Ամենից շատ վախենում էին կնանիքը և ասում էին.

— Հիմա ուր որ է խաչը սրան կունդ ու կծիկ կանի, բերանը կծռի, շլինքը կգցի քամակը, կնղավացնի, կգժվացնի... Բայց ոչ մի այդպես բան չէր պատահում, այլ՝ ընդհակառակն՝ որքան բարկացնում էին Արությունին, այնքան ավելանում էր նրա հերետիկոսությունը և ավելի ոգևորված էր քարոզում նրանց ճշմարիտ աստվածապաշտություն։

— Զորավոր սուրբեր շատ կան, մեռնիմ նրանց ողորմությունին, բայց սուրբ Գեորգի հատը չի ըլի, իմ երեսը նրա ոտի տակը, ասում է մեկը և երեսին խաչակնքում։ Դա թուրքերին էլ է պատժում։ Մի թուրք գնացել է դրա եկեղեցու դուռը հանել, որ տանի իր մարագի համար դուռ շինի։ Դուռը շալակին՝ հասել է իր տան մոտ, ուզեցել է թե վեր դնի, դուռը կպել է մեջքիցը, էլ չի գըշլվել... Թուրքը լացով արտասուքով ետ է տարել, էլ ետ տեղը գրել, խունկ ու մոմ վառել, մատաղ արել, որ էլ ուրիշ մի վնաս չինի իրան։ Էդ թուրքը մինչև հիմի էլ ս. Գեորգի ղուլն է...

— Էնդուր են թուրքերը դրան «դալի խաչ» ասում, է՞...— ասաց մի ուրիշը։

— Էդ միևնույն հրաշքը Ղազախու Կոթի գեղի սուրբ Սարգսի համար էլ են պատմում, էլի ուրիշ շատ սուրբերի համար էլ. սրանից երևում է, որ դա մի հնարովի բան է,— ասաց Արությունը մաղձոտված,— բայց դու էնպես ես պատմում, որ լսողը հենց կիմանա, թե դու աչքովդ տեսել ես թուրքին էլ, դուռն էլ։ Բավական չէ, որ սուտ ասված բաներին հավատում եք, ինքներդ էլ նորնոր սուտեր եք սաեղծում. ի՞նչ խաչ պիտի լինի, որ ձեր սուտերին հավանի, թեկուզ էդ սուտերը նրա օգտի համար լինին ասված։ Ուղիղն ասացեք, սուրբ Գեորգին եք շատ սիրո՞ւմ, թե՞ սուրբ և քաջ Վարդանին, որ հայոց ազգի ու կրոնի համար Ավարայրի դաշտը ողողել է իր արյունով...

— Էդ ի՞նչ Վարդան է, մենք դրա անումը չենք էլ լսել։ Թե որ դա էլ սուրբ Գեորգի նման զորավոր սուրբ է, բա ինչի՞ նրա համար էլ չեն մի եկեղեցի շինել...

— Տո՛, Վարդանս ո՞րն է, ի՞նչ եք ասում,— հարձակվեց մյուս կողմից մի ավելի ջերմեռանդ սրբապաշտ...— Սուրբ Գեորգի հատը ո՞րտեղ կլինի, մեռնեմ նրա ողորմությունին, իմ երեսս նրա ոտի տակը։ Ե՞րե՞ք-հա՞ր-յո՞ւր-երեք-քսան ու ե-ր-ե՞ք մասունք ունի. արարած աշխարհքիս ամեն կողմում նրա զորությունը, նրա հրաշքը տարածված է. ո՞ր Վարդանը կամ Կիրակոսը կարող է նրան հավասարվել...

Արությունը, որ Վարդանի մոլեռանդ կողմնակիցն էր, սաստիկ բարկացավ, որ իր պաշտած սուրբին չճանաչելով՝ արհամարհում

են։ Նա չէր զգում և չէր երևակայում, որ ինքն ևս նրանց չափ մոլեռանդ է, տարբերությունը պաշտելի առարկաների մեջն էր միայն։ Նրա հակառակորդները ևս համոզված էին, որ ճշմարտությունն իրանց կողմն է։ Այդքան հոգեբան չէր Արությունը, ուստի ավելի ևս կատաղի կերպով սկսեց բանակռվել նրանց հետ՝ ասելով։

— Գիտե՞ք ինչ կա. համարձակություն չլինի, ուզում եմ ձեր երեսներին մի քանի ցուրտ խոսք կպցնեմ։ Դուք մի Այսմավուրք եք կարդացել, ես էդ վաղուց եմ անգիր արել. էնպես պուճախներ կգըցեմ, որ կմնաք «և և» անելիս։ Ասած է, «թե խաչն իմն է, զորությունը ե՛ս եմ գիտում»։ Սուրբ Գեորգին ես լավ եմ ճանաչում, քան թե դուք։ Մի մարդի գլուխ ցավում է, գալիս է ուխտ. թե որ մի քանի օրից հետո դադարում է, ասում են՝ խաչը փրկեց, թեպետ առանց նրան էլ պիտի դադարեր. բայց եթե չի դադարում, ասում են՝ ուրիշ խաչից է, սուրբ Գեորգն ուրիշ խաչերի գործում չի ուզում խառնվիլ։ Հետո գնում են մի պառավի գարի գցել տալիս, որ իմանան թե ո՞ր խաչից է։ Պառավը որ նրանց Հնդստան ուղարկի, նրանք՝ ճարը կտրած՝ պիտի գնան. բայց նա էլի էնքան խղճմտանք ունի, որ էդպես հեռու տեղեր չի ուղարկում... Ձեր քաղքցիք գալիս են էստեղ ուխտ. պատահում է, որ փուրգոնը շուռ է գալիս, բոլոր միջի ուխտավորներին ջարդում, կոտրատում, իսկ եթե ոչ՝ դրանից ավելի վատթար բան է պատահում։ Բորչալուի դաշաղ ավաղակները հարբած ուխտավորների ճանապարհը կտրում են, թալանում, կողոպտում, կնիկը մարդի ձեռքից խլում, «շհար գյոզալի» ասելով իրանց խաղն սկսում, մարդին թրատում, ջլատում... Բա ինչի՞ ձեր սուրբ Գեորգը չի ազատում։

— Էնդուր չի ազատում, որ ինքն է լինում ուղարկած էն գողերին, որ նրանց պատժե, որովհետև նրանք էլ քեզ պես բարկացրած կլինին խաչին, ուղիղ սրտով չեն ըլիլ դնացած նրա տակը, կամ իրանց սուրբ չեն ըլիլ պահած. ինչևիցե, մի հանցանք կըլին գործած, դրա համար էլ խաչը նրանց պատժած կըլի, որ մյուս անգամ վատ բան չանեն։

— Ուրեմն էն գողերին որ բռնելու լինին, էլ չեն կարող պատժել. նրանք կարող են ասել՝ մենք մեղավոր չենք, մեզ սուրբ Գեորգն էր հրամայել. բայց դատավորը ձեզ պես անխելք չէ. նա կասի, որ սուրբ Գեորգն ավազակապետ չէ, նա սուրբ մարդ է, նա աշխարհի բաների հետ գործ չունի, միայն դուք եք, որ ոտով գլխով

մոլորվել եք, կռապաշտացել, ստեղծող աստծուն թողած՝ քարերին ու ծառերին եք պաշտում։

— Ասում են նոր մարդիկ են լիս ընկել, էլ ոչ խաչի են հավատում, ոչ պասի, դու էլ էնթավուրներից չլինի՞ս...

— Էնթավուրըս ո՞րն է. կարելի է թե ես էնթավուրներիցն էլ բեթար եմ. դուք էդ ի՞նչ եք հարցնում։ Իմացեք, տեսեք ի՞նչ եմ ասում. թե որ սուտ է ասածս, աչքս հանեցեք. թե չէ՝ ո՞ւր եք ընկել էս չոլերը։ Ցավի համար՝ բժիշկ կա. քեփ անել եք ուզում, ձեր տանը, ձեր բաղերումն ամեն օր քեփ եք անում. բայց եթե ավելի փող ունիք, չեք իմանում, թե ինչ տեղ մխսեք, ես տեղը ցույց կտամ։ Ձեր որդոցը, ձեր աղջկերանցը ուսում տվեք, որ իրանց հավատը, իրանց ազգը ճանաչեն, ձեզ նման չասեն, թե Վա՞ղդանս որն է. ուղիղ ճամփեն թողած՝ քարեքար չընկնին, լուսը թողած՝ խավարի մեջը չման գան...

Բոլորեքյանք լռեցին, կարծելով՝ որ սուրբ Գեորգը դժվացրեց Արությունին, այլապես՝ նրանց կարծիքով, նա կարող չէր այնպես բաներ ասել։

Այսպես շարունակեցին իրանց ճանապարհը։ Առաջին գիշերը մնացին ճանապարհին և մի ջուխտ եզը գողանալ տվին։ Մյուս օրը՝ կարծելով, որ Արությունի հերետիկոսությունը եղավ նույն ձախորդության պատճառը, նրան չընդունեցին իրանց սայլումը, որ մի ուրիշ ձախորդություն էլ չպատահի։

— Ասում են՝ մի թուրք սարի գլխիցը մի քարե խաչ է գլորել. խաչը գլորվելով կանչում է եղել, թե «Երանի մի հայ պատահեր, տակովս անեի, մի լավ ջարդեի»։ Հիմա՝ խաչին ջիգրացնողն Արությունն է, գողերը մե՛ր եզներն են տանում. դեռ ով գիտե, էլի ինչ փորձանք է գալու գլխներիս, միայն նրա համար, որ բարեսրտություն արինք, էդ անհավատին մեզ մոտ նստացրինք։

Այսպես խոսողի մարգարեությունը շուտով կատարվեց։ Մի զառիվայր տեղում ծուլացան թե իջնեն սայլիցը, եզները չկարողացան անկապ անիվավոր սայլի գլուխը պահել, իրանք էլ հետը սրընթաց գլորվելով ընկան մի խոր խանդակի մեջ։ Սայլը շուռ եկավ, և որի ոտը կոտրվեց, որի՝ կուռը, որի գլուխը ճզվեց, որի քիթը ջարդվեց։ Լավ էր, որ Արությունն այդտեղ չէր, եթե ոչ՝ մի լավ ծեծ կուտեր...

Արությունը՝ իր փոքրիկ ծրարը ձեռքին՝ ոտով ճանապարհ ընկավ դեպի ս. Գեորգ, ուր և հասավ երեկոյին։

Արդեն բոլոր հեռավոր և մոտավոր ուխտավորները, հայերը, վրացիքը, հույները և թուրքերը միասին խառնված կազմել էին մի խուռն բազմություն։ Երեում էին բազմաթիվ վրաններ, փուրգոններ, տարանտասներ, սայլեր, ձիաներ, փալանած եզներ, մատաղ անելու համար հոտերով ոչխարներ, գինով լիքը տակառներ, տկեր, մեշոկներով, չվալներով, թաբախներով, կթոցներով մրգեղեններ...

Քիչ-քիչ մութը վրա հասավ, կրակները, խարույկները վառվեցան բարձր ալիքներով և օդասլաց հրեշներն սկսեցին մինը քան զմյուսն ավելի բարձրանալ և մթնոլորտը զարդարել նորատեսակ վայր ընկնող աստղերով։ Ժամկոչը, որ տարին մի անգամ է միայն երևում այստեղ իր զանգակի հետ միասին, հնչեցնում էր անընդհատ եկեղեցու քաղցրաձայն զանգակը, որ մեծ տպավորություն էր գործում ուխտավորների այն մեծ մասի վրա, որոնք միշտ անտառներում մեծանալով՝ զանգակի ձայն տարիներով չեն լսում...

Մյուս օրը՝ շաբաթ առավոտը՝ որ նոյեմբերի տասն էր լուսանում, ամբողջ բլրակը շաղախվել էր մատաղի արյունով, էլ ոտք դնելու տեղ չկար։ Համբուրողները մի օձապտույտ կեռումեռ ճանապարհով վերև ու ներքև էին անում՝ անդադար իրար սեղմելով։ Տերտերները չէին կարողանում «Փարատյա զցավս» և «պահպանիչ» հասցնել, մնացել էին քրտնքի մեջ կորած։ Խեղճ կարգավորները կարծես երեք մանկանց դերերը լինեին կատարում ս. Գեորգի փոքրիկ մատուռաձև շինության մեջ, որի ներսի պատերին անհամար մոմեր վառելով՝ վերափոխել էին մի բաբելոնյան հնոցի։ Եկեղեցու մեջ սուգ ու շիվան էին անում ջերմեռանդ ուխտավորները իրանց աղերսալի մաղթանքներով, որ բարձրաձայն խնդրում էին սուրբ Գեորգից, իսկ դուրսը միևնույն ուխտավորները մեծ ուրախության և զվարճության մեջ էին։ Խնդում, ծիծաղ, հոհոց, քրքջոց, գգվանք, պաչպչոց... Մեկ տեղ կպչում էին ըմբիշները, մյուս տեղ պար էին գալիս, մի ուրիշ տեղ խաղեր ու օյիններ սարքում։ Մեկ խոսքով՝ զուռնա, գոհլ, դահիրա, նաղարա, սազ, թառ, սանթուր, չոնգուր, խաղ, տաղ, պար, իրար հետ խառնված՝ խրտնեցնում էին գիժ գոմեշներին և քուռակներին, որոնք պլշած դուրս էին ընկնում, տրտինգ տալիս, փախչում, կնիկ, երեխա ոտի տակ գըցում, մուրալներին հասցնում։ Աբելն էլ իր տասը կանգուն երկայնությամբ փայտե ոտներին սպիտակ վարտիք հագցրած, խաղում էր նրանց վրա, խաղցնելով մատներին հագցրած չխկչխկան պղնձե մատնոցները, և երբ հոգնում էր, ձեռքն էր առնում իր աշակերտի

շլինքը ձգած, կլոր ու մեջտեղը ծակ թաղիքը և նրան զանազան գլխարկի ձև տալով ցույց էր տալիս, թե որտեղ ինչ տեսակ գդակ են ծածկում։ Երբ որ իջնում էր փայտե ոտներից, գետնի վրա ցույց էր տալիս իր ճարպկությունը մարմնավարժական խաղերի մեջ, օրինակ՝ ման էր գալիս գլխիվայր կանգնած ձեռքերով և զանազան ոստյուններ անում ետ ու առաջ գլխիվայր շրջվելով և այլ այս տեսակ ձևեր, որից հետո ձեռնածություն էլ էր անում, այսինքն ֆոկուսներ, որից հասարակ ժողովուրդը շատ էր զարմանում և աչքակապություն էր համարում ու կախարդական զորությամբ արած մի բան։ Ավելի զարմանալի էին մի շիրակացի երիտասարդի կատարած խաղերը։ Նա լարախաղաց էր. պարանի վրա սովորական ճարպիկությունները կատարելուց հետո դեռնի վրա ցույց տըվավ մի ավելի հրաշալի տեսարան։ Նա տկսեց տեղն ու տեղը պըտույտ գալ այնպես արագ, ինչպես մի ճախարակի անիվ, և այդ պտույտը տևեց այնքան ժամանակ, մինչև որ կարձակեր իր երկու հատ օսմանցուի զբունի և բաճկոնակի բազմաթիվ կոճակները։ Նույն պտույտի ժամանակ, նա երկու սուր դաշույններ ձեռքն առած՝ նրանց ծայրերը դնում էր աչքերի աղբյուրների վրա, քթումը, ականջներումը, որից հետո կանգնում էր նույն դաշույնների սուր բերանի վրա բոկոտն և կոտրտվելով խաղցնում ձեռները իր պղնձե մատնոցները չխկչխկացնելով։ Նա անթիվ թլիսմներ ուներ կարած իր վրա, և ժողովուրդը նրա այդ զարմանալի ճարպկությունը վերագրում էր թլիսմների զորությանը։

Թիֆլիզի զվարճասեր երիտասարդներն էլ, որ հատուկ այդ օրվա համար լավ ձիաներ են վարձում, նոր շորեր առնում, զուգվում, զարդարվում արծաթապատ զենքերով, թեև չեն իմանում նրանց գործածելը, խառնվել էին ջրիդի հանդեսի մեջ, որ կատարվում էր ուխտատեղի ստորոտում մի ընդարձակ դաշտի վրա։ Ջրիդ խաղացողները երկու մասի էին բաժանված և կանգնած դեմ առ դեմ։ Մի մասում էին հայերը, մեծ մասամբ շուլավերցիք և խաչենցիք, իսկ մյուս մասումը՝ Բորչալուի թուրքերը։ Հայերը հետզհետե տաքանալով՝ կատաղեցրին թուրքերին և խաղը վերջացրին սովորական դիպվածները կատարելուց հետո, այսինքն, բանը կռվի հասցրին, շատ գլուխներ պատռեցին, մինչև գավառապետն ու մողրովը իրանց զազախներով մեջ ընկան և մի կերպ խաղաղացրին վիրավորվածներին, որոնք լռեցին միայն այն հուսով, որ մյուս տարին կառնեն իրանց վրեժը...

Այսպես, մի տեղ զանազան խաղեր էին խաղում, մյուս տեղ՝ շատ ժամանակ իրար չտեսած ծանոթ, բարեկամներ էին հանդիպում միմյանց և մեկմեկու հրավիրում միմյանց սեղանի վրա։ Հարս ու աղջիկ գեղեցիկ զարդարված, բոլորեքյանք ուրախ, բոլորեքյանք զվարթ. մի խոսքով՝ ամեն ինչ հրաշալի էր, միայն Արությունն էր տխուր։ Նա կարծես մտքումը դրել էր, որ այդ հանդեսի լավ կողմերը չնկատե. նա չէր հասկանում, թե որքան գեղեցիկ մի առիթ է դա, որ տարին գոնե մեկ անգամ ամեն կողմից մարդիկ մի տեղ են հավաքվում, իրար տեսնում, կարոտներն առնում. քաղաք չտեսածները քաղաքացոց նիստ ու կացն են տեսնում, քաղաքացիք՝ գյուղացոց, թող այն զվարճությունները, խաղերը, որոնք ամեն անգամ ոչ տեսնվում և ոչ վայելվում են։ Նա գիտեր, որ այդ ուխտատեղի բոլոր արդյունքը հատկացրած է Ներսիսյան դպրոցին, բայց որովհետև դպրոցը այդ տեղերից մոտիկ ոչ մի գյուղից մի որդեգիր չէր պահած և չէր պահում, դրա վրա բարկացած՝ ասում էր. «Ժողովրդի մի աչքը կուրացնում են, որ մյուսը լուսավոր պահեն»...

Կեսօրից հետո ամեն խաղ պառավեցավ, և սայլերն ու փուրգոններն սկսեցին իրար հետևից գոդռալ, որից հետո բոլոր տեսարանի վրա իջավ մի դատարկ վարագույր։

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԵՐ
ԵՎ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Արությունը, որ կորած հորթի պես արդեն իր մորը գտել էր խաչը տակին, նրա հետ նստեց իրանց սայլումը և ճանապարհ ընկան դեպի Խաչեն։ Մայրն անդադար համբուրում էր որդուն և ամեն անգամ կրկնում.

— Ես քը մատա՛ղ ընիմ, ա՛ Թյուն ջա՛ն...

Իսկ Արությունն ընդդիմանում էր, ասելով՝

— Դե լա՛վ ա, լա՛վ. խրե՛գ պաչի, ես գյուղում ըմ վար տեու ինձ շատ ըս սիրում։

— Ես քը մա՛տաղ ընիմ, ա՛ Թյուն ջա՛ն. տեու վար գիտաս հո՛ւչ, էլ հո՞ւ կգիդա... Ես քու չարը տա՛նեմ, ա՛ Թյուն ջա՛ն։

— Դե լավ ա, լավ, բա՛հ...

— Ա՛ տղա, քը մա՛տաղ ընիմ, դե հո՞ւնց անեմ, կարում չըմ թա տաղ անեմ... Քը մա՛տաղ ընիմ, ա՛ Թյունի, Օսանը հու՞նց ա, խոխեքը լա՞վ ըն, մեր պառավ խնամեն ըրեխես նհետ բըրշո՞ւմ ա...

— Թող կո՛ըշի է՛, մին նրա անումը տա՛լ մի... Ես էլ ասել պիտիմ թե՝ հար օնեմ, մար օնեմ, էլի՛...

— Խե՞, քը մատաղ ընիմ, հի՞նչ ա ըլալ։

— Հի՞նչ պիտի ընիլ... զա՛հլաս տարալ ըն, ասըմ ըն. «Է՞ս հինչ ա. եկալ ա կլխներես վեր ընկալ. ըսկի հաց չոնենք թա մունք օ՛տենք, մին բո՛ղազ էլ սա ա տառալ»... Տեուք էլ ա՛ստուծ օ՛րհնալ ա՝ վար մե հետ մին չըվալ ալեր ըղարկեք, հի՞նչ կընի. պա ծեր սրտո՛ւմը ջըգյա՛ր չկա՞...

— Քը մա՛տաղ ընիմ, ա՛ Թյուն ջան, իմ ծեռանը հի՞նչ կա... Պա տեու գյո՛ւդում չըս քու հոր խըսյաթը՞... էրվալ ըմ, խրավվալ ես էտ մարթին ծեռանը... շինը մին օղեով յա աշըղ եկած վախտը հուվ վար մին չանաղ ա տալիս, նա մին չվալ ա տալիս... Ուրքշեր մարթիքը պյուրում ա տոնը լանում, ուտըցնում, խըմըցնում, կըրըսնեն տըրտակում... Խոխեքըս՝ մըսըրնե՛ն պա՞ց, վընըրնե՛ն պա՞ց... նահանց հետև մին ճոխտ չմոշք չի ինք օնում... ասում ըմ. «էտ ըրա՞ըմունք չի վար տեու ա՛նըմ ըս», վետանը տակրն ա քըցում, թակո՛ւմ, կուտրատո՛ւմ, թա՝ «լյուղիտ կըտրե՛» . (արտասվում է)...

— Լա՛վ ա, լա՛վ ա, լա՛ց մինիլ, ալի ջան, ես լավ տղա կտառնամ, քեզ կտանեմ քաղաք... Ա՛խ... սրտումս շա՛տ մուրազ կա... Մին քեզ տանի մե հետ դինջ նստած, էն վախտը վար մոնի, էլ սըրտումս դարդ չար ընիլ... Ամմա հո՞ւնց անիմ մըհեդ, հյո՞ւր ասեմ, թո՞ըը կորչիմ.. (արտասվում է)...

— Ես քու ցավը տանեմ, ա՛ Թյուն ջան. լա՛ց մինիլ, քը մատաղ ընեմ, լաց մինիլ... Վա՛խել մի, քը մատաղ ընիմ, տեու քու մուրազեն կհասնես, հալա ջահիլ ըս... Տեու ինձ հետե դա՛ըդ միր անել, քը մատաղ... Ես էս ա պըռավալ ըմ, էքուց ալյոր կմեռնեմ... Տեու վար իմ ըրիսին մին հափուռ հող քցիս, էն ինձ բոլ ա... Լա՛ց մինիլ, ցա՛վըտ տանեմ, լա՛ց մինիլ (տիրում է լռություն)...

ՄԱՐԴԱԳԵԼ

(Հինը և նորը)

Մայրական սերը ամեն մի զգացող մարդի հայտնի է։ Արությունը գլուխը դրավ իր մոր գոգումն ու լռեց։ Մայրը՝ գթառատության արտասուքն աչքերին՝ սկսեց շփել որդու գլուխը, որով մի քաղցր քուն բերավ նրա վրա։ Սայլն էլ օրորոցի պաշտոն էր կատարում երեխայացած Արությունի համար և անընդհատ օրորում էր, մինչև հասան տուն, որ շատ հեռու չէր։

Արությունը վայր իջավ սայլից, համբուրեց հոր ձեռքը։ Հայրը շատ ուրախացավ, բայց սանձելով իր ներքին հուզմունքը, «աստված պահե քեզ, որդի», ասաց նա վարդապետի ոճով, որովհետև համբուրելու սովորություն չուներ, այդ մեղք էր համարում նա։

Արությունը մնաց գյուղումը։ Երեք օրից հետո նա այլևս հյուր չէր։ Այն փաղաքշանքը, որ նա վայելեց իր հորից, մի բոպեական զվարճություն էր, չէր կարող երկար տևել։ Նրան հարկավոր էր, ինչպես տան մեկ անդամի, որևիցե կերպով օգտակար լինել, որ իր կերածը կորած չհամարվեր։ Նրա անելիքը շատ ծանր չէր լինելու. պետք է գոմը քերեր, ձին տաներ ջուրը, տավարին դարման տար, փայտը կտրտեր։ Այս կատարեց նա։ Հետո հարկադրվեցավ գնալ այգին մշակել, անտառից փայտ բերել, շինության համար՝ գերան, քար, ջուր։ Բայց ուր որ գնում էր, ինչ որ անում էր, առանց մի վնասի չէր վերադառնում. կամ ձեռքն էր կտրած լինում, կամ ոտքը ցավցրած, երեսը շանգռած, մի բան կորցրած, սայլը շուռ բերած կամ կոտրած, եզը կամ գոմեշը փախցրած կամ կորցրած։ Սկզբումը հայրը չէր բարկանում այս անհաջող հանգամանքների վրա, ասում էր՝ «դեռ խամ աշառ է, եզը կդառնա», բայց տեսնելով՝ որ հետզհետե վնասներ ավելի է բերում, առածը փոխեց, ասելով՝ «Մինչև աշառը եզ կդառնա, տերը խոզ կդառնա»։ Ուստի մտածեց վերջ դնել այս դժբախտությանը՝ նոր ինորո խրատելով Արությունին խիկարի խրատներով, հանդիմանությունով, նախատինքով, վերջապես սուր-սուր մասալներով ու կատակով։ Բայց Ավետիքի կրթության այս ձևը ոչ միայն չուղղեց Արությունին, այլ՝ ընդհակառակն՝ ավելի ևս գրգռեց նրա ինքնասիրությունը։ Նա տեսավ, որ ոչ ոք իրան խելոք չի համարում, ինքնապաշտպանության դիրք բռնեց, սկսեց ինքն իրան գովել, իրան խելոք համարել, իսկ բոլոր մնացածներին՝ մանավանդ իր հորը՝ անխելք և հիմար։ Այս մի անակնկալ հարված էր, մի սաստիկ զարկ, որ չէր կարող տանել ոչ մի հայր, ուր մնաց թե Ավետիքը։

— Սա իմ տղան չէ,— ասաց Ավետիքն իր կնոջը։

— Թե որ քո տղան չէ,— ասաց կինը այնպիսի մի ձայնով, որ աղատ չէր երկյուղի ազդեցությունից,— թե որ քո տղան չէ՞, հապա ինչու է քեզ նման անկոտրում, քեզ նման իր ասածի...

— Դրա մեղավորը դու ես, դու գովում ես իրան, նա էլ երես է առնում, էլ հետը խոսել չի լինում։

— Ինչո՞ւ չեմ գովիլ, աչքումս մազ է բսնել մինչև նա մեկ սև ու սպիտակ է սովորել. ո՞վ է նրանից ուսումով, նրանից շնորհքով։

— Մեկ դու ես շնորհքով, մեկ էլ նա։ Մի երկու տավար է տանում հանդ, կեսն է ետ բերում. էդ չէ՞ դրա շնորհքը...

— Թե որ ուզում էիր տավարած շինես, էլ ո՞ւր էիր կարդացնել տալիս, ո՞վ է անում իր չսիրած բանը, որ նա անի. նրա ուշքն ու միտքը իր գրի, իր ուսումի վրա է, ուրիշ ոչ մի բան նրա աչքին չի երևում. շատերն են ուզում, որ նրա պես որդի ունենան, բայց աստված նրանց թողած՝ քեզ է տվել...

— Ինչի՞, ես ի՞նչ եմ արել նրան. աչքը հո չե՞մ հանել. ինչքան կարողացել եմ, ուսում եմ տվել. էլ ի՞նչ է ուզում ինձանից։

— Էն է ուզում, որ ասում է, ես իմ կարդալս, իմ ուսումս դեռ չեմ վերջացրել. ինձ օգնեցեք, ասում է, մինչև ես իմ ուսումս ավարտեմ...

— Ա՛ կնիկ, քո խելքն էլ էնքան է կտրում, ինչքան նրանը։ Ուսումը կավարտվի՞, ի՞նչ ես խոսում։ Ուսումը որ կա, մի ծով է, ոչով չի կարող նրան հատացնիլ. ամեն մարդ ինչ աման որ ունի, էնքան կհանի նրանից։ Հիմա դրա ամանը որ լցվել է, ես ի՞նչ մեղավոր եմ. թող մեծ աման էր ունեցել, մեծ ուսում էլ կստանար։ Վերջապես ես աղա չեմ, փողատեր չեմ, ինչքան իմ կարողությունս ինձ թույլ է տվել, ես էլ իմ որդուն էնքան եմ ուսում տվել, ավելի կարողություն չունիմ։ Մեր գեղումը ո՞ր հայրն է՝ ինձ չափ չասեմ՝ իմ կիսի չափ ուսում տվել իր որդուն...

— Դու որ ուզենաս, դեռ էլի կարող ես օգնել. նրա մի տարվա

հացն ու շորն ի՞նչ է, որ չտաս։ Նա ասում է՝ «Իմ ընկերները ժամանակով մարդիկ կդառնան, բայց ես որ ձեզ մոտ մնամ, ի՞նչ պիտի դառնամ։ Էշն, ասում է, որ իշի կշտին կապես»...

— Ի՞նչ, ի՞նչ...

— Ի՞նչ պիտի ըլի... դու էնքան ասել ես, որ նա էլ սովորել է...

— Ես ի՞նչ եմ սովորեցրել...

— Քո մասալները...

— Ես ցույց կտամ դրան իմ մասալների զորությունը...

— Աստվածդ կսիրես, ա՛յ մարդ, երեխիս չգժվացնես. նա առանց էդ էլ գժված է, էլ ոչ մեծ է հարցնում, ոչ պստիկ, ամենքին էլ անպատիվ է անում...

Արությունը՝ տեսնելով որ իր հորից օգնություն չի ստանալու՝ ուզեց իր տրտմությանը մասնակից անել Մանվելին։ Մինչդեռ այր ու կին վիճում էին նրա մասին, նա քաշվել էր հյուրասենյակը և գրում էր Մանվելին հետևյալ նամակը.

Մանվել,

հոգեկիցդ իմ,

Չգիտեմ դու հիմա ի՞նչ տեղ ես արդյոք և ի՞նչ վիճակի մեջ, բայց ես այս նամակն ուղարկում եմ ձեր գյուղը, որ ուր էլ որ լինես, քեզ հասցնեն։

Աչքդ լո՛ւյս, Մանվե՛լ, ես հիմա գիժ եմ։ Այսպես են համարում ինձ այժմ ամենքը։ Եթե մի քանիսն էլ, և այն երբեմն, իմ ասածի մեջ խելք են նշմարում, ասում են՝ «Գժից ուղիղ համբավ»։ Ասենք սա մի անպատվություն չէ, այլ՝ ընդհակառակն՝ այնքան մեծ է այս պատիվը, որին ես դեռ չեմ արժանացել։ Բայց այսուամենայնիվ իմ մանկության օրորոցը, իմ փայփայած ու գգված ծննդարանը այժմ ինձ թվում է մի դժոխք, ուր՝ ինչպես ասած է ավետարանի մեջ՝ աղվեսների համար որջ կա, թռչունների համար բույն, բայց մարդու որդու համար գլուխ դնելու տեղ չկա։ Հիմարություն, կոպտություն, ծուլություն, ընչաքաղցություն և, որ մայրն է ամենայն չարյաց, խեղճություն և, էլի կասեմ, կեղտոտությո՛ւն, անտանելի, անմերձենալի կեղտոտությո՛ւն, անմաքրությո՛ւն, կեղտոտությո՛ւն...

Իրանց գոմերի առջև հազար տարվան թրիք կա կույտված, չեն տանում իրանց այգիքն ու արտատեղերն ածում, որով թե՛ իրանց հողերը կբարվոքեն և թե իրանց տները կազատեն ժահահոտությունից, որ իրանց այնքան զգալի չէ, սովոր լինելով այդ հոտին։ Ոչ մի տղամարդ կամ կնիկարմատ չկա, որ երկու շապիկ ունենա, շապկաբնկեր հո—շատերը մեկն էլ չեն ունենում։ Շատ անգամ տեսնում ես սրա կամ նրա կուրծքը աղլուխով ծածկված. այդ նշան է, որ ժրաջան տանտիկինն իր կամ մարդու շապիկը նույն օրը բարեհաճել է լվանալ։ Այդ էլ իհարկե զատկից զատիկ կլինի կամ շա՜տ-շա՜տ հինգ նավակատիքներին... Բայց թափ են տալիս թոնդրումը ամիսը մեկ կամ երկու անգամ... Ո՛հ, որ միտս եմ բերում, գլխիս ցավը բռնում է... Ահա այս մաքրասեր իմաստուններն են, որ ինձ գիժ են համարում, որովհետև համարձակում եմ ասել, որ ոչիչն աստված չի ստեղծել, այդ դուք եք ստեղծում ձեր անմաքրությունովը...

Դու լավ գիտես, որ մեզանում փոքրերն իրավունք չունին մեծերին ընդդիմախոսելու... Մեզանում չկա «ներեցեք», որովհետև դա մարդավարության կվերաբերի, որի անունը դեռ լսած չեն մերոնք։ Անեծք, հայհոյանք... Անլուր հայհոյանքների մեջ մտնում է և արարողը և նրա ամենայն արարածը։ Կռիվը կատարվում է դանակով, սրով և հրացանով։ Զարակամությունը սահման չունի, ոխակալությունը ժառանգական է, պիտի շարունակվի որդոց որդի։ Սեր կա՝ անասնական, բարեկամություն՝ խաբեբայական, խնդակցություն՝ բոպեական, գթություն՝ բռնակալական, եղբայրություն՝ կայենական, հայրություն՝ գազանական... Ո՛չ, ես այստեղ չեմ կարող մնալ...

Մի հատիկ հոգի, որ այստեղ ինձ մխիթարում է՝ այդ իմ մայրն է։ Մայրս Ռեբեկայի վիճակումն է։ Ինչպես Ռեբեկան իր որդի Հակոբին միշտ պաշտպանում էր հոր ատելությունից, այսպես էլ իմ մայրս պատրաստ է իր կյանքը զոհել ինձ համար։ Նրա սերը դեպի ինձ այնքան մեծ է, որ՝ չնայած իր կանխակալ կարծիքներին՝ հավատում է իմ բոլոր ասածներին և հոգվով չափ փառավորվում, որ ինձ նման իմաստուն որդի ունի։ «Մի՛ վախենար, սիրտ է տալիս ինձ մայրս, աստված քեզ հետ կլինի միշտ, նա քեզ չի կորցնիլ, եթե դու նրա փեշիցը պինդ բռնես։ Միտդ բեր Հակոբին, Հով-

ռեփին, Մովսեսին. դու հո գիտես՝ աստված նրանց ինչպես առաջնորդեց»... Հետո ես ասում եմ, «ճշմարիտ է, աստված նրանց հետ էր, բայց նրանք հայ չէին. աստված մեր պատերի հետ էլ է եղել»... Եվ պատմում եմ Հայկի, Արամի, Տիգրանի քաջագործությունները։ Մայրս շատ ոգևորվում է, մանավանդ երբ որ պատմում եմ Եղիշեից. հինգերորդ գարում մեր փափկասուն ռիկնանց կրած նեղությունները իրանց հայրենիքի պաշտպանության համար։ Մեկ օր այնպես հուզվեցավ մայրս ու լաց եղավ. ռեմնելով մորս արտասունքը, ես ինքս էլ արտասվեցա։ Արդյոք մոր նման քաջը էլ ուրիշ ի՞նչ կա աշխարհքումս։ Ինչքա՜ն բախտավոր կլինեին զավակները, եթե հայրերն ևս մայրերի քնքուշ զգացմունքն ունենային։ Ընդհանրապես կոպիտ են հայրերը և կոպտաբար են վարվում իրանց որդոց հետ։ Նրանք, իբրև տան բռնակալ՝ ահ ու սարսափն են ամենքի։ Նրա անունով մանուկներին սպառնում են։ Այդ երկյուղի տպավորությունն այնքան մեծ է եղել ինձ վրա, որ այս րոպեիս էլ վախենում եմ իմ հորից, թեև ինքս ինձ սիրտ եմ տալիս, որ մաքառեմ նրա բռնակալության դեմ։ Հայրս մի զարհուրելի մարդ է նաև, իր հսկայական հասակով, իր բարկացկոտ և կնճռոտ դեմքով, իր ծանրաբարոյությամբ և մանավանդ իր կամակորությամբ և այն մեծ համարմունքով, որ վառակել է իր մասին։ Այս ահռելին ինձ չի օգնում, ոչ թե նրա համար, որ ժլատ է, ո՜չ, հայրս ոչ միայն ժլատ չէ, այլ, ընդհակառակն, չափազանց առատաձեռն է, միայն ոչ իր համար, իր տան համար, իր զավակների համար, այլ... օտարների։ Չափազանց հյուրասեր է և հյուրերի համար հատկապես օրա ունի շինած գոմի մի ծայրումը։ Առանց հյուրի հաց ուտելու սովորություն չունի. եթե չկա մի օտար հյուր, նա պատահած շինականին կկանչե, որ նրա հետ ախորժակով հաց ուտի, գինի խմի։ Շատ անգամ երեխեքը անբաժին են մնում, բոլորը հյուրերն են ուտում. շատ անգամ՝ իմանալով՝ որ տանը կերակուր չկա պատրաստած՝ նա էլի քերում է հյուրերին, ասելով՝ «սոխ ու հաց, պիտը բաց», բայց այդպիսի դեպքերում մորս հետ կռվում է։ Ահա այս մարդը, որ ինչքան լավ մարդ է իբրև հասարակության անդամ, նույնքան վատ է՝ իբրև գերդաստանի հայր։ Ես, իհարկե, ընդդեմ չեմ նրա հյուրասիրությանը, այլ ընդդեմ եմ, որ մեկը զոհում է մյուսին։ Եվ ես սրանում մի առաքինություն չեմ գտնում, այլ միայն մոլորություն և անպիտանություն։

թյուն։ Ինձ չի տալիս այն, ինչ որ կրկնապատիկ տալիս է օտարին։ Ահա՛ այսպես է կազմակերպվել սրա բնավորությունը։

Մի բան, որ ինձ զարմացնում է, այն է, որ հայրս ոչ միայն չի ուզում օգնել ինձ, որ ես ուսումս շարունակեմ, այլ իր մոտն էլ չի ուզում պահել... ահա ցավն ինչ տեղ է։ Ի՞նչ արած, ես էլ մրտքումս դրել եմ գնալ դեպի մի կողմ, ուր որ աստված կառաջնորդե։ Եթե ողջ մնամ, էլի կտեսնենք միմյանց, իսկ եթե ոչ՝ մյուս կյանքումը կսպասեմ քո տեսությանը։ Իմ վերջին կտակը, որ ուզում եմ քեզ հայտնել՝ այս է՝ եթե աստված տա՝ լավ ուսումն ստանաս, գեղացոց համար մի ամսաթերթ հրատարակիր հասկանալի լեզվով ու մտքով։ Ցպած խոսքը՝ ինչքան էլ հիմար լինի, ավելի անց կկենա, քան թե ինձպեսների երես առ երես խոսիլը։ Ի՞նչ պտուղ կարող ես ստանալ մի խոպանած անդաստանից, որ միայն փուշ և տատասկ կարող է բացնել։ Պետք է մշակել այդ վայրենացած անդաստանը, բարի սերմեր ցանել. եթե մենք չենք տեսնիլ, գոնե մեր հետնորդները կտեսանեն և կվայելեն նրա պտուղները և ինձ նման անմուրազ չեն մնալ։ Ողջ լեր։

Քույդ Արություն

— Հապա քո ասելը ի՞նչ է, ա՛ կնիկ, ինչպես պետք է անենք, որ՝ ինչպես կասեն՝ ոչ շամփուրն էրվի, ոչ խորովածը։

— Ահա գալիս է ինքը... թե աստվածդ կսիրես, ա՛յ մարդ, չըխոսացնես...

Արությունը ներս մտավ և նստեց իր հորից հեռու, թախտի ծայրին։ Ավետիքն աչքի տակով մտիկ տվավ և ինչ-որ փնթփնթաց ինքն իրան, բայց այս արգելք չեղավ, որ Արությունը վճռաբար ասեր նրան, թե՝ ինչո՞ւ իրան չի ուզում օգնել։

— Ինչ որ կարդացել ես, կեսն էլ ավել է,— պատասխանեց Ավետիքը։— Առանց էն էլ տեսնում եմ, որ դու շատ ես հպարտացել, էլ ոչովի չես հավանում։ Ծառը որ ծառ է, ինչքան որ շատ է պտուղ բռնում, էնքան ճղները կռացնում, խոնարհեցնում է, բայց դու մի ծառի չափ էլ չկաս։ Ոչ ծերի պատիվ ես պահում, ոչ մեծի խոսք լսում. ով որ մի բան է ասում, դու իմացած, չիմացած, քըրքրում, ծիծաղում ես...

— Սուտ բանը որ ուզենան ճշմարտի տեղ հավատացնել, ո՞ւմ

ծիծաղը չի գալ,— ասաց Արությունը վստահաբար, օգուտ քաղելով հոր հանդարտ խոսելուցը։

— Սուտ բանը ո՞րն է.

— Ես ո՞ր մեկն ասեմ... Հենց ինչ որ ասում են, բոլորն էլ սուտ է լինում, ոչ մի ճշմարիտ բան չեմ լսում։ Բորչալվեցի Թուրք Ալին տասներկու տարի գելություն է արել, ասում են։ Սրանից էլ անհամ սո՞ւտ։

— Հետո՞, էդ սուտ է՞. ես ինքս եմ աչքովս տեսել էն մարդին, ինչի է սուտ, ուրեմն մենք ամենքս էլ սո՞ւտ ենք խոսում։

— Դու քո աչքովդ մարդին ես տեսել, մարդի ասածին ես հավատացել, դու հո չե՞ս տեսել նրան գել դառած, դու հո չե՞ս տեսել էդ գելին նոր մեկանց մարդ դառնալիս։ Եթե տեսել ես, դե ինձ հասկացրու, տեսնեմ էդ ինչպե՞ս է եղել, որ ես էլ հավատամ...

— Ինչպե՞ս պետք է լինի,— պատասխանեց հայրն ակամա, ուզենալով որդուն հավատի բերել և ցույց տալ նրան, որ ինքն ավելի բան գիտե, քան թե նա, չկասկածելով, որ իր բոլոր գիտությունը Արությունի համար չգիտություն է։— Ինչպե՞ս պետք է լինի։ Մեկ օր չարերը հարսնիք անելիս են եղել զուռնա զավալով. մարդը չի իմացել, որ էդ հարսանիքը չարերն են անում. միամբությունով գնում է ընկնում նրանց մեջը։ Չարերը պար են ածում նրան, ծափ տալիս, ծիծաղում, հետո մի գելի մորթի են գցում շլինքը, մարդն իսկույն գել է դառնում, գնում ընկնում գելերի մեջը։

— Հետո՞, հապա ինչպե՞ս է ապրել գելերի հետ։

— Ինչպե՞ս պիտի ապրե, իհարկե գելի պես։ Քանի անգամ ֆեղճը պատմել է ինձ։ Ասում է՝ տասնով, քսանով ման էինք գալիս չոլեշով, ո՛ր տավար կամ ոչխար որ մեր ղսմաթն էր լինում, միայն նա էր երևում մեր աչքին, մենք էլ գնում էինք նրան ուտում։ Երբ որ աստված ղսմաթ չէր տալիս, բոլորս մեկ տեղ էինք հավաքվում ու սկսում էինք օռնալ. հետո մի բան էր երևում աչքներիս, գնում էինք ուտում։ Մեկ անգամ էլ, ասում է, մի լղար ձի երևաց աչքներիս. գնացինք, վեր գցեցինք, մեր մեջ փայ արինք, մեջքի սեռն ընկավ ինձ. դարտակ ոսկոր էր, էնքան կրծեցի, ասում է, որ ատամիս մեկը վեր ընկավ... Եվ ճշմարիտ որ առաջին ատամներից մեկը վեր ընկած էր...

— Իհարկե, սուտ ինչպե՞ս կասեր. բայց հետո՞, ինչպե՞ս է նորմեկանց մարդ դառել...

— Ինչպե՞ս պետք է լինի... Հերթով գնում են եղել փարախից

ոչխար փախցնում։ Մեկ անգամ էլ հերթն իրան է ընկնում, գնում է մտնում ոչխարների աղալը. շները վրա են թափվում, չոբանները հավաքվում են. ուզում է, որ թռչի, չափարովը դուրս ընկնի, գելի մորթին ընկնում է չափարի բհիրը, շլինքը միջիցը դուրս է գալիս թե չէ՝ էլի դառնում է առաջվան մարդը։ Չոբաններին ուզում են մեկ լավ ծեծե՞ն, բայց որ իմանում են, թե գել է եղել, նոր է մարդ դառել, տանում են իրանց մոտ հաց ուտեցնում, ճանապարհ գցում։

— Ա՜յ թե խաբել է հա՜...— բացականչեց Արությունը։— Նա հենց մարդ է եղել և ոչ թե գել, բայց որ գողությունը բռնվել է, ասել է՝ գել էի. հիմար չոբաններն էլ հավատացել են, էդ բանը տարածել ժողովրդի մեջ։ Խելոք մարդն էդպես բաներին ինչպե՞ս կհավատա. մարդն ինչպե՞ս գել կդառնա...

— Դու որ չես հասկանում, հենց իմանում ես, թե չի դառնալ. ինչի՞ չի դառնալ։ Չարերն ի՞նչ ասես որ չանեն։ Մեր Ասրոնց հարսը գել չէր դառե՞լ, հարևանների երեխեքը կերե՞լ. նրան չէ՞ր, որ բռնեցին, գելի մորթին գցեցին թոնիրը, որ քիչ էր մնացել, թե ինքն էլ հետն ընկնի կրակը. բղավում է եղել. «Վա՜յ, էրվեցի, էրվեցի»... Գելի մորթին որ էրվում է, նա հենց իմանում է, թե ինքն էլ հետն է էրվում... Չարերն էլ որ չլին, մի՞թե աստված չի պատժիլ մարդի։ Էլ ի՞նչ ես կարդացել, որ էդքանն էլ չես իմանում։ Նաբուգոդոնոսորը եզը չդառա՞վ. մեր Տրդատը խոզ չդառա՞վ, որ Գրիգոր Լուսավորիչը նորմեկանց մարդ շինեց, բայց մի ականջը նշան թողեց, որ քեզ պես թերահավատները մտիկ տան, իրանց աչքով տեսնեն, որ չասեն սուտ էր...

— Իհարկե՝ սուտ էր։ Տրդատը խոզ չի դառել, բայց գժվել է՝ իր հավատը փոխել, սուտ բաների հավատացել, գնացել ընկել մի քարափի մեջ, որ ճգնվի...

— Հա՜ա՜... Էդ վաղ կասեիր է՞, որ էլ քեզ հետ չխոսեի։ Էնդուր են ասել, թե առաջ շատ կարդացողը կթուրքանա է՞... Դու թուրքից էլ բեթար ես դառել— ո՛չ աչքով տեսածին ես հավատում, ո՛չ ականջով լսածին, ո՛չ ինձ, ո՛չ Այսմավուրքին, էլ քեզ հետ ինչպե՞ս խոսի մարդ։

— Դու ե՞րբ ես մի ուղիղ բան ասել, որ խելքը գլխին մարդը հավատա. որտեղ մի սուտ ես լսել, բոլորն էլ գլուխդ ես հավաքել, կարծում ես թե էլ քեզանից շատ բան գիտցող, քեզանից խելոք մարդ չկա աշխարհքիս երեսին։

Ավետիքի զարմացումը հաղթեց նրա բարկությանը. նա չուզեց հավատալ, որ այդ անակնկալ գնդակը գնդի նրան ձգեց իր խակ որդին, ուստի և շարունակեց.

— Քեզ ի՞նչ ասեմ, դու գժվել ես. դու ինքդ էլ չգիտես, թե ինչ ես ասում, ում հետ ես խոսում։ Թուրքը չավ է ասել. «Էնպես թուրք դառար, որ հորդ խալն էլ չճանաչեցի՞ր»։ Բայց դու էնպես ես թուրքացել, որ ոչ թե հորդ խալը, այլ նույնիսկ հորդ լեռ ճանաչում... Վա՜յ վա՜յ... էդ ո՞ր Ավետարանի մեջ է գրած, որ հոր երեսին էդ տեսակ համարձակ խոսքեր ասեն։ Դե պատասխանիր՝ տեսնեմ գրի սևն ու սպիտակը դու ես ջոկո՞ւմ...

— Դու Ավետարանի հավատում ե՞ս. քեզ պետք է Այսմավուրքից ասեն, կամ Պղնձե քաղաքի հիմար պատմությունից ու հիմար Խիկարի խրատներից, որ դու հավատաս։

— Էդ լա՜վ է, Խիկարին էլ չես հավանում. հանկարծ Սողոմոն իմաստուն չլինի՞ս դառած... Գիտես ի՞նչ կա. խելոք մարդն իր ասելիք խոսքը առաջ մտքումը կդատի, էնպես, ինչպես որ թռչունն իր ձագը կշահեցնի, որ խոսքը բերնիցը դուրս գա թե չէ՝ շահ ձագի նման թռչի, վեր չընկնի՝ տկու ձագի նման՝ մարդի ոտքի տակ ընկնի... Դու էնպես խոսքեր ես ասում, որ մեր տավարած Կյուքին էլ չի ասիլ. սրա՜ն մտիկ տվեք, Խիկարին էլ չի հավանում... Ափսո՜ս, ափսո՜ս կորցրած ժամանակ, մինչև հիմի եթե մեր տանը կացած լիներիր, գոնե հիմի մեկ օրինավոր տավարած կլիներիր. գնա՜, գնա՜ էգուց մեր տավարը պահիր, քեզանից գիտուն մարդ չի գուրս գալ...

— Իհարկե, որ ես էլ քեզ նման սուտ ու մուտ մասալներով խոսեմ, էն ժամանակ ինձ գիտուն կհամարես։ Ասուված քեզ մի ճարտար ու սրախոս լեզու է տվել, բայց սրտումդ մի քիչ սեր, մի քիչ գութ չի դրել։ Դու, ղորթ է, հավ չես մորթում, թե՝ արյուն չեմ ուզում անիլ, բայց միևնույն ժամանակ որդեսպանություն ես անում... Ես հիմա լավ՝ ճանաչեցի քեզ. քո գլուխը ծուռ ու մուռ գաղափարներով է լցվել, էլ ուղիղ մտքի, ուղիղ գաղափարի համար տեղ չի մնացել...

— Եղբայր, որ դու ինձ էդպես ես ճանաչել, գնա՛ ուրեմն իմ տանիցս, էլ ինձ մուտ մի՛ կենալ. վե՛ր կաց, վե՛ր կաց կորիր... Հակառակի պես որտեղից եկավ էլի քաջքերա մեզ արավ գլխիս, մաղուլ մեզ համար հանգարտ նստած էինք...

— Քաջքեր էլ ունի՞ս, ի՞նչ տեսակ զազիր ձեռ էգ քաջքերը...

— Դե՛ հառամզադա, դո՜ւրս, դո՜ւրս իմ տանիցը. գնա կորի, էլ աչքիս չերևաս...

Արությունն էլ ժամանակ չկորցրեց, չսպասեց, որ հայրը նրան մեկ լավ մկրտեր։ Առանց ուշք դարձնելու մոր արտասուքին՝ ձեռքը ձգեց կախ տված զենքերը, որոնց վրա վաղուց աչք էր դրել, ու դուրս փախավ։ Հռիփսիմեի ձայնը լսեցին գեղամեջի մարդիկը և հասան ազատեցին մեր ճգնավոր դառած Ավետիքի ձեռից։ Արությունը չիմացավ այս, նա գնա՜ց, կորա՜վ...

Վերջ Երկրորդ գրքույկի

ԵՐՐՈՐԴ ԳՐՔՈՒՅԿ

ԱՇԽԱՐՀՈՒՆ ԵՎ ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ավետիքը շատ լավ գիտեր այն առածը, թե՝ «Վեմն ապառաժի է հանդիպել», բայց չէր ուզում խոստովանել, որ եթե ինքը վեմ չլիներ, իր որդին էլ ապառաժ չէր լինել։ Մոլեռանդ ծնողները մոլեռանդ էլ զավակներ կունենան, թեկուզ միմյանց հակառակ գաղափարով։

Գեղամիջով հեռանալիս՝ Արությունի առաջը ոչ ոք չկտրեց. չէր էլ կարծում ոչ ոք, որ նա գլուխը վեր կալած՝ գնում է կորչելու, որ ազատվի հոր հալածանքից։ Մի ժամից հետո մայրը ձիավորներ ուղարկեց որդու հետևից, որ ետ դարձնեն, բայց չգտան. նա ճամփից շեղվելով՝ մտել էր անտառն ու անհայտացել։

Արությունը շատ հեռու չգնաց. նա պտտվում էր Լոռու և Շիրակի գյուղերում, ուր մի տեղ վարժապետ էր դառնում, մի այլ տեղ տիրացվություն անում, մի տեղ նախարապանի հետ էր ընկերանում, մի այլ տեղ՝ շոբանի, բայց ոչ մի տեղ մի քանի ամիս չէր մնում, ոչ մի տեղ նրա ոտքը չէր կապվում։ Նա կարծես մի բան էր կորցրել, ման էր գալիս որ գտնի, բայց չէր գտնում. չէր իմանում, որ կորածն ինքն է, ինքը պիտի գտնվեր ումևիցե ձեռքով և լույս աշխարհք հանվեր։ Շատ անգամ սարից սար, հովտից հովիտ անցնելով՝ որսորդություն էր անում և նրանով հոգում իր հագուստն ու կապուստը, թեև նպատակն այդ չէր. նա թափառում էր անգիտակից, ինչպես մի վայրենի։

Այս վայրենի վիճակը զարգացրեց Արությունի ներքին և արտաքին զգացումները, նրա տեսողությունը, լսողությունը, հոտառությունը, բնազդումը, մտառությունը, նկատողությունը, խորհողությունը և երևակայությունը։ Նա զարգացավ և ֆիզիկապես։ Գարնանային և ամառային բացօթյա կյանքի մեջ հով ու զով տեղերում, ծաղկապատ լեռներում, անմահական աղբյուրների ափերում, մութ

անտառներում և ձորերում շարունակ թափառելով՝ Արությունը մի բոլորովին նոր մարմին հագավ, ավելի առողջ ու զորեղ, ավելի հաստ ու կոպիտ, քան թե առաջ էր։ Ո՞վ կարող էր կարծել, որ Արությունը սեր տպիտակից ջոկել գիտե, թե նա երբևիցե Այբեթի մթնաբանության ծանր լուծի տակ ընկած է, թե նա Զամչյանը ծայրեհիծայր անգիր է արել աշըղի խաղի պես։

Չնայած արտաքին կոպտությանը, նա չկորցրեց սրտի դյուրազգացությունն ու քնքշությունը։ Բնավորությամբ երկու սեռի մի խառնուրդ էր ներկայացնում, և այդ երկու իրար հակառակ կողմերը մերթ հաշտվում և օգնում էին միմյանց և մերթ կռվում ու ընկճվում միմյանցից, նայած թե որտեղ, որ կողմն էր ավելի պետք կամ որպիսի տրամադրություն ուներ հոգին։ Բնությունը նրան այնպես էր կազմակերպել, ինչպես դարբինը նրա երկսայրին, խանչալը, որի մի բերանը հաստ էր թողել՝ քար ու քոլ կտրելու համար, մյուս բերանը բարակ՝ փափուկ բաներ ածելու պես թոցնելու համար։ Նա մի գազան էր և միևնույն ժամանակ մի սոխակ. գոռում էր գազանի պես և երգում սոխակի նման։ Պատահմունքը երբեմն այնպես է կրթում մարդու, որպես կարող չէ կրթել ոչ մի տաղանդավոր դաստիարակ. ո՞վ կարող է արհեստական կերպով տալ մեկին այն, ինչ որ միայն բնությունը կարող է տալ, բնությունը, որ գիտե չոր անապատներից մարգարե հարուցանել։ Մտածող միտքը, զգայուն սիրտը միայնության մեջ, բնության գրկում, նրա մեղմ ու ահեղ երևույթների ազդեցության տակ՝ վերանում է մտքով և հափշտակվում մինչև երկինք, հմայվում, կախարդվում է և հոգով ու մարմնով անձնատուր լինում մի աներևույթ զորության։ Այնուհետև գիտակից ոչինչ չի լինում նրանում. նա վարվում է ինչպես մի խենթ, բայց խելքը չկորցրած, այլ վերացրած, թոցրած դեպի վեր, դեպի բարձրը, ինչպես առասպելական Պեգասը Հելիկոնյան լեռների մթնոլորտում։

Արությունը շարունակ մտմտում և մռմռում էր դերվիշի նման։ Խոսակից ընկեր չունենալով, խոսում էր ինքն իր հետ և ի՞նչ օրային ամրոցներ ասես, որ չէր շինում, ինչ ասես որ չէր դառնում «իբր թե»։ Իրապես մի մութ անտառում կամ մի լեռան գագաթի վրա նստած՝ երևակայությամբ նա վայելում էր աշխարհի բոլոր վայելչությունը, բոլոր փառքը, պատիվը, երջանկությունը, ընկնում էր և սարսափելի նեղություններ մեջ, բայց ամեն տեղից դուրս էր գալիս հաղթության դրոշակը ձեռին։ Եվ ինչքա՞ն բարիք էր հասցնում

մարդկությանը, ինչքա՜ն երջանկացնում նրանց և փոխարենը վայելում նրանց գովասանքն ու օրհնությունը։ Դեմոսթենեսի պես ճառեր էր ասում և ատենաբանություն անում։ Քյորօղլու պես երգում էր հաղթական և քաջության երգեր, Քյարամի պես ողբում էր և փնտրում իր Ասլուն։ Երգում էր և անպատրաստից՝ առանց կանգ առնելու, ինչպես շուվաբա, որ կնշանակե ոտանավոր ազատ խոսող։ Այդ ընդունակությունը նրա մեջ նման էր ճարպիկ լարախաղացի և գորեղ ըմբշի ոգևորության։ Այդ ոգևորությունը տեսանելի և շոշափելի է։ Ըմբիշները ուռչում են, նրանց բոլոր երակները լցվում են արյունով. լարախաղացները թեթևանում են, կարծես թեվավորվում են։ Այս միևնույն վիճակի մեջ են ընկնում և աշըղները ոգևորված ժամանակ, մանավանդ իրար հետ բաս մտած ժամանակ։ Արությունը ոգևորվում էր թե՛ ըմբշի, թե՛ լարախաղացի և թե՛ աշըղի նման։ Նա զուրկ չէր առաջինի ուժից, երկրորդի ճարպկությունից և երրորդի ճարտարությունից։ Միայն սաղ չուներ և ոչ ածել գիտեր. հայրը չէր թույլ տվել սովորելու։ Նա շվի էր ածում, որովհետև հեշտ էր ձեռք բերելը. ինքն էր շինում. բայց շատ էր ցանկանում մի սազ էլ ձեռք բերել և իսկական աշըղ դառնալ՝ աշըղությունը բարենորոգելու նպատակով։ Այդ ժամանակ լավ աշըղները շատ մեծ հռչակ և հեղինակություն ունեին ժողովրդի մեջ և մեծ հարգանք ու պատիվ էին վայելում։ Բայց Արությունն ընդդեմ էր նրանց թե՛ հանգահյուսության անճոռնի ձևին, թե՛ թուրքերեն երգերուն և թե՛ մանավանդ նրանց չափից դուրս ստահոդ պատմություններին, որոնցով շարունակ նախապաշարմունքի մեջ էին պահում ժողովրդին։ Դրանք Ավետարանի և Աստվածաշնչի պատմությունները ծաղկացնում էին և պատմում այնպիսի ավելվածներով, որ տերտերների բերանը բաց էր մնում։

Մեկ անգամ լսեց, որ Հայդարբեգ գյուղը մի շատ անվանի աշըղ է եկել, թե նա շատ աշըղների հետ է բաս մտած և սազերը ձեռքներիցը խլած, մտքումը դրավ գնալ նրա հետ բաս մտնել, հուսալով՝ որ անպատճառ կհաղթի և սազը ձեռքիցը կառնի։ «Աբովյանցի ասածը, խանչալիս քարը հո չի վեր ընկնիլ, մի աշըղ էլ ես կդառնամ»,—ասաց Արությունն ինքն իրան։ «Եթե ես կհաղթեմ, սազը ձեռքիցը կառնեմ, իսկ եթե նա կհաղթի, ես իմ հրացանս կտամ իրան, բայց հետո մի թաքուն տեղ առաջը կկտրեմ, համ իմ հրացանս կխլեմ ձեռքիցը՝ համ իր սազը. թող գնա՝ որտեղ իրանը կասի, էնտեղ էլ իմն ասի։ Դրանց օյին գալը մեղք չէ. բաշի նման

դոնեդուռ ման են գալիս, ժողովրդին սուտ-սուտ բաներ հավատացնում. հետո որ ուղիղ մի բան ես ասում, էլ չեն հավատում. ասում են՝ գիժ ես։ Դե որ գիժ եմ, գիժ եմ, ես էլ գժություն կանեմ»...

Այսպես մտածելուց հետո Արությունը ճանապարհ ընկավ դեպի Հայդարբեգ գյուղը։ Արժանի է նկարագրության նրա այդ ժամանակվա հագուստը։ Նա ուներ վայրի վարազի հաստ կաշվից տրեխներ, արխալուղի փեշերքը հավաքած էր բրդե շալվարի մեջը, օսի չուխա ուներ հագին՝ փեշերքը վեր կապած, մի մեծ՝ թարաքյամի փափախ ուներ գլխին՝ ճակատի կողմը ներս ծալած։ Վայրի այծի կաշվից մի պարկ ուներ շալակին՝ մեջը մի կտոր սև հաց և մի կտոր էլ թել պահիր։ Ատրճանակը մեջքի կողմից գոտիկը խրած, խանչալը ձախ կողմից կախած, հրացանն ուսը գցած և մի հաստագլուխ թավարազին անունով մահակ ձեռքն առած։ Արությունի այսպիսի տեսքը՝ նրա երկար հասակի, վառվռուն և իսկոր աչքերի, արհամարհող հայացքի և հանդուգն բնավորության հետ միասին՝ շատերին կասկածանքի տեղիք էին տալիս, թե նա գուցե մի փախստական ավազակ է։ Այդ կասկածն ավելանում էր, երբ Արությունին հարց ու փորձ անելիս, նա սուտ չէր ուզում հնարել, ուղիղն էլ չէր հայտնում, թե՝ ով է կամ ով չէ։ Արությունն այդ չէր նկատում և ոչ մտքովն անց կացնում, թե կարող են այդ տեսակ կարծիք ունենալ իր վրա, եթե ոչ՝ նա կարող էր նրանց կասկածը փարատել։ Նա ավազակության ոչ հակում ուներ և ոչ ընդունակություն. ավելի շուտ քաղցած կմեռներ կամ ինքնասպանություն կգործեր, քան թե գողություն կաներ, որովհետև նա իր մանկության օրից մինչև այն օրը մի ամենաչնչին բան գողանալու կամ թաքուն վերցնելու միտք անգամ հղացած չէր։ Նրանից կասկածում էին ավելի շիրակեցիք, որոնք մեղք էին համարում զենք կրելը, մանավանդ նրան բանեցնելը, և սրա համար էլ շատ հաճախ երկու երիտասարդ նրանցից մինչև հիսուն հոգու իրանց թրերի առաջն էին անում, ահագին կարավանի բոլոր եզները քշում անց կացնում Արփաչայը և անհետացնում։

— Հա՜խն է,— ասում էր Արությունը,— ինչո՞ւ ձեզ էլ չէին կոտորում այդ անպիտանները...

— Ջանըմ, ի՞նչ կըսե,— բացականչում էին շիրակցիք։

— Չոռ ու ցավ կըսեմ... անամոթ հիմարներ, ի՞նչ երևում դուք ձեր օղլուշաղին. ինչո՞ւ գետինը չեք մտնում։ Մեր գե-

ղի երեխան անգամ եթե կողոպտվի, նա կամաչի տուն գնալ, հորն ու մոր աչքին երևալ. դուք՝ ահագին զուփի տղամարդիկդ, ինչպե՞ս չեք ամաչում կողոպտվել երկու թուրք գյադայի ձեռքով...

Արությունը հեռացավ այդ տեղից և գնաց Լոռի, ուր և իմացավ համբավավոր աշըղի գալը։ Նա գնաց Հայդարբեկ և հանդիպեց աշըղին այն ժամանակ, երբ նա ուզում էր մի մարաքյա սարքել մի քանի աշակերտների հետ։ Մարաքյայի նյութը պիտի լիներ Դուդի դուշի հեքիաթը։ Գյուղի քեթխուդաները, քահանան և բոլոր մեծ ու փոքրը հավաքվել էին քյոխվայի տան սրահումը և նստել ծալապատիկ՝ մեծերը թաղիքների և մյուսները՝ գետնի վրա։ Արությունը մոտեցավ աշըղին համարձակ և գլուխ տալով՝ ասաց.

— Է՛շխ օլա, ուստա (աշխուժություն լինի կամ կցանկամ)։

— Էշխն չոխ օլա, սաֆա գյալդն,— պատասխանեց աշըղը (էշխը շատ լինի, բարի եկար)։

Սրանք սկսեցին խոսել թուրքերեն, ես կդնեմ այստեղ նրանց ասածների և երգածների թարգմանությունը։

Արություն։ Պատվելի՛ վարպետ, չի՞ կարելի արդյոք, որ մի բոպե գոտիկ գոտկի զարկենք, մարիփաթ մարիփաթի (այսինքն՝ փորձենք մեր ուժն ու շնորհքը, բա՛ս մտնելով)։ Ես լսել եմ քո համբավավոր անունը և եկել եմ, որ քեզ հետ բա՛ս մտնեմ. հույս ունիմ, որ չես հրաժարվիլ։

Աշըղ. Գլխի՛ս վրա, աչքի՛ս վրա, մեծ ուրախությամբ, շատ սիրով, շատ սիրուն, շատ բարի... Բայց իմ սիրելի, իմ աչքիս լույս, ես տեսնում եմ, որ դու աշըղ չես, դու սազ չունիս կամ սազդ խըլել ես տվել, ինձ մոտ առանց սազի եկել։ Ոչ, այդպես չեն լինում ինձ մոտ եկողները. նրանք սազով են գալիս և առանց սազի գնում։ Սիրելիս, դու մոլորված ես, ջահել ես, քեզ խաբել են։ Իմ գիրն այնպես գիր չէ, որ ամեն մարդ կարդա. իմ ջուրն այնպես ջուր չէ, որ ամեն մարդ խմի. ես այնքան խոր եմ, ինչքան ծովի հատակը, այնքան բարձր, ինչքան Մասիսի գագաթը։ Ի՞նչ կասես, սա՛ն յախշի (դու լավը, այսինքն՝ ինձանից լավը, եթե կարող ես դու ասա)։

Արություն (մտքումը). Այս ի՞նչ ճարտար մարդ է. սրան կարելի չէ հաղթել։ Է՛հ, ի՞նչ եմ հոգում, ինչ կլինի՝ կլինի. ձու հո չեմ, որ կոտրվիմ։ (Բարձր) Գիտե՞ս ինչ կա, վարպետ. դու ճշմարիտ ես ասում, ես աշըղ չեմ. ուզում եմ աշըղ դառնամ, բայց սազ չունիմ։ Քո սազը իմ աչքումս մտել է։ Արի բաս մտնենք, հիմի ինչ կլինի՝ կլինի։ Եթե դու կհաղթես, ես իմ հրացանը քեզ կտամ, որ «Ղրիմ-

Բախչասարայի» է, երկու հարյուր մանեթով է առնված։ Թող վկա լինին էս քեթխուդաները։ Բայց եթե կհաղթեմ, որ աստուծով հույս ունիմ, այն ժամանակ, ինչպես աշըղների օրենքն է, դու քո սազը մեծահոգությամբ ինձ կտաս։

Աշըղ. Շատ լավ, հույժ բարի։ Բայց դու աշըղների կանոնը գիտե՞ս. դու գիտե՞ս, որ սկզբի ասելու իրավունքն իմն է, որովհետև դո՛ւ ես եկել ինձ մոտ, դու ես ուզում սազը ձեռքիցս առնել, որ երազումդ էլ չես տեսնիլ։

Արություն. Գիտեմ, գիտեմ, բոլոր կանոնները գիտեմ. կարող ես սկսել։

— Չէ՛, աշըղիս վախեցրի,— ասաց Արությունն իր մտքումը։

Հարցրին մեկ մեկի անուն, աշըղն ասաց, որ իր աշըղական անունը Շոհլայի է։ Արությունն էլ իր անունը փոխեց, ասելով՝ իմ անունն էլ Քերոբե է։ Արությունն իր մահակը սազի ձեռով բռնեց և ծունկ չոքեց աշըղի դիմացը։ Սկսեցին առաջ ու առաջ խաղով պարծենալ։ Բայց որովհետև սկզբի ասելու իրավունքն աշըղինն էր, նա առաջ սկսեց. Արությունը պարտավոր էր հետևել նրա խաղի «ղաֆիայինն», որ նշանակում է դուռն։ Աշըղական խաղի բոլոր տողերն մեկ դռնով պետք է դուրս գան, այսինքն՝ մի հանգի վերջավորությունով։ Արությունն ևս պետք է նույն հանգի վերջ տար իր տողերին, ինչ հանգի որ վերջացներ աշըղը, եթե ամ՝ ամ, եթե ան՝ ան, եթե ազ՝ ազ, և այլն։

Շոհլայի

Ընդունիր ողջույնը պատանի,
Համարձակ քաջի պես դուրս արի մեյդան,
Թող չելնե ասպարեզ, ով շնորհք չունի,
Աշըղ անուն տալը նրան չէ արժան։

Քերոբե

Կընդունեմ ողջույնդ, պատվելի վարպետ
Եվ կըտամ խոսքերիդ մեկ-մեկ պատասխան,
Չեմ մնալ քո առջև բթամիտ, անգետ.
Համարձակ կանգնող եմ քո դեմ հանդիման։

Շոնլայի

Կանչել եմ անունը Մշու Սուլթանի,
Որ մարդին նամարդին նա ժոհդաջ չանի։
Երևի քաջ լինել դու չես արժանի,
Քեզնից պետք է խլել քո զենք՝ հրացան։

Քերոբե

Քա՞ջ եմ արդյոք թե ոչ, այդ շուտ կտեսնես
Երբ ինքդդ քո զենքից՝ սազից կըզրկվես,
Ջուր ասած խոսքերդդ կրկին ետ կառնես,
Կասես՝ մեղա՜ եմ քեզ, ի՜նչ արիր, յաման։

Շոնլայի

Իմ ոսկեթել սազին շատերն են հավեել,
Շատերն են քեզ նման խլել ցանկացել,
Բայց իրա՜նք են իրանց սազիցը զրկվել,
Եվ սարսափած փախել մինչև Հնդստան։

Քերոբե

Ես փախչող պտուղ չեմ, բնավ չըկարծես,
Լավ կանես այդ հուսով քեզի չխաբես,
Գիտեմ, որ փախչելու ինքդ սովոր չես,
Բայց հիմա կըփախչես մինչև Ջինաստան։

Շոնլայի

Դու որ կաս, ըմբուլ ես, ես որ կամ, քար եմ,
Կարծում ես, թե ես էլ քեզ պես անճա՞ր եմ.
Սպասիր, քո առջև մի թակարդ լարեմ,
Որ քու ընկնիս մեջը ճնճղուկի նման։

Քերոբե

Ես թակարդ լարող եմ, թակարդ ընկնող չեմ,
Ինձ ի՞նչ պետք է ասես, որ ես չըզանեմ,
Բայց քո վերադ այնպես մի քար կշռնեմ,
Որ հենց մնաս տակին այժմ և հավիտյան։

Այստեղ քեթխուդաները խնդրում են, որ վերջ տան պարծենալուն և իրանց ինքնագովությանը, ասելով՝

— Դրան վերջ չկա. դու կասես, նա կասի, մինչև որ պրծնեք, աստվածանից իրեք խնձոր վեր կընկնի, որ ասենք՝ մեկն ասողին, մեկը՝ լսողին։ Շուտ արեք, թե բան ունիք ասելու, ասացեք, տեսնենք ո՞րդ եք հաղթվում, որդ՝ չէ։

Շոնլայի

Դուք շատ եք վազում, թող լինի այդպես,
Սրա պես պարծեցողին չեմ անիլ անտես.
Աշըղ Շոհլային եմ, գիտուն, սիրատես,
Կյանքումս չեմ եղել ցածրոգի, անբան...

Քերոբե

Քո բոլոր գիտությունդ ինձ վաղուց է հայտ,
Մի՛ նայիր, որ սազի տեղ ձեռքումս է փայտ.
Անբախտ Քերոբեն եմ, աշըղ եմ անհայտ,
Ո՞հ թե այսպես մնամ մինչև օրն իմ մահվան...

Ինքնագովությանը, ըստ սովորության, հետևեց հարց ու պատասխանը, որով պիտի երևեր հաղթողն ու հաղթվողը։

Շոնլայի

Լսի՛ր, թե գիտուն ես, ո՛վ քաջ ձեռացող,
Ձյուն ո՞վ էր, որ աղբյուր հանեց ոսկորից.
Այն ի՞նչ պոզավոր էր, որ երեսին ուներ քող.
Ո՞վ է ծեվել երկու ականջամ մոր փորից։

Քերոբե

Ես քո աստծներին կամ պատրաստ լսող,
Սամսոնն էր, որ աղբյուր հանեց ոսկորից,
Պոզավոր Մովսեսն էր՝ որ երեսին ուներ քող,
Հոնան ծնվեց երկու անգամ փորերից։

Շոհլայի

Ի՞նչ ծառ է, որ անհող, անջուր է բսնում,
Առանց տերևների ճղներ է գցում.
Ի՞նչ բանն է սուր, քան թուր սրտի մեջ ցցվում.
Այն ի՞նչ արարած է որ ծնվեց հորից։

Քերոբե

Պախրի եղջյուրները անհող, անջուր են բսնում,
Առանց տերևների ճղներ են գցում,
Դառը խոսքն է սրտում սրի պես ցցվում,
Քո կարծիքով Եվան ծնվել է հորից։

Շոհլայի

Այն ո՞վ էր որ սայլով երկինք վերացավ.
Սողոմոն իմաստունը ի՞նչ բան չիմացավ.
Կարմիր ծովը քանի՞ տեղից պատռեցավ,
Շոհլային եմ՝ շատ լավ տեղյակ բոլորից։

Քերոբե

Եղիան էր՝ կառքով երկինք վերացավ.
Սողոմոնն իմ պեսի միտքը չիմացավ.
Կարմիր ծովում տասներկու տեղ բացվեցավ.
Քերոբեն եմ, շատ ու շատ գոհ այս օրից...

Նորաթն ընկավ Արությունին, որ այժմ նա հարցներ և աշըղը

պատասխաներ. նա էլ սկսեց, բայց ոչ թուրքերեն, այլ հայերեն, որ նույնությամբ դնում ենք այստեղ.

Ես քո սուտ հարցերը մեկ-մեկ լուծեցի.
Չեմ ուզում հետևել քո մոլորության.
Հենց հիմի մի թեթև բան մտածեցի՝
Ո՞վ է հիմքը դրել հայոց ազգության։

Շոհլային մնաց լռված, սփրթնած, չիմացավ՝ ի՞նչ էր պատասխանել, բայց քեթխուդաներն ստիպեցին Արությունին, որ նա ավարտե իր խաղը. նա էլ շարունակեց.

Եթե դու գովեիր հայոց քաջերին,
Մի համբույր կըտայի սաղիդ սիմերին,
Բայց դու հավատում ես շինծու բաներին,
Չըգիտես ո՞վքեր են Արամ ու Տիգրան։

Քեզ սուրբ Կարապետը շնորհք է տվել,
Պարզամիտ ամբոխին սուտ բաներ ասել.
Դու հայերեն անգամ չըգիտես երգել,
Ո՞րտեղից կիմանաս ո՞վ էր Գայլ Վահան։

Ես խեղճ Քերոբեն եմ՝ սարևսար ընկած,
Մնապաշտ հորիցս զրկված, հալածված.
Թե դու էլ լինեիր ինձ չափ կարդացած,
Կերգեիր անդադար Հայ ու Հայաստան...

— Էյվալլա՜,— ասաց աշըղը, սազը դնելով Արությունի առջևը։ Արությունը սաստիկ ուրախությունից չիմացավ ինչ էր ասելու՝ արդյոք Քյոռօղլի՞, թե՞ մի ազգային երգ. հանկարծ միտն ընկավ իր սովորական բայաթին, որ ամեն թոպեում երգում էր, և սկսեց երգել.

Աշըղ ըմ, չա՛լ քչեղակ,
Մըհանի կանչիմ քու տեղակ,
Ախճիգ չըմ թա հըմանչիմ,
Տղա ըմ ծիլ-ծիլ կը կանչիմ...

Այս բայաթին մի շատ հին հանելուկ է, նայենու բարբառով ասված. նշանակում է գրած բան, գիրք, նամակ։ Արութիւնն այս բայաթին ասեց ու սաղը վեր առավ գնաց։

— Էս ո՞վ էր, տղեք ջա՛ն,— բացականչեց քեֆխուդաներից մեկը զարմանալով, երբ որ Արութիւնն արդեն հեռացել էր բավականին, ապշություն բերելով բոլոր հանդիսականների վրա։— Էս ո՞վ էր։

— Ճշմարիտ, էս ի՞նչ զարմանք էր...

— Էս ի՞նչ հրաշք էր...

— Տեսնես երկնքի՞ցն եկավ, թե՞ գետնի տակիցը...

— Յարաբ սատանա՞ էր, թե հրեշտակ...

— Դա հողեղեն չէ՞ր...— խոսեց վերջապես աշրեղը, երբ որ ամենքն էլ փոխ առ փոխ արտահայտեցին իրանց զարմացումը։— Հողեղեն մարդը չէր կարող իմ ձեռքիցը սաղ խլել։ Ես գիտեմ որ...

— Ուստեն ճշմարիտ է ասում, տղեք ջան,— միջամտեց տեր Կարապետը,— բա թամաշա չարի՞ք նրա վառված էրեսին, կասեցնայիր Ստեփաննոս Նախավրկայի էրեսն ըլի.— Անումն ինչ էր նրա՞...

— Քերոբե՞...

— Որ ասում ե՞մ... Հավատացեք, նա հրեշտակ էր, մարդի շոր հագած, էն էլ թուրքի. ախըր սուրբերը չիմ էլ թուրքի շորով են էրևում...

— Աստված դրա ոտն ուղուրով անի մեր գեղի համար. տեսնես՝ ի՞նչ կնշանակի... քոռոնգատի՝ մեր գրբացն էլ ըստի չի, թե մի գրին մտիկ էր տվել, տեսնեինք ինչ ա ասում...

— Գրբացն ի՞նչ ա իմանում, թե հրեշտակի գալն ի՞նչ կնշանակի,— ասեց տեր հայրը.— բայց ես տեսնում եմ, որ հիմի աստծու աչքը քաղցրացել ա մեզ վրա, մեր ազգի վրա։ Բա չլսեցի՞ք, որ ասեց։

Եթե գու գուլեիր հայոց քաջերին,
Մի համբույր կտայի սաղիդ սիմերին...

Մեր Գեորգն ու Բաղդասարը հիմի Թիֆլիս են, ընդհանց գրեր են ուղարկում, որ ես կարդամ, դուք անկաչ դնեք, բայց, մեղքս չեմ թաքցնիլ, ալարս էկել ա, թե կարդամ։ Գրում են, թե՝ «Ժողովրդիդ քարոզի...», էլ չեն գիտում թե ժողովրդի գլուխն էնքան ա հաստացել, որ մամռակալել ա։ Էդ Քերոբեն՝ ո՞վ գիտե՝ հիմի նրա համար էկավ ուստի սաղը խլեց, որ ինձ գգալացնի. մինս բերի երեխոց գրածը, թե չէ՝ մի օր էլ կգա իմ փիլոնը կխլի... Ուստա, աստուծով մխիթարվես. լավ է, շատ մի նեղացնիլ սիրտդ, աստված ողորմած է, մի նոր սաղ կառնենք քեզ համար. օրհնյալ լինիս, դու էլ այսուհետև հայերեար ասա, ինչ որ ասում ես... Հայոց լեզուն Ադամի լեզուն ա, ամեն լեզվից հարուստ, ամեն լեզվից քաղցր։ Էս սահաթը մեր Նարեկի նման գիրք ոչ մի ազգ չունի, չունքի ուրիշի լեզուն աղոթք անելու համար հարմար չի գալի. բայց հայոց լեզուն էնպես լեզու ա, որ ամեն բանի էլ հարմար ա գալի. կուզես աղոթք արա, կուզես անրծի՛, կուզես գովի, կուզես փտնի. էլ ի՞նչ ես ուզում... Ուստա, էն ի՞նչ անուններ էր տալիս Քերոբեն. բա դու ասում ես՝ ոչ մի վարդապետ, ոչ մի եպիսկոպոս չի կարող ինձ չափ բան գիտենալ. բա ինչի՞ չկարացիր պատասխան տալ...

— Ես որդիանց գիդենամ,— պատասխանեց աշրեղը,— բթաբից սավահի, մենք ուրիշ գիրք չենք ընդունում։ Նահլաթլամա (նզովք) է դրած մեր հին ուստաներից, ես ի՞նչ մեղավոր եմ։ Այբբենի տեղ էլ մեզ ալիֆ բեյ են սովորեցնում, որ ալիֆլամա, զաֆուլլամա, զինշիլլամա խաղերի միտքն ու զորությունը հասկանանք, իմանանք. հիմի որ ես ձեզ ասեմ— «Բեյի, զային, սեյ, օխեյիֆ տըր քյաֆ, թեյինան բե՛յ», դուք չեք հասկանալ, բայց ամեն աշրեղ էլ դաս է առել, գիտե, որ «Բեյի, զային սեյ»՝ կնշանակե՝ Պողոս. քյաֆ, թեյինան բեյ՝ քթաբ (Պողոսը կարդացել է ս. գիրքը)։ Եթե ասեմ՝

«Քի՞մ սախլադի ջանդա զափ, վով, բեյի դալ» (ո՞վ պահեց իր մարմնումը որդ).

Զափ, վով, բեյի, դալ՝ կնշանակե զուրդ, որդ, ճիճու։ Էս Հոբ Երանելու համար է ասած, չունքի նա իրա ջանումը որդ պահեց. աբրեշումի ճիճուն էլ նրա ջանիցը բհամ էկավ, նրանից առաջ չըկար... Էսպես խաղերը՝ զորդ ա՝ դժար խաղեր են, բայց նահլաթլամա չեն, քըթաբլամա են, չունքի Հոբ Երանելին քըթաբի մեջն ա։ Բայց որ հիմի աստված ուրիշ թավուք ա կամենում, «Կամք տյառն օրհնյալ եղիցի», ես էլ իմ աղին (ս. Կարապետին) կխնդրեմ, որ ինձ ուրիշ թավուք շնորհք տա։ Դե մեր տերտերն էլ դու ես. դու մեր հայոց քաջերի պատմությունն արա, ես էլ նրանց գովեմ, բարձրացնեմ...

— Ես աշրեղ հո չե՞մ, որ քեզ խաղ սովորեցնեմ,— պատասխանեց տերտերը, որպես թե լավ չհասկանալով աշրեղի պահանջը։

— Քեզ ո՞վ է ասում ինձ խաղ սովորցրու, խաղ ես ուզում. ես

կսովորեցնեմ քեզ։ Դու ինչ որ ամեն օր Այսմավուրքը կարդում ես, մենք ականջ ենք դնում, էնպես էլ հայոց ազգի քաջ տղամարդոց պատմությունը կարդա, մենք ականջ դնենք։ Ա՛յ, ինչ եմ ասում. ես քեզանից խաղ չեմ ուզում։

— «Կարդա՛»... «Ականջ դնենք»... Ես ո՞րդիանց կարդամ, ինձ կարդացրել ե՞ն, որ ես կարդամ...

— Դե ասա՝ չեմ գիտում՝ էլ ի՞նչ ես կմկմացնում. դու որ տերտեր ես, չես գիդում, ես ո՞րդիանց գիտենամ. էլ ո՞ւր ես վրաս ծիծաղում...

Թողեք տերտերին ու աշըղին, որ իրանց վեճը շարունակեն, մինչև մի խելքը գլխին մարդ դուրս կգա և կորոշե, թե նրանցից ո՞րն է մեղավոր, և որն՝ արդար, մենք գնանք Արությունի մոտ։

Արությունը հեռացավ գնաց, մտավ մի քարայր և սկսեց փորձել, որ տեսնե կարո՞ղ է ածել սազը, թե ոչ։ Սպասեցեք, շվշվացնում է աշըղների եղանակներից և ճնկճնկացնում սազը, բայց չի կարողանում ներդաշնակություն ձգել բոլոր թելերի մեջ, չի իմանում, թե մատը ո՞ր փարդի վրա պետք է դնե։

— Չէ՛, չի լինում։ Յա՛ սուրբ Կարապետ, չանգլի սուլթան, չանգլի փիր... երգեմ, երգեմ, երգելով լավ դուրս կգա...

Թորդանեն Եփրատ բերին, Մշու սարին հավանեցար,— Բանիվ չորու ծնկովն մեզ զարմանք հրաշք ցուցար...

— Չէ՛, չի ըլում, սուրբ Կարապետը չի օգնում... Ուրիշ երգ երգեմ...

Քրիստոնյա եք, անգաջ կալեք, լսեցեք,
Լավ իմացեք պատվիրանն աստծու,
Մաթոս, Մարկոս, Ղուկաս, Ուհան գրեցին
Չորս կլոխ Ավետարանն աստծու։

— Չի լինում, չէ... վերի սիմերը շատ են թուլացել, պետք է սրանց ոտներին մի քիչ հուփ տալ, որ հաստ ձայն չհանեն... Ահա՛... կտրվեց սիմը. հիմի ես ի՞նչպես չինեմ։ Բայց ի՞նչ վնաս ունի, մեկ սիմն էլ պակաս լինի թող. մյուսը փորձենք։ Օհո՛... այս էլ կտրվեց. բայց էս ոտի վրա դեռ շատ կա փաթաթված. տեսնեմ հասնո՞ւմ է... Ափսո՛ս, կարճ է։ Է՛հ, մի նոր ցավ գտա ինձ համար. մինչև ես սրա հետ կհաշտվիմ, աչքումս մաղ կբռնի։ Մեկ ասող լինի, թե սազը քո ինչի՞ն էր պետք, որ վերցրիր բերիր, խեղճ աշըղին էլ առանց սազի թողեցիր։ Հաղթեցիր բավական է, ի՞նչ կանեիր սազը։ Ճշմարիտ, ի՞նչ պետք է անեմ ես էս սազը. տանեմ էլ ետ իրան տամ, ասեմ՝ ա՛ռ, վարպետ ջան, քո սազը ինձ պետք չէ... բայց չէ... ետ գնալը լավ չէ, ով գիտե ինչ կարող է պատահել։ Ես գիտեմ ինչ կանեմ այս սազը։ Ես սրան կտանեմ Ջալալօղլի կծախեմ, ստացած փողովս գնդակ ու վառոդ կառնեմ... Իսկ հիմա կերթամ էս մոտիկ փռանգների գեղը։ Այս խեղճ կաթոլիկները չեն իմանում, որ իրանք հայ են, դրանց պետք է հայացնել։ Հենց որ հասկացրիր, թե ազգ ասածդ ինչ բան է, այնուհետև ի՞նչ պատճառ ունի չմիանալու մեզ հետ։ Հիմարները իրանց տունը քանդում են, որ ուրիշ ազգերի տները շինեն... Վեր կենամ գնամ... Այսօր նշանավոր օր է ինձ համար... Հաղթե՞լ. հեշտ է ասելը։ Աշըղին հաղթելը մի պատուհաս է, ամեն մարդի բան չէ։ Բայց ինչ կլիներ իմ ճարը, եթե դժվար զափիով էր սկսել. ինքն առաջուց պատրաստած կլիներ, ես կմնայի կապ ընկած։ Մեկ դրանց ասող լինի, թե՝ ով հիմարներ, ոտանավոր եք ուզում՝ գրեցեք, երգ եք ուզում՝ շինեցեք, էլ զափի՞ս որն է։ Մարդ իմանա, ո՞ր ժամանակից է այդ ձևը մտել մեր մեջ կամ արդյոք հայի՞ հնարած է, թե հետևողություն է ուրիշ ազգի։ Իհարկե սա մի հետևողություն կլինի, հայն այնպես հիմար բան չէր հնարիլ, սա արաբացու բան է, էնդուր էլ աշըղների հին խաղերը բոլորն է արաբերեն են... Մեկ ինձ ասող լինի, թե դու ի՞նչ տեղից գիտես, ինչի՞ ես խելքիդ զոռ տալիս, կարելի է թե փարսերենն էլ է այդպես... մի՞թե քիչ խաղեր կան փարսերեն... Չէ՛, այս ոչ ոք չի իմանալ, եթե ոչ՝ պարոն Հայվերդյանն էլ կիմանար, որ այս մասին ոչ մի խոսք չի ասել և դիտությամբ թե անգիտությամբ լռել է, եթե ոչ՝ ինչ կնշանակե՝

Սայաթ-Նովա գերեզմանն Հինդ, Հաբաշ, Արաբ մի անի։

Այդ միևնույն է, եթե ասեր՝

Սայաթ-Նովա գերեզմանն հուն, զրկեռ, ունաբ մի անի, կամ՝ «ճոն, դերձակ, դասաբ մի անի»...

Ով որ աշըղի զափիի նշանակությունը չի իմանում, Սայաթ-Նովի սև արաբը նրա աչքին չի երևում կամ կարծում է, թե բանաստեղծը դրանով մի մեծ միտք է ուզեցել հայտնել, մինչդեռ նրան՝ զափիի համար պետք է եղել աբ վերջավորությունով մի բառ, նա էլ դրել է «Արաբ», հինդն ու հաբաշն էլ առաջից շարել, որ Արաբը մենակ չմնա. մե՛ծ մե՛ծ բառեր, մեջը դատարկ... աշխարհումս

մենակ աշխարհները չեն մոլորված, հենց ամենքն էլ մոլորված են։ Բայց ի՞նչ կնշանակե մոլորված, միայն ես եմ մոլորված, որ չգիտեմ, թե ինչ եմ անում, ինչի՞ եմ մահ գալիս ու մինչև ե՞րբ պիտի այսպես աննպատակ թափառեմ. չլնի՞ թե ճշմարիտ՝ ես խելագարված եմ, բայց ինքս չեմ զգում, չեմ հասկանում... գնամ, գնամ այդ գյուղը, կարելի է թե ինձ այնտեղ վարժապետ են շինում և ի՞նչ զարմանալու բան կլինի։ Եթե կորցրած էշեր պտրող Սավուղը կարող էր թագավոր դառնալ, ես ինչո՞ւ վարժապետ չեմ կարող դառնալ, որ կորած էշեր չեմ պտրում, այլ խելքը գլխին մարդիկ։ Գնամ, գնամ, աստված ողորմած է, և ողորմած է չափից դուրս, անսահման ողորմած է։ Նրա համար միևնույն է՝ խելոք է մարդը թե հիմար, կամ մարդ է թե կատու։ Նա իր ողորմությունը հավասարապես տարածում է բոլոր արարածների վրա։ Եթե այդպես չլիներ, էլ քար քարի վրա չէր կանգնիլ։ Բայց ես՝ մոլորվածս, ուզում եմ որ ինձ վրա նա մի առանձին ուշադրություն դարձնի. չէ՞ որ հարյուր ոչխարի միջից տերը միայն մոլորվածին է փընտրում... Բայց այս ասա, թե ես ոչխար հո չե՞մ։ Եթե այդքանը խելքս կտրում է, կնշանակե աստված իր անելիքն արդեն արել է...

Առանձնությունը և՛ վայրենացնում է մարդուն և՛ փիլիսոփա է շինում։ Արութիունը չէր վայրենանում, նա կարող էր մի նորատեսակ փիլիսոփա դառնալ, եթե թույլ տար նրան իր տաքարյուն խառնվածքը։ Նա չափազանց դյուրագրգիռ, չափազանց դյուրազգաց էր փիլիսոփայության համար։ Նրա բոլոր դատողության մեջ փիլիսոփայության հոտ ու նշան չկար։ Նրա բոլոր ուղիղ կամ խելոք ասած բաները մի սրտի փղձուկ էին, կիրք դարձած զգացողության արտահայտություն։ Այդպես էր կազմակերպված նրա անհատականությունը, նրա հոգու առանձնահատկությունը։

Արութիունը սաղը թաքցրեց քարայրի մեջ, իսկ ինքը գնաց մոտակա փռանգների գյուղը՝ Շարշաբետ։ Գեղամիջովն անցնելիս՝ մի մարդ տեսավ, որ տան կտուրի վրա կանգնած՝ ծխում էր երկայնակոթ ծխամորճը (չիբուխ)։ Արութիունը նրան մի քանի անգամ տեսել էր իրանց տանն իջևանած և գիտեր, որ նա Բարսեղ քյահյան էր, մի պատվական և հյուրասեր մարդ, որ քառասուն տարի շարունակ քյահյայություն էր արել։ Արութիունը մոտեցավ նրան, և Բարսեղ քյահյան իսկույն ճանաչեց նրան։ Նա չէր իմանում, որ Արութիունն իրանց տանից խռոված էր, նստեցրեց մոտը և հարցրեց՝ թե «ինչպես էր Ավետիք եղբոր քեֆն ու հալը», և երբ խոսք ընկավ Արութիունի մասին, նա պատասխանեց, որ այդ մասին հետո կխոսի նրա հետ։

Արդեն երեկոյան ժամասացության ժամանակն էր։ Գյուղի ծխատեր քահանան դուրս եկավ տանից, երկայնակոթ չիբուխից մի թանձր ծուխ բարձրացնելով՝ նայեց արևագալին, տեսավ որ դեռ կարելի էր մի փոքր սպասել, քայլերն ուղղեց դեպի Բարսեղ քյահյան։ Տեր հայրը դեռ շատ հեռու էր, որ Բարսեղ քյահյան ոտքի կանգնեց, մի փոքր ուշ՝ նրան հետևեց և Արութիունը։

Տեր հայրը նստեց նրանց մոտ մի քարի վրա և Արութիունին թուրք հովիվ, ուրեմն և գող կարծելով, ասաց Բարսեղ քյահյային.

— Զո Փարսեղ, ասիգ ո՞ւրդից է, Քափանագու չորան է, հե՞... Զո, ադամ, մեղի գիան մը չենե՞...

— Չէ՛, տեր խայր, խայ է, խաչնվա՛ է...

— Խոզարած է, հե՞.

— Ի՞նչ գրսես գը, աղեկ կարդալ գիտա, մերին Ավետիք ախպոր մանչն է...

— Ըղվո՞ւրտ գրսես գը, ձո մանչի՛կս, ո՞ւր կերթաս գը...

— Ծս այստեղ եմ եկել, տեր հայր, ուրիշ տեղ չեմ գնալու։ Ես լսել եմ, որ դուք ուզում եք ուսումնարան բանալ ձեր գյուղումը, բայց վարժապետ չունիք. ես կարող եմ վարժապետ լինել, եթե կկամենաք և կընդունեք։

— Ադանգ իշտե՞... էղնելու պան մը չրսի՞ր...

— Ինչո՞ւ համար։

— Քուդին միտքն ինդո՞ր է, դու խայ ես, մենք գաթոլիգ, ադիկ ի՞նչ ըսել է. «էգուր քըզի խայ ընեմ» դեյի ըսել չէ՞ մի... Ֆիռանգին ու խայուն մեջ միապանութեն կեղնի՞ հեչ։

— Ինչպես թե՝ «էգուր խայ ընեմ քզի»... միթե դուք հայ չե՞ք, նո՞ր պիտի հայացնեմ ես ձեզ. դուք որ ձեր անունը փռանկ եք դրել, հենց իմանում եք թե փռանգուզ եք դառե՞լ, ո՞ր փռանգուզը կհիմարանա՝ իր ազգությունը չճանաչել և իր ազգային կրոնը մի օտար կրոնի հողաթափ շինել։ Վերջապես ես կրոնի վարժապետ չեմ, ձեր կրոնը դուք ինքներդ էլ կարող եք սովրեցնել, բայց եթե դուք ձեր ազգությունը չեք ուրանալ, ազգուրաց չեք լինիլ, ես կսովորեցնեմ ձեր որդոցը հայոց ազգի պատմությունը։ Գիտություն էլ, որքան ես ունիմ, բոլորն էլ կհաղորդեմ նրանց դյուրին ոճով. վերջապես ուսում կտամ, գրել կարդալ կսովորեցնեմ...

— Խայոց բատմուտեն որի՞ն գրսես գը. խին գռաբաշտներու խմա՞ր գրսես գը։

— Այո՛, հին կռապաշտների, բայց որոնք ավելի առաքինի, ավելի հայրենասեր և ազնիվ մարդիկ են եղել, քան թե այժմյան հայերից շատերը, որոնք թեպետ կռապաշտ չեն, բայց պապապաշտ են, որ կռապաշտությունից էլ ստոր բան է։ Վերջապես հին հայերը հո միշտ կռապաշտ չեն եղել։ Մեր Աբգար թագավորի ժամանակից սկսած հայերը խաչապաշտ դարձան Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ և վերջը սուրբ Գրիգոր Լուսավորչի։ Ես այդ բոլորը կպատմեմ։ Ես այն կպատմեմ, թե ի՞նչ պատճառներից, ի՞նչ հանգամանքներից ստիպված՝ և որպիսի՞ որոմնացանների շնորհիվ միևնույն ազգի, միևնույն եկեղեցու հարազատ որդիքը բաժանվել են միմյանցից և այժմ իրար խորթ եղբայր անգամ չեն համարում և փոխադարձաբար իրար ավելի են ատում, քան մի բոլորովին օտար և մինչև անգամ չքրիստոնյա ազգի։ Այս որպիսի դուք ամոթ եք համարում և մինչև անգամ մե՞ղք՝ ձեզ հայ անվանելու և չեք զգում, որ դա մի հայուրացություն է...

Տերտերը նկատեց, որ Արությունը վտանգավոր քարոզիչ չէ, որովհետև գիժ է, ուշ չդարձրեց այլևս նրա խոսքերին և մի ավելի խոհեմ մարդու դիրք բռնելով՝ վեր կացավ գնաց ժամ։

Բարսեղ քյահյան Արությունին տարավ իր տուն, ուր ներս մըտան թե չէ, աղջկեքն ու հարսները տանտիրոջ ակնարկությամբ համբուրեցին Արությունի ձեռքը, կատարելով իրանց հյուրասիրական սովորությունը։

Ընթրիքից հետո Արությունը բարկացած լինելով տերտերի վրա՝ սկսեց հայ կաթոլիկների մոլորության դեմ շատ բաներ ասել և քարոզել Բարսեղ քյահյային ազգությունն։ Բարսեղ քյահյան, որ մոլեռանդ մարդ չէր և սերտ բարեկամություն ուներ շատ լուսավորչականների հետ, համակրում էր Արությունի բոլոր ասածներին՝ տաքարյունության վերագրելով նրա համարձակությունը, քան թե՝ գժության, բայց ոչինչ չասեց, բացի այս մի խոսքից, թե՝

— Քուգին ըսածը բիյությունն ջշմարտուտեն է մա՝ ինչ պիտ էնես օր՝ գարքավորնիս առաջնիս կփագեն գը, իշտե ինքդ ալ գդեսնես գը...

Արությունը մտքումը դրավ, որ էլ այնուհետև ոչ ոքի չհայտնե, որ ինքն այբբեն գիտե։ Լավ համարեց, որ իրան մի չոբան կամ ավազակ կարծեն, քան թե գիժ կարդացող։ Բայց այսուամենայնիվ նա չզգաց, որ ինքը մի նոր միտք քարոզելու կերպն ու ձևը չգիտե։ Նա ոչ տեսել էր և ոչ լսել, թե ինչպես են վարվում և ինչպիսի ոճով խոսում նոր միտք, նոր ուսմունք վարդապետողները. գիտենար էլ՝ դարձյալ չէր նմանիլ նրանց՝ հակառակ լինելով այդպիսիներին թե՛ համոզմամբ և թե՛ բնավորությամբ։ Նա մի ջերմեռանդ աստվածասեր էր։ Նա աստծուն ներկայացնում էր իրան Նարեկացու պես, անսահման բարի, անսահման ողորմած, և ոչ նախանձոտ, բարկացկոտ, ինչպես Մովսեսն էր ներկայացնում։ Բայց շատ էր ցանկանում, որ աստված նախանձոտ և բարկացկոտ լիներ, վրեժխնդիր լիներ, իր փառքն ուրիշին չտար. սակայն խոր մտածելով՝ ասում էր. «Եթե այդպես լիներ, քար քարի վերա չէր կանգնիլ»։

Նրա բնավորությունն այնպես էր կազմակերպված, որ ինչ բովով էլ անցնելու լիներ նրա ուղեղը, նա կմնար մի ջերմեռանդ աստվածապաշտ։ Աստված նրա ամենաբարի հայրն էր, առանց նրան ինքը զինքը որը կզգար, զուրկ այն անսահման սիրուց, որ խոր զգացողին մի անմահական կյանք է տալիս, նրա երևակայությունը մի արագ սլացումն դեպի վե՞ր, վե՞ր, դեպի անհունության ծայրի աշխարհը, «զոր ակն ոչ ետես, ունկն ոչ լսավ և սիրտ մարդո ոչ անկավ»։ Զգացող սիրտը, երևակայող միտքը սնունդ է պահանջում, սնունդ է փնտրում և գտնում է միշտ՝ հիրավի՝ այնպիսի բաներ, որ ոչ աչքը կարող է տեսնել, և ոչ ականջը՝ լսել...

Առավոտուն վաղ վեր կացավ Արությունը և մի տաք-տաք թանեսպաս խպշտելուց հետո, ճանապարհ ընկավ դեպի Ջալալօղլի։ Այդտեղ ծախեց նա իր ձեռք բերած սազը և նրա գնով բավական գնդակ ու վառոց գնեց և ընկավ Լոռվա ձորերը։ Բայց ինչո՞ւ համար, ինչ նպատակով, ինչի՞ց ստիպված, այդ հարցմունքները նա ինքը իրան չէր առաջարկում, բայց կարծես մարդկանցից, աշխարհից փախչել էր ուզում և միայնության մեջ էր գտնում իր միակ մխիթարությունը, զվարճությունը։ Յուրաքանչյուր քայլափոխում նա իր ուշադրությունը գրավող մի բան էր տեսնում, և այսպիսով նրա միտքն ու երևակայությունը անընդհատ զբաղված էր լինում, մանավանդ, երբ մի ջրսի հետք էր գտնում և սկսում էր նրա հետքով գնալ, որսի հետքը նրան անց էր կացնում բավական մեծ տարածություն, առանց հոգնեցնելու, մինչև որ կամ գտնում, սպանում էր, կամ հետքը կորցնում և մի ուրիշը փնտրում։ Որսորդությունը մի զարմանալի գրավող բան է, որ շատերի մեջ հարբեցու-

թյան և թղթամոլության պես մի բան է դառնում, էլ ձեռք վերցնելու հնար չի ունենում։ Արությունի երակները արյունով լցվել էին, նրա մկանունքները զարգացել, նա շարժունության կարիք էր զգում։ Այսպես մենակ մի քանի օր թափառելուց հետո, մի օր էլ Մարցա անտառներումը հանդիպեց արտաքին կերպարանքով իր նման մի որսորդի, կամեցավ մոտենալ նրան, բայց անծանոթը հրացանը Արությունի դեմ բռնելով, ասաց.

— Քի՞մ սան, յախբն գյա՛լմա (ո՞վ ես, մոտ մի՛ գար)։

Արությունին որսորդների զգուշությունը հայտնի էր. անծանոթի հայի կերպարանքը տեսնելով՝ ասաց.

— Ես թուրք հո չե՞մ, ի՞նչ ես թվանքդ դեմ անում վրես, ես հորսկան տղա եմ, հորսի եմ ման գալիս...

— Հա՞՝ դե որ հայ քրիստոնյա ես, լավ ա... ո՞րդիանցի ես, անումդ ի՞նչ ա՛,— հարցրեց անծանոթը մոտենալով Արությունին։

— Խաչնե՛ցի եմ, անո՛ւմս Արութին ա, դո՞ւ որդիանցի ես, քու անո՞ւմդ ինչ ա...

— Ես էլ դսկզցի եմ, անումս Պողոս ա։

Մի քանի այսպիսի լակոնական հարց ու պատասխան իրար տալուց հետո՝ մեր հայ սպարտացիքը մոտեցան միմյանց և նստեցան իրար կողքի, որ հանգստանան։

Պողոսն Արությունի կատարյալ հակապատկերն էր. նա մի մարմնացյալ կոպտություն էր՝ գազանի բնավորությամբ, բոլոր զգացումները գազանային էին. նրա ապշությունը, զարմանքը, բացականչությունը, բարկությունը, ագռորությունը, բոլորը, բոլորը, գազանային էին. խելքի կառավարություն, տիրապետություն չկար նրա զգացմունքների վրա։ Բայց այսուամենայնիվ, իբրև ընկեր՝ շատ լավ ընկեր էր, որովհետև սրտոտ էր, քաջ էր։ Նա ընկերոջ համար գլուխը մահու կատ, երբ տեսներ նրան նեղ տեղ ընկած։ Երբ որ տեսավ, որ Արությունը մի օտարական է, առաջարկեց նրան իր մոտ գնալ, իր տանը մնալ որքան կամենում է և իր հետ գնալ որսի։ Արությունը հանձն առավ և տուն վերադառնալիս մի եղնիկ սպանեց, որով ցույց տվավ Պողոսին իր ճարպկությունը և բարձրացրեց նրա աչքումն իր հեղինակությունը, որովհետև գնդակը դեպցրել էր եղնիկի ճակատի ուղիղ մեջտեղը, որ ամեն որսորդի բան չէր...

Արությունը Պողոսի հետ ընկերություն արավ մի քանի ամիս։

Թե ինչի՞ց գրավված այդքան մնաց, այդ հանգամանքն ուրիշ բանի կարելի չէ վերագրել, այլ միայն որսամոլության։ Մի քանի տեղ թակարդ էին լարում ձմեռ ժամանակ և սպասում էին, որ նրանց մեջ պիտի ընկներ մազավոր կենդանիք — աղվես, գայլ, լիսան և մինչև անգամ գայլ, խրամների անմատչելի քարածերպերում փեթակ էին դնում և սպասում էին, որ նրանց մեջ պիտի մտնեն տանը ձագ տված փախած մեղուները. նրանց գնալ՝ մտիկ տալ կուզեր, և գնում մտիկ էին տալիս, որ եթե հաջողված էր լինում, վեր էին առնում, տանում տուն, իսկ եթե ոչ՝ ընկնում էին որսի հետևից երբեմն միասին և երբեմն ջոկ-ջոկ։

Պողոսն անտառի մարդ էր, որովհետև որսորդությունը նրա համար մի երբեմնական զվարճություն չէր, այլ արհեստ։ Նրա բոլոր հարստությունն էր իր մի հատիկ կովը, երեք հատ գամփռ շները, որոնցով շատ անգամ արջ և վարազ էին որսում, և երեսուն թե քառասուն փեթակ մեղուն։ Նա չուներ ոչ հայր, ոչ քույր և ոչ եղբայր, այլ մի մայր միայն, որ մի կատարյալ կմախք էր։ Այդ չորությունը առաջ էր եկել կսկծից։ Վեց որդի էր թաղել մին քան զմյուս գեղեցիկ և քաջ. ամենքն էլ մեռել էին, որը՝ նոր նշանած, որը՝ նոր պսակված։ Նա ամեն երեկո նախատում էր Պողոսին, որ ձեռք վերցնի որսորդությունից, վար ու ցանք անե, տավար պահե, բայց գազանաբարո Պողոսը սիրով պատասխանել կամ խոստումներով սիրտ շահել չուներ, այլ խանչալով էր խոսում մոր հետ, ասելով՝

— Լեզվիդ մանի՛լ, թե չենա՛ էս սհաթիս փարչափարչա կանեմ։ Բայդուշ, հորս գլուխը կերար, ախպորցս գլուխը կերար՝ հերիք չի՞, հիմի էլ իմ գլուխն ես ուզում ուտի՞...

Կսկծաչոր մայրը վախենալուց՝ ցածրացնում էր ձայնը և սրգում։ Արությունի սիրտը թեև արյունով լցվում էր ամեն անգամ այս տեսարանին ներկա լինելով՝ բայց ոչինչ չէր խոսում, չէր հանդիմանում Պողոսին, որ ըստ երևույթին, անգթության մեջ նրանից ետ չմնար։ Սակայն առանձին եղած ժամանակ միշտ մխիթարում էր պառավին և հույս էր տալիս, որ Պողոսը կլավանա, միշտ էնպես կոպիտ չի մնալ։ Պառավն էլ Արությունին համարելով յուր միակ մխիթարիչը, Պողոսից առավել նրան էր մայրություն անում։ Սակայն մեկ օր էլ, երբ Պողոսն իր կոպտությունը ծայրահեղության հասցրեց, և մայրն տեսնելով երեխայի պես հեկեկալով լաց լինել, Արությունի սրտի վրդովմունքն այնքան սաստկացավ, որ աչքերից արտասուք թափվ։ Զուգենալով Պողոսին ցույց տալ իր սրտի քընք-

շությունը, դուրս եկավ տանից և արտասուքն աչքերին նստեց մեկ տեղ և արտահայտեց իր սրտի վիշտը հետագա խոսքերով.

Արցունքն աչքերին, կարկառած ձեռքով՝ մորս եմ տեսնում,
Թե երազիս մեջ, թե լույս ցերեկով, մտածմանց միջում,
Ո՜հ, մայր իմ, մայր իմ, մի՞թե արժեմ ես այդ կսկծանքին,
Այդ անչափ սիրույն և երանական պատրաստ գգվանքին,
Ես չե՞մ ուրեմն մի դժբախտ էակ մոռցված ամենքից,
Քանի որ ունեմ անսահման սիրով ինձ վիճակակից։
Թող ողջ աշխարհը ինձ արհամարհե, հոգ չունիմ բնավ,
Ինձ բավական է քո միակ սերը և գութը անբավ,
Ո՜հ, թե ինչ հուսով և ինչ փափագով ինձ սնուցել ես,
Քանի՞ օրերով ծոմապահությամբ կյանքդ մաշել ես,
Քանի՞ շաբաթներ պասով, աղոթքով աստված ես կանչել,
Քանի՞ սուրբի մոտ մոմով, մատաղով ուխտ ես գնացել,
Քանի՞ որբերի և աղքատների դու կերակրել ես,
Քանի՞ աղոթքներ և թիլիսմաններ վերաս կարել ես,
Քանի՞ցս անգամ դու իմ փոխանակ հարված ես ստացել
Անգութի ձեռքից և քանի՞ցս անգամ դառն արցունք թափել,
Որ ես բախտավոր մարդ դառնամ մի օր և շնորհալի,
Որ լինիմ պարծանք ազգակիցներիս և քեզ սիրելի.
Բայց ես... մթնապաշտ հորս շնորհիվ ընկա սարե սար,
Վերադառնալու, նորից ապրելու փնտրում եմ հնար.
Բայց իմ հույսն արդյոք աստված...
Ո՜վ... աստված իմ, աստված, դու բարի՞ ես, դու միշտ ողորմած.
Շատ ժամանակ է, որ քո գթությունդ երբեք չեմ հիշած.
Ների՛ր ինձ, ների՛ր, հայր իմ արարիչ, ես մեղավոր եմ,
Դու ինձ շնորհել ես ուժ ու զորություն, ես մոռացել եմ,
Դու հրամայել ես լինել գործունյա, ես նոր իմ հիշում,
Ես այսուհետև գործող կդառնամ իմ բոլոր կյանքում,
Գործունեությամբ իմ մեջ կգտնեմ ես ինձ բարերար,
Գործունեության դեմ չկա ոչինչ անհաս և դժվար.
Թող այս ձեռներս, որ այժմ քաջառողջ՝ պարապեն գործով,
Թող այս ճակատը, որ այժմ լայնացած՝ ճոխանա մտքով,
Թող այս ոտներս, որ այժմ ամրացած՝ ուղիղ ընթանան,
Թող այս աչքերս, որ այժմ բացված՝ նոր փայլ ստանան.
Հոժա՞ր եմ, հոժա՛ր, ամենայն անձամբ գործունյա լինել։

Հաստատուն հուսով, անվեհեր սրտով միշտ հառաջ դիմել,
Դեպի նպատակ—դեպի կատարյալն և դեպի բարին,
Որին ձգտելը մի անհրաժեշտ պարտք է մարդկային...
Դու մի հաստատուն, ով իմ արարիչ, կամք տուր ինձ միայն,
Իսկ քեզ վայել է միայն փառք, պատիվ այժմ և հավիտյան...

Մեկ անգամ Արութիւնն ու Պողոսը մի եղջերու սպանեցին, երկուսի գնդակն էլ դիպել էր։ Արդեն երեկո էր, և տունը հեռու, և իրանք էլ հոգնած, այս պատճառով նույն գիշերը մնացին մի ավերակ եկեղեցում։ Կրակ վառեցին եկեղեցու մեջտեղը և սկսեցին եղջերվի մսի փափուկ տեղերից փայտե շամփուրներով խորովել, ուտել և միևնույն ժամանակ խոսել որսորդության, այս և այն վայրենի կենդանու բնավորության մասին, թե ինչպես որձ եղջերուները սեպտեմբերից սկսած ցլազոռ տալով դրմբացնում են բոլոր անտառները և կանչում են կովերին, թե ինչպես կատաղությունից կուրանում, անիրելքանում են, թե ինչ կատաղի կռիվ է սկսվում բոլոր որձերի մեջ և կովերն ընկնում են հաղթողի ճանկը։ Սրանց այս տեսակ նկարագրությունից երևում էր, որ որսորդները թեև կոպիտ, խիստ նուրբ կերպով ուսումնասիրում են վայրենի կենդանիների ամեն մի շարժումը, նրանց բնավորությունը։—Այս ժամանակները,—ասում էր Պողոսը, որ ավելի փորձված էր այդ բանում, քան թե Արութիւնը,— բոլոր որձերը գնդակահար կլինին, եթե կովերը չաղատեն նրանց։ Որձերի աչքերը արյունով լցված են լինում, ոչինչ չեն տեսնում, բայց կովերն իսկույն նրանց քսվելով, իմաց են տալիս վերահաս վտանգը և փախչելով փախցնում իրանց հետևից հարբած որձերին՝ բուղաներին... Այս տեսակ խոսակցությունը բնականապես հասցնում էր մինչև աղջկերքը, որոնք նույնքան զգույշ են, ինչքան վայրենի պախրի երինջները և խոսում էին այս և այն աղջկա վերա։

Լսենք, տեսնենք ի՞նչ են խոսում մեր քաջ Հայկա թոռնիկները։

— Արութին, ասում են պախրա սպանիլը մեղք ա. ղորդ ա, ես միսն ուտում եմ, ամմա սիրտս ասում ա՛ լավ չես արել...

«Ամենա՜յն տեղ նախապաշարմունք», ասում է Արութիւնն ինքն իրան, բայց չըմգիտելը դնելով՝ հարցնում է.

— Ի՞նչի ա մեղք, Պո՛ղոս։

— Ասում են Քարամն անիծել ա։

— Հա՜... դե հրմի ոնց անենք, սպանել ենք պրծել, էլ հո չի սաղանալ։ Ես շատ եմ սպանել, Պողոս, իսկի մեղքս չի եկել...

— Տո ես քի՞չ եմ սպանե՞լ... Որ գալիս ա գյուլլիդ աղաքին կաղնում, Քարամն էլ ես մոռանում, բանն էլ. հենց որ սպանում ես պրծնում, նոր ա Քարամի անեծքը միտքդ ընկնում...

— Պողոս, ես էդ Քարամի անեծքը գիտեմ...

— Ի՞նչ ա ասում... Քե՛ մատաղ, Արութին ջան, հլա մի ասա տեսնեմ ի՞նչ ա ասել։

— Ասել ա՝

Սաֆար այրն օնդորթընդա, բեշնդա
Բու դաղդա բիր մարալ սըզլդար, աղլար,
Ուզախ դայիլ, բու ղըր Բին-գյոլ բաշընդա
Բու դաղդա բիր մարալ ա՞խ էդար, աղլար...

— Քե մատաղ, Արութին ջան, մի ձենով ասա, ձե՛նով...

— Դե ականջ դիր.

Օվլի՝ գյորըմ՝ զուռիաթընի արթմա՜սըն,
Քիփրիդ զոյուփ քիփրիդ ուստա շաթմասը՜ն...
Ը՜... ը՜... ը՜ն...
Ղասաբ օլան մարալ աթի սաթմասըն,
Բու դաղդա բիր մարալ սըզլդար, աղլա...
ա՜... ա՜... ա՜ր...
ա՜... է՜... յարալի ջանը՜... ը՜... ըբա...
Ա՜խ ազիզը... ը՜... ը՜... ը՜մ...

— Բա՜հ, ձենիդ մատաղ, Արութին, լացս էկավ... Յանի էլ ընչի՞ էր անրծում էդ օրհնվածը...

— Քարամը Ասլու հետևից գնալիս՝ երբ որ հասել ա Բինգյոլի սարը, ընտեղ տեսել ա մի յարալու (վիրավորված) պախրակով՝ հորթերը կշտին տխուր, տրտում կանգնած։ Էդ բանը Քարամի սրտին շատ դիպել ա, ինքն էլ նստել ա նրանց կշտին ու նրանց սուգն արել։

— Խե՜ղճ,— բացականչեց Պողոսը...— Արութին, ես էդ Քարամի անումն իմացել եմ, ամմա իսկի չեմ գիտում, թե դա ով ա ըլել, ինչ ա ըլել։ Դու էդ էլ կգիտենաս...

— Ականջ դիր, ես քեզ ասեմ։ Մի տերտեր ու մեկ մոլլա են ըլել, էրկուսն էլ էրեխա չեն ունեցել։ Սրանք մեկ մեկու խոսք են տվել, որ թե իրանց էրեխա ըլի, ու մեկին տղա, մեկէլինը աղջիկ, նրանք իրար ուզեն։ Պատահում ա որ տերտերին աղջիկ ա ըլում, մոլլին տղա։ Աղջկա անումը դնում են Ասլի, տղի անումը՝ Քյարամ։ Ով որ տարով կմեծանա, սրանք օրով են մեծանում. ժամանակը որ հասնում ա, մոլլեն գնում ա տերտերի մոտ, որ աղջիկն ուզի— տերտերը նրան խոսք ա տալի ճամփու գնում, հետո ինքն աղջիկը վեր ա կալնում փախչում։ Մոլլեն էդ չի իմանում, տղին ուղարկում ա, թե՝ դե գնա նշանածդ վեր կալ բեր։ Քյարամը գնում ա տերտերի տունը, տեսնում ա, որ ոչ տերտեր կա, ոչ Ասլի։ Էդ որ իմանում ա, ջանուն ա դառնում, աղջկա էշխու սիրով վառվում ա, աշըղ դառնում, ընկնում նրանց հետևիցը։ Ճանապարհին ինչ որ պատահում ա, մարդ, ծառ, ջուր, անձրև, ձյուն, քար, սար, ամենքին էլ խաղով հարցնում ա, թե իր Ասլին չեն տեսե՞լ... Ամենքն էլ նրան պատասխան են տալիս ու տեղը նշանց տալիս. մենակ մի չինարի ծառ չի խոսում, պատասխան չի տալիս։ Քյարամը խաղով նրան անիծում ա, չինարին էն սահաթին չորանում ա։ Մեկ էլ մի քյալլա յա պատահում, մեռած մարդու մի չոր գլուխ, սարնըվեր գլորվելիս ա ըլում։ Քյարամը խաղով կաղնացնում ա նրան. «Ղաղնիր, ասում ա, դու մարդու գլուխ ես, դահա լավ կիմանաս, ո՞ւր ա գնացել իմ Ասլին»։ Քյալլեն ասում ա՝ դու կգտնես նրան, ամմա մուրազիդ չես հասնիլ. դու էլ կէրվես կգեոթորկվիս... ասում ա՝ «Ցա՜նըշ Քյարամ, թութո՜ւշ Քյարամ, յա՜ն Քյարամ»... Վերջը, էլ ի՞նչ գլուխդ ցավացնեմ, գթնում ա Ասլուն։ Սրանք իրար որ տեսնում են, ավելի են գժվում մեկմեկու սիրով։ Ասլին էլ Քյարամին ա ուզում. մի սազ էլ նա ա ձեռքն առնում, իրա սերը խաղով իմաց տալիս Քյարամին։ Տերտերը որ տեսնում ա՝ էլ ճար չկա, Քյարամին ասում ա. «Թե որ դու խաղերովը բաց կանես իմ աղջկա կուրծքի մեր տված արծաթե կոճակնին, ես նրան քեզ կտամ».— Քյարամը խոսք ա տալիս, սազն առնում ա, շոքում ա աղջկա առաջին։ Տեր աստված, ինչե՞ր ա ասում, ինչե՞ր... կոճակնին սկսում են բացվիլ, հենց որ մնում ա մեկը, էն էլ ուզում ա թե բացվի, մեկէլ ծերիցը մեկէլ կոճակնին էլի մեր են ընկնում, կոճկվում են... Էսպե՞ս՝ խեղճ Քյարամը մի կողմից բաց ա անում իրան խաղովը, մեկէլ կողմիցը կոճակնին մեր ընկնում, չանգի տերտերը գալիս ա

ըլում արած, որ չբացվին։ Էսպես՝ խեղճ Քյարամը ասում ա, ասո՜ւմ, ասո՜ւմ, ասո՜ւմ, մեկ էլ սազը կրակ ա ընկնում, վառվում, էդ կրակը դիպչում ա իրան, ինքն էլ ա սկսում էրվիլ։ Ասլին ուզում ա թե հանգցնի, կշտին մի փարչ ա ըլում, վրա ա բերում, ածում վրեն. հենց իմանում ա, թե ջուր ա, դու մի ասիլ նոթ ա... էդ նոթն էլ որ վրեն չի ածում, խեղճ Քյարամը տեղն ու տեղը էրվում ա, դառնում մի անձղակոթ։ Նրան տանում են թաղում։ Ասլին էլ չի հեռանում նրա գերեզմանիցը։ Սազը ձեռքին էնքան ածում ա, սըգում, լաց ըլում, որ մեկ օր էլ գերեզմանիցը կրակ ա դուրս գալիս, նրան էլ էնտեղ էրում... Նրանց գերեզմանի վրա հետո երկու վարդի թփեր են բսնում, երկուսի մեջտեղն էլ մի փշի ծառ։ Վարդերն իրանց ճղերը մեկնում են, որ իրար փաթաթվին, մեջտեղի փշի ծառը չի թողնում...

Կոպիտ Պողոսի սիրտն այնքան քնքշացավ այդ պատմությունից, որ աչքերն արտասուքով լցվեցան։

— Խեղճերն իրանց մուրազին չեն հասել, վերջն էլ էրվել են... Արութին, էրնեկ ասած չըլեիր, սրտումս դարդ դառավ։

— Դու շատ անխելք ես, Պողոս... Ադա, էդ դրուստ էլած բան խում չի՞, էդ հեքիաթ ա, մոգոնած բան ա, մարդը ո՞նց կէրվի, մեռած մարդու գլուխը, յա ծառը, քարը ո՞նց կխոսին...

— Ի՞նչ ա ասում... Ամմա ի՞նչ զուլում տերտեր ա ըլել. աղջիկը թուրքի չի տվել... Չէ՛, որ մոգոնովի բան ա, էլ ես նրա անըծքին չեմ հավատալ։ Ախր էդ թուրքերը հորսկանություն անելու շնորհք չունին, էնդուր ա անըծել հորսկաններին... Ուզեցել ա հայի աղջիկ առնի, էն էլ տերտերի... Իսկի մեր տերտերն իր աղջիկը ինձ չի տալիս, ասում ա՝ ես հորսկանին աղջիկ չեմ տալ... Ես հիմի կտեսնեմ, թե ո՞նց չի տալ։ Ես Քյարամի նման աշըղ չեմ դառնալ, որ ասի՝ արի աղջկաս կոճակնին բաց արա, մի գիշեր վեր կառնեմ ու հայդե...

— Պողոս, էդ թողնենք,— խոսքը կտրեց Արությունը։— Ես քեզ հետ խոսելու բան շատ ունեմ, տեղը չի եկել, որ ասեմ։ Դու լավ տղա ես, քու սիրտը չար չի, ամա շատ ես անտաշ։ Ադա, մորդ խաթրն ինչի՞ չես պահում. պառավ կնիկ ա, կսկիծից էրված, խորովված։

Արությունը, որ ծածկվել էր մի կեղծ դիմակով և խոսում ու դատում էր Պողոսի հայացքով, այժմ սկսել էր իր դիմակը ետ քաշել, որովհետև էլ միտք չուներ նրա հետ ընկերություն անելու։ Մի

կողմից իր առաջվա վիճակը, մյուս կողմից իր մոր կարոտը անընդհատ քաշում, տանում էր Արությունին, որի մեջ վառ ու պայծառ լինելով սիրո զգացմունքը, չէր կարողանում կարծրացնել մի այնպիսի սիրտ, որ ի բնե չէր ստեղծված կարծր լինելու... Արությունի առաջարկությունը՝ մոր վերաբերությամբ, Պողոսի սիրտը բնավ չշարժեց, այդ զգացմունքը նրա համար խորթ բան էր, ոչ զգալի էր, ոչ էլ հասկանալի։

— Բա՜հ, նրա քավթառ իմանը...— պատասխանեց Պողոսը։— Տո մի թող կորչի, բան չունե՞ս։ Պառավ մարդ հո չե՞ս, որ խրատ ես տալիս... Արութին, հլա ինձ ականջ դի... Ես խաչնեցոց անումը իմ պապերիցն եմ լսել... Թե որ դու նրանցից ես, հունարդ նշանց տուր...

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ուզում անես...

— Ինձ քոմագ արա, Արութին ջան...

— Ի՞նչ ա, ուզում ես տերտերի աղջկանը փախցնես...

— Ինձ հետ արի, քու արևին զուրբան, Արութին...

— Չեմ գալ, ես դավի չունիմ, ինչ ուզում ես արա...

— Հը՜մ... Չես գալ հա՞... Էն տղի հերն անիծած, ով քեզ չըսպանի... Մի գալ... Էլ ձեր տան երեսը չես տեսնիլ...

— Է՜յ, Լոռվա արջ, բերանդ քեզ պահի, թե չէ՛, տեսնում ե՞ս էս խանչալը, սրանով իմ հերը շատ զզլբաշի գլուխ ա կտրել, հիմի էլ իմ ձեռքն ա ընկել... Ախմախ, տերտերը քեզ համար ա աղջիկ պահել, որ դու քաշ տաս չոլեչոլ գցե՞ս... Թե որ նա քեզ սիրում ա, ինչի՞ էն օրը ջրի ճամփին քեզ բիաբուռ արավ, թե՝ «խնչեմ վրեդ, դու ո՞վ ես, որ քեզ ուզեմ»... Քու տունը ծակվի ոչ, մարդը մարդ ա, խոզը՝ խոզ, արջն՝ արջ։ Ես էնքան հորսկաններ եմ տեսել, որ քու գլխի մազի համբարքովը մին։ Նրանք որ մարդամեջ են մտնում, ոչով չի իմանում, որ քոլի մարդիկ են, ամմա դու ամեն տեղ էլ քու արջությունը նշանց ես տալիս։ Ախր ես քեզ ի՞նչ եմ ասում, դու ինձ ի՞նչ։ Մորդ հետ ինչի՞ ես խանչալով խոսում, ա՜յ ես քեզ ինչ եմ հարցնում...

— Դե որ ըտենց ու ըտենց, իմ աղ ու հացը քու աչքերը քոռացնի...

— Ես քու աղ ու հացը չեմ կերել, որ իմ աչքերը քոռացնի։ Բա էնքան խոզի ու պախրի մսերով առած աղ ու ալրիցն ինձ փայ չունի՞մ։ Մեկ օր էլ ա դարտակ ետ չեմ դառնալ, քեզ նման չեմ ասել, որսս կապվել ա... Կկարմրես, հա՜պա, ա՜րջ...

— Ես արջ չեմ, ամմա դու էշ ես։ Ղորդ ա, լեզուդ փոխել ես, ամմա էլի Ղարաբաղի էշերիցն ես...

Պողոսի այս պատասխանը Արությունի ցեղական ցավագար տեղին դիպչելով, նրան գժվացրեց։ Նա ձեռքը դրավ խանչալի կոթի վրա և մոռանալով Պողոսի բարբառը, իր բարբառով արտահայտեց բարկությունը, ասելով.

— Սերտս ասմա՝ ե՞րկաց էս սհաթմս ընի ղամադ կոխե էս լը-կուտեն փորը... Այ գյադա, քոթեթ, էդ հյո՞ւրբս էշ ասըմ...

— Բա՜... սա քաջքեր ա ունեցել, ես նոր իմացա։ Ախր ես էլ եմ ասում, ինչի՞ իրանց քոլերը թողած՝ եկել ա մեր հանդերումն ա հորսկանություն անում։ Ախպեր, ես քաջքոտ մարդի հետ դավի չունիմ. վեր կենամ ըռադ ըլիմ ըստեղանց։ Էս ո՞րդիանց ո՞րդի էկավ գլխովս ընկավ։ Էնդուր են ասել՝ «սատանեն նադարաթ կըլի» է՞... Վեր գցես, սպանես, ով իմանա՝ ինչ կասի։ Փուշը որ փուշ ա, մի ծտի դալդա ա անում. ես էն վախտը փշից էլ բեթար պիտի ըլիմ. սա էս սհաթս իմ դալդումն ա նստած։ Ասած ա, «գոգումդ նստեմ, միրուքդ փետեմ». դրուստ սրա բանն ա... Մի հետ սիլլա տամ, «խտը հետ շուրդուբանի կտա, սա էլ ա ուզում մարդի վախացնի։ Փա՜ռք քե՛զ զկեռ... Վեր կենամ ըռադ ըլիմ, սրա արյունը չընկնեմ... Ով գիտե՝ իրա մոր մինուճարն ա... Է՜հ, ես էլ ինչ եմ ասում... Ով գիդի ո՞ր թոկից ա փախել. թե լավ մարդ ա, ինչի՞ իրանց տանը չի կենում...

Այսպես ինքն իրան երկար մրմռալով՝ Պողոսը վեր առավ հրացանը և ուզեց դուրս գնալ, որ մի անակնկալ տարաբախտության պատճառ չդառնա, բայց Արությունը, որ արդեն զղջաց իր անհամբերության համար, չուզեց թույլ տալ նրան և կանչեց հետևից սպառնալով՝

— Է՜հ, ախմախ Լոռի, արի նստի տեղդ, թե չէ՛ մի գյուլլա ա՝ քու ջանը...

— Հա՜-հա՜-հա՜...— քրքջաց Պողոսը։

— Տո քու գյուլլիցն ո՞վ ա վախենում, իմ գյուլլեն քոնիցը պակաս ա՞... քաջքերդ....

— Արի նստի, արի. ես քաջքեր չունեմ... Ես քեզ խոսք եմ ասում, քու լավությունն եմ ուզում, դու ինձ ասում ես՝ էշ ես...

— Բա ինչի՞ դու ինձ արջ ես ասում, դու որ ինձ չասես, ես էլ քե՛զ չեմ ասիլ։ Քու աչքիդ գերանը դու չես տեսնում իսկի...

— Խա՛վ, լա՛վ, արի նստի։ Քեզ հետ մարդ չի բարըշիլ։ Էս ա

քանի ամիս ա մըտեղ հաց ենք ուտում, դեռ մին մինի չոռ չենք ասել. էդ քու հունարը չէր։ Ես էլ որ քեզ նման ըլեի, պիտի ամեն օր ըսենց կռվեինք։ Ես չեմ ուզում ըստեղ մնալ. էգուց պիտի գնամ քաղաք։ Դու մի ձի կքրեհես, կգաս պախրեն կըտանես։

— Քաղաք ինչի՞ ես գնում. ուզում ես մորթիքը տանես ընտեղ ծախե՞ս։

— Չէ՛, մորթիքը քեզ ըլին, դիփ էլ, ես քեզանից փայ չեմ ուզում, փեթակնին էլ դիփ քեզ ըլին...

— Հը՛մ... խռովեցիր հա՞...

— Ի՞նչ խռովելու բան ունիմ. բալքի դու ես խռովել, էնդուր ես ըտենց ասում, արի բարըշենք, արի... Մին մինի բախշենք...

— Արի բարըշե՞նք, ի՞նչի դու չես գալիս ինձ մոտ, թե որ բարըշիլն ուզում ես... Ուզում ես, որ ես գամ քո ոտքը՞... Դու ինքդ վեր կաց արի ինձ մոտ, ասա մեղա աստծու, հետո ես քեզ կասեմ...

— Դե որ ըտենց ա, ոչ դու արի ինձ մոտ, ոչ ես քեզ մոտ։ Դու էլ վեր կաց, ես էլ։ Դու դեպի ինձ արի, ես դեպի քեզ։

— Դե լավ, ըտենց անենք, ղարաբաղցին անկոտրում կըլի։ Էս մի ոտ... Դե մի ոտ էլ դու առաջ դիր... Էս երկու ոտ... Հիմի մեկէլ ոտըդ փոխի... էս իրեք... դե ասա՝ մեղա աստծու...

— Ինչի՞ առաջ դու չես ասում...

— Չէ՛, առաջ դու պիտի ասես...

— Չէ՛, դու պիտի ասես...

— Ո՛չ դու, ոչ ես, մըտեղ ասենք...

— Մըտեղ ո՞նց ասենք, դե դու ասա, ես էլ քեզ հետ կասեմ...

Վերջապես «մեղա աստծու» ասելը գլուխ չի գալիս։ Սերտ սիրով գգվում են միմյանց և համբուրում իրար շրթունքից և հետո լուռ ու մունջ իրանց տեղերը նստում — մեկը խարույկի այս կողմին, մյուսն՝ այն, մի հոգեկան անդորրություն և երանական զվարճություն զգալով...

— Արութին, քաղքումն ի՞նչ ունիս, որ ուզում ես գնաս,— խոսեց վերջապես Պողոսը։

— Ընտեղ ընկերնի ունիմ, պիտի գնամ տեսնեմ։

— Ընկերնիդ ի՞նչ են շինում ընտեղ...

— Վարժապետ են, էրեխեք են կարդացնում։

— Բա ասում ես ընկերնի՞ ունիմ... Վարժապետ ... էրեխա...

— Զարմանում ես հա՞... Մի՛ զարմանալ։ Ես էնքան կարդալ գիտեմ, որ ձեր տերտերը իմ կեսի կեսի ղադամ չի գիդում...

— Հա՜ հա՞... Դե ըտենց կասեիր է՜... Հը՜մ...

— Ի՞նչի ես «հը՜մ» անում...

— Դե ասում են՝ շատ կարդացողը կգժվի, ես էլ...

— Մի հավատալ, շատ կարդացողը չի գժվիլ, քիչ կարդացողը կգժվի...

— Բա մեր տիրացուն ինչի՞ չի գժվում, ասում են քիչ ա կարդացել։

— Էնդուր չի գժվում, որ հենց իմանում ա, թե շատ ա կարդացել, որ գիտենար, թե քիչ ա կարդացել, կգժվեր...

— Յանի դրուստ ես ասո՞ւմ, դու գրի սեն ու սպիտակը ջոկում ե՞ս... ես չեմ հավատում...

— Ինչի՞ չես հավատում։

— Դե մեր գեղումն ով որ կարդալ գիտի, էլ մորթ չի անում, ասում ա՝ մեղք ա. շնահորսն էլ չեն ուտում, ասում են՝ հարամ ա...

— Դրանք սարսաղ են, ի՞նչ են գիտում մեղքը որն ա, վարձքը որը։ Բա ինչի՞ ուրիշի մորթածն ուտում են. դիփ մեկ չի՞, թեկուզ գողացած, թեկուզ գողի հետ մըտեղ կերած։ Դրանց գլխումը խելք չկա, ինչ որ ըղորթ ա, էն դրանց համար սուտ ա, ինչ որ սուտ ա, էն ըղորթ...

— Դու շատ դրուստ ես ասում, Արութին... էլ դրանց խոսքին ես չեմ հավատալու։

— Ընչի՞, թե որ ըղորթ բան կասեն, յա մի խելքը կտրելու բան, հավատա։

— Դե ես ի՞նչ եմ գիտում ըղորթը ո՞րն ա, սուտը՝ որը։ Երկու տարին, յա թե չէ՝ երեք տարին մի հետ անչախ եմ ժամ գնում։ Գնացած վախտս էլ՝ մնում եմ պլշած, զարմացած, մտքումս ասում եմ՝ յարաբ էս ի՞նչ են անում, ի՞նչ են ասում։ Մտիկ եմ տալիս ուրիշներին, երբ որ նրանք ծունդր են դնում, ես էլ եմ ծունդր դընում, էրեսիս խեչահանելն հո դրուստ չեմ գիտում... Աղոթքներիցն էլ մի էն եմ գիտում, մին էլ տեր ողորմյան։ Էդ երկուսն էլ էնդուր եմ սովորել, որ դրանցից շատ են ասում։

— Տեր ողորմյան շատ կասեն՝ էն էլ մեծ պասին. ևր շատ չեն ասիլ...

— Ի՞նչ ես ասում, Արութին, մեր տերտերը հենց և ա, որ ասում ա, և հա և, և հա և...

— Ում աչքերը որ գիրը տարած ա ըլում, նրա աչքին մենակ ևերն են երևում։ Հալբաթ ձեր տերտերի աչքերն էլա գիր տարել, չունքի շատ կըլի կարդացած...

— Հա՜... Նրա աչքերին չեշմակ էլ կա... Շատ չար տերտեր ա։ Մի հետ մի լավ չափալախ տվավ տիրացվին. փուչ կենդանի, ասում ա, նշանն ո՞ւր ա, ինչի՞ ես հանել։ Ախր գրքերի արանքներումը թղթի կտորներ են դնում, նրանց նշան են ասում, Արութին, դու էդ գիտե՞ս...

— Գիտեմ։

— Դու սուտ ես ասում, Արութին, չես գիտում։ Թե որ դու կարդալ ես գիտում, ապա ասա, էն զադի անումն ի՞նչ ա, էն որ գիրը դնում են վրեն, կարթում...

— Նրան կասեն գրքակալ...

— Հա՜, գրքակալ, գրքակալ... Էդ գրքակալի անումն ոչով չի գիտում, ես էլ մեր տիրացվիցն եմ իմացել... Չէ՜, լավ գտար։ Արութին, դու որ ըդենց լավ կարդացող ես, բա ինչի՞ մի օր մեր ժամը չես գնում։

— Մենք հենց ամեն քշեր էլ ժամերումը չենք ըլու՞մ. հրես էս ժամ չի՞։ Պողոս, հիմի քու խելքովդ, աստծ մեծ կըլի, թե՞ էս ժամը...

— Հալբաթ աստված մեծ կըլի...

— Աստված որ ժամիցը մեծ ըլի, էլ կկա՞ բա ժամումը տեղավորվիլ...

— Բա դու չես տեսե՞լ ժամի աստվածը...

— Էն աստծու պատկերն ա, ինքը հո չի։ Աստված շատ մեծ ա, շա՜տ է՜, շա՜տ... Նրա պատկերը ոնց որ ժամումն ենք դնում, որ ամեն մարդ տեսնի, ընենց էլ պետք ա մեր սրտումը, մեր մըտքումը ըլի։ Մեր սրտումն ի՜նչքան մեծ բան ասես կտեղավորվի։ Երբ որ աստված մեր սրտումը կըլի, նա միշտ մեզ հետ կըլի, էլ ոչ մենք նրան ման կգանք, ոչ էլ նա մեզ։ Հիմի դու է՞ս ասա, մեկ մարդու սիրտը որ իստակ չըլի, էլ ընտեղ աստված կկենա՞։

— Դու էդ ինչե՞ր ես ասում, խոր-խոր տեղերից ես խոսում։ Արութին, դու էն մեծ գիրը կարդացե՞լ ես, էն որ ասում են՝ ինչ ասես՝ միջին կա. ով որ, ասում են, էն դիփ կարդացած ըլի, կգժվի։

— Ես էն չիմ (դիփ) կարդացել եմ, Պողոս...

— Ի՞նչ ա ասո՜ւմ...

— Հավատա՜։

— Դու բալքի չես գիտում, թե ես ո՞ր դիրքն եմ ասում։ Նա մեծ ա է՞, շատ մեծ։ Մեր տիրացուն որ խոտում ա, անջախ ա տանում ժամ, էնքա՞ն ծանդր ա։ Աշխարհքիս տակին ինչքան որ սրբբեր են ըլել, բռներ են ըլել, չիմ էլ նրա միջին գրած ա։

— Գիտեմ, գիտեմ, ես էն դիփ կարդացել եմ։

— Բա որ կարդացել ես, ինչի՞ բա մի օր էլա նրա միջի սրբբերիցը մի բան չասեցիր։

— Դե հիմի արի ասա էլի՞... Միտքս վրես չէր, թե չէ՝ քեզ շատ բան կպատմեի։ Քո ուզած սրբերի տեղակ ես քեզ կպատմեի մեր ղոչաղ պապերիցը, որ իմանայիր, թե մենք ո՞վ ենք, ի՞նչ ազգ ենք ըլել ու հիմի ի՞նչ օր ենք ընկել։

— Դե հիմի ըլի, մի երկու բան էլա ասա, մտքումս պահեմ, էլ քեզ մտիցս չգցեմ։

— Հիմի ի՞նչ ասեմ, Պողոս։ Հիմի միայն էնքան կասեմ, որ մենք հա՛յ ենք, հա՛յ։ Ինչքան որ հայեր կանք, դիփ էլ ախպեր ենք, դիփ էլ մի հորից ու մի մորից ենք բհամ եկել։ Մեր պապի պապի, նրա էլ պապուպապի անումը Հայկ ա՛ ըլել, էնդուր ենք մենք հայ ասվում։

«Մեր պապ Հայկը էնպես մի քաջ տղամարդ ա ըլել, որ իր որդոց ու թոռների հետ հազար հազար մարդի հետ ա ըլել կռվելիս։ Էնքան ջանով ա ըլել, որ նրա նետ ու աղեղը տասը մարդ կարալիս չի ըլել տեղից ժաժ տալ։ Նա մի դուշման ա ունեցել, անումը Բել։ Էս Բելն էլ էնքան ածդահա, էնքան ջանավար մի մարդ ա ըլել, որ էն ժամանակին ինչքան մարդիկ են ըլել աշխարհքիս վրա՝ չիմնին էլ իր ձեռքի տակն ա հավաքել, դիփունանքն էլ նրան գլուխ են վեր բերել, ասել են՝ «Մեր աստոծը դու ես որ կաս, ուրիշ աստոծ չենք ճանաչում»։ Մեր պապ Հայկը նրան գլուխ չի վեր բերել, ասել ա՝ «Դու շուն ես, դու աղվես ես, դու ո՞վ ես, ի՞նչ ես, որ ես քեզ գլուխ վեր բերեմ»։

— «Բելը բարկացել ա, անհամբարք ղոշուն ա հավաքել ու գնացել, որ մեր պապ Հայկին սպանի։ Արևի՞ն մատաղ մեր պապ Հայկի. ասել ա՝ «Տղերք ջան, ղոչաղ կացեք, իմ անումը չկոտրեք, ես դրա ջամդաքը էսօր ղուրդ ու ղուշի փայ կշինեմ»։ Հենց ըսենց էլ աքել ա։ Հավաքել ա իրա տղոցն ու թոռներին, գնացել ա Բելի անհամբարք ղոշունի առաջը կտրել։ Իրա նետ ու աղեղը որ ձգել ա, վրա արել, նետը գյուլլի նման գժժալով Բելի սրտին ընենց ա դիպել, որ պղնձով ծածկած դոշի միջովն անց ա կացել, մեջքովը դուրս

եկել։ Ածդահա Բելը, պառաված ուճարքու նման ճռճռալով, գլորվել, վեր ա ընկել, սատկող հավի նման կլափին տալով շունչը փըշել։

— «Դե՛, հիմի հասե՛ք, տղեք ջան,— ձեն ա տվել մեր պապ Հայկը,— դե հիմի հասեք էդ անիծածներին կոտորեցեք, որ էլ մեր աշխարհքումը ոտը չդնեն»։

«Բելի ղոշունը որ տեսնում են իրանց պաշտած աստծուն սատկացրած՝ դողում, սարսափում են։ Հայկի ասլան տղերքն ու թոռները որ հասնում են, ընկնում նրանց մեջը, ոչխարների նման ջարդում, նրանք երեսները շուռ են տալիս փախչում։ Էդ օրվանից դեսը էլ ոչով չի համարձակվում մեր աշխարհքի վրա կռիվ գալ, Հայկի անունն էլ մըհրվում ա մեզ վրա ու մեր աշխարհքի վրա, մենք ասվում ենք հայ, մեր աշխարհքն էլ Հայաստան»։

— Բա՞հ, նրա արևին մատաղ, հրեն տղամարդն է՞։ Մենք էլ պիտի ասենք մարդ ենք էլի, փափախ ունենք գլխներիս։ Բա հիմի խի՞ ենք ըսենց վատացել, Արութին, բա չենք ամանչո՞ւմ։

— Էնդուր ենք վատացել, փչացել, կնիկ դառել, որ մեր պապին թողած, բելերին ենք պաշտում, ըղորթը թողած, մեզ սուտ բաներ են քարոզում։ Ինչի՞դ ա պետք, դու հիմի իմացար, թե ինչ մարդ ա ըլել մեր պապը։ Ով որ իր պապին չքաշի, նրա նման չըլնի, նա՛ պետք ա նրա հալալ թոռը չըլի։ Թե որ սաղ կմնամ, մեկ օր էլ կպատահենք մին մինի, էն վախտը էսպես բաների վրա շատ կխոսենք։ Ասած ա՝ «Սար սարի չի ռաստ գալ, մարդ մարդի ռաստ կգա»։ Դու ղոչաղ կաց, մենք հետո շատ բաներ կանենք։

— Քու բերանին մատաղ, Արութին։ Ասած ա. «Առաջին տեսնելիս, ընկեր, վրա էրկուսին՝ ախպեր»։ Մեկ էլ որ գաս, իմ ախպերը կըլես, իմ ախպորս անունն էլ էր Արութին, էնդուր ա իմ մերը քեզ որդու նման սիրում։ Ողորմած հոգին հարյուր թուրքի չէր ասիլ, թե աստված ա ստեղծել. թե որ նրա անունը մտքիցս կընկնի, քու անումն էլ կընկնի։ Հիմիկուց դենը դու իմ ախպեր Արութինն ես։

— Մենակ ես չեմ քո ախպերը, ինչքան որ հայեր կան, դիփ էլ մեր ախպերքն են, քու մերն էլ իմ մերն էլ ա, դիփունանց մերն էլ։ Պողոս, դու նրա սիրտը մխիթարի, պատիվը պահի։ Քու օրումը նրան մի քաղցր խոսք չես ասած, մի անգամ նրա սիրտը չես շահած, էդ լավ չի, Պողոս, լավ չի, աստված չի վեր կալնիլ, կբարկանա գլխիդ։

— Հավատա, Արութին ջան, հենց հիմի գնամ թե չէ, պիտի

մորս ծծերիցը պաչեմ, մեղա ասեմ։ Էլ իմ օրումը նրան չոռ չեմ ասիլ. միշտ «ջանով» կխոսեմ։ Խեղճը կզարմանա, կասի՝ «էս ոնց էլավ»։ Հալալ ըլի քու կերած կաթը, Արութին ջան, իգիթ ես, իգիթ...

— Դե լա՛վ, շատ մի գովի։ Էնքան խոսեցինք, որ լուսացավ։ Դե, մնաս բարով, ես գնում եմ։

— Գնաս բարով, քե մատաղ,— ասաց Պողոսը և նրա աչքերը լցվեցին արտասուքով։ Մեր տղեքը համբուրեցին միմյանց. Արությունը հեռացավ ուրախ, զվարթ, իսկ Պողոսն ընկավ խոր տխրության և մտածության մեջ։

— Ո՞վ էր սա, ո՞րտեղից եկավ. ինչու՞ եկավ. ինչո՞ւ բաժին չստացավ մեր աշխատանքից. և սրա նման շատ հարցումներ արավ ինքն իրան Պողոսը և վերջն այն եզրակացության եկավ, որ Արությունը մի անգին գյուտ էր իր համար, բայց ինքը չիմացավ նրանից օգուտ քաղել բարոյապես։ Այս դեպքից հետո Պողոսի մտածության եղանակը փոխվեց, նա սկսեց երևակայել իրան մի այլ աշխարհ, և միշտ կարոտով սպասում էր Արությունին, որ նա գա և մտցնե նրան այդ նոր աշխարհը։ Արությունն այլևս չհանդիպեց Պողոսին. բայց նրան հանդիպեցին Արությունի նման մարդիկ, որոնք հետզհետե ծնունդ առան և ժամանակակից լուսավոր մտքերը տարածեցին մեր երկրի մութ ու մոռացված խորշերում և անկյուններում։

1866

ԵՐԿՈՒ ՔՈՒՅՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա

Ես տասներկու տարեկան էի և կարդում էի Շամշուլդա (Սամշվիլդո) գյուղի քահանայի մոտ։ Մեկ ամառային շոգ օր էր։ Երկու հաստ տանձի ծառեր կային տան հետևը. նրանց մեկի ստվերում տերտերն էր նստել և սաղմոս էր քաղում, իսկ մյուսի տակ ես՝ տերտերից հեռու նստած, որպես թե դաս էի սերտում. բայց երևա էր միայն գրքի դիմացը, իսկ աչքերս մի անբնական դիրքով այս կողմ այն կողմ էին նայում, մանավանդ դեպի տերտերը շուտ-շուտ էի գցում, որ տեսնեմ արդյոք քունը չտարա՞վ շատ սաղմոս մրմնջալով, որ վեր կենամ տեղիցս ու փախչեմ դեպի գետը և խառնվիմ լողասեր երեխայոց հետ. բայց այդ ժամանակ ես բոլորովին ուրիշ դեպքի հանդիպեցի, այնպիսի դեպքի, որ մինչև այսօր էլ չեմ կարողանում առանց սարսափելու հիշել։

Նինջն արդեն սկսել էր բռնանալ տերտերիս վրա և հույս կար, որ մինչև նիրհման հասցներ, հանկարծ մի անծանոթ երիտասարդ եկավ, և չգիտեմ ի՛նչ ասաց, ի՛նչ չասաց, տերտերս բոլորովին բացափվեց և սկսեց գունափոխվել։ Այս ժամանակ ես արդեն ոտքի էի կանգնել ի պատիվ նորեկ հյուրին, բայց այնքան մոտիկ չէի, որ հասկանայի նրանց ցածր ձայնով խոսիլը։ Տերտերս հրամայեց ինձ, որ երթամ տուն հաց ուտելու։ Ես ճանապարհ ընկա, բայց հիշյալ երիտասարդը այնպես գրավեց ինձ, որ մի անսովոր հետաքրքրություն ստիպեց ինձ հետամուտ լինել և իմանալ, թե ո՞վ է արդյոք այդ պարոնը, և այդ պատճառով սկսեցի բախչի մեջը մլոլ-մլոլ անել։ Սրա վրա շատ ժամանակ չանցավ, երիտասարդը տերտերիս աջը համբուրեց և ճանապարհ ընկավ այն կողմը,

որ կողմով որ և պետք է երթայի հաց ուտելու։ Ես հասա նրա քամակից և երեխայական հետաքրքրությամբ սկսեցի երեսին նայել, ոտքին նայել, և այսպես գրավվելուս համար մի քանի անգամ էլ ոտքս քարին դիպչելով վեր ընկա և կարմրեցի, բայց չընդհատեցի մի նկատողությունքս։

Մի վայելչակազմ երիտասարդ էր այս մարդը, նորաբույս բեղերով ու մորուքով, խոշոր աչքերով ու խիտ ունքերով։ Մի գեղեցիկ հրացան ուներ, որ արծաթաբանդ լինելով՝ վառվում էր, անդրադարձնելով արևի ճառագայթները։ Արծաթաբանդ էր և ատրճանակը, որ խրած էր արծաթի քամարի տակ, որից կախ էր արած և արծաթապատ խանչալը։ Այսպիսի զարդարանք չեն ունենում օրական աշխատանքով ապրող գյուղացի երիտասարդները, այլ նրանք միայն, որոնք հնձում են, առանց ցանելու կամ ոչ ցանում են, ոչ հնձում են, այլ «ցա՛ զսմաթ» ասելով՝ մի գիշերային ճամփորդություն են անում իբրև զբոսանք և առատ գրպաններ որսում մութ անտառներում։ Երիտասարդը ամենևին ուշք չէր դարձնում ինձ վրա և կարծես չէր տեսնում, որ ես որսկանի շան պես իր չորս կողմովը պտուտ էի անում և քիչ էր մնում ոտքի տակն ընկնիմ։ Այսպես շարունակվեց մեր ճանապարհորդությունը, և ես մոռացա, որ արդեն գյուղից դուրս ենք եկել։ Այս ժամանակ նոր արդեն տեսավ ինձ երիտասարդը և սկսեց հարցնել։

— Դու ո՞ւր ես գնում, բա՛լա ջան։

Ես շփոթվեցի և նոր աչք բացի, տեսա որ հեռացել եմ ճանապարհից, սկսեցի կցկտուր կերպով պատասխանել, թե ես գնում եմ հաց ուտելու։

— Դու ո՞ւմ տղան ես,— հետո հարցրեց։

Ես պատասխանեցի։

— Հա՛... մեր... տղան ես... Դե գնա՛, բալա՛ ջան, գնա՛ հաց կեր։

Մեր... ասելով, ի՞նչ ուզեց ասել, չհասկացա, բայց թեազընությամբ ենթադրեցի, թե սա իմ ազգականը պետք է լինի, բայց ինչո՞ւ այսպես սառնությամբ է վարվում ինձ հետ, իմանալով, որ ես այստեղ օտար եմ. պետք էր որ այստեղից գգվեր ինձ, ինչպես իմ մյուս բարեկամներս անում էին պատահած ժամանակը։ Ես սկսեցի ավելի խոր նայել երեսին և անշարժ կանգնել։ Նա դուրս եկավ ճանապարհից, վեր բերավ ուսից յուր արծաթաբանդ հրացանը, ազզաբուն[1] նայեց և դրավ ուշադրությամբ։ Նա նստած էր։ Հանեց քամակից քաշ արած մաշկեկի միջից ատրճանակը և այն էլ դրավ մոտը։ Հետո դրկին նայեց ինձ և մի խոր հառաչանք արձակեց կրծքից՝ քանի մի էջկտուր խոսքերի հետ, և ապա՝ դառնալով դեպի ինձ, ասաց.

— Բալա՛ ջան, գնա՛ տերտերիդ ասա, գա ինձ հաղորդի։

Ես սկսեցի զարմանալ և անշարժ մնալ։ Այս մարդը հիվանդ չէ, մի բան չէ, ինչի՞ է ուզում հաղորդվիլ, ասացի ինձ։ Բայց նա կրկնեց իր խնդիրը։

— Գնա՛, բա՛լա ջան, գնա՛։ Ես հեռու տեղ պիտի գնամ, կարելի է ի՛նչ պատահի ճանապարհին, դրա համար ուզում եմ հաղորդվել։

Ես հնազանդեցա և հազիվ երկու-երեք քայլ հեռացել էի, հանկարծ թնդաց ատրճանակը և գյուղացիք դիմացին նկատելով, սկսեցին վազել դեպի իմ անծանոթ բարեկամս։ Այս ժամանակ ես ետ նայեցա և երիտասարդի կուրծքը արյունաթաթախ տեսնելով, ուշագնաց ընկա վայր։

Բ

Աշունք էր։ Մի անտառուտ ձորամիջում մեծ խարույկ էին վառել ութ գիշերեզնարած, որոնք, մին քան զմյուսը, հաստաբաղուկ և քաջառողջ երիտասարդներ էին։

— Տղե՛ք, ի՞նչ սազ կգա էս կրակին,— ասաց նրանցից մինը, ընդհատելով հասարակաց խոսակցությունը։

— Լավ խո՛զ,— պատասխանեցին մի քանի հոգի միաբերան։

— Գե՛, ո՞վ եք պատրաստ։

— Ե՛ս. ես է՛լ, ես է՛լ,— լսվեցին քանի մի ձայներ։

— Հենց ո՛ւմ որ կհրամայես,— ասաց մեկ ուրիշն էլ։

— Է՛դ լավ ասեցիր,— պատասխանեց առաջարկողը։— Ես

---

[1] Ղզոթի, աղզոթի—հրացանի կայծքաքի մոտի նեղ անցքն է, ուր լցնում են վառոդով. հրացանը լցնելուց հետո, այդ աղզոթու վառոդը կայծից բռնկվելով, արաքացնում է հրացանը։

երկուսիդ կհրամայեմ, որ գնաք մեկ լիվ խոզ բերեք, երկուսիդ էլ, որ գնաք հաղող բերեք, երկուսիդ էլ, որ գնաք մեկ պղինձ, մեկ ջրաման, աղ, հաց բերեք. երկուսս էլ կմնանք էստեղ։ Դե՛, վեր կացեք։ Խոզի դնչիցը կբռնեք ուսուլով ու էն սահաթը ղայիմ կկապեք, որ ձենձուն չհանի ու խոզարածներին զարթացնի։ Հաղողը ճաղարանց բաղիցը կբերեք. ծոցներդ քարով, հողով լցրեք, որ բաղմանչին պատահի, աչքերը հող ածեք։ Դուք էլ պղի՛նձի գնացողներ, էնպես պետք է մտնեք գեղը ու էնպես դուրս գաք, որ ոչով չտեսնի, ոչ մի շուն չհաչի։ Հասկացա՞ք, թե չէ։ Դե՛, աստված կանչեցեք, գնացեք։

Պարոն կարդացող, հավատալդ կգա արդյոք, որ մեր քաջերը առանց փոքր-ինչ մտածելու և ձանձրանալու ուրիշների սեփականությունը կողոպտելու գնացին և այն էլ աստված կանչելով։ Եթե ես լինեի, ալարս կգար և ամենևին տեղիցս չէի շարժվիլ, բայց նրանք՝ որսորդի շունը քեզ օրինակ։ Որսորդը հրացանը ուսն առնելուն պես, շան աստղը փայլում է, այնպես է ուրախանում ու իսկույն առաջ ընկնում, որ կարծում ես... ի՞նչ կարծես, ոչինչ էլ չըկարծես։ Այսքանը ստույգ է, որ ջիրիդի սովոր ու թալիմ առած ձին զուռնի ձիահանգին որ լսում է, ոտքերը գետնին է զարկում, ուզում է կապը կտրել, դուրս ընկնել գոմից և շլինքը ծոմռելով օձապտուտ ձևի արշավանքով զվարճանալ։ Այնպես չե՞ն միթե տանցի ու լեզգինկայի սովոր աղջկունք ու երիտասարդք, երբ այդ եղանակը հնչում է մուզիկան կամ զուռնան։ Այսպես են և փահլևանները և կռվասեր եզ ու գոմեշները, երբ հանում ես իրանց ախոյանի առջև։ Քաջությունը ոչ խելք է և ոչ նյութ, այլ մի ոգեկան ույժ։ Ում մեջը որ այդ զորությունը կա, գործադրելու հարկավոր դեպքերում ոգեվորում է նորան։ Մի խոզի դունչ կապել, որ ձայն չհանի կամ այգեպանի աչքերը հող ածել, որ չճանաչի իր թշնամուն, ավազակների համար դոքա այնպիսի ուրախացուցիչ ու զվարճալի միջոցներ են, ինչպես մեզ համար մի հաջողակ հաճելի խոսք ասելը մի գեղեցկուհու։

— Ի՞նչ ես փիքր անում, Ա՛րզուման,— հարցրեց մնացողներից մեկը մյուսին՝ կրակի վրա նորանոր գերաններ դնելով, թեև առանց էն էլ ոչ թե մեկ, այլ քսան խոզ էլ կարող էր խանձել։ Երբ որ վեց հոգին գնացին և մնացին այս երկուքը, դոքա սովոր լինելով այդպիսի բաների, ոչինչ մտածողության մեջ չընկան, թե արդյոք իրանց ընկերքը հաջողությամբ կվերադառնա՞ն, թե՞

կընկնին թակարդի մեջ, և վաղը իրանց անունն էլ նրանց հետ կըխայտառակվի ջահիլությունը մոռացած ծերերի առջև։

— Ես ոչինչ բանի վրա փիքր չեմ անում,— պատասխանեց Արզումանը,— բայց էս գիշեր մեկ երազ եմ տեսել, էս սաղ օրը դրա վրա եմ միտք անում, թե յարաբ ի՞նչ պետք է պատահի։

— Խե՛ր ըլի, ասա տեսնեմ ի՛նչ ես տեսել։

— Մի սպիտակ ձիու վրա նստած էի։ Էնպես մի ձի էր, որ աստղերի հետ էր ուզում խաղա։ Ես էլ յարաղս կապել էի, ամեն սարքուկարգը վրաս էր։ Գեղի առաջին խաղացնում էի ձիս, բոլոր գեղացիք ինձ էին թամաշա անում ու շատերն էլ կանչում էին—վե՛ր արի, վեր կընկնիս։ Ես նրանց չէի լըսում, ես մտիկ էի տալիս, որ տեսնեմ Հերիքնազս էլ ինձ տեսնո՞ւմ է, թե չէ։ Հենց էս փքրումն էի, մեկ էլ տեսնեմ մի քանի հարս ու աղջիկ, Հերիքնազս էլ նրանց միջին, ճանապարհի ղրաղին կանգնել, ինձ են թամաշա անում։ Էս որ տեսա, ավելի տաքացա ու ձիուս գլուխը բաց թողի։ Ձին թռավ, էլ չկարացի թե գլուխը բըռնել էի...

— Հետո՞, ո՞ւր գնաց ձին։

— Ձին քոռացավ, թե աչքերն արնով լցվեց, չեմ գիդա, ճամփեն ծռեց ու մի բաշ ընկավ էդ աղջկերանց մեջը։ Երկու հոգի ընկան ձիու տակը, ձին գլխի վրա տնկվեց, ես էլ բերանքսվեր գետնին փռվեցի։ Դրա վրա զարթեցի։ Ի՞նչ կասես, սա լա՛վ նշան չի։ Ձիու տակ ընկնողը Մարիամն ու Հերիքնազն էին։ Աշկարա երևում էր, որ ես մուրազիս չպիտի հասնեմ։

— Ի՞նչ ասեմ, օրը գիտե։ Շատ անգամ մարդ փիս երազ էլ տեսնում է, բայց թե օրը բարի է, երազն էլ բարին է կատարում։ Դիփ սուտ, աստված ըղորդ։ Օլաջաղա չարա յոխ։ Ինչ որ լինելու է, կըլի, երազի ըռխին չի մտիկ տալ։

Այս միջոցին կաթսայի գնացողները եկան։ Հացաղ (աղ), ջըրաման էլ էին բերել. ու մի ուրիշ կապոց էլ դրին Արզումանի առաջը։ Արզումանը բաց արավ այդ ծրարը և նրա միջից հանեց մի եփած շաղ հավ ու մի քանի հատ գաթա։ Արզումանը իսկույն իմացավ, թե ինչ տեղից պետք է լինի այդ, և թեև շատ ուրախացավ այդպիսի հուսո նշաններ ընդունելով, բայց՝ այսուամենայնիվ, սաստիկ բարկացավ, որ իր հրամանը ճշտիվ չեն կատարել գնացողները։

— Տղե՛ք, դուք մեր անունը պետք է խայտառակեք,— ասաց Արզումանը բարկանալով։—Ես ձեզ ասեցի էնպես պետք է մտնեք

գեղը ու էնպես գուա գաք, որ մի շուն, մի կատու էլա չիմանա. ձեզ ինչպե՞ս գտան, որ էս բաներն ուղարկեցին։

— Ա՛ստվա՜ծ, երկինք, Արզուման, մի հոգի էլա չի իմացել։ Մենք ամեն բան վեր կալած նեսունց տան կշտովն անց էինք կենում, մեկ էլ տեսնենք մթնումը չափարի տակին մի շվաքի պես բան է երևում. մոտեցա, տեսնեմ մի հարս։ Ես ասի՝ հրես կփախչի որտեղ որ է, բայց նա փեշիցս բռնեց ու էդ տվավ լուռ ու մունջ, առանց մի խոսք ասելու։ Հետո ես ճանաչեցի. ասի, դու Մարիամն ե՞ս. նա գլխով արավ ու փախավ։

Արզումանը գլուխը քաշ դցեց ու հառաչելով փնթփնթաց քթի տակին։ «Երա՜զ, երա՜զ»։

Այս ժամանակ հրացանների ձայներ լսվեցին։ Տղերքը հանկարծ վեր թռան տեղերիցը և սկսեցին կասկածել՝ թե չլինի՞ իրանց ընկերների վրա հարձակվեցին այդ մարդասպան գործիքները, բայց սրա վրա շատ չանցավ, հաղողի գնացողներն եկան։ Շալվարների լեն փոխկերքը հաղողով ու խնձորով լցրել ու խուրջինի պես ուսներին էին գցել։ Բեռը ցած դրին ու կարմրած երեսներից քրտինքը գտակներով սրբելով՝ նստոտեցին կրակի ղրաղին։

— Տղե՛ք, ոչով հո չտեսա՞վ ձեզ,— հարցրեց Արզումանը։

— Բաղվանչին տեսավ... վա՛յ էն տեսնելուն, որ տեսավ... իրան մահը տեսավ... աշխարհքը գլխին մթնեց, մեզ չճանաչեց,— ասաց գողերից մինը հոգնածությունից շնչարգելվելով։

— Տղե՛ք, չլինի խեղճի օրը սևացրիք։

— Չէ՛, չէ՛... մի ծիծաղ էր, ծիծաղ։ Դեռ էսպես խելոք բան չէինք արած։

— Մատանք բաղը թե չէ, գնացինք բաղվանչու դագին մտիկ արինք, տեսանք էնտեղ չի։ Դես ու դեն ընկանք, տեսանք վերի մեծ խնձորքի տակին քամակի վրա պառկած խոմփացնում ա։ Մենք էլ էս կուզեինք։ Շալվարս հանեցի տվի Մագոյին, ասի դու գնա արխային հաղող քաղի, ես սրան կպահեմ։ Մագոն գնաց, ես ուսուլով մոտեցա բաղվանչուս, խանչալս հանեցի ու մահվան հրեշտակի նման գլխավերևը կանգնեցի։ Մի խելիմ ժամանակ մեռածի պես խոմփացնում էր, մեկ էլ էրաղ տեսա՞վ, խշխշոցն ականջ մտա՞վ, թե մոծակները զոռեցին, մեկ էլ տեսնեմ սա ժաժումաժ ա գալի։ Չէ՛, տեսա, որ սա գլուխն էլ ա ուզում բարձրացնի, ես խանչալս պապղացրի։ Բաղվանչիս մահն առաջին տեսավ, թե չէ, քաղցր քնի մեջ մտավ։ Մագոն իրա բանը որ պրծավ, բաղիցը դուրս եկավ,

ինձ շվացրուց։ Մենք կիսաճանապարհին էինք, որ բաղվանչին նոր վեկացավ, քամակներիցս թվանք դցեց. մեկէլներն էլ նրա ձենի վրա իրանց թվանքները դարդկեցին...

Խոզի գնացողները նույնպես եկան։ Սրանք էլ իրենց արածները պատմեցին և շուտով կատարեցին խոզի «աուտոդաֆեն», այսինքն խանձեցին։ Արզումանը ոչինչ բանի ձեռք չէր տալիս, ոչինչ չէր խոսում, միայն երբ որ խոզը մաքրեցին և կտրրտելու վրա էին, առաջարկեց, որ մի անդամը (ազդրը) կտրեն, տան իրան և թողնեն երթալու գյուղը։ Տղերքը հասկացան նրա միտքը և իսկույն կատարեցին նրա խնդիրը։ Արզումանն ամեն բանից իր բաժինն առնելով՝ ճանապարհ ընկավ ոտքով դեպի մի աննշան խրճիթ, իսկ երևակայությամբ դեպի Մուհամմեդի յոթներորդ երկինքը։

Գ

Դ... գեղի վերի թաղումը մի տուն կար բոլորովին կղզիացած մյուս տներից։ Այդ տան չորս կողմովը բավականին բարձր չափար էր քաշած, որ պարսպի չափ ամրություն ուներ, և ինչպես ասում են հեքիաթներումը, զուշն իրա թևովն, օձն իրա փորովը չէր կարող դրա վրայով ներս թափանցել։ Ժամանակով մեծ տուն էր այդ տունը։ Մի անգամից ութ-ինն օրորոց էր օրորվում այդ տանը, չորս-հինգ թորոն հաց էր թխվում աստծու օրը։ Երկու գութան էր դուրս գալի այդ տանիցը, վաթսուն գլուխ կով ու գոմեշ էր կթվում, սուրվով ոչխարներ, բոլուկներով խոզեր, իլխիներով ձիաներ էին պահում։ Այդքան ապրանքի կառավարության համար ոչ մի վարձկան ծառա չունեին։ Տասն ախպեր էին, որդոց ու թոռանց տեր, որոնց թիվը հասնում էր մինչև յոթանասունի։ Բայց երբեք չէր պատահում, որ դրանք ամենքը միասին երբևիցե մի սուփրի վրա գտնվին, միասին իրանց նահապետի չորս կողմը ժողովվին։ Մի քանի հոգի տարվա մեծ մասը սարերումն էին անցկացնում, ըստ որում ոչխարներ էին պահում. մի քանիսը, որպես տավարած՝ գոմերումն էին մնում, որ մի ավուր չափ հեռու էր գյուղիցը, մնացածներն էլ հեռավոր դաշտերում վարուցանքով էին պարապում։ Այս հանգամանքը այն վատ կողմն ուներ, որ վայրենության մեջ էր ձգում նրանց, հեռու պահելով տնական և հասարակական

կյանքից, բայց մյուս կողմանե այն լավությունն էլ ուներ, որ տան բոլոր անդամները իրարմե հեռու մնալով, միշտ իրարու կարոտ էին քաշում և միմյանց հետ սիրով մնում։ Ահագին մեծություն ուներ այդ տան շինությունը, և եթե այդպես շեն չլիներ, մտնողի վրա սարսափ կբերեր, հիշեցնելով հեքիաթների մեջ եղած դևերի բնակարանները։

Հարյուր երեսուն տարեկան էր, որ մեռավ այս տան վերջին նահապետը, և ինքը Հոբ Երանելու պես ականատես էր յուր բոլոր ժառանգների և հարստության կարճ միջոցում ոչնչանալուն, և նրա պես աստծու փառքը իր բերնից չպակասացրեց մինչև մահը։ Ես շատ անգամ եմ տեսել այդ նահապետին։ Հակոբ էր նորա անունը և միշտ միտս էր գցում հրեից Հակոբ նահապետին։ Շատ անգամ եմ համբուրել նրա ձեռքը և նա ինձ օրհնել է։ Նրա օրհնությունը մեծ տպավորություն էր գործում իմ մանկական սրտի վերա։ Սուրբ էր համարվում դրանց օջախը և սովորություն կար գյուղի մեջ, նորապսակ հարս ու փեսաներին եկեղեցուց դուրս բերելուց հետո կբերեին դրանց օջախը համբուրելու։ Զոքում էին նորապսակները, օջախի քարից համբուրում և ծերունազարդ Հակոբի օրհնությունն ստանալով՝ գնում էին իրենց մուրազին հասնում։

Ահա այս տանից մնացել էին երկու աղջիկ միայն։ Մեծի անունը Մարիամ էր, իսկ փոքրինը՝ Հերիքնազ։ Մարիամին մի ղարաբաղցի մարդ ուզել էր և տան փեսա դառել, Հերիքնազին էլ իրենց մոտ էին պահում։ Հայտնի բան է, այն մեծ տանը չէին բնակում, այլ մի ուրիշ փոքր սենյակում։ Մարիամը շատ սիրուն էր, Հերիքնազն անանման էր. երկու հյուրիփարի։ Մարիամն ուզում էր Հերիքնազին տալ Արզումանին, հետևելով յուր սիրելի քրոջ սրտի ընտրությանը։ Արզումանը նույնպես մեծ օջախի որդի էր, բայց այժմ յուր մոր մինուճարն էր։ Նա չուներ ոչ հարստություն, ոչ մի ուրիշ բան, բայց միայն մի քաջություն, մի անվեհեր սիրտ, որ շատ անգամ ի չարն էր գործ դնում։ Մի տեսակ ժառանգական հպարտություն կար նրա մեջ, որովհետև նա իր չքավոր տեղովը հարուստ ու կարող մարդու շլինք չէր ծռում և նրանց բոլորին իրան թշնամի, իր հայրական սեփականության հափշտակից համարելով՝ միշտ աշխատում էր վնասել նրանց, որքան որ իր ձեռքիցը կգար։ Արզումանի ահից ոչ ոք չէր կարողանում մի լավ ձի պահել։ Այս տղան ոչինչ բան չէր գողանում բացի ձիուց։ Սրա պատճառը հոգեբաններն ավելի լավ կիմանան. միայն պետք է այս էլ ասեմ, որ այսուամենայնիվ անհնարին բան էր, որ մի անգամ Արզումանին տեսնողը չսիրահարվեր նրա վրա. իր բարեկազմ և կատարելատիպ հասակի հետ մի գրավող և քարշողական զորություն էլ ուներ այդ տղան։ Այդ հատկությամբը նա կախարդում էր իր բոլոր ընկերներին և ամեն մի խումբ կազմելիս միշտ նրան էին ընտրում իրենց գլխավոր, նա էր լինում տնօրենը, առաջնորդողը, հրամայողը։ Նրան սիրում էին յուր թշնամիներն անգամ ու շատ անգամ տեղը եկած ժամանակ ասում էին. «Մի ձի չի, մենք գիտենք, որ դու ես տարել, բայց քու չարին փոխ ըլի»։ Պետք է այս էլ գիտենալ, որ այս գողացիքը այն գողացիներիցը չեն, որոնց մեջ մի քաջ երիտասարդի երևիլը հազվագյուտ բան լիներ, և այդպիսի մեկը երևելուն պես սարսափ գցեր ամբողջ գյուղի վերա։ Գող Եղիկը, որ սարսափեցնում էր ամբողջ Շիրակը, այս գյուղը մտած ժամանակ հավի պես կուչ էր գալիս, գիտեր, որ այս տեղի ամենահետինը անգամ իրան բանի տեղ չի դնիլ։

Դ

Կեսգիշերը մոտ էր լրանալու։ Լուսնյակը մի ջիդաբոյ (նիզակաչափ) բարձրացել և արեգակի ճառագայթները գողանալով սրփռել էր մի անկողնու վրա։ Այդ անկողինը մի սրահի մեջ էր, որ ուղիղ դեպի արևելք էր նայում։ Նախընթաց գլխում հիշված ցանկապատի մեջն էր այդ սրահը, և Մարիամն ու Հերիքնազն էին նույն անկողնու մեջ պառկած։ Քնո հրեշտակը տարածել էր նրանց վրա իր թևերը և շատ քաղցր երազների մեջ էին նրանք այս րոպեիս։ Մարիամի մարդ Շամիրը, որ իր բոլոր կյանքը որսորդությամբ էր անցկացնում, այժմ քաղաք էր գնացել յուր աշխատությանց պտուղը տնական կարիքների հետ փոխանակելու։ Նա հրացանը երկու գնդակով լցրել, կախել էր կնոջ մոտ, խստիվ պատվիրելով, որ մի անհավատարիմ ոտք էդտեղ մտնելուն պես առանց երկար մտածության զոհվի դրան։ Հերիքնազն էլ իր համար մի ատրճանակ ուներ և դրա վրա միշտ փորձ անելով ուզում էր իր սիրածի ունեցածին հասցնել յուր ճարտարությունը։ Երբ իմանում էր այսինչ նշանի խփելու խալաթը Արզումանը ստացավ, նա այդ օրը մի տասն

անգամ ավելի էր կրկնում իր փորձերը, որոնց ձայնը լսելով՝ դրացիները կարծում էին, թե Շամիրը կլինի անպատճառ։ Թեև Հերիքնազից ամեն բան կհավատային, բայց այդ բանին ականատես չէին լինում։ Շամիրը միշտ գանգատվում էր, թե բարութս պակասում է, և չէր գլխի ընկնում, որ Հերիքնազն է նրա վառոդի գողը։

Լուսնյակի շողքը ուղիղ Մարիամի երեսին ընկնելով՝ զարթացրեց նրան. հենց այդ ժամանակ մի ոստյունի ձայն հասավ ականջին։ Արզումանն էր այդ, որ չափարի վրայից թրմփաց։ Մարիամը փոքր-ինչ ահ զգաց և ձեռքը մեկնեց դեպի հրացանը, բայց մեկ էլ մտածեց, որ անպատճառ Արզումանը կլինի, որին անհամբեր սպասում էր, թեև չէր պատահած ոչ մի անգամ, որ գիշերով նրան հյուրընկալած լինի։ Ասում են՝ սիրտը սուրբ կըլի ու նախազգալու զորություն ունի։ Ղորթ է թե սուտ այս բանը, ես չըգիտեմ, միայն այս անգամ ճշմարտացավ Մարիամի նախազգացմունքը։ Շտապով հագավ նա իր շորերը և նստեց տեղի մեջ։ Արզումանն արդեն գիտեր Շամիրի բացակա լինելը, այդ պատճառով համարձակ առաջ գնաց և Մարիամին տեսնելով՝ «բարի իրիկուն» ասաց։

— Արզուման, դու ե՞ս,— հարցրեց Մարիամը, որպես թե լավ չճանաչելով։

— Ես եմ,— պատասխանեց Արզումանը։

— Էդ ի՞նչ կա ձեռիդ։

— Ոչինչ, մի քիչ միս է, մի քիչ էլ հաղող է ու խնձոր։

Մարիամը վեր կացավ իսկույն, ձեռքից առավ այդ բաները և նրան համեցեք արավ նստեցրեց, պատվիրելով, որ Հերիքնազին չզարթացնի։

Հերիքնազը զարթել էր և սուտ քունն էր դրել իրան, գլուխը յորղանի մեջ թաղելով։ Բայց Արզումանը, նայելով այդ յորղանին, սաստիկ բարկանում ու նախանձում էր, որ իր սիրուհին իր աչքի առաջ այդպես անգթությամբ փաթաթել, անջրպետել է իրանից։ «Ես դեռ մի վերմակ՝ չափ երջանկություն չունիմ», երևի ասում էր նա իր մտքումը։ Նրա երևակայության առաջ այս բոպեիս յորղանը, դոշակը, բարձը, անկողնակալը, և մինչև անգամ շրջակա պատերն ու քարերը ոգի ստացած՝ որն ուրախանում ու համակրություն էր ցույց տալիս իրեն, որն էլ տնազ էր անում և խնդում Արզումանի վրա։ Նրա աչքում յորղանը այս վերջիններից էր անշուշտ։

Մարիամը Արզումանի բերածները տեղավորելուն պես ետ քաշեց կրակի անթեղը և խանձողների ծայրերն իրար մոտեցնելով կրակը վառեց։ Մի քանի բոպե չանցած՝ ձվածեղ շինեց և մի քանի շամփուր խորոված։ Արզումանը շատ ասաց, որ իշտահ չունեմ, հաց եմ կերել, ջափա մի՛ քաշիլ, թեև սուտ էր ասում, և Մարիամն էլ թեպետ հավատում էր նրա խոսքին, բայց անկարելի բան էր, որ իր ուզածը չաներ։

— Դե որ էդպես է,— ասաց Արզումանը,— քրոջդ էլ վեր կացրու, թող նա էլ գա հաց ուտի. մինչև նա չվեր կենա, ես թիքա չեմ դնիլ բերանս։

Մարիամը համաձայնության ժպիտ ցույց տվավ ու գնաց, ներսը շոր փռեց, ճրագ վառեց, սուփրա գցեց, Արզումանին ներս կանչեց, նստացրեց ու դուրս եկավ, որ քրոջը զարթացնի։

Արզումանը ներս գնաց թե չէ, սուտ քնած Հերիքնազը գլուխը բարձրացրեց և սկսեց չեմ-չեմ անել քրոջ առաջարկությանը և կամակորվելով՝ չուզեց ներս գնալ։ Մարիամը ներս գնաց ու ուզեց սուտ ու մուտ պատճառներով քրոջ չգալը թույլատրել։

Արզումանը ավելի պարկեշտության վերագրելով այդ բանը, լռեց, բայց հալալ՝ հաց էլ չկերավ։ Նա ավելի լավ էր համարում Հերիքնազից մոտիկ քաղցած նստել, քան թե նրանից հեռու՝ առատ սեղանին։ Շուտով դուրս եկավ իր առաջվա տեղը նստեց։ Մինչև Մարիամը սուփրեն կհավաքեր, ամեն բան իր տեղը կդներ, Արզումանը աչքը գցել էր ճրագին ու տեսնում էր, ինչպես գիշերաթիթեռնիկը ճրագի շուրջ կողմը պտտվելով՝ այրում էր իր թևերը, որով վերջապես խեղացավ բոլորովին և ընկավ ճրագի վրա, այրվեց։ Արզումանը, որի համար այդ բոպեն ամենայն բան սեր էր շնչում, սկսեց կցկտուր խոսել— «ճրագին սիրում է փարվանան, գլխովը պտտվում է, բայց անգութ ճրագը նրան չխղճալով՝ էրում է»։

Այս լսեց Հերիքնազն ու սկսեց փնթփնթալ քթի տակ, թե՝ «փարվանան ճրագը չի սիրում, ուզում է հանգցնել նրան, նա էլ ջզրու էրում է»։

«Լեզվիդ մատաղ», ասաց Արզումանն իր մտքումը, «էդ քաղցր լեզվովդ, որ դու անիծես էլ, ես օրհնենքի տեղ կընդունեմ»։— Ախչի, էդ ի՞նչ ասացիր, մեկ է՛լ ասա,— ստիպեց Արզումանը։

— Ասեցի, որ հասկանաս, չասեցի, որ սովորես,— պատասխանեց Հերիքնազը իր սովորական հեգնական ձևով։

— Ես հասկացա, ինչ որ ասացիր։

— Որ հասկացար, էլ ինչի՞ ես ասում «մեկ էլ ասա»։

— Հենց էնպես, ուզում եմ խոսացնեմ։ Ինչ որ մեծացել ես, էլ քու խոսելը չեմ լսել, հենց իմանում էի, թե խոսելը մոռացել ես։ Ամմա ինչ կմոռանաս, դուն էն պտուղն ես, որ... Մի՞տդ է, որ մի օր բաղիջը տուն գալիս, էնքան խոսեցիր, որ ես ասացի՝ «Ախչի՛, քիչ խոսի, գլուխս տարար», դու էլ բարկացար վրես... Ո՞վ գիտեր, թե հետո դու էդպես...

— Էդպես ի՞նչ։

— Հիմա էլ ես չեմ ասիլ քու ջգրու։

— Մի՛ ասիլ, ես էլ չեմ խոսիլ քեզ հետ, որ էլի չասես «գլուխս տարար»։ Թե դու լավ մարդ ես, էս կեսգիշերին ինչի՞ ես եկել մեր տուն։ Դու չէիր գիտում, որ Շամիրը տանը չի՞։

— Գիտում էի, էնդուր եկա։

— Որ եկար, ի՞նչ կարող ես անել, հրես դաբանչին կշտիս դրած, ո՞վ կարա ինձ մոտենալ։

— Դաբանչեդ ինձ համար ես դրել կշտի՞դ... Էլի էն գիժ աղջիկն ես, Հե՛րիքնազ, ես հենց իմացա, թե հմի խելոքացել ես... Ա՛խչի, ա՛խըր...

— Ախր ի՞նչ...

— Ոչինչ... Դու ասում էիր չեմ խոսիլ, բա ինչի՞ ես էդքան խոսում։

— Ի՞նչ անեմ, զոռով խոսեցնում ես։

— Դե մի լավ բան խոսի, մի հեքիաթ ասա, ականջ դնենք։

— Ես հեքիաթ չեմ գիտում, դո՛ւ ասա, ես ականջ կդնեմ։

— Վայ թե խաբես ինձ, դու քնես, ու ես հենց իմանամ թե ականջ ես դնո՞ւմ։

— Չեմ քնիլ, ասա՛։

— Դե ականջ դիր, ասեմ։

— Լսում եմ։

— Էլել ա, չի էլել, մի աղջիկ ա էլել...

— Անումն էլել ա Հերիքնազ...

— Չէ՛, Հերիքնազ չէ, Թող ասեմ։

— Լա՛վ, դե ասա՛։

— Էդ աղջիկը ունեցել ա...

— Մի քույր, անումը Մարիամ. լա՛վ, դե ասա։

— Էդ աղջիկն ունեցել ա մի պառավ մեր...

— Էդ Գյուլլուզարն ու իրան աղջիկն են, իմացա, իմացա...

— Էլ չեմ ասի, ականջ չես դնում, դու չարություն ես անում, քեզ պետք է պատժեմ...

— Հը՛... ձեռք չտաս, թե չէ, հրես լիքը դաբանչին կշտիս դրած...

— Աբա տեսնեմ, էդ ի՞նչ դաբանչա է...

Այստեղ Արզումանը Հերիքնազի երկու ձեռքը ճանկը գցեց ու սկսեց մի ձեռքով մի թուշին, մյուսով մյուս թուշին թեթև ապտակներ տալ և ցավն ամոքել ջերմ համբույրներով...

— Դե հիմա խելոք կկենա՞ս թե չէ,— խոսեց վերջապես Արզումանը։

— Թող, թե չէ՝ ձեռքդ կկծեմ...

— Չեմ թողնիլ, մինչև չասես՝ սիրո՞ւմ ես ինձ, թե՞ չէ։

— Դե թո՛ղ, լավ։

— Չէ՛, պիտի ասես։

— Արզուման ջան, թո՛ղ, հո՛գուդ մատաղ։

— Ե՛ս քեզ մատաղ, ե՛ս։ Ասա մի անգամ, «քեզ սիրում եմ», էս սհաթիս թողնեմ։

— Ինչի՞, զոռով ե՞ս, չեմ սիրում։

— Բաս հիմի կթողնեմ, իմացա... տեսնում եմ, որ ինձ չես սիրում։— Արզումանը խռովածի պես եղավ և ուզեց թողնել Հերիքնազին։ Բայց հիմի էլ Հերիքնազը իր հերթին չթողեց նրան և երկու ձեռքով փաթաթվեց շլինքին։ Արզումանի սիրտը այնպես շարժվեց, որ քիչ մնաց լաց լինի։

— Էլ ինչի՞ ես հարցնում, դու չե՞ս գիտում, որ սիրում եմ քեզ։ Սերը սրտումը կլինի, ոչ թե լեզվումը, որ չսիրեի, քեզ ո՞վ կարող էր էստեղ ներս թողնել,— ասաց Հերիքնազը և համբուրեց Արզումանի ճակատից։

— Բաս ինչի՞ չվեր կացար էլախտ, որ քեզ կանչեցինք։

— Ամանչեցի...

— Ամաչեցի՞ր, ա՛յ թե ամաչեցիր...

— Դե լավ, թո՛ղ հիմի...

Մարիամը լսելով, որ սոքա իրարու մեջ խոսակցություն են բաց արել, գիտությամբ մլոլ էր անում տանը, որ չգա և սրանց խոսակ-

ցությունը չխանգարի, բայց տեսնելով, որ ջահիլները շատ են շարությունն անում, դուրս եկավ, որ խելոքացնի։

— Էդ ի՞նչ քաղցր զրիցի մեջ եք, Արզումա՜ն։

— Ախչի, Հե՛րիքնազ, չես ամաչո՞ւմ, ինչի՞ ես խոսում։

— Բա ինչի՞ ա ինքը խոսում։

— Տղի ադաթն ա, կխոսի, աղջիկը պիտի չխոսկան կենա։

— Ինչի՞, ես ի՞նչ մեղավոր եմ, որ աստված ինձ աղջիկ է ստեղծել։ Էլ էս լեզուն ինչի՞ համար է, որ չխոսեմ։

— Լսում ե՞ս, Արզուման, ինչե՞ր է ասում մեր աղջիկ պարոնը։

— Շատ ըղորթ է ասում, ես ու իմ աստվածը։

— Հիմի կդրստես, մարդոց խասիաթը էդպես է։ Հիմա սա սուտ էլ որ ասի քեզ ըղդ...

Ցանկապատի դռան թխթխկոցը Մարիամի խոսքը դանակի պես կտրեց։

— Շամիրն է. Արզուման, շուտ արա՛ հեռացիր, թե չէ գլխներիս փիս բան կգա։— Այս ասելով ճրագը հանգցրեց Մարիամը։ Մթնից օգուտ քաղելով՝ Արզումանը մի վերջին համբույր էլ տվավ իր Հերիքնազին ու իսկույն հեռացավ։

Ե

Մարիամը դեռևս դուռը բաց չարած, փեսացու այցելվի հետքերը աշխատեց ոչնչացնել։ Հաղողը, միսը թաքցրեց քունջ ու պուճախներումը, կրակը անթեղեց և ճրագը հանգցրեց։ Վերջապես դուռը բացվեց, Շամիրը ներս մտավ, իջավ ձիուցը, վեր բերավ խուրջինը և սկսավ ձին ման ածել հայթումը։ Այդ երթևեկելու ժամանակ մի ոստյունի ձայն հասավ նրա ականջին։ Զափարի փուշը ճրթճրթալով՝ իմացուց Շամիրին, որ մի ծանր ոտք նրան ճնշեց վերևից։

Աստված մի՛ արասցե, որ մարդ խայնության կրքով վարակված լինի։ Չկա ոչինչ ցավ, ոչինչ ախտ, որ դրա չափ հալումաշող լինի մարդու հոգին։ Ինչ ասես, որ այդ բոպեին չմտածեց Շամիրը։ Մարդիկ սովորաբար արթուն ժամանակ շատ բան են ցնորում, երևակայում, երազում, նայած թե ով ինչպիսի հոգեկան տրամադրություն ունի, ինչ ձգտում, ինչ բաղձանք և վերջապես ի՛նչպիսի կիրք

և բնավորություն, ինչպիսի ճաշակ և հասկացողություն։ Մարդիկ կան, որ միշտ ուրախ են, միշտ զվարթ։ Սրա պատճառն այն է, որ նրանք բարի սիրտ ունին, հանգիստ խիղճ և մի վառ երևակայություն, որով իրական աշխարհից վերացած՝ միշտ իդեալական աշխարհումն են ապրում։ Այդպիսիները, որքան էլ անբախտ լինին, դարձյալ ամենից երջանիկն են։ Խելոք մարդը իր հոգու բոլոր հատկությունները իր բախտավորությանը կծառայեցնե, իսկ անխելքն իր անբախտությանը։ Այս վերջին տեսակիցն էր Շամիրը, որ երևակայելու շնորհք ունենալով՝ միշտ վատ բան էր երևակայում, փոխանակ արքայություն երևակայելու, միշտ դժոխք էր երևակայում, փոխանակ բարի հրեշտակի՝ չար սատանա, փոխանակ բարեգործության՝ եղեռնագործություն, փոխանակ սիրո և փաղաքշանքի՝ ատելություն և կոպտություն։ Շամիրը միշտ երևակայում է, որպես թե իր կինն իրեն անհավատարիմ է գտնվել, սկսում էր պռոշները կծոտել, ատամները կրճտացնել, կնոջ ննջարանը չերթալ, ինքն իրան խոովել, մոռանալով՝ որ իրականի մեջ այդպիսի բան չկա, որ այդ իր ցնորքն է։ Մի մարդ, որ առանց որևիցե պատճառի այսչափ կասկածոտ, այսչափ խայտի ու նախանձոտ լինի, ի՛նչ կլինի նրա դրությունը, եթե երբևիցե իր երևակայությունը իրականի փոխված տեսնի։

«Ճրագը վառված էր, ինչո՞ւ հանկարծ հանգավ, ո՞վ պիտի լինի յարաբ էս եկողը։ Ախմա՛խ, ախմա՛խ Շամիրս,— գլխին զարկելով՝ բացականչեց Շամիրը։— Ես ինչի՞ թխթխկացրի, ինչի՞ փախցրի որսս»։ Այսպես շարունակ քանի մի ժամ սկսեց երթևեկել և մոթմոթալ ինքն իրան։

Մարիամն իմացավ, որ իր մարդը մի բանի հոտ է առել, և սկսեց հարց ու պատասխանով իր դատավճիռը հորինել։ Հերիքնազը կատաղում էր ինքն իրան և անմեղությամբ երևակայում էր, որ եթե բանը դեպի վատը երթա, ինքը կասի ճշմարիտը և կպատնա անգամ Շամիրին, թե ինքը մի տղայի սիրել է և նրան է ուզում. ուրեմն նրա կասկածներն ու միջամտությունն այստեղ ավելորդ են բոլորովին։

Մարիամը տեսավ, որ մարդը շատ է ուշանում. մտածեց որ իր հարաբերությունը սովորականից չփոխի և ստիպի նրան ներս գալ։ Գնաց ձին առավ ձեռքիցը, ասելով «քանի՞ ման ածես»... Մարիամը ձին տարավ գոմը։ Շամիրը մնաց միառժամանակ տեղն ու տեղը փետացած։

Թարաքամի շունը քաղաք մտած ժամանակ պոչը փորի տակն է գցում և այնպես կուչ գալիս, որ տեսնողն ասում է սրա պես խեղճ ու վախկոտ արարած չկա աշխարհիս երեսին։ Բայց եթե այս միևնույն շանը տեսնես իր սովորական տեղը, իր ոչխարի մոտ, իր տիրոջ տան առջև, բոլորովին այլ հասկացողություն կկազմես նրա մասին։ Պոչը շամբար է անում, դնում մեջքին և այնպես է բոլթա տալիս վեհանձն առյուծի պես, որ թավադի որդին անգամ տեսնելիս կնախանձի նրա նազաշարժությանը։ Փորձ փորձիր ահա այստեղ մոտենալ նրան և դու կտեսնես այնուհետև, թե ի՞նչ գազանի հետ գործ ունիս։ Այն քաղաքացիք, որոնք քաղաքի մեջ են ճանաչում գյուղացոց, շատ սխալ գաղափար են կազմում նրանց մասին։ Նրանք այստեղ միայն խեղճություն և հիմարություն են երևցնում, ուրիշ ոչինչ, և այդ են տեսնում միայն քաղաքացիք և ավելի խղճում կամ արհամարհում։ Չեն կարծում, որ նրանք էլ են մարդիկ և իրենց ունեցած բոլոր կրքերը նրանց մեջ ևս կա և այն՝ չափազանցությամբ։ Ո՞ր քաղաքացին կարող էր հասկանալ թե Շամիրն ի՞նչ գազան է. բայց նա այժմ իր տունն է հասել, քաղաքում ներս քաշած պոչը այստեղ՝ չոբանի շան պես շամբար է արել, ուզում չ հասկացնել, որ ինքն է այս տան տերը, ուզում է իր տղամարդկությունը ցույց տալ։

Շամիրը Դիզակու արջերիցն էր։ Եկել էր Վրաստան, որպես թե մարդ դառնալու, բայց այնպիսի մի գյուղի մեջ էր ընկել, որ իրանք կարոտ էին դեռևս մարդանալու։ Մի բուդալա[1] տղա էր Շամիրը, երբ որ եկավ այս գյուղը և Մարիամենց տանը նոքարություն էր անում մի քանի տարի։ Հանգամանքը այնպես բերավ, որ Հակոբի մեծ օջախը անշքացավ և Մարիամին խորհուրդ տվին Շամիրին ուզի, որ տան փեսա դառնա, իրանց օջախի ճրագը վառ պահի. և այլ այսպիսի պառավական խրատներով Մարիամին պսակեցին Շամիրի վերա։ Այս ամուսնությունը Մարիամի սրտովը չէր, բայց մի անգամ որ ասաց ենազանդ եմ, էլ այնուհետև ոչինչ կարող էր անել։ Մի քանի ամիս որպես նորապսակ, սեր ցույց տվավ, և մեղբալուսինն անցնելուց հետո երբեմն՝ փորացավ, երբեմն՝ սրտացավ «ունիմ ասելով, չէր հոժարում իր ամուսնու հետ լինել։ Շամիրը «կզբում հավատում էր իր կնոջ ասածներին, բայց հետզհետե դեպի ինքը սառնություն նշմարելով՝ սկսեց մտածել, թե՝ «իմ կինը

[1] Բուդալա — անտուն, անտեղ, միայնակ, սալթ։

ինձ չի սիրում, ապա ուրեմն ուրիշին է սիրում անպատճառ»։ Այս անտեղի կասկածը հալում, մաշում էր Շամիրին։ Նա սկսեց ամեն մի տեղ գնացած ժամանակը երկար միջոց նշանակել և ինքը միշտ վաղորոք երևիլ՝ երբեմն մեջ գիշերին, երբեմն փոքր-ինչ ուշ կամ վաղ, որ իր կնոջ մոտ մարդ գտնի և կատարելապես համոզվի իր կասկածանաց մեջ, բայց երբեք չհաջողեցավ նրան այդպիսի մի բանի հետք նշմարել։ Եվ այս անհաջողությանց համար փոխանակ ուրախանալու, փոխանակ խոստովանելու նրա անմեղությունը, բարկությունն ավելի էր գալիս, թե ինչո՞ւ իր բոլոր ճիգն ու աշխատանքը իզուր են անց կենում։ Սրա համար միշտ առիթ էր փնտրում Մարիամին ծեծելու, և այդպիսի առիթներ քիչը՝ շաբաթը մի անգամ գտնում էր, բայց սրանով ոչ միայն չգրավեց Մարիամի սերը, այլ ավելի ևս զզվեցրեց նրան և սաստկացրեց նրա ատելությունը։ Այս անգամ ահա, որպես թե հաջողեցավ իրան վերջապես մի բան նշմարել, բայց ի՛նչպես սկսեր գործը, երբ ոչ ոքի երես չտեսավ։ Մտածեց, որ լռե մի առժամանակ, և լռեց։ Բայց վա՛յ այն լռելուն, որ սա լռեց։ Միայն արտաքուստ էր այդ լռությունը, իսկ ի ներքուստ՝ տանջում, մաշում էր ինքն իրան զանազան ցնորքներով։ Ներս գնաց վերջապես Շամիրը և լուռ ու մունջ շնթռկեց իր համար գցած տեղումը։

Զ

Արզումանը գնաց։ Մյուս օրը հախսը իրանն էր, այսինքն իր համար պիտի վարեին։ Տղայոց մոտ հասավ թե չէ, զարթեցրեց նրանց, թե եզնիքը վեր են կացել, կցրվեն, կկորչեն, առավոտյան ման կգանք, էլ չենք գտնիլ։ Առավոտյան արշալույսը երևաց թե չէ, հավաքեցին եզները, ականեցին ու յուրաքանչյուր գութանի եզները ջոկջոկելով, տարան լծելու։

— Ա՛րզուման, ո՞ր տափդ պիտի գնանք,— հարցրեց մաճկալը այնպիսի ձայնով, որ կարծես Արզումանը իրանից մի վերստ հեռու լիներ։

Այս գյուղացիք սովորություն ունեին խիստ բարձրաձայն խոսելու։ Նույնիսկ միմյանց կից, մի օջախի չորս կողմ նստած ժամանակ այնքան բարձր են խոսում, որ խամ մարդը կկարծի թե խո-

սողի զրուցընկերը նրա կողքին չի նստած, այլ կամ կտրին է, կամ մի այլ սենյակում, միջնապատով անջրպետված իրանից։ Իսկ հայերեն չիմացողը կկարծի, թե սրանք ոչ թե խոսում են սիրով, այլ կռվում են, և մի մեծ վեճ կա իրանց մեջ։ Ի՞նչ ասել կուզի, որ վեճ ու կռիվ եղած ժամանակ էլ խոսելու ձայնն այնքան է բարձրանում, այնպիսի բղավոց ու ճղավոց է լինում, որ ինչքան չափազանցացնես, գարձյալ իսկականի սովերը կլինի։

— Վերի հողերը, Ճաղարանց տափը,— պատասխանեց Արզումանը ավելի մեղմ և տխուր եղանակով։

— Հը՛մ... գիշերս կռվի երազ եմ տեսել...

— Երազ էլ որ տեսած չլինես, կռիվը լինելու է անպատճառ։

— Հիմի գնա՛նք, ինչ կլինի, կլինի...

— Գնա՛նք,— մաճկալը հրամայեց և գութանը ճըլվստալով գնաց դեպի Ճաղարանց Թաթոսի տափը։

Մենք մի առած ունինք, որ ասում է՝ «Խոփդ սուր է, բայց հանդը բաժանովի է»։ Այս առածը խեղճերն են ասել, իսկ իշխողներն ուրիշ առած են ունեցել, որ է՝ «Քաջերի սահմանը իրանց զենքն է»։ Գյուղացիք սովորություն ունին վարելու հողը բաժանելու իրանց մեջ ամեն տասը կամ տասնհինգ տարին մեկ անգամ. բայց ամեն անգամ հեշտությամբ չեն բաժանում, քիչ հողատերերը սկսում են կռվել շատ բաժին ունեցողների հետ, և եթե մի կերպ բաժանում են, ավելի ուժեղները թույլ չեն տալիս իրանց հողին ուրիշը մոտենա։ Նվազած օջախների հողերը վարում են զորեղները և նրանց վերջին միակ շառավիղը չափահաս դառնալով՝ հող չի ունենում վարելու։ Այսպիսիներին քյոխվան մի կերպով պահպանում է, ավելի հող ունեցողներից մի կտոր տալով, մինչև օրինավոր բաժին լինելը։ Ճաղարանց Թաթոսը Արզումանի հոր բաժինը սեփականել էր, քյոխվան էլ հրաման էր տվել Արզումանին, որ գնա նրա տափերից մեկը վարի։ Հիմա տեսնենք ի՞նչ է դուրս գալիս սրանից։

Գութանը տեղ հասցրին, և հաղիվ հինգ վեց ակոս էին արել, հանկարծ գյուղի մեջ մի շփոթ ընկավ։

— Աղա՛, Մա՛տիրոս, Կի՛րակոս, հա՛սեք, մեր տափը վարում են։ Մեկ տեսեք էդ ո՞վ ա, էդ աչքերն արնով լցվածը, մեծ թիքեն ականջը թողեցեք,— ասաց մի թեև ալևոր, բայց բավականին ժիր ու առույգ մարդ։

Սա ինքն էր Ճաղարանց տան նահապետը՝ Թաթոսը, որ տասը, տասներկու տղա ուներ, մի այդքան էլ եղբորորդիք, երկու այդքան թոռներ...

— Էլ ո՞վ պիտի ըլի, Արզումանն ա։ Բա չլսեցի՞ր երեկ, որ քյոխվիցը տափ էր ուզում, նա էլ մեր հողը նշանց տվավ, թե՝ գնա՛ վարի։

Այդպես խոսեց Թաթոսի տղան, որով ուզեց ցույց տալ, որ քյոխվեն էլ իր հորը մարդու տեղ չի դնում, նրանից չի վախենում, չնայած, որ Թաթոսն էր նրան քյոխվա շինել, և երբ ուզենա, կարող է դուրս անել։

— Տո՛ ես քյոխվի... Տո հա՛սեք, տղամարդիկ չե՞ք... Ես գող Արզումանի համար եմ փուշ կտրել, տակոր հանել, քարերը հավաքել, խամհատել, որ նա գա էս օրվան օրը իմ մուլքը ձեռքիցս խլի՞... Տո հա՛սեք, բա դուք տղամարդիկ չե՞ք, էլ ո՞ր օրվա համար եմ ձեզ հաց տվել, պահել։

Այսպես՝ ալևոր գաղանը, որ իր կյանքումը արդարության ու խղճի ձայն չէր լսած, ինչ որ բերանն եկավ, դուրս թողեց և տասը-քսան բոի արջերի խրախույս տալով՝ ուղարկեց Արզումանի դեմ։ Բոպե չանցած, տեղ հասան, ըստ որում չէին քայլում, այլ վազում էին, կարծես առջևները փախչող կար, պիտի բռնեին։

— Հո՞... ո՞... հո՞։ Ո՛տն արեք տղեք,— գոչեց իր սովորական ձայնով մաճկալը։— Ա՛րզուման, էս արջերը մեզ վրա են գալիս, գլխիդ ճարը տե՛ս։ Արի դուս գցենք գութանը, ասենք ա՛խպեր, ձեզ ըլի, չենք ուզում, թաք ըլի արուն չանենք ըստեղ։

— Հետո՞, էլ էս փափախը գլխիս հարամ չի ըլի՞, էլ ի՞նչ երեսով պիտի մտնեմ գեղը, որ մի քանի թազի թուլա ինձ պետք է վախեցնեն։ Տուր ինձ էդ սրբիչը,— ասաց Արզումանը բարկանալով և մաճկալի ձեռքից առնելով սրբիչը, որ մի հաստ դագանակ է ծայրը ակշաձև (չանգաձև) երկաթ հագցրած։ Մի կատաղություն եկավ քաջ երիտասարդի վրա, ջանն սկսավ դողդողալ կպչող փահլևանի պես և այնպես էր զգում այս բոպեին ինքն իրան, որ ոչ թե քսան, այլ հիսուն մարդ ևս չպիտի կարողանային հովություն տալ իր տաքությանը։

Տափատերերը հասան թե չէ, գութանը ակոսից հանելով, գցեցին քարերի ու փշերի մեջը։ Հնար չեղավ այստեղ բան հասկացնելու, ամենքն էլ սկսեցին գոռալ, գոչել, մեկը մյուսի խոսքը

չէր լսում։ Եղան էր, որ վրա էր գալիս սրա նրա գլխին, էլ բըհիր ասես, դագանակ ասես, շոմբաղ ասես, մահակ ասես, նորեկների կողմից իջնում էր սրա նրա գլխին, սրա նրա թիկունքին։ Հոտաղները մի-մի ճիպոտից ավելի բան չունեին, իսկ դրանով էլ ոչինչ չէին կարող անել, ճարահատյալ փախան, որ իրանց անզեն գլուխն ազատեն։ Մաճկալի գլուխը վաղուց արդեն կիսել էին և գցել ակոսի մեջը։ Խեղճ կենդանիները, այն անբան եզ ու գոմեշներն անգամ չազատվեցան հաստ մահակների հարվածներից։ Բայց ի՞նչ էր անում այդ միջոցին Արզումանը։ Նա սկզբում սկսեց իր ձեռի սրբիչով միայն ինքզինքը պաշտպանել, աշխատելով հասկացնել նրանց, թե ի՞նչ իրավունքով է վարում այդ հողը. բայց տեսավ, որ աչքերն արնով լցված է, ոչինչ չեն ուզում լսել, մանավանդ երբ որ տեսավ իր մաճկալի կիսաշունչ ընկնիլը, սրբիչի զորությունը պաշտպանողականից հարձակողականի դարձրուց և մի քանի րոպեի մեջ բոլոր կովողները վեր թափվեցին. միայն մեկը կարողացավ իր գլուխը պրծացնել և գյուղը հարայի վազել։ Գյուղից նոր մարդիկ եկան իբր կռվի առաջն առնելու համար. բայց էլ ի՞նչ օգուտ, ինչ որ լինելու էր, եղել էր։ Երեք մարմնի մեջ այլևս հոգի չկար, մեկն հոգեվարք էր և մյուսներն էլ վտանգավոր դրության մեջ։ Հայհոյանքն ու կռիվը սուգի ու շիվանի փոխվեց։ Գեղից սայլեր բերին և իրանց քաջերին տարան, որին սաղացնելու, որին թաղելու։

Է

Կարելի՞ է արդյոք նկարագրել այն պառավ մոր դրությունը, որ այս րոպեին իմացավ, թե իր միանուճար որդին, իր ազիզ-մազիզ մուրազի վրա եղող Արզումանը այնպիսի մի փորձանքի է պատահել, որ նրա տեսողությունից հավիտյան պիտի զրկվի։

Խեղճ պառավը գութանավորի համար առավոտյան կերակուրը բերելիս ճանապարհին տեսավ, որ շատ մարդիկ են վազում դեպի իրենց գութանը, սկսեց կասկածել, թե էս ի՞նչ է պատահել արդյոք, չլինի՞ իր երեխայի գլխին մի վատ բան է եկել։

Պառավ Շողակաթը մի տարօրինակ կասկածոտ բնավորություն

ուներ։ Ամեն մի անակնկալ փորձանք պատահած ժամանակ միշտ իր Արզումանին էր միտը բերում, թե նա էլ էնտեղ չէ՞ր արդյոք, չլինի՞ նրան էլ մի բան է պատահել։ Երբ որ լսում է, թե այսինչ գյուղում մարդ են սպանել, այնինչ տեղը մարդ է խեղդվել, մեկը ձիուց կամ ծառից վեր է ընկել, մեկը սելի տակովն է էլել, մեկին շունը կծել է, մեկը վարազի բերանն է ընկել կամ արջի տակը և ինչևիցե այսպիսի մի բան, նա անդադար ախ ու վիշ էր անում, թե չլինի՞ իմ Արզումանն է, և այսպես վարանման մեջ էր լինում մինչև Արզումանի տուն գալը։ Եվ ի՞նչ կլիներ, որ այսպես չլիներ։

Քանի՞-քանի անգամ խեղճին բոթու էին տվել դրացի կանայք խմբովին տուն լցվելով և մեկենիմեկ իրանց ոռնոցն սկսելով, որ շատ անգամ ողջ մնացողին անգամ մահվան պատճառ է լինում։ Ութը որդի էր մեծացրել խեղճ պառավը, և դրանցից միայն մինն ուներ այժմ։ Մյուս յոթը եղբայրքը բոլորեքյան քսան-քսաներկու տարեկան ժամանակն էին մեռել՝ որը նշանած, որը նշնելու, բայց բոլորն էլ փորձանքի հանդիպելով, ոչ մեկը իր բնական մահով, կամ մի որևիցե տկարությամբ չէր մեռել, ոչ մեկին մի սառը ջուր չէր տվել վերջին անգամ իր մայրական ձեռքով, ոչ մեկի գերեզմանին չէր արժանացել...

Զարմանալի բան է արդարև։ Միայն զինվորների կյանքը չէ վտանգի ենթակա պատերազմի ժամանակ։ Այն մարդոց կյանքն ևս շարունակ ենթակա է վտանգի, որոնք հանդգնություն ունին մարտ մղելու կյանքի անիրավ ու անարդար հանգամանքների դեմ։ Որքա՜ն անիրավություն և անարդարություն կա օրենքով ու աղթով անվտանգ վիճակի մեջ դրված։ Ո՞վ կարող է դրանց ձեռք տալ և անպատիժ մնալ։ Արզումանի յոթը եղբայրներից երեքը բանտումն էին մեռել և երեքն աքսորանքում, և այս՝ իրանց անվեհեր և ազնիվ սիրտ ունենալու համար միայն։

Խեղճ պառավը ճամփի մեջտեղը նստեց, որ խելքը գլուխը ժողովի և մեկ լավ իմանա, թե էս ի՞նչ բան է։ Անցուդարձ անողներից ոչ ոք նրան պատասխան չտվավ, մինչև մոտեցան մեռելների սայլերը, որոնց շորս կողմը պատած մարդոց լաց ու կոծի աղաղակը դմբդմբացնում էր մոտակա սարերն ու ձորերը։ Ծերունի մայրը որքան որ կասկածոտ էր, այսուամենայնիվ չէր կարող կարծել, որ երկու ժամու միջոցում այնպիսի մի դեպք լինի պատահած, որ իր միանուճար որդին զրկեր իրանից։ Հուղարկավորներից մինը, որ Արզումանի ազգականներիցն էր, մոտեցավ պառավին և

սկսեց մի առ մի հասկացնել բանի էությունը ավելի խոհեմ կերպով, վերջումը ավելացնելով, որ Արզումանին չստիպի տուն գալու, ըստ որում եկածին պես կբռնվի։

— Բաս էլ չպիտի՞ տեսնեմ ես իմ որդու երեսը,— հարցրեց պառավը։

— Կտեսնես, ո՞վ է ասում, որ չես տեսնի, բայց հիմա հարկավոր չի տեսնել։ Սպասիր մութն ընկնի, էն ժամանակ...

Շողակաթ նանի խելքը գլխիցը թռավ. նա սկսեց խենթի նման զանազան ձևաշարժություններ անել պարելու նման և իր գիտցած երգերից մի խառնուրդ կազմելով մրմնջել և ձայնն աստիճան առ աստիճան բարձրացնելով՝ սկսեց բառաչել ու գոչել— «Արզումա՜ն, Արզումա՜ն, Արզումա՜ն»... Այս անունն այնքան կրկնեց, մինչև ուժից ընկավ բոլորովին և մեկնվեց ճամփի մեջտեղը։ Մոտը եղող երիտասարդը շալակեց կիսաշունչ պառավին և տարավ տուն։

Ը

Գյուղի մեջ տուն չկար, որ կամ սպանվածների կամ վիրավորվածների աղգական չլիներ, այս պատճառով ամբողջ գյուղը սգի մեջ էր մտել։ Բրդի գեղջիք, անսանձ կրքերի տեր։ Մի որևիցե կիրք երևացած ժամանակը մնացյալ բոլորը այնպես են անհայտանում, որ կարծես նոցա հետքն անգամ չի եղած իրանց մեջ։

Խելքն է, որ տիրում է մարդուս կատաղի կրքերի վրա, բայց այդ տիրող խելքից զուրկ են գյուղացիք։ Տեսել եմ աչքովս, որ մայրը որդու առաջը չոքած, հայրը ձեռները խաչած, աղաչում են եղել իրանց որդուն, որ կռվից ետ կենա, բայց դրանով ավելի են կատաղացրել նրան։ Անասունների մեջ միայն կարելի է սրա նմանը տեսնել։ Երկու ցուլ, երկու գոմեշ, երկու շուն կռվելիս՝ հնար չի լինում անջատելու. որքան խփում ես, անքան ավելի են կատաղում։ Բայց՝ և անասունների նման էլ կռվից հետո չափից դուրս խեղճանում են, գայլից դառնում ոչխար, և ակամա գալիս են այն եզրակացության, որ սրանք ֆիզիկապես հսկաներ լինելով, հոգով ու մտքով կատարյալ երեխաներ են, և չար երեխաներ։

Մեր գեղացիք թեև առհասարակ կոպիտ մարդիկ են, բայց

այսուամենայնիվ սոցա մեջ ևս կա սեր, բարեկամություն, հավատարմություն, մեծահոգություն և այսպիսի գովանի հատկություններ։ Միայն երկու բաների համար խաթրապահություն չկա. այդ երկու բանն է՝ հողը և ջուրը. սոցա համար է լինում կռիվը սաստիկ, և շատ հաճախ գործը հասնում է մարդասպանության։ Բայց առայժմ այդ խնդիրների վրա չխոսենք, որ շատ չհեռանանք մեր բուն պատմությունից։

Մի շատ տխուր կերպարանք ստացավ Դ... գյուղը. ոչ մեկի բերնում ժպիտ չէր երևում, ոչ մեկի երեսին ծիծաղ չէր գալիս։ Մարիամն ու Հերիքնազը նույնպես մանկակից էին հասարակաց տխրությանը։ Մի կողմանե թեև ուրախ էին, որ Արզումանը հաղթող էր հանդիսացել և ոչ հաղթվող, բայց... մյուս կողմանե էլ լավ գիտենալով, որ այդպիսի հաղթության մրցանակը աքսոր է ու մահ, սաստիկ տխրում էին։

Շամիրը դեպի ոչ ոք համակրություն չէր ցույց տալիս, այլ միայն նախանձում էր, որ ինքը մասնակից չի եղել այդ կռվին, որ իրա վրա էլ խոսեին։ Նա կարծում էր, թե ինքը հաղթող կհանդիսանար և այնուհետև՝ ոչ ոք չէր համարձակիլ անհավատարմությամբ նայել իր տան վրա։ Սպանվածներից երեքը Ճաղարանց տանից էին։ Թեպետ սրանք քան զշուն շատ էին, քան զգել առավել, բայց այսուամենայնիվ երեք մեռել միանգամից տանը գտնվելով, քարացրել էին Թաթոսին և չէր իմանում որի վրա սգա, որի գլուխը լա։ Նրա խղճմտանքը տանջում էր։ Նա սպանության մասնակից էր համարում ինքն իրան, ըստ որում ինքն եղավ նրանց գրգռողը, ինքն ուղարկեց նրանց։ Բայց իր անձը գերդաստանի մեջ արդարացնելու մտոք Արզումանին անիծում էր և հրամաններ էր հանում, որ նրան բռնեն անպատճառ և արդարադատության մատնեն։ Քյոխվան վաղուց արդեն այդ մասին տնօրենություն էր արել։ Մարդիկ էր ուղարկել տեղական իշխանությանը իմաց տալու, որ գան ականատես լինին գործի հանդամանքին և վաղը մյուս օրը իրեն չմեղադրեն։ Կասկած չկար, որ իշխանությունը գալուն պես պիտի բռնել տալ Արզումանին։ Արզումանի բարեկամներն այդ գիտեին, նրան աղաչեցին, որ փախչի։ Այդ տեղից մոտիկ էր Խրամը, որ հազարավոր փախստական կարող էր պատսպարել։ Մինչև իր թշնամիքը բռնելու մասին կմտածեին, նա արդեն Խրամի զառիվայրից ցած էր իջել, և ո՞վ կարող էր այլևս իմանալ, թե ո՜ր քարափի, կամ ո՞ր քարայրի մեջ է գտնվում։

Թ

Արզումանն իր անձի ապահովությանը համար երկյուղ չուներ ամենևին։ Նա առանց այս էլ տարվա մեծ մասը թափառելով էր անց կացնում, երբեմն որսորդությամբ և երբեմն գողերի հետ։ Որտեղ մի ընկերություն կար գողերի, նրան հայտնի էր, որտեղ մի փախստական կար, նրա ծանոթն էր։ Քանի որ այս փորձանքին չէր հանդիպել, նա փախստականների հետ ընկերություն անելիս կասկածում էր, թե մի՛գուցե սրանք իրանց ավելի քաջ են համարում, և իրան բանի տեղ չեն դնում, ըստ որում կարողացել են իշխանության ուշադրությունը գրավել և իրանց անունը հռչակել ամբողջ նահանգի մեջ։ «Ես ի՞նչ եմ արել,— ասում էր ինքն իրան,— մի քանի ձի եմ գողացել ջգրու, էն էլ հաստատը չգիտեն, որ ես եմ գողացել»։ Այսպես էր մտածում Արզումանը և նախանձով նայում նշանավոր փախստականներին. բայց հիմա, երբ որ ճարահատյալ փախստականի տիտղոսը կամա-ակամա իր վրա առավ, տեսավ, որ սա լավ բան չի, մանավանդ այն ժամանակ, երբ սիրել և սիրվել էր սկսել։ Քնած թե արթուն միշտ Հերիքնազին էր տեսնում, որ արտասվալից աչքերով ասում էր նրան— «էդ ի՞նչ արիր, Ա՛րզուման, նրա համա՞ր խլեցիր իմ սերը, որ ինքդ չվայելես և ուրիշներին չթույլ տաս վայելելու»։

Յոթն օր կարողացավ Արզումանը հեռու մնալ գյուղից և ոչ ոքի աչքումը չերևալ։ Նա գնաց իր ծանոթ ղաչաղների մոտ, որոնց պատմելով իր գլխի անցքը, ավելի գրավեց նրանց սերն ու համարմունքը, բայց այս հանգամանքը ամենևին չմխիթարեց իր տխրած սիրտը, չկատարեց իր սրտի պահանջմունքը, չհագեցրեց իր սիրո քաղցը...

Մի գիշեր մեր փախստականներն իջան Խրամի Նախշուն անվանված ավերակ վանքում անձրևի պատճառով և ուզում էին գիշերը այնտեղ անցկացնել։ Արզումանը ուզեց օգուտ քաղել գյուղի մոտավորությունից և գնալ իր Հերիքնազին տեսնելու։ Սրա համար հրաման ուզեց ավազակապետից։

— Դեռ վա՛ղ է, էդպես շուտ մի՛ գնալ,— պատասխանեց ավազակապետը։— Թող փոքր-ինչ հանկարտվեն գեղը ցիք, մեռելներին մոռանան, սաղերի հոգսը քաշեն, էն ժամանակը գնա՛, բան չեմ

ասիլ։ Բայց հիմա Ճաղարանց Թաթոսը ո՛վ գիտե գեղի ամեն քնջուքը քա՛նի պահապան է դրել քեզ համար։

— Որ իմանամ թե կտոր-կտոր կանեն, ճար չկա, պետք է գնամ,— ասեց Արզումանը։— Էս էլ ասեմ ձեզ, որ ես մեր տունը չեմ գնալու։ Պահապաններ որ լինին, մեր տան մոտերքին կլինին։

— Լա՛վ, ինչպես ուզում ես, էնպես արա։ Թե որ կուզես մեր տղերանցից էլ մի երկու ձիավոր թող գան գեղի տակին թաք կենան, թե որ բան է, մի փորձանք պատահելու լինի, օգնության հասնեն։

— Էդ էլ չի հարկավոր, ես մենակ կերթամ, միայն ձեր ո՛ր ձին որ լավն է, էն ինձ տվեք։

— Իմ սև ձին քեզ փեշքեշ,— ասաց ավազակապետը։— Սևը լավ է, գիշերն էլ մութն է, ոչով չի տեսնի։ Միայն ձիով չմտնես գեղը, որ ոտի ձենը չլսվի, շուն ու մարդ չհաչի վրեդ...

Այս խոսակցության ժամանակ հանկարծ մի մարդ ներս մտավ և մի խումբ մարդկանց հանդիպելով՝ տեղնուտեղը մեխվեց։ Այս մարդը որքան որ ինքը վախեցավ, նույնքան էլ մեր քաջերին վախացրեց, որոնք իսկույն հրացանները ձեռք առան և ոտքի կանգնելով գոչեցին՝

— Թարփա՛նմա, վուրդրխ (չշարժվիս խփեցինք)։

Նորեկը ութ-ինը հրացանների խողովակների պսպղալը իր դիմաց տեսնելով, քիչ մնաց պիտի համրանար, բայց մեկ էլ խելքը գլուխը ժողովելով հասկացրեց, թե ինքը մի որսորդ մարդ է և բոլորովին անգիտությամբ մտավ այստեղ։ Սրա ձայնից Արզումանը ճանաչեց, որ Շամիրն է։ Ավազակապետին հասկացրեց, որ Շամիրին դուրս չթողեն մինչև առավոտ։ Բավականին մութն էր, և անհնարին էր կերպարանքից ճանաչելը։ Շամիրին հրավիրեցին նստել և ասացին իրան, որ չեն կարող թողնել մինչև առավոտ, ըստ որում չեն կարող հավատալ նրան, որպես անծանոթ մարդու։ Շամիրը ասաց, որ ինքը ևս միտք չունի մինչև առավոտ երթալու և ավելացրեց, թե ես մի քարեծ եմ սպանել և բավականին միս ունեմ պարկիս մեջ, եթե կամենաք կրակ վառեցեք, խորոված անենք։

Շամիրի փորը ավելի նրա համար էր ցավում, որ այս մարդոց երեսը լուսով տեսնի և խիստ փափագում էր Արզումանին սրանց մեջ տեսնել, որ մյուս օրը երթա գյուղումը պարծենա, թե ինչպես ինքը մի գիշեր կարողացել է ավազակների հետ անցկացնել և նրանց մեջ տեսնել Արզումանին։

Ավազակները հրամայեցին Շամիրի առաջարկությունը կատարել, նրանք առանց այն էլ մտադիր էին կրակ վառելու, քանի որում բավականին թրջվել էին, հարկավոր էր իրանց շորերը ցամաքացնել։ Բայց Շամիրը իր նպատակին չհասավ։ Արզումանն արդեն գնացել էր և այնպես գնաց, որ Շամիրն ամենևին չիմացավ, որ նրանց միջից մի մարդ պակասեց։

Ասած է, «գողն ի՞նչ կուզի — մութ գիշեր», բայց մեր Արզումանին որ հարցնեիր այս րոպեիս, թե ի՞նչ կուզես, կասեր— Շամիրի բանտարկվելը։ Մութը գիշերովը նա այնքան չէր ուրախ, որքան այդ հաջող դեպքովը։ Նա յոթ օր սպասել էր միմիայն Շամիրի երկյուղից, թե ինչպես գնա Հերիքնազի մոտ և շատ մտածելուց այս միակ հնարքը գտավ միայն, որ երթա ուղղակի Շամիրի մոտ և նրա պաշտպանությունը խնդրի գյուղ մտած ժամանակը, որով և միշտ միջոց կունենա իր Հերիքնազին տեսնելու։ Բայց հիմի բանն այնպես եղավ, որ իր առաջվա մտադրությունն ուրիշ օրվան թողնելով՝ լավ համարեց օգուտ քաղել բարեպատեհ դիպվածքից։

Քանի որ այս փորձանքին չէր հանդիպել Արզումանը, մտքումը դրել էր Շամիրին մոտենալ և նրա հետ քանի մի օր որսորդության երթալով բարեկամանալ ու խնդրել նրանից Հերիքնազի ձեռքը. բայց հիմա, երբ հանգամանքը ուրիշ կերպարանք ստացավ, էլ ի՞նչ առաջարկություն կարող էր անել։

Մարիամը նույնպես հուսով էր, որ մոտ օրերս նշանդրություն կլինի, և ինքն էլ ազատված կլինի իր ամուսնու անտեղի կասկածներից. բայց հիմա կարո՞ղ էր ասել միթե, որ երբևիցե ունեցել է այդ մտադրությունը և մինչև անգամ պատիվ է ունեցել մի անգամ գիշեր ժամանակ հյուրընկալել Արզումանին։ Մի կողմանե ուրախ էր Մարիամը, թե լավ է, որ նշանված կամ պսակված ժամանակ չհանդիպեց այդ փորձանքը. ուրեմն հիմա կարելի է ուրիշ փեսա գտնել Հերիքնազի համար, բայց մյուս կողմանե իր սերը այնքան շատ էր դեպի Արզումանը, որ լավ էր համարում նա անունով միայն փեսա համարվի, քան թե մի ուրիշը ստուգապես, Հերիքնազն էլ այս հանոգումն ուներ։ Նա Արզումանին պատահած գիշերից սկսյալ, ձեռները ստեպ-ստեպ շրթունքներին էր մոտեցնում, կարծելով որ միայն իրան է զգալի, թե որքան քաղցր են սիրականի շրթունքների դիպած տեղերը։ Նա համբուրում էր իր ձեռները,

համբուրում էր նրա բերած խնձորները և այնպես անարատ պահպանում։ Չէր ուզում ուտել, որ իր սիրեկանի հիշատակը աչքիցը չհեռանա։

Ժ

Երկու քույրերը դարձյալ զգվել էին միմյանց այն միևնույն սրահի անկողնումը, որի մեջ պատահել էր առաջին անգամ Արզումանը։

Երկուան էլ իբր թե քնած էին, բայց ոչ մեկի քունը չէր տանում։

— Հերիքնա՞զ։

— Հը՛։

— Ա՛խչի, չես քնե՞լ։

— Քունս չի տանում։

—Ինչի՞ չի տանում։

— Տանում չի էլի՛. համ զարթուն եմ, համ աչքերս խփած երազներ եմ տեսնում։

— Ի՞նչ ես տեսնո՞ւմ։

— Ինչ եմ տեսնո՞ւմ։

— Հա, ի՞նչ ես տեսնում։

— Ո՞վ գիտե, ինչ ասես տեսնում եմ։ Միթամ ես տղի շորեր եմ հագել, յարաղ, ասպար կապել վրես ու մի թոչկան ձիու վրա նստել եմ։ Մի սարի գլխի շորսդաթանի մի քոշկուսարայի եմ շինել տվել, մի մեծ երկաթե դուռն եմ անել տվել վրեն. երկու ասլան էլ կապել տվել դռանը, որ իսկի մի մարդ էլ ա չկարենա ինձ մոտ գալ... հետո շատ բաներ եմ անում, սաղ աշխարհքը դողում է իմ ձեռքին...

— Ով որ գալիս է քեզ ուզելու, գլուխը կտրել ես տալիս, էնպես չի՞։

— Մենակ էդ չեմ անում. էլի ուրիշ շատ բաներ եմ անում։

— Արզումանին տանում ես քեզ մոտ...

— Տանում եմ, բայց ի՞նչպես։

— Չգիտեմ, դո՛ւ ասա, ի՞նչպես ես տանում։

— Արզումանին բռնում են։ Մի մեյդան տեղ սներ են կանգ-

նեցնում, կախաղան են պատրաստել, ուզում են կախ տալ, ինչպես Ահմեդին կախեցին։ Մարդիկը կիտվել են շորս կողմը, դիփ էլ թամաշա են անում. ոչով սիրտ չի անում ձեն հանի, ուզում չի օգնի խեղճին։ Ես նստում եմ իմ թոչկան ձիուն, մի ձեռիս դալխանս եմ բռնում, մեկէլ ձեռիս թուրս. ասլաններիս էլ առաջ եմ գցում. ընկնում եմ էդ մարդկերանց մեջը. որին ես, որին իմ ասլանները, դիփունանցն էլ ջարդում, կոտորում ենք։ Ազատվում են միայն առաջուց փախչողները։ Ճաղարանց Թաթոսն էլ է ուզում փախչել, բայց քյալլի միջին որ խփում եմ թրովս, ոչխարի պես շաղկում եմ, կեսը մի ասլանի բերանն է ընկնում, կեսը մեկէլի...

— Հե՞տո, մնում է մենակ Արզումա՞նը։

— Հա՜։ Նրա համար մի ուրիշ ձի եմ ըլում տարած, յարաղ ասպարով, Արզումանց նստում է իր ձիուն, հետո թռչում ենք մեր քոշկուսարային...

— Ով գիտի, երազումդ հենց միշտ Արզումանին ես տեսնում։

— Ի՞նչպես չեմ տեսնում։ Բայց տեսում եմ թե չէ, էնպես ուրախանում եմ, որ էն սահաթը զարթնում եմ, էլ չենք կարում իրար հետ խոսել։

— Քու բանը շատ դժվար է, Հերիքնազ։

— Վրաս ծիծաղում ես, հա՞։

— Չէ՛, չեմ ծիծաղում, բայց Արզումանը քու նշանածդ չի, մի բանդ չի, նրա համար ինչի՞ ես քեզ տանջում։ Աղջկա ադաթն է, հազար տղի համար ասեն, մեկին կտան։ Հիմա նա որ չելավ, ուրիշին չպիտի ուզե՞ս։

— Մարիամ ջան, որ մի բան ասեմ, հո չե՞ս ծիծաղի վրաս։

— Ինչի՞ եմ ծիծաղում, ա՛սա։

— Գիտե՞ս ինչ կա. ես մարդ չեմ ուզում, ես սիրել եմ ուզում։ Սերը շատ քաղցր բան է, բայց մարդն ատելի։ Դու քու օրումը լավ մարդ տեսած կա՞ս, մեկը մեկէլից վատթար արարածներ են։ Ես որ տեսնում եմ Շամիրի կոպտությունը, դա որ իրեն շահ ու սուլթան է համարում, էնպես բարկանում է վրեդ, էնպես ծեծում, որ կասենաս դու նրա եսիրն ըլիս, իմ ջիգրն էնպես է գալիս, որ ըսկըսում եմ ատել մարդկերանցն էլ, կնկդերանցն էլ։ Մարդկերանց էնդուր համար եմ ատում, որ էդպես կոպիտ արջեր են, մի անգամ դրանց երեսին ծիծաղ չես տեսնի, մի անգամ մի քաղցր խոսք չես լսի...

— Կնկդերանցն ինչի՞ ես ատում։

— Կնկդերանցն էնդուր եմ ատում, որ իրանք իրանց բանի տեղ չեն դնում։ Կասենաս իրանք էլ են ուրախանում, որ էդպես ծեծվում են ամեն օր։ Էն օրը չէ՞ր ասում Հոռոմը, թե էն մարդը ի՞նչ մարդ ա, որ կնկա գլխիցը մահակը պակսացնի։ Հիմի հախը չի՞, որ դրան օրը քսան անգամ ծեծե՞ն։ Ի՞նչպես շատի մարդ էնպես կնկանը, որ միշտ ծեծվել է ուզում...

— Հիմի դիփ էլ հո Հոռոմի պես չեն։ Շատերը չեն էլ ուզում ծեծվել, բայց ամենից շատ նրանք են ծեծվում։ Դեռ լսված չի, որ Հոռոմին իրա մարդը ծեծած ըլի, դրա համար է, որ դա էդպես մեծ-մեծ է բրթում։ Թող մի քանի անգամ թրխկացնեն դրա գլխին, եղանը գլխին կոտրատեն, ոտի տակ գցեն՝ թաղջի պես հարեն. էն ժամանակ էլ չի ասիլ էդ խոսքը։ Հիմի ասելովդ ինձ էլ չպիտի սիրես, նրա համար, որ ուրիշ կնկդերանց պես ես էլ չեմ ձեն հանո՞ւմ։

— Չէ. քեզ ի՞նչպես չսիրեմ, որ Շամիրը զոռով է, դու չես կարող նրան հաղթել։

— Մի՛ վախի. դիփունանց մարդիկն էլ Շամիրի պես զոռով են։ Բայց որ դու բոլոր մարդկերանցն ատում ես, Արզումանին ինչի՞ ես սիրում. նա էլ մեր մարդկերանցիցը չի՞, դեռ նրանից էլ բեթար է։ Մեր մարդիկը մարդ չեն սպանում, բայց տեսա՞ր նա մեկ օրումը երեք-չորս մարդ սպանեց։

— Արզումանը որ նրանց չսպաներ, նրանք պիտի սպանեին նրան։ Ճաղարանք քան զշուն շատ են, քան զգել առավել։ Նրանցից երեքը սատկեցին։ Տեղն էլի քսաներեքը կա, բայց նա իր մոր մինուճարն է։ Դրանք աղքատ կոխող որ կասեն, նրանցից են։ Ինչի՞ էին գնում կռիվ, նա հո զոռով չէր վարում նրանց տափը։ Ա՜խ, թե ես կլինեի Արզումանի տեղա՜կ, նրանցից մեկին էլ ա սաղ չէի թողնիլ։ Մենք քառասուն օրավար տափ ենք ունեցել, ինչի՞ են խլել մեր ձեռիցը։ Մեր տափերի շատ փայը հիմի Ճաղարանք են վարում։ Ինչի՞ խեղճացանք, հը՞։ Մեր Շամիրն ինչի՞ պիտի ամեն օր սար ու քոլ ընկնի, ինչի՞ մեր տափերիցը մի քանի օրավար էլ նրա՜ն չեն տալիս, որ նա էլ վարուցանքով պարապի, իրա տանը նստի, էդպես սար ու ձորերում չմեծանա, որ արջ ա կտրվել, էլ հետը չի խոսվում, բայց որ մարդամեջ ա մտնում, չի կարում երկու խոսք խոսի, նրանք մարդավարի բաների վրա են խոսում, սա իրա ձորերիցն ա խաբար տալիս։ Էնդուր է ասում խեղճ Հոռոմն է՞, թե մարդամիջի մարդս ըլի, հարիր թուման պարտքս ըլի... Ա՜խ, թե ես մո՜ղրով կըլեի՜, ես եմ գիտում, թե փիս մարդկերանց հա-

խիցն ի՞նչպես կգայի։ Բայց հիմի մի խեղճ աղջիկ եմ, ինձ ո՞վ մարդու տեղ կդնի։

— Ինչի՞, հենց հիմա էլ, ով ասես քեզանից վախենում է։ Էն օրը Շամիրն ինձ ուզում էր ծեծի, բայց դու որ աչքերդ վրեն չբռնեցիր, նա քու ահու դուրս գնաց տանից։

— Ես մտքումս շատ բան եմ դրել. դու համբերի։ Ճաղարանց հախիցը ես պիտի գամ, դրանց քոքը ես պիտի կտրեմ։ Թաթոսին պիտի թողնեմ մենակ, որ իրա աչքովը տեսնի, թե ինչպե՞ս են իրա տղերքը մեկը մեկէլի հետևից գյուլլախորով ըլում։

— Դու էդ՝նց ասա։ Ճաղարանց Թաթոսը մտքումը դրել է, որ քեզ իրա տղի համար ուզի։

— Ո՞ր տղի։

— Մագոյի։

— Խնչեմ Մագոյի վրեն, նա ի՞նչ շուն է, որ ես նրան մարդու տեղ դնեմ։

— Բաս միտքդ ի՞նչ է։ Դու հենց ըղորդ-ըղորդ մտքումդ դրել ես, որ ուրիշ մարդ չուզե՞ս։

— Աստված ողորմած է, ոնց որ ըլի, գլուխս կպահեմ։

— Լա՛վ, մի՛ բեդամաղ ըլի, ես հանաք եմ անում։ Ո՞վ կարող է քեզ ասել՝ աչքիդ վրա ունք կա։ Քանի որ ես սաղ եմ, մի՛ վախի. ում որ կուզես, ում որ կսիրես, նրան կտամ։ Բայց ես զարմանում եմ, որ դու էդպես շուտ սիրեցիր Արզումանին։ Ես չեմ փտնում Արզումանին. նա լավ սրտի տեր է, նրա բոյ ու բուսաթը հազար Մագոյի արժի, բայց հիմա նրա աստղը թռավ, էլ նա լավ օր չի ունենալ։ Կարելի է թե հենց նա ինքը քեզ ասի՝ էլ չեմ կարող քեզ առնել, ուրիշ մարդ գտիր քեզ համար։

— Նա ի՞նքը քեզ կասի...— կրկնեց Հերիքնազը հառաչելով։— Էդ չեմ հավատում։ Մենք նոր չենք սիրում մեկմեկու։ Ինչ որ խելքի եմ եկել, էն օրվանից դեսը ես միշտ վարավուրդ եմ արել, նա մի օր էլա աչքն ինձանից չի հեռացրել։ Ըղորթ է, չենք խոսացել իրարու հետ, բայց մեր սրտերը միշտ մեկմեկու հետ են էլել։ Կուզես հավատա՛, կուզես չէ, Մա՛րիամ, շատ անգամ բաղի կամ ջրի ճամփին մտքովս անց է կացել, թե հիմի որ ետ մտիկ տամ, Արզումանին կտեսնեմ։ Ետ եմ մտիկ տվել, երկուսս էլ կարմրել ենք երես երեսի գալով։ Հիմի փորձանք էր, պատահեց, կամ կբռնեն, կամ կբաշխեն։ Քանի որ նա սաղ է, ես էլ կապրեմ, երբ

որ նա, աստված մի՛ արասցե, կմեռնի, ես էլ կմեռնեմ։ Աշխարհիս երեսին ոչ ոք չի մնալու, մի օր էլել ենք, մի օր պիտի մեռնենք, լավն էն չի՞ որ արդար մեռնենք, անթառամ պսակին արժանանա՞նք...

— Դե որ էնքան շատ է ձեր սերը, որ մեկմեկու սիրտ, մեկմեկու տեղ իմանում եք, ապա իմացիր, հիմի որտեղ կըլի Արզումանը։

— Դու ծիծաղում ես ինձ վրա, ես գիտեմ...

— Չեմ ծիծաղում, քո ա՛զիզ ա՛րևը, ես հավատում եմ քու խոսքին։ Ես հիմի նրա համար եմ հարցնում քեզ, որ իմ սիրտն ասում է՝ հիմի որտեղ որ է Արզումանը կգա, դու ինչպե՞ս ես կարծում։

— Երանի քեզ, որ էդպես լավ բան ես մտածում։ Ո՞վ գիտե նա հիմա որտեղ է, կամ ողջ առո՞ղջ է. ինչպե՞ս էլավ, որ էդ կըռվումը նա սնվնաս դուրս եկավ, կամ կուռը չկոտրվեց, կամ գլուխը չպատռեցին, անկարելի է, որ մի բան պատահած չլինի։ Ինչ էլ որ լինի, դժվար թե նա հիմի սիրտ անի գա։

— Խեղճ աղջիկ, ինչի՞ ես հուսահատվել։ Արզումանն էն պտուղը չի, որ էդպես շուտ կորչի։ Թե որ քու մտքով նա էդքան վախկոտ է, էլ ինչի՞ ես սիրում նրան։

— Չէ՛, նա վախկոտ չի, բայց ո՛վ գիտի։ Ճաղարանց տղերքը մի-մի թվանք առած նրա բուսունն են պահում, նա ինչպե՞ս պիտի գեղը մտնի։

— Մի՛ վախենար, Ճաղարանց տղերքը գեղիցն են էդպես հարբով դուրս գալիս, որ խալխին հավատացնեն, թե իրանք շատ ղոչաղ են. բայց մի քիչ հեռանում են թե չէ, շուտ-շուտ դես ու դեն են մտիկ տալիս, որ իրանք չսպանվեն մի բաշ։ Քնի՛, քնի՛, շատ մի փիքր անի։ Էրազումդ կտեսնես Արզումանին, նա քեզ կասի հիմի ո՛բաեղ է։

— Բաս ասում էիր՝ հիմի կգա որտեղ որ է։

— Ես ի՞նչ գիտեմ, բալքի չեկա՞վ,— ասաց Մարիամը և բարձրաձայն հորանջեց։ Այս հորանջումը ազդելով Հերիքնազի վրա, նա էլ իր բերանը բաց արավ և օդի առատ հոսանք ներս քաշեց։ Քնի հրեշտակը մոտեցավ վերջապես և իր թևերի տակն առավ հյուրի փարիներին։

ԺԱ

Մարիամն ու Հերիքնազը քաղցր քնի մեջ էին, երբ որ մոտեցավ նրանց Արզումանը։ Լուռ ու մունջ նստեց անկողնակալի մոտ և չդիմեցնեց նրանց զարթացնել։ «Մի քիչ կնստեմ ու կերթամ», ասաց ինքն իրեն. «չզարթացնեմ սրանց, մեղք են։ Բայց ի՞նչպես բան անեմ, որ սրանք էգուց իմանան, որ ես եկած եմ էլել»։ Մտածեց, որ մի թել կապի Հերիքնազի մատին։ Տրխի թելի ծայրիցը կտրեց և անցավ Հերիքնազի կողմը։ Հերիքնազը կիսով չափ բացվել էր, ձեռքերը կուրծքին դարսել։

Արզումանը ձեռքը մեկնեց, բայց ձեռքը էլեկտրական հարված ստացածի պես սկսեց դողդողալ։ Նա ետ քաշեց իր կոշտացած ձեռքը և գլուխը մոտեցրեց, որ լեզվով կամ շրթունքներով վերցնի Հերիքնազի քնքուշ ձեռնիկը։ Բերանը բաց արավ Արզումանը ու կամացուկ դրավ Հերիքնազի թաթիկին։ Նրա գլուխը ծանրացավ, էլ չկարաց բարձրացնել։ Հերիքնազի երազը այդ ժամանակ փոխեց իր կերպարանքը. նրան թվում էր, որպես թե մի ծառի տակ պառկած է մեջքի վրա և փոքրիկ երեխայի իր կրծքին բռնած խաչացնում է։ Երեխան թրթռում է յուր կուրծքի վրա և ինքն էլ «պապա՜ր-պապա՜ր» է երգում։ Բայց հետզհետե սկսեց բեզարել, շընչառությունը ծանրացավ։ Ուզում էր թողնել երեխային և գլուխը բարձրացնել, բայց չէր կարողանում։ Նրա երազական տեսությունները սկսան փույթ առ փույթ փոխվիլ. նրան ճնշում են, խեղդել են ուզում։ Վերջապես կարողացավ բղավել Հերիքնազը։ Արզումանը կայծակի արագությամբ բարձրացրեց գլուխը և տեղը հանդարտ նստեց։ Նա անկողնակալի գլխի կողմն էր, նրան չնշմարեցին։

— Ա՜խչի, էդ ի՞նչ էր, ինչի՞ ծիկա տվիր,— ասաց Մարիամը զարթնելով։

— Ոչինչ, երազումս էի,— պատասխանեց Հերիքնազը, երեսը շրջելով քրոջ կողմը։

— Երեսիդ խաչ հանի։

— Անուն հոր և որդո, և հոգուն սրբուն, ամեն. խաչ օգնյա՜ ինձ. Ամենակալ տեր. թող զմեղս իմ։

Այսպես, ինչքան աղոթք գիտեր, մրմնջաց Հերիքնազը և ամբապես գգվելով իր քրոջը, կրկին քնի մեջ մտավ։ Մարիամի քունը փախավ. էլ չկարացավ քնել։

— Մարիա՜մ, քնած ես, թե զարթուն։

— Արզուման, դու ե՞ս,— ասաց Մարիամը։

— Ես եմ, հո չեք բարկանալ իմ գալուս համար։

— Քոռանամ ես, էդ ի՞նչ ես ասում, Արզուման։ Դու ի՞նչ գիտեիր, որ Շամիրը տանը չի։

— Ես նրան տեսա։

— Նա էլ քեզ տեսա՞վ։

— Չէ՜, նա ինձ չկարաց տեսնի, էս գիշեր նա չի գա, մնաց Նախշուն վանքումը։

Այս որ լսեց Մարիամը, միամտվեց և իսկույն վեր կացավ տեղիցը, որ Արզումանի համար ընթրիք պատրաստի։

Հերիքնազը լսելով սրանց խոսակցությունը, իսկույն զարթնեց, բայց փոխանակ խնդալու և ուրախանալու, մի խոր տխրության մեջ մտավ։

— Հե՜րիքնազ, քնած ե՞ս։

Հերիքնազը գլուխը բարձրացրեց։

— Ինչի՞ չես խոսում,— ասաց Արզումանը, գլուխը դնելով Հերիքնազի կրծքին, որի անուշ հոտն առել էր մի քանի րոպե առաջ։

— Ի՞նչ խոսեմ,— ասաց Հերիքնազը և սկսավ հեկեկալ։

— Ա՜խչի, լաց ես ըլո՞ւմ։

— Ասում են քեզ պիտի բռնեն, ուղարկեն Սիբիր։ Ա՜խ, ե... ե... ես կը... կը... կը մե՜ռնեմ...

— Լաց մի՜ լինիր, հոգիս, ինձ ոչով չի կարող բռնի,— ասաց Արզումանը և սկսեց գլուխը շոյելով, ճակատից համբուրել։— Մի՜ վախիր, հո՜գիս, ինձ չեն բռնի։ Մի քանի ամիս անցնի, ամեն բան կհանդարտվի։

— Վա՜յ թե էդպես չըլի։

— Որ էդպես չըլի, էն ժամանակ էլ ուրիշ բան կմտածենք, հիմիկվանից ի՞նչ հարկավոր է դարդ անիլ։ Էն ժամանակ քեզ վեր կառնեմ, կերթանք Օսմանլու։ Էնտեղ հայ քրիստոնեք շատ կան. մի քաղաքում, մի գեղում կկենանք, մեր գլուխը կը պահենք։ Թե որ բանն էդպես պատահի, կգա՞ս, որ տանեմ քեզ։

— Քեզ հետ Սիբիր էլ կերթամ, չէ թե Օսմանլու։ Կերթանք Ստամբոլ։ Մարիամին էլ կտանենք։

— Ի՞նչ ենք անում Ստամբոլը. կերթանք Ղարս, Արզրում, էս մոտիկ տեղերը։ Բայց, Հերիքնազ, մի բան եմ ուզում ասել քեզ։

— Ասա՜։

— Ո՞վ գիտի. աշխարհք է, էսօր մարդ չի իմանում թե էգուց ի՞նչ կգա գլխին։ Թե որ բանն էնպես պատահի, որ երկար ժամանակ էլ չտեսնենք մեկմեկու, խոսք կտա՞ս ինձ, որ մինչև իմ մահը չլսես, ուրիշ մարդու չգնաս։ Էս նրա համար եմ ասում, որ դու աղջիկ ես, թեկուզ շատ էլ սիրելիս լինիս ինձ, էդ չեն հարցնի քեզ, զոռով կտան մի տղի։ Շատ էլ որ հակառակվիս, կփախցնեն, ի՞նչ պետք է անես։ Ես տղա եմ, ինձ ոչով չի կարող զոռով աղջիկ տալ։ Դու գիտես, որ ես քեզ սիրում եմ, գիտես, որ վաղուց եմ սկսել քեզ սիրել, բայց հույս չունեի, որ դու էլ ինձ ես սիրում։ Մտքումս ասում էի, մեծ օջախի աղջիկ է, հպարտ կլինի, կարելի է թե լայազ չանի ինձ ուզի, ասի՝ մին մենակ տղա է, անունն էլ վեր էլած, թե՝ գող է։ Բայց հիմի տեսնում եմ, որ դու լավ սիրտ ունես։ Իմ կյանքը, իմ ապրացնողը հիմի դու ես։ Հենց որ իմանամ թե դու ուրիշի ես գնացել, էն օրը ես գլխիցս ձեռք կվերցնեմ. էլ ո՞ւմ համար, ինչու համար պիտի ապրեմ։ Մի մեր ունեմ, նա էլ էսօր կա, էգուց չկա, ոտի մեկը գերեզմանումն է։

— Ասում ես՝ «դու աղջիկ ես, քեզ զոռով մարդու կտան, զոռով կփախցնեն»։ Մեկ որ, խելոք տղան էդ չի անիլ, պետք է առաջ աղջկա կամքը իմանա, տեսնի՝ նա էլ իրան հավանում է՞, թե չէ։ Ամեն աղջիկ հո մեկ չի՛ ըլի, էնպեսն էլ կըլի, որ էդպես մարդու գլուխ կկտրի։ Հիմի ինձ ո՞վ կարա փախցնի, մինչև ես ինքս չուզենամ և երբ որ ուզենամ, էլ ի՞նչ հարկավոր կլինի փախցնի։ Դու տեսնո՛ւմ ես, որ մեր Մարիամը ինձ իրա աչքի լսի պես է պահում, նա իրա գլուխը ետ է դրել ինձ համար։ Դրա համար իսկի՛ մի՛ միտք անիլ։ Լավ իմանաս, որ ինչ որ ե՛ս եմ քեզ համար, էն էլ դու ես ինձ համար։ Երբ որ իմանամ, մեկի ապրացնողն եմ, կյանքն եմ, էլ իսկի կգնա՞մ ուրիշի։ Երբ որ դու ինձ ես սիրում, ես քեզ, էլ ուրիշ ի՞նչ հարկավոր է մեզ։ Ես իմ աչքովը տեսնում եմ, որ շատերի սերը մինչև պսակն է քաշում։ Պսակվում են թե չէ՝ մարդ ու կնիկ շուն ու կատու են դառնում, էլ չեն սիրում մեկմեկու։ Հենց սրա համար մտքումս դրել էի, որ քեզ ասեմ—էսպես մնանք միշտ, որ սիրենք մեկմեկու։ Ես հենց իմանում եմ, թե աշխարքումս ինձ նման բախտավոր ոչով չկա. սաղ աշխարհքը չեմ փոխի քո սիրո հետ...

Արզումանը լսելով Հերիքնազի այս դյուցազնական խոսքերը, չիմացավ ի՞նչ պատասխան տա, ինչպես շնորհակալ լինի նրանից։ Մինչև այսօր նա սիրում էր Հերիքնազին, որովհետև Հերիքնազը

մի հատիկ էր այդ գյուղումը իր գեղեցկությամբ, իր արիությամբ։ Այն աղջկերանցից էր Հերիքնազը, որին սովորաբար ղըզօղլան անուն են տալիս գեղջիք։ Կանացի քնքշության և չգեղեցկության հետ նա ուներ և այրականություն, որ հարկավոր դեպքերում գործ էր դնում և զարմացնում կտրիճներին։ Երբ որ նա լինում էր մի խումբ աղջկերանց մեջ իրանց սովորական խաղերի ժամանակ, ոչ մի տղա նրա ահուց չէր համարձակվի նրանց մոտենալ։ Երբ որ ձի էր նստում սար կամ ուխտ գնալիս, շատ անգամ տղի գդակ էր դնում գլխին և վարժ հեծնողի պես ձին խաղացնում և զարմացնում ամենքին։ Բոլոր նշնվելու տղերքը նրա աչքում ճանճեր էին թվում, նա ինքզինքը Արաբի-Զանգի էր համարում և Շահ-Իսմայիլ էր փնտրում։ Արզումանն էր միայն նրան գրավում, միայն նրանից էր ամաչում և նրա սերն էր ուզում գրավել։ Ահա այս հատկությանց համար Արզումանը նրան սիրում էր, բայց չէր կարծում, որ նրա մեջ կհանդիպի և սիրո, նրա մեջ կգտնի խելք, դատողություն։ Եվ ճշմարիտն ասել՝ Հերիքնազը մինչև հիմա կարծես թե չուներ էլ այդ հատկությունքը։ Այդ կայծերը նրա սրտի և ուղեղի մեջ թաք էին կացել մինչև այսօր և բարեպատեհ հանգամանքի էին սպասում արտափայլելու։ Հերիքնազը սիրել էր մտածել, մտածում էր իր վրա, իր ապագայի վրա, իր սիրած մարդոց վրա, շրջապատ հանգամանքների վրա և որովհետև դրանց մեծ մասի վրա չուներ ոչ մի կանխակալ կարծիք, չուներ նախապաշարյալ խրատատու, այդ պատճառով իր պարզ և բնական դատողությամբ միշտ կամ համարյա միշտ անսխալ եզրակացության էր գալիս և համոզվում իր կարծյաց մեջ։ Արզումանը, որ ի բնե մարդու հոգու մեջ թափանցել գիտեր, և իր շրջակա մարդկերանցը անխելահաս արարածներ էր համարում, որ փնտրում էր այնպիսի մարդիկ, որ ավելի ազնիվ, ավելի վսեմ բաների վրա խոսեին, այժմ տեսնելով Հերիքնազի մեջ այդ հերոսական վճռակամությունը, սկսեց փոխել իր կարծիքը ինչ որ ուներ Հերիքնազի վրա և նրան նայել ոչ միայն որպես սիրականի, այլև որպես հավատարիմ ընկերուհու և իմաստուն բարեկամուհու վրա։ Այս կարծրասիրտ երիտասարդի հոգին կարծես տեղահան էլավ, և նրա աչքերը, որ միայն իր եղբարց մահվան ժամանակն էին թաց էլել, այժմ նորեն սկսան աղբյուրանալ։ Բռնեց Հերիքնազի երկու ձեռքը և դրավ իր շրթունքներին ու ասաց.

— Հերիքնազ, Հերիքնազ, իմ աննման Հերիքնազ, քու էդ խոս-

քերը կենդանացրին իմ օխտն ախպորը։ Հենց իմանում եմ, թե հիմի օխտն էլ կշտիս կանգնել, ինձ մխիթարում, ինձ սիրտ են տալիս, թե՝ մի՛ վախենալ, քամակիդ կանգնած ենք։ Իմ սիրուն, իմ աննման Հերիքնազ, երբ որ ձեր օջախն ու մեր օջախը վառ էին, մեր տներին էսպես փորձանքներ չէին գալիս։ Գեղի մեջ մենակ լինելը աշխարհքիս ամեն անբախտություններիցը վատն է։ Էսպես չէր լինի, եթե մեր մեջ արդար օրենք, արդար դատաստան ըլներ։ Բայց վնաս չունի, ես այսուհետև մենակ չեմ, դու իմ օգնականն ես, դու իմ մխիթարողն ես։ Մինչև հիմա դու իմ նշանացուն էիր, այսուհետև երկու բանով էլ ավելի ես՝ համ քույրս ես, համ ախպերս...

Հերիքնազը փաթաթվեց Արզումանի շլնքովը ու սկսավ նրան մխիթարել։ «Մի, վախենալ, աստված ողորմած է», միայն կարողացավ ասել Հերիքնազը և Արզումանի ճակատից համբուրեց։ Նոքա երկոքյան լռեցին և այս լռության մեջ երջանիկ էին։

ԺԲ

Վերջապես Մարիամը դուրս եկավ և Արզումանին ներս հրավիրեց հացի։

— Դե, դու է՛լ վեր կաց, Հերիքնա՛զ ջան,— ասաց Արզումանը և ինքը նեղս գնաց։ Հերիքնազը երկար սպասել չտվավ. իսկույն հագավ շորերը և գնաց Արզումանի մոտ, նստեց նրա վրա թիկն տվածի պես։

Ասում են մթնի մեջ ավելի վառ է լինում մարդու երևակայությունը, քան թե լուսի. գիշերը ավելի, քան թե ցերեկը։ Բայց արի ասենք. այս երևույթը եթե ճշմարիտ էլ է, մեզ նման մաշված ու մեռած մարդոց համար է։ Անարատ հոգոց մեջ երևակայությունը միապես վառ է, թե ցերեկ լինի, թե գիշեր, թե լույս լինի, թե մութը։ Բայց թողնենք այս փիլիսոփայությունը...

Արզումանը սաստիկ քաղցած էր և առավոտյան էր կերել մի կտոր թուրքի սաջահաց, բայց Հերիքնազին տեսավ թե չէ, ստամոքսն իր պահանջից ետ կացավ։

— Զարմանալի՛ բան է. ես ամենևին իշտահ չունիմ,— ասաց նա,— բայց միտս է, որ էսօր սիրուս թրթռում էր սաստիկ քաղցածությունից։

Մարիամը գիտեր, որ ուրախությունը իշտահ փակել գիտե, բայց ախորժակ բանալու հնարքը նույնպես գիտեր։ Մի քյոռօղլու բաժակ արաղով լցրեց տվավ Արզումանին, ասելով՝ «Իմ ու Հերիքնազի կենացը մի ստաքանով պիտի դարդկես»։ Արզումանը ոչ օղի և ոչ գինի խմելու սովորություն չուներ, բայց այդ խոսքի համար թույն էլ որ լիներ, կխմեր։ Մի չաղ հավ էր եփել Մարիամը և մի քանի ձու խաշել։ Լավ ախորժակով կերավ Արզումանը. բայց հիմի էլ կշտանալու զգացմունքն անհայտացավ։ Մարիամը տեսավ, որ Արզումանի ծամելիքները դադար առնելու մտադրություն չունին, վեր կացավ մի մեծ ման սալ-սալ մածնով լցրեց դրավ առջևը։ Այս էլ սրբեց մեր հերոսը և հետո ասավ՝ չանես բեզարեց, էլ ոչինչ չեմ ուզում։ Ութ օր կա, ինչ որ էսպես իշտահալի հաց չեմ կերել։

Այս միջոցին աքաղաղը կանչեց։

— Ա՛յ զահրըմա՛ր...— ասաց Արզումանը համարյա աքաղաղի չափ բարձր ձայնով։— Էրնակ մութն ընկներ աշխարհքի վրա, էլ մեկ սաղ տարի չլուսանար։ Էս ի՞նչ է, էս սահաթս մթնեց, հիմի ուզում է լուսանա՞։

— Կուզե՞ս, մի սաղ տարի քեզ մի էնպես մութը տեղ գցեմ, որ սատանեն էլ չգտնի,— ասաց Հերիքնազը։

— Որտե՞ղ կգցես։

— Մեր մեծ տան ներսի օթախը։ Օխտը տարի կըլի էդ օթախը մարդ ոտք չի դրել։ Կուզե՞ս, արի գնանք տե՛ս։

Արզումանի հետաքրքրությունը շարժեցավ և իսկույն վեր կացավ տեղիցը, որ առանց ժամանակ կորցնելու տեսնի՝ ի՞նչ օթախ է այդ։ Արզումանը լսել էր սրանց մեծ տան համբավը, բայց ինքը չէր տեսել։ Մի անվառ ճրագ ու լուցկի վել առան և մեծ տունը մտնելով ճրագ վառեցին։ Դիմացի պատերը Արզումանի աչքումը չերևացին և կարծեց թե տան մեջ չի։

— Ա՛խչի, էս ո՞ւր բերիր ինձ,— հարցրեց Հերիքնազին։

— Ա՛ռաջ արի, մի՛ վախենալ,— ասաց Հերիքնազը։

Արզումանը մի քանի քայլ առաջ գնալով ճրագը բարձրացրեց և սկսավ իր շորս կողմը նայել։ Ահագին մեծության, կոնձև մի շինություն էր այս տունը, և վերև նայողին թվում էր, թե ուր որ է, պիտի փլի վրան։ Ութ սարսափելի հաստության սյուների վրա էին դարսված առաստաղի հաստ ու երկար գերանները, որոնք արդեն կիսով չափ փտել էին և մոտ էին կործանվելու։ Այդ իսկ պատճա-

ով ոչինչ բանի համար գործ չէին դնում այս տունը, բայց չէին էլ ուզում քանդել այդ հայրենավանդ հարկը, որ միշտ միտները գցի իրանց նախնյաց մեծությունը։

Հերիքնազը առաջնորդեց Արզումանին դեպի իր ասած սենյակը, որ թեև ներսի օթախ անունն էր կրում, բայց կոիաձև, կորաքամակ մի մեծ շինություն էր, բավականին երկար և ընդարձակ։

— Ահա՛ քեզ տուն,— ասաց Հերիքնազը։— Ժամանակով մեր հարսները էստեղ են էլել կենալիս. մի տարի էլ դու հարսնություն արա։ Իսկակ կավլեմ, լավ կսրբեմ, կշինեմ քեզ համար, ամեն օր հացդ, ջուրդ կբերեմ, շատ վախտ էլ մորդ կկանչեմ, կգա էստեղ քեզ կտեսնի, մինչև կտեսնենք բանն ինչպես է ուզում վերջանա։ Հը, ի՞նչ կասես։

— Չէ՛, Հերիքնազ ջան, դու մի՛ վախիլ, ես առանց էստեղ մնալու էլ քեզ շուտ-շուտ կտեսնեմ, էլ ի՞նչ հարկավոր է, որ ինքս ինձ բանտի մեջ գցեմ։ Բայց էստեղ մի բան մի՛տս ընկավ։ Մի ժամանակ նորապսակներին բերում էին էստեղ համբուրելու, ո՞ւր է էն օջախը։

— Էս մեծ տան օջախն է, արի տանեմ նշանց տամ։

Երբ որ դնացին օջախի մոտ, որ մեծ տան կենտրոնումն էր, Արզումանն ասաց.

— Հերիքնազ, դու հո հավատում ես, որ էս օջախը զորավոր է։

— Էդ ի՞նչ խոսք է։ Մեռնիմ սրա ողորմությանին։ Ես ամեն կիրակշտեքի, ահա տեսնում ես, էս քարի վրա մոմ եմ վառում։ Երբ որ իմ հորն ու մորը տեսնում եմ էրազումս, իմ հերը էստեղ է ըլում նստած, իմ մերն էլ էստեղ, իրարու դիմաց։ Նրանք սաղ վախտն էլ միշտ էդտեղ էին նստում։ Երբ որ իմ հերը տանը չէր ըլում, ոչով չէր կարող նրա տեղը նստել. բազի վախտ էրեխեքը թե կնստեին, էդ էր, թե չէ ուրիշ մարդ չէր կարող։ Հարսներն էլ երբ որ բան չէին ունենում, ներսի օթախումն էին նստում. հացի վախտն էլ կգային էսպես շարքով կկանգնեին։

— Զարմացք բան է, ինչպե՞ս էլավ, որ էս շեն օջախը էդպես մի բաշ հանգավ։

— Բա դու որտեղացի՞ ես, խսկի չես իմացե՞լ։

— Ո՞նց չեմ իմացել։ Իմացել եմ, որ խոլերի տարին ձեր տանիքը շատ մեռնող է էլել, իմացել եմ, որ խոլերից հետո տաշարի ազարն եկավ, ինչպես չեմ իմացել, գիտ էլ գիտեմ, ես էս եմ

ասում, թե... մախլասի, ուստրծու փառքը շատ ըլի, ինքը տալիս է, ինքն առնում...

— Շատ անգամ, երբ որ մորս տեսնում եմ էստեղ նստած, ես իմանում եմ, թե նա սաղ է, մեռած չի, գլուխս դնում եմ մորս գոգումը, նա էլ ձեռքն է քսում գլխիս, երեսիցս պաչում, բայց խսկի բան չի ասում, բան չի խոսում. ինչքան մտքումս դնում եմ, թե մի անգամ էլ որ երազիս մեջ տեսնեմ, հարցնեմ, ասեմ՝ «նանի ջան, ինչի չես խոսում», հենց ուրախանում եմ ու գնում կշտին նստում։ Բայց էն գիշերը, որ դու եկար մեր տուն, էն գիշերը տեսա էլի մորս, շատ տխուր, վրես բարկացածի պես էր երևում։

— Հետո ի՞նչ մտածեցիր, ինչի՞ պետք է էդպես բարկացածի պես ըլներ։

— Ո՞վ գիտի, կարելի է թե նրա համար ըլներ, որ ես...

— Որ դու նշանված չես ու ինձ սիրում ես, էդ չե՞ս ուզում ասել։

— Հա՛։

— Հերիքնա՛զ ջան, գիտե՞ս ինչ կա։ Ես ուզում էի օրինավոր նշանտվեք անեմ, բայց բանն էսպես եկավ։ Ես ինձ մոտ մի խաչ մանեթ ունեմ։ Էսօր խանջալի ծերով ծակեցի ղաստի քեզ համար, որ շինքիդ կապես։

Այս ասելով Արզումանը հանեց քիսիցը մի խաչ մանեթ։

— Ահա՛ քեզ նշան։ Թե որ կուզես, դու էլ քու մատնիքներիցդ մինն ինձ տուր։ Արի՛, իմ հոգի, շոքենք էս օջախի ղրաին, սրա քարիցը համբուրենք, թո՛ղ քու հերն ու մերը տեսնեն, մեր նշանն օրհնեն։

Հերիքնազը հնազանդվեց։ Արզումանի ձեռքից առավ խաչ մանեթը, իր մատից մի մատանի հանեց, տվավ Արզումանին։ Շոքեցին, համբուրեցին օջախի քարիցը և հետո իրանք համբուրվեցին։ Որքա՞ն սեր, որքա՞ն սրբություն կար այդ համբույրի մեջ...

Մարիամը տեսավ, որ ջահիլներն ուշանում են, շուտով գնաց նրանց հետքից, և մեծ տան մութը անկյունում կանգնած՝ ականատես վկա էր այդ բոլոր անցքին։ Նա ձայն չէր հանում և չէր ուզում խանգարել նրանց արարողությունը, որ ի սուրբ սրտանց էր։ Երբ որ իրար համբուրեցին, հետո շոքեցին օջախի քարից համբուրեցին, նա այդ ժամանակ միայն մոտեցավ և ասաց.

— Ուխտներդ ընդունելի ըլի, աստված մուրազներիդ հասցնի։

— Ամեն, ամեն,— ասացին միաձայն Հերիքնազն ու Արզումանը այնպիսի եղանակով, որից հասկացվում էր, թե սոքա ավելի նշանավոր ուխտ ունեին, քան թե քարերից համբուրելն էր։

Այդ միջոցին աքաղաղը երրորդ անգամ կանչեց և մեր փախած Պետրոսին իմաց տվավ, որ ժամանակ է ապաշխարելու երթալ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա

Ամառն էր։ Դ... գյուղի ժողովուրդը սովորություն ուներ ամեն ամառ սար գնալու։

Գեղամա լճի հյուսիսային ծայրից սկսյալ, ուր ընկած են Դիլիջանու սարերը, մինչև Փարվանա լիճը, որ Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի մեջտեղն է գտնվում, բազմաթիվ լեռանց գոտիներ ու խումբեր կան, որոնց մեջ թեև չկա երևելի մեծության մի սար, որ գրաված լինի ճամփորդների ուշադրությունը, բայց իրենց ծաղկափթիթ դագաթներով և ականակիտ աղբյուրներովը երևելի են մեծամեծ լեռներեն անգամ։

Ահա այս սարերը, որ ձմեռ ժամանակ անմարդաբնակ են լինում և անհյուրընկալ իրանց բուք ու բորանով, ամառ ժամանակը կատարյալ դրախտի են փոխարկվում, հյուրասիրելով իրանց ստորոտներում և լանջերի ու գագաթների վրա անթիվ ոչխարներ ու տավարներ։

Որքան երևելի է Արագածը իր պատվական արոտատեղիներով ու անմահակեն ջրերովը (որո համար իսկ թարաքամեքը Ալա-յազ անուն են տալիս), որքան երևելի են Արցախի և Սյունիքի սարերը, նույնքան և ավելի ևս երևելի են Գուգարաց աշխարհի սարերը— Լալվարը, Լոքը, Ղարախաչը, Ագրիղաղը, Թելլիդաղը և ուրիշ անթիվ սարեր, որոնք կարծել են տալիս սարեցուն, որ եդեմական դրախտն այստեղ է եղել, ուր Ադամն ամառը բնակելով՝ ձմեռն արտաքսվել գնացել է Ղարայազ։

Այս սարերի մի քանիսի ստորոտում անտառներ էլ կան. այս կողմանե երևելի են մանավանդ Լոքի և Լալվարա հյուսիսային ստորոտները, որոնց շատ տեղերում, իրանց անթափանցելի է դժվարամատչելի լինելովը, կացնի ձայն չի լսված դեռևս։ Այս անտառների մեջ կա որսերի առատություն։ Այստեղ բոլուկներով խո-

զեր, թաբունով եղջերուներ են ման գալիս. ժամանակ-ժամանակ եղջերուներն իրանց գոռոցով դրմբացնում են այդ ձորերը։ Այս սարերումը կան և անմատչելի ձորեր ու հովիտներ, որոնք միայն ավազակաց են լինում պատսպարան։ Սրանց մեջ ամենանշանավորը Ղարանլրխ-Դարա ասվածն է, որ նշանակում է Մթին ձոր, պակաս չի և Շեյթանլուն, որ կնշանակե Սատանի բույն, ինչպես և Գյուլի Մամմադը, որ մի նշանավոր ավազակի անուն է կրում։

Այս տեղը մոտիկ լինելով Տաճկաստանից, երկու կողմի ավազակների հաղորդակցությունը հեշտանում է, մի կողմից մյուս կողմն են փոխադրում իրանց կողոպուտը։

Սարեցիք ամբողջ ամառը մի տեղ անշարժ չեն մնում, այլ երկու կամ երեք շաբաթը մի անգամ տեղերը փոխում են, որ տավարների համար խամ արոտատեղիներ ունենան։ Այս տեղափոխությունը մի առանձին անհարմարություն չի պատճառում. դժվար չէ իրանց շարժական տները, որոնք կամ վրան են լինում, կամ ալաչուխի քեչա հյուսած եղեգնապատով, հավաքել մեկ տեղից և մեկ ուրիշ տեղ տանել։ Այդ բնակարաններին մեր հայերն ասում են դազա, իսկ զարաբաղցիք՝ կոկալ։ Իրենց բնակելու տեղերին ասում են ուրդ, թուրքերեն՝ յուրթ, գուցե օրդու լինի իսկը, որ բանակ ասել է։ Հայերի ուրդերը բոլորն էլ մի հատուկ անուն ունեն, որոնցմե երևելիներն են՝ Քամի ուրդ, Լանջիվեր ուրդ, Ներքի ուրդ, Վերի ուրդ, Մեջի ուրդ, Ցեխի ուրդ, Մելիք Ապովի ուրդ, Պետի (Պետրոս), Պուղի (Պողոս) և այլ շատ ուրդեր։

Երբ որ ուրդը կամ մի հովիտ, մի ձոր, մի սար մարդու անուն է կրում, այդ ցույց է տալիս, որ այն մարդը մի նշանավոր գործ է կատարել այնտեղ։

Այսպես պատմում են, որ Մելիք Ապովը այժմ իր անվանը նվիրված ուրդումը յոթը մարդու գլուխ է կտրել, երեքին էլ սաղսաղ մաշկել, միայն երկուսին է ազատություն տվել, որ երթան իրենց աշխարհքումը իմաց տան։ Ասում են այս դեպքից հետո էլ լեզգու երես չտեսանք։ Պողոսի համար նույնպես պատմում են, թե ինքն ու իր նշանածը (հարսնացուն) իրարու կուռ բռնած՝ էդ ուրդովը անց կենալիս են էլել, որ գնան սարու յալ, իրանց դագեքը։ Հանկարծ լեզգիքը շրջապատում են և ուզում են իրա նշանածը ձեռնիցը խլեն։ Քաջասիրտ Պողոսը խանչալը տալիս է իր նշանածին, ինքը թուրը հանում է ընկնում նրանց մեջ. վեցի գլուխն է կտրում, չորսի միջիցն է կիսում, բայց ավազակները շատ ժամանակ չեն

տալիս. ութ-ինը հրացան մեկեն արձակելով, գյուլլախորով են անում արի երիտասարդին։ Իր սիրելու մահը տեսնելով, Պողոսի նշանածը՝ Զառին՝ ընկնում է խանչալի վրա և ինքն իրան սպանում։ Եվ այսպես երկու անարատ հոգիք անթառամ պսակին են արժանանում։ Եվ ամեն անգամ, այնտեղով անցնելիս, մեծերը պատմում են փոքրերին այս անցքը, որ մեծ տպավորություն է գործում լսողների վրա։

Բ

Վարդավառի շաբաթ օրն էր։ Սարու յալը, որ վարդի կոկոնի նմանություն բերող մի սար է, հեռվից նայողին այնպես է թվում, թե ահագին մեծության մի ծաղկափունջ է։ Ի՞նչ գույնի ծաղիկ ասես, որ նրա վրա չկար, մին քան զմյուսը պայծառ, մին քան զմյուսը հոտավետ։ Հարս ու աղջիկ զուգվել, զարդարվել էին այդ օրը և այդ սարը ծաղիկ քաղելու էին գնացել, որ մյուս օրը կատարեն վիճակախաղի հանդեսը։

Չգիտեմ ինչիցն է, ամեն տեղ վիճակախաղի հանդեսը Համբարձման տոնին են կատարում, իսկ Ղարաբաղ և նույն տեղից գաղթածները՝ Վարդավառին։ Այս էլ պետք է ասել, որ ոչ մի տեղ Վարդավառը այնպես փառավոր կերպով չի տոնվում, ինչպես Ղարաբաղում։ Նրանք չեն ասում Վարդավառ, այլ Վրթևուր, որ կնշանակե վարդավոր, և այս է հենց այս տոնի էլ պատմական նշանակությունը, որովհետև Վարդավորը Անահիտն էր, որ ուներ վարդի մատ և ասվում էլ էր Վարդամատն։

Ծաղիկ քաղողների մեջն էր և մեր Հերիքնազը, որ ամեն ծաղիկ պոկելիս, ամեն մի խոտի դիպչելիս խղճահարվում էր, թե մեղք չե՞ն այս ծաղիկները, որ այսպես անգթությամբ կտրում, հեռացնում ենք իրանց արմատից. սրանք էլ հոգի ունեն, սրանք էլ մուրազը փորներումն են թողում։ Արդյո՞ք սերն էր նրան այս աստիճան քնքշացրել։ Որ ծաղիկը որ ավելի դալար, ավելի պայծառ էր լինում, նրանց չէր ղմրշում ձեռ տալ, աշխատում էր այնպես քայլել, ոտներն այնպես փոխել, որ ոչ մի խոտ չճխլի, չթառամեցնի։ Այս մտքի հետ ընկած՝ ի՞նչ ասես երևակայում էր Հերիքնազը։ Մի ծաղիկ նրան թվում էր որպես նորահարս, մյուսը որպես նորափեսա, մեկը նորահարս, մյուսը դեռ մանուկ, մեկին պաչպչում էր,

մեկէլի կշտին նստում, նայում էր, զմայլում, հիանում էր նրանց ձևերի կանոնավորության և համաչափության վրա և այնպիսի բաներ ու հատկություններ էր նշմարում, որ մինչև այսօր իր աչքին չէին զարնվել, իր ուշադրությունը չէին գրավել։ Մինչև այսօր նրանք անշունչ բաներ էին, որոնց պոկել և հոտ առնել կարելի էր միայն առանց ընելու. բայց հիմի բոլորն էլ շունչ, բոլորն էլ հոգի առած իրա հետ խոսում էին։ Այնպես էր թվում Հերիքնազին, որ այս ծաղիկները իրան լավ ճանաչում են, գիտեն նորա անցյալը, ներկան – ու ապագան, միայն լեզու չունին, որ հայտնեն իրան, մխիթարեն նրա տխրած սիրտը։ Մյուս աղջկեքը ուրախ ու զվարթ երգելով, իրարու տակ ու գլուխ ընկնելով, գլորվելով վազվզում էին մեկ թուփից մյուս թուփը, մեկ ծաղկից դեպի մյուսը, ասում էին՝ «տեսնե՞նք ո՞վ շուտ կհասնի էն բարձր աղնթափի ծաղկին, ո՞վ շատ կքաղի, ո՞վ ավելի շատ գույն ծաղիկներ կունենա», և այսպես վազվզելով բավականին հեռանում էին, իսկ Հերիքնազը չէր մասնակցում նրանց զվարճությանը, չէր վազում նրանց հետ, նա կարծես գիտությամբ ետ էր մնում, որ մենակ մնա և շատ էր սիրում այդ մենակությունը։ Մյուս աղջկեքը հասել էին սարի գագաթը, բայց ինքը դեռ նոր ստորոտումն էր և չէր էլ ուզում նրանց հետևից հասնել, որ չզրկվի իր քաղցր ցնորքներից։

Արդեն հինգ ամիս էր անցել, ինչ որ Արզումանին չէր տեսել, նրանից ոչ մի համբավ չուներ։ Այդ հինգ ամիսը հինգ տարուց ավելի էր թվում Հերիքնազին։ Հինգ ամսվա մեջ բավական կերպարանափոխվել էր Հերիքնազը։ Նրա աչքերը, որ առաջ էլ հայկուհու աչքեր էին՝ թուխ-թուխ, խոշոր ու վառվռուն, բայց մի տեսակ ապշություն ունեին, որ բնական է անկիրթներին, այժմ այդ աչքերի փայլն ու հայեցողությունը մի նոր կերպարանք, մի նոր զորություն էին ստացել, որով թափանցում էր նա դիտելի առարկայի մեջ, թափանցում էր մարդու սրտի և հոգու խորքերը։ Նրա դեմքի գծագրությունը առաջ էլ գեղեցիկ էր, բայց այժմ փոխվել էր արտահայտությունը, որ ավելի վսեմ, ավելի սքանչելի էր։ Առաջ նա մի գեղեցկության կուտակություն էր, ինչպես վարդը կոկոնի մեջ, իսկ այժմ բացվել էր իր բոլոր շքեղությամբ։ Առաջ նա մի գեղեցկուհի էր, իսկ այժմ մի աստվածուհի արամազդյան գերդաստանից, որ Հելիկոնյան լեռներից տեղափոխվել էր Սարի-յալ, որ մի քիչ ժամանակ անցկացնի հողեղենների հետ։ Զքնաղատիպ, աննման արարած, պաշտելի՜ Հերիքնազ...

Վաղուց արդեն ազապ տղերանց երևակայության միակ նյութը Հերիքնազն էր։ Անհարմար էին համարում Հերիքնազ անունը տալ նրան, Դունյա գյոզալի էին ասում, Արաբի-Զանգի, Ասլի ու Մեհրի, Գյուլլուզար, և առհասարակ աշխատում էին իրենց սիրած վեպերի հերոսուհիների անունը տալ նրան, բայց ոչ մեկը չէր կպչում, նա մնում էր դարձյալ Հերիքնազ։ Շատերը խաղ էին կապում նրա վրա և կամենում էին Արզումանի արկածքներին նախապատճառ շինել նրան, բայց չէին կարողանում հաջողացնել, չէր ընդհանրանում։ Մի բիծ, մի արատ չէին կարողանում դնել նրա վրա, որովհետև նա զորավոր օջախի զավակ էր, ժողովուրդը պատկառանքով էր նայում նրան և համոզված էին, որ մի որևիցե անտեղի ակնարկություն դեպի նա անպատիժ չի մնալ։

Շատերը խնամախոս եկան հարուստ և շեն տներից, շատ հեռավոր գյուղերից և քաղաքից, բայց ամենքն էլ մերժվեցին։ Շատերը փորձ արին փախցնելու, բայց տեսան, որ Հերիքնազի փախցնելը դժվարին գործ է և անհնարին, քանի որ նա ինքն իրան պաշտպանելու և՛ քաջություն ունի, և զենք։

Ոչ ոք, բացի Մարիամից, չգիտեր, որ Հերիքնազը նշանված է։ Շշունջ կար միայն, որ Հերիքնազը սիրահարված է Արզումանի վրա, բայց ձեռներին ոչ մի փաստ չունեին։ Շամիրը շատերին էր խոսք տալիս, շատերից ընծաներ առնում, որից մի ձի, որից մի հրացան, բայց նպատակին չհասնելով՝ ընծաները ետ էր դարձնում։ Մի մեծ պատերազմ էր այս, բայց Հերիքնազը այս պատերազմից հաղթող դուրս եկավ և հաստատ մնաց իր սիրո մեջ։

Հերիքնազը տեսավ, որ իր ընկերները շատ են հեռացել, էլ չուզեց նրանց հետևից հասնել։ Նստեց տեղնուտեղը և սկսեց իր քաղած ծաղիկները երգելով փնջել։ Առաջ «ջանգյուլում» երգեց մեղմ ձայնով, հետո սկսեց բայաթի։ Բայաթին նրա սիրտը այնպես շարժեց, որ արտասուք եկավ աչքերից։ Լաց էլավ Հերիքնազը, առաջ կամաց, բայց քիչ-քիչ ձայնը բարձրացրեց և սկսեց բոլոր ուժովը գոռալ, որ մեկ անգամից դուրս վիժե բոլոր կսկիծը։

Հինգ ամսվա մեջ շատ բան էր զգացել Հերիքնազը, շատ էր տխրել, բայց ոչ մի անգամ չէր լաց էլել։ Նրա սիրտը քարացածի պես էր։ Բայց հիմա, երբ աչքը ձգեց իր չորս կողմի սարերի վրա, երբ երևաց Ղարանլրխ-Դարան, որ մութ անդունդի նման երկարումեկ ձգվել էր երկու ահագին լեռների միջով, Հերիքնազի սիրտն ուռավ և ուզեց կուրծքը պատռել։ Ահա՜ էդ ձորն է Արզումանի

բնակարանը, ասում էր նրա սիրտը և ուզում էր թռչել դեպի այն կողմը։

Հերիքնազը երկար, երկար ժամանակ նայեց դեպի Մթին ձորը և մի տխուր տպավորություն ստանալով, աչքը ձգեց մյուս բլուրների և սարերի վրա, որոնք նույնպես տխրությամբ էին նայում իր վրա։ Մի տխուր նախազգացմունք դրդեց նրան, թե այս վերջին անգամն է, որ զմայլվում է իր ծննդարանի շքեղ տեսարաններով, էլ Կաթնաղբրի ջրիցը չպիտի խմի, էլ Բոխոտ սարի հաղարջիցն ու մոռիցը չպիտի ուտի, էլ Ջուխտակ աճարքու վրա կարմիր թել չպիտի կապի, որ հիշատակ մնա, մյուս տարին գա մի նոր թել ավելացնի, էլ Սարի-յալի վրա ծաղիկ քաղելու չպիտի գա... Այսպիսի տխուր մտածմունքներից հետո մի թալկություն եկավ վրան, պառկեց ցողաթաթի ծաղիկների մեջ և քունը տարավ։

Մարիամը տեսավ, որ Հերիքնազը բավական հեռու է մնացել, վախեցավ, թե մի փորձանք չպատահի, մանավանդ նկատելով՝ որ հեռվից ձիավորներ են գալիս այնպիսի արագությամբ, որ կարծես Հերիքնազին փախցնելու են գալիս։ Իր հետ մի խումբ աղջիկ առավ և սկսեց սարիցը վայր իջնել դեպի Հերիքնազը։ Ձիավորները Հերիքնազին չնկատելով՝ ուղղակի դիմեցին դեպի Մարիամի խումբը։ Նրանցից մինը վայր իջավ ձիուցը. Մարիամը ճանաչեց, որ նա Արզումանն էր, և իսկույն մոտ գնաց բարևեց։ Արզումանը մի քանի խոսք ասաց Մարիամին և իսկույն ձին հեծավ ու կայծակի արագությամբ հեռացավ իր ընկերների հետ։ Աղջիկերքը ուրդ հասան թե չէ՝ չավ արին ամեն տեղ, թե՝ Արզումանին տեսանք, Մարիամը նրա հետ երկար խոսեց, բայց մենք չիմացանք, թե ինչ խոսեցին։

Գ

Այս շաբաթ երեկոյին մի առանձին ուրախություն և զվարճություն էր երևում սարեցոց մեջ, մանավանդ ջահել աղջիկների և տղաների։ Միակարգ շարված գագեքի առջև խարույկները ավելի էին թեժացրել։ Կարմրաթուշիկ հարսն ու աղջիկերք պատել էին կրակների չորս կողմը։ Մի տեղ շվի էին ածում, մի տեղ երգում, բայց ամենից շատ հավաքվել էին պառավ Հոռոմի մատ, որ սկսեցին և մայրություն էր անում ամենքին, և առանց նրա հրամանի ոչինչ անել չէին կարող մյուսները։

Երկինքը բավականին պարզ էր այս գիշեր։ Թեպետ լուսինն արդեն անցել էր արևմտյան սարերի քամակը, բայց այնտեղից դարձյալ օգնում էր երկնքի պայծառ աստղերին և լուսավորում մոտակա սարերն ու ձորերը։ Բաղումք աստեղատունը բավական բարձրացել էր և ցույց էր տալիս, որ մոտ է կեսգիշերը, բայց այս գիշեր կարծես ոչ ոք մտադրություն չուներ քնելու։ Սրա պատճառն այն էր, որ առավոտյան արշալույսին աղջկերքը իրանց քաղած ծաղիկը պետք է տանեին յոթն աղբյուրի ջրով ցողելու. իսկ տավարածները պիտի աշխատեին նրանցից այդ ծաղիկը խլելու։ Սա մի կռիվ էր, որ կատարվում էր տղայոց և աղջկերանց մեջ, որից առաջ է եկել և կռվածաղիկ բառը։ Եթե աղջկերքը ծաղիկը խլել տան, պետք է տղաներին ընծաներ տալով՝ ետ առնեն։ Ընծան լինում է մի քանի ջուխտ նախշուն գուլպա և զանազան ուտելիք—ձվածեղ, սեր, գաթա։ Տղերքը այնքան ընծաների համար չէին աշխատում, որքան ազատվելու համար այն ամոթահարությունից, որ պիտի կրեն աղջիկներից, նրանց ծաղր ու ծանակը պիտի դառնան, եթե չկարողանան խլել։ Իրավունք ունին և գողանալու ծաղիկը, որ մի բղուղի մեջ թաքցրած են պահում այս գիշեր։

— Ա՜յ տղեք, քի՜չ լախրահաչի տվեք, գնացե՜ք շնթռկեցե՜ք։ Առավոտները ձեզ վեր կացնել չի ըլում, օրը կեսօր է ըլում, որ կովերն արոտ եք տանում,— ասաց պառավ Հոռոմը բարկանալով տավարածների վրա։

— Հը՜մ, էդ քու բանը չի. ուզում եք մեզ քնացնեք, որ ձեր բանը լավ տեսնեք հա՞. Տղե՜րք, սուտ է ասում, խաբում է մեզ, չքնեք,— ասաց տավարածների գլխավորը։

— Չքնեք էլ, ոչինչ չեք կարող անել, անմեղ եք անուշ քուններդ կոտրում,— ասաց մի աղջիկ հեգնելով։

— Դուք մազ մանեցեք, առավոտը ձեզ կծկիլ կտանք ձեր մանածը,— սրախոսեց մի տավարած։

— Հաչեցեք ինչքան կուզեք, մենք էնքան շատ ենք, որ մեզ ոչինչ չեք կարող անել։

— Ինչքան էլ շատ ըլիք, էլի տակի զոլը ձերն է...

— Վո՜ւյ, գետինը մտնես...

— Քեզ հետ կմտնեմ թեկուզ դժոխքը...

— Քու խրատողի էրեսքը կպչե՜ս։

— Դո՛ւ ես իմ խրատողը։

— Թաղեմ արևդ, ես քեզ ե՞րբ եմ խրատել։

— Գիշերս կխրատես, ես էլ խելոք կկենամ։

— Ես գիտեմ, քեզ ինչպես կխրատեմ։— Այս ասելով աղջիկը մի խնձոր վեր առավ, որ տղայի գլխին խփի. նա փախավ, գլուխը պրծացրեց։

— Ախչի, թողեք էդ շներին, ի՞նչ եք հաչացնում,— ասաց Հոռոմը։— Դուք քաշվեցեք ձեր տեղերը, թող դրանք էնքան կենան, որ ջանները դուրս գա։ Թե որ ղոչաղ տղեք են, առավոտը կերևա։

— Կերևա, հալբա՛թ կերևա։ Մի Հերիքնազ ունիք, նա էլ հրեն տեղումը պառկած դելն է տալիս. էլ ո՞վ ունիք, որ ձեր երեսը պարզանի,— ասաց տավարածների գլխավորը, որ մողրովից ավելի իշխանություն ուներ ամեն տավարածների վրա։ Սա վեր կացավ տեղիցը և մյուսների հետ հեռանալով՝ կարգադրություն արավ։ Ամեն աղբյուրի մոտ չորս-հինգ հոգի ուղարկեց, որ պահպանեն մինչև լույս։

Հերիքնազն այս նախատոնեքին ներկա չէր։ Ծաղկաքաղից առուն հասավ թե չէ՝ Հերիքնազի ջանն սկսեց կոտրատվիլ և ծնոտիրը իրար զարկվելով իմացրին նրան, որ այս է ահա դող ասածը, որ ունեցած չէր երբեք։ Արդեն տասնութ տարեկան էր Հերիքնազը, բայց դեռևս ոչ մի անգամ հիվանդացած չէր։ Երկու տարեկան ժամանակն էր ծաղիկն ու կարմրուկը հանել և այն էլ շատ բեթև, և չէր էլ հիշում ինքը։ Իսկ այժմ ընկել էր դողի անգութ ճանկերը, որ բավական դողացնելուց հետո, ձգեց մի անտանելի տաքության մեջ, և Հերիքնազն սկսեց դելը տալ։

Արզումանն այսօր Մարիամին տեսնելով Սարի-յալումը, ժամադիր էր եղել վերի աղբյուրի մոտ տեսնելու Մարիամին այս գիշեր։ Մարիամը գնաց նշանակած տեղը և գտավ Արզումանին, որ այնտեղ թաք կացած սպասում էր։

— Ասա տեսնեմ ի՞նչ ունես ասելու,— ասաց Մարիամը։

— Էն եմ ուզում ասել, որ էս քանի ամիսը էն կողմումն էի (սահմանից դուրս)։ Էնտեղ մի քանի ծանոթներ գտա. նրանք խոսք տվեցին ինձ, որ լավ կընդունեն և լավ կպահպանեն, եթե գնամ իրանց մոտ բնակվեմ։ Հիմա ուզում եմ Հերիքնազին առնել, էն կողմն անց կենալ. էնտեղ, ինչպես մեր օրենքն է, կպսակվենք և մեզ համար հանդարտ կապրենք։

— Ես համաձայն եմ, Արզուման. թեպետ շատ դժվար է ինձ

համար մի հատիկ քրոջիցս զրկվիլը, բայց լավ է էդպես անել, քան թե սաղ աշխարհքս մեզ վրա հաչացնել։ Բայց գիտե՞ս, Հերիքնազը հիմա հիվանդ պառկած է, դողացնում է. պետք է մի քիչ համբերես։ Էգուց չէ էլօր կերթանք Ներքին ուրդը՝ էնտեղ չորս կողմն անտառ է. կարող ես մթնով գալ Ջուխտակ ամարքու մոտերքը, ես էլ կգամ էնտեղ, երբ որ լավացած կլինի Հերիքնազը, քեզ իմաց կտամ...

Հենց այս միջոցին մի քանի տավարածներ շրջապատեցին Արզումանին և Մարիամին։ Արզումանը դրանց տեսնելով՝ հեռացավ, իսկ Մարիամին բռնեցին։

— Ծաղիկը մոտդ է, տո՛ւր,— բղավեցին երեք-չորս տավարած։

— Ի՞նչ ծաղիկ, ի՞նչ եք ասում,— ասաց Մարիամը շփոթվելով։

— Թողեք, թողեք,— ասացին մյուս տավարածները, որոնք ճանաչեցին Արզումանին,— դրանց ծաղիկը ուրիշ կովածաղիկ է, մեր ուզած ծաղիկը չի։— Եվ սկսեցին մեկ մեկի ականջում փրսփրսալ—տեսա՞ր, տեսա՞ր, Արզումանն էր, Արզուման՛ն էր...

Դ

Մյուս օրը սովորական հանդեսը շատ փառավոր կերպով կատարեցին աղջկերքը։ Ծաղիկը կիսել էին և տվել երկու խմբի ձեռքը։ Առաջին խումբի ձեռիցը խլեցին տավարածները և ուրախությունից գժվածի պես փախան։ Իսկ մյուս կեսը աղջկեքը տարան ցողեցին իրանց ուզածի պես և վերադարձան ուրախ-ուրախ։ Տավարածները երբ որ իմացան իրանց խաբված լինելը, խլած ծաղիկները խաչաձև փնջեցին և կախեցին կովերի ճակատներից։ Այսպիսով համ կովերը զարդարվեցին ծաղիկներով, համ աղջկեքը կատարեցին իրանց հանդեսը առանց տղաներին հարկ վճարելու։ Բայց տղեքը մտածեցին, որ այս խորամանկության վրեժը մյուս տարի առնեն և սրանով մխիթարեցին իրանք իրանց։

Առավոտը վաղ վեր կացավ Հերիքնազը և ուզում էր հանդեսին մասնակցել, բայց Մարիամը թույլ չտվավ, թե՝ կմրսես, դողդ կկրկնվի, տաք կաց, որ լավանաս շուտով։ Նա չպատմեց իր գիշերային այցելությունը, չասաց որ Արզումանին տեսել է, որ Հերիքնազին մի նոր մտածմունքի մեջ չձգի։

Հերիքնազը երկու մատանի ուղարկեց Մարիամի ձեռով, որ գցի բղուղի մեջ։ Մատանիքներից մեկն իր համար էր, իսկ մյուսն Արզումանի։ Այդ մատնիքները հանեցին թե չէ, նրանց հարևանի աղջիկը բերավ Հերիքնազին տվավ և պատմեց, թե որի համար ինչ վիճակ դուրս եկավ։

— Դե ասա տեսնեմ, Մագթաղ ջան, սրա համար ի՞նչ դուրս եկավ,— ասաց Հերիքնազը իր մատնիքի համար։

— Դրա համար Դախունց Թելլուն ասաց.

Սիրել եմ սերն էրեսին,
Ըռեհան թերն էրեսին,
Ով իմ սիրածն ինձ չըտա,
Աստծու կրակն էրեսին։

— Ամե՛ն,— ասաց Հերիքնազն ուրախանալով։— Դե հիմի էլ է՛ս ասա, սրա համար ինչ դուրս եկավ։

— Դրա համար էլ Գյուլչըհանն ասաց.

Այ տղա, թաղովն արի,
Ոտներդ շաղովն արի,
Էս թաղը ղալմաղալ ա,
Ման տուր, էն թաղովն արի։

— Արի՛, հոգիս, արի,— մռմռաց Հերիքնազը։— Խո սուտ չե՞ս ասում, Մագթաղ, ըղորդ էդպես դուրս եկա՞վ։

— Սուտ չեմ ասում, իմ ախպոր ազիզ արևը։ Ում համար ինչ դուրս է եկել, բոլորն էլ միտս է։ Ձեր Մարիամի համար տես ինչ դուրս եկավ։

Մի ծառ ունիմ թըրըղի՛
Պտուղն է օձի լըղի՛.
Իմ հորն ու մորն ի՞նչ ասեմ,
Ինձ տըվին ղարիբ տըղի՛։

— Խե՛ղճ Մարիամ, բայց հերն ու մերն ի՞նչ անեն, նրանք հո չեն տվել։ Ես սր լինեի, կասեի՝

Գնացի գետը լըվացք,
Սապոնս ոսկեջրած,
Իմ հերն ու մերն ի՞նչ անեն,
Ճակտիս էս էր գրած։

— Դե հիմի Շամիրինն ասա, թե որ միտդ է։

— Շամիրինը դեռ չէր դուրս եկել, որ ես եկա, Մարիամը կգա կասի։ Ինձ չթողեց, թե մինչև վերջը մնացել էի. գնա՝ ասաց, Հերիքնազը մենակ է, սիրտը կնեղանա։ Ինքը պառավ կնիկ է դառել, պառավների հետ էր նստել։

— Ի՞նչ պառավ։

— Ինքն ու Արզումանի մերը մի կողմն էին քաշվել, քիթ քթի տված քչփչում էին, չիմացա ի՞նչ էին խոսում։

— Բա քեզ համար ի՞նչ դուրս եկավ, Մագթաղ։

— Ինձ համար էնպես բան դուրս եկավ, որ ամենքն էլ ծիծաղեցին։ Քրքրվի՛ խանումի ջանը,— ասաց.

Գյուլըմ, գյուլըմ, գյուլ չիչակ,
Ես ու դու մտնենք մի փըչակ,
Մինչև լուսը քըչփըչանք,
Որ լուսանա — կըշկըշանք։

— Էլ ո՞ւր ես նեղանում, ուրախ բան է դուրս եկել։

— Է՛հ, դրանից ինչի՞ պիտի նեղանամ, ինչ կուզի՝ թող դուրս գա։ Ես մի մատանի էլ Արզումանի համար էի գցել, տես՝ ինչ դուրս եկավ.

Դարբվեր ջուր է գնում,
Հարցրեք՝ ո՞ւր է գնում,
Քենուն մահանա արած՝
Իր յարին հյուր է գնում։

— Դու Արզումանի համար ինչի՞ էիր վիճակ գցում.— հարցրեց Հերիքնազը նախանձելով։

— Է՛հ, հենց էնպես։ Մտքումս ասացի՝ խեղճ տղա է, քույր չունի, բան չունի, մի մատանի էլ նրա համար կգցեմ. տեսնեմ ի՞նչ է դուրս գալիս։ Էդ որ դուրս եկավ, ամենքն էլ հարցրին. «էդ ո՞ւմն

էր, էդ ո՞ւմն էր», ես չասացի։ Հետո իմացա, որ նրա քեռակինն էլ է մի մատանի գցել, մերն էլ մի սաղափ խաչ էր գցել։ Քեռակնկա գցածն էլ էս դուրս եկավ.

Կանցնեմ գետի էն կուռը,
Կքաղեմ դաստով նուռը,
Թե որ սիրածս ինձ չըտան
Կըքաշեմ խանի դուռը։

Մորն էլ էս դուրս եկավ.

Գետը նի մըտա, խոր ա,
Քաթան շապիկըս նոր ա,
Իմ նանին խաբար արեք,
Ես օլքա օլքա կորա։

— Խե՜ղճ նանի, ով գիտե՝ լաց էլավ, էդ որ լսեց։

— Չէ, նա ինքը չիմացավ, հեռու նստած ձեր Մարիամի հետ խոսում էր. նրան խաբեցին, ուրիշ բան ասացին. ա՛յ ինչ ասացին.

Դու նստել ես դոշակին,
Ուշքըդ, միտքըդ փեշակին,
Խըմել ես նրան գինին,
Հոտ կանես մանիշակին։

— Ո՞ւր էր էդպես լիներ, խե՜ղճ նանի։

Հերիքնազը շատ սիրում էր Արզումանի մորը։ Մինչև այս տարվա սար գալը նրա հետ մոտիկ հարաբերություն չուներ. մեծ էր իրանց գյուղը, իրանք գյուղի մի ծայրումն էին կենում, նրանք՝ մյուս։ Բայց այստեղ՝ սարումը, դրկից էին։ Գյուղացիք երբ որ սար են գնում, սովորաբար նոր դրացիներ են գտնում։ Այստեղ մի քանի դագա միասին մեկ տան պես են լինում. այստեղ ավելի լավ է երևում, թե որ տներն են միմյանց ավելի սիրելի կամ որոնք են ուզում նոր բարեկամություն հաստատել, նոր խընամություն անել, որո՜նք են ուզում միմյանց ավելի մոտիկից ճանաչել։

Մարիամը օգուտ քաղելով այս սովորությունից, աշխատեց բանն այնպես բերել, որ դրկից դառնա Արզումանի մորը և ձեռ-

քից եկած օգնությունն անե նրան և մխիթարած պահե։ Հերիքնազի էլ ուզածն այդ էր։ Նա ամեն օր պառավի ոտներն էր լվանում, շաբաթը երկու անգամ գլուխը, երկու շաբաթը մեկ անգամ լողացնում էր, ջուրը բերում էր, կովը կթում, կերակուրն եփում, շորերը լվանում, կարկատում, ամեն ազիզ կերակուրից նրա բաժինը պահում, ուտեցնում, ամեն երեկո տեղը շինում, քնացնում։ Շատ անգամ էլ՝ Շամիրը տանը եղած ժամանակը, ինքը գնում էր պառավի մոտ քնում, նրան գգվում, համբուրում, իր սիրելու կարոտը նրանից առնում։ Երբ որդուն միտն էր բերում, ուզում էր լաց լինի, Հերիքնազը չէր թողնում, այնպես էր հույս տալիս նրան, մըխիթարում, որ խեղճը սուս էր կենում։ Խեղճ պառավը չէր իմանում ինչպես շնորհակալ լինի այս երկնային հրեշտակից։ Նա չէր իմանում, որ սրանք որևիցէ հարաբերություն են ունեցել կամ ունեն իր որդու հետ։ Որտեղ նստում էր, Մարիամի ու Հերիքնազի գովասանքն էր անում, նրանց օրհնում։

— Ախչի Հերիքնազ, հանաքը դենը կենա, ասում են դու Արզումանին սիրում ես, ըղո՞րդ է,— հարցրեց Մագթաղը պարզասրտությամբ։

— Ի՞նչ կլինի, որ ըղորդ լինի,— պատասխանեց Հերիքնազը։

— Ի՜նչ պիտի լինի. է՛ն կլինի, ինչ որ էլել է Քարամուն ու Ասլուն. նրանց պես կէրվիք, ձեր մուրազին չեք հասնիլ։

— Ես լավ կհամարեմ նրա սիրովն էրվեմ, քան թե մի ուրիշի սիրովը կանանչեմ, էդ էլ գիտե՞ս։

— Դու լավ կհամարես, բայց թե քեզ թողնեն է՜... Ես էլ ուզում եմ Գրիգորի սիրովն էրվեմ, բայց իմ հերն ու մերն ասում են. «Ուզես, չուզես, քեզ պիտի Կիրակոսին տանք»... է՜, Հերիքնազ ջան, ես էլ դարդեր ունիմ քեզ նման. շատ անգամ որ ինձ ու ինձ միտք եմ անում, ասում եմ, մենք էլ ինչացո՞ւ ենք, որ իսկի մարդու տեղ չեն դնում, հենց ում ասես՝ տալիս են, ուր ասես՝ շպրտում են. էլ ոչ հարցնել կա, ոչ դես, ոչ դեն։ Բայց էլի քո բանն իմիցը դժվար է։ Ես որ ուզենամ Գրիգորին կսովորեցնեմ, մի գիշեր կգա կփախցնի կտանի։ Մի քիչ ղալմաղալ կանեն, հետո կհաշտվեն։ Բայց քեզ որ փախցնեն, պիտի օլքա-օլքա կորցնեն, էլ ոչ դու կըտեսնես մեզ, ոչ մենք՝ քեզ։ Դու էդ կանե՞ս։

— Ինչի՞ չեմ անիլ, երբ տեսնեմ ուրիշ հնար չկա։ Ինձ համար էնտեղ է լավ, որտեղ որ ինձ սիրում են։

— Մի՞թե մենք չենք սիրում քեզ. ումնի՞ց ես մի դառը, մի

կծու խոսք լսել, ո՞վ է մեկ անգամ քեզ ասել՝ «տեղդ ծուռ է, դենը նստիր». մենք ամենքս էլ քեզ սիրում ենք։ Մեզ պիտի թողնես, ընկնես սարեսար, գնաս ղարիբ ղուրբաթ տեղ, կմեռնիս, վրադ սգող չի լինիլ... Օ՜, շատ դժվար է, ասելն է միայն հեշտ. մեր սարերի պես սարեր, մեր ջրերի պես ջրեր, մեր բաղերի պես բաղեր, մեր քոլերի ու հանդերի նմանը ոչ մի տեղ չես գտնիլ...

— Քրքրվե՛ս դու, Մագթաղ, հիմիկվանից լացս բերում ես։ Աֆչի, մեկ թող դեռ լավանամ. հետո աստված ողորմած է, նա իր ստեղծածին չի կորցնիլ։ Ինչ որ մարդիս ճակատին գրված է, է՛ն կլինի, հազար դու էլ ասա, ես էլ, մեր խելքն ի՞նչ է կտրում։ Հիմի ջանս սկսում է կոտրտվել երեկվա պես, ով գիտե էլի պիտի դողացնեմ...

— Օ՜, դրան դող կասեն, դեռ որտե՞ղ ես. ամեն օր կեսօրից հետո պիտի բռնի։

— Բա սրան մի դեղ, մի ճար չկա՞։

— Դրա ճարն էն է, որ դողդ բռնի թե չէ՝ գնաս վրադ սառը ջուր ածես. էնքան պիտի ածես, որ ջանդ սկսի զնգր զնգր դողալ։

— Ասում են՝ վախն էլ կպրծացնի, դու մեկ օր ինձ վախացրու. թաքուն սառը ջուր ածա վրաս, որ ես վեր թռչեմ...

— Էդ չէ, ասում են Նունիա մի տերտեր կա, նա աղոթում է թե չէ՝ իսկույն կտրվում է դողը։

— Դե էդ տերտերին որտե՞ղ գտնենք հիմի։ Արի մի ջրաման վերցնենք, գնանք ձորի աղբյուրը, էնտեղ դու ինձ վրա ջուր ածա՝ ինչքան որ գիտես։ Շուտ արա գնանք, քանի որ Մարիամը չի եկել, նա որ գա, էլ չի թողնիլ. միշտ ասում է՝ տաք պահիր քեզ, չմրսես։ Ղզորդ է ասում, էն օրը որ էն թաց տեղը քնած չլինեի, էս օրը չէի ընկնիլ։ Արի գնանք, հիմի ինչ կլինի կլինի, կամ դես կկտրի, կամ դեն, ես մեռնելուց չեմ վախում, երանի շուտով մեռնեմ, էս աշխարհքիցս պրծնեմ. ի՛նչ աշխարհք է, որ սրան թամահ ենք անում, ապրում. գնանք, գնանք։

Ե

Վարդավառից հետո սարեցիք լեռների գագաթներից վայր եկան և իրանց դագեքը սարքեցին մի անտառում հովտի մեջ։ Մինչև այս ուրդը փոխվելը շատերը դեռևս արտանումն էին, բայց

հիմա որ հունձն ավարտել, խուրձը կրել էին կալերի մոտ դիզել, ամենքն էլ եկել էին սար, որ մի քանի շաբաթ սառը ջրերի վրա, լեռնային զովաշունչ օդի մեջ հովանան։ Գյուղացոց այս սովորությունը ամենայն տարի կրկնվում է միակերպ։ Մայիսին ուղարկում են տավարը և ընտանիքը, իսկ տղամարդիկն սպասում են մինչև հունձի ավարտը։ Շատ անգամ ամբողջ ուրդի մեջ շաբաթներով տղամարդի երես չի տեսնվում, կնանիքը կարողանում են պաշտպանվել զանազան ավազակային և սիրային հարձակմունքներից, բայց սովորաբար միշտ ահ ու դողի մեջ են լինում։ Բայց երբ հավաքվում են տղամարդիկը, սկսվում է մի նոր կյանք։ Շատերը միայն հանգստանալու համար են գալիս, իսկ շատերն էլ մի նոր աշխատություն սկսելու մտքով։ Այստեղ են շինում սովորաբար իրանց տան գործածական փայտե գործիքները, ինչպես՝ սայլ, գութան, լուծ, կամն, հորսլի, թի, խնոցի, մրղան, խոնչա, տաշտ, տաշտակ, խփի, բոդին (հավանգ), զանազան կոթեր, գդալներ և շերեփներ։

Մի քանի հսկայական կաղնի և աճարքի ծառերի տակ իրանց համար գործատեղի էին արել մինչև երեսուն-քառասուն տղամարդ և որն ուրագով, որը կացնով տաշ էին անում, իսկ անգործներից ոմանք պառկոտել քնել էին բերանքսիվայր, ոմանք նստած թամաշա էին անում և զանազան խորհուրդներ տալիս շինողներին իբրև գյոզ-ուստասի, այսինքն՝ աչքով միայն վարպետ և ոչ գործով։ Այսպիսիները ոչ մի բան շինելու շնորհք չեն ունենում։ Այս անշնորհքներիցն էր և Շամիրը, որ միայն գդալ շինել գիտեր և ուրիշ ոչինչ։ Սա անցյալ երեկոյին էր եկել արանիցը։ Առավոտը վաղ վեր կացավ և իր փոքր ուրագն ու կեռկտուցը վեր առավ գընաց հասարակաց գործատեղին, որ գդալներ շինե։ Շամիրը դեռ նստած-չնստած, Ճաղարանց Թաթոսը ամբոխի մյուս ծայրից կանչեց.

— Հե՜ հե՜, հե՜ ա՜ Շա՜մ, Շամի՜ր, հե՜յ... — բղավեց Թաթոսը մի քանի անգամ կրկնելով Շամիրի անունը, որովհետև բաղմաթիվ կացինների և ուրագների ձայնը թույլ չէր տալիս լսելու մի խոսք, թեև առանց այս էլ՝ բղավելով խոսելու սովորությունից զուրկ չէր Թաթոսը։

— Հի՞նչ ա, ա՜խպեր, հի՞նչ ըս ասում։

— Արանիցն ի՞նչ խաբար ունես։

— Խե՛ր խաբար, լոխ էլ լավ ըն, ձեր տղեքը թխվալ ըն, սրբտնեն մածուն ա օգում։

Թաթոսը գլուխը տմբտմբացրեց, որով ուզեց ասել՝ պետք է մածուն հասցնել տղերանցը։

— Շամիր, ասում են՝ Ճաղարանց տղեքը Հանեսի գլուխը պատռել են, ըղորդ է՞,— հարցրեց մեկը։

— Ի՞նձ հարցրու էդ բանը, Շամիրն ի՞նչ գիտե։ Ճաղարանց տղեքն ինչ ասես՝ կանեն, իրանք օխթն-ուութ հոգի, Հանեսը մենմենակ։ Գցում են արխի մեջը, բահով էնքան խփում են գլխին, որ քիչ է մնում մեռնի,— ասաց տաշ անողներից մեկը Վարդան անունով, ուրագն ուսին դնելով և դառնալով դեպի Թաթոսը, գոչեց բարձրաձայն.

— Ա՛ հըլիվոր, ինչի՞ քու շների կապը չես քաշում, մարդ պետք է Արզումանի նման գլխիցը ձեռք վերցնի, որ ձեր հետ խոսի՞։ Էլ ոչ ջուրվարի եք մտիկ տալիս, ոչ քյոխվի եք ականջ դնում, էդ ի՞նչ անաստվածություն է, որ դուք անում եք։ Ասում եմ ջուրը նոբաթով է, նոբաթն իմն է, ջուրավարն ինձ է տվել ջուրը, նրանք կատաղած շների նման վրաս թափվեցին, քիչ էր մնում սպանեն։ Ասած է. «Խոփրդ սուր է, հանդը բաժանովվ է». ասենք՝ ես մի մենակ տղա եմ, քոմակ չունիմ, հենց պիտի ինձ ոտի տակ գցե՞ք։ Էնպես բան արեք, որ աստված վեր կալնի, թե չէ՝ Սուրբ Սարգսի անունը վկա, մի օր էլ ես ձեռք կվերցնեմ գլխիցս, էն ժամանակը կտեսնենք ո՞ւմ մերը տղա կբերի։

Այս խոսքերի վրա ամենքն էլ իրանց գործիքները դադարեցրին և տեղնուտեղը լսողություն դառան։

— Ա՛յ տղա, ի՞նչ ես հաչում, ի՞նչ ես գլխիցդ սարսաղ-սարսաղ դուրս տալիս,— ասաց Թաթոսը և շարունակեց ավելի բարկանալով և սպառնալով,— Արզումանի նման շանի՞ցն ես օրինակ առնում։ Մարդասպանը դու ես, որ մարդասպանին ես պաշտպանում։ Համբերիր, մեկ մողրովը գա՞, տես քու կաշին ինչպես նմ մաշկել տալիս։

— Ես ու իմ աստվածը, Արզումանն էնպես անմեղ էր, ինչպես աստծու գառը։ Քյոխվեն նրան տափ էր տվել, նա էլ գնացել էր վարելու։ Ձեր բաղի տակի հողը, ներքի հողերի քյոնդալանը, վերի հողերի դիքավարը, քոլաբերանքի սպիտակ հողը, Դամիլի շորս օրավար տեղը, որ ունիք հիմի, ո՞ւմն են էդ տափերը, Արզումանի հորը չէ՞ր, ինչի՞ գցեցիք ձեր ճանգը. բա դու չես ամանչո՞ւմ,

սաղ գեղը քանդում, տակն ու վրա ես անում, բա դու աստված չունե՞ս...

— Տեսնում ե՞ք, ա՛յ խալխ, տեսնո՞ւմ եք էս շունն ինչեր է հաչո՞ւմ...

— Վարդան, մի՛ վախիր, մեկ լավ վեր ածա դրա աբուռը՝ քանի որ մենակ է,— շշնջաց Վարդանին մի երիտասարդ, բայց Թաթոսը կարծեց թե նա ասում է՝ «սո՛ւս կաց, ամոթ է, ծեր մարդ է, էդպես բաներ մի՛ ասիր», և սկսեց ավելի կատաղել։

— Կա՛ց, ես քու բլբլան լեզուն կկտրեմ տակիցը։ Գիշերս Արզումանն ի՞նչ էր շինում քու կշտին. ասա՛ տեսնեմ, դու ի՞նչ իրավունքով ես մարդասպանին տեղ տալիս, ասա՛ տեսնեմ։

— Մոգոնիր, մոգոնիր, որքան կարաս, շառեր մոգոնիր, ես քու հնարած սուտերիցը վախող չեմ։ Արզումանին ո՞վ է տեսել ինձ մոտ, վկա ունի՞ս, դե հիմի դո՛ւ ասա տեսնեմ։

— Էս սաղ խալխը քոռ հո չե՞ն, բոլորն էլ վկա չե՞ն։

— Խալխին ո՞ւր ես վկա կանչում, Թաթոս բիձա. խալխիցը մեկն էլ ես եմ։ Արզումանի երեսը չեմ տեսել,— ասաց մեկը, գլուխը բարձրացնելով և կոշտացած ձեռքով ճակատի քրտինքը սրբելով։

— Ա՛յ խալխ, ա՛յ ջամհաթ, չեք լսե՞լ, որ Արզումանին թե օրը ցերեկով, թե կես գիշերին տեսել ե՞ն,— բղավեց Թաթոսը։

— Լա՛վ, որ տեսել են, Վարդանի մոտ հո չեն տեսել,— ասաց Մինաս անունով մեկը։— Արզումանին աղջկեքն են տեսել ծաղկաքաղին. Շամիրի կնկա հետ է խոսեցել. գիշերն էլ վերի աղբյուրի մոտ են տեսել, էլի Մարիամի հետ։

— «Կես գիշերին, Մարիամի հետ»,— շշնջաց Շամիրը, չհավատալով իր ականջներին։— Մինաս, տյու ինքդդ հրսկանում ը՞ս, էդ հինչ ըս ասո՞ւմ,— հարցրեց Շամիրը։

— Ինչպես թե «հրսկանում ըս», խուլ հո չե՛մ, Արզումանին տեսել են քու կնկա հետ խոսելիս, ուրիշ մարդի մոտ չեն տեսել։

Շամիրի ջանը դող ընկավ, ձեռքերն սկսեցին դողդողալ, էլ բան չկարաց շինել, վեր կացավ փընթփընթալով գնաց։ Շատերն այդ նկատեցին և կասկածի մեջ ընկնելով՝ գլխները քաշ գցեցին։ Նրա քամակից հեռացավ և Թաթոսը։

— Էս ճաղար քոփակիցը մարդու խեր չի հասնիլ. սիրտս ասում է՝ էլի մեկ արյուն պիտի պատահի։ Մինաս, դու էլ որ մի

քիչ լեզուդ բերանումդ պահեիր, չէր լինի՞։ Շամիրը որ կա՝ բրոի արջ է. հիմա պիտի գնա կնկանը ոտի տակը գցի, տրորի, ես գիտեմ նրա խայտին խասյաթը։

Այս խոսողը խաչատուրն էր, Արզումանի երբեմնի սրտակից բարեկամը։ Հիմա էլ Արզումանի հետ միայն սա ուներ հարաբերություն, բայց ոչ ոք չգիտեր։

— Ես Մարիամի մասին բան չեմ մտածել և վատ բան էլ չասեցի,— պատասխանեց Մինասը։— Շատ կարելի է, որ Մարիամին Արզումանի մերը լինի ուղարկած, ինքը չի կարում տեղիցը ժաժ գալ։

— Դե էդպես էլ պիտի ասեիր, բայց դու էնպես ասեցիր, որ նա ուրիշ բան հասկացավ։

— Նա որ շիտակ բանը ծուռ հասկանա, ես ի՞նչ մեղավոր եմ։ էդ քյոփագ շունը որ չլիներ, ես էն է՛լ չէի ասիլ։

Այս միջոցին Սարգիս քյոխվան եկավ, և նստածները տեղերիցը վեր կացան։

— Բարի հաջողո՛ւմ, տղե՛ք, ասաված զվաթ տա,— ասաց քյոխվան և նստեց մի գերանի վրա։

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Ով չուզենա, կարող է չկարդալ)

Սարգիս քյոխվան մոտ վաթսուն տարեկան մարդ էր։ Նրա դեմքի գծագրությունը և հայացքը ցույց էին տալիս, որ բավական շար ու բարի տեսած մարդ էր։ Ոչ ոք գեղի հավատարմությունն այնպես գրված չէր, որքան սա։ Գյուղացոց շահերը պաշտպանելու համար ամենայն ինչ զոհ բերելու պատրաստ էր։

Գյուղ ասածդ (եթե ոչ հիմա, գոնե շատ առաջ) մի չոկ աշխարհ, կղզիացած երկիր է, և ունի իր կախումն ու անկախությունը, իր մատնիշն ու պաշտպանը, իր Վասակն ու Վարդանը։ Գյուղացիք որտեղ որ բնակվում են, ինչքան տեղ որ բռնում են, ասում են՝ էս տեղերը մերն է։ Այստեղից հառաջ է գալիս սեփականության

մասին մի չոկ գաղափար, որ նման չէ այն սեփականությանը, որ տիրող օրենքն է սահմանում։ Հետևյալ խոսակցությունից կերևա, թե որպիսի գաղափար ունին գյուղացիք սեփականության մասին։

— Տղե՛ք, Թաթոսն էստեղ էր, ի՞նչ ելավ,— հարցրեց քյոխվան։

— Նա տեսավ որ դու գալիս ես, ինքն ըռագ էլավ,— պատասխանեցին մի քանիսը։

— Ա՜յ, ճաղար շուն...

— Սարգիս բիձա, էդ անիրավի ձեռին մենք մինչև ե՞րբ պիտի տանջվենք,— գանգատվեց Վարդանը։

— Մինչև լավ իմանանք, թե ի՛նչ գաղան է դա։

— Ո՞վ չի ճանաչում էդ քոփագին... մեղա քեզ ասաված, ի՞նչեր է գալիս բերանս։

— Դուք էն եք տեսնում, ինչ որ հիմի է անում, բայց էն չեք տեսել, ինչ որ մինչև հիմի արել է։ Էս տեղիցը որ հիմի մենք սաբալախի (խոտահարկ) ենք տալիս, առաջ ո՞վ էր իմացել էդպես բան. էդ-էդ-էդ գնաց մեր պապական տեղերը մի թավադի վրա ծախեց։

— Լավ, ի՞նչպես է ծախում, իրանը հո չի՞, որ ծախի։

— Էդ ես էլ չէի իմանում, թե ինչպես են ծախում, բայց հիմի քիչ ու միչ հասկանում եմ։ Գիտեք ինչ կա, գեղրցին մի տեղ թեկուզ հարյուր տարի կենա, կարող չի տանել, որ էս տեղն իրանն է, բայց եթե թավադը մի տեղ տասը տարի կենա, էն տեղը կմնա իրան։ Բայց թավադն ինչի՞ համար է կենում. նա վար չի անում, ցան չի անում, գեղրցին է վարում, ցանում, նրան բահրա տալիս։ Հիմի լավ ականջ դրեք։ Թավադը նրանով է հաստատում տեղն իրանը լինելը, երբ որ հաստատում է, որ էդ տեղիցը նա բահրա է առել կամ սաբալախի, կամ իջարա։ Էդ էլ ինչո՞վ պիտի հաստատի, երբ որ՝ ես, դու, ասա. նա ասենք՝ «ըղորդ է ասում. մենք էստեղ կացել ենք, բայց դրան միշտ բահրա ենք տվել». հասկանո՞ւմ եք, թեկուզ ոչինչ էլ տված չլինինք, միայն թե ասենք՝ «տվել ենք»։ Էդ խոսքն ասելու համար թավադը սրան նրան փող է տալիս, պատիվ է տալիս, որ քննության ժամանակը գնան ասեն, «ըղորդ է, մենք բահրա ենք տվել»։ Ա՜յ, էդ ճաղար շունը քանի՞ քանիսից է փող առել, սուտ երդում կերել, վկայություն տվել, թե՝ «մենք սաբալախի ենք տվել, բահրա ենք տվել»։ Դա՛, մեկ էլ Մաթուսն ու Մարկոսը,— ողորմի նրանց կշտի մեռելներին— մեր բոլոր հանդերը

տվին թավադներին։ Առաջ ո՞վ էր թավադի անուն իմացել, ո՞վ էր նրանց երեսը տեսել։ Մի քսան տարի չկա, ինչ որ դրանք եկան մեկմեկու հետևից. մարդ իմանա՝ մինչև էդ ժամանակը ո՞րտեղ էին. հալբաթ առաջ էդպես օրենք չկար։ Հենց որ հանդերն սկսեցին չափել, որտեղ մի քաղցած թավադ կար, ձեռքը մեկնեց, թե՝ էս իմն է. միտս է, մեկ անգամ եկողները երեսնից ավելի էին, մեջերումը սուտ թավադներ էլ շատ կային։ Շատերի անունը հիմի էլ միտս է, ա՛յ, ասեմ մի քանիսինը։

Սարգիս քյոխվան այստեղ տերողորմյան գրպանից հանեց և սկսեց թավադների անունը տալով հատիկները ձգել, որ տեսնի քանիսի անունն է միտքը։— Օրբելյա՛նով, Մուխրա՛նսկի, Ջաչի՛կով, Բարա՛թով, Թուրքեստանո՛վ, Սուլխա՛նով, Շա՛նշիով, Մելի՛քով, Փիրա՛դով, Փերշա՛նգով, Մուրթուլա՛ձե... Է՛հ էլ ո՞ւմ միտն է, քան զշուն շատ էին։ Մեկ տեղից քսան մարդ բռնում էր, ամենքն էլ ասում էին «իմն է»։ Խազնի մարդն ասում էր՝ թագավորական է, Սիոնի տերտերն էլ ասում էր՝ վանքական է։ Բայց էս երկուսը աչքերն էս ու էն թավադի վրա էին գցում, որ տեսնեն որից կարող են շատ փող առնել, որ իրանք ձեռք վերցնեն։ Ի՛րանք, թավանդներն էլ էին մեկմեկու համար վկայություն տալիս, խոսք մեկ էին անում, իրար մեջ բաժանում. չափողներն էլ ջոկ էին շահվում։ Գեղջոց վկայությունն էլ հազիր էր, որ կողմն ուզում էին, էն կողմն էին շուռ տալիս նրանց. ուղիղ խոսողներին հեռացնում էին, կամ ասածը ծուռ գրում և իրանց ձեռք քաշել տալիս։ Ահա էսպես մեր բոլոր տեղերը մնաց դրանց. մենք էլ ոչինչ չունինք, ո՛չ հող, ո՛չ ջուր, ո՛չ ծառ, ո՛չ խոտ, ամենի համար էլ փող ենք տալիս, էն էլ մեկն երկուսով, ամեն տարի թանկացնում են։

— Որ գիտեիք էդպես է, ինչի՞ չէիք արզա տալիս, ինչի՞ չէիք գանգատվում։

— Բա քիչ ենք արզա տվե՞լ, քիչ ենք գանգատ արե՞լ. էլ դիվանխանա չենք թողել, ամեն տեղ էլ արզա ենք տվել։ Ես հիմի եմ հասկանում, որ մեր բոլոր աշխատանքը զուր էր։ Մենք արզա էինք տալիս, թե՝ «էդ տեղերը մերն է». չէինք իմանում, որ թագավորական տեղը խազնինն է։ Դավին խազնեն պիտի քաշեր, նա պիտի իր ունեցածի տերը դառնար. մենք մեր փողով նրա իրավունքն էինք պաշտպանում, բայց նա մեզ չէր օգնում։ Խազնեն է՛լ էր թավադների ձեռին, դիվանխա՛նեքն էլ, մեր խոսքին ո՞վ պիտի ականջ դներ։ Շատ անգամ ծեծում է՛լ էինք թավադներին. երբ որ գալիս

էին բահրա ուզելու, չէինք տալիս։ Բայց դրա պատիժն էլ քաշում էինք։

— Թուլաձեին ի՞նչպես ծեծեցիր, Սա՛րգիս բիձա, մեկ դու է՛դ ասա։

Սարգիս քյոխվան միտը բերավ իր ջահելությունը, մի քթահազ տվավ ու սկսեց.

— Էդ Թուլաձեն մի երկու անգամ եկավ մեր բաղերի տակի հողերին դավի տվավ, թե՝ «իմն է, պիտի բահրա տաք»։ Մենք չտվինք։ Սա գնաց մողրովին գանգատ արավ, նրանից մի հրաման բերավ, օխտն-ութը մարդ էլ հետը։ Բահրա առնելը շատ էին հեշտացնում մողրովները, բայց էդ կենա դեռ։ Մեր քեթխուդեքը հավաքվեցին, խորհուրդ արին, թե ի՞նչ անենք, տա՞նք, թե չտանք։ Վճռեցին, որ չտանք. եթե տանք, էդ տեղերն իրա վրա կհաստատի, հիմի իր ուզածը մի ոչինչ բան է, բայց հետո կգա տասնից մեկը կառնի, հետո էլ չորսից ու երեքից մեկը. մի քանի վախլուկ մարդիկ էլ, սրտները դող ընկած՝ ասում էին՝ «ուզենք-չուզենք՝ պիտի տանք, մողրովիցը հրաման է բերել, նրա հրամանին ո՞վ կարա ընդդեմ կենալ»։ Քյոխվան լուսահոգի Ակոբն էր, նա ասաց. «մողրովի հրամանն ինձ վրա է, ես նրա պատասխանը կտամ. նա ի՞նչ գիտե, թե էս տեղերը սրանն է, որ հրաման է տվել։ Չպիտի տանք, թող ուր ուզում է գնա»։ Թուլաձեն Թաթոսի տանն էր վեր եկել, էլի էս անիծածն էր նրա օգնականը։ Սա սովորեցնում է, թե «առավոտը հորթերը գալու ժամանակը քու մարդկանցով գնա առաջը կտրիր, տար տուն արա մի աղալում ու դուրս չանես, մինչև բահրեդ չտան։ Նա էլ հենց էսպես էլ արավ. հորթերը հավաքեց տարավ մի աղալի մեջ արավ, թե՝ չեմ թողնիլ մինչև իմ բահրեն չտաք։

Կովերն արոտատեղից եկան։ Հորթ չկա, որ կթեն. հիմի դու տե՛ս սրանց բառանչելը, կովերը դռներին են բառանչում, հորթերն աղալումը։ Էս անիծած ճաղարը դուրս է եկել, իրանց կտրին կանգնել ու պարծենալով ասում է. «Ես որ ասում եմ՝ եկեք բահրան տանք, ինձ չեք ականջ դնում, դե հիմի գնացեք ձեր հորթերը բերեք, տեսնեմ ինչպե՛ս եք բերում»։

Լուսահոգի մերս ասաց. «Ա՛յ տղա, գնա մեր հորթերը բեր, թե չէ էլ հաց չեմ տալ, որ ուտես»։ Ես էլ հենց էդ էի ուզում։ Ջափարիցը մի բըհիր հանեցի, վազեցի, դեպի հորթերը։ Թուլաձեն ինձ որ տեսավ, թուրը հանեց. մի ափիցեր էր, ապելատներ էլ

ուներ ուսին, խաչ էլ ուներ կուրծքին։ Բհիրս վրա բերի թե չէ՝ թուրն երկու կտոր էլավ. մեկ էլ որ հասցրի, տեղն ու տեղը փռվեց, ու «վայմե՜, միշվելեթ» (ո՜հ, օգնեցեք) կանչեց։ Ո՞վ պիտի օգներ, մինչև իր մարդիկը կօգնեին, իմ օգնականներն ավելի էին շատացել։ Լուսահոգի Ղուկասը նրա բճերին աղցան էր արել։ Մեր քյոխվեն հենց տեսնում է, որ ես գնում եմ, քամակիցս մինչև քսան տղա է ուղարկում։ Էսպես մի լավ ջարդ ու բուրդ արինք, և հեշտ էլ պրծանք. էն գնալն էր, որ նրանք գնացին, էլ չիմացանք՝ կոտորվեցին, թե սաղ մնացին։

— Ա՜յ լավ դատաստան,— ասաց քյոխվին հառակակից մեկը։— Ա՜խպե՜ր, գնում ես գանգատ, տանում են բերում, բերում են տանում, մարդու հոգի է դուրս գալիս, դրանց «զավթրին» չի հատնում։ Սրան մեղրահացեր տար, նրան գառը տար, մեկէլին թաղարներով ալյուր տար, մի ուրիշին փող տուր, մեկի ոտներն ընկիր-աղաչիր... Ո՞վ է գեղրցու ռեխին մտիկ տալիս։ Տասնով-քըսանով գնում ենք դիվանխանի պատերի տակին շարվում արեգուն արած խոզերի նման, ո՞վ է մեզ մարդու տեղ դնում, գիր չենք գիտում, օրենք չենք գիտում. մի քիչ էլ որ երեսներս պնդացնում, ներս ենք մտնում, ստորոժը շլինքներիս խփելով դուրս է անում։ Էսպես քաշ արի, հետո եկ տանդ վեր ընկիր։ Գեղրցիք էլ ասում են՝ մեր փողերը տարաք կերաք, ոչինչ էլ չշինեցիք։ Տո, ձեր փողերը զահրումա՜ր ըլի ուտողի գլխին, մենք ենք ուտո՞ւմ...

— Էդ լավ դատաստան է, Պետրոս, բայց ամեն անգամ չի մարսվում։ Դրանից սիրտ առած՝ Սուլխանովին էլ ծեծեցինք, բայց քիչ մնաց Սիբիր էին ուղարկում։ Ուղարկելն էլ, ո՞վ պիտի ասեր՝ ինչի՞ եք ուղարկում։

— Էդ ի՞նչպես էլավ, Սարգիս բիձա, մեկ էդ էլ պատմիր,— խնդրեցին ջահելները, և իրանց գործը թողնելով՝ որպես թե հանգըստանալու համար, շարվեցին քյոխվի չորս կողմը։ Քյոխվան չիբուխը լցրեց և չախմախին խփելով՝ սկսեց իր պատմությունը։

— Ա՜յ ինչպես էլավ։ Լուսահոգի Ղուկասը — Այլզումանի հեռը—մի առավոտ եկավ ինձ մոտ։ Ես ու նա ընկեր էինք, ուր էլ որ գնայինք, միասին կերթայինք։ Մի աղամարդ էր, որ քսան մարդու չէր ասիլ՝ աստված է ստեղծել... «Ի՞նչ ես նստել, ասաց, արի գնանք կակալ թափ տալուս։ Ասում եմ՝ ո՞րտեղ. նա թե՝ «մեր տափի կշտի կակալնին կոտրատվում են, էնքան բունել են. ոչով չի գնում թափ տալու, Սուլխանովի՛ցը վախենում են, նա չի թողնում։

ասում է՝ «իմ բաղի կշտին են, իմն են»։ Ասում եմ՝ «էդ ի՞նչ խոսք է, հենց ինչ որ իր բաղի կշտին ըլի, իրանը կըլի՞։ Իր տեղը չափարած է, չափարից դուրս նա ոչինչ չունի»։ Նա թե՝ «ես էլ հենց էդ եմ ասում։ Արի գնանք, թող ով զոչաղ տղա է, գա մեր առաջը կտրի»։

Մեկ-մեկ էրկեն կակալթափի առանք, գնացինք։ Հենց նոր էինք ծառը բարձրացել, մեկ-մեկ ճյուղ դեռ չէինք թափ տվել, մեկ էլ տեսանք հրես օխտն-ութ հոգի ծառի տակը կտրեցին։ Սուլխանովի բճերն էին։ «Ջամոդիթ, թքվենի ոջուլի» (վայր իջեք, ձեր հավատը...) որ չասացին, մեր Ղուկասի աչքերն արնով լցվեց։ «Կացեք, ասաց, ես ոջուլի նշանց կտամ»։ Վեր եկավ երկեն ձոզին ձեռին, ղրաղ կանգնեց ու մեկ թե երկու սրանց, էլ իսկի չթողեց, որ մոտենան, մինչև ես էլ վրա հասա ու էս փորերնին ուռած բաղվանչիներին կալմեջ արինք, մինչև փախան, գլխները պրծացրին։ Ասացինք էս է, պրծանք, բայց մեկ էլ տեսանք, հրես ինքը Սուլխանովն է գալիս, մի քսան մարդ էլ հետը։ Ասացի՝ «Ղուկաս, սրանց հետ կռվիլ չի ըլիլ, կամ փախչենք, գլխներս ազատենք, կամ թե չէ ասենք՝ աղա, էս ծառերը քոնը չի, դու ինչո՞ւ համար ես արգելում»։ Եկավ թե չէ՝ փափախիս վեր կալանք, առաջին կանգնեցինք, որ տեսնենք ի՞նչ է ասում, պատասխանը տանք։ Բայց անիրավն էկավ թե չէ՝ «շահկարիթ (կապոտեցեք), ասաց, մագիթի ոջուլի» (դրանց հավատը)։ Մեր հավատին գլխան թե չէ, Ղուկասի փափախը ձեռքիցը վեր ընկավ։ Կատաղած ասլանի նման ընկավ Սուլխանովի վրա ու տեղն ու տեղը վեր կոխեց, սրտին չոքեց։ Բճերն իսկույն վրա թափվեցին, ես էլ ուզեցի օգնել, բայց գլխիս էնպես խփեցին, որ շշմած վեր ընկա։ Աչքս մեկ էնտեղ բաց արի, որ տեսա երկուսիս էլ կապոտել են։

— Էլ ինչ գլխներդ ցավացնեմ. մեզ տարան քաղաք. գցեցին Մետեխի բերդը, դուքսազի շորեր հագցրին, ամեն օր ջուր էին կըրել տալիս, ճամփեքը սրբել տալիս, սև հաց էին ուտացնում... էսպես պահեցին մինչև վեց ամիս. վեց ամսից հետո դուրս բերին, տարան մի դիվանխանա։ Էդ դիվանխանի գլխավորը ինքը Սուլխանովն էր։ Նա ինքը վեր գցել տվավ մեզ, ոռզգի խփել տվավ, քամակներիս կաշին մաշկել տվավ, հետո բաց թողեց. «Գե հիմի գնացեք, ասաց, խելոք կացեք, իմացեք ում հետ գործ ունիք»։ Մեր շորերը մեզ տվին, հագանք, եկանք մեր տները, երեք ամիս տեղումը պառկեցինք։ Գեղրցիք քանի անգամ եկել տրգա էին տվել մեզ

համար, որ մենք անմեղ ենք, բայց արդան հենց իրեն Սուլխանովի ձեռքն է ընկնում. նա պիտի լիներ գեղջոց խնդիրքի կատարողը, բայց նա այն թղթերը կամ կէրեր, կամ դեն կգցեր։ Հիմի էլ որ միտքս է գալիս, ջանքս փշաքաղվում է։ Ախբր երբ որ պատժողդ ու ազատողդ քու թշնամին է, էլ ի՞նչ կարող ես անել նրան։

— Մա՛խլասի, գեղջցու բանը մի դարդ ու բալա է,— ասաց Վարդանը։— Մենք որ կանք, էրեխի պես բան ենք։ Էրեխեն որ պահող չունենա, ջուրն էլ կընկնի, կրակն էլ, ինչ ասես կպատահի. մենք որ մեր գլուխը չպահենք, ոչով մեզ իշի տեղ էլ չի դնիլ։ Մարդ իմանա, ինչ է մեր մեղքը, որ էս օրին ենք...

— Գառների մեղքն ի՞նչ է, որ գայլերն ուտում են։ Մեր մեղքն էն է, որ մենք ոչխար ենք՝ գայլերը մի կողմից պիտի ուտեն, մարդիկը մեկէլ կողմից կթեն ու խուզեն։ Իսկի տեսած կա՞ք, որ մեկը գա մեզ համար մի բան բերի, մի բան տա. դիփ էլ տանում են ու տանում։ Էսօր գնա ճամփա շինի, էգուց գնա մորեխ կոտորի, էսօր էս տար, էգուց էն, իշի պես բանեցնում են, ոչխարի պես խուզում, ո՞վ է մեր տերն ու տիրականը։ Գող ու ավազակ մի կողմից են թալանում, մողրով ու յասաուլ մեկէլ կողմից ծեծում, ջարդում, թավադներն էլ ջոկ են մեր միսն ուտում, արյունը ծծում, որը զոռով, որն էլ խաբելով։ Ի՞նչ սատանություն ասես, որ դրանք չեն անում, ո՛չ աստծուն են հավատում, ո՛չ թագավորից վախում, ո՛չ ամոթ ունեն, ո՛չ երկյուղ։ Ա՛յ էդ Շաքարոն, որ էդքան տեղեր զավթել ուտում է, գիտե՞ք ինչպես խաբեց մեզ։ Դա մի խեղճ մարդ էր, մի խեղճ սելապան, աղքումը սելապանություն է անում, շիրաքիների համար Կախեթից գինի էր կլում. ձկնապանների համար Սալյանից՝ ձուկը։ Մի ձմեռ ալափ չուներ, որ եղինքը պահել էր, դիփ էլ կոտորվեցին, մնաց խեղճ։ Քաղքիցը չեր կացավ եկավ մեր գեղը, մի բոստանի տեղ ուզեց մեր խալխիցը, նրանք էլ տվին, թե՝ խեղճ մարդ է, թող իրա համար մի բան սերմի, սի բան աշխատի. ամեն իրա օղլուշաղը պահի։ Շաքարոն դառավ բոստանչի. ամեն տեսակ կանաչեղեն ցանեց—լոբի, սիսեռ, սոխ, սխտոր, բակլա դնում, քալամ, կարտոփիլ, թամբաքու. մի խոսքով ինչ ասես—խիար, խարբուզակ, ձմերուկ, տակ, գազար։ Կշտին էլ մի դաշտ էր շինել, էնտեղ էր կենում գիշեր-ցերեկ։ Մեկ-երկու տարի անցկացավ, մի քանի շահի աշխատեց, մեր տերտերի հետ ընկեր դառավ ու նրա հետ բոստանը չափարեց բաղ շինեց, կշտին էլ մի ջաղաց։ Մեկ-երկու տարի էլ անցկացավ, տերտերը մեռավ, բաղն էլ, ջաղացն էլ մնաց

Շաքարոյին։ Էսպես քաշ տվավ, մինչև տասը տարին լրացավ. տասը տարուց հետո գնաց մի թավադի փող տվավ, նրա ազգականը գրվեց, դառավ թավադ, հետո եկավ բաղն ու ջաղացն էլ հաստատեց վրան, մի երկու հարյուր օրավար էլ ուրիշ տեղ խլեց մեզանից, թե՝ էս էլ է իմը։ Մի սիրուն էլ հարսն ուներ, ինքը բացերես և լեզվանի, միշտ մողրովների ու նաչալնիկների հետն էր ժամանակ անցկացնում, նրանց հետ սարերումն ու ձորերումը քեփ քաշում, էլ ո՞վ կարող էր նրան մի բան ասել։ Շատ էլ գանգատ արինք, արզա տվինք, կռիվ էլ արինք, թակեցինք դուրս արինք, տունը, ջաղացը քանդեցինք. ոչինչ չկարացինք անել, մեր խոսքն անց չկացավ ոչ մի տեղ։

Փիրադովն էլ Շաքարոյի նման արավ։ Նա էլ խեղճ ճոն էր՝ փափախչի։ Էկավ մեր գեղի մոտ, ֆավանաքչի մի թուրք բեկի հետ ջաղացց ու բոստան շինեց, էդտեղ համ ճոնություն էր անում, համ ջաղացպանություն։ Լավ փող աշխատեց, մեկ տղին լավ ուսում տվավ։ Տղան էնպես մի դուլլուղի մեջ մտավ, էնպես մի նաչալնիկ ունեցավ, որ խոսքն ամեն տեղ անց էր կենում։ Սա վեճ բաց արավ գեղացոց հետ, վերջը բոլոր գեղը զավթեց, հիմի իրանն է թե՛ գեղը, թե՛ նրա երկու հազար դեսյատին ջրովի հողը։ Հիմի մեր թուրքերը կիսովի են վարում նրա համար, խոտահարկն էլ ջոկ են տալիս. տներիցն էլ ջոկ են հարկ տալիս, թագավորի խարջն էլ ջոկ են քաշում, խեղճերն աղքատությունից քաղցած կոտորվում են. գլուղությունով են ապրում, ուրիշ ապրուստ չունեն։ Ուրիշ տեղ էլ չեն ճարում, որ էդտեղից դուրս գան հեռանան։

— Սարգիս բիձա, մեկ անգամ ասա մեր աշխարհքն անտեր է ու պրծիր. էլ ի՞նչ ես գլուխդ ցավեցնում,— ասաց Պետրոս բիձան, որ քյոխվի բոլոր պատմածներին ականատես էր և մասնակից։

— Անտեր որ ըլի, էլի լավ է, շների ու գելերի ձեռքին է։

Իմ խոսքը մեր ճաղար շան մասին էր, ես հեռու գնացի։ Էլ մի թավադ չկա, որ դա նրա համար վկայություն չլինի տված. թե՛ մեր գեղի, թե՛ մեր հարևան գեղերի բոլոր թավադների համար էլ դա սուտ երդում է կերել, սուտ վկայություն տվել. մեր գեղը դա է քանդել...

— Դե ի՞նչ անենք, աստված էլ դրա տունը քանդի...

— Ամմե՛ն, ամմե՛ն,— ձայն տվին ամեն կողմից...

Աղբյուրի սառը ջուրը ոչ միայն չլավացրեց Հերիքնազին, այլև ավելի սաստկացրեց նրա տկարությունը. բոլորովին տաքության փոխելով՝ ձգեց անկողնի մեջ։

Շամիրը երբ որ քաշվեց դեպի դագեն, այդ ժամանակ Հերիքնազը սաստիկ տաքության մեջ դելն էր տալիս և վերմակը վրայից շպրտում։ Մարիամը կշտին նստել էր տխուր ու տրտում և ծածկում էր շուտ-շուտ Հերիքնազին, որ չմրսի։ Շամիրը ներս մըտավ և լուռ ու մունջ հրացանն առավ, դուրս գնաց։

Այս վերջին օրերը Մարիամը բավական փոխվել էր և սկսել էր սեր ցույց տալ մարդին. հեռը խոսում, ծիծաղում էր, հանաքներ էր անում, ոտ ու գլուխը շուտ-շուտ լվանում։ Չորս ամիս՝ էր, որ Մարիամը արդեն հղի էր, և երեխան արդեն սկսել էր փորումը պրպըտալ և ուրախացնել մորը։ Մարիամի քաղցր վարմունքն ու հարաբերությունը բավական կակղացրել էր Շամիրին, և նա սկսել էր մեղմացնել իր կասկածները, բայց այժմ, երբ լսեց նրա գիշերային հարաբերությունը Արզումանի հետ, նրա քաղցր վարմունքը բոլորովին ուրիշ կերպարանք ստացավ իր աչքում։

«Օ՜... ես հիմի ամեն բան իմացա։ Իմ կնիկը ինձ ատեց, ուրիշին ձեռք բերավ, բայց այդ բանն ինձանից ծածկելու համար, երևի սիրողի խորհրդով սկսեց սեր ցույց տալով՝ ինձ քնացնել։ Ես էլ ասում եմ, հիմա բախտավոր եմ, կնիկս ինձ շատ է սիրում, վաղը մյուս օրը զավակի տեր կդառնամ, նա ինձ «հայր» կասի, ես էլ նրան իմ որդիս կհամարեմ... Ախմա՜խ, ախմա՜խ Շամիր, մի անուն ունեիր խալխի մեջ, էլ ուրիշ ոչինչ. էլ այսուհետև ինչո՞ւ համար ես ապրում, երբ որ էդ անունը ցեխի մեջ ընկավ»։ Այսպես ինքն իրան փնթփնթալով՝ բավական հեռացավ Շամիրը և անհայտացավ անտառի խորքումը։

Ամբողջ երեք օր չերևաց Շամիրը։ Մարիամը կարծում էր, թե կամ արան ցլինի գնացած, կամ որսի, այս ոլատճառով մի առանձին կասկած և մտատանջություն չուներ այդ մասին։ Արզումանը օգուտ քաղելով անտառի խտությունից, ամեն գիշեր գալիս էր նշանակած տեղը, ուր տեսնում էր նրան Մարիամը և Հերիքնազի առողջության մասին տեղեկություն հաղորդում։

Մի ամպոտ և մութ երեկո էր։ Մարիամը կովերը կթելուց հետո երկու փափուկ հաց, մի քանի կտոր պանիր մի աղլուխի մեջ կապեց ու ճանապարհ ընկավ դեպի Ջուխտակ անտառը։ Ճանապարհին նրա դեմը ելավ Շամիրը։ Մարիամը մարդուն տեսավ թե չէ՝ տեղն ու տեղը մեխվեց։

— Ո՞ւր, առաջ բարի,— հարցրեց Շամիրը հեգնելով։

Մարիամն այնպես շփոթվեց, որ ոչ մի պատճառ չկարաց հնարել, իսկ ճշմարիտն էլ վախեցավ խոստովանել։

— Քեզ եմ հարցնում, ա՛յ կնիկ, ո՞ւր ես գնում էս կես գիշերին քոլեքոլ ընկած,— պնդեց Շամիրը սպառնողական ձայնով։

Պատասխան չկա։

— Սիրողիդ մոտ ես գնում, էնպես չի՞, արի՛, ես քեզ կտանեմ նրա մոտ։— Այս ասելով՝ Մարիամի ձեռքից բռնեց և քաշ տալով՝ տարավ անտառի խորքը։ Մարիամն ամոթից աղաղակ չբարձրացրեց, որ մարդ չիմանա, բայց ընկավ Շամիրի ոտները և սկսեց աղի արտասուքով թաց անել։

— Դու ուրիշ բան մի՛ մտածիր, Շամիր ջան, ա՛ստված, երկինք, ծով, ցամաք, ես անմեղ եմ։

— Տեսնում եմ, տեսնում, ա՛յ լիրբ, աներես, ես քոռ չեմ, դու որ անմեղ ես, էլ ո՞վ է մեղավորը։ Կես գիշերին Արզումանի հետ ի՞նչ գործ ունեիր դու, ո՛ւր ես գնում հիմի, ո՞ւմ համար ես տանում էդ աղլուխը, ա՛սա։

— Աստված, երկինք, Շամիր ջան, ես անմեղ եմ, ի՛նչ որ լսել ես, հետո կիմանաս դրա պատճառը. հիմի ինձ հավատա, աստծուն հավատա, ես անմեղ եմ։

Մարիամը կարծում էր, թե իր երդումով մարդու մտքի մեջ մի երկմտություն կձգի, ժամանակ կվաստակի արդարանալու համար և մահից կազատվի. բայց անգութ Շամիրի հոգին սևացել էր, խիղճը քարացել, աչքերն արնով լցվել, ջանը դող ընկել, ականջները խլացել. նա Մարիամին այս րոպեիս համարում էր իր որսերից մինը, որի քամակին օրերով ման է գալիս և տեսնելուն պես՝ գետին տապալում հրացանի գնդակով։ Մարիամը, որ նրա ստներն ընկած տղիտորում արտասուք էր թափում, և ամեն ուրքի, ամեն խաչի և Ավետարանի անունով երդվում, մեկ էլ լսեց Հան-

կարծ. «հոգիդ տո՛ւր, դանջվող...»։ Մարիամն սկսեց երեսը խաչակնքել ինչպես անմեղ նահատակ և աչքերը դեպի երկինք ձգել, բայց դեռ խաչի նշանը ամբողջությամբ չէր դրոշմել կրծքին, հանկարծ կծկվեց Շամիրի ոտքի տակին։ Եղեռնագործը մի աքացիով անշնչացրեց այն անմեղ, այն միամիտ, այն սուրբ Մարիամին, որ իր կյանքի մեջ ամուսնական ուխտի դեմ մի ցնորք անգամ իր մտքից չէր անցկացրել։

Խե՜ղջ կանայք, արդյոք զգում ե՞ք դուք ձեր գերությունը, ձեր ստրկությունը։ Իհարկե, ո՛չ։ Կարծում եք, թե այդ է ձեր վիճակն ու ճակատագիրը, որ դուք պիտի գառը լինիք, իսկ ձեր մարդիկը՝ գայլ։ Մարդիկն էլ կարծում են, որ իրավունք ունեն ձեր կյանքի վրա, մոռանալով՝ որ ինչպես կյանք տալ կարելի չէ, և ոչ առնել կարելի է։

Եղեռնագործը տեսավ, որ իր զոհի շնչառությունը այլևս չի լսվում, մի ժամի չափ մնաց քարացած։ Հետո չարագործությունը ծածկելու համար իր հայրենավանդ բարբարոսական հնարքը գործ դրավ։ Արձակեց անմեղ նահատակի գոտին և սնուր շինելով գցեց շլինքը և կախեց մի ծառի ճղնից, որ այնպես կարծվի, թե ինքն իրան է կախել...

Ը

Շամիրն իր չարագործությունից հետո վերադարձավ դագեքը։ Հարբած մարդու պես այս և այն կողմն էր ընկնում, ճանապարհը կորցնում. կես գիշերին հազիվ կարողացավ տեղ հասնել։

Հերիքնազը թեև պառկած էր, բայց անհամբեր սպասում էր Մարիամի վերադարձին և սաստիկ վարանման մեջ էր նրա ուշանալու համար։

— Ախչի՛, ո՞ւր է քույրդ,— հարցրեց Շամիրը Հերիքնազին։

— Չգիտեմ, դուրսը կլինի, հիմի կգա։

Մի ժամի չափ անցավ սրա վրա, Մարիամը չերևաց։

— Ախչի՛, ո՞ւր է քույրդ,— կրկնեց Շամիրը զարկությամբ։

— Ես ի՞նչ գիտեմ ո՞ւր է,— ասաց Հերիքնազը նույնպես բարկանալով, և իսկույն վեր կացավ տեղից՝ կարծես մի չարագուշակ ազդմունքից դրդվելով։

Շամիրն սկսեց հարևաններին զարթեցնել, իմաց տալով՝ որ Մարիամը կորել է, ման են գալիս, չեն գտնում։

Հարևանները զարթնեցին և ամենքն էլ սկսեցին այս ու այն կողմն ընկնել, կանչել, բղավել անունը տալով՝ բայց ոչ մի տեղից ձայն չլսվեց։ Հերիքնազն այնքան ուժ չուներ, որ կանչեր, բայց ամենից լավ նա էր իմանում, թե ո՞ր կողմը կլինի գնացած, և այնպես էլ գնաց, բայց սաստիկ մութը լինելով՝ ոչինչ չէր տեսնում։

Շատ փնտրեց, ոչինչ չգտավ և սաստիկ հոգնելով, մեկ տեղ վայր ընկավ թուլացած, տխուր և տրտում։ Չէր իմանում, թե ինչպես մեկնե Մարիամի այս անակնկալ անհայտանալը։ Այսպես հուսահատ դրության մեջ, հանկարծ մի ոտքի ձայն լսեց։

— Էդ ո՞վ ես, Մարիամ, դու ե՞ս,— լալով կանչեց Հերիքնազը։

Արզումանն էր նույն տեղը պտտվողը։ Սա լսելով Հերիքնազի ձայնը, իսկույն մոտեցավ և հարցրեց.

— Ախչի՛, ի՞նչ ես շինում էստեղ։

— Ա՜խ, Արզուման, դու ե՞ս։ Մեր Մարիամը կորել է, ման ենք գալիս, չենք գտնում, դու չե՞ս տեսել. նա կարծեմ քեզ մոտ պիտի գար, թեպետ ինձ ոչինչ չասաց։

— Ի՞նչ ես ասում, ո՞ւր է կորել. նա երեխա հո չի՞։ Ես նորան էի մնում էստեղ, շատ սպասեցի, չերևաց. իմ քունս էլ տարավ, նոր զարթեցի, ուզում էի գալ ձեզ մոտ։ Չի կորչիլ, մի՛ վախիր։ Դու ի՞նչպես ես, դո՛ւ, լավացել ե՞ս, թե չէ։

— Ե՞ս, ես լավ եմ... ա՜խ, կռնիցս բռնիր վեր կենամ, շատ եմ բեզարել։ Ով գիտե՝ քեզ նման նրա քունն էլ է տարել, հիմի լուսը կբացվի, կերևա, չեմ կարում ձեն տամ, ջան չկա։

— Հերիքնազ ջան, դու հիվանդ ես, ինձ խաբում ես, թե՝ լավ եմ։

— Ա՜խ չէ՛, չէ՛, ես լավ եմ, կլավանամ, հավատա՛... Նստենք էստեղ։ Ես չեմ կարում ման գալ։ Իմանում ե՞ս, խոսելու ձեն է գալիս. դիփ էլ Մարիամին են ման գալիս։ Գնա՛, գնա՛, քեզ չտեսնեն։ Տուր ձեռքդ. ինձ համար դարդ չանես, Արզուման ջան։— Այս ասելով Հերիքնազը համբուրեց Արզումանի ձեռքը։

Արզումանն այնպես շփոթվեց, որ չիմացավ ի՞նչ խոսի։ Մնաց ապուշ կանգնած ինչպես փետացած, մինչև բավական մոտեցան խոսողները, երբ Հերիքնազի ստիպելովը հազիվ կարողացավ անջատվել նրանից և հեռանալ։

Երբ որ հարևաններն այս ու այն կողմ տարածվեցին, Շամիրն էլ գնաց իբր թե նույնպես փնտրելու։ Սրա հետ գնաց և մեզ ծանոթ խաչատուրը։

— Ախպեր. շատ բան էինք լսել, բայց կնկա կորչիլ չէինք լսել, յարաբ ո՞ւր պիտի լինի գնացած,— ասաց խաչատուրը։

— Խաչատուր, մի կնիկ, որ մտքումը ծուռ բան գնի, ոտքը թեթևացնի, ուր ասես՝ կկորչի։

— Ինչի՞ ես էգպես ասում, Շամի՛ր. դու քու կնկանը չե՞ս հավատում։ Նա որ ծուռ մտքանի կնիկ լիներ, քեզանից առաջ մե՞ք կիմանայինք, ինչպես ուրիշները կիմանան։

— Ուրիշները մի՞թե չեն խոսում իմ կնկա վրա։ էն օրը դու չլսեցի՞ր, որ ասում էին՝ կես գիշերին տեսել են Արզումանի կըշտին... ես էլի շատ բան եմ ինքս իմ աչքովս տեսել. ես հաստատ գիտեմ, որ նա վատ բանի է։

— Շամիր, էն օր ես էլ լսեցի, ինչ որ ասացին. ես էլի շատ բան լսեցի, բայց դու չմնացիր, որ ինքդ էլ լսես. սատանեն սիրտդ կրակ գցեց, վեր կացար, որ գնաս հանգցնես։ Դե հիմի ինձ լսիր, տես քեզ ի՛նչ եմ ասում։ Ես վաղուց մտքումս դրել էի, որ քեզ հետ խոսեմ բայց ոչ մի անգամ հանգումը չեկավ։ Հիմի լավ պատահեցանք, պետք է իմաց տամ քեզ ամեն բան։ Խային մարդու աչքը քոռ կլինի, Շամիր, դու շատ բան ես վայելվուրդ արել, բայց գիտի էլ ծուռ ես հասկացել։ Հիմի ինձ ականջ դիր, տես ուստա եմ ասում թե ըղորդ։ Արզումանը քանի որ էդ փորձանքին չէր հանդիպել, մտքումը դրել էր, որ գա քեզ խնդրի, որ Հերիքնազին իրան տաս։ Հերիքնազն ու Արզումանը սիրում են մեկ մեկու, էդ սաղ աշխարհքին հայտնի է։ Մի գիշեր, քու քունը գնացած ժամանակդ՝ նա իմ կշտիցս գնաց ձեր տուն։ Գնացել էր Մարիամից ու Հերիքնազից խոսք առել, էքսի օրը պիտի օրինավոր նշան ուղարկեր քեզ մոտ, նշանն էլ հագրել էր. էդ փոձանքը որ պատահեց, ամեն բան խափանվեց։ Հիմի Մարիամն, ինչպես ասի քեզ, խոսք է տվել, առանց քեզ տուն է թողել։ Նա ի՞նչ գիտեր, թե բանն էսպես կգա։ Գու քոռ հո չե՞ս, չե՞ս տեսնում, որ Հերիքնազը մարդի չի գնում։ Ինչի՞ չի գնում, կարո՞ղ ես ասել։ Նրա համար չի գնում, որ Արզումանից ձեռք չի ուզում վերցնել. ասում է՝ «ուր որ նա կլինի, ես էլ

էնտեղ կլինիմ»։ Հենց լավն էլ էն է, որ դու զուր տեղը վատամարդի չդառնաս, հենց քու ձեռքովը վերցնես տաս իրան, թող ուր ուզում է տանի, քան թե պիտի քեզանից թաքուն փախցնի։ Արզումանը հիմի էստեղերանք որ պատվում է, Հերիքնազի համար է պատվում, բայց դու էնպես ես կարծում, թե քու կնկա համար է։ Դու քու կնկանը լավ չես ճանաչում, Շամիր, նրա պատիվը չես իմանում, նրա լավությունը չես տեսնում։ Ո՞վ կա մեր գեղումը դրա պես հալալ ծծկեր, դրա պես ամոթով, աբուռով, դրա պես սուրբ սրտի տեր, դրա պես անմեղ, անարատ։

Խաչատուրը չէր նկատում, որ իր խոսքերը մի-մի նետի պես ցցվում էին Շամիրի սրտումը, որովհետև չգիտեր, որ բանը բանից անց է կացել։ Շամիրի լեզուն կապվել էր՝ չէր կարողանում խոսել. մտքումն էր ասում միայն, թե՝ անիրա՛վ, էդ որ գիտեիր, ինչի՞ վաղ չէիր ասում ինձ։ Նրա ոտները թուլացել էին, քիչ էր մնում վայր ընկնի։ Մի կերպ Խաչատուրի հետևից քաշ գալով՝ առաջ գնացին և ի՞նչ տեսնեն հանկարծ... Երկու քույր, մինը կախված, մյուսը նրա ոտների տակ անշնչացած...

Երբ որ Արզումանը հեռացավ, Հերիքնազը զոռով վեր կացավ տեղիցը և սկսեց այս ու այն կողմ թափառել։ Լուսն ու մութը սկսեցին իրարից բաժանվիլ թե չէ՝ Հերիքնազի աչքումը մի բան երևաց. մինչև նրա խելքն այս մասին մի հաշիվ կտար, ահն ու կսկիծը իրար խառնվելով՝ կայծակնահար արին նրան։ Հերիքնազը տեղն ու տեղը վայր ընկավ. այլևս չկարողացավ գգվել իր միակ սիրելի քրոջ սուրբ մարմինը։

Ժ

Շամիրը, անխելք ու անտաշ Շամիրը, երբ որ լուսով տեսավ իր գիշերային եղեռնագործության պատկերը, երբ որ բացվեց նրա մտքի ու խղճի աչքը, երբ տեսավ, որ կրկնապատկել է իր չարագործությունը— ինքը մեկին սպանել, բայց այստեղ երկուսն են ընկած,— մի սարսափելի, մի կատաղի գոռում-գոչում բարձրացրեց, գլուխը ծառերին զարկեց, ամբողջ մարմնով գետնե-գետին զարկվեց այսահարվածի նման։ Նրա աչքերումն արտասուք չկար, գլխի մազերը գզլտում էր և կարծես ցավի զգացումը կորցրել էր։ Մարդիկ ժողովվեցին շուտով և ուզեցին նրան կապոտել, որ ինք-

նասպանություն չգործե, բայց նա իրան բռնել ուզողների ձեռքերը կծոտեց, դուրս փախավ ինչպես մի վայրենի գազան և ընկավ ձորերը։ Մարդիկ վազեցին հետևից, բայց հասնել չկարողացան։ Նա մի ահագին քարաժայռից անդունդ գլորվեց, ուր և գտավ իր դըժոխքը։ Նրան հենց այդտեղ էլ թաղեցին։

Հերիքնազի և Մարիամի համար «Երկու հոգիս» անվանված կաղնի ծառի տակը փորեցին և երկոքին քույրերին մի գերեզմանում դրին իրանց շորերովը։ Ասողներ եղան, թե հարկավոր է գյուղից քահանա կանչել, բայց ծերերը թույլ չտվին, ասելով— անհաղորդ էլածներին, խեղդվածներին, իրանք իրանց սպանածներին տերտերով չեն թաղիլ։ Սրա համար ոչ մի աղոթք չասվեց նրանց վրա, ոչ մի հոգեհանգիստ չկատարվեց նրանց համար։

Այս անսովոր և սարսափելի դեպքի լուրը շուտով տարածվեց ամենայն տեղ, բայց ո՞ւմ սիրտն այնքան կկսկծար, որքան Արզումանինը։ Արզումանը եկավ աշկարա, օրը ցերեկով, չոքեց նորաթաղ գերեզմանի վրա և իր ուզածի չափ արտասվեց։ Բայց այդ արտասուքը չթեթևացրեց նրա սրտի կսկիծը։ Նա զգում էր, որ իր պատճառով են զոհվել այս անմեղ գառնուկները. և այդ զգացումը նըրան մղում էր, որ ետ չմնա իր սիրելիներից, շուտով հասնի Հերիքնազի հետևից և հոգով միանա նրա հետ։ Եվ այդպես էլ արավ։ Ինքն իրեն սպանող երիտասարդը, որի մասին պատմեցինք առաջին գլխումը, այս Արզումանն էր։ Նա եկավ Շամշուլդա գյուղի քահանային խնդրեց, որ երթա այն անմեղ զոհերի գերեզմանի վրա թաղման կարգ կատարե և իրեն էլ հաղորդե։ Քահանան հանձնառու չեղավ, ասելով, որ նրանք իր ժողովուրդը չեն. իրեն էլ չհաղորդեց, պատվիրելով, որ գնա իր քահանայիցը հաղորդվի, բայց երբ հրացանի ձայնի վրա գյուղացիք հավաքվեցին և Արզումանին մերձիմահ գտան, քահանան էլ իսկույն եկավ և հաղորդեց։ Գյուղացիք լավ էին ճանաչում Արզումանին, ամենքն էլ ցավելով հարցնում էին, թե ի՞նչն ստիպեց քեզ այդպես հուսահատվել։

— Ո՜հ, թողեք ինձ հանգիստ, աստված սիրեք, իմ ցավն ինձ բավական է։ Աշխարհս մարդիկը շատ անգութ են. միայն մեռնելուց հետո են ափսոսում մարդու։— Ասաց Արզումանը և անմահ հոգին ուղարկեց անմահին։

Շամշուլդեցիք մի սայլի մեջ դրին Արզումանի մարմինը և տարան իր պապական գերեզմանատունը։

1872

ԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ

1

— Համբո՜, լսե՞լ ես, մեր աղեքը բաժանվում են,— ասում է ծառաներից մեկը մյուսին, սրահը ցախավլով ավլելիս, և միևնույն ժամանակ ավելի կոթը դիմհար է տալիս ծնոտի տակ։ Իսկ մյուս ծառան, որ թիով էր քերում, թիակի կոթի վրա է կռթնում և զարմացած ասում է.

— Բաժանվում ե՞ն... ասում ես՝ բաժանվում ե՞ն... հետո՞։

— Էլ ի՞նչ հետո, բաժանվում են էլի՜։

— Բաժանվում ե՞ն... հը՞մ...

— Դու ո՞ւմ մոտ կմնաս, որ բաժանվին, Համբո՜։

— Ե-ե՞ս, Աղթին։

— Հա՜, դո՜ւ, Համբո՜։

— Ես ո՞ւմ մոտ կմնամ, ասում ե՞ս։

— Հա՜, դու ո՞րի մոտ կմնաս. էլ քա՞նի հարցնես, խուլ խոմ չե՞ս...

— Ախր մի կա՜ց միտք անեմ է՜, օ՜րհնած, ի՞նչ ես շտապում։ Որի մոտ կմնա՜մ... դու ի՞նչ կասես. ո՞րի մոտ մնամ, որ լավ լինի։ Բայց սպասի՜ր, դու ինքդ ո՞րի մոտ կմնաս։

— Ե-ե՞ս...

— Հրամել ես, դու ինքդ։

— Առաջ դո՜ւ ասա, ես եմ հարցրել առաջ։

— Չէ, դո՜ւ ասա։

— Չէ, ես ոչինչ չեմ ասիլ։

— Ինչո՞ւ չես ասիլ։

— Էնդուր չեմ ասիլ, որ եթե նրանցից մեկն իմանա, որ ես իրան չեմ ուզում, կաշիս կմաշկե։ Ինչի՞ս է պետք։ Բայց գիտե՞ս, մեր բանը շատ վատ կլինի, եթե բաժանվին։

— Ինչո՞ւ։

— Նրա համար, որ հիմա ոչ մեկի սիրտը չի ցավում, հորական աշխատանքի վրա են նստած. ուտող ուտողի է, թափող թափողի։ Բայց երբ որ բաժանվին, ամեն մեկն իր ունեցածի վրա կդողդողա, մեր բերաններն էլ ավելի պատառ չի ընկնիլ։

— Քո խելքն այդպես է կտրում։ Ինձ որ հարցնես, որ բաժանվին, մեզ համար լավ կլինի։

— Ի՞նչպես։

— Այնպես որ, հիմա չորս եղբայր են, չորսն էլ կնիկ ունին, մի քանի չորս տղա կա, մի քանի չորս էլ աղջիկ. իսկ համբրե՞լ ես, գիտե՞ս քանի հոգի են։ Հիմա դրանց եկող-գնացողը հաշվի՛ր։ Ի՞նչ տուն, քարվանսարա է. մարդ ո՞ր մեկին ծառայե. ամենքն էլ հրամայող են՝ մեծից սկսած մինչև փոքրը։ Բայց երբ որ մեկը կլինի, մեր ծառայությունը կթեթևանա։

— Չէ՛, այդքան տղերքը, այդքան աղջկերքն ու հարսները, չորս տղամարդ էլ հետները, ամենքն էլ բան շինող են։ Այնքան բան չկա, ինչքան բան շինող։ Բայց երբ որ բաժանվին, բան շինողները կքչանան, այն ժամանակ մեր բանն էլ կծանրանա։

— Ղորդ է, բան շինողները կքչանան, բայց չէ՞ որ շինելու բանն էլ կքչանա։ Հիմա ինչքան որ այգի ունին, ամեն մեկին նրա քառորդը կընկնի։ Հողերի՝ նույնպես քառորդը։ Մի՞թե միևնույն է այժմյան ահագին այգին մշակել, թե նրա չորս բաժնից մեկը. քսան օրավար վարել, ցանե՞լ, թե՞ հինգ։

— Համբո, դու շատ հիմար ես. քո խելքը ոչինչ չի կտրում։ Այդ մարդկանցից ամեն մեկը մի աժդահա է. բայց միասին լինելով ծուլություն են անում։ Երբ որ բաժնվին, ամեն մեկն աշխատելու է ավելի ունենալ, քան թե միասին եղած ժամանակ։ Շատի սովոր մարդը, երբ որ գլխումն էլ խելք կա, ձեռքումն ուժ, քչով ինչի՞ կբավականանա։ Ամեն մեկն իր համար մի առանձին սարայի պիտի շինի, մի ջոկ ամարաթ. հիմա գոմ ասա, կալ ասա, մարագ ասա. նոր այգի պիտի գցի, նոր խամհատ պիտի բաց անի, ո՞վ գիտե էլի ինչե՞ր պետք է շինի, ինչ որ հիմա չի կարող, որովհետև

հիմա խոսքները մեկ չի գալիս. մեկը դեսն է քաշում, մյուսը դեն. սեր, միաբանություն չկա։ Ամեն մեկն ուզում է հանգիստ ապրել, ջանին ոտքա չի տալիս. շինելու բանն իրար վրա են գցում, քեզ նման բանից փախչում։ Ես որ նրանց տեղը լինիմ, քեզ հացափոր էլ չեմ պահիլ։ Գնա՛, ձին տար ջուրը, գնա՛, ի՞նչ քո խելքի բանն է։

— Ինչո՞ւ դու չես ձին տանում ջուրը. առավոտը ես եմ տարել, հիմա է՛լ դու տար. բանը նոբաթով կանեն. դու էլ խում իմ աղան չե՞ս, որ հրամայում ես։

— Գնա՛, ասում եմ, թե չէ՝ տեսնո՞ւմ ես այս ցախավելը. այնպես կհասցնեմ գլխիդ, որ...

— Ապա խփի՛ր, խփի՛ր էլի՛, խփի՛ր։

— Ա՜յ թե չեմ խփիլ...

— Ա՜յ թե կխփես...

— Ա՜յ թե չեմ խփիլ...

— Ա՜յ թե կխփես...

Այսպես՝ ծառաները քաղցր զրույցից հետո, երբ բանը հասավ գործ կատարելուն, հանկարծ սկսեցին իրար բերան կրծել և իրար հարվածել։ Այս տուրուդմբոցի ժամանակ վրա հասավ աղաներից մեկը մի հյուրի հետ և ասաց բարկանալով.

— Ի՞նչ եք անում, այ տղեք. այս ի՞նչ բան է։

Ծառաները հեռացան, օձիքները գչլտած։

— Ահա մեր տան, մեր կեցության պատկերը,— ասաց աղան իր հյուրին։— Ինչ որ բաժանության խոսք ու զրույց է եղել մեր տան մեջ, էլ ոչ մի օր հանգիստ չունինք։ Ղեբայրքս իրար հետ են կռվում, մեր կնանիքն իրար հետ, երեխեքն ու ծառաներն իրար հետ։ Կհավատա՞ս, որ ասեմ, մեր շներն ու տավարներն էլ են սկսում կռռվել իրար հետ, կարծես բաժանության հոտն առած լինին։ Մեկ խոսքով՝ կռիվը, ծեծը, խռովությունը մեր տան մեջ դառել է մի վարակիչ հիվանդություն։ Մեծ երկյուղ ունիմ, որ արյունով վերջանա այս ամենը, որովհետև շատ խռոված և անհանդիստ է հոգիս, սրտի թրթռոց և քնահատություն է եկել վրաս, ոչ մեկին բան հասկացնել չի լինում, կարծես կախարդված լինին, կարծես մի նզովք, մի անեծք կա մեզ վրա և պիտի կատարվի...

— Ես զարմանում եմ,— ասաց հյուրը։ Ձեր տունը միշտ եղել է մի օրինակելի գերդաստան։ Չորս եղբայր եք, չորսդ էլ ուսում առած, կրթված, պատվավոր ծնողաց որդիք, անվան և համբավի տեր։ Դմ հավատալս չի գալիս քո ասածը։ Ուրիշներին էլ դուք եք

խրատում, այդ ի՞նչպես է, որ ինքներդ իրար խոսք չեք հասկանում։

— Եղբայր, գիտե՞ս ինչ է։ Ամեն մի ման այնքան կտանի, ինչքան որ իր ծավալն է. եթե մի փոքր ավելի ածես, կթափվի անշուշտ։ Դու հիմա ասա՝ թե ամանը որ արծաթ լինի, շատ կտանի. այդ ի՞նչպես կարելի է։ Մենք հիմա այնքան շատացել ենք, որ մի տան, մի սուփրի վրա չենք տեղավորվում, մեկն ուտում է, մյուսը քաղցած մնում, ինչպես կասեն՝ ով չուստ, նա կուշտ։ Մեկն ասում է՝ քո երեխի բաժինը շատ է, իմինը քիչ, լավ պատառները քո՛ մարդին ես ուտեցնում։ Մեկը բեզրել է շատ հաց թխելուց, մեկէլի կռների ցավը բռնում է, երբ խմոր հունցելու նոբաթն իրան է հասնում։ Երբ որ տան մեջ ես ու դու էլավ, իմ ու քու էլավ, էլ այն տանն ի՞նչ համ պիտի լինի։ Շարունակ քրթմնջյուն, շարունակ գանգատ։ Գլխներով շաքար ենք առնում, մի շաբաթ չանցած հալվոմ է, էլ մի դեղապետ պահել չի լինում, մարդ հյուրերի մոտ էլ է մնում սևերես։ Ի՞նչ հասկացնես անկիրթ ու տգետ կանանց, երես առած գռեհիկ երեխանց, որոնցից ամեն մեկը իր մոր անկրթության պատկերն է կրում։

Այս միջոցին տան վերի հարկում սարսափելի աղաղակներ լսվեցին։ Վեր բարձրացան տեսան, որ մեծ ու փոքր տեղրակնանիքը իրար մազերից են բռնել քաշքշում, նրանց մարդիկն էլ իրար օձիքից։ Պատճառը եղել էր այն, որ մեծի երեխան ծեծել էր փոքրի երեխային, սրա մայրն էլ ծեծող երեխային, ծեծողի մայրն էլ նրա մազերիցն էր բռնել, նա էլ նրա, և այսպես բարձրացել էր մի ահագին աղմուկ։ Մյուս սենյակից դուրս էին եկել նրանց մարդիկը և կռվին միջամտելով՝ իրար օձիքից բռնել. տան բոլոր երեխայքը վայնասուն էին բարձրացրել։ Մյուս երկու եղբայրները հազիվ կարողացան անջատել նրանց միմյանցից։ Սրա վրա բոլոր դրացիները հավաքվեցան հանդիսատես լինելու և ամենքն էլ շատ ուրախացան և մեծ հաճույք զգացին այս տեսարանից։

2

Նախընթաց գլխի գործողությունը կատարվում էր մի մեծ ավանում, որ իսկապես ոչ գյուղ էր, ոչ քաղաք, այլ երկուսից մի խառնուրդ, մի գյուղաքաղաք։ Այդտեղ միևնույն գերդաստանի անդամները և՛ երկրագործ էին և՛ այգեգործ, և՛ արհեստավոր էին, և՛ վաճառական, և՛ ուսում առած կրթված էին, և՛ անուս գռեհիկ։ Այսպիսի մի գյուղաքաղաք է Թիֆլիսից մոտիկ Շուլավերը, ուր կա գավառապետ և հաշտարար դատավոր, հեռագրատուն և փոստատուն, ուր ինչպես հոյակապ տներն ու նահապետական խրճիթներն են միախառնված, այնպես էլ մոթալ փափախն ու մոդնի շլապեքը, և այս՝ միևնույն տան մեջ։ Այո, միևնույն տան մեջ դուք կտեսնեք աղա Մամադ խանի, Վարանցովի և իշխան Դոնդուկովի ժամանակի տարազով հագուստներ։ Ես օրինակ բերի Շուլավերը, բայց մեր վիպագրման կատարվում է Քաջենք ավանում։

Բաժանվողները չորս եղբայր էին։ Նրանք ֆիզիկական զարգացումով, դեմքով և հասակով իրար նման էին. քիչ թե շատ նման էին և բնավորությամբ. առհասարակ նման էին այն բաներով, որոնք ժառանգաբար ծնողներից որդուն են անցնում, թեև մեկի մեջ նվազ և մյուսի մեջ ավելի, մեկի մեջ՝ կրթության ազդեցությամբ՝ փոփոխված, մյուսի մեջ՝ անկրթության շնորհիվ՝ պարզ ու անարատ մնացած։ Բայց նման չէին մտավոր զարգացմամբ։ Ամենքից փոքրը՝ Տիգրանը, սանձարձակ արմատական էր. նրանից մեծը՝ Արշակը, ավելի փորձառու էր և ճանաչում էր իր չափը. սրանից մեծը՝ Սմբատը, ամենից զարգացածն էր և իր հեղինակությամբ ազդեցություն ուներ առաջին երկուսի վրա. սրանից և ամենից էլ մեծը՝ Ավագը, հին գաղափարի մարդ էր։

Ավագն ու Սմբատը արդեն տարիքով մարդիկ էին, մեկը հիսունհինգ և մյուսը հիսուն տարեկան։ Դեռ մյուս երկուսը չեղած, սրանք մեծացել էին միասին, բայց այնպես, ինչպես Հակոբն ու Եսավը. մեկին հայրն է եղել սիրում և մյուսին՝ մայրը. մոր սիրածը հառաջ է գնացել, հոր սիրածը ետ մնացել, և այս պատճառով ինչքան Սմբատը սիրում էր Ավագին, Ավագը երբեք սիրո նշան չէր ցույց տալիս։ Նա մանկության նախանձը շարունակում էր և հասակն առած ժամանակ։ Եղբոր հառաջադիմությունը նրան չէր ուրախացնում, այլ տխրեցնում էր, մանավանդ որ վերջի ի վերջո հայրն էլ Սմբատին էր սիրել և օրհնությունը նրան էր տվել։ Եթե ավելացնենք սրա վրա, որ գրբացն էլ ասել էր Ավագին, թե քո եղբորից քեզ օգուտ չկա, բացի վնասից, կարող ենք արդեն երևակայել, թե այս բոլորը նախապաշարված մարդու վրա ի՞նչ ազդեցություն կանե։

Ավագը պարապմունքով երկրագործ էր, իսկ գութանի մաճը չէր բաց թողնում և միշտ ասում էր՝ ես որ չլինիմ, դուք բոլորդ

քաղցած կկոտորվիք։ Արշակը այդին էր մշակում և արաղ ու գինի պատրաստում։ Սրա պարապմունքն ավելի արդյունավետ էր, տարեկան երկու հազար մանեթի արաղ ու գինի էր ծախում, բայց սա չէր ասում, որ այդ իր աշխատանքն է։ Տիգրանը, ամենքից փոքր լինելով՝ մանկությունից երես տված էր. սիրում էր ավելի ազատ կյանք վարել, «մեջ ուտում էր, ղրաղ ման գալիս»։ Սրա սիրած զբաղմունքը որսորդությունն էր։ Շատ շնորհալի տակառագործ էր, սիրում էր և մեղվաբուծություն նորագույն ձևով. փեթակներն էլ ինքն էր շինում շրջանակներով։ Բայց շատ չէր աշխատում, այլ գործ էր դնում այդ արհեստը իր զվարճության համար միայն։ Այսուամենայնիվ տան համար պետք եղած բոլոր տակառներն ու չանները ինքն էր շինում։ Սմբատը մեր թափառական, բայց ընդունակ և արդեն հեղինակություն ձեռք բերած վարժապետներից մեկն էր։ Սա ինքն էր կրթել իր երկու եղբայրներին։ Նրանց ուսում տալուց հետո տվել էր և արհեստի։ Արշակը, որ նույնպես գիտեր Տիգրանի արհեստը և ամենից աշխատասերն էր և եռանդոտը, միշտ օգնում էր Տիգրանին և երբ սա գործը կիսատ թողնելով՝ որսի էր գնում, բանը մնում էր Արշակի վզին։

Տիգրանը չէր հաշտվում եզան ու գոմշի հետ.— ես ձի պետք է բանեցնեմ,— ասում էր։ Նա սկսեց ձիան առնել, սայլի տեղ սկսեց ֆուրգոն բանեցնել։ Այսպես, միևնույն տան մեջ և՛ ֆուրգոն էին բանեցնում, և՛ սայլ, և՛ գոմեշ լծում, և՛ ձի։ Մեծը չէր հաշտվում ձիանց հետ և վնասակար ու շռայլություն էր համարում, չէր ուզում ձեռք վերցնել իր գոմշից. փոքրն էլ սրա հակառակ, ուզում էր ամբողջ գյուղի սովորությունը փոխել։

Սմբատը, նորության բարեկամ լինելով՝ փոքրին էր պաշտպանում և խրախուսում, բայց մեծին հնությունից ձեռք վերցնել տալ չէր կարողանում։ Այս հնի և նորի խառնուրդը տնտեսական վնաս էր հասցնում տանը, բայց հնար չկար դրա առաջն առնելու։ Մեծը, ուզենար էլ, կարող չէր ձի բանեցնել, դրա համար մեծ ջանք, մեծ ծառայություն էր պահանջվում, իսկ նա սովոր էր դանդաղ ու հանգիստ գործելու։ Նոր գութանի հետ չէր հաշտվում, որովհետև գութան շինելում իրան հմուտ վարպետ էր համարում։ Իսկ փոքրը նոր գութան էր բանեցնում իր ձիերով։

Այսպիսի մի աններդաշնակ խառնուրդ էին ներկայացնում և նրանց կանայքը։ Նրանց մեջ կային երես փոխածներ ու երեսբացներ, ինչպես կային չխոսկաններ և խոսողներ։ Մեծը մշակա-

թյուն էր անում՝ ջուր դրում, խմոր հունցում, հաց թխում, լվացք անում, կերակուր եփում, տղամարդկանց օգնում կալ ու կուտի ժամանակ, կով կթում, խնոցի հարում, հավ պահում, մեկով բանիվ ամեն գործ, ինչ որ մեր ժրաջուլոս տատերն արել են իրանց ջահրայից սկսած և գուլպայով վերջացրած. իսկ մյուսը նրան ձախ ձեռքով էր օգնում. երրորդը ձախն էլ չէր բանի մոտեցնում, այլ միայն իր երեխանցն էր զուգում, զարդարում, չորրորդը կար ու ձև էր անում ամենի համար. ամենի սիրտը շահում, որ իր վրա չխոսեն, բայց ընդհանուր առմամբ ամենքն էլ ծույլ էին, ամենքն էլ սիրտպակաս. չկար գործի արդար բաժանմունք, չկար ներքին կարգ ու կանոն, ավլող, սրբող, մաքրող, տուն ու տեղը կարգի բերող։ Այս միևնույն խայտաբղետությունը երևում էր և երեխանց մեջ՝ թե՛ հագուստի կողմից և թե՛ կրթության։

Այսպես չէր այս տունը, քանի որ կենդանի էր տան տիրուհին՝ լուսահոգի Եղիսաբեթ խանումը. հենց որ նա մեռավ, նրանից հետո տանտերն էլ՝ ծերունի Օհանես աղան, երկար չապրեց։ Բայց սա աչքովը տեսավ իր տան անկարգությունը և վշտացած սրտով մտավ գերեզման։

3

Երբ որ բոլոր գյուղաքաղաքացիք իմացան Օհանես աղոնց տան խառնակությունը, այնուհետև ամենքն էլ՝ կռվող եղբայրներին հանդիպելիս՝ ցույց էին տալիս իրանց ցավակցությունը. և ում հետ որ խոսում էին, նրան էին արդարացնում, իսկ բոլոր մյուսներին՝ դատապարտում։

— Տան մեծը դու ես, աշխատավորը դու ես, մյուս եղբայրներիդ էլ դու ես մեծացրել,— ասում էր Մարպողոսը Ավագին հանդիպելիս,— դու որ ուզենաս, նրանց ոչ մեկին բաժին չես տալ։

Մարպողոսը գյուղաքաղաքում առաջին մարդն էր, առանց նրան ոչինչ չէր լինում, ինչ որ լինում էր։ Ամենքն էլ ատում էին նրան և միևնույն ժամանակ առանց նրան ոչինչ չէին անում։ Նա այն կարճահասակ մարդկանցից էր, որոնց համար ասում են «հասակի կեսը գետնի տակն է», որով ուզում են նրա խելքի խորությունը և խորամանկության բարձրությունը ցույց տալ։ Նա մոտ վաթ-

սուն տարեկան մարդ էր, կարճ ու սպիտակ մորուքով, վառվռուն և անընդհատ շարժուն աչքերով, որոնք վատ տպավորություն էին գործում դյուրազգաց մարդկանց վրա։

— Մեղա, կարծես սատանի աչքեր լինեին,— ասում էին նրանք, թեև սատանի աչքեր չէին տեսած։ Մարպողոսը հին դպրոցի աշակերտ էր, այդ դպրոցի լավ ու վատ կողմերով օժտված։ Երբ աշխարհային ուսումն ու գիտությունը չէր տարածված, նա իր վանական ուսումով, Այսմավուրքով, Տաթևացու հատորներով, Սալլանթյան քերականությունով և՝ իբրև հավելված՝ իր դյուցազության արվեստով մեծ փիլիսոփա էր համարվում։ Ջահել ժամանակ այս ու այն եպիսկոպոսին ծառայելով թե՛ իբրև ծառա և թե՛ իբրև քարտուղար, ծանոթացել էր հոգևորական բարձր անձինքների և դառել էր նրանց մտերիմ գործակատարը, որ բավականին շահավետ պաշտոն էր և այնպիսի ծառայություն, որին կամա ակամա շատ շատերը պիտի դիմեին։ Գիտեր ուտել և ուտեցնել, շահել և շահվել, բադի պես ընկղմում էր պղտոր լճերի մեջ և ցամաք դուրս գալիս։ Միայն Սմբատն էր, որ սրան ատում էր ոչ միայն սրտանց, այլև երեսանց։ Տեղը եկած ժամանակ միշտ խայթում էր հրապարակով և նույնիսկ տպագրությամբ և սրա աղդեցությունը վնասակար համարում ժողովրդի բարոյական զարգացման համար։ Այս հանգամանքից օգուտ էր քաղում Ավագը և միշտ Մարպողոսի պաշտպանությանն էր դիմում։

— Ինձ ասում են, որ ես բաժին չեմ տալիս իմ եղբայրներին, բայց այդպես չէ ամենևին,— ասում է Ավագը Մարպողոսին,— ես ոչ թե բաժին չեմ տալիս, այլ ընդդեմ եմ բաժանության։ Իսկ մեր փիլիսոփան բաժանությունն է օգտակար համարում. նա մյուս երկուսին էլ իր կողմն է ձգել. ինչ որ ասում է, նրանք էլ հավատում են։ Մեկ գնանք մեզ մոտ, գուցե կարողանաս դրանց գլխումը խելք դնել, որ մեր շեն օջախը չքանդեն. մեկ դրանց հասկացնես, որ բաժանությունը վնասակար է և ոչ օգտակար։

— Ի՞նչ կասկած, որ բաժանությունը վնասակար է,— ասաց Մարպողոսը, կարծես ինքն իրան, և քթախոտի տուփը բաց արավ, որ նրա հետ բաց անի նաև իր իմաստության տուփը։— Ի՞նչ կասկած, այո՛, որ բաժանությունը վնասակար է,— կրկնեց Մարպողոսը, և աչքը ձգելով Ավագի աչքերին՝ այնպես պատկերացրեց իր դեմքը, որ Ավագը այդ դեմքի վրա կարդա նրա ասածի շարունակությունը։

Ավագը գլուխը տմբտմբացրեց ճանճով ընկած ձիու նման, որով ուզեց ասել Մարպողոսին, թե՝ «ինչ որ քու մտքումդ է, իմ էլ սրտումս է»։ Այս լուռ պատասխանը հասկացավ Մարպողոսը և շարունակեց.— Ի՞նչ անեմ, Ավագ, քո խաթրը չլինի, ես գիտեմ, թե դրան ի՛նչ կանեմ. բայց քո ծնողաց արած բարերարությունը չեմ կարող ուրանալ։ Թո՛ղ Սմբատը գնա նրանց գերեզմանին մոմ վառի,— ասաց Մարպողոսը, և իր ամենակարող զորությունը ցույց տալու համար՝ մի առանձին ուժով վեր քաշեց պտղունցը լցրած բոնոթին։

— Իսկ եթե ուզենաս, ի՞նչ վնաս կարող ես տալ,— հարցրեց Ավագը հետաքրքրությամբ, որ հարկավոր ժամանակ Մարպողոսին իբրև զենք ունենար իր ձեռին։ Ինչ ասել կուզի, որ Մարպողոսը լավ հասկացավ Ավագի միտքը և նրան իր պատրաստակամությունը ցույց տալու համար ասաց.

— Մե՜ծ վնաս... կգրեմ ուր հարկն է, թե ձեր այսինչ վարժապետը վնասակար մտքեր է քարոզում ժողովրդին. ծաղրում է ծիսարանը, վնասակար է համարում պաս պահելը, նախապաշարմունք է համարում ուխտագնացությունը, որդին հորից և եղբայրը եղբորից բաժանում է, հավան չի ներկա ընտանեկան կազմակերպությանը, խզում է բոլոր սուրբ կապերը, որոնք առանց այն էլ թուլացել, կտրվել են... և էլի ուրիշ հազար ու մեկ բան։ Քո թշնամին չընկնի իմ գրչի տակ, մեկ որ ընկավ, էլ փրկություն չկա, ինձ Մարպողոս կասեն։ Ամենքն էլ դողում են իմ ձեռին, այդ անիրավն է, որ չի վախենում ինձանից։

— Նա ոչ թե քեզանից, այլ նույնիսկ աստվածածնից էլ չի վախենում։ Էլ պաս-ուտիս չկա տանը, ամենքին էլ ֆարմասոն է շինել։ Մենակ ես եմ մնացել պաս պահող, մեկ էլ իմ կինս։ Երեխեքս էլ են նրան մտիկ տալիս, նրա օրինակին հետևում։ Չէ՛, եթե դա շարունակե իր արարմունքը, եթե շարունակե ինձ հետ վիճել, մեր մեջ բաժան-բաժանություն գցել, այնուհետև, թեկուզ հոգուս մեղք լինի, քեզ մի գանգատ պիտի գրել տամ...

— Այդ մեղք չի լինիլ, պարոն Ավագ, այլ վարձ։ Պաշտպանել մեր սուրբ կրոնը, մեր պապական սուրբ ավանդությունները, մեր ամենքիս սրբազան պարտականությունը պետք է լինի։ Ասված է սուրբ Ավետարանի մեջ, թե «Եթե քո աջ աչքդ քեզ ճամփից հանե, հանի՛ր նրան և դե՛ն գցիր, որովհետև լավ է քեզ համար, եթե մեկ աչքով արքայություն ընկնես, քան թե երկուսով դժոխք»։

Այսպես Ավագն ու Մարպողոսը իրանց անսուրբ խղճի հետ սուրբ հոգվածներով պայման կապելով, հասան Ավագենց տուն, երեկոյան թեյի։

4

Քսան տարուց ավելի էր, որ Սմբատը հեռացել էր իրանց գյուղաքաղաքից։ Իր ուսումն ավարտելուց հետո սկսել էր վարժապետություն անել ոչ իր ծննդավայրում, այլ ուրիշ քաղաքներում։ Սրա պատճառն այն էր, որ ինչպես ասված է. «Տանուտերերին «օրհնյա տեր» չկա» և թե՝ «Մարգարեն իր գավառում պատիվ չի ունենալ»։ Նա հոժար էր իր ծննդավայրում, իր հայրենական տանը նստած՝ ավելի էժան գնով ծառայել. բայց մինչդեռ ուրիշ տեղերում նրան տալիս էին տարեկան հազար մանեթ և ավելի ևս, իր դրացիները չէին հոժարում տարեկան երեք հարյուր մանեթ տալ, որով նա հոժար էր ծառայելու։ Այսպիսի մի նախանձ կար մեր ոչ միայն գյուղերում ու գյուղաքաղաքներում, այլ նույնիսկ նշանավոր գավառական քաղաքներում, ուր իրանց տեղական ուժերից չէին ուզում օգուտ քաղել, չէին պատվում, չէին գնահատում նրանց։ Նրանք էլ սովորաբար դրսից եկածների դեմ պատերազմ էին հայտնում և դպրոցական գործը միշտ տատանման և խռովության մեջ պահում։

Այսպես՝ Սմբատը դպրոցից դուրս գալով իբրև աշակերտ, կրկին դպրոց էր մտել իբրև վարժապետ և երկար ժամանակ այդ շրջանում ապրելով՝ անծանոթ էր մնացել կյանքի մյուս շրջաններին, որոնց մեջ եղած ահագին փոփոխությունը նա չէր նկատել։ Նույնիսկ անցյալին էլ նա լավ չէր ծանոթ։

Մանկական հասակի մեջ երբ մեկը մեծանում է անհոգ ու երջանիկ, կարծում է թե ամենքն էլ իր նման են։ Այս է պատճառը, որ մենք մեր մանկության օրերը միշտ ներկայացնում ենք մեզ իբրև դրախտ։ Ասում ենք՝ այն ժամանակ մարդիկ լավ էին, սեր կար, մտերմություն կար, իսկ հիմա ամեն ինչ տակնուվրա է եղել։ Մինչդեռ մենք տեսնում ենք, որ մեր երևակայած երջանիկ ժամանակի մարդիկը ևս դժգոհ են եղել իրանց ժամանակից և ասել են.

Փչվի էսպես ժամանակը.
Հոյս ու հավատ, սեր չկա...

Այս է դարձյալ պատճառը, որ շատ ազնիվ և կրթված երիտասարդ ազնիվ է միայն կյանքից հեռու եղած ժամանակ. բայց երբ մտնում է կյանքի մեջ, գործ է ունենում խորամանկ և խարդախ մարդկանց հետ, զրկողության և հալածանքի է ենթարկվում, ում բարեկամ է համարում, շարակամ է դուրս գալիս, ի չարն են գործ դնում իր հավատը և անձնվիրությունը, այնուհետև նա ցած է իջնում իր իդեալական բարձր գահից ու ասում է ինքն իրան.

«Եթե այս տխմարն իր տգետ տեղովը ինձ կխաբի և կխնդա վրաս, ինչո՞ւ ես սրա գլխին մի այնպիսի օյին չդնեմ, որ ինքն էլ զարմանա»։ Եվ մի քանի այսպիսի փորձերից հետո երբեմն ազնիվ երիտասարդը դառնում է խարդախության տիպար։

Այսուամենայնիվ պետք է ասել, որ Սմբատի մանկության ժամանակ նրանց գյուղաքաղաքում նահապետական սեր և միություն կար։ Չարություն եթե կար, գիտակցական չէր, այլ մանկական։ Մեծ մարդիկը այնքան միամիտ էին, որ երբեմն մանկական չարություն էին անում։ Մարդիկ չէին տարբերվում միմյանցից ոչ մի բանով, ամենքն էլ գաղափարակից էին միմյանց, մե՛կ հավատ ունեին, մե՛կ հույս և մե՛կ սեր։ Չկար անհատական ազատություն, բայց նրա չգոյությունն զգալի չէր ոչ ոքի։ Կանայք նոր ձևի հագուստ հագնելը իրանց համար անպատվություն էին համարում, մեծերի մոտ չխոսկան մնալը՝ փառք ու պարծանք։ Մարդ անխղճություն էր համարում զրկել նրանց իրանց այդ միակ մխիթարությունից։ Արտաքուստ սարկություն երևացող վիճակն սարկություն չէր ինքի համար, այլ մի նահապետական սրբացած և ընտելմունք դառած սովորություն, և ընտվում էր ոչ բռնության, այլ հայրական սիրո հովանավորության տակ։ Մեծերի առջև փոքրերի ձեռը սրտին դրած կանգնելը, ձայն-ծպտուն չհանելը, կուրորեն հնազանդիլը մի թշվառություն չէր նրանց համար, այլ մեծ բախտավորություն։ Ազատ էին ջրերն ու առուները, ազատ էին սարերն ու ձորերը, սակավ էին մարդիկ և շատ էր տեղը. և մարդիկ ապրում էին ինչպես Աբրահամու օրերում։ Աղքատ էին մարդիկ քաղաքակրթության պարագաներով, բայց գոհ էին իրանց վիճակից, ոչ մի բանի պակասություն չէին զգում, և ո՞վ է զգացել իր չտեսած բանի պակասությունը, որ նրանք զգային։

Սարկության ազատությունը և վերջն էլ դատական վերանորոգությունը, գյուղական ինքնափարությունը, նորամուտ լուսավորությունը, երկաթուղի, հեռագիր և այլն, մեկ մեկի հետևից հան-

կարծ գալով՝ շլացրին ժողովրդին, մի հանկարծական փոփոխություն ձգեցին նրա նիստուկացի և վարք ու բարքի մեջ։ Ժողովուրդն այնպես փոխվեցավ մի տասը տարվան մեջ, որքան փոխված չէր հարյուրավոր տարիների ընթացքում։ Ինչ-որ մի շահի արժեր առաջ, դարձավ քսան շահի և ավելի ևս. փողը շատացավ, շռայլությունն էլ հետը. և այս վերջինը հաղթեց առաջինին։ Առաջվան հարյուր մանեթով երջանիկ ապրողը էլ չկարողացավ հազար մանեթով ապրել։ Մի նոր տեսակ գոյության կռիվ սկսվեց, անմիտները հանկարծ սատանայացան, խելոքները խորամանկացան, ազնիվները խարդախացան, հավատարմությունը կորավ, սերը սառավ, սեփականությունը ձեռքից ձեռք անցավ, և այլն այսպես։

Այս փոփոխությունների մասին զգալի հասկացողություն չուներ Սմբատը։

Գտնվելով միշտ մանկահասակ երեխաների շրջանի մեջ, իրան նվիրած լինելով բարոյական դաստիարակության, իդեալիստ լինելով, միևնույն ժամանակ ինքն էլ մի իդեալ էր իր աշակերտների համար և դրա մեջ էր գտնում իր մխիթարությունն ու սփոփանքը։ Գործ չուներ հասարակության հետ, ոչ առուտուր, ոչ «հախ ու հեսաբ» և ինչ պակասություն որ նշմարում էր, հին վարժապետների պես անկրթության էր վերագրում, մինչդեռ տեսածը հակակրթության արդյունք էր և ո՛չ անկրթության։

Բայց ահա այժմ Սմբատն էլ է մասնակցել գոյության կռվին, եղբայրաբաժին է ուզում, ուզում է ապահովել իր ծերության օրերը, իր որդոց վիճակը, և, ո՞վ զարմանք, եղբայրը եղբորն ուրանում է, չի ուզում նրան բաժին տալ։ Այս բանը կյանքի հանգամանքների սովոր մի մարդու վրա առանձին տպավորություն չէր գործիլ։ Ի՞նչ կա, կասեր, թող չտա, ես կառնեմ դատաստանով։ Բայց այդպես չի մտածում Սմբատը։ Նա դեռ պետք է երկար ժամանակ զարմանա, այդ բանն իր սրտի համար ցավ շինե, դեռ պետք է այդ խնդիրը լուծե հոգեբանական տեսակետից, պետք է իմանա, թե ի՞նչ է դրա պատճառը, ի՞նչպես կարելի է, որ եղբայրը բաժին չտա։

«Ուրեմն այսպես բան կա մեր կյանքումը,— ասում է նա,— ուրեմն պետք է որ շատ շատերը գտնվին իմ վիճակումը, ուրեմն մի բարոյական ցավ է այս և պետք է դարման տանել»։ Լսում է, որ շատ եղբայրներ բաժանության առիթով իրար կոտորել են և անպատիժ մնացել։ Նրա սիրտն սկսում է ահ ընկնիլ։ «Մի՞գուցե ինձ էլ սպանեն. բայց ավելի լավ չի՞ լինի, որ ես ինքս սպանեմ ինձ։

Բայց կի՞նս, երեխե՞քս. ի՞նչ առաքինություն կլինի իմ արածը, ո՞վ կպաշտպանե իմ դատը»...

Մինչդեռ Սմբատն այս մտածմունքի մեջ էր, ներս մտավ Մարպողոսը, նրա հետ և Ավագն ու մյուս եղբայրները։

Սմբատն իսկույն իմացավ, թե ինչո՞ւ համար կլինի եկած Մարպողոսը. տխուր բարևելուց հետո լուռ ու մունջ սպասեց մինչև նրա խոսիլը, ինչպես մի սգավոր, որ գլուխը քաշ գցած սպասում է, թե ինչ մխիթարական կխոսի տեսության եկած հյուրը։

Մարպողոսը երկար սպասեցնել չտվավ։ Հենց որ թեյի բաժակը վերցրեց դրավ առջևը, իսկույն հանեց բռնոթամանը և դեռ բաց չարած՝ սկսեց իր ճառը։

— Սմբա՛տ, ո՛րդի, քեզ խրատ չի հարկավոր, ուրիշներին էլ դու ես խրատում։ Ես հույս ունեի, որ եթե քո մյուս եղբայրներդ բաժանության մասին մտածեին, դու արգելք կլինեիր, իսկ հիմա իմանում եմ, որ դու ինքդ ես առաջարկում բաժանություն։ Այդ լավ բան չէ, որդի. բաժանությունը մի չարիք է, որից պետք է միշտ փախուստ տալ։ Զուր չի ասված Ավետարանում, թե՝ «Ամենայն տուն բաժանյալ՝ ավերի»։

— Իհարկե սուտ չի ասված,— ընդհատեց Մարպողոսին Սմբատը։— Միայն այնպես չի ասված, ինչպես դուք եք ասում, և ոչ այն մտքով է ասված, ինչպես դուք եք հասկանում. Ասված է. «Ամենայն տուն բաժանյալ հանձն՝ ավերի»։ Սրանով ուզում է ասել՝ ամեն տուն, որի անդամների մեջ միություն չկա, կքանդվի։ Սրանից էլ ուղիղ հետևում է այն, որ տուն ասածդ պետք է այնպես լինի կազմած, որ նրա անդամների մեջ միություն լինի։ Արդ՝ այս նպատակին կհասնվի բաժանությամբ։ Բաժանությամբ մի տանից, որի անդամների մեջ միություն չկա, կկազմվին առանձին-առանձին տներ, որոնց անդամների մեջ միություն կլինի։ Եթե երկու տեգրակնանիք տան անելիքը մեկմեկու վրա են գցում, ու գործը մնում է անկատար, ինչ ասել կուզի, որ եթե նրանք ջոկ-ջոկ լինեն, այդպես վարվելու ոչ հնար կունենան և ոչ տեղիք. այսպես էլ եղբայրները։ Ադամն էլ մի ժամանակ դրախտումն էր, բայց այնտեղից արտաքսվեցավ և իր քրտինքով ապրելու դատապարտվեցավ։ Գուցե մեր ընտանիքն էլ մի ժամանակ դրախտ է եղել, բայց այժմ չէ։ Այն սերը, որ պիտի կապեր ընտանիքի բոլոր անդամներին մի շղթայով՝ արտաքսված է, ինչպես Ադամը դրախտից։ Հայրը ինչպես իր չափահաս աղջկանը բաժին տալով՝ ճանապարհ է դնում, այնպես պետք

է վարվի և չափահաս տղայի վերաբերությամբ։ Չափահաս տղան պետք է հորից բաժանվի և ջոկ ընտանիք կազմե։ Եվ այս ընդդեմ չի լինիլ ամենևին ս. Գրքին, ուր պարզ ասված է. «Թողցե այր զհայր յուր և զմայր յուր և երթիցե զհետ կնոջ յուրոյ»...

— Սպասիր, Սմբատ,— խոսքը կտրեց Մարպողոսը,— հիմա էլ ես պիտի ասեմ քեզ, որ ս. Գրքի խոսքն այդ չի նշանակում, ինչպես դու ես հասկանում։ Քո ասածդ ընդդեմ է նույնիսկ աստվածային այն պատգամին, որ ասում է՝ «Պատվիր քո հարն ու մորը»։

— Շատ հեռու գնացիք։ Ես ս. Գիրքը շատ ուղիղ եմ հասկանում, և կարոտ չեմ համարում սքոլաստիկական մեկնության։ Անբարոյական մարդը իր հորն ու մորը կանպատվի անբաժան ժամանակն էլ, և ընդհակառակը՝ բարոյական մարդը մեծ պատվով կմեծարե նրանց և բաժանված ժամանակը։ Ասացեք խնդրեմ՝ ո՞րն եք լավ համարում դուք. երբ և՛ հայրն է ազատ ու անկախ և՛ որդի՞ն, թե՛ կամ որդին է հոր հպատակը և կամ հայրը որդու։ Քանի՞ օրինակ կուզես, որ այս բոպեիս ցույց տամ քեզ, օրինակ, որ որդին խլած լինի ծերունի հորից ամենայն իրավունք, զրկած լինի նրան ժամոց տալուց, աղքատի ողորմելուց. ծերունին ամաչում է ձեռը դատարկ ժամ գնալ, վախում է մի աղքատի կանչել և հաց տալ։ Որդին վայելում է հոր թոզած մուլքերը, կարողությունը և նրան ծերության ժամանակ պահում է հետին թշվառության մեջ, ցնցոտիների և կեղտի մեջ։ Ահա քեզ անբաժան որդի։ Այսպես են վարվում և մայրերի վերաբերությամբ։ Ուրեմն, հայրը հեռացնելով՝ նրան հնար է տալիս վաղօրոք իր գլխի հոգսը քաշելու համար իր ապրուստն ապահովելու, միևնույն ժամանակ ինքն էլ է անկախություն ձեռք բերում, ինքն էլ է լինում իր ունեցածի տերը և մինչև իր մահը ուրիշի ձեռքի չի մտիկ տալիս։

— Սպասիր, եղբայր, ես էլ ունիմ բան ասելու,— ասաց Տիգրանը։— Մարպողոս բիձան, ինչպես և դրա գաղափարի բոլոր մարդիկը առարկաները գլխիվայր են տեսնում, գլխիվայր էլ դատողություն են տալիս նրանց մասին։ Դրանց ուզեցն ընդունակ չէ առարկաների տպավորությունը հակաշրջելու, ըստ որում, ինչպես ասում էր իմ ֆիզիկայի վարժապետը, իրավ որ առարկաները թարս են տպավորվում մեր թե՛ աչքի և թե՛ ուղեղի վրա, և շատ քչերին է տված վերացական առարկաները հակաշրջելու և ուղիղ ըմբռնելու ընդունակությունը։

— Լավ, ի՞նչ ես ուզում ասել, դու ասելիքդ ասա. ի՞նչ քո խելքի բանն է ֆիզիկան,— ասաց Արշակը, որ միշտ դեպք էր փնտրում ծաղրելու իր փոքր եղբորը։

— Այն եմ ուզում ասել,— շարունակեց Տիգրանը,— որ Մարպողոս բիձան Նոյի ժամանակներից է խոսում, բայց ինչպես երևում է, այնքան էլ հմուտ չէ պատմության։ Մեր պատմության ուսուցիչն ասում էր, որ մեր աշխարհը լցված էր բաժանությամբ։ Օրինակ, Հայկը Կադմոսին թողնում է Ասորեստանի սահմանում, Արմենակին ուղարկում է Վրաստանի սահմանը, նրանք էլ իրանց որդոցն են ուղարկում այս ու այն կողմ, ինչպես Սիսակին՝ Սյունիք և Աղվանք, Շարային՝ Շիրակ և մյուսներին էլ այսպես։ Այսպես էին և Արշակունիք. մեկին իրանց մոտ էին պահում, մյուսներին դես ու դեն ցրվում։

— Լավ, լավ,— ասաց Արշակը,— մենք չենք կարող առասպելական դարերում եղածը մեզ օրինակ առնել։ Բաժանությունը գուցե և մի չարիք է, բայց այդ չարիքն այժմ անհրաժեշտ է։ Հին ժամանակ եթե բաժանվել են, գուցե ուրիշ պատճառ են ունեցել, բայց տնտեսական տեսակետից նրանք հնար ունեին և չբաժանվելու, մինչդեռ այդ հնարը մենք այսօր չունինք։ Հնար չունինք, որովհետև հող չունինք։ Այսօր ահա մենք չորս եղբայր ենք և պետք է բավականանանք այնքանով, որքան մեր հայրը մինակ է ունեցել, իսկ նա էլ իր հոր ունեցածի երրորդ մասն է ունեցել, ինչպես մեր որդիքը պետք է մեր ամեն մեկիս ունեցածի չորրորդ մասն ունենան։ Այնպես որ, եթե պապն ունեցել է 20 օրավար հող, թոռն ունենում է առ առավելն մի օրավար, բայց մեծ մասամբ այդ էլ չի ունենում։ Ի՞նչ անի հիմա խեղճ թոռը։ Նա ճարահատյալ կերթա կամ մշակության կամ արվեստի, մյուս եղբայրներն էլ մի ուրիշ բանի։ Այս է պատճառը, որ մեզանում հետզհետե շատանում է գյուղական «հեվորների» թիվը և մյուս կողմից՝ պանդխտությունը և պարապմունքի զանազանությունը։ Քանի որ երկու եղբայր միևնույն գործովը չեն պարապած, ի՞նչ միտք ունի նրանց միասին ապրել։ Քանի որ մեր կյանքի հանգամանքները եկել հասել են այս կետին, մեր ընտանեկան կյանքն էլ պետք է հարմարեցնենք այդ հանգամանքին։ Սրա համար ես մի լավ օրինակ գիտեմ։ Մեր քթի տակ եղած գերմանացիները գաղթականներ են։ Ինչ ասել կուզի, որ հողի պակասությունն է ստիպել դրանց գաղթելու, ուրեմն և դրանք մեզանից լավ գիտեն հողի արժեքը. և տեսեք ինչ են անում։ Դրանց մեջ հորական բաժին հողը ժառանգաբար անցնում է անդրանիկ

որդուն, իսկ մյուս որդիքը հողի փոխարեն փող են ստանում։ Այս իսկ պատճառով միայն անդրանիկ որդին է լինում հոր օգնականը, իսկ մյուսներին տալիս են արհեստի։ Սրա հետևանքը լինում է այն, որ ոչ մի պարապ և անգործ ձեռք չի լինում նրանցում, և երկրորդ էլ այն, որ փող ստացող եղբայրներն իրենց համար նոր հող են առնում։ Այսպիսով այս մարդիկը տարեց-տարի նոր և նոր հողեր են գնում։ Այսօր Եկատերինենֆելդը, որ երկու հարյուր տուն հազիվ կլինի, այնքան հող ունի, որի տասներորդի չափ հող չունի մոտ ութ հարյուր տուն ունեցող Շուլավերը։ Մենք հայերս և թուրք ու վրացիք նրանց պես չենք աճում, չենք ճոխանում. ինչո՞ւ, որովհետև չունինք նրանց նման ընտանեկան կազմակերպություն, նրանց նման ընտանեկան կարգ ու կանոն, մենք բավականանալով մեր պապերի ունեցածով՝ նրա վրա թուխս ենք նստում, ձագ հանում, բայց բավականին սնունդ չունենալով՝ ոչնչանում ենք, սկսում ենք միմյանց միս ուտել, միմյանց հարստահարել, միմյանց կողոպտել։ Ուրեմն ուղիղն ասաց մեծ եղբայրս, թե բաժանությունը պետք է ամուսնության պես մի սուրբ օրենք լինի, այլապես ամուսնության համար ասված օրհնությունը, թե՝ «Աճեցեք և բազմացարուք և լցեք զերկիր», կատարումն չի ստանալ։

— Ի՜նչ ասեմ, ամենքդ էլ ինձանից լավ եք իմանում գիրն էլ, գրի զորությունն էլ,— ասաց Մարպողոսը.— բայց դե, նեմեցը նեմեց է, հայը՝ հայ։ Մենք մեր սուրբ հավատքը թողնենք գնանք նեմեց դառնա՞նք։

— Չեմ ասո՞ւմ, որ սրանց ուղեղը ամենայն բան թարս է ըմբռնում,— ասաց Տիգրանը։— Լսեցե՛ք, բիձա Մարպողոս, մի՞թե օրինավոր կարգ ու կանոնը հայկական կրոնին ընդդեմ է։ Ես էլ եմ երբեմն կարծում, որ եթե չկա, երևի ընդդեմ է, բայց մեկ էլ ինձ ու ինձ միտք եմ անում, տեսնում եմ, որ մեղավորը մեր հիմարությունն է միայն, որ գիտենք թե ինչն է լավ և չենք անում։ Մի՞թե վատ բաներ են ընկերական ոգին, հասարակական ոգին, համայնական ոգին։ Ահա թե ինչով պետք է միացած լինին հասարակության բոլոր անդամները։ Ամենքս պետք է եղբայր լինինք, և ոչ թե միայն մի հորից ու մորից ծնվածները։ Իսկ այդ կարելի է ձեռք բերել միայն և միայն բաժանությամբ։ Նախ, իմ բաժինն ինձ, քոնը՝ քեզ, հետո համեցեք ընկեր դառնանք, եթե կամենում ես։

— Լսիր, եղբայր,— ասաց Սմբատը,— սրանք որ թե չեն հասկանում մեր ասածը, այլ չեն ուզում հասկանալ, որովհետև իրանց

համար օգտակար չեն համարում։ Եղբայրս ոչ թե բաժանության է հակառակ, այլ մեր բաժին ստանալուն։ Սա շատ ուրախ կլինի, որ մենք ինչ ունինք, չունինք իրան տանք և ինքներս դատարկ ձեռքով դուրս գանք։ Այնպես չէ՞, եղբայր, ուղի՞ղն ասա։

— Ես ոչինչ չունիմ ասելու,— պատասխանեց Ավագը.— ե՞ս ոչ ձեր չափ ուսում ունիմ, ոչ ձեզ նման ճարտար լեզու, ուրեմն դուք ձեր բաժինն արդեն ստացել եք, էլ ի՞նչ եք ուզում ինձանից։

— Ուրեմն, քո կարծիքով՝ ով որ ուսում չունի, պետք է հաց ունենա, իսկ ով որ ուսում ունի, պետք է քաղցած զկոտա։ Այսօր իմ ուսումն էլ ինձ հաց չի տալիս, իսկ քանի որ տալիս էր, ես իմ հացը կիսում էի քեզ հետ։ Ես քեզանից ոչինչ չեմ ուզում, այլ այն եմ ուզում, ինչ որ մնացել է մեր հորից։

— Մեր հայրը ոչինչ չի թողել, ինչ որ տեսնում եք, բոլորն էլ իմ աշխատանքն է։ Ես վկաներ ունիմ, որոնցից մեկն էլ ահա Մարպողոսն է։

— Ա՜յ, նոր բան,— բացականչեց Սմբատը։— Ասա ինձ, Մարպողոս, ինչո՞վ ես հաստատում դու, որ մեր տուն ու տեղը, մեր շարժականն ու անշարժը մեր հոր թողածը չէ։

— Նրանով եմ հաստատում, որ հայրդ մեծ պարտք է թողել, և եղբայրդ է վճարել այդ պարտքը։

— Անամո՞թ,— բացականչեց Տիգրանը,— տեսեք ինչե՞ր են հնարել...

— Ձայնդ կտրիր, անպիտան, քեզ ո՞վ է խոսեցնում,— բղավեց Ավագը։

— Մարպողոս, հեռացի՛ր այստեղից,— ասաց Արշակը.— դու արյուն ես ուզում գցել մեր տունը, ով գիտե ի՜նչ ոխ ունիս հանելու։

— Մարպողոսն իմ հյուրն է. և այս տունն էլ իմն է. ո՞վ ունի իրավունք այստեղ հրամայելու։ Դուրս եկեք ինքներդ, անպիտաններ,— ասաց Ավագը և ձեռքը տարավ դեպի խանչալը։

Տիգրանը, որ ամենից ուժեղն էր, վրա ընկավ եղբոր խանչալին, և դարթու տալով՝ պոկեց խանչալը քամարի հետ միասին և նրան զինաթափ արավ։ Ավագն սկսեց օգնություն կանչել բղավելով. «Հա՜յ, հասեք, ինձ սպանում են»։

Սմբատը մնացել էր տեղն ու տեղը սառած. չգիտեր ինչ աներ։ Բայց Ավագը մի կողմից օգնություն էր կանչում, մյուս կողմից երկու եղբայրներին հարվածներ տալիս։ Նրանք էլ առանց զարկե-

լու ոտ ու գլխից բռնեցին և դուրս շպրտեցին։ Գուրս արին և Մարպողոսին և դուռը կողպեցին։ Մարպողոսը փախավ. իսկ Ավագն սկսեց դրսից ապակիները կոտրատել և բոլոր դրացիներին իր գլխին հավաքել։ Գտնվեցին շարերի մեջ և բարի մարդիկ, որոնք հեռացրին Ավագին, որ դուռը կոտրած և կացինը ձեռքին՝ սպասում էր, որ դուրս եկողի գլուխը ջախջախե։ Հավաքվածներից շատերը երբ լսեցին, թե ոչ ոքի վնաս չի եղել, շատ տխրեցին։

5

ՄԻՋՆԱԴԵՊ

Ամառն էր։ Թե՛ ուսուցիչ, թե՛ ուսանող ամառային արձակուրդ էին ստացել։ Նոանցից օտարության մեջ եղողները վերադարձել էին իրենց ծննդարանը։ Բավականաչափ զարդացածները՝ թափառելով հով ու զով տեղերում, ուսումնասիրում էին բնության կյանքի երևույթները, հետազոտում էին անցած-գնացած ժամանակների մնացորդները, պատմական տեղերի և շենքերի բեկորներն ու նշմարները։

Շատերն իրանց ծննդարանի և պտտած տեղերի վերաբերությամբ պատմական տեղեկություն չունեին, որովհետև պատմությունը շատ անցքերի տեղեր որոշակի հայտնած չէր, նոր հետազոտություն և ստուգություն էլ եղած չէր։

Քաջենք գյուղաքաղաքի տեղագրության մասին ևս պատմական տեղեկություն չունեին ոչ միայն տեղացի գրագետներն ու անգրագետներն, այլև ոչ նույն ինքը Սմբատը, որ մեր վարժապետների մեջ պատմության հմուտներից մեկն էր համարվում։ Իր ծննդավայրի պատմության երեսին քաշած խավար վարագույրը, համարյա դիպվածաբար, նրա առջև ետ քաշեց իր վաղեմի աշակերտակից և մտերիմ ընկեր Արմենակ Ազատյանը, որ շատերի պես նա էլ էր շրջում գյուղեգյուղ և պատմական հնություններն ու ժողովրդի ներքին կյանքն ուսումնասիրում։

Արմենակը մոտ քառասուն տարեկան, բարձրահասակ, թխամիրուք, բարձրաճակատ, կրակոտ ու խոշոր աչքերով ու համակրելի նայվածքով մի անձնավորություն էր։ Իդեալիստ էր Սմբատի նման, բայց նրանից էլ դեռ վառ երևակայության տեր էր և ավելի շատ ոգևորվող ու հափշտակվող։ Բարի և սիրող սիրտ ունենալով, շարությունն ու ատելությունը նրա համար մահացու ցավեր էին, որոնցից միշտ փախս էր տալիս։ Արմենակի գալուստը Սմբատի մոտ, նրա հոգեպես հուզված ժամանակ, մեծ սփոփանք և ուրախություն պատճառեց նրան։ Նրա պատվի համար կռվող եղբայրները զինադադար տվին, և նա Սմբատի մոտ մնաց մինչև մի շաբաթ։ Այդ օրերը նրանք զանազան զբոսանքների և արշավանքների նվիրեցին, և Արմենակը, Սմբատի ուղեկցությամբ, հնար ունեցավ մի ամբողջ գավառի նշանավոր հնություններն ուսումնասիրելու և գրի առնելու։ Այս զբոսանքների ժամանակ հոգեպես կազդուրվում էր և Սմբատը, և նրա գրգռված նյարդերը հանգիստ էին առնում։ Նա չէր կարող թաքցնել իր մտերիմ ընկերից և բարեկամից իր ընտանեկան խճճված հանգամանքները։ Այս խնդրի վերաբերությամբ ևս ընկերոջ կարեկցությունը վաստակելով՝ այնպես մխիթարվեց, որ համարեց թե իր եղբայրաբաժինն արդեն ստացել է ամենայն քաղցրությամբ։

Երեկոյան դեմ պատշգամբի վրա նստած թեյ էին խմում։ Արմենակը դեռ այն օրն էր եկել։ Հափշտակվելով գյուղի նկարչական դիրքից և շատ հավանելով Սմբատենց եռահարկ քարաշեն տունը, որ իր բարձր դիրքով իշխում էր ամբողջ գյուղի վրա, հարցրեց.

— Սմբա՛տ, չգիտե՞ս, արդյոք այս շինության ժամանակ, սրա հիմքը փորելիս՝ որևէ հնության հետք գտնված չէ՞։

— Ինչո՞ւ համար ես հարցնում,— ասաց Սմբատը։

— Նրա համար եմ հարցնում, որ իմ նկատողությամբ և երևակայությամբ այստեղ պիտի լինի եղած կամ սրա մոտակայքում Աշուշա բդեշխի պալատը։

Սմբատը փոխանակ իսկույն պատասխանելու, գույն առավ ու գույն տվավ և ասելիքը կոկորդումը մնաց։ Նա մի կեղծ հազով իր հուզմունքը զսպելով՝ պատասխանեց։

— Այս տանը հիմքը, ճշմարիտ որ, մի հին շենքի վրա է դրված։ Հայրս ասում էր, թե ինքը լսել է, որ այստեղ կռապաշտ թագավորի տուն է եղել։ Մեզանում հնության հետքեր շատ կան, որոնք մինչև այսօր չեն հետազոտված։ Քո ասելուց դուրս է գալիս, որ ուրեմն պետք է այստեղ լինի եղած հին Յուրտավը։

— Անկասկա՛ծ, այստեղ էր Աշուշա բդեշխը, Վահան Մամիկոնյանի մորաքրոջ մարդը։

— Գիտե՛մ, գիտե՛մ, նա, որ պարսից Հազկերտից խնդրեց ազատել Վահանին և նրա եղբայրներին—Վասակին և Արտաշեսին, որոնք գերի էին այնտեղ և բերավ այստեղ իր մոտ պահեց։

— Այո՛, և երբ Հազկերտը նրա խնդիրքը կատարեց, Աշուշան փոխանակ սովորական երկրպագություն տալու, գլուխը գետնին դարկեց թագավորի առջև։

— Այդպես է։ Թագավորն էլ ասաց.— Իշխան, այդ ի՞նչ անսովոր երկրպագություն է, որ անում ես։

— Ճշմարիտ է,— Աշուշան էլ պատասխանեց.— որովհետև դու անսովոր ողորմություն ցույց տվիր, պետք է որ ես էլ անսովոր շնորհակալություն ցույց տամ...

— Շատ խելոք մարդ է եղել Աշուշան, Արմենակ։

— Եվ շա՛տ հեռատես։ Միայն նա կարողացավ կոտրել Վարդանի համառությունը, ասելով, մի՞թե դու ավելի լավ քրիստոնյա ես, քան թե Պողոս առաքյալը, որ ասում էր. «Ուխտյուք խնդրեի ես ինքնին նզով լինել վասն փրկության եղբարց իմոց և ազգականաց ըստ մարմնո»։ Սրա վրա նոր խելքի եկավ Վարդանը, և ինչ էլ որ հետո արավ, առանց Աշուշայի թելադրությանը չէր։

— Ուրեմն Վահանն իր պատանեկության օրերն այստեղ անցկացրեց, մեր այս կախարդական սարերումն ու ձորերումը։

— Այո՛, այս ձորերումը շատ նշանավոր մարդիկ են կրթվել։ Այստեղի օդն ու ջուրն է սնուցել և Սպասալարներին, Արղությաններին և Լոռու մելիքներին։ Բայց դրանցից և ամեն հայից մեծն է եղել այստեղ մի ժամանակ, դեռ չորրորդ դարու վերջերում... կարո՞ղ ես իմանալ, ո՞վ կլիներ այդ ամենամեծ հայը։

— Դու ինձ հանելուկ ես առաջարկում, Արմենա՛կ։ Քո ասած ժամանակ ամենամեծ հայը մեծ Սահակն էր. բայց նա դժվար թե այստեղ եղած լինի։

— Ո՛չ, ո՛չ, նրանից էլ բարձր։

— Չլինի՞ թե Մեսրոպին ես ասում. բայց մի՞թե նա մեծ է Սահակից։

— Իշխանությամբ և դիրքով իհարկե ոչ. բայց հանճարով՝ նմանը չի ծնված մեր աշխարհում մեծ քան զՄեսրոպ։ Նա այստեղ հղացավ հայոց համար գրեր գտնելու միտքը, Վրաց և Աղվանից

գրերն էլ այստեղ հնարեց և իրանց տվավ։ Այստեղ են և նշանավոր հայ կանայք։ Իմացի՛ր, ովքե՞ր էին։

— Նշանավոր էր Վահանի մայր Զվիկը, որ Ղազարի ասելով՝ հայ կանանց մեջ ամենից առաքինին և հանճարեղն էր։ Նա այստեղ իր քրոջ մոտն էր, բդեշխի կնոջ, երբ իր որդիքը դեռ գերի էին Պարսկաստան։ Այստեղ կարոտակեզ մայրը գգվեց իր որդոցը, արժանացավ նրանց տեսությանը և այստեղ կրթեց նրանց այն հոգվով, որ հետո արտափայլեց Վահանի հերոսական քաջությունների մեջ։

— Այդ ճշմարիտ է. գտիր և մյուս կինը, որ ընդմիշտ պիտի մնա իբրև օրինակ առաքինի հայ կնոջ. նա՝ որ իր հայրենի սուրբ կրոնին հավատարիմ մնալը վեր դասեց թագուհու թագից և ծիրանուց։

— Ասածդ պարզ է, Արմենակ, Շուշանիկի համար ես խոսում, բայց մի՞թե Յուրտավումն էր նա և ոչ Մցխեթ կամ Տփխիս։

— Այստեղ է հարսնացել և այստեղ նահատակվել նա։ Ես ծանոթ չեմ ձեր ձորերին, բայց եթե ուղիղ է հավաքած տեղեկություններս, մեր դիմացի ձորում շատ հնուց մնացած մի բերդ պետք է լինի, ահա այնտեղ է եղել կալանավորված Շուշանիկը։

Սմբատը տեսնելով, որ ուղիղ է ընկերոջ նկատողությունը բերդի մասին, մնաց վեր քաշվածի պես։ Նրա երևակայությունը թռավ դեպի հին անցյալը։ Մտաբերելով, որ Մամիկոնյան ցեղից դեռ մի մնացորդ կա իրանց ձորերում, և տեսնելով, որ մի այդպիսի պատմական նշանավոր հողի վրա է ծնունդ ու սնունդ առել, այն օդն է ծծել, որ Վահանն է ծծել մի ժամանակ, այն հողի վրա է ման եկել, որին դիպել է Մեսրոպի ոտքերը և ողողվել Շուշանիկի արյունով,— ինքն իր աչքում մի քանի կանգուն բարձրացավ և սաստիկ հուզված ու աչքերը ջրակալած բացականչեց.

— Արմենա՛կ, դու ինձ գժվեցնում ես բոլորովին։ Ես՝ էլ ես չեմ ուրեմն, այլ բոլորովին մի ուրիշ բան։ Գիտե՞ս արդյոք, թե որքա՞ն մեծ է մարդուս երևակայության ազդեցությունը նրա ամբողջ բնության վրա։

— Իսկ դու գիտե՞ս միթե,— ասաց Արմենակը իր փնտրած մարդին գտնողի պես ուրախ ժպիտով։— Ես հենց կարծում էի, թե միայն ես գիտեմ այդ բանը և դեռ չեմ պատահած մեկին, որ մարդուս ոգեկան աշխարհին որևէ նշանակություն տար։ Մեր նյութապաշտական ժամանակում իրական աշխարհից դուրս ոչինչ չեն ընդունում։

— Օ՜... և որքա՜ն սխալվում են։ Ի՞նչ է ուրեմն միտքը։ Կարո՞ղ ենք ասել, թե միտք չունինք, մտածելու շնորհք չունինք, զուրկ ենք հիշողությունից, երևակայությունից, ո՛չ տխրում ենք, ոչ ուրախանում, ո՛չ արտասվում ենք և ոչ ծիծաղում, ո՛չ սիրում ենք և ոչ փնտրում, չունինք ո՛չ հավատալ և ոչ հուսալ, և ուրիշ ո՞ր մեկն ասեմ։ Իսկ այս բոլորը միասին առած ի՞նչ աշխարհ է։ Եվ որքան գաղտնիքներ և ծածուկներ կան այս ոգեկան աշխարհում, որ եթե իրական աշխարհի չափ ուսումնասիրվեր, ով գիտե, թե ոգեկան ջերմություն, լույս, էլեկտրականություն, մագնիսականություն և ուրիշ մեզ անհայտ զորություններ ևս չգտնվեին։

— Ես հավատացած եմ, որ այդպես էլ կլինի։ Հին ալքիմիան, աստղաբաշխությունը և ուրիշ շատ ցնորական բաներ վերջ ի վերջո գիտություն դառան, ինչպես որ կռապաշտությունը՝ աստվածապաշտություն։ Ինչ ասել կուզի, որ մեր փալչիների ու ջադուքյարների արարքներն էլ հետազոտելով՝ ժամանակին գիտության կերպարանք կառնեն։

— Ինչ կուզես ասա, ամեն հրաշքի հավատում եմ, թեև բացատրել չեմ կարող։ Այսքանը միայն գիտեմ, որ ոգին ոգիով է ոգիանում, և հրաշքը հրաշքով կատարվում։ Ինչպես որ ֆիզիկական երևույթների մեջ մի անմիջական կապ կա, պատճառ և հետևանք փոփոխակի հաջորդում են իրար, ճիշտ այսպես էլ ոգեկան երևույթներն են իրար կապակից։

— Շատ ուղիղ է նկատողությունդ, Սմբատ. ճշմարիտ որ՝ ոգին ոգով է ոգիանում, և հրաշքը հրաշքով կատարվում։ Դիր, օրինակ, մի ընկեցիկ, որ հրաժարված լինի մարդկային հասարակությունից, կորած, մոլորած, ընկճված,— հավատացրու նրան, որ նա հարազատ զավակն ու ժառանգն է Դավիթ մարգարեի, նա կերևակայե ինքն իրան մի արքայազն...

— Անշո՛ւշտ... Եվ ի՞նչ հրաշքներ, ի՞նչ քաջություն ասես, որ նա չգործե իր ժառանգությունը ձեռք բերելու համար։ Եվ եթե չհասնի էլ իր նպատակին, այսուամենայնիվ ահագին ակոս կծրե մարդկային պատմության մեջ։ Շեքսպիրը, այդ մարդկային հոգու խոր թափանցող մարդը, զուր չէ իր Մակբեթի ձգտման ուժիթ պատավ կախարդուհիների նախագուշակությանը վերագրում։ Եվ քանի՛ քանիսներն են եղել պատմության մեջ այսպիսիք։ Ուրեմն մի նախագուշակություն մարդու հոգուն և՛ կենդանություն է տալիս, և՛

մահ։ Ես չեմ կարողանում ինձ երևակայել այնպիսի ոգեկան ազդեցություններից ազատ մարդ։

— Ես է՞լ չեմ կարող։ Մի՞թե կարելի՞ է, որ մարդ իր ստվերի մյուս կողմը ցատկե։ Մարդուս մարմինը հոգու անբաժան ստվերն է։ Մարմնի բոլոր ձևափոխությունները հոգու շարժումների ստվերներն են։ Ինչպես որ մարմնի վրա եղած արտաքին ներգործությունն էլ ազդում է մարմնի վրա, այսինքն նրա գործողությունների, նրա լավ կամ վատ արարքների վրա։

— Բայց իմ միտքն այդ չէր, Արմենակ, ես ուզեցա ասել, որ ինչ մարդ ուզում է թող լինի, նրան կարելի է ոգի տալ, ոգևորել, հուսահատության հասցնել, ինքնապատվությունը մեռցնել, հույս ու հավատ ներշնչել նրա մեջ, ուժ ու աշխույժ տալ նրա գործունեությանը, և սրա հակառակ՝ նրա սիրտը կոտրել, մի խոսքով՝ կարելի է և՛ կյանք և՛ մահ տալ նրան։ Եվ գիտե՞ս ինչու համար եմ ասում այս։ Քո մի փոքրիկ նկատողությունդ, թե այստեղ են եղել Աշուշան, Մեսրոպը, Վահանի մայրն իր որդոց հետ, գուցե Ղազար Փարպեցին էլ նրանց հետ, Շուշանիկի նահատակությունը,— այդ բոլորը ինձ վրա այնպես ազդեցին, ինչպես կազդեին մի դյուրազգաց աշակերտի վրա։ Արանից գալիս եմ ես այն եզրակացության, որ գրական կրթությունը մեզանում ծուռ ճանապարհով է գնում։ Նրա նպատակն է որպես թե ժողովրդին ինքնաճանաչության բերել, բայց այդ ինքնաճանաչությունը պետք է լինի լավ կողմից։

— Իհարկե. վա՛յ այն մարդին, որ ինքն իրան վատ կողմից է ճանաչում։

— Ահա՛, հենց այդ էի ուզում ասել։ Ինքնաճանաչությունը կրթության գործում պետք է լինի լավ կողմից։ Ում ուզում է լինի, ազգի թե անհատի, որքան վատաբանես, այնքան կվատանա։ Լավ դաստիարակը երեխայի աննշան վատ հատկությունները չտեսնելու կդնե և նրան վերացնելու համար կգրգռե նրա լավ հատկությունները, որոնք զորանալով՝ կխեղդեն վատ հատկություններին. մինչդեռ եթե վատի վրա դարձնես ուշադրությունդ, միշտ վատը երեսովը տաս, հանդիմանես, կշտամբես, ասել պե՞տք է, որ նա բոլորովին կփչանա։

— Նկատողությունդ շատ ուղիղ է և շատ կարևոր, որ գիտենար ամեն մի ծնող, ամեն մի դաստիարակ և ամեն մի գրող...

— Դու հիշում կլինիս իհարկե, թե ի՞նչ էինք կարդում մենք մեր աշակերտության ժամանակ,— շարունակեց Սմբատը ընկերոջ

հավանությունից խրախուսված և ոգևորված,— մենք կարդում էինք Ազգասեր, Բանասեր, Եղբայրասեր, Հորդորակ մանկանց, Որդայթ Փառաց, Հրավիրակներ Արարատյան և Ավետյաց երկրի, Նահապետի և Կոմիտասի երկերը և սրանց նման բաներ։ Ինչ ասել կուզի, որ դրանց ոգովն էլ զարգանում էինք։ Բայց մեկ էլ հանկարծ գոռացին, թե այդ չէ՛ ինքնաճանաչության ուղիղ ճանապարհը և ընկան մի այլ բոլորովին դարիվայր տանող ճանապարհ և սկսեցին գլխապառաո գլորվել դեպի ցած և ցած։ Խոստովանում եմ, որ առաջին ճանապարհը շատ էր դարիվեր և դարիդուրս, բայց երկրորդն էլ շատ է գլխիվայր։ Կրթության ճանապարհն իր ուղիղ շավիղն ունի, որով կարելի է գնալ անսայթաք, առանց վերուվայր թռչկոտելու։

— Նկատողությունդ շատ ուղիղ է, Սմբա՛տ, բայց մի բան չպետք է մոռանալ երբեք։ Ինքդ ասացիր, որ ինչպես ֆիզիկական աշխարհի երևույթների մեջ պատճառ և հետևանք կապակից են միմյանց, նույն օրենքը կա և ոգեկան աշխարհում։ Շոգեշարժը գտնելուց առաջ մարդիկ օգուտ էին քաղում քամու ուժից, բայց միշտ սպասելով, թե ե՛րբ կփչի քամին և դեպի ո՛ր կողմ։ Բարոյական կյանքի նավի համար շոգեշարժ չի գտնված. նա դեռևս այս ու այն կողմից փչած հողմերի ձեռքին մի խաղալիք է։ Ինչպես որ կան մարմնական համաճարակ ցավեր, նույնպես կան և ոգեկան ցավեր, որոնք քամու պես տարածվում են ժողովրդի մեջ ո՛վ գիտե՝ որտեղից և ինչպես, և այս բանը կրկնվում է պարբերաբար։

— Այդ ես լավ չեմ հասկանում, Արմենակ. դու ինձ բոլորովին նոր բան ես ասում։ Ինչպե՞ս թե համաճարակ ոգեկան ցավեր...

— Այդ այն ցավերն են, որոնց ազդեցության տակ զանազան հեղաշրջումներ են լինում կյանքի մեջ։ Ի՞նչ է նշանակում, օրինակ, բարկանալ, բորբոքվել, մոլորվել, անտարբեր գտնվել, ոգևորվել, սիրահարվել, ատելություն զգալ, շահասեր դառնալ, անձնվիրություն ստանալ և այլն։ Եվ այս ամենը միևնույն անհատի մեջ պատահո՞ւմ է թե ոչ։ Ինչ հեղաշրջում որ լինում է մի անհատի ոգեկան աշխարհում, նույնը պատահում է և մի հասարակության, մի ազգի և մինչև անգամ ընդհանուր մարդկության մեջ։ Տեսնում են՝ հանկարծ հասարակական կյանքն ընդարմանում է և ոչինչ կյանքի նշան չի ցույց տալիս, մեկ էլ հանկարծ կենդանություն է ստանում գարունքահան եղած անասունի պես։ Հանկարծ վարակվում են այս և այն մոլությունովը և մեկ էլ սթափվում և զգում իրանց հանցանքը։ Նոյի ժամանակ մարդիկ այնքան անբարոյականանում են,

որ պետք է լինում նրանց ջրհեղեղով ջնջել։ Սոդոմն այրվում է, որ մյուս քաղաքները չվարակվին նրանից։ Ուրեմն կատաղության հասած բարոյական ցավեր կան, որոնք խոլերի և չումի նման երևում են պարբերաբար։ Բոլոր ասպատակությունները, կռիվները, պատերազմները, կրոնական և քաղաքական հեղաշրջումները ուրիշ բան չեն, բայց թե համաճարակ ոգեկան ցավերի արդյունք, թեկուզ իրանց ծագումը մարմնականից լինին առած։ Այս երևույթները կյանքի և գիտակցության արդյունքներ չեն, այլ ընդհանուր հոգեկան տրամադրության։

— Քո այդ տեսությունից դուրս է գալիս, որ ուրեմն կրթության և ուսման ազդեցությունից դուրս մեզ անհայտ ուժեր կան, որոնք կրթությունից ավելի են ազդում։ Էլ ինչո՞ւ են մեզանից պահանջում, որ մենք բարոյակիրթ սերունդ պատրաստենք, երբ դաստիարակությունն անզոր է անբարոյական հոսանքների առաջն առնելու և բարոյական ցավերից պատսպարելու։

— Այդ պահանջի մեջ մեծ սխալ և խոշոր հակասություն կա։ Այսօր այս են պահանջում, վաղը մի ուրիշ բան, նայած թե մարդկանց ճաշակն ու հասկացողությունը որպիսի կերպարանք է ստացել։ Ո՞ր ընդհանուր ցավի տրամադրության տակ է գտնվում։ Եթե կրթության խնդիր չլիներ մեջտեղը, այլ միայն առողջության, մարմնի առողջության, այն ժամանակ առողջապահիկ հնարների կդիմեին, և ինչպես մի որևէ համաճարակ մարմնական ցավից ազատ մնալու համար մաքրում են տները, փողոցները, ուտելիքներն ու խմելիքները, այդպես կվարվեին և բոլոր այն առարկաների վերաբերությամբ, որոնց ապականությունից ապականվում է և կրթվող սերնդի հոգին ու միտքը։ Բարոյակիրթ սերունդ պահանջող հասարակությունը կամ ազգը պետք է նախ ինքը մաքրվի իր բարոյական ախտերից, այլապես ինքն էլ չի հասկանում, թե ի՛նչ է պահանջում, այսինքն, իր պահանջած առարկայի մասին ուղիղ և առողջ գաղափար չունի, այլ սխալ, թույլ և հիվանդոտ։

— Ես հիմա հասկանում եմ քո ասածը։ Նկատողությունդ ուղիղ է։ Բայց ի՞նչ ես կարծում, քո հայտնած մտքով մի՞թե միայն դու ես վարակված։ Եվ մի՞գեն կարելի չէ այդ մտքով վարակել և ավելի շատերին։ Երևի հասել է ժամանակը, որ հիմա ավելի խոր նայենք մեզ վրա, քննենք բարոյական հակումների օրենքները, որպեսզի կարողանանք նրանց ազդեցությունը հոգուտ մեր բա-

բոյակրթությանը գործ դնել։ Ավելի լավ, որ ոգեկան հակումները համաճարակ են և վարակիչ։

— Բանն էլ գործադրությունն է հենց, որ շատ դժվար է։ Ենթադրենք, թե դու մի վիպասան ես, ի՞նչ ուղղությամբ կգրես, որ ընթերցողներդ բարոյակրթվին։

— Դժվար հարց ես առաջարկում։ Ես վիպասան չեմ և չգիտեմ մինչև անգամ, թե ինչպես են թխվում մեղանում վեպերը։

— Իսկ ես գիտեմ, այդ ցավիցը մի քիչ իմ մեջ կա։ Վիպասան է եղել գրողը, թե հրապարակախոս կամ բանաստեղծ, ամենքն էլ միևնույն ընդհանուր տրամադրության տակ են գտնվում. Ընդհանուր տրամադրությունը մի զորեղ հոսանք է, մի քամի, որ ով գիտե՝ որտեղից է փչել. ահա այդ հոսանքովն են վազում ամենքն էլ, և վազողներից ով որ ամենի առջևն է, նա ասվում է հառաջադեմ, ով որ հետինը՝ հետադեմ. ով որ չի մասնակցում ընդհանուր արշավանքին, ասվում է հետամնաց։ Բայց այդ քամին հանկարծ կփչի հակառակ կողմից, և այն ժամանակ վազողների դերերը կփոխվին, ինչ որ առաջ հետադիմություն էր, այն կլինի հառաջադիմություն։ Ուրեմն կուզես գրող եղիր, կուզես վարժապետ, ընդհանուր տրամադրության դեմ ոչինչ չես կարող անել, կարող ես միայն սպասել, որ քամին դեպի քո ուզած կողմը փչե։

— Հիմա ինչպե՞ս ես նկատում, քամին մեր ուզա՞ծ կողմն է փչում, թե՞ հակառակ։

— Ես հիմա նկատում եմ, որ մեր գրականության մեջ տիրապետող բացասական ուղղությունը ջուխտ ոտքով ճահճի մեջ է ընկել։ Թերթում ես այս, թերթում ես այն և կարծում ես, թե մի մեծ հիվանդանոցի մեջ ես պատում, սենյակից սենյակ ես մտնում և նորանոր ցավագարների հանդիպում։

— Ո՜հ, հազիվ հասար իմ ուզած կետին։ Ուրե՛մն դու ինքդ էլ ես նկատում, որ բացասական ուղղությունը հասցնում է եսականության, որ իրանից դուրս ոչ մի արժանավորություն չի ճանաչում։

— Այո՛, և այդ ուղղությունը շուտով կփոխվի անաչառ քննադատության, լավին լավ ասելով, վատին վատ։ Եվ ինչպես որ հիմա ամեն լավի համար աչք խփած շինծու և հրեշացրած վատություններ են դուրս բերում, կսկսեն լավերը նկատել ու նրանց դուրս բերել իբրև օրինակելի անձնավորություններ։

— Եվ որ իմ ուզածը կլինի։ Չէ՞ որ ես ուզում եմ, որ ինքնաճանաչությունը լինի լավ կողմից։ Բայց կգտնվի՞ն արդյոք լավ մարդիկ։

— Եթե մեր գրողները վատ տիպ ներկայացնելու համար մեծ ջանք են գործ դնում փնտրելու համար, և գտածներն էլ լինում են բացառիկ կամ չեղած հրեշներ, այդ արդեն ցույց է տալիս, որ մեզանում վատերի թիվը շատ քիչ է։ Ի՞նչ ես կարծում, ես ու դու վա՞տ մարդիկ ենք։

— Բայց մենք հաշիվ չենք, մենք՝ վարժապետներս, առհասարակ լավ մարդիկ ենք։

— Մի՞թե մեր այն ընկերները, որոնք վարժապետ չեն, այլ քահանա, վա՞տ քահանայք են։

— Ընդհակառակն, շատ արժանավոր քահանայք են։

— Մի՞թե մեր այն ընկերները, որոնք ծառայող են, վա՞տ մարդիկ են։

— Նրանք էլ են լավ։

— Մի՞թե նրանք, որոնք վաճառական են կամ արհեստավոր, վա՞տ մարդիկ են։

— Նրանք էլ են լավ։

— Հավատացի՛ր, Սմբա՛տ, ամենքն էլ լավ են ջոկ-ջոկ վերցրած, միայն դրանց իրար հետ միացնող մի կապ, մի կարգ չկա։ Խոստովանում եմ, որ մենք մի անկարգ և անկապ ժողովուրդ ենք, և այդպես ենք եղել նույնիսկ Վաղարշակի օրով, երբ նա գրում էր իր եղբորը մեր անկարգության մասին, լավ միտս չէ, թե ինչ խոսքերով։

— Սպասի՛ր, ես հիշում եմ այդ կտորը. «Ո՛չ կարգ ինչ լեալ աստ յայտնի,— ասում է— և ոչ մեհենից պաշտամունք, ոչ գլխաւորաց աշխարհիս առաջինն յայտնի է և ոչ վերջինն, և ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառնիխուռն ամենայն և վայրիվերոյ»։

— Հա՜, հենց այդ էի ուզում ասել, մի՞թե հենց հիմա էլ այնպես չե՞նք, ի՞նչ օրինավոր կարգ ու կանոն կա մեր ընտանիքի մեջ, մեր հասարակության մեջ, մեր դպրոցի ու գրականության մեջ, նույնիսկ մեր վարժապետների վերաբերությամբ, որոնցից մեկն ստանում է մի քանի հազար, չգիտես իր ո՞ր արժանիքի համար, իսկ մյուսն այնքան չի ստանում, որ իր գդակն ու կոշիկը նորոգե։ Ուղիղն ասած, ես շատ էլ ընդդեմ չեմ անկարգությանը. այս ցույց է տալիս, որ մենք դեռ կիսավայրենի և կիսակիրթ ենք, որ ասել է, դեռ չենք ծերացել, ուրեմն կարող ենք լավ կարգերի և լավ ապագա-

չի հույս ունենալ։ Քեզ օրինակ մեջ։ Նոր լեզվի անկարգությունը, որ իր աչքում թերություն չի ամենևին, այլ տհաճություն, համբակություն. և զարգանում է արձակ համարձակ, առանց ենթարկվելու որևէ կարգ ու կանոնի։

— Երանի՜ քեզ, Արմենա՛կ, որ այդքան լավատես ես ու լայնասիրտ. դու ներողամիտ աչքով ես նայում մեր այն թերությունների վրա, որոնցից վրդովվում են շատերը գժվելու չափ։ Այս երևի նրանից է, որ քո կաշին դեռ չի դաղվել։ Ի՞նչ ես կարծում, ուրեմն մեր Ավագն է՞լ է լավ մարդ. .

— Իհարկե, լավ մարդ է, հապա ի՞նչ ես կարծում։ Բանը գործի արտաքին կողմին նայելը չէ, այլ ներքին դրդումին, որից հառաջ է գալիս արտաքինը։ Ավագն այժմ մոտ հիսուն տարեկան մարդ է։ Նա մտածում է այսպես. եթե ես սրանից երեսուն տարի առաջ լինեի բաժանված, այժմ ես ինձ համար ապահով վիճակի տեր կլինեի։ Այսուհետև էլ հույս չկա, որ ես կարենամ մի բան շինել։ Մեր նյութականը հավասար բաժանելով, բարոյականը մնում է անբաժան։ Ջահել եղբայրս իր ջահելությունից ինձ բաժին չի տալիս, ուժեղն իր ուժից ինձ բաժին չի տալու, ուսումնականն իր ուսումից ինձ բաժին չի տալու։ Քանի որ այդ մարդիկը բարոյապես և ֆիզիկապես ինձանից հարուստ են, թո՛ղ երթան իրանց դրամագլխով գործ տեսնեն, էլ ի՞նչ են ուզում ինձանից։ Նա տեսնում է մեր հագին սերթուկ ու շապո, կարծում է, թե դրանով արդեն մենք մեզ ապահովացրել ենք. չգիտե խեղճը. թե ինչ թանգառ ապագա է սպասում մեզ՝ վարժապետներիս։ Բայց նա ի՞նչ մեղավոր է։ Եթե այսօր մեզ չի վարձատրում ազգը, որին երկար տարիներ ծառայել ենք ամենայն անձնվիրությամբ և զոհաբերությամբ, այդ վարձատրությունն ինչո՞ւ ենք պահանջում մեր եղբայրներից։ Նրանք ի՞թե իրավունք չունին ասելու, թե մեր ցանածը մենք պիտի հնձենք, իսկ դուք էլ գնացեք այնտեղ հնձեցեք, ուր որ ցանել եք։ Ահա թե ինչու է արդար Ավագը, բայց արդարանալու հնար չունենալով՝ նա պիտի դիմի կոպիտ ուժի, պիտի հարձակվի և պաշտպանվի բնազդմամբ, ներքին դրդմամբ և ինչ էլ որ անե, մեղավոր չէ իմ կարծիքով...

Զարմանալի մարդիկ են մեր իդեալիստ վարժապետները, ես իմ ասածը՝ մեկ-մեկ պաշտելի անձնավորություններ են։ Սմբատը շատ գոհ և բավական մնաց Արմենակի պաշտպանողական ճառից։ Նա պատրաստ էր բոլորովին զրկվելու հայրական ժառանգությունից, միայն թե այդ առիթով իր մեծ եղբայրն այնպիսի բան

չանի, որ անպատվություն բերի իրանց օջախին։ Քանի որ ծառն իր պտուղից է ճանաչվում և նախնյաց լավ ու վատ հատկությունները ժառանգաբար անցնում են որդոց որդի, ապա ուրեմն բարի ժառանգից կարելի է գուշակել, որ նա բարի ծնողաց և բարի նախնյաց արժանավոր զավակ է և բարի ժառանգների էլ նախահայր կդառնա։ Այդ իսկ պատճառով Սմբատի համար եղբոր անունն անարատ պահելը օջախի և ազգի պատվի պաշտպանության խնդիր էր։

6

Երբ որ Արմենակ Ազատյանը հեռացավ, Սմբատը վերացական և գաղափարական աշխարհից կրկին ընկավ զգայական և իրական աշխարհի մեջ։

Արմենակի ասածը, թե՝ «Մենք մի անկարգ ազգ ենք», Սմբատի համար դառավ մի նոր բնաբան, և այնուհետև ո՛ր կողմ նայում էր, միայն անկարգություն էր տեսնում։

Մարդիկ կան, երբ մի նոր գաղափար են ստանում, մի նոր միտք ըմբռնում, բոլոր առաջվան գիտցածները մոռանում և ուրանում են, և մինչև անգամ սկսում են հարձակվել իրանց առաջվան ունեցած և փայփայած գաղափարների վրա։

Այս տեսակ մարդկանց գլխումը երկու գաղափար միասին հաշտ կերպով չեն տեղավորվում, այլ սկսում են միմյանց դուրս մղել ընդդիմահարության օրենքով։

Այս մի ընդհանուր պակասություն էր Սմբատի ժամանակակից մտածողների մեջ, որոնց սիրտը շատ նեղ էր և մտավոր տեսությունը շատ կարճ։ Այս պակասությունից ազատ չէր և ինքը Սմբատը։

«Մեզ հարկավոր է միայն բարեկարգություն և ուրիշ ոչինչ՛,— ասում էր Սմբատը և այս բնաբանի վրա մի ինքնուրույն տեսություն հիմնում, որ քարոզե սրան-նրան։

«Պիտի ասեն, որ բարեկարգությունը արդյունք է, հետևանք է և ոչ պատճառ։ Առանց ուսման և գիտության ի՞նչ բարեկարգություն կարելի է սպասել։ Ինչո՞ւ չասել, թե ընդհակառակն՝ ուսումն է հետևանք բարեկարգության, թե բարեկարգություն կարող է լինել և առանց գիտության, մինչդեռ ո՛չ մի գիտություն կարող չէ

ծաղկել անկարգության մեջ։ Մի՞թե մարդիկ, քանի որ չունեին ո՛չ գիտություն, ո՛չ ուսում, խո՞տ էին արածում, չունե՞ն ոչինչ կարգ, ոչինչ կանոն, ոչ մի սրբազան սովորություն։

«Եվ ի՞նչ բան է ուսումը։ Բացի գրաչարչիներից և մտքի փերեզակներից ո՞ւմ է մի օգուտ տվել այդ ուսումը։ Ի՞նչ օգուտ է տալիս մեր այժմյան անկարգ ու անկանոն ուսումը, մարդու հոգին ու մարմինն ապականող ուսումը։ Մի՞թե խելքի ու շնորհքի տեր լինելը ուսման գործ է. մի՞թե քիչ ուսումնականներ կան, որոնք բոլորովին մերկ են մարդկային բարոյական զարդերից և զուրկ բնության տված բոլոր ձիրքերից։ Ի՞նչ ափեղցփեղ բան ասես, որ ուսման շարքը չի ընկել և դպրոց ասածդ շինել մի գոմ, ուր ամեն տեսակ գրաստ կարելի է համարվում կապել։ Ի՞նչ անպետք լեզուներ, ի՞նչ սո՛ւտ ու սխալ պատմություններ, ի՞նչ հիմարություններ և այն էլ որքա՞ն, որքա՞ն։ Եթե բոլորի կեսը բարձես մի ուղտի վրա, խելՃ անասունի մեջքը կկոտրի, բայց որ այսուամենայնիվ ուսանողները տանում են այդ բեռը, դրա պատճառն այն է միայն, որ ավանդած նյութը նրանց ուղեղներն իրանց մեջ չեն պահում, չեն մարսում, որ անհնարին է, այլ նորից դուրս են վիժում ձայնագիր մեքենայի պես և ներս ածողների երեսին զարկում։ Ի՞նչ ուսում է այն ուսումը, որի ո՛չ հատկությունն է որոշած, ո՛չ քանակությունը, ո՛չ օգուտն է ապացուցված և ո՛չ վնասը հերքված։

«Բնության մեջ ո՛ր կողմ նայում ես՝ կարգ ես տեսնում. կարգով է կառավարվում ամբողջ տիեզերքը։ Չկա ո՛չ մի անասուն, ո՛չ մի սողուն և թռչուն, որ անկարգ լինի։ Եվ ինչի՞ցն է, որ միայն մարդն է անկարգ, եթե ոչ իր ստացած սուտ ու սխալ ուսումից, որից բարեբախտաբար ազատ են անբան անասունները»։

«Էլ ինչո՞ւ համար է տված աչքը, որ չկարողանա զանազանել ծուռն ու շիտակը։ Մի՞թե հայերն այնքան խելք չունի՞ն, որ իմանան, թե շիտակ և լայն փողոցը լավ է և հարմար իր անցուդարձի համար, քան նեղն ու ծուռնումուռը, որոնցով սայլ անցկացնել չի լինում։ Ինչո՞ւ կարգով չեն շինում տները, այլ խառնիխուռն և միմյանց վրա դարսված։ Մեր կենցաղավարության ո՞ր մասի մեջ է երևում մեր պապերի ուսման բարերար և բարեկարգող ազդեցությունը։ Ինչո՞ւ այդ դպրությունը ոչ մի բարեկարգության հետք չի թողած՝ բացի փլատակներից և ավերակներից։

«Եվ ինչպե՞ս կարելի է, որ տները կարգով լինին, քանի որ ամենայն ինչ անկարգ է. ինչպե՞ս կարելի է, որ փողոցները շիտակ

լինին, քանի որ ամենայն ինչ ծուռ է։ Չէ՞ որ անկարգության և անճոռնիության մեջ էլ կա ներդաշնակություն։ Ուղտի միայն ջլերը չէ ծուռ, այլ ամեն տեղը։

«Մեր պատմական անկարգության մասին Վաղարշակի նամակն է ապացույց բերում Արմենակը։ Մոռացա նրան ասել, թե Ն. Կայսրն էլ որ եկավ. մեր մայր աթոռումն անգամ ոչինչ կարգ ու կանոն չգտավ։ Մեր սահմանադրական վանքը ոչինչ սահմանադրություն չուներ, այլ ամեն ինչ ավանդությունների և ադաթների վրա էր հիմնում։

«Ո՞վ կարող է ասել, թե ինչպիսի՞ ադաթներ ունինք, և ո՞ր ադաթը ի՞նչ ծագումից է։ Ամեն գյուղ, ամեն քաղաք իր համար մի ջոկ ադաթ ունի,— ո՛րը թաթարի է, ո՛րը թուրքի, ո՛րը պարսկի է, ո՛րը արաբի, ո՛րը հույնի է և ո՛րը հռոմայեցու, իսկ բուն հայկականը—ասված տա։

«Ինչո՞ւ բաժանության համար մի անխախտելի կարգ չկա սահմանած, որ այլևս ասել-խոսել չլինի, այլ ամեն մարդ իր բաժինն ստանա և մի կողմ քաշվի...»։

Չնայած, որ անկարգությունն այնքան դրավել էր Սմբատին, որ նրա մեջ գտնվում էր և ներդաշնակություն, որ ոչ ոք նշմարած չէր, բայց հենց որ հասնում էր բաժանության, այստեղ անկարգության առաջնությունը մոռանում էր և ամեն շարիք, նույնիսկ անկարգությունը անբաժանության և անարդար բաժանության արդյունք համարում։ Սմբատի համար կարգ թե անկարգություն, բոլորն էլ գալիս էին բաժանության վրա կռթնում, համարելով նրան մի այնպիսի ամուր հենարան, որի վրա պիտի հաստատվեին ամենայն տեսակ կարգ ու կանոն։

«Ամբողջի մեջ ներդաշնակություն կլինի,— մտածում էր Սմբատը, եթե մասերի մեջ արդար բաժանություն լինի»։ Ամբողջի մեջ միություն կլինի, եթե մասերի մեջ արդար բաժանությունը լինի։ Ամբողջն առողջ կլինի, եթե մասերի մեջ արդար բաժանություն լինի։ Ամբողջի մեջ կտիրե ամենախիստ կարգ ու կանոն, եթե մասերի մեջ արդար բաժանություն լինի։ Այս մի երկրաչափական բանաձև է, և ամենայն ամբողջության կվերաբերի, իբրև տիեզերական մի օրենք։

Մարդու հոգու և մարմնի կանոնավոր զարգացման կարևորությունը ամեն բանից գերադասում էր Սմբատը և ամենից կարևոր

համարում։ Այս խնդրի վերաբերությամբ առիթ չէր ունեցել իր միտքը հայտնելու ո՛ւմևիցե, բայց այս անգամ բանն այնպես եկավ, որ պիտի հայտներ իր ամուսնուն։

Սմբատի կինը՝ Ոսկեհատը, քաղաքացի էր, քնքուշ մեծացած, ֆիզիկական կոպիտ աշխատությունից հեռու մնացած, և այն գաղափարն ուներ, թե այդ բոլորը մշակ կանանց գործ էր։ Բավականաչափ ուսում ուներ, և շատ գրքեր էր կարդացել և կարդում էր շարունակ, բայց որովհետև մարդս սովորաբար իր կարդացածից այն է հավանում և սեփականում, ինչ որ իր սրտին ու խելքին համեմատ է գտնում, այս պատճառով շատ խելացի մտքեր իր կարդացած գրքերից թողել էր անուշադիր և շատ հիմարություններ սեփականել։ Սմբատը հետամուտ չէր լինում նրա կարդացածին և չէր միջամտում կնոջ զարգացման գործին։

Գեղեցիկ էր Ոսկեհատը, և ինչպես ամեն գեղեցիկ կին, նա ևս մեծ նշանակություն էր տալիս իր գեղեցկությանը և վախենում էր այն բոլոր բաներից, որոնք կարող են նրա գեղեցկության վրա վատ ազդեցություն գործել, ինչպես են, օրինակ, արևը, ցուրտը, հնոցի և թոնրի կրակը, տաք ջուրը, լամպի լույսը, շատ ուտելը, երեխային ծիծ տալը։ Չէր ուզում ո՛չ գիրանալ և ոչ նիհարել, բայց և այնպես՝ նա հետզհետե նիհարում էր, դալկանում։

Մարդ և կնիկ իրար շատ սիրում էին և շատ հարգում։ Միմյանց սիրտ ու միտք հասկանում էին, միմյանց սրտի ուզածի պես շարժվում և այս պատճառով ոչ մի անպատիվ վարմունք մեկի կամ մյուսի կողմից տեղի չէր ունենում։ Բայց հիմա նախապատրաստվելով այնպիսի մի վիճակի համար, որի մեջ մինչև այսօր եղած չէին, Սմբատն ուզում էր իրանց կենցաղավարությունն այնուհետև վարելիք կյանքին հարմարեցնել, որ իր վերաբերությամբ այնքան դժվար չպիտի լիներ, ինչքան կնոջ։

— Գիտե՞ս Ավագն ի՛նչ է ասում, Սմբատ,— ասում է Ոսկեհատը։— Կարծես Արմենակը նրան խրատած լինի, թեև մեզ ոչինչ չասաց գնալիս։ Նա այժմ փափկած է երևում և ուզում է բաժանվիլ, բայց տե՛ս ի՛նչ է ասում։— Դուք, ասում է, որ ջոկ լինիք, ինչպե՞ս կարող եք կառավարվիլ. ո՛չ դու ես պետք գյուղական պարապմունքի համար, ո՛չ քո մարդը։ Թո՛ղ այն երկուսը ջոկ-ջոկ դուրս գան, իսկ դուք՝ ինձ հետ։ Սմբատն էլի կշարունակի իր ուսուցչությունը, իսկ ես տունը կկառավարեմ։ Դու էլ քո կարն ու գործը կանես, իսկ մյուս գործերը, որ քո բանը չէ, Եղսանը կանե, ինչպես

միշտ արել է։ Եվ ճշմարիտ է ասում Ավագը, Սմբա՛տ, եկ համաձայնիր։

— Ոչ, այդպես լավ չի լինի, հոգի՛ս,— պատասխանեց Սմբատը,— ով գիտե էլի ինչ կողմնակի նպատակ ունի Ավագը, որ ուզում է ինձ իր կողմը քաշե։ Նա կարծում է, որ այդպիսով ինքը կշահվի, բայց երբ տեսնի, որ ինքը օգուտ չունի, էլ չի պահիլ ոչ ինձ, ոչ քեզ և պիտի մի նոր կռիվ սկսի։ Նա իզուր էր կարծում, որ ես գյուղական կյանքին պետք չեմ։ Ես վարն էլ լավ կանեմ նրանից, ցանքն էլ։ Եվ այդ պետք է ֆիզիկապես կազդուրվելու համար։ Մի՞թե լավ բան է, որ հիմա չեմ կարողանում մեկ թիակ բանեցնել, իսկույն կոներս թուլանում են և սկսում ցավել։ Կացին չեմ կարողանում բանեցնել, իսկույն ձեռներս փքփքոտում են, մեջքս ցավում։ Այսպես էլ ահա մյուս թեթև բաներն անգամ չեմ կարողանում շինել։ Բայց այս ի՞նչ է նշանակում, ի՞նչ բանի հետևանք է։ Սա մի անբնական և միակողմանի մտավոր պարապմունքի հետևանք է, որ հիվանդության չափ վնասակար է մարդուս, և հարկավոր է առողջացնել։ Իսկ այս կարելի է, փոքր առ փոքր ընտելանալով ֆիզիկական աշխատանքի։

— Իսկ ես ինչպե՞ս անեմ,— ասաց կինը։

— Դու էլ ինձ պես, դու էլ կսովորես աշխատելը։ Մի՞թե չես տեսնում, թե որքա՛ն առողջ են մեր հարազատները և որքա՛ն տկար ես դու. մի՞թե նրանց թշերի կարմրությունը վատ է, իսկ քո թշերի դալկությունը լա՞վ։

— Բայց նրանք կոպիտ են ամեն բանում. ես է՞լ կոպտանամ ուրեմն։

— Ի՞նչ վնաս ունի, եթե մինչև անգամ կոպտանաս էլ։ Կամ ի՞նչ ասել է կոպիտ։ Գեղեցկությունը նրբության մեջ չէ, այլ առողջության։ Հիվանդոտ վիճակը, հիվանդոտ կազմվածքը ճշմարիտ գեղեցկության հասնել չի կարող։ Ես հիմա չեմ կարողանում մի հավ մորթել, մորթելիս էլ որ տեսնում եմ, վրդովվում եմ։ Ի՞նչ է այս, եթե ոչ մի նյարդային հիվանդություն, ֆիզիկական թուլության հետևանք։ Մի ժամանակ ես ճարպիկ որսորդ էի, անխնա կոտորում էի ամեն պատահած վայրենի, իսկ հիմա նույնիսկ ձուկը չեմ ուզում ջրիցը հանել, սրտիս ցավ է տալիս։ Հիվանդություն չէ՞ սա, հապա ի՞նչ է։ Ո՛չ, այսուհետև ես պետք է հավ էլ մորթեմ, ոչխար էլ, և տեղը եկած ժամանակ՝ չպիտի խղճամ այլևս և պիտի կոտորեմ բոլոր վնասակար կենդանիներին։ Ենթադրիր, որ սայլը ցեխումն է

մնացել, և գոմեշները դուրս կքաշեն միայն այն ժամանակ, երբ մի քանի զորեղ հարվածներ կտաս նրանց։ Հիմա ինչպե՞ս կհրամայես, գոմեշներին ծեծենք, որ սայլը դուրս քաշե՞ն, թե՞ չծեծենք և սայլը թողնենք ցեխումը։

— Իհարկե, եթե չծեծելը հիվանդություն է, առողջանալու համար պետք է ծեծել... բայց գոմեշներին ծեծողը իր կնկան էլ է ծեծում. վա՛յ թե դու այդ էլ սովորես և առողջանալու դեղ համարես, հետո ես ի՞նչ անեմ...

— Եթե դու էլ մեր տան կառավարության սայլը ցեխումը կթողես, այն ժամանակ հարկ կլինի քեզ էլ ծեծել, որ առողջանաս,— ասաց Սմբատը ծիծաղելով և համբուրելով կնոջը...

— Լսի՛ր, Սմբա՛տ,— շարունակեց Ոսկեհատը,— դու հանկարծ ես ուզում փոխվել, բայց ամեն մարդ կարող չէ հանկարծ փոխվել։ Գոնե ես ինձանից այնքան հույս չունիմ, բայց երբ քեզ կտեսնեմ արոտի մաճը բռնած հերկ անելիս, այն ժամանակ ես էլ խոհանոցի շերեփը կառնեմ ձեռքս և քեզ համար խաշիլ կեփեմ. երբ որ քեզ կտեսնեմ բահով փորելիս, ես էլ կովը կկթեմ և քեզ համար կաթնով ճաշ կեփեմ. երբ դու հունձ կանես, կալ կկալտես, կքամես, ես էլ ցորենը կխախալեմ, աղուն կանեմ։ Դու կտանես ջաղաց, կաղաս, կբերես, ես էլ խմոր կանեմ, քեզ համար գաթա կթխեմ։

— Հոգի՛ս, դու ինձ սիրտ տուր, աստուծով ես կանեմ, ինչ որ ասում եմ, դու իզուր ես կասկածում։

— Հավատացիր, Սմբա՛տ, երբ որ մենք մեզ ու մեզ կլինենք ազատ և անկախ, տան բոլոր անելիքը ես ինքս կանեմ. իհարկե մի մշակ կին կունենանք միշտ, դու ինքդ էլ հո՛ առանց ծառայի չես լինիլ։ Ես էլ եմ նկատում, որ ֆիզիկական աշխատանքից փախչողը շարաշար վնասվում է, լինի նա տղամարդ, թե կինարմատ։ Չկարդալով ու չգրելով՝ մարդուս միտքը չի բթանալ, որովհետև միշտ խոսում, դատում և մտածում է. գուցե տեղեկությունների պաշարը միայն քիչ լինի, բայց աշխատելուց փախչելով, թուլանում է նրա ամբողջ կազմվածքը։

— Անշուշտ։ Մի՛ մոռանալ, որ ինչպես թոքերը, նույնպես և ուղեղը ամբողջ կազմվածքի մասերն են։ Ֆիզիկական աշխատանքից զուրկ մարդու ուղեղն ի՞նչ ուժ կարող է ունենալ։ Եվ մթթե միայն ուղեղն ու թոքերն են գլխավորը։ Մենք դեռ լավ չգիտենք մարդուս կազմվածքի շենքը, նրա մասերի կապակցությունը, մեկմյանց վրա ունեցած ազդեցությունը, իրարից կախում ունենալը, նրա ամեն-

թյան եռանդը, չափը։ Ի՞նչ արժե, երբ որ մարդուս քունն անուշ է լինում, մարսողությունը կանոնավոր, ուժը եռ է գալիս ներսը և կրակոտ ձիու նման տեղը հանդարտ կանգնել չի կարողանում, ուզում է վազել, խաղալ, մի ծանրություն բարձրացնել, բանն այնպես է անում, որ կարծես մի անուշ կերակուր լինի ուտելիս մեծ ախորժակով։

— Իրավ որ։ Այս քանի տարի է, ես դեռ ախորժակով հաց կերած չէի։ Անցյալ օրը այգումը լվացք էինք անում, ես բավական աշխատեցի։ Կերակուր չէինք տարել հետներս, այլ միայն ցամաք հաց։ Բայց այնպես լավ թվաց, որ համը բերանումս մնաց։ Քո նպատակն է ուրեմն ապրել այնպես, ինչպես որ պետք է ապրեր մարդ, որ չվնասվեր նրա ո՛չ հոգին, ո՛չ միտքը և ո՛չ մարմինը, որ ինձ քանի անգամ ասել ես։

— Ապրի՛ս, հոգի՛ս, հենց այդպես։ Հեռու լինել քաղաքի զեխ, անբնական և անբարոյական կյանքից, ապրիլ բնության ծոցումը պարզ և անարատ, հողի հետ գործ ունենալ, նրան համարել սնդարար մայր։ Շահաստացության տեսակետից էլ որ նայենք, մեր օգուտն այս է պահանջում։ Ունենալ սեփական տուն, սեփական այգի, սեփական հող, անտուն անտեղ չթափառել մուրացկանի պես։ Այսօր մի ծառ կտնկենք մեր ձեռքով, կխնամենք, կպահենք, մի երկու տարուց հետո նա պտուղ կտա. նոր այգի կդցենք, նորանոր պտղատու ծառեր։ Այսպիսով, թե՛ միշտ գործ կունենանք անելու, և թե՛ արդյունք կստանանք մեր գործից։

— Լավ կովեր կպահենք. ես կպատրաստեմ յուղ, պանիր...

— Ինչո՞ւ չէ. մեղու էլ կարելի է պահել։

— Աբրեշումի որդ էլ... այդ էլ ես կանեմ...

— Եվ ամեն ինչ կատարյալ ձևով։

— Գյուղացոց էլ կսովորեցնենք...

— Իհարկե։ Դեռ ուրիշ բան էլ շատ կարելի է անել։

— Ամառը սար կերթանք միշտ։ Լեռնային օդը շատ առողջարար է։

— Մանավանդ երեխանց համար։ Այնտեղ ազատ կլինեն նրանք խաղ-խաղ մրգեղեն ուտելուց. և եթե ուտեն էլ, կարող են մարսել։

— Զարմանալի բան է. իրավ որ։ Սարումը մարդ քար էլ ո, ուտի, կմարսի։

— Առավոտ-առավոտ տաք-տաք թանե սպաս խփշտելը հազար չայ ու կոֆե արժե։

— Հապա քարե թոնրում թխած գաթան ու նազո՞ւքը... ուտելուց չի կշտանում մարդ։ Հիշո՞ւմ ես, Սմբատ, որ մեկ օր ես ու դու յոթը հաց կերանք Կաթնաղբյուրի վրա։

— Հիշում եմ, որ այն ժամանակ այդ կյանքը քեզ դյուր չէր գալիս։ Ե՛վ վայելում էիր բնության առատաձիր շնորհքը և դժգոհ էիր միևնույն ժամանակ։

— Գիտե՞ս, Սմբատ, կանայք երբ որ մի բախտի մեջ են լինում, ուզում են, որ այդ բախտավորությունը տեսնեն իրենց ծանոթները։ Մենք, քաղաքացիքս, սովորել ենք ապրել առ ի ցույց մարդկանց։ Ջուգվում, զարդարվում ենք և դուրս գալիս փողոց, որ ցույց տանք մեր արտաքին զարդ ու զարդարանքը։ Ամենքս էլ գիտենք այդ, բայց դարձյալ շարունակում ենք միմյանց խաբել, միմյանց շլացնել մեր ունեցածով։ Ես առաջ ասում էի՝ ի՞նչ օգուտ գյուղական երջանկությունը, քանի որ իմ ծանոթների համար այս երջանկություն չէ։ Բայց հիմա ես կաշխատեմ այս նախապաշարմունքից ազատվել և գյուղական կյանքի հետ հաշտվել, մանավանդ որ մեր երևույթց առողջությունն էլ այդ է պահանջում։

— Հոգի՛ս, դու այստեղ բանտարկվածի պես չես լինի կամ վանդակի մեջ։ Քաղաքի ճանապարհը միշտ բաց է մեզ համար։ Երբ ուզենանք, էլի կերթանք տեսնելու մեր ծանոթներին և մեզ էլ նրանց ցույց տալու։ Ձմեռը կարող ենք այնտեղ ամսով էլ մնալ, կերթանք թատրոն, կլուբ, զանազան պարահանդեսներ, եթե կլինին։ Քո բարեկամներդ կպատմեն, թե քանի երեկույթ են ունեցել, ինչքան են տարել ու տարվել, իրանց աղջկերանց ո՛ւմ են տվել, ի՛նչ բաժինք են տվել կամ ի՛նչ բերել, ո՛ւմ կնիկն է մարդուց փախել և ո՛ւմ մարդը կնկանից. ո՛ւմ աղջիկն ո՛ւր է կորել և որտե՛ղ ընկել. ո՛վ է կոտր ընկել և ո՛վ հարստացել, ո՛վ է գժվել և ո՛վ կաթվածք ստացել, ո՛վ է իր տունը կրակ տվել և հարստացել և ո՛վ է անշնորհք գտնվել միևնույնն անելիս և բռնվել։ Կամ ի՛նչն է մոդա և ի՛նչն է մոդից ընկած, ո՛վ է նոր ասպարեզ մտել և ո՛վ է դուրս մղվել նույն ասպարեզից, ովքե՛ր են դիմակները վերցրել և ովքե՛ր դիմակավորվել։

— Բայց ես մի բանից եմ վախենում, Սմբա՛տ։

— Ի՞նչ բանից, հոգի՛ս։

— Ես վախենում եմ, որ դու մի փոքր կազդուրվելուց հետո էլ գյուղումը չմնաս. և բոլոր սկսածներդ կիսատ մնան։

— Այդ ինչպե՞ս, ես չեմ հասկանում։

— Գիտես ի՞նչ ասաց ինձ Արմենակը։ Ես չեմ կարծում, ասաց, որ Սմբատը կարողանա գյուղումը մնալ։ Կմնա մի առժամանակ միայն, քանի որ հոգնած է, հուսահատված ու ղղված։ Բայց հենց որ կազդուրվի, ինքն իրան առողջ զգա, կսկսի ողևորվիլ. այդ ոգևորությունը նույնպես բավականություն կպահանջե։ Սմբատը ֆիզիկական պարապմունքի համար չի ստեղծված, այլ մտավոր և բարոյական։ Ֆիզիկական պարապմունքը կավելացնե միայն նրա եռանդը և կմղե նրան դեպի իր իսկական կոչումը։

— Առավել լավ, հոգի՛ս, եթե այդպես կլինի։ Աշխարհը որ կա, ծով է, իսկ մենք նավակներ։ Թող գյուղը լինի մեզ համար իբրև նավահանգիստ։ Երբ քամին բարեհաջող կլինի, և մենք կտեսնենք, թե կարող ենք կրկին նավարդել, ինչո՞ւ հրաժարվենք։ Ասած է՝ «լավ է գյուղումը առաջինը լինել, քան քաղաքում հետինը»։ Եթե ես իմ մեջ այնքան ուժ կզգամ, որ կարող կլինիմ քաղաքում մի որևէ գործում օգտակար լինել և առաջինների կարգումը լինել, ես ուրախությամբ ինձ կնետեմ քաջամարտիկ զինվորների շարքը։ Ես հավատում եմ մարդուս կոչումին և գիտեմ, որ նա ինչ բանի որ պետք է և հարմար, վերջ ի վերջո նույն բանին կծառայե և նրա համար էլ կմեռնի։ Ո՞վ գիտե, գուցե Արմենակը մի գրական գործ սկսի քաղաքումը և հարկավոր համարե իրան իմ աջակցությունը. գուցե այդ ասպարիզում ես կարող կլինիմ մի բան անել, բայց առայժմ այդ ինձ համար մութն է և անհայտ։ Այժմ ես ամենից շատ կարիք եմ զգում մտքի հանգստության և ֆիզիկական աշխատության։ Մարդուս միտքը հարստահարվում է հողի պես, երբ շարունակ դուրս են ծծում նրա սննդարար տարերքը, առանց հանգիստ տալու։ Եթե մի տարու չափ ես ո՛չ կարդամ և ոչ գրեմ, այդ հանգիստը իմ մտքին կարող է մի քանի տարվան բեղմնավորություն տալ։ Սուտ է, որ ասում են՝ միտքը շարունակ աշխաս եցնելով՝ կսրվի։ Ընդհակառակն՝ միտքն ունի և՛ սնանկանալ և՛ խոպանանալ։ Շարունակ աշխատեցնելով՝ կսնանկանա, շարունակ անգործ թողնելով՝ կխոպանանա։ Ուրեմն աշխատություն և հանգիստ պիտի շարունակ հաջորդեն միմյանց։ Գյուղումը կարող ենք մեր մարմինն աշխատեցնել, իսկ քաղաքում՝ միտքը, այսպիսով եր-

կուսն էլ առողջ կմնան, որովհետև երկուսի մեջ էլ պարապմունքի և գործի արդար բաժանություն կլինի։

— Արմենակի գալն ինձ վրա լավ ազդեցություն ունեցավ։ Ավագին չի կարելի մեղադրել։ Նա բաժանության մեջ արդարություն է որոնում և ոչ իրավունք։ Մենք ժառանգության իրավունքով ենք պահանջում մեր բաժինը, իսկ նա բնազդաբար այդպիսի իրավունք չի ճանաչում, այլ իբրև եղբայր մեզ պես ապրելու միջոց է պահանջում։ Նա իմանում է, որ մենք առանց երկրագործ լինելու էլ կարող ենք ապրել, իսկ ինքը ապրելու ուրիշ միջոց չունի։ Ես կհամոզեմ եղբայրներիս, որ մեր ունեցածի ամբողջ կեսը նրան տանք, իսկ մյուս կեսը մենք երեք բաժին անենք։ Բավական է մեզ մի երկու սենյակ՝ քնելու համար, մի կտոր այգի և մի կտոր հող, մնացածը աստված ողորմած է։ Արդար բաժանություն անելու ո՛չ մի հնարավորություն չկա։ Արդար բաժանություն որ լինի, էլ աշխարհումս աղքատ ու հարուստ չեն լինիլ, ամենքն էլ մի տան զավակների պես կլինին։ Ավելի լավ է հաշտվել եղած հանգամանքի հետ։ Թող ալքատ լինինք, միայն մենք մեզ համար ինքնուրույն և անկախ լինինք և ապրենք ընկերական համերաշխությամբ և ոչ եղբայրական սիրով, որ այլևս գոյություն չունի։

1890

ՀԵՔԻԱԹՆԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ

ԱՆԱՀԻՏ

Ա

Մի ժամանակ Աղվանից աշխարհի թագավորանիստ քաղաքը Պարտավն էր, որ այժմ ավերակ է և ասվում է Բարդա։ Դա գտնվում է այժմյան Գանձակի և Շուշվա մեջտեղը՝ Թարթառ գետի վրա։ Այդտեղ էր Վաչե թագավորի հոյակապ ապարանքը իր ընդարձակ ծառաստանով՝ որ երկարումեկ ձգված էր Թարթառի ափովը։ Այդ հինօրյա արհեստական անտառը բնականից գերազանցում էր իր հսկայական չինարներով ու բարդիներով, որոնց բարձրության ստվերի տակ ծածկվում էին քաղաքի նույնիսկ ամենաբարձր աշտարակները։ Նրա չորս կողմով քաշված ամուր պարիսպը վանդակի պաշտոն չէր կատարում բնավ այն թեթևաշարժ ու արագավազ այծյամների ու եղջերուների համար, որոնք այնտեղ խմբերով զբոսնելու և խաղալու ազատ ասպարեզ ունեին։

Մեկ անգամ Վաչե թագավորի միամոր որդին՝ Վաչագանը, որ մի նորահաս երիտասարդ էր, պալատի պատշգամբի վրա կռթնած, նայում էր իրանց այդ ծառաստանին։ Եղանակը գարնանային էր և առավոտյան արևաբացին։ Աշխարհի բոլոր երգեցիկ թռչունները՝ կարծես խոսք մեկ արած՝ հավաքվել էին այդ ծառերի վրա, որ մի

ընդհանուր նվագահանդես սարքեն և խրար հետ մրցեն։ Մինն իր սրինգն էր փչում, մյուսն իր փողը, բայց հաղթանակը խոսողն էր՝ տանում։ Սոխակն էր այդ խոսողը՝ բյուլբյուլն Աղվանից, սիրահար սրտերի միակ մխիթարիչը։ Նա որ սկսում էր նվագել իր բյուլբուլի քնարը, իսկույն լռում էին մյուսները, և ականջները սրած՝ նրան էին լսում և նրա դայլայլիկի բյուրավոր ելևէջներից դաս առնում։ Մինը սովորում էր նրա ծլվլոցը, մյուսը նրա կկլոցը, մինը շվշվալը, մյուսը սուլելը, և մեկ էլ հանկարծ ամենքը միասին, միախառն ձայնով սերտում էին իրանց սովորած եղանակները։

Արդյոք սրա՞նց էր ականջ դնում Վաչագանը այնպես լուռ, այնպես ակնապիշ։ Ոչ... ուրիշ հոգս, ուրի՛շ ցավ կար նրա սրտումը. սրանք միայն սաստկացնում էին նրա ցավը և խոր տխրության մեջ ձգում նրան։

Այս տխուր մտմտուքից հանեց Վաչագանին նրա մայրը՝ Աշխեն Թագուհին, որ այդ պահուն մոտեցավ նրան և մոտը նստելով հարցրեց.

— Վաչիկ, ես տեսնում եմ, որ դու սրտումդ մի ցավ ունիս, բայց թաքցնում ես մեզանից։ Որդի, ասա ինձ, ինչո՞ւ համար ես այդպես տխուր։

— Մայր, ճշմարիտ ես ասում,— պատասխանեց որդին,— աշխարհիս փառքն ու վայելչությունը աչքիս չեն երևում։ Ուզում եմ հեռանալ աշխարհիցս, գնալ անապատ։ Ասում են՝ Մեսրոպ վարդապետը կրկին եկել է Հացիկ, իր շինած վանքումը միաբանություն է հաստատել, աշակերտներ ժողովել, ուզում եմ ես էլ գնալ այնտեղ։ Մա՛յր, դու չգիտես, թե ի՛նչքան լավ գյուղ է այդ Հացիկը։ Այնտեղի թե՛ տղերքը և թե՛ աղջկերքը այնպես սրամիտ, այնպես գեղեցիկ են, որ եթե տեսնես՝ կմնաս հիացած։

— Ուրեմն նրա՞ համար ես գնում Հացիկ, որ այնտեղ տեսնես քո սրամիտ Անահիտին։

— Մա՛յր, դու ո՞րտեղից գիտես նրա անունը։

— Մեր պարտեզի սոխակները բերին ինձ այդ համբավը։ Սիրելի Վաչիկ, ինչո՞ւ ես մոռանում, որ դու Աղվանից Թագավորի որդին ես։ Թագավորի որդին կա՛մ թագավորի, կա՛մ մեծ իշխանի աղջիկ կուզի և ոչ թե մի գեղջկուհի։ Վրաց թագավորը երեք աղջիկ ունի, կարող ես ընտրել նրանցից որին կամենաս։ Գուգարանց Բդեշխն ունի մի շատ գեղեցիկ աղջիկ, որ իր միակ ժառանգն է, իր հարուստ կալվածների միակ տիրուհին։ Սյունյաց իշխանն ունի

դարձյալ մի շատ սիրուն աղջիկ. վերջապես մեր հազարապետի Վարսենիկն ի՞նչ պակաս աղջիկ է,— մեր աչքի առջև մեծացած, մեր ձեռքով կրթված...

— Մայր, ես արդեն ասացի, որ պիտի երթամ վանք, բայց եթե դուք ուզում եք, որ ես անպատճառ ամուսնանամ, ապա գիտացեք, որ իմ ուզածը միայն Անահիտն է...

Այս ասաց Վաչագանը և ամոթից կարմրելով վազեց դեպի պարտեզ, ինչպես մի ծանր բեռնից ազատված փախստական գերի...

Բ

Վաչագանի քսան տարին նոր էր լրացել։ Նա երկայնացել էր իրանց պարտեզի բարդիների նման, բայց շատ քնքուշ, դժգույն և վատառողջ էր։ Մանկությունից կրոնական կրթություն ստանալով մեծն Մեսրոպի աշակերտների մոտ, մտադիր էր իր վարդապետների օրինակին հետևել—քաշվել մի վանք, աշակերտներ պատրաստել և քարոզության նվիրվել։ Բայց նրա այդ ձգտումը հակառակ էր իր ծնողաց կամքին, ըստ որում ինքն էր նրանց միակ զավակը, ինքն էր Աղվանից թագավորության միակ ժառանգը։

«Որդյակ իմ Վաչագան,— ասում էր հայրը շատ անգամ,— դու գիտես, որ իմ հույսը միայն դու ես, դո՛ւ պետք է մեր տան ճրագը վառ պահես, մեր օջախի հիշատակը՝ կենդանի։ Պետք է ուրեմն ամուսնանաս, ինչպես որ աշխարհիս օրենքն է»։

Որդին միայն կարմրում էր հոր այդ առաջարկությունը լսելիս և չէր իմանում ի՞նչ պատասխան տա, ըստ որում ամուսնության վրա նա չէր մտածել և չէր էլ ուզում մտածել։ Բայց հայրը նրան հանգիստ չէր տալիս և նույն առաջարկությունը, ավելի գրավիչ խոսքերով՝ նա անում էր շաբաթը մի քանի անգամ։ Հոր այդ ստիպումներից ազատ մնալու և նրան ուշ-ուշ տեսնելու համար ինքն իրան որսորդության տվավ Վաչագանը, թեև զբոսասեր չէր, այլ ավելի սիրում էր շարունակ տանը նստել և կարդալ։ Այնուհետև առավոտները վեր էր կենում շատ վաղ և ընկնում սար ու ձոր և երեկոները շատ ուշ ետ դառնում։ Երբեմն երեք չորս օրվա ուշանում էր և ծնողացը տարակուսության մեջ ձգում։ Շատ իշխանների որդիք ուզում էին նրան ընկերանալ և նրա հետ միասին ման գալ,

բայց ինքը չէր հոժարում։ Նա հետը վերցնում էր միայն իր մտերիմ և քաջ ծառային՝ Վաղինակին, որ մի պնդակազմ և քաջառողջ տղամարդ էր, և իր հավատարիմ շունը՝ Զանգին, ոչ թեև դեռ լակոտ, բայց արդեն մի ահագին գամփռ էր։ Սրանց հանդիպող մարդիկը չէին իմանում, որ մինը թագավորի որդին է և մյուսը նրա ծառան, ըստ որում երկուսն էլ միևնույն հասարակ ոլորդի հագուստն ունեին հագած, երկուսն էլ միևնույն նետաղողը ուսերին և լայնաշեղը դաշույնը կախած գոտիներից. միայն պաշարի պարկը Վաղինակն էր կրում։ Շատ անգամ իջնում էին զանազան գյուղերում և Վաշագանը, իբրև մի օտար մարդ, ծանոթանում էր գյուղացոց կյանքին, տեսնում էր նրանց ամենօրյա հոգսերն ու կարիքները, նկատում էր, թե ովքե՞ր են բարեբախտ անում և ո՞վքեր անիրավություն։ Հանկարծ շատ կաշառակեր դատավորներ հեռացվում էին իրանց պաշտոնից և նրանց տեղ լավերն էին նշանակվում, շատ գողեր բռնվում ու պատժվում էին, շատ նեղության մեջ ընկած տներ ու համայնքներ օգնություն էին ստանում թագավորից, առանց իմաց տալու նրան իրանց նեղությունը։ Այսպես մի աներևույթ զորություն ամեն տեղ ամեն բան տեսնում էր և հոգացողություն անում։

Այս տեսնելով՝ ժողովուրդն սկսեց հավատալ, որ Վաչե թագավորը աստծո պես իմանում է, թե ո՞ւմ ինչ է պետք և ո՞վ է պատժի կամ վարձատրության արժանի մի բան արել։ Էլ ոչ մի տեղ ո՞չ գողություն էր լինում և ո՞չ մի ուրիշ անարդարություն։ Բայց ոչ ոք չէր իմանում, որ այդ լավ փոփոխության միակն պատճառը թագավորի որդին էր։

Վաշագանի այս տեսակ թափառական ճանապարհորդությունը իր համար էլ ունեցավ լավ հետևանք։ Նա ավելի զվարթացավ և առույգացավ։ Նա սկսեց ավելի ուժեղանալ և ճարպիկանալ՝ քան թե առաջ էր։ Մոտիկից տեսնելով ժողովրդի հոգսերը, նա զգաց, թե ինչքան բարիք կարող է անել մի թագավոր իր երկրի համար, և սկսեց փոքր առ փոքր ճգնվելու միտքը թողնել։ Նրա սրտի սերն արդեն վառվելու հատկություն էր ստացել, հարկավոր էր միայն մի առիթ, մի շփումն, որ ցոլային նրա լուսափայլ ճառագայթները. այդ առիթը շուտով վրա հասավ։

Մեկ օր իրանց սովորական որսորդության ժամանակ Վաշագանն ու Վաղինակը հասան մի գյուղ և նստեցին նոա աղբյուրի մոտ, որ հանգստանան։ Շատ դաղրած ու քրտնած էին։ Գյուղի

աղջկերքը եկել էին աղբյուրից ջուր տանելու և հերթով լցնում էին կուժերն ու փարչերը։ Վաշագանը սաստիկ ծարավել էր։ Նա ջուր ուզեց, և աղջիկներից մինը լցրեց փարչը և ուզեց Վաշագանին տալ, բայց մի ուրիշ աղջիկ նրա ձեռքից խլեց փարչը և դատարկեց։ Ինքը նորից լցրեց, բայց էլի դատարկեց։ Վաշագանի թուքը ցամաքել էր, և անհամբեր սպասում էր, թե երբ պետք է արդյոք նրան ջուր հասցրնեն, բայց մեր անծանոթ աղջկա հոգը չէր այդ, նա կարծես խաղ էր անում. լցնում դատարկում էր և այդ կրկնեց չորս, հինգ անգամ, միայն վեցերորդ անգամին տարավ իրան անծանոթ որսորդին տվավ։

Վաշագանը երբ որ խմեց և փարչը տվավ Վաղինակին, ինքն սկսեց խոսեցնել աղջկանը և հարցրեց, թե ինչո՞ւ նա խսկույն չբերավ ջուրը. չլինի՞ թե կատակ անել ուզեց կամ բարկացնել։ Աղջիկը նրան պատասխանեց.

— Մենք սովորություն չունինք մի օտար երիտասարդի հետ կատակ անել, մանավանդ երբ նա ջուր է ուզում։ Բայց ահա՛ ինչ էր իմ միտքը։ Ես տեսա, որ դուք դաղրած ու քրտնած եք, իսկ այդ վիճակի մեջ սառը ջուրը վնաս է մարդուն, դրա համար ես գիտությամբ ուշացրի, մինչև դուք մի փոքր հանգստանաք և հովանաք։

Աղջկա խելոք պատասխանը զարմացրեց Վաշագանին, բայց գեղեցկությունն ավելի ևս հիացրեց նրան։ Նրա աչքերը խոշոր, թուխ-թուխ և վառվռուն էին, ունքերը կարծես վրձինով քաշած. գլուխը բաց էր և ծամերը փռված թիկունքի վրա, ճակատը լայն, քիթ ու պռոշը նկարածի պես։ Ոչինչ զարդ ու զարդարանք չուներ. հագուստը մի կարմիր մետաքսե շապիկ էր, որ նրա վայելչակազմ հասակը ծածկում էր մինչև ոտները և մի ասեղնագործած բաճկոնակ, որով կոճկված էր նրա բարակ մեջքն ու լայն կուրծքը։ Ոտքերը բոբիկ էին, բայց նոր լվացված կաթնաղբրի ջրով՝ բամբակի պես սպիտակին էին տալիս։ Այսպես էր Անահիտի արտաքին կերպարանքը, բայց նրա դեմքի գծագրության, նրա աչքերի մեջ մի այնպիսի գրավիչ զորություն կար, որ իսկույն կախարդեց Վաշագանին և ապշեցրեց նրան։

— Անունդ ի՞նչ է,— հարցրեց Վաշագանը։

— Անահիտ,— պատասխանեց աղջիկը։

— Ո՞վ է քո հայրը։

— Իմ հայրը մեր գյուղի նախրչի Առանն է։ Բայց ինչո՞ւ ես ուզում իմանալ, թե իմ անունն ի՞նչ է կամ ով է իմ հայրը։

— Ոչինչ, հենց այնպես հարցնում եմ. հարցնելը հո մեղք չէ։

— Եթե հարցնելը մեղք չէ, խնդրեմ դու էլ ինձ ասես, թե ինքդ ո՞վ ես, ո՞րտեղացի ես։

— Սո՞ւտ ասեմ, թե՞ ճշմարիտ։

— Ո՛րը քեզ արժան կհամարես։

— Իհարկե, ես արժան կհամարեմ ճշմարիտը, իսկ ճշմարիտն այս է, որ ես հիմա չեմ կարող ուղիղն ասել, թե ես ով եմ, բայց խոսք եմ տալիս մի քանի օրից հետո հայտնել։

— Շատ լավ։ Շնորհեցեք ինձ փարչը, և եթե էլի ջուր եք կամենում, բերեմ։

— Ոչ, շնորհակալ ենք. դու լավ խրատ տվիր մեզ, այդ կհիշենք միշտ և քեզ չենք մոռանալ։

Անահիտն առավ փարչը և հեռացավ։

Գ

Երբ որ մեր որսորդները ճանապարհ ընկած գնում էին դեպի տուն, Վաչագանը հարցրեց Վաղինակին.

— Վաղինակ, դու մեր Բարդումը տեսա՞ծ ես սրա պես գեղեցիկ աղջիկ։

Վաղինակը պատասխանեց.

— Ես լավ չնկատեցի նրա գեղեցկությունը, իմացա միայն, որ իրանց գյուղի նախրչու աղջիկն է։

— Չես նկատել, բայց լավ ես լսել։ Այդ նրանից է, որ քո ականջներն ավելի սուր են, քան թե աչքերդ, բայց քո սուր ականջները շատ սխալ են լսում։

— Ո՛չ, սխալ չեն լսում, աղջիկն ինքն ասաց, որ իր հայրը իրանց գյուղի նախրչին է։

— Շատ լավ, բայց դրանից ի՞նչ դուրս եկավ. ես կարծում եմ, որ այդ հանգամանքը նրա հրաշալի գեղեցկությունից ոչ մի մազ չպակասեցրեց, և նրա արժանավորությունն ավելի ևս բարձրացրեց։

— Ուրեմն դու երբ որ թագավոր դառնաս, մի նախրչական շքանշան հնարիր և նրանով բարձրացրու քո իշխաններին։

— Նախրչական նշանն այնքան բարձր է, Վաղինակ, որ կարելի չէ տալ ոչ մի իշխանի։ Այդ նշանը կարող են կրել միայն թագավորներն ու հայրապետները։ Դու չգիտե՞ս միթե, որ այն գավազանը, որ տրվում է թագավորներին և հայրապետներին՝ հովվական նշան է։

— Հովվակա՞ն, բայց ոչ թե նախրչական։

— Հովիվն ու նախրչին ինչո՞վ են զանազանվում միմյանցից, եթե ոչ նրանով, որ հովիվը միայն այծ ու ոչխար է արածեցնում, իսկ նախրչին՝ ամեն ինչ. ոչխար, այծ, տավար, գոմեշ, ձի, էշ, ջորի և մինչև անգամ ուղտ։ Եվ թագավորի պաշտոնն ավելի նախրչության է նման, քան թե հովվի, ըստ որում նրա ժողովուրդը միայն ոչխարներից ու այծերի՛ց չէ բաղկացած, այլ շատ տեսակ կենդանիներից։ Մի՞թե քեզ հայտնի չէ, որ աստված ամենից շատ նախրչիներին է սիրել. ի՞նչ են եղել Աբրահամ, Մոսես, Դավիթ, եթե ոչ մի-մի նախրչի։ Ո՞վ էր աստծուն ավելի սիրելի, Եսա՞վը, որ մեզ նման որսորդ էր, թե՞ Հակոբը, որ նախրչի էր։ Իմ կարծիքով նախրչի են եղել աշխարհիս բոլոր արդար մարդիկը, Աբելից սկըսած մինչև այս գյուղի նախրչին, որ այսքան գեղեցիկ ու խելոք աղջիկ ունի։

— Քեզ հետ վիճել կարելի չէ, իշխան. քիչ էլ որ խոսեցնեմ, դու Մեսրոպ վարդապետի քարոզները կկարդաս գլխիս։ Թող գեղեցիկ լինի նախրչու աղջիկը. ասած է՝ «աչքի սիրածը տգեղ չի լինիլ»։ Բայց ես կարծում եմ, որ եթե այդ աղջիկը լիներ մի երկրագործի աղջիկ, դու չէիր ասիլ, որ Կայենը երկրագործ էր, բայց կասեիր «երկրագործ են եղել աշխարհիս բոլոր լավ մարդիկ, Ադամից սկսած մինչև այս գյուղի երկրագործը, որ միայն այսքան սիրուն աղջիկ ունի»։

— Վաղինակ, մի բոպե թող քո սրախոսությունդ և ինձ ուղիղն ասա։ Անահի՞տն է գեղեցի՞կ, թե՞ մեր հազարապետի աղջիկ Վարսենի՞կը։

— Ես կարծում եմ, որ իբրև իշխանուհի՝ հազարապետի աղջիկն է գեղեցիկ, իսկ իբրև նախրչուհի՝ այդ գեղջկուհին. մինը մյուսի տեղը չի բռնիլ։

— Բայց ո՞րը կլինի ավելի խելոք, Անահի՞տը, թե՞ Վարսենիկը։

— Ես ոչ մեկի խելքը չեմ չափել, բայց կարծում եմ, թե Վարսենիկը շատ լավ գիտե, որ մեր Թարթառի ջուրը ոչ ոքի վնաս տված չէ՛, և այդ պատճառով՝ երբ որ դու նրանից ջուր ուզես, նա հարկ չի համարիլ քո Անահիտի պես նազ ու սազ անել և թուքդ ցամաքած թողնել։

— Վաղինա՜կ...

— Հրամայի՛ր, իշխան...

— Վաղինա՜կ, դու ինձ չե՞ս սիրում...

— Իշխա՜ն, ես հասկանում եմ քո միտքը։ Ես տեսա, որ այդ առասպելական Անահիտի թերթևունքները նետերի պես ցցվեցան սրտիդ մեջ, բայց ցավում եմ, որ այդ վերքը քո մեջ պիտի անբժշկելի դառնա...

Վաշագանն այլևս չխոսեց և ընկավ մի խոր մտածության, մի երևակայական աշխարհի մեջ։ Լռեց և Վաղինակը։ Միայն Զանգին սովորականից դուրս ավելի ուրախ էր թռչկոտում ու խաղում, կարծես մի նոր որսի հոտ լիներ առած։

Դ

Նախընթաց դեպքից մի քանի օր անցած թագավորն ու Վաղինակը երկար խոսակցություն ունեին։ Խոսակցության առարկան Վաշագանն էր։

— Վաղինակ,— ասաց թագավորը,— դու մի փոքր երեխա ես եղել, որ մեր տունն ես եկել, ես քեզ հարազատ որդու պես եմ պահել։ Այսօր դու ինքդ որդու տեր ես և կարող ես զգալ, թե ի՞նչ է որդեսիրությունը։ Մեր Վաշագանը քեզ եղբորից չի զանազանում և միայն քեզ է հայտնում իր սրտի գաղտնիքը։ Դու պետք է իմանաս նրա միտքը և հայտնես մեզ, որ մենք մեր ձեռքից եկած հնարը գործ դնենք։

Վաղինակը պատասխանեց.

— Հա՛յր թագավոր, Վաշագանն այնքան գաղտնապահ է, որ ինձ էլ չի բաց անում իր սիրտը. միայն այս վերջին օրերս ես նրա մեջ մեծ փոփոխություն եմ նշմարում։ Ես կարծում եմ, որ նա սիրահարված է Անահիտ անունով մի աղջկա վրա։

— Ո՞վ է այդ Անահիտը։

— Դա Հացիկ գյուղի նախրչու աղջիկն է։

— Նախրչո՜ւ...

— Այո՛։

— Այդ նախրչու Անահիտը մի աստվածուհի պետք է լինի ուրեմն, որ կարողացել է Վաշագանին այդպես կախարդել և կակղացնել նրա քարացած սիրտը։

— Հայր թագավոր, ես միշտ փնտռում եմ այդ աղջկանը, ծիծաղում եմ Վաշագանի վրա, բայց զուր է անցնում իմ աշխատությունը, և կարծում եմ, որ պիտի զուր էլ անցնի, ըստ որում այդ աղջիկը ճշմարիտ որ մի աստվածուհի է. նրա գեղեցկությունը մի հիացք է. իսկ խելքի մասին հրաշքներ են պատմում։ Ասում են՝ գյուղի ծերերը նրա խորհրդին են դիմում ամեն դժվար հանգամանքներում։ Ոչ մի երիտասարդ նրա քաջությունը չունի, ոչ մի օրիորդ՝ նրա ձեռքի ճարտարությունը։ Նրան անվանում են «Անտառների թագուհի», ըստ որում իր հոր նախրից երբ որ մի ապրանք է կորչում կամ գողացվում, նա իսկույն՝ մի կրակոտ ձի հեծած՝ սար ու ձոր է ընկնում, և որտեղից լինի՝ գտնում բերում է։ Այս տեղեկությունները ես հավաքել եմ Վաշագանից ծածուկ և ոչինչ չեմ հայտնել, որ ավելի ևս չտաքանա, բայց ինչպես ես տեսնում եմ, նա առանց այս էլ նրանից ձեռք վերցնողը չէ։ Ես հույս ունիմ, որ ինքը եթե ձեզ չհայտնե, մայր թագուհուց չի թաքցնիլ։

— Եթե այդպես է, ես կհայտնեմ մորը։ Շնորհակալ եմ, որ ինձ նախապատրաստեցիր քո տված տեղեկություններով։

Վաղինակը ճշմարիտ որ լավ նախապատրաստեց թագավորին։ Նա Անահիտի գովասանքը՝ իր կարծիքով՝ չափազանցության հասցրեց ավելի այն մտքով, թե՝ բան է, եթե որդու կողմից զիջում չլինի, գոնե ծնողաց կողմից լինի, որ Վաշագանի մուրազն անկատար չմնա։ Ահա այս խոսակցությունից հետո էր, որ մայրն իմացավ որդու տխրության գաղտնիքը։

Ե

Թագուհին երբ որ իմացավ Վաշագանի վճռական խոսքը, թե նա միայն Անահիտին կուզի և ուրիշ ոչ ոքի, հայտնեց թագավորին, որ իրանց որդին Հացիկ գյուղի նախրչու աղջկանն է հավանել, և պատմեց բոլորը, ինչ որ ինքը լսել էր։ Այս լուրը շուտով տարածվեց ամբողջ պալատի մեջ։ Բոլոր ծառաներն ու նաժիշտներն իմացան։ Մյուս օրը ամբողջ քաղաքը դղրդում էր այդ նոր համբավով։ Գյուղացիք ուրախացան, որ թագուհին իրանցից կլինի և նրա օրով իրանք շատ բախտավոր կլինին։ Մեծ-մեծ իշխանները տխրեցան, թե ինչո՞ւ թագավորի որդին ռամիկ նախրչուն իրանցից բարձր

համարեց։ Վաճառականները ծիծաղում էին, թե երևի թագավորի որդին խելքը կորցրել է, որ փոխանակ հարուստ օժիտով աղջիկ ուզելու՝ մի աղքատի աղջիկ է ուզում։ Պակաս չէին և սրախոս մարդիկ, որոնք այդ առիթով զանազան առասպելներ էին հնարում և պատմում սրան-նրան։

Ահա թե ինչ էին ասում այդ սրախոսները.

— Բաբիկ, ասում են մեր թագավորի որդին նախարչու աղջիկ է ուզում, լսե՞լ ես...

— Այդպես չէ, սիրելի Սադոկ, դու սխալ ես լսել։ Այդ նախարչին իսկապես նախարչի չէ, այլ թագավոր է, բայց որովհետև իր հպատակները բոլորն էլ անասուններ են, այդ պատճառով նրան նախարչի են ասում։ Հիմա մենք որ հիմար լինինք, մի՞թե դրա համար պետք է մեր թագավորին տավարած անվանենք։ Մեր թագավորի խնամացուն մի շատ իմաստուն թագավոր է. նա իմանում է բոլոր անասունների լեզուն, այդպես մեկ էլ Սողոմոն իմաստունն է եղել։

— Ինչ ես ասում... մի՞թե անասուններն էլ ունին թագավոր։

— Ինչո՞ւ ես զարմանում։ Հապա չե՞ս լսել, որ ասում են՝ մորեխների թագավորը, օձերի թագավորը, մրջյունների թագավորը, մեղուների թագուհին։ Եվ մարդիկն էլ դեռ այն ժամանակն են սկսել թագավոր ունենալ, երբ նրանց խելքը անասունների խելքից բարձր չի եղել։

— Ես այդ գիտեմ, բայց չեմ լսած որ տավարներն էլ ունենան թագավոր։ Մեկ էլ որ՝ ասենք՝ օձերի թագավորը օձ է, մորեխներինը՝ մորեխ, բայց տավարներինը մի՞թե մարդ է։

— Հապա մարդ որ չլիներ, էլ ինչպե՞ս աղջիկ կունենար, էլ ո՞ւմ կուզեր մեր թագավորի որդին, երևի մարդ է, որ աղջիկ ունի, և այն էլ գիտե՞ս, ինչպե՞ս աղջիկ, շատ գեղեցիկ և շատ իմաստուն։ Ասում են՝ այդ աղջիկը մարդու չի գնում, և դեռ հայտնի չէ, թե արդյոք մեր թագավորի որդուն կուզի՞ թե ոչ։

— Ի՞նչ ես ասում։

— Հապա դու ի՞նչ ես կարծում...

Զ

Թագավորն ու թագուհին տեսան, որ չեն կարողանում Վաչագանի միտքը փոխել, մի երեկո խորհուրդ արին և վճռեցին, որ ընդունեն նրա ընտրությունը։

Թագավորն ինքը շատ բարի մարդ էր, նա սրտով հակառակ չէր ամենևին որդու ընտրությանը։ Նա մինչև անգամ ուրախ էլ էր, որ իր որդին բոլոր հպատակների վրա հավասար աչքով է նայում և մեկը մյուսից բարձր չի դասում։ Նա միայն վախենում էր, թե մի՞ գուցե դրանով գոռող իշխաններին գրգռե իր դեմ։ Բայց երբ որ իմացավ թե գյուղացիք շատ ուրախ են այդ բանին և Անահիտն էլ բարձր համբավ է ստացել նրանց մեջ, ինքն սկսեց համոզել թագուհուն, որ հոժարի այդ բանին...

Մյուս օրը կանչեցին Վաղինակին, հայտնեցին իրանց հոժարությունը, և նրա հետ երկու պատվավոր և իշխան մարդ ևս դնելով՝ մեծամեծ ընծաներով ուղարկեցին Հացիկ՝ հարսնախոսության։

Երբ որ դրանք հասան նախարչի Առանի տունը, Առանը նրանց սիրով ընդունեց և շնորհավորեց նրանց գալը։ Անահիտը տանը չէր։ Հյուրերը նստեցին սրահումը՝ մի նոր գորգի վրա, որ Առանը փռեց իսկույն և ինքն էլ նստեց նրանց կշտին։

Խոսակցության նյութը ամենից առաջ դարձավ նոր գորգը, որ իր գեղեցիկ նախշերով, գույների պայծառությունով և գործվածքի նրբությունով գրավեց հյուրերի ուշադրությունը։

— Այս ի՞նչ հրաշալի գորգ է,— ասաց Վաղինակը,— տանտիկինդ կլինի գործած անշուշտ։

— Ո՛չ, ես կին չունիմ, ահա հինգ տարի է, որ կինս վախճանվել է։ Այդ գորգը մեր Անահիտի գործածն է։ Բայց ինքը չի հավանում. ասում է՝ իմ ուզածիս պես չդուրս եկավ։ Մեկ նորը հինել է, ահա՛ այն ծածկված ոստայնն է, հույս ունի, որ այն պիտի իր ուզածի պես դուրս բերե։

— Մեր թագավորի պալատումն էլ չկա մի այսպիսի զարդ,— ասաց իշխաններից մինը, հետո դառնալով Առանին՝ ավելացրեց.— շատ ուրախ ենք, որ քո աղջիկն այսքան շնորհալի է։ Քո Անահիտի համբավը մինչև թագավորի ականջն է հասել։ Եվ ահա՛ մեզ ուղարկել է քեզ մոտ խնամախոսության։ Թագավորը կամենում է, որ քո Անահիտը տաս իր միևնուճար որդուն՝ Վաչագանին, որ իր թագաժառանգն է։

Իշխանն այս առաջարկությունն անելով՝ սպասում էր, թե Առանը կամ չի՛ հավատալ, կամ թե՝ սաստիկ ուրախանալուցը՝ վեր կթռչի տեղից։ Բայց Առանը ո՛չ այս արավ և ոչ այն, այլ գլուխը քաշ գցեց և սկսեց ցուցամատը գորգի նախշերով սահեցնել։ Նրան այդ մտածությունից հանեց Վաղինակը՝ ասելով.

— Ինչո՞ւ տխրեցիր, Առան եղբայր, մենք քեզ ուրախություն ենք բերել և ոչ տխրություն։ Մենք քո աղջիկը բանի տանելու չենք։ Այդ կախված է քո միակ կամքից. եթե կուզես՝ կգաս, չես ուզիլ՝ չես գալ. մեզ հարկավոր է միայն, որ դու ուղիղն ասես, թե դու ինչպես կկամենաս՝ տա՞լ, թե չտալ։

— Իմ պատվական հյուրեր,— պատասխանեց Առանը,— ես շատ շնորհակալ եմ, որ մեր տեր թագավորը իր ճոխ պալատի համար իր ծառայի աղքատիկ խրճիթից մի զարդ է ուզում տանել։ Գուցե այդպիսի մի զարդ, ինչպես ասացիք զորքի համար, չկա նրա պալատի մեջ, բայց ճշմարիտն ասում եմ ձեզ, իմ ձեռին չի տալն ու չտալը։ Ահա կգա ինքը, իրան կհարցնեք, եթե կհոժարի, ես ոչինչ չունիմ ասելու։

Հենց այս խոսակցության ժամանակ եկավ Անահիտը, որ իրանց այգումն էր եղել, ձեռին մի զամբյուղ խաղողով, գեղձով և տանձ ու խնձորով լիքը։ Գլուխ տվավ հյուրերին, որոնց մասին իրան իմաց էին տվել, որ քաղաքից եկած իշխաններ են, զամբյուղը ներս տանելով՝ մի բեզածը դարսեց մի նոր կլեկած մեծ սինու մեջ և բերավ դրավ հյուրերի առջև։ Ինքը գնաց իր ոստայնի մոտ, վեր առավ նրա երեսից սավանը և սկսեց շարունակել իր կիսատ թողած գործը։ Իշխաններն սկսեցին նայել, որ տեսնեն ինչպե՞ս է գործում Անահիտը, և մնացին ապշած նրա արագաշարժ մատների ճարպիկության վրա։

— Անահիտ, ինչո՞ւ ես մենակ գործում,— հարցրեց Վազինակը,— ես լսել եմ, որ դու աղջիկ աշակերտներ շատ ունես։

— Այո՛, ունիմ մի քանի հոգի,— պատասխանեց Անահիտը,— բայց որովհետև հիմա այգեկութ է, արձակել եմ։ Այստեղ էլ լինին, չեմ բանեցնիլ սրա վրա։ Այս մեկ հատը ես մենակ պետք է գործեմ։

— Լսել եմ, որ դու քո աշակերտներին կարդալ էլ ես սովորեցնում։

— Այո, սովորեցնում եմ։ Հիմա մեզանում ամեն մարդ պարտական է կարդալ գիտենալ։ Այս վերջին օրերս էլի եկավ ծերունի Մեսրոպը և սաստիկ պատվեր տվավ, որ ամեն մարդ կարդալ սովորի, որ ամեն մարդ ինքը կարդա ավետարանը և հասկանա։ Հիմա մեր հովիվներն էլ գիտեն կարդալ և միմյանց սովորեցնում են իրանց հոտն արածացնելիս։ Այժմ եթե մեր անասունները պատահ, բոլոր հոտատ ծառերի կեղևները գրատած կտեսնես։ Անցյալ օրը ես մի ծառի վրա տառը ատն ստղոռ կարդացի։ Մեր քեռի պարիսպ-

ները, ժայռերի ճակատները ածխագրերով լցրել են։ Մեկը ավետարանից մի տուն գրում է կամ այնքան է գրում, ինչքան անգիր գիտե, հետո մյուսներն են շարունակում։ Ահա այսպես սար ու ձոր լցվել է գրերով։

— Մեր մեջ ուսումն այդչափ տարածված չէ, ըստ որում մերոնք ծույլ են, բայց ես հույս ունիմ, որ երբ քեզ տանենք մեր քաղաքը, դու մեր ծույլերին արիաջան կշինես։ Մի բոպե թող քո գործը, Անահիտ, և եկ այստե՛ղ, քեզ բան ունինք ասելու։ Տե՛ս, ահա քեզ համար ինչե՞ր է ուղարկել մեր թագավորը։

Վազինակն այս ասելով՝ բաց արավ մի կապոց և նրա միջից հանեց ոսկի զարդարանքներ և մետաքսե հագուստներ։

Անահիտն այդ բաները տեսնելով՝ ամենևին չհափշտակվեց և չտեսի նման չզարմացավ, այլ համեստ կերպով հարցրեց.

— Կարելի՞ է արդյոք իմանալ, թե այդ պատիվն ինչո՞ւ համար է արել ինձ թագավորը։

— Մեր թագավորի որդին՝ Վաչագանը, քեզ տեսել է աղբյուրին. դու նրան ջուր ես տվել, և նա քեզ շատ հավանել է։ Հիմա թագավորը մեզ ուղարկել է, որ քեզ նշանենք իր որդու վրա։ Ահա այս մատանի է, ա՛յս ապարանջան է, ա՛յս մանյակ է, սրանք կոճակներ են, մի խոսքով քեզ համար են այս ամենն էլ։

— Ուրեմն իմ տեսած որսորդը թագավորի որդի՞ն է եղել։

— Այո։

— Նա շատ լավ երիտասարդ էր։ Բայց արդյոք գիտե՞ մի որևիցե արհեստ։

— Նա թագավորի որդի է, Անահիտ, նրան ի՞նչ արհեստ է հարկավոր, ողջ աշխարհի տերը նա է, ամենքն էլ նրա ծառաներն են։

— Գիտեմ որ այդպես է, բայց ո՞վ գիտե, աշխարհք է, այսօրվան ծառաների տերը վաղը կարող է ինքը լինել ծառա, թեև նա թագավոր էլ լինի եղած։ Արհեստը մի այնպիսի բան է, որ ամենայն մարդ պիտի գիտենա, թե ծառա լինի, թե տեր, թե թագավոր և թե իշխան։

Այսպես որ ասաց Անահիտը, իշխանները մնացին իրար երեսի մտիկ տալիս։ Նայեցին Առանին, տեսան, որ նա շատ հավան է աղջկա ասածին։ Հետո դարձան Անահիտին ու կրկին հարցրին.

— Ուրեմն դու թագավորի որդուն չպիտի ուզես միայն նրա՞ համար, որ նա արհեստ չգիտե։

— Այո, և այս ամենը, ինչ որ բերել եք, ետ կտանեք և կասեք, որ ես իրան շատ հավանում եմ, միայն թող ներե ինձ, որ ես ուխտ եմ դրել արհեստ չգիտցող մարդու չգնալ։ Եթե կամենում է, որ ես իր ամուսինը լինիմ, թող նախ և առաջ մի արհեստ սովորի։

Իշխանները տեսան, որ Անահիտը հաստատ է իր ասածին, էլ չստիպեցին։ Նույն գիշերը մնացին Առանի տանը։ Անահիտը նրանց լավ հյուրասիրություն ցույց տվավ և մի թագավորի հեքիաթ պատմեց, թե ինչպես նա շատ արհեստներ է սովորել, հետո իր ժողովրդին էլ սովորեցրել և դրանով իր երկիրը շատ հարստացրել։ Իշխանները տեսնելով, որ ճշմարիտ է Անահիտի ասածը, ամաչում էին, որ իրանք ոչ մի արհեստ չգիտեն, միայն Վաղինակն սկսեց պարծանքով ասել, որ ինքը շատ լավ ոսկերչություն գիտե, թե նա այդ սովորել է թագավորի պալատական վարպետից։ Մյուս օրը վեր կացան գնացին և ինչ որ տեսել, լսել էին, մի առ մի պատմեցին թագավորին։ Թագավորն ու թագուհին երբ լսեցին Անահիտի վճիռը, շատ ուրախացան, կարծելով թե Վաչագանը չի ընդունիլ նրա առաջարկությունը և ձեռք կվերցնե նրանից, բայց երբ կանչեցին իրան և հայտնեցին՝ նա ասաց.

— Շատ ուղիղ է ասել Անահիտը. ամենայն մարդ պետք է մի արհեստ գիտենա, թագավորն էլ մարդ է, նա էլ պետք է գիտենա մի արհեստ։

— Ուրեմն դու հոժա՞ր ես մի արհեստ սովորելու,— հարցրեց մայրը։

— Այո՛։

— Բայց ուղիղն ասա, ինչո՞ւ համար ես ուզում սովորել. արհեստի կարևորությո՞ւնն զգալով, թե՞ Անահիտին արժանանալու համար։

— Երկուսն էլ... ինչո՞ւ թաքցնեմ,— պատասխանեց Վաչագանը և հեռացավ իսկույն, որ երեսի կարմրիլը ծածկե իր ծնողներից...

Թագավորը տեսավ, որ որդին հոժար է մի արհեստ սովորելու, խորհրդի կանչեց իշխաններից մի քանիսին և նրանք միաձայն վճռեցին թե նրան վայելուչ արհեստը լավ դիպակ գործելն է, որ չկա իրենց երկրի մեջ և հեռավոր երկիրներից են բերել տալիս շատ թանկ գնով։ Մարդիկ ուղարկեցին և խորին Պարսկաստանից մեկ հմուտ վարպետ բերել տվին Վաչագանի համար։ Մի տարվա մեջ Վաչագանն այնպես սովորեց դիպակ գործելը, որ իր ձեռքով նուրբ

ոսկեթելից մի բաճկոնացու գործեց Անահիտի համար և Վաղինակի ձեռքով ուղարկեց նրան ընծա։

Անահիտը՝ ստանալով այդ ընծան՝ ասաց.— Հիմա ոչինչ չունիմ ասելու.

Երբ կանճարանա,
Ջուլհակ կդառնա։

Հայտնեցեք թագավորի որդուն իմ հոժարությունը և իմ կողմից էլ իմ նոր գործած գորգը տարեք նրան ընծա։

Վաղինակը վեր առավ գորգը և ձին հեծնելով շտապեց դեպի Բարդա, որ մի բոպե առաջ ավետե Վաչագանին Անահիտի հոժարությունը։

Սկսեցին հարսանիքի պատրաստություն տեսնել և յոթն օր յոթը գիշեր հարսանիք արին։ Այդ հարսանիքը մի չտեսնված մեծ տոնակատարության պես եղավ բոլոր երկրի համար։ Գյուղացոց ուրախությանն էլ չափ չկար։ Նրանք ուրախանալու առիթներ շատ ունեին. նախ՝ որ շատ սիրում էին թագավորին և նրա որդուն. երկրորդ՝ որ Անահիտը նրանց մեջ մեծ համբավ էր ստացել, և նրա գթության վրա մեծ հույս ունեին. երրորդ՝ որ թագավորը հարսանիքի օրը հրաման էր հանել, որ երեք տարի ժամանակով գյուղացոց բոլոր հարկերը ընծայված լինին։ Եվ դրա համար էլ գյուղացիք երկար ժամանակ երգում էին.

Անահիտի հարսանիքին ոսկի արև փայլեցավ.
Անահիտի հարսանիքին ոսկի անձրև թափվեցավ.
Մեր արտերը ոսկի դառան, մեր հողերը լցվեցան.
Մեր հարկերն անհետացան, մեր ցավերը վերացան.
Շա՜տ ապրի Ոսկեծղին՝
Մեր մայր թագուհին...

Է

Անահիտի փառավոր հարսանիքին ներկա չէր Վաղինակը։ Մեկ օր թագավորը նրան մի հանձնարարությունով ուղարկեց Պերոժ քաղաքը, որ շատ հեռու չէր Բարդայից և այն գնալն էր, որ

գնաց, էլ ետ չեկավ։ Շատ հարց ու խնդիր եղան, ման եկան, որոնեցին, բայց Վաղինակը կորավ ու կորավ։

Վաղինակին որոնելուց գնացող մարդիկ լուր բերին Թագավորին, թե անհայտ եղած մարդիկ շատ կան, և ոչ ոքի հայտնի չէ, թե ինչպես են անհետանում այդ մարդիկը և ո՞ւր են կորչում։

Թագավորը կարծեց, թե երևի ավազակ գերեվաճառներ կան, նրանք են գալիս գողանում և տանում Կովկասյան լեռներում բնակող բարբարոս ազգերի մեջ վաճառում։ Ճարպիկ լրտեսներ ուղարկեց այն երկրները, նրանք գնացին, գյուղ գյուղ, քաղաք քաղաք ման եկան, բայց ոչ մի հետք չգտնելով՝ ետ դարձան հուսահատ։

Վաղինակի այդպես անհետ կորչիլը մեծ ցավ պատճառեց Թագավորին։ Նա ցավում էր ոչ միայն նրա համար, որ նրան որդու պես էր սիրում, այլև նրա համար, որ իր երկրի մեջ մի այդպիսի անսովոր բան էր պատահում և ինքը չէր կարողանում հետքը գտնել։

Այս դեպքից հետո շատ չանցած՝ Թագավորն ու Թագուհին վախճանվեցան, խորին ծերության հասած։ Բոլոր երկիրը սուգ պահեց նրանց համար մինչև քառասուն օր։ Քառասուն օրից հետո հավաքվեցին բոլոր քաղաքացիք և Վաչագանին իր հոր տեղը նստեցրին։

Վաչագանը՝ իր նախնյաց գահը բարձրանալով՝ ուզեց իր երկիրը այնպես բարեկարգել, որ էլ ոչ մի հոգի ոչ մի բանից դժգոհ չլինի, ամենքն էլ ուրախ լինին, ամենքն էլ բախտավոր։ Իր ամենամոտիկ խորհրդակիցը Անահիտն էր։ Առաջ նրա հետ էր խորհրդակցում միշտ և հետո ժողովրդից խելացի մարդկանց հրավիրում խորհրդի և նրանց հայտնում իր միտքը։ Բայց Անահիտը այսքանը բավական չհամարեց և մեկ օր նրա հետ սկսեց այսպես խոսել.

— Տեր իմ Թագավոր, ես տեսնում եմ, որ դու քո երկրիդ մասին մանրամասն ու ստույգ տեղեկություններ չունիս։ Քո հրավիրած մարդիկը ամեն բան ուղիղը չեն ասում։ Նրանք քեզ միամտացնելու և ուրախացնելու համար ասում են՝ ամեն բան լավ է և կարգին, ամենքն էլ գոհ են իրենց վիճակից։ Ո՞վ գիտե, ինչե՞ր են լինում այս բոպեիս քո երկրիդ մեջ, որոնց մասին այդ մարդիկը ոչ մի տեղեկություն չեն տալիս քեզ։ Դու ժամանակ առ ժամանակ պետք է զանազան հագուստով ու կերպարանքով ման գաս երկրիդ մեջ, երբեմն աղքատի ձևով մուրացկանություն պետք է անես, երբեմն մշակի հագուստով պիտի երթաս նրանց հետ մշակության անես, երբեմն վաճառականություն, մի խոսքով ամեն վիճակի մեջ

էլ պետք է մտնես, որ ամեն վիճակի էլ մոտիկ ծանոթանաս։ Աստված ամենի համար էլ քեզանից հաշիվ է պահանջելու, դու նրա փոխանորդն ես քո երկրիդ վրա, պետք է ամենայն ինչ տեսնես. և ըստ այնմ քո անելիքդ անես։

— Դու շատ ճշմարիտ ես ասում, Անահիտ,— ասաց Թագավորը։— Հանգուցյալ հայրս այդ սովորությունն ուներ, ինչ որ դու ասում ես, միայն ծերության ժամանակ էլ չէր կարողանում կատարել իր ուզածը։ Ես իմ որսորդության ժամանակ համարյա միևնույնն էի անում, բայց հիմա ի՞նչպես անեմ. ես որ երթամ, ո՞վ կկառավարի իմ տեղս։

— Ես ինքս կկառավարեմ, և այնպես կանեմ, որ ոչ ոք չի իմանալ, որ դու բացակա ես։

— Շատ լավ. ես հենց վաղը կարող եմ ճանապարհ ընկնել։ Քսան օր ժամանակ եմ դնում, երբ որ քսան օրն անցնի և ես չգամ, իմացիր, որ ես կենդանի չեմ կամ մի փորձանքի մեջ եմ ընկել։

Ը

Վաչագան Թագավորը հասարակ շինականի հագուստով ծրլտած՝ ճանապարհ ընկավ դեպի իր երկրի հեռավոր կողմերը։ Շատ բան տեսավ, շատ բան լսեց, բայց ամենից անցավ այն՝ ինչ որ նա տեսավ իր վերագարձին Պերոժ քաղաքումը։

Պերոժ քաղաքը, որ այժմ անհետացած է, գտնվում էր Կուր գետի ափումը։ Բնակիչները կռապաշտ պարսիկներ էին։ Կային և հայ քրիստոնյաներ, բայց շատ սակավ էին և չունեին ոչ քահանա և ոչ աղոթատուն։

Քաղաքի կենտրոնումը կար մի շատ ընդարձակ հրապարակ, որ քաղաքի շուկան էր. նրա չորս կողմն էին գտնվում բոլոր արհեստավորների և վաճառականների խանութները։

Մի օր այդ հրապարակումը նստած էր Վաչագանը, մեկ էլ տեսավ՝ ահա՛ մի խումբ մարդիկ են գալիս և բերում են իրանց հետ մի փառավոր և սպիտակ մորուքով ծերունի՝ աջ ու ձախ բազուկները բարձրացրած։ Ծերունին շատ ծանր էր գալիս. նրա առջև սրբում էին ճանապարհը և ազյուներ դնում ոտների տակին։ Վաչագանը մոտեցավ մի մարդու և հարցրեց, թե ո՞վ է այդ ծերունին։ Մարդը պատասխանեց.

— Սա մեր մեծ քրմապետն է, մի՞թե չես ճանաչում։ Տես որքա՜ն սուրբ է, որ ոտը գետնին չի դնում, որ չլինի թե մի որևիցե միջատ ընկնի ոտքի տակը և սպանվի։

Հրապարակի ծայրումը մի կապերտ փռեցին, և քրմապետը շոքեց նրա վրա, որ հանգստանա։ Վաչագանը գնաց նրա դիմացը կանգնեց, որ տեսնի ի՞նչ է խոսում այդ մարդը կամ ի՞նչ է անում։ Քրմապետը շատ սրատես էր. նա էլ Վաչագանի վրա նայեց և նկատելով նրա օտարական լինելը և առաջին անգամ իրան տեսնելը, ձեռով արավ, որ գնա մոտը։ Վաչագանը մոտեցավ։

— Դու ո՞վ ես, ինչ գործի ես,— հարցրեց քրմապետը։

— Ես մի օտար բանվոր եմ,— պատասխանեց Վաչագանը,— եկել եմ այս քաղաքը մշակության։

— Շատ լավ, կգա՛ս ինձ հետ, ես քեզ գործ կտամ և լավ կվարձատրեմ։

Վաչագանը գլուխ տալով՝ հոժարություն ցույց տվավ և գնաց կանգնեց նրա հետ եղած մարդկանց մոտ։

Քրմապետն իր մոտ եղած քուրմերին մի քանի խոսք փսփսաց և նրանք ցրվեցան այս ու այն կողմ, և մի քանի րոպեից վերադարձան այլևայլ պաշարներով՝ մշակների շալակը տված։

Երբ որ բոլոր քուրմերը եկան, քրմապետը վեր կացավ և միևնույն հանդիսով ճանապարհ ընկավ դեպի իր բնակարանը։ Վաչագանն էլ լուռ ու մունջ հետևեց նրան ավելի հետաքրքրությունից շարժված, որ տեսնի ինչո՞վ են զբաղված այդ քուրմերը կամ ի՞նչ մարդ է քրմապետը, ի՞նչ բարեգործություններ ունի, որ այդպես սուրբի պես պաշտվում է։ Այսպես գնացին մինչև քաղաքի ծայրը։

Այդտեղ քրմապետը՝ օրհնելով ճանապարհ ձգող չերմեռանդ կռապաշտներին՝ ետ դարձրեց, մնացին միայն իր քուրմերը և բեռնակիր մշակներն ու Վաչագանը։ Դրանք շարունակեցին իրանց ճանապարհը և հեռանալով քաղաքից մոտ երկու վերստ, հասան մի պարսպապատ շենքի և կանգ առան նրա երկաթի դռան մոտ։ Քրմապետն իր գրպանից հանեց մի ահագին բանալի, բաց արավ դուռը և ամենին ներս անելով՝ կրկին կողպեց։ Այստեղ Վաչագանը մի անսովոր սարսուռ զգաց, տեսնելով, որ այստեղից իր կամքով դուրս գնալու հնար չի ունենալու։ Վաչագանի հետ եղած մշակներն էլ առաջին անգամն էին մտնում այս շենքի մեջ։ Նրանք ամենքն էլ իրար երեսի նայելով՝ սկսեցին փսփսալ, թե ո՞ւր բերին մեզ այս մարդիկը։ Վերջապես պարսպի կամարակապ ճանապարհն անցնելուց հետո, դրանց առջև բացվեց մի շատ ընդարձակ հրապարակ, որի մեջտեղը կար մի գմբեթահարկ մեհյան, մանր խուցերով շրջապատված։ Մշակների բեռները ցած դնել տվին այն խուցերի մոտ, և նրանց՝ Վաչագանի հետ միասին՝ քրմապետը տարավ մեհյանի մյուս կողմը, այնտեղ բաց արավ մի նոր երկաթի դուռ և ասաց.

— Գնացե՛ք ներս, այդտեղ ձեզ գործ կտան։ Նրանք մոլորվածի պես լուռ ու մունջ ներս մտան և քրմապետն այդ դուռն էլ փակեց նրանց քամակից։ Այստեղ մեր օտարականները նոր ուշքի եկան, նոր աչք բաց արին և տեսան, որ մի սանդերկրյա ճանապարհի վրա են կանգնած։

Թ

— Տղե՛րք, ի՞նչ տեղ ենք մենք, չգիտե՞ք,— հարցրեց Վաչագանը։

— Ես գիտեմ, որ մենք թակարդի մեջ ենք ընկել, էլ այստեղից ազատվելու չենք,— ասաց մեկը։

— Բայց չէ՞ որ այս մարդը սուրբ մարդ է, մի՞թե այդպես բան կանի,— ասաց մի ուրիշը։

— Ինչո՞ւ չի անիլ. երևի այս սուրբ մարդը գիտե, որ մենք մեղավոր ենք, սրա համար մեզ բերավ ձգեց իր քավարանը, որ մեղքներս ապաշխարենք։

— Տղե՛րք, կատակի ժամանակ չէ,— ասաց Վաչագանը։— Ես կարծում եմ, որ այդ դաժան ծերունին սուրբի անուն առած մի զարհուրելի դև է, և մենք կանգնած ենք այժմ նրա դժոխքի ճանապարհի վրա։ Տեսե՛ք ինչպե՞ս խավար է, ինչպե՞ս մութ, և դեռ ով գիտե ի՞նչ տանջանքներ կան մեզ համար պատրաստված։ Բայց ինչո՞ւ ենք քարացել կանգնել այստեղ. էլ հավիտյան բացվելու չէ՞ այս դուռը. եկե՛ք առաջ գնանք, տեսնենք ո՞ւր է տանում մեզ այս անդառնալի ճանապարհը։

Այդ ճանապարհով բավականին առաջ գնացին, և հանկարծ նրանց աչքին մի ճրագի աղոտ լույս երևաց։ Գնացին դեպի ճրագը, և նրանց առջև բացվեց մի լայն քարահատակ, որի չորս կողմից լսվում էին խստանաշփոթ աղաղակներ։ Վեր նայեցին և տեսան, որ մի արհեստական քարայրի մեջ են գտնվում։ Դա շինված էր ցորենի

հորի պես. վերևից սկսել էին փորել ժայռը և որքան ցած էին իջել, այնքան լայնացրել էին, և այս կերպով միապաղաղ քարի մեջ շինել էին մի սառներկրյա գմբեթաձև ընդարձակ սրահ։

Մեր կալանավորները մի կողմից ապշած զննում էին անհավատալի բանը, մյուս կողմից խլշած ականջ էին դնում, որ տեսնեն ո՞րտեղից էին գալիս խառնաշփոթ ձայները։ Հենց այս միջոցին նրանց գիմացը երևաց մի ստվեր, որ հետզհետե մոտենալով ու թանձրանալով՝ մարդու նմանություն առավ։ Վաչագանն առաջ գնաց դեպի այդ ստվերը և բարձրաձայն կանչեց.

— Ո՞վ ես դու, սատանա՞ ես, թե մարդ. մոտեցիր մեզ և ասա՛, ո՞րտեղ ենք գտնվում մենք։

Ուրվականը մոտեցավ և դողդողալով կանգնեց նորեկների առջև։ Դա մի մարդ էր, մեռելի կերպարանքով, աչքերը խոր ընկած, այտերը ցցված, մազերը թափված, մի մերկ կմախք, որի բոլոր ոսկորները համրվում էին։ Այդ կենդանի մեռյալը՝ սրացած ծնոտիքը հազիվ շարժելով՝ հեկեկալով ու կակազելով՝ ասաց.

— Եկե՛ք իմ հետևից, ես ձեզ ցույց կտամ, թե ի՞նչ տեղ եք ընկել դուք։

Գնացին մի նեղ անցքով և մտան մի ուրիշ բույն. այնտեղ տեսան սառը գետնի վրա վայր թափված մերկ մարդիկ, որոնք աղեկրտուր տնքոցով փչում էին իրանց վերջին շունչը։ Այդտեղից անցան մի ուրիշ որջ և այնտեղ տեսան կարգով շարված ահագին կաթսաներ, որոնց մեջ կերակուր էին եփում մի քանի մեռելագույն մարդիկ։ Վաչագանը մոտեցավ այդ կաթսաներին, որ տեսնե ի՞նչ է նրանցում եփվածը, և երբ տեսավ, քստմնելով ետ քաշվեց, և ընկերներին չասեց, թե ի՞նչ էր տեսածը։ Այդտեղից մտան մի ավելի երկար սրահ և այդտեղ տեսան զանազան արհեստավորներ խառնիխուռն աշխատելիս. մի քանիսը մի-մի բան էին ասեղնագործում, մյուսները նրանց կողքին մի-մի բան էին հյուսում, մի քանիսը կար էին անում, մյուսները ոսկերչություն։ Այսպես հարյուրաչափ մարդիկ այստեղ աշխատում էին ապտա լույսի տակ, ամենքն էլ մեռելի գույն առած։

Այս ամենը ցույց տալուց հետո առաջնորդող մարդը կրկին տարավ նրանց առաջվա սրահը և այնտեղ ասաց.

— Այն գիվական ծերունին, որ ձեզ խաբել բերել է, մեզ ամենից էլ նա է բերել այստեղ։ Թե քանի ժամանակ է, որ ես այստեղ եմ, ինձ հայտնի չէ, որովհետև այստեղ օր ու գիշեր չկա, այլ կա

միայն մի անվերջ խավար։ Այսքանը միայն գիտեմ, որ ինձանից առաջ և ինձ հետ եկող մարդիկը կոտորվել են ամենքն էլ։ Այստեղ բերում են երկու տեսակ մարդիկ, արհեստավոր և անարհեստ։ Արհեստավորներին աշխատեցնում են մինչև իրանց մահը, իսկ արհեստ չգիտցողներին տանդամ են սպանդանոց, որ ես ձեզ ցույց չտվի, և այնտեղից բերում են այն խոհանոցը, որ դուք տեսաք։ Ահա մի այսպիսի զարհուրելի տեղ է այս տեղը։ Ծերունի դևը մենակ չէ, նա ունի հարյուրավոր գործակիցներ, որոնք՝ ամենքն էլ քուրմեր են։ Այս դժոխքի վրա է նրանց բնակարանը։

— Դու այս ասա, հիմա մեզ ի՞նչ են անելու,— հարցրեց Վաչագանը։

— Միևնույնը կանեն, ինչ որ մյուսներին։ Ով որ ձեզանից արհեստ գիտե, կապրի մինչև մեռնիլը, իսկ ով որ չգիտե, նրան կտանեն սպանդանոց։ Ես հիմա մեռելատանն եմ, ըստ որում հայտնեցի, որ է՛լ աշխատելու ուժ չունիմ։ Բայց աստված հոգիս չի առնում, երևի ուզում է ինձ լույս աշխարհի արժանացնել. և գիտե՞ք, ես հավատում եմ, որովհետև երազումս ինձ երևաց մի կինարմատ՝ գլխին թագաձև սաղավարտ, ձեռին երկսայրի սուր, մի հրեղեն ձիու վրա նստած և ասաց ինձ. «Մի՛ հուսահատվիր, Վաղինա՛կ, ես կգամ շուտով և ձեզ ամենից կազատեմ»։ Ես վաղուց մեռած կլինեի, եթե այդ հրաշագեղ թագուհին ինձ հույս տված չլիներ. նրա տված հույսը իմ հոգուս սնունդ է տալիս, և ինչքան թույլ եմ մարմնով, այնքան ուժեղ եմ հոգով։ Ա՜խ, ի՛մ Վաչագան, ո՞րտեղ ես, ինչո՞ւ ես մոռացել քո Վաղինակին...

Վաչագանը, որ մինչև այս ժամանակ մի թմրած վիճակի մեջ էր և պատմողի խոսքերը միայն դնդնդացնում էին նրա ականջի թմբուկը առանց տպավորվելու մտքի վրա, վերջին խոսքերից սթափվեց նա իբրև մի խոր քնից, և սկսեց հիշել երազի նման «թագուհի», «Վաղինակ». «Վաչագան» բառերը։ «Ուրեմն սա մեր Վաղինակն է», մտածեց նա։ Այս մտածելով՝ ուշքի գալով, ուզում էր վրան ընկնել և գգվել, ուզում էր հայտնել, թե ինքն է Վաչագանը, բայց մեկ էլ չհավատալով իր ականջին՝ կրկին հարցրեց, թե ո՞վ է նա և ի՞նչպես է ընկել այստեղ։

Վաղինակը իր պատմությունն սկսեց շատ հեռվից և Վաչագանին անծանոթ առարկայից։ Իսկ այդ միջոցին Վաչագանն ուզեց մտածել, որ լավ չի լինիլ, եթե ինքը հանկարծ հայտնի իր ով լինիլը, ըստ որում մի այդպիսի հայտնություն՝ թե՛ ուրախության և

թե՛ կսկիծ լինելով՝ կարող էր սրի պես կտրել նրա կյանքի բարակացած թելը։ Այս պատճառով ընդհատեց նրա պատմությունը, ասելով.

— Քո անունդ, ինչպես լսեցի, Վաղինա՞կ է։

— Վաղինակ է, այո՛, Վաղինակ... ես մի ժամանակ...

— Եղբայր Վաղինակ, շատ խոսիլը քեզ շատ վնաս է։ Ապրի՛ր մինչև քո երազը կատարվի։ Ես հավատում եմ քո երազին և շնորհակալ եմ, որ հայտնեցիր մեզ։ Այսուհետև մենք էլ կապրինք այդ հույսով։ Լավ կանես, որ քո մյուս արհեստակիցներին էլ հայտնես քո երազը։ Ես ինքս երազ մեկնող եմ, հավատացնում եմ քեզ, որ երազդ պիտի կատարվի տեսածիդ պես։ Բայց ահա ոտքի ձայն է գալիս, դու գնա քո տեղը։

Ժ

Վաչագանի հետ եկածները թվով վեց հոգի էին։ Հարցրեց նրանց, թե արդյոք մի որևիցե արհեստ գիտե՞ն։ Մինն ասաց, որ գիտե կտավ գործել, երկրորդը դերձակություն գիտեր, երրորդը մետաքսագործ էր, մյուս երեքը ոչ մի արհեստ չգիտեին։

— Վնաս չունի, որ դուք արհեստ չգիտեք,— ասաց Վաչագանը,— ես կասեմ, որ դուք ամենքդ ինձ արհեստակից եք, իսկ ես շատ լավ արհեստ գիտեմ։

Ոտնաձայնը արձագանք տալով, հետզհետե մոտեցավ և նրանց առջև կանգնեց մի դաժանատեսիլ քուրմ՝ հետն առած մի խումբ զինված մարդիկ։

— Դո՞ւք եք նոր եկածները,— հարցրեց քուրմը։

— Այո՛, ծառաներդ ե՛նք,— պատասխանեց Վաչագանը։

— Ձեզանից ո՞վ է արհեստ իմանում։

— Մենք ամենքս էլ գիտենք,— ասաց Վաչագանը,— գիտենք շատ թանկագին դիպակ գործել։ Մեր գործվածքի մի կշիռը հարյուր կշիռ ոսկի կարժե։ Մենք մեծ գործարան ունեինք, բայց պատահմամբ կրակ ընկավ այրվեց, և մենք ընկանք պարտքի տակ և խեղճացանք։ Եկանք քաղաք, որ մի գործ գտնենք մեզ համար, հանդիպեցանք մեծ քրմապետին և նա մեզ բերավ այստեղ։

— Շատ լավ. բայց մի՞թե ճշմարիտ այդչափ թա՞նկ կարժե ձեր գործվածքը։

— Մեր ասածի մեջ սուտ չկա, չէ՞ որ պիտի ստուգեք։

— Իհարկե, ես շուտով կիմանամ, թե որքան ճշմարիտ է ձեր ասածը. հիմա ասացեք, ի՞նչ նյութեղեն և գործիքներ են հարկավոր, որ ես բերեմ։

Վաչագանը հայտնեց մի առ մի, թե ինչ ու ինչ է հարկավոր։ Մի քանի ժամից հետո ամեն ինչ պատրաստ էր։ Քուրմը պատվիրեց, որ երթան արհեստատունը, այնտեղ աշխատեն և նրանց հետ կերակրվին։

— Այնտեղ մեր գործը լավ չի հաջողիլ,— ասաց Վաչագանը։— Մեզ հարկավոր է ջոկ և ընդարձակ տեղ, և այս տեղը ամենից հարմար է։ Մեր գործի նրբությունը պահանջում է առատ լույս, աղոտ լույսի տակ ոչինչ չենք կարող կատարել, իսկ ինչ վերաբերում է մեր կերակուրին, պետք է գիտենաք, որ մենք մսակեր չենք, սովոր չենք այդ կերակուրին. հենց որ միս ուտենք, իսկույն կմեռնինք, և դուք կզրկվիք այն մեծ օգուտից, որ մեզանից կարող եք ստանալ։ Ճշմարիտն եմ ասում, որ մեր գործի մի քաշը հարյուր քաշ ոսկի կարժե...

— Շատ լավ,— ասաց քուրմը,— ես ձեզ համար կուղարկեմ հաց և բուսեղեն կերակուր, դուք կունենաք և առատ լույս, բայց եթե ձեր գործը այնպես չլինի, ինչպես խոստանում եք, ես ձեզ ամենիդ սպանդանոց կուղարկեմ, և սպանելուց առաջ՝ ենթարկել կտամ չարաչար տանջանքների։

— Մեր ասածի մեջ ոչինչ սուտ չկա. եթե ուզում եք մեր խոստացած շահն ստանալ, պետք է միայն կատարեք մեր ուզածը։

Քուրմը կատարեց իր խոստումը։ Նրանց համար ուղարկում էր սպիտակ հաց, կանաչեղեն, կաթ, մածուն, պանիր և զանազան չոր ու թարմ մրգեր։ Վաչինակն էլ մասնակցեց այդ սնունդին, մյուսներին էլ նշխարքի պես բաժանում էին ծածկաբար սպիտակ հացից, հաղորդության տեղ էր բռնում և կենաց հացի պես կենդանություն տալիս նրանց։ Վաղինակը նոր սնունդի ազդեցությունով հետզհետե կազդուրվեց և կենդանի մարդու կերպարանք առավ։ Վաչագանն սկսեց իր գործը և իր ընկերներին էլ իրան օգնական շինեց։ Կարճ միջոցում պատրաստեց մի կտոր շատ պատվական դիպակ այնպիսի նախշերով, որոնց եթե ուշադրությամբ զննեին և իմանային նրանց խորհուրդը, նույն դժոխքի պատմությունը պիտի կարդային նրանց մեջ։

Քուրմը եկավ, տեսավ պատրաստած դիպակը և մնաց հիացած։

Վաչագանը ծալելով իր գործքը ինչպես պետք էր, և հանձնելով քուրմին, ասաց.

— Ես առաջ ասացի, որ մեր գործվածքի մի կշիռը հարյուր կշիռ ոսկի կարժե, բայց հիմա հարկավոր եմ համարում ասել, որ սա իմ ասածի կրկնապատիկը կարժե, քանի որում որա վրա կան այնպիսի թալիսմաններ, որ հագնողին միշտ զվարթ և ուրախ կպահեն։ Այս կա միայն, որ հասարակ մարդիկը սրա գինը չեն իմանալ։ Սրա գինը կիմանա միայն Անահիտ թագուհին, և բացի նրանից ոչ ոք չի էլ համարձակիլ հագնիլ մի այսպիսի թանկագին գործվածք։

Արծաթամոլ քուրմը աչքերը չորս բաց արավ, երբ որ իմացավ դիպակի իսկական արժեքը։ Այս մասին նա խորամանկ քրմապետին ոչինչ չհայտնեց և մինչև անգամ ցույց չտվավ նրան։ Ուզեց, որ թագուհու տեսությանը միայն ինքն արժանանա, և նրանից առած ավելի ոսկիքը ինքը վայելի...

ԺԱ

Անահիտը Վաչագանի բացակայության ժամանակ լավ էր կառավարում երկիրը, և ամենքն էլ գոհ էին, առանց իմանալու, թե նա է կառավարողը, բայց ինքը սաստիկ մտատանջության մեջ էր ընկել, քանի որում քանի օրից արդեն տասն օր էլ անցել էր, բայց թագավորը չէր վերադարձել։ Նա գիշերը հանգիստ չուներ. սարսափելի երազներ էր տեսնում և հանկարծ վեր թռչում։ Ամեն բան փոխվել էր նրա աչքումը և ամեն ինչ մի անսովոր հատկություն ստացել։ Զանգին անգադար ասում ու վնգստում էր և թագուհու ոտներն ընկնելով աղիողորմ կերպով կլանչում ու նրան ավելի ևս մտատանջության մեջ ձգում։ Վաչագանի ձին անընդհատ խրխնջում էր մայրը կորցրած քուռակի պես և իր ախորժակը կորցնելով՝ օրեցօր նիհարում էր։ Մարի հավերը կանչում էին աքաղաղի պես, իսկ աքաղաղները փոխանակ լուսաբացին կանչելու՝ երեկոյին էին ծկլթում փասիանի ձայնով։ Պարտիզի սոխակներն ընդհատել էին իրանց ծլվլոցը, և նրանց տեղ լսվում էր գիշերները բուերի վայնը։ Այլևս չէին քչքչում թարթառի կոհակները ուրախ-ուրախ թռչկոտելով, այլ վա՜շ-վի՜շ-վա՜շ-վի՜շ անելով՝ անցնում էին պարապի տակով տխուր ու տրտում։ Արքասիրա Անահիտը մի անսովոր երկ-

յուղի մեջ էր ընկել, և իր սովերը նրա առջև վիշապի պես էր ծրգվում։ Մի հասարակ թխկոցից, մի սովորական գոչյունից նա վեր էր թռչում և սարսռում։ Երբեմն ուզում էր կանչել իշխաններին և հայտնել նրանց թագավորի բացակայությունը և անհայտանալը, բայց վախենում էր, թե մի գուցե դրա հետևանքը վատ լինի, մի ապստամբություն ծագի երկրի մեջ և խռովություն ընկնի։

Մեկ առավոտ էլ՝ սաստիկ սրտնեղած՝ ման էր գալիս պարտիզումը, իր ծառաներից մինը ներս եկավ և հայտնեց նրան, թե մի օտար մաճառական է եկել և ասում է, որ մի երևելի բան ունի վաճառելու թագուհուն։ Անահիտի սիրտն սկսեց մի անսովոր կերպով տրոփել։ Հրամայեց՝ որ շուտով ներս բերեն այն մարդուն։

Ներս եկավ մի դաժան կերպարանքով մարդ, խոր գլուխ տվավ թագուհուն և արծաթե սինու վրա դրած մի ոսկե դիպակ դրավ թագուհու առջև։ Անահիտը վեր առավ քննեց դիպակը և ուշ չդարձնելով նախշերի վրա, հարցրեց գինը։

— Իր կշռովը երեք հարյուր կշիռ ոսկի կարժե, որորմած թագուհի։ Ուզում եմ ասել, որ ինձ վրա այդքան է նստել միայն գործքն ու նյութը, իսկ աշխատանքն էլ թողնում եմ քո ողորմության կամքին։

— Մի՞թե այդքան թանկ կարժե։

— Ողջ լինի թագուհին, դրա մեջ կա մի այնպիսի զորություն, որ անգնահատելի է։ Դրա վրա եղած նկարները հասարակ նախշեր չեն, այլ թալիսմաններ են, իսկ այդ թալիսմանները այն զորությունն ունին, որ դրա հագնողին միշտ զվարթ, միշտ ուրախ կպահեն։ Դրա հագնողը կյանքի մեջ տխրություն չի տեսնիլ։

— Մի՞թե այդպես,— ասաց Անահիտը և սկսեց բաց անել դիպակը և ուշի ուշով զննել նրա նկարները, որոնք ոչ թե թալիսմաններ, այլ ծաղկագրեր էին։ Անահիտը լուռ ու մունջ կարդաց նրանց մեջ հետևյալ խոսքերը.

«Իմ աննման Անահիտ, ես ընկել եմ մի սոսկալի դժոխքի մեջ։ Այս դիպակ բերողը նույն դժոխքի վերակացուներից մեկն է։ Ինձ մոտ է և Վաղինակը։ Դժոխքը գտնվում է Պերոժ քաղաքից դեպի արևելք մի պարսպապատ մեհյանի հատակում։ Եթե շուտ օգնության չհասնես, մենք կորած ենք հավիտյան։

Վաչագան»։

Անահիտը մեկ անգամ կարդալով չբավականացավ, երկրորդ և երրորդ անգամ էլ կարդաց, ըստ որում իր աչքերին չէր հավատում. կարդաց և չորրորդ անգամ, միայն այս անգամ ոչ թե կարդում էր իսկապես, այլ մտածում էր, թե ինչ անելու է։ Աչքը ձգած գրերին՝ երկար մտածելուց հետո՝ դարձավ դեպի վաճառականի հագուստի մեջ ծպտած քուրմը և ուրախ դեմքով ասաց.

— Դու ճշմարիտ ես ասում. քո դիպլոմիդ նկարները ուրախացնելու զորություն ունին։ Ես այսօր շատ տխուր էի, բայց այս րոպեիս մի անպատմելի ուրախություն եմ զգում։ Իմ կարծիքով այս դիպակը անգնահատելի է։ Եթե սրա համար իմ թագավորության կեսը պահանջեիր, ես խնայելու չէի։ Բայց գիտե՞ս ինչ կա, իմ կարծիքով ոչ մի գործ կարող չէ իր գործողից ավելի զորավոր լինել։ Այսպե՞ս է թե ոչ

— Թագուհին ո՛ղջ լինի, քո կարծիքը շատ ճշմարիտ է. արարածը կարող չէ հավասարվիլ արարողին։

— Եթե դու էլ գիտես, որ այդպես է, պետք է բերես ինձ մոտ սրա գործողին, որ ես վարձատրեմ նրան նույնպես, ինչպես և քեզ։ Դու էլ լսած կլինիս, որ ես արհեստին մեծ նշանակություն եմ տալիս, և պատրաստ եմ ամեն մի լավ արհեստավորին նույնպես վարձատրել, ինչպես իմ ամեն մի քաջ զորականին։

— Ողորմած թագուհի, ես տեսած չեմ դրա գործողին և չեմ ճանաչում։ Ես մի վաճառական մարդ եմ, այս կտորը գնել եմ Հընդկաստանումը մի հրեայից, իսկ հրեան գնել էր մի արաբից, արաբն էլ ո՞վ գիտե ումից կամ ո՞ր աշխարհից։

— Բայց դու՝ կարծեմ՝ ասացիր, թե գործն ու նյութը այսքան կարժե, և չասացիր, թե ես այսքանով եմ գնել. դրանից երևաց, որ դու ինքդ ես գործել տվել։

— Ողորմած թագուհի, ինձ այդպես էին ասել Հնդկաստանումը, ես էլ...

— Սպասիր, որտե՞ղ է քո Հնդկաստանը. այստեղից մինչև Պերոժ կլինի՞։

— Ոչ, ողորմած տեր, Պերոժը մեր կշտին է, իսկ Հնդկաստանը երեք-չորս ամսվա ճանապարհ է։

— Բայց գիտե՞ս, եթե ես ուզենամ, կարող եմ քո Հնդկաստանը մինչև Պերոժ մոտեցնել։ Կարո՞ղ ես ասել ինձ, թե դու ո՞վ ես, ի՞նչ տեղացի ես, ի՞նչ ազգից ես, ի՞նչ կրոնի ես, որտե՞ղ ես ծնվել, որտե՞ղ ես կենում, այժմ ինչ գործի ես ծառայում։

— Ողորմած թագուհի...

— Լռի՛ր, ես քեզ ողորմելու չեմ. քո բերած թալիսմաններդ ինձ հայտնեցին քո ով լինելդ։ Ծառանե՛ր, բռնեցեք այս մարդուն և ձգեցե՛ք մթին բանտի մեջ։

ԺԲ

Վաչագանն իր ազատվելու մասին էլ ոչ մի կասկած չուներ։ Կամենալով ընկերների մեջն էլ ազատության հույսը սաստկացնել, դարձավ դեպի Վաղինակը և ասաց.

— Եղբա՛յր Վաղինակ, մի երազ էլ ես տեսա բոլորովին քո տեսածի նման։ Ես այնպես եմ կարծում, թե մենք հենց այսօր, թե այս գիշեր պիտի ազատվինք։ Բայց գիտե՞ս ինչ կա, Վաղինակ, մենք եթե այս խավարից հանկարծ լույս աշխարհ դուրս գանք, դրսի լույսը մեզ համար այնքան սաստիկ կլինի, որ մենք ոչինչ չենք տեսնիլ, և կարելի է թե մեր աչքերը վնասվին էլ։ Այս բանը ես նրա համար եմ ասում, որ երբ դուրս գալու կլինինք, և կտեսնեք, որ լույսը ծակծկում է կամ ոչինչ չեք տեսնում, փակեցեք աչքներդ, մինչև քիչ-քիչ սովորեք։ Ես շատ եմ տեսել մթին բանտից դուրս եկած մարդիկ, նրանցից եմ իմանում։

— Երանի՞ թե դուրս գանք միայն այս սպանդարանից, թեկուզ աչքներս կուրանա, վնաս չունի. բայց վարպետ եղբայր, քո այդ ասածդ մի բան ձգեց միտս, որ չեմ կարող չասել։ Մի անգամ ես ու թագավորի որդին որսորդություն անելիս՝ իջանք մի աղբյուրի մոտ, շատ դադրած ու քրտնած։ Մոտակա գյուղի աղջկերքը շրջապատել էին աղբյուրը և հերթով լցնում էին իրանց ամանները։ Իշխանս ջուր ուզեց, աղջիկներից մինը լցրեց փարչը, որ բերի տա իրան, մի ուրիշ աղջիկ առավ նրա ձեռից փարչը և դարտկեց։ Հետո ինքն սկսեց նորից լցնել, բայց էլի դարտկեց, և այսպես կրկնեց նա քսան, թե երեսուն անգամ, սուտ չեմ կարող ասել, լավ միտս չէ։ Իմ բարկությունս սաստիկ եկավ, բայց իշխանիս շատ հաճելի թվաց աղջկա վարմունքը, մանավանդ երբ նա ջուր բերելուց հետո հայտնեց, թե իր միտքը չար չէր, այլ տեսնելով, որ հոգնած ու քրտնած ենք, հարկավոր համարեց ուշ հասցնել սառը ջուրը, մինչև մենք փոքր-ինչ շունչ առնենք և հովանանք։ Հիմա քո ասածն էլ նրա

ասածի նման է. և գիտե՞ք արդյոք, գուցե հենց այն ջուր ավազ աղջիկն է այժմ մեր թագուհին։ Վաչագանը նրան տեսնելուց հետո՝ էլ ուրիշ աղջիկ չուզեց. վճռաբար ասաց, թուզեք՝ նա՛ է, չեք ուզիլ՝ նա է։ Թագավորը ճարահատած՝ ինձ ուղարկեց նրա հոր մոտ հարսնախոսության. բայց աղջիկը չհոժարեց, թե ես արհեստ չգիտցողին չեմ ուզիլ։ Ես այն ժամանակ մտքումս ծիծաղեցի, բայց էլի իշխանս իմացավ նրա խելացի միտքը և մի տարումը սովորեց շատ գեղեցիկ դիպակ գործել՝ բոլորովին քո գործածիդ պես։ Իսկ ես, երբ որ ընկա այդ դժոխքի մեջ, նոր իմացա նրա խոսքի նշանակությունը։

— Բայց դու ինձ ա՛յս ասա, եղբայր Վաղինակ, պատճառն ի՞նչ է, որ մենք թագուհուն ենք տեսնում երազներումս և ոչ թե թագավորին։

— Ո՞վ գիտե, այդ բանը դու ինձանից լավ կիմանաս, ըստ որում երազի մեկնողը դու ես, և, ներիր ինձ, որ երեսիդ ասեմ, ասածիս մեջ կեղծավորություն չկա. դու իմ աչքումս մի շատ իմաստուն մարդ ես երևում. դու որ կարողացար դժոխքի արբանյակներից մարդու կերակուր ստանալ, դու էլի շատ բան կարող ես անել, և ես դեռ զարմանում եմ, որ մի հրաշքով հանկարծ չես չքացնում այս տարտարոսը և մեզ ամենիս փրկություն տալիս։ Եթե ասուված տա, որ մենք այս դժոխքից ազատվենք, ես հավատացած եմ, որ թագավորն իսկույն կկանչե քեզ և իր ամենամոտիկ խորհրդակիցը կանե։

— Եվ այդ, իհարկե, քո շնորհիվ կլինի, ըստ որում թագավորին ես ծանոթ չեմ։ Բայց ով գիտե, թե ինքը թագավորն ինչ վիճակի մեջ է այժմ, գուցե նա էլ մի ուրիշ դժոխքի մեջ է ընկել և ինձ նման զարբաբ է գործում։ Բա՛ էլ որ օրվան համար է ջուլհակ դառել։

— Քո խոսքերդ խորհրդավոր են թվում ինձ... բայց չէ՞... ինչպե՞ս կարելի է, որ իմ Վաչագանին քո օրն ընկած տեսնեմ, լավ է, որ ես մեռնիմ այս բոպեիս։

— Իմ խոսքերի մեջ ոչինչ խորհրդավոր բան չկա, եղբայր Վաղինակ, ես այն եմ ասում, ինչ որ սրտինս է։ Իմ կարծիքով թագավորն էլ մեզ նման մի մահկանացու մարդ է, մեզ նման ամեն փորձություններին ենթակա։ Մենք հիվանդանում ենք, նա էլ է հիվանդանում. մեզ սպանում են, գերի են տանում, նրան էլ են այդպես անում։ Նա էլ է ջուրն ընկած ժամանակ մեզ պես խեղդվում,

կրակն ընկած ժամանակ մեզ պես այրվում, նրա կերածն էլ է մի փոր հաց, այն էլ գուցե ավելի գառն...

— Այդ շատ ճշմարիտ ես ասում, վարպետ եղբայր, բայց իմ կարծիքով թագավորն այնքան խոհեմ պետք է լինի, որ ինձ նման լոկ հեռաբրքրությունից շարժված՝ քրմապետի հետևից չերթա և ընկնի նրա դժոխքի մեջ։

— Այդ մի փորձանք է, եղբայր Վաղինակ։ Մի՞թե թագավորը կարող է կարծել, որ սուրբ քրմապետը մի զարհուրելի դև է. մի՞թե նա կարող է կարծել, թե կան այնպիսի մարդիկ, որոնք քստմնելի եղեռնագործությունը իրանց համար մի զվարճություն են համարում։ Չէ՛, Վաղինակ, աշխարհիս երեսին ոչ մի մահկանացու ազատ չէ փորձանքից. այս օրվան թախտավորը կարող չէ իմանալ, թե վաղն ի՞նչ անբախտության մեջ պիտի ընկնի։ Բայց ուրիշ բան է, եթե վերահաս վտանգը առջևդ կանգնած երևում է իր իսկական կերպարանքով։ Խելքը գլխին մարդը՝ երբ որ պատահում է մի վարար գետի, գլխապատառ ներս չի ընկնում, այլ փնտրում է նրա ծանծաղուտը։ Դու ինչ կուզես ասա՛, բայց մեր տեսած երազը ցույց է տալիս, որ թագավորը նմանապես ընկած է մի փորձանքի մեջ, և իմ սիրտն ասում է, որ նա կազատվի միայն այն ժամանակ, երբ որ կազատվինք մենք ինքներս։

— Եվ իհարկե նա ինքը կլինի ազատած մեզ իր գիպակագործության շնորհիվ։ Իմ սիրտս էլ ասում է, որ այս բոպեիս ես լսում եմ իմ թագավորի ձայնը. այդ ձայնը հենց առաջին անգամ լսելիս թափանցել է սրտիս մեջ։ Բայց արդյոք հավատա՞մ իմ ականջին, ի՞նչ կասես, ասա՛ ինձ կտրական։

— Ո՛չ, ո՛չ, մի հավատար. բայց հավատա՛ այն ձայնին, որ դրսից կլսես։ Ականջ դրեք, ահա՛ ձայներ են լսվում, կարծես դժոխքի դուռն է դղրդում, երևի փրկիչն արդեն մոտեցել է. իմա՛ց տվեք ամենքին, որ գան այստեղ պատրաստ կենան...

ԺԳ

Անահիտը երբ որ բանտարկեց ծպտած քուրմին, խսկույն փչել տվավ պատերազմական փողերը։ Ահագին փողերի այդ հանկարծական որոտալը հայտնի նշան էր, որ մի մեծ վտանգ է պատահել աշխարհին։ Մի ժամ չանցած՝ բոլոր քաղաքացիք թափվեցին պա-

լատի առջև և այդտեղ սկսեցին խռնիլ ու տատանիլ լճացած հեղեղի պես։ Ոչ ոք չէր իմանում, թե ինչ է պատահել, ամենքը շնչասպառ միմյանց ետին հարցնում և ոչ մեկից մի որոշ պատասխան չէին ստանում։ Հանկարծ պատշգամբի վրա երևաց Անահիտը՝ ոտից մինչև գլուխ սպառազինված, և դեպի ժողովուրդը դառնալով՝ այսպես խոսեց.

«Ձեր թագավորի կյանքը վտանգի մեջ է։ Այս րոպեիս իմացա, թե ինչ տեղ է ընկել։ Նա գնացել էր իր երկրի մեջ պտտելու, որ ժողովրդի կարիքներն ու հոգսերն աչքովը տեսնի։ Ձար մարդկանց է հանդիպել և ընկել է մի տարտարոսի մեջ։ Էլ ուրիշ բան չունիմ հայտնելու ձեզ առայժմ։ Ժամանակ չպետք է կորցնել։ Ով որ սիրում էր թագավորին, ում համար թանկ է նրա կյանքը, շուտով ձիավորվի և գա իմ հետևից։ Մենք պետք է կեսօր չեղած՝ հասնենք Պերոժ քաղաքը։ Ես արդեն պատրաստ եմ և ձեզ եմ սպասում։ Դե՛հ գնացե՛ք և շուտով պատրաստվեցեք»։

Մի ակնթարթի մեջ ցրվեցավ ժողովուրդը՝ գոչելով՝ կեցցե՛ թագավորը, կեցցե՛ թագուհին, և մի ժամ չանցած, արդեն ամենքը զինված պատրաստ էին։ Քաջասիրտ օրիորդներն ու տիկիններն էլ երբ որ իմացան, թե թագուհին պիտի առաջնորդե զորքին, նմանապես զրահավորվեցին ու ձիավորվելով շրջապատեցին թագուհուն։

Մի կատարյալ հիացք էր Անահիտը սպարապետի զգեստի մեջ։ Կրակոտ ձիու վրա նստած, ոսկեզօծ զրահով պատած, մազերը սաղավարտի մեջ ամփոփած, լայնաշեղբ թուրը կապած, վահանը թիկունքին կախած։ Այս բոլորը նրա արեգնատիպ դեմքի և հրավառ աչքերի հետ մի ահեղ կերպարանք էին ավել նրան։

Երբ քաղաքից դուրս եկան տափարակ դաշտը, Անահիտը դարձրեց ձիու գլուխը և այս ու այն կողմ քշելով՝ հրամաններ արձակեց, և մի քանի րոպեի մեջ կարգավորելով ամբողջ այրուձին, գոչեց բարձրաձայն «հառա՛ջ» և ինքն առաջ անցնելով ասպանդակեց ձին և մի վայրկյանի մեջ աներևութացավ։ Հեռվից երևում էր մի ձիու բարձրացրած թանձր փոշին, որ ամպի պես մինչև երկինք էր հասնում։ Երկու ժամից հետո նա իր հրեղեն ձիով կանգնած էր Պերոժ քաղաքի հրապարակի մեջ մեն-մենակ։ Կռապաշտ քաղաքացիք նրան երկնքից իջած մի նոր աստված համարելով՝ խուռն բազմությունով շրջեցին նրա առջև և գլխները մինչև գետին կորացրին։

— Ո՞ւր է ձեր քաղաքապետը,— գոչեց Անահիտը սպառնալից ձայնով։

Ծունկ չոքածներից մինը վեր կացավ և դողդողալով ասաց.

— Ծառա՛դ եմ, այստեղի քաղաքապետը։

— Դո՛ւ ես ուրեմն, որ այնքան անհոգ ես, որ չգիտես թե ի՞նչ է գործվում քո աստվածների բնակարանում։

— Ծառադ եմ, ես ոչի՛նչ չգիտեմ։

— Դու կարելի է թե չգիտես էլ թե որտե՞ղ է գտնվում ձեր տաճարը։

— Ինչպե՞ս չգիտեմ, ծառադ եմ, շատ լավ գիտեմ։

— Առա՛ջ անցիր ուրեմն...

Կես ժամ չանցած՝ ամբողջ քաղաքը զբլված գնում էր Անահիտի հետևից։ Երբ որ մոտեցավ մեհյանի պարիսպներին, քուրմերը կարծեցին, թե ուխտավորների մեծ բազմություն է եկողը, շտապով բաց արին դուռը։ Բայց երբ ներս խռնվեց ժողովուրդը, երբ տեսան զրահավորված հրաշագեղ սպարապետի սպառնալից դեմքը և իրանց ուշ չդարձնելը, մի անսովոր սարսափի մեջ ընկան։ Անահիտը մի րոպեի մեջ գտավ տարտարոսի դուռը և դառնալով քաջաքապետին՝ հրամայեց.

— Բաց արեք ահա՛ այս դուռը։

Մինչդեռ քաղաքապետի հրամանով մի քանի անձինք պատրաստվում էին կոտրատել դուռը, ծերունի քրմապետը վերահաս վտանգը տեսնելով, դուրս եկավ իր մեհենական զգեստով, որ ժողովրդի վրա սարսափ ձգե և ետ մղե։ Երբ որ իր սպիտակ շուրջառը ձգած, քրմապետական երկճյուղ ու երկայն թագը գլխին դրած և գավազանը ձեռին դուրս եկավ ուռած ու փքված՝ ժողովուրդը ճանապարհ բաց արավ և ետ քաշվեց ահ ու դողով։ Նա մոտեցավ Անահիտին և պատգամախոսի ձայնով աղաղակեց.

— Ի՞նչ ես ուզո՞ւմ, ինչ ես անո՞ւմ, ետ քաշվիր այդտեղի՞ց։

Անահիտը՝ բարկությունը հազիվ զսպելով, ասաց.

— Ես հրամայում եմ, որ այս դուռը բացվի՛։

— Ո՞վ է կարող հրամայել այստե՞ղ, բացի ինձանի՞ց։ Այս դո՞ւռը մեր սրբարանի դո՞ւռն է. այստե՞ղ է գտնվում մեր նախնյաց փոշի՞ն, այստեղ է մեր անշեջ կրակարա՞նը. տեսե՞ք ահա՛ այն ծո՞ւխը, որ մինչև երկի՞նք է բարձրանո՞ւմ։ Աստվածների բարկությունը մի՞ շարժեք։ Ցրվեցե՞ք, հեռացե՞ք, կորե՞ք, ինչպե՞ս եք համարձակվում ձեր պի՞ղծ ոտներով կոխոտե՞լ այս սո՞ւրբ վա՞յրը։

Քրմապետի ահեղագոչ սպառնալիքը սնապաշտ ժողովրդի վրա սարսափ բերավ, ամենքը կորագլուխ ետ քաշվեցին. բայց նրանց

մեջ կային և քրիստոնյաներ, որոնք պինդ կանգնեցին իրանց տեղերը, կասկածելով, որ այդ ծածկարանումը մի սարսափելի գաղտնիք պիտի լինի թաքնված։ Նրանք միաբերան գոչեցին.

— Բացվի՜, բացվի՜ այդ տարտարոսի դուռը։

Քրմապետը տեսավ, որ իր հրամանին ընդդիմացողներ կան, երեսը դարձրեց դեպի մեհյանը և ձեռքերը մեկնելով՝ աղաղակեց.

— Ո՜վ հզոր աստվածնե՜ր, ձեր սուրբ տաճարը պղծվո՜ւմ է, օգնությո՜ւն հասցրեք...

Այս ձայնի վրա մեհյանի դուռը բացվեց և նրա միջից դուրս թափվեցին մի խումբ սպառազինված գաժանատեսիլ մարդիկ։ Սրանք քուրմերն էին, որոնք վերահաս վտանգը տեսնելով՝ անձնապաշտպանության էին պատրաստվել։ Քրմապետը հրամայեց նրանց, որ դուռը պահպանեն և ոչ ոքի թույլ չտան մոտենալ։

Անահիտի համբերությունը հատավ սաստիկ բարկությունից։ Դարձրեց ձիու գլուխը և ետ նայելով՝ տեսավ, որ քաղաքի վրա ամպի պես փոշի է բարձրացած, իմացավ, որ զորքը մոտեցել է։ Այդ հանգամանքից ավելի ևս սրտապնդվելով՝ ուզեց ինքը մենակ վերջացնել ամեն բան և մի րոպե առաջ տեսնել իր Վաշագանին։ Ձախ ձեռքն առավ վահանը և աջով սուրը հանելով, դարձավ դեպի քուրմերը և գոչեց.

— Վերջի՛ն անգամ հրամայում եմ ձեզ գինաթա՛փ լինել և բանա՛ք այդ դժոխքի դուռը։

Քուրմերը պատրաստվեցին դիմադրելու։ Անահիտի խմաստոն ձին իմացավ տիրուհու մտադրությունը. մի թեթև տոպանդակի հարված ստանալուն պես՝ կոխկոտեց քավթառ քրմապետին և հարձակվեց քուրմերի վրա։ Կայծակի արագությամբ երեքի գլուխը թռցրեց Անահիտը և իսկույն ետ մղեց ձին։ Քուրմերը նրան շրջապատեցին և վիրավորեցին ձին։ Անահիտը պաշտպանողական դիրք բռնեց, բայց ձին իր հարձակմունքը շարունակում էր. նա միանգամից թե՛ առջևից և թե՛ հետևից էր հարձակվում և հարվածներ էր, որ տալիս էր աքացիներով։ Քուրմերը կռվում էին ամենահուսահատ և կատաղի կերպով։ Անահիտի դյանքը անխուսափելի վտանգի մեջ էր։ Այդ որ նկատեցին քրիստոնյանները, քուրմերի քամակից հարձակվեցին։ Քուրմերը շփոթվեցին և երեսները դարձրին, որ պաշտպանվին։ Անահիտը՝ օգուտ քաղելով այդ հանգամանքից, կրկին հարձակվեց և էլի մի քանի գլուխ թռցրեց և մի չանխան ոտնատակ ավել։ Կապաշանները տեսան, որ քրիստոնյաներն օգնում են Անահիտին, կարծեցին թե կռիվը կրոնական է, իսկույն անցան քուրմերի կողմը և սկսեցին քարե կարկուտ թափել քրիստոնյաների վրա։ Այդ միջոցին Անահիտի սաղավարտը վայր ընկավ մի քանի հարվածից, որ դիպավ նրա ծայրին։ Նրա խիտ և երկայն մազերը փռվեցին և ծածկեցին ամբողջ կազմվածքը ամեն կողմից, բացի հրացայտ աչքերից։ Նրա այդ տեսքը մի նոր սարսափ ձգեց ամբոխի վրա, որոնք իրանց քարե կարկուտը դադարեցրին իսկույն։ Այդ հանգամանքից էլ օգուտ քաղեց Անահիտը. մի անգամ էլ հարձակվեց քուրմերի վրա և մի քանիսին մահացու վերք տալով գետին գլորեց։ Հենց այդ ժամանակ վրա հասան զորքի առաջապահ նիզակավորները օրիորդների և տիկինների հետ և իրանց թագուհուն հուսահատ կռվի մեջ տեսնելով, միաձայն աղաղակեցին և հարձակվեցին քուրմերի վրա։ Մի րոպե չանցած՝ կենդանի մնացած քուրմերը փախան. ամբոխը ետ քաշվեց և բաց հրապարակի վրա մնաց Անահիտը՝ շրջապատված քաշասիրտ օրիորդներով ու տիկիններով։ Քրիստոնյաներից մինը բերավ նրա սաղավարտը, որ ազատել էր ամբոխի ձեռից։ Անահիտն իջավ ձիուց ողջ առողջ, կարգավորեց իր մազերը և սաղավարտը դրավ գլխին։ Հրաման արձակեց, որ եկող զորքը շրջապատեն մեհյանը, որի մեջ պատսպարվել էին բոլոր քուրմերը և ներսից դուռը փակել։ Հետո դառնալով դեպի ամբոխը, ասաց. «Ձկեք այստեղ կարգով կանգնեցեք հանդարտ, որ տեսնեք ինչ կա ձեր սուրբ քրմապետի սրբությունը», և հրամայեց դուռը կոտրել։

Մի զարհուրելի տեսարան բացվեց ժողովրդի առջև։ Դժոխային որջից դուրս սողացին բազմաթիվ հոդիք, որոնք նոր գերեզմանից հանած դիակների էին նմանում։ Շատերը վերջին շնչումն էին և ոտքի վրա կանգնել չէին կարողանում։ Նրանց ուրախության լացն ու կոծը, ճիչն ու աղաղակը մարդու սիրտ էին կտրատում։ Ամենից հետո դուրս եկան Վաշագանն ու Վաղինակը գլխները քաշ գցած։ Թագուհին ճանաչեց Վաշագանին և նշանացի արավ իր մարդկանցը, որ նրան տանեն իրան համար պատրաստելի վրանը։ Վաշագանը գնաց Վաղինակի ձեռքից բռնած՝ որ աչքերը խփած կույր աղքատի պես հետևեց նրան։ Մյուս բոլոր դուրս եկողներին հրապարակի վրա նստեցնելուց հետո, Անահիտը հրամայեց զինվորներին, որ ներս գնան և ամեն բան՝ ինչ կա չկա՝ դուրս տան։ Զինվորները մտան դժոխքի մեջ և այնտեղից դուրս բերին նոր մեռած մարդկանց դիակներ, նոր կտրած գլուխներ, գլխոցներով լիքը

մարդկային լեշեր, մարդամսով լիքը կաթսաներ, զանազան արհեստի գործիքներ և պարագաներ...

Կռապաշտները, որ արդեն ամոթահարված և քստմնած էին, այդ ծայրահեղ եղեռնագործությունը տեսնելով՝ էլ չհամբերեցին, և բարձրաձայն աղաղակեցին. «Մե՞ծ է քրիստոնեից աստվածը, դժո՞խք է մեհյանը, դևե՞ր են կուռքերը, սատանա՞յք են քուրմերը, կոտորե՛նք, ջնջենք, սատկացնենք սրանց ...»։

— Ո՛չ, ո՛չ,— գոչեց Թագուհին,— սպասեցե՛ք, չմոտենաք տաճարին, ձեռք չտա՛ք քուրմերին, նրանց պատժելու իրավունքն իմն է։ Մեզ հարկավոր է նախ և առաջ այս թշվառների հոգսը քաշել։ Եվ սկսեց հարցնել ամեն մեկին առանձին, թե նա ո՛վ է, ի՞նչ տեղացի է։ Մեկն ասում էր՝ իմ անունս Առնակ է, ես Բաբիկի որդին եմ։ Այդ անունը բարձր ձայնով կրկնում էր քաղաքապետը, և ահա՛ մի ծերունի մարդ՝ դողդողալով մոտենում էր և հեկեկալով ասում. «Ուր է իմ որդիս»։ Երկրորդի մայրն էր լույս ընկնում և ուշաթափ ընկնում իր միանգամայն որդու վրա, երրորդի քույրը, չորրորդի եղբայրը։ Շատ քչերը մնացին անտիրական, այդպիսիներին էլ Թագուհին առավ իր խնամակալության տակ. դրանց թվումն էին և Վաչագանի արհեստակիցները։

Այդ թշվառներին տերվետեր անելուց հետո՝ Թագուհին կամեցավ անձամբ զննել քուրմերի սպանդարանը։ Քաղաքապետի և մի խումբ զինվորների հետ ներս գնաց և նավթավառ լուցկիներով զննեց նրա ամեն մի քունջ ու պուճախը։ Ո՛ր կողմը նայում էր, մարդկային արյունի հետքեր էր նշմարում և անհամար ոսկրներ այս ու այն անկյունում թափած։

— Այս զարհուրելի տարտարոսը կարճ ժամանակում գլուխ բերված բան չէ,— ասաց նա քաղաքապետին.— սրա վրա շատ տարի և շատ մարդիկ պիտի լինին աշխատած, իսկ այդ մարդիկը մի անգամ այստեղ ընկնելուց հետո՝ էլ լույս աշխարհք չեն տեսել։

— Ողորմած Թագուհի, ես մեղավոր եմ, որ խիստ հսկողություն չեմ ունեցել, բայց մի այսպիսի բան իմանալու համար՝ քո իմաստությունն ունենալու է։ Ամեն տարի միայն մեր քաղաքից՝ եթե քիչն ասեմ՝ հարյուր մարդ է անհայտացել, բայց ես միշտ կարծել եմ, թե լեռնեցիք են գերի տարել։ Այդ զարշելի քուրմերին մենք ոչ միայն սուրբերի տեղ ենք ընդունել, այլև կարծել ենք, թե դրանք շատ ժրաջան և արհեստասեր մարդիկ են, իրանց ձեռքի աշխատանքովն են ապրում և ոչ ժողովրդի հաշվով և արյունով։ Ո՞վ

կկարծեր, թե այն թանկագին հյուսվածքներն ու գործվածքները, որ դրանք ամենայն օր բերում էին շուկա վաճառելու, իրանց ձեռքի գործը չի եղել, ո՞վ կկարծեր, որ մեր պաշտած քրմապետը մի կերպարանափոխված դև է եղել և անմեղ մարդկանց արյան ծարավի...

Վերջապես դուրս եկան այդտեղից և գնացին դեպի տաճարը։ Բախեցին տաճարի դուռը, որ քուրմերը բաց անեն և անձնատուր լինին, բայց ներսից ձայն հանող չեղավ։ Դուռը կոտրտեցին զինվորները և ներս գնացին, բայց ներսը մարդ չգտան. վերև նայեցին և մի նոր տեսարան բացվեց նրանց առջև. բոլոր քուրմերը և քրմապետը կախվել էին առաստաղից և դեռ ճոճվում էին իրենց պաշտած հնդկացի կուռքերի դիմաց։ Երբ որ այդ մասին հայտնեցին Թագուհուն, նա ասաց.

— Այդ մահը շատ թեթև է դրանց համար, բայց վնաս չունի, թողեք այդպես մնան, միայն թո՛ւյլ տվեք ժողովրդին, որ ներս գնան և երկրպագություն տան իրանց սուրբերին։

Դրսումը ամբոխված և գրգռված մարդիկը հեղեղի պես ներս թափվեցին և կատաղի կերպով հարձակվեցին կուռքերի վրա և ջարդուփշուր արին իրանց երեկ լան պաշտած աստվածներին։ «Ի՞նչ հեշտ են ջարդվում այս գարշելիները, մինչդեռ մենք կարծում էինք, թե անհպելի և անմատչելի են», ասում էին շատերը։ Դուրս տվին բոլոր անոթներն ու սպասները, քարուքանդ արին խորաններն ու ծածկարանները, անթիվ՝ ոսկի և աշծաթ գտան, բայց առանց մի բան հափշտակելու և գողանալու՝ ամեն ինչ տարան թափեցին հրապարակի մեջ Թագուհու առջև, իսկ Թագուհին կարգադրեց, որ քուրմերի բոլոր այդ ունեցածը բաժանվի դժոխքից ազատվածներին։ Երբ որ մեհյանի մեջ էլ ոչինչ չմնաց, ամեն ինչ տակն ու վրա արին՝ իրանց արդար զայրույթի վերջին մրուրը թափեցին խեղդամահ եղած քուրմերի գլխին։ Ցած բերին դժոխքի արբանյակներին և ամենքին կտոր-կտոր անելով դուրս նետեցին պարսպից, որ գազաններին լափ դառնան։

Մնացած անելիքը Թագուհին հանձնեց իր հարյուրապետներից մեկին, իսկ ինքը գնաց իր վրանը, ուր նրան անհամբեր սպասում էր Վաչագանը։ Երկու սիրելիները նստեցին իրար կողքի և միմյանց նայելուց չէին կշտանում։ Վաղինակը մոտեցավ Թագուհուն, համբուրեց նրա ձեռքը և մյուս կողքին նստելով՝ սկսեց հեկեկալ մորը գտած երեխայի պես։

— Դու ոչ թե այսօր ես փրկել մեզ, իմ անմոռաց թագուհի, այլ շատ օրեր սրանից առաջ, երբ-ես ձեսա՞ քեզ տերազումս, հենց այդ զգեստիդ մեջ։

— Դու սխալվում ես, Վաղինակ,— ասաց Վաչագանը,— թագուհին այն ժամանակը փրկեց մեզ, երբ որ քեզ ասաց. «Ձեր թագավորի որդին արհեստ գիտե՞»։ Մի՞տդ է, որ դու էլ մի կուշտ ծիծաղել էիր։

— Ա՜խ, ճշմարիտ է. ի՞նչ ասեմ։ Եվ ես, որ այն ժամանակը շատ անհավատ էի, միայն հիմա եմ սկսել հին լսածներիս հավատալ։ Մեսրոպ վարդապետը, որ մեզ քարոզում էր, թե «Եթե Քրիստոս դժոխք չիջներ, դժոխքը չէր կործանվիլ», ես նրա ասածի վրա էլ էի ծիծաղում, բայց հիմա իմ թագավորն անձամբ ցույց տվավ, որ Մեսրոպը ճշմարիտ էր ասում։

— Հանգստացիր, Վաղինակ, այդ մասին մենք հետո շատ կխոսենք,— ասաց թագուհին, նոր արդեն զգալով, որ ինքն էլ է սաստիկ հոգնած։

— Ես ինչպես տեսնում եմ, քեզ նմանապես հարկավոր է հանգստանալ,— ասաց Վաչագանը թագուհուն։— Դու հիմա հանգստացիր, մնացածը ես ինքս կհոգամ։

Թագուհին քաշվեց վրանի մյուս բաժինը, ուր նրա համար փափուկ փռվածք էին արել օրիորդներն ու տիկինները։ Այդտեղ նա հանեց իր զենքն ու զրահը և ուղարկեց Վաչագանին, իսկ ինքը փռվածքի վրա թիկն տալով՝ ուզեց իբր հանգստանալ, բայց նրա երևակայությունն այնպես գրգռված էր, նրա սիրտն այնպես վրդովված, որ հանգստանալ չէր կարողանում։ Մեկ ուզում էր լիասիրտ ուրախանալ իր սիրելու ազատությունով, բայց մեկ էլ թվում էր նրան, թե դեռևս շրջապատված է կատաղի քուրմերով, և ինքը մերթ հարձակողական և մերթ պաշտպանողական դիրք է բռնում։ Մերթ ուզում էր իր արդար վրեժը հագեցած համարել, հիշելով թե՝ ինչպես էին թավալգլոր լինում դաժան քուրմերի գլուխները, բայց հանկարծ նրա առջև պատկերանում էին մարդամսով լիքը կաթսաները և նոր արդեն սկսում էր ամբողջ մարմնով զինահարվիլ և զարգանգիլ ու սարսռիլ... Ահա այս խառնիխուռն տպավորությունները նրանից շուտ չհեռացան, իսկ այժմ ավելի շարչարում, քան թե հանգստություն էին տալիս։

Վաչագանը շատ լավ գիտեր, որ Անահիտը ինչքան որ քաջ էր, նույնքան փափկասիրտ էր։ Գիտեր, որ նա կարող էր վրեժխնդրության հոգեվիճակով վառված անխնա կոտորել իր թշնամիներին, բայց նրա քնքուշ սիրտը կարող չէր հեշտությամբ մարսել մի այդպիսի կոշտ գործողություն։ Այս պատճառով շտապեց Անահիտից առնել իր զենքն ու զրահը։ Նա լվացվեց, մաքրվեց, փոխեց իր հագուստը, հագավ զրահը, կապեց արքայական թուրը և դուրս գալով վրանից՝ երևաց զորքին, որ նրա տեսությանն սպասում էր անհամբեր։ Հենց որ երևաց Վաչագանը և ողջույն տվավ, զորքն ուրախության աղաղակ բարձրացրեց։ Թագավորը հայտնեց նրանց իր շնորհակալությունը։ Այդ միջոցին քաղաքապետը եկավ թագավորի ոտներն ընկավ, շնորհավորեց նրա ազատությունը և հայտնեց, որ ճաշ էր պատրաստել կանաչ դաշտումը զորքի համար։ Թագավորը հրաման տվավ զորականներին, որ երթան ճաշեն և ուրախություն անեն. իսկ ինքը գնաց Անահիտի մոտ, ուր արդեն օրիորդներն ու տիկինները ճոխ սեղան էին սարքել և թագավորի գալուն էին սպասում, որ հացի նստեն։ Այդտեղ էր Վաղինակը՝ փոխած իր հնոտիքը և գեղեցիկ հագուստով զուգված։ Այդպես գեղեցիկ և ուրախ ճաշ չէր արած Վաչագանը իր բոլոր կյանքումը։ Այն ուրախությունն ու զվարճությունը, որ անում էին օրիորդները, Վաղինակին էլ մի այնպիսի հոգեկան զմայլանքի մեջ էին ձգել, որ նա կարծում էր, թե երանելյաց աշխարհի մեջ է և հրեշտակների հետ է խնդում, ուրախանում։ Անահիտն էլ ազատվեց հոգեմաշ ցնորքներից և մի բաժակ գինուց հետո ինքն էր առաջնորդում օրիորդներին ու տիկիններին սրախոսություն անելիս։

Այսպես ուրախ ճաշելուց հետո փողերը նշան տվին, որ ժամանակ է ճանապարհ ընկնելու դեպի տուն։ Առաջ ընկան թագավորն ու թագուհին, նրանց կողքին օրիորդներն ու տիկինները, իսկ հետևից բոլոր զինվորները, որոնք միաձայն երգում էին մի ազգային հաղթական երգ։ Երբ որ հասան Պերոժ քաղաքի հրապարակը, բոլոր քաղաքացիք, մեծ ու փոքր, այր ու կին միաբերան աղաղակեցին։

— Կեցցե՞ թագավորը, կեցցե՞ թագուհին, կորչի՞ն քուրմերը, կործանվի՞ն կռատունները, քրիստոնյա՞, քրիստոնյա՞ կուզենք լինել։

Թագավորը նրանց պատասխանեց, որ շուտով կգա հայրապետը և նրանց կմկրտե (և հիրավի, երկու օրից հետո եկավ Աղվանից Շուշիհաղիշ կաթողիկոսը շատ քահանաներով և եպիսկոպոսներով և բոլոր պերոժցոց տարավ Կուրի եզերը, ուր մերկացան ամենքը և

սպիտակ սավանով սփածված մուան գետը, փոքր մանուկներին գրկերն առած։ Կաթողիկոսը մկրտության համառոտ կարգը կատարեց և ամենքին հրամայեց երեք անգամ ընկղմվել ջրումը և դուրս գալ։ Այսպես լուսավորվեցին պերոժցիք քրիստոնեական լուսով։ Բայց մենք դառնանք մեր պատմությանը)։

ԺԴ

Երբ որ թագավորն ու Վաղինակը ողջ առողջ տուն հասան, դրանց դիմավորեց Զանգին, և մերթ մեկի, մերթ մյուսի ոտներին փաթաթվելով՝ այնպես էր վնգվնգում, որ կարծես ամեն բան գիտեր, ամեն բան լսել էր։

Մյուս օրը բանտից հանեցին դիպակավաճառ քուրմին, որ դատեն հրապարակով և դատապարտեն։ Երբ որ դատավորները ժողովվեցին և ուզում էին դատել նրան թագավորի ներկայությանը, Վաղինակը մոտեցավ և խնդրեց թագավորից, որ այդ դաժան ծերի կյանքն ու մահը իրան հանձնե։

— Դու ինչպե՞ս ես ուզում պատժել սրան— հարցրեց թագավորը։

— Այդ մասին ես ու Զանգին կմտածենք,— պատասխանեց Վաղինակը։— Դրա մահվան կերպովը միայն կարող եմ յեթնացնել հիշողությանս մեջ իմ կրած կսկիծը։ Այն գարշելիները հեշտ պրծան, նրանց բախտին չպիտի արժանացնեմ սրան։

— Բայց, Վաղինակ, դու մոռանում ես, որ քրիստոնեին անվայել է վրեժխնդրությունը։ Ինչպես տեսնում եմ, դու սրան տանջել ես ուզում։

— Ո՛չ, ես ուզում եմ միայն, որ դրա սև հոգին Զանգուն հանձնեմ և թողնեմ նրա կամքին, որ ինչպես ուզենա, այնպես հանե...

— Տա՛ր, տա՛ր, շանսատա՛կ արա սրան,— ասացին միաբերան դատավորները։ Թագավորն էլ չուզեց Վաղինակի խնդիրը մերժել։ Վաղինակը քուրմի ձեռները կապոտած, տարավ մի ձորի մեջ և այնտեղ բաց թողնելով, ասաց Զանգուն.

— Զանգի՛, տե՛ս, սա է այն մարդը, որ ինձ քանի տարի տանջել է սոսկալի տանջանքով, ինձ այնպես բան է ուտեցրել, որ դու

չես տեսել քո օրոմը։ Զանգի՛, տանջի՛ր այս մարդուն, որ մի քիչ սիրտս հովանա։ Դե՛, գազա՛ն է սա, բռնի՛ր, կծի՛ր, պի՛նդ, պի՛նդ...

Զանգին մի ոստյունով հարձակվեց քուրմի վրա և մի ակընթարթի մեջ բուկը հախռելո՛վ խեղդեց և մռմռալով ետ քաշվեց իսկույն։

— Ա՜խ, Զանգի, այդ ի՞նչ հեշտ պրծացրիր դու այդ անիրավին։ Մի՞թե ես քեզ այդպես ասացի։ Այդպես հո ոչ մի բարեգութ դահիճ չէր անիլ, ինչպես որ դու արիր։

Վաղինակը շատ զղջաց, որ Զանգուն դահճի պաշտոն տվավ և թագավորին գանգատվեց, բայց թագավորը շատ ուրախացավ, որ Զանգին այնքան բարի է եղել։

Վաչագան թագավորի այս արկածքի լուրը տարածվեց բոլոր քաղաքներում և գյուղերում։ Այդ մասին խոսում էին մինչև օտար երկրներում էլ և ամենայն տեղ Անահիտի և Վաչագանի գովասանքն էին անում։ Ազգային երգիչները գյուղ գյուղ և քաղաք քաղաք պտտելով՝ այդ անցքի պատմությունն էին անում երգերով։ Ափսո՛ս, որ այդ երգերը մեզ չեն հասել. բայց ինչ որ արել են Վաչագանն ու Անահիտը իրանց աշխարհի համար, այդ բանը հեքիաթի ձևով պատմում են մինչև այսօր էլ։ Այդ հեքիաթի գլխավոր միտքը այն է, որ «թագավորի կյանքը արհեստն է փրկել»։ Այս լավ միտք է, և ինչ ժողովրդի մեջ որ գտնվում է մի այսպիսի սրբացած ավանդություն, դա ցույց է տալիս, թե ուրեմն այն ժողովուրդը մեծ նշանակություն է տալիս արհեստներին, աշխատասիրությանը, որից գլխավորապես կախված է ժողովրդի բախտավորությունը։ Այդ բախտավորությունը ևս առավել ապահովանում է, երբ որ երկրի թագավորն ինքն անձամբ օրինակ է տալիս ժողովրդին և հովանավոր ու պաշտպան է դառնում արհեստին։

Օվ ճշմարի՛տ, մեր պապերը, որ շատ աշխատասեր և արհեստասեր էին, այդ անցքից հետո ևս առավել ուշադրություն դարձրին արհեստների վրա։ Ամբողջ աշխարհումը էլ ոչ մի՛ հոգի չէր գտնվում, որ մի որևիցե արհեստ չիմանար, և շատ արհեստներ մեր աշխարհում մինչև վերին կատարելագործության հասան։ Աղջկերքը սովորում էին առհասարակ գործվածքներ անել. բրդից գործում

էին զանազան գոբգեր և շալեր. բամբակից՝ կապավեղեն, մետաքսից՝ նուրբ կերպասներ։ Կաք, ձև հյուսվածք ամենք գիտեին։ Ամեն երկրագործ ինքն էր շինում իր բոլոր գործիքները, իր գութանն ու սայլը, իր զենքն ու զրահը, իր պղնձեղեն ու կավեղեն ամանները, իր տունն ու կարասիքը։ Ամառը երկիրն էր գործում, ձմեռն իր արհեստը բանեցնում։ Եվ աշխատում էին ոչ թե ջոկ-ջոկ՝ այլ խմբովին, միասին։ Տեսնելու բան էր, թե ինչպե՞ս գյուղի բոլոր առույգ երիտասարդները՝ ահագին կոտեները ձեռքներին՝ զարկ զարկի հետևից կարկուտի պես թափում էին մի կտոր երկաթի վրա, որից ուզում էին մի խոփ շինել, կամ կացին, կամ թուր և այլն։ Այսպես միասին էին հերկում իրանց դաշտերը և միասին հնձում արտերը։

Հոգևորականությունն այն ժամանակ մի ձրիակեր դասակարգ չէր։ Բոլոր վանքերը մի-մի գործարան էին, ուր պատրաստում էին ազնիվ մագաղաթ, գրում էին, կազմում էին, և բացի սրանից, իրանց բոլոր հագուստներն ու կարասիքը իրանց ձեռքովն էին պատրաստում։ Նրանք ուտում էին.

«Ուտումն ու արհեստը պետք է այնպես նյուսված լինեն միասին, ինչպես Վաչագան թագավորի դիպակը իր խորհրդավոր բալիսմաններով»:

Կարող եք ուրեմն երևակայել, թե ի՞նչ կլիներ մի ժողովուրդ այնպիսի հոգևորականների օրով, մանավանդ այնպիսի մի թագավորի, ինչպիսին Վաչագանն էր, որ ժողովրդի զավակն էր, նրա հայրն ու եղբայրը։ Ի՞նչ կլիներ Անահիտի պես մի թագուհու օրով, որ երկրի համար դառավ հարազատ ու սնուցիչ մայր, և ահա՜ ինչ էր ասում ժողովուրդը Անահիտի մասին։

> «Նա մեր գետերը ծածկեց լաստերով ու կամուրջներով, մեր ծովերն ու լճերը՝ նավերով ու նավակներով. նա մեր դաշտերը ողողեց ջրանցքներով և առուներով, մեր քաղաքներն ու գյուղերը՝ սառն աղբյուրներով։ Նա մեր սայլերին հարթ ճանապարհներ տվավ, մեր գութաններին՝ ընդարձակ երկիր։ Նա կործանեց դժոխքը և մեր աշխարհը շինեց մի եդեմական դրախտ։ Կեցցե՞ Անահիտը, կեցցե հավիտյան»։

ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ

1

Անտառի խորքում մի ճոճ կաթ կապած և նրա մեջ մի մանուկ դրած։ Լաց էր լինում մանուկը։ Մայր չկար մոտը, որ ծիծ տար, հայր չկար, որ պահպաներ։ Անտառում մարդ չկար։

Մի գիշատ պտերակով՝ կաթնալից կրծքով՝ եկավ ճոճի մոտ իր հորթուկի հետ և տխուր ձայնով երեխին ասաց.

Սիրուն երեխա, որը ես մեացել,
Քո անբախտ մորը գերի են տարել.
Նա գնա՞ց, կորա՞վ, էլ ետ չի գալու,
Էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու։
Նա քեզ փաթաթեց լայն տերևներով.
Ճոճի մեջ կապեց, «Նանիկ» ասելով.
Նա լաց էր լինում աղի արցունքով,
Իր փերզին «Նանիկն» ասում էր լալով.
«Նանա, բալիկս, նանա՜,
«Մեծատների թաթաղը,
«Մանրատների ատաղը,
«Քամին կանի՝ ժամ կլուս,
«Պախրեն կըգա՝ ծիծ կլուս,
«Նանա, գառնուկս, նանա»...
Ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,
Գահեմ, պահպանեմ իմ հորթուկիս պես։

2

Պտերան ծիծ տվավ երեխին, երեխան կշտացավ ու քնեց։ Պտերան իր հորթին թողեց երեխի մոտ. իսկ ինքը գնաց մոտերքում արածելու, որ կաթը շատացնի, և գա երկուսին էլ ծիծ տա։ Հորթը մնաց երեխի մոտ, օրորեց նրան և նանիկ ասաց.

Նանա՜, մանկիկ, նանա՜,
Իմ մերը քո մոր նման չի,
Ամեն խոտից կծիլ չի,
Ամեն ջրից խմիլ չի,
Ամեն տափին նստիլ չի.
Նա սարեսար ման կըգա,
Որը կըգտնի, ծիծ կըտա,
Նանա՜, մանկիկ, նանա՜...

Պախրան կուրծքը լիքը ետ դարձավ արոտատեղից և ծիծ տվավ երեխին էլ, հորթին էլ։

Ով որ տարով կմեծանա, մեր երեխան օրով մեծացավ։ Շատ չանցավ, նա դուրս եկավ ճոճիցը, մեկ օր չորեքթաթ տվավ, մյուս օրը ոտքի կանգնեց, մի քանի անգամ սահեց, վայր ընկավ, բայց շուտով ամրացավ և սկսեց պախրի հետևից վազվզել։

3

Մի թագավոր որդի չուներ. երազումն ասացին. «Թագավոր, աստված քեզ մի որդի պիտի տա անտառի խորքումը»։

Մի անգամ անզավակ թագավորը որսի գնաց իր որսորդների հետ։ Շատ ման եկան, ոչինչ չգտան, բայց որ հասան անտառի խորքը, այնտեղ մի պախրի հետք գտան և նրա մոտ մի երեխի ոտնատեղեր։

Ամենքը մնացին զարմացած և չէին հավատում, որ երեխի կլինին ոտնատեղերը. բայց թագավորն իսկույն հիշեց իր երազը և հրամայեց որսորդներին, որ երեխի հետքը քշեն և ուր որ լինի՝ գտնեն նրան։

Որսորդները գնացին և երկու ժամ չանցած՝ մի սիրուն մերկ տղա բերին թագավորի մոտ և պատմեցին, թե ինչպես գտան նրան պախրի ծիծը ծծելիս։

Թագավորը շատ ուրախացավ, երեխին գրկեց, համբուրեց և անունը դրավ Պախրատուր։ Պախրատուրը մեծացավ թագավորի պալատումը, լավ ուսում առավ, վերջը դառավ թագավոր և մեծ զորքով գնաց իր մորն ազատեց գերությունից։

1832

ՕՁԱՄԱՆՈՒԿ ԵՎ ԱՐԵՎԱՀԱՏ

Զմեռն էր։ Հաստակավոր մարդիկը հավաքվել էին օդեքը, այնտեղ էին զրույց անում, հեքիաթ ասում և իրանց առջյա հոգսերի վրա խոսում, խորհրդածում։ Գյուլնազ տատի թոռներն էլ՝ քուրսու շորս կողմովը բոլորված՝ իրանց տատին էին հեքիաթ ասել տալիս՝ ականջ դնում։

Մի երեկո Գյուլնազ տատը մի քիչ «չեմ-չեմ» անելուց հետո՝ սկսեց Օձամանուկի ու Արևահատ հեքիաթը, որ երեխեքը դեռ չէին լսած, և աչքերը շորս արած՝ ականջ էին դնում։

Ա

— Դե լսեցեք, երեխեք,— սկսեց Գյուլնազ տատը։

Շատ հին ժամանակներում, մի հեռու երկրում, Մասիս սարի մյուս երեսին էլ դեռ շատ դենը, մի թագավոր էր կենում։ Այդ թագավորը շատ հարուստ էր. ոսկին ու արծաթը անհամբարք, զորքն անթիվ, շատ ու շատ քաղաքների տեր. բայց զավակ չուներ, այդ պատճառով իր ունեցած անթիվ գանձն ու հարստությունը աչքին չէր երևում։

Ինչքան հեքիմ, ինչքան շառահ, ինչքան բժիշկներ են գալիս, դեղ ու դուղ անում, ոչինչ չի լինում։ Հետո՝ էլ գրբաց ասես, փալչի ասես, դերվիշ ջադուքյար, ջինդար, ոչով ոչինչ չի կարողանում անել։

Թագավորը տեսնում է, որ մարդկանցից օգուտ չկա, հույսը դնում է աստուծո վրա։ Ամենայն օր մատաղ է անում, աղքատներին առատ ողորմություն է բաժանում, օրը յոթն անգամ աղոթք է անում, ծուր դնում, աղաչանք անում աստծուն—չի լինում, չի լինում, չի լինում։

Մեկ օր էլ՝ իրա մտքի խորն ընկած, հույսը կոլցրած, այդ թագավորը ման է գալիս իրա պարտեզումը տխուր ու տրտում, մեկ էլ տեսնում է՝ հրես մի սիրուն շահմար օձ՝ իր ճուտերը գլխին հավաքած՝ ինքն ապառաժի վրա մեկնվել, արևգուն է արել, ճուտերն էլ խաղ են անում իրանով.— որը մոր վզովն է փաթաթվում, որը փո-

բի տակն է մտնում, որը գլուխն է նրա բերանը կոխում կամ հոտոտում, լպստում։

Թագավորը այդ որ տեսնում է, մնում է տեղն ու տեղը սառած փետացած։ Մտիկ է տալիս, մտիկ, հետո մի խոր հոգոց քաշելով ասում է.

— Փառքդ շատ լինի, արարիչ աստված, օձի սիրտն էլ ես սեր գցել, որ իրա ձագերին սիրի, գուրգուրի, բայց ինձանում, դու էլ գիտես, որ քո տված սերը կա ու կա. ինչո՞ւ չես ինձ էլ մի օձի ձագ տալիս, որ ես էլ նրան սիրեմ, նրան գուրգուրեմ, նրանով մխիթարվիմ»։

Դու մի՛ ասիլ, աստծու դռները՝ հենց այդ խոսքն ասելիս՝ բացված են լինում։ Թագավորի այդ խոսքը աստծու ականջն է հասնում։

Սրա վրա մի տարի անցած չանցած, թագավորի կնիկը ծնում է ու բերում—ի՞նչ եք կարծում, ի՞նչ—մի օձի ճուտ։

— Ի՞նչ ես ասում, տատի,— բացականչեցին մանուկները։

— Հապա՞, երեխե՛ք, մի օձի ճո՛ւտ։ Բայց ի՞նչ ճուտ։ Այդ ճուտը լինում է թե չէ՝ ամեն մի շունչն առնելիս, մեծանում է, դառնում մի աժդահա, մի ահագին վիշապ։ Մննդկանը, տատամայրը և մյուսները ահ ու դողի մեջ ընկած՝ փախչում են, նրան թողնում տեղն ու տեղը վեր ընկած։

Օձի ճուտը երբ որ տեսնում է, որ մենակ չ մնացել, սկսում է լաց լինել։ Բայց ի՞նչ լաց, այնպես է ծվվում, ծկլթում, որ թագավորի բոլոր պալատը դղրդում է։

Թագավորին չէին իմաց տալիս, թե նրա կինը օձ է ծնել, բայց երբ օձի ձայնը թագավորի ականջն է հասնում, և նա սկսում է հարց ու փորձ անել, նոր ընկնում են ոտներն ու հայտնում, թե՝ թագավորն ապրած կենա, բա չես ասիլ, թագուհին մի օձի ճուտ է ծնել, որ հիմա ահագին վիշապ է դառել, ու նա է, որ այդպես ծվծվում, ծղրտում է։

Թագավորն իսկույն միտն է բերում իր խնգիրքը ու մատը կծում է. «Հը՛մ, ասում է, ես ինչ որ ուզել եմ աստվածունից, նա էլ այն է տվել»։ Հետո իր մարդկերանցն ասում է.— Այդ վիշապն ի՞նչ մեծության կլինի, մի մարդու չափ կլինի՞։ Ասում են՝ դեռ չկա մի մարդու չափ, բայց այնպես է մեծանում, որ մարդու մեծությունից էլ կանցնի շուտով։ Հետո թագավորն ասում է.— Հիմա ի՞նչ անենք, ինչ կա, կա։ Աստծու տվածն այդ է։ Օձ է թե վիշապ, իմ

զավակն է. պե՞ք է պահենք, պետք է բան տանք ուտելու, որ քաղցած չմեռնի։

Մարդիկը գնում են երթկովը ուտելու բաներ են գցում առաջը, բայց օձը չի մոտենում ոչ մեկ բանի, այլ հենց մի բերան ծվվում է։

Այդ որ իմանում է թագավորը, ժողովում է իր գիտուն մարդկանցը և հարցնում է նրանց, թե ինչ պիտի տանք այս օձին, որ ուտի, ես չեմ ուզում, որ դա քաղցած մեռնի։ Նրանցից մինը, որ ամենից իմաստունն է լինում, ասում է՝ դա ոչ մի բան չի ուտիլ, բացի աղջկանից։ Փորձեցեք և կտեսնեք, որ իմ ասածը ճշմարիտ է։

Թագավորն ասում է.— Ո՞ւմ վրա փորձենք։ Դե բեր առաջ քո աղջիկդ տանք իրան, հետո ուրիշներիցը կուզենք։

Դրա վրա՝ մյուս խելոքներն ասում են.— Թագավորն ապրած կենա, թեպետ դուք ուղիղ դատեցիք, որ վճռեցիք ամենից առաջ այդ խոսքն ասողի աղջիկը գցել վիշապի բերանը, բայց դրա հետևանքը շատ վատ կլինի քեզ համար։ Մենք ամենքս էլ չենք խնայել մեր աղջկերքը, կտանք, բայց երբ որ հերթը հասնի ժողովրդին, բանն ուրիշ տեսակ կփոխվի։ Նրանք որ իմանան, թե իրենց աղջկերքը պիտի վիշապին տան, մեջները խռովություն կընկնի, ամենքն էլ ոտքի կկանգնեն ու քեզ թագավորությունից կգցեն։ Լավն այն է, որ մարդիկ ուղարկենք ուրիշ երկրներ, որ գնան նրանցից աղջկերք փախցնեն բերեն։

Թագավորը տեսնում է, որ դրանց ասածը ուղիղ է, մարդիկ է ուղարկում Մասիսի այս երեսը, որ գան այնտեղից աղջկերք փախցնեն, տանեն։

Դե հիմա թողնենք վիշապին, որ դեռ մի քանի օր քաղցած մնա, մենք էլ այդ մարդկանց հետ դանք Մասիսի այս երեսը։

Մասիսի այս կողմումը մի մեծ գյուղ է լինում, անունը Արևան։ Գյուղի բնակիչները բոլորն էլ հայեր են լինում, ինչպես հիմա մենք ենք։

Այդ գյուղումը մի մարդ ու կնիկ են լինում կենալիս. երկու աղջիկ են ունենում։ Կինը մարդու հետևակինն է լինում։ Աղջկերանց մեկն էլ մարդու առաջվա կնկանից է լինում, մյուսը հետվա կնկա հետ բերովի։

Մարդը իր հարազատ աղջկանը շատ էր սիրում, բայց խորթ աղջկանն էլ չէր ատում. իսկ ինչ որ կնիկն էր, նա ուրիշ տեսակ բնություն ուներ. շատ չար ու նախանձոտ սրտի տեր էր։ Նա իր

աղջկանն էր սիրում, իսկ մյուսին ատելով ատում էր, նրա լույս արևը խավարեցրել էր։

Մարդու աղջկա անունը Արևահատ էր, կնոջ աղջկանը՝ Մամխի։ Արևահատը հենց ուղիղ արևահատ էր. նրա երեսը արևի նման շափաղ-շափաղ էր անում, այնքան սիրուն էր. մյուսն էլ հենց ուղիղ մամխի էր—մամուխի պես սև, նրա թփի նման փշփշոտ ու կոթռուռ։

Խորթ մոր բարկությունը շատ էր գալիս, թե ինչի իր աղջիկը այնքան տգեղ ու գեշ էր, իսկ Արևահատը այնքան սիրուն, այնքան գեղեցիկ։ Ամբողջ օրերով աշխատեցնում էր Արևահատին—աթար էր շինել տալիս, կով էր կթել տալիս, հաց էր թխել տալիս, ման էր լվանալ տալիս, խոտ ու դարման էր կրել տալիս, որ նրա սպիտակ ձեռները կնճռոտվին, նրա շարմաղ երեսն այրվի, սևանա, նրա շիմշատ մեջքը կորանա, որ նրա ուժը պակասի, գունաթափվի, թառամի. բայց ընդհակառակն, նա ավելի էր ուժովանում ու գեղեցկանում, իսկ մյուս աղջիկը, որ աղջիկ-պարոնի պես էր մեծանում, օրեցօր ավելի էր նիհարում ու գեշանում։

Արևահատը աշխատելուց չէր նեղանում. նա այնպես էր սովորել աշխատանքին, որ առանց ստիպելու էլ ինքը մի բոպե հանգիստ չէր նստում։ Հենց որ ծանր աշխատանքը վերջացնում էր, տղամարդի անելիքներն էլ ինքն անում, պրծնում էր, ձեռք էր զարկում իր մանածին ու գործքին։ Տանը ջահրա էր մանում, ջուր գնալիս էլ՝ իլիկը կամ սկսած գուլպան էր հետը տանում, որ աղբրին, մինչև հերթն իրան կհասնի, մինչև կուժը կլցվի, ինքը պարապ չի կանգնի, լախտահաչի չտա, իր իլիկը մանի կամ գուլպան անի։

Ամեն բան Արևահատի ձեռքիցը գալիս էր— հորագործ, գետնագործ, ոստանագործ, կար, ձև, եփել, թխել, կթել, հարել, շինել, սարքել։ Մի խոսքով մի աղջիկ էր, որ հատը չկար. բայց ի՞նչ կանես, որ խորթ մոր ձեռք էր ընկել, իր արած բանը ինչքան լավ էր լինում, այնքան վատ էր թվում անգութ մորը։ Ամեն անգամ, չար գայլի նման, մի պատճառ էր փնտրում ու անմեղ Արևահատին ոտի տակը գցում, տրորում, մազերից քաշքաշում, քիթ ու պռունկը արունլվա անում, մարդուն էլ հավատացնում, թե քո աղջիկը հոգիս բուկս է հասցնում իր չարությունով ու կամակորությունովը։ Արևահատը չէր կարողանում իրան արդարացնել. ուզում էր մի խոսք ասել, արտասուքը խեղդում էր նրան. հայրն էլ հավատում էր կնոջ խոսքին ու բարկանում աղջկա վրա։

Արևահատը իր սրտի ցավերը միշտ իր մոր գերեզմանի վրա

էր թափում։ Շատ անգամ գնում էր գերեզմանատուն, մոր գերեզմանի վրա շոքում, աղի արտասուք թափում, գանգատվում, սիրտը հանգստացնում, էլ ետ գալիս տուն։ Շատ անգամ մոր գերեզմանի վրա էր դնում գլուխն ու քնում, երազումը մորը տեսնում, վզովն ընկնում, փաթաթվում. նա էլ մխիթարում էր նրան ու խրատ էր տալիս, որ բարի լինի, բարի կենա, ամեն նեղության համբերի։ «Աստված չի կորցնիլ անմեղին,— ասում էր նա,— միայն դու այնպես կա՛ց, որ աստված քեզ հավանի, քեզ սիրի, այնուհետև նա իր պաշտպանությունը քեզանից չի խնայիլ, քեզ այդ նեղությունից կազատի»։ Այս խոսքերը լսելով՝ Արևահատը նոր ուժ, նոր հոգի էր ստանում, մխիթարվում էր, ցավերը մոռանում, օրեցօր վարդի նման բացվում, մանիշակի պես փնջվում։

Այնքան արդար ու անմեղ էր նրա հոգին, որ ամեն առավոտ, երեկո աղոթք անելիս՝ նրան այնպես էր թվում, թե իր հոգին թռչում, վերանում է մինչև երկինքը, հասնում աստուծո աթոռին, այնտեղ նրա հրեշտակների հետ փառաբանում նրա անունը։

Ողորմությունն այնպես էր տալիս, որ նրա տված շատ քիչն էլ աղքատի աչքումը այնքան շատ էր երևում, որ խեղճ մարդը աչքերը երկինքն էր գցում, ու արտասուքն աչքերին՝ Արևահատի համար արևշատություն խնդրում։

Թե աստված էլ շատ սիրում էր Արևահատին, այդ մասին ես կասկած չունիմ։ Երբ որ մի մարդու աստված չսիրի, չարը նրան չի ատիլ ու բարին նրան չի սիրիլ։ Բոլոր անմեղ արարածները նրան տեսնելիս ցնծում, խնդում էին, այնքան էին սիրում։ Իրանց տանու բոլոր կենդանիները, կովը թե եզը, ոչխարը թե այծը, շունը թե կատուն՝ խորթ մորը տեսնելիս փախչում էին կամ վրան խեթ-խեթ մտիկ տալիս,— շունը հաչում էր վրան, կատուն ճանկռում էր, կովը չէր թողնում իրան կթի, քացի-քացի էր անում, ձին խրտնում էր, եզը պլշում, այծ ու ոչխարը փախչում էին.— բայց այդ միևնույն կենդանիները, այդ անմեղ անասունները երբ Արևահատին էին տեսնում, շրջապատում էին նրան, փաղաքշում, լիզ տալիս, մեկմեկու հարու տալով՝ իրար ձեռքից խլում։ Կովը կթվելիս՝ երբ որ տեսնում էր թե Արևահատը լավ չի նստած՝ ինքն այնպես էր կանգնում, որ կթելը հարմար լինի։ Ջուրը կամ այգի գնալիս՝ շունը կշտիցը չէր հեռանում, որ նրան ամեն չարից, փորձանքից պահպանի, նրա հրամանին միշտ արթուն, միշտ պատրաստ լինի։

Ահա այսքան գեղեցիկ, այսքան բարի ու այսքան սիրելի էր

Արևահատը. բայց ինչ կանես, որ խորթ մոր սիրտը քարացել էր, խղճմտանքը մեռել, ամոթը կորել, խեղճ Արևահատի համար նոր-նոր տանջանքներ էր հնարում։

Հենց այդ օրերումը գյուղումը լուր է տարածվում, թե հանդ գնացող աղջկերքը էլ ետ չեն գալիս, մի վիշապ է լույս ընկել, նրանց կուլ է տալիս։

Այս լուրը շատ ուրախացնում է խորթ մորը։

Ասում է, այս լավ դառավ. այս հիմար աղջկանը կուղարկեմ հանդ, թող գնա վիշապի բերանն ընկնի։

Մի օր կով ու ոչխար Արևահատի առաջն է անում, թե տար հանդումն արածացրու։ Մի հաց էլ տալիս է, թե այս էլ կտանես հետդ ման կածես, երեկոյին էլի ետ կբերես, որ ես ուտեմ։ (Որովհետև հանդումը ման ածած հացը խիստ համով է լինում, ուզում է, որ այն համով հացը ինքն ուտի)։ Շատ էլ բուրդ է տալիս, թե այս էլ մինչև երեկո բոլորը բարակ կմանես, հետդ կբերես։

Արևահատը՝ կով ու ոչխար առաջն արած, քշում է նրանց, առանց իմանալու, թե մինչև ուր պիտի տանի։ Վերջապես՝ երբ որ հասնում է մի լավ կանաչկոտ տեղի, որ դեռ արածացրած չէր, այնտեղ նստում է, իլիկը մանում, իր դառն օրը լալիս. անմեղ անասուններն էլ մշմշալով արածում են։

Իրիկնապահին, արևի մարեմար ժամանակը, հենց որ ուզում էր թե վեր կենա տավարն առաջն առնի, գնա տուն, մեկ էլ տեսնում է, որ ահա մի պառավ կնիկ կա կշտին կանգնած։ Վեր է կենում, որ շան առաջին կանգնի, որ պառավին չկծի, պառավն ասում է. «Մի՛ վախենար, Արևահատ, շունն ինձ չի կծիլ. նա էլ է իմանում, որ ես չար պառավ չեմ. տեսնո՞ւմ ես՝ ինչպես ուրախ է, ինչպես է շարժում պոչը»։

— Բայց դու ո՞վ ես, նանե, ես քեզ չեմ տեսած, դու մեր գեղիցը չես,— հարցնում է Արևահատը։

— Ես ոչ մի գեղից չեմ, հոգիս, ես այս երկրիցը չեմ. ես Արևի մայրն եմ. եթե լսել ես, «Արևամայրը», որ ասում են՝ ես եմ։ Քո դառն օրերը, քո անմեղությունը իմ գութս շարժեցին. ես եկել եմ, որ քո տարաբախտությանը վերջ տամ։ Ջոքիր առաջես, ես քեզ պիտի օրհնեմ, որ դու գնաս քո մուրազին հասնես։

Պառավի այս խոսքերը շատ զարմացնում են Արևահատին։ Մեկ էլ լավ մտիկ է տալիս, տեսնում է, որ իր ծանոթ կանանց նման չէ։ Այնպես էր շողշողում նրա ամբողջ հագուստը, որ կասես ոսկուց էր ձուլած է ոչ թե սովորական պառառաններից կարած։ Նրա աչքերը այնպես էին ցոլցլում, փայլում, ինչպես արևի ճառագայթները։ Նրա խոսելու ձևն այնքան քնքուշ էր, ձայնն այնքան անուշ, որ Արևահատին թվում էր, թե իր հարազատ մայրն է խոսում հետը։ Հենց որ պառավն ասում է՝ ջոքիր, նրա ծնկները թուլանում են. ընկնում է առաջը, ուզում է Արևամոր ոտները համբուրի. բայց նա Արևահատի գլուխը բարձրացնում է, ձեռքը դնում է վրան և հետևյալ օրհնանքը տալիս.

Ոտքիդ տակին վարդեր բացվին,
Ջորս կողմդ փուվի մանիշակ,
Բարով հասնես քո մուրազին,
Գլխիդ տեսնեմ թագ ու պսակ։
Քո ժպիտը վարդի նման,
Արտատուգդ մարգարիտի,
Ուր որ գնաս աստված քեզ հե՛տ,—
Օձ ու կարիճ քեզ չընայի՛։
Քո խրճիթը պալատ դառնա,
Ողջ սյուները անգին քարից,
Պատ ու հատակ ոսկի, արծաթ,
Առաստաղը գոհարներից...»։

Այսպես օրհնում է Արևամայրը և էլի ուրիշ շատ բաներ է ասում, խրատներ է տալիս, գուշակում է նրա ապագան, ամեն բան առաջուց ասում է և զգուշացնում։ Հետո ասում է՝ դե վեր կաց, սիրուն Արևահատ, ես քեզ սիրեցի, ես քեզ օրհնեցի, ես քեզ աղոթեցի, որ էլ այսուհետև քեզ մի վնաս չլինի, քո մեկ մազը չպակսի։ Հետո համբուրում է Արևահատին ու ասում.— այս համբուրովս ես քո գեղեցկության վրա իմն էլ եմ ավելացնում. հետո տալիս է մի փոքրիկ կապոց։ Այդ կապոցի մեջ լինում է մի ձեռք հագուստ։ Բայց ի՞նչ հագուստ, բոլորը անգին քարերով զարդարված ու այնքան էլ նուրբ, այնքան բարակ է լինում, որ հենց իմանաս, ոչ բամբակից է, ոչ մետաքսից, այլ արևի ճառագայթներիցն է գործած։ Ասում է՝ այս կապոցը ծոցումդ կպահես, մինչև քո հարսանիքի օրը, միայն այն օրը կհագնես։ Ես հիմա գնում եմ, իմ որդին ինձ է սպասում։ Այս էլ ասելուց հետո՝ անհերևութանում է, արևն էլ մայր է մտնում։

Այս անցքն այնպես զարմացնում է Արևահատին, որ չի իմանում, քնա՞ծ է, թե արթուն, երազո՞ւմն է տեսնում, թե ճշգրիտ։ Ձեռքը ծոցն է տանում, տեսնում է, որ կապոցը տեղն է. ուրեմն երազումս չեմ, ասում է ինքն իրան և այնքան ուրախանում է, որ բոլոր տխրությունը փարատվում է, ունքերը բացվում, երեսը զվարթանում, քաղցածությունն անցնում։

Վեր է կենում, իրա կով ու ոչխարը առաջն անում, ճանապարհին նրանց ջոկ-ջոկ շփելով՝ իր ուրախությունը նրանց պատմելով՝ գնում։

Գնում է գնում, մեկ էլ տեսնում է, որ ահա մի քանի ձիավոր են գալիս զենք ու զրահում կոլոլված. Արևահատի սիրտն իմանում է, որ լավ մարդիկ չպիտի լինին. այդ բանը շունն էլ է իմանում և զանազան շարժմունքներով իր վախն իմաց է տալիս Արևահատին։ Տեսնում է, որ դրանց ձեռքիցը փախչել չի կարող, իսկույն ցեխ է քսում երեսին, որ իր սիրունությունը նրանց աչքումը չերևա, որ իր վրա ուշադրություն չդարձնեն։

Մարդիկը գալիս հասնում են և տեսնում մի գեշ աղջիկ։ Հետո մեկմեկու իրանց լեզվով ասում են՝ մեզ համար մեկ է, սիրուն եղած, գեշ եղած, երկուսն էլ վիշապի փորը պիտի մտնին։

Հիմա դուք իմացաք, կարծեմ, թե դրանք ինչ մարդիկ պիտի լինին։ Ասում են՝ «աղջի՛կ, էլ դես ու դեն չփախչես, արի մեզանից մեկի գավակին նստիր, քեզ պիտի տանենք»։

Արևահատը մնում է շվարած։ Մտքումն ասում է՝ «էլ ի՞նչ կարող եմ անել, ուր տանում են՝ թող տանեն. մեր տանից խոմ վատ տեղ չեն տանելու, իմ խորթ մորիցը խոմ կազատվիմ»։ Իրա կովի, ոչխարների աչքիցը պաչպչում է, նրանց մնաս բարով ասում ու նստում մեկի գավակին։ Խեղճ անասունները կարծես իմանում են բանի էությունը, սկսում են հետևիցը բառաչել ու մայել, իսկ շունը չի բաժանվում նրանից, այլ վնգստալով ու սնգսընգալով գնում է նրանց հետևիցը։

Այդ ավազակները գնում են մի քարափի դեմ ընկնում, այնտեղ վեր են գալիս, Արևահատին ներս տանում մի մաղարա։ Հենց որ ներս է մտնում, տեսնում է որ ի՞նչ, մինչև երեսուն-քառասուն աղջկանից ավելի կան, շրջակա գյուղերից հավաքած այնտեղ։ Այդ խեղճ աղջկերքը այնպես էին հեծկլտում, որ տեսնողի մազերը փշաքաղվում էր։ Վախենում էին, թե բարձր ձայնով լաց լինին. ձայները փորներն էին գցել ու արտասուքի հեղեղ էր, որ թափում էին հեկեկալով։

Արևահատը նրանց սիրտ է տալիս, թե՝ մի՛ վախենաք, մեզ կտանեն կծախեն, մենք էլ կփախչենք կգանք էլի մեր աշխարհքը։ Բայց շատերն իմանում էին, որ նրանց պիտի տանեն վիշապին տան, որովհետև նրա համբավը տարածվել էր ամեն տեղ։

Մութը որ վրա է հասնում, դրանց դուրս են բերում քարափիցը, ու առաջներն արած՝ սարով ձորով քշում տանում օձահայր թագավորի մոտ։

Այստեղ Գյուլնազ տատն ասում է—երեխեք, ես բեզարեցի, քունս տանում է, մնացածն էլ էգուց իրիկունը կասեմ. բայց երեխեքը վրա են թափվում, քունը փախցնում, թե չի լինիլ, պետք է վերջացնես, որ տեսնենք վերջն ինչպես է լինում։ Գյուլնազ տատը ճարահատած շարունակում է, բայց որովհետև քունը տանում էր, էլ շատ չի երկարացնում։

Բ

Աղջկերքը տեղ են հասնում։ Քաղաքի մեծ ու փոքրը հավաքվում են, որ տեսնեն ինչ աղջկերք են եկողները, ու տեսնում են որ ի՞նչ, բոլորն էլ հայ աղջկերք, մինը քան մյուսը գեղեցիկ։ Շատ ափսոսում են, որ այդ խեղճերը պիտի վիշապի կելակուր դառնան։ Նրանց միջին միայն Արևահատն է ամենից տգեղ երևում, որովհետև երեսին ցեխ ու մուր էր քսել, սիրունությունը չէր երևում։ Թագավորը հրամայում է, որ դրանց լավ տան մեջ պահեն, լավ հագցրնեն, լավ ուտեցնեն, գիրացնեն և օրենը մեկը տան օձին։ Առաջին օրը ընտրում են Արևահատին, թե՝ սա ամենից տգեղն է և չի էլ վախենում. առաջ սրան տանենք, որ մյուսներն էլ սիրտ առնեն։

Բռնում են Արևահատի կռնիցը, թե՝ դե արի գնանք, քեզ պիտի մարդու տանք, քո փեսացուն թագավորի որդին է, դու թագուհի կդառնաս։ Այդպես խաբելով՝ կռնիցը բռնած՝ տանում են օձի բնակարանը, որ թագավորական պալատումը մի ընդարձակ տեղ էր բռնում իր առաջի պարտեզովն ու նրա միջի գեղեցիկ հավուզներովը։

Երբ որ մտնում են պարտեզը և այնտեղից ուզում են դուրը

բաց անեն, ներս գցեն, Արևահատն ասում է.— որովհետև ինձ տանում եք Թագավորի դուռը մոտ, թողեք առաջ այս հավուզումը երեսս լվանամ, հագուստս շտկեմ, մազերս սանդրեմ, թե չէ՝ ամոթ է։ Ասում են՝ շատ լավ, ինչ անում ես՝ արա, մենք կհեռանանք կշտիցդ, որ դու չդիմաչես մեզանից։

Արևահատը որ մենակ է մնում, երեսը լվանում է, գլուխը սանդրում, Արևամոր տված հագուստը հագնում է։ Այսպես զուգված, զարդարված որ դուրս չի գալիս, նրա տանող մարդիկը մնում են ապշած. այնպես են կարծում թե մի նոր արևգակ դուրս եկավ պարտեզիցը. չեն հավատում, որ նա իրանց տարած աղջիկն է, որ նա մի հողեղեն է. ասում են՝ սա երկնքից կլինի եկած խեղճ աղջկա կերպարանքով, բայց հիմա փոխվեց, իր պատկերն առավ։

Արևահատը մոտենում է նրանց, ու էլ խեղճ-խեղճ չի խոսում, այլ հրամայում է, թե՝ ի՞նչ եք պլշշել տավարի պես, ցո՛ւյց տվեք ինձ ճանապարհը. ո՞ւր պիտի գնամ։ Այսպես որ հրամայում է նրանց, նրանք դողում, սարսափում են. շոքում են առաջին, ետեղա գալիս, խնդրում են, որ իրանց հանցանքը ների։ Ասում են՝ քեզ բերել ենք ոչ թե մարդու տալու, այլ վիշապին, որ ահա այս տան մեջն է։ Եթե ուզում ես, մենք քեզ կազատենք, թեկուզ Թագավորը դրա համար մեզ խեղդել տա։

Արևահատն ասում է՝ հարկավոր չէ. տվեք ինձ այս դռների բանալիքները, ես վիշապից չեմ վախենում։

Բանալիքներն առնում է, բաց է անում դուռը, սենյակից սենյակ անցնելով՝ մտնում է մի մեծ դարբաս. տեսնում է, որ ահա այստեղ, տախտակի վրա մի ահագին վիշապ է մեկնված։ Արևահատը մի քիչ հեռու կանգնում է ու ասում.— Բարով քեզ, Թագավորի որդի Ես Արևամոր կշռիցն եմ գալիս. նա շնորհավորում է քո ծնունդը ու քեզ սրեկշատություն է ցանկանում։

Վիշապը գլուխը բարձրացնում է ու սուր աչքերով մտիկ է տալիս Արևահատին։ Արևահատը սկսում է դողդողալ, բոլոր ջանը սարսռում է, մազերը փշաքաղվում։ Օձը տեսնում է, որ Արևահատը վախենում է, գլուխը շուռ է տալիս՝ տանում պոչի մոտ՝ բայց մեկ էլ էլի ետ է դառնում մտիկ տալիս. այսպես կրկնում է մի քանի անգամ և խեղճ աղջկանը հալ ու մաշ է անում։ Հետո Արևահատի միտն է ընկնում Արևամոր տված խրատը. նոր սիրտ է առնում ու ասում է։— Թագավորի որդի, եթե ինձ ուտելու ես, միանգամից կուլ տուր, ես պրծնեմ, էլ ինչո՞ւ ես ինձ այսպես տանջում. իսկ եթե

ոչ՝ Արևամոր անունովը ես քեզ հրամայում եմ՝ գո՛ւրս արի քո խորխիցը։

Այս խոսքի ասելն ու վիշապի կծկվիլը մին է դառնում։ Կծկվում է, կծկվում, կոլոլվում, դողդողում, ոլորվում ու մեկ էլ որ չի տրաքվո՞ւմ, նրա ձայնից բոլոր պալատն այնպես է թնդում, որ Թագավորն ինքը տեղիցը վեր է թռչում։

Ամեն կողմից վազում գալիս են, որ տեսնեն ինչ պատահեց. ու գալիս տեսնում են որ ի՞նչ—վիշապի խորխը մի կողմ ընկած, ու նրա տեղ սպիտակ սավանում փաթաթված մի սիրուն տղա. մոտն էլ խաս ու դումաշում ծփալիս, արևի նման շարմաղ մի աղջիկ նստած՝ իրար հետ խոսում, ծիծաղում են։ Իսկույն վազում են Թագավորին ականջարոնուկ. նրան աչքալույս են տալիս ու ասում՝ «քա չես ասիլ, օձը մի սիրուն, շարմաղ տղա է դառել»։ Թագավորը, Թագուհին վազում են, իրանց ոլորուն չ՝ կ, Արևահատին չոկ գրկում, համբուրում։ Տղային հագցնում են, զուգում, զարդարում, անունն էլ դնում են Օձամանուկ։ Հետո Օձամանուկին ու Արևահատին յոթն օր, յոթը գիշեր հարսանիք են անում. նրանք հասնում են իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։

1883

ԱՐԵՎԱՄԱՆՈՒԿ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1

Մի գեղեցիկ, գարնանային առավոտ էր։

Արևը նոր էր դուրս եկել ու իր բարի լույսը տվել։ Մասիս սարին։

Մասիսի ձյունապատ գագաթը սկսել էր այնպես փայլել, փայլփլել, այնպես կանաչ կարմրին տալ, որ տեսնողի խելքը գնում էր։

Մի ժամից հետո սարի զանազան մասերից քուլա-քուլա ամպեր բարձրացան, ու աջ ու ձախ. վեր ու վայր շարժվելով, մեծա-

նալով ու փոքրանալով, փովելով ու խմբվելով, զանազան ձևեր ստացան։

Այս հիանալի պատկեռները ամենայն առավոտ նկարվում էին Մասիսի վրա, բայց ոչ ոքի ուշադրություն չէին գրավում։

Ոչ ոք ժամանակ չուներ նայելու։ Ոչ ոք ճաշակ չուներ հիանալու։ Դա մի սովորական երևույթ էր ամենքի համար, մի հասարակ արևաբաց էր, որ շողշողալով՝ ամենքին իմաց էր տալիս, որ վեր կենան, իրանց գործին կենան, իրանց բանին գնան։

Այդպեսանը շտապում էր, որ շուտով՝ այդին գնա ու անցած օրվա կիսատ թողածն ավարտի, տավարածը տավարն էր արոտ անում, աղջկերքն ու հարսները դեպի աղբյուրն էին վազում, պառավները կերակուրի պատրաստությունն էին տեսնում։

Բայց այս անգամ մեկը կար, որ Մասիսին էր նայում, նրա փայլուն տեսքից հիանում ու զվարճանում։

Այդ մեկը մի մանուկ էր։

Մի առույգ, զվարթ ու սիրուն մանուկ։

Մի ոսկեթել մազերով, նախշուն աչքերով մանուկ։

Նրա երեսը արևի նման լույս էր տալիս, ձյունի նման փայլում։

Նրա աչքերը արեգակի նման ճառագայթներ էին արձակում։

Նա կարծես հողեղեն չէր, այլ հրեղեն։

Նա հենց իմանաս Արեգակի ծնունդը լիներ, Արևի որդին։

Եվ հենց անունն էլ Արևամանուկ էր։

2

Ամեն առավոտ, երբ արևի շողքն ընկնում էր Մասիսի վրա, Արևամանուկը պետք է վեր կացած լիներ, որ մայր արևի առաջին ողջույնը, առաջին բարի լույսն ընդուներ։

Նա շատ էր սիրում ամպեղեն երևույթների, ամպեղեն ձևերի վրա նայել։

Առավոտյան արշալույսը, թե երեկոյան վերջալույսը—որ կրակե գույնով ներկում, նկարում են հորիզոնի վրա կուտակված ամպերը—հազարավոր պատկերներ էին ցույց տալիս նրան։

Ամպերի շարժումները, նրանց ձևափոխությունները գրավում, հափշտակում էին նրա ուշքն ու միտքը։

Առավոտ էր լինում՝ թե երեկո, խաղաղ էր լինում երկինքը՝ թե փոթորկալից, կուտակված էին լինում ամպերը՝ թե ցրված, մի ուղղությամբ էին շարժում՝ թե զանազան,— նա այդ ամեն ձևերին ու շարժումներին մի միտք, մի նշանակություն էր տալիս, ու ամեն ինչ, որ լսել էր հեքիաթներումը, տեսնում էր նրանց մեջ։

Այդ ամպերը շատ անգամ նրա աչքումը վիշապների կերպարանք էին ստանում և մեկմեկու կուլ տալիս։

Երբեմն գազաններ էին դառնում ու իրար հետ կռվում։

Երբեմն դառնում էին ոչխարի հոտեր ու մի լեռնաչափ հովիվ էլ՝ գերանաչափ մի սրինգ բերնին դրած՝ ածում էր։

Երբեմն դառնում էին մեծ-մեծ վրաններ ու նրանց մեջ ներս ու դուրս էին անում վիթխարի հսկաներ։

Երբեմն դառնում էին զորախումբեր ու իրար դեմ պատերազմում։ Այդ լինում էր ավելի փոթորկի ժամանակ, երբ որոտում էր երկինքը, փայլատակում կայծակը, ու ամպերն իրար էին խփվում։

Արևամանուկը ոչ միայն չէր վախենում այդ որոտմունքներից, այլ բարձրանում էր մի քարի վրա ու ամպերին հրամաններ էր տալիս, գոչելով՝—հառա՜ջ, ետ՜, ա՜ջ, ձա՜խ, միասի՜ն, կարգո՜վ, արա՜գ...

Այսպես բղավում էր հեռվից, մինչև կարկուտը կամ տարափը վրա էր տալիս ու մեր մանուկ զորապետին փախցնում, ձգում քարայրների ու ծառախոռոչների մեջ։

Ինչպես տեսնում եք, մեր Արևամանուկը թեպետ դեռ փոքր էր, հազիվ տասը կամ տասներկու տարեկան կլիներ, բայց շատ սրտոտ էր ու սրամիտ։

Երևում էր, որ ժամանակով մեծ ու երևելի մարդ պետք է դառնա։ Այդպես էին ասում բախտ գուշակողները, այդպես հավատացած էին ամենքը։

Բայց նա այժմ դեռ մի գառնարած էր։

3

Այս ինչ որ ասում եմ, ով է իմանում, թե մեզանից քանի-քանի տարի առաջ է եղել։ Եթե ասեմ հազար տարի, երկու հազար տարի, երեք հազար տարի, էլի քիչ կլինի։

Այդ հին ժամանակներումը Մասիսի ու Արագածի արանքումը, ուր որ հիմա Արարատյան մեծ դաշտն է, ուր որ մեր Էջմիածինն է, Երևան քաղաքն է, Երասխ գետն է, Գեղամա ծովն է, ահա այդ գավառումը մի մեծ գյուղ է լինում, Արևա՞ն, թե՞ Արմավան անունով, հաստատ չգիտեմ, և հատուկ տեղն էլ չեմ կարող ձեզ ասել։

Արմավանի օդն ու ջուրը շատ մաքուր էր ու առողջարար։ Նրա աղբյուրը քառասուն ակն ուներ, քառասուն տեղից բխում էր ու հետո միանում, դառնում մի այնպիսի գետ, որ յոթը ջրաղաց էր պտտեցնում։ Բացի դրանից, գյուղի հանդերն էլ լիքն էին անմահական աղբյուրներով։ Այդ աղբյուրներն ամենքն էլ մի-մի անուն ունեին իրանց հատկությանը հարմար տված։ Որին ասում էին «կաթնաղբյուր», որին «սառնաղբյուր», որին «տղաբերուկ», որին «պարկակերի», որին «գառնակերի» և ուրիշ անուններ։

Լավ աղբյուրը շատ սիրելի բան է։ Նա իր խմողի երեսին խընդում, ծիծաղում է, ականջին քչփչում, թաքուն բաներ ասում. մոտը պառկողի միտքն օրորում է ու վրան անուշ քուն բերում։ Երանի՞, հազար երանի այն մարդուն, որ իր մանկության ժամանակ այդպիսի տեղերում է անց կացրել իր կյանքը, անմահական աղբյուրների ու ծաղկունքների ծոցումն է մեծացել...

Արմավանի հայերը, թե՛ մարդիկ և թե՛ կանայք, բոլորն էլ գեղեցկադեմ, վայելչակազմ, ուժեղ ու բարձրահասակ էին։ Գլխացավ, փորացավ, սրտացավ, բկացավ, ծաղիկ, կարմրուկ ու ուրիշ բոլոր մեր տեսած ցավերի անունը նրանք չէին լսած։ Մարդիկը հիվանդ էին լինում միայն այն ժամանակ, երբ վիրավորված էին լինում գազանից կամ թշնամուց և կամ ծառից վայր ընկած։ Դրանց կյանքը շատ երկար էր, շատ էին ապրում։ Այնքան ապրում էին, որ շատ ապրելուց բեզարում էին։ Շատ քիչ ապրողը հարյուր տարի էր ապրում, բայց սովորաբար երկու և երեք հարյուր տարի էլ էին ապրում ու մի քանի անգամ ատամները փոխում, նոր ուժ ստանում։

Մերացած հայրը ունենում էր քսան, երեսուն զավակ, երեք-չորս այդ չափ թոռներ, մի այնքան էլ ծոռներ։ Մի գերդաստանի, ընտանիքի մեջ մինչև երեք-չորս հարյուր հոգի էին լինում, բոլորն էլ իրար հնազանդ, ամեն փոքրը իրանից մեծին, և ամենքն ի միասին՝ մեծ հորը։

Մեծ հայրը մյուս բոլոր հայրերի գլխավորն էր, գլուխն էր, և

այդ պատճառով ասվում էր հայրապետ, այսինքն հայրերի գլուխ, կամ նահապետ, որ միևնույն նշանակությունն ունի։

Գերդաստանի բոլոր անդամները մի հարկի, մի ծածկարանի տակ չէին մնում, այլ ջոկ-ջոկ հարկերի ու ծածկոցների։ Ամեն անգամ, երբ որ մեկին պակում էին, նրա համար առաջուց մի վրան էին գործում բրդե կամ մազե թելից։ Այսպիսով տարեցտարի շատանում էր վրանների թիվը։ Վրանները այն հարմարությունն ունեին, որ շարժական էին, և ուր ուզում էին, տանում էին, ամառն ավելի բարձր ու լեռնային տեղեր, ձմեռը՝ ցածր ու դաշտային։ Քարաշեն տներ էլ ունեին, բայց հասարակ։ Դրանք մի տեսակ ձմեռանոցներ էին, ավելի աղքատների համար, քան թե մարդկանց։ Միայն մեծ նահապետն էր ունենում լավ քարաշեն տուն։

Մեծ նահապետը որ վախճանվում էր, նրա մեծ որդիքը հեռանում էին միմյանցից, և դառնում էին ջոկ-ջոկ նահապետներ։ Նրանք երկիրն էլ էին բաժանում իրանց մեջ և ամեն մեկը մի ջոկ գավառում էր բնակում։

Իմ ասած ժամանակը նահապետներ շատ կային, բայց ամբողջ Արարատյան դաշտը, Երասխի ափերը, Արագածի արևմտյան և Մասիսի հյուսիսային երեսները, Գեղամա ծովի արևմտյան ափերը, Գառնու և Հրազդան գետերի հովիտները իրանց շրջակա լեռներով մի նահապետի ձեռքի էին, և այդ նահապետն էր մեր Արեվմանուկի հայրը։

Արևամանուկի հոր անունն էր Արևամանյակ, բայց նրա որդիքն ու թոռները դժվարանում էին ասել «Հայր Արևամանյակ», որովհետև շատ երկար էր, այդ պատճառով ասում էին «Հայր—Մանյակ» կամ «Հայրմա». իսկ նրա մոր անունն էր «Արևամատ», բայց նրան էլ փոխանակ ասելու «Մայր Արևամատ» ասում էին «Մայր-մա» կամ «Մամար»։ Նույնիսկ Արևամանուկին չէին ասում «Արևամանուկ», այլ «Արմիկ» կամ «Արամիկ»։

Բայց թե ինչո՞ւ ամենի անունի մեջ էլ «արև» կա, այդ ես չգիտեմ, միայն հատերն ասում են՝ այդ նրանից է, որ մենք՝ հայերս, մի ժամանակ արևապաշտ ենք եղել, մեր նահապետն էլ համարվում է եղել Արևի փոխանորդ, նրա ազգական, ցեղ, ծնունդ, ահա այդ պատճառով նրանց մեծ մասի անունն էլ արևով էր սկսվում։ Բայց այս տեսակ մութ բաները մենք հետո կիմանանք, հիմա մենք դառնանք մեր Արևամանուկին։

Ահա այսպես մեր սիրելի Արևամանուկը Արևամանյակ նահապետի որդին էր։

Դեռ յոթը տարեկան հասակում նրա թիկունքն ու կուրծքը այնքան լայն էին ու մեջքն այնքան բարակ, որից երևում էր, որ նա մի փոքր առյուծ էր, որի պեսին մեր հեքիաթներումը ասում են ասլան-բալասի, այսինքն «առյուծի ձագ», կորյուն առյուծի։ Նրա աչքերը խոշոր-խոշոր և կրակոտ էին. երկայն թերթևունքները մինչև վարի կոպերն էին հասնում, գլխի մազերը խիտ ու երկայն։

Հին ժամանակները մազ ածիլելու սովորություն չունեին, բայց խուզում էին ուսերի հավասարությամբ, սանրում էին դեպի ետ ու կապում վարսակալով, այսինքն մի մազակապ ժապավենով։ Արևամանուկի մազերի գույնը հրաշեկ էր, այսինքն կրակի գույն ուներ և փայլում էր ջուհարի նման։ Նա համարվում էր «հրահեր», այսինքն կրակե մազեր ունեցող։ Այդ տեսակ մազեր ունեցողին մեր հեքիաթներումը ասում են ոսկեթաթոլ, ոսկեթոչոր։

Արևամանուկի մազերը չէին խուզում։ Այդ տեսակ մազեր ում վրա էլ լինում էր, չէին կտրում։ Նա իր մազերը երկու հյուս էր անում և աջ բաժինը դեպի ձախ, ձախինը դեպի աջ տանում, բկովը երկու անգամ պատ տալիս, վզին կապում ու ծայրերը կախ գցում մեջքին։ Նրա համար էր այսպես անում, որ խաղալիս ու վազվզելիս մազերն իրան չխանգարեն։

Երբ որ Արևամանուկը ծնվում է, նրանից հետո նրա մայրը երկար ժամանակ երեխա չի բերում, այդ պատճառով նրան յոթը տարի շարունակ ծիծ է տալիս և ծծից չի կտրում։ Ամբողջ օրը խաղում էր Արևամանուկը, բայց հենց որ ճաշելու ժամանակը գալիս էր, նա առաջ մի նախաճաշիկ էր անում մոր ծծովը ու հետո ճաշն ուտում. մեկ էլ ճաշելուց հետո էր վրա ընկնում մոր ծծին ու բերանը քաղցրացնում. գիշերն էլ մոր ծոցումն էր քնում և ամեն զարթնելիս՝ ծիծը բերանն էր առնում։

— Բավական է, որդի, էլ ի՞նչ կա, որ ի՞նչ ծծես, ծծերս ցամաքել են,— ասում էր շատ անգամ մայրը, բայց էլի ծիծը դնում էր բերանը և գլուխը շփելով՝ քնացնում։

Արևամանուկը սիրում էր և կովի ծիծը ծծել։ Շատ անգամ, երբ որ հարսները կովերը կթելիս էին լինում, նա անցնում էր մյուս կողմը և կովի ծծերից մեկը բերանն առնում, ծծում։ Հարսները քթին խփում էին, որ ետ քաշվի, բայց նա էլ չգրու արձակում էր հորթի կապը, խփում էր կովին և այսպիսով ինքը հաղթում էր հարսներին և ուզածի չափ ծծում։ Պատահում էր, որ մինչև կովի կթելը՝ ինքն արդեն ցամաքեցրած էր լինում ծծերը և խեղճ հորթին էլ չէր լինում բաժին թողած։

Կերակուրներից նա ամենից շատ սիրում էր յուղն ու մեղրը։ Յուղը նա կաթի պես էր խմում, իսկ մեղրաբլիթը գաթի պես ձեռքն էր առնում կրծոտում։

Էլ ինչ ասել կուզի ուրեմն, որ ով տարով կմեծանա, մեր Արևամանուկը օրով էր մեծանում ու զորանում։ Դեռ տասը տարեկան հաղիվ կլիներ, այնպես էր աճել, զարգացել, որ տեսնողը կարծում էր, թե առնվազն տասնհինգ կամ տասնվեց տարեկան կլիներ, բայց երբ դառավ տասնհինգ տարեկան, արդեն մի կատարյալ չինարի ծառ էր և էլ իր հասակին վայել չէր համարում իր տարիքն ունեցող մանուկների հետ խաղալ, այլ քսան, երեսուն տարեկանների հետ էր խաղում, նրանց հետ կպչում, նրանց հետ մրցում և ամեն տեսակ մարզմունքների մեջ հաղթում էր ամենքին։

Միշտ հաղթելը և ոչ մի անգամ չհաղթվելը մեր Արևամանուկի համար դառավ մի այնպիսի հատկություն, որ հաղթվելն ու մեռնելը իրա համար միևնույն էր։ Այդ բանը նկատել էին նրա խաղընկերները, և երբ պատահում էր իրանից ավելի ուժեղների, նրանք խնայում էին Արևամանուկին և չէին ուզում հաղթել, որ նրա սիրտը չկոտրվի։ Այդ տեսակ վեհանձնական սովորություն ունեին արմավանցիք. նրանք նշանավոր քաջին և ուժեղին միշտ խնայում էին, նրան սիրում, պաշտում էին և իրանց պարծանքն էին համարում։

5

Արևամանուկն արդեն դառել էր տասնհինգ տարեկան, բայց իր ծնողների հսկողությունից դեռ չէր ազատվել։ Նրա ընկերներից որը տավարած էր, որը հովիվ, որը եզնարած էր, որը հոտաղ, բայց նրան միայն գառներն էին պահ տալիս, այն էլ միայն գարունքը, իսկ մնացած ժամանակ տանից չէին դուրս թողնում։ Չէին դուրս թողնում, որովհետև գիտեին, որ նա ոչ մի տեղ հանգիստ չի մնալ, իր ուժը կփորձի ամեն բանի վրա ու փորձանքի մեջ կընկնի։

Բայց որքան շատ էին զսպում նրան ու հսկում վրան, նա այնքան ավելի էր ցանկանում վազել, ընկնել անտառները, ձորերը, բան տեսնել, բան շինել, իր պարսատիկն ու նետաղեղը փորձել։

— Մայրիկ, ինձ ուղարկեցեք տավար,— աղաչեց նա մեկ անգամ իր մորը։— Ես ավելի լավ տեղեր կտանեմ արածացնելու, կովերն էլ ավելի կաթ կտան և շուտ չեն ցամաքիլ։

— Ի՞նչ հարկավոր է, որդի,— պատասխանում է մայրը։— Մենք այնքան տավար չունինք, որքան պահողներ ունինք. նրանք էլ լավ գիտեն, թե որտեղ պետք է արածացնեն։

— Բայց ես, մայրիկ, մինչև ե՞րբ պետք է տանը պարապ մնամ ու երեխանց հետ խաղամ։ Աղջիկ էլ չեմ, որ բուրդ գզեմ, գուլբա անեմ, իլիկ մանեմ։ Չէ՞ որ ես տղա եմ։ Իմ ընկեր տղայքը բոլորն էլ տավար են գնում, ես ինչո՞ւ չգնամ։

— Տավարածությունը հեշտ բան չէ, հոգիս։ Տավարը շատ հեռու տեղեր են տանում։ Գող է, գազան է, ամեն ինչ պատահում է տավարածներին։

— Ես էլ հենց դրա համար եմ ուզում տավար գնամ, որ մի քիչ հեռու տեղեր տեսնեմ։ Ինձ ի՞նչ պիտի անեն գողերն ու գազանները։ Բա մեր շներն ինչացո՞ւ են։ Մեր Կտրանն ու Խեղդանը որ մոտս լինին, էլ ի՞նչ գող, ի՞նչ գազան կմոտենա մեր տավարին։ Չէ՛, մայրիկ, ես պիտի գնամ տավար։ Բայց եթե չթողնեք, ես կփախչեմ, կընկնեմ Մասիսի ձորերը, կերթամ քաջերին կգտնեմ, կասեմ՝ «եկել եմ ձեզ մոտ, որ ինձ սովորեցնեք լավ ձի հեծնել, նետ ձգել, թուր ու նիզակ գործ ածել»։

— Արմիկ, Մասիսի քաջերը սուր ու թուր չունին, ոչ ձի հեծնել գիտեն, ոչ նետ ձգել։

— Բա էլ ինչի՞ քաջեր են, մայրիկ։

— Հենց նրա համար չունին, որ շատ քաջ են։ Նրանք այնքան քաջ են, որ կարիք չունին զենք ու զրահի։ Այնքան ուժով են, որ ահագին կաղնի ծառը արմատահան կանեն, և այդ կլինի նրանց համար ինչպես մի թեթև մահակ, բայց այդ մահակով նրանք հազար ձիավորի պատասխան կտան։ Նրանք ի՞նչ կանեն նետ-աղեղ, քանի որ Մասիսի ստորոտից բլրաշափ ժայռերը այնպես են շպրտում, որ սարի գլխովն անց են կացնում մյուս կողմը գցում։

— Այդ ի՞նչքան ուժով են, մայրիկ, ով գիտե իրանք էլ ինչ ահագին հսկաներ են։

— Իհարկե, այնքան մեծ-մեծ են, որ նրանց տակին ոչ թե ձի, այլ ոչ ուղտ և ոչ փիղ կկարենա դիմանալ։ Ամեն մինը մի սարի չափ կա։ Երբ որ նրանք դուրս են գալիս իրանց խոր ու մութ այրերից ու որսի հետևից ընկնում, Մասիսի ձորերը դմբդմբում են, ու դաշտերը դողդողում։ Երբ որ նրանց կրակ են անում, որ ճաշ եփեն, ով գիտե քանի՞-քանի՞ գերան են դարսում իրար վրա։ Նրանց խաբույկի ծուխն ու ալիքը Մասիսի գագաթիցն է դուրս գալիս ու վրան ամպանում։

— Եթե այդպես է, մայրիկ, նրանց մոտ գնալ չի լինիլ, նրանց ով գիտե մարդ էլ են ուտում։

— Չէ՛, հոգիս, նրանք մարդակեր չեն։ Իմ պապը մեկ անգամ գնացել է նրանց մոտ։ Ես այդ ժամանակը շատ փոքր եմ եղել, ինձ հետո են պատմել։ Ասում են, իմ պապը որ գնացել է նրանց մոտ, առաջ հարցրել են, թե դու ո՞վ ես, նա էլ ասել է՝ ես Արևագանց ցեղիցն եմ։ Այդ որ լսել են, ասել են. «Որովհետև դու Արևագանց ցեղիցն ես, քեզ վնաս չենք տալ, բայց եթե Վիշապազանց ցեղիցը լինեիր, մեծ կտորդ ականջդ կթողնեինք»։

— Ուրեմն նրանք մեր ցեղին սիրում են, մայրիկ, իսկ Վիշապազանց ցեղին ատո՞ւմ։

— Այո, մեր ու դրանց մեջ կարծեմ մի տեսակ աղգականություն կա։ Այժմյան քաջերի մայրը մեր ցեղիցն է եղել։

— Որ այդպես է, ես կերթամ նրանց մոտ, կասեմ ես ձեր պապոնց երեխան եմ, նրանք էլ ինձ լավ պատիվ կտան։

— Դու այդպես ես կարծում, բայց ո՞վ գիտե, վա՛յ թե քեզ այնտեղ պահեն, էլ բաց չթողնեն։ Կդցեն մի խոր ու մութ այրի մեջ, մի ահագին ժայռով էլ բերանը կփակեն, հետո գնա կաց այնտեղ ու սպասիր, թե քեզ երբ պետք է ազատեն։

— Դե որ այդպես է, ես էլ չեմ գնալ նրանց մոտ, բայց տավար պիտի գնամ, ինչ կուզեք արեք։

— Իհարկե, որդի, էլի լավ է տավար գնաս, քան թե քաջերի մոտ։ Բայց, գիտե՞ս, սիրելի Արմիկ, քո հայրը քեզ ուրիշ տեսակ է ուզում պահել։ Նա ուզում է, որ դու տուն պահել, տուն կառավարել սովորես, գնացող-եկողի հանդիպես, նրանցից խելք ու շնորհք վերցնես, մարդավարություն սովորես և ոչ թե ընկնիս ձորերն ու վայրենանաս։ Ահա պատճառը, որ հայրդ քեզ տավար չի ուղարկում։ Բայց նա ընդդեմ չի լինիլ, որ դու լավ գիտենաս ձի նստել, նետ ձգել, նիզակ ու վահան գործածել։ Հասկացա՞ր. բայց որովհետև ոչիրտդ շատ է ուզում տավար գնալը, վնաս չունի, մի

քանի ժամանակ էլ տավար գնա։ Այդ քո առաջին փորձն է, թող կատարվի. թող կողքդ ու մեջքդ մի քիչ էլ տավարումը հաստանան։

6

Արմավանի երեխայքը շատ ուշ էին սկսում տնական հոգսերին մասնակցել։ Մանուկները դառնում էին տասնհինգ, քսան տարեկան, բայց դեռ էլի համարվում էին տղա, այսինքն երեխա։ Մինչև տասնչորս տասնհինգ տարեկան դառնալը ոչ մի պարապմունք չէին ունենում, բացի ուտելուց ու խաղալուց։

Նրանց սկզբնական ուսումն ու կրթությունն էլ խաղն էր։ Եվ պետք է ասենք, որ պակաս ուսում չէր և շատ էլ լավ էր։ Լավ էր նրանով, որ մեզ նման վաղօրոք չորս պատի մեջ չէին փակվում ու կորցնում իրանց առողջությունը, մեկ էլ նրանով՝ որ նրանց խաղերը անմիտ ու անօգուտ խաղեր չէին։ Նրանք իրանց խաղերով ավելի լավ էին պատրաստվում իրանց ապագա գործունեության, ապագա պարապմունքների համար, քան թե հիմա մենք։

Նրանց հարկավոր էր լինել ուժեղ, ճարպիկ, սրամիտ, հնարագետ, առաքինի. պետք է իմանային լավ ձի հեծնել, լավ վազել, լավ լողալ, ծառերի վրա մագլցել, պառակների ու ժայռերի վրա բարձրանալ, մեծ ոստյուններով ցատկել, սուր ու նիզակ գործածել, վահանով պաշտպանվել, ուղիղ պարսատիկ ու նետ ձգել,— պետք է իմանային անասնապահություն, վար ու ցանք, փայտտաշություն, քարտաշություն, դարբնություն... և այս բոլորը այն ժամանակվա երեխեքը սովորում էին խաղալով։

Մեծերը նրանց չէին ասում, թե ա՛յս արեք և ա՛յն շինեցեք. ա՛յս խաղացեք և այն մի՛ խաղաք։ Երեխեքն իրանց կամքովն էին անում, ինչ որ անում էին. փոքրերը՝ փոքրն ու հեշտը, մեծերը՝ մեծն ու դժվարը, և այնքան սիրով և ուրախությամբ, այնքան ոգևորված ու տաքացած, որ շատ անգամ հացն էլ էին մոռանում։

Նրանց գիշերվա խաղերն ուրիշ էին, ցերեկվանը ուրիշ, ամառվանը ուրիշ, ձմեռվանը ուրիշ, ուրիշ էր տղերանց խաղը և ուրիշ՝ աղջկերանցը։ Ամեն տեղի, ամեն դեպքի, ամեն ժամանակի հարմար խաղեր ունեին։

Խաղում էին ամենախիստ կարգապահությամբ։ Եթե խաղացողները լինում էին մինչև հարյուր հոգի, էլի այնպես կարգով էին

խաղում, որ ոչ մի անկարգություն չէր պատահում, և եթե պատահում էլ էր երբեմն, մեղավոր երեխային իսկույն հեռացնում էին իրանցից, որ մեծ պատիժ էր համարվում։

Խաղերի մեծ մասը երկու խմբով էին խաղում։ Առաջ երկուսին մայր էին նստեցնում, մյուսները ձագեր դառնում։ Ձագերը զույգ-զույգ էին դառնում և վիճակով ընկնում մեկը մեկ և մյուսը՝ մյուս մորը։ Այսպիսով բոլոր խաղացողները դառնում էին երկու խումբ, ամեն մեկը իր մոր հովանավորության և պաշտպանության տակ։

Մայրը իր ձագերից ամեն մեկի պաշտոնն իրան հասկացնում էր, և նրանք պիտի կատարեին իրանց մոր պատվերը ամենայն ճշտությամբ և ճարպկությամբ։ Այս խաղերի մեջ շատ լավ սովորում էին պաշտպանվելու և հարձակվելու կերպերը. սովորում էին շարքով կանգնել, շրջան կազմել, խմբվել, ցրվրրվել, մեջք-մեջքի տալ, վայր թափվիլ, շորեքթաթ վազել, փորսող տալ, մի ոտքով վազել, ծեծի դիմանալ, հակառակ խմբի բոլոր շարժմունքները դիտել, նրա մտադրությունը նախագուշակել։

Այս խաղերի մասին էլ ես չեմ ուզում երկարացնել խոսքս։ Դուք ինքներդ, եթե գյուղի երեխայք եք, կարող եք ասել, թե ինչ տեսակ խաղեր գիտեք. միայն պետք է գիտենաք, որ իմ ասած հին խաղերի կեսի կեսն էլ չկա հիմա, և ինչ էլ որ կա, այն ժամանակվա եղածի միայն ստվերն է և ոչ իսկականը։ Բայց ինչ որ լինին, դրանք էլ են հարկավոր և շատ բավական են մեզ։

Մեր Արևամանուկը խաղալ շատ էր սիրում։ Պառավներն ասում էին, որ նա մոր փորումն էլ խաղալիս է եղել, և սուտ չէին ասում։ Բոլոր խաղերի մեջ նա այնպես շուտ ճարպիկացավ, որ էլ ձագ չէր դառնում, այլ իրանից մեծերի վրա էր մայր նստում, և ամեն երեխա աշխատում էր, որ նրան վիճակվի, նրան ընկնի, նրա զորեղ պաշտպանության տակը գտնվի։

7

Ահա այս աստիճան զորացած էր մեր Արևամանուկը, երբ որ սկսեց տավար գնալ։ Տավարումն էլ երկու թե երեք օր միայն փոքրություն արավ. շուտով տավարածապետ դառավ, այսինքն տավարածների գլխավոր։ Տավարածապետ լինելը հեշտ բան չէ։

Նա պետք է ամենից զորեղը լինի և ամենից ճարպիկն ու սրտոտը։ Ճշմարիտ է, նրա գործը հեշտ էր նրանով, որ պիտի նստեր սառն աղբյուրների մոտ, հով ու զով տեղերումը և մյուսներին հրամայեր, որ տավարը մակաղից դուրս անեն, գոմեշները՝ ցեխերից, այս կողմը քշեն, այն կողմ տանեն, ետ տան, ժողովեն, ականեն, բայց և դժվար էր նրանով, որ եթե տավարներից մինը կորչեր, նա պիտի ման գար գտներ, գող ու գազանի ճանկերից նա պիտի փրկեր։ Իսկ գազաններ այդ ժամանակ շատ ու շատ կային. հիմա այնքան գայլ ու աղվես չկա, ինչքան որ այն ժամանակ քավթառներ ու փալանդներ (վագրեր) կային։ Արևամանուկը մի քանի շաբաթ շարունակ շատ լավ պահեց տավարը, այնպես որ ոչ մեկի քիթը չարնեց, բայց ասած է՝ «Տատն ամեն օր գաթա չի թխիլ»։

Մեկ անգամ մի եզը կորցրեց. շատ ման եկավ, վերջը մի գոռոցի ձայն հասավ ականջը։ Մինչև ինքը ականջ կդներ, որ տեսներ ո՞րտեղից է գալիս ձայնը, իր քաջ շները—Խեղդանն ու Կտրանը—ավելի շուտ իմացան տեղը և նետի պես թռան դեպի ձայնը։ Գոռոցը հասարակ բառանչ չէ. այդ ձայնը հանում են միայն գազանների ճանկ ընկած ժամանակը, և այդ գիտեն՝ ինչպես տավարներն ու մարդիկը, նույնպես և շները։

Արևամանուկը ոչ մի զենք չուներ, բացի մի հաստագլուխ մահակից։ Մահակը ձեռին՝ վազեց շների հետևից և նրանց գտավ մի ձորակի մեջ հաչելիս։ Հեռվից նկատեց, որ մի գազան վայր էր ձգել ահագին եզանը, թանթուլները դրել նրա մեջքին, իսկ գլուխը դեպի շները ծռած՝ այնպես կատաղի կերպով նայում է, որ աչքերից կրակ է թափվում։ Շները հաչում էին հեռվից, պոչները ներս քաշած, և սիրտ չէին անում գազանին մոտենալ։

Արևամանուկը՝ էլ չմտածելով թե ինչ պետք է աներ արդյոք, սաստիկ բարկացավ շների վրա և գոռաց. «Խեղդա՛ն, խեղդի՛ր, Կտրա՛ն, կտրի՛ր», ու ինքը մի ճարպիկ ոստյունով թռավ ընկավ գազանի մեջքի վրա ու բռնեց նրա վզիցը։ Այդ տեսնելով շները սիրտ առան ու հախռեցին գազանին։ Գազանը բարկացավ և ցատկեց տեղիցը, բայց նրանից պոկ չեկան ոչ Արևամանուկը և ոչ շները։ Գազանն ավելի կատաղեց, երեսը շրջեց, բաց արավ ահագին ըռեխը և ուզում էր Արևամանուկի գլուխը հախռել ու փշրել, բայց նա իսկույն ձեռքը ձգեց գազանի բերանը ու լեզվի տակիցը այնպես պինդ բռնեց քաշեց, որ գազանի թանթուլները թուլացան և նա սկսեց խռխռացնել։ Գազանը որ խեղճացավ,— թուլացավ,

Արևամանուկը նրան իր տակն առավ, աչ ոտքը նույնպես կոխեց գազանի բերանը և երկու ձեռքով քաշեց նրա լեզվիցը։ Այդ միջոցին խեղդանը հախռեց գազանի բկիցը, Կտրանն էլ փորատակերից։ Այսպես միացած ուժով գազանին անշնչացրին, սատկացրին։

Քափ ու քրտինքի մեջ կորած՝ ետ քաշվեցավ Արևամանուկը, և նոր տեսավ, թե ինչ վիշապ էր իր սպանածը։ Վագր էր, մի ահագին ու քավթառ վագր, որ բոլոր շրջակայքի վրա իշխում էր։ Նրա երկյուղից ոչ ոք չէր համարձակվում տավար կամ ոչխար տանել այն տեղերը, ուր որ տարել էր Արևամանուկը։ Ամբողջ գյուղերով աշխատում էին նրան սպանել, բայց չէին կարողանում։

Եզը վաղուց արդեն շունչը փչել էր։ Անիրավ գազանը մի հատ հարվածով կոտրել էր նրա մեջքի սեռը և մի ծվեն կաշի էր հանել։

Արևամանուկը մաշկեց գազանը ու մորթին քարշ տալով՝ դնաց տուն։ Նրա այս քաջագործության համբավը շուտով տարածվեց ամեն տեղ։ Տասնհինգ տարեկան հասակում վագր խեղդել,— հեշտ բան չէ։ Բայց ով որ իմանում էր, թե այդ քաջությունը Արևամանուկն է արել, չէր զարմանում, ասում էին՝ նա կարող է առյուծի բերան էլ ճղել մեն-մենակ, առանց շների օգնության։

Արմավանցիք սովորություն ունեին, որ երբ մեկը մի քաջություն էր անում, նրա վրա գովասանական երգ էին շինում ու երգում ամեն տոնի օր։ Երգում էին տղերքն ու աղջկերքը ձեռք ձեռքից բռնած, խմբով ու պարելով։ Այս անցքից հետո Արևամանուկի վրա էլ շինեցին մի գովասանական երգ, որ ասում էին տղերքն ու աղջկերքը փոխ առ փոխ։ Ահա՛ այդ երգը.

— Աղջկանք, պար բռնեցեք,
Արմիկի երես գովեցեք.
Ա՜յ երես, շարմաղ երես,
Դու մեզ լրթողնես սեերես։

«Բարձր սարեն պաղ ջուր կուգա,
Արմիկի երես կըլվա.
Ա՜յ երես, արև երես,
Քո շափաղով մեր սիրտ կերես»։

— Աղջկանք, պար բռնեցեք,
Արմիկի աչքեր գովեցեք.
Ա՜յ աչեր, սիրուն աչեր,
Արևի պես փայլուն աչեր։

«Արմիկի աչերն արեգակ,
Մեզի կուտա լույս ու կրակ.
Ա՜յ աչեր, վառ-վառ աչեր,
Մանուշակի թառ-թառ աչեր»։

— Աղջըկեք, պար բռնեցեք,
Արմիկի կռներ գովեցեք.
Ա՜յ կռներ, ուժեղ կռներ,
Դուք կըշարժեք մեծ-մեծ լեռներ։

«Արմիկի կռներն է գերան,
Կըպատռի վագրի բերան.
Ա՜յ կռներ, գթոտ կռներ,
Դուք կըբանաք մեր փակ դռներ»։

— Աղջըկեք, պար բռնեցեք,
Արմիկի հասակ գովեցեք.
Ա՜յ հասակ, բարձր հասակ,
Քեզ կըվայելե դափնյա պսակ։

«Արմիկի հասակն է սոսի,
Շուքը մեզնից չըպակասի.
Ա՜յ հասակ, չինար հասակ,
Ո՞վ չի տար քեզ դափնյա պսակ։

Միասին և թռչկոտելով.

Ո՞վ պատռեց վագրի բերան,
Արմիկ պատռեց վագրի բերան.
Վագրի բերան—ահա՛ այսքան—
Ժանիքները մեկ-մեկ գերան...

Ապրի Արմիկ, ապրի շատ օր,
Իր թշնամին ընկնի գլոր...

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

1

Երբ որ Արևամանուկը հասավ տուն, վագրի մորթին ուսովը գցած, տանեցիք չհավատացին, որ այն ամեհի գազանը նա իր ձեռքովն է սպանել, այն էլ սարսափելի կռվով։ Վագրի հետ կռվել ու անվնաս մնալ, իրավ որ հավատալի բան չէր։

— Արմիկ,— ասաց հայրը,— ոչ մի տեղդ չի՞ ցավում արդյոք։

— Ոչ, հայրիկ, ոչինչ ցավ չեմ զգում, միայն կարծես թե սաստիկ հոգնած լինիմ։

— Վնաս չունի, հոգիս, եթե միայն հոգնած լինիս. հապա ինչո՞ւ են պատռտորված շորերդ։

Այս խոսակցությունից մի կես ժամ չանցած՝ տեսան որ Արևամանուկի երեսը դեղնում, սփրթնում է։

— Արմիկ ջան, գլուխդ չի՞ ցավում արդյոք,— հարցրեց մայրը, որդու գլուխը շփելով։

Արևամանուկը այլևս չկարողացավ պատասխանել. նրա ուշքը գնաց և նվաղեց։

Իսկույն վրա թափվեցան ամեն կողմից, երեսին ջուր սրսկեցին, շորերը հանեցին — և ի՞նչ տեսան — մարմնի վրա էլ մի ողջ տեղ չկա, բոլորն էլ կապտել էր։ Շատ տեղ գազանի ճանկերը ցրցվել էին, և այնքան ուռած տեղեր կային, որ հենց իմանաս շնաճանճեր են թափվել վրան ու խայթոտել։ Միայն երևն էր ազատ մնացել հարվածներից։

Արևամանուկը այդ բոլոր հարվածներին դիմացել էր առանց ցավ զգալու։ Այդպես է լինում տաք կռվի ժամանակը։

Բայց երբ որ քրտինքը ցամաքեց,— բոլոր մարմինն սկսեց սարսռել։ Ցավը մի տեղ չէր, երկու տեղ չէր, որ ասեր՝ այսինչ կամ այնինչ տեղս է ցավում։ Այդ որ տեսան, էլ ժամանակ չկորցրին. իսկույն մի քանի այծ մորթեցին և նրանց տաք-տաք մորթիովը փաթաթեցին Արևամանուկին։ Հավաքվեցան դեղ ու դուղ իմացող պառավներն էլ, և զանազան հոտավետ ծաղիկներ եփ տվին ու ջուրը խմացրին Արևամանուկին։ Նրանք շատ լավ էին իմանում կտրածի, ջարդածի, կոտրածի դեղերը, և հենց միայն այդ էր հարկավոր որ գիտենային, որովհետև ուրիշ ցավ չէր պատահում։

Արևամանուկը ուղղորդ հիվանդացավ. պառկեց տեղումը ու էլ շուտ չի վեր կացավ։ Նա կարծես շատ էր ուրախացել, որ հիվանդացել է, որովհետև նրան այնպես ծառայում, պատիվ էին տալիս, որ առողջ ժամանակը տեսած չէր։ Նրան այնպես էին պահում, պահպանում, որ ցավի սաստկությունը բնավ չէր զգում։ Արթուն ժամանակը պառավներն էին իրանց հին զրույցներովն ու հեքիաթներովը նրա ուշք ու միտքը գրավում, իսկ քնած ժամանակն էլ՝ քաղցր երազները։ Մայրը հո՝ մի բոպե մոտիցը չէր հեռանում և ինչ ազիզ կերակուրներ ասես, որ չէր եփում, ուտեցնում։

«Այս ի՞նչ լավ բան է եղել հիվանդ լինելը,— ասում էր Արևամանուկն ինքն իրան։— Առողջ ժամանակս ինչ որ ուզում էի՝ չէին տալիս. հիմա այնպես բաներ են ուտեցնում, որ կյանքիս մեջ առաջին անգամն եմ համը տեսնում։ Եվ ի՞նչ լավ հեքիաթներ են ասում։ Առաջ այնքան աղաչում էի, ոչինչ չէին ասում»։

Ճշմարիտ որ շատ լավ զրույցներ էին պատմում։ Այդ զրույցները այնպիսի բովանդակություն էին ունենում, որ նրանով համարյա թե լրանում էր Արևամանուկի կրթության պակասը։ Այդ զրույցներից նա ավելի փորձառություն էր ստանում և ինքն իրան ասում էր. «Ինչքա՞ն հիմարություն է՝ չիմանալ, թե մեզանից առաջ ապրող մարդիկը ինչպե՞ս են եղել ապրելիս, ինչի՞ց են վնասվել և ինչի՞ց օգուտ քաղել։ Եթե այդ չիմանանք, էլ ինչպե՞ս կարող ենք խելոք կերպով ապրել աշխարհիս երեսին։ Օրինակ, ի՞նչ հիմարություն էր իմ արածը—առանց զենքի՝ ուղղակի ընկնել վագրի գիրկը—այդպես միայն խելագարը կանե։ Ա՜խ, ինչքա՜ն հիմար եմ եղել, ես այդ նոր եմ հասկանում»։

Այսպես ահա ամեն մի զրույցից հետո՝ մեր Արևամանուկը մի նոր մտածմունքի մեջ էր ընկնում և նոր խելքի գալիս։ Պետք է ասել, որ այդ այն զրույցների լավությունիցն էր, որ նրան պատմում էին։

2

Մեկ անգամ, երբ որ Արևամանուկն արդեն լավանալու վրա էր, նրան դուրս բերին տանիցը և տարան մի մեծ ծառի շվաքում պառկեցրին, որ ավելի մաքուր ու զով օդ շնչե։ Մի հասարակ կապերտ փռեցին, վրան մի բարձ դրին. Արևամանուկը կռնեց նրա վրա, իսկ պառավները նստոտեցին նրա բոլորի շուրջ՝ կանաչ խոտի վրա։ Մայրը որդու գլխավերևը նստած՝ շփում էր նրա գլուխը, շոկում, մաքրում էր նրա ոսկեթել մազերը, իսկ պառավները պատասխան էին տալիս Արևամանուկի ամեն մի առաջարկած հարցմունքին՝ երկար զրույցով։

— Ա՜խ, ինչպես ուրախ եմ, որ էլի տեսնում եմ Մասիսի երեսը,— ասաց Արևամանուկը և հարցրեց պառավներից մեկին.— Նանե՛, ինչի՞ցն է, որ Մասիսի գլխի ձյունը չի հալվում։

— Նրա համար չի հալվում, հոգիս, որ մեծ նավը չբացվի և արևից ու անձրևից չփչանա։

— Այդ ի՞նչ նավ է, նանե, ես չեմ հասկանում։

— Դրա պատմությունը երկար է, հոգիս, կարճն այս է, որ մի ժամանակ արարած աշխարհքս ջրով ծածկվել է. միայն մեկ մարդ է ազատվել իրա որդկերանց, իրա կնոջ ու հարսների հետ, և ազատվել է այսպես։ Մի մեծ, խիստ մեծ նավ է շինել. երբ որ ջրերը բարձրացել են, նավն էլ հետն է բարձրացել, մինչև հասել է Մասիսի գլուխը, նրա վրա նստել։ Այնտեղ այնքան մնացել են, մինչև ջրերը ետ են քաշվել։ Հետո դուրս են եկել նավիցը, վայր են իջել սարիցը և տեսել որ ի՞նչ, էլ երկրիս երեսին ոչ մի մարդ է մնացել, ոչ անասուն, ամենքին էլ ջուրը խեղդել, քշել, տարել է։ Այնքան լավ է եղել, որ նա իր հետ վերցրած է եղել ամեն տեսակ օգտակար անասուններ։ Դրանք սկսում են նոր մեկանց շատանալ, և էլի լցվում է երկիրը թե՛ մարդկերանցով և թե՛ անասուններով։ Ահա այդ ժամանակ, երբ որ սարիցն իջել են, իսկույն ձյուն է եկել և ծածկել մեծ նավը։

— Այն մարդի անունն ի՞նչ է եղել, նանե։

— Նրա անո՞ւնը... սպասիր... Նավ, Նով, Նո... ինչ որ է, այսպես մի բան է. լավ չէ միտս։

— Դե որ այդպես է, արի ասենք՝ շենքն ու շինողը իրար անվանակից են։ Ինչ էլ լինի անունը, այդ ոչինչ, երևում է միայն, որ այդ մարդը ամենից խելոքն է եղել, որ կարողացել է իր գլուխն ազատել։

— Մենակ խելոքությունը բավական չէ, հոգիս. պետք է արդար էր լինի եղած, որ աստված միայն նրան է ազատել։ Եվ ճշմարիտն էլ այս է։ Ասում են, որ այդ ժամանակ մարդիկը շատ անիրավացել են, շատ մեղավոր են եղել, միայն Նովն է եղել արդարը։ Ասում են, որ նավը նա ինքը չի շինել, այլ ուրիշին է շինել տվել։ Նավը շինողը շատ խելոք, շատ իմաստուն ու ճարտար մարդ է եղել, բայց ինչ կանես, որ արդար չի եղել։ Նա իր համար էլ մի առանձին սենյակ է շինել նավի մեջ, մտածելով, թե ես չեմ հավատում, որ ջրհեղեղ կլինի, բայց ով գիտե, բան է, եթե լինի, ես կմտնեմ իմ սենյակս։ Եվ ի՞նչ ես կարծում։ Գալիս է ջրհեղեղը, այդ մարդն էլ մտնում է իր սենյակը, բայց որովհետև արդար չի լինում, առաստաղը խորտակվում է անձրևներից և այնքան ջուր է թափվում մեջը, որ նա իր շինած ամենից ամուր սենյակումը խեղդվում է։ Նով նահապետը շատերին է ուզում ազատել, բայց ամենի սիրտն էլ քարանում է, ոչ ոք չի լսում նրան։ Մի պառավ

կնկա ասում է. «Նանե, եկ մեր նավի մեջը մտիր, հիմա որտեղ որ է ջրհեղեղ կլինի». իսկ նա պատասխանում է՝ «Դեռ սպասեցեք, ես հաց եմ թխում»։ Բայց ի՞նչ, դեռ հացը թոնրումը, մեկ էլ տեսնում է՝ հրես թոնրի միջիցը ջուր է, որ քըլթքլթալի դուրս է գալիս։ Պառավն այնպես շշկլվում է, որ գլխիվայր ընկնում է թոնրի մեջն ու խեղդվում։

— Ես հիմա հիշում եմ, նանե, որ դու մեկ անգամ ասացիր, որ այդ արդար մարդը մեր նախահայրն է, մեր մեծ պապը։

— Իհարկե, նա մեր նախահայրն է, մեր նահապետն է։ Նա մեր Մասիս սարի վրա է ազատվել ջրհեղեղիցը, մեր աշխարհումն է ապրել, մեր աշխարհումը թաղվել։ Բայց որովհետև աշխարհիս բոլոր մարդիկը, բոլոր ազգերն ու ցեղերը նույնպես նրանից են հառաջ եկել, այդ պատճառով նա ամենքի նախահայրն է, մենակ մերը չէ։ Միայն, իհարկե, մեծ բաժինը մերն է. որովհետև մեծ նավը մեր սարի վրան է, մեծ պապը մեր երկրումն է թաղված. ամենից մոտիկը մենք ենք։ Մենք նրա անբաժան զավակներն ենք, նրա տան բնակիչները, իսկ մյուսները՝ բաժանված, հեռացած։

— Ուրեմն մենք մի ուրիշ նախահայր էլ ունինք, որ միայն մերն է և ուրիշները նրանից բաժին չունին։

— Ինչպե՞ս չունինք։ Ամեն ցեղ իր սեփական նախահայրն ունի, մենք էլ ունինք, և մերն ամենից քաջն է, ամենից ճարտարը։

— Բա ինչո՞ւ ինձ չես պատմել, նանե։

— Ա՛յ, հիմա կպատմեմ, հոգիս, եթե ուզում ես. և պետք է ուզենաս, որովհետև դու նրանից շատ հեռու չես. շատ, շատ որ հեռու լինիս, պետք է նրա թոռան թոռի թոռը լինիս։ Ուրեմն նրանից մինչև քեզ միայն վեց պորտ է անց կացել։

— Այդ շատ լավ է։ Դե պատմիր տեսնեմ, նա ինչպե՞ս մարդ է եղել. տեսնեմ ես էլ կարո՞ղ եմ նրա նման դառնա՞լ թե ոչ։

— Իհարկե, նրա նման պիտի լինիս, հոգիս. դեռ պետք է աշխատես՝ նրանից էլ անցնել. և կանցնես, եթե մյուս անգամ խելագարություն չանես, աչքերդ չխփես ու ընկնես վագրի գիրկը։

— Այդ թող, նանե, մարդ որ գժություն չանե, բա ինչպե՞ս կխելոքանա։

— Դե լսիր, հոգիս։

Այստեղ պառավն սկսում է պատմել մեր Հայկ նահապետի պատմությունը՝ մոտավորապես հետևյալ կերպով։ Ասում եմ մոտավորապես, որովհետև պառավն այնքան գեղեցիկ էր պատմում, որ Արևամանուկին թվում էր, թե նրա ասածները բոլորն էլ իր աչքովը տեսնում է. իսկ ես այդ շնորհքը չունիմ։ Հուսով եմ միայն, սիրելի երեխայք, որ ինչքան էլ ձանձրալի լինի իմ պատմելուս ձևը, դուք սիրով կկարդաք և շատ անգամ կկարդաք, որովհետև մեր սիրելի նախահոր, մեր պապերի պատված ու պաշտած Հայկ նահապետի պատմությունն է, որ բոլորովին ճշմարիտ է և ոչ թե մի հնարովի հեքիաթ կամ զրույց։

3

«Երբ որ Նոյ նահապետը իջնում է Մասիս սարիցը և բնակում նրա ստորոտումը, այդտեղ նրա որդիքն ու թոռները սկսում են անչափ շատանալ։

Այսպես անցնում է մի հարյուր, երեք հարյուր տարի. մի խոսքով՝ էլ հայտնի չէ թե ինչքան. Մասիսի շրջակայքը առաջվա նման մարդով լցվում է։

Ինչպես որ լճի մեջ՝ երբ որ մի քար ես գցում, ջրիցը բոլորակ-բոլորակ ալիքներ են բարձրանում ու մղվում դեպի ափերը, այսպես էլ մարդիկը երբ որ շատանալ են սկսում, Մասիսի բոլորիշուրջ ալիքի բոլորակների նման տարածվում են։ Բայց քարը, որ լճի մեջն ես գցում, նրա բարձրացրած ալիքները վերջ ի վերջո ավելի դեպի այն կողմն են թեքվում, որ կողմը ցածր է։ Հենց այսպես էլ մեր շատացած մարդկանցն է պատահում։

Երբ Մասիսից բավական հեռանում են, նրանց համար ամեն տեղ ապրելը միակերպ հեշտ չի լինում։ Մարդիկն աշխատում են բարձր ու ցուրտ տեղերից փախչել ու դեպի ցածր ու տաք տեղերը գնալ, որ ապրելն ավելի հեշտ լինի։

Այնպես է պատահում, որ դեպի հարավ գնացողները նկատում են, որ քանի հեռանում են, այնքան իրանց համար լավ է լինում. երկիրն ավելի պտուղ է տալիս և ամեն ինչ առատ է։ Այդ լսում են և մյուս կողմեր գնացողները և սկսում են իրանց ցուրտ լեռներիցն իջնել ու հեղեղի նման թափվիլ դեպի հարավ։ Բռնում են երկու մեծ գետերի—Եփրատի ու Տիգրիսի—ընթացքը և նրանց հետ գնում։

Գնում են գնում—շատ ու քիչն աստված գիտե—մինչև նրանց

առջև երկարումեկ ձգվում է մի մեծ, շատ մեծ դաշտ։ Էլ ոչ մի սար, ոչ մի բլուր, ոչ մի քար—այլ հարթ, հավասար դաշտ, բայց ի՞նչ դաշտ. աստծու ամենայն բարությունովը լիքը։ Այն ժամանակվա մարդիկն էլ հենց այդպիսի մի տեղ էին փնտրում, որ ոչ վարեն, ոչ մրսեն, բայց ամեն ինչ ուտեն։

Այս նոր երկրի համբավը տարածվում է ամեն տեղ։ Ամեն տեղից մարդիկ են գնում, որ տեսնեն՝ ճշմարիտ այնպե՞ս է, ինչպես որ պատմում են. և երբ որ ստուգում են, գալիս են իրանց տունը տեղը քոչացնում, չվում նոր երկիրը։

Այդ ժամանակները մեր պապ Հայկը այստեղ է լինում կենալիս։ Նա տեղիցը չի շարժվում, բայց գնացող-եկողները այնպես բաներ են պատմում, որ նա էլ է ցանկանում գնալ։ Ասում են՝ «Այնպիսի երկիր է, որ լեզվով պատմել չի լինիլ։ Ամենայն տարի Եփրատն ու Տիգրիսը այնպես հորդանում, վարարում են, որ ափերիցը դուրս են գալիս և ջրում ամբողջ դաշտը։ Երբ որ ետ են քաշվում, սերմը գցում են նրանց թողած ցեխի վրա. էլ ոչ հերկել, ոչ ցաքանել, բայց արտ է դառնում, որ զարմանալի։ Ցողուններն այնքան բարձրանում են, որ ուղտը միջին չի երևում. տերևները թաթի պես լայն-լայն, հասկերը կռան չափ հաստ. երկու թզաչափ երկայն, մեջներին մինչև հարյուր, երկու հարյուր, երեք հարյուր հատիկ։ Մեկ չափ ցանողը երեք հարյուր չափ է վերցնում։ Ցանելու տեղն էլ այնքան շատ է, որ ինչքան կուզես՝ ցանիր։ Ուրիշ էլ ինչ պտղեղենով, ինչ արմտիքով ասես՝ լիքն է։ Հաղորդի ճութերը այնքան մեծ-մեծ են, որ հեռվից նայողը կարծում է, թե սև-սև գոմեշներ են նստոտած վաղան տակերին. ծիրանը մեր դեղձիցը խոշոր, նուռը մեր ձմերուկի չափ, բայց էլի այնպես պտուղներ կան, որոնցից մեր երկրումը չկան»։

Ահա այս ամենը որ լսում է մեր պապ Հայկը՝ ինքն էլ է ուզում գնալ։ Հավաքում է իր որդկերանցը և եղբայրներին, հայտնում է նրանց իր միտքը։ Եղբայրները չեն հոժարում, ասում են՝ ինչո՞ւ թողնենք մեր երկիրը, մեր հողը, մեր ջուրը, մեր ծաղկապատ լեռները, մեր անմահական աղբյուրները, վերջապես, մեր հորն ու մոր, մեր նախնյաց սուրբ գերեզմանները։

Հայկն ասում է՝ «Այդ շատ լավ եք ասում։ Դուք մնացեք այստեղ. այստեղ ապրեցեք, մեր երկիրը պահպանեցեք, իսկ ինձ թույլ տվեք գնամ, տեսնեմ այդ մարդիկն ո՞ւր են այդպես հեղեղը պես թափված գնում կամ ի՞նչ են շինում այնտեղ։ Ես մեր երկրիցը

ձեռք չեմ վերցնիլ, նրա սահմանիցը շատ չեմ հեռանալ։ Այնտեղ, ինչպես պատմում են, մի ուրիշ լավ բան չկա, բացի հացի առատությունից»։

Այստեղ պառավ տատն սկսում է հացի նշանակությունը հասկացնել Արևամանուկին։

— Հացը մի այնպիսի բան է, Արմիկ ջան,— ասում է պառավը,— որ ինչ տարի նա չի լինում, բոլոր ուտելիքներն էլ նրա հետ պակասում են, և երբ որ հացն առատ է լինում, մյուս բոլոր բաներն էլ առատ են լինում։ Օրինակի համար, երբ որ հաց չի լինում, եղ էլ չի լինում։ Հիմա կասես՝ ինչո՞ւ։ Նրա համար որ՝ արտ չեղած տարին խոտն էլ է պակաս լինում։ Իսկ կովը որ խոտ չուտի, լավ չարածի, որտեղի՞ց կաթ կտա, որ նրանից էլ մածուն, մածնից էլ եղ շինեն։ Խոտ չկա, մեղը էլ չկա. ինչո՞ւ, նրա համար որ՝ խոտ որ չլինի, ծաղիկ էլ չի լինի, իսկ ծաղիկ որ չլինի, էլ մեղուն ինչի՞ց կշինե մեղը։ Ծաղիկ չկա, պտուղ էլ չի լինի։ Կուտ չկա, ձու էլ չի լինիլ։

Երևում է, որ մեր պապը մի քանի անգամ սով տեսած է լինում։ Սկսում է պատմել, թե սովն ինչից է հառաջ գալիս։ Թե՝ երբ որ մի տարի, երկու տարի երկինքը կապվում է, գետինքն էլ չորանում է, էլ ոչինչ չի տալիս, էլ խոտ չի բսնում, ծառը չի ծաղկում, աղբյուրը չի քլքլում, մարդ, անասուն սովամահ են լինում։ Ասում է՝ այդ նոր երկրումը դժվար թե սով պատահի, եթե ճշմարիտ է այն ամենը, ինչ որ ասում են։ Լավ կլինի ուրեմն, որ եթե այդ երկրի միջումը չլինինք, գոնե նրա սահմանի վրա լինինք, նրանից մոտիկ լինինք։

Սրա վրա որդիքն ասում են. «Հայր, դո՛ւ գիտես։ Երբ որ դու կամենում ես, մենք ի՞նչ կարող ենք ասել»։ Եղբայրներն էլ ասում են՝ մենք էլ կգանք քեզ անց կկացնենք։ Մյուս օրը պատրաստություն են տեսնում. վրանները կարկատում, շինում են, աման, չաման, շորեղեն կապում են, մափռաշներում դարսում, կապոտում, էշերը, ջորիքը բարձում, ձիանոց վրա էլ իրանք նստում, ոչխար, տավար առաջներն անում, ճամփա ընկնում։

Երբ որ մեր պապը ճանապարհ է ընկնում, նրա հետ շատերն են քոչում։ Ասում են՝ Հայկը խելոք մարդ է. եթե նոր երկիրը լավ չլինի, նա չի գնալ։ Մի հարյուր հոգի հենց Հայկի տանը կլիներ, մի քանի ուրիշ տուն էլ որ նրա հետ միանում են, ով գիտե՝ քանի հարյուր հոգի են դառնում։

Սրանք խումբ-խումբ, տավարը ջոկ, ոչխարը ջոկ, հորթերը ջոկ,— որ կովերին չծծեն—ձիավորները ջոկ, բեռնավորները ջոկ, կռունկների պես կարգով ճանապարհ են ընկնում ու կամաց-կամաց, այստեղ, այնտեղ իջնելով, գետերի, աղբյուրների ափերին, կամ արոտներում օրերով հանգստանալով՝ հասնում են մինչև նոր երկրի սահմանը։ Այդ նոր երկիրն ասվում է «Միջագետք», այսինքն՝ գետերի մեջ եղած երկիր։ Այսպես նրա համար է ասվում, որ այն մեծ դաշտը, ուր գնում էին, երկու մեծ գետերի—Տիգրիսի ու Եփրատի — արանքումն էր։

Ահա այդ դաշտի հյուսիսային սահմանի վրա եղած լեռների ստորոտումն են իջնում։ Երկար ժամանակ այդտեղ մնալուց հետո՝ երբ որ լավ ծանոթանում են իրանց գնալու երկրին, վայր են իջնում լեռներից և մտնում են դաշտի մեջ։

4

Ճշմարիտ որ այդ դաշտը ամենայն բարությունով լիքն էր։ Մարդիկն իրանց մի օրվա աշխատանքը մեկ ամիս հանգիստ նըստած վայելում էին։ Բայց այդ հանգստության ժամերը զուր չէին անց կացնում, այլ լավ-լավ բաների վրա էին խոսում, մտածում, ուրախություն անում, զվարճանում։ Ջանազան տեղերից հավաքված մարդիկը այնքան սիրում էին միմյանց, ինչպես շատ տարի իրար չտեսած, իրար կարոտ քաշած հայր ու որդի, եղբայրներ, քույրեր։ Այնքան միաբան, այնքան սիրով էին, որ՝ ինչպես կասեն՝ գառն ու գայլը միասին էին արածում։ Մեր պապ Հայկին որ տեսնում են, այնպես են սիրահարվում վրան, որ սկսում են պաշտել։ «Ինչպե՞ս կարելի է, ասում են, որ այս հրաշալի պատկերի ու հասակի տերը, այս զարմանալի ճարտարությունն ու քաջությունն ունեցողը մեզ նման մի հասարակ մահկանացու լինի»։

Եվ ճշմարիտ որ՝ մի հասարակ մահկանացու չէր մեր պապը։ Արմիկ ջան, աստված պահի, դու որ մեծանաս, իսկ և իսկ նրա նման կլինիս։ Ամեն քեզ տեսնելիս՝ իսկույն միտս է ընկնում այն բոլորը, ինչ որ լսել եմ մեր պապի գեղեցկության մասին։ Հաստաբազուկ, լայնաթիկունք, բարձրահասակ, աչքերը քո աչքերի նման, մազերը քո մազերի։ Նրա ձգած նետն ու պարսաքարը նշանից վրիպում չի եղել։ Այնքան ուժով է եղել, որ նրա գործ դրած զենքն

ու զրահը ոչ ոք չի կարողանում եղել ոչ հագնել և ոչ գործ ածել։ Նրա խելքն ու ճարտարությունն էլ հետո կտեսնես։

Այսպես, ինչպես ասացի, այդ ընդարձակ դաշտի մեջ տարածված բոլոր մարդիկը իրար հետ շատ և շատ սիրով էին ապրում։

Միշտ բոլոր ցեղերի նահապետները հավաքվում են, միասին խորհուրդ անում, և ինչ որ պետք է լինում իրանց երկրի համար, շինում են։ Օրինակ՝ տեսնում են, որ դաշտի ինքնիրան ջրվող մասը օրեցօր քչություն է անում,— որովհետև մարդիկ էլ այդ դաշտի մյուս բերքերի նման սկսում են խիստ առատանալ,— մեծ-մեծ ջրանցքներ ու լճեր են շինում, որ թե՛ ավելի հեռու տեղեր ջրեն և թե՛ երաշտ տարիներին ջրի պակասություն չկրեն, լճերի ջրովը ջրեն։ Այսպես շատ անապատ ու անջրդի տեղեր են ջրովի շինում և նոր տեղերը՝ գեղեցիկ ծառաստաններ և այգիներ։

Տեսնում են, որ ճահճուտ տեղեր կան, ցամաքեցնում են, վնասակար գազանները կոտորում են, գետերի ու ջրանցքների վրա անթիվ կամուրջներ են շինում։ Օր չի լինում, որ մի նոր գյուտ չանեն։ Մեկը մի նոր ջրաղաց էր հնարում, մյուսը մի նոր տեսակ նայլ, մեկը գեղեցիկ կավե՛ ամաններ է շինում, մի ուրիշը՝ աղյուս, խողովակներ, ջրմուղներ։ Կանայք իրանց տանու ձեռագործերն էին սկսում ավելի նրբացնել։ Առաջ որ միայն բրդից ու մազից էին գործվածքներ անում, այստեղ դրանց վրա ավելացնում են բամբակն ու մետաքսը, որոնցից շատ բարակ գործվածքներ էին անում և բարակ էլ հագնում։ Ամեն մի արհեստավոր, թե՛ դարբինը և թե՛ ոսկերիչը, թե՛ հյուսնը և թե՛ որմնադիրը, թե՛ գինեգործը և թե՛ երկրագործը օրեցօր կատարելագործում էին իրանց արհեստը, օրեցօր մի նոր բան էին հնարում, մի նոր բան ավելացնում։ Այս պատճառով էլ քիչ ժամանակի մեջ անթիվ գյուղեր շինեցին գեղեցիկ աղյուսյա պատերով և ով գիտե՝ քանի-քանի էլ քաղաք—ամուր պարիսպներով, բարձր աշտարակներով, լայն կամուրջներով։

5

Երբ որ մարդիկ այսպես սիրով, այսպես խաղաղ ու բախտավոր ապրում էին, մեկ էլ—ի՞նչ տեղից—մի չար քամի է փչում, բոլորի սիրտը, բոլորի միտքը պղտորում։

Առաջվան բարի ծերերը մեռնում են, նրանց տեղն անցնում են խողվարար, գոռոզ և չար մարդիկ։

Այդ չարերի մեջ ամենից չարը լինում է Բել անունով մի ահագին հսկա, մի գազան մարդ։ Մյուսները թեպետ չար են լինում, բայց և շատ վախկոտ ու թուլասիրտ են լինում, բայց Բելը ոչ թե մարդուց, այլ աստվածներից էլ չի վախենում և կարծում է, թե ինքն էլ մի աստված է։ Իրանից վախեցող մարդիկ նրան այդպես չին ասել, նա էլ հավատացել էր, և կարծում էր, թե ինքը եթե ճշմարիտ աստված չէ, անպատճառ աստծու սերունդիցն է։

Մեկ անգամ, երբ որ բոլոր ցեղերի նահապետները հավաքված են լինում, որ իրանց հոգսերի մասին խորհուրդ անեն, այդտեղ են լինում թե՛ մեր պապ Հայկը և թե՛ իմ ասած աժդահա Բելը։ Խոսք խոսքի են գալիս, մեջները ահագին վեճ է բարձրանում, մեկն ասում է՝ այսպես լավ կլինի, մյուսը թե՝ չէ, իմ ասածն է լավը։ Հայկը տեսնում՝ է, որ առաջվա սերն ու համաձայնությունը վերացել է, սրտին ցավ շատ է լինում. վեր է կենում տեղիցը ու դառնալով դեպի խորհրդականները՝ ասում է.

— Հայրեր և եղբայրներ, ինձանից ձեզ խրատ չի հասնիլ, որովհետև ձեզանից շատերը այնպիսի պատկառելի տարիքի տեր են, որ ես նրանց որդու տեղ կհամարվիմ։ Ես ուզում եմ ձեզ ասել միայն, որ թողնեք ձեր վեճերը։ Մենք հիմա մի ուրիշ գործ ունինք կատարելու։ Մեր մաքուր ու անարատ արտերի մեջ վնասակար բույսեր են բսել, պետք է միացած ուժով այդ վնասակար բույսերը քաղհանենք, մի տեղ հավաքենք և կրակ տանք։

Այս խոսքի վրա այնպես են լռում ամենքը, որ կարծես համբառնում են, և սկսում են իրար երեսի մտիկ տալ և ավելի նայում են Բելի երեսին, որ սկսել էր սփրթնել։ Այս խոսքով մեր պապը «արտերի» մասին չէր խոսում, այլ մարդկանց «արտերի»։ Ուզում էր ասել՝ մեր մեջ չար մարդիկ են երևացել, որոնք պղտորում են մեր անարատ սրտերը։ Երկրի խաղաղությունը պահանջում է, որ այդ մարդկանցը պատժենք։ Բելը որ իրան վրա է առնում այս խոսքը, բարկությունը զսպելով՝ սառը կերպով պատասխանում է.

— Ես կարծում՝ եմ, խոտերն այնքան վնաս չեն տալ մեր արտերին, որովհետև իրանց հողի վրա են բուսած՝ երկուսին էլ բավական նյութ կլինի. բայց եկովի մանգաղաթե թռչնիկներ կան, որ չես իմանում՝ որտեղի՞ց են թռել եկել, դրանք փչացնում են մեր ցորենի հասկերը։

Բելն էլ է մեր Հայկի պես մութ խոսում։ Նա մեր պապին և նրա հետ գնացածներին մանգաղաթև է անվանում, մանգաղն աղեղի նմանացնելով, որովհետև մերոնք հայտնի են լինում այնտեղ ինչպես քաջ նետաձիգ աղեղնավորներ։ Նրանց համարում է եկովի, որովհետև ինքն այնտեղ է լինում ծնված, իսկ մերոնք ամենից հետո են լինում գնացած։ Այս էլ պետք է ասենք, որ այդ գոռոզ Բելը սուր ու աղեղ բանեցնելը Հայկիցն էր սովորել, նա մի ժամանակ շատ սիրում էր Հայկին և միշտ նրա հետ էր որսի գնում, որ ավելի լավ վարժվի։

— Մանգաղաթև թռչունները եթե չըլինին,— պատասխանում է Հայկը,— մորեխները խպառ կփչացնեն մեր արտերը։

1883

ՀՆԱՐԱԳԵՏ ՋՈՒԼՀԱԿԸ

(Ավանդություն)

1

Շահ-Աբասի ժամանակ հեռու աշխարհից դերվիշի հագուստով մի մարդ է գալիս Սպահան քաղաքը։ Քաղաքի ընդարձակ հրապարակի մեջ այդ դերվիշը մի մեծ շրջան է քաշում փայտով, ինքն էլ կշտին նստում լուռ ու մունջ։ Անցուդարձ անողները նայում են, զարմանալով հարցնում, թե դու ո՞վ ես, այս ի՞նչ բան է, որ դու քաշել ես. արդյոք մի թալիսման չէ՞ սա, և մեզ համար բարի՞, թե՞ չար թալիսման է... Դերվիշը բնավ չի խոսում։ Ամբողջ քաղաքը վարանման մեջ է ընկնում, թե սա ինչ կնշանակե արդյոք։ Վերջը իմաց են տալիս Շահ-Աբասին, թե այսպիսի մի դերվիշ է եկել...

Շահ-Աբասը իր գիտնականներից մեկին ուղարկում է, որ տեսնե ի՞նչ բան է, ի՞նչ է դերվիշի ուզածը, ինչո՞ւ է ժողովրդին սարսափի մեջ գցել։

Գիտնականը գնում է և ասում դերվիշին.

— Ո՛վ մարդ, ես հասկանում եմ քո միտքը։ Քո շրջանը նշանակում է երկինք։ Դատարկ է մեջը։ Այդ նշանակում է, որ դու ուզում ես երկինքը կապել, որ ոչ մի ամպ չլինի այնտեղ, որ էլ անձրև չգա, սով ընկնի մեր աշխարհքը։ Գիտեմ, գիտեմ, որ դու կարող ես այդ բոլորն անել. բայց խղճա մեզ, այդպես բան մի՛ անիլ, ինչ-որ ուզես, քեզ կտա Թագավորը...

Դերվիշը բնավ չխոսեց և գիտնականի երեսին անգամ չնայեց։ Բայց ժողովուրդը լսելով գիտնականի բացատրությունը ավելի մեծ երկյուղի մեջ ընկավ։ Էլ չէին ասում, թե գուցե սխալ էր գիտնականի բացատրությունը, այլ դրա հակառակ՝ լուն ուղտ շինելով, պատմում էին իրար, թե՝ «Բա չե՞ք ասիլ, դերվիշը մի ամենազոր մարդ է, այսինչ երկրում հեղեղ և կարկուտ է թափել, բոլոր բնակիչներին կոտորել. այնինչ տեղ յոթը տարի շարունակ կապվել է երկինքը, ոչ մի կաթիլ անձրև չի եկել, սով է ընկել երկիրը, բոլորեքյանք կերել են միմյանց...» Մյուս օրը Շահ-Աբասն ուղարկեց մի ուրիշ գիտնական։

— Գիտեմ, գիտեմ ով ես դու, մարդ աստուծո,— ասում է գիտնականը։— Քո շրջանը նշանակում է երկիրս։ Դատարկ է մեջը։ Դրանով ուզում ես ասել, որ ժանտախտով պիտի դատարկես մեր երկիրը։ Խնայի՛ր, մեզ. խնայի՛ր, ի սեր ամենակալին, այդպես բան մի՛ անիլ, ինչ որ ուզենաս, քեզ կտանք։

Դերվիշը դարձյալ մնաց լուռ։ Ավելի ևս սաստկացավ ժողովրդի երկյուղը և նորանոր առասպելներ տարածվեցին քաղաքի մեջ։

Բոլոր գիտնականները հաջորդաբար գնացին դերվիշի մոտ և բոլորն էլ ունքը շինելու տեղ աչքն էլ հանեցին—փոխանակ ժողովրդի կասկածը փարատելու, նրան ավելի երկյուղի ու սնահավատության մեջ գցեցին։

2

Թագավորը կարծում էր, որ դերվիշի արածը մի հասարակ հանելուկ պիտի լինի, և իրան համար շատ ամոթ էր համարում, որ այդ հասարակ հանելուկը լուծող մի գիտնական չունի։ Այդպիսի մտատանջությունով նա մեկ օր ծպտած ման էր գալիս Սպահանի Հայոց Թաղումը, ուր հանդիպեցավ մի տարօրինակ բանի։ Մի տանիքի վրա ցորեն կար փռած աղունի համար. ոչ ոք չկար մոտը, բայց մի երկայն եղեգ կար ցցված, որ ինքն իրան անդադար տարուբերվելով քշում էր ճնճղուկներին։— Այս հրաշքի գաղտնիքը պետք է տան մեջ փնտրել,— ասաց Թագավորն ու ներս գնաց տուն և այնտեղ տեսավ մի ջուլհակ, որ կտավ էր գործում։

Երբ որ Թագավորը ներս մտավ, ողջունեց ջուլհակին. ջուլհակը նայեց նրա վրա, իսկույն ոտքի կանգնեց, խոր գլուխ տալով պատասխանեց նրա ողջույնին, հետո սկսեց շարունակել իր գործը։ Ջուլհակի աջ ու ձախ կողմին մի-մի օրորոց կար դրված։ Երբ որ նա սկսեց գործել, օրորոցներն էլ սկսեցին օրորվել տանիքի ինքնաշարժ եղեգի պես։ Օրորոցում եղած երեխաները ծերունու թոռներն էին, որոնց մայրերը տան մի անկյունում նստած՝ ճախարակով բամբակ էին մանում կտավի համար։ Իր հարսներին գործից չզցելու համար հնարագետ ջուլհակը տանիքի եղեգից մի թել էր կապել, թելի մեկ ծայրը փաթաթել կտավի սանդրին, որ իր տարուբերվելովը շարժում էր եղեգը։ Օրորոցներից նմանապես թելեր ուներ կապած, որոնց հակառակ ծայրերը իր աջ ու ձախ մատներին էր փաթաթել։ Աջ ձեռքով մաքուքը նետելիս, աջ կողմի օրորոցն էր օրորվում, ձախով նետելիս՝ ձախ կողմինը։ Այսպիսով նա մեկ անգամից երեք գործ էր կատարում։

Թագավորն այդ ամենը նկատեց և գովեց իր մտքումը նրա հնարագիտությունը, միայն նրա ոտքի կանգնելով խոր գլուխ տալը Թագավորի մեջ կասկած ձգեց, թե չլինի իրան ճանաչեց։ Այս բանն ստուգելու համար Թագավորը մի մութ հարցմունք արավ նրան.

— Չլինի՞մ, չլինի՞մ...

— Մի՞թե, մի՞թե...— պատասխանեց ջուլհակը։

Թագավորը «չլինիմ, չլինիմ» ասելով, ուզեց ասել ծերունուն. «եթե ինձ ճանաչեցիր, չլինի թե երևցնես այդ բանը, թող մեր մեջը մնա»։ Իսկ ծերունին պատասխանեց «մի՞թե, մի՞թե». այսինքն՝ «մի՞թե ես հիմար եմ և այդքանը չգիտեմ»։

— Քանիսի՞ մեջն ես, վարպետ,— հետո հարցրեց Թագավորը։

— Երկուսս լրացրել, երեքի մեջն եմ մտել,— պատասխանեց ջուլհակը։

Թագավորի այս հարցմունքը ջուլհակի հասակին էր վերաբերում։ Ջուլհակը պատասխանեց, որ երկու ոտքով ման գալն արդեն

վերջացրել է, հիմա գավազան է գործ ածում, իբրև երրորդ ոտք, մեկ խոսքով, ծերացել է։

Թագավորն այսպիսի շատ մութ հարցմունքներ արավ և բոլորի պատասխանն էլ, ստացավ դարձյալ մութ կերպով։ Տեսավ, որ ծերունի հայը մի հնարագետ և հանճարի տեր մարդ է թե՛ գործով և թե՛ խոսքով, մտածեց, որ միայն սա կարող է դերվիշի պատասխանը տալ։

— Դու որ այդչափ հնարագետ ես,— ասաց թագավորը,— եթե մի քանի սաղ ուղարկեմ քեզ մոտ, կարո՞ղ ես փետրել նրանց։

— Դրա քաջ վարպետն եմ ես,— ասաց ջուլհակը։

3

Այս պատասխանն ստանալուց հետո թագավորը գնաց։ Շատ չանցավ, ջուլհակի մոտ եկան թագավորի գիտնական նաղիր-վեզիրները։

«Ահա եկան թագավորի սագերը. իրավ որ լավ փետրելու թռչուններ են», ասաց ջուլհակը ինքն իրան։

Թագավորը տուն գնալով սաստիկ բարկացել էր գիտնականների վրա և սպառնացել էր, որ եթե գոնե մի մարդ չգտնեն, որ դերվիշին պատասխան տա, նրանց բոլորին էլ կաքսորե։ Այսպես նեղի գալով՝ որոշեցին դիմել հնարագետ ջուլհակին, որի համբավը նրանցից մեկը լսել էր։

— Վարպետ եղբայր, կարող չե՞ս արդյոք մի պատասխան տալ մեր տարօրինակ հյուրին, որ ժողովրդի վրա սարսափ է տարածել,— ասացին գիտնականները և պատմեցին դերվիշի դեպքը, որ արդեն հայտնի էր ջուլհակին։

— Ինչո՞ւ չէ... կարող եմ... բայց մեծ ծախք կպահանջվի դրա համար։ Պետք է ձեռք բերել մի կախարդական գավազան, մի անմահական սխտոր և մի ոսկի ձու ածող հավ։

Գիտնականները մնացին ապշած։

— Դրա ծախքը մենք կվճարենք,— ասացին նրանք ուշքի գալով,— միայն մենք չենք կարող գտնել այդ բաները, ինչ որ դու ես ասում։

— Ձեր բան է իմ ուզածը, և ես ինքս կգտնեմ, միայն ամեն

բանի համար մի գլխարկ լիքը ոսկի է պետք։ Դուք երեք հոգի եք, ամենքդ ձեր գլխարկովը մեկ ոսկի կբերեք, ես էլ կգամ դերվիշին պատասխան կտամ։

Գիտնականները ճարահատած համաձայնեցին։ Գնացին երեքերեք գլխարկ ոսկի բերին տվին ջուլհակին։ Այսպես փետրելով նրանց, ինչպես պատվիրել էր թագավորը, վեր կացավ առավ իր հոնի գավազանը, մի գլուխ հոտած սխտոր, ոտի մեկը կոտրած մի հավ և գնաց սարսափ տարածող դերվիշի մոտ։

Հավաքվեցին բոլոր քաղաքացիք, ներկա էր և թագավորը իր բոլոր իշխաններով։

Ջուլհակը չխոսեց դերվիշի հետ. նա լուռ ու մունջ իր գավազանի ծայրով մի խոր ակոս քաշեց շրջանի մեջտեղով ծայրե ի ծայր և այսպիսով դերվիշի շրջանը երկու հավասար մասի բաժանեց և նստեց նրա դեմ հանդիման։

Դերվիշը երկար մտածեց, գլուխը թափ տվավ. վերջը մի գլուխ սոխ հանեց դրավ առջևը։

Ջուլհակը, առանց երկար մտածելու, իսկույն իր սխտորը հանեց դրավ իր առջևը։

Բարկացավ դերվիշը և իր ջեբից հանեց մի բուռ կորեկ և շաղ տվավ ամբողջ շրջանի մեջ։

Ջուլհակը փեշի տակից հանեց իր հավը, որ իսկույն կտկտալով կերավ բոլոր կորեկը։

Դերվիշն էլ մինչև վերջը չսպասեց, իսկույն վեր կացավ և մռմռալով հեռացավ գնաց...

Թավավորը մոտեցավ ջուլհակին և խնդրեց, որ բացատրե այդ հանելուկի նշանակությունը.

— Ողջ լինի թագավորը,— ասաց ջուլհակը։— Այս մարդը մի խելագար դերվիշ է։ Երևակայել է, որ ինքը մի շատ զորեղ իմաստուն մարդ է և կարող է մեր ամբողջ աշխարհքին տիրել։ Իր քաշած շրջանով ուզում էր մեզ հասկացնել, թե իրանն է բոլոր մեր երկիրը։ Ես չուզեցա հասկացնել նրան, որ այդ խելագարություն է, այլ կես արի մեջտեղից, որով ուզեցա ասել, թե կեսն էլ իմն է։ Նա բարկացավ և իր սոխով ինձ պատերազմ հայտնեց կամ ուզեց ասել, մեր մեջ դառնություն կծագի, կռիվ կլինի։ Ես էլ իմ սխտորով հասկացրի նրան, որ ես փախչող չեմ, թեկուզ կռվից էլ վատթար բան պատահի։ Նա կորեկով ինձ սպառնաց, որ իր զորքերն

անհամար են։ Ես էլ իմ հավով ցույց տվի, որ ահա այսպես կջարդեմ ես քո անհամար զորքը։ Դրա վրա նա տեսավ, որ էլ չի կարող մեզ վախեցնել, փախավ գնաց...

Քաղաքացիք շատ ուրախացան, որ վերջապես ազատվեցին դերվիշի տալիք երևակայական սովից ու մահից և ամենքը միաբերան գոչեցին՝ «Կեցցե՛ ջուլհակը»։

Շահ-Աբասը, որ շատ արհեստասեր թագավոր էր, գովեց ջուլհակին և հետո հարցրեց.

— Ի՞նչ արիր իմ սագերին, լավ փետրեցի՞ր, թե ոչ...

— Ողջ լինի թագավորը, այո՛, լավ փետրեցի, ահա նրանց փետուրները,— ասաց ջուլհակը և թագավորի առջևը դրավ մի պարկ ոսկի։

— Քեզ են արժանի այդ ոսկիքը,— ասաց թագավորը,— դու ավելի օգտակար գործադրություն կգտնես դրանց համար։ Մի այդքան էլ իմ գանձարանից ստացիր և մի մեծ գործարան բաց արա. թող ծաղկի քո արհեստը իմ երկրիս մեջ։ Այսուհետև իմ պալատի դռները միշտ բաց են քեզ համար. թող իմ հովանավորությունը լիուլի տարածվի քո իմաստուն ժառանգների և քո ազգի վրա։

1886

ԱՐԵԳՆԱԶԱՆ
ԿԱՄ
ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

(Հայկական հին զրույցներից առած մի վեպիկ)

1

Շատ հին ժամանակ, երբ աշխարհքս լիքն էր հրաշքներով և երբ բարի ու չար ոգիները անընդհատ պատերազմ էին մղում իրար դեմ, ահա այդ ժամանակ Մասիսի ստորոտում կենում էր մի ծերունի իշխան՝ Արման անունով։

Արմանն ուներ երեք զավակ, մորից որբ մնացած։ Նրանցից երկուսն աղջիկ էին՝ մինը քան զմյուսը գեղեցիկ, իսկ երրորդը ավելի ևս չքնաղ և չնաշխարհիկ, միայն բարի ոգիները նրա ինչ լինելը թաքցրել էին հողեղեններից։ Այդպես էին կամեցել բարի ոգիները իրանց համար հայտնի նպատակով և մի ուրիշ ժամանակով, երբ որ ժամանակը լրանար, այնուհետև նա կամ աղջիկ և կամ տղա պիտի դառնար։ Բայց Արմանը նրան չէր որոշում աղջիկներից, և երեքին էլ միաձև աղջկա հագուստով էր պահում։— «Թող սա էլ աղջիկ համարվի,— ասաց նա — մինչև բարի ոգիների կամքը կատարվի», և անունն էլ դրավ Արեգնազան՝ միատեսակության համար, որովհետև մեծի անունը դրել էր Զանազան, իսկ երկրորդինը՝ Զարմանազան։

Արեգնազանը մեծացավ աղջկա պես. և թեպետ հավատացած էր, որ ինքն աղջիկ է և աղջիկներից էլ ամենից գեղեցիկը, բայց ատելով ատում էր աղջկան վայել բաները։ Նա չէր սիրում բուրդ գզել, թել մանել, կար ու գործ անել, և դրա հակառակ՝ երբ մի լավ ձի կամ մի զենք էր տեսնում, խելը գնում էր։ Մայր չուներ, որ նրան ստիպեր, տնարարություն սովորեցներ, իսկ հայրը՝ կարծես գիտությամբ՝ ոչ միայն այդ մասին ոչինչ հոգս չէր անում, այլև նրան իր հետ որսի էր տանում և ձի հեծնել ու զենք գործածել էր սովորեցնում։

Այսպես անցավ մի ժամանակ. մեկ օր Արմանը կանչեց իր զավակներին և ասաց.

— Ես ծառայում էի մեր բարի թագավորին և նա ինձ շատ սիրում էր։ Ահա այս դաշտերն ու անտառները, այս սարերն ու ձորերը, որ հիմա մեր ձեռին է, բոլորը թագավորն է ընծայել ինձ իմ հավատարիմ ծառայության համար։ Երբ որ ձեր մայրը վախճանվեց, սաստիկ տխրություն եկավ վրաս։ Վեր առա ձեզ, քաշվեցի այս խաղաղ վայրերը, և տխրությունս փարատելու համար՝ գլուխս որսորդության տվի։ Դուք հիմա մեծացել եք, իսկ ես ծերացել։ Դուք այստեղ մեծանում եք, ինչպես վայրի եղջերուները։ Ինչ կլինի ձեր վերջը, եթե այստեղ մնաք, իհարկե, շատ վատ։ Ապագա թշվառությունից ձեզ ազատելու համար՝ ես մտածել եմ, որ ձեզանից մեկին, տղայի հագուստով, ուղարկեմ թագավորի մոտ ծառայելու։ Թագավորը սիրով կընդունի և իմ տեղը ժամանակով նրան կտա։ Այդպիսով ձեզանից մեկը կարող է մյուսներիդ էլ տանել իր մոտ։ Հիմա ո՞րդ կուզենաք գնալ։

— Ես կերթամ, հայրիկ,— ասաց մեծ աղջիկը։

— Ես էլ, հայրիկ, ես էլ,— մեջ ընկավ միջնակը։

Արեգնազանը լուռ էր։

— Իսկ դու, նազանիկ, դու չե՞ս կամենալ,— հարցրեց հայրը Արեգնազանին. կարծես ուզում էր, որ գնացողը նա լիներ անպատճառ։

— Ինչո՞ւ չէ, հայրիկ. բայց երբ որ իմ մեծ քույրն ո զում է, ես ինչո՞ւ արգելք լինիմ նրան։

— Այստեղ արգելքի բան չկա, հարգիս. ինձ համար դուք երեքդ էլ մեկ եք, միայն դեռ չգիտեմ, թե ձեզանից ո՞րն ավելի հարմար կլինի։

— Ես ամենից հարմարն եմ, հայրիկ,— ասաց մեծը,— որովհետև ես ամենից մեծն եմ։

— Շատ լավ, բայց ես առանց պայմանի ոչ մեկիդ չեմ ուղարկելու։ Եթե դու կամենում ես, կերթաս ուրեմն, կփոխես հագուստդ, կընտրես զենք ու զրահ և առավոտը շատ վաղ քո ձին կհեծնես, կերթաս որսորդության. եթե դատարկ չվերադառնաս, քեզ կուղարկեմ թագավորի մոտ։

Մյուս առավոտուն մեծ աղջիկը, ինչպես պատվիրել էր հայրը, ճանապարհ ընկավ դեպի դաշտ՝ մի բան որսալու համար։ Երբ որ մտավ մի խոր ձորի մեջ և ուզում էր անցնել մյուս կողմը, նրա առաջը կտրեց մի դիմակավորված ձիավոր՝ ոտից մինչև գլուխ զինավորված։ Աղջիկը նրան որ տեսավ, այնպես վախեցավ, որ քիչ մնաց լեզուն կապվի. սաստիկ երկյուղից մնաց կաշկանդված, փախչել անգամ չկարողացավ։ Ձիավորը մոտեցավ նրան ու ասաց.

Ա՛յ տղա, սիրուն տղա,
Ո՞ւր ես գնում այդպես մենակ.
Ինչո՞ւ փափուկ անկողնիցդ
Դուրս ես եկել անժամանակ։

Աղջիկը պատասխանեց կմկմալով.

— Ես... ես... գնում եմ...
Ոչ... ոչ... չեմ գնում.
Հա... հա... պ՛տի գնամ...
Ի՞նչ երեսով նոր դառնամ...

Ձիավորն ասաց սպառնալով.

— Դու գնո՞ւմ ես, ո՞ւր ես գնում.
Ո՞ւր ես խախչում դու ձեր գեղից.
Ե՛տ դառ իսկույն, թե չես ուզում,
Որ գլուխդ թռչի տեղից...

Այս ասելով ձիավորը հանեց թուրը և բարձրացրեց, որ զարկե աղջկանը, բայց նա բղավեց.— Վա՜յ, վա՜յ, մի՛ զարկիր, մի՛ զարկիր, ես աղջիկ եմ, ես աղջիկ եմ, ահա՛, ահա՛, ետ եմ դառնում։

— Որ աղջիկ ես, ուրեմն գնա ձեր տուն, ձեր հավերին կուտ տուր։ Տղամարդի հագուստ ունենալը բավական չէ, պետք է տղամարդի սիրտ էլ ունենալ։ Էլի լավ էր, որ ինձ պատահեցար և ոչ մի ուրիշին.— ասաց ձիավորը և անհայտացավ։

Աղջիկը դողդողալով վերադարձավ տուն։

— Է՜... ո՞ւր է բերած որսդ.— հարցրեց հայրը.— ինչո՞ւ այդպես շուտ վերադարձար։

— Ճանապարհին ջերմս բռնեց, հայրիկ, գլուխս ցավում է,— պատասխանեց աղջիկը։

Մյուս օրը միջնակին ուղարկեց։ Նա էլ մեծին պատահած փորձանքին հանդիպեց. նրա պես վախեցած վերադարձավ տուն։

Երրորդ օրը Արեգնազանին ուղարկեց։ Նրան ևս հանդիպեց միևնույն ձիավորը և ասաց.

Ա՛յ, տղա, սիրուն տղա,
Ո՞ւր ես գնում այդպես մենակ.
Ինչո՞ւ փափուկ անկողնիցդ
Դուրս ես եկել անժամանակ։

Արեգնազանը պատասխանեց բարկանալով.

Քեզ ի՞նչ, թե ես ուր եմ գնում.
Ուր գնում եմ. այդ ես գիտեմ.
Ես չեմ գնում, որ քեզ նման
Խաղաղ մարդոց ճամփեն կտրեմ։
— Ուրեմն ես ավազա՞կ եմ.
Դե՛ւ ես ասում ինձ այդ բանը.
Այս րոպեիս դու վստանաս
Քո այդ խոսքիդ պատասխանը։

— Այո՛ թե դու ավազակ ես,
Ցույց է տալիս քո դիմակը.
Բայց թե ինչպես տղամարդ ես,
Այդ թող տեսնե իմ նիզակը...

Այս ասելով՝ Արեգնազանը հարձակվեց նրա վրա, ասելով.

— Դե՛ն ձգիր դիմակդ, տեսնեմ դու ի՞նչ մարդ ես, եթե ոչ՝ այս բոպեիս կթոցնեմ գլուխդ։

Ձիավորն ընդդիմացավ, վահանով պաշտպանվեց և թրով հարձակվեց Արեգնազանի վրա։ Արեգնազանը նույնպես պաշտպանվում էր վահանով և հարձակվում թրով։ Մի ժամ շարունակ տևեց նրանց կռիվը, և ոչ մեկը չկարողացավ զարկել մյուսին. զարկերը վահաններին էին դիպչում։ Միայն Արեգնազանը հետզհետե զորանում էր, իսկ նրա հակառակորդը թուլանում։ Վերջը Արեգնազանը մի ճարպիկ ոստյունով թռավ իր ձիուցը, հակառակորդի փողպատից բռնելով վայր գլորեց ձիուց և հենց այն է, ուզում էր, որ մի հարվածով գլուխը թոցներ, նա իսկույն վեր կալավ դիմակը...

— Ա՜խ, հայրի՛կ, հայրի՛կ,— բացականչեց Արեգնազանը.— այս ի՞նչ փորձանքի մեջ էիր գցում դու ինձ... եթե մի փոքր ուշ վեր կալնեիր դիմակդ, ինձ հայրասպան պիտի շինեիր։

Հայրը մոտը նստեցրեց Արեգնազանին և նրա վրան նայելուց չէր կշտանում։ Մի փոքր շունչ առնելուց հետո ասաց.

— Ապրի՛ս, ապրի՛ս, Արեգնազան,
Ելիս, ծաղկիս, զորանաս,
Հիմա գիտեմ, որ իմ տեղը
Դու անպատճառ կստանաս։

Իզուր չեմ քեզ սովրեցրել
Ձենք ու զրահ գործածել.
Ինքդդ գիտես, որ ամենքից
Քեզ եմ սիրել առավել։

Թող սա լինի, ասացի ես,
Արու զավակ ինձ համար,
Սրա անվախ, անահ սիրտը
Քաջ տղամարդի է հարմար։

Էլ աղջիկ չես այսուհետև,
Ձմոռանաս այդ բնավ.

Դու աշխատիր, որ ստանաս
Բարի անուն, մեծ համբավ։

Արքայական ապարանքը
Մի մեծ բույն է փորձության.
Եթե սխալ մի քայլ անես,
Դու կորած ես հավիտյան։

Այժմ գնա՛, դու իմ հոգյակ,
Օհնություն քեզ հետ տար,
Եղի՛ր բարի, մեծահոգի,
Եղի՛ր անմեղ ու արդար...

2

Երբ որ Արեգնազանը ներկայացավ թագավորին և հայտնեց, որ ինքը Արմանի որդին է, թագավորը շատ ուրախացավ։

— Ես այնպես էի կարծում,— ասաց թագավորը,— որ մեր Արմանը հասած տղա չունի։ Անունդ ի՞նչ է, տղա՛ս։

— Տերությանդ ծառա՝ Արեգ։

— Արե՜գ... շատ լավ անուն է և քեզ բոլորովին հարմար։ Ուրա՛խ կաց, տղա՛ս. քեզ այստեղ լավ կպահեն։ Եթե մի նեղություն, մի կարիք ունենաս, ինձ հայտնիր։ Վաղը պիտի որսի երթանք, դու էլ կգաս ինձ հետ։

Թագավորը մինուճար մեկ աղջիկ ուներ, Նունուֆար անունով։ Այնքան գեղեցիկ էր Նունուֆարը, որ արեգակին ասում էր՝ «դու մի դուրս գա, ես եմ դուրս գալու»։

Երբ որ թագավորը խոսում էր Արեգնազանի հետ, Նունուֆարը վարագույրի հետևից թաքուն նայում էր նրա վրա և զմայլում։

«Սա իսկ և իսկ այն պատկերն է, որին քանի անգամ տեսել եմ ես երազումս», ասում էր Նունուֆարն ինքն իրան...

Մյուս առավոտը որսական փողերը հնչեցին։

Հազարից ավելի ձիավոր դուրս եկան, բոլորն էլ զինավորված լայնակամար նետաղեղներով, երկայնակոթ նիզակներով և այլ զենքերով։ Իրանց հետ ունեին բազմաթիվ գամփռներ, բարակներ, բազեներ... մի խոսքով որսի ամեն պատրաստությունով։

Անցան գնացին, հասան մի լայնատարած դաշտ, չորս կողմից

ահագին անտառներով շրջապատված։ Որսական շներով անտառներից դուրս փախցրին բոլոր էրեներին դեպի դաշտ, շղթայաձև շրջապատեցին ամբողջ դաշտը, և բոլոր որսերին կալմեջ արած՝ սկսեցին անխնա կոտորել։

Արեգնազանը թագավորի մոտից չէր հեռանում, և նրանից էլ քիչ չէր կոտորում. Որսասպանության այս թունդ միջոցին թագավորը մի եղջերվի հետևից ձին չափ զցելիս, ինչպես պատահեց, վայր ընկավ ձիուցը, թեև անվնաս, միայն ձին խրտնեց, փախավ. թագավորը մնաց հետիոտն և իսկույն ընկավ մի արջի առաջ։ Արջը հետևի ոտների վրա կանգնեց, բերանը բաց արավ և հենց որ ուզում էր թագավորին իր գիրկն առնել, ջարդել, Արեգնազանը մի ակընթարթի մեջ նետի պես սլացավ իր ձիով և թրի մի հարվածով կես արավ արջի գլուխը և վայր գլորեց ամեհի գազանին։ Թագավորն ազատվեցավ, և Արեգը դարձավ նույն օրվա հերոսը։

— Ա՜յ քեզ բախտ... ինչո՞ւ ես չէի մոտիկ թագավորին.. — ասում էին որսորդներից շատերը...

Թագավորին սույն օրվա պատահած դեպքի լուրը շուտով քաղաք հասավ, և պատանի որսորդի արած քաջության համբավը մի բոպեում տարածվեց ամբողջ քաղաքի մեջ։

Տեսնելու բան էր, թե ինչպիսի աղաղակ էին բարձրացնում քաղաքացիք որսորդների վերադարձին։

— Կեցցե՜ թագավորը, կեցցե՜ քաջ Արեգը,— գոռում էին միաբերան և երգում.

Ո՞վ է ազատել մեր թագավորին
Արջի ճանկերից, հա՜յ, արջի ճանկերից...
Մեր քաջ Արեգը, սիրուն պատանին.
Նա է ազատել արջի ճանկերից.
Արջի ճանկերից, հա՜յ, արջի ճանկերից...
Երկայն նիզակը բերանն է կոխել,
Գլուխը թրով մեջտեղից կիսել.
Ամեհի գազանին գետին կործանել,
Մեր թագավորին անվնաս պահել
Արջի ճանկերից, հա՜յ, արջի ճանկերից։
Արեգն է սիրուն արեգակի պես,
Նոր է դուրս եկել որսական հանդես,
Արջի գլուխը արավ երկու կես,
Մեր թագավորին ազատեց այսպես
Արջի ճանկերից, հա՜յ, արջի ճանկերից...

Արեգն է դյուցազն, քաջ ու անվեհեր,
Կեցցե՜ հավիտյան, կեցցե՜ շատ օրեր.
Եթե նա այսօր այնտեղ չլիներ,
Մեր թագավորին էլ ո՞վ կազատեր
Արջի ճանկերից, հա՜յ արջի ճանկերից։

Արեգնազանն այս ցույցերը տեսնելով ասում էր ինքն իրան,

— Ա՜խ, ի՜նչ լավ բան է տղա լինելը. երանի հս հշմարիտ տղա լինեի։ Աղջիկը որտեղի՞ց կարող էր այս պատվին արժանանալ...

— Դու այսօր ցույց տվիր ինձ քո շնորհքդ, Արեգ,— ասաց թագավորը,— այսուհետև դու ինձանից անբաժան կմնաս։ Ապրի՜ս, տղա՜ս, ապրի՜ս։ Դու մի հազվագյուտ էակ ես. գեղեցկության և ջահելության հետ շատ հաշտ չէ քաջությունը, բայց Երկինքն ուզեցել է քեզ մի բացառություն համարել։ Վաղը դու մեր ձիաններից կընտրես քեզ համար ամենալավը, իմ զենք ու զրահներից՝ ամենից ընտիրները։ Դու ժամանակով դյուցազանց կարգը կընկնիս և հենց այժմ էլ մի փոքրիկ դյուցազն ես...

Թագավորը շատ ուրախ էր, որ մի փոքրիկ դյուցազն է գտել, բայց Նունուֆարի ուրախությունը սահմանից անց էլ կացել։

— Սրան Երկինքն է ուղարկել ինձ համար,— ասում էր Նունուֆարը ինքն իրան.— բանն այնպես է գնում, ինչպես որ պետք էր ցանկանալ։ Բայց ես ե՞րբ պիտի տեսնեմ նրան երես առ երես, կամ նա ինձ ե՞րբ պիտի տեսնի։ Ա՜խ, ինչքա՜ն ցանկանում եմ, որ հենց այս բոպեիս նա իմ մոտս լինի. մենք միասին կխոսինք, ես նրան կասեմ... նա ինձ կասե՜... Եվ ինչո՞ւ չկանչել, ինչո՞ւ չխոսել։ Հայրս նրան որդու պես է սիրում, որովհետև իր բարեկամի որդին է. նա ազատ ել ու մուտք ունի բոլոր պալատում։ Այո՜, այո՜, պետք է կանչել։ Է՜յ, ո՞վ կաք այդտեղ։— Կանչեց Նունուֆարը, և ներս մտավ մի աղախին։

— Այս բոպեիս կերթաս Արեգի մոտ և կասես, որ գա ինձ մոտ. ասա՝ «Ե՜կ, ինձ տես»...

Աղախինը գնաց և կանչեց Արեգին։

— Չեմ կարող գալ,— պատասխանեց Արեգը։

— Ինչո՞ւ չես կարող, պարոն. նա հրամայել է,— պնդեց աղախինը։

— Ես նրա մոտ գործ չունիմ, հասկանո՞ւմ ես։

— Պարոն, նա ասում է. «Ե՜կ, ինձ տես»... հասկանո՞ւմ ես...

— Գնա ասա, «Ոչ կգամ և ոչ կտեսնեմ քեզ»...

Աղախինը գնաց։

Նունուֆարը Արեգի մերժումը լսելով՝ այնպես սառավ ու տաքացավ, այնպես կարմրեց ու սփրթնեց փոփոխակի, որ աղախինն այդ տեսնելով՝ սարսափի մեջ ընկավ։

Նունուֆարի սիրտն ուզում էր տրաքիլ, գլխի սկավառակն ուզում էր բարձրանալ։ Նա անդադար այս ու այն կողմն էր ընկնում, մերթ դուռն էր բաց անում, մերթ պատուհանը. նրա սենյակը դարձավ մի հնոց և նրան այրում, խորովում էր։

— Մերժո՜ւմ... արհամարհա՜նք... ի՜նձ, ի՜նձ, օ՜հ, գլուխս, գլուխս, տրաքում է, տրաքում...

Աղախինը տեսնելով իր տիրուհու անսահման սրտնեղությունը, վստահացավ ասել.

— Տիրուհի, ես զարմանում եմ, որ դու մի այդպիսի դատարկ բանի համար սիրտդ շուռ ես բերում։ Նա գուցե սաստիկ ամաչում է, և դրա համար է, որ չեկավ։ Երբ որ լսեց, որ դու կանչում ես իրան, ամոթից կարմրեց, վարդ կտրեց, և ինչքա՜ն գեղեցիկ էր...

— Ասա՛, ասա՛, խոսիր, շարունակիր... ես չլսեցի քո բոլոր ասածները... Ո՜հ, որքա՜ն ստոր եմ ես հիմա նրա աչքումը, որքա՜ն ստոր... Բայց նա սխալվում է, այնպես չէ՞, նա սխալվում է...

Նունուֆարը երկար ժամանակ հոգեպես տանջվելով՝ թուլացավ և ընկավ անկողին։ Թագավորին իմաց տվին. նա գնաց տեսավ, բժիշկներ կանչեց. հավաքվեցան բոլոր բժիշկները, հույս տվին թագավորին, թե հիվանդությունը վտանգավոր չէ և շուտով կբժշկեն, բայց դրա հակառակ, քանի գնաց՝ Նունուֆարի տկարությունը վտանգավոր դարձավ. բժիշկները հուսահատվեցան և ուղղակի հայտնեցին, որ չեն կարողանում իմանալ ոչ ցավի պատճառը և ոչ նրա բժշկելու հնարը։

Շատ տխրեց թագավորը։ Նունուֆարը նրա միակ զավակն էր, միակ մխիթարությունը, իր թագավորության միակ ժառանգուհին։ Ամբողջ պալատը և համարյա ամբողջ քաղաքը տխրության մեջ ընկավ։ Արեգնազանն էր միայն անտարբեր մնացողը։ Նրա հոգը չէր ամենևին, և չէր էլ երևակայում, որ ինքն է նրա տխրության միակ պատճառը։

Նունուֆարին փոքր ի շատե սփոփողը և ուրախ տրամադրություն տվողը թագավորի ծաղրածուն էր, իսկ նրա վրա հսկողն ու խնամք տանողը վեզիրի կինն էր։

Վեզիրի այրի կինը մի հասած տղա ուներ։ Նա կարծում էր, որ թագավորին արժանավոր փեսացու միայն իր տղան կարող է լինել և ոչ մի ուրիշը։ Այս պատճառով նա գիշեր-ցերեկ չէր հեռանում Նունուֆարի մոտից. աշխատում էր նրան առողջացնել և միևնույն ժամանակ նրա սերը գրավել։

— Տիրուհի, ի՞նչ կտաս, որ ես քեզ բժշկեմ,— ասաց մեկ երեկո ծաղրածուն։

— Ի՞նչ պիտի տամ, հիմար, եթե մի հնար գիտես, էլ ո՞ր օրվան համար ես պահում։

— Այդ լավ ասացիր. ինձ պես հիմարին ո՞վ բան կտա. ուրիշ բան է, եթե ես մի հիմար բժիշկ լինեի։ Սպասիր, ես պիտի տեսնեմ քո խելքդ գլխո՞ւմդ է, թե քեզանից խռովել է, գնացել է ուրիշի գլուխ մտել։

— Այդ ինչպե՞ս պիտի իմանաս։

— Ա՛յ ինչպես։ Եթե տասնից երկու պակսեցնես, կարո՞ղ ես էլի նորմեկանց տասը շինել։

— Ինչո՞ւ չէ. տասնից կպակասեցնենք երկու, կդառնա ութ. ութի վրա երկու կավելացնենք, կդառնա էլի տասը։

— Այդ ինչպե՞ս կարելի է. տասնից որ երկու գցես, էլ ի՞նչպես կարող ես կպցնել նրան։ Հիմա որ քո մի կուռը կտրենք, մեկ էլ նոր մեկանց տեղը դնենք, կկպչի՞...

— Այդպես չէ, հիմար։ Եթե դու ունենաս տասը խնձոր, նրանցից երկուսն ուտես, տեղը չի՞ մնալ ութ։ Հիմա այս տիկինը որ քեզ երկու խնձոր տա, կավելացնես մնացած ութի վրա, էլի կունենաս տասը խնձոր։

— Հա՜, հիմա հասկացա։ Ուրեմն դու այնպես ես հաշվում, որ կերած խնձորների տեղը կարելի է ուրիշ խնձորներ դնել։

— Իհարկե, կարելի է։

— Իսկ ես այնպես էի կարծում, թե կերածը կերած է, կորածը՝ կորած, մեռածը՝ մեռած. էլ դրանք ետ չեն դառնալ։ Ուրեմն այս տիկինն ինչո՞ւ է մեկ մնացել։ Սա մեկ մարդ ուներ, մեռավ. առաջ սա և իր մարդը երկու էին. հիմա եթե սրա վրա ուրիշ մեկ մարդ ավելացնենք, խոմ էլի կդառնա՞ երկու։ Բայց առաջվա մեկը վեզիր էր, ողորմի իրան, խելոք մարդ էր կարծվում. երկրորդ մեկը թող լինի մեկ հիմար կարծվող ծաղրածու։ Այս հանգամանքը խոմ

մեր հաշվին չի՞ դիպչել. տիկինը, որ հիմա մեկով պակաս է, առաջվա պես կդառնա երկու...

— Դու իմ հոգսը մի քաշիր, հիմար,— ասաց տիկինը.— դեղ գիտես, քո տիրուհուդ համար արա. թող ես մեկ մնամ...

— Տիկին, իմ տիրուհին մեկ է, սրան ուրիշ մեկ չի պակասիլ, բայց ուզում է երկու դառնա։ Ես հիմա մտածում եմ, որ սրա համար մի այնպիսի «մեկ» գտնեմ, որ եթե սրա վրա ավելացնենք, դառնա էլի մեր առաջվա Նունուֆարը։

Ծաղրածուն մատը ճակատին դրավ և մի փոքր մտածելուց հետո բացականչեց.— Գտա՜, գտա՜... և սկսեց երգել.

Մե՛կ,— ռե՛գ, մեր Արեգ,
Շորս,— մորս, գնաց որս.
Վեց,— նեց, ըսպանեց
Մի արջիկ, մի աղջիկ...
Ես հաշվեցի և գտա
Մեր պալատում մի տղա,
Նրան տեսնող աղջիկը
Խելքը հացով կուլ կըտա։
Ես հիմար եմ, միշտ հիմար,
Ինձ ո՞վ կասի, թե գտար
Իմ սիրելի տիրուհու
Ցավի համար դեղ ու ճար։
Յարալլալի, շարալլալի,
Հայդե, հիմար, դուրս արի...

Երգեց հիմարը և մի քանի ոստյուններ անելով՝ դուրս փախավ...

Վեզիրի կինը «մատը կծեց» և ընկավ մտատանջության մեջ։ «Ես հիմա հասկացա ամեն բան, ասաց իր մտքումը։ Հիմարն իմ հաշիվը տակնուվրա արավ։ Շատ լավ. քո Արեգին մի այնպիսի տեղ ուղարկեմ, որ գնալն ըլի, գալը չըլի»...

— Մեր հիմարն այնքան հիմար չէ, ինչքան կարծվում է.— ասաց տիկինը Նունուֆարին։

— Այո՛. բայց այս անգամ շատ հիմարացավ,— պատասխանեց Նունուֆարը։

Մյուս առավոտը ամենից կանուխ վեզիրի կինը գնաց թագավորի մոտ։

— Ի՞նչ կա, ինչպե՞ս է աղջկանս առողջությունը.— հարցրեց թագավորը։

— Էլի այնպես է, տեր թագավոր, ինչպես տեսել ես, բայց ես եկել եմ քեզ մի ուրախառիթ լուր հաղորդելու։

— Ի՞նչ լուր, ասա շուտով, գուցե իմ աղջկանն է վերաբերում. ուրիշ ոչ մի լուր ինձ չի կարող ուրախացնել։

— Այո՛, այո՛։ Այս գիշեր երազումս երևաց մեր թագուհին և ասաց ինձ, որ Նունուֆարի միակ դեղը «անմահական ջուրն է»։

— Ան-մա-հա-կան ջո՛ւր...— բացականչեց թագավորը.— բայց ո՞վ կարող է բերել այդ անմահական ջուրը, որի միայն անունն ենք լսած, իսկ իրան չենք տեսած։

— Ես հարցրի այդ մասին թագուհուն, և նա ասաց, որ միայն Արեգը կարող է բերել...

— Արեգը... լա՛վ. ես կուղարկեմ Արեգին, թող երթա իր բախտը փորձե...

Թագավորը կանչեց Արեգին և առաջարկեց նրան գնալ անմահական ջրի։

— Գնա, տղաս, եթե կարողանաս այդ ջրից բերել և իմ աղջկանս առողջացնել, ես նրան քեզ կտամ և նրա հետ իմ թագավորությունը։

— Այդ խոստումն էլ որ չլինի, տեր արքա, ես պատրաստ եմ հնազանդել քո հրամանին,— ասաց Արեգը.— դու ինձ ասա միայն՝ որտե՞ղ է գտնվում այդ անմահական ջուրը։

— Նրա տեղն ո՞վ կիմանա, որդի։ Նա մի առանձին պարգև է, մի առանձին ողորմություն և շնորհք, որ բարի ոգիները միայն իրանց ընտրածին են տալիս։ Թեպետ լսած ենք, թե նա մի աղբյուր է, թե նրա վրա հսկում են անհերևույթ ոգիները, որ նա երբեմն բըխում և երբեմն անհայտանում է, բայց այդ ո՞վ գիտե։ Դու երեսդ կդարձնես դեպի արևելք, կընկնես երկրե երկիր, աշխարհք աշխարհք, ամեն տեղ հարցուփորձ կանես, կամ կգտնես, կամ չես գտնիլ. այդ քո ճակատագրից, քո բախտիցն է կախված. բայց ինչ էլ որ լինի, հաջողություն, թե անհաջողություն, դու շատ բան կըտեսնես և շատ բան կսովորես։ Իմ գանձարանը բաց է քեզ համար. որքան կարող ես, հետդ տակի և ակնեղեն վերցրու. շատ տեղ հարկավոր կդա...

3

Արեգնազանը գնաց։

Զարմանալի մի էակ էր Արեգնազանը. միշտ աշխույժ ու զըվարթ, միշտ անահ ու անհոգ. նեղության մեջ ընկած ժամանակ ևս իր ուրախ տրամադրությունը չէր փոխում։ Նա գնաց իր Բազիկ ձիով, որ երեք-չորս օրվան ճանապարհը մեկ օրում էր անցնում։ Նա պտտեց մի քանի թագավորություն, շատ տեղ հարցուփորձ արավ, շատ բան տեսավ, շատ նեղություններից ազատվեցավ, մինչև հասավ կախարդական աշխարհը, ուր ամեն մի քայլափոխում մի նոր հրաշք էր տեսնում, մի նոր զարմանալիք։

Մեկ օր սաստիկ արև էր։ Շոգը որ շատ նեղեց Բազիկին, Արեգնազանը իջավ մի լճի մոտ, Բազիկին քաշեց կապեց մի խիտ ստվերի մեջ, ինքն էլ մոտը նստեց, հանեց իր ճամփի պաշարը և սկսեց ճաշել։ Հենց այդ միջոցին մեկ էլ տեսավ, որ ահա մի խումբ աղավնիներ թռան եկան և իջան լճի ափին՝ իրանից շատ մոտիկ։ Նետաղեղը լարեց, որ մի որս անի, մեկ էլ տեսավ, որ բոլոր աղավնիները հանեցին փետուրները և աղջկերք դառնալով՝ թափվեցան ջուրը լողանալու։

Արեգնազանը մնաց ապշած մի րոպե. հետո մտածեց նրանց հետ մի խաղ խաղալ և տեսնել ինչ կլինի հետևանքը։ Կուզեկուզ մոտեցավ ափին, այնպես որ իրան չտեսան, վերցրեց նրանց մեկի փետուրները։ Երկու մեծ թև էր աղավնու, մնացած փետուրներն էլ վրան։

Զանցավ մի քանի րոպե, բոլոր աղջկերքը դուրս եկան, հագան իրենց թևերն ու թռան, բայց մեկը, որ իր թևերը չգտավ, ամաչեց մերկ կանգնել ջրի ափին, իսկույն իրան գցեց ջուրը։ Արեգնազանը այդ նկատելով, թևերը ձեռին մոտեցավ աղջկանը։ Աղջիկը ջրումն ընկղմված, միայն գլուխը դուրս հանած, մոտեցավ Արեգնազանին և սկսեց երգել.

Ա՛յ տղա, սիրուն տղա,
Թևերըս տուր, թևերըս,
Թևերըս տուր, թռչիմ գնամ,
Ինչ կամենաս, քեզ կըտամ։

Իմ օրումս չեմ տեսած
Քեզ պես սիրուն մի տղա,

Այդքան գեղեցկության մեջ,
Սիրտ չի լինիլ անզգա.

Խնայիր ինձ, աղաչում եմ,
Թևերըս տուր, թևերըս,
Թևերըս տուր, թռչիմ գնամ,
Ինչ կամենաս, քեզ կըտամ։

Եթե իրավ տղա ես,
Կուզեմ դառնաս դու աղջիկ,
Որ քո սեռում չլինի
Քեզ հավասար գեղեցիկ.

Տե՛ս, ահա ես քեզ օրհնում եմ.
Թևերըս տուր, թևերըս,
Թևերըս տուր, թռչիմ գնամ,
Ինչ կամենաս, քեզ կըտամ։

Աղավնի աղջիկը լռեց, և վիզը ծռած, մի ամենաքնքուշ ժպիտ բերանին՝ նայում էր Արեգնազանին և սպասում, որ իր թևերն ըստանա։

Արեգնազանին այնքան դուր եկավ Աղավնի աղջկա երգի եղանակը, որ ասում էր «ոչ ուտեմ, ոչ խմեմ, սա երգի, ես լսեմ»...

— Շարունակիր, շարունակիր, մի քիչ էլ երգիր,— խնդրեց Արեգնազանը։ Քո երգն ինձ շատ է դուր գալիս. դեռ այդպես բան լսած չկամ կյանքումս։ Միայն մի բան ես չհասկացա, սիրուն աղջիկ։ Դու ասում ես՝ «Եթե տղա ես, աղջիկ դառնաս». այդ ինչպե՞ս կարելի է։

Աղջիկը շարունակեց երգել.

Ամենայն ինչ կարելի է.
Ոչ մի դժվար բան չկա.
Եթե իրավ աղջիկ դառար,
Հիմա դարձիր քաջ տղա։
Թող երեսիդ մորուք բրսնի
Թուխ ու երկայն բեղերով,
Թող կոշտանա սիրուն դեմքդդ
Հաստ ջիղերի գծերով։
Ո՜հ, տեսնում եմ, դու փոխվում ես...
Թևերըս տուր, թևերըս,
Թևերըս տուր, թռչիմ գնամ,
Ինչ կամենաս, քեզ կըտամ։

Մի վայրկենական ուշաթափություն եկավ Արեգնազանի վրա, և նա զգաց մի անսովոր բան, բայց շատ հաճոյական։ Նայեց ջրի երեսին, ուր՝ ինչպես հայելու մեջ՝ պատկերացավ մի դեմք, բոլորովին Արեգնազանին նման, միայն նորածիլ բեղերով ու մորուքով։ Այդ պատկերն առաջ մի քիչ խորթ թվաց Արեգնազանին, բայց հետո այնքան զմայլելի եղավ, որ վրան նայելուց չէր կշտանում։— Այս ես կլինիմ անպատճառ,— ասաց ինքն իրան։— Ես հիմա ճշմարիտ որ Արեգ եմ։

— Սիրուն աղջիկ, դու տվիր ինձ այն, ինչ որ իմ միակ ցանկությունս էր. այժմ դու ազատ ես, ես չէի սպասում քեզանից այսպես բան. ուրեմն դու ինձ կասես, դու անպատճառ կիմանաս, թե որտեղ է գտնվում անմահական ջուրը, որի համար ես ահա քանի ժամանակ է թափառում եմ։

Աղջիկն սկսեց երգել.

Թող Նունուֆարդ ուրախանա,
Որ ճանկ գցեց քեզ պես փեսա,
Հիմա հասար քո մուրազին,
Եկար աղջիկ, կերթաս տղա։

Անմահական ջո՞ւր ես ուզում...
Թևերըս տուր, թևերըս,
Թևերըս տուր, թռչիմ գնամ,
Եվ իմ կտցով բերեմ տամ։

Գնա օգնիր տկարներին,
Հոգի ու շունչ տուր քարերին.
Թե որ կուզես, ինչպես հիմա,
Մնաչ փոխված այդպես տղա,

Իսկ եթե ոչ, լավ գիտենաս,
Որ տղայից քար կըդառնաս,
Երբ քարացած քաղաքի մեջ
Կախարդ կընկան կըմոտենաս։

Թևերըս տուր, թևերըս
Թևերըս տուր, շուտ հագնեմ,
Թռչիմ գնամ և քեզ համար
Անմահական ջուր բերեմ...

Աղջկա վերջին խոսքերից շատ բան չհասկացավ Արեգը, բայց

չուզենալով այլևս ուշացնել նրան, թևերը տվավ իրան։ Աղջիկը թևերը հագնելուն պես դարձավ աղավնյակ և թռավ գնաց։ Մի քանի րոպե չանցած՝ մի փոքրիկ շիշ կտցին, անմահական ջրով լիքը՝ բերավ Արեգին տվավ և ինքը կրկին թռավ գնաց։

Արեգը ձին հեծավ և ճանապարհ ընկավ՝ ձիու հետ խոսելով.

— Բազիկ, ես հիմա տղա եմ, գիտե՞ս, էլ աղջիկ չեմ։ Առաջ աղջիկ էի. այդ ոչ ոք չգիտեր, գուցե դու էլ չգիտեիր. հայրս պատվիրել էր, որ ոչ ոքի չասեմ, թե ես աղջիկ եմ. բայց հիմա տղա դառա։ Օ՜, որ գիտենաս, Բազիկ, ինչքան ուրախ եմ հիմա։ Դու չես իմանում. թեպետ աղջիկն էլ լավ է, բայց տղային որտե՞ղ կհասնի։ Ես հիմա չգիտեմ ուր եմ գնում։ Բազիկ. դու ինքդ գնա՛ որ կողմ կուզես. այսուհետև ինձ համար միևնույն է... Բայց սպասիր, ես մի աշտարակի ծայր եմ նշմարում, նա անպատճառ մի քաղաք կլինի, գնանք դեպի այն կողմը։ Զարմանալի անհոգ եմ ես, Բազիկ. մեկ չես ասում, թե ինչո՞ւ այդ իմաստուն աղջկանը չհարցրիր, թե՝ ո՛վ դու գեղեցիկ և իմաստուն աղջիկ, ո՞ր կողմով պիտի ետ դառնամ ես իմ աշխարհը։ Դեռ լավ էր նա, առանց իմ ասելուն՝ ինձ տղա դարձրեց. որ բանն ինձ մնար, ես դեռ էլի աղջիկ կլինեի։ Ի՞նչ կարող էի մտածել, որ այդպես բան կարող է պատահել։ Բայց երբ որ տեսա, թե այդպես բան լինում է, ինչո՞ւ չասացի՝ սիրուն աղջիկ, ինձ որ տղա դարձրիր, մեր Բազիկին էլ մարդ դարձրու կամ եթե ոչ, գոնե խոսելու ձիրք տուր. հը՞, ինչ կասես, Բազիկ։— Ոչինչ, դու տղա դառար, ես էլի մնացի ձի։— Իրավ, իրավ, այդ լավ չեղավ։ Մի բան տեսնելիս այնպես հափշտակվում եմ, որ բոլոր մնացած բաները մոռանում եմ. հետո միտս է գալիս, բայց ուշ է լինում...

Այսպես ձիու հետ խոսելով և նրա փոխանակ ինքը պատասխանելով՝ մեր վերանորոգված Արեգը դիմեց դեպի երևացող աշտարակը։

4

Երբ որ Արեգը մոտեցավ բարձր աշտարակին, հետզհետե երևացին և ուրիշ շատ տներ, և նրա առջև բացվեց մի մեծ քաղաք։ Մոտեցավ քաղաքադռանը, տեսավ մի քանի մարդիկ կանգնած, հարցրեց նրանց.

— Տղերք, ի՞նչ քաղաք է սա, և որտե՞ղ են իջնում օտարականները։

Մարդիկը ձայն չհանեցին։

— Ձեզ եմ ասում, տղերք, չե՞ք հասկանում։

Ձայն չկա։

Երևի խուլ են, մտածեց Արեգը և գնաց ձեռը դիպցրեց նրանց։

— Ո՞վ երկինք,— բացականչեց Արեգը,— այս ի՞նչ եմ տեսնում. այս ի՞նչ հիանալի արձաններ են, իսկ ես կարծեցի, թե ուղիղ մարդիկ են։ Այս ինչքա՞ն ճարտար քանդակագործ է եղել սրանց շինողը...

Արեգը կարծելով, թե իր տեսածներն ուղիղ շինովի արձաններ են, ներս մտավ քաղաքը և նրա առջևը բացվեցին նորանոր տեսարաններ, բոլորն էլ քարեղեն։

Ահագին շուկա, կարգին խանութներ, թե կրպակ, թե տուն, թե կատու, թե շուն, ուտելիք ու հագնելիք, գեղեցիկ գորգեր և ուրիշ զարդեր... բոլորը, բոլորը քարացած։ Ոչ ծուխ, ոչ կրակ, ոչ ձայն, ոչ շունչ... կյանքի հետք ու նշույլ չկա...

— Ես հիմա՞ հասկացա. սա է Աղավնի աղջկա ասած քարե քաղաքը,— ասաց Արեգը և սկսեց շրջել քաղաքի մեջ, ուր ամեն մի քայլափոխում մի նոր տեսարանի էր հանդիպում։

Մի տեղ մի խումբ մարդիկ կանգնած՝ որպես թե իրար հետ խոսում են. մեկի դեմքը բարկացած է և բերանը բաց, կարծես մյուսին հայհոյում լինի. մեկը ծիծաղում է, մյուսը լաց է լինում. մի կին՝ երեխան գրկած՝ ողորմություն է ուզում. մի տեղ հարսանիքի հանդես է իր ամեն սարք ու կարգով. հարսին տանում են փեսայի տուն։ Մեկ խոսքով՝ եթե շարժման մեջ եղած մի քաղաք մի վայրկյանում տեղնուտեղը քարանա, ինչ պատկեր կստանա, ահա այդպիսի մի պատկեր էր ներկայացնում քարացած քաղաքը։ Մրգավաճառը միրգը քաշել է և կիսով չափ ածել առնողի զամբյուղը, մինչև մյուս կեսն ածելը՝ քարացել են՝ ինքն էլ, կշեռքն էլ, առնողն էլ, միրգն էլ. ահա այսչափ արագ էր եղել քարանալը։

— Խե՜ղճ մարդիկ,— ասաց Արեգը,— հող դառնալու էլ չեք արժանացել, այլ դառել եք ծախու ապրանք։ Ճշմարիտ, եթե մեկն այս անթիվ արձանները կարողանար տանել հեռու աշխարհքներ վաճառելու, անչափ հարստություն կդիզեր։ Ահա այն նորապսակ աղջկա արձանին՝ ով գիտե՝ իր քաշովը մեկ ոսկի կտային։ Բայց

ի՞նչ եմ մտածում ես էլ. այս թշվառությունն աշկարա տեսնողը՝ էլ ի՞նչ կարող է հարստության վրա մտածել։ Ահա հարստություն մեր առջև պատկերացած իր իսկական կերպարանքով... Ա՜խ, երանի թե սրանցից մեկը լեզվավորվեր և ինձ պատմեր իրանց գլխի անցքը։ Արի մեկ բղավեմ, ինչ կլինի՝ կլինի։

— Ո՜վ քաղաքացի՞ք... ինչո՞ւ եք քարացե՞լ...— կանչեց Արեգը։

— Քարացե՞լ...— արձագանք տվին բոլոր քարերը։

— Ք...ա՜...ր...— հանկարծ մի նոր ձայն լսվեցավ։

— Ահա ձայն լսեցի,— ասաց Արեգը և մեկ էլ բղավեց.— Ո՞վ կա կենդանի՞...

— Ե...ե...ս...— պատասխանեց ձայնը։

Արեգը որոշ կերպով լսեց, թե որտեղից է գալիս ձայնը, գնաց դեպի այն կողմը։ Մի գեղեցիկ ապարանք էր, առջևն ընդարձակ պարտեզ, բոլորն էլ քարացած։ Մի փոքրիկ ծաղկոցում նա գտավ մի քարացած մարդու կենդանի գլուխ։

— Ո՞վ ես դու, ո՜վ մարդ,— հարցրեց Արեգը։

— Ջո՜ւր... ջո՜ւր...— պատասխանեց գլուխը, հազիվ կարողանալով խոսել։

— Ջո՞ւր ես ուզում։

— Ջո՜ւր... ջո՜ւր... տո՜ւր... տո՜ւր...

— Հայրիկ, ձեր քաղաքի ջուրն էլ է քարացել, ջուր չկա։

— Մի՜... մի՜... կա՜թ... կա՜թ...

— Մի կաթիլ ջուրը քեզ ինչ կօգնե. քո ծարավը մի կարաս ջրով չի հագենալ։ Ես ունիմ ինձ մոտ մի քանի կաթիլ ջուր, եթե կբավականանաս, չեմ խնայիլ քեզանից։

— Հա՜... հա՜... հա՜...

Արեգը հանեց անմահական ջրի շիշը և նրանից մի քանի կաթիլ կաթացրեց կիսարձանի բերանը։ Կենդանի գլուխը ոչ միայն կատալելապես զովացավ, այլև զգաց մի վերակենդանության ցնցում իր բոլոր մարմնի մեջ և սկսեց պարզապես ասել.

Դու բարի՞ հրեշտակ,
Որտեղի՞ց եկար,
Փախիր, հեռացիր
Մի առ ժամանակ.

Բայց ոչ, սպասիր,
Ես էլ եմ գալիս...
Այո՛, գալիս եմ,
Նայի՛ր, մեկ նայի՛ր...

Կիսարձանը կենդանացավ և սկսեց քայլել, առաջ մի փոքր դանդաղ, հետո ավելի շուտ-շուտ և սկսեց փախչիլ, իր հետևից կանչելով Արեգին.— Փախի՛ր, փախի՛ր, որդիս, եկ իմ հետևիցս, մեզ հարկավոր է թաքչիլ. հիմա ուր որ է, պիտի գա քարացնող պառավ հրեշը։ Արի, արի, մտնենք իմ ապարանքը, գոնե քեզ չգտնե։

Արեգը մնացել էր շփոթված, չէր իմանում թե ինչ աներ, բայց վերջը հետևեց փախչող մարդուն։ Ձին քաշեց ներս, վարի հարկումը մի մութ անկյունում կապեց, իսկ ինքը վերև բարձրացավ այն մարդու մոտ։

— Ես չեմ հասկանում, թե այդ ի՞նչ հրեշ է, որից այդքան վախենում ես դու,— ասաց Արեգը։

— Այդ հրեշը մի պառավ է, որդի, նա է քարացրել մեր քաղաքը. ամեն օր այս ժամանակին գալիս է նայում և զվարճանում իր շարության վրա. հիմա ուր որ է՝ պիտի գա, և եթե մեզ տեսնի կենդանի, իսկույն կքարացնե։

— Հիմա հասկացա։ Բայց ինչպե՞ս է եղել, որ քեզ բոլորովին չէր քարացրել։

— Ավելի տանջելու համար։ Ես այս քաղաքի թագավորն եմ. ինձ կասեն Անդաս թագավոր։ Քավթառ հրեշը գլուխս կենդանի թողեց, ասելով.— Աչքերդ բաց եմ թողնում, Անդաս, որ տեսնես քո թագավորության ոչնչությունը իմ զորության, իմ ուժի առջև։

— Ինչո՞ւմ է նրա զորությունը կամ ինչո՞վ է նա ուժեղ, չգիտե՞ք։

— Նրա զորությունը իր գավազանների մեջն է։ Նրա գավազանները մահ են սփռում ամեն տեղ։ Նա մի գործիք է չար ոգիների ձեռքում և նրանցով է անում, ինչ որ անում է։ Կամ ով գիտե, գուցե հենց ինքը մի չար ոգի է, պառավի կերպարանք առած։

— Ի՞նչ ես կարծում, եթե դրա ձեռքից խլենք իր գավազանները...

— Բայց ինչպե՞ս կարելի է մոտենալ նրան. միայն բարի ոգիքը կարող են այդպիսի բան անել կամ այնպիսի մի մարդ, որ բարի ոգիների պաշտպանությունը իր կողմն ունի։

— Ինձ թվում է, որ բարի ոգիները կպաշտպանեն մեզ,— ասաց Արեգը և պատմեց Աղավնի աղջկա հետ հանդիպելը, նրա արածն ու ասածը...

— Օ՜... եթե այդպես է, ապա ուրեմն դու մի բարի ոգի ես, երկնքից ուղարկված,— բացականչեց թագավորը։— Ես կարող եմ այժմ համարձակ դուրս գալ նրա առաջը, իսկ դու ինձ մոտ թաք կկենաս, և երբ հարձակվի ինձ վրա, դու իսկույն կբռնես նրան և զինաթափ կանես։ Ահա՛, ահա՛ երևում է նա, տես, ամպերի մեջ՝ խնոցու վրա հեծած, օձե մտրակը ձեռքին, գալիս է։

— Տեսնում եմ, տեսնում... դու սիրտդ սրինդ պահիր, չվախենաս, ես նրա հոգին կհանեմ։ Այս ասելով իջան պարտեզ։ Արեգը թաք կացավ մի քարացած ծերունու քամակում։

Պառավը վայր իջավ թագավորի դիմացը, ձեռքն առավ իր երեք գավազաններից մեկը և սպառնալով ասաց.

Այս ի՞նչ եմ տեսնո՞ւմ,
Այստեղ ո՞վ եկա՞վ,
Այս կյանքն, այս հոգին
Սորան ո՞վ տվավ։

Հասեք, ոգինե՞ր,
Հասեք, շուտ հասեք,
Ձեր խեղճ պառավին
Եկեք, օգնեցեք։

Իսկ դու, գավազա՞ն,
Ինչպե՞ս ես զարկել,
Որ նա նոր-մեկանց
Ոտքի է կանգնել։

Հա՞պա, գավազան,
Հա՞պա մեկ տեսնենք,
Քո զորությունը
Մեկ այժմ էլ փորձենք։

Գավազանը ձեռին՝ հարձակվում էր պառավը, որ զարկեր թագավորին, ասելով՝

Քա՞ր էիր, Անդա՞ս,
Էլի քա՞ր դառնա՞ս.

այս միջոցին Արեգը բռնեց նրա մազերից և այնպես գետին փռեց, որ պառավը կիսաշունչ եղավ։ Թագավորը, որ առանց ուղիղ քարանալու, այլ միայն երկյուղից մնացել էր քարացած, նոր սրտապընդեց և մոտեցավ պառավին։ Գավազանները խլեցին և պառավի ձեռք ու ոտքը կապեցին։

— Հիմա ի՞նչ պատժով պատժենք քեզ, դարշելի պառավ,— ասաց թագավորը.

Պառավը պատասխանեց.

Ինչ պատիժ կուզեք, մե՞կ է ինձ համար,
Թող ձեր պատիժը ձե՞զ լինի հարմար։
Բայց այդ դու չէիր, Անդաս թագավոր,
Այլ տղայացած աղջի՞կ զորավոր...
Գրվա՞ծ է արդեն իմ ճակատագրում,
Եվ ոգիների մատենագրում,
Թե երբ մի աղջիկ կըդառնա տղա՞,
Քո թշվառ կյանքին նա՛ վախճան կըտա։

— Օ՞... եթե այդպես է, ես պատրաստ եմ,— ասաց Արեգը.— միայն դու պետք է առաջ կենդանացնես այս քաղաքը։

— Թող այդպես լինի, թո՞ղ կենդանանա՞,
Թող ամեն մեկը իր գործին կենա.
Ուրիշ շարություն շատ ունիմ արած,
Թող Բելիարը նրանցով շատանա...
Ամպե՛ր, գոռացե՛ք,
Կայծակնե՛ր, զարկեք,
Աղբյուրք, բխեցեք,
Գետեր, վազեցեք։
Մարդ և անասուն,
Գազան և թռչուն,
Հասավ ձեր ժամը,
Հիմա վե՛ր կացեք...

Պառավն իր խոսքն ավարտած-չավարտած, խորին լռությունը հանկարծ դղրդաց. քաղաքը մտքի արագությամբ կենդանացավ։ Ամենքն էլ այնպես շարունակեցին իրանց կիսատ թողած գործերը, որ կարծես ոչ քարացած են եղել երբևիցե, ոչ բան։ Աքաղաղը, որ իր կանչի կիսումն էր քարացել, մյուս կեսը հիմա ավարտեց. զուռնաչին, որ զուռնան բերանումն էր քարացել, շարունակեց ածելը. պարեկողն էլ, որ ձեռքերը բարձրացրած էր մնացել, շարունակեց

իր պարը. խոհարարը շարունակեց մսի քափը քաշելը, և բոլորն այսպես... Ոչ մի մարդ, բացի թագավորից, չիմացավ, որ նա երբեվիցե քարացած է եղել։

— Հիմա ի՞նչ անենք այս չար պառավին,— ասաց թագավորը։

— Գավազանները ձգենք ծովը,— պատասխանեց Արեգը,— իսկ պառավին թողենք երթա. դրա զորությունը վերացած է այսուհետև։

Պառավը չուզեց կենդանի մնալ և ասաց նրանց.

— Ինձ է՞լ, ինձ է՞լ. ծովը ձգեցեք,
Այնտեղից մոտ է Սանդարամետը,
Մահացու կյանքից ինձ ազատեցեք,
Թող ինձ ընդունի Սատանապետը։
Լրացավ արդեն մի հազար տարին,
Որ ես գործիկ եմ մեծ Բելիարի,
Միշտ չա՞ր գործեցի, չիմացա բարին,
Թող այժմ նորա կամքը կատարի։

Դեռ պառավն իր խոսքը չէր ավարտել, որ թագավորի մեծ վեզիրն ու սպարապետը եկան և խոր գլուխ տալով թագավորին՝ ասացին.

— Տե՛ր արքա, բոլոր զորքը պատրաստ է, քո մեծության հրամանին ենք սպասում։

— Ինչո՞ւ համար եք պատրաստել զորքը,— հարցրեց թագավորը զարմանալով։

— Մենք կատարեցինք քո հրամանը. թշնամու զորքը մոտենում է, պետք է նրա առաջքն առնել։

— Սպասեցե՛ք, սպասեցե՛ք... այո՛, այո՛, ես հիմա հիշում եմ... այդ մեզանից ուղի՞ղ քառասուն տարի առաջ էր, ինչ որ ասում եք. մեր քարանալու օրն էր... թշնամու զորքերը եկան և մեզ քարացած գտնելով՝ սարսափած փախան...

Վեզիրն ու սպարապետը իրար երես նայեցին և շշնջացին միմյանց.— Թագավորը խելագարվել է...— Այո՛, այո՛, զարմանալի՞ փոփոխություն. երեկ չէ՞ր, որ մոտն էինք. մեկ օրվա մեջ ծերացել է...

— Տեսնո՞ւմ եք դուք այս պառավին,— ասաց թագավորը,— սա է մեր քաղաքի քարացնողը։ Քառասո՞ւն տարի շարունակ սա մեր քաղաքը քարացրած պահեց...

Վեզիրն ու սպարապետը թագավորին գլուխ տալով՝ համաձայնություն ցույց տվին, որ իբր թե հավատում են նրա ասածին, բայց իրար հետ շշնջալով՝ «հաստատ խելագարված է սա», ասացին։

— Եթե սա չլիներ,— շարունակեց թագավորը,— ցույց տալով Արեգին,— եթե սա չլիներ, մենք հավիտյան քարացած կմնայինք։ Սա որ մի հրաշքով աղջկանից տղա էր դառել, և աղավնի դարձող աղջկանից անմահական ջուր էր ձեռք բերել, պատահմամբ ասեմ, թե Երկնքի տնօրենությունով, եկավ և ինձ կենդանություն տվավ իր ջրով. այս շար պառավին էլ բռնեց ու զինաթափ արավ։ Այժմ այս պառավին ձեզ եմ հանձնում. տարեք սրան ծովը ձգեցեք... ահա այս գավազանները ևս ծովը ձգեցեք...

Վեզիրն ու սպարապետը դարձյալ սկսեցին շշնջալ, դեպի մի կողմ քաշվելով։

— Հաստա՜տ, հաստա՜տ խելագարվել է,— պնդեց վեզիրը։

— Դրան ինչ կասկած,— կրկնեց սպարապետը։ «Սա՝ ասում է, աղջիկ է եղել, տղա է դառել, մի աղջիկ էլ աղավնի է դառել, ինքն էլ անմահական ջուր է խմել, իսկ մենք՝ որպես թե քառասուն տարի է, որ քարացած ենք եղել...»։ Խելքը գլխին մարդը մի՞թե այդպիսի բաներ կխոսի։

Այս մարդոց կասկածը շատ բնական էր։ Վեզիրը քարանալուց առաջ ճաշի էր նստած և գդալը ձեռին՝ բերանը տանելիս՝ քարացել էր, իսկ այսօր գդալը տարել էր բերանը և իր ճաշը վերջացրել, եկել։ Սպարապետը ոտքի մեկը ձիու ասպանդակումը դրած հեծնել ուզելիս էր քարացել, և այսօր էր ոտը մյուս կողմն անց կացրել և հեծել ձին ու եկել. էլ ուրեմն ինչպե՞ս կարող էին երևակայել, որ երբևիցե քարացած են եղել։

— Գիտես ինչ կա, թագավոր,— ասաց Արեգը ծածուկ։— Այս մարդիկը քո խոսքերին չեն հավատում և քեզ խելագար են համարում։ Այս շատ վտանգավոր բան է, կարող են քեզ ճշմարիտ խելագար համարել և թագավորությունից զրկել։ Հիմա դու սպասիր, տես ինչ եմ անում, և ինձ հետևիր։ Հետո դառնալով վեզիրին ու սպարապետին՝ ասաց.

Եկե՛ք, պարոններ, եկե՛ք,
Մի կասկածեք բնավին,
Տեսեք ինչպես եմ պատժում
Այս անբզդամ պառավին։

Այս ասելուց հետո կախարդական գավազաններից մեկը ձեռին՝ մոտեցավ պառավին և ասաց.

Հրամանով
Բելիարի,
Ուրիելի,
Սադայելի,
Քա՜ր դառ, պառա՜վ, քա՜ր...

Ասաց ու զարկեց գավազանը։ Պառավը դառավ մի քած էշ և սկսեց խառանչել...

— Ա՜յ քեզ բան,— բացականչեց Արեգը.— երեի այս գավազաններից ամեն մեկը մի չոկ զորություն ունի կամ գուցե իմ անեծքս էր իշավարի և պառավն իր խառանչյունով ծիծաղում է ինձ վրա։ Փորձենք երկրորդ գավազանը։

Սադայելի ահեղ սրով,
Տարտարոսի մեծ զնդանով,
Քեզ զարկում եմ, անիծում եմ,
Քա՜ր դառ, պառա՜վ, քա՜ր...

Պառավը դարձավ մի սև ագռավ և ուզեց թռչիլ, բայց ոտները կապած էին, չկարողացավ...

— Մպասեցեք, երրորդ գավազանը փորձենք։

Առավ երրորդ գավազանը և սկսեց ավելի թունդ անիծել, կարծելով, թե իր անեծքի թուլությունից է, որ պառավը քար չի դառնում։

Քարեկարկո՜ւտ,
Արյունանձրևի՜,
Մե՛ղ, մառախո՜ւղ,
Թանձր մութ՝ ամպ,
Թիթ աղջամո՜ւղջ,
Թունդ երկրաշա՜րժ,
Մահտարաժա՜մ,
Որո՜տ, կայծա՜կ,
Հրդեհ՜, կրա՜կ,
Նավթաթեղե՜ղ
Դժոխային
Թափվի գլխիդ,

Ո՛վ սև ագռավ,
Դահի՛ճ պառավ...
Քեզ զարկում եմ
Ջա՛ր մահակով,
Դագանակո՛վ,
Որոտմունքի
Թո՛ւնդ մտրակով,
Կայծակների
Ահե՛ղ զարկով,
Անեծքս ա՛ռ,
Դարձի՛ր լեռ քար...

Ասաց ու զարկեց գավազանը, և պառավը դարձավ մի դաժանատեսիլ քարե արձան։ Հետո դառնալով վեզիրին ու սպարապետին, ասաց Արեգը.

Հիմա ամառն է, բայց դուք չըգիտեք.
Այս շոգ կրակին մուշտակ եք հագել,
Ձմեռն է եղել, երբ քարացել եք,
Էնդուր եք հիմա այդ ձևով եկել։
Մարդ ուղարկեցեք մի ուրիշ քաղաք,
Որ գնա բերե ձեր տարեթիվը,
Նրանով կիմանաք ձեր գլխի անցքը,
Կուղղեք ձեր այժմյան սխալ հաշիվը։
Եթե ոչ՝ ես ձեզ էշեր կըշինեմ,
Կամ սև ագռավներ, երթաք կուկռաք,
Որ այնուհետև ձեր թագավորը
Ինչ որ ձեզ ասե՝ իսկույն հավատաք...

— Օ՜... ես հիմա հավատում եմ, հավատում,— ասաց վեզիրը,— այս բոլորը աչքովս տեսնելուց հետո՝ էլ չեմ կարող չհավատալ... Ճշմարիտ որ ձմեռն է եղել, իսկ հիմա... ամառն է... այո՛, ամառն է...

— Ես էլ եմ հավատում, ես էլ... չեմ ուզում ոչ էշ և ոչ ագռավ դառնալ, իսկ քարանալու ախորժակ բնավ չունիմ... իրավ, ի՜նչ շոգ է այսօր, քիչ է մնում, որ այրվիմ...

— Տեր արքա, ճաշը պատրաստ է, թագուհին ձեզ է սպասում,— ասաց մի պալատական, խոր գլուխ տալով թագավորին։

— Երթա՛նք, երթա՛նք մի կտոր հաց ուտենք,— ասաց թագավորը։— Ահա քառասուն տարի է, որ պատառ չեմ դրել բերանս, բայց ուղիղն ասեմ, չեմ էլ քաղցել։ Միայն ծարավս շատ էր տանջում ինձ երբեմն և ավելի ևս սաստկացավ, երբ լսեցի Արեգի ձայնը։ Երևի իմ ծարավիլն էլ Երկնքի կամքովն էր, նրանով պիտի գտնեի իմ փրկությունը... Երթա՛նք, երթա՛նք մի կտոր հաց ուտենք...

Անդաս թագավորը լավ կշտացրեց թե՛ Արեգին և թե՛ նրա Բազիկին։ Արեգին պահեց թագավորը մինչև քսան օր. այդ քսան օրվան մեջ շատ թագավորներից դեսպաններ եկան և շնորհավորեցին Անդասի և նրա քաղաքի վերակենդանությունը։ Նույն քաղաքից հազարավոր մարդիկ կային հեռավոր երկրներ գնացած՝ որոնք իրանց քաղաքին պատահած պատուհասից վախենալով՝ չէին վերադառնում. այժմ եկան ավելի բազմացած թվով, որդոց և թոռանց տերեր դարձած, մինչդեռ քաղաքի աճելությունը՝ քարանալու պատճառով դադարել էր։

Նորեկները իմանալով՝ որ Արեգն է այն բարի հրեշտակը, որ հաղթել է չարին և կյանք տարածել չարի մահ սփռած տեղը՝ նրան աստվածավայել պատիվներ տվին ճոխ խնջույքներով։ Թագավորն ինքը մի մեծ խնջույք տվավ, ուր ներկա էին հազարավոր անձինք։ Ինքն էր բոլոր զվարճություններին ընթացք տվողը, ինքն էր առաջարկում կենաց թասերը։ Երբ Արեգի կենաց բաժակը ձեռքն առավ, սկսեց խոսել թագավորը և ասաց.

— Ի՜նչ էինք երեկ, և ի՜նչ ենք այսօր.
Դո՛ւ պատասխանիր, Անդա՛ս թագավոր.
— Քա՜ր էինք երեկ, քա՜ր անշունչ, կանգուն,
Իսկ այսօր՝ մարդիկ, կենդանի, շարժուն...
Ի՜նչ հեշտ պատասխան... բայց ո՞վ կըմբռնե,
Ո՞վ կըզգա, թե ի՜նչ սոսկալի բան է
Շարունակ տանջվիլ քա՜-ռա՜-սո՜ւն տարի,
Փշալի՜ց ձեռում մի անգութ չարի...
Եվ ահա այդ խիստ, չա՜ր կապանքներից,
Անխորտակելի այդ շղթաներից
Մեզ ազատում է մի չքնաղ ոգի,
Ամեն տեղ սփռում և՛ կյանք, և հոգի...
Ո՞վ էր այդ Քաջը, այդ Առաքինին.
— Ահավասիկ Նա—Արեգ պատանին.
Սա է, որ սրբեց իմ սուգն ու լացը.
Խմե՛նք Արեգի անգին կենացը...

Թագավորի այս առաջարկության վրա հազարավոր ձայներ միասին «կեցցե՛ Արեգ» գոչելով՝ թնդացրին ամբողջ ապարանքը։

Աշըղներն էլ՝ որ թագավորի ակնարկելուն էին սպասում, խմբովին հնչեցրին հիսնաղի քնարները և երգեցին միաձայն.

Արի բյուլբյուլ, ուրախացիր,
Քո վարդն ահա բացվել է.
Վերադարձիր, էլ մի՛ վախիր,
Քո թագուհին բացվել է։

Արեգն իջավ Երկնքիցը,
Ամենայն տեղ կյանք սփռեց,
Քարերն ամեն հոգի առան,
Քո կարմիր վարդն էլ բացվեց։

Արի բյուլբյուլ, ուրախացիր,
Քո վարդուհին բացվել է,
Արի երգիր, էլ մի՛ վախիր,
Քո թագուհին բացվել է...

Արեգը մեկ Արեգակ է,
Քաջ պատանու կերպ առած,
Սա բարի է, առաքինի,
Աբելի պես ողորմած։

Արի բյուլբյուլ, ուրախացիր,
Քո վարդուհին բացվել է,
Արի երգիր, էլ մի՛ վախիր,
Քո թագուհին բացվել է...

Աշըղները դեռ երկար կշարունակեին Արեգին գովասանել, եթե Արեգը՝ համեստությունից ստիպված՝ չընդհատեր նրանց իր հետևյալ պատասխանական ճառով.

Ես մի թույլ էակ, շնչին արարած,
Չգիտեմ արդյոք ի՞նչ ունիմ արած,
Որ ինձ տալիս եք այսքան փառք, պատիվ,
Այսքան գորովանք, մաղթանք անհաշիվ.
Ի՞նչ գտաք արդյոք Երկինքն ինձանում,
Ես այդ չգիտեմ և չեմ իմանում,
Որ ցույց է տալիս այսչափ սեր և գութ,
Հարթում է առջևս ամեն խոչ ու խութ —
Աստուծն իմ առջև քծնում է շան պես,
Վիշապը դառնում մի վախկոտ մողես,
Աղբյուր է հոսում ապառած տեղում,

Դարավոր ճահիճն առաջիս ցամքում...
Եթե բոլորը, ինչ որ տեսել եմ,
Այժմ՝ մի առ մի ձեր առջև պատմեմ,
Կտեսնեք, որ սա մի բախտ է միայն
Եվ շնորհք Երկնքի միշամտության...
Ուստի մենք Նրա՛ն և միայն Նրա՛ն
Պիտի համալենք պաշտելու արժան.
Նա՛ վերացրեց չարի զորություն,
Նորան պիտի տանք փառք և գոհություն...

Չնայած Արեգի համեստությանը՝ քաղաքացիք նրան դյուցազանց կարգը ձգեցին, որ երախտապարտ չմնան Երկնքի առջև։ Եվ ահա ինչպես։ Տեսան, որ պառավի սոսկալի արձանից վախենում են բոլոր երեխաները և շատ մեծեր էլ՝ նրան տարան ծովը նետեցին։ Նա ընկավ ուղղակի դժոխքի վրա և իր ուժգին զարկովը ամբողջ դժոխքը իր միջի չար ոգիների անթիվ լեգեոններովը մի հազար մղոն էլ ցած գլորեց...* Դրանից հետո հավաքվեցան քաղաքի բոլոր ճարտարապետներն ու նկարիչները, քաշեցին Արեգի պատկերը՝ Բազիկի վրա հեծած. նրա ձևով շինեցին մի ոսկեձույլ արձան։ Այդ արձանը կանգնեցրին քաղաքի կենտրոնում եղած մեծ պարտեզումը, որ զբոսավայր էր ամենի հասար, մանավանդ երեխայոց, որոնք այնուհետև միշտ նրա շուրջ կողմումն էին խաղում և վրան նայելով՝ զմայլում։ Արեգը չտեսավ իր արձանը. նա այդ ժամանակ արդեն գնացել էր։ Նա երազումը տեսավ, որ Նունուֆարը վերջին շնչումն է, շտապեց վերադառնալ, որ գուցե կարողանա օգնություն հասցնել։

5

Նունուֆարը վերջին շնչումն է։

Էլ ոչ ծաղրածվի կատակները, ոչ վեզիրի կնոջ հոգատարությունը, ոչ հոր ազաչանքն ու հառաչանքը չեն ազդում նրա վրա։

Լեզու չունի, որ խոսի, ուժ չունի, որ ձեռքը շարժե։

Ակնապիշ նայում է դեպի վեր, կարծես Երկնքից լինի սպասում իր փրկությունը կամ ուզում լինի շատով թռչել դեպի Երկինք։

Թագավորը և բոլոր պալատականները՝ ձեռքները խաչ արած, վիզները ծռած՝ նայում էին Ն...ունուֆարի երեսին, և ախ ու վախ

քաշելով՝ խոստովանում իրանց անզորությունը Ամենակարողի կամքի առջև։

Այս աղեկտուր բոպեին մեկ էլ լսվեցավ, որ Արեգը եկել է։

Նունուֆարի աղախինը ամենից շուտ վազեց Արեգի մոտ և ըշտապեցրեց նրան, ասելով.

— Շո՛ւտ արա, եկ, տես, վերջին շնչումն է, աչքը քեզ է մնում...

— Ահա գալիս եմ,— պատասխանեց Արեգը.— հիմա կգամ և կտեսնեմ քո Նունուֆարին...

Լուռ հանդիսականների միջով լուռ ու մունջ անցավ Արեգը, մոտեցավ Նունուֆարի մահճին, հանեց անմահական ջրի շիշը, մի կաթիլ կաթեցրեց բամբակի վրա և քսեց Նունուֆարի մեռելատիպ շրթունքներին։

Նունուֆարի աչքերը պարզվեցան։

Արեգն այդ նկատեց և մի քանի կաթիլ կաթեցրեց ուղղակի բերանի մեջ։

Նունուֆարը երկու ձեռքով ծածկեց երեսը...

Նա տեսավ Արեգին և... ճանաչեց։

Նա մի նոր կյանք զգաց, կյանք աշխուժով լի, երևակայությամբ ճոխացած...

Ձեռներով ծածկեց երեսը, որ երևակայությունն ամփոփե։ Ամփոփե երևակայությունը, որ այդ բոպեի երկնային զվարճությունն ու զմայլմունքը լիուլի վայելե։

— Արեգը եկել է,— ասում է նա ինքն իրան, երեսը ծածկած երկու ձեռքով, իբրև երկու վահանով, որ ուրիշ տպավորությունների տեղի չտան.— Արեգը եկել է,— կրկնում է Նունուֆարը,— և ես առողջ եմ. բոլորովին առողջ, շատ առողջ։ Ես զգում եմ, զգում եմ, որ շատ առողջ եմ, և... Արեգն էլ եկել է... Ես տեսա. նա ինձ մոտ կանգնած է այս բոպեիս։ Ես զգում եմ նրա ներկայության անմահական հոտը։ Անմահական էր նրա տված դեղը։ Հենց ինքն էլ մի անմահ Ոգի է։ Ի՞նչպես մեծացել է, ինչպես առույգացել, ի՞նչ նորածիլ բեղեր ունի. ի՞նչ գանգուր մորուք... Բանամ երեսս, մեկ էլ նայեմ...

Նունուֆարը բաց արավ երեսը և նայեց Արեգի երեսին այնպիսի հայացքով, որ միայն մոր հայացքն է լինում իր երեխին «հա-գա՜» կամ «ճիտա՜» ասելիս... և կրկին փակեց երեսը։

Այդ հայացքը, որի մեջ ամփոփված էր կենդանության հրա-

փայլ ոգին, ամենքը տեսան, և ամենքն էլ, կարծես խոսք մեկ արած, միաձայն քրքիջ բարձրացրին՝ փա՜ռ-փա՜ռ ծիծաղելով։ Այդ ծիծաղից անմասն չմնաց և ինքը Նունուֆարը։ Նա էլ ծիծաղեց, կարծես ուրիշների տեղիք տալուն էր սպասում, որ մի կուշտ ծիծաղի։

Այս էլ որ տեսան մի վայրկյան առաջ սգավոր հանդիսականները, բոլորովին միամտվեցան. էլ ուշադրություն չդարձրին Նունուֆարի վրա և սկսեցին փոխ առ փոխ գգվել ու համբուրել Արեգին։ Թագավորը իր գիրկն առավ Արեգին և սկսեց երեխայի նման հեկեկալ։ Թագավորի ուրախության զգացումն անսահման էր։ Նա մի վայրկյանում երկու որդի էր գտել, մինը կորած տեղից, մյուսը՝ մեռած տեղից։ Ամենքի աչքերից ուրախության և զմայլմունքի արտասուք հոսեց։

Հանդիսականների այս տեսակ իրարանցումից օգուտ քաղելով՝ Նունուֆարը ծտի պես վեր թռավ տեղից, փախավ մտավ մի այլ սենյակ, այնտեղ շուտով հագնվեցավ, զուգվեցավ թագուհու վայել զարդարանքներով և դուրս եկավ հանդիսականների մեջ այնպես ուրախ ու զվարթ և այնպես առողջ, որ հիացան ամենքը, բայց մանավանդ Արեգը, որի համար մի բոլորովին նոր արև ծագեցավ։

Եթե Արեգը մի վայրկյանում վերակենդանացրեց Նունուֆարին, հիմա էլ Նունուֆարը, իր գեղեցկության աղդեցությամբ՝ Արեգի այնպիսի երակները շարժեց, որոնց միջով կարծես մինչև նույն բոպեն դեռ արյուն չէր խաղացած։ Արեգը մի նոր կյանք զգաց իր մեջ, մի նոր զգացմունք անսահման հաճոյական, բայց ինքն իրան հաշիվ տալ չկարողանալով և միևնույն ժամանակ այդ իրան համար տարօրինակ զգացմունքը զսպել ուզենալով՝ սկսեց խոսիլ խելքը թոցրածի պես.

— Հիմա՜ եմ զգում, որ ես՝ էլ ես չեմ...
Բայց թե ես ո՞վ եմ,— այդ էլ չգիտեմ.
Ինձ հափշտակեց Աղջիկ Աղավնին,
Եվ տեղս դրավ այժմյան Արեգին.
Անիրավ աղջիկն իմ ուշքս տարավ,
Արեգնազանիս լճի մեջ առավ,
Իր քաղցր երգով ինձ քնացրեց,
Եվ իմ տեղս նա մի ուրիշ դրեց...

Հանդիսականները բերանբաց նայում էին և ոչ մի բան չէին հասկանում Արեգի ասածներից։

— Ափսոս տղա, երևի խելքը կորցրեց,— ասում էին շատերը։

Վերջը Նունուֆարը մոտեցավ Արեգին և խղճալի կերպով ասաց.

— Արե՜գ, իմ հոգյա՜կ, ի՞նչ է այդ, ի՞նչ կա,
Գուցե իմ տեսքով քեզ դուր չի եկա.
Դու հանգիստ եղիր. ես կերթա՜մ, կերթա՜մ,
Որ ինձ չտեսնես էլ ոչ մի անգամ...
Ես սիրում եմ քեզ, գիտե Երկինքը.
Բայց այդ չի ուզում գուցե Նա Ինքը,
Որ չի թույլ տալիս քեզ ինձ ճանաչել,
Եվ հնչպես որ կամ, ինձ այնպես տեսնել.
Երթամ ուրեմն իմ սև օրս լամ.
Քանի որ էլ քեզ պիտի չերևամ։
— Ո՞ւր, ո՜ւր, սպասիր, ես քեզ չեմ թողնիլ,
Առանց քեզ մի օր՝ էլ ես չեմ ապրիլ.
Թող երկինք գնտինք իրար խառնըվին,
Դու կրպատկանիս միայն Արեգին.
Թող ամբողջ աշխարհք տակն ու վրա ըլի,
Էլ քեզ ինձանից ոչ ոք չի խլի.
Արարած աշխարհ ես պտրտվեցա,
Գեղեցիկ, սիրուն շատերին տեսա,
Բայց քեզ պես չքնաղ, անհատ, աննման,
Քե՜զ է ստեղծել Երկինքը միայն.
Դու իմն ես, իմն ես, սիրուն Նունուֆար,
Իմ բոլոր կյանքս կրտամ քեզ համար.
Ինչ սիրտդ ուզի, ինչ որ կամենաս,
Հրամայիր ինձ, իսկույն կ՚ստանաս։
Իմ ասածներս դու չհասկացար,
Էնդուր ես կարծում, թե ինձ դուր չեկար.
Ես այն չե՜մ, այն չե՜մ, ում որ տեսել ես,
Նա գնա՜ց, կորա՜վ երևույթի պես.
Ես էլ եմ Արեգ, բայց ոչ առաջին,
Նրան գողացավ Աղջիկ աղավնին...
— Եթե այդպես է, ինձնից հեռացի՜ր,
Դու ինձ կյանք տվիր, վարձդ ստացիր։
— Ես չեմ կյանք տվել, ի՞նչ վարձ կամ ի՞նչ գին,
Դու ինքդ ես իմ կյանքն, իմ սիրտն, իմ հոգին...
— Էլ ես կյանք չունիմ և պիտի մեռնիմ,
Երբ չկա Արեգ, էլ ինչո՞ւ ապրիմ...
— Իզուր մի մեռնիլ, ես էլ եմ Արեգ,
Մի՞թե ես չունիմ նորա չափ արժեք...
— Բայց դու ուրիշ ես, ինքդդ ես ասում...
— Այդ ես ինքս էլ լավ չեմ հասկանում...

— Սպասեցեք, սպասեցե՜ք, ես վերջ կտամ ձեր վեճին,— ասաց թագավորը։— Արեգ, ասա ինձ, հոգիս, դու ո՞ւմ որդին ես։

— Արման իշխանի որդին էի մի ժամանակ, բայց հիմա չգիտեմ — էլի նրա որդի՞ն եմ, թե՞ մի ուրիշի։

— Քո այդ պատասխանն է ահա, որ մենք չենք հասկանում, բայց քեզ լավ ենք ճանաչում։ Դու մեր Արեգն ես, միևնույն գեղեցիկ Արեգը, միայն մորուքդ է ավելացել ու բեղերդ...

— Սպասի՜ր, սպասի՜ր, խնամի թագավոր,— մեջ ընկավ ծաղրածուն։— Աչքդ լո՜ւյս, փեսադ եկել է, բայց ուրախությունից ինքն իրան կորցրել է, հիմա ման է գալիս՝ չի գտնում։ Արեգ եղբայր, եկ՝ ես ու դու մի պայման անենք. ես դառնամ «դու», իսկ դու դառ «ես». այնուհետև Նունուֆարը կդառնա «իմ», իսկ հիմարը՝ «քեզ». համաձա՜յն ես...— ասաց ծաղրածուն և սկսեց երգել.

Ա՜խ, ես հիմար եմ անչափ,
Բայց ոչ այս տղայի չափ,
Ես որ մի աղջիկ գտնեմ,
Էլ չեմ ասիլ—«ես՝ ես չեմ...»
Ցարալալա՛ն, շարալալի,
Հայդե՜, հիմար, պար արի...

Մինչդեռ ծաղրածուն այսպես երգով ու պարով զվարճացնում էր հանդիսականներին, ներս մտավ Արմանը։

Արեգն իր հորը տեսնելուն պես՝ վազեց գիրկն ընկավ և մի քանի ուրախության բացականչությունից հետո՝ փսփսաց ականջումը։

— Գիտե՞ս, հայրիկ, ես հիմա տղա՜ եմ, տղա՜, իսկ և իսկ տղա, ճշմարիտ տղա. կարո՞ղ ես երևակայել...

— Իհարկե, տղա ես, հոգիս, հապա ի՞նչ պետք է լիներիր...

— Բայց չէ՞ որ, հայրիկ, բայց չէ՞ որ... ախը՜ր...

— Դու առաջ էլ էիր տղա, հոգիս, բայց այդ չգիտեիր դու, նոր ես սկսել ճանաչել քեզ. առաջ անմեղ էիր ինչպես հրեղեն, հիմա մարդ ես դառել հոգեղեն, բայց այդ վնաս չունի, հոգիս...

— Օ՜... եթե այդպես է, ուրեմն ես՝ ես եմ եղել. վազեմ Նունուֆարին ասեմ...

Արմանը մոտեցավ թագավորին և սկսեց շշնջալ նրա ականջին բանի էությունը, իսկ Արեգը վազեց Նունուֆարի մոտ։

Երբ որ Արեգը մոտեցավ Նունուֆարին ավելի ուրախ ու զվարթ

դեմքով, Նունուֆարը բռնեց Արեգի ձեռքից մի այնպիսի քնքուշ ժպիտով, որ Արեգը քիչ մնաց նորից թոցներ խելքը։

— Դու մեր Արեգն ես, այնպես չէ՞,— ասաց Նունուֆարը։

— Իհարկե, հոգիս, հապա ո՞վ պետք է լինիմ, – պատասխանեց Արեգը։

— Ուրեմն մենք էլ չենք բաժանվիլ միմյանցից։ Եթե գիտենաս ինչքա՞ն մաշվել եմ քո կարոտով... հիմա եկել ես և հանկարծ ասում ես՝ «Ես՝ ես չեմ»։ Հապա ո՞վ ես, որ դու չես։

— Ո՛չ, ո՛չ, հիմա ես՝ ես եմ. հիմարն ինձանից խելոք է.. Արի շոքենք թագավորի առջև, և նա օրհնե մեզ... Բայց, սպասիր, հայրիկիս չհարցրի, թե ո՞ւր են իմ քույրերը։

— Նրանք այստեղ են։ Քո գնալուց հետո ես ձերոնց բերել տվի, որ քո կարոտը նրանցից առնեմ։ Ես արդեն ուղարկեցի իմաց տալու, հիմա կգան ուր որ է...

— Ինչքա՞ն դախտավոր եմ ես ուրեմն, որ այդքան բարի ես եղել դու... Ուրեմն դեռ չշտապենք. գնանք մեր հագուստը փոխենք. հիմա՝ միտս ընկավ։ Անդաս թագավորից ես քեզ համար էլ, ինձ համար էլ հարսանեկան հագուստ եմ բերել։ Նա ընծայից այդ հագուստները և խնդրեց, որ անպատճառ այդ ունենանք հագներիս մեր հարսանիքին, որին՝ իր ասելով՝ ինքը հոգվով ներկա կլինի։ Ես չէի ընդունում, որովհետև այս րոպեի քաղցրությունն այն ժամանակ երևակայել չէի կարող։ Շատ բաներ եմ տեսել, հետո կպատմեմ քեզ։ Չեմ տեսել միայն քեզ պես մի չքնաղ էակ... ինչքա՞ն գեղեցի՞կ ես դու, Նունի՞կ...

Այսպես խոսելով, ձեռք-ձեռքի տված, դուրս եկան Արեգն ու Նունուֆարը, բայց երկար սպասեցնել չտվին։

Մի քանի րոպեից հետո տեսարանը մի կախարդական ասեմ, թե երկնային, կերպարանք ստացավ։

Պալատի ընդարձակ դահլիճը լցվեցան թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք, շքեղ հագուստներով զարդարված։ Այստեղ էին և Արեգի քույրերը։

Երբ որ Արեգն ու Նունուֆարը ներս մտան Անդասի ընծայած հագուստովը զարդարված, անթիվ անգին քարերի ճառագայթները՝ ծիրանի ծովից ծագող արեգակի պես՝ գույնզգույն լուսով լուսավորեցին ամբողջ դահլիճը։ Չոքեցին թագավորի առջև, որ օրհնե իրանց։

Թագավորը մի քանի րոպե չկարաց խոսիլ, հազիվ էր կարո-

ղանում բռնել ուրախության արտասուքը։ Վերջապես սկսեց օրհնել մեր նորահարսներին՝ ասելով.

Ո՛վ երկինք,
Ես մի հողեղեն,
Մի թույլ արարած,
Որ շարն ու բարին
Դեռ լավ չգիտե,
Իմ սրտին նայիր,
Եվ ո՛չ իմ լեզվին.
Եվ քո իսկ ձեռքով
Ինչ որ բարի է,
Դու այն տուր սրանց։

Ի՞նչ ունիս բարի,
Քո ծոցում պահած,
Որ մինչև այսօր
Ոչ մի հողեղեն
Դեռ չի ստացած,
Դու այն տո՛ւր սրանց։

Դու մինչ այսօր էլ
Շատ բան ես տվել—
Արև վառվռուն,
Աստղեր շողշողուն,
Ջեփյուռ անշշունջ,
Այեր քաղցրաշունչ,
Անձրև հորդառատ,
Ցո՛ղ մարգարտահատ.
Աղբյուրք զովարար,
Վտակներ վարար,
Գույն-գույն ծաղիկներ,
Ծառեր մրգաբեր,
Անտառներ մարմանդ,
Դաշտեր արգավանդ,
Լեռներ հովասուն,
Գետեր գալարուն,
Լճակներ վճիտ,
Սար, ձոր և հովիտ...
Այս ամեն բարիք,
Ո՛վ պայծառ երկինք,
Թույլ տուր վայելեն,
Քեզ փառաբանեն...

Թագավորի օրհնությունն ավարտած-չավարտած, մի նոր լուսով լուսավորվեց դահլիճը։ Մի ծիածան կապվեց, ծիածան անտես, աննման, հրաշալի՜ այնքան, որ ամպերում կապվող աղեղը նրա մոտ մի մռայլ ամպ կարելի էր համարել... Ի՜նչ լեզու կարող է պատմել, ի՜նչ գրիչ կարող է գրել կամ ի՜նչ վրձին կարող է նկարել...

Ամենքն էլ նրան էին նայում և տեսնում էին, թե ինչպես էին կազմվում նրա գույները հետզհետե. կարծես աներևույթ ոգիք՝ արագ-արագ վազելով՝ երկնային մատներով մի նոր ծիածան լինին հինում, և երկնքումը լինին ապրելիս Արեգի ու Նունուֆարի հարսանեկան Կանաչ-Կարմիրը։ Հիրավի, այդ Կանաչ-Կարմիրը, թվում էր, թե դահլիճի առաստաղից շատ և շատ բարձր է և շատ հեռու։

Եվ ահա՜, երբ ծիածանն ամբողջապես պատրաստ էր, նրա վրայով, իբրև մի լուսեղեն սանդուղքով, ցած իջան մի խումբ երկնային թագուհիք՝ աստղերի ճառագայթներից և ձյունափայլ ամպերից գործած հագուստով մի-մի արեգակ... Բայց ի՜նչ արեգակ... եթե ցերեկ լիներ՝ և արեգակը նրանց տեսներ, ամպեղեն մի քող կքաշեր երեսին, որ տեղի տար նրանց լույսին...

Բոլոր երկնային օրիորդները, որոնք թվով մինչև ինը հոգի էին, երկ-երկու պսակաձև փունջեր ունեին ձեռներին, ո՜րը ցողից, քաղած, ո՜րը ծաղիկների գույնից ու հոտից փնջած, որը վճիտ աղբյուրների բյուրեղացած գոհարներից հավաքած, որը քաղցրաշունչ զեփյուռից ու զովարար հովերից հյուսած, որն արևի շամանդաղի մեջ եղած գույնզգույն հյուլեներից կազմած... մի խոսքով՝ լուսեղեն մատներով բնության բոլոր զարդերի ոգին էին քաղել ու փընջել։ Այդ փունջերի անմահական բուրմունքով լցվեցավ բոլոր դահլիճը։

Ամենից առաջ մոտեցան Աղբյուրիկը, Ցողիկը և Ծաղիկը և իրանց պսակները տալով Արեգին ու Նունուֆարին՝ ասացին.

ԱՂԲՅՈՒՐԻԿ

Ես կարկաչյունն եմ Աղբյուրիկ,
Եկել եմ ձեզ աչքաբուսիկ,
Բերել եմ ձեզ բյուրեղահյուս
Ականակիտ, վճիտ փնջիկ։

ՑՈՂԻԿ

Ես գոհարիկն եմ բույսերի,
Ես մարգարիտն եմ հովիտների,
Ահա իմ փունջ ցողից քաղած
Հաղարավոր կանաչների։

ԾԱՂԻԿ

Ես Ծաղիկն եմ մշտադալար,
Ես անթառամն եմ բեղմնարար,
Բոլոր ծաղկանց գույնն ու հոտը
Ահա բերել եմ ձեզ համար...

Այսպես մոտեցան և մյուսները, և մի-մի բան ասելով, իրանց պսակները նվիրեցին Արեգին ու Նունուֆարին...

Այս տեսարանը մի տխրություն և թմրություն բերավ հանդիսականների վրա։ Շատերը բոլորովին վերացան ապշությունից։ Ամենից շատ տխրեցան աղջկերքը։ Նրանց գեղեցկությունն աղոտացավ, թխացավ ու մգացավ հրեղենների գեղեցկության մոտ։ Երիտասարդները դարձան մի տեսակ ապուշ վայրենիք, նրանց վրստահությունը բոլորովին անհետացավ...

Միայն Արեգն էր ուրախ, միայն նա էր ազատ այդ ընդհանուր ապշությունից։ Այդ հոգեկան թմրությունից հանդիսականներին սթափելու համար Արեգը դարձավ լուսեղեն հյուրերին և ասաց.

— Ո՛վ երկնային թագուհիք, դուք ձեր շնորհաբար այցելությունովը ինձ չափազանց ուրախացրիք։ Բայց նայեցեք, այս ի՜նչ ապշություն է, այս ի՜նչ տխրություն, որի մեջ ընկղմվել են ամենքը։ Մի՜ զարմանաք։ Այսպե՜ս ենք մենք՝ տկար հողեղեններս, ի՜նչ որ չափազանց բարի է, չափազանց գեղեցիկ, նույնը վայելելու կարողությունը չունինք մենք՝ մահկանացուներս։ Ճշմարիտ բարվո և գեղեցիկ ճաշակից զուրկ արարածներ ենք մենք։ Ներշնչեցեք մեր սրտերի մեջ վսեմ զգացմունք և բարձրագույն կարողություն, որ ձեր երկնային շնորհաբերությունը լիապես վայելել կարողանանք։ Խնդրում եմ՝ ուրախանաք, խնդաք և զվարճանաք իմ հարսանյաց հանդեսին և ուրախացնեք ամենքին երկնային ուրախությամբ...

Բանից երևաց, որ մեր լուսեղեն օրիորդները, թեև մարմնացած՝ բայց չափազանց հաստեստ, չափազանց ամոթխած և երկյու-

ղած են եղել. պետք է եղել, որ նրանց ստիպեն։ Արեգի խոսքերից խրախուսվելով՝ առաջ անցավ Ծաղիկը և իբրև կարգադրիչ՝ մի պար սարքեց։ Միածանի կամարը՝ իբրև մի երկնային բյուրեղի քնար՝ թրթռացրեց իր հազարերանգ թելերը և այնպիսի եղանակներ հընչեց, որ թե՛ հողեղենների և թե՛ հրեղենների մեջ ձգեց հրաբորբոք մի աշխույժ։ Ամեն ոք սկսավ թև առնել թռչիլ չափազանց ուրախությունից։ Ներերն անգամ թռչկոտում էին և ջահիլների դանդաղկոտության վրա ծիծաղում։ Հետզհետե այնքան տաքացան, որ էլ զվարճություն չմնաց, որ չանեն։ Ցողիկն ու Աղբյուրիկը այնքան զվարճացրին, որ էլ ոչ ոքի մեջ ուժ չմնաց շատ ծիծաղելուց։ Մերթ Արեգի մորուքիցն էին բռնում, մերթ Նունուֆարի թշերը կըսմրթում և զանազան հաճոյական բաներ փսփսում նրանց ականջին...

Արեգը Ցողիկի հետ պարելիս՝ մի խոր հայացք ձգեց նրա երեսին և փսփսաց ականջին.

— Ո՜վ համեստափայլ օրիորդ, ես կարծեմ ճանաչում եմ քեզ... այո՛, ճանաչս գալիս ես, բայց չեմ վստահանում ասել, վախենում եմ, թե մի գուցե սխալված լինիմ։

— Սխալված չես, Արեգ,— պատասխանեց Ցողիկը,— ես նա ինքն եմ։

— Աղավնի աղջի՞կը։

— Այո՛։ Սրանք էլ բոլորն իմ քույրերս են...

— Օ՜... դու իմ աստվածուհին ես... դու ինձ նորից ստեղծեցիր...

— Ո՜չ, Արեգ։ Ես գիտեի միայն, որ դու ոչինչ չգիտես քո մասին։ Այդ իմ մորս՝ Բարեենանի կամքովն էր եղած։ Նա ուրիշ հնար չուներ այն չար պառավին վերացնել աշխարհից։ Պետք էր քեզ պես մի անմեղ և արդար անձն, որ մինչև անգամ չիմանար իր ինչ լինելը և ավելի աղջիկ, քան տղա համարվեր։ Դու երբ որ ինձ մոտ տեսար քո կերպարանքը, տեսար, որ տղա ես, այսուամենայնիվ դա քեզ համար մի խաղ էր, որ ես խաղացի, ինչպես որ դու իմ թևերս վերցնելով՝ ուզեցար մի խաղ խաղալ։ Միայն այս երեկոյին զգացիր, որ տղամարդ ես։ Դու մեղադրում էիր ինձ, մենք թաքուն նայում էինք քեզ վրա և ծիծաղում...

Ցողիկի այս ակնարկությունից ամոթի զգացմունքը առաջին անգամ զգաց Արեգը, բայց այնքան սաստիկ էր, որ նա կարմրեց վարդի պես և ուզեց խոսակցության առարկան ուրիշ բանի վրա

դարձնել, հանկարծ մյուս կողմից մի այնպիսի ծիծաղ բարձրացավ, որ ամենքն էլ այն կողմը դարձրին իրանց ուշադրությունը։

Զանազանը և Զարմանազանը պարապում էին՝ մեկը վեզիրի տղայի հետ, մյուսը՝ սպարապետի։ Ծաղիկը լսել էր նրանց փսփրսոցը, նկատել էր, որ նրանք վաղուց աչքադրել են միմյանց և այժմ էլ պսակվելու ցանկություն ունին, բայց ամաչում են ասելու։

— Նոր սե՛ր, նոր ուրախությո՛ւն,— գոչեց Ծաղիկը մի բարձրաձայն ծիծաղով և նորահարսներին քարշ տալով՝ տարավ թագավորի մոտ և ասաց.— Մի պսակով ի՞նչ պետք է լինի, երեքը միասին կատարեցեք։

Թագավորն ու Արմանը նրանց էլ օրհնեցին և սկսվեց պսակների հանդեսը։ Ցողիկը դարձավ իբր պսակադիր Նունուֆարի, Ծաղիկը՝ Զանազանի, իսկ Աղբյուրիկը՝ Զարմանազանի։ Պսակի օրհնությունը կատարեց թագավորը Միածանի կամարի տակ, որ այդ փառավոր հանդեսին ավելի ևս շքեղություն էր տալիս։ Թագավորն իր թագն էլ դրավ Արեգի գլխին, որով պսակեց նրան և՛ թագավոր միանգամայն։

Դրանից հետո հրեղեն օրիորդները շնորհավորեցին նորապսակներին և պատրաստվեցան երթալու։ Հազար տեսակ քաղցրեղեններ և մեղրաջրեր մոտ բերին, բայց հրեղենք նրանց համը չառան։ Նրանք ուրիշ խմելիքներ ունեին իրանց հետ բերած, նրանից խմեցին և խմեցրին նաև նորապսակներին, որոնք ակամա խմեցին, առանց նրա համն զգալու, բացի Արեգից, որին միայն էր տված նրա երկնային ճաշակն առնելու շնորհքը։ Վերջը մի շրջան կազմեցին երկրայինք, և մինչդեռ հրեղենք վերանում էին ծիածանի սանդուղքով, ասելով՝ մնացեք բարյա՜վ, բարյա՜վ... հողեղենք էլ նրանց բարի ճանապարհ էին մաղթում, երգելով.

Գնացեք բարյավ, սիրուն աղջիկներ,
Դուք մեր Դաշտերի Անմահ Ոգիներ...
Այս ի՞նչ շնորհք էր, ինչքա՜ն մեծ բարիք,
Որ դուք մարմնացած մեզ երևացիք...
Ա՜խ, երանի՜ թե միշտ մեզ մոտ մնաք,
Որ ձեր տեսության կարոտը չզգանք...
Գնացեք բարյա՜վ, բարյա՜վ, բարյա՜վ...

Հրեղեն աղջկերքը վերացան թե չէ, մեջտեղ եկավ ծաղրածուն և սկսվեցավ մի նոր զվարճություն։

— Խնամի թագավոր, շեն կենա քո հոր օջախը... կերանք խըմեցինք, լիացանք... — ասաց ծաղրածուն և սկսեց երգել.

Ա՜խ, թագավոր, թագավոր,
Ինչո՞վ ասեմ շնորհավոր...
Ոչ հաց ունիս, ոչ գինի,
Այսպես հարսնիք կըլնի՞...
Ցարալալի, ցարալալի,
Այսպես հարսնիք կըլնի՞...

— Իրա՞վ, մի՞թե հաց չպիտի ուտենք,— ասաց թագավորը։— Մենք ամենքս էլ ամեն բան մոռացել ենք, որովհետև խելքներս կորցրել ենք, բացի հիմարից, որ խելք չի ունեցել կորցնելու...

— Դու սխալվում ես, թագավոր,— պատասխանեց հիմարը,— ես տեսա, որ դուք ամենքդ էլ իմ հացը կտրել եք, գնացի մի ճոխ սեղան պատրաստել տվի, որ քաղցած չմնամ։ Այս ասելով ծաղրածուն վազեց բաց արավ սեղանատան դռները, ուր հիրավի, ճոխ ընթրիք կար պատրաստված։ Հյուրերն սկսեցին թագավորի հետևից ջուխտ-ջուխտ մտնել սեղանատուն։ Ծաղրածուն՝ տեսնելով որ ինքը մենակ պիտի մնա՝ վազեց մեզ ծանոթ վեզիրի կնոջ մոտ և գլուխ վեր բերելով՝ երգեց.

Ով խելք ունի,— սեր չունի,
Ով սեր ունի,— տեր չունի.
Խեղճն ամենից հիմարն է,
Որ ոչ մի ընկեր չունի։
Արի, տիկին, ես ու դու
Շիտակ խոսք տանք մեկմեկու,
Թե՝ «դու իմն ես, ես՝ քոնը».
Համաձա՞ն ես, ձեռքդ տու...

Ասաց ծաղրածուն և տիկնոջ ձեռքից բռնելով՝ մյուսների հետ մտավ սեղանատուն...

Մյուս առավոտուն սկսվեցավ հարսանիքի տոնախմբությունը քաղաքացոց ու գյուղացոց համար և տևեց մինչև քառասուն օր և քառասուն գիշեր։ Ամեն մեկ օրը մի բոպեի պես էր անցնում, այնքա՞ն զվարճալի էին։ Ի՞նչ խաղեր, ի՞նչ պարեր, ի՞նչ ծաղրածություններ, մրցություններ և հազ ար ու մի տեսակ օյիններ...

Կեր ու խումին բնավ հաշիվ չկար։ Տասը հազար միայն եզ ու կով մորթեցին, քսան հազար ոչխար, թո՛ղ վայրի կենդանիները — եղջերուները, եղնիկները, վարազները. թո՛ղ և թռչունները՝ թե՛ տանու և թե՛ վայրենի։ Քառասուն հազար սոմար միայն բրինձ գնաց փլավի համար, ինչքա՞ն եղ կերթար նրան, ինչքա՞ն չամիչ... հիսուն հազար կարաս միայն գինի խմվեցավ, չհաշված մյուս քաղցրահամ և դառնահյութ խմիչքները...

Քառասուն օրից հետո Արեգը մի թեթև ճանապարհորդություն արավ Նունուֆարի հետ Վանա ծովի վրա։ Երբ որ ծովի ամենախոր տեղն էին հասել, Արեգը հանեց չար պառավի կախարդական լավազանները, որոնք անհայտ մետաղից էին, դժոխքի կրակով մխված, և ասաց.

Ո՛վ գավազաններ, գնացե՛ք անդունդ,
Որ էլ չերևաք աշխարհիս վրա.
Իշխանությունը չար ոգիների
Թողեք մեզանից իսպառ վերանա։
Ո՛վ գավազաններ, գնացե՛ք անդունդ,
Որ ոչ մի մարդու էլ չիշացնեք.
Կորեք հավիտյան, որ էլ ոչ ոքի
Ագռավ չչինեք կամ քարացնեք,
Թող թագավորե բնության կարգը,
Էլ այսուհետև նա չխանգարվի.
Թող միայն Երկինքն իշխե ամեն տեղ,
Ամեն արարած Նորան խոնարհի...

Այս ասելուց հետո գավազանները նետեց ծովի խորքը և չար ոգիների ու նրանց արբանյակների իշխանությունն ու զորությունը վերացրեց աշխարհից։

Ահա այս ժամանակն էր, որ Երկնքից իջավ

ԵՐԿՔ ԷՆԶՈՐ

Արեգի ձայնը Երկինքը լսեց,
Եվ իսկույն երեք խնձոր վայր գցեց,
Մեկը կանաչ էր այդ խնձորներից,
Կարծես նոր քաղած զարնան ոստերից.
Երկրորդը կարմիր՝ վարդի հանգունակ,
Երրորդն ապխտակ՝ ձյունի նմանակ։
Նունուֆարն ասաց.— Արե՛գ, ի՞նչ կասես,

Այս խնձորները ինչո՞ւ են պեսպես.
— Չգիտեմ, հոգիս, ճշմարիտն ասած.
Գուցե մեր կյանքն է ճիշտ օրինակված,
Տե՛ս, սա կանաչ է, իբր խակ մանուկ,
Իսկ սա՝ սպիտակ, ինչպես մի ծերուկ.
Ամենից սիրուն կարմիրն է միայն,
Դա է նշանը մեր հասունության։
— Բեր այդ կարմիրը հենց հիմա կտրենք,
Եվ այստեղ ևեթ միասին ուտենք...

Նունուֆարն ուզեց,
Արեգն էլ կտրեց.

Կարմիր խնձորը միասին կերան,
Եվ իրանց սրտի փափագին հասան։
Ձեզ էլ կցանկամ, սիրուն պատանիք,
Որ մուրազներիդ նրանց պես հասնիք.
Կըխնդրեմ միայն, որ ինձ էլ ներեք,
Եթե պատմածս ձանձրալի գտնեք.
Ձեր սիրո համար ես աշխատեցի,
Պատմեցի այնքան, ինչքան կարացի.
Կարծելով՝ որ դուք սիրով կըկարդաք,
Եվ խեղճ շայիրիս ողորմի կըտաք...

1887

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ ԿԱՄ ԼՈՒՅՍ ԵՎ ՄՈՒԹ ԱՇԽԱՐՀՆԵՐԸ

«Երեխեք, նայեցեք այս վայր ընկած չինարի ծառին, տեսեք ինչպես մեկնվել է և արդեն սկսել է փտիլ։ Մի ժամանակ սա դալար է եղել և ձեզ նման փոքր։ Բայց երբ որ սկսել է բարձրանալ, շատ գոռոզացել է։ Պտուղ չի ունեցել, որ ճղները կռացներ, գլուխը խոնարհեցներ։ Աստված սրան բարձրանալու շնորհք է եղել տված, բայց սա իր գլխի պատիվը չի իմացել, աստուծո ողորմությունը չի հասկացել։ Այս հիմարն ուզեցել է այնքան բարձրանալ, որ գըլուխը երկինք հասցնե և իր ճղներով երկնքի սիրտը ծակծկե։ Աստված բարկացել է սրա գոռոզ մտածության վրա և ահագին բարձրությունից տապալել է»։

Այս խոսքն ասողը Գյուլնազ տատն էր, որի անունը դուք, իմ փոքրիկ ընթերցողներ, պետք է որ լսած լինիք։ Լուսահոգին ամեն բան գիտցող մի պառավ էր և շատ երեխայասեր։ Օրը ցերեկով բոլոր երեխեքս հավաքվել էինք մոտը, հոգնած լինելով շատ խաղալուց, որ տատիկը մի բան պատմի մեզ, որ մենք համ լսենք, համ հանգստանանք։ Դուրսը, կանաչ խոտի վրա, մի տանձենու շվաքում էինք նստոտել։ Եղանակը գարնանային էր։

— Մենակ ծառերը չեն, որ հիմարաբար գոռոզանալ գիտեն. մի ժամանակ մարդիկն էլ են այդպես եղել։ Նրանք էլ մի աշտարակ են շինել այն մտքով, որ նրա ծայրը երկինք հասցնեն և այնտեղից աստուծո հետ կռիվ սկսեն։ Աստված համբերել է միառժամանակ, մինչև նրանք աշտարակի ծայրը մոտեցրել են երկնքին և սկսել են ավելի գոռոզանալ։ Դրա վրա աստուծո համբերությունը հատել է. նրանց աղմուկից ու աղաղակներից ձանձրացած, սաստիկ քամի է բարձրացրել և աշտարակի ամեն մի քարը, ամեն մի քարփիչը ուրիշ-ուրիշ աշխարհք է գցել...

— Ո՜ւհ, ինչքա՜ն բարձր է եղել այդ աշտարակը, որ ծայրը մինչև երկինք է հասել,— բացականչեց երեխաներից մեկը։

— Աշտարակը չի եղել բարձր,— ծաղրեց նրան մի ուրիշը,— այլ երկինքն է եղել ցածր։ Այնպես չէ՞, տատիկ, որ երկինքն առաջ մեզանից շատ մոտիկ է եղել։

— Այո՛, երկինքը մեզանից մոտիկ է եղել, բայց այդ եղել է աշտարակը շինելուց առաջ։ Աշտարակը շինելիս երկինքը բարձր է եղել, և աշտարակն էլ այնքան բարձրացրած են եղել, որ նրա գըլուխը գետնից երևալիս չի եղել. այնքան բարձր է եղել, որ ձմեռը նրա վրա բարձրացողը մինչև ամառը հաղիվ է եղել ցած դալիս... Բայց դրանից առաջ, ճշմարիտ է, երկինքը շատ մոտիկ է եղել մեզանից, այնքան մոտիկ, որ երեխերքը գնդակ խաղալիս շատ անգամ երկնքին է եղել դիպչում գնդակը և այնտեղ էլ մնում։

— Ինչո՞ւ էր այնտեղ մնում գնդակը, տատիկ, թող դիպչեր, էլ ետ վայր ընկներ,— հարցնում էինք մենք և միևնույն ժամանակ ավելի մոտենում տատիկին, որ լավ լսենք նրա պատմությունը երկընքի մոտիկության մասին։

— Նրա համար էր այնտեղ մնում, որ երեխեքը մյուս անգամ երկնքին չխփեն և աստծուն անհանգիստ չանեն։ Հապա չե՞ք լսել, որ մեկ անգամ Արևամանուկը պատահմամբ իր նետը դիպցրել էր Արեգակին, նա էլ անիծել էր Արևամանուկին դրա համար և ասել.

«Այսուհետև ցերեկները չապրիս դու, որ իմ երեսը չտեսնես»։ Այնուհետև խեղճ Արևամանուկը ցերեկները մեռնում է եղել և գիշերը կենդանանում։ Նրան այդ պատժից ազատում է Արևահատը՝ Օձամանուկի նշանածը։ Բայց Արևահատի վերջը ձեզ չեմ պատմել կարծեմ։

— Հիմա պատմիր, տատիկ, հիմա պատմիր,— աղաղակեցին երեխաներից մի քանիսը, իսկ մյուսները զանազան հարցումներ արին երկնքի մոտիկության մասին...

◆◆◆

Գյուլնազը մի բան պատմելիս պարապ չէր նստում. նա կամ գուլպա էր անում, կամ իլիկ մանում և կամ ակնոցը քթին դրած երեխաների պատռած շորերն էր կարկատում։ Երբեմն էլ՝ ձեռքի գործը մի կողմ էր դնում և երեխաներից մեկի կամ մյուսի գլուխը քաշում դնում ծնկան վրա, որ տեսնի հարսները լա՞վ են լվացել երեխի գլուխը և մաքրել, թե ոչ։ Նա միևնույն ժամանակ առանց ուշադրության չէր թողնում տան հոգսը. շատ անգամ միջահատում էր իր պատմությունը և զանազան հրամաններ տալիս այս և այն հարսին։ Երեխեքս գիտեինք այդ և ամենայն զգուշությամբ փաղաքշում էինք նրան, փայփայում, որ նա ուրիշ ոչ մի բանի վրա ուշադրություն չդարձնե, այլ միայն մեզանով զբաղվի, մեր հետաքրքրությունը լցնե։

◆◆◆

«Այո, մի ժամանակ երկինքը շատ մոտիկ էր երկրից,— շարունակեց տատիկը։— Երկնքից լսվում էր աստուծո ձայնը։ Նա այնտեղից խոսում էր մարդոց հետ և հայտնում էր նրանց իր կամքն ու հրամանը. պատվիրներ էր տալիս և հասկացնում էր, թե ինչ պետք է անեն և ինչ չպետք է անեն։

Ուղիղ կեսգիշերին լսվում էին հրեշտակների քաղցր մեղեդիները։ Աքաղաղներն ամենից առաջ էին լսում նրանց ձայները և իրանց միաձայն կանչյունով զարթեցնում էին մարդկերանցը, որ վեր կենան և հրեշտակների հետ միասին փառաբանեն Աստուծո հաստատ ու մեկ անունը...

Աքաղաղները հիմա էլ են լսում հրեշտակների ձայնը,— ավե-

լացնում էր տատիկը և խոր հոգոց քաշում մի այնպիսի ձևով, որ կարծես ինքն ապրած լիներ այն հին ժամանակումը, իր ականջովը լսած լիներ աստուծո ձայնը և հրեշտակների մեղեդիները, և այժմ զրկված այն երջանկությունից»։

◆◆◆

Զարմանալի մի աշխարհ է մանկական աշխարհը. ափսո՜ս որ մարդ խելահաս եղած ժամանակ էլ չի կարողանում մտնել այդ աշխարհը, որ իր առաջվան լսածները մեկ անգամ էլ լսե։ Ամենայն ինչ, որ մանկության ժամանակ մոտիկ էր, մեծացած ժամանակ հեռանում է, ինչ որ հեշտ էր, դժվարանում. ինչ որ պարզ և հասկանալի էր, խավարում է և անըմբռնելի դառնում։ Ինչքան հիմա ես հիշում եմ, մանկությանս ժամանակ մեզ համար ոչ մի վերացական բան չկար, ամենայն ինչ տեսանելի և շոշափելի էր։

«Առաջ Մութ աշխարհն էլ է եղել մեզանից մոտիկ,— ասում էր Գյուլնազ տատը։— Պատահել է, որ աղջկերքն իլիկ մանելիս՝ հանկարծ թելը կտրվել է, և իլիկը մի հորի միջով ընկել է Մութ աշխարհը։ Եթե իլիկ մանող աղջիկը մի բարի աղջիկ է եղել, Ներքի աշխարհի բարի պառավները նրա իլիկը վեր նետելով՝ ետ են դարձրել նրան։ Բայց հիմա Ներքի աշխարհն էլ է հեռացել մեզանից։

Գյուլնազ տատը մի երկար հեքիաթ էր պատմում, որի մեջ Մութ կամ Ներքի աշխարհի մասին մի այսպիսի կտոր կար.

...Անտես-Աննմանին դևը փախցրեց։ Թագավորազն Գուրգենը, որ Աննմանի փեսացուն էր, վեր առավ իր երկու եղբայրներին և դևի հետքովը գնաց և գտավ նրան մի հորի մեջ։ Դևը մրափած էր։ Այդ երևում էր նրանից, որ հորի բերանից ծուխ ու բոց էր բըխում։ Այդ դևի արտաշնչությունն էր։ Մեծ եղբորը կախեցին հորի մեջ, որ երթա ազատե Աննմանին. նա չկարողացավ կրակին գիմանալ և աղաղակեց—«վա՜յ, այրվեցա՜, այրվեցա՜...» Նրան դուրս քաշեցին և միջնակին կախեցին. նա էլ աղաղակեց. «վա՜յ, այրվեցա՜»։ Նրան էլ դուրս հանեցին։ Հետո Գուրգենն ասաց. «Հիմա ինձ կախեցեք, և ինչքան էլ աղաղակելու լինեմ, թե այրվեցա, վեր չհանեք»։ Եվ ճշմարիտ՝ Գուրգենը գնաց մինչև հորի հատակը, առանց ձայն հանելու։ Այնտեղ նա գտավ Անտես-Աննմանին։ Նրա ծնկան վրա էր դրել հրեշ դևն իր գլուխը և քառասուն օրով մրափել։ Այն-

տեղ կախած էր և դևի թուրը։ Միայն այն թրովը կարելի էր կտրել նրա գլուխը և այն էլ մեկ զարկով միայն, եթե երկրորդ անգամ զարկեին, նա կրկին կկենդանանար։

Աննմանը ծունկը դուրս քաշեց թե չէ՝ դևը զարթեցավ և իսկույն ոտքի կանգնեց, բայց և միևնույն ժամանակ թուրը պսպղաց, և դևի գլուխն ընկավ գետին։—«Մեկ էլ զարկիր, մեկ է՛լ, մեկ էլ...» ղղղացրեց գլուխը, բայց Գուրգենը չզարկեց և ասաց. «Ես մեկ անգամ եմ ծնվել իմ մորից և ոչ թե երկու անգամ»։

Հրեշ դևին՝ սպանելուց հետո Գուրգենն ու Աննմանը պտտեցին դևի ստորերկրյա ընդարձակ բնակարանը և ինչ որ գանձ ու հարստություն ուներ, բոլորն էլ ժողովեցին և վեր բարձրացնել տվին։ Երբ որ մնացին միայն իրանք, սկսեցին երկար վիճել, թե ով իրանցից առաջ բարձրանա։ Աղջիկը տեսավ, որ Գուրգենը համառությամբ չի ուզում ինքն առաջ բարձրանալ, ասաց նրան.— Ես շատ կասկածում եմ, թե միգուցե քո եղբայրներդ քեզ վեր չբռնեն և դու մնաս հորի մեջ։ Եթե իմ նախազգացմունքներս կատարվելու լինի, դու կերթաս դևի գոմը, այնտեղ քո առաջդ կգան մի սև այծ և մի սպիտակ ոչխար. եթե կարողանաս ոչխարի վրա նստել, նա քեզ վեր կհանե Լույս աշխարհք, իսկ եթե չկարողանաս, և այծն ընկնի տակդ, նա քեզ կտանի Մութ աշխարհ, որտեղից դու այլևս Լույս աշխարհ ընկնել չես կարող»։ Այս ասելուց հետո Աննմանը վեր բարձրացավ, իսկ Գուրգենին նրա անիրավ և անգութ եղբայրները թողեցին հորի մեջ...

Գուրգենը շատ աղաչեց, պաղատեց և տեսավ, որ իր եղբայրների սիրտը քարացել է, ճարը կտրած՝ գնաց դեպի դևի գոմը, որ փորձե իր բախտը—նստե ոչխարի վրա։ Բայց անիրավ այծը այնքան ճարպիկ էր, որ ոչխարին պոզահարելով մի կողմ ձգեց և ինքն ընկավ Գուրգենի տակը և տարավ ձգեց Մութ աշխարհը։

Այդ աշխարհն էլ մեր աշխարհի նման քաղաքներ և գյուղեր ուներ և մինչև անգամ գիշեր ու ցերեկ կար, թեև ասվում էր Մութ։ Նա մի քաղաքում իջևանեցավ մի պառավի տան և նրանից իմացավ, որ քաղաքացիք ջրի պակասության համար շատ նեղության մեջ են։ «Ամբողջ քաղաքում մի աղբյուր կա միայն, բայց նրանում էլ բույն է դրել մի ահագին վիշապ և ամենայն օր մեկ աղջիկ են տանում գցում նրա երախը, որ ապա թույլ է տալիս ջուր վերցնելու։ Էգուց էլ հերթը մեր թագավորի միամոր աղջկանն է, նրան

պիտի տանեն ահռելի գազանի բերանը ձգեն»,— ասաց պառավը և սկսեց լալ։

Գուրգենը շատ ծարաված էր, այս որ լսեց, նրա ծարավն ավելի ևս սաստկացավ։ Մյուս առավոտ, դեռ լույսը չբացված, վեր կացավ նա և պառավին էլ զարթեցրեց, որ տանե աղբյուրի տեղը ցույց տա իրան։ Պառավը տարավ նրան և հեռվից ցույց տվավ աղբյուրը։ Գուրգենը՝ դևի թուրը ձեռին՝ մոտեցավ և տեսավ մի լիճ, որի մեջ մեկնվել էր վիշապը մի ահագին լեռնակղզու պես։ Ամբողջ լիճը ժահահոտությամբ և ապականությամբ թունավորված էր։ Վիշապի գլուխը գտնվում էր աղբյուրի ակնումը, որ բխում էր մի լայնաբերան քարայրից։ Նա անշարժ էր, կարծես թմրած լիներ կամ մրափած։

Վիշապի գլխավերևը նոր արդեն մի ծառից կապել էին թագավորի աղջկանը, որին պիտի կուլ տար վիշապը մի քանի րոպեից հետո։ Աղջիկն արդեն մեռելի գույն էր ստացել։ Գուրգենը մոտեցավ նրան, կապերը արձակեց և սիրտ տվավ, որ չվախենա։ Թուրը ձեռին մոտեցավ վիշապին և այնպիսի մի հարված տվավ նրա վզին, որ վիշապը երկու ահագին կտոր դարձավ, իսկ լիճն արյան ծով։ Թագավորի աղջիկը ձեռքը թաթախեց արյան մեջ և Գուրգենի մեջքին նշան դնելով, ինքը վազեց տուն, որ թագավորին հայտնե եղելությունը։ Հավաքվեցան բոլոր քաղաքացիք և քառասուն ջուխտ գոմշով հազիվ կարողացան ամենի գազանի գեշը դուրս քաշել այնտեղից և մաքրել աղբյուրը։

Թագավորն ուզեց վարձատրել Գուրգենին և մունետիկ ձգեց քաղաքի մեջ, որ փնտրեն նրան և բերեն, և գտան նրան թագավորի աղջկա դրած նշանով։

Թագավորն ասաց Գուրգենին. «Դու որ փրկեցիր ինձ և իմ ժողովրդին չար վիշապի գերությունից, այսօր դու ես մեր տերը և թագավորը. ուզիր իմ աղջիկս և իմ տեղ թագավոր եղիր»։

Գուրգենը պատասխանեց. «Ես այս երկրիցը չեմ. ես Լույս աշխարհքիցն եմ ընկել այստեղ». և սկսեց պատմել իր գլխի անցքը և հետո ավելացրեց. «Եթե կարողանաք ինձ Լույս աշխարհք գցել կրկին. ես ուրիշ բան չեմ ուզիլ ձեզանից»։

Թագավորն ասաց. «Այդ անհնարին բան է. Լույս աշխարհքը շատ և շատ բարձր է մեզանից. ո՞վ կարող է քեզ վեր թռցնել և տանել այնտեղ»։

Գուրգենը ասաց. «Ինչպես լինի, ես պետք է վեր բարձրանամ. քո առաջարկությունը ես ընդունել կարող չեմ»։

Թագավորն ասաց. «Դո՛ւ գիտես, բայց որ չկարծես, թե ես ընդդեմ եմ քո գնալուն, ես կժողովեմ իմ աշխարհի բոլոր գիտուններին, թող նրանք մեզ ասեն, թե արդյոք մի հնար կա՞ վեր բարձրանալու։ Եվ մինչև այդ, իմ իշխանությունը և բոլոր հարստությունս քեզ եմ հանձնում...»

Թագավորը ժողովեց իր բոլոր աստղաբաշխներին, իմաստուններին և հայտնեց նրանց Գուրգենի ցանկությունը։ Նրանք ասացին, թե հին ժամանակներում, ճշմարիտ է, Ներքի և Վերին աշխարհների մեջ սերտ հարաբերություն է եղել, բայց հետո մեր մեղքիցն է եղել, թե պատահմամբ, մեր աշխարհը ցածրացել է, առաջ քիչ և հետո շատ։ Լսած ենք, որ մեր հեռացած ժամանակն էլ մի սանդուղք է եղել և այդ սանդուղքով արդար մարդիկը վեր բարձրանալիս և վայր իջնելիս են եղել, բայց հիմա այդ սանդուղքն աներևութացել է, էլ չի երևում...»

Այսպես Գուրգենը մնաց Մութ աշխարհում մոլորված։ Սկսեց պտտել զանազան տեղեր, հարցուփորձ անել և ոչ մի տեղից մի դուռը չգտավ վեր բարձրանալու։

Մեկ օր դուրս էր եկել որսորդության։ Շատ ման գալուց հոգնելով՝ նստեց մի հսկայական ծառի տակ, որ փոքր-ինչ հանգըստանա, մեկ էլ մի ծվծվոց լսեց ծառի վրայից. նայեց և... ի՞նչ տեսնի... Ծառի վրայով սողում էր մի ահռելի սև վիշապ դեպի մի մեծ բույն, որի մեջ լիքն էին մեծ-մեծ թռչուններով, բայց դեռ չէին թևավորված։ Երևում էր, որ դրանք ձագուկներ էին մի հսկայական թռչունի։ Այդ ձագուկները օձին տեսնելով սարսափի մեջ էին ընկել և սկսել էին ծվծվալ։ Այս որ տեսավ Գուրգենը, առավ իր նետաղեղը և ուղղակի շեշտեց վիշապի գլխին և վայր կործանեց։ Հետո հանեց դևի թուրը և վիշապին կտոր-կտոր անելով, մի ահագին բլուր շինեց։ Այս բարեգործությունից և քաջությունից սիրտը մխիթարված, պառկեց ծառի ստվերումը և խոր քնի մեջ մտավ։

Այս անցքից մի քիչ հետո թռչունների մայրը թռած եկավ և Գուրգենին տեսնելով այնտեղ պառկած, կարծեց, թե նա է իր թշնամին, որ ամենայն տարի կոտորում էր իր ձագերին։ Նա իսկույն ետ դարձավ և իր ճանկերով մի չաղացքար, թե ահագին ժայռ վերցրած բերավ, որ ձգե Գուրգենի վրա։ Այս որ տեսան ձագուկները, մի սարսափելի ծվծվոցով և աղաղակով զգուշացրին իրանց

մորը և հասկացրին, որ Գուրգենը ոչ թե իրանց թշնամին, այլ իրանց ազատարարն է։

«Նայիր, ասացին, մայրիկ, այդ բլրի վրա և տես ինչ գազան է. դա գալիս էր, որ մեզ ուտի, և այդ մարդն է, որ սպանեց դրան և մաս-մաս արավ»։ Այս որ լսեց մայր թռչունը, երախտագիտական զգացմունքով լցված, ժայռը տարավ առաջվան տեղը դրավ և վերադարձավ իր ձագուկների մոտ։

Գուրգենը դեռ քնած էր։ Ծառի ստվերն անցել էր մյուս կողմը, և արևն ընկել էր Գուրգենի վրա։ Օրը շատ շոգ էր։ Մայր թռչունը, որ սավում էր Զումրութ-Ղուշ, չուզեց Գուրգենին զարթեցնել. նա իր հսկայական թևերը փռեց ամպհովանու պես և շվաք արավ Գուրգենի վրա, որ նա հով-հով քնե։ Վերջը, Գուրգենը որ զարթեցավ, կարծեց, թե մթնել է արդեն, բայց թռչունը որ թևերը ետ քաշեց, կրկին լուսացավ, և Գուրգենը տեսավ հսկա Զումրութին, որ խոսեց Գուրգենի հետ և ասաց.

— Ով ազնիվ երիտասարդ, դու իմ փրկիչն ես երկնքից իջած. դու այնպիսի մի բարերարություն ես արել ինձ, որ չգիտեմ ինչո՛վ կարող եմ վարձատրել քեզ։ Ահա ուղիղ հարյուր տարի է, որ ես չէի կարողանում ազատել իմ ձագերին այդ անգութ գազանի ձեռքից։ Այսօր դու փրկեցիր ինձ դրա ձեռքից, ազատեցիր իմ ամբողջ սերունդը։ Օ՜... եթե դա գողի պես չհետամտեր, եթե ես կարողանայի գոնե մեկ անգամ տեսնել դրան, դրա գլուխը կչախչախեի... Ո՜վ պատվական և քաջ երիտասարդ, ի՞նչ ես կամենում, որ ես քեզ համար ձեռք բերեմ. ո՞ր թագավորությունն ես ուզում, որ քեզ տամ. ո՞ր թագավորի աղջիկն ես ուզում, որ գնամ բերեմ. որքա՞ն հարստություն ես ուզում, որ աշխարհիս ամեն ծայրից հավաքեմ բերեմ քեզ համար. ասա ինձ, և ամենայն ինչ մի ակնթարթի մեջ կկատարեմ ես։

— Ես ոչինչ չեմ ուզում,— պատասխանեց Գուրգենը քնաթաթախ, աչքերը տրորելով...— ես ոչինչ չեմ ուզում, այլ միայն լո՜ւյս, լույս աշխարհք, կարո՞ղ ես տանել ինձ լույս աշխարհք...

— Լո՜ւյս աշխարհք...— բացականչեց Զումրութը։— Ուրեմն դու այնտեղի՞ց ես ընկել մեր աշխարհը, և ի՞նչ հրաշքով։

Գուրգենը պատմեց իր գլխի անցքը։

— Շատ լավ,— ասաց Զումրութը,— ես քեզ կտանեմ լույս աշխարհք, թեպետ դա մի շատ դժվար ճանապարհորդություն է թե՛ ինձ համար և թե՛ քեզ համար։ Քառասուն օր հազիվ կարող ենք

հասնիլ։ Միշտ թռած պիտի գնամ. լչնելու տեղ չկա։ Մեզ հարկավոր է քառասուն օրվա պաշար վերցնել հետներս. քառասուն ոչխար և քառասուն տիկ ջուր։ Դու կերթաս այդ տկերն ու ոչխարները կբերես թագավորից, և մենք ճանապարհ կընկնինք տասն օրից հետո, երբ որ ձագուկներս թռցրած կլինիմ։

Գուրգենը ճանապարհ ընկնելու օրը քառասուն ոչխար մորթեց և ամեն մեկը չորս կտոր արավ և դարսեց պարկերումը, տկերն էլ ջրով լցրեց, բոլորը դարսեց Զումրութի վրա և ինքն էլ նստեց վրան։ Զումրութն ասաց. «Եթե գլուխս աջ կողմդ մեկնեմ, մի կտոր միս կգցես բերանս, իսկ եթե ձախ՝ տկի բերանը կդնես բերանումը»։ Այս ասաց Զումրութն ու թռավ և ամպերը ճեղքելով բարձրացավ դեպի Լույս աշխարհք։

Քառասուն օրը լրացավ, բայց նրանք դեռ տեղ չէին հասել։ Մսի պաշարը հատել էր։ Զումրութը գլուխը մեկնեց դեպի աջ. Գուրգենը այլևս միս չուներ, որ գցեր բերանը։ Հանեց թուրը և իր ոտքից մի կտոր միս կտրեց և գցեց Զումրութի բերանը։ Սրանից հետո մի ժամ չանցած, Զումրութն իջավ Լույս աշխարհքի վրա։ Գուրգենը վայր իջավ արյունաթաթախ և չկարաց ոտքի վրա ուղիղ կանգնել, ոտքի ջլերը կտրատել էր։ Զումրութն ասաց. «Գուրգեն, ես քո միսը չկերա. հանի՛ր, ահա՛ բերանումս է, դիր տեղը և իմ թևս քսիր վրան, իսկույն կառողջանա»։ Գուրգենն էլ այնպես արավ և իսկույն առողջացավ։

Հետո Զումրութը Գուրգենին մի քանի խրատներ տվավ, թե որտեղ պիտի գտնի Աննմանին, իսկ ինքը, նոր պաշարով բեռնավորված՝ մնաս բարով ասաց Գուրգենին և դարձավ կրկին դեպի Ներքի աշխարհը...

Ահա թե ինչ էր պատմում Գյուլնազ տատը Մութ կամ Ներքի աշխարհի մասին։ Երկինք գնալը այսքան դժվարություն չուներ։ Արևահատը Արևամանուկին ցերեկվա մահից ազատելու համար մի ջուխտ երկաթե տրեխ է հագնում և մի երկաթե գավազան է բռնում ձեռին և ճանապարհ է ընկնում դեպի արևմուտք։ (Այսպես էին անում առհասարակ, որոնք որ ուզում էին աստուծո մոտ գնալ։ Այնքան գնում էին, որ տրեխները մաշվում էին, գավազանի ծայրը կոտրվում։ Այդ նշանն էր, որ արդեն աշխարհի ծայրն են հասել)։ Արևահատի տրեխները որ մաշվում են, նրա առջև բացվում է մի հրեղեն պալատ։ Ներս է գնում և տեսնում է այնտեղ նստած Արևամորը, այսինքն Արեգակի մորը, որ մի շատ սիրուն պառավ է լի-

նում։ Արևամայրը նրան սիրով ընդունում է, իմանում է գնալու պատճառը և թաքցնում է նրան, որ տղան՝ Արեգակը, չտեսնե նրան։ Երեկոյին տղան ներս է մտնում, շատ շոգած ու քրտնած... Մայրը նրան աղաչում է, որ խնայե Արևամանուկին և ազատե նրան մահից։ Տղան մոր խոսքը չի կոտրում, վեր է առնում մի կտոր բամբակ, իր քրտինքը սրբում է նրանով և ասում է. ահա այս է նրա դեղը. եթե իմ քրտինքը քսեն նրա երեսին, նա կառողջանա, բայց ո՞վ կտանե։ Այստեղ մայրը հայտնում է Արևահատի գալը, դուրս է բերում նրան թաքցրած տեղից։ Արեգակը նրան սիրով ընդունում է և կարճ ճանապարհ է ցույց տալիս կրկին իր տեղը գնալու։

◆◆◆

Գյուլնազ տատը, որ այս հեքիաթում արևի համար ասում էր, որ տղա է, նա ուրիշ անգամ ասում էր. Արեգակն ու Լուսինը քույր ու եղբայր են։ Մոր մասին խոսք չկար։ Նա ասում էր. որովհետև Արեգակն աղջիկ էր, գիշերը վախենում էր ման գալ, իսկ ցերեկը՝ ամաչում, Լուսինը նրան մի բուռը լիքն ասեղ տվավ և ասաց. «Ով որ քեզ մտիկ տա, դու այս ասեղներով կծակծկես նրա աչքերը»։ Այնուհետև քույրն սկսեց ցերեկը ման գալ, իսկ եղբայրը՝ գիշերը։

Գյուլնազը չէր ասում, որ ցերեկի պատճառը Արեգակն է, որ առանց Արեգակի ցերեկ չի լինիլ։ Ոչ. ցերեկն ինքն իր համար մի ջոկ բան է, գիշերը՝ ջոկ։ Արեգակ լինի, չլինի, ցերեկ պիտի լինի։ Նա ասում էր. ցերեկն ու գիշերը մի ծեր մարդու ձեռքում են գտնվում։ Ծերունին նստած է մի բարձր սարի վրա և երկու կծիկ ունի ձեռին, մինը սև և մյուսն սպիտակ։ Երբ որ գլորում է սև կծիկը, աշխարհքը մթնում է, և երբ որ սպիտակն է գլորում, լուսանում է և ցերեկ դառնում։ Այդ ծերունին՝ էլ մի ուրիշ բան չունի... շարունակ սպիտակը կծկում է, սևը բաց թողնում, սևը կծկում է, սպիտակը բաց թողնում...

◆◆◆

Գյուլնազ տատիկը շատ անգամ խոր հոգոց քաշելով ասում էր.

— Էեե՛յ, հե՛յ... դուք հենց կարծում եք, թե մեր աշխարհքն առաջ էլ այնպե՞ս է եղել... Ո՛չ։ Հին ժամանակները, երբ որ աստ-

ված մոտիկ է եղել մեզանից, նրա ողորմությունն էլ անպակաս է եղել։ Ամեն ձմեռ երկինքը ձյունի տեղ ալյուր է եղել թափելիս, ձյունի պես սպիտակ, նրա պես մաքուր։ Մարդիկ հավաքում են եղել երկնքի ալյուրը և իրանց ամբարները լցնում այնքան, որ բավականանար մինչև մյուս ձմեռը...

Մեկ անգամ, երբ տատիկն արդեն սկսել էր պատմել, թե հին ժամանակներումը մարդիկ ինչպես են եղել ապրելիս, երեխաներից մեկը, որ գլուխը տատիկի ծնկանը դրած քնել էր, հանկարծ զարթեցավ, և պատմությունը միջահատելով, հարցրեց տատիկին.

— Հետո՞, տատիկ, հետո՞...

— Ի՞նչ հետո, հոգիս,— հարցրեց տատիկը։

— Դու չասացի՞ր, որ երկինքն առաջ շատ մոտիկ էր մեզանից... հետո ի՞նչպես եղավ, որ նա այսքան բարձրացավ։

— Այնպես եղավ, որ երեխեքը երբ որ սկսեցին շատ չարություն անել, անդադար վավվղում, թռչկոտում էին և աստծուն չէին թողնում հանգիստ քնել, նա էլ բարձրացրեց երկինքը, հեռացավ, առանձնացավ, որ երեխերքն իր քունը չխանգարեն։

— Այդպես չէ, տատիկ, այդպես չէ,— մեջ ընկավ մի սրամիտ երեխա, որ ուրիշ կերպ էր լսել այդ սնցքը։

— Հապա ինչպե՞ս է եղել,— հարցրինք ամենքս միաբերան։

— Թող տատիկն ասի... Աստծուն խռովեցնողը ոչ թե երեխերքն են եղել, այլ մի անգետ պառավ է եղել, որ երեխի...

— Այդ սուտ է, այդ սուտ է...—խնդալով ընդհատեց Գյուլնազ տատը, չուզենալով, որ պատճառը պառավները լինին եղած։

Այստեղ երեխերքս պաշտպան հանդիսացանք տատիկին և բարկացանք նոր զարթած երեխայի վրա, որ միջահատեց տատիկի պատմությունը։ Գիտեինք առաջուց, որ եթե տատիկի պատմության թելը կտրեինք, էլ մյուս անգամ նա իր ասելիքի ծայրը չէր գտնիլ, այդպես էլ կխափանվեր գործը։ Եվ ճշմարիտ այնպես էլ եղավ։

Տեսնելով, որ տատիկը էլ նոր բան պատմելու տրամադրություն չունի, սկսեցին խառն ի խուռն հարցեր առաջարկել։ Աղջկերքը հարցնում էին, թե՝ այնպես չէ՞, տատիկ, որ եթե աղջիկը Կանաչ-Կարմրի տակովն անց կենա, տղա կդառնա. տղերքը հարցնում էին, թե՝ այնպես չէ՞, տատիկ, որ եթե մեկը կարենա իր արմունկիցը պաչել, ծիտ կդառնա, և ուրիշ այս տեսակ հարցումներ։

Եվ ամենքիս սիրով պատասխանում էր Գյուլնազ տատը։

Ողորմի իրան, շատ բարեսիրտ պառավ էր. նա իսկապես մի պառավ երեխա էր, որովհետև հավատում էր այն բաներին, ինչին որ միայն երեխաները կհավատան։

1887

ՔԻՉ Է՞Լ, ՔԻՉ Է՞Լ

Առասպելն ու իրականը

(Երկու ճակատագիր)

1

Մեկ աղքատ մարդ մեկ որդի ուներ միանուճար՝ Քաջիկ անունով։ Քաջիկը շատ սրամիտ էր և շատ խելոք, միայն շատ դյուրագրգիռ էր և շուտ բարկացող։ Նա չէր վերցնում ոչ մի դառը խոսք, ոչ մի կոպիտ վարմունք, և այս պատճառով էլ՝ ոչ մի վարպետի մոտ երկար չէր մնում մի արհեստ սովորելու համար։ Հայրը մի վարպետից մյուսի մոտ էր տանում, մի արհեստից հանում, մյուս արհեստի էր տանում, բայց որովհետև բոլոր արհեստավորներն էլ միատեսակ կոպիտ վարվեցողություն ունեին, այդ պատճառով էլ Քաջիկը ոչ մեկի մոտ էլ երկար չէր մնում։

Մեկ օր էլ հայրն ասաց.— Ես որտե՞ղ գտնեմ քեզ համար այնպիսի վարպետ, որ քո բնությանդ հարմար լինի։ Մեր աշխարհի օրենքն այնպես է, որ վարպետը պետք է աշակերտին խրատե, հանդիմանե, ծեծե, որ նա մարդ դառնա։

— Այդ շատ լավ ես ասում, հայր,— պատասխանեց Քաջիկը,— բայց ի՞նչ անեմ, ես չեմ կարողանում վերցնել։ Երբ որ ինձ հետ մարդավարի չեն վարվում, գլուխս շշմում է, աչքերս մթնում, էլ ոչինչ չեմ տեսնում, ոչինչ չեմ լսում։ Իմ կոպիտ վարպետներս կարծում են, թե ես գիտությամբ եմ կուրանում ու խլա-

նում, և ավելի են բարկանում ու ավելի ծեծում,— այս ասաց Քաջիկը և սկսեց լաց լինել։

Հայրը խելոք մարդ էր. գիտեր, որ Քաջիկի ասածն ուղիղ է, բայց ինչ աներ խեղճը, կոպիտ վարպետներին բարեկրթել չէր կարող, մնացել էր տարակուսած և չգիտեր ուր տաներ յուր որդին։ Վերջը մտածեց, որ տանեն ուրիշ քաղաք, գուցե կարողանա՞ յուր որդու բնությանը հարմար մի վարպետ գտնել։ Այսպես մտածելուց հետո՝ հայր ու որդի վճռեցին, պատրաստություն տեսան և ճանապարհ ընկան դեպի մի ուրիշ քաղաք։ Շատ գնացին թե քիչ, աստված գիտե, մինչև հասան մի աղբյուրի. նստեցան աղբյուրի մոտ, որ ճաշեն, հանգստանան և հետո շարունակեն իրանց ճամփան։ Մի փոքր որ հանգստացան, հայրը բերանքսիվայր ընկավ աղբյուրի վրա, մի կուշտ խմեց և ասաց.— Ուխա՜յ... Այս խոսքերի վրա հանկարծ մի մարդ դուրս եկավ աղբյուրից՝ երկար հասակով ու մորուքով և ասաց.

— Ե՛ս եմ Ուխայը. ի՞նչ եք ուզում ինձանից։

Այս որ տեսան, հայր ու որդի մնացին իրար երեսի մտիկ տալիս, զարմացան, ապշեցան և չիմացան ինչ պատասխան տան։ Վերջը հայրն ասաց.

— Ուխա՜յ ապեր, մենք քեզ չկանչեցինք և ոչինչ չենք ուզում քեզանից։ Մենք ճանապարհորդ ենք. սա իմ որդին է, տանում եմ մի վարպետի տամ, որ մի արհեստ սովորի։

Ուխայն ասաց.— Տուր ինձ, ես դրան լավ արհեստ կսովորեցնեմ և լավ կպահեմ։ Ես գիտեմ դրա բնությունը, դա ամեն մարդու մոտ չի կենալ, ամեն արհեստ չի սովորիլ, բայց ինձ մոտ կմնա։

Հայրը չիմացավ ինչ պատասխան տար խորհրդավոր Ուխային, որովհետև կարծում էր, թե գուցե նա մարդ չէ, այլ սատանա է կամ հրեշտակ, բայց Քաջիկն ասաց.— Հայր, ես կերթամ նրա մոտ, երևում է, որ սա մի հնարագետ մարդ պիտի լինի. ես սրա արհեստը կսովորեմ։ Հայրն ասաց. — Թող քո կամքը լինի։ Եվ որդին տվավ Ուխայ ապորը։ Ուխայ ապերը մի քսակ ոսկի տվավ հորը և ասաց.— Մի տարուց հետո կգաս էլի այս աղբյուրի մոտ, կխմես և կասես՝ ուխա՜յ, ես էլի դուրս կգամ և քո որդին քեզ կհանձնեմ։ Այս ասելուց հետո Քաջիկի ձեռքից բռնեց և անհայտացավ աղբյուրի մեջ...

2

Ուխայը մի ճարպիկ ձեռնածու էր, այսինքն՝ աչքակապ, ֆոկուսնիկ, և միևնույն ժամանակ մի շլված և չտեսնված կախարդ։ Նրա բնակարանը մի առանձնացած տեղ էր. երկրի երեսի՞ն էր արդյոք, թե գետնի տակին՝ հայտնի չէ և այնքան հրաշալի մի շենք էր, որ լեզվով պատմել չի լինիլ։ Բոլոր պատերը, սյուները, առաստաղը, վերնածածկը, գավիթը, պարիսպը, մի խոսքով ամբողջ շինությունը յուր բոլոր մասներով շինված էր արծաթից, ոսկուց, ադամանդից, յաղութից, զմրուխտից և ամեն գույնի գոհարներից ու անգին քարերից, և շինված էր այնպիսի վարպետությամբ և ճաշակով, որ արեգակի ճառագայթները վրան ընկնելով ամբողջ տունը ամեն րոպեից հետո մի նոր ձև, մի նոր պատկեր էր ստանում, որ մարդ նայելիս չձանձրանա, չկշտանա։

Նա ուներ ընդարձակ այգի, ամեն տեսակ ծառ ու ծաղկով զարդարված, միշտ փթթած, միշտ դալար՝ թե՛ ամառ և թե՛ ձմեռ, բայց ոչ մի խոտ, ոչ մի թուփ, ոչ մի ծառ կամ ծաղիկ բուսեղեն չէր, իսկական, բնական բույս չէր, այլ ով գիտե ինչից էին շինված և ինչպես։ Ավազաններ կային տեղ-տեղ, հրաշալի ավազաններ, մարջանից շինած խողովակներով և մարմարիոնից շինած հուրիների չքնաղ անդրիներով, որոնց գլուխների վրա դրած ոսկե սափորներից ականակիտ շատրվանները միշտ հիսուն կանգուն վեր էին խփում և ցնցողնած վայր թափվում ծիածանի բոլոր գույներովը զարդարված։ Բայց... չուր չէր այդ թափվածը, այլ ով գիտե, գուցե ադամանդի, այսինքն բրիլյանտի ու ալմաստի հալվածք էր կամ մի այլ զարմանալի հեղուկ։

Թռչուններ կային տեսակ-տեսակ, ամեն ցեղի և ամեն գույնի, որոնք թևերը շարժելով՝ երգում էին հազար ձայնով, բայց... չէին թռչում, որովհետև նրանց թևերը փետուրից չէին, նրանք իսկական թռչուններ չէին, բայց այնպես էին շինված, որ մի մեղմ հով փչելիս՝ նրանց մեջ սարքած մեքենան շարժել էր տալիս նրանց թևերը, և նրանց կտուցից դուրս էր գալիս մի զմայլելի երգ, և թեպետ ամեն մեկը մի ջոկ ձայնով ու եղանակով էր երգում, բայց բոլորի ձայնը մեկ տեղ խառնվելով մի զարմանալի ներդաշնակություն էր հառաջ գալիս, դառնում էր մի սքանչելի մե-

ղեղի, որ մարդ լսելուց չէր կշտանում։ Այդ մեղեդին յուր եղանակը փոխում էր փչած քամու կամ հովի փոխվելու հետ...

Այսպես Ուխայը ամեն ինչ ուներ, բայց բոլորն էլ ճարտարության գործ էր և ոչ բնության։ Մի կին ուներ միայն, որ ճշմարիտ, իսկական կին էր, շատ զեղեցիկ և խելոք, և հմուտ յուր մարդու բոլոր գիտությանը և արվեստին։ Նրանք չունեին ոչ խոհանոց, ոչ խոհարար և ոչ ծառա։ Ճաշելու ժամանակ սեղան էին նստում և ինչ որ ուզում էին, իսկույն դրվում էր սեղանի վրա ոսկեղեն ամաններով։ Քաջիկը ոչ տեսած և ոչ էլ լսած էր, այնպիսի՞ համադամ կերակուրներ կային։ Եթե նրա սիրտը երբեմն յուր թանապուրն էր ուզում կամ մախոխը, իսկույն դրվում էր նրա առաջին։ Երբ որ ծարավում էին, վերցնում էին դատարկ բաժակը և նա իսկույն լցվում էր պարզ ու զովարար ջրով։ Հագնել էին ուզում, իսկույն պատրաստ էր լինում հագուստը, ինչ ձևի և ինչ կտորից որ ուզենային։ Եվ այսպես ամեն ցանկություն, ամեն փափագ կատարվում էր իսկույն ևթ։ Քաջիկին սկզբում շատ տարօրինակ էր թվում այս ամենը, բայց հետզհետե ընտելացավ և հաշտվեցավ այս զարմանալի վիճակի հետ։

Այսպես մի քանի օր անցավ, Ուխայն ասաց Քաջիկին.

— Տես, ահա մենք որդի չունինք, եթե դու լավ սովորես իմ արհեստը, ես քեզ կորդեզրեմ, դու կդառնաս իմ որդին և կպահպանես ինձ և իմ կնոջը մեր ծերության ժամանակ։

Այս հույսով Ուխայն սկսեց սովորեցնել Քաջիկին յուր կախարդության արհեստը։ Նա սովորեցնում էր կերպարանափոխվելու հնարքը, թե ինչպես մարդը յուր ուզած բանը դառնա, օրինակ՝ ձի, թռչուն, քար, ծառ և ուրիշ բան, ինչ որ ուզենա։

Ամեն մի ջոկ բան դառնալու համար մի ջոկ ասելիք կար, այն ասելիքը որ սովորեր և ասեր, իսկույն կդառնար յուր ուզած բանը։

Քաջիկն սկսեց սովորել և վարժության համար ինչ ասես դառնում էր—ձի էր դառնում և չափ ընկնում դեսուդեն, մուկն էր դառնում, ծակուծուկ մտնում. կատու էր դառնում, մլավում. շուն էր դառնում, հաչում. թռչուն էր դառնում, թռչում. ծառ էր դառնում, ճղները տարածում դեսուդեն. քար էր դառնում, մի տեղ ցցվում կամ վայր ընկնում. դերվիշ էր դառնում և չանաղը ձեռքն առած երգում, փայ ուզում. աշրղ էր դառնում, սազ ածում և խաղ ասում կամ մի նոր մարաքա սարքում...

Ուխայի կինն ավելի շատ բան էր սովորեցնում Քաջիկին և շատ սիրում էր նրան։ Նա սկսեց այնպիսի բաներ սովորեցնել, որ մարդուն հաճելի չէր։ Թեպետ այդ բաները նա ծածուկ էր սովորեցնում, բայց սատանա և խորամանկ Ուխայից ինչ կծածկվեր։ Ուխայն ամեն գաղտնիք չէր ուզում հայտնել Քաջիկին. այդ բանը դեռ վաղ էր համարում, չէր ուզում յուր հացը բոլորովին կտրել և տալ ուրիշին։ Երբ որ գլխի ընկավ, որ Քաջիկն ավելի է հառաջ գնացել, քան թե պետք էր, սկսեց խեթ աչքով նայել նրա վրա և վերջը բանը մինչև այնտեղը հասավ, որ ուզեց սպանել նրան։

Բայց կինն էլ պակաս խորամանկ չէր։ Նա էլ երբ որ իմացավ մարդու միտքը, ուզեց ազատել Քաջիկին, և ասաց նրան, որ խելագար ձևանա և այնպես ցույց տա, որ իբր թե էլ ոչինչ չի կարողանում սովորել և ինչ որ սովորել է, բոլորն էլ մոռացել է։

Քաջիկը ձևացրեց իրան իբրև խելագար՝ յուր սովորած արվեստի բոլոր ճարտարությամբ, դեղնեց, սփրթնեց և սկսեց խենթ ու խելառ, ինչ ասես, դուրս տալ գլխիցը և այնպիսի վտանգավոր բաներ անել, որ միայն խելագարը և գլխից ձեռք վերցրած մարդը կաներ։

— Խե՜ղճ տղա,— ասաց մեկ օր էլ կինը մարդուն,— շատ բան սովորելուց գժվեցավ...

Խորամանկ Ուխայը հեշտ և շուտ խաբվող չէր։ Նա ամեն հնար գործ դրավ, որ իմանա, թե արդյոք Քաջիկն ստո՞ւյգ խելագար է, թե ձևանում է միայն, բայց ի վերջո բոլորովին համոզվեցավ, որ Քաջիկի խելագարության մեջ ոչինչ կեղծիք չկա...

Հենց այդ ժամանակները Քաջիկի հայրը նկավ աղբյուրից խմեց, ու՜խայ ասաց. Ուխայն իմացավ իսկույն և Քաջիկին տարավ տվավ հորը և ասաց.— Որդիդ հիվանդացավ, և ինչ որ սովորել էր մոռացավ։ Տար տուն, երբ որ լավանա, էլի բեր ինձ մոտ։ Այս ասելուց հետո նրան մի քսակ ոսկի տվավ և ինքն անհայտացավ։

3

Ուխայը չասաց, թե քո որդին խելագարվել է, և լավ էր, որ չասաց, եթե ասեր, շատ վատ կլիներ Քաջիկի համար. նա այնուհետև ինչ խելոք բան էլ որ աներ, հորը խենթություն պիտի թվար։

Ճանապարհին հայրն սկսեց հանդիմանել որդուն և ասել, որ նա կարողանալու չէ մարդ դառնալ։

— Մարդ որ չդառնամ,— պատասխանեց որդին,— մի՞թե մի ուրիշ կենդանի էլ չեմ կարող դառնալ, օրինակ՝ ձի, էշ, ուղտ...

— Ի՞նչ ասել կուզի որ կարող ես, ի՞նչ կա ավելի հեշտ, քան թե էշ դառնալը, դժվարը միայն մարդ դառնալն է....

— Այդպես չէ, հայր. մարդ դառնալու համար ոչինչ դժվարություն չկա. մենք մարդ ենք ու մարդ, էլ ինչ հարկ կա մարդ դառնալ, բայց ուրիշ բան է, եթե մարդը կարողանա էշ դառնալ, ձի դառնալ, քար դառնալ, ծառ դառնալ...

— Այսպես չէ, որդի. ով որ օրինավոր մարդ չէ, նա մի որևիցե կենդանու է նման, հապա չե՞ս լսել, որ ասում ենք՝ այսինչ մարդը հիմար էշ է, փլանը կոպիտ արջ է, փստանը անզգա խոզ է, այսինչը խաբեբա աղվես է, այնինչը գիժ գոմեշ է, Մարկոսը մի խորամանկ օձ է, Կիրակոսը վախկոտ նապաստակ է, Մաթոսը մի կատաղած շուն է...

— Ոչ, հայրիկ, ես ուրիշ բան եմ ասում, դու ուրիշ։ Ախր ես ուսում եմ առել, շատ բան եմ սովորել, դու իմ ասածը, իմ լեզուն չես կարող հասկանալ։

— Ինչո՞ւ չեմ հասկանալ, որդի, եթե մարդավարի խոսես։ Ես ասում եմ՝ մարդ դառնալն է դժվար, դու ասում ես՝ էշ դառնալն է դժվար. այստեղ ի՞նչ կա չհասկանալու. այդ ի՞նչ ուսում է...

— Այս այն ուսումն է, որ ես կարող եմ ուղտ դառնալ, բայց դու չես կարող...

— Աստված մի՛ արասցե. ես չեմ էլ ուզիլ ուղտ դառնալ։ Ինչո՞ւ մարդ դառնալը թողած՝ ուղտ դառնալը սովորեցիր, մի՞թե մեզանում քիչ ուղտեր կան... Ով որ լսի, մեզ ի՞նչ կասի. չի՞ ասիլ՝ փլանը յուր տղին տարել է տվել ուսումի, որ մարդ դառնա, բայց նա ուղտ է դառել...

Այսպես հայր ու որդի վիճելով շարունակեցին իրանց ճանապարհը, մինչև հասան մի մացառուտ տեղ։ Այնտեղ Քաջիկը ետ ընկավ և մի թուփի քամակ անցնելով՝ դառավ մի եղնիկ և վազելով գնաց հոր առաջը։ Հայրն ուզեց բռնել, չկարողացավ։ Եղնիկը չէր փախչում, այլ մինչև անգամ բռնել էր տալիս և մեկ էլ հանկարծ դուրս պրծնում։ Հայրը կանչեց Քաջիկին, որ հասնի օգնե, բայց Քաջիկը չերևաց, մինչև եղնիկը փախավ ընկավ մացառուտը, նոր այնտեղից դուրս եկավ Քաջիկը։ Հայրը բարկացավ որդու վրա, թե ինչո՞ւ շուտ չեկավ և սիրուն եղնիկը ձեռքից փախ-

ցընել տվավ։ Քաջիկը ծիծաղեց միայն և ոչինչ չասաց. մի քիչ որ առաջ գնացին, նա էլի ետ մնաց, դառավ մի ձիու քուռակ և գնաց հոր առաջին կանգնեց։ Հայրն ուզեց բռնել, բայց քուռակը բռնել չէր տալիս։ Կանչեց որդուն, որդին չերևաց, մինչև քուռակը փախավ անհայտացավ, նոր երևաց որդին, բայց ուշ էր։ Հայրը դարձյալ հանդիմանեց որդուն, թե ինչո՞ւ ուշացավ, և սկսեց պատմել, թե ինչքան գեղեցիկ էր քուռակը, կասեիր մի քաշած պատկեր էր, և անպատճառ մի հրեղեն կամ ծովաձիու քուռակ էր։

Այսպես՝ մինչև տուն հասնելը որդին շատ չարչարեց հորը՝ զանազան բաներ դառնալով։ Հենց որ հայրը հոգնում էր և ուզում էր նստել, Քաջիկը մի առիթ էր գտնում, ծածկվում և ծածուկ մի բան դառնալով հոր առաջն ընկնում վազում, հայրն ընկնում էր հետևիցը և բավական տեղ վազում էր. և մինչև տուն համարյա վազելով գնաց խեղճը։

Երբ որ տուն հասան, մյուս օրը որդին պատմեց հորը, որ ճանապարհին պատահած բոլոր բաներն ինքն էր։ Հետո ասաց.— Ես հիմա մի լավ ձի կդառնամ, դու ինձ տար ծախիր, միայն իմ սանձը չծախես։ Այս ասելուց հետո՝ մտավ գոմը և այնտեղ դառավ մի կարմիր ձի և այնքան գեղեցիկ, որ տեսնողը կասեր՝ ոչ ուտեմ, ոչ խմեմ, միայն սրա շենք ու շնորհքին մտիկ տամ։ Հայրը տարավ բազար և բոլոր տեսնողները մնացին հիացած։ Հազար մանեթ գին դրավ և մեկը, առանց խոսելու՝ հանեց տվավ փողը ձին առավ տարավ։ Հայրը սանձը չտվավ և փողի հետ տարավ տուն։ Առնողը տարավ ձին և սկսեց խաղացնել, բայց չկարողացավ սանձահարել և հրաշալի կենդանին հրեղեն ձիու նման թև առած՝ թռավ՝ անհայտացավ։ Մի ժամից հետո նա իրանց տանն էր և առաջվա Քաջիկն էր։ Այսպես մեր Քաջիկը մի քանի անգամ ձի դառնալով և ամեն անգամ ուրիշ գույնով, ավելի թանկ գնով ծախվեցավ։

Մեկ օր էլ, երբ որ հայրը նրան բազար էր դուրս բերել, մի քոսակ մարդ մոտեցավ, ձեռքը քսեց ձիու բաշին, աչքերին, շատ հավանեց, գովեց և հարցրեց գինը։ Հայրն ասաց, որ գինը տասը հազար մանեթ է, առանց սանձի։

— Իսկ սանձն ի՞նչ արժե,— հարցրեց Քոսակը։

— Սանձը ծախու չէ,— պատասխանեց հայրը։

— Սուտ ես ասում, կծախես,— ժպտալով ասաց քոսակը. երևի ուզում ես մի բան էլ սանձի համար գչլես։ Ես առանց սան-

ձի չեմ առնիլ, որովհետև այս սանձն ինձ ավելի է դուր գալիս, քան թե ձին, և այս պատճառով ես մի հազար մանեթ էլ սանձի համար կավելացնեմ։

— Չեմ կարող տալ, թեկուզ երկու հազար մանեթ տաս...

— Ի՞նչ անխելք մարդ ես... դե լա՛վ, տասը հազար էլ սանձի համար կտամ։

Այս որ ասաց քոսակը, բոլորի բերանը բաց մնաց. թե գիժ խում չէ այս մարդը, որ վեց շահանոց սանձին տասը հազար մանեթ է տալիս։— Գիժն ավելի չտվողն է,— ասացին շատերը և սկսեցին մեղադրել ձիավաճառին, թե ինչո՛ւ այդպիսի մի առասպելական գնով չի ծախում սանձը։ Ինքը հայրը մնաց զարմացած այդ գնից և շշկլվելով՝ սանձն էլ հետը ծախեց։ Քոսակը քսան հազար մանեթ համրեց տվավ հորը և ձիու սանձն առավ ձեռքը։

Երբ որ քոսակը ձիու սանձը ձեռքն առավ, ամենքն էլ նկատեցին, որ ձիու աչքերից արտասուքի խոշոր կաթիլներ թափվեցին։ Հայրն էլ տեսավ և զղջաց. ուզեց ետ առնել ձին, բայց քոսակը ժամանակ չտվավ. նա հեծավ ձին և մի ակնթարթի մեջ անհայտացավ։

Այս քոսակը Ուխայն էր և ճանաչել էր Քաջիկին։

4

Ուխայը ձին տարավ յուր դռանը կապեց, ինքը մտավ տուն, առավ մեծ դանակը և սկսեց սրել, որ նրանով Քաջիկին մորթե։ Կինը նայեց պատուհանից և ճանաչեց Քաջիկին։ Մինչև մարդը դանակը կսրեր, կինը թաքուն վայր իջավ և սանձը վեր առավ ձիու գլխից։ Քաջիկն իսկույն մի աղավնի դառավ և թռավ դեպի տուն։ Ուխայը դուրս եկավ և տեսավ, որ ձին չկա, աչքովն ընկավ աղավնին և իսկույն ինքն էլ մի բազե դառավ և ընկավ աղավնու հետևիցը։ Աղավնին տեսավ, որ բազեն հետևիցն է ընկել, իսկույն իմացավ, որ Ուխայն է. յուր ուժը կրկնապատկեց, որ նրա ճանկը չընկնի։ Այսպես աղավնին փախավ, բազեն էլ նրա հետևից, մինչև հասան մի գյուղ, և հենց այն էր՝ քիչ էր մնում, որ բազեն բռներ աղավնուն և քրքրեր, աղավին իսկույն մի կարմիր խնձոր դառավ և վայր ընկավ մի տան հերթից։ Այդ տանը հարսանիք կար։ Նորապեսան յուր մակարներով սեղան էին նստած և ուրախություն էին անում։ Նորապեսի առաջին, ինչպես սովորություն է, շատ մրգեղեն կար, որ բերել էին բարեկամները իբրև թագավորի մատաղ։ Հերթից վայր ընկած կարմիր խնձորն էլ դրին թագավորի առաջին. կարծելով, թե բուրեկաններից մեկը կլինի վայր ձգած զվարճության համար։ Բայց շուտով ամենքի ուշադրությունը դարձավ այդ խնձորի վրա, ամենքը նկատեցին, որ այդ խնձորը հասարակ խնձոր չէ։ Ամենքն էլ ձեռքներն առան խնձորը, հոտոտեցին, հիացան և գովեցին, ամեն մեկը մի բան ասաց, և վերջում մեկն էլ ասաց, որ այս խնձորը հասարակ խնձոր չէ. սրան մարդ չի վայր գցել հերթիցը և ի՞նչ հարկ կար. սա անպատճառ երկնքից է վայր ընկել և այն խնձորներիցն է, որ հեքիաթների մեջ հարսանիքի վերջին երկնքից վայր է ընկնում։

Բազե դառած Ուխայը Քաջիկի խնձոր դառնալը որ տեսավ և իմացավ, որ նույն տանը հարսանիք կա, ինքն էլ աշըղ դառավ և սազը ձեռքին մտավ հարսանքատուն։ Աշըղին պատվով ընդունեցին և նստեցրին փեսայի դեմուդեմը։ Աշըղը լարեց սազը և սկսեց այնպիսի երգեր երգել և այնպիսի եղանակներ ածել, որ բոլորովին մոռացնել տվավ խնձորի ներկայությունը, միայն ինքը աչքը խնձորից չէր հեռացնում։ Վերջը երբ որ ուզում էին նրան մի լավ պարգև տալ, այսինքն նորահարսի գործած մի ջուխտ նախշուն գուլպա և մի ջուխտ կապիկ տրխառան, աշըղը վեր չառավ և խաղով հասկացրեց, որ յուր ուզածը միայն կարմիր խնձորն է...

Նորապեսան չուզեց աշըղի խաթրը կոտրել, վեր առավ խընձորը, որ տա իրան, բայց խնձորը վայր ընկավ ձեռքիցը և մի բուռը կորեկ դառնալով փռվեց հատակի վրա։ Ամենքը ետ-ետ քաշվեցան, որ տեսնեն այդ ինչ հրաշք էր, արդյոք խնձո՞րն էր, որ կորեկ դառավ, թե՞ խնձորը մի ման էր կորեկով լիքը, այդ միջոցին հանկարծ մի հավ լույս ընկավ և սկսեց կտկտալով հավաքել կորեկը։ Հենց որ բոլորն արդեն վերջացնելու վրա էր, կորեկի մեկն ասեղ դառավ և թռավ ցցվեց նորահարսի կրծկալի մեջ. հավն էլ իսկույն մի բարակ թել դառավ և թռավ անցավ ասեղի ծակը և ուզեց ասեղը յուր հետ թացնել, բայց ասեղը հաղթեց թելին և թռավ ընկավ կրակի շեղջի մեջ։ Թելը կրակումն այրվեց իսկույն, իսկ ասեղը դուրս թռավ և դարձավ մեր Քաջիկը և զարմացրեց հանդիսականներին։

Թեպետ Քաջիկն էլի Քաջիկ դառավ և ազատվեց Ուխայից, որ արդեն մոխիր էր դարձել, բայց ինքն էլ այրվեցավ բավականին և ոչ միայն յուր առաջվա գեղեցկությունն ու թարմությունը կորցրեց, այլև իր ձեռք բերած շնորհքը, յուր սովորած արհեստը։ Էլ չկարողացավ մի ուրիշ բան դառնալ. նրա բոլոր ասելիքները, բոլոր աղոթքներն ու թալիսմանները կորցրին իրանց զորությունը Ուխայի այրվելու հետ...

5

Շատ ցավում է մարդ, որ մի բան է կորցնում, թեկուզ այդ բանը շատ փոքր լինի։ Երեխան, երբ որ երազումը դանակ է գտնում և մյուս օրը տեսնում է, որ գտած դանակը չկա, սկսում է լաց լինել։ Ուրեմն ինչքան կցավեր Քաջիկը, որ ոչ թե երազումը գտած դանակ էր կորցրել, այլ յուր շնորհքը, յուր բոլոր ուսումը, այն էլ այնպիսի ուսում, որ ոչ ոք չգիտեր բացի իրանից։ Նա շատ դարդ արավ և վերջը մտածեց, որ գնա Ուխայի կնոջ մոտ, պատմե եղելությունը և նորից ձեռք բերե յուր գիտությունը։ Այս մտքով ճանապարհ ընկավ դեպի Ուխայի բնակարանը, բայց... էլ ոչինչ չկար... ամեն ինչ ցնդել էր օդի մեջ, ոչ մի հետք, ոչ մի նշան անգամ չէր մնացել։ Քաջիկին թվում էր, թե ուրեմն ամեն ինչ երազում էր տեսել, դանակը գտնող երեխայի նման, բայց չէ, նա աշկարա տեսնում էր յուր այրված կաշին, յուր չեչոտված և այլանդակված կերպն ու կերպարանքը։

Այսպես դարդ անելով՝ մեր Քաջիկը ճանապարհ ընկավ դեպի ուրիշ երկիր, որ գուցե կարողանա մի նոր արհեստ սովորել և յուր այրված կաշին առողջացնել։ Շատ գնաց թե քիչ, աստված գիտե, վերջը հասավ մի ծովեզրյա քաղաք։ Այս քաղաքումը նա լսեց, որ ծովումը մի կղզու վրա մի երևելի բժիշկ է կենում և նա ամեն ցավի դեղ գիտե, ամեն ցավ բժշկում է։ Նա շաբթենը երկու անգամ դուրս է գալիս յուր նավակով և ամեն հիվանդի ասում է, թե ինչով պետք է բժշկվի. շատ անգամ դեղերն էլ ինքն է տալիս և ոչինչ չի առնում ոչ դեղի և ոչ բժշկության համար։

Այս լուրը շատ ուրախացրեց Քաջիկին։ Մյուս օրը բժշկի դուրս գալու օրն էր։ Քաջիկը գնաց ծովափ և մյուս հիվանդների հետ կանգնեց։ Անթիվ հիվանդներ կային ոչ միայն մոտիկ տեղերից, այլև շատ հեռավոր երկրներից։ Շատերը մերձիմահ ընկած էին մահճերի մեջ, նրանց բերել էին պատգարակներով։ Բժիշկը դուրս եկավ ափը և ամենից առաջ դժվար հիվանդների մոտ գնաց, նրանց ամենքին էլ դեղ տալով, իսկույն ոտքի կանգնեցրեց և մի քանի խորհուրդ տալով ճանապարհ ձգեց. պատգարակով բերածները վերադարձան իրանց ոտքով։ Հետո մոտեցավ ավելի թեթև հիվանդներին և որին դեղ տավ, որին խորհուրդ. ամենից վերջը մոտեցավ Քաջիկին և ասաց.— Դու կգաս ինձ հետ, քեզ ինձ մոտ կբժշկեմ։ Այս խոսքն այնպես քաղցրությամբ և մտերմաբար ասաց, որ կարծես նրա մոտիկ բարեկամը և ծանոթը լիներ։ Քաջիկը բժշկի հետ նստեց նավակի մեջ և թիավարելով գնացին բժշկի բնակարանը։

Բժշկի կղզին մի փոքր կղզի էր, և բացի իրանից ոչ ոք չէր կենում այնտեղ։ Նա էլ ուներ Ուխայի նման լավ տուն ու տեղ, լավ այգի, բայց բոլորն էլ հասարակ, բնական, ինչպես սովորաբար լինում են աշխարհի լավ տներն ու այգիները, միայն ավելի գեղեցիկ, ավելի ճաշակով էր շինված։ Նրա պարտեզի մեջ ամեն ուեսակ խոտ ու ծաղիկ կար, այդ բույսերը աճում, ծաղկում էին և անուշահոտությամբ լցնում ամբողջ պարտեզը։ Նրանք ամենքն էլ պետքական էին, ամեն մինը մի քանի ցավի դեղ էր։ Նրա տունը զարդարած էր գեղեցիկ կահ-կարասիքով։ Մի մեծ սենյակ գրքերով էր լիքը. մի քանիսը՝ հազար ու մեկ տեսակ բաներով։ Այդտեղ կային զանազան հանքեր, չորացած բույսեր, հեղուկ և չորացրած դեղեր։

Բժիշկն սկսեց Քաջիկին հարցուփորձ անել, և երբ որ իմացավ նրա զլխի անցքը, ասաց.— Ուրեմն դու կմնաս ինձ մոտ, ես քեզ այն բաները կսովորեցնեմ, ինչ որ վայել է մարդուն գիտենալ. քո առաջվա սովորածդ մի անբնական և ցնորական բան է եղել և ցնորքի պես էլ ցնդել է օդի մեջ։ Ես քեզ կսովորեցնեմ բժշկություն, բայց առաջ քեզ կբժշկեմ, որ դու հավատաս իմ դեղերի զորությանը։ Այս ասելուց հետո Քաջիկին մերկացրեց և մի տեսակ յուղ քսեց նրա բոլոր մարմնին և երեսին։ Մյուս օրը մեր Քաջիկն այնպես էր, ինչպես մորից նոր ծնած. նա ոչ միայն բոլորովին լավացավ, առողջացավ, այլև ավելի թարմացավ, գեղեցկացավ, քան թե առաջ էր։

Բժիշկը, որքան որ նշանավոր բժիշկ էր, մի այնքան էլ շնորհալի դաստիարակ էր։ Ինչ որ ուրիշը մի տարումը հազիվ

կարող էր սովորեցնել, նա մի քանի օրումն էր սովորեցնում։ Քաջիկն էլ լավ աշակերտ էր և նրա ուշիմությունն էր, որ գրավում էր բժշկին, եթե ոչ՝ նա իզուր տեղը յուր անցավ գլուխը ցավի մեջ չէր գցիլ։ Տեսավ որ մի շատ շնորհալի տղա է Քաջիկը, ուզեց մի հիշատակ թողնել իրանից հետո, որ յուր տեղը բռնող մեկը լինի։ Քիչ ժամանակից հետո մեր Քաջիկը դարձավ բժշկի քաջ օգնականը, և ամեն անգամ, երբ բժիշկը դուրս էր գալիս ցամաք՝ հիվանդներին բժշկելու, Քաջիկին էլ հետն էր տանում, որ տեսնի, թե ո՞ր տեսակ հիվանդին ի՞նչ տեսակ դեղով է բժշկում։ Դժվա,՝ հիվանդներին բերում էին կղզին և իրանց մոտ էին բժշկում։ Դրանք այնպիսի հիվանդներ էին լինում, որոնց պետք էր լինում վիրահատություն։ Պատահում էր, որ շատերի փորը կտրում էին, ներսի վերքերը մաքրում, վրան դեղ ածում, փորը նորմեկանց կարում, առողջացնում։ Այսպես անցավ մի ժամանակ, շատն ու քիչը աստված գիտե, և Քաջիկը շատ բան սովորեց. բայց որքան շատ սովորեց, այնքան շատացավ սովորելու փափագը, և նրան այնպես էր թվում, որ դեռ ոչինչ չգիտե, որովհետև սկսեց իմանալ, թե ինչքան բաներ կան գիտենալու, որ ինքը դեռ չգիտե։

Բժիշկը որքան որ բարի մարդ էր և ամեն բան սովորեցնում էր Քաջիկին, բայց Քաջիկը կասկածում էր միշտ, թե նա էլի շատ բան պիտի գիտենա, բայց իրան չի հայտնում։ Ճշմարիտ, որ բժիշկը շատ բան ծածկում էր նրանից և հենց յուր անձը, յուր կյանքը, յուր ով լինելը նրանից ծածկած էր պահում, ոչ ոք չգիտեր նրա ով լինելը։ Նրա մի քանի սենյակները միշտ կողպված էին, և Քաջիկը չգիտեր ի՞նչ կա նրանցում և ինչո՞ւ է ծածկած պահում։ Քաջիկը յուր տարակույսները չէր հայտնում վարպետին, բայց ինքն էլ չէր բավականանում յուր սովորածով, միշտ փորձեր էր անում և շատ բժշկական գյուտեր էլ արավ, որոնց մասին հաշիվ չէր տալիս յուր վարպետին։ Վարժապետի ու աշակերտի այս անհարմար հարաբերությունը վերջ ստացավ հետևյալ դեպքով։

Մեկ անգամ մի հիվանդ բերին իրանց հետ ղզզի։ Բժիշկն այդ հիվանդին տարավ մի ջոկ տուն, դուռը ներսից կողպեց, որ Քաջիկը ներս չգնա։ Սրանով արդեն երևացրեց որ շատ բան ծածկում է Քաջիկից։ Քաջիկն այս տեսնելով, շատ նեղացավ, բայց և ուզեց տեսնել, թե ինչ է անում հիվանդին։ Թաքուն բարձրացավ տանիքի վրա, նայեց լուսամուտից և տեսավ, որ հիվանդի գլխի

սկավառակը վերցրել է, ուղեղի վրա մի ինչ որ բղոճ կա, ուզում է մաշով վերցնել, բայց բղոճը չանգերը մեկնում է ուղեղի փառի վրա, բժիշկը ետ է քաշում մաշան։ Ետ քաշելու՝ պատճառն այն էր, որ բժիշկն ուզում էր բղոճն այնպես վերցնել, որ նա յուր չանգերով ուղեղի փառը չպատռե։ Քաջիկը երբ որ տեսավ, թե շատ է չարչարվում բժիշկը, և հնար չունի անվնաս վերցնելու բղոճը, էլ չդիմացավ և բղավեց տան հերթիկից.

— Մաշան տաքացրո՞ւ, վարպե՞տ, մաշան տաքացրո՞ւ...

Այս որ լսեց բժիշկը, ունելին (մաշան) դեն գցեց և դուրս եկավ։ Քաջիկն էլ տանիքից իջավ և փախավ, կարծելով, թե վարպետը դուրս եկավ, որ բարկանա վրան կամ ծեծե։ Մի ժամու չափ թաք կացած մնաց Քաջիկը, հետո կրկին սրտապնդեց և բարձրացավ տանիքի վրա, որ տեսնե, ի՞նչ արավ վարպետը։ Նայեց տեսավ, որ վարպետը չկա, իսկ հիվանդը միևնույն դրության մեջ թմրած ընկած է։ Այս որ տեսավ, իջավ տանիքից և ներս գնաց, մաշան տաքացրեց և բղոճի միջքին դրավ թե չէ՝ բղոճը չանչերը ներս քաշեց, կուչ եկավ, և Քաջիկը վեր առավ դեն ձգեց։ Սկավառակը դրեց տեղը, դեղը քսեց, փաթաթեց, հոտ տվավ հիվանդի քթին, և նա իսկույն փռշտաց, վեր կացավ և ինքն իրան բոլորովին առողջ զգաց։

Հիվանդին բժշկելուց հետո՝ Քաջիկը գնաց յուր վարպետին փնտրելու։ Շատ ման եկավ, և ամբողջ կղզին տակնուվրա արավ, բայց վարպետին չգտավ։ Ետ դառնալիս Քաջիկը տեսավ մի արձանի վրա գրված հետևյալ ոտանավորը.

Մարդս ինչքան էլ լինի գիտնական,
Նրա ուղեղը մազի է նման,
Մի չնչին բանից մազը կըկտրի,
Եվ իմաստունը կըդառնա անբան։

Այս ոտանավորը կարդալուց հետո Քաջիկը մտածեց, թե չլինի՞ յուր վարպետը խելագարվել է և ինքն իրան ծովն է ձգել։ Եվ ով գիտե, գուցե հենց այդպես էլ էր։

10

Բժշկի անհայտանալուց հետո Քաջիկն ընկավ խոր տխրության մեջ։ Ինչ չարաբախտ աշակերտ եմ ես, ասում էր ինքն իրան. առաջին վարպետս կրակն ընկավ, սա էլ ընկավ ջուրը.

ով գիտե ինչպես կլինի իմ էլ վախճանն։ Ես էլ մահկանացու եմ, ես էլ պետք է մեռնիմ, բայց ինձանից հետո՝ էլ ո՞վ կիմանա, թե ո՛ր ցավն ինչպե՞ս էին բժշկում։ Եվ ի՞նչ հարկ թաքցնելու։ Գիտությունը թաքցնելը լավ բան չէ։ Արի ես աշակերտներ կհավաքեմ ամեն երկրից և ամենքին էլ բժշկություն կսովորեցնեմ...

Ճշմարիտ որ՝ Քաջիկի ժամանակ ով որ մի օգտակար բան գիտեր, ուրիշին չէր հայտնում, չէր սովորեցնում։ Ամեն մի բան գիտցող հայր յուր որդուն էր սովորեցնում յուր գիտցածը, նրան էր հայտնում յուր արհեստի գաղտնիքը և այն էլ այն ժամանակ, երբ որ մեռնելիս էր լինում։ Հանկարծ մեռնողներն ու ժառանգ չունեցողները իրանց գիտությունն էլ տանում էին մյուս աշխարհք...

Քաջիկը մնաց նույն կղզու վրա և շարունակեց յուր վարպետի գործը։ Նա բաց արավ կողպած սենյակները և նրանցում գտավ շատ բժշկարաններ և այն գրքերից սովորեց այն բոլոր բաները, ինչ որ չէր սովորեցրել նրան յուր վարպետը։ Հետո յուր մոտ ժողովեց ամեն կողմից շատ աշակերտներ և ամենքին էլ սովորեցրեց բժշկության արվեստը։ Նրա աշակերտներն էլ աշակերտներ ունեցան և այսպիսով բժշկության արվեստը տարածվեցավ ամեն տեղ։ Քաջիկի աշակերտները ամեն տեղ գովում էին իրանց վարպետին և ասում էին, որ նա կարող է մեռածներին էլ կենդանություն տալ, բայց այդ բանը չի անում, որովհետև աստծո հրամանին ընդդեմ է համարում։

Ճշմարիտ որ Քաջիկը գտել էր մեռածին կենդանություն տալու դեղը, բայց երկար ժամանակ գործ չէր դնում։ Վերջը, ասած է՝ «Մեծ մարդիկների սխալն էլ մեծ կլինի», նա փորձեց մի քանի փորձեր անել։ Դրա համար բարկացավ Գաբրիել հրեշտակը և մտքումը դրեց պատժել Քաջիկին։

Մեկ անգամ Քաջիկը ժողովեց յուր աշակերտներից ավելի հըմուտներին և ասաց նրանց.—Ես շատ եմ ծերացել, էլ առաջվա ուժը չունիմ։ Ուզում եմ վերանորոգվել, ջահիլանալ, բայց առանց ձեր օգնության կարող չեմ։ Ես մի դեղ կխմեմ և կթմրեմ կամ կմեռնեմ. դուք կկտրեք իմ փորս և կուրծքս, այսինչ դեղերով կլվանաք բոլոր փորոտիքս ու թոքերս, կվերցնեք և գլխիս սկավառակը, ուղեղիս խորշերը կմաքրեք այսինչ դեղերով և կսրսկեք այսինչ դեղերը. հետո կմիացնեք ամեն բան ինչպես գիտեք։ Երբ ամեն բան կվերջացնեք, ահա այս շիշի դեղը կածեք բերանս. սա մի կենարար հեղուկ է և իմ սեփական գյուտս է։ Երբ որ կկատարեք ճշմարտությամբ բոլոր իմ ասածներս, ես կհայտնեմ ձեզ այս հեղուկի ձեռք բերելու հնարը։

Աշակերտները պատրաստակամություն հայտնեցին և պատրաստեցին իրանց վիրահատության սուր-սուր դանակները։ Քաջիկը մի դեղ խմեց, թմրեց, աշակերտները ճարտարությամբ կատարեցին ամեն բան։ Մնաց վերջին կենարար հեղուկը, որ պիտի ածեին բերանը։ Գաբրիել հրեշտակը անհերևութապես կանգնած էր նրանց մոտ և նրանց արածը մի տեսակ օյինբազություն համարելով ծիծաղում էր։ Վերջին հեղուկը որ ուզեցան ածել Քաջիկի բերանը, հրեշտակը խփեց թևովը, և շիշը վայր ընկավ աշակերտի ձեռքիցը, և բոլոր հեղուկը վայր թափվեց ցնդեց, մի կաթիլ միայն ընկավ Քաջիկի բերանը։ Այդ մի կաթիլը կես շունչ և կես կյանք տվավ Քաջիկին, և նա կանչեց.

— Քիչ է՛լ, քիչ է՛լ...

Ուզում էր ասել «էլի մի քանի կաթիլ կաթեցրեք», չիմանալով, թե ինչ փորձանք է պատահել շշի գլխին։

Այսպես սահա խեղճ Քաջիկը մինչև այսօր էլ կա, ոչ մեռած և ոչ էլ կենդանի, և անդադար կանչում է— Քիչ է՛լ, քիչ է՛լ...

Այսպիսի մի վախճան է ունեցել և երևելի Լոխման հեքիմը։ Նա էլ յուր կյանքի վերջումը Քաջիկի նման մի փորձ է արել և մինչև այսօր կանչում է բարակ ձայնով— Բիր ուզ... բիր ուզ։ Բերանն ունքան բաց չի լինում, որ կարենա ասել—bir az, bir az, որ նշանակում է՝ մի քիչ, մի քիչ, այսինքն՝ մի քիչ էլ, մի քիչ էլ...

ԲԱՅԱԹԻՔ

Հրեշտակ ջան, քիչ է՛լ, քիչ է՛լ,
Խնդրում եմ քիչ է՛լ, քիչ է՛լ,
Կյանքիս թելը մի՛ կտրիլ,
Թող ապրիմ քիչ է՛լ, քիչ է՛լ...

Ասում եմ քիչ է՛լ, քիչ է՛լ,
Խնդրում եմ, քիչ է՛լ, քիչ է՛լ,

Քաջիկի օրն եմ ընկել,
Կանչում եմ՝ քիչ է՛լ, քիչ է՛լ...

1887

ՎԻՇԱՊԻՆ ՀԱՂԹՈՂԸ

(Գյուղական աշխարհից)

1

Ինչ որ ձեզ ասելու եմ սիրելի մանուկներ, պատահել է մեզանից՝ ով գիտե՝ քանի-քանի հազար տարի առաջ...

Եվ առհասարակ բոլոր հրաշալիքները, որ ես ձեզ պատմել եմ, պատահել են շատ վաղվանից, ո՛վ գիտե՝ ո՛ր ժամանակ։

Էլլադայի հրաշալի աշխարհում, մի բարձր սարի տակից բխում էր մի պատվական աղբյուր։ Որքա՜ն տարի է անցկացել, բայց այն աղբյուրը դեռ մինչև այսօր էլ կա և բխում է միևնույն տեղից։

Օրը մթնելու վրա էր, արեգակն անց էր կենում սարերի քամակը և իր վերջին ճառագայթներով ոսկեզօծում էր մեր ասած լեռնային աղբյուրը, երբ մի երիտասարդ՝ Բելլերոֆոն անունով, մոտեցավ նրան։ Երիտասարդը մի սանձ ուներ ձեռքին, մի սանձ անգին գոհարներ հաղցրած և ոսկենկար փորագրություններով զարդարած։ Նա աղբյուրի մոտ տեսավ մի ծերունի, նրա մոտ միջահասակ մի գյուղացի, մի սիրուն գանգուրիկ տղա և մի մատաղահաս աղջիկ, որ ուզում էր ջուր տանել աղբյուրից։ Երիտասարդը կանգ առավ այդտեղ և խմելու ջուր ուզեց աղջկանից։

— Ինչ հրաշալի ջուր է,— ասաց նա, երբ որ խմեց և ետ դարձրեց փարչը։ Աղջիկը փարչը ողողեց և նորից լցրեց։

— Սիրուն աղջիկ,— ասաց երիտասարդը,— խնդրում եմ ասա ինձ, այս աղբյուրը չունի՞ մի որևիցե անուն։

— Ինչպե՞ս չէ,— պատասխանեց ջահել աղջիկը,— սա Պիրենայի աղբյուրն է։ Ես իմ տատիկից լսել եմ, որ Պիրենան մի սիրուն կնիկ՝ է եղել։ Երբ որ նրա որդուն նետով սպանել է որսորդուհի Անահիտը, Պիրենան այնքան է լաց եղել, այնքան ողբացել, արտասվել, որ ինքը տեղն ու տեղը աղբյուր է կտրվել։ Սրանից է, որ այսքան անուշ է այս աղբյուրը. սրա կաթիլները որդեսեր մոր սրտի կաթիլներն են։

— Ես չէի կարծիլ երբեք, որ այսպիսի մի պայծառ, ուրախ և խաղացկուն աղբյուր արտասուքի՞ց լիներ առած իր ծագումը։ Սրա կարկաչյունն այնքան ուրախ է և այնքան գեղեցիկ է փայլում արևի տակ։ Ուրեմն սա ի՞նքն է Պիրենայի աղբյուրը։ Սիրո՛ւն աղջիկ, շատ շնորհակալ եմ տված տեղեկությանդ համար։ Ես շատ հեռու տեղից եմ գալիս, հենց սրան էի ման գալիս, սրան էի փնտրում։

Միջահասակ գյուղացին, որ իր կովը բերել էր ջուր տալու աղբյուրից, աչքերը հառած բոլոր ժամանակ Բելլերոֆոնին էր մտիկ տալիս և նրա ձեռքում եղած հրաշալի սանձին։

— Բարեկամ, երևում է, որ ձեր կողմերում լեռնային աղբյուրները մի չտեսնված հրաշալի բան են,— ասաց նա երիտասարդին,— և դրա համար է, որ ալարդ չի եկել և այնքան հեռու տեղից եկել ես Պիրենայի աղբյուրը գտնելու։ Եվ այդ ի՞նչ է պատահել քեզ, բարեկամ, երևի ձիդ կորցրել ես։ Սանձն ինչո՞ւ համար ես բռնել ձեռիդ։ Եվ ի՞նչ սիրուն զուրս ունի, ի՞նչ սիրուն զարդարանք։ Երկու շարք, բոլորն էլ անգին քարեր։ Եթե ձիդ էլ սանձիդ նման է եղել, դրան հարմար, ուրեմն շա՜տ ափսոս, եթե կորել է։

— Իմ ձին չի կորել,— ասաց երիտասարդը ժպտալով։— Ես դեռ նոր պիտի գտնեմ այն երևելի ձին, որ իմաստուն մարդկանց ասելով՝ պետք է որ ձեր կողմերումը լինի անպատճառ։ Բարեկամ, դու ինքդ լսած չկա՞ս, Պեգաս անունով թեավոր ձին հիմա էլ գալի՞ս է արդյոք Պիրենայի աղբյուրից ջուր խմելու, ինչպես որ սովորություն է ունեցել այն հին ժամանակները, երբ դեռ կենդանի է եղել քո ապուպապի ապուպապը։

Գյուղացին ուրախ-ուրախ խնդինդաց երիտասարդի այս ասածի վրա։

Իսկ դուք, իմ սիրելի ընթերցողներ, լսած կա՞ք արդյոք, որ Պեգաս անունով մի ձի է եղել, հրեղեն ձի, ձյունի նման ապխտակ,

արծաթափայլ շքեղ թևերով։ Նա կենալիս է եղել Հելիկոն սարի գագաթի վրա։ Պեգասը եղել է շատ կայտառ և աշխույժ, արագընթաց և թեթևագնաց. նա բարձրանալիս է եղել մինչև ամպերը և այնքան բարձր, ուր արծիվն անգամ չէր կարող հասնիլ։ Նրա նման էլի մի ուրիշ ձի չի եղել աշխարհքում. նա չի ունեցել իրա հատը։ Ոչ ոք նրան չի թամքած, ոչ ոք չի սանձած, չի պայտած, և նա շատ տարիներ ապրել է Հելիկոնի սարի գագաթին մենամենակ, ազատ և բախտավոր։

Եվ ինչքա՜ն ուրախ էր անցկացնում իր կյանքը թևավոր ձին։ Գիշերները քնում էր անուշ քնով, բաց-բացահար, ուրևիցե մի լեռնային հարթ տափարակի վրա, իսկ ցերեկվա մեծ մասն անց էր կացնում այս և այն կողմ թռչելով։ Պեգասը ոչ մի բանով նման չէր մեր ձիերին։ Մեկ էլ էիր տեսնում, անց էր կենում ահա մարդկանց գլխներով, թռած բա՜րձր, բարձր, և արևը պսպղում էր նրա արծաթափայլ թևերի վրա. այնպես էր թվում, թե նա մի մեծ, սպիտակ թռչուն է, մոլորվել է ամպերի մեջ և ճանապարհ է փնտրում դեպի պարզ և կապուտակ երկինքը։ Մարդ չէր ուզում աչքերը հեռացնել, երբ մտիկ էր տալիս և տեսնում, թե ինչպես է նա սուզվում բամբակի նման բարդ-բարդ կուտակված ամպերի մեջ։ Սուզվում է, անհետանում մի երկու րոպե, մեկ էլ տեսնում ես, որ թռչում է նա ամպերի մյուս կողմով։ Հավաքվում, կուտակվում են մրրկալից ամպեր, երկինքը սևանում է. գետնի վրա շաչում-շառաչում է փոթորիկը, բայց Պեգասն իսկի այնումը չի գցում. նրա հոգը չէ բնավ, սլանում, սավառնում է մի տեղից դեպի մյուսը, և հրաշեկ թեժ փայլակը լուսավորում էր նրան ծիրանագույն լույսով։ Թաքչում էր փայլակը, և Պեգասն ինհետանում էր թանձր խավարի մեջ։ Մարդկանց մեջ այսպիսի մի հավատ կար որ իբր թե՝ ով որ արժանանար մեկ անգամ նայելու այս հրաշալի տեսարանին, այնուհետև նա ամբողջ օրերով կկգար մի ա...ան ձին հոգեկան ուրախ տրամադրություն։

Ամառը՝ լավ եղանակ ունեցող օրերին, Պեգասն իջնում էր ամուր գետնի վրա և իր արծաթափայլ թևերը ծալելով՝ չափ ընկնում դես ու դեն, և սար ու ձոր ոտքի տակ տալիս. և այդ անում էր հենց այնպես, իր զվարճության համար։ Ամենից շատ տեսել են նրան Պիրենայի աղբյուրի մոտ, ուր նա անհագությամբ խմելիս է եղել նույն աղբյուրի ջրից կամ թավալելիս փափուկ կանաչկուտի վրա։ Պատահել է և այնպես, որ Պեգասը գալիս է եղել

մի քանի ծաղիկ սպիտակ կամ կարմիր առվույտից, նրանցից էլ ընտրելով ավելի քաղցրերը։ (Նա շատ զգույշ է եղել արածելիս, շատ չմահաման, ամեն խոտ չէր արածիլ)։

Մեղանից մի քանի հարյուր տարի առաջ շատ մարդիկ էին գնում Պիրենայի աղբյուրի մոտ և շատ անգամ, այն հուսով, որ ինչպես լինի՝ գոնե մեկ անգամ նայեն Պեգասի վրա։ Իսկ գնացողներն ավելի ջահիլ մարդիկ էին լինում՝ երիտասարդ և պատանի, որոնք ամենից շատ էին հավատում, թե կան թևավոր և հրեղեն ձիաներ։ Բայց վերջին ժամանակները Պեգասը շատ հազիվ էր երևում։ Աղբյուրից մի կես ժամու չափ հեռու եղած գյուղացիք իրանց օրումը տեսած չէին Պեգասին և ոչ էլ հավատում էին, թե կարող է լինել այնպիսի մի հրաշալի ձի։ Այժմ Բելլերոֆոնի հետ խոսող գյուղացին նույն չհավատացողներից էր, սրա համար էլ շատ խնդաց, երբ ասացին, որ իբր թե Պեգասը գալիս է Պիրենայի աղբյուրից ջուր խմում։

— Ա՛յ քեզ բա՜ն... ինչե՞ր են հնարել,— բացականչեց նա, տափակ քիթը վեր ցցելով և սկսեց քրքջալ։— Պեգա՜ս ձի, և այն էլ թևավո՜ր... Բարեկամ, երևում է, որ խելքդ կորցրել ես,— ասաց նա երիտասարդին։— Թևերն ի՞նչ հարկավոր են ձիուն։ Մի՞թե թևավոր ձին ավելի լավ բեռը կկրե։ Ճշմարիտ, էլ պայտելու ծախս չէր ունենալ նրա տերը, բայց ինչ օգուտ դրանից։ Կերթար գոմը, որ Պեգասին դուրս քաշեր այնտեղից, բայց մեկ էլ տեսար քո Պեգասդ... Թը՜ռռռ... այսօր ես կորել թե էգուց։ Դե հիմա հետևիցն ընկիր, տեսնեմ որտե՞ղ պիտի գտնես նրան։ Մի օր կհեծնի, որ երթա ջաղաց, մեկ էլ տեսար քո Պեգասդ թը՛ռ, թը՛ռ-թը՛ռ... դեպի երկինք, և այնտեղից իր տիրոջը թը՜րրա՜խկ... դեպի գետին, այն է գլխիվայր, կլտիպո՜ւղ, գլըխկոնծի... Չէ, չէ, եղբայր, մի հավատար, պեգաս-մեգաս չկա։ Աշխարհքումս թըռչնաձի չի եղել և չի էլ լինիլ երբեք։

— Ես պատճառ ունիմ բոլորովին ուրիշ կերպ մտածելու,— ասաց երիտասարդը առանց վրդովվելու, և իսկույն երեսը դարձրեց դեպի ծերունին, որ կանգնած էր նրանից երկու քայլաչափ հեռու և իր գավազանի վրա հենված, ուշադրությամբ ականջ էր դնում նրանց ասածներին. նա մինչև անգամ դրա համար գլուխը փոքր-ինչ թեքել էր դեպի նրանց և ձեռքով ականջի մի կողմը ծածկել վահանի պես, որ լսել կարողանա։ Վերջին քսան տարին ծերունին համարյա թե խլացել էր բոլորովին։

— Դու ի՞նչ կասես, պապի՛,— հարցրեց երիտասարդը.— դու քո ջահել ժամանակդ անպատճառ տեսած կլինես թևավոր ձին և շատ անգամ։

— Ես, հոգի ջան, հիշողությունս կորցրել եմ բոլորովին։ Միտս է գալիս միայն, որ ջահել ժամանակս հավատում էի, որ կա թևավոր ձի. այսպես հավատում էին և նույն ժամանակի բոլոր ջահիլները։ Իսկ հիմա միտք էլ չի մնացել գլխումս, էլ իմ ի՞նչ ժամանակն է թևավոր ձիու մասին մտածելու։ Եթե պատահած էլ լինիմ Պեգասին, այդ հիմա ով գիտե՝ քանի՞ ժամանակվա բան կլինի, վաղո՜ւց, շատ վաղուց կլինիմ պատահած։ Իսկ հիմա, ուղիղն ասեմ, դժվարանում եմ հավատալ, որ երբևիցե տեսած էլ լինիմ Պեգասին։ Միտս է գալիս հրազի նման, որ երեխա ժամանակս ահա այստեղ՝ աղբյուրի մոտ՝ մեկ անգամ կարծես թե նկատեցի ձիու հետք։ Կարելի է թե Պեգասի հետքը լիներ կամ ով գիտե՝ գուցե նրա հետքը չէր, այլ մի ուրիշ ձիու։

— Իսկ դո՞ւ, սիրուն աղջիկ,— հարցրեց ջահիլ աղջկանը, որ կուժն ուսին՝ կանգնած էր նրանց կշտին ու ականջ էր դնում ծերունու ասածներին,— դու անպատճառ տեսած կլինիս. այո՛, դու այդպիսի սուր-սուր աչքեր ունիս։

— Ինձ այնպես է թվում, որ մեկ անգամ տեսած պիտի լինիմ նրան,— պատասխանեց ջահիլ աղջիկը՝ ժպտալով և կարմրելով։— Ուղիղ իմ գլխի վրայով՝ բա՜րձր, շատ բարձր՝ օդի մեջ սավառնում էր մի բան. թե ասեմ Պեգասն էր, Պեգասը չէր. թե ասեմ մի ահագին սպիտակ թռչուն էր, թռչուն չէր։ Բայց մի ուրիշ անգամ էլի եկա այստեղ կուժն ուսիս և հանկարծ ձիու վրնջյուն լսեցի։ Սիրտս այնպես ուրախացավ, որ չեմ կարող ասել. այնպես մի քաղցր, այնպես մի աշխույժ վրնջյուն էր։ Բայց այնուամենայնիվ ես վախեցա, չգիտեմ ինչից, և վազեցի տուն՝ առանց ջրի, դատարկ կժով։

— Ափսո՜ս,— ասաց պատանին և երեսը դարձրեց դեպի փոքրիկ տղան, որ նրա մոտ կանգնած էր և նայում էր Բելլերոֆոնի վրա վարդանման բերանը լայն բաց արած։ Մանուկները միշտ այդպես են նայում անծանոթ մարդկանց վրա։

— Դու ի՞նչ կասես, սիրուն մանկիկ,— հարցրեց Բելլերոֆոնը ծիծաղելով և շոյելով երեխայի գանգրիկ մազերը։— Դու շատ անգամ տեսած կլինիս այստեղ թևավոր ձին։

— Շա՜տ անգամ, այո՛,— վստահաբար պատասխանեց մանուկը։— Հեռու չէ, հենց երեկ, ես տեսա նրան. առաջ էլ ես միշտ տեսել եմ նրան։

— Ապրի՜ս, ապրի՜ս,— բացականչեց երիտասարդը, մոտ քաշելով երեխային.— Հապա՜, եղբայր, մեկ լավ մոտեցիր և պատմիր ինձ, տեսնեմ ինչպե՞ս ես տեսել։

— Ահա թե ինչպես։ Մեկ անգամ գալիս եմ այստեղ, աղբյուրը, որ նավակներ ձգեմ ջրի վրա և նախշուն քարեր հավաքեմ։ Շատ անգամ աչքս ջրի մեջ եմ գցում, մտիկ տալիս և տեսնում եմ նրանում, որ երկնքովը թռչում է մեկ սպիտակ թևավոր ձի։ Սիրտս միշտ ուզում է, որ նա իջնի երկրի վրա, ինձ վերցնի հետը և տանե լուսնի վրա դնե։ Բայց հենց որ վեր եմ կենում կանգնում, որ ուղղակի ձիուն մտիկ տամ, մեկ էլ տեսնում եմ՝ էլ ձի չկա՜, անհետանում է իսկույն ամպերի մեջ։

Բելլերոֆոնն ավելի երեխային հավատաց, որ թևավոր Պեգասի պատկերը տեսել էր աղբյուրի մեջ անդրադարձած, մեկ էլ մատաղահաս աղջկանը, որ լսել էր Պեղասի քաղցր ձայնով վրնջալը, ու մեկ էլ ծերունուն, բայց ոչ դյուղացուն, որ միայն լծկան ու բեռնակիր ձիանների գոյությանն էր հավատում և ոչ թևավոր։

2

Բելլերոֆոնը մի քանի օր շարունակ թափառեց Պիրենայի աղբյուրի մոտերքում և թևավոր ձիու հետքը պահեց։ Նայում էր փոփոխակի՝ երբեմն երկնքին և երբեմն ջրին՝ միշտ հուսալով, որ մեկնումեկում կտեսնի կամ իրան՝ Պեգասին և կամ նրա անդրադարձությունը։ Թանկագին սանձը միշտ պատրաստ ուներ ձեռին։ Մոտակա գյուղացիք շատ անգամ իրանց տավարը ջուր տալու բերելիս ծիծաղում էին երիտասարդի վրա և երբեմն նրան խրատ էին տալիս, ասելով. «Այդ ի՞նչ դատարկաշրջիկ տղա ես դու. զուր ժամանակ ես անցկացնում միայն. ավելի լավ չէ՞ր լինել, որ մի որևիցե գործով զբաղվեիր։ Ջի՞ ես ուզում առնել,— առ, մենք ծախու ձիաներ շատ ունինք»։ Երբ որ Բելլերոֆոնը չէր ընդունում նրանց ասածը, նրանք առաջարկում էին, որ ծախե իր սանձը։

Գյուղի մանուկները նրան խենթ էին համարում, ծաղրում

էին, փեշերից ձգձգում էին, ծամածռություններ էին անում, զանազան փուտ անուններ էին կպցնում։ Երեխայքն իրանց ծաղրածությունը մինչև այնտեղ հասցրին, որ նրանցից մեկը, հինգ տարեկան մի լակոտ, ինքն իրան Պեգաս ձևացրեց, սկսեց լոք-լոք անել, ոստոռտալ, վազվզել, այս ու այն կողմ չափ ընկնել, տրտինգ տալ, ծառս կենալ, կոները թափահարելով, իբր թե իր կոներն էլ Պեգասի թևերն են, իսկ նրանից մեծ մի ուրիշ երեխա մի փունջ խոտ ձեռին՝ մոտենում էր նրան և անասնական բացականչություններով մոտ կանչում Պեգասին։ Բոլոր այս ծաղրածությունները սարքել էին, որ տնազ անեն Բելլերոֆոնին և ջգրացնեն նրան։ Բայց նրանց հակառակ՝ այն գանգուրիկ և կայտառ մանուկը, որին առաջին օրը հանդիպեց Բելլերոֆոնը, չէր հետևում նրանց օրինակին և շատ սիրում էր Բելլերոֆոնին։ Նա լուռ ու մունջ նստում էր Բելլերոֆոնի մոտ, լուռ ու մունջ նայում ջրի վրա անընդհատ, սրրտանց հավատալով, որ իր տեսածն ուղիղ էր։ Երեխայի այս հաստատուն հավատը մեծ հույս էր տալիս և խրախուսում Բելլերոֆոնին։

Բայց, դուք, սիրելի ընթերցողներս, գուցե կհարցնեք ինձ, թե Բելլերոֆոնն ինչո՞ւ համար էր ման գալիս Պեգասին, ի՞նչ առիթ ուներ, ո՞վ էր ստիպում նրան։ Այս մի երկար պատմություն է, և ես կաշխատեմ պատմել ձեզ՝ մինչև Պեգասի երևալը։

Եթե Բելլերոֆոնի բոլոր արկածները պատմեմ նրա մանկությունից սկսած, այդ շատ երկար կլինի և ձեզ ձանձրալի, մեր քաջ երիտասարդի կյանքից ես կպատմեմ ձեզ միայն մեկ կտոր։

Աշխարհի այն մասում, որ կոչվում է Ասիա, մի զարհուրելի հրեշ էր լույս ընկել, որին ասում էին Քիմեռ կամ Խիմերա. մենք կասենք Օշափ, որ լսած կլինիք շատ անգամ։ Բայց այս հրեշը մի ուրիշ տեսակ վիշապ է լինում։ Թե որքան վնաս էր հասցնում մարդկանց Օշափը, անկարելի էր հաշվել։ Նա մի այնպիսի զարհուրելի բան է լինում, որ նրա նման մի ուրիշ բան չենք կարող ցույց տալ աշխարհիս երեսին։ Նա լինում է օձի մարմնով, մեծ վիշապ-օձի նման, ունենում է երեք գլուխ՝ մեկն առյուծի, մեկն այծի, և մեկն էլ օձի։ Նրա բաց ռեխներից՝ երեքիցն էլ, կրակ էր դուրս թափվում։ Այս հրեշը թեպետ թևեր չուներ, բայց վազում էր առյուծի նման, ցատկում էր այծի նման և սողում օձի նման, ուրեմն նա շարժվում էր միանգամից երեք կենդանու արագությամբ, որ ասել է՝ ավելի արագ, քան թե թռչունը։

Թե որքան վնաս էր հասցնում այս զզվելի արարածը, ինչպես ասացի, անկարելի է հաշվել։ Երեք երախներից կրակ էր դուրս թռչում և բոլոր անտառները խանձխնձում, արտերն այրում, ամբողջ գյուղեր՝ իրանց պարտեզներով, այգիներով, ամբարներով, կալ ու մարագով, մի խոսքով՝ բոլոր ունեցած-չունեցածով մոխիր էր դարձնում։ Բաց էր անում երեք երախները և սկսում էր լափել ամեն պատահած բան. մարդ, կենդանի և թռչուն։ Լափելուց հետո շնթռկում, մրափում էր, մինչև ողջ-ողջ կուլ տված ողորմելի կենդանիները կմարսվեին նրա թոնրանման ստամոքսում։

Մեկ անգամ, պատահմամբ, Բելլերոֆոնը գալիս է Ասիս, այնտեղի թագավորին տեսնելու, հենց այն ժամանակ, երբ որ ամբողջ ժողովուրդը հեծում, տնքում էր Օշափի հասցրած վնասներից։ Այդ երկրի թագավորի անունը Հոբաթ էր, նա կենում էր Հայաստանին սահմանակից մի երկրում, որ ասվում էր Լիկիա։ Բելլերոֆոնը մի շատ անվեհեր երիտասարդ էր։ Նա իրան անձը նվիրել էր քաջագործության և այնպիսի մեծագործությունների, որոնցով կարող էր օգուտ բերել մարդկությանը, ծառայել մարդկանց բախտավորությանը։ Այն ժամանակներում երիտասարդ մարդկանց միակ փառք ու պատիվն այն էր, որ մասնակցեն բոլոր պատերազմներին. կամ կռվելով հայրենիքի թշնամու դեմ, կամ չար դևերի, զարհուրելի վիշապների և վերջապես վայրենի գազանների դեմ, այս էլ այն ժամանակ, երբ ուրիշ ավելի չար բան չէր լինում, որի դեմ կռվեին։ Հոբաթ թագավորը երբ որ Բելլերոֆոնին տեսավ, իսկույն նշմարեց, որ իր հյուրն անվեհեր երիտասարդ է, սրա համար էլ ահա առաջարկեց նրան, որ գտնի չար Օշափին և սպանե։ Ոչ ոք սիրտ չէր անում ձեռք զարկել այսպիսի մի քաջագործության, որովհետև ամենքն էլ նրա միայն անունը լսելով՝ դողում էին, իսկ եթե չսպանեին, նա պիտի ամբողջ Լիկիան անշեն անապատ դարձներ։ Բելլերոֆոնը թագավորի այս առաջարկության վրա մի բոպե մտածության մեջ ընկավ, բայց հետո վճռական խոսք տվավ թագավորին, որ կերթա, կսպանե Օշափին, իսկ եթե չկարողանա, իր ոսկորները նրա մոտ կթողնե։

Լսած լինելով, որ երեքգլխանի Օշափը շատ արագաշարժ և ճարպիկ է, այն մտքին եկավ, որ անկարելի է այնպիսի մի հրեշի դեմ հետևակ կռվել, այլ դրա համար հարկավոր է անպատ-

ճառ ձեռք բերել ամենաքաջ և ամենաղորեղ ձի։ Իսկ այս կողմից աշխարհիս երեսին ի՞նչ ձի կարող է հավասարվել Պեգասին, որ համ ոտքեր ուներ, համ թևեր և օդի մեջ ավելի ևս արագ էր թռչում, քան վազում երկրի երեսին։ Ինչ ասել կուզի, որ Բելլերոֆոնին ամեն կողմից սկսեցին հավատացնել, որ թևավոր ձի չկա ոչ մի տեղ, և ինչ որ պատմում են թևավոր ձիերի մասին, բոլորն էլ դատարկ զառանցանքներ են միայն և անմիտ ցնորքներ։

Բայց այնուամենայնիվ, Բելլերոֆոնը հաստատ համոզված էր, որ Պեգասը հնարովի բան չէ, այլ նա կա և ուշ թե վաղ՝ իր ձեռքը կընկնի, որ նրան կսանձի ինքը և վրան հեծնելով՝ կերթա Օշափի հետ կռվելու։

Այս նպատակով ահա նա Լիկիայից ճանապարհ ընկավ դեպի Էլլադա, ուր և ձեռք բերավ իր ձեռքում եղած թանկագին սանձը։ Այդ սանձը աղոթած էր, այսինքն՝ կախարդած, դյութած էր։ Հենց որ կարողանար սանձի ոսկեզօծ երասանը Պեգասի բերանը դնել, թևավոր ձին իսկույն կհպատակեր նրան, նա էլ իսկույն կթռչեր, վրան կնստեր և որ կողմ ուզենար, այն կողմը կքշեր։

Ինչ ասել կուզի, որ քաջ երիտասարդը հուզված սրտով սպասում ու մնում էր, թե երբ կգա արդյոք Պեգասը Պիրենայի աղբյուրից ջուր խմելու։ Նա շատ էր մտատանջվում, թե միգուցե Հոբաթ թագավորը կարծիք տաներ, թե նա փախել է՝ վախենալով Օշափից։ Շատ էր վշտանում, երբ որ միտն էր բերում, թե ինչ ահագին վնասներ է հասցնում երկրին այն զարհուրելի հրեշը, իսկ ինքը, փոխանակ նրա դեմ պատերազմելու, ձեռները ծոցին՝ նստել է սառնորակ աղբյուրի մոտ և նայում է, թե ինչպես է բխում նա սարից, թափվում ավազանի մեջ և նրա հատակը ծածկում պսպղուն ավազի շերտով։ Լսում էր, որ իբր թե վերջին տարիներում Պեգասը շատ հազիվ էր երևում աղբյուրի մոտ և թե նա իր բոլոր կյանքում միայն մեկ անգամ է երևացել մարդու։ Նա շատ էր վախենում, թե միգուցե այստեղ սպասելով, մինչև ծերության հասնի, երբ այլևս չի կարողանալ տիրել թևավոր ձիուն, եթե գալու էլ լինի, որովհետև ծերությունից իր ձեռքերն արդեն թուլացած կլինին, քաջությունը կորցրած։ Ավա՜ղ, ինչքա՜ն տխուր ու դատարկ է անցնում ժամանակը, երբ որ եռանդալից երիտասարդությունը ձգտում է հասնել իր ցանկացած նպատակին, երևակայած փառք ու պատվին։ Համբերել և սպասել շա՜տ ծանր է։ Մեր կյանքը՝ առանց այս էլ՝ այնքան կարճ է, բայց

էլի ինչքան դատարկ տարիներ ենք անցկացնում համբերության շնորհիվ։

Բելլերոֆոնի բախտից՝ աղբյուրի մոտ եղած գանգուրիկ երեխան այնպես կպել էր նրան, որ մոտիցը չէր հեռանում համարյա։ Ամեն բարիլուսի Բելլերոֆոնին ասում էր ուրախ-ուրախ։— Ի՞նչ ես կարծում Բելլերոֆոն, շա՜տ կարելի է, որ այսօր մենք Պեգասին տեսնե՞նք։

Եվ այս «շատ կարելին» էր, որ հուսադրում էր Բելլերոֆոնին։ Եթե այս հույսը չլիներ, նա վաղուց արդեն վերադարձած կլիներ Լիկիա և գնացած կռվելու Օշափի հետ առանց թևավոր ձիու օգնության։ Ինչ ասել կուզի, որ հրեշը մի շնչով կայրեր և մի քանի վայրկյանի մեջ կլափեր նրան։

3

Մի առավոտ գանգուրիկ տղան սկսեց Պեգասի մասին խոսել սովորականից դուրս անկասկած սրտով։

— Չգիտեմ ինչու,— ասաց նա ուրախությունից թռչկոտելով,— ինձ այնպես է թվում, որ այսօր մենք անպատճառ կտեսնենք Պեգասին։

Ամբողջ օրը մանուկը չհեռացավ Բելլերոֆոնից. նրանք միասին հաց կերան, միասին խմեցին աղբյուրից և կեսօրից հետո նստեցին շվաքումը, ջրի ափին։ Բելլերոֆոնը մի ձեռքն իր փոքրիկ բարեկամի ուսին դրած, իսկ մյուսն իր ծնոտի տակ դիմհար տված, խորասուզված մտքով՝ մտիկ էր տալիս ջրի վրա կռացած պառաված ծառերին և նրանց ճղների վրա կախտաված վայրենի խաղողի ճութերին։ Իսկ մանուկն անընդհատ նայում էր միայն ջրին, բայց շատ տխուր, որովհետև շատ էր ցավում, որ Բելլերոֆոնի երկար օրերով սպասելն ապարդյուն է անցնում։ Սրա վրա շատ տխրեց երեխան, մինչև այն աստիճան, որ հանկարծ լաց եղավ հեկեկալով։ Նրա արտասուքներից մի քանի կաթիլ գլորվելով՝ ընկան աղբյուրի մեջ և խառնվեցան Պիրենայի արտասուքների հետ։

Հանկարծ Բելլերոֆոնն զգաց, որ երեխայի թաթիկը, որ իր

ձեռքումն էր, դողդողում է։ Եվ տղան շշնջաց հանկարծ մանկական շշնջյունով։

— Բելլերոֆո՛ն, Բելլերոֆո՛ն, նայիր, մեկ նայիր ջրի վրա...

Բելլերոֆոնը կռացավ շուտով, նայեց հայելու նման պարզ աղբյուրի՝ երեսին, և այնպես թվաց, որ տեսնում է նրանում պատկերացած մի ահագին, սպիտակ թռչնի կերպարանք. թռչում է բա՜րձր, շատ բարձր, և արեգակը շողշողում է նրա արծաթափայլ թևերի վրա։

— Ի՜նչ հրաշալի, ի՜նչ փառավոր թռչուն է,— բացականչեց նա։— Եվ ինչքան մեծ է։ Եվ գիտե՞ս, շատ էլ հեռու չպետք է լինի. սավառնում է ամպերից ցած։

— Ես դողում եմ ամբողջ մարմնով,— ասաց մանուկը։— Վախենում եմ դեպի վեր նայել։ Ինչքա՜ն հրաշալի է։ Բայց ես չեմ վստահում ուղղակի նրա վրա նայել, այլ միայն ջրի միջով։ Մի՞թե չես տեսնում, Բելլերոֆոն, որ սա թռչուն չէ, այլ թևավոր ձի, նույն ինքը Պեգասն է սա։

Բելլերոֆոնի սիրտը գնաց։ Նայեց դեպի վեր, բայց չկարողացավ լավ նշմարել, թե նա ինչ է արդյոք, թռչո՞ւն, թե ձի, որովհետև նա անհայտացավ բարդ-բարդ կուտակված սպիտակ ամպերի մեջ։ Մի բոպե չանցած թռչողի կերպարանքը կրկին երևաց. նա իջնում էր դեպի գետին ալեծածան թռիչքով։ Այս միջոցին Բելլերոֆոնն իսկույն ճանկը ձգեց տղային և նրա հետ թաք կացավ իր խիտ թփերի մեջ, որոնցով՝ պարսպի պես՝ շրջապատված էր աղբյուրը։ Նա Պեգասից երկյուղ չուներ, այլ վախենում էր միայն, թե միգուցե իրանց նկատե և սկսե ավելի բարձրանալ դեպի վեր։ Այս թռչողը ճշմարիտ որ թևավոր ձին էր։ Երկար սպասեցին նրան, և ահա վերջապես նա ուզեց իր ծարավը հագեցնել Պիրենայի աղբյուրից։

Օդեղեն հյուրն սկսեց իջնել ավելի ցածր և ցածր։ Թռչելիս ավելի մեծ շրջաններ և պտույտներ էր անում, ինչպես աղավնին է անում թռչելու պատրաստվելիս։ Որքան ցածրանում էր, այնքան փոքրացնում էր իր շրջանները, մինչև՝ վերջապես շփվեց գետնին՝ փափուկ բմբլի պես։ Նա իր չորս ոտները դրավ ավազի վրա այնքան մեղմ և անզգալի կերպով, որ ոչ մի խոտ չխշխշաց։ Հրաշալի թևավոր ձին մեկնեց իր վեհապանծ ղլուխը և սկսեց խմել։ Նա մեծ զմայլմունքով էր ներս ծծում բերանով պայծառ հեղուկը, ուրախ փռնչում ու զինքը թափահարում. խմում է,

խմում, մեկ էլ հանկարծ կանգ առնում։ Ոչ գետնի վրա, ոչ ամպերում և ոչ մի ուրիշ տեղ Պեգասը չէր սիրում այնպես հագեցնել իր ծարավը, ինչպես Պիրենայի աղբյուրից։ Կուշտ խմելուց հետո, թևավոր ձին հոտավետ առվույտներից մի քանի ծաղիկ գչլեց, բայց միայն գչլեց ու ծամծմեց և ոչ թե արածեց կամ կերավ. նրա արածելիքը Հելիկոն սարի բուն գագաթի վրա եղած անուշահոտ խոտերն էին։

Վերջապես, երբ որ աղբյուրի պարզ ջրիցն այնքան խմեց, որ կշտացավ, մի քիչ խաղ արավ առվույտի ծաղիկների հետ այնուհետև խայտալ սկսեց կշտացած երեխայի նման։ Սկսեց վազվզել ետ ու առաջ, տրտինգ տալ, կամացուկ վրնջալ։ Մեկ այս կողմն էր չափ ընկնում, մեկ այն, մեկ էլ թռչում էր դեպի վեր, մի քիչ պտտվում և նորից իջնում ու վազվզում փափուկ կանաչկուտի վրա։ Բելլերոֆոնը՝ տղայի ձեռքից բռնած՝ թփուտի միջից նայում էր այս տեսարանի վրա, որի պես գեղեցիկ բան նա իր կյանքումը տեսած չէր։ Պեգասի ողջ կազմվածքը, նրա բարակ-բարակ ոտները, նրա բարեկազմ գլուխը, թավամազ պոչը, ալեծածան բաշը, ձյունի նման սպիտակ, արծաթի պես փայլուն, այս բոլորը հիացրել, զարմացրել էին Բելլերոֆոնին։ Իսկ նրա խելոք և վառվռուն աչքերի նմանը ոչ մի ձիում տեսած չէր։ Նրան հանցանք էր թվում այսպիսի մի հիանալի ձիու վրա թամբ դնելը, և առավել ևս՝ նրա վրա ցատկել նստելը։

Մեկ թե երկու անգամ Պեգասը կարծես թե թալկացավ, թուլացավ. կանգնում էր հանկարծ, ականջները խլշում, հոտ քաշում, գլուխն այս ու այն կողմ ձգում, կարծես զգալով, որ իր մոտ դարանամուտ եղած մարդիկ կան։ Բայց երբ որ չտեսավ և չլսեց ոչինչ վտանգավոր բան, նորից սկսեց իր առաջվան խաղերը։

Բայց ահա որպես թե հոգնեց վերջապես, թևերը ծալեց և նստեց փափուկ կանաչկուտի վրա։ Թեթև օդի զավակ լինելով՝ նա չէր կարողանում քիչ ժամանակ հանգիստ կենալ, շրջվեց քամակի վրա և ոտքերը վեր ցցած՝ սկսեց սահել մեջքի վրա։ Ինքը թևավոր, մեն-մենակ ամբողջ աշխարհում. անհիշելի ժամանակներից ի վեր ապրած, ոչ մի ընկեր չունեցած երբեք, այժմ զվարճանում էր ինչպես բոլոր էակներից ամենաբախտավորը։ Սա մի հետաքրքրական տեսարան չէ՞ր միթե։ Բելլերոֆոնն ու մանչուկը չէին կարողանում աչքերը Պեգասից հեռացնել։ Նրանք մասամբ

հաճույքից և մասամբ երկյուղից շունչները պահել էին, ըստ որում աննշան մի շշուկից ու շշունչից կխրտներ Պեգասը և նետի պես կալանար դեպի երկինք։ Բավականաչափ թավալգլոր գալուց հետո՝ վերջապես Պեգասը շտկվեց և հասարակ ձիու պես դանդաղ կերպով առաջին ոտները ձգեց, որ վեր կենա, Բելլերոֆոնն իսկույն գլխի ընկավ, որ ձին վեր կենալուն պես՝ պիտի ճանապարհ ընկնի, նա մի ակնթարթում դուրս ընավ թփուտից և մի ճարպիկ ոստյունով թռավ նստեց ձիու քամակին։

Այո՛, նստեց թևավո՛ր ձիու վրա...

Երևակայել պետք է, թե ինչպես վեր թռավ Պեգասը, իր կյանքում առաջին անգամ զգալով իր վրա հողեղեն մարդու ծանրություն։ Վեր թռչել եմ ասում, բայց չկարծեք, որ մի հասարակ ոստյուն էր, որ արավ Պեգասը։ Բելլերոֆոնը դեռ խելքը գլուխը չէր հավաքել, որ Պեգասի հետ արդեն գետնից բարձրացել էին մինչև հինգ հարյուր ոտնաչափ և սլանում էին նետի արագությամբ։ Թևավոր ձին նրա տակին փռնչում էր և երկյուղից ու զայրույթից դողում, սարսափում։ Թռան գնացին միշտ բա՛րձր ու բա՛րձր, մինչև հասան ամպերից օդի ցուրտ շերտերը, որոնց վրա մի քանի րոպե առաջ Բելլերոֆոնը գետնին պառկած նայում էր և սքանչանում։ Այդ բարձրությունից ձին ուղղակի ցած նետեց ինքզինքը, որ մի ժայռի կամ ուրիշ բաների դիպչելով ջարդուխուրդ անի իր հեծյալին։ Բայց այսպիսի բան չպատահեց. Բելլերոֆոնն այնպես չէր կպել նրան, որ բաց թողներ կամ վայր ընկներ. բայց սրա վրա ի՞նչ բաներ արավ չարացած թևավոր ձին, ի՞նչ ճարպիկություններ բանեցրեց. ցիրկում խաղացող ակրոբատներն այն չեն անում, ինչ որ մեր Պեգասն արավ օդի մեջ. ի՞նչ վեր-վեր թռչել, ի՞նչ օրորվել, ի՞նչ ոքացիք շպռտոտել դես ու դեն, ինչ տրտինգներ տալ։ Գլուխը գցում էր առաջի ոտների արանքը, թևերը վեր ցցում և սկսում, մեկ թե երկու, գլուխկոնծի տալ կապիկի նման։ Շուռ էր գալիս մեջքի վրա և ոտները վեր ցցելով՝ թափահարում ինքզինքը կամ գլուխը դեպի պոչն արած՝ երկուտակվում էր և սկսում պտտվել չարխի պես։ Վերջապես շատ բաներ արավ, տեսավ որ հնար չի լինում, չի կարողանում վայր գլորել Բելլերոֆոնին, վիզը թեքեց և կրակոտ աչքերը վրան ձգելով, դունչը մեկնեց, որ կծե։ Նա այնքան թափ տվավ իր թևերը, որ նրանցից մի արծաթագույն փետուր գչվեց և քնկավ հենց այնտեղ, ուր կանգնած էր գանգուրիկ տղան։ Նա խկույն վեր

առավ պահեց՝ իբրև Պեգասից և Բելլերոֆոնից մնացած հիշատակ։

Երբ որ Պեգասը, ինչպես ասացինք, ատամները սրած, դունչը մեկնեց, որ մեկ լավ կծե, Բելլերոֆոնը նրա այս դրությունից օգուտ քաղեց և կախարդված սանձի երասանակը ձգեց իսկույն թևավոր ձիու բերանը։ Եվ, ո՞վ հրաշք, Պեգասն իսկույն հանդարտվեց և դարձավ բոլորովին ձեռնասովոր մի ձի։ Ուղիղն ասեմ, ես շատ կափսոսայի և կցավեի, տեսնելով մարդուն հպատակած այնպիսի ազատ թռչնաձին, ինչպիսին Պեգասն էր։ Այս հանկարծակի փոփոխությունը, ազատությունից դեպի ստրկություն, անդգալի չէր Պեգասի համար։ Նրա դեպի Բելլերոֆոնն ուղղած խելոք աչքերի մեջ արտասուքի պես բան երևացին։ Բայց երբ որ երիտասարդն սկսեց փաղաքշելով շփել նրա գլուխը և մի քանի քաղցր ու խաղաղացնող խոսքեր ասել, թեև տիրոջի եղանակով,— այն ժամանակ թևավոր ձին ուրախության վրնջյուն բարձրացրեց։ Նա կարծես բավական մնաց իր ներկա վիճակից, որ նա, այնքան դարերից հետո վերջապես մի ընկեր ու հրամայող ունեցավ։ Երևի այսպես է որոշված բոլոր թևավոր ձիաների ճակատագիրը, և առհասարակ բոլոր վայրենի կենդանիների։ Հենց որ մի անգամ նվաճեցիր նրանց և տերը դարձար, նրանք այնուհետև կհպատակվեն քեզ և կընտանեանան քեզ հետ։

Պեգասն ու Բելլերոֆոնը իրար հետ կռվելիս աննկատելի կերպով շատ հեռու էին թռել, մինչև հասել էին մի բարձր սարի։ Բելլերոֆոնն առաջ էլ էր տեսել այն սարը, գիտեր, որ նրա անունը Հելիկոն էր, գիտեր նմանապես, որ Պեգասը սովորաբար նրա գագաթի վրա էր արածում։ Բայց ձեռնասովոր դարձած թևավոր ձին այժմ զրկված էր իր ազատ կամքից. նա չէր համարձակվում թռչել դեպի իր ուզած կողմերը և շարունակ ետ էր մտիկ տալիս, կարծես կանգ առնելու հրաման լիներ ուզելիս։ Վերջապես նա հանդարտ կերպով թռիչքն ուղղեց դեպի գետինը, անհամբեր սպասելով, թե ե՞րբ կիջնի արդյոք իրանից հեծյալը։ Բելլերոֆոնը ցած թռավ նրա մեջքիցը, բայց ձեռքից չթողեց նրա սանձը, որ պինդ փաթաթել էր ձախ ձեռքի դաստակին։ Պեգասն անընդհատ նայում էր իր նոր տիրոջ վրա։ Նրա սիրուն և ազդու աչքերի մեջ երևում էր այնպիսի հեզություն, որ Բելլերոֆոնի խելքը տանում էր։ Նա սկսեց խղճալ գիրի ընկած Պեգասին, որ դարերով ազատ էր ապրել, և վճռեց արձակել նրան և ազատ թողնել։ Մեծահոգության

զգացմունքով սաստիկ ոգևորված, նա կախարդական սանձը ձգեց նրա վզովը և բերանից հանեց երասանը։

— Գնա՜, Պեգաս,— ասաց նա։— Դու ինձ հարկավոր չես, եթե ես սիրելի և հաճելի չեմ քեզ։

Թևավոր ձին մի ակնթարթում անհայտացավ նրա աչքից։ Նա Հելիկոնի գագաթից դեպի վեր սլացավ բալեի նման շեշտակի։ Արևն արդեն վաղուց էր մայր մտել. ներքևում, երկրի վրա մութն էր, իսկ սարի վրա՝ դեռ վերջալույս։ Պեգասը թռավ ամպերից էլ բարձր և կարծես դողում էր այնտեղ արևի վերջին ճառագայթներից անդրադարձած ծիրանեգույն լույսի անաղոտ ալիքների մեջ։ Դեպի վեր թռչելով՝ ներքևից երևում էր նա մի պսպղուն կետի չափ և վերջապես բոլորովին անհետացավ երկնքի անհատակ կապտության մեջ։ Բելլերոֆոնն ընկավ երկյուղի մեջ. նա շատ վախեցավ, թե չլինի, հիրավի՝ թևավոր ձին այլևս չերևա ոչ մի անգամ։ Նա արդեն սկսեց ղղջալ իր արարմունքի վրա։ «Այս ի՜նչ խելք էր, որ ես բանեցրի», ասում էր նա ինքն իրան։ Բայց մեկ էլ տեսավ, որ պսպղուն կետը նորից երևաց երկնքի վրա և սկսեց կամաց-կամաց իջնել դեպի ցած և ցած մինչև վերջապես իջավ իր տիրոջ առջև։ Այս փորձից հետո այլևս տեղիք չկար կարծելու, որ թևավոր ձին կփախչի երբևիցե։ Ձին և իր տերը մտերմացան իրար և այնուհետև հավատում էին միմյանց առանց կասկածելու։

Այս գիշեր մեր երկու բարեկամները տեղավորվեցին մի ժայռի խոռոչում և քնեցին իրար կողքի։ Բելլերոֆոնը բոլոր գիշերը ձեռքը չհեռացրեց Պեգասի վզից, ոչ թե զգուշության, այլ շատ սիրելուն համար։ Վաղ առավոտվա բարիլուսին վեր կացան և միմյանց ողջունեցին ամեն մեկն իր լեզվով։

4

Բելլերոֆոնը մի քանի օր կացավ Հելիկոնի վրա Պեգասի հետ. այս միջոցին նրանք ավելի մոտեցան միմյանց և ավելի մտերմացան։ Շատ անգամ միասին օդային ճանապարհորդություն էին անում և երբեմն այնքան էին բարձրանում, որ գետինը նրանց աչքում լուսնի չափ էր երևում։ Նրանք գնացին մի քանի երկրներ. ամեն տեղ նրանց տեսնող մարդիկը զարմանում էին և

կարծում էին, որ թևավոր ձիով ճանապարհորդող սիրուն երիտասարդը Ոլիմպոսից կլինի իրանց մոտ հյուր եկած։ Պեգասի համար մեծ բան չէր օրական մի քանի հազար մղոն տեղ թռչելը։ Բելլերոֆոնը հափշտակվել էր այս տեսակ կյանք վարելուց. նա բոլոր կյանքն ուրախությամբ անց կկացներ մթնոլորտի վերին խավերում, ուր ամեն ժամանակ, ինչ տեսակ եղանակ էլ լիներ երկրիս վրա, միշտ պարզ էր և տաք։ Բայց նա չէր կարող մոռանալ իր տված խոստումը Հոբաթ թագավորին Քիմեռ-Օշափին սպանելու մասին։ Երբ որ փոքր-ինչ ընտելացավ օդային արշավանքներին և սովորեց Պեգասի հետ վարվել այնպես, որ նա իր տիրոջ ձեռքի տակ աննշան շարժումից և հազիվ լսելի ձայնից հասկանում էր նրա միտքը, այն ժամանակ մտքում վճռեց ձեռնարկել մտադրված վտանգավոր քաջագործությանը։

Եվ ահա մի առավոտ վաղ զարթնելով՝ թեթև կերպով կսմթեց Պեգասի ականջից, որ զարթեցնի նրան։ Սրա վրա Պեգասն խելքոյն վեր կացավ տեղիցը և քառորդ մղոնաչափ մի ոստյուն արավ դեպի վեր, մի ակնթարթում պոտեց Հելիկոնի ամբողջ գագաթը, որ ցույց տա տիրոջը, թե ինքը բոլորովին սթափված է, թարմ է և պատրաստ՝ ուր, ուզես թռչելու։ Այսպես ահա առավել ևս թարմանալով և ուրախ-ուրախ խրխնջալով՝ եկավ իր տիրոջ մոտ, բայց այնքան թեթև, որ կարծես ճնճղուկ լինի ոստից ոստ թռչկոտելիս։

— Շա՜տ լավ ես չափ ընկնում, սիրելի Պեգաս, հիանալի են թռիչքներդ,— գոչեց Բելլերոֆոնը և գուրգուրելով շփեց թևավոր ձիու գեղեցիկ պարանոցը։— Ժամանակ է կարծեմ, որ քեզ հետ գնանք մեր գործին։ Այսօր կեթ գնանք պատերազմելու Քիմեռ-Օշափի հետ։

Նախաճաշելուց և Իպոկրենայի պաղ աղբյուրի ջրից խմելուց հետո Պեգասն ինքը մեկնեց իր գլուխը սանձելու համար։ Մինչև Բելլերոֆոնը կզրահավորվեր, թուրը կկապեր կողքին, վահանը ֆկախեր, առհասարակ կզինավորվեր կռվի համար, Պեգասն անհամբերությունից ոտքով դոփում էր գետինը, խայտում, խաղում և ոստոստում։ Երբ ամեն ինչ պատրաստ էր, Բելլերոֆոնը հեծավ ձին՝ ըստ սովորության՝ շեշտակի դեպի վեր սլացավ մինչև հինգ մղոնաչափ, որ բարձրից մեկ լավ նայե ամեն կողմ, որոշե գնալու տեղը և դեպի նույն կողմն ուղղե իր թռիչքը։ Նա Պեգասի գլուխը թեքեց դեպի արևելք և սլացավ ուղղակի դեպի Լիկիա։

ճանապարհին նրանք հասան մի արծվի հետևից, որ քիչ էր մնում Պեգասի ոտքի տակն ընկներ, եթե շուտով մի կողմ չքաշվեր. Բելլերոֆոնը կարող էր բռնել նրան, բայց չուզեց ժամանակ կորցնել։ Նրանք թռչում էին թունդ մրրիկի արագությամբ և հենց նույն առավոտը տեսան Լիկիայի բարձր լեռներն ու խորխոր ձորերը, որոնք հազիվ էին նշմարվում իրանց պատող թանձր մառախուղի միջից։ Բելլերոֆոնը լսած էր, որ զազրելի Օշափը այդ խավար ձորերից մեկումն էր բույն դրել։

Երբ որ հասան իրանց մտադրյալ տեղը, թևավոր ձին սկսեց իջնել դեպի ներքև, օգուտ քաղելով լեռների վրա եղած մի քանի կտոր ամպերից, որոնք մեր ճանապարհորդներին ծածկելով, անտեսանելի էին կացուցանում նրանց գետնի երեսից։ Մի խիտ ամպի վրա կանգնած՝ Բելլերոֆոնը քիչ առաջ թեքվելով՝ կարողացավ պարզ տնտղել Լիկիայի լեռնային մասը և նրա մութ հովիտները։ Առաջ առանձին մի բան չնշմարեց. նրա տակ երկարամեկ ձգված էին չոր պառակներ և փլփլված ապառաժներ, բայց ահա նրանց հետևից սկսին էին տալիս նոր այրված տնատեղեր, սպիտակին էին տալիս շատ տեղեր կույտ-կույտ ոսկորներ, կարծես այս տեղերում արածող տավարների կմախքները լինեին։

«Այս ամենը Օշափի թողած հետքերը պետք է լինեն,— մտածեց Բելլերոֆոնը։— Բայց այս զազրելին ինքը որտե՞ղ պետք է լինի թաք կացած արդյոք»։

Նա սկսեց ավելի ուշի ուշով նայել լեռների մեջ սկսին տվող ծերպերը, խոռոչներն ու անտառները. բայց ուր որ նայում է, ամեն կողմ տեսնում է մեռելություն, չոր անապատ, միայն մի քարայրից դուրս է բխում երեք զոլ սև ծուխ և կեռումեռ գալարվելով օձի պես՝ սողում է դեպի վեր, և դեռ լեռան գագաթին չհասած՝ սև ծուխի այդ երեք զոլերը միանում են և դառնում մի կենտ սյուն։ Քարայրը գտնվում էր ուղիղ իրանց ոտքի տակին միայն մի հազար ոտնաչափ հեռավորության վրա։ Գարշահոտ և թանձր ծծմբային ծուխն արդեն հասնում էր մինչև Պեգասի ու Բելլերոֆոնի ռունգները։ Պեգասը փռնչում էր զզվանքից և գլուխը այս ու այն կողմ թեքում. այդ օդի զավակին, որ սովոր էր ծծել միայն լեռնագագաթների մաքուր օդը, գարշելի էր թվում երկրային հոտը։ Իսկ Բելլերոֆոնը ժնգռնում էր ու փռշտում՝ խեղդվելով այդ ծանր ու հեղձուցիչ ծծմբային հոտից։ Զայրացած Պեգասը

սաստիկ թափ տվավ թևերը և մղոն ու կես ետ թռավ այդ գարշահոտ տեղից։

Բայց Բելլերոֆոնը հանկարծ ետ մտիկ տվավ և այնպիսի բան ընկավ աչքովը, որ իսկույն սանձը դրդեց և ետ շրջեց ձիու գլուխը։ Պեգասն այս նշանից իսկույն իմացավ տիրոջ միտքը և սկսեց կամաց-կամաց ցած իջնել, մինչև մոտենալ նույն քարայրին, որտեղից որ դուրս էր գալիս երեք զոլ ծուխը։ Եվ ի՞նչ տեսնի այնտեղ Բելլերոֆոնը—մի տարօրինակ դեզ՝ իրար վրա կուտակված հրեշների։

Հրեշի իրար վրա բսած մարմինները միմյանց այնքան մոտիկ էին ընկած, որ միայն գլխներիցը կարելի էր ճանաչել, թե ինչ կենդանիներ են նրանք։ Թվով երեք էին նրանք՝ մի ահռելի վիշապ-օձ, մի ահարկու զորեղ առյուծ և մի գարշելի այծ։ Այծն ու առյուծը քնած էին, իսկ օձը՝ ոչ. նա իր կարմիր աչքերը չռել էր Բելլերոֆոնի վրա։ Բայց զարմանալին այս էր, որ գարշահոտ սև ծուխը ոչ մի բոպե չէր կտրվում, այլ անընդհատ դուրս էր գալիս երեքի էլ ռունգներից։ Այս տեսակ մի հրեշի տեսքն այնքան նոր և անակնկալ էր Բելլերոֆոնի համար, որ նա իսկույն ևթ գլխի ընկավ, որ նա ինքն էր Քիմառ-Օշափը, և այդ էր նրա որջը։ Առյուծը, օձը և այծը միևնույն սարսափելի հրեշի լրացուցիչ մասերն էին։ Զզվելի՜ Օշափ...

Կիսամրափ Օշափը (որովհետև նրա միայն երկու գլուխներն էին մրափած) իր ճանկերից բաց չէր թողնում նոր որսած զոհի արյունոտ մնացորդները. բայց ի՞նչ բանի մնացորդներ էին, լավ չէր նշմարվում. գառա՞ն մնացորդ էին արդյոք, թե՞... ուզում էի ասել՝ մի փոքրիկ երեխայի... բայց ո՞վ գիտե, գուցե հենց այդպես էլ լիներ, թեև այսպես մտածելը սարսափ է բերում մեզ վրա։ Երևում էր, նոր էր վերջացրել իր ընթրիքը։

Բելլերոֆոնը վերջապես ուշքի եկավ և գլխի ընկավ, թե ինչ բան էր տեսածը։ Պեգասն ավելի շուտ իմացավ բանի էությունը և միայն այնպիսի ահեղագոչ վրնջյուն բարձրացրեց, որ սար ու ձոր դրմբդրմբաց։ Սրա վրա՝ մրափած գլուխներն էլ զարթնեցին և երեքն էլ միասին կրակի ահեղ ալիքներ վիժեցին։ Բելլերոֆոնը դեռ իր պատրաստությունը չէր տեսել կռվի համար, որ հրեշը դուրս պրծավ իր որջից և իր թանթուլների ահագին ճիրաններն արձակելով՝ վրա վազեց ուղղակի խիզախ երիտասարդի վրա, ավազ ու հող բարձրացնելով։ Եթե Պեգասը թեթևա-

շարժ չլիներ թռչնի պես, հրեշն իր այդ հանկարծական հարձակմունքով կուլ կտար երկուսին էլ և դրանով կվերջանար կռիվը։ Բայց անկարելի էր թևավոր ձիուն անզգույշ և անպատրաստ գտնել։

Մի ակնթարթում Պեգասն ու իր հեծյալը սավառնում էին արդեն բարձր երկնքում։ Բարկությունից խռմփում էր Պեգասը և բոլոր մարմնով դողում էր, իհարկե ոչ երկյուղից, այլ եռագլուխ գարշելի սողունից զզվելով։

Օշափի կատաղությանն էլ չափ չկար։ Նա ձգվել էր իր բոլոր երկայնությամբ և կոթնելով իր օձային պոչի վրա, ճիրանավոր թանթուլները օդի մեջ այս ու այն կողմ էր հածում և ետ ձգելով իր երեք գլուխները՝ կրակի հեղեղ էր վիժում դեպի վեր, որ այրե Պեգասին և նրա հեծյալին։ Ի՜նչպես մռնչում էր, ի՜նչպես վսսում ու մկկում։ Մինչ այս, մինչ այն, Բելլերոֆոնը ձախ ձեռքն առավ վահանը և աջով թուրը հանեց պատյանից։

— Հապա՜ քե՜զ տեսնեմ, Պեգաս ջան,— շշնջաց նա թևավոր ձիու ականջին,— ինձ չամաչեցնես. օգնի՜ր ինձ, որ չքացնենք այս երկրային հրեշը, եթե ոչ՝ դու կթռչես դեպի Հելիկոն առանց քո մտերիմ բարեկամիդ։ Կամ կկործանվի Օշափը, կամ նրա բոլոր երեք ոտները կլափեն ինձ մի քանի բոպեի մեջ։

Պեգասը սիրով վրնշաց, և գլուխը թեքելով՝ իր վարդագույն ռունգները տիրոջ թշերին քսեց։ Սրանով ուզեց ասել նա, որ թեպետ ինքը թևեր ունի և մինչև այսօր անմահ է եղել, բայց այսուամենայնիվ ավելի հոժար կլինի ինքը մեռնել, քան թե թույլ կտա, որ Բելլերոֆոնն ընկնի հրեշի ճանկը։

— Շնորհակալ եմ քեզանից, հոգյակս,— ասաց Բելլերոֆոնը, պարզ իմանալով իր բարեկամի համը խոսակցությունը։— Հիմա եկ հարձակվենք Օշափի վրա. դու վրա թռիր, ինչպես գիտես...

Այս խոսքերով նա շարժեց սանձը. Պեգասը նետի պես սլացավ ուղղակի դեպի եռագլուխ Քիմեռը, որ բոլոր ժամանակ գալարվելով՝ ձգվում էր դեպի նրանց։ Բելլերոֆոնը հասնելն ու թրով զարկելը մեկ արավ. նա միայն մեկ անգամ զարկեց ինչքան որ կռումն ուժ ուներ, բայց Պեգասը նրան այնպես շուտ թռցրեց դեպի երկինք, որ էլ հնար չունեցավ նայելու, թե հարվածը հաջո՞ղ էր արդյոք, թե՞ ոչ։ Պեգասի օդային արշավանքը երկար չտևեց. նա կրկնեց իր հարձակմունքը։ Այս անգամ միայն համոզվեց Բելլերոֆոնը, որ առաջին զարկով թռցրել էր հրեշի այծային գլուխը,

որ արդեն մի բարակ մորթով կախված՝ ճոճվում էր հրեշի վրա։

Բայց հենց սրա համար էլ ողջ մնացած երկու գլուխները՝ օձինն ու առյուծինը՝ կրկնապատկեցին իրենց կատաղությունը և ճիգ էին թափում, որ իրանց երրորդ գլխի վրեժն առնեն։ Նրանց ահեղագոչ մռնչյունից և վսսոցից մարդու ականջ էր խլանում։

— Չվախենաս, Պեգաս,— աղաղակեց Բելլերոֆոնը.— էլի մեկ հարված, և մենք կկտրենք երկրորդ գլուխը։ Հառաջ, բարեկամ, սիրտդ պինդ պահիր...

Նա կրկին շարժեց սանձը։ Թևավոր ձին նորից սլացավ նետի պես դեպի վայր, և Բելլերոֆոնն իր բոլոր ուժով նորից հասցրեց թուրը ողջ մնացած գլուխներին։ Բայց այս անգամ թե՛ նրան և թե՛ Պեգասին ձրի չնստեց այդ։ Օշափն իր թանթուլների ճանկերով մի քիչ չանկռտեց Պեգասի ձախ թևը և բավական խոր վիրավորեց Բելլերոֆոնի ուսը։ Բայց Բելլերոֆոնն էլ փոքր հարված չէր տվել։ Այս անգամ նա կտրել էր հրեշի առյուծային գլուխը, որ արդեն կախ էր ընկել վրան և ոտքը բաց ու խուփ անելով՝ թանձր ծուխ էր դուրս վիժում։ Միայն սոսկալի դարձավ այժմ Օշափի ողջ մնացած միակ օձային գլուխը։ Նա հիմա հրահեղեղ էր դուրս վիժում և մինչև հինգ հարյուր գրկաչափ հեռավորության հասցնում։ Եվ սկսեց այնքան ահեղ ոռնալ, վնգստալ, սուլել, որ Հոբաթ թագավորը լսեց այդ զոչյունը հինգ հարյուր մղոնաչափ հեռավորությունից և երկյուղից սկսեց այնպես դողդողալ, որ գահն իր տակին սկսեց երերալ և տատանվել։

— Վայն եկել է մեզ տարել,— ասաց նա.— այս Օշափի ձայնն է. նա երևի գալիս է մեզ լափելու։

Այդ միջոցին Պեգասը մի կողմ թռչելով՝ սկսեց բարկությունից վրնջալ, իսկ նրա աչքերը կայծեր էին ցայտում։

— Պեգա՜ս, վիրավորվա՞ծ ես,— բացականչեց Բելլերոֆոնը, նկատելով որ սիրական ձիու արծաթափայլ թևից արյուն է հոսում։— Նզովյալ Օշափը իր այս չարագործության համար իր վերջին գլուխը պետք է տա ինձ. ինչպե՜ս, նա համարձակվի՜ վիրավորել անմահ և հրեղեն ձիո՜ւն...

Պեգասն էլ այդ էր ուզում. նա մի ակնթարթում շրջեց գլուխը և կայծակի արագությամբ սլացավ դեպի ցած։ Քիմեռը կատաղությունից կաս-կարմիր կտրած մեկ գալարվում, կծկվում էր քարայրի արյունաթաթախ ավազի վրա, մեկ ձգվում, ցցվում էր սյունի պես և կրճատում բաց ոտքը։ Իսկ այդ գարշելու ոտքն էլ

այնքան մեծ էր, որ Պեգասն իր տիրոջ հետ միասին, առանց իր երկար թևերը ծալելու, կարող էր ներս թռչել նրա միջով և անցնել կոկորդովը դեպի նրա անհագ, անհատակ որկորը։

Երբ որ նկատեց հրեշը, որ իր թշնամին հարձակվելու վրա է, սկսեց բառանչել և գետաշափ հրահեղեղ վիժել, որով խանձխընձեց Պեգասի քնքուշ թևերը և Բելլերոֆոնի բոլոր ձախ կողմի ոսկեմազ գանգուրները։ Բայց սրանով դեռ չանցավ վտանգը։

Առաջ թույլ տվավ, որ թևավոր ձին իր հեծյալով մի քիչ իրան մոտենա, ու հետո՝ մի հանկարծական ոստյունով ընկավ Պեգասի գավազը և իր բոլոր անճոռնի կաղմվածքով կպավ նրանից ու սկսեց իր ճապուկ ու ջղային պոչը չվանի պես բոլորիշուրջ փաթաթել Պեգասին։ Այս գարշելի բեռով բարձված՝ ձին և ձիավորը թռան դեպի վեր և՛ վեր. նրանց ներքևում պսպղում էին արդեն լեռներն ու ամպերը, բայց նրանք էլի շարունակում էին իրանց թռիչքը։ Օշափը նրանցից չէր գլվում և ավելի խոր էր ցցում իր գարշելի ճիրանները խեղճ Պեգասի մեջքին։ Այս միջոցին Բելլերոֆոնն շրջվեց և իր կուրծքն ու երեսի կեսը վահանով պատսպարելով, աչքն անակնթարթ ձգեց հրեշի աչքը։ Մարդկային աչքի հայացքը կարող չէր տանել Օշափը. նա խփեց աչքերը և առաջի թանթուլները մեկնեց, որ վահանի վրայից բռնե Բելլերոֆոնի գլուխը, բայց՝ բաց արավ իր կուրծքը, և Բելլերոֆոնը ներս ցցեց իր սուրը նրա կրծքի մեջ մինչև կոթը։ Հենց որ այս մահացու վերքն ստացավ Օշափը, նրա պոչն արձակվեցավ, և գարշելի հրեշը իր բոլոր թեփամորթ ջանդակով վայր կործանվելով՝ ընկավ մի բարձր ժայռի վրա. նրա փորոտիքից մի նոր կրակ բորբոքվեց և Քիմեռի բոլոր մարմինն սկսեց այրվել։ Երկրի վրայից՝ արևի մայր մանելուց հետո՝ շատ մարդիկ նայեցան և տեսան, որ երկնքից գալարվելով՝ ներքև է թռչում մի գունդուկծիկ եղած ահռելի հրեղեն բան՝ երկար պոչով, շատ վախեցան և կարծեցին, թե միգուցե մի օդերևույթ կլինի կամ պոչավոր աստղ, բայց մյուս օրը՝ վաղ առավոտյան, մի քանի երկրագործ գնացին աշխատելու իրանց ագարակում և այնտեղ սարսափելով տեսան, որ իրանց բոլոր արտերը սև մոխիրով են ծածկվել, իսկ արտերի մեջտեղը ոսկորների մի կույտ կա, մեծությամբ մի ահագին դեզի չափ։ Այդ օրվանից մինչև օրս ոչ մի մարդ այլևս տեսած չէ Օշափին։

Այս փայլուն և փառավոր հաղթանակը տանելուց հետո Բելլերոֆոնը քնքուշ սիրով համբուրեց Պեգասի գլուխը։ Ուրախությունից նրա աչքերը ջրակալեցին։

— Նա գնանք, սիրելիդ իմ,— ասաց,— գնանք Պիրենայի աղբյուրը։ Շնորհակալ եմ կատարած բաջագործությանդ համար։

Պեգասը՝ օդի մեջ ծածանելով՝ սկսեց թևավարել, և մի քանի րոպե հազիվ անցած՝ նա արդեն մեղ ծանոթ Պիրենայի աղբյուրի ափին էր։ Այնտեղ ամեն ինչ մնացել էր անփոփոխ.— հիշողությունը կորցրած ծերունին եկավ վայրի պտուղներով, տավարած գյուղացին կովերը բերավ ջուր տալու, ջահիլ աղջիկն կուժն ուսին եկավ ջրի։

— Հիմա միտս է գալիս,— ասաց ծերունին նայելով Պեգասի վրա,— որ այս թևավոր ձին ես տեսել եմ մեկ անգամ երեխա ժամանակս։ Բայց այն ժամանակները սա տասը հազար անգամ ավելի գեղեցիկ էր, քան թե հիմա։

— Սրա նման երեք հատը ուրախությամբ կփոխեի մի հատ բեռնակիր ձիու հետ,— ասաց կովարածը։— Այդ թևավոր ձին եթե իմս լիներ, ես նախ և առաջ արմատից կխուզեի սրա թևերը։

Իսկ ջահիլ աղջիկը ոչինչ չասաց. նա միշտ վախենում էր անտեղի, հիմա էլ նույնպես։ Նա Պեգասին տեսավ թե չէ՝ ետ փախավ դեպի տուն։ Վազելիս էլ ոտքը սահեց, կուժը վայր ձգեց կոտրեց։

— Հապա ո՞ւր է մեր գանգուրիկ տղան,— հարցրեց Բելլերոֆոնը, ձին մոտ քշելով դեպի գյուղացիները։— Նա իմ մշտական ընկերս էր այստեղ. նա հաստատ հավատացած էր, որ Պեգասը կգա և միշտ նայում էր ջրին՝ սպասելով նրա գալուն։

— Ես այստեղ եմ, սիրելի Բելլերոֆոն,— կամացուկ կանչեց տղան։

Այս աշխույժ և կայտառ երեխան օրերով սպասել էր Պիրենայի աղբյուրի մոտ, հուսալով թե ահա ուր որ է՝ կգա իր բարեկամը. բայց հենց որ տեսավ Բելլերոֆոնին Պեգասի վրա նստած ամպերից վայր է իջնում դեպի աղբյուրը, նա թաք կացավ թուփերի մեջ, որ ալեորն ու տավարածը չտեսնեն նրա ուրախության արտասուքը։

— Դու տարար հաղթությունը,— բացականչեց նա վազելով Բելլերոֆոնի մոտ, որ դեռ նստած էր Պեգասի վրա։— Ես հավատացած էի, որ դու կհաղթես անպատճառ։

— Այո՛, մանկիկս, ես հաղթեցի Քիմեռ-Օշափին,— պատասխանեց Բելլերոֆոնը։— Բայց եթե քո հավատալը չլիներ, ես եր-

բեք չէի սպասիլ Պեգասին. երբեք չէի թռչիլ ամպերում և երբեք չէի մեռցնիլ Օշափին։ Այս բոլորի համար ես միայն քեզ եմ պարտական։ Բա՛ց թողնենք այժմ Պեգասին և ազատություն տանք նրան. թող երթա իր համար, ինչպես եղել է միշտ։

Այս ասելով՝ Բելլերոֆոնը աղոթած սանձը վեր առավ Պեգասի գլխից։

— Գնա՛, իմ Պեգաս, դու այժմ ազատ ես միշտ և հավիտյան,— ասաց նա տխուր ձայնով։

Արծաթափայլ թևերով ձին ղլուխը դրեց իր տիրոջ ուսին և չշարժվեց տեղիցը։

— Դու չե՞ս ուզում ինձանից հեռանալ,— հարցրեց Բելլերոֆոնը շփելով նրա վիզը.— ուրեմն կա՛ց, որքան ժամանակ որ կամենաս։ Հիմա գնանք, ուրեմն, Հոբաթ թագավորի մոտ՝ նրան աչքալույս, որ Քիմեռ-Օշափն այլևս գոյություն չունի։

Բելլերոֆոնը համբուրեց գանգուրիկ տղային, նրան մնաս բարով ասաց, խոսք տվավ, որ էլի շուտ ետ կդառնա, և գնաց։

Անցան շատ և շատ տարիներ. գանգուրիկ տղան մեծացավ և սկսեց թռչել ամպերից վերև, ավելի և ավելի բարձր, քան թե Բելլերոֆոնը, և հաղթություններ համար ավելի մեծ փառքի հասավ, քան թե Օշափի հաղթողը։

Այս փոքրիկ տղան դառավ մե՜ծ բանաստեղծ...

1888

ԱՅԾԱՏՈՒՐ

1

Էլել է չի էլե՛լ մի հարուստ սովդաքար։ Այս սովդաքարը իր քարավանով իջնում է մեկ գիշեր մի գյուղի մոտ։ Կես գիշերին վեր է կենում, որ պտի քարավանի չորս կողմով և պատվեր տա պահապաններին, որ արթուն մնան, մեկ էլ տեսնում է՝ երկու մարդ դուրս եկան գյուղից, նրանց առաջը եկավ մի ուրիշ մարդ և հարցրեց.

— Ի՞նչ բախտ գրեցիք նորածին մանուկի համար։

Մարդիկը պատասխանեցին։

— Այստեղ իջած սովդաքարի բախտը նրան տվինք։

Այս ասացին մարդիկը և իսկույն աներևույթ եղան։

Սովդաքարն իսկույն իմացավ, որ նրանք երեխայոց ճակատի վրա նրանց բախտը գրող հրեշտակներ էին. շատ տխրեց, որ իր բախտը տվել են մի նորածին մանուկի. էլ նրա քունը չտարավ այն գիշերը։

Լուսացավ թե չէ, սովդաքարը գնաց գյուղ և հարցուփորձ անելով իմացավ, թե ում տանն է երեխա ծնվել այն գիշերը։ Գնաց տնսավ բարուրի մեջ մի սիրուն փափլիկ տղա և առաջարկեց նրա հորն ու մորը, որ երեխան իրան տան։

— Ես մեծ կարողության տեր եմ,— ասաց,— բայց որդի չունեմ։ Ես դրան կորդեզեմ. բոլոր ունեցած-չունեցածս դրան կտամ, ձեր ապրուստն էլ կհոգամ։

Ծնողաց համար շատ դժվար էր համաձայնվել մի այսպիսի առաջարկության, մանավանդ ծննդկան մոր համար, բայց որովհետև իրանք աղքատ էին, չգիտեին ինչ անեն. տան, թե չտան։ Հավաքվեցին դրացիները և ամեն կողմից սկսեցին համոզել ծնողացը, որ իրանց որդու բախտավորությանը արգելք չինեն։— Առանց դրան էլ զավակներ շատ ունիք,— ասացին նրանք,— և էլի կունենաք. դուք հազիվ նրանց կարող եք պահել. այդ մեկն էլ տվեք այս պարոնին, թող գնա. հարուստ մարդ կըդառնա, ձեզ էլ կհարստացնե։

Սրա վրա ծնողքը հոժարեցան և երեխային մի քանի ոսկով տվին սովդաքարին։

Սովդաքարը տարավ երեխային իր քարավանը և ճանապարհ ընկավ դեպի իր գնալու աշխարհը։ Շատ գնաց թե քիչ, աստված գիտե, երբ որ հասան մի ջրառատ և գեղեցիկ հովիտ, այդտեղ իջան հանգստանալու։

— Սրանից էլ թաքուն տեղ չի լինիլ,— մտածեց սովդաքարը.— հիմա ես սրան թաղել կտամ այս հովտումը, տեսնեմ՝ այնուհետև էլ ինչպե՞ս պետք է խլել ինձանից իմ բախտը։

Կանչեց իր հավատարիմ ծառային և ասաց.— «Առ այս երեխային և տար մատաղ արա ինձ համար. միայն սիրտն ու թոքը բեր ինձ»։

Սովդաքարը կարծում էր, որ երեխայի սիրտն ու թոքը կը-վերադարձնեն իր բախտը։

2

Եղանակը ամառային էր, և տարին երաշտ։ Բայց չրարբի և դալարագեղ հովիտը մի լեռնային տեղ էր և շատ գեղեցիկ ամառանոց խաշնարած ժողովրդի համար։

Սովդաքարի ծառան երբ որ երեխային բոլորովին հեռացրեց քարավանից և անցավ մի բլրակի քամակ, այստեղ տեսավ հոտերով ոչխարներ և սկսեց մտածել ինքն իրան...

— Ո՛չ, անիրա՛վ աղաս, ես քո անգութ հաճույքը կատարել չեմ կարող։

Այսպես մտածեց ծառան, և երեխային մի թփի տակ դնելով՝ նրա պահպանությունը հանձնեց Վերին Նախախնամության։

Ոչխարի հոտը հեռու չէր։ Ծառան դիմեց հովիվներին, գնեց մի փոքրիկ ուլ, մորթեց և սիրտն ու թոքը հանելով՝ տարավ իր աղային։ Սովդաքարը խորովեց, կերավ և միամտվելով՝ շարունակեց ճանապարհը։

3

Ոչխարի հոտը կամաց-կամաց սփռվելով հովտի մեջ, հասավ այն թփին, ուր դրված էր երեխան։ Մի կթի այծի ծծեր այնքան լցվել էին, որ քիչ էր մնում տրաքվեին. մի ծծկեր կենդանի էր փնտրում, որ թեթևացնել տար իր ծանրությունը։ Նա որ տեսավ երեխային թփի տակ ուլի պես հեկեկալիս, իսկույն մոտեցավ և ծիծը դրավ բերանին։ Քաջառողջ և ուժեղ մանուկը սկսեց ծծել այնքան, որ բոլորովին դատարկեց այծի ծծերը։ Թե այծը և թե մանուկը հավասարապես գոհ մնացին այս անակնկալ դեպքից։ Այս բանը սովորություն դարձավ այծի համար. ամենայն օր միևնույն ժամին, ուր էլ որ լիներ հոտը, նա ջոկվում էր և վազում դեպի մանուկը, որ ծիծ տա նրան։

Այս կթի այծը պատկանում էր մի պառավի։ Պառավը մի քանի օր վրա-վրա զրկվեց կաթից. այծը գնում էր տուն դատարկ կրծքով։ Շատ նեղացավ պառավը և գնաց հովիվների հետ կռվեց։

— Դուք եք կթում իմ այծը,— ասում է պառավը և մեղադրում հովիվներին։ Իսկ հովիվները պատասխանում են.

— Երկի՛նք, գետի՛նք, մենք տեղեկություն չունինք։ Մենք որ կթելու լինինք, քո միակ այծը ենք կթել, այլ նրանցը կկթենք, որոնք մեկի տեղ մի քանիսն ունին։ Բայց քո այծը սովորություն է արել հանկարծ անհայտանալու։ Մեկ էլ նայում ենք, որ՝ չկա. ուր է գնում՝ չգիտենք։ Կուզես, մեկ օր եկ, դու ինքդ տես աչքովդ, որ հավատաս։

Պառավը մեկ օր այծի հետ գնաց ոչխարը և աչքը չհեռացրեց նրանից։ Կեսօրի մոտ ժամանակը, երբ այծի կուրծքն արդեն լցվել էր, սուս ու փուս քաշվեց դեպի մանուկը։ Պառավն սկսեց հետևել նրան. Այծը կանգ առավ մի թփի տակ և երկար մնալուց հետո վերադարձավ դատարկ կրծքով։ Պառավը մոտեցավ թփին և տեսավ մի հրաշալի երեխա։ Պառավի ուրախությանն էլ չափ չկար։

— Այս լավ դառավ,— ասաց նա,— եթե մի քանի օր կաթից զրկվեցա, դրա փոխարեն աստված ինձ մի որդի տվավ. կտանեմ, կպահեմ, կմեծանա, ինքն էլ ինձ կպահի։ Գրկեց երեխային, տարավ մոտիկ վտակում խշխշալի լողացրեց, փաթաթեց իր շարսավում ու ստեպ-ստեպ համբուրելով՝ տարավ տուն։ Տղան մեծացավ և իրավի, դառավ պառավի ծերության նեցուկը, նրա պահապանը։ Եվ որովհետև սկզբում այծն էր պահպանել նրան, այդ պատճառով նրա անունը դրին Այծատուր, ասում էին և «Այծի տղա» մականունով։

4

Այծատուրը դառել էր արդեն տասնըվեց-տասնըյոթը տարեկան և մի հրաշագեղ, խելոք, ժրաջան և ամենքին սիրելի երիտասարդ էր։ Այս միջոցին սովդաքարը մեծ քարավանով եկավ իջավ այս գյուղումը։ Հյուրասեր գյուղացիք շրջապատեցին սովդաքարին և մեծ պատվով ընդունեցին։ Ամենից առաջ նրա ձիու կապը բռնեց Այծատուրը, տգնեց նրան իջնել ձիուց և ինքն

սկսեց ձին ման ածել, որ հանգստացնե հոգնածությունից։ Երբ որ ձին կապեց և խոտ տվավ, սկսեց իրան՝ սովդաքարին ծառայել և կերակուր պատրաստել։ Սովդաքարին շատ դուր եկավ Այծատուրը. նրա քաղաքավարի խոսք ու զրույցը, շարժմունքը, ճարպիկությունը սովդաքարի ուշադրությունն այնպես գրավեցին, որ ուզեց նրան իր մոտ վերցնել։ Սկսեց հարցուփորձ անել և տղան պարզամտությամբ պատմեց իր ծագումը, ինչպես որ լսել էր, և իբրև ապացույց իր ասածի ճշմարտության, վկա բերավ իր Այծատուր անունը։

Սովդաքարն իսկույն մատը կծեց.— Հը՞մ,—ասաց իր մտքումը,— սա իմ վերցրած մանուկը պետք է լինի, և հենց այստեղ էլ հրամայեցի, որ սպանեն նրան, բայց բանից դուրս է գալիս, որ ծառան չի կատարել իմ հրամանը, և հենց տարիքն էլ համապատասխանում է նույն տարվան։

— Այծատուր որդի,— ասաց սովդաքարը,— կուզե՞ս ինձ մոտ մնալ. ես քեզ կնշանակեմ գլխավոր վերակացու իմ բոլոր ունեցած-չունեցածի վրա. դու խելոք տղա ես երևում, լավ ապագա կունենաս.

— Ես այդպիսի բախտից փախչող չեմ,— ասաց Այծատուրը.— երբ որ դուք այդչափ ողորմած և բարի կլինեք դեպի ինձ, ես էլ կաշխատեմ երախտահատույց լինել և հույս ունեմ, որ ամոթով չեմ մնալ ձեզ մոտ։

Ինչ ասել կուզի, որ սովդաքարի նպատակը շար էր։ Նա ոչ թե Այծատուրի բախտը, այլ նրա անբախտությունն ու մահն էր ուզում։

Այծատուրը հուսադրելով իր խնամակալ պառավին, որ շուտով ետ կդառնա և նրան մենակ չի թողնիլ, մնաց բարև արավ, գնաց սովդաքարի հետ։

5

Մեծ հարստության տեր էր սովդաքարը։ Երբ որ նրա քարավանի ծայրը բացվում էր, էլ վերջը չէր կտրվում։ Հազարավոր ուղտեր, ձիանք և ջորիք միայն նրա վաճառքն էին մի քաղաքից մյուս քաղաք տեղափոխում։ Ի՞նչ ճոթեղեն, ի՞նչ ակնեղեն, ինչ մրգեղեն ու համեմունք ասես, որ նա չուներ։ Ով ինչ ուներ ծա-

խելու, նրա առնելուն էր սպասում, ով ինչ գնելու ուներ, նրա ապրանքի գալուն էր սպասում։ Երբ որ տանից դուրս էր գալիս, էլ տարիներով չէր վերադառնում. պատահում էր, որ ամիսներով ճանապարհ էր գնում, օրինակ, Հնոստանից մինչև Խորասան, Խորասանից մինչև Թիֆլիս, Թիֆլիսից մինչև Հաշտարխան։ Տուն ուներ ինչպես թագավորական պալատ. շահերն ու սուլթանները նրանից էին փող պարտք անում. նրա թանկագին ընծաներին սպասում։

Նա կին ուներ, բայց արու զավակ չուներ, այլ մի աղջիկ միայն, որ ինչքան գեղեցիկ էր, նույնքան և բարի ու խելոք։ Գոհարիկ էր անունը և արդեն տասնըհինգ տարի լրացրած մի նախանձելի հարսնացու էր։

Սովդաքարն այժմ իր քարավանով դեպի տուն էր վերադառնում և հինգ օրից հետո պիտի հասներ։ Մի նամակ գրեց, տվավ Այծատուրին և մի լավ ձի տալով՝ ասաց.

— Այս նամակը կհասցնես մեր տուն և քո ձեռքովը կտաս իմ կնոջը։

Այծատուրը, որ մի առիթ էր որոնում իր պարոնի հրամանը մտերմությամբ և անհապաղ կատարելու, նամակը ծոցումը դրավ և ձին նստեց թե չէ՝ թև առավ թռավ դեպի սովդաքարի տունը։

Մյուս օրը ճաշի ժամանակ հասավ սովդաքարի տունը։ Ամառն էր. բավական շոգ օր էր։ Իջավ ձիուցը, ձին կապեց մի ծառի ստվերում, իսկ ինքը մոտեցավ տան դռան։ Տեսավ դուռը կողպած է, էլ չուզեցավ անհանգստացնել ներսը եղողներին. թեք ընկավ պատի տակին և սաստիկ հոգնածությունից ու անքնությունից իսկույն քունը տարավ։

Մեր Այծատուրը այսպես քնի մեջ ով գիտե ինչ էր տեսնում երազումը, բայց արեգակի այրող ճառագայթների տակ կարմրել էր և քրտնել այնպես, ինչպես մայիսի կարմիր վարդը մարգարտյա ցողի կաթիլներով։ Իր այս պատկերով նա ուղիղ Գոհարիկի սենյակի պատուհանի դիմացն էր։ Ով գիտե, ինչ անհայտ դրդումից ստիպված, Գոհարիկը բաց արավ սենյակի պատուհանը և հանկարծ որ չտեսավ Այծատուրի ցողաթաթախ վարդագեղ դեմքը, մնաց տեղն ու տեղը մեխված, իր կյանքումը տեսած չէր մի այդպիսի հրաշագեղ պատկեր։ Էլ աչքը չհեռացրեց. հանգամանքը հաջող էր, որովհետև իրան գրավող երիտասարդը քնած էր և կարող չէր տեսնել նրան։ Այսպես որ շատ նայեց Գոհարիկը, մի

նամակի ծայր նշմարեց տղայի ծոցից դուրս եկած, հետո էլ տեսավ ձին և ճանաչեց։

— Սրան անպատճառ իմ հայրս կլինի ուղարկած իմ գալուստն իմաց տալու,— ասաց աղջիկն իր մտքումը և առանց երկար մտածելու՝ իջավ վերևից և Այծատուրի ծոցից նամակը կամացուկ դուրս քաշեց ու կրկին թռավ դեպի վեր՝ իր սենյակը։

Գոհարիկը բաց արավ նամակը և կարդաց հետևյալը.

«ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՄՈՒՍԻՆ

Այս գրաբեր երիտասարդը քեզ մոտ հասնի թե չէ, սիրով կընդունես, որ ոչ մի կասկած չտանես, և սրով կլինի թե հրով, թույնով կլինի թե պարանով, անհապաղ վերջ կտաս դրան կյանքին։ Ես հինգ օրից այդտեղ կլինիմ և դրան չպիտի տեսնեմ կենդանի։

Քո ամուսին»։

Գոհարիկը կարդաց այս նամակը և իր ոչ աչքերին և ոչ ականջին չհավատաց։ Ո՛չ, երևի հայրս ուղեցել է գրել ահա ինչ և սկսեց գրել հետևյալը.

«ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՄՈՒՍԻՆ

Այս գրաբեր երիտասարդը քեզ մոտ հասնի թե չէ, իսկույն իմ Գոհարիկիս դրան կտաս և կպսակես, այնպես որ մինչև իմ գալս՝ ամեն ինչ վերջացած լինի։

Քո ամուսին»։

Գոհարիկն այս նամակը գրեց կարծես անգիտակցաբար, առանց իրան որևէ հաշիվ տալու և տարավ դրավ Այծատուրի ծոցումը։ Այս գործողությունը կատարելուց հետո Գոհարիկը սա

ու փուս վեր բարձրացավ, այրեց իր հոր նամակը և որպեսզի Այծատուրին երկար չթողնե արևի տակ, ուրախ-ուրախ ներս մտավ մոր սենյակը՝ ասաց.

— Մայրիկ, նայիր, մեր դռանը մի անծանոթ երիտասարդ կա քնած։ Նա ձիով է եկել, իսկ ձին հայրիկինն է. ուրեմն նա մի լրաբեր պետք է լինի։ Հարկավոր է նրան զարթեցնել և վեր կանչել։

Ծառաները ուրիշ տեղ էին գնացել, տանը ոչ ոք չկար, բացի մորից ու աղջկանից։ Մայրը իջավ ներքև և Այծատուրին զարթեցրեց։

Այծատուրը ներողություն խնդրեց տիրուհուց և ծոցիցը նամակը հանելով տվավ իրան։

Տիրուհին նամակը կարդաց և տղայի երեսին նայելով՝ մի առանձին ուրախություն և հաճույք զգաց։

— Դու գիտե՞ս՝ այս նամակումն ի՞նչ է գրած,— հարցրեց տիրուհին։

— Ո՛չ ինձ հայտնի չէ, տիրուհի։

— Երևում է, որ հայտնի չէ, եթե ոչ՝ էլ ի՞նչ կտաներ քունդ։ Գնանք վերև, ես այնտեղ քեզ կհայտնեմ, թե ինչ է գրած։

Տիրուհու նպատակն էր տեսնել, թե ինչ ներգործություն կանե աղջկա վրա հոր կամքը։

Տիրուհու սիրալիր ընդունելությունը բավական քաջություն տվավ Այծատուրին, թեև նա առանց այս էլ իր հոգեկան անմեղ վիճակից դուրս չէր կարող գալ. նա ոչ ամոթխած էր և ոչ հանդուգն. ազատ էր երկու ծայրերից էլ, իբրև բնության անարատ զավակ։

Երբ որ վերև բարձրացան, նրանց դիմավորեց Գոհարիկը և սկսեց հարցափորձ անել հոր մասին, նրա առողջության, իսկ մորից հարցրեց, թե ի՞նչ է գրել հայրը։

Այծատուրը միայն հեքիաթներում էր լսած Գոհարիկի նման գեղեցկուհիների մասին, և ինքն իրան շատ երջանիկ զգաց, որ այնպիսի մի դիցուհու նվաստ ծառան պիտի լինի։ Նա չէր կարող մտքովն անգամ անցկացնել, որ կարող է ծառայից էլ ավելի բարձր լինել և նրան իրան կողակից և լծակից համարել։

— Անունդ ի՞նչ է, որդի,— հարցրեց տիրուհին։

— Այծատուր է,— պատասխանեց տղան, Այծատուր անունից ամաչելով։

— Աստվածատո՜ւր... Գիտե՞ս, Աստվածատուր, իմ ամուսինը գրել է, որ դու գաս թե չէ՝ իմ աղջիկը քեզ տամ. սա է ահա իմ աղջիկը։ Ես չեմ կարող ընդդեմ կենալ նրա կամքին և իմ կողմից արգելք չկա. բայց եթե դու կամ սա հոժար չեք լինիլ, այդ բանումը ես մեղավոր չեմ լինի, պատասխանատուն դուք կլինեք։

Այս ասելով տիրուհին նամակը տվավ աղջկանը։

Այծատուրը այնպես կարծեց, թե երազումն է տեսնում այս անցքը, մնաց լուռ և վեր քաշված, ոչինչ չկարաց խոսել։ Իսկ Գոհարիկն ասաց.

— Ես հնազանդ եմ իմ հոր կամքին, բայց չեմ կարող բռնությամբ տիրել մի երիտասարդի սրտի վրա. գուցե նա համաձայն չէ։

Այծատուրը տեսավ, որ իր տեսածը երազ չէ և ոչ հանաք են անում իր հետ, բոլոր ուժը մի տեղ հավաքելով՝ ասաց.

— Ես ոչ պակաս հնազանդ եմ իմ տիրոջ կամքին. նա որ ինձ հրամայե, թե գնա ջուրն ընկիր, կընկնիմ, ուր մնաց որ նա ինձ ջուրը չի ձգում, այլ հանում է ջրից։

— Ուրեմն ամեն ինչ վերջացած է,— ասաց տիրուհին և կանչեց ծխատեր հոգևորականին, որին ցույց տալով իր ամուսնու նամակը՝ խնդրեց, որ շուտով պսակի ծեսը կատարե։

6

Հինգ օրից հետո սովդաքարը եկավ։ Հենց որ տան գավիթը մտավ, տեսավ Այծատուրին իր աղջկա հետ ուրախ-զվարթ ճեմելիս իր հոյակապ տան պատշգամբի վրա։

— Այս ի՞նչ խաղ է,— մտածեց նա.— երևում է, որ իմ գրածի հակառակ սա ամուսնացել է իմ աղջկա վրա։ Ուրեմն ես էլ ինձ այնպես ցույց կտամ, որ իբր թե իմ կամքն էլ այդպես է եղել։ Ներս մտավ ուրախ-զվարթ, բարևեց ամենքին և դառնալով տղային ու աղջկան՝ հարցրեց կնոջը՝ արդյոք կարո՞ղ եմ շնորհավորել։

— Այո՛, այո՛,— ասաց կինը.— ինչպես որ գրել էիր, թե մինչև իմ գալս պսակված պրծած լինին, եռ էլ անհապաղ կատարեցի քո կամքը։

Սյուտեը մարդը գլխի ընկավ, որ՝ իր նամակի բովանդակությունը փոխված է, և կասկած տարավ Այծատուրի վրա, թե նա ինքը կլիներ փոխած, և մտածեց վրեժխնդիր լինել։

Մյուս օրը գնաց իր այգին, այգեպանին պատվիրեց մի խոր հոր փորել և ամբողջ գիշեր կրակ վառել նրանում. իսկ վաղը առավոտյան,— ասաց,— մի մարդ կուղարկեմ այստեղ. հենց որ մտնի թե չէ, բռնեցեք և ձգեցեք նույն հորի մեջ և վրան նոր ցախ ածեցեք և այրեցեք։

Սովդաքարն ինչպես ասաց, այգեպաններն էլ այնպես պատրաստեցին։

Երեկոյան ընթրիքի ժամանակ սովդաքարը դառնալով Այծատուրին ասաց.

— Ես թեպետ գրեցի, որ պսակն առանց ինձ կատարվի, բայց հիմա տեսնում եմ, որ շատ եմ շտապել։ Այդ նրա համար արի, որ ինձ շատ դյուր եկար։ Ի՞նչ կասեն քաղաքացիք. չե՞ն ասիլ, թե ինչո՞ւ ժլատություն արավ և պսակն առանց հրավերքի կատարեց։ Վաղը պետք է մեծ հրավերք սարքեմ և ես ինքս կտեսնեմ բոլոր պատրաստությունը։ Քեզ կխնդրեմ միայն, որ գնաս այգին և այնտեղ թարմ մրգեղենի պատրաստությունը ինքդ տեսնես, չմոռանաս նաև թարմ ծաղիկներից բազմաթիվ փունջեր շինել տալ։

Մյուս օրը Այծատուրը վեր կացավ, պատրաստվեց, որ գնա այգի։ Ճանապարհին, աղոթատան մոտովն անցնելիս, միտն ընկավ, որ օրը կյուրակե է, և ամբողջ ժողովուրդը աղոթքի է կանգնած։— Գնամ, ես էլ կատարեմ իմ աղոթքը, աստծուն փառաբանություն տամ. դեռ վաղ է, չեմ ուշանալ ճաշվա համար հարկավոր եղածը պատրաստել։

Այծատուրը մտավ աղոթատուն և երկար մնաց այնտեղ։

Սովդաքարի սիրտը տրըփում էր անհանգստությունից. նրա համար մի ժամը տարու չափ երկարանում էր։ Մի երկու ժամից հետո շտապեց դեպի այգին, որ տեսնե՝ իր հրամանը կատարվա՞ծ է արդյոք։ Այգին մտավ թե չէ՝ նրան ցիմ-ցիմ վերցրին այգեպանները և ձգեցին հրաբորբոք հորի մեջ և իսկույն նորանոր ցախ ու փայտ թափեցին մեջը։ Դեռ հորը չընկած՝ շատ աղաղակեց, թե ես ձեր տերն եմ, ձեր աղան եմ, բայց ոչ ոք չլսեց, կարծես ամենքն էլ խլացել ու կուրացել էին։

Այս դեպքից երկու ժամ չանցած՝ Այծատուրը գնաց։ Նրան ընդունեցին իբրև իրանց տիրոջը և հայտնեցին, որ նրա հրամանը

կատարված է։— Ի՞նչ հրաման,— հարցրեց Այծատուրը և իմացավ, որ սովդաքարն ընկել է ուրիշի համար փորել տված հորը։

Այստեղ հեքիաթասանները ասում են, թե այգեպանների աչքոմը Այծատուրն իրանց տիրոջ նման է, իսկ սովդաքարը՝ մի ուրիշի։ Ասում էլ են, թե ճակտի գրածը չի ջնջվիլ, և ուրիշի համար հոր փորողը ինքը կընկնի նրա մեջ։

1889

ԵՂԵԳՆՈՒՀԻ

1

Մի թագավոր է էլել։ Այս թագավորը մի որդի է ունեցել միանուագար։ Տղան որ հասել է, հայրն ասել է.— Որդի, ժամանակ է քեզ ամուսնանալու. ո՞ւմ ես աղքադրել, ասա, գնանք նրան ուզենք կամ թե չէ մեզ կամք տուր, մենք ինքներս կընտրենք քեզ հարմար մի աղջիկ։

Որդին ասաց.— Հայր, ես միտք չունիմ աղջիկ ուզելու, իսկ եթե ուզելու լինիմ, պետք է այնպեսն ուզեմ, որ հոր ու մոր ծնունդ չլինի։

Զարմանում է հայրը և ասում է.— Այդպես բան անկարելի է։

Որդին ասում է.— Անկարելի բան չկա, հայր. աստուծո ձեռին ամեն ինչ հեշտ է, նա կարող է քարերից էլ մարդ շինել։

Քանի անգամ որ հայրն առաջարկում է որդուն ամուսնանալ, որդին միշտ այս է ասում, թե հոր ու մոր ծնունդ ուզելու չէ։

Շատ որ ասում է որդին, և ասում է հավատալով և ոչ թե գիտությամբ բանը դժվարացնելու համար, թագավորն էլ է հավատում, որ կարելի բան է այդ, սկսում է փնտրել որդու ուզածի նման մի աղջիկ։ Շատ է հարց ու փորձ անում, շատերն ասում են, որ լսել են, թե եղած է այդպես բան, բայց իրանց աչքովը տեսած չեն և չգիտեն, թե որտե՞ղ կարող են մարդիկ ծառի պես բանել և չունենալ ոչ հայր և ոչ մայր։

Թագավորն իր որդու սիրույն համար ընկալ աշխարհքի աշ-

խարհք և չոլն չոլ, շատ տեղ մարդ եկավ, շատ տեղ հարցուփորձ արավ, « ոչինչ չգտավ։ Վերադարձին մի անտառի մեջ պատահեց նրան մի ծերունի. նրան էլ հայտնեց թագավորը, թե ինչի է մարդ գալիս։ Ծերունին ասաց.— Դրա համար հարկավոր չէ հեռու գնալ. քո քաղաքի մոտ մի մեծ գետ կա, նրա ափին մի եղեգնուտ կա, ուր մարդի ոտք ընկած չէ դեռևս, որովհետև ոչն ունը սոսկալի և անմատչելի է համարվում, իսկ շատերն էլ կարծում են, որ այնտեղ աներևույթ ոգիք կան։ Կերթաս այնտեղ, կընտրես եղեգնեղեգ ամենից գեղեցիկը, կկտրես, չքանեցրած դանակով, կձգես ջուրը, և նա իսկույն կդառնա աղջիկ շատ գեղեցիկ հավանած։

Թագավորն ինչպես որ լսեց, այնպես էլ արավ։ Եղեգը աղջիկ դառավ և մնաց ջրի մեջ ընկղմված, դուրս գալ ամաչեց, որովհետև մերկ էր։ Թագավորն ասաց.— Սպասիր այստեղ, ես քեզ համար հագուստ և աղանիներ կուղարկեմ. դու իմ հարմարացածն ես. թեզ պիտի ուզեմ իմ որդուս համար։ Այդ ասաց թագավորը և նրա անունն էլ դրավ Եղեգնուհի, որ նշանակե եղեգն աղջիկ։

2

Գետի մոտերքում բնակվում էին թափառական սևադեմ բոշաներ։ Թագավորը որ հեռացավ, մի բոշա աղջիկ գնաց նույն տեղը, ուր որ թագավորն էր, և տեսավ այնտեղ մի հրաշալի գեղեցկության աղջիկ։ Հարցրեց նրա ով լինելը, աղջիկն էլ ասաց, որ թագավորի հարսնացուն է, հիմա պիտի գան տանեն իրան։

Բոշան տեսավ, որ Եղեգնուհին շատ միամիտ է. ուզեց ինքը բռնել նրա տեղը։— Դուրս եկ,— ասաց,— ջրից, ինձնից մի քաշվիր։

Աղջիկը դուրս եկավ ափը թե չէ, բոշան նրան խեղդեց ու գցեց գետը, իսկ ինքը մերկացավ և ընկղմվեց ջրի մեջ, որ կարծեն, թե նա է Եղեգնուհին։

Թագավորի աղախինները եկան փառավոր հագուստով և տեսան թ՞նչ... մի սև, այլանդակ բոշա աղջիկ։— Դո՞ւ ես,— ասացին,— Եղեգնուհին։— Այո՛,— պատասխանեց աղջիկը։— Հարա ինչո՞ւ ես սև ու տգեղ, նա շատ լքնաղ և աննման պետք է լինի։— Գիտե՞ք,— ասաց բոշան.— դուք շատ ուշացաք, արևն այրեց ինձ և փոխեց կերպարանքս։ Բայց այս վնաս չունի. եթե ինձ պահեն շուշա-

բանդ պալատում, մի քանի օրից կրկին կստանամ իմ առաջվան գեղեցկությունը։

Հավատացին նաժիշտները, թագուհու հագուստ հագցրին և տարան ապարանք։ Թագավորը որ տեսավ, մնաց՝ զարմացած։— Սա իմ տեսած աղջիկը չէ, ասաց։ Թագավորի որդին էլ որ տեսավ, ետ քաշվեցավ զզվանքով։— Սա չէ,— ասաց,— իմ ուզածը։ Նա սպիտակ պետք է լինի, ինչպես հրեշտակ, իսկ սա սև է, ինչպես սատանա։

Խոսեցրին աղջկանը. նա միևնույնն ասաց, ինչ որ նաժիշտներին։— Լավ,— ասացին, և տարան դրին մի շուշաբանդ սենյակում, որ այնտեղ գեղեցկանա, և սկսեցին մեծ պատվով պահել։ Միայն տղան մոտ չէր գնում. նա զգում էր, որ բանի մեջ չարի մատը կա։ Խառնված, որ այստեղ մի խարդախություն կա, բայց ինչպե՞ս իմանա եղելության որպիսությունը։

3

Շատ տխուր է թագավորի որդին։ Օրեր են անցնում, բայց նորահարսի գեղեցկանալու մասին լուր չկա. ինչքան լավ են պահում, այնքան ավելի է պլպլում նա, ինչպես սև սաթ, և գիրանում ու հաստանում է խոզի պես։

Թագավորի որդին իր մտատանջությունն ու սրտնեղությունը փարատելու համար գնաց դեպի գետի ափն զբոսնելու։ Այնտեղ նա ձկնորսներ տեսավ, որոնք ուռկանով ձուկն էին որսում։ Կանչեց նրանց իր մոտ և ասաց.— Ուռկաններդ ձգեցեք ահա այսինչ տեղը. ուզում եմ բախտս փորձել, ինչ որ դուրս գա, իմս է։

Ուռկանը ձգեցին, և դուրս եկավ մի հրաշալի ձուկն, ինքն արծաթի, իսկ թևերը ոսկի։ Զարմացան որսորդները. այնպիսի ձուկն նրանք ոչ լսած և ոչ տեսած էին։

— Քեզ միայն այժանի է այս ձուկը,— ասացին նրանք թագավորի որդուն,— եթե առանց քեզ էլ բռնած լիներինք, պիտի բերեինք քեզ ընծա։

— Շնորհակալ եմ,— ասաց թագավորի որդին և նրանց լավ վարձատրեց։ Ձուկը տարավ և ձգեց իր ծաղկանոցի ավազանը և այնուհետև էլ նրա մոտից չէր հեռանում. նրան նայելուց չէր կշտանում, նրա մոտ էր ուտում, խմում և ննջում։

Բոշա աղջիկն իմացավ, որ մի հրաշալի ձուկ է բռնել թագավորի որդին, և իսկույն հասկացավ, որ նա ինքն է եղեգնուհին, որ սպանվելուց հետո ձկան կերպարանք է ստացել, էլ քունը չտարավ։ Եվ մեկ օր ասաց նաժիշտներին.— Ի՞նչ կարող եմ գեղեցկանալ, քանի որ թագավորի որդին խորշում է ինձանից և իր սերը մի ձկան է տվել։ Եթե այդ գեղեցիկ ձուկը մորթեն և ուտեցնեն ինձ, իմ գեղեցկությունը կրկին վրաս կգա։

Այս բանը շատ որ ասաց և հավատացրեց ամենքին, ճարահատյալ ձուկը մորթեցին և ուտեցրին բոշային, բայց նա էլի մնաց բոշա ու բոշա։

4

Ձուկը որ կերավ աղջիկը, փշերը տվավ նաժիշտներին և հրամայեց, որ ուտեն։ Նաժիշտները գեղեցկանալու հույսով կերան ձկան փշերը, բայց մեկ փուշ ազատվեց նրանց բերանից և աղբի հետ պարտեզ ընկնելով մի ծառ դառավ, մի զարմանալի և հրաշալի ծառ, մշտադալար և մշտաբեր։ Նրա ծաղիկների հոտից մարդ չէր կշտանում, իսկ պտուղն էր փունջ մարդարիտ։ Թագավորի որդին հիմա էլ այդ ծառի վրա սիրահարվեց, նրա հովանու տակ հաստատեց իր բնակությունը և գիշեր-ցերեկ այնտեղից չէր հեռանում։

Բոշան գլխի ընկավ, որ այդ ծառը ձկան մնացորդից է առաջ եկել, շատ տխրեց և ամենայն հնարք գործ դնելով՝ խաբեց թագավորին, թե մինչև ծառը չկտրե, որդին իրան չի սիրիլ, և քանի որ նա չի սիրիլ, ինքը միշտ տգեղ կմնա։

Հավատաց թագավորը և կտրել տվավ ծառը։ Բոշան այրեց ծառի բոլոր մասերը և ինքն իր մեջ հանգստացավ։

Բայց ծառը կտրելիս մի կոկ տաշեղ թռավ և մի խեղճ պառավի տան հերթովն ընկավ ներս։ Այս բանը չնկատեց բոշան, չնայած որ ամեն զգուշություն գործ էր դրել, որ մի շյուղ անգամ չազատվի ձեռքիցը։

Պառավը երբ տեսավ տաշեղը, շատ հավանեց. այս ի՞նչ լավ խուփ է, ասաց և վեր առավ նրանով ծածկեց մի բզուղի բերան։

Պառավը շատ աղքատ էր և իր ձեռքի աշխատանքովն էր ապրում։ Առավոտը կանուխ դուրս էր գալիս տանից, գնում էր որա նրա մոտ ջահրա մանում, գործ անում, երեկոյին գալիս էր տուն։ Այսպես մյուս առավոտը հենց որ գնաց իր բանին, բղուղի խուփը տեղիցը թռավ և դառավ մի սիրուն աղջիկ, այսինքն՝ էլի դառավ առաջվան Եղեգնուհին, միայն այս անգամ պարզ և սիրուն հագուստով զարդարված։

Եղեգնուհին վեր առավ ավելը, տունը-տեղը մաքուր սրբեց, կրակ արավ, կերակուր եփեց և իրիկնադեմին, պառավի գալու ժամանակը, թաք կացավ մի անկյունում։ Պառավը ներս մտավ և տեսնելով ամեն ինչ սաղքած, կարգած, տունն ավլած, կերակուրը եփած, մնաց զարմացած։— Ո՞վ պիտի լինի արած այս բանը,— ասաց։— դուռը կողպած էր, ոչ ոք չէր կարող ներս գալ, կարելի է հերթովը լինի մտած։ Բայց ով որ է, ինձ լավություն է արել. վատություն չի արել. երանի միշտ այսպես ուներ։

Եղեգնուհին լսեց պառավի խոսքերը, տեսավ որ գոհ է, սկսեց հազալ ու կամաց-կամաց դուրս եկավ մութ անկյունից։ Պառավը որ տեսավ Եղեգնուհուն, մնաց հիացած։ Աղջիկը փաթաթվեց պառավին, համբուրեց նրա կուրծքից և ասաց.— Դու ինձ մայր, ես քեզ աղջիկ...

— Շատ ուրախ կլինիմ,— ասաց պառավը,— բայց դու այնքան գեղեցիկ ես, որ կարծես հողեղեն չլինիս, երեսիցդ լույս է թափվում. քանի որ դու կլինիս, էլ մեր տանը հարկավոր չի լինիլ ոչ ճրագ և ոչ կրակ։ Այս ասաց պառավը և սկսեց համբուրել աղջիկանը, ինչպես մի սրբուհու, և հարցրեց թե ո՞վ է նա։

— Իմ ով լինելը մի՛ հարցնիր. ժամանակ կգա կիմանաս. իսկ մինչև այն ժամանակը ոչ ոքի մի՛ էլ ասիլ, որ ինձ նման մի աղջիկ ունիս. իմ երեսը ոչով չպիտի տեսնի, բացի քեզանից։ Դու կշարունակես քո պարապմունքը, ես տանը կմնամ, ինձ համար կար ու գործ կբերես, ես կանեմ։

5

Եղեգնուհու հրաշալի կար ու գործի համբավը հասավ մինչև թագավորի ապարանքը։ Թագավորի որդին կանչեց պառավին և զանազան կար ու գործի պատվերներ տվավ նրան։ Պառավը շու-

տով հասցրեց այդ ամենը. տղան նայեց, մնաց զարմացած, կարծես ձեռք ու ասեղ չէր դիպած։

— Ա՛յ պառավ,— ասաց թագավորի որդին,— ո՞վ է կարել այս, պետք է ինձ ուղիղն ասես։

Պառավը չկարողացավ թաքցնել և ասաց, թե այսպես ու այսպես մի աղջիկ ունիմ, նա է անում այս ամենը։ Թագավորի որդին ասաց.— Ես պիտի տեսնեմ նրան։ Պառավն ասաց.— Շատ լավ, բայց թույլ տուր, առաջ իրանից հրաման առնեմ, թող իր կամքովը լինի։ Տղան ասաց.— Շատ լավ, բայց շուշացնես։

Պառավն ասաց աղջկանը, որ թագավորի որդին ուզում է նրա տեսությունը։ Աղջիկն ասաց.— Շատ լավ. կասես իրան, որ մենակ չգա, այլ թող հետը բերե իր հորն ու մորը և իր նորահարսին։ Դու ճաշի հրավիրիր նրանց, մի վախենար. ես ամեն պատրաստություն կտեսնեմ, նրանց քաղցած չենք թողնիլ։

Պառավը հայտնեց թագավորի որդուն, և նա էլ ինչպես ասել էր աղջիկը, վեր առավ հորն ու մորը և հարսնացվին ու գնաց պառավին հյուր։

Եղեգնուհին դռան մոտ դիմավորեց նրանց և թագավորավայել ձևերով ու պատվով ներս հրավիրեց հյուրերին։ Ամենքը մնային հիացած։ Ի՞նչ գեղեցկություն, ի՞նչ շարժմունք, ի՞նչ խոսք ու զրույց։ Եղեգնուհու հասակը իսկ և իսկ եղեգնի նման ճկուն ու ճոճուն. երբ խոսում էր՝ կարծես բերանից մարգարիտ էր թափվում. երբ ժպտում էր, երեսին վարդմանիշակ էր փռվում։ Թագավորն իսկույն ճանաչեց, որ իր տեսած աղջիկը սա էր, բայց ձայն չհանեց. թագավորի որդին էլ թեպետ չէր տեսել, բայց սրտով իմացավ, որ սա պիտի լինի իր հարսնացուն. իսկ բոշա աղջիկը ամենից շուտ ճանաչեց և ավելի ևս սև սևացավ։ Տուն մտան թե չէ, սկսեց սրտնեղել.— Ա՜խ, այս ո՞ւր բերիք ինձ,— ասաց,— մի՞թե մեզ կվայելե այսպիսի մի խրճիթ մտնել ու այս սատանայի երեսը տեսնել։

Բայց նրա խոսքերին ոչ ոք ուշադրություն չդարձրեց, ամենքի ուշք ու միտքը գրավել էր Եղեգնուհին։ Պառավի ուրախությանն էլ չափ չկար. տեսնելով իր աղջկա արած ազդեցությունը, տեսնելով, որ թագավորն ու թագուհին պատրաստ են իրանք ծառայելու նրան, բոլորովին ջահելացել էր և թև էր առել, թռչում. մերթ թագավորի ականջին էր քշփշում մի բան, մերթ թագուհու։ Պառավն այն էր ասում, որ իր աղջիկը հողեղեն չէ, այլ երկնքից

իջած մի չնաշխարհիկ էակ է, որ նրա ձեռքին ամեն ինչ հնարավոր է, և այլ այսպիսի գովություն ու փառաբանություն։ Վերջը թագավորն ասաց.

— Սիրուն աղջիկ, մենք քեզ հետ խոսելուց չենք կշտանալ. քեզ հետ ապրողի համար տարին մեկ ժամվան պես կանցնի. լավ կլինի, ուրեմն, որ շուտ ասես մեզ, թե ո՞վ ես, ի՞նչ տեղից ես ընկել այստեղ, ովքե՞ր են քո հայրն ու մայրը և որտե՞ղ են կենում։

Աղջիկն ասաց.— Ողջ լինի թագավորը, ես իմ մասին ոչինչ չեմ կարող ասել, բայց եթե թույլ կտաք ձեր աղախնին, և ձանձրություն չի լինի ձեր մեծությանը, և ես մի համառոտ հեքիաթ կասեմ։

— Շատ ուրախ կլինինք,— ասաց թագավորը,— ինչ որ ասես, մենք ուրախությամբ կլսենք։

Եղեգնուհին մեջ բերավ մի վազան չոր ճյուղ և տնկեց սուփրի մեջտեղը, մի մորթված ու մաքրած հում կաքավ էլ շամփուրը քաշած՝ բերավ, դրավ սուփրի վրա և ասաց.

— Այն, ինչ որ ասելու եմ, եթե ստույգ լինի, թող այս կաքավը անկրակ խորովվի և այս վազան չոր ճյուղը դալարի։

Ամենքն էլ աչք ու ականջ դառան, որ տեսնեն՝ աղջիկն ի՞նչ պիտի պատմե։ Աղջիկն սկսեց.

«Մի թագավոր մի որդի ուներ մինուճար։ Երբ որ որդին հասավ, և թագավորն ուզեց նրան ամուսնացնել, նա ասաց. «Հայր, ես կամուսնանամ, բայց իմ ամուսինս պետք է հոր ու մոր ծնունդ չլինի»։

Այս ասաց աղջիկը և դառնալով կաքավին՝ հարցրեց.

— Այսպես չէ՞, կաքավ։

Կաքավը պատասխանեց.

— Այդպե՛ս, տիրուհի։

Հետո աղջիկը դարձավ վազանը և ասաց.

— Վա՛ղն, ուրախացիր, խաղող վեր կալ։

Վազը դալարեց և սկսեց ծաղկել։ Կաքավն էլ սկսեց թշթշալ ու խորովվել, ինչպես կրակի վրա։ Աղջիկը շարունակեց.

«Ճար չկար. թագավորը շատ ման եկավ, որ իր որդու ուզած մի աղջիկ գտնե, վերջը մի ծերունու խորհրդով նա մի եղեգն կտրեց, ձգեց գետը. եղեգն իսկույն աղջիկ դառավ և ընկղմվեց գետի մեջ»։

— Այդպես չէ՞, կաքավ։

— Այդպե՛ս, տիրուհի։

— Վա՛ղն, ուրախացիր, խաղող վեր կալ։

Կաքավն սկսեց խորովվել, իսկ վազը խաղող վեր կալավ։ Բոշա աղջիկը գլխի ընկավ, որ հիմա իր շարագործությունը պիտի պատմե, սկսեց սրտնեղել, տրտնջալ, թե՝ շոգ է, չի կարող նստել, տուն է ուզում գնալ։

— Շատ ես շտապում,— ասաց թագավորը,— հիմա կտանենք քեզ ուր որ հարկավոր է։

Աղջիկը շարունակեց.

«Աղջիկը մերկ էր, չէր կարող ջրիցը դուրս գալ։ Թագավորն ասաց. «Այստեղ սպասիր, ես քեզ համար հագուստ կուղարկեմ, կհագնես ու կգաս։ Թագավորը գնաց թե չէ, որտեղից որ էր՝ մի աղջիկ դուրս եկավ, դեմքն այլանդակ ու սև, արաբ էր արդյոք, թե՞ խափշիկ, բոշա էր, թե՞ ղարաչի, խաբեց աղջկանը, դուրս քաշեց ջրիցը, խեղդեց, գցեց ջուրը և ինքն ընկղմվեց նրա տեղը։ Եկան նաժիշտները և նրան տարան թագավորին հարսնացու»։

— Այդպես չէ՞, կաքավ։

— Այդպե՛ս, տիրուհի։

— Վա՛ղն, ուրախացիր, խաղող վեր կալ։

Բոշա աղջիկը տեղից վեր կացավ, էլ չկարաց դիմանալ։

— Դա սատանա է,— ասաց,— և ինչ որ ասում է, բոլորն էլ սուտ է. դա ուզում է հիմա իմ տեղը բռնել և հնարում է այդ բանը. դա կախարդ է։

— Լավ,— ասաց թագավորը,— դու կարող ես գնալ տուն։ Նաժիշտնե՛ր, սրան տարեք տուն և լավ պահպանեցեք մինչև մեր գալը։

Եղեգնուհին պատմեց բոլորը, մինչև կաքավը խորովվեց ու խաղողն էլ հասավ։ Խորովածը կերան և վրան էլ խաղողը։ Եղեգնուհուն տարան պալատը, յոթն օր յոթը գիշեր հարսանիք արին, իսկ բոշային կապեցին մի ձիու պոչից և քարեքար տալով՝ սատկեցրին։ Ջարն այնտեղ՝ բարին այստեղ։

1889

ՁԱՆԳԻ-ՁՐԱՆԳԻ

1

Մարդ ու կնիկ մի տղա ու մի աղջիկ են ունենում. տղան հասած է լինում արդեն, իսկ աղջիկը դեռ բարուրումն է լինում։ Այս աղջիկը դեռ հազիվ հինգ ամսական եղած, սրանց տանը անարօրինակ բաներ են պատահում։ Երբ ոչ ոք չի լինում տանը, բացի ծծկեր աղջկանից, գալիս տեսնում են, որ շատ ուտելու բաներ կան պակասած։ Բադիռվ կաթն է լինում դրած, տեսնում են դատարկված. մածուն է լինում,— նույնպես. տաշտումն է՛լ հաց չի մնում, բղուղներումը՝ յուղ. այսպես և ուրիշ շատ բաներ։ Կարծում են, որ գող պիտի մտած լինի տուն, բայց տղան ուրիշ բան է մտածում և ոչ ոքի բան չի ասում։

Մեկ անգամ, երբ ոչ ոք չի լինում տանը, տղան թաք է կենում մի մութ քնջում և տեսնում է որ ի՞նչ.— ահա՛ իր ծծկեր քույրը վեր կացավ, թողած բաժինը կուլ տվավ, ընկավ տաշտի վրա, տեսավ հաց չկա, այլ միայն խմոր է հունցած, ընկավ խմորի վրա և տաշտը մաքուր սրբեց. հետո ընկավ դեսուդեն, շատ հոտոտեց, տեսավ՝ էլ բան չկա, սուս ու փուս գնաց իր տեղը պառկեց, ինչպես մի անմեղ երեխա։

Մայրը դուրս էր գնացել թոնիրը վառելու. երբ որ եկավ որ խմորը գնդե, տեսավ՝ խմոր չկա։ Տղան դուրս եկավ մի անկյունից, մորը դուրս կանչեց և պատմեց նրան, ինչ որ տեսել էր աչքովը։

Մայրը չհավատաց, թե ինչպե՞ս կարելի է, այդպես բան չի լինիլ։

Տղան ասաց.— Ուրեմն դո՛ւք գիտեք. այդ դուք, այդ ձեր աղջիկը. ինչ կուզեք՝ արեք. ես այս տանը չեմ կարող մնալ. դա որ մի քիչ էլ մեծանա, մեզ ամենքիս էլ կուտի. դա դև է, դա վիշապ է և ոչ թե աղջիկ։

Այս ասաց տղան և հեռացավ իրանց տանից։ Քիչ որ հեռացավ իրանց տանից, ճանապարհին նստեց։ Քաղցած էր, ուտելու հաց չուներ, մի քանի հատ չորացած ծիրան ուներ ջեբումը, հանեց կերավ և կորիզները թաղեց այնտեղ։ Այդ կորիզներից հետո երեք ծիրանի ծառեր դուրս եկան։

2

Տղայի անունը Թաթուխ էր։ Թաթուխը գնաց ընկավ շոլեշոլ, որ դուրս գա մի ուրիշ աշխարհ, բայց ոչ քաղաք գտավ, ոչ գյուղ. տեսավ՝ մի հովտի մեջ ոչխարներ են արածում, գնաց դեպի այն կողմը։ Գնաց տեսավ, որ ոչխարների մոտ հովիվ չկա։ Երեկոյան դեմ, երբ ոչխարի հոտը թեքվեց դեպի իր փարախը, Թաթուխն էլ նրանց հետ գնաց։ Երբ որ հոտը փարախ հասավ, մեկ մարդ ու կնիկ դուրս եկան մի քարայրից, երկուսն էլ կույր, կթեցին իրանց ոչխարները շոշափելով, իրանց ուտելու բաժինը վերցրին մի ջոկ ամանում, տարան հաց բրդեցին մեջը և սկսեցին ուտել։ Թաթուխը կամաց մոտեցավ բրդած ամանին և մի կողմից էլ ինքն սկսեց ուտել։ Կույրերը չիմացան, որ մի նոր հացընկեր ունեին, և թեև չկշտացան այս անգամ, բայց ձայն չհանեցին։ Այս բանը կրկնվեց մի քանի անգամ։ Մեկ օր էլ մարդն ասաց կնկանը.

— Ա՛յ կնիկ, այս քանի օր է, ես քաղցած եմ մնում, կաթն ամեն օրվա չափ է լինում, բայց ես չեմ կշտանում։

Կնիկն էլ ասաց.

— Այ մարդ, ես կարծում էի, թե դու սովորականից շատ ես ուտում, էնդուր եմ ես քաղցած մնում. ուրեմն մենք երկուսս էլ քաղցած ենք մնում. չլինի՞ թե մի ուրիշ մարդ մասնակից է լինում մեր սեղանին։

— Շատ հավանական է, որ այդպես լինի։ Ես մի ուրիշ բան էլ եմ նկատել։ Մինչև հիմա ոչխարները մենք էինք տուն քշում, բայց հիմա իրանք իրանց են ներս գնում. երևի մի քշող կա նրանց։ Գիտե՞ս ի՞նչ է. հաց ուտելիս, երբ որ ես կհազամ, դու իսկույն ձեռքդ մեկնիր, ես էլ մյուս կողմից կպարզեմ, և այսպիսով, եթե մեր կողքին մարդ լինի, կգրկենք նրան։

Երեկոյին հաց ուտելիս մարդ ու կնիկ կատարեցին իրանց պայմանը և մեր Թաթուխին իրանց ճանկը գցեցին։

— Ո՞վ ես դու,— ասացին,— ինչո՞ւ ես քեզ թաքցնում մեզանից։

Թաթուխն ասաց.— Ես մի օտարական մարդ եմ, եկել եմ ձեր օջախն եմ ընկել, դուք եղեք ինձ հայր ու մայր, ես կլինիմ ձեզ որդի, հովվություն կանեմ և ձեզ կպահպանեմ։

— Շատ լավ,— ասացին,— ուրեմն քեզ հենց աստված է ուղարկել մեզ համար. մենք զավակ չունինք, դու եղիր մեզ որդի։

3

Մյուս օրը հայրը Թաթուխին պատվեր տվավ և ասաց.

— Լսիր, որդի. երբ ոչխարը կտանես արածացնելու, ոչ ձախ կողմի սարը կտանես և ոչ աջ, այլ ուղիղ մեր դեմուդեմի սարը կտանես։

— Շատ լավ.— ասաց Թաթուխը, բայց հոր պատվերը չկատարեց։ Երկրորդ օրը հոտը քշեց ձախակողմյան սարը և հանդիպեցավ այնտեղ մի դիվական հարսանիքի։ Հավաքվել էին բոլոր քաջքերը և զուռնով ու դափով հարսանիք էին անում։ Սրանք որ տեսան Թաթուխին, գնացին բռնեցին և քաշ տվին տարան իրանց խնջույքը։ Ասացին։— Տեսնում ես հարսանիք է, մենք ամենքս զբաղված ենք, պետք է մեզ համար փայտ կոտրես։

Թաթուխը հոժարեցավ, և կացինը ձեռքն առած՝ սկսեց ճեղքել մի ահագին գերան։ Հենց որ գերանի ճեղքը բաց արավ մի քանի սեպով, կանչեց բոլոր քաջքերին, թե՝ եկեք, նկեք, շուտ արեք, ձեզ մի նոր օյին ցույց տամ, որ ձեր հարսանիքի խնդությունը ավելի կատարյալ լինի։ Հավաքվեցան բոլոր քաջքերը, նույնիսկ փեսացուն ու հարսնացուն էլ։— Աբա՜,— ասացին,— ի՞նչ օյին պիտի ցույց տաս։

Թաթուխն ասաց.— Ձեռքներդ դրեք այս ճեղքումը, ես հետո ցույց կտամ։

Ամենքն էլ շտապելով ձեռքները դրին գերանի ճեղքումը, որ շուտով տեսնեն օյինը։

Թաթուխն իսկույն սեպերը հանեց, և բոլոր քաջքերը միաբերան սկսեցին աղիողորմ ոռնալ։

— Վա՜յ, վա՜յ, կոտորվեցինք, այս ի՞նչ արավ այս մարդը. մի՞թե այսպես օյին կլինի։

Թաթուխն ասաց.— Այդ դեռ առաջաբանն է, օյինը հետո պետք է լինի։— Ասացեք, դո՞ւք եք հանել իմ հորն ու մոր աչքերը

և որտե՞ղ եք պահել... Մինչև նրանց աչքերը չտաք, ձեզ փրկություն չկա։

— Այո՛, այո՛, վա՜յ, վա՜յ,— ասաց մեկը, որի սիրտը ամենից շատ էր կսկծում ցավից...— Ահա այնտեղ է, այնտեղ, այն թփի տակին, գնա՛ վերցրու և ազատիր մեզ։

Թաթուխը գնաց վերցրեց աչքերը և եկավ հարցրեց.

— Աչքերը գտա, բայց ինչպե՞ս պետք է սաղացնեմ։

— Աչքերը կդնես իրանց տեղը և մեր նորահարսի աղլուխովը կշփես, իսկույն կառողջանան։

Թաթուխը գնաց վերցրեց նորահարսի աղլուխը։

— Դե հիմա ազատիր մեզ,— աղաղակեցին ամենքը։

— Կազատեի, բայց ո՞վ է երաշխավոր, որ դուք ձեր վրեժը չեք լուծիլ և մեծ պատուս ականջս չեք թողնիլ։ Չէ՛, այդ հույսը մի՛ ունենաք ինձանից, ձեզ փրկություն չկա, լացեք ձեր սև օրը։

Դևերի հարսանիքը սուգի փոխվեցավ։ Աղաչանք, պաղատանք չազդեցին նրա վրա, ու ի՞նչ խելք կլիներ, եթե փրկեր։ Կացինը ձեռն առավ մեր Թաթուխը և մեծից սկսած մինչև փոքրի գլուխները ջախջախեց, և այն սարը սրբեց դարանագործ դևերից։

4

Երեկոյին, երբ որ տուն դարձավ, կույրերի աչքերը դրավ իրանց տեղը, շփեց քաջքուհու աղլուխովը, և նրանք իսկույն առողջացան։ Փաթաթվեցին Թաթուխին և փոխ առ փոխ համբուրելով, չգիտեին՝ ինչպես հայտնեն իրանց շնորհակալությունը և սրտների ուրախության անչափությունը։

Այս դեպքից սիրտ առած, մյուս օրը Թաթուխն իր հոտը քշեց դեպի աջակողմյան սարը։ Հենց որ սարի գագաթը հասավ, մի ահագին մռնչյուն լսեց. նույնը լսեցին և ոչխարները և դողդողալով սկսեցին ետ-ետ քաշվիլ։ Թաթուխը չկտրեց նրանց առաջը, բայց ուզեց ինքն աչքովը տեսնել, թե ինչ գազան էր այդ մռնչողը։

Գնաց ձայնի ուղղությամբ, մինչև հասավ մի քարայրի, որի դռանը նստած մռնչում էր իրան անծանոթ մի գազան։ Եթե ասեր՝ առյուծ է, առյուծ չէր. եթե ասեր՝ վագր է, վագր չէր, եթե ասեր՝

վարազ է, վարազ չէր, բայց ինչ որ էր՝ մի սարսափելի գազան էր և իր կազմվածքովը ավելի շան նմանություն ուներ, մեծությունից տասնապատիկ մեծ։

Մինչդեռ Թաթուխը, մի քարի տակ թաք կացած, գազանին էր մտիկ տալիս, գազանն արդեն վազուց էր նկատել նրան։

— Է՛յ, մարդ,— կանչեց գազանը մարդկային լեզվով։— ես ծնունդի վրա եմ, կարող չեմ տեղիցս շարժվել, եկ ինձ ծնեցրու, մի՛ վախենար, քեզ մի վնաս չի լինիլ։

Երբ որ գազանը մարդու լեզվով խոսեց, Թաթուխը սիրտ առավ, ասելով մտքումը. «Մարդու լեզվով խոսողը մարդու խրդմ-մրտանք էլ կունենա, գնամ ազատեմ»։

Թաթուխը երբ որ մոտեցավ գազանին, գազանն ասեց.— Եթե ջուխտ ծնեմ, քեզ ուտելու եմ, իսկ եթե կենտ, կյանքդ քեզ կընծայեմ։

— Դո՛ւ գիտես,— ասաց Թաթուխը,— յա՛ բախտ, ինչ կլինի, կլինի։

Գազանի ցնկնած առաջին կորյունը Թաթուխը ձգեց իր հովվական պարկի մեջ, երկրորդը նմանապես, երրորդից հետո տեսավ, որ էլ չկա, այն դրավ գազանի առաջին և ասաց.

— Ահա այս մեկն ես ցնկնել, և կարժե՞ր միթե սրա համար այդչափ մոնչալ։

Գազանն ամաչեց իր գազանությունից.— Գնա,— ասաց,— կյանքդ քեզ եմ նվիրել, և եթե հոտն այս կողմը բերես, կարող ես ապահով լինել իմ կողմից, քեզ մի վնաս չի լինիլ։

5

Թաթուխը տուն տարավ նորածին լակոտները, որոնց աչքերը դեռ խփած էին, ու նրանց կերակրեց ոչխարի կաթով։ Այդ լակոտները մեծացան ու դառան իբրև ամենահավատարիմ շներ իր համար։

Թաթուխը նրանց մեկի անունը դրավ Զանգի, իսկ մյուսինը՝ Զրանգի։ Երբ որ մի տեղ էր գնում, տանում էր հետը, իսկ տանը եղած ժամանակ նրանց պահում էր շղթայակապ։

Սրա վրա անցավ տասը տարի կամ մի քիչ ավելի կամ պակաս, այդ աստված գիտե. Թաթուխն ուզեց գնալ դեպի իր ծնընդարանը, որ տեսնե՝ ի՞նչ վիճակի մեջ են այժմ իր ծնողները։ Իր այս միտքը հայտնեց իր նոր հորն ու մորը, նրանք էլ կամք տվին այն հուսով, որ շուտով կվերադառնա։ Թաթուխը մի ման կաթով լցրեց, դրեց թարեքին, հորն ու մորն ասաց.— Նայեցեք այս կաթին. երբ որ տեսնեք՝ գույնը փոխել է, կարմրել է կամ սևացել, իմացեք, որ ես մի նեղության մեջ եմ, իսկույն կարձակեք իմ Զանգին և Զրանգին, նրանք ինձ օգնության կհասնեն։

Թաթուխը գնաց և հասավ երեք ծիրանի ծառերին, որոնք արդեն շատ բարձրացել և ահագին կոկ ծառեր էին դառել։ Իջավ այդտեղ, փոքր-ինչ հանգստացավ և հետո գնաց իր ծննդարանը։ Ի՞նչ ծննդարան... էլ ոչ մի շունչ չկար կենդանի. ամբողջ գյուղը մնացել էր կանգուն, բայց մեջը բնակիչ չկար։ Թաթուխը ձիով էր գնում, հետն էլ մի խուրջին ուներ ճամփի պաշարով լիքը։ Ձին քշեց ուղղակի դեպի իրանց տուն և իջավ դռանը։ Մտավ ներս, և ո՞վ հրաշք, տեսավ իր քույրը նստած իրանց օջախի առջև, և ուրիշ ոչ ոք։ Քույրը վեր կացավ, փաթաթվեց եղբոր շլնջին, ասելով.

— Դու բարո՞վ ես եկել, հազա՞ր բարով, իմ եղբայր, իմ աչքի լույս, ո՞ւր էիր, ինչո՞ւ ուշացար այսքան։ Այս ասաց քույրը և շտապով դուրս եկավ դուռը։

Տեսավ ձին կապած, խուրջինը վրան։ Խուրջինն ամբողջ կուլ տված և ներս գնաց եղբոր մոտ ու հարցրեց.

— Եղբայր ջան, քեզ մատաղ, առանց խուրջինի ես եկե՞լ։

— Այո՛,— պատասխանեց Թաթուխը և իսկույն հասկացավ, որ խուրջինը կուլ է տվել։

Քույրը մեկ էլ դուրս եկավ և ձիու մեկ ոտը կերավ ու ներս գալով հարցրեց.

— Եղբայր ջան, քեզ մատաղ, ձիդ երեք ոտով ես բերե՞լ։

— Այո,— պատասխանեց Թաթուխը։

Քույրը դուրս գնաց և ձիու երկրորդ ոտն էլ կերավ և ներս գալով հարցրեց։

— Եղբայր ջան, քույրդ քեզ մատաղ, ձիդ երկո՞ւ ոտով ես բերել...

— Այո՛,— պատասխանեց եղբայրը։

Քույրն շտապով դուրս գնաց և երրորդ ոտը կերավ, էլի ներս գալով հարցրեց.

— Եղբայր ջան, ձիդ մի՞ ոտով ես բերել։

— Այո՛,— ասաց Թաթուխը, որի սիրտն արդեն սկսել էր դողդողալ։ «Չին ուտելուց հետո պիտի ինձ էլ ուտի. ի՞նչ պիտի անեմ, ես ինչպե՞ս պիտի ազատվեմ», մտածում էր նա։

Քույրը դուրս գնաց, չորրորդ ոտքն էլ կերավ, էլի ներս եկավ և հարցրեց.

— Եղբայր ջան, ոտքո՞վ ես եկել։

— Այո, քույրիկ ջան, ոտքով եմ եկել, ոտքով էլ պիտի գնամ, բայց չգիտեմ, պիտի թողնե՞ս, թե ոչ։

— Վույ. քոռանամ ես. եղբայր ջան, ինչպես կթողնեմ, ահա քանի տարի է աչքս քո ճանապարհին է, թե երբ պիտի եղբայրս գա, որ սրտիս մեջ տեղ տամ նրան։ Ով գիտե քաղցած ես, սպասիր, ես գնամ քեզ համար հաց բերեմ։

Քույրը դուրս գնաց թե չէ, տան անկյունից մի աքաղաղ դուրս եկավ և ասաց Թաթուխին.

— Ա՛յ տղա, քույրդ գնաց ատամները սրելու, որ գա քեզ ուտի. ճար ունես, տես։

— Ի՞նչ ճար անեմ, չգիտեմ,— ասաց տղան։

Աքաղաղն ասաց.— Մուշտակդ հանիր, մեջը մոխրով լցրու, հերթիցը կախ արա, ինքդ դուրս եկ, փախիր։ Նա կգա՝ կընկնի մուշտակիդ վրա, աչքերը մոխրով կլցվեն. մինչև նա աչքերը կմաքրե, դու բավականին տեղ գնացած կլինիս։

Ինչպես ասավ աքաղաղը, տղան էլ այնպես արավ ու փախավ։

Աղջիկը եկավ, տեսավ՝ եղբայրը չկա, մուշտակն ընկավ աչքովը, կարծեց՝ նա ինքն է եղբայրը. գազանի պես վրա ընկավ. քրքրեց, մոխիրը թափվեց վրան և աչք ու բերան լցրեց։ Տեսավ որ խաբված է, սաստիկ կատաղեց, շուտով թափ տվավ մոխիրը, աչքերը սրբեց ու վազեց եղբոր հետևից։

Թաթուխը բավական հեռացել էր. ետ մտիկ տվավ, տեսավ քույրն արդեն հասվեհաս է, ինքն էլ ջանք արավ, հասավ ծիրանի ծառերին և մագլցեց մեկի վրա։

Քույրը հասավ, փորձեց ինքն էլ բարձրանալ ծառի վրա, չկարողացավ. սկսեց ատամներով կրծել ծառի բունը և այնքան կրծեց, որ բոլորովին կտրեց։ Կտրած ծառն ընկավ երկրորդ ծառի վրա, տղան էլ նույն ծառի ծայրին նստեց։ Աղջիկն սկսեց կրծել երկրորդ ծառը։ Սա էլ կոտրվեց, ընկավ երրորդ ծառի վրա։ Աղջիկն սկսեց կրծել երրորդ ծառը։

Այս մեջտեղին Թաթուխի հայրագիրն ու մայրագիրը նայեցին նշան դրած կաթին, տեսան որ կորմրել է, իսկույն արձակեցին Զանգի-Զրանգին։ Մտերիմ գազաններն իսկույն գտան իրանց տիրոջ հետքը, տեսան թե ո՞ր կողմն է գնացել և ի՞նչ ճամփով, հսկայական ոստյուններ անելով մի ակնթարթում հասան իրանց տիրոջը։ Վերջին ծառն արդեն ընկնելու վրա էր, երբ որ նրանք հասան։ Թաթուխը նրանց տեսավ թե չէ՝ կանչեց վերևից.

— Զանգի-Զրանգի, հենց հուպ տվեք, հենց կուլ տվեք, որ մի պուտ արյուն կաթի։

Նրանք էլ այնպես հարձակեցին աղջկանը և այնպես կուլ տվին, որ միայն մի պուտ արյուն կաթեց մի տերևի վրա։

Տղան իջավ ծառից, Զանգի-Զրանգին փաթաթվեցին նրա ոտներին և կաղկանձելով հայտնեցին իրանց ուրախությունը տիրոջ ազատության համար։ Թաթուխն էլ նրանց գլխները շփեց և հայտնեց իր շնորհակալությունը. հետո արյունոտ տերևը վերցրեց, ծալեց, դրավ ծոցումը և ընկան ճամփա։

Շատ գնացին թե քիչ, սրանք հանդիպեցին մի քարավանի։ Քարավանի տերը որ տեսավ Թաթուխի շները, շատ հավանեց և ասաց մտքումը.— Եթե այս առյուծանման շներն իմս լինին, էլ հարամուց երկյուղ չեմ ունենալ, հարյուր հարամի (քարավան կտրող ավազակ) էլ որ լինին, սրանք երկուսով ամենի պատասխանն էլ կտան։

Հետո դառնալով Թաթուխին՝ ասաց.

— Ա՛յ տղա, եկ այդ շները տուր ինձ. քանի ջորի որ ուզես, իմ քարավանից վերցրու իրանց բեռներով։

— Բոլոր քարավանդ էլ որ տաս, էլի չեմ տա,— ասաց Թաթուխը։

— Ուրեմն դու քո երկու շներով ավելի՞ հարուստ ես, քան թե ես իմ ահագին քարավանով։

— Կարծեմ որ այդպես է,— պատասխանեց Թաթուխը։— Քո ահագին քարավանը քո կյանքը չի փրկիլ, դեռ կարող է քո մահվանդ էլ պատճառը լինել, որովհետև եթե հարամիքը գան, առաջ քեզ կսպանեն, հետո ապրանքդ կտանեն. իսկ իմ կյանքս ապահով է, քանի որ սրանք կան։ Ուզենամ՝ այս բոպեիս քո բոլոր քարավանդ ձեռիցդ կխլեմ սրանց օգնությամբ, բայց ես հարամի չեմ, որ այդպես անեմ։

Այսպես խոսելով բավական տեղ գնացին, հետո քարավանի տերն ասաց.

— Որովհետև շներդ ինձ չես տալիս ոչ մի գնով, եկ ես քեզ մեկ հեշտ բան կասեմ. եթե իմանաս, իմ քարավանը քեզ, իսկ եթե ոչ՝ քո շներն ինձ։

Թաթուխն ասաց.— Համաձայն եմ. ասա՛, տեսնեմ՝ ի՞նչ պիտի ասես։

— Ահա՛, տես իմ այս ձեռիս գավազանը. եթե իմանաս, թե սա ինչի՞ է, իմ քարավանը քեզ, իսկ եթե չիմանաս, քո շներն ինձ։

— Շատ բարի,— ասաց Թաթուխը և սկսեց իր գիտեցած բոլոր ծառերի անունը տալ, ասելով—հոնի է, զկոի է, սզնի է, բոխի է, աճարքի է, լորի է, թխկի է, տկողնի է, կաղնի է...— և այսպես շատ ծառերի անուն տվավ, մինչև որ բոլոր գիտցածը հատավ, բայց ոչ մեկն էլ այն չէր։

— Ուրեմն շներն իմն են,— ասաց քարավանի տերը.— կապիր դրանց և տուր ինձ։

— Սպասիր, դեռ էլի մտածեմ,— ասաց Թաթուխը.— մի ծառի անուն գիտեմ, ահա լեզվիս ծայրին է, բայց ուղիղ միտս չի գալիս, որ ասեմ, հաստատ գիտեմ, որ այն պիտի լինի։

Այս միջոցին ծոցումը մի բան սկսեց ճրրալ ու վերջը որոշ ձայնով ասաց.

— Ճրրը... ճրրը ճա՛պկի, ճրը ճա՛պկի, ճա՛պկի։ Այս ասողը ծոցումը դրած արյունի կաթիլն էր։

— Գտա՛, գտա՛,— բացականչեց Թաթուխը և գավազանից բռնելով՝ ասաց՝ ճապկի է։

— Գտար,— ասաց քարավանի տերը. քեզ արժանի է իմ քարավանը։

— Բոլոր քարավանդ ինձ հարկավոր չէ,—ասաց Թաթուխը.— ես մի հովիվ մարդ եմ, վաճառական չեմ. մի բեռը շորեղեն տուր, տանեմ ինձ համար աղջիկ ուզեմ, պսակվեմ, այդ էլ բավական է ինձ։

Քարավանի տերն ընտրեց ընտիր ճոթեղեն և ինչ զարդ ու ու զարդարանք, որ պետք է հարսի ու փեսայի համար, բարձեց մի ջորու վրա և տվավ Թաթուխին։

Մի քիչ որ հեռացավ Թաթուխը, տեսավ, որ ծոցումը մի բան է պրպտում։ Ձեռքը ներս տարավ որ տեսնի՝ ի՞նչ է, և դուրս քաշեց մի ահագին օձ։ Արյունի կաթիլը դարձել էր օձ և գլուխն արդեն հանել էր և մեկնել դեպի Թաթուխի բուկը։ Թաթուխը դեն շպրտեց այդ օձը, որ ամեն մի վայրկյանում հաստատում և երկարում էր, որ վիշապ դառնա, և ասաց իր շներին.

— Զանգի-Զրանգի, հենց հուպ տվեք, հենց կուլ տվեք, որ մի պուտ արյուն չկաթի։

Շներն այնպես էլ արին և վիշապ աղջկա հետքը կտրեցին։

Թաթուխը հասավ տուն ամեն բարիք բարձած ջորուն։ Իր համար աղջիկ ուզեց, պսակվեց։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։

1890

ԱՍԼԱՆ-ԲԱԼԱ

1

Եղել է չի եղել մի թագավոր։ Մեկ օր այս թագավորի որսորդներից մեկը գալիս է իր մոտ և ասում.

— Թագավորն ապրած կենա, ես էսօր մի զարմանալի բան տեսա մեր որսորդության անտառում։ Մի էգ ասլան տեսա և նրա հետ մի մանուկ յոթ կամ ութ տարեկանի չափ։ Մանուկն ու ասլանը խաղում էին իրար հետ, ինչպես մայր ու որդի։ Մեկ ուզեցի նետ ձգել, ասլանին սպանել, բայց մեկ էլ վախեցի, ասացի՝ վա՛յ թե մանուկին դիպչի կամ ասլանը վիրավորվի ու հարձակվի վրաս. սրա համար սուսուփուս ետ փախա։

Այս որ լսեց թագավորը, շատ զարմացավ և հրամայեց, որ մի քանի հազար մարդով գնան շրջապատեն անտառը, ասլանին սպանեն կամ փախցնեն, իսկ երեխային ողջ-ողջ բռնեն, բերեն։

Թագավորի հրամանը կատարվեց։ Երեխային բռնեցին և բերին։ Մի կայտառ և սիրուն տղա էր. աչքերը խոշոր, ճակատը լայն, գանգուր մազերը առյուծի ճանկերով սանրված ու փռված ուսերի վրա, մեջքը բարակ, կուրծքն ու թիկունքը լայն։

Տասը հոգով հազիվ էին կարողացել բռնել և կապոտել, բայց շատերին ճանկռտել էր սուր-սուր եղունգներով։ Խեղճը մերկ էր և համր, խոսել չգիտեր, այլ մռնչում էր առյուծի պես, չգիտեր, որ ինքը մարդ է և ոչ առյուծ։

Տեսան, որ արձակ պահելու հնար չկա, նրան կապեցին երկաթե շղթայով և սկսեցին քիչ-քիչ ձեռնասունը անել և ընտելացնել։ Նրան անվանում էին Աղլան-Բալա, այսինքն՝ առյուծի հագ, բայց թագավորի որդին, Վուրգը, որ շատ սիրեց նրան, հենց առաջին օրից, նրա անունը դրավ Արսենն։ Վուրգն էր պահում Արսենին, նրան հաց ու ջուր տալիս և ամեն տեսակ համադամ կերակուրներ, որ նա ուտում էր յոթը մարդու չափ։ Վուրգը հայելու մեջ Արսենին ցույց տվավ նրա պատկերը, որ նա տեսնե, թե ինքը մարդ է և ոչ առյուծ։ Եվ ճշմարիտ որ նա առյուծի ծնունդ չէր, այլ մարդու։ Զագը կորցրած մի առյուծ պատահմամբ գտնում է մորը կորցրած մի ծծկեր երեխայի և տանում է ծիծ տալիս, պահում։

Արսենը մի քանի օրվա մեջ շատ մեղմացավ և այնքան սիրեց Վուրգին, որ բոլորովին անձնատուր եղավ նրան։ Վուրգն էլ արձակեց նրան կապանքներից, լողացրեց, գլուխը սանդրեց, երկար ու սուր-սուր եղունգները կտրատեց, իր հագուստի նման հագուստ հագցրեց և սովորեցրեց նրան խոսել, երգել, խաղալ և բոլոր այն բաները, ինչ որ ինքը գիտեր։ Երեք ամիս չանցած՝ Արսենի վրա ոչ մի վայրենության նշան չմնաց, այլև երևաց, որ նա շատ շնորհալի է և իմաստուն։ Նրա լսողությունը, տեսությունը, հոտառությունը տասնապատիկ, քսանապատիկ ավելի էին զարգացած, քան թե սովորական մանուկներինը։ Նրա լեզուն այնքան ճարտար չէր, ինչքան սիրտը, որ լուռ ու մունջ հայտնում էր նրան, թե ինչն է լավ, և ինչը վատ, ինչն է չար, և ինչն է բարի։ Սրտի իմացությունը, այն, որ ասում են՝ «սիրտս ասում է, սիրտս չի տալիս, սիրտս իմացավ, սիրտս քաշեց», ահա այս սրտի իմացությունը, որ ուսումնական մարդիկն անվանում են բնազդ (բնազդումն-բնազդեցություն), Արսենի մեջ չափից դուրս զարգացած էր և նա շատ բան իմանում էր, առանց նրա փորձն առնելու։

Ինչքան որ Վուրգը Արսենին կրթեց, բան սովորեցրեց, մի այնքան էլ ինքը նրանից սովորեց։ Վուրգը կրթեց Արսենի լեզուն, միտքը, Արսենն էլ կրթեց Վուրգի մարմինն ու սիրտը։ Արսենը սիրում էր խաղալ, վազել։ սիրում էր սար, ձոր, անտառ, տունը նրա համար մի տեսակ բանտ էր թվում, նա իր հետ քաշում, տանում էր և Վուրգին և զանազան մարզություններով կազդուրում էր նրա քնքուշ կազմվածքը։ Այսպիսով՝ ինչքան որ Արսենը փոխվեցավ վայրենությունից քաղաքավարի մարդ դառնալով, մի այնքան էլ Վուրգը փոխվեցավ՝ ընկնելով բնության ծոցը. նա ուժեղացավ, ճարպիկացավ, առաջվան վախկոտությունը մոռացավ, անվեհեր սիրտ ստացավ և քաջություն։ Այսպես Վուրգն ու Արսենը միմյանց կրթելով եղան ինչպես մի հոգի և մի մարմին, մինչև դառան տասնյոթ-տասնութ տարեկան։

2

Մեկ անգամ զբոսնելու էին դուրս եկել գետափը։ Աղջկերքը կժերով ջուր էին տանում գետիցը։ Նրանց մեջ կար և մի պառավ՝ նիհար և կնճռոտ դեմքով։ Վուրգի մոտով անցնելիս՝ պառավը խեթ աչքով նայեց Վուրգի վրա։ Վուրգին դյուր չեկավ պառավի այս խոժոռ հայացքը։

— Այս պառավի կուժը պիտի կոտրեմ,— ասաց Վուրգն Արսենին, և դեռ ընկերոջ պատասխանը չառած՝ մի քար նետեց պառավի հետևից, որ ուղիղ կուժին դիպավ և կոտրեց։ Ջուրը թափվեց և ողողեց խեղճ պառավին։

Թրջված պառավը ետ նայեց և երբ տեսավ, որ թագավորի որդին էր այդ չարությունն անողը, ասաց.

— Ա՛յ որդի, ի՞նչ անեծք տամ քեզ... Անտես-Աննմանի սիրովը վառված տեսնեմ քեզ. նրա համար այրվիս, տանջվիս, որ սիրտս հովանա։

3

Պառավի անեծքը սիրո հրեշտակի նետի պես ցցվեց Վուրգի սրտումը։ Վուրգն սկսեց տխրել, նիհարել։ Նա, որ Արսենից ջոկվելու սովորություն չուներ, միայնակ էր ընկնում սար ու ձոր և առանձնության մեջ ողբում, լաց լինում, Անտես-Աննմանի անունը տալիս, դեպի նրան թռչում հոգով ու սրտով, նրան գովում

երգերով, նրան կանչում օգնության։ Անտես-Աննմանը պատկերանում էր նրա երևակայության մեջ իր աննման գեղեցկությամբը։ Նա աչքերը խփում էր այդ ժամանակ, ծունկ չոքում, փառաբանում, զմայլում այն աստիճան, որ ուշքը գնում էր գլխից, նվաղում, վայր ընկնում։

Այս այն սերը չէ, որ մեր ժամանակ մեր աշխարհումը կա։ Սա սեր էլ չէ իսկապես, այլ մի զորեղ փոսփաղ, մի ուժգին իղձ, մի սաստիկ ցանկություն, մի մուրազ և ուրիշ ոյնպիսի զգացում, որ մարդ ունենում է իր սրտի ուզած երջանկությունը ձեռք բերելու համար։ Այսպիսի իղձ մարդ կարող է ունենալ և ուսում, գիտություն ձեռք բերելու համար, իր հղացած նշանավոր միտքը իրագործելու համար և ուրիշ շատ բաների։

Հին ժամանակները քաջ երիտասարդները իրանց հերոսությունը նրանով էին ցույց տալիս, որ սար ու ձոր էին ընկնում և իրանց ուզած լավ բանը ձեռք բերում կամ մտքումը դրած քաջությունը կատարում։ Իհարկե, այդ բաների ձեռք բերելը պետք է շատ դժվար լիներ և ոչ խաղ ու պար, պետք է ամեն մարդու գործ չլիներ. եթե ոչ՝ էլ ի՞նչ քաջություն, էլ ի՞նչ հերոսություն կարող էր համարվել։

4

Արսենից չէր կարող ծածուկ մնալ Վուրգի սրտմաշությունը։ Նա հեռվից հսկում էր և տեսնում էր ամեն բան։ Նա այս բանը լավ առիթ էր համարում թե՛ իր քաջությունը փորձի ենթարկելու և թե՛ ցույց տալու իր անհուն սերը, որ ուներ դեպի Վուրգը։ Եվ ահա մեկ օր գտնում է նրան անտառումը և ասում.

— Եղբայր, ես տեսնում եմ, որ դու հալումաշ ես լինում, ինձանից ինչո՞ւ ես թաքցնում քո վիշտը։ Էլ ես ո՞ր օրվա համար եմ, որ քեզ քո մուրազին չհասցնեմ։ Երթա՛նք, երթա՛նք, լավ է հուսով մեռնել գործի մեջ, քան թե անհույս սատկել անգործության մեջ։ Պառավի անեծքը իսկապես անեծք չէ, այլ մի շատ գեղեցիկ օրհնություն։ Եթե նա անիծած չլիներ, դու և այդ օրը չէիր ընկնիլ և ոչ էլ ուրեմն կաշխատեիր ձեռք բերել աշխարհիս ամենից գեղեցիկը։

Արսենի այս խոսքերից սաստիկ հուզվեց Վուրգը, գրկեց նրան և արտասուքն աչքերին համբուրեց նրան սիրահար պատանու չերմ համբույրով։

— Արսեն ջան, Արսեն,— բացականչեց նա,— որքան մեծահոգի ես դու։ Ես չէի ուզում իմ վշտին և կրելիք նեղություններիս մասնակից անել քեզ։ Դու ինչո՞վ ես մեղավոր. կուժը ե՛ս կոտրեցի, տանջվողն էլ ե՛ս պետք է լինիմ։ Բայց ի՞նչ կարող եմ անել ես առանց քեզ։ Այսուհետև իմ մուրազը քո ձեռին է, իմ կյանքը քո բռոմն է. իմ գլխումս էլ խելք չի մնացել, դու պետք է ինձ առաջնորդես, դու պետք է ինձ կամ կյանք տաս և կամ մահ։

— Ոչ թե մահ, այլ կյանք միայն,— ասաց Արսենը։— Զորացիր և մի՛ վհատվիր. մենք շուտով ճանապարհ կընկնենք։ Եվ ժամանակ է արդեն, որ մենք մեր ուժն ու շնորհքը ցույց տանք, էլ ուրիշ ի՞նչ բանի ենք պետք. գութան չենք վարում, տավար չենք պահում, պատերազմ էլ չկա, որ կռիվ գնանք, ինչո՞ւ համար ենք ապրում աշխարհիս երեսին, ինքս էլ չգիտեմ։ Ջրի ապրելն ի՞նչ կվայելե տղամարդին։

— Բայց հայրս թույլ կտա՞ր արդյոք, կամ ինչպե՞ս հայտնենք նրան։

— Իմաց կտանք մի կերպ։ Գիտեմ, որ թույլ չի տալ, բայց մեզ կբացատրե մեր ձեռնարկության դժվարությունը, մեր նպատակին հասնելու անկարելիությունը և առանց մեր հարցնելու՝ ինքը կհայտնե տեղն ու ճանապարհը, որ մենք չգիտենք։

5

Թագավորը բացի Վուրգից ուներ մի աղջիկ, գեղեցկությամբ ոչ պակաս, քան Անտես-Աննմանը։ Աստղիկ էր անունը։ Սա նույնքան սիրում էր Արսենին, ինչքան և Վուրգը։ Իմանալով եղբոր միտքը, հորը հորդորում էր, որ թույլ չտա նրանց այդպիսի մի վտանգավոր ճանապարհորդություն անելու։— Ով է ետ եկել այնտեղից, որ դրանք ետ գան,— ասում էր Աստղիկը։— Կանչիր, խրատիր դրանց, որ այդպես բան չանեն։ Ո՞վ է լսած, որ չտեսած աղջըկա վրա սիրահարվին. այդ մի խենթություն է, ուրիշ ոչինչ։

Թագավորը կանչեց երկուսին էլ և ասաց.

— Ամեն բան հայտնի է ինձ։ Շատ ցավում եմ, որ այդպիսի մի ցնորական վիշտ է ընկել որդուս սիրտը, բայց չեմ կարող թույլ տալ ձեզ։ Այդ չտեսնված աղջկան համար շատ թագավորների որդիք են կոտորվել, շատ զորք է փչացել, ես ինքս մասնակցել եմ այդ կռիվներին, օգնության եմ գնացել ուրիշներին։ Նա կենում է Յոթը-Լեռան քաղաքին, Սև Բերդումը։ Քառասուն եղբայր ունի՝ մեկը մյուսից ածդահա։ Քառասուն գունդ զորք էլ որ լինի, նրանց ոչինչ չեն կարող անել։ Ամեն մեկը մի ահագին կաղնի ծառ պոկած՝ զորքերին այնպես են սրբում պատերազմի դաշտումը, ինչպես մենք սրբում ենք մեր կալերը ցախավելով։ Ի՞նչ խելք կլինի ուրեմն ձեր կողմից, գնալ և այդ դևերի ճանկն ընկնել։

— Ներիր ինձ, հայր թագավոր, որ համարձակվեմ քեզ հետ վիճել,— ասաց Արսենը։— Ոչ մի ուժ աշխարհիս երեսին չի կարող աստուծո կամքին հավասարվել։ Ուժն աստծու ձեռին է, երբ ուզենա, կզորացնե, երբ չէ՝ կթուլացնե և զորեղ դևին մի երեխա կշինե։ Դու ասում ես, շատերն են կռվել և հաջողություն չեն ունեցել. բայց արդյոք այդ շատերի մեջ եղե՞լ է մի մարդ, որ իր սնունդն առյուծից լինի առած։ Ով տվավ առյուծին այդ գութը, որ ինձ պահե, պահպանե, եթե ոչ աստված։ Արդյոք այդ կռվողների մեջ եղե՞լ է մեկը, որ Վուրգի նման սիրահարված լիներ և կամ մի որևէ պառավ իր անեծքով կամ օրհնությունով նրա մեջ ձգած լիներ Աննմանի սերը։ Ինչո՞ւ չկարծել, որ այս հիշած բոլոր դեպքերի մեջ մի աներևույթ կապ կա, և դրանք նրա համար են այսպես միացել, որ ձեռք բերեն այն, ինչ որ ուրիշները չեն կարողացել։

— Շատ խելոք ես խոսում, Արսեն,— ասաց թագավորը,— դու լավ պատգամախոս կլինես և ամեն հրաշագործություն կհաջողի քեզ, քանի որ քո մանկությունն ինքը մի հրաշք է։ Բայց պետք է գիտենաս, որ քուրմ է եղել թե հրաշագործ, թագավորի հրամանովն են անում, ինչ որ անում են, իսկ թագավորը նրանց գործ է դնում իր օգտին, առանց նրանց ինքն անձամբ հավատալու։ Դու կարող ես, այո՛, քրմապետ լինել, բայց ոչ ինձ հավատի բերելու համար։ Իմ ասածը ասած է։

— Հայր,— խոսեց Վուրգը,— միևնույն է, եթե չգնամ էլ, այս ցավով պիտի մեռնիմ ես։ Ես արդեն մեռած կլինեի, եթե Արսենի հուսատու հորդորները չլինեին։ Եթե թույլ չտաս մեզ գնալ, իմ հուսահատվելս ու մեռնելս միասին կլինի։ Գթա՛ ինձ, օրհնիր մեզ և ճամփա դիր։

— Մի՛ հավատար, հայր,— մեջ ընկավ Աստղիկը.— ո՞վ է մեռել սիրուց, որ եղբայրս մեռնի։ Պարապությունից խենթություն է եկել վրան։ Պատերազմ հայտնիր Անդաս թագավորի դեմ, թող երթա՝ այնտեղ ցրվե իր ցնորքները...

— Քո՞ւյր իմ, սիրելի՞ քույր...— բացականչեց Վուրգը, աղաչողական հայացք ձգելով Աստղիկի վրա։

— Եղբա՞յր իմ, սիրելի եղբայր...— պատասխանեց Աստղիկը, այնպիսի մի հայացք ձգելով Արսենի վրա, որի մեջ ամփոփված էր մի ամբողջ վեպ։

Վուրգն չմացավ, որ քույրը նույնպես սիրահարված է, և եթե իր սերը պահանջում էր հեռանալ, քրոջ սերը, ընդհակառակը, պահանջում էր չհեռանալ։

— Գնանք, գնանք.— ասաց Արսենը։— Մենք մեզ կհանձնենք աստուծո կամքին. ինչպես նա կտնօրինե, մենք էլ այնպես կվարվենք։

6

— Վճռվա՛ծ է,— բացականչեց Արսենը Վուրգի ներկայությանը, իբր ինքն իրան խոսելով.— պետք է գնանք, պետք է գնալ անպատճառ... Ես Աստղիկի սիրույն ինձ արժանի չեմ համարիլ, մինչև նրա եղբորը չհասցնեմ իր մուրազին։ Ո՞վ եմ ես, ո՞վ է իմ հայրը, մայրը... Ասլան-Բալա... դատարկ հնչյուն, որ ոչ մի եղանակ չունի։ Ի՞նչ եմ արել, ինչո՞վ եմ բարձրացրել այդ անունը, ինչո՞վ եմ պատվել իմ առյուծ դայակիս կաթի արժեքը... Ո՛չ, ես առյուծի կաթ չեմ ծծել ուրեմն... Գնանք, գնանք, Վուրգ... Դեռ հայտնի չէ, թե մեր երկուսից ո՞րն է ավելի սիրահարված, և որի՞ առջև կան ավելի խոշոր բարոյական խոչընդոտներ։ Գնանք, հոգիս, գնանք, փետրավորվենք սիրո թևերով և սլանանք դեպի վեր և վեր... Ա՛հ, ի՞նչ օր կլինի, երբ մենք արդեն Սև Բերդումը կլինենք...

Մեր քաջերը, այսպես ոգևորված, գնացին թանգարանը, ընտրեցին իրանց ուզած զենք ու զրահը, վերցրին մեկ-մեկ հատ

հին, պապական աղոթած թրեր, որոնցով քար ու երկաթ կարելի էր կտրել, թամքեցին թռչկան ձիաները և «որսի ենք գնում» ասելով, ձիանը հեծնելն ու անհետանալը մեկ արին։ Օրեր անցան, մեր տղերքը չերևացին։ Նոր գլխի ընկան, թե ուր կլինին գնացած...

7

Ցոթը-Լեռան քամակին, Սև Բերդումը Անտես-Աննմանի հսկա եղբայրները մեծ տոն էին կատարում իրանց արած հաղթությունների համար։ Ցոթը դևի գլուխ էին կտրել և յոթն աղջիկ ազատել գերությունից։ Իրանք էլ յոթը եղբայր էին ընդամենը, թեև նրանց համբավը քառասունի էր հասել, յոթն էլ պսակվել էին գերությունից ազատված յոթն աղջկերանց վրա։ Ամենքն էլ ուրախ ու զվարթ էին. տխուր էր միայն Անտես-Աննմանը։

— Ինչո՞ւ այդչափ տխուր ես, քույր իմ,— ասաց մեծ եղբայրը։— Ցոթը եղբայր ունիս, յոթն էլ քեզ համար գլուխը ետ դրած, հիմա էլ յոթը հարս ունիս, ամենքն էլ քո աղախինդ լինելու պատրաստ, թեև բոլորն էլ մեծ իշխանների և թագավորների աղջկերք են։ Եթե մեկ հոգս ունիս, ասա մեզ, մենք պատրաստ ենք կատարելու քո ամեն մի չնչին քմույշն անգամ։

— Ես ինքս էլ չգիտեմ, թե ինչի եմ տխուր,— ասաց Աննմանը.— այս գիշեր մի երազ տեսա, երևի նրանից է...

— Ի՞նչ ես տեսել, ի՞նչ ես տեսել, ասա մեզ,— կրկնեցին բոլոր եղբայրները։

— Երազումս տեսնում էի երկնքից իջած երկու հրեշտակ, մինը քան զմյուսը գեղեցիկ։ Մեկը թուր ուներ ձեռին, իսկ մյուսը մի փունջ ծաղիկ։ Թրավորը թուրը շողշողացնում էր ձեր գլխներին, իսկ փնջավորը դեմ էր անում ինձ իր հոտավետ փունջը։ Այս երազիս մեջ էի, մեկ էլ պատուհանիս առջև մի թռչնիկի ձայն լսեցի, որ երգում էր «Վուրգ-Վուրգ-Վո՛ւրգ»։ Այս անվան վրա ես զարթնեցի և մի կերպ եղա, քիչ մնաց սիրտս գնում էր։ Կարծես թռչնիկը այն հրեշտակի անունովը տվավ, որ ինձ մի փունջ ընծայեց, և ինչքան գեղեցիկ էր նա, ինչքա՜ն, ինչքա՜ն...

Ասաց քույրը և արտասուքն աչքերին, հեռադավ եղբայրներից, որ իր ներքին հուզմունքն ու շփոթությունը ծածկե նրանցից։

— Մեր քույրն իր բուրան ստացել է,— ասաց մեծ եղբայրը.— եթե այդ բուրան տվողը գա, մենք պիտի հաղթվենք։ Սրի շողշողալը մեր հաղթվելն է նշանակում։

— Եվ կարծեմ ժամանակն էլ է, որ մեր քույրն իր մուրազին հասնի,— ասաց փոքր եղբայրը,— բավական է, որքան արյուն թափեցինք դրա համար։ Այսուհետև ով որ գա, իմ գլխի վրա տեղ ունի։

— Այդ շատ լավ ես ասում,— ասաց մի ուրիշը,— բայց կարելի է, թե եկողը նրա Վուրգը չէ, այլ մի ուրիշը, մի՞թե մենք պետք է ամեն եկողի տանք մեր քույրը։

— Ո՛չ, ո՛չ,— ձայն տվին ամեն կողմից,— թող մեր գլխին թուր շողշողա, և մեր քույրը իր ուզածին գնա։

Այսպես խոսեցին եղբայրները, բայց ամենի սիրտն էլ այնպիսի մի ահ ընկավ, որ մինչև այդ օրը նրանցից ոչ մեկն զգացած չէր։

8

Մեր տղերքը ուղիղ յոթն օր ճանապարհ գնացին, ճամփին շատ շար ու բարի տեսան, շատ տեղ հայտնեցին իրանց ճամփորդության նպատակը, շատերից սարսափելի վտանգներ լսեցին, բայց իրանք աներկյուղ շարունակեցին իրանց ճամփան մինչև հասան Սև Բերդի սահմանը։

Մի անտառապատ և բարձր լեռան վրա էր Սև Բերդը։ Երբ մոտեցան բերդին, իջան մի գեղեցիկ ծաղկավետ հովտի մեջ մի աղբյուրի վրա։

— Դու փայտ հավաքիր և կրակ վառիր,— ասաց Արսենը,— իսկ ես մեկ կբարձրանամ դեպի այս ձորի խորքը, կարելի է մեկ որս ճանկեմ։ Հետքեր շատ կան, այստեղ լավ որսի տեղ է։

Արսենը գնաց, իսկ Վուրգը, փոխանակ փայտ հավաքելու, սկսեց ծաղիկ քաղել և շատ ճաշակով մի գեղեցիկ փունջ կապեց։ Մինչև Վուրգն իր փունջը կկապեր, Արսենը եկավ մի ահագին վարազ շալակած։

— Ո՞ւր է կրակը,— հարցրեց Արսենը։

— Կրակը սրտումս է,— պատասխանեց Վուրգը։— Ես Անտեսիս համար տես ի՞նչ գեղեցիկ փունջ եմ կապել։

— Ուրեմն դու դեռ ջուրը չտեսած ոտներդ հանել ես արդեն։

լավ, անց կենանք ուրեմն այդ ջրովը, մոտենանք բերդին և այնտեղ վառենք կրակը, որ շուտ նկատեն մեզ և գան. տեսնենք ինչ են ասում։

— Ես էլ եմ կարծում, որ այդպես լավ կլինի։ Ինչ լինելու է, թող շուտ լինի։

Բարձրացան մինչև բերդի պարսպի տակը, որտեղ կրակ վառեցին, և ամբողջ վարազը, փորը միայն դատարկած քաշեցին մի հաստ ձողի մեջ և սկսեցին խորովել։ Այսպես գիտությամբ արավ Արսենը, որ տեսնողը նրանց հասարակ մարդիկ չհամարե, այլ՝ հրսկաներ։

Հենց որ բարձրացավ կրակի ծուխն ու բոցը և հասավ մինչև ամպերը, հսկաները վեր նայելով նկատեցին այդ և իրանցից մեկին ուղարկեցին, որ տեսնե՝ ինչ բան է, ո՞վքեր են եկողները, և շուտով լուր բերե։

— Ահա գալիս է մեկը,— ասաց Արսենը,— դու վեհանձն եղիր, տեղիցդ չշարժվես, այլ միայն դեպքին հարմար հրաման տուր ինձ, որ նրանք նկատեն, որ դու իմ պարոնն ես, ես քո ծառան։

Մի աժդահա մարդ էր եկողը։ Թեև պակաս հսկաներ չէին և Արսենն ու Վուրգը, բայց նրա համեմատությամբ փոքր էին։

— Ի՞նչ մարդիկ եք,— կանչեց հսկան հեռվից...

Արսենը ձեռքով արավ, թե՝ մոտ եկ, տեսնենք ինչ ես ասում։

Հսկան մոտեցավ և երբ տեսավ ամբողջ վարազը խորովելիս, ահ ընկավ սիրտը, բայց իր երկյուղը ցույց չտալով, սկսեց բարկանալ, թե ինչպես են համարձակվել իրանց որսերին դիպչել։ Կռացավ, որ շամփուրը վեր առնե, շպրտե, Արսենը բռնեց նրա օձիքից և այնպես հեռու մղեց, որ հսկան կոճղի պես գլորվեց։ Սաստիկ զայրացած վեր կացավ տեղիցը և կպավ Արսենին Արսենը, որ արդեն փորձել էր հսկայի ուժը, բռնեց նրա ականջները և այնպես քաշեց, որ գլուխը խփեց գետնին և ծունր չնել տվավ իր առաջին։ Այդ ժամանակ Վուրգն այլևս չուզեց պարապ մնալ, արձակեց հսկայի կաշվե գոտին և նրանով կապոտեց նրա կոները։ Կաշկանդված հսկային հետո կապեցին մի հաստ ծառից և իրանք սկսեցին իրանց նախաճաշիկը։

— Սկիզբը լավ է,— ասաց Արսենը,— տեսնենք վերջը ի՞նչ կլինի։ Հետո դառնալով հսկային՝ ասաց.

— Մենք եկել ենք ձեզ մոտ հյուր, և դուք այդպե՞ս եք ընդունում ձեր հյուրերին։ Կուզե՞ս մի կտոր միս տամ, կեր։ Այս ասելով՝ մի մեծ կտոր մոտեցրեց հսկային բերանին։

— Իսկ դուք այդպե՞ս եք հյուրասիրում ձեզ մոտ եկողին,— ասաց հսկան։ — Արձակեցեք և այնպես հրավիրեցե՛ք ինձ ճաշի։

— Բայց հետո՞, խոսք տալի՞ս ես,— ասաց,— որ չես փախչիլ և քո եղբայրներին իմաց տալ։ Կամ եթե խոսք էլ տաս, ո՞վ կհավատա քո խոսքին։ Բայց որ հավատաս, թե մենք վատ մարդիկ չենք, տես այս թուրը. մի հարվածով կարող էի այս բոպեիս թոցնել գլուխդ, բայց կյանքդ քեզ եմ շաշխում, որովհետև իմ պարոնն այսպես է կամենում, արյուն թափելու հրաման չի տալիս։

Այս խոսակցության ժամանակ, մեկ էլ տեսան, որ մի ուրիշ հսկա էլ է գալիս։ Նա որ տեսավ իր եղբորը ծառից կապած, ջանը դող ընկավ, բայց ավելի էլ բարկացավ. քան առաջինը, և առանց հարցուփորձի, ուղղակի հարձակվեց մեր տղայոց վրա։ Արսենն առաջ ընկավ և նրա ականջներն էլ գցեց ճանկը և չոքեցրեց առջևը, ասելով.

— Նախ երկրպագություն տուր մեզ. մենք հասարակ հողեղեն չենք, այլ ձեր հոգեառ հրեշտակներն ենք։

Այս խոսքի վրա ահագին հսկան այնպես դողդողաց, ինչպես մի նապաստակ որսկան շան ճանկերում։ Սրան ավելի հեշտությամբ կապոտեցին եղբոր կողքին։

Հետո եկան երրորդը, չորրորդը, մինչև յոթներորդը։

— Ո՞ւր են ձեր մյուս եղբայրները,— գոռաց Արսենը,— թող գան ձեզ օգնեն։

— Էլ ուրիշ եղբայր չունինք,— ասաց ամենից մեծը.— այս ենք որ կանք։

— Շատ լավ,— ասաց,— հիմա ի՞նչ փրկանք կտաք մեզ, որ ձեզ ազատենք։ Տեսնո՞ւմ եք ահա, որ ձեր կյանքը մեր ձեռին է, մի-մի հարվածով կարելի է թոցնել ձեր բոլորիդ գլխները։

Եվ Արսենն սկսեց թուրը շողշողացնել նրանց գլխներին...

Այս միջոցին մի ձայն հասավ Արսենի ականջին։

— Ո՛հ, խնայեցեք, խնայեցեք իմ եղբայրներին. այդ դուք չէիք, որ հաղթեցիք դրանց, այլ ճակատագիրը։

Արսենը ետ մտիկ տվավ և տեսավ, որ մի աղջիկ է գալիս՝ սպիտակ քողն երեսին։

— Ես գործ չունի՛մ նրա հետ,— ասաց Արսենը Վուրգին,— նա քո բաժինն է, ինչ կուզես՝ արա։

— Ո՛հ, երկինք, օգնիր ինձ,— բացականչեց Վուրգը և փունջը ձեռին մոտեցավ աղջկանը և ծնկաչոք թավաղա արավ, ասելով.

— Ո՛վ իմ Անտես-Աննման, առ այս փունջն ինձանից, սրա հետ քեզ եմ նվիրում ես նաև իմ սիրտն ու հոգին։

— Կընդունեմ այդ ընծան, որովհետև տվողը Վուրգն է։

— Որտեղի՞ց գիտես դու իմ անունը, ո՛վ իմ նուզելի։

— Երկնքի թռչուններն ասացին ինձ,— պատասխանեց աղջիկը. և քողն երեսից ետ քաշելով՝ ասաց.

— Ահա ես էլ քեզ նվեր։

Վուրգը տեսնելով Աննմանի գեղեցկությունը, սիրտն սկսեց թրթռալ, հազիվ կարողացավ գրկել նրան և հոմբուրել, բայց աղջիկը նույնպես նվաղեց և երկուսն էլ ուշաթափվեցին։

— Եղբայրս վայելեց մարդկային կյանքի միակ երջանիկ րոպեի քաղցրությունը. այսուհետև թեկուզ մեզ կոտրելեն էլ հոգ չունիմ,— ասաց Արսենը և ուրախության արտասուքն աչքերին՝ մոտեցավ հսկաներին և ամենքի էլ կապանքներն արձակեց։

Հսկաները նույնպես հուզվեցան սրտի խորքից, մինչավանդ որ նախապատրաստված էին արդեն իրանց քրոջ երազից։ Մի քանիսը վազեցին տուն, որ պատրաստություն տեսնեն հյուրերի համար, մի քանիսն էլ Արսենին իրանց մեջն առած՝ ճամփա ընկան դեպի տուն, գովելով նրա տղամարդկությունը։ Իսկ Վուրգն ու Աննմանը ամենից հետո էին գնում և շուտ-շուտ կանգ առնում, իրար երեսին մտիկ տալիս, մեկ մեկով հիանում, զմայլում և միմյանց պատմում իրանց տեսած երազները։

Մեր քաջերին երեք օր պահեցին հսկաները և ամեն օր մի նոր ուրախության հանդես սարքեցին։ Երեք օրից հետո ճամփա դրին մեծ բահր ու բաժինքով։

Երբ տուն հասան, մի նոր կերուխում սարքեց թագավորը և երկու պսակ միասին՝ կատարեց՝ Վուրգին՝ Անտես-Աննմանի հետ, իսկ Արսենին՝ Աստղիկի։ Այս հարսանիքումը, ինչպես ամեն հեքիաթի հարսանիքում, նույնպես երեք խնձոր վայր ընկավ ուղղակի երկնքից, միայն այս անգամ խնձորները ասողի և լսողի համար չէին, այլ՝ մեկը հավատի և քաջության համար, երկրորդը՝ հուսո և առաքինության և երրորդը սիրո և ուժի համար։

1890

ՄԱՆՈՒԿ-ԽԱՆ

(Ավանդություն)

Ինչպես մեծերի մեջ կան տխմար և իմաստուն մարդիկ, մանուկների մեջ էլ կան տխմարներ ու իմաստուններ։ Իմաստությունը հասակից կախումն չունի. այդ մի շնորհք է, որ աստված նրան է տալիս, ում ընտրում է ինքը։ Այսպիսի ընտրվածներ շատ քիչ են լինում թվով։ Ամեն մարդ կարող է իմաստությունը սիրել, իմաստասեր լինել բայց ոչ իմաստուն։ Սողոմոն իմաստունը տասներկու տարեկան ժամանակ արդեն իմաստուն էր։ Դանիել մարգարեն նույնպես իմաստուն էր շատ փոքր հասակից։ Այսպիսի իմաստուն մանուկներ հայոց մեջ ևս շատ են եղել։ Եվ թեպետ դրանց պատմությունը հեքիաթների կարգն է ընկել, բայց ճշմարիտ եղած բաներ կան։ Ահա այսպիսի մի մանուկի պատմություն պիտի անեմ։

Թիֆլիս քաղաքի փողոցով մի մարդ էր գնում դեպի քաղաքի շուկան (բազարը)՝ ձվով բարձած մի էշ առաջը գցած։ Նրա հետևից էլ մի ուրիշ մարդ մի գիժ եզն էր առաջն արած տանում դեպի սպանդանոց։ Եզնատերը բղավում է իշատիրոջը։

— Իշիդ կապը բռնի՛ր, մի կողմ քաշվի՛ր, եզս գիժ է, հարու կտա։

Մի քանի սնգամ կանչում է այսպես, բայց իշատերը չլսելն է դնում, մինչև եզը հասնում է և իր եջյուրներով զարկում է կթոցներին ու վայր գլորելով կոտրտում ձվանը։ Այս ժամանակ իշատերը բռնում է եզնատիրոջ օձիքը և տանում դատարան։

Այս դեպքին ներկա էին շատ մանուկներ և նայում էին նրանց կռվին։ Մանուկներից մեկը՝ մի աշխույժ և նայտառ երեխա, երբ տեսավ, որ դրանք դատաստանի են դիմում, նրանց հետևիչ կանչեց.

— Եզնատերը համրանա, եզնատերը համրանա։

Այս խոսքն իմացավ եզնատերը, և երբ դատավորի մոտ գնացին, իշատերն իր գանգատն արավ, վնասը պահանջեց, դատա-

վորը դարձավ եղնատիրոջը և հարցրեց, թե ինչ ունի ասելու, նա իրան համար ձևացրեց և ձեռքով հասկացրեց դատավորին, որ լեզու չունի։

— Այս մարդը համր է,— ասաց դատավորը,— դու վկաներ բեր, որ քո գանգատը ուղիղ է։

— Տեր իմ,— պատասխանեց էշատերը,— սա սուտ է համր ձևանում, ընդհակառակն՝ քանի անգամ բղավեց հետևիցս, թե մի կողմ քաշիր էշդ, եզս գիժ է, հարու կտա...

— Շատ լավ, ինչո՞ւ ուրեմն չկատարեցիր այդ մարդու ասածը. ուրեմն ի՞նչ ես ուզում սրանից։

Հետո դատավորը եղնատիրոջը հարցրեց, թե ինչու է համրանում, քանի որ խոսել գիտե։

— Տեր իմ, այս իմ խելքի բանը չէր,— պատասխանեց եղնատերը,— այլ աստուծո ողորմությունն էր, որ ինձ վրա հասավ մի երեխայի բերանով։ Երբ որ այս մարդը ինձ քաշքշելով ձեղ մոտ էր բերում, մի շնորհալի մանուկ կանչեց հետևիցս. «եզան տերը համրանա»։ Ես էլ նրան լսելով համրացա և ահա, ինչպես տեսաք, այդ մարդն իր բերանով խոստովանեց, որ ես քանի անգամ կանչեցի իրան, թե էշդ մի կողմ քաշիր, եզս գիժ է։

— Շատ լավ, գնա՛,— ասաց դատավորը,— դու արդար ես. միայն այն երեխային ուղարկիր ինձ մոտ, ես կուզեմ տեսնել նրան։

Այս դեպքից հետո հայտնի եղավ շատերին, որ իրանց մեջ մի իմաստուն մանուկ կա, և ով որ տեսնում էր նրան՝ գլուխ էր վայր բերում, ինչպես մեծ մարդու, և հարգում ու պատվում նրան, ինչպես աստուծո ընտրածի։

Բուն բարեկենդանի կիրակի երեկոն էր։ Ամեն տան մեծ խնդություն և ուրախություն կար։ Տխուր էր միայն քաղաքի մեջ մի նշանավոր կին իր աղախնու և երեխանց հետ։ Դրանք ոչինչ չունեին ուտելու։

Տիկնոջ մարդը երևելի հարուստ վաճառական էր։ Երկար ժամանակ էր, ինչ որ հեռացել էր քաղաքից և կնոջ համար սարուստ չէր ուղարկել։ Կինն սկսել էր տան կայքը քիչ-քիչ ծախել և նրանով կառավարվել էր մի կերպ, վերջն սկսել էր ձեռագործություն անել, բայց դրանով այնքան վարձատրություն չէր ստանում, որ բավական լինի իր ապրուստին։ Այդ օրվա ձեռագործին ընդամենը երկու շահի էին տվել. մի շահու յուղ ու հաց էր առնել տվել, խաշու շինել, մի շահու էլ խունկ ու մոմ։

Այս տխրալի բոպեին մեկ էլ հանկարծ դուռը թխկթխկացրին։ Կնոջ ամուսինն էր նա, որ նոր էր եկել օտարությունից։

— Ո՞վ ես,— հարցնում են ներսից, բայց մարդը խորամանկությամբ իր անունը չի տալիս, իր կնոջ հավատարմությունը փորձելու համար։

— Ես եմ,— ասում է,— ինչ եք հարցնում, մի՞թե չեք ճանաչում։ Եվ այս ասում է ձայնը փոխած. Հարցնողը աղախինն էր, իսկ կինը բաց էր արել պատուհանը, որ եթե օտար մարդ լինի ներս եկողը, իսկույն ինքն իրան վայր գլորե տան երրորդ հարկից։ Այնքան տարի խեղճություն էր քաշել, բայց ոչ ոքի հայտնած չէր իր չքավորությունը, արատավորած չէր իր մաքուր անունը. լավ էր համարել մեռնել, քան թե որևէ անպատվություն բերել իր անվանը։ Մարդը երբ համոզվեց, որ օտարի առջև իր դուռը փակ է եղել, նոր հայտնեց իր անունը իր սեփական ձայնով, թե ես Ավագն եմ, և դուռն իսկույն բացվեց իր առջև։

Ներս գնաց տուն, բարևեց կնոջը և շորս կողմին նայելով և տունն անշուք ու ամեն զարդ ու զարդարանքից զուրկ գտնելով՝ մնաց ապշած, թե այս ի՛նչ է նշանակում։

— Այս ի՞նչ բան է, ինչո՞ւ եք այսպես,— հարցրեց։

— Դո՛ւ ողջ լինիս,— ասաց կինը,— ի՞նչ է եղել։

— Զարմանում եմ,— ասաց մարդը,— մի՞թե մեր այսինչ ծառան քեզ չի հասցրել իմ ուղարկած գոհարը։

— Ոչինչ չեմ ստացել նրանից,— ասաց կինը.— բայց նա այժմ ծառա չէ, այլ քաղաքիս առաջին հարուստն է, տներ է շինել հոյակապ պալատների նման, շինել է և մի մեծ եկեղեցի իր անունով, թագավորի առաջին սիրելին է այժմ։

— Հասկացա. ուրեմն իմ ուղարկած հարստությունը իրան է սեփականել և ձեզ մատնել այս թշվառությանը։ Շատ լավ, ես կիմանամ, թե վաղն ի՛նչ օրին կբերեմ նրա գլխին։ Հիմա դատարկեցեք խուրջինս, այնտեղ ուտելու բան շատ կա, այս երեկոյիս բավական է մեզ, վաղն աստված ողորմած է։

Մյուս օրը մեծ պասի երկուշաբթի օրն էր։ Քաղաքի բոլոր թաղերում մի-մի խանություն էին հաստատել և մեծ-մեծ աղա մարդիկ անգամ բուրդը-դուրս մուշտակներ էին հագել, փափախ-

ները նույնպես, երեսներին ալյուր քսել, շրջապատվել փառաշնեռներ նույնպես ծաղրական շորեր էին հագել։ Ամեն անցրով, որոնք նույնպես ծաղրական շորեր էին հագել։ Ամեն անցնողի կանչում էր խանը և մի բանում մեղադրելով, նրանից տուգանք էր առնում։ Այս խաներից ամենից նշանավորը Մանուկ-խանն էր։

Մեր իմաստուն մանուկին խան էին շինել, և նա դատաստան էր անում ոչ ծաղրածուությամբ, այլ բոլորովին լուրջ կերպով։ Բոլոր մեծ ու փոքր մնացել էին հիացած, տեսնելով որ մի տասներկու տարեկան պատանի՝ մարդկանց սրտի խորքերն է թափանցում, նրանց վատ արարքները երեսներին զարկում և հրամայում իր փառաշներին, որ ծեծեն անխնա և որոշած տուգանքն առնեն։ Բայց և շատերին, որոնք զրկված էին, խեղճ էին և թշվառ, նրանց էլ կանչում էր. մխիթարում, խրատում և հավաքած տուգանքներից մի բան տալիս, որ տանեն իրանց պակասությունը հոգան։

Հենց այս միջոցին Մանուկ-խանը նկատեց, որ մի մարդ երեսի գույնը նետած՝ անց է կենում շտապ-շտապ, բռունցքը սեղմելով և պռոշները կծոտելով. իսկույն հրամայեց իր փառաշներին, որ բռնեն այն մարդին։ Մարդին ռոնեցին և բերին Մանուկ-խանի առաջը կանգնեցրին։ Այս մարդը Ավագ վաճառականն էր։

— Ի՞նչ մարդ ես դու և ո՞ւր ես գնում այդպես կատաղած,— հարցրեց Մանուկ-խանը։

Վաճառականը տեսնելով, որ սա հանաք չի անում և պատրաստ է մինչև անգամ ծեծել տալու, ասաց.

— Խա՜ն, գլխիդ, արևիդ մատաղ, ես մի գանգատ ունիմ, արդար դատաստան արա։ Այսինչ ժամանակ այսինչ մարդու ձեռքով ես Բաղդատից մի հրաշալի գոհար ուղարկեցի իմ կնոջ համար։ Երեկ երեկոյին եկա և իմացա, որ մարդը իմ ամանաթն տեղ չի հասցրել։ Այսօր գնացի իրան ասացի. նա թե՝ ես տվել եմ կնոջդ, նա որ շռայլ լինի և վատնե, ես ի՞նչ մեղավոր եմ։ Եվ սկսեց կնոջս վրա վատ-վատ բաներ խոսել։ Գնացի թագավորին գանգատվեցի, թագավորը կանչեց նրան, նա էլ իր հետ երեք վկա բերավ, որոնք միաբերան հաստատեցին, որ մարդն իմ գոհարը տվել է կնոջս։ Ի՞նչ է մնում ինձ անել այժմ, թե ոչ մարդու չափ պատժել կնոջս։ Ահա և այն մարդիկը, որոնք անցնում են։

— Շատ լավ,— ասաց Մանուկը։— Կրաչիրնե՛ր, բերեցե՛ք այս մարդու գանգատը, իսկ դուք, փառաշներ, բռնեցեք այն շորսին էլ և բերեք այստեղ։

Փառաշները բռնեցին երբեմն ծառա, իսկ այժմ քաղաքի աղաներից մեկին և նրա երեք վկաներին։ Մանուկ-խանը հրամայեց, որ վկաներին հեռացնեն իրարից և ջոկ-ջոկ սենյակում փակեն։ Հետո դառնալով թագա-հարուստին՝ ասաց.

— Այս մարդը քեզ ի՞նչ գոհար է տվել, ի՞նչ գույն ուներ, ի՞նչ ձև ուներ, ի՞նչ մեծություն, ի՞նչ ծանրություն և ի՞նչ զորություն։

Մարդն ասաց, որ գոհարը մի քար էր կատվի աչքի չափ և նման։ Ցերեկը խավար էր երևում, իսկ գիշերը փայլում էր։ Թե ինչ ծանրություն ուներ, չգիտեմ, չեմ կշռել, և թե ինչ զորություն ուներ, նույնպես չգիտեմ, չեմ փորձել։

— Դո՛, ասա՝ ի՞նչ զորություն ուներ գոհարը,— հարցրեց վաճառականին։

— Իմ գոհարն այն զորությունն ուներ, որ ինչ դատարկ քսակումն էլ դներիր, իսկույն ոսկով կլցվեր,— պատասխանեց Ավագը։

— Շատ բարի։ Իսկ դու ի՞նչ արիր այն գոհարը, հանձնեցի՞ր տիրոջը,— հարցրեց մեղադրվողից։

— Այո՛, հանձնել եմ,— պատասխանեց թագա-հարուստը։

— Շատ լավ, տարեք սրան՝ մի առանձին սենյակ և բերեք վկաներից մեկին։

— Դու տեսա՞ր,— հարցրեց վկային,— որ այն մարդը այս մարդու կնոջը հանձնեց սրա ուղարկած ամանաթը։

— Այո՛,— պատասխանեց վկան։

— Ի՞նչ բան էր։

— Քար էր։

— Ի՞նչ ձև ուներ։

— Կլոր էր։

— Ի՞նչ գույնի քար էր։

— Սպիտակ։

— Ի՞նչ մեծություն ուներ։

— Ահա այսչափ կլիներ,— ասաց նա, ցույց տալով իր ձեռքի բռունցքը։

— Թանաք քսեցեք սրա ամբողջ բռունցքին և նրանով թող դրոշմի թղթի վրա քարի մեծությունը։

Հրամանը կատարվեց։ Թագա-հարուստը սուտ վկաներ վարձելով՝ նրանց ասել էր, քար է եղել իր ստացածն ու տվածը, բայց մոռացել էր ասել, թե ինչպիսի քար էր։

— Հիմա տարեք սրան իր սենյակը և մյուս վկային բերեք։ Մյուս վկան էլ ցույց տվավ, որ քարի մեծությունը մի թաթաչափ էր, ձևը տափակ էր, գույնը՝ սև։ Երրորդ վկան ցույց տվավ, որ քարի մեծությունը եղունգի չափ էր, գույնը կարմիր, ձևը քառանկյունի։

Մանուկ-խանն այս ամենը գրել տվավ և հետո բոլորին երես առ երես բերելով՝ կարդաց ամենքի ցուցմունքները։ Սուտ վկաները սարսափի մեջ ընկան, ամանաթ ուրացողը ամոթահար եղավ։

Բոլոր հանդիսականները միաձայն գոռացին.

— Կախեցե՞ք դրանց, կախեցե՞ք, խեղդեցե՞ք, սպանեցեք։

— Սպասեցեք,— ասաց Մանուկ-խանը և դառնալով ուրացողին՝ ասաց.

— Այս բոպեիս ետ դարձրու այս մարդի ապրանքը, և քեզ կազատեմ, եթե ոչ՝ կհրամայեմ, և իսկույն կգլխատեն քեզ։

Թագավորի մոտ գնալիս ուրացողը գոհարը տարել էր հետը, որ եթե բանը բացվի, ետ դարձնե։ Ծոցիցը հանեց գոհարը և տվավ Մանուկ-խանին։

Մանուկ-խանն էլ գոհարը հանձնեց տիրոջը և ստորագրություն առավ, որ իր ապրանքն ստացավ։

Ժողովուրդը շատ գոհ մնաց այդ արդար դատաստանից և Մանուկ-խանին գովասանելով մինչև երկինք բարձրացրեց։ Այս դատաստանի լուրը հասավ մինչև թագավորի ականջը։ Թագավորը կանչեց Մանուկ-խանին և ամեն բան մանրամասն իմանալով՝ մեծ պարգևներ տվավ նրան և իր մեծ իշխանների կարգը դասեց։

Մինչև այսօր էլ Մեծ պասի երկուշաբթի օրը շատերն են խան դառնում Թիֆլիսում, բայց Մանուկ-խանի պես խան միայն մեկ անգամ է եղել և այլևս չի կրկնվել։

1890

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ

Արվեստով վիպասան մի երիտասարդ խոր քնի մեջ ընկղմված երազումը մի նոր վեպ էր գրում, իսկ նրա մոտ Ուրիելն ու Հերմեսը նստած վիճում էին իրար հետ։ Երիտասարդը երազում լսում էր նրանց վիճաբանությունը և գրիչը վայր դրած՝ ականջ էր դնում։

— Այս խեղճին դու ես այսչափ հիմարացրել, որ երազումն էլ վեպ է գրում,— հանդիմանում էր Հերմեսը Ուրիելին։

— Հիմարացնելը քո արվեստն է,— պատասխանեց Ուրիելը,— ես միայն խելոքացնել կարող եմ։ Ասա խնդրեմ, մի՞թե հիմարություն է վեպ գրելը։

— Մի՞թե պատասխանի կարոտ է ասածդ, չա՜ր։ Մեկ մարդ մինչև հիմար չլինի, ինչպե՞ս կարող է տակից գլխից դուրս տալ, հազար տեսակ չեղած բաներ հնարել, անհամ, անալի սուտեր կարկատել, որպեսզի կարողանա մի ավելի խոշոր սուտ ճշմարտի տեղ անցկացնել։

— Զարմանալի արարած ես դու, Հերմես, քո ստեղծողն էլ պիտի կարծե, թե բանի նման է շինել քեզ։ Մի արարած, որ ի բնե միամիտ լինի ստեղծված, ի՞նչ գաղափար կարող է ունենալ իմաստության մասին, և իզուր չէր ասում Ապոլոնը, թե աշխարհի մարդիկ ավելի են իմաստուն, քան թե Օլիմպի բնակիչները։

— Դու անհաղթելի ես և չար, երբ քեզ հետ խոսենք մարդկային լեզվով և մարդկային հասկացողությամբ, որովհետև դու ծռել ես մարդկային գաղափարը չարի ու բարու մասին, և եթե նրանց դատաստանին դիմենք, ամենքն էլ կասեն, թե Ուրիելն է ուղիղ ասում։ Բայց եթե դու մի կատար խղճմտանք ունենայիր, կխոստովանեիր, որ ոտքից մինչև գլուխ խարդախություն ես և խաբեբայություն։

— Լսիր, հոգիս, դու շատ միամիտ ես։ Եթե կա մի բան, որ մարդիկ ծուռ են հասկանում, այդ այն է, որ քեզ բարի են համարում, իսկ ինձ՝ չար, մինչդեռ քեզ պետք է հիմար անվանեին, իսկ ինձ՝ իմաստուն, քեզ պետք է համարեին տգիտության պաշտպան, իսկ ինձ՝ գիտության և իմաստության, քեզ պետք է համարեին հոգեառ և հոգեհան, իսկ ինձ՝ կենսատու. քեզ՝ ամլություն, իսկ ինձ՝ աճելություն։ Ո՞վ է տվել մարդկանց գիտություն բարվո, ո՞վ է

տվել նրանց գիր ու գրականություն, շոգենավ ու շոգեկառք, հեռագիր ու հեռաձայն և հազար ու մեկ տեսակ մեքենաներ։ Մարդիկ և վայելում են իմ տված բարիքը, և ասում. դրանք բոլորն էլ չարի հնարածն են։

— Եվ շատ ուղիղ են ասում։ Ի՞նչ երջանկություն ես տվել դու մարդկությանը ք. հնարած բոլոր արվեստներովդ ու մեքենաներովդ. դու միայն սատանայացրել ես մարդկային ցեղը, իրար մի արել, բանավոր մարդկանցից շինել ես այնպիսի հրեշներ, որոնք այլևս ոչ մի բանի նման չեն, զրկել ես արքայությունից և դժոխքի բաժին շինել։

— Գիտես ի՞նչ կա, Հերմես. եկ դու քո արքայությունից ձեռք քաշիր, իսկ ես իմ դժոխքից, թեև իսկապես արքայությունն իմն է, իսկ դժոխքը՝ քոնը, ըստ որում մեկ մարդ մինչև հիմար չլինի, դժոխք չի գնալ, իսկ ես թշնամի եմ հիմարության, եկ հաշտվենք միմյանց հետ և մարդուն այսպես բաժանենք,— մարմինն ինձ, իսկ հոգին քեզ, այս կյանքն ինձ, իսկ այն կյանքը՝ քեզ, ծնածն ինձ, մեռածը՝ քեզ։ Մեռածին ուր ուզում ես տար, կուզես արքայություն, կուզես դժոխք, մեռածներին կառավարելը հեշտ է, իսկ սաղերին կառավարելը քո խելքի բանը չէ, այդ իմ գործն է։

— Ես համաձայն չեմ։

— Ինչո՞ւ, հոգիս, քո նպատակն այն չէ՞, որ մարդիկ դժոխքի բաժին չդառնան, այլ արքայության, ես քեզ եմ տալիս երկուսն էլ, ուր ուզում ես՝ այնտեղ տար։

— Ես համաձայն չեմ, որովհետև ո՞վ իմանա քո միտքն ի՞նչ է։ Դու ուզում ես աշխարհս քո իշխանության տակը դնել, բոլորին ապականել, իսկ ես ապականված հոգուն չեմ կարող մոտենալ և հակառակ չեմ, որ այդպիսին դժոխքումը տանջվի։ Ուրեմն դու ուզում ես վարպետությունով դժոխքիդ հաճախորդների թիվը շատացնել։

— Եթե այդպես ես կարծում, ուրեմն շարունակենք մեր դարավոր թշնամությունը միմյանց դեմ, դու աշխատիր մարդկանց հիմարացնել, իսկ ես կաշխատեմ իմաստնացնել, դու աշխատիր ինձ սատանայացնել, իսկ ես կաշխատեմ քեզ լուսացնել, և հույս ունիմ, որ վերջ ի վերջո հաղթությունն իմս կլինի, որովհետև դու ի՞նչ էլ ես տեսնում, որ մարդիկ օրեցօր հառաջ են գնում, օրեցօր լուսավորվում և իմ դեմ լարած ձեր բոլոր մեքենայությունները մի

օր կփշրվին խպառ և ես կիշխեմ ամենքի վրա, իբրև զուտ հանճար և կլինեմ միահեծան տեր։

— Եվ այնուհետև չես ճանաչիլ քո ստեղծողին, քո տիրոջը, չես հպատակիլ նրա կամքին։

— Նա քեզ պես հիմար չէ, մեծ է նրա տիեզերքը, լայն է նրա սիրտը, նա թույլ կտա, որ ես իշխեմ նրա անհուն աշխարհների մի չնչին հյուլեի վրա և կառավարեմ իր տիեզերական օրենքի համեմատ։

— Ց՜, սատանա, սատանա, որքան խորամանկություն կա քո մեջ։ Քո բոլոր ասածներդ այս մարդը լսում է երազումը և Ադամի պես խաբվում. քո բոլոր ասածներդ սա ընդունում է իբրև զուտ ճշմարտություն։

— Եթե կարող ես հերքել, հերքիր ասածներս, թող չմոլորվի այս մարդը, իսկ ես սրա ականջին այս կասեմ. որ եթե ուզում է շնորհալի գրող դառնալ, թող իմացած լինի, որ սատանա ասվածը գրողների փիրն է, առանց սատանայի օգնության շնորհքով բան գրել կարելի չէ, աշխարհիս բոլոր հանճարները իմ ամենասիրելի բարեկամներն են եղել, միայն նրանք են հասկացել, թե որպիսի բնավորություն ունիմ ես, ինչքան ինքնուրույն, ինչքան անկախ, ինչքան ազատ։ Գյոթեն ինձ դիմեց իր Ֆաուստը գրելու համար, Բայրոնը՝ իր Մանֆրեդը, Շեքսպիրն՝ իր Մակբեթն ու Համլետը և նույնիսկ բոլոր մյուս գրվածները. Շեքսպիրի գլխում իմ ոգին էր խաղում շարունակ, նա մի դև էր մարդկային մարմնով, Լերմոնտովն ինձանով միայն կարողացավ ինձ գրել...

— Բայց մեկը կար, որին չկարողացար մոտենալ, չա՞ր, և որ քեզ բացեիբաց մերժեց և հալածեց։

— Այո՜, բայց նրա ջգրու ես մոտեցա Մահմեդին և նրա համար մի զորեղ հակառակորդ ստեղծեցի, մոտեցա Լութերին և պապի իշխանությունը փոքրացրեցի, մոտեցա Կոլումբին և նրան Ամերիկա հացրի, մոտեցա Ֆրանկլինին և նրան մի նոր Պրոմեթևս շինեցի, հափշտակել տվի երկնքի շանթը և մարդկության ձեռքին գործիք շինել տվի... Օ՜, անթիվ են իմ տված բարիքներս, բայց էլի ինձ չար են ասում հիմարները։

— Եվ հիրավի, շա՞տ չար ես։

— Իսկ դու, խոստովանում եմ, շատ բարի ես, դու, որ կաս, քո տիրոջ ջրկիրն ես, մի ողորմելի արարած, որպիսին դու ես մեկ էլ որ կաս։

Այս միջոցին քնած վիպասանը զարթնեց։ Նա երազումը սրանց խոսակցությունը բառացի չէր լսում, այլ ամեն մի բառը լսելիս՝ մի նոր փոփոխություն էր նշմարում երազումը և այնքան արագ էր կատարվում այդ փոփոխությունը, որ նա մի հարյուրեբորդական մանրերկրոդի մեջ մի ամբողջ աշխարհք էր պրոպլոտում, այնքան արագ, որ մի բառից հետո մինչև մյուս բառն ասելը նա անցնում էր այդ անհուն տարածությունը։ Օրինակ՝ Շեքսպիրի անունը լսելիս, նա գլխե ի գլուխ անցնում էր նրա բոլոր գրվածներով և իսկույն լսում մյուս բառը։ Նա տեսնում էր ասված մտքերի ընդարձակ պատկերները և այդ պատկերները արագ-արագ իրար էին հաջորդում, ինչ արագությամբ որ բառերն էին հաջորդում իրար։ Զքնած ժամանակն էլ նրա միտքն այդ պատկերացումներն ուներ, միայն երազում նա տեսնում էր, ինչպես աչքով։ Ուրիելի խոսակցությունը մարդկային ձայնով չէր կատարվում, այլ մի անբացատրելի օդային շարժումով, որ մի լսված մուզիկայի ձայնի էր նման։ Այդ ձայնը քնածի ականջով նրա ուղեղին հասնելով, այնտեղից անդրադառնում էր մարդկային բառերով։

Զարթեցավ մեր վիպասանը և տեղումը նստած՝ երկու ձեռքի մեջն առավ գլուխը և սկսեց միտը բերել, թե որպիսի երազի մեջ էր ընկղմված։ Երազը միտը բերելով՝ նա սկսեց մտմտալ.

— Հրեշտակ, սատանա, բարի և չար ոգիներ։ Մարդ ի՞նչպես իմանա, թե երկուսից որն է իսկապես չար և որը՝ բարի։ Մարդն այնպիսի ստորոգելիք է տվել թե՛ մեկին և թե՛ մյուսին, որ երբ սկսում ես քննադատել, ամեն ինչ խճճվում է։ Լավ կլիներ, իհարկե, որ չեղած բաներին ոչ մի ստորոգելիք չտային, բայց երբ մի բան են ստեղծում և նրան չար կամ բարի ասում, գոնե պետք էր նախ լավ իմանային, թե ինչն է իսկապես չար և ինչը՝ բարի։ Մարդիկ այդ ստորոգելիքը տվել են այն ժամանակ, երբ բարու և չարի մասին ուղիղ գաղափար չեն ունեցել։ Իսկ մեր ժամանակ Ուրիելն իրավունք ունի ասելու, թե իմ արածս բարություն է և ոչ չարություն։ Ուղիղն ասած, ես ավելի Ուրիելին եմ համակրում, որ իր համար անկախ է և անընկճելի, քան թե Հերմեսին, որ մի կույր գործիք է Զևսի և նրա կնոջ ձեռքին։

— Լսեցի՞ր, Հերմես,— ասաց Ուրիելը,— դե հիմա երթաս բարով, գնա քո Հերայի մոտ և նրան պատմիր Զևսի արարքները, իսկ ես կմնամ սրա մոտ, որ թելադրեմ ավելի առողջ մտքեր։

Հերմեսը մոմոալով հեռացավ, վիպասանից խռոված, իսկ Ուրիելը մի պատկերի կերպարանք առավ և կախվեց վիպասանի ննջարանում։ Վիպասանը չլսեց սրանց վերջին խոսակցությունը. և նորից քնեց ավելի քաղցր քնով։ Առավոտյան, երբ զարթեց և տեսավ պատկերը, սկսեց ապուշ-ապուշ նայել նրա վրա և զարմանալ, թե ո՞վ է բերել արդյոք այս պատկերը և ի՞նչ է ներկայացնում սա իսկապես։ Առաջին հայացքից ոչինչ չնշմարեց, բայց հետզհետե ինչեր ասես, որ չտեսավ։ Նրա մեջ պարունակված էր ամբողջ տիեզերքը բոլոր մանրամասնությամբ։ Նա ոչ տպված էր և ոչ նկարած վրձինով, այլ ինքնուրույն մի բան էր, նրա մեջ ամեն ինչ շարժուն էր և կենդանի, և մեր վիպասանը ինչ որ ցանկանում էր, նրա մեջ տեսնում էր իր ուզածի կենդանի պատկերը ամենայն մանրամասնությամբ։ Եվ այնուհետև նա սկսեց վեպ վեպի հետևից լույս հանել մինը քան զմյուսն ավելի հետաքրքրական։ Ամենքն էլ զարմացել էին նրա բեղմնավոր գրչի և հանճարի վրա, բայց ոչ ոք չգիտեր, որ նա այդ բոլորը հանում էր կախարդական պատկերից։

1893

ՀԱԶԱՐԱՆ ԲՈՒԼԲՈՒԼ

(Արաբական հեքիաթ)

Իմ ականջս է հասել, ո՛վ բարեբանյալ և բարեկրթյալ թագավոր (պատմում է Շահրազադա թագուհին իր ամուսին Շահրիար թագավորին), որ հին ժամանակներում, վաղուց անցած օրերում, Պարսկաստանումը կենում էր մի թագավոր՝ անունը Խոսրով-շահ, որին մեծ պարգևատուն պարգևել էր հզորություն, ջահելություն ու գեղեցկություն և որի սրտումը դրել էր արդարասիրության այնպիսի զորեղ զգացումն, որ նրա թագավորության ժամանակ ուլն ու վագրը միմյանց հետ հաշտ էին ապրում և կողք-կողքի էին խմում միևնույն վտակից։

Եվ այդ թագավորը, որ սիրում էր անձամբ տեսնել ամենը,

ինչ որ կատարվում էր նրա մայրաքաղաքում, սովորություն ուներ քաղաքում զբոսնելու գիշերները օտարերկրացի վաճառականի հագուստով իր վեզիրի կամ իր պալատականներից որևիցե մեկի հետ։

Եվ ահա, մեկ անգամ գիշեր ժամանակ քաղաքի այն թաղում, ուր աղքատներն էին բնակվում, նա լսեց նեղ փողոցներից մեկի խորքում ջահել ձայներ։ Եվ մոտեցավ ուղեկցի հետ այն մխացող բնակարանին, որտեղից լսվում էին ձայները և աչքը ձգելով դռան ճեղքին, սկսեց նայել ներսը։ Եվ տեսավ երեք ջահել աղջկերք, որոնք խարի վրա նստոտած և ճրագի շուրջը բոլորած՝ զրույց էին անում ընթրիքից հետո։ Այդ երեք աղջկերքը իրար նման էին, ինչպես քույրերը, և երեքն էլ գեղեցիկ էին։ Մի այն կրտսերը շատ էր գերազանցում մյուսներին իր գեղեցկությունովը։

Եվ առաջինն ասաց.

— Որովհետև առաջինը ես պետք է ասեմ, թե ինչ եմ ցանկանում, ուրեմն կասեմ, որ ես ցանկանում եմ լինել թագավորի գաթա թխողի կինը։ Դուք հո գիտեք, որ ես շատ եմ սիրում քաղցր խմորեղենը, մանավանդ այն քնքուշ ու պատվական միջակոր կարկանդակները, որոնք անվանվում են «սուլթանական»։ Եվ միայն սուլթանի գաթաջին է կարողանում պատրաստել այնքան գեղեցիկ։ Ախ, իմ քույրեր, ահա թե ե՛րբ կսկսեք ինձ նախանձել, տեսնելով, թե ես ինչպես միշտ ուտելով այդ կարկանդակները, սկսում եմ գիրանալ և գեղեցկանալ, և իմ երեսի գույնը սկսում է նրբանալ և պայծառանալ։

Իսկ երկրորդ քույրն ասաց.

— Ես շատ չեմ պատվասեր։ Ես կբավականանամ ամուսնանալ սուլթանի խոհարարի հետ։ Ախ, որ իմանաք, ինչքան եմ ցանկանում ես այդ։ Այդ ժամանակ ահա, ես հնար կունենամ համն առնելու այն բոլոր համեղ կերակուրների, որոնք ուտվում են սուլթանի պալատում։ Բայց այս դեռ ոչինչ՝ այնտեղ ավելի լավ բան են տալիս ուտելու. ինչպես խորոված բորինջաններ, լցրած բրնձով ու զանազան համեմունքներով, որ երբ տեսնում եմ սինիներով տանելիս՝ սիրտս սկսում է թրթռալ։ Ի՞նչ ախորժակով կուտի։ Իհարկե, ձեզ չեմ մոռանալ և ստեպ-ստեպ կկանչեմ ձեզ ինձ մոտ, եթե իմ խոհարար ամուսինը թույլ կտա, բայց դժվար թե նա թույլ տա այդ։

Այսպես մեծ ու միջնակ քույրերն իրանց ցանկությունը հայտնելուց հետո դարձան իրանց կրտսեր քրոջը, որ լուռ նստած՝ նրանց էր ականջ դնում, և ծաղրելով ասացին.

— Հապա դու, սիրուն բալիկ, դու ի՞նչ ես ցանկանում։ Միամիտ կաց, երբ որ մենք մարդու կգնանք, երբ կուզենք մեր ընտրածներին, խոստանում ենք, որ այն ժամանակ կաշխատենք, որ քեզ տանք սուլթանի ձիապաններից մեկին կամ նրանց նման մի ծառայի՝ նրա համար, որ մեղանից մոտիկ ապրես։ Հապա ինքդ ասա, տեսնենք դու ինքդ ի՞նչ մտքի ես, ո՞ւմ ես ուզում։

Փոքրիկ քույրը ամոթխածությունից շփոթվելով, պատասխանեց մի այնպիսի դողդողացող ու քնքուշ ձայնով, ինչպես բարակ վտակի խոխոջալն է լինում և ասաց.— Ո՛վ քույրեր։— Էլ ոչինչ չկարողացավ ասել։ Քույրերը ծիծաղելով նրա ամոթխածության վրա, թափեցին նրա վրա զանազան հարցումներ ու կատակներ և վերջապես հարկադրեցին նրան ասելու իր ցանկությունը։ Նա էլ առանց աչքերը բարձրացնելու ասաց.— Ո՛վ իմ քույրեր, ես կցանկանայի մեր տեր սուլթանի կինը լինել։ Ես կտայի նրան մի օրհնաբանյալ սերունդ։ Մեր ամուսնությունից ծնված արու զավակները իրանց հորն արժանի որդիք կլինեին։ Իսկ աղջիկս, որ կուզեի ունենալ, նման կլիներ երկնքի ժպտին. նրա մազերի մի կողմը ոսկի կլիներ, մյուս կողմը՝ արծաթ, նրա թափած արտասուքների տեղն մի կաթիլը մարգարիտ կդառնար, նրա ծիծաղի ձայնը կհնչեր ոսկե դրամների նման. իսկ նրա ժպիտը վարդի կոկոնի նման կբացվեր նրա շրթունքների վրա։

Ահա բոլորը։

Սուլթան Խոսրով-շահը և նրա ուղեկիցը տեսան և լսեցին բոլորը։ Բայց չուզենալով, որ իրանց նկատեն, ընդհատեցին իրանց ականջ դնելը և շուտով հեռացան։

Խոսրով-շահը այդ լսածները շատ հետաքրքրական համարեց և իր հոգու մեջ ցանկություն զգաց կատարելու այն ամենը, ինչ որ ցանկանում էին աղջկերքը և իր մտադրությունը չհայտնելով իր ուղեկցին, նա հրամայեց, որ լավ նկատի այն տունը, որ մյուս օրը գա երեք քույրերի հետևից և նրանց տանե պալատը։ Վեզիրը պատասխանեց, որ լսում է և կհնազանդի և մյուս օրն շտապեց կատարելու սուլթանի հրամանը ու քույրերին տարավ պալատ։

Սուլթանը գահի վրա նստած՝ գլխով ու աչքով արավ, ասելով,— մոտ եկեք։— Եվ մոտեցան նրանք՝ բոլոր մարմնով դո-

զալով և մրճմրճվելով իրանց աղքատիկ քաթանի շորերի մեջ. իսկ սուլթանը ասաց նրանց՝ բարեհոգությամբ ժպտալով.

— Ողջույն ձեզ, ով ջահել աղջկերք, այսօր բացվել է ձեր բախտը, և կկատարվի ձեր ցանկությունը. իսկ ձեր ցանկությունը ինձ արդեն հայտնի է, որովհետև թագավորներն ամեն ինչ իմանում են։ Ամենից առաջ կկատարավի ամենից մեծիդ ցանկությունը, այսօր ևեթ դու կամուսնանաս իմ ավագ գաթաջու հետ։ Իսկ դու, երկրորդ, կամուսնանաս իմ ավագ խոհարարի հետ։ Այս ասելուց հետո թագավորը կանգ առավ և հետո դարձավ էրտսերին, որ սաստիկ շփոթվելուց քիչ էր մնում սիրտը գնա և վայր ընկնի գորգերի վրա։ Թագավորը կանգնեց ջուխտ ոտքի վրա և բռնելով նրա ձեռքը, նստեցրեց իր կողքին, գահի վրա և ասաց.— դու թագուհի ես, այս պալատը քո ապարանքն է, իսկ ես քո ամուսինդ եմ։

Երեք քույրերի էլ հարսանիքը հենց նույն օրը կատարեցին. թագուհու հարսանիքը մի շլված փառավորությունով, իսկ մյուսներինը սովորական կերպով, ինչպես կատարում են հասարակ մարդիկ։ Այս պատճառով մեծ քույրերը սաստիկ նախանձեցին և մտքներումը դրին իրանց փոքր քրոջը մի փորձանքի բերել։ Բայց իրանց այդ չար միտքը ամենայն զգուշությամբ ծածուկ էին պահում և երեսանց շնորհակալությամբ էին ընդունում, իրանց թագուհի քրոջ ընդունելությունը, որ նա անում էր իր քույրերին, չնայած նրանց ստոր վիճակին։ Փոխանակ բավականանալու այն բախտից, որով բախտավորվել էին նրանք՝ նայելով իրանց քրոջ բարձր վիճակին, չարաչար տանջվում էին նախանձից ու ատելությունից։

Եվ այս կերպով անցավ ինը ամիս։ Ինն ամսի վերջում թագուհին մի որդի ծնեց, գեղեցիկ, ինչպես նորածին լուսին։ Մեծ քույրերը, որոնք սուլթանի խնդիրքով ներկա էին նրա երկունքի ժամանակ և մանկաբարձուհու պաշտոն էին կատարում, ոչ մի գթաշարժություն չունեցան դեպի քույրը և ոչ հափշտակվեցին նորածնի գեղեցկությունովը, այլ հնար մտածեցին խորտակելու մատաղահաս մոր սիրտը։ Նրանք իսկույն ևեթ վերցրին նորածին մանուկը, դրին մի փոքր զամբյուղի մեջ ու թաքցրին սիառժամանակ, իսկ նրա տեղը դրին մի սատկած շան լակոտ և ցույց տալով բոլոր պալատական կիներին, հավատացրին նրանց, որ շան լակոտը սուլթանուհու ծնածն է։ Այս լուրը երբ որ հասավ խոսրով-շահ սուլթանի ականջը, նրա աչքերը մթնեցին, նա ընկավ խոր

տխրության մեջ, փակվեց իր սենյակում և հրաժարվեց պետական գործերը կատարելուց։ Սուլթանուհին ավելի ևս ընկղմվեց խոր տխրության մեջ, նրա հոգին նվաստացավ, ու սիրտը կոտրվեց։

Իսկ ինչ վերաբերվում է նորածնին, նրան մեր մորաքույրները զամբյուղի մեջ պնդացրին և ձգեցին ջրանցքի մեջ, որ հոսում էր ապարանքի մոտովը։ Բայց հենց այդ ժամանակ, բախտի բերմունքով, սուլթանի այգիների կառավարիչը զբոսնելիս է լինում ջրափին և տեսնում է, որ մի զամբյուղ է տատանվում ջրի ալիքների վրա։ Նա մի կռեչանով դուրս է քաշում զամբյուղը, բաց է անում և տեսնում նրանում մի գեղեցիկ մանուկ։ Եվ զարմանում է նա, ինչպես զարմանում է փարավոնի աղջիկը, երբ Մովսեսին գտնում են եղեգնուտումը։

Այգիների կառավարիչը վաղուց էր ամուսնացել և շատ էր ցանկանում զավակ ունենալ և մինչև անգամ երկու-երեք երեխա, որ օրհնեին իրանց ստեղծողին։ Բայց նրա ցանկությունը, ինչպես և իր կնոջը, չէր կատարվում։ Եվ նրանք երկուսն է շատ էին տրխրում իրանց անզավակության և միայնության համար։ Այս պատճառով ահա, երբ որ կառավարիչը գտավ աննման գեղեցկություն ունեցող երեխային, նա վեր առավ զամբյուղը անսահման ուրախությունով և վազեց մինչև այգու վերջը, ուր գտնվում էր նրա տունը, և կնոջ սենյակը մտնելով, հուզված ձայնով ասաց նրան.

— Խաղաղությո՛ւն քեզ, ո՛վ հորեղբորս աղջիկ։ Թող այս երեխան մեր որդին լինի, ինչպես բախտի տված զավակ։— Եվ պատմեց կնոջը, թե ինչպես է գտել զամբյուղը։

Եվ կառավարիչը վերցրեց երեխային և սիրեց նրան։

Մյուս տարին խեղճ մայրը, որին այնպես անգթաբար խաբել էին և զրկել իր պտղից, լույս աշխարհք բերավ երկրորդ որդին, առավել ևս գեղեցիկ։ Բայց երկու քույրերը հսկում էին կեղծ ցավակցություն տալով, բայց իսկապես ատելությունով լցված և առաջին անգամվա նման չխնայեցին իրանց քրոջ նորածին զավակին և նրան էլ դրին զամբյուղի մեջ և ձգեցին ջրանցքը։ Իսկ բոլոր պալատականներին ցույց տվին մի կատվի ձագ և հավատացրին, որ ա՛յդ է սուլթանուհու նոր ծնունդը։ Եվ բոլորը շատ զարմացան և շատ տխրեցին։ Իսկ սուլթանը, անսահման ամոթահարված, անկասկած, անձնատուր կլիներ կատաղի զայրացման, եթե անծանոթ լիներ անքննելի արդարության պատվերներին։ Սուլթանուհու սիրտը լիքն էր կսկիծով և հուսահատությամբ։

Իսկ ինչ վերաբերում է երեխային, պետք է ասել, որ երեխաների բախտի պահպանողը ներշնչեց այգիների կառավարչին, որ զբոսնում էր գետափին, որ նա դարձյալ նկատի ունենալ զամբյուղը։ Եվ ինչպես առաջին անգամը, կառավարիչը փրկեց երեխային և տարավ կնոջ մոտ, որ սիրեց նրան, ինչպես իր սեփական զավակին և սկսեց նրան նույնպես մեծ հոգատարությամբ սնուցանել, ինչպես առաջինին։

Սուլթանուհին ծնավ երրորդ զավակը։ Իսկ նրա քույրերը, որոնց ատելությունը դեռ չէր բավականացած, շարունակում էին իրանց կրտսեր քրոջ կորստի մասին մտածել, և նորածին աղջկանը նույն ձևով ջուրը ձգեցին, ինչպես և նրա եղբայրներին։ Բայց նրան էլ պատսպարեց այգիների կառավարիչը և նրա եղբայրների հետ սննդեց, դաստիարակեց։

Բայց այս անգամ, երբ քույրերը իրանց անելիքն անելով՝ նորածնի տեղը դրին մի կույր մուկ, սուլթանը, չնայած իր բարեգթությանը, չկարողացավ զսպել բարկությունը և բացականչեց.

— Աստված անիծում է իմ ցեղս այն կնոջ պատճառով, որի հետ ես ամուսնացա։ Ես ամուսնացել եմ իսկապես մի հրեշի հետ։ Միայն մահը կարող է ազատել նրանից իմ բնակարանս։

Եվ մահվան դատապարտեց սուլթանուհուն։ Հրամայեց իր զինակրին, որ կատարի հրամանը։ Բայց երբ որ տեսավ արտասուքը և անսահման կսկիծը այն կնոջ, որին սիրել էր իր սիրտը, սուլթանը շատ խղճաց և երեսը շրջելով հրամայեց փակել նրան ապարանքի հեռավոր սենյակներից մեկում, որ այնտեղ անց կացնի իր կյանքի մնացած օրերը։ Եվ այն օրվանից էլ չուզեց տեսնել նրա երեսը։ Այնուհետև խեղճ կինը խոր տխրության և արտասուքի մեջ ընկղմած, երկրային բոլոր դառնության ճաշակն առավ։

Իսկ քույրերը շատ ուրախացան, հագեցնելով իրանց չարությունը, և այդ օրվանից կարող էին հանգիստ սրտով ուտել իրանց ամուսինների պատրաստած քաղցրեղենները և համադամ խորտիկները։

Եվ օրերն ու տարիները անց էին կենում միատեսակ արագությամբ՝ թե՛ արդարների և թե՛ մեղավորների գլխովը, բերելով այն, ինչ որ վիճակված էր ամեն մեկին։

Եվ ահա երբ որ կառավարչի որդեգրած երեխեքը երեքն էլ մտան պատանեկության հասակը, իրանց գեղեցկությունով սկսեցին կուրացնել բոլորի տեսությունը։

Եվ անվանում էին նրանցից մեկին Ֆարիդ, երկրորդին՝ Ֆարուզ, իսկ աղջկանը՝ Ֆարիզադա։

Ֆարիզադան էր բուն երկնքի ժպիտը։ Նրա մազերի մի կողմն արծաթի էր, իսկ մյուս կողմը՝ ոսկի։ Երբ որ նա լաց էր լինում, գետին ընկած արտասուքի կաթիլները դառնում էին մարգարտի հատիկներ, երբ որ ծիծաղում էր, նրա ծիծաղը հնչում էր ոսկի դինարների ձայնով։

Ահա թե ինչու բոլոր նրան ճանաչողները, ինչպես և հայրը, մայրը և եղբայրները նրա անունը «Ֆարիզադա» ասելիս, միշտ ավելացնում էին՝ «վարդաժպիտ»։

Եվ ամենքը մնացել էին զարմացած նրա գեղեցկությանը, խելքին, հեզությանը, ճարպիկությանը, ինչպես նա էր պահում իրան ձիու վրա, ուղեկցելով եղբայրներին որսի գնալիս, նրա նետ ձգելը, նիզակ բանեցնելը։ Նա հիացնում էր իր վարմունքի վայելչությունովը, հյուսած շնորհալի ոտանավորներովը և հայտնի ու ծածուկ գիտությունների հմտությունովը և ճոխությունովը իր մազերի, որ մի կողմից ոսկի էին և մյուս կողմից արծաթի։

Այսպես զարդանում էին թագավորական այգիների կառավարչի որդիները, իսկ ինքը՝ կառավարիչը, շրջապատված նրանց սիրովն ու հարգանքովը, խնդալով նրանց գեղեցկության վրա, շոտով հասավ խորին ծերության։ Իսկ իր ամուսինը կյանքից իրան բաժին ընկած մասը լրացնելով՝ մեռավ իր ամուսնուց առաջ։ Նրա մահը բոլոր գերդաստանի համար պատճառ դարձավ տխրության ու կսկծի, այնպես որ կառավարիչն այլևս մնալ չուզեց նույն տանը, որտեղ հանգուցյալը ամենի համար խաղաղության ու երջանկության աղբյուր էր։ Գնաց սուլթանի ոտներն ընկավ և աղաչեց, որ ազատի նրան այն պաշտոնից, որ այնքան երկար տարիներ կատարել էր։ Սուլթանը տխրեց, որ պիտի բաժանվի իր հավատարիմ ծառայից և ցավելով կատարեց նրա խնդիրը։ Արձակելով նրան, ընծայեց մի հոյակապ կալվածք քաղաքից մոտիկ, ընդարձակ վարելահողերով, անտառներով, արոտատեղերով, ճոխ կահավորված ապարանքով, իրան՝ կառավարչի ձեռքով ճարտարությամբ տնկված այգիով. և լայնարձակ ծառաստանով, շրջապատված բարձր պարիսպով, որի մեջ կենում էին ամեն գույնի թռչուններ և շնտանի ու վայրի կենդանիներ։

Ահա, այդ իսկ կալվածքը քաշվեց առաքինի ծերունին իր որդեգիրներով։ Այստեղ էլ նա մեռավ, շրջապատված իր որդեգիրնե-

րի սիրովն ու հոգածությունները։ Ոչ մի հարազատ հոր վրա այնպես սուգ չէին արել՝ ինչպես որ սուգ արին ծերունուն որդեգիրները։ Եվ տարավ իր հետ իր անդրդվելի գերեզմանաքարի տակը իր որդեգիրների ծննդյան գաղտնիքը, որ իրան էլ չէր հայտնի լրիվ։

Նրա հրաշալի կալվածքում շարունակեցին ապրել պատանիները ու իրանց փոքրիկ քույրը։ Եվ որովհետև նրանց իմաստությամբ էին կրթել և պարզ ու հասարակ, այս պատճառով նրանք գոհ էին իրանց վիճակից և այլևս ոչինչ չէին ուզում, այլ միայն ապրել խաղաղ և սիրով։

Ֆարիդն ու Ֆարուզը հաճախ գնում էին որսի, անտառներ և դաշտեր, իրանց կալվածքի շրջապատներում։ Իսկ վարդաժպիտ Ֆարիզադան ամենից շատ սիրում էր այգիներումն զբոսնել։ Եվ ահա մեկ օր էլ, երբ նա պատրաստվել էր գնալ զբոսանքի, ստրկուհիները իմաց տվին, թե մի անծանոթ պառավ, օրհնության կնիքը երեսին, խնդրում է, որ թույլ տա իրան մի ժամի չափ հանգստանալու այդ գեղեցիկ այգիների ստվերներում։ Իսկ Ֆարիզադան, որի սիրտը լիքն էր կարեկցությունով, ցանկացավ ինքն անձամբ ընդունել անծանոթ պառավին։ Նրան սիրով հյուրասիրեց, ուտեցրեց, խմեցրեց և տվավ նրան մի հախճապակյա մատուցարան պատվական պտուղներով, թխվածքներով, չոր քաղցրավենիներով և հյութալից անուշեղեններով։ Հետո ման ածեց այգումը, իմանալով, որ միշտ օգտակար է փորձված մարդկանց հետ լինելը և իմաստուն խոսվածք լսելը։

Եվ զբոսնում էին այգումը նրանք միասին։

Վարդաժպիտ Ֆարիզադան բարի պառավին օգնում էր ման գալիս, բռնելով նրա կուռը։ Երբ որ հասավ ամենալավ ծառին, Ֆարիզադան պառավին նստեցրեց այդ ծառի ստվերումը։ Եվ խոսք խոսքից հետո վերջապես Ֆարիզադան հարցրեց պառավին, թե նրան ինչպես են դուր գալիս այդ տեղերը ու հավանո՞ւմ է արդյոք։

Այդ ժամանակ պառավը բավական երկար մտմտալուց հետո բարձրացրեց գլուխը և պատասխանեց.

— Այո՛, իմ տիրուհիս, ես իմ բոլոր կյանքը անց եմ կացրել աշխարհի երկրների վրա շրջելով, և երբեք պատահած չէ ինձ, որ մի այսպիսի հիանալի տեղ հանգստանամ։ Բայց, ով իմ տիրուհիս, ինչպես երկրիս վրա միակ գեղեցկուհին դու ես որ կաս, և քեզ նման այլևս ոչ մեկը չկա, ինչպես արեգակն ու լուսինը միակն են երկնքումը, ես կցանկանայի, որ այս պատվական այգումը դու ունենայիր այն երեք առարկաները, որոնք նույնպես մի-մի հատիկ են աշխարհիս երեսին և չունեն իրանց նմանը։ Ահա թե ինչ է պակաս այս այգում, և ինչ կցանկանայի, որ սա ունենար։

Վարդաժպիտ Ֆարիզադան շատ զարմացավ, որ իր այգուն երեք անհամեմատ լավ բաներ են պակաս և ասաց պառավին.

— Ողորմած եղիր, բարի մայր իմ, շուտ ասա ինձ, որ ես իմանամ, այդ ի՞նչ երեք անհամեմատ և ինձ անծանոթ բաներ են։

Պառավը պատասխանեց։

— Ո՛վ իմ տիրուհիս, քո գթառատ սրտի հյուրասիրության համար ինձ նման թափառական պառավի, էլ ինչո՞վ կարող եմ ցույց տալ իմ շնորհակալությունս, եթե ոչ հայտնելով քեզ, թե ինչ առարկաների մասին է խոսքս։

Եվ մի փոքր լռելուց հետո պառավն սկսեց.

— Իմաստուն եղիր, ով իմ տիրուհիս, որ եթե իմ ասած բաներից առաջինը լիներ այս այգիներումը, բոլոր թռչունները կհավաքվեին այստեղ նրան տեսնելու համար և ամենքը միաձայն կերգեին։ Նրա համար, որ բոլոր երգեցիկ թռչունները՝ սոխակները, սարյակները, արտույտները, տատրակները, սևակատարներն ու կարմրակատարները և աշխարհիս բոլոր անհամար թռչունները խոստովանում են նրա գերազանցությունը և գեղեցկությունը։ Դա է, ով իմ տիրուհիս, Հազարան Բուլբուլը՝ Խոսող Թռչունը։

Երկրորդ անհամեմատ առարկան, ով իմ տիրուհիս, եթե նա լիներ այս այգումը, այնուհետև քամին, որ ծառերին հարկադրում է երգել, կդադարեր, որ ինչ է՝ նրան լսեր, թառի, քնարի ու ջութակի լարերը կկտրվեին այստեղ, բնակարաններում։ Եվ այդ նրա համար, որ այդ ծառերին երգել հարկադրող քամին, թառը, քնարը, ջութակը, ո՛վ իմ տիրուհիս, խոստովանում են նրա կատարելությունը և գեղեցկությունը։ Դա է Երգող Ծառը։ Ոչ զեփյուռը, որ քնքշությամբ խաղում է տերևների հետ, ոչ բազմաթել քնարները չեն կարող հնչեցնել այնպիսի քաղցր հնչյուններ, որ կարողանան համեմատվել այն խմբական ձայնին, որ առաջ է գալիս հազարավոր անտեսանելի բերաններից, որոնք պարունակում են Երգող Ծառի տերևներում։

Իսկ երրորդը այդ աննման առարկաներից, ով իմ տիրուհիս, եթե լիներ այս այգիներումը, բոլոր ջրերը կանգ կառնեին, կկտ-

բեին իրանց ձայները, որ նայեն նրա վրա։ Եվ այդ նրա համար, որ ցամաքի ու ծովի բոլոր ջրերը՝ աղբյուրները, առվակները, վտակները, գետերը՝ թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում, խոստովանում են նրա աննման գեղեցկությունը։ Դա է՝ Ոսկեցնցուղ Ջուրը։

Այո՛, ով իմ տիրուհի, այդ ջրի մի հատիկ կաթիլը եթե ձգենք դատարկ ավազանի մեջ, նա կուռչի, կփքվի և կսկսի խփել, ինչպես մի ոսկի խուրձ, և չի դադարեցնիլ իր ցայտյունը և երբեք էլ չի թափվիլ ավազանի ափերից։ Հենց որ լիքը լցվի ավազանը, այնպես էլ կմնա, թեև կշարունակի անդադար վեր ցատկել, ցընցղել իր ոսկեցնցուղ կաթիլները։

Այդ ոսկի ջրից, որ այնպես թափանցիկ է, ինչպես տոպազը, սիրում է հագեցնել իր ծարավը Հազարան Բուլբուլը՝ խոսող թռչունը։ Այդ իսկ ոսկի ջրից սիրում են հագեցնել իրանց ծարավը երգող տերևներ ունեցող ծառի հազարավոր անտեսանելի բերանները։

Այս բոլորն ասելուց հետո պառավն ավելացրեց.

— Ո՛վ իմ տիրուհիս, ո՛վ իմ արքայազնուհիս, եթե այս բոլոր հիանալի առարկաները գտնվեն քո այգումը, որքան կգովաբանվեր քո գեղեցկությունը, և մինչև ուր ասես, որ չտարածվեր քո աննմանության համբավը, ով իմ վարդագեղ և վարդաժպիտ տիրուհիս։

Երբ որ Ֆարիզադան իմացավ պառավի ասածները, իսկույն բացականչեց.

— Ո՛վ օրհնյալ մայրիկս, ինչքա՜ն հիանալի են ասածներդ։ Բայց դու ինձ չասացիր, թե որտեղ են գտնվում այդ պատվական առարկաները։

— Ո՛վ իմ տիրուհիս, այդ հրաշալիքները, որոնք արժանի են քո տեսությանը, գտնվում են միատեղ, Հնդկաստանի սահմանի վրա։ Իսկ դեպի այնտեղ տանող ճամփան անցնում է քո ապարանքի հետևից։ Եթե նրանց բերելու համար ուղարկելու լինես մեկին, կպատվիրես, որ նա այդ ճամփովը գնա քսան օր, իսկ քսանմեկերորդ օրը թող հարցնե առաջին պատահողին, թե ո՞րտեղ են խոսող Թռչունը, Երգող Ծառը և Ոսկեցնցուղ Ջուրը։ Հանդիպած մարդը ցույց կտա անպատճառ նրանց տեղը։

Այս ասելուց հետո՝ պառավը պինդ փաթաթվեց իր ծածկոցի մեջ և հեռացավ, շարունակելով մրմնջալ իր օրհնությունը։ Նա արդեն բավական հեռու էր, երբ Ֆարիզադան սթափվեց իր

մտածությունից, որի մեջ ընկղմել էր պառավն իր տված տեղեկությունովը անսովոր առարկաների մասին, և մեկ ուզեց ետ կանչել նրան կամ ինքը վազել հետևիցը, որ ավելի ճիշտ տեղեկություն ստանա զարմանալի առարկաների տեղի մասին, և իմանա, թե ինչ ձևով պետք է ձեռք բերել նրանց, բայց տեսնելով, որ ուշ է արդեն, նա սկսեց լավ միտը բերել պառավի խոսքը և լավ տեղավորել հիշողության մեջ, որ ոչինչ չմոռանա։ Իսկ նրա հոգու մեջ սկսեց սաստկանալ նույն հրաշալիքներին տիրանալու ցանկությունը, և ինչքան որ աշխատում էր նրանց մասին չմտածել, չէր կարողանում։ Շարունակ այն էր մտածում, թե՝ «Երանի՜ մեկ անգամ տեսնեի, որ էլ սրտումս դարդ չմնար»։

Եվ սկսեց թափառել իր այգու ճեմելիքներում և իր սիրած անկյուններում։ Բայց նրա աչքում այդ տեղերը կորցրել էին իրանց գրավչությունը և շատ ձանձրալի էին թվում։ Իսկ թռչունների երգեցողությունը, որով դիմավորում էին երգողներն իրանց տիրուհուն, միայն սաստկացնում էին նրա հոգու վիշտը։

Եվ վարդաժպիտ Ֆարիզադան տխրեց և սկսեց արտասվել։ Եվ որքան առաջ էր քայլում և արցունք թափում, նույնքան տեղում, ավազի վրա՝ նրա արցունքի կաթիլները սառչում էին և դառնում մարգարտի հատիկներ։

Վերջապես Ֆարիզադայի եղբայրները վերադարձան որսատեղից և իրանց քրոջը չգտնելով հասմիկի հովանոցումը, ուր նա սովորություն ուներ սպասելու եղբայրների վերադարձին, նրանք նեղացան իրանց քրոջ այս անուշադրության համար և սկսեցին որոնել նրան այգումը։ Եվ տեսան ավազի վրա սառած նրա մարգարիտ դարձած արցունքի կաթիլները և ասացին իրանք իրանց.

— Ավա՜ղ, ինչքա՜ն տխրած պիտի լինի մեր քույրը, բայց ի՞նչ առիթ է ունեցել տխրելու, որ այսքան լաց է եղել։

Եվ գնացին նրանք իրանց քրոջ հետքովը և գտան նրան արտասվելիս ծառաստանի խորքումը։ Վազեցին մոտը և փայփայեցին, աշխատելով ուրախացնել նրան։

Եվ ասացին նրան.— Ո՛վ Ֆարիզադա, մեր սիրելի քույր, ո՞ւր են քո ուրախության վարդերը և քո խնդության ոսկին։ Քույրի՛կ, պատասխանի՛ր։

— Ո՛վ իմ եղբայրնե՛ր...

Բացականչեց Ֆարիզադան և լռեց։ Նա ամաչեց շարունակել

իր ասելիքը։ Այս առաջին անգամն էր, որ նա մի բան պիտի խնդրեր եղբայրներից, դժվարանում էր ասել, բայց նրանք ստիպեցին, որ ասե։

— Ո՛վ մեր սիրելի քույր,— ասացին եղբայրները,— այս ի՞նչ նոր զգացմունք է շփոթում քո հոգին, հայտնի՛ր մեզ քո վիշտը, եթե չես կասկածում մեր սիրո մեջ, որ ունենք դեպի քեզ։

Ֆարիզադան վճռեց վերջապես բանալ իր սիրտը և ասել նրանց.

— Ո՛վ իմ եղբայրներս, ես այլևս չեմ սիրում իմ այգիներս...

Եվ սկսեց լաց լինել և մարգարտի հատիկներ թափվեցին նրա աչքերից։ Եղբայրներն ականջ դրին նրան լուռ, տխրելով մի այսպիսի հայտնությունից։ Իսկ նա շարունակեց.

— Ավա՜ղ, ես դադարեցի սիրել իմ այգիներս, որովհետև նրանցում չկա Խոսող Թռչունը, որ է՝ Հազարան Բուլբուլը, չկա Երգող Ծառը և ոչ Ոսկեցնցուղ Ջուրը։

Եվ հանկարծ այնպես ոգևորվեց Ֆարիզադան, որ առանց շունչ քաշելու՝ պատմեց եղբայրներին բարի պառավի այցելությունը և նրա պատմածների մասին։

Եղբայրները երբ որ լսեցին քրոջ ասածները, շատ զարմացան և ասացին նրան.

— Սիրելի քույրիկ, դու հանգիստ կաց և աչքերդ հովացրու։ Մենք այդ բոլոր առարկաները կբերենք քեզ համար, թեկուզ նրանք գտնվելիս լինեն Կաֆ սարի անմատչելի գագաթին։ Միայն դու ասա, ո՞ր կողմերում պիտի որոնել նրանց։

Եվ Ֆարիզադան, որ սաստիկ կարմրել էր իր առաջին ցանկությունը հայտնելու համար, բացատրեց մի առ մի, ինչ որ լսել էր բարի պառավից նույն առարկաների տեղի մասին, և ավելացրեց.

— Ահա՛, այս է միայն իմ գիտցածս, սրանից ավելի ոչինչ չգիտեմ։

Եվ բացականչեցին երկու եղբայրները միասին.

—Քույրի՛կ, մենք կերթանք որոնելու։

Իսկ քույրը երկյուղից գոչեց.

— Ո՛չ, ո՛չ, մի՛ գնաք։

Ֆարիդը որ մեծ եղբայրն էր, ասաց.

— Սիրելի քույրիկ, քո ցանկությունը մեզ համար մեր աչքից և գլխից ավելի է թանկ։ Ե՛ս եմ մեծ եղբայրդ, ես էլ առաջինն եմ պարտավոր ինձ վրա առնել դրա հոգսը։ Իմ ձիուս թամքը դեռ չի

վերցված, և նա կտանի ինձ՝ առանց հոգնելու՝ մինչև Հնդկաստանի սահմանը, այնտեղ, ուր գտնվում է քո ասած երեք հրաշալիքները։ Եվ ես կբերեմ այդ բաները։

Եվ դառնալով եղբորը՝ Ֆարուզին, ասաց.

— Իսկ դու, սիրելի եղբա՜յր, կմնաս մեր քրոջ մոտ, որ նրան պահես։

Այս ասելուց հետո վազեց ձիու մոտ, ցատկեց վրան և այնտեղից կռանալով՝ համբուրեց եղբորն ու քրոջը, որ արտասվալից աչքերով ասաց.

— Մի՛ գնար այդ վտանգավոր ճամփով, իջի՛ր ձիուցդ։ Ես չեմ ուզի տեսնել ո՛չ Խոսող Թռչունը, ո՛չ Երգող Ծառը և ո՛չ էլ Ոսկեցնցուղ Ջուրը, միայն թե չբաժանվիմ քեզանից և կարոտդ չքաշեմ։

Բայց Ֆարիդը էլի մեկ անգամ համբուրեց նրան և ասաց.

— Սիրելի քույրիկս, մի՛ վախենար, որովհետև բացակայությունս երկար չի տևի, և աստուծու օգնությունով՝ ինձ չի՛ պատահիլ ոչ մի դժբախտություն։ Բայց, այսուամենայնիվ, որպեսզի դու քեզ չտանջես անհանգստանալով, ես քեզ կտամ, ահա, իմ դանակը։

Եվ գոտկից հանեց այն դանակը, որի կոթը զարդարված էր քրոջ աչքերից առաջին անգամվա ընկած մարգարիտներով, տվավ նրան և ասաց.

— Այս դանակս քեզ տեղեկություն կտա իմ մասին։ Ժամանակ առ ժամանակ կհանես պատյանից և կնայես սայրին։ Եթե սայրը մաքուր լինի, ինչպես հիմա է, այդ նշան կլինի, որ ես ողջառողջ եմ, իսկ եթե դժգունացած՝ իմացած լինիս, որ ինձ մի դժբախտություն է պատահել. իսկ եթե արյուն կաթի բերանից՝ կարող ես հավատալ, որ ես չկամ այլևս։

Ասաց և չկամենալով ոչինչ լսել, ձին շափ գցեց այն ճամփովը, որ տանում էր դեպի Հնդկաստան։

Եվ գնաց նա քսան օր և քսան գիշեր անապատ տեղերով։ Իր ճամփորդության քսաներորդ օրը հասավ մի լեռան ստորոտ, ուր կար ճոխ արոտամարգ և նրանում մի հատիկ ծառ։ Ծառի տակին նստած էր շատ զառամած մի ծեր կրոնավոր։ Նրա երեսը ծածկվել էր երկար մազերի և խիտ ունքերի մեջ։ Մորուքը շատ երկայն էր և սպիտակ, ինչպես նոր զված բուրդը։ Ձեռներն ու ոտները չափից դուրս նիհար էին։ Ձեռքի ու ոտի եղունգները՝ շատ

երկարած։ Ձախ ձեռքով նա գցում էր տերողորմյան (համրիչը), իսկ աջը պահած էր անշարժ՝ ճակատի բարձրության հավասար։ Այդ ծերունին անշուշտ մի ճգնավոր էր, աշխարհից հեռացած, ով գիտե, որքան ժամանակ առաջ։

Եվ որովհետև սա առաջին պատահած մարդն էր քսաներորդ օրում, սրա համար արքայազն Ֆարիդը իջավ ձիուց և կապը բռնած մոտեցավ կրոնավորին և ասաց նրան.

— Ողջո՛ւյն քեզ, ո՜վ սուրբ մարդ։

Ծերունին պատասխանեց նույնպես ողջույնով, բայց նրա ձայնն այնպես էր խլացել խիտ ընչացքների ու մորուքի մեջ, որ Ֆարիդը ոչինչ չհասկացավ։

Այդ ժամանակ Ֆարիդը մտածեց, թե ինչպես անեմ, ուրեմն, որ ես հասկանամ սրա ասածը. չէ՞ որ սրա տված հրահանգով պիտի շարունակեմ իմ ճանապարհորդությունս։ Այսպես մտմտալով իր մաղախից հանեց մի մկրատ և մոտենալով ճգնավորին, ասաց.

— Ո՜վ պատվարժան քեռի, թույլ տուր ինձ մի քիչ խնամք տանել քեզ վրա, քանի որ ինքդ ընկղմված լինելով սուրբ մտքերի մեջ, ժամանակ չունիս ուշք դարձնելու քեզ վրա։— Եվ տեսնելով, որ ծերունին հակառակ չէ, Ֆարիդը սկսեց կարգի գցել նրա մորուքը, բեղերը, ունքերը, եղունգները, խուզելով ու կտրատելով նրանց ավելորդ երկարությունը, որով երիտասարդացրեց ծերունուն մի քսան տարով։

Այս ծառայությունն անելուց հետո՝ սափրիչների սովորությունով՝ ասաց.— Անո՜ւշ, անո՜ւշ, ցանկանամ զովություն և կենդանություն...

Երբ որ ծերունին թեթևացավ ավելորդ ծանրությունից, մեծ բավականություն զգաց և ժպիտ երևացրեց երեսին։ Եվ հետո էլ խոսեց մանկական ձայնից էլ ավելի պարզ և մաքուր ձայնով և ասաց.

— Թող օրհնություն իջնի քեզ վրա, ո՜վ իմ որդի, այն բարեգործությանդ համար, որ ցույց տվիր զառամած ծերունուս։ Ով կուզի լինիս, ո՜վ առաքինի ճամփորդ, ես պատրաստ եմ օգնելու քեզ իմ փորձով և խորհրդով։

Ֆարիդն շտապեց պատասխանել.— Ես եկել եմ հեռու կողմերից՝ որոնելու խոսող Թռչունը, Երգող Ծառը և Ոսկեցնցուղ Ջուրը։

կարող չե՞ք ասել արդյոք, որտեղ կարող եմ գտնել։ Կամ ի՞նչ գիտեք դուք դրանց մասին։

Այս խոսքերի վրա՝ հուզմունքից՝ ծերունին վայր գցեց ձեռքից համրիչը և ոչինչ չպատասխանեց։

Ֆարիդը հարցրեց.— Իմ բարի քեռիս, ինչո՞ւ չեք խոսում։ Ես շտապում եմ, ձիս քրտնած է, կարող է մրսել։

Եվ կրոնավորը խոսեց վերջապես։— Իհարկե, որդիս, ես գիտեմ, թե որտեղ են գտնվում քո որոնած բաները և ճանապարհն էլ գիտեմ։ Բայց ես, որդյակ իմ, այս լավությունը տեսնելուց հետո, ինչպե՞ս խորհուրդ տամ, որ գնաս և զարհուրելի վտանգների ենթարկես քեզ։ Ավելի լավ կանես, որդիս, շտապես վերադառնալու կրկին քո երկիրդ։ Քանի՜ քանիսն են գնացել այս ճամփով, քեզ պես քաջ երիտասարդներ, բայց ոչ մեկը նրանցից չի վերադարձել։

Ֆարիդը այս խոսքերից չվհատվելով, ասաց.— Իմ բարի քեռիս, դու միայն ցույց տուր ինձ իմ գնալիք ուղին, մնացածի մասին մի անհանգստանար։ Ասուված ինձ ձեռքեր է տվել, որոնք կարող են իրանց տիրոջը պաշտպանել։

Ծերունին ձայնը երկարացնելով հարցրեց.

— Քո ձեռքերն ինչպե՞ս կազատեն քեզ Աներևույթից, որ ոչ մի ձեռք չի ընկնում, իսկ ինքն ունի հազար անգամ հազար ձեռքեր, որոնք գործում են առանց տեսնվելու։

Ֆարիդը գլխովը բացասելով, պատասխանեց.— Պատվական հայր։ Իմ ճակատագիրն ինձ հետ է կապված, եթե ես փախչեմ նրանից, նա կհետևի ինձ, իմ ստվերիս պես։ Ուրեմն ասա ինձ, որովհետև այդ քեզ հայտնի է , էլ ինչ կարող եմ անել ես։ Քո խորհուրդով դու ինձ մեծ լավություն կանես։

Ծերունին տեսնելով, որ երիտասարդը ետ չի կենալու իր մտադրությունից, ձեռքը գցեց իր գոտիկից կապած մախաղը (տոպրակ) և հանեց մի գրանիտե գնդակ։ Այս գնդակը տալով Ֆարիդին ասաց.

— Ահա՛, այս գնդակը կտանի քեզ քո ուզած տեղը։ Հեծիր ձիդ և նետիր գնդակը առջևդ։ Նա կգլորվի առաջիդ, հետևից կքշես ձիդ։ Եվ ուր որ գնդակը կանգ կառնի, այնտեղ էլ դու կիջնես, ձիդ կկապես գնդակից, որ կմնա անշարժ, մինչև քո վերադարձը։ Իսկ դու կբարձրանաս այն սարը, որի գագաթը երևում է և այստեղից։ Սարը բարձրանալիս դու ամեն կողմում կտեսնես խոշոր սև-սև քարեր և կլսես ձայներ։ Այդ ձայները չեն լինիլ հեղեղներից, քա-

միներից, անդունդներից, այլ կլինին աներևույթ ձայներ։ Նրանք կգոռան այնպիսի խոսքեր, որոնցից մարդու արյունը կսառչի երակներումը։ Դու պետք է ուշ չդարձնես, պետք է չլսես այդ ձայները, իսկ եթե վախենաս և ետ նայես, դու կդառնաս այն սև քարերից մեկը, որոնցով լիքն է սարի վերելքը։ Իսկ եթե չես լսել նրանց, կբարձրանաս սարի գագաթը, այնտեղ կտեսնես մի վանդակ, միջին թառած խոսող Թռչունը։ Եվ կասես նրան.— Ողջո՜ւյն քեզ, ո՛վ Հազարան Բուլբուլ։ Որտե՞ղ է Երգող Ծառը, որտե՞ղ է Ոսկեցնցուղ Ջուրը։ Խոսող Թռչունը կպատասխանի քեզ.— Բարով ես եկել...

Այս բոլորը ասելուց հետո, ծերունի կրոնավորը խոր շունչ քաշեց և դրանից հետո լռեց։

Ֆարիդը՝ ծերունու խրատը լսելուց հետո, ձին հեծավ և բոլոր ուժով առաջ նետեց գրանիտե գնդակը և ձին հետևիցը քշեց։ Գրանիտե կարմիր գնդակը գլորվում էր թռչկոտալով։ Կանգ չառնելով ոչ մի խոչ և խութի առջև, Ֆարիդի ձին, որ մի կայծակ էր բոլոր ձիերի միջին, հազիվ էր կարողանում գնդակին հետևել։ Այսպես սրարշավ գնացին գնդակն ու ձին, մինչև դիպան սարի առաջին ժայռին։ Այստեղ հանգիստ առավ գնդակը։

Ֆարիդն իջավ ձիուցը և սանձը կապեց գնդակից, ինչպես ասել էր ծերունին։ Ձին կանգ առավ այնտեղ մեխված ի պես, իսկ ինքը սկսեց բարձրանալ սարնիվեր։ Սկզբում ոչինչ չէր տեսնում, բայց քանի վերև գնաց, այնքան ավելացան գետնին փռված սև սև քարերը։ Ֆարիդը չէր իմանում, որ դրանք իր նման երիտասարդներ են եղել և այդտեղ են քար դարձել մի աներևույթ զորության ազդեցությամբ։ Այդ քարերի մոտով բարձրանալիս հանկարծ մի այնպիսի ձայն լսեց, որի նմանը նա չէր լսած իր կյանքումը։ Առաջին գոչյունին հետևեցին այս ու այն կողմից զանազան աղաղակներ, որոնք նմանություն չունեին երկրային աղաղակներին։

Այդ գոռոն-գոչյունը, ինչպես ասել էր ծերունին, նման չէին անապատում փչող հողմերին, նման չէին անդունդներ թափվող ջրվեժներին, նման չէին սելավներից առաջացած, լեռների գագաթներից հոսող ջրհեղեղներին, որոնց և մեն մի կաթիլը, և մեն մի ալիքը իր սեփական ձայնն ունի, և բոլորը լինում է բյուրավոր ձայների մի խառնուրդ։ Այդ ձայներն աներևույթ ձայներ էին։ Նրանցից շատերը հարցնում էին.— Ի՞նչ ես ուզում։ Մյուսները.— Բռնեցե՛ք դրան։— Սպանեցե՛ք։— Գցեցեք անդունդը։ Շատերն էլ

ծաղրում էին։ Հո՜, հո՜, հո՜... հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ... Փաղաքշում էլ էին, ասելով.— Ի՞նչ սիրուն երիտասարդ ես, ե՛կ մեզ մոտ, ե՛կ մեզ մոտ...

Բայց Ֆարիդը՝ ուշ չդարձնելով այդ ձայների վրա, շարունակում էր վեր բարձրանալ։ Իսկ ձայներն ավելանում էին և զարհուրելի դառնում։ Երբեմն գոչողների շունչը դիպչում էր նրա երեսին, և այնքան սոսկալի կերպով էին որոտում աջից ու ձախից, առջևից ու քամակից, այնքան սպառնալից ու համառ էր նրանց գոչը, որ Ֆարիդը դողում էր ակամա, մոռանալով ծերունու խրատը, նա մի զորեղ և հանկարծական գոռոցի ազդեցությամբ ետ շրջվեց։ Այդ իսկ վայրկյանին մի սոսկալի ոռնոց բարձրացավ հազարավոր ձայներից, իսկ դրանից հետո տիրեց խորին լռություն։ Արքայազն Ֆարիդը դարձավ մի սև բազալտի ժայռ։ Լեռան ստորոտում ձին էլ դարձավ մի անձև քարաժայռ։ Իսկ գրանիտե կարմիր գնդակը ետ դարձավ գլորվելով ծերունու մոտ։

Ֆարիդի հետ պատահած այս աղետի օրը Ֆարիզադան ըստ սովորության հանեց եղբոր դանակը պատյանից, որ միշտ կախած ուներ գոտիկից և նայելով վրան՝ երեսի գույնը նետեց, տեսնելով, որ դեռ երեկ այնքան փայլուն սայրը գունատվել ու ժանգոտվել է։ Եվ սկսեց ողբալով գոչել.

— Ա՜խ, իմ սիրելի եղբայր, հիմա որտե՞ղ ես, արդյոք ի՞նչ պատահեց քեզ։ Վա՜յ ինձ, ինչո՞ւ թույլ տվի ես քեզ։ Ավա՜ղ, ինչքան թշվառ եմ ես և որքան ատելի այսուհետև իմ աչքում։

Քրոջ լաց ու կոծին վրա հասավ երկրորդ եղբայրը՝ Ֆարուզը և սկսեց մխիթարել և հուսադրել։ Վերջումն ասաց.

— Քույրի՛կ, ճակատագրից կարելի չէ փախչել. ինչ պատահել է, պետք է պատահեր, որտեղ և լիներ նա։ Բայց հիմա ես պիտի գնամ և հասնեմ եղբորս օգնության, միևնույն ժամանակ կաշխատեմ բերել քո ուզած առարկաները։

Ֆարիզադան աղաչելով ասաց.

— Ո՛չ, ո՛չ, մի՛ գնար, եթե նրա համար ես գնում, որ իմ անարգ հոգու ցանկացածը բերես։ Ես չեմ ուզում ոչինչ։ Սիրելի եղբայր, եթե քեզ հետ էլ պատահի մի փորձանք, ես կսկծից կմեռնեմ։

Բայց քրոջ լացն ու աղաչանքը ետ չկասեցրին եղբորը։ Նա հեծավ ձին, մնաս բարով ասելով քրոջը և տվավ նրան մի մարգարտյա մանյակ։ Այդ մարգարիտները Ֆարիզադի մանկության

երկրորդ լացից դոյացած մարգարիտներն էին։ Մանյակը տալով քրոջն ասաց.

— Երբ որ դրա հատիկները չշարժին քո մատնեքիդ տակ և միմյանց զարնվելով ձայն չհանեն, այդ կնշանակե, որ իմ մարմնի անդամները նույնպես անշարժացել են, էլ իմ մեջ կենդանություն չկա։

Սաստիկ տխրած Ֆարիզադան գգվելով եղբորը՝ ասաց.

— Իմ սիրելի եղբայր, թող աստված քեզ պահպանի ամեն չարից ու փորձանքից։ Տա՛ աստված, որ վերադառնաս մեր մեծ եղբոր հետ միասին։

Ֆարուզը հետևելով եղբորը՝ գնաց նույն ճամփով և քսանչորրորդ օրը հասավ նույն ծերունի կրոնավորին, որին գտավ նույն ծառի տակ նստած և նույն դիրքով, ինչպես տեսել էր Ֆարիզը, այսինքն ձախ ձեռքին համրիչը, իսկ աջը վեր բարձրացրած և ցուցամատը ցցած առանձին։

Սովորական ողջույնից հետո, երբ Ֆարուզը հայտնեց եղբոր հետ պատահած աղետը և իր գալու նպատակը, ծերունին սրան էլ հորդորեց, որ ետ կանգնի իր մտադրությունից, բայց, տեսնելով, որ չի համոզվում, նրան տվավ գրանիտե գնդակը, որով հասավ աղետավոր սարի ստորոտը, ուր ձին գնդակից կապելով՝ ինքն սկսեց սարնիվեր բարձրանալ։

Ֆարուզը գնալով նույն ճամփով, որով գնացել էր եղբայրը, ենթարկվելով միևնույն ձայներին, շատ պինդ էր պահում իրան, բայց կես ճամփին հետևից լսեց հանկարծ.— Եղբայր իմ՝ սիրելի եղբայր, մի՛ փախչիր ինձնից։ Այս ձայնից ահա՛ խաբվեց Ֆարուզը, կարծելով, թե իր եղբայրն է կանչողը, ետ նայեց և իսկույն դարձավ նույն բազալտի ժայռը, ինչ որ իր եղբայրը։ Ձին էլ նույնպես քարացավ, իսկ գնդակը գլորվելով՝ լուրը հասցրեց ծերունուն։

Ֆարիզադան ձեռքիցը չէր հեռացնում եղբոր տված մանյակը, համրիչի պես ձեռքումն էր պահում գիշեր-ցերեկ։ Մեկ էլ հանկարծ զգաց, որ հատիկները չեն շարժվում այլևս, այլ կպել են իրարից, էլ չեն պռիվում։

— Ո՜հ իմ խեղճ եղբայրներս, զոհեցի ձեզ իմ հիմար քմահաճույքիս համար։ Ես կգամ ձեզ մոտ և ձեր բախտին վիճակակից կլինիմ։

Եվ զսպելով իր մեջ կանացի քնքշությունը, հազավ տղամարդ

ձիավորի հագուստ, զենք ու զրահ և գնաց եղբայրների գնացած ճամփով, մինչև հասավ ծանոթ ծերունուն, ուր և կանգ առավ։

Մեծ պատկառանքով ողջունեց ծերունուն և ասաց.— Ո՛վ սուրբ ծերունի, հայր իմ, քեզ չե՞ն հանդիպել արդյոք սրանից քսան օր առաջ երկու երիտասարդ ձիավորներ, որոնք գնում էին որոնելու խոսող Թռչունը, Երգող Ծառը և Ոսկեցնցուղ Ջուրը։

Ծերունին պատասխանեց.— Ո՛վ իմ տիրուհիս, ո՛վ վարդաժպիտ Ֆարիզադա, ես տեսա նրանց և հրահանգներ տվի։ Եվ, ավա՜ղ։ Նրանց էլ, ինչպես նրանցից առաջ շատերին, կանգնեցրեց ճամփին Աներևույթը։

Ֆարիզադան լսելով, որ իր անունը տալիս է սուրբ ծերունին, շատ շփոթվեց, իսկ ծերունին ասաց նրան.

— Ո՛վ պատվական օրիորդ, քեզ չեն խաբել նրանք, որոնք պատմել են երեք հրաշալի առարկաների մասին, որոնց հետևից գնացել և մահու են տվել իրանց գլուխները շատ թագավորազներ և իշխանազներ, բայց քեզ պատմողները լռել են այն վտանգների մասին, որոնց ենթարկվում են նրանց որոնողները։

Եվ պատմեց, թե ինչ վտանգներ կան նրա առջև, եթե ուզում է որոնել իր եղբայրներին և այն երեք հրաշալիքները։ Եվ Ֆարիզադան ասաց նրան.

— Ո՛վ սուրբ հայր, հոգիս շփոթված է քո խոսքերից, երկչոտությունը հեշտությամբ է տիրում նրան։ Բայց ինչպե՞ս կարող եմ ետ կենալ, քանի որ գործը վերաբերում է հարազատ եղբայրներիս փրկությանը։ Ո՛վ սուրբ հայր, լսիր եղբայրասեր քրոջս աղաչանքին և հնար ցույց տուր ազատելու եղբայրներիս կախարդական կապանքներից։

Ծերունին պատասխանեց.— Ո՛վ Ֆարիզադա, դուստր թագավորի, ահա՛ քեզ այս գրանիտե գնդակը, որ կտանի քեզ նրա հետքից։ Բայց դու նրանց ազատել կարող ես միայն այն ժամանակ, երբ կտիրանաս այն երեք հրաշալիքներին։

Եվ որովհետև դու քո կյանքը վտանգի ես ենթարկում միայն քո եղբայրներին ազատելու համար և ոչ թե ձեռք բերելու անկարելին, սրա համար անկարելին կարող է դառնալ քո գերին։

Գիտցած լինիս, ո՛վ դուստր թագավորի, որ մարդու որդիներից ոչ մեկը կարող չէ դեմ կենալ Աներևույթի ձայների զոչյունին։ Այս պատճառով Աներևույթին հաղթելու համար հարկավոր է զինվել նրա դեմ վարպետությամբ, որի մեջ պետք է ամփոփված

լինի մարդու հանճարը, խելքը, ճարտարությունն ու ճարպկությունը։ Այս մտքով հասկացված վարպետությունը կարող է հաղթել Աներևույթի բոլոր ուժերին։

Այս բոլորն ասելուց հետո ծերունին հանձնեց Ֆարիզադին գրանիտե գնդակը։ Հետո հանեց գոտկից մի փաթիլ բուրդ և ասաց.— Այս թեթև բրդի փաթիլով, ո՛վ Ֆարիզադա, դու կհաղթես Աներևույթի ուժերին։ Եվ ավելացրեց.— մոտեցրու ինձ գլխիդ թագը, ո՛վ Ֆարիզադա։— Եվ խոնարհեցրեց դեպի ծերունին նա իր գլուխը, որի մազերի կեսը ոսկի էին, մյուս կեսը—արծաթ։ Ծերունին ասաց.— Թող մարդու աղջիկը այս մի փաթիլ բրդով հաղթահարե օդում թռչող բոլոր ուժերը և Աներևույթի բոլոր խարդավանքը։

Եվ բուրդը բաժանելով երկու մասի, նրանցով խցեց Ֆարիզադի երկու ականջները, որ նա ոչ մի ձայն չլսի։ Ձեռքով նշան արավ, որ գնա։ Ֆարիզադան հեռացավ ծերունուց, վստահությամբ նետեց գնդակը և հետևից քշեց ձին։

Երբ որ հասավ լեռան ստորոտի ժայռերին և ձին գնդակից կապելով սկսեց վեր բարձրանալ, ձայներն սկսեցին ղողանջել նրա ոտների տակ՝ սև բազալտի ժայռիկների միջից և մեծ հարայհրոց բարձրացրին, բայց այդ ահեղ որոտմունքները նրա ականջին դիպչում էին իբրև մի շնչին ու անորոշ շշնջոց կամ ինչպես հեռվից լսվող ճանճերի բզզոց, որ չէր կարող Ֆարիզադի վրա որևէ երկյուղ ազդել։

Սրա համար էլ նա գլուխը քաշ գցած հանգիստ սրտով բարձրանում էր դեպի վեր, խորդուբորդ քարքարուտներով և փշերով, չնայած իր քնքուշ կազմվածքին և նրա սովոր լինելուն՝ մանգալու միայն ճեմելիքների մանրահատակ ավազների վրա։ Առանց թուլանալու և հոգնելու, նա վեր բարձրացավ և հասավ լեռան գագաթին, ուր նրա առջև բացվեց մի ընդարձակ սարահարթ։ Այդտեղ, այդ տափարակի կենտրոնում նա տեսավ ոսկեղեն սյունից կախած մի ոսկի վանդակ։ Այդ վանդակումն էր թառած Խոսող Թռչունը։

Ֆարիզադան տեսնելով, ուրախությունից կարծես թև առավ, վրա վազեց վանդակին և բռնելով նրա օղակից, բացականչեց.— Թռչո՛ւն, թռչո՛ւն, ահա՛ բռնեցի քեզ, դու իմն ես, էլ չես ազատվիլ իմ ձեռից։

Սրանից հետո այլևս ավելորդ էր ականջների բուրդը, որ հա-

նեց և հեռու նետեց իրանից։ Լռեցին բոլոր աղմկարար ձայները, և հերթը հասավ Խոսող Թռչունին, որ միայն նա խոսի։

Եվ խոսեց, խոսեց Հազարան Բուլբուլը, ոչ հասարակ խոսքերով, այլ երգելով երկրում չլսված քաղցր մեղեդիներով։

Ասա՛ ինձ, ասա՛, ով Ֆարիզադա,
Որ ունիս ժպիտ վարդի նմանող,
Ես կարոտ էի քո տեսությանը,
Եվ շատ եմ ուրախ, որ տեսնում եմ քեզ։

Մի՞թե կարող եմ քեզանից ազատվել.
Ա՜խ, ա՜խ, ա՜խ, ո՛վ արև, ո՛վ լուսին.
Լսեք ինձ, ո՛վ երկինք, ո՛վ աստղեր...
Լսիր ինձ և դու, ո՛վ Ֆարիզադա,
Թե ով ես ինքդ, այդ դու չգիտես,

Իսկ ես գիտեմ,
Գիտեմ, գիտեմ,
Շատ լավ գիտեմ,
Շատ լավ գիտեմ։

Ա՜խ, ա՜խ, ա՜խ, ո՛վ ցերեկ, ո՛վ գիշեր,
Լսեցե՛ք, ո՛վ լուսին, ո՛վ աստղեր։

Այսպես էր երգում Խոսող Թռչունը, որով հափշտակվեց Ֆարիզադան, և իսպառ մոռացավ իր քաշած նեղությունները և դառնությամբ Թռչունին՝ ասաց.— Ո՛վ Հազարան Բուլբուլ, ո՛վ դու օդային հրաշալիք, ուրեմն այսուհետև դու իմն ես, իմ սեփական Թռչունը, խո՞սք ես տալիս հաստատ։

— Այո՛, ասում եմ, ո՛վ Ֆարիզադա,
Ես քո ծառան եմ, ես քո ստրուկը.

Հրամայիր ինձ, ով Ֆարիզադա, պատրաստ եմ ահա քեզ ծառայելու։

Վկա եղեք,
Սարեր, դաշտեր,
Մթին ձորեր,
Խիտ անտառներ։

Ա՜խ, ա՜խ, ո՛վ ունքեր,— մութ գիշեր,—
Ո՛վ աչեր,— վառ աստղեր...

Այդ ժամանակ Ֆարիզադան ասաց.— Շատ լավ, ես հավատում եմ քեզ։ Դե հիմա ասա ինձ, որտե՞ղ է Երգող Ծառը։

Հազարան Բուլբուլը երգելով հայտնեց, որ Երգող Ծառը երևվում է արդեն սարի լանջի վրա։ Ֆարիզադան նայեց այն կողմը և տեսավ մի ծառ, այնպիսի հսկայական մեծության, որ նրա տակին կարող էր տեղավորվել զորքի մի ամբողջ բանակ։ Եվ ասեց մտքումը. մի՞թե կարելի է այս ահագին ծառը արմատից հանել և տեղափոխել իմ այգին։ Բուլբուլը հաուկացավ Ֆարիզադի միտքը և ասաց նրան.— ծառն ամբողջությամբ տեղափոխելու հարկ չկա. բավական է մի փոքր ոստիկ, որ կտրես նրանից ու տնկես քո այգում, նա կդառնա այս միևնույն հսկայական ծառը։

Ֆարիզադան գնաց ծառի մոտ և լսեց նրա երաժշտությունը, նրա քաղցր երգեցողությունը։ Ոչ զեփյուռը Պարսկաստանի այգիներում, ոչ հնդկական գավիթը (лютня), ոչ սիրիական տավիղը (арфа), ոչ եգիպտական ջութակը՝ երբեք այնպիսի հնչյուններ չեն հանել, որ կարողանան հավասարվել այս երաժիշտ ծառի հազարավոր տերևներից հնչող խմբերգին։ Եվ Ֆարիզադան երբ որ ուշքի եկավ, երբ որ սթափվեց հափշտակությունից, որի մեջ ընկղմվել էր երաժշտության ազդեցությունից, Երգող Ծառից մի ոստիկ պոկեց և դառնալով Հազարան Բուլբուլին՝ հարցրեց, թե որտեղ է Ոսկեցնցուղ Ջուրը։

Խոսող Թռչունը ցույց տվավ նրա էլ տեղը, որ հեռու չէր։ Փիրուզի քնքուշ գույնով մի ժայռ կար այնտեղ, նրանից բխում էր մի աղբյուր, որ փայլում էր հալված ոսկու գույնով։ Բայց նա սառն էր, զովացուցիչ և այնպես վճիտ էր, այնպես պարզ, ինչպես ամենամաքուր հայելին։

Այսպես ահա, Ֆարիզադան երբ ձեռք բերավ բոլոր երեք հրաշալիքները, ինչպես պատվիրել էր ծերունին, ապա դարձավ Հազարան Բուլբուլին և ասաց.— Իմ ազնիվ թռչուն, ես ունեմ էլի մի խնդիրք, որ պիտի կատարես, որովհետև ես իսկապես հենց նրա համար եմ եկել։ Եվ քեզ ձեռք բերելս էլ հենց դրա համար է եղել, որովհետև միայն քեզանով կարող եմ հասնել իմ նպատակին։ Եվ Բուլբուլը պատասխանեց.

— Ասա ինձ, ո՞վ դուստր արքայի, ի՞նչ է ուզածդ, ինչ որ իմ կարողությունից վեր չէ, ես պատրաստ եմ կատարել։

Ֆարիզադան ասաց աղաչանքով.— Եղբայրնե՞րս, ազնիվ թռչուն, եղբայրնե՞րս... երևի քեզ արդեն հայտնի է...

Այս բանը լսելով՝ Հազարան Բուլբուլը մի քիչ շփոթվեց։ Նա իշխանություն և իրավունք չուներ խառնվելու Աներևույթի կատարած գործերի մեջ, նա ինքը եղել է միշտ նրա՝ հլու հպատակը և նրանից է եղել կախված։ Բայց հետո մտածեց, որ ինքը հիմա էլ նրա ձեռին չէ։ Հիմա պետք է ծառայի իր նոր տիրուհուն և ինչ որ կարող է անել նրա համար, պետք է անի։ Այսպիսով սիրտ տվավ Բուլբուլը և ասաց երգելով.

Ո՛վ Ֆարիզադա, ո՛վ վարդաժպիտ,
Սրսկիր ջրով, ջրով ու ջրով,
Այս Ոսկեցնցուղ ջրով սրսկիր,
Բոլոր քարերը բազալտի նման՝
Ջահել մարդիկ են, սիրուն աննման,
Սրսկիր դրանց, ջրջրի՛ ջրով.
Ամեն կաթիլը այս Ոսկեջրի
Անմահական է, արագ կյանք տվող,
Դրանով սրսկի՛ր, թող կենդանանան,
Թող երկար քնից զարթնեն, վեր կենան։
Ո՛վ իմ թանկագին արքայազնուհիս,
Կյանք տուր քարերին, ջրով ու ջրով։

Ախ, ա՜խ, հազար ախ,
Ով սիրուն գիշեր,
Ոմ վառ-վառ աստղեր...

Ֆարիզադան մի ձեռքում բռնած բյուրեղյա բաղուղը, մյուսում ոսկի վանդակը և Երգող ճյուղը, սկսեց վերադառնալ։ Եվ ամեն տեղ, ուր հանդիպում էր մի սև բազալտ քարի, վրան սրսկում էր ոսկեցնցուղ ջրից։ Քարը կյանք էր առնում իսկույն և դառնում մի գեղեցիկ երիտասարդ։ Անուշադիր չէր թողնում ոչ մի քար։ Այսպիսով գտավ իր եղբայրներին։

Ֆարիդն ու Ֆարուզը քարային քնից զարթնելով՝ մոտեցան իրանց քրոջը և գովեցին նրան։ Մյուս զարթնածներն էլ, որ բոլորն էլ նշանավոր մարդկանց որդիք էին, մոտեցան Ֆարիզադին և համբուրեցին նրա ձեռքը, հայտնելով, որ այսուհետև նրա ստրուկներն են իրանք։ Եվ բոլորը միասին իջան սարի ստորոտը, ուր Ֆարիզադան կենդանություն տվավ և ձիերին. այստեղ ամեն ոք նստեց իր ձին, և բոլորեքյան գնացին ծառի տակ նստած ծերունու մոտ։ Բայց ծերունին չկար այլևս, ծառը նույնպես անհայտացել էր։

Այստեղ Ֆարիզադան հարցրեց Բուլբուլին, թե ինչ է նշանակում ծերունու անհայտանալը։

Խոսող Թռչունը պատասխանեց և այս անգամ նա խոսեց արձակ և լրջորեն.— Ինչո՞ւ ես ուզում նորից տեսնել ծերունուն, ո՜վ Ֆարիզադա։

Նա սովորեցրեց մարդկային աղջկանը, թե ինչպես պետք է բանեցնե նա բրդի փաթիլը, որով պիտի հաղթահարե չար ձայները, ատելությունը, ձանձրացնող շշուկները, որոնք վրդովում են մեր հոգին և չեն թույլ տալիս բարձրանալ դեպի գագաթները։ Նրա կոչումն էր աշխարհի մարդոցը սովորեցնել այս ճշմարտությունը, և ապա վերանալ աշխարհից և նա վերացավ։

— Այսուհետև քո հոգին կփրկվի շատ չարից, որ միակ դրժբախտացնողն է մարդոց, որովհետև դու սովորեցրիր չարից փրկվելու հնարը, որ է՝ ամուր կամքով չարին չլսելը։ Դու զգացիր հոգու անդորրության նշանակությունը, և հենց այդ է միակ մայրը ամեն բախտավորության։

Այսպես ճառեց խոսող Թռչունն այն իսկ տեղումը, ուր մի ժամանակ բարձրացած էր ծերունի կրոնավորի ծառը։ Եվ բոլորը հիացել էին խոսող Թռչունի իմաստալից ճառը լսելով։

Ֆարիզադի բոլոր ուղեկիցները շարունակեցին իրանց ճանապարհը՝ հետզհետե նվազելով։ Ամեն ոք հենց որ հասնում էր իր երկրի սահմանը, համբուրում էր Ֆարիզադի ձեռքը և բոլորին մնաս բարով ասելով՝ հեռանում։ Քսաներորդ օրը Ֆարիզադան ու իր եղբայրները հրաշալի առարկաների հետ՝ ողջ առողջ հասան իրանց տուն։

Տուն հասան թե չէ, Ֆարիզադի առաջին գործն այն եղավ, որ Հազարան Բուլբուլի վանդակը կախեց այգու հովանոցներից մեկում, որն ամենից փառավորն էր և ծառայում էր իբրև խոսաբան—պատվական հյուրերի համար։ Այդտեղ հենց որ ձայնը բարձրացրեց խոսող Թռչունը, այգեստանի բոլոր թռչունները մնացին ապուշ կտրած զարմանքից և հիացմունքից, և կարծես խոսք մեկ արած՝ հավաքվեցին միասին և ամբողջ երամով եկան բարի գալուստ ասելու նորեկ հրաշալի հյուրին։ Սրանց մեջն էր և տեղացի սոխակը, որ նույնպես բուլբուլ էր անվանվում, և մյուս թռչուններից՝ լորը, արտույտը, սարյակը, դեղձանիկը և մյուսները, որոնք քիչ թե շատ երգել գիտեին, ինչպիսիք էին և աղավնին, տատրակը, ագռավն ու կաչաղակը, մոշահավն ու ծիծեռնակը։ Սրանք բոլորն ամեն մեկն իր ձայնով, մի առանձին ներդաշնակությամբ սկսեցին ձայն պահել Հազարան Բուլբուլի բարձրաձայն երգին։ Սրանով նրանք բոլորը մի տեսակ խոնարհություն և հպարտություն էին ցույց տալիս խոսող Թռչունին, և նա ավելի էր ոգևորվում և ցույց էր տալիս իր բոլոր շնորհքը։

Հովանոցի մոտն էր և մարմարիոնի ավազանը, որ Ֆարիզադի համար հայելու պաշտոն էր կատարում. նա տեսնում էր իր պատկերը և վարսագեղ մազերը՝ կեսը ոսկի և կեսը արծաթի։ Այդ ավազանի մեջ կաթեցրեց Ոսկեցնցուղ Ջրից մի կաթիլ։ Ոսկե կաթիլն սկսեց քչքչալ, խոշորանալ և դառնալ մի ջրային խուրձ, որից, իբրև հազարավոր ծորակներից, վեր էին ցայտում ոսկի կաթիլները շատ բարձր և կրկին վայր թափվում ավազանի մեջ։ Ցայտող կաթիլներն այնքան պաղ էին, որ զովացնում էին այգում տիրող անտանելի շոգն ու տոթը։

Հետո իր ձեռքով տնկեց Երգող Ծառի ոստը։ Փոքրիկ ճյուղն իսկույն արմատ բռնեց, աճեց, մեծացավ և դառավ մի հսկայական ծառ։ Եվ սկսեց ծառը նվագել այնպիսի եղանակներ, որ չէին կարող հնչել ոչ զեփյուռը Պարսկաստանի այգիներում, ոչ հընդկական վիները, ոչ սիրիական տավիղը և ոչ եգիպտական ջութակը։ Ծառի հազարավոր բերաններից բխող այս երկնային հնչունները լսելու համար, չորս կողմում տիրում էր խորին լռություն, մնչվում էին թռչունները, ջուրը կտրում էր իր խոխոջյունը, զեփյուռը ետ էր քաշում իր մետաքսե քնքուշ ծածկոցը, որ չդիպչի ոչ մի բանի։

Ֆարիզադան այլևս առիթ չուներ ոչ տխրելու և ոչ ձանձրանալու։ Նա սկսեց շարունակել իր սովորական տնային պարապմունքը, միշտ նստած խոսող Թռչունի մոտ, որ նրան զբաղեցնում էր շատ իմաստալից և հետաքրքրական պատմություններով։ Նրա թողած պակասը լրացնում էին Երգող Ծառը և Ոսկեցնցուղ Ջուրը, իսկ եղբայրները ցերեկն իրանց որսորդությունով էին պարապած, գիշերները վերադառնում էին տուն, ուրախ ժամանակ անցկացնում իրանց քրոջ հետ։

Մեկ անգամ էլ, ահա, երբ Ֆարիդն ու Ֆարուզն անցնում էին մի նեղ ձորակով, որից չէր կարելի շեղվել ոչ աջ և ոչ ձախ, դեմ առ դեմ հանդիպեցին սուլթանին, որ իր մարդկանցով եկել էր նույնպես որսորդության։ Եղբայրներն իջան ձիերից և ծունկ

չոքեցին թագավորի առջև, գլուխները խոնարհած մինչև գետին։ Սուլթանը շատ զարմացավ, տեսնելով այն անտառում նրանց այնքան ճոխ հագնված, որ կարծես իր շքախմբից լինեին։ Նա ուզեց տեսնել նրանց երեսները, հրամայեց վեր կենալ։ Եղբայրները վեր կացան և թագավորի առջև կանգնեցին, պահպանելով իրանց արժանապատվությունը և յուրին հարգանքը դեպի թագավորը, որ հափշտակված նրանց վայելչակազմ գեղեցկությունով, երկար ժամանակ զննեց ոտից մինչև գլուխ։ Հետո հարցրեց նրանց, թե ովքեր են և որտեղ են կենում։ Նրա սիրտը հուզվում էր ու մի առանձին ձգողությամբ քաշվում դեպի նրանց, ինչպես դեպի իր հարազատներին։

Եղբայրները պատասխանեցին.

— Ո՛վ արքա ժամանակների, մենք քո հանգուցյալ ստրկի որդիքն ենք, քո ծառայի, որ կառավարում էր քո արքայական այգիները։ Այստեղից հեռու չէ մեր բնակարանը, որ քո առատաձեռնության պտուղն է, դո՛ւ ես ընծայել մեր հորը։

Սուլթանը շատ ուրախացավ, որ ծանոթացավ իր նախկին հավատարիմ ծառայի որդոց հետ, միայն զարմացավ, որ մինչև հիմա նրանք չեն հայտնվել իր պալատում և չեն գտնվում իր շքախմբի մեջ։ Եվ երբ որ հարցրեց այս մասին, նրանք պատասխանեցին.

— Ո՛վ ժամանակների թագավոր, ներիր մեզ, որ մինչև հիմա չենք մտել քո մեծահոգի բազուկներիդ պաշտպանության տակ։ դրա պատճառն այն է, որ մենք մեզանից փոքր մի քույր ունինք, որի պահպանության հոգսը մեզ վրա է գցել մեր հայրը իր մահից առաջ, մենք էլ պահպանում ենք այնպիսի սիրով, որ չենք կարող բաժանվել նրանից։

Թագավորը շատ զգացվեց սրանց եղբայրական սիրուց և ավելի ուրախացավ, որ հանդիպեց սրանց, և ասաց ինքն իրան. «Երբեք չեմ կարծել, որ իմ թագավորության մեջ կարող են երկու հոգի լինել այսքան գեղեցիկ ամեն կողմով և ազատ սնափառությունից»։ Եվ մի առանձին բաղձանքով ուզեց այցելել նրանց տունը և ավելի մոտիկից ծանոթանալ նրանց հետ և հագեցնել աչքերը նրանց քաղցր տեսությունով։ Իր այս ցանկությունը սուլթանը հայտնեց եղբայրներին, որոնք շատ ուրախացան և շտապեցին լինել նրա ուղեկիցը։ Ֆարիդը նրանցից շուտ գնաց տուն, որ նախապատրաստե քրոջը։

Ֆարիզադան սովոր չլինելով սուլթանի չափ մեծ հյուր ընդունելու, մնացել էր շվարած և չգիտեր ինչ աներ։ Խնդրեց մատնեց դիմել իր խորհրդակցին՝ խոսող Թռչունին և ասաց նրան.

— Ո՛վ Հազարան Բուլբուլ, սուլթանն ուզում է գալ մեր տուն, որ մեծ պատիվ է մեզ համար, և մենք պետք է հյուրասիրենք նրան իր մեծության համեմատ։ Սովորեցրու ինձ, ինչպես պիտի անենք, որ նա բավական մնա մեզանից։

Բուլբուլը պատասխանեց.

— Ո՛վ իմ տիրուհիս, չարժե խոհարարուհուդ հրամայել, որ բազմատեսակ կերակուր պատրաստե, որովհետև այսօր թագավորին կարող է դուր գալ միայն մեկ տեսակ կերակուր, նրանով էլ պետք է հյուրասիրել։ Այդ կերակուրը պետք է պատրաստած լինի բորինջանով, մեջը լցրած մարգարիտով...

Ֆարիզադան զարմացավ, և կարծելով, որ թռչունը սխալ է հասկացել բանը, ասաց նրան.

— Թռչո՛ւն, թռչո՛ւն, այդ ի՞նչ ես ասում, ինչպե՞ս կարելի է մարգարիտ լցնել բորինջանի մեջ, այդ տեսակ կերակուր չի լսված։ Եթե թագավորը մեզ պատիվ է անում և ուզում է մեզ մոտ ճաշել, այդ կնշանակե, որ նա ուտել է ուզում և ոչ կուլ տալ մարգարիտի հատիկներ։ Դու երևի ուզեցիր ասել՝ «բորինջան բրնձով լցրած»։

Բայց խոսող Թռչունը բացականչեց.

— Ամենևին ո՛չ, ամենևին ո՛չ, լցրած պետք է լինի մարգարիտ և ոչ բրի՞նձ, բրի՞նձ, բրի՞նձ...

Ֆարիզադան, որ ամեն բանում հավատում էր խոսող Թռչունին, շուտով պատվիրեց պառավ խոհարարուհուն, որ մի պնակ բորինջան եփե, մեջը լցրած մարգարիտի հատիկներով, որ ուներ մեծ քանակությամբ...

Մինչ այդ սուլթանն էլ եկավ Ֆարուզի ուղեկցությամբ։ Ֆարիդը այգու դռանը ընդունեց թագավորին, բռնելով ասպանդակը, իջեցրեց ձիուց։ Իսկ Ֆարիզադան՝ Բուլբուլի խորհրդով՝ երեսը քողով ծածկեց և այդպես մոտեցավ ու համբուրեց սուլթանի ձեռքը։ Սուլթանը շատ զգացված էր նրա սիրալիր ընդունելությունից և այն մաքրությունից, որ բուրում էր նրանից, իջրև թարմ հասմիկից, և հիշելով իր անզավակությունը ծերության հասակում, արտասուք երևաց աչքերում։ Հետո օրհնելով Ֆարիզադային՝ ասաց.

— Նա, ով իրանից հետո թողնում է հետնորդներ, չի մեռնում, այլ անմահանում է։ Ձեր հայրը մեռած չէ, այլ կենդանի է դեռ, քանի որ ունի ձեզ պես զավակներ։ Ապրի՛ս, զավակս, դե մեզ տար տերևախիտ ծառի տակ, որ մեզ աղատե արևի շողից։

Ֆարիզադան և իր եղբայրները սուլթանին տարան Երգող Ծառի մոտ, Ոսկեցնցուղ Ջրի ավազանի ափը, որի մոտ էր և խոսող Թռչունի զրուցարան-հովանոցը, ուր և բազմեցրին նրան։ Մի բոպե կանգ առավ նա ավազանի մոտ և նայելով ոսկեցնցուղ խուրձից վեր ցայտող պաղ ջրի կաթիլներին՝ բացականչեց.— Ինչ հրաշալի ջուր է, ինչքան դուրեկան է նայելը։

Հենց այդ միջոցին լսեց և Երգող Ծառի խմբերգը և հոգով ու մտքով հափշտակվեց նրա երկնային նվագից։ Բայց հենց որ մտավ հովանոցը, ուր կախված էր Հազարան Բուլբուլի ոսկե վանդակը, տիրեց խորին լռություն, կարծես համրացավ ամբողջ այգին։ Այդ ժամանակ ահա ձայնը բարձրացրեց խոսող Թռչունը և սկսեց երգելով ասել.—

Բարո՜վ եկար, Խոսրով-շահ,
Բարո՜վ, բարո՜վ,
Բարո՜վ եկար, Խոսրով-շահ,
Բարո՜վ, բարո՜վ։

Հենց որ խոսող Թռչունը բարի գալուստ մաղթեց, այգու բոլոր թռչունները արձագանք տվին նրան, ասելով.

Բարո՜վ եկար, բարո՜վ, բարո՜վ։

Սուլթանն այս բոլոր հրաշքների ազդեցության տակ սկսեց բացականչել.

— Սա է երջանկության տունը, այստեղ մարդ ոչ կհիվանդանա, ոչ կծերանա և ոչ կմեռնի։ Սա է երկրային դրախտը։ Ես իմ թագավորությունս կտայի այստեղ, ձեզ հետ ապրելու համար։ Եվ երբ որ հարցրեց նա եղած հրաշալիքների մասին, նրան ցույց տվին Երգող Ծառը և խոսող Թռչունը։ Եվ Ֆարիզադան ասաց.— Սրանց բոլորի մասին ես կպատմեմ, երբ կհանգստանա մեր տեր թագավորը։ Այս ասելուց հետո, Ֆարիզադան գնաց բերելու եփած բորինջանը մի պնակով և դրավ թագավորի առջևը։

Սուլթանը, որ այդ կերակուրը շատ էր սիրում, զարմացավ, որ իր սիրած կերակուրը մոտ բերին։ Բայց նրա զարմանքը ավելի սաստկացավ, երբ նկատեց, որ բորինջանը մարգարիտով էր լցված, որ չէր կարելի ուտել։ Եվ ասաց նա Ֆարիզադային.

— Երդվում եմ կյանքովս, որ այսպես բան չեմ տեսած ես։ Այս ի՞նչ նոր տեսակ կերակուր է։ Վաղո՞ւց է, ինչ որ մարգարիտը բռնում է բրնձի և պիստակի տեղը։

Եվ մինչդեռ ամենքն էլ լռել էին և չգիտեին ինչ պատասխանել սուլթանին, խոսող Թռչունը ձայնը բարձրացրեց և ասաց.

— Ո՜վ մեր Խոսրով-շահ, դուք զարմանում եք, որ այդպես կերակուր լինել չի՞ կարող, հապա ինչո՞ւ չզարմացաք, ինչո՞ւ հավատացիք, որ Պարսկաստանի թագուհին կարող է փոխանակ չնաշխարհիկ զավակների, տալ՝ ով գիտե ինչ տեսակ կենդանիներ։ Հիշիր, ո՜վ Խոսրով-շահ, այն խոսքերը, որ լսեցիր մի երեկո երեք քույրերից փոքրի ասածը, թե.— Ո՜վ իմ քույրեր, երբ որ ես դառնամ սուլթանի ամուսինը, մենք կունենանք զավակներ, որովհետև որդիքս ամեն բանով արժանի կլինեն իրանց հորը, իսկ աղջիկս կլինի երկնքի ժպիտը։ Նրա մազերի մի կողմինը կլինի ոսկի, մյուս կողմինը՝ արծաթի. նրա արցունքը, երբ լաց լինի, կդառնա մարգարիտի հատիկներ, ծիծաղը՝ ոսկի դրամներ, իսկ ժպիտը՝ նորաձիթիթ վարդեր։

Սուլթանը լսելով Բուլբուլի ասածները, գլուխը բռնեց երկու ձեռքով և սկսեց հեկեկալ։ Բայց Բուլբուլը հանեց նրան տխրությունից, ասելով.— Ո՜վ Ֆարիզադա, քողը հեռացրու երեսից, թող հայրդ տեսնի երեսդ...

Ֆարիզադան ետ քաշեց քողը թե չէ, նրա ոսկի ու արծաթի վարսերը թափվեցին կրծքի վրա։ Սուլթանն այս տեսնելով՝ վեր կացավ բարձրաձայն բացականչությունով.— Աղջի՜կս, աղջիկս է սա։ Իսկ Հազարան Բլբուլը գոչեց.

— Այո՜, տեր թագավոր, դա քո աղջիկդ է, իսկ դրանք էլ քո որդիքն են։

Եվ որովհետև ոչ քույրը, ոչ եղբայրները չգիտեին իրանց ծագումը, Հազարան Բուլբուլը այստեղ պատմեց բոլորը, ինչ որ թագավորն էլ չգիտեր։

Թագավորն ու իր զավակները, որ լսում էին խոսող Թռչունին, զարմանքից քարացած, վերջապես ուշքի եկան ու գրկախառնվեցին միմյանց, թափելով ուրախության հորդ արտասուք։ Եվ երբ որ հանգիստ առան, հուզմունքից թագավորն ասաց.

— Ո՜վ իմ զավակներս շտապենք մի ժամ առաջ տեսնել ձեր մորը։

Բայց ի՞նչ լեզու կարող է պատմել մոր ուրախության չափը։ Նա, որ սուլթանի աչքից ընկնելով, պալատի մի հեռավոր անկյունում էր բնակվում ընկճված, կուչ եկած, թառամած, այժմ աչքովը տեսնելով իր զավակները, կարծես մեռած տեղից հարություն առավ, մի նո՛ր մարմին հագավ ավելի՛ առույգ և ավելի՛ գեղեցիկ, քան թե երբեմն եղած էր։

Իսկ քույրերը լսելով այդ բանը, մարդկային պատժի չարժանացան, այլ հենց նույն օրը մեռան կատաղությունից։

Եվ թող լինի չարն այնտեղ, բարին այստեղ։

1910

ԽԻԶԱԽԸ ԿԱՄ ԱՆԵՐԿՅՈՒՂԸ

Առաջին տարբերակ

1

Էլել է չի էլել,— սուտն ու ճշմարիտը աստված գիտե,— մի տղա է էլել, անունը Խիզախ։

Հայտնի է, որ կան մարդիկ, որոնք հոտառության զգացմունքից զուրկ են, կան որ կերածի համը չեն իմանում, կան և խուլ ու համր մարդիկ, կան որ զուրկ են աչքի լույսից։ Մեր Խիզախը այդ ամենն ուներ, միայն վախի, երկյուղի, ահ ու սարսափի զգացմունք չուներ։ Մարդիկ կան, որոնք մի անսովոր թրխկոց լսելիս, որոտմունքի, թնդանոթի ու հրացանի ձայն լսելիս՝ ակամա ցնցվում են բոլոր մարմնով։ Խիզախը չուներ այդ զգացմունքը։ Նրա համար մեկնույն էր. թեկուզ գետինքը դղրդար դ բաց աներ իր անհատակ անդունդները, թեկուզ երկինքը փուզ գար, ու բոլոր աստղերը կարկուտի պես թափվեին, նա ոչ աչքը կճպեր, ոչ սիրտը կտրրփար։

Խիզախն աներկյուղ էր։ Բայց մյուս բոլոր զգայարանքները չափից դուրս զարգացած էին նրանում։ Նա աներկյուղ լինելով հանդգնություն ուներ իրան ենթարկելու այնպիսի փորձերի և մարզանքների, որոնցից վախկոտները միշտ հեռու են մնում և այդ պատճառով էլ միշտ թույլ մնում։ Նա մագլցում էր բարձր ծառերի վրա ու ճյուղից ճյուղ ոստոստում, ինչպես մի առնետ։ Ինչքան էլ ճարպիկ լինի մարդ, այդպես անել չի կարող, եթե վախկոտ է, որովհետև երկյուղի զգացմունքը տիրում է նրա ամբողջ մարմնին, նրա ոտ ու ձեռքը դողդողում են, աչքերը մթնում, և մեր վախկոտ ճարպիկը թրմփում է ծառի գագաթից։

Երբ գետնի վրա մի երկայն գերան կա ընկած կամ մի նեղ տախտակ, մենք վազում ենք նրա վրայով ծայրեծայր, բայց եթե ընկած է մի մեծ գետի վրա իբրև մի կամուրջ, այն ժամանակ էլ չենք կարողանում անցնել նրա վրայով, մեր ծնկները դողում են։ Ինչո՞ւ. մի՞թե էլի նույն տախտակը չէ, որի վրայով միշտ վազում էինք։ Տախտակն էլի այն տախտակն է, բայց մենք այլևս այն չենք լինում, երկյուղը մեզ փոխած է լինում։

Խիզախը նկատում էր, որ վախկոտությունը լավ բան չէ, որ վախկոտությունը միշտ հաղթվում է, միշտ ընկճվում, բայց շատ էր ցանկանում գոնե մեկ անգամ իր վրա փորձեր, մեկ տեսներ այդ ինչ բան է, ինչպես կան չտենդած մարդիկ, որոնք երբ մեկին տեսնում են դողոցքը բռնած ու ատամները իրար զարկելիս արևի տաք ժամանակ, և մնում են զարմացած, թե՝ «այս ինչ բան է, որ այսպես մրսեցնում է, երանի մեկ ես էլ դողացնեմ ու տեսնեմ ինչ բան է այս»։

Խիզախը հենց որ չափահաս եղավ, ամեն տեսակ փորձի ու վտանգի ենթարկեց իրան, բայց ոչ մի անգամ չզգաց երկյուղի զգացմունքը։

Այդ ժամանակ քառասուն հարամի են լույս ընկնում ու բոլոր աշխարհը դողացնում։ Սրանից էլ լավ առիթ չի լինիլ, ասում է Խիզախն ինքն իրան, որ ես էլ վախենամ մեկ անգամ։ Մեկ գնամ տեսնեմ այդ ինչ հարամիք են և ինչով են վախեցնում մարդկանց։

2

Քառասուն հարամիքը կենում էին մի մութ ու խոր ձորի մեջ։ Մի ահագին սար իր փորը դատարկել էր ու նրանց համար շինել մի անմատչելի բնակարան։ Իսկապես այդ ատրաֆորը մի աղա-

հանք, թե պղնձահանք էր եղել։ Հանքահանները սարը ծակելով ու հանքը դուրս կրելով՝ ով գիտե քանի՞ հարյուր տարի, ու մեջեմեջ սյուներ թողնելով՝ շինել էին մի ստորլեռնյա ահագին դատարկություն անթիվ միջանցքներով, ծակուծուկներով ու ներս ու դուրս տանող զանազան մուտքերով, ինչպես լինում են մկան բույնի մուտքերը։

Խիզախը գնաց ահա այս դիվական բնակարանը, որի միայն անունը սարսափ էր բերում ամենքի վրա, ու քանի որ դեռ հարամիք չէին կենում այդտեղ, դա համարվում էր գնացող-չեկողի ճանապարհ, որովհետև ով որ այդ սարափորը մտներ, ճանապարհը կկորցներ ու մի անցքից մյուսն ընկնելով, պատից պատ խփվելով՝ կկորցներ ճանապարհը ու կմնար այնտեղ անդարձ կերպով։

Խիզախը երբ տեղ հասավ, բնակարանի մոտ տեսավ մի ահռելի մարդ։ Նա ավազակապետն էր, որ ինքը տանը մնալով՝ մյուսներին ուղարկել էր հափշտակություն։ Նա մի դաժան դեմքով մարդ էր։ Հաստ հոնքերը կախ էին ընկած խոր ընկած կոպերի վրա, որոնց տակից բորբոքված կրակի նման կայծեր էին արձակում նրա աչքերը։ Կուրծքը լայն ու բրդբրդոտ, կարծես մի թփախիտ սարալանջ լիներ։ Վիզը նման էր մի մամռապատ կոճղի, իսկ թաթերը կարծես թիակներ լինեին հնգամատ։

Խիզախը մոտենալով հսկային, այնպես նայեց նրա վրա, ինչպես երեխեքը նայում են մի գոմշի վրա՝ նրան խրտնեցնել ուզելիս։ Բարև տվավ նրան ու նստեց մոտը, ասելով.

— Շատ հոգնած եմ ու քաղցած, մի քիչ բան տվեք ուտելու։

Հսկան առաջին անգամն էր տեսնում մի մարդ, որ իրան տեսնելիս ոչինչ երկյուղի նշան ցույց չի տալիս։ Նա ավելի ևս խոժոռացրեց աչքերը Խիզախի վրա, մռայլացրեց դեմքը ու ասաց մռմռալով ու մռնչալով.

— Այս ինչպե՞ս ես սիրտ արել դու մեզ մոտ գալ, մի՞թե չգիտես, որ թռչունն իր թևովը, օձն իր պորտովը չի համարձակվում մեր սահմանովն անցնել։

— Ինչո՞ւ, մի՞թե դուք վատ մարդիկ եք ու վնասակար,— պատասխանեց Խիզախը համարձակ։

Այս խոսքի վրա հսկան մռմռաց քթի թակ։ Նա առաջին անգամ էր լսում այսպիսի խոսք։

— Ո՛չ, մենք վատ մարդիկ չենք, բայց...

— Ես էլ եմ կարծում, որ դուք վատ մարդիկ չեք, այս պատճառով էլ եկել եմ ձեզ մոտ, որ ձեզանից խելք ու շնորհք սովորեմ։ Եթե կընդունեք, ես կարող եմ մի բանի պետք գալ։ Կարող եմ տունը պահել, ոչխարած ու ձիարած լինել, ամեն ինչ կանեմ, ինչ որ պատվիրեք։

Այս խոսքի վրա ավազակապետը իր դեմքի ամպը փարատեց ու Խիզախի վրա նայեց մեղմ հայացքով։

— Շատ լավ. անունդ ի՞նչ է։

— Խիզախ։

— Խիզա՜խ... լավ անուն է։ Եթե ինքդ էլ անունիդ պես խիզախ ես, ժամանակով կարող ես պետք գալ ինձ,— ասաց հսկան ու գոռաց.— Այս Խիզախին տարեք հաց տվեք, քաղցած է։

Այս ձայնի վրա երկու աղջիկ դուրս եկան ու Խիզախին տարան ներս, ու նրա առջև դարսեցին եփած ու խորոված միս, հաց, պանիր, յուղ։

Այդ աղջիկները գերի էին ընկած այդտեղ։ Կարծեցին, թե Խիզախը նույնպես գերի է, նրան շատ պատիվ տվին ու խոսեցրին. բայց Խիզախը նրանց հարցուփորձին պատասխան չտվավ, ինքն իրան ձևացնելով այնքան տխուր, որ պատասխանելու սիրտ չունի իբր թե։

3

Խիզախը դառնում է ձիարած և միևնույն ժամանակ հետամուտ է լինում ավազակների բռնած ընթացքին։ Գիշեր չէր լինում, որ ահագին քարավաններ կողոպտված չբերեին. հափշտակում էին և կենդանի մարդիկ իբրև գերի, ու փրկանք ստանալով, ետ դարձնում։ Խիզախը նկատեց, որ այս մարդիկը անհաղթ և անընկճելի են մնում միայն նրա համար, որ ժողովուրդը հավերի պես դողում է այս աղվեսներին տեսնելիս։ Միայն երկյուղն է, որ նրանց այդչափ խեղճացրել է։ Մտքումը դրավ ավազակների գլուխին մի օյին խաղալ։

Ամեն գիշեր, հենց որ ավազակները գնում էին կողոպուտի, նա էլ գնում էր նրանց հետևից, ձիաներից ամենից լավն ընտրելով իր համար և զինավորված ամենալավ զենք ու զրահով, կողմ-

նակի ճանապարհով ընկնում էր նրանց առաջը, և հենց որ նրանք սկսում էին իրանց հարձակմունքը, նա դուրս էր գալիս հակառակ կողմից ու թրի ոռքով մեկի գլուխը պատռում, մյուսի կուռը կտրում, մեկէլի ուսերը ջարդում ու ետ մղում փախցնում, առանց սպանելու մեկն ու մեկին։

Այս բանը կրկնվում է մի քանի անգամ, և ավազակները սարսափի մեջ են ընկնում՝ նրան քաջերից քաջ համարելով։

— Այդ մարդը եթե թրի բերանը գործ դնե, մեզանից ոչ մեկս կենդանի չենք մնալ,— ասում է ավազակապետը,— բայց ինչո՞ւ է այդպես վարվում, երևի նա մեր աղ ու հացն է ուտում և ուզում է մեզ խրատել, առանց սպանելու։

— Բայց ո՞վ պիտի լինի այն մարդը, այդչափ քաջ, այդչափ աներկյուղ,— ասաց մեկը։

— Տղերք,— ասաց ավազակապետը,— ես կարծում եմ, որ դա մեր ձիարած Խիզախն է, և այս մենք կարող ենք ստուգել ահա ինչպես։ Ես սուտ կհիվանդանամ և կասեմ, որ գիշերով գնա գերեզմանոցում հալվա եփե ինձ համար։ Եթե նա այս բանը կանե առանց վախենալու այն բանից, ինչ որ ես այնտեղ կանեմ, այդ ապացույց կլինի, որ մեզ վրա հարձակվողը սա է։

Խիզախին ուզում են վախեցնել. խեղճերը չեն իմանում, որ ահ ասածդ չկա նրա սրտումը։

Ավազակապետը ինչպես ասում է, այնպես էլ կատարել է տալիս Խիզախին։ Մութը, կեսգիշերին, Խիզախը գնում է գերեզմանոց, իսկ այդ գերեզմանոցի համար ասում էին, թե այնտեղ քաջքեր կան, թե մեռելները կենդանանում են գիշերները, նրանցից որը շուն է դառնում, որը կատու, հարձակվում են այդտեղով անցնող մարդկանց վրա և գզգզում։

Կրակ է վառում Խիզախը, պղինձը դնում վրան, հալվան եփում։ Շերեփը ձեռին խառնելիս՝ մեկ էլ տեսնում է, ահա մի մերկ ձեռք մեկնվեց դեպի իրան՝ ողորմություն ուզելու պես։ Խիզախը շերեփը լցրեց հալվայով, փչեց, հովացրեց, որ մեռելի ձեռքը չայրի, ու ածեց նրա բուռը. մեռելը ետ քաշեց ձեռքը, ներս տարած հալվան կերավ, մեկ էլ մեկնեց ձեռքը։ Խիզախն էլի լցրեց շերեփը, հովացրեց ու բուռն ածեց։ Այսպես կրկնվեց երեք անգամ, բայց չորրորդ անգամն այլևս ոչինչ չտվավ և ասաց.— Բավական է, ետ քաշիր ձեռքդ, բոլորը որ քեզ ուտեցնեմ, էլ իմ հիվանդի համար ի՞նչ տանեմ։ Բայց տեսավ, որ ձեռքը չի ուզում

ետ քաշել, տաք-տաք հալվա ածեց բուռը ու մեկ լավ այրեց։ Մեռելը վախեցավ, էլ չմեկնեց ձեռքը։ Խիզախը եփած հալվան տարավ տվավ ավազակապետին, առանց պատմելու, թե ինչ անցք անցավ գերեզմանոցում։

Որովհետև ավազակապետն ինքն էր մեռելի գերեզմանումը թաք կացել, մեռել ձևացել, որ վախեցնե Խիզախին, բայց ինքն իր աչքովը տեսավ, որ Խիզախն ամենևին բանի տեղ չդրավ ու մի առանձին ուշք էլ չդարձրեց այդ ուրիշների համար մահաբեր երևույթի վրա, էլ նրանում կասկած չմնաց, որ ինքը Խիզախն է նրանց ջարդողը։

Այդ բանը պատմեց ավազակներին և ասաց.

— Սուտ ու շեղած բաներից չվախեցողը՝ ուղիղ և եղած բաներից երբեք չի վախենալ։ Սա որ ողորմություն ուզող մեռելից չի վախենում, էլ ի՞նչ բանից կարող է վախենալ։

— Չվախենալը բավական չէ,—ասաց ավազակներից մեկը,— շատ ապրողներ կան, որոնք ոչ մի բանից չեն վախենում, որովհետև նրանց գլխումը տեղ չի գտնում ոչ խելոք և ոչ հիմար բաները։ Ապացուցելու համար, թե Խիզախն է մեզ վրա հարձակվողը, պետք է նրա քաջությունը փորձել։ Դու էլի հիվանդ ձևացիր և ուղարկիր անմահական ջրի, ուր ոչ մի գնացող դեռ վերադարձած չէ։ Եթե նա կկատարե այդ հանձնարարությունը, այն ժամանակ կհամոզվենք, որ մեր քառասունին հաղթողը նա է։ Այնուհետև մենք կառաջարկենք, որ մեզ հետ ընկեր դառնա ու քո երկրորդն ու փոխանորդը լինի։ Դրա հետ միասին մենք կարող ենք բոլոր աշխարհքին տիրել և այսուհետև ոչ թե ավազակ կլինենք, այլ մեծ իշխան ամեն մի նահանգում, ինչպես թագավոր։

— Այդ շատ լավ ասացիր,— կրկնեցին ամեն կողմից և Խիզախին ուղարկեցին անմահական ջրի։

(Երկրորդ տարբերակ)

Էլել է, չի ելել, մի պառավ։ Այս պառավը մի որդի է ունենում միևնույնը։ Տղան երբ որ մեծանում է, լսում է, որ աշխարհումս շատ երկյուղալի բաներ կան, որոնցից պետք է հեռու մնալ։ Առում է.

— Ա՜խ, ինչպես կցանկանայի, որ մեկ տեսնեի, թե ինչ բան է երկյուղը։

Պառավը շատ տեղ է տանում տղային, շատերի մոտ աշակերտության տալիս, որ մեկ արհեստ սովորի, բայց նա ոչ մեկի մոտ չի մնում և ասում է մորը.

— Ես ուզում եմ տեսնել, թե ինչ բան է երկյուղը, եթե այդպիսի արհեստավոր կա, ինձ տուր նրա մոտ, ես այնտեղ կկենամ։

— Որդի, երկյուղը ոչ արհեստ է, ոչ արհեստավոր,— ասում է մայրը,— այդ բանը ամեն մարդու սրտում էլ կա, եթե դու ոչ մի բանից չես վախենում, ուրեմն քո սրտումդ երկյուղ ասածը չկա, դու աներկյուղ ես։

— Մայր, այդ երևի լավ բան է, որ ամեն մարդի սրտում էլ կա,— ասում է տղան,— ուզում եմ ես էլ ունենալ, բայց որտե՞ղ գտնեմ, որտե՞ղ ձեռք բերեմ։

— Աստված մի արասցե, որդի, այդպես բան չես անիլ,— ասում է պառավը և երկյուղալի դեմքով բացականչում.— Ո՜... որ իմանաս, ի՜նչ երկյուղալի և սարսափելի բաներ կան աշխարհիս երեսին...

— Որտե՞ղ են այդ սարսափելի բաները, մայր, հապա ինչո՞ւ ես ոչ մեկ անգամ չեմ տեսնում։

— Հապա սարսափելի չե՞ն քառասուն հարամիքը. ամբողջ աշխարհս դողում է նրանց ձեռին, նրանց երկյուղից ոչ ով սիրտ չի անում նրանց հողումը ոտք դնել։

— Ուրեմն նրանց որ տեսնեմ, անպատճառ կվախենա՞մ, մայր։

— Աստված մի՛ արասցե, որդի, իհարկե կվախենաս, քար լինի, կհալչի նրանց երկյուղից։

Աներկյուղը մյուս օրը ճանապարհ ընկավ ու գնաց երկյուղ փնտրելու։ Նա ոչինչ չուներ, այլ միայն մի պարկ ուներ շալակին, մի կտոր չոր հաց ուներ կոնատակին և մի չոր մահակ ձեռին։

Ճանապարհին ով որ պատահում էր ու հարցնում, թե ուր ես գնում, նա պատասխանում էր.

— Գնում եմ երկյուղ փնտրելու։

— Գիժ կլինի սա,— ասում էին հանդիպողները և գլխները թափ տալիս։

Աներկյուղը գիժ չէր և ոչ հիմար։ Նա շատ խելոք էր մտածում, բայց երբեք խելոք չէր խոսում։ Նա տեսնում էր, որ իր շրջապատի մարդիկը բոլորն էլ հիմար են, ոչ մեկն իր նման չի

մտածում, այս պատճառով ինքն ավելի ևս հիմարանում էր և նրանցից ավելի հիմար բաներ ասում։ «Շատ էլ որ ասեմ, թե ես իմաստուն եմ, ով կհավատա», մտածում էր Աներկյուղը. «Լավն այն է, որ գործով ցույց տամ, թե ես հիմար չեմ, իսկ քանի որ գործ չկա, խոսքը նշանակություն ունենալ չի կարող»։

Այսպես են լինում առհասարակ բոլոր կարգե դուրս մարդիկը։ Նրանք որովհետև նման չեն լինում բոլոր մյուսներին, այդ պատճառով գիժ են համարվում։ Բայց հետո երբ այդ գիժ համարվածները դառնում են նշանավոր և երևելի մարդիկ, ամբոխը զարմանում է, թե ինչպես նրա պես գիժ տղան խելոք մարդ դառավ։

Մեր Աներկյուղը գլխիցը ձեռք վեր առած՝ գնաց հասավ քառասուն հարամիների բնարանը։

Մի ահռելի ժայռի մեջ էր նրանց բնակարանը։ Ժայռի մեջը փուչ էր ու բազմաթիվ միջանցքների ու սենյակների պես բաներ կային նրանում։ Հին ժամանակները այդտեղ երկաթահանք էր եղել։ Հանքահանները ժայռը փորելով՝ հանել էին երկաթաքարը, ով գիտե քանի հարյուր տարի, և մեջե մեջ սյուներ թողնելով՝ որ ժայռը վերևից չփլչի, շինել էին ստորլեռնյա ահագին մաղարեք, զաղեք, քարայրներ, որոնցից ամեն մեկը մյուսի հետ միացած էր մի միջանցքով և առանձին ճանապարհով դեպի դուրսը։

Հարամիների համար այդ բնակարանը մի անմատչելի ապաստարան էր։ Պատ և տանիք չուներ, որ քանդեին, ահագին սարին ինչ կարող էին անել, իսկ ներսը մտնել կարող էին միայն հատ-հատ, և ո՞վ կհամարձակվեր ինքն իրան քառասուն հարամու բերանը գցել։ Այս պատճառով ահա այդ քառասուն հարամիքը ահ ու սարսափ էին տարածել շրջակա գյուղերի և քաղաքների վրա։ Գազանների պես դուրս էին գալիս իրանց անմատչելի տնից ու հարձակվում էին քարվանների, հոտերի, նախիրների և քաղաքների ու գյուղերի վրա և թալանում, կողոպտում, հափշտակում ամենայն ինչ, մինչև անգամ շատ աղջիկ ու կնիկ, ու բերում լցնում իրանց բնակարանը։

Ահա այս բնակարանը գնաց Աներկյուղը։

Եթե Աներկյուղը ոչ մի երկյուղ չուներ հարամիներից, հարամիքը ավելի ևս երկյուղ չէին ունենալ նրանից ու պիտի ընդունեին իբրև մի անմեղ տղայի, որ դեռ չգիտե, թե աշխարհումս ինչ կա, ինչ չկա։

— Ո՞ր քամին է բերել քեզ մեզ մոտ,— հարցրեց նրան ավազակապետը,— ո՞ւր ես գնում և ինչո՞ւ համար եկար մեզ մոտ։

Աներկյուղը պատասխանեց.

— Ես ոչնչից չեմ վախենում և չգիտեմ ի՞նչ բան է երկյուղը։ Լսեցի, որ դուք շատ երկյուղալի մարդիկ եք, եկել եմ, որ տեսնեմ թե ինչ կա ձեզանում, որ մարդիկ այնքան վախենում են ձեզանից։

Ավազակապետը ծիծաղեց տղայի պարզամտության վրա և ասաց.

— Մեզանից այն մարդիկն են վախենում, որոնք մի բան ունեն և գիտեն, որ այն բանը մենք պիտի խլենք նրանցից ու զրկենք նրանց իրանց ունեցածից, իրանց սիրած բանից։ Իսկ դու որովհետև ոչինչ չունես և զուրկ ես նույնիսկ աստուծո տված խելքից, իհարկե որ չես վախենալ։

— Բայց ես ուզում եմ վախենալ. ինչպե՞ս անեմ, ուրեմն, և ո՞ւր գնամ, որ վախենամ, որ իմանամ, թե ինչ բան է վախը։

— Եթե այդքան ցանկանում ես, մեզ մոտ գաց և կտեսնես։

— Շատ շնորհակալ կլինեմ,— ասաց Աներկյուղը և անձնատուր եղավ ավազակապետին։

Ավազակապետը մի դաժան դեմքով մարդ էր։ Հաստ-հաստ ու խիտ մազերով հոնքերը կախ էին ընկած քթի ընկած կոպերի վրա, բայց տակից բորբոքված կրակի նման կայծեր էին արձակում նրա աչքերը։ Կուրծքը լայն էր, ինչպես մի սարի լանջ և բրդբրդոտ, ինչպես խոզի բաշ։ Վիզը այնպես հաստ էր, ինչպես մի մամռապատ կոճղ և այնպես ջլուտ, որ կարծես ցուլի վիզ լիներ։ Եթե Աներկյուղը վախկոտ լիներ, նրան տեսնելուն պես կսարսափեր, բայց ավազակապետը նրան թվաց իբրև մի գոմեշ կամ ուղտ, որոնք չնայած իրանց արտաքին ահռելիությանը, սովոր մարդկանց վրա ոչ մի երկյուղ չեն ազդում, այլ իրանք են վախենում նրանցից։ Աներկյուղն այնպես էր նայում հսկայի վրա, ինչպես գոմեշ խրտնեցնել և վախեցնել ուզող մի երեխա։

— Այս տղան մեզ շատ պետք կգա,— ասաց ավազակապետը մյուսներին։— Մենք սրան կարող ենք լրտես շինել և ուղարկել զանազան տեղեր, ուր մեզ չի կարելի գնալ։ Բայց պետք է նախ և առաջ փորձել սրա աներկյուղությունը։

Աներկյուղին սիրով պահպանեցին մի քանի օր. նրան ճիապահի և խոհարարի պաշտոն տվին, և հետո նրա աներկյուղությունը փորձելու համար ավազակապետն ասաց նրան.

— Այս քանի օր է, փորս սաստիկ ցավում է, եթե մի լավ հալվա եփես ինձ համար, ես կուտեմ և կառողջանամ. միայն այդ հալվան պիտի եփես այսինչ գերեզմանատանը գիշեր ժամանակ և այն էլ նոր թաղած մեռելի կողքին։

Այս պատվերը տվավ ավազակը, իսկ ինքը վաղորդյան գնաց մտավ իր ասած գերեզմանումը թաք կացավ։

Երբ լավ մթնեց, Աներկյուղը նույն տեղը կրակ վառեց և սկսեց հալվան եփել։ Շերեփը ձեռին խառնում էր հալվան ու մի երգ մմռռում քթի տակին։ Բայց ահա տեսնում է, որ մի բան է խրրթ-խրրթում գերեզմանումը, մեկ էլ մեռելը ձեռքը հանում է գերեզմանիցը և մեկնում դեպի տղան, ողորմություն ուզելու պես։ Աներկյուղը շերեփը լցնում է հալվայով, փչելով հովացնում և ածում է մեռելի ափը։ Նա ներս է քաշում կուռը, ուվածն ուտում է և էլի մեկնում ձեռքը։ Աներկյուղը մեկ էլ է լցնում շերեփը հալվայով, հովացնում և ածում մեռելի ափը։ Այսպես կրկնվում է երեք անգամ։ Բայց չորրորդ անգամ էլ որ մեկնում է, նա փոխանակ հալվայի, կրակոտ խանձուղով խփում է ձեռքին և ասում.

— Քեզ պես անամոթ մեռել չեմ տեսել, բավական է ինչքան որ կերար. բոլորը որ քեզ ուտացնեմ, էլ իմ աղային ի՞նչ տանեմ. եթե որ այդպես ուտելու ախորժակ ունեիր, էլ ո՞ւր էիր մեռնում. երևի բանից ես փախել և ընկել մեռելների կարգը։

Մեռելը մեկ էլ է պարզում ձեռքը։

— Ասացի, որ էլ չեմ տալ, խելք ունես, ձեռքդ ետ քաշիր, թե չէ՛ կրակով կայրեմ։

Մեռելը չուզեց ձեռքը ետ քաշել, Աներկյուղը պինդ բռնեց ձեռքիցը և խանձուղով այրեց։ Հսկան վեր թռավ տեղիցը և ընկավ Աներկյուղի վրա, բայց նա իր անվեհերությունը չկորցրեց, այլ ջուխտ ոտները գրկեց և հսկային գետին գլորեց։ Նա վեր կացավ փախավ, որ Աներկյուղը նրան չճանաչի։

Աներկյուղը հալվան տարավ ավազակապետին տվավ և պատմեց մեռելի արարմունքը։

— Օ՜... այդպես բան չի լինիլ,— ասաց նա,— երևի վախեցել ես, և աչքիդ այդպես է երևացել։

— Կարելի է,— ասաց Աներկյուղը, չիմանալով, թե ինչ բան է աչքին երևալը.— ուրեմն եթե վախն այդ է, ես նրա գլխին լավ օյին դրի։

Ավազակապետը այս փորձից հետո Աներկյուղին շինեց իր

լրտեսը և լրաբերը։ Նրան ուղարկում էր ամեն տեսակ վտանգավոր տեղեր, և նա գնում էր երբեմն ձիով և երբեմն ոտքով, և ամեն հանձնարարություն այնպես էր կատարում, որ ավազակներն իրանց նպատակին չհասնեն և հաջողություն ունենալու տեղ անհաջողության հանդիպեն։

Այս պաշտոնի մեջ նա բավական վարժվեցավ թուր և նիզակ բանացնելում, ձիով ու հետի արշավանք անելում և դարձավ ավազակների մեջ ամենից կտրիճը, բայց ավազակ չդառավ, այլ ավազակներ կոտորող։ Նա երբ որ հանդիպում էր մի քարվանի, նրանց զգուշացնում էր, թե ինչ տեղ պիտի իջնեն և իմաց էր տալիս, թե այսինչ ժամանակ պիտի հարձակվեն ավազակները, բայց չվախենան, ինքն օգնության կհասնի։ Եվ ճշմարիտ, երբ գնում էին հարձակմունք գործելու թե՛ քարավանի, և թե՛ գյուղի վրա, փոխում էր իր գդակը, դեմքը ծածկում և հարձակվում ավազակների վրա. որի գլուխը ջարդում, որի կուռը կոտրում, ավազակներից հափշտակում, վերադարձնում տերերին և ինքը կրկին խառնվում նրանց մեջ և հետները գնում։ Մեկ, երկու, երեք այսպես որ արավ, ավազակապետի սիրտը կասկած ընկավ և այն մտքին եկավ, որ այս բանն անողը Աներկյուղն ինքն է և ոչ ուրիշ մարդ։

1911

ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ԽՈՂՃԸ

Լինում է, չի լինում, մի գյուղացի։ Այս գյուղացին մի օր վերցնում է իր միակուռ որդուն և տանում քաղաք մի վաճառականի, մի սովդաքարի մոտ աշակերտ տալու։ Երկար ման գալուց հետո մոտենում է մի հարուստ վաճառականի խանութ և ասում.

— Պարոն վաճառական, իմ որդուս աշակերտ չե՞ք վերցնի։

— Կվերցնեմ,— պատասխանում է վաճառականը։

— Քանի՞ տարով կվերցնեք։

— Տասը տարով։

— Տասը տարին մի մարդու կյանք է, ես արդեն ուժասպառ

եմ եղել, ուզում եմ մի քանի տարուց հետո իմ որդու պտուղը ուտեմ, եթե կարելի է երեք տարով վերցրեք։

— Ո՛չ, որ այդպես է, ութ տարով կվերցնեմ։

Վերջը հինգ տարով համաձայնում են, իսկ ռոճիկի մասին երկար խոսելուց հետո գյուղացին թողնում է վաճառականի խղճին, թե որքան որ կցանկանա վճարել հինգ տարուց հետո։

Անցնում է երկու-երեք տարի. գյուղացու որդին շատ հմուտ գործակատար է դուրս գալիս, այնպես, որ բոլոր հարևանները շատ նախանձում են, որ այս վաճառականն այսպիսի ճարպիկ գործակատար ունի, շատ են ցանկանում, որ այդ գյուղացու որդուն տանեն իրենց մոտ, չէ հաջողվում, որդին ասում է, թե՝ իմ հոր խոսքը պետք է սրբությամբ կատարեմ. չնայած որ գրավոր պայման էլ չունին, որդին ազնիվ խոսքը գրավոր պայմանից ավելի է գերադասում։

Հինգ տարին որ լրանում է, գյուղից, մայրիկից նամակ է ստանում, թե «հայրդ մերձիմահ հիվանդ է, քո հաշիվները խոզեինիդ հետ վերջացրու և եկ։ Փողի համար որքան որ կտա, չհակառակես, որովհետև հայրդ քո վարձի համար թողել է խոզեինիդ խղճին, որքան կտա կվերցնես, շատ թե քիչ»։

Որդին շատ է տխրում այդ նամակի վրա և երկար մտածելուց հետո գնում է խոզեինի մոտ և ասում՝ «Մայրիկիցս նամակ եմ ստացել, թե՝ հայրդ մերձիմահ հիվանդ է, հաշիվները վերջացրու և եկ»։

Վաճառականն առանց երկար մտածելու, ասում է՝ գնա, ազատ ես։

Գործակատարը վրդովվում է, թե՝ պարոն խոզեին, բա ես հինգ տարի ծառայել եմ քեզ, թե ինչպես եմ ծառայել քեզ, այդ աստված գիտե, վերև աստված, ներքև դուք, հայրս մերձիմահ հիվանդ է, մեռնում է, իմ հաշիվս տվեք գնամ։

— Ի՞նչ հաշիվ, ի՞նչ աստված, քեզ ուտացրել, խմացրել և փեշակ եմ սովորեցրել, էլ ի՞նչ ես ուզում, քեզ ոչ մի կոպեկ չեմ տալ, որտեղ ուզում ես գնա։

Այդ ժամանակներում այդ քաղաքում մի այսպիսի սովորություն է լինում։ Եթե մեկը մեռնելիս է լինում, բարեկամներին ոչ թե մեռելի տերն է հայտնելիս լինում, թե՝ այսինչ մարդը մեռել է, պետք է թաղեն, այլ ծխատեր քահանային հայտնելիս են լինում, թե՝ այսինչ մարդը մեռել է, պետք է հայտնի բարեկամներին,

համքարներին և ամեն մի ծախս պետք է քահանան անի և վերջումը հաշիվ ներկայացնի։

Գյուղացու որդին տեսնում է, որ իր խոզեինը խիղճ չունի և իր խոսքի տերը չէ, սա մտածում է, թե երբ որ մի մարդ խիղճ չունի, նա մեռածի հաշվում է, և նա կարող է գնալ քահանային հայտնել, թե իր խոզեինը մեռած է։

* * *

Մյուս առավոտը գործակատարը վաղ գնում է եկեղեցի։ Առավոտյան ժամերգությունը վերջանալուց հետո դիմում է քահանային թե՝ խոզեինս վախճանվել է, պետք է բարեկամներին, համքարներին հայտնեք և թաղման ծախսերի պատրաստությունները տեսնել։

Քահանան հայտնում է վաճառականի բոլոր բարեկամներին և համքարներին, որ երեկոյան գան վաճառականի տունը հոգեհանգիստին ներկա լինելու։

Երեկոյան քահանան տիրացուի հետ գնում է վաճառականի տունը և ի՞նչ է տեսնում,— վաճառականը պատշգամբում նստած թեյ է խմում։

— Օրհնյալ տեր, էս ո՞ր խաչից էր, որ դուք մեզ մոտ եք եկել, չէ՞ որ դուք տարեկան երկու անգամ եք գալիս։

— Աստված օրհնեսցե, որդի, անցնում էի ձեր տան մոտով, ուզեցի ձեզ այցելել և ձեր առողջությունը հարցնել։

Վերջապես խոսում են դեսից-դենից և տեսնում են բակի մեջը վեց հոգի եկան և տեսնելով վաճառականին քահանայի հետ խոսելիս, ետ են դառնում դեպի փողոց. հինգ րոպեից հետո գալիս են տասներկու հոգի և տեսնելով վաճառականին և քահանային, դարձյալ փողոց են գնում։ Տասը րոպեից հետո գալիս են տասնութ հոգի և կրկին ետ են դառնում։ Տասնըհինգ րոպեից հետո գալիս են քսանըչորս հոգի և դարձյալ ետ դառնում։

Այս վաճառականը քիչ է մնում, թե խելագարվի։

— Սա ի՞նչ բան է.— կանչում է ծառային, թե՝ գնա այն մարգկանցից մի քանիսին կանչիր։

Գալիս են հինգ-վեց հոգի։

— Ի՞նչի համար եք եկել և գնում։

— Մեզ ասացին, որ դուք մեռել եք, եկել ենք հոգեցի վրա։

Քահանան տեղը կանգնում է և ասում.

— Ես էլ հենց դրա համար եմ եկել։

Մյուս օրը վաճառականը գնում է թագավորի մոտ և հայտնում գործի եղելությունը և ասում, որ իմ գործակատարն ուզում էր ինձ աղ-սաղ թաղել, խնդրում է մի դատաստան։

Կանչում են գործակատարին։

Գալիս է գործակատարը։

Գործակատարը պատմում է գործի ամբողջ պատմությունը, թե ինչպես իր հայրը իրան աշակերտ է տվել վաճառականի մոտ և վարձատրության մասին թողել է վաճառականի խղճին։

Թագավորին պատմում է տղան, թե՝ քանի որ էս խոզեինը խիղճ չունի, ինձ համար մեռածի հաշվում է, և ես դիմեցի այդ միջոցին։

Կանչում է թագավորը դահիճներին, թե՝ այս տղային տարեք կախեցեք։

Դահիճները տանում են կախելու։

Թագավորը հարցնում է վաճառականին, թե՝ էլ ուրիշ ասելու ոչինչ չունե՞ք։

— Ոչինչ չունեմ, թող տանեն կախելու, դա ուզում էր ինձ կենդանի թաղել,— ասում է վաճառականը։

Երկրորդ անգամ հարցնում է թագավորը վաճառականին, թե էլ ուրիշ ասելու կամ գանգատ չունե՞ս։

— Ոչ, ոչինչ չունեմ ասելու, թող տանեն կախելու։

Երրորդ անգամ հարցնում է թագավորը և միևնույն պատասխանն է ստանում, թե՝ թող կախեն։

Թագավորը մարդ է ուղարկում դահիճների մոտ, թե՝ ետ բերեք տղային, միք կախիլ։

Թագավորը հրամայում է դահիճներին, թե՝ վաճառականին տարեք կախելու։

Դահիճները տանում են վաճառականին կախելու։

Թագավորը հարցնում է տղային, թե՝ էլ ուրիշ ասելու կամ գանգատ չունե՞ս խոզեինիդ վրա։

Տղան ձայն չէ հանում։

Երկրորդ անգամ ասում է տղային, բայց դարձյալ պատասխան չկա։

Երրորդ անգամ հարցնում է տղային, թե՝ պատասխան տուր, խո էլ ոչինչ չունես ասելու։

Տղան լացակոմած ասում է.— Տեր արքա, ես խղճում եմ նրա զավակներին, ես մտնում եմ նրանց դրության մեջ։ Նրա որդիքը պետք է լացեն, որ իրանց հորը կենդանի թաղում են։ Ես ոչ մի պահանջ չունեմ նրանից և հրաժարվում եմ մի որևէ վարձատրությունից։

Թագավորը կանչում է դահիճներին, թե՝ թողեք վաճառականին, էլ մի կախեք։

Թագավորը կանչել է տալիս քաղաքի հայտնի վաճառականներին և հայտնում, թե այս վաճառականը որքան որ կարողություն ունի, կիսեցեք և կեսը տվեք իր գործակատարին։

Այդպիսով վաճառականի կարողության կեսը տալիս են իր գործակատարին և վերջ տալիս վաճառականի գանգատին։

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

1882--1890

ԾԱՌԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ

Մեր տված փայտից կրակ են անում, տուն տաքացնում, թոնիրը վառում, կերակուր եփում, փափուկ հաց թխում, ուտում կշտանում, բայց մեզ չեն հիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում։

Մեր գերաններից շինում են տներ, գոմեր, մարագներ, ժամեր ու վանքեր, մեր տախտակներից՝ հատակ, առաստաղ, աթոռ, պահարան, սեղան, նստարան, դուռ ու պատուհան և այլ շատ տեսակ կահ և կարասիք. բայց մեզ չեն հիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում։

Կամուրջ են շինում՝ գետերով անցնում. սայլեր են շինում՝ ամեն ինչ կրում. գութան են շինում՝ հողերը հերկում. լուծ, սամի շինում՝ եզ, գոմեշ լծում, օրորոց շինում՝ մանկիկ օրորում. քանոն են շինում՝ տետրակներ տողում. նավեր են շինում՝ ծովի մեջ լողում... բայց մեզ չեն հիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում։

Ո՞վ չի տանձ կերել կամ կարմիր խնձոր, նուռ ու սերկևիլ, կեռաս ու սալոր. դեղձ կարմրաթշիկ, ծիրան անուշիկ։ Ապա խաղո՞ղը. և քանի՞ տեսակ կանաչ ու կարմիր, թուխ-թուխ ու սպիտակ. և այդ ամենը մարդիկ են ուտում... Բայց մեզ չեն հիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում։

Խելոք մանուկներ, դուք որ մեծանաք, մեծ մարդիկ դառնաք, մեզ խնայեցեք, մեզ պահպանեցեք և ձեր հանդերում, ձեր այգիներում ծառեր տնկեցեք...

1882

ՄԵՂՈՒՆ ՈՒ ԱՂԱՎՆԻՆ

ա) Փորձանք

Ժրաջան Մեղուն ծաղկալից դաշտում իր մեղրի համար նյութ էր հավաքում։ Արևի տակին շատ աշխատելով նա բեզարեցավ և ծարավեցավ։

Նորանից մոտիկ մի փոքրիկ լիճ կար։ Մոտեցավ լճին, վեր եկավ ափին, որ քիչ ջուր խմի, ծարավը կոտրի, նոր ուժ ստանա, թռչի տուն գնա։

Հենց որ կռացավ, որ ջուր կում անի, հանկարծ գլորվեց, ընկավ ջրի մեջ։

Նա շատ աշխատեց, որ ցամաք դուրս գա, բայց մի փոքր ալիք նորան ներս քաշեց, ափից հեռացրեց։

Այսպես խեղճ Մեղուն ցամաքից զրկվեց, ջրի երեսին թևերը փռեց և հույսը կտրած, մնաց մեկնված։

բ) Օգնություն

Որտեղից որտեղ, օգնության հասավ մի շատ բարեսիրտ սիրուն Աղավնի։ Բարի Աղավնին մոտեցավ լճին և նայեց տեսավ մեր խեղճ Մեղվին՝ հուսահատ փռված ջրի երեսին։ Խղճուն շատ եկավ, մի տերև կտրեց և բերավ Մեղվի առջևը ձգեց։

Մեղուն բարձրացավ տերևի վերա, խելքը ժողովեց, դես ու դեն նայեց, որ տեսնի ով էր իր ազատողը, մահից փրկողը։ Եվ

տեսավ իր մոտ բարի Աղավնուն։ Շատ նայեց վերան և ուզեց խոսել, Աղավնուն գովել, շնորհակալ լինել, բայց մեր բարեսիրտ սիրուն Աղավնին շատ լավ իմացավ Մեղվի միտքը և ոչինչ չուզեց լսել նրանից, այլ թռավ գնաց, որ ուրիշ տեղ էլ նույն բարիքն անե։

գ) Երախտագիտություն

Մի օր մեր Մեղուն նույն դաշտի միջին մի սիրուն ծաղկից նյութ էր ժողովում և տղտղալով Աղավնուն գովում։ Մեղվի հանդեպ, մի ծառի վերա նստած նեջում էր ծանոթ Աղավնին։ Հենց այս ժամանակ Մեղուն նկատեց, որ ահա մեկ մարդ, հրացանը ձեռին, մեջքը կռացրած, շար օձի նման սողում է սուս-փուս դեպի Աղավնին։ Մեղուն հասկացավ, որ դա շար մարդ է, անգութ որսորդ է, ուզում է սպանել անմեղ թռչունին, իր բարերարին։ Եվ ճշմարիտ, որ այդ էր այն մարդու շար նպատակը։

Որսորդը չոքեց, տեղը պնդացրեց և հրացանը երեսին բռնեց։ Հենց մատը դրեց կայծառի ատքին և ուզեց քաշել, գործը վերջացնել, այդ խեղ բոպեին կայծակի նման Մեղուն վրա հասավ և շար որսորդի ձեռքն այնպես խայթեց, որ նա վեր ցատկեց։ Նորա հրացանը նշանից շեղվեց և իր թնդյունով անմեղ Աղավնուն քնից զարթնեցրեց և տեղից թռցրեց։

Այսպես մեր Մեղուն իր բարերարին վերահաս մահից փրկեց, ազատեց։

1882

ԾՈՒՅԼ ՏՂԱ

Թորոսի որդին մի ծույլ տղա էր, ոչ գիր էր սովորում և ոչ մի արհեստ։

— Ինչ արհեստ սովրիմ,— փնթփնթում էր նա,— կլեկչությունը շատ լավ արհեստ է, բայց բորիկ ատքով ամանում կանգնել, տրաք պատռել. այդ այնքան հեշտ չէ։ Ավելի հեշտ է փուքի փչելը, բայց այդ իմ ձեռքում երկար չեն թողնիլ։ Վարպետ էլ դառնամ, ի՞նչ

եմ անելու. պետք է մատներով փոքր-ինչ բամբակով տաք-տաք պղնձին նաշադիր քսեմ, ձեռքերս այրե՞մ։ Չէ՛, այդ իմ բանը չէ։

— Դարբնի մոտ կերթամ, այնտեղ էլ փուքս կա, ձմեռն էլ տաք է. բայց մեծ ուժ պետք է այդ գործի համար։ Ահագին մուրճով երկաթը ծեծել, որ նա տափակի, ես այդ չեմ անի, ինչ կուզի լինի։

— Նալբանդը լավ է. մեխի ծայր սրել և պայտեր շտկել. այդ շատ դժվար չէ. բայց մեկ ամեհի ձիու ոտք բռնել, ծնկանը դնել, երկյուղալի է. ձիու աքացին իմ ընկերների ապտակից թունդ է։ Չէ, իմ կարծիքով այդ իմ բանը չէ։

— Դերձակությունը մաքուր արհեստ է, լավ միտս ընկավ։ Բայց ի՞նչ եմ ասում. ամբողջ օրերով ծալապատակ նստել, գլուխը քաշ գցած՝ կարել ու կարել, ոչ խաղալ կըլնի և ոչ վազվզել։ Չէ՛, այդ էլ բան չէ։

— Ինչո՞ւ չգնամ որմնադիր դառնամ, բարձր պատերի ծայրերին կանգնեմ, այնտեղից կանչեմ—«Քար ու կի՛ր տվե՛ք, ցեխ ուղարկեցե՛ք, աղյո՛ւս ձգեցե՛ք»։ Այսպես կգոռամ և կհրամայեմ, որ աշխարհք տեսնի, թե ես վարպետ եմ, գործս լավ գիտեմ։ Բայց վայ թե հանկարծ այդ բարձր տեղից ոտքս սլկըհի և թրմփալով ներքև գլորվեմ, հոգիս ավանդե՞մ։ Չէ, այդ հեշտ գործ չէ, և ոչ իմ բանն է։

— Երևի չկա մի այնպես արհեստ, որ ես հավանեմ, գնամ սովորեմ։ Թե դյուրգյար դառնամ, ոտքս կկտրեմ. կոշկակար դառնամ, ձեռքս կծակեմ. ոսկերիչ դառնամ, մատներս կայրեմ. թերբուտ դառնամ, ցեխ պիտի կոխ տամ. վարժարան գնամ, գիր պիտի սովրիմ։ Չէ, իմ կարծիքով ամենից լավն է, ամենից հեշտը ոչինչ չշինել, ոչինչ չսովրել։

1882

ԳԱՐՈՒՆ

Տարին չորս եղանակ ունի, բայց ամենից սիրունը, ամենից դուրեկանը գարունն է։

Ինչ որ մեռած ու թմրած է լինում ձմեռը, գարունը կենդանանում ու արթնանում է։

Սառած գետինը տաքանում է և սկսում է կանաչել։ Փետացած ծառերը բացվում, փթթում են։ Սար ու ձոր ծլում, ծաղկում է։

Երբ որ տեսնում ես գույն-գույն ծաղիկները արևի տակ փայլելիս, կարծում ես, թե փոքրիկ մանուկներ են ժպտում երեսիդ, ճխում, ճչում, խնդում, ծիծաղում։ Եվ երբ նորեկ երգեցիկ թռչուններն էլ ձայն-ձայնի տված ծլվլում են, կարծում ես, թե բոլոր արարածները ձեռք-ձեռքի տված, պար են գալիս, ցնծում, զվարճանում, գարնան գալը շնորհավորում։

Ով ասես՝ որ անհամբեր չի սպասում գարնան գալուն։ Թե՛ մարդ, թե՛ գազան, թե՛ անասուն և թե՛ թռչուն՝ ամենքն էլ գարնան գալուն են սպասում, ամենքն էլ ուզում են, որ գարունը շուտով գա և իրանց անուշ արև և քաղցր օրեր տա։

Ձմեռվա վերջին ամենի կերակուրը պակասում է.—ընտանի կենդանիներին խոտ ու հարդ է պետք—չկա։ Նրանք նիհարում են և մինչև անգամ սովամահ են լինում։ Թեպետ լեզու չունին, որ մեզ նման պարզ ասեն, բայց ամեն անգամ իրանց տիրոջը տեսնելիս՝ այնպես աղիողորմ ձայնով մայում, բառաչում են, որ տիրոջ սիրտը կտոր-կտոր է լինում։

Ի՞նչ անե խեղճ տերը։ Էլ մարագումը հարդ չի մնացել, էլ ամառվան դրած ահա[illegible] դեզը չկա։

Սրանից լավ վիճակի մեջ չեն լինում և վայրենի անասունները, գազաններն ու թռչունները, և ոչ էլ այն մարդիկը, որոնց ձմեռվա պաշարը հատած է լինում, էլ ոչ վառելու փայտ ու ածուխ են ունենում և ոչ ուտելու հաց։

Ահա ամենքի այս տեսակ հուսահատած ժամանակը գալիս է գարունը և իր հետ բերում նոր կյանք և ուրախություն։

Այնուհետև ձյունը հալվում է, կապված ճանապարհները բացվում են, գնալ-գալը՝ թե՛ ձիով և թե՛ սայլով, հեշտանում է։

Այնուհետև ով ինչ որ չի գտնում իր գյուղումը, գնում է ուրիշ գյուղից բերում։ Ով որ քաղաք տանելու և վաճառելու բան ունի, հիմա կարողանում է տանել։ Քաղաքումն էլ ածանանում է ապրուստի պաշարը։

Ահա թե ինչո՞ւ գարունը սիրելի է բոլոր արարածների համար, մանավանդ մանր ու մրսկան երեխանց համար։

Գարունը մտնում է մարտի իններին և շարունակվում է երեք ամիս։ Գարնան ամիսներն են—մարտ, ապրիլ և մայիս։

1884

ԱՄԱՌ

Տարվա եղանակներն այնպես են հաջորդում միմյանց, ինչպես մարդուս հասակը։

Գարունը երեխայի նմանություն ունի։ Գարունքին ամեն ինչ նոր է ծլում, բողբոջում։ Թռչնիկները դեռ ոչ ձու ունին, ոչ ձագ։ Նրանք աշխույժ և ուրախ մանուկների պես անդադար թրթռում, անդադար թռչկոտում են, և նրանցից շատերն իրանց կյանքի մեջ առաջին անգամն են բույն շինում։ Մյուս բոլորն էլ, ինչ որ տեսնում ենք գարունքին — խոտ, ծառ, ծաղիկ, ճանճ, բզեզ, ամենքն էլ երեխայի կերպարանք ու բնավորություն ունին։

Երեխան քիչ-քիչ աճում, զարգանում է։ Այդ աճման շարժվիլը մենք չենք տեսնում, բայց մեկ էլ տեսնում ենք մեծացած, հասակն առած։ Գարունքն էլ այսպես մեծանալով, օրեցօր նորանոր գեղեցկություններ ցույց տալով, մտնում է իր երիտասարդության հասակը, այսինքն դառնում է ամառն. հետո էլ ավելի չափահաս է դառնում, այսինքն աշունքանում է և վերջապես ծերանում է և սպիտակում, ինչպես ձմեռը։

Ճշմարիտ որ՝ գարնանային օրերը քանի գնում, երկարանում են և ավելի տաքանում։ Ծաղկազարդ ծառերը փոխում են իրանց ծաղկյա բարուրն ու պատմուճանը և զարդարվում ավելի խիտ ու պինդ հագուստով, այսինքն լայն-լայն տերևներով և նրանց մեջ թաքցնում իրանց գույն-գույն և անուշահոտ պտուղները։ Քանի որ անմեղ երեխա էին, իրանց կիսամերկությունից չէին ամաչում, ինչպես Ադամը, որ երբ արգելված պտուղը կերավ, իր լուսեղեն և ծաղկյա պատմուճանից էլ զրկվեց, և ծածկվեց լայն-լայն տերևներով, որովհետև երեխայական անմեղությունը կորցրել էր և սկսել էր ամաչել իր մերկությունից։

Երեխաների բերանների ջուրը գնում է, երբ որ տեսնում են նորափթիթ պտուղները—շլորն ու ծիրանը, տանձն ու խնձորը, հաղարջն ու կեռասը, դեղձն ու դամոնը։

Էլ այնքան համբերություն չունին, որ սպասեն մինչև նրանց լավ հասունանալը։

Խակ-խակ ուտում են, ատամներն առցնում, այնպես որ էլ հաց ուտել չեն կարողանում՝ թեև փորները վեց-վեց է անում։

Եթե մանուկներն իմանային, թե որքան վնասակար են խակ պտուղները թե՛ ատամներին և թե՛ իրանց առողջությանը, երբեք

չէին ուտիլ։ Ճաշակը նրանց իմաց է տալիս, ասում է՝ «խակ է, թթու է, դեռ ուտելու ժամանակ չէ, մի՛ ուտեք», ատամներն ավելի են կրճտում, բարկանում, թե՝ «էլ չենք կարողանում կրծել, մեզ մի տանջեք». բայց կամակոր ու անմիտ մանուկներն ուտում են և պատիժն էլ կրում, թեպետ իրանք չեն հասկանում, թե այն ցավը, այն ջերմ ու տենդը ինչի՛ց հանդիպեց իրանց։

Վերջապես խակ պտուղները միմյանց հետևից հասունանում են։ Կեռասը դեղնում կարմրում է և թուշերը պլպլացնում։ Սև ու սպիտակ թութը ծածկում է ծառի հատակը։ Կանաչ վարունգի հոտով ամբողջ բուրաստանը բուրում է։ Նրա հետևից հասնում են և սեխն ու ձմերուկը, անուշահոտ ու նախշուն շամամը։

Ամառը երկրագործի աշխատության ամենաթունդ ժամանակն է։ Երկրի բերքերն այնպես շուտ-շուտ են հասնում իրար հետևից, որ եթե տան մեջ աշխատող ձեռքերը շատ չլինին, մենակ մարդը կշշկլվի և ոչ մի բան էլ չի կարող անել։

Դեռ գարունքավարը, ցել անելը չվերջացրած, խոտը գալիս հասնում է, որ եթե շուտ չհարվի, կվաղանի, այսինքն հարելու ժամանակը կանցնի, կփչանա։ Ձեռք է զարկում խոտին, մյուս կողմից գարին է հասնում. եթե թութն ունի, արաղ պիտի քաշի, նա է թափվում ծառերիցը. եթե այգի ու բանջարանոց ունի, նրանք էլ այնտեղ են չորանում, ջրվել են ուզում։ Մինչ այս, մինչ այն, աշնանացանն է հասնում. նրան հետևում է գարնանացանը։

Եթե դաշտային տեղ է գյուղը, պետք է երեխեքը, տավարը սարը տանել. ամառվան շոգերին նրանց դաշտումը կարելի չէ պահել, բայց սարումն էլ նրանց պահող պահպանող է պետք։

Հունձն ընկնում է, մշակ չի ճարվում։ Մենակ մարդն ի՞նչ կարող է անել, ո՞ր մեկին հասնե։ Մինչև մեկ արտը կհնձի, մյուսը կկծղի։

Այսպես երկրագործի ամառնային աշխատությունն այնքան շատ է և բազմակողմանի, որ մի հոգին ամեն բանի հասնել չի կարող։

Այս հանգամանքը մեկ լավ պատճառ է, որ ամենքն էլ ընկերովի աշխատեն, եղբայրները միմյանցից շուտ չբաժանվին, մինչև որ հասած որդիք չունենան. դրացին դրացու հետ ամեն բանում հարաքաշ լինի, այսինքն աշխատակից, ընկերակից։ Եվ առաջ հենց այսպես են եղել ամենքը։ Բայց հիմա այդ ընկերության, եղբայրության ոգին վերացել է մեր գյուղերից։

Ամառնային աշխատության շատ մեծ օգնություն են անում և մանր երեխեքը, թե՛ տղերք և թե՛ աղջկերք։ Նրանք եղները պահում են, խոտ ու խուրձ բարձելիս սայլի առջև կանգնում են, հոտաղություն են անում, բանվորներին հաց ու ջուր են տանում։ Ամեն բանում թեթևաշարժ սուրհանդակի պաշտոն են կատարում, արագ-արագ ոստոստելով և ուրախ-ուրախ թռչկոտելով։ Բայց լինում են շատ ծույլ, խլականջ, դանդաղ և անպետք երեխեք էլ, որոնք ոչ մի բանի պետք չեն գալիս։ Ափսո՜ս այդպիսիների կերած հացը։

Տղան ամեն բանում պետք է քաջ և ճարպիկ լինի, աշխատելուց չպիտի փախչի, բանից չպիտի վախենա, ամեն բան, ինչ որ ձեռքիցը կգա, պիտի անի։ Կարդալու ժամանակը պետք է կարդալ, խաղալու ժամանակը՝ խաղալ, բայց բան ու գործի ժամանակն էլ պետք է բանել, գործել։ Դեռ լսված չէ, որ աշխատելուց մարդ վնասված լինի, բայց չաշխատելու և ծուլանալու վնասը ամեն օր տեսնում ենք։

Ամառը մի գեղեցիկ պատկեր է ժրաջանության և աշխատասիրության։ Ձմեռն ուսումնարանումն այնքան բան չի կարող սովորել երեխան, ինչքան ամառը դաշտումը, թե աշխատելով և թե՛ իր շորս կողմի երևույթների վրա նայելով։

Ամեն մի ծառ, ամեն մի թուփ, ամեն մի զեռուն շարժման մեջ է, գործի, աշխատանքի վրա է։ Շերամը կամաց-կամաց իր մետաքսն է գործում սուս ու փուս, մեղուն իր բջիջներն է մեղրով լցնում, մրջիմն իր ձմեռվա պաշարն է տուն կրում, թռչուններն իրանց ձագուկներն են շահացնում։

Հիրավի, ինչքա՜ն տեսնելու բաներ կան։ Շերամի կերպարանափոխությունը, թրթուրների թևավորվիլը, շերեփուկների գորտնալը, մեղուների ձագ տալը, թռչունների բույներն ու ձվաները, տեսակ-տեսակ բզեզները, զեռուններ, սողուններ, ձկնիկներ, խոտեր, ծառեր, ծաղիկներ, բոլորն էլ իրենց կյանքի կայտառ ու երիտասարդ ժամանակ...

Իսկ ինձ (որովհետև ես հիմա երեխա չեմ, որ թիթեռնիկների հետևից վազվզեմ, որ տեսնեմ՝ որը որից ավելի նախշուն է)— ինձ ամեն բանից շատ դուր է գալիս այն, որ այդ ընդհանուր աշխատության, այդ ընդհանուր գործունեության մեջ տեսնում եմ մի շատ գեղեցիկ ներդաշնակություն— միություն։

Ամեն բանի մեջ մի խմբակցություն, մի կապ, մի միություն

կա։ Ի՞նչ բան է, օրինակ՝ արտը, եթե ոչ մի խումբ անհամար ցողունների, որոնք իրար վրա հենվելով, իրար վրա շվաք անելով, միասին աճում, միասին հասնում և մեկին վաթսուն և հարյուր պտուղ են տալիս։

Ի՞նչ գեղեցկություն կունենար մի ձմերուկ, եթե նա մեն-մենակ ընկած լիներ մի դաշտի մեջ։ Բայց ուրիշ գեղեցկություն ունի բոստանը, ուր հարյուրավոր ձմերուկներ կողք-կողքի պառկած՝ իրար ականջի քչփչում են, թե այն օրը պարտիզպանը իրանցից քանի հատ պոկեց։ Կարծես անհամբեր սպասում լինին, թե երբ պիտի իրանք էլ կտրվին, բացվին, ու մարդկանց երեսին ծիծաղելով՝ նրանց ծարավը զովացնեն։

Ամառնային ամիսներն են—հունիս, հուլիս և օգոստոս։

1884

ԱՇՈՒՆՔ

Ամառն իր բոլոր պտուղները հասցնելով՝ պահ է տալիս աշունքին, որ ինքը հանգստանա և մյուս տարին էլ նույնքան պտուղ տա։

Շարունակ երկար աշխատությունը երկար էլ հանգստություն է պահանջում։

Գալիս է աշունքը՝ ոչ այնպես ուրախ, ինչպես գարունքը կամ ամառը, և ոչ այնպես տխուր, ինչպես ձմեռը։ Նա լուրջ, խոհեմ կերպով, փորձառու և խելոք մարդու նման հաշիվ է պահանջում իր կրակոտ երիտասարդ եղբորից՝ ամառնի՛ց, ներում է նրա թերությունները, և ինչ որ նա պակաս է լինում թողած, ինքն է լրացնում, որ երբ Ձմեռ պապը գա, նրանից հանդիմանություն չլսի, թե այս չկա, այն պակաս է, այսինչ կամ այնինչ գործը դեռ չի լրացրած։

Աշունքը երբ որ տեսնում է, թե պակաս բաներ դեռ կան, փչում է իր փողը և ամենքին նոր գործի է հրավիրում։ Ինքն էլ պարապ չի մնում։ Իր փողի ձայնի հետ նա փչում է ցրտավուն քամին։ Այդ քամին որ դիպչում է ծառերին, նրանց վրա մնացած պտուղները բոլորը թափվում են, հատակներին փռվում, դիզվում։ Տերևները

այդ քամուց դեղնում, սփրթնում են երկյուղից և դողդողալով թափվում, գետնին կուչ գալիս։

Թռչունները շուտով իրանց շահացրած ձագերը ժողովում են, իրար իմաց են տալիս և մեծ-մեծ կարավաններով—խումբ-խումբ, երամ-երամ, շարան-շարան, բույլ-բույլ, կռկռալով, ծվծվալով, կչկչալով թռչում հեռանում դեպի ավելի տաք երկրներ...

Այգեպանը շտապում է իր խաղողը քաղել, գինի քամել, տեղավորել, պահուն մրգերից կախաններ շինել, դեղապետի համար պահել։

Պարտիզպանն էլ իր պարտեզի ու բոստանի մնացած բերքերն է ժողովում, ինչպես—կարտոֆիլը, կաղամբը, սոխը, բողկը, տակը (ճակնդեղ), գազարը (ստեպղին) և մյուս արմտիքը։

Երկրագործն էլ իր ցելերն է կեռավար անում, հաշար աղոթ-քով ու մաղթանքով սերմը հողին պահ տալիս, ցանում, ցաքանում կամ սերմավար անում։ Այնուհետև սկսում է փայտ կրել, եթե փայտ է վառում և ոչ աթար, իր խոտի ու հարդի քանակությանն է նայում, եթե քիչ է, վաղօրոք մի կերպ պատրաստություն տեսնե կամ թե չէ՝ իր տավարն ուրիշին պահ տա։

Գազաններն էլ իրանց բների, որջերի պատրաստությունն են տեսնում։ Որը հին որջն է նորոգում, որը նորն է փորում կամ մի հարմար ծառի խոռոչ ու քարայր որոնում։

Մի կողմից աշունքը շարունակում է իր փողը փչել՝ օրեցօր ավելի սաստիկ, ավելի ցուրտ։ Դաշտերում եղյամն է դնում, սարերի գլխին՝ ձյուն, որ մարդիկ ձմեռվան պատկերը տեսնեն և ավելի շտապեն։ Առաջ հորդ անձրևներ են գալիս, գետերը վարարում, հետո գալիս են մանրամաղ անձրևներ, որոնք ծծվում են ամեն բանի մեջ և մինչև ներքին խավերն են անցնում։ Այդ տեսակ անձրևներից թեպետ կաթում են հողածածկ տները, բայց դրանք շատ օգտակար են նոր ցանած սերմերին։

Աշնանային օրերը քանի գնում, կարճանում և ցրտում են—գարնանային օրերի հակառակ, որոնք քանի գնում, երկարանում և տաքանում են—մինչև հասնում է ձմեռը և սար ու ձոր ձյունով ծածկում։

Աշնանային ամիսներն են—սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր։

ԱՅԳԵՊԱՆ

Սուրբ Խաչի պասից մեկ կամ երկու շաբաթ էր անցել։ Լավ չէ միտս, որովհետև ես այդ ժամանակ դեռ երեխա էի։

Մեկ երեկո հայրս եկավ այգուցը՝ խաղողով ու դեղձով լիքը մի քաղլակ ձեռին, տվավ մորս, թե՝ տուր երեխաներին, հետո ավելացրեց.

— Խաղողը ձեռքից գնում է, չորս կողմի այգիքը քաղել են, միայն մերն է մնացել մեջտեղ լիքը։ Ով ասես՝ ներս է մտնում։ Այգեպանն էլ դողցնում է, խեղճը չի կարողանում գողերի հախիցը դալ։ Անցյալ գիշերը չոբանները մտել են, ինչքան պոկել, տարել են, տաւն այնքան էլ կոտրտել, փչացրել են։ Կարմիր խնձորին որ տեսնես, կասես արջեր են վրան կռիվս տվել, այնպես են կոտրտել բոլոր ճղները։ Իծապտկի կարգումը էլ մի ճութ խաղող չես գտնիլ, այնպես են սրբել, տարել։

— Ա՜յ կոտրվին դրանք, կուրանա՜ դրանց աչքերը,— բացականչեց մայրս,— տեսնում ես դու՝ այդ անիծածներն ի՜նչ են անո՜ւմ...

— Հիմա ինչ եղել է, եղել է,— շարունակեց հայրս։— Ես ասում էի՝ մի քիչ էլ մնա, ավելի լավ հասնի, որ գինին թթու չինի, բայց որ չեն թողնում, ի՜նչ արած... Գողին ի՜նչ դատաստան. մեկին բռնել ես տալիս, տեղը քսանն է լույս ընկնում. թե որ առաջ խաղողդ էին գողացել, հետո գալիս են տավարդ տանում, գոմեշներդ քշում։ Դրանց պատիժն ասված պիտի տա, մարդն ի՞նչ կարող է։ Ինչ որ է, դու էգուց հաց թխիր, մեր բարեկամներին իմաց տուր, մյուս օրն սկսենք քաղելը, թե չէ՝ այս տարի ոչ թե ծախելու, այլ մեր խմելու գինի էլ չենք ունենալ։

— Դե որ այդպես է,— ասաց մայրս,— էգուց մարդ ուղարկիր, երեխեքս գան։ Կուրա՜նամ ես... առանց նրանց ի՞նչպես քաղենք բաղը։

«Երեխեք» ասելով՝ մայրս ակնարկում էր քույրերիս, որոնք մարդու էին տված զանազան գյուղերում, բայց իրարից այնքան մոտիկ էին, որ մեկ օրումը կարելի էր ամենքին էլ իմաց տալ։ Միայն մեկը քաղաքումն էր, նրան էլ վաղուց էին ապսպրել, որ գա։

Երբ որ քույրերս եկան, հետո մայրս ինձ ուղարկեց իմ պապոնց տուն, որ նրանց էլ իմաց տամ։ Նրանց տանն էլ այնքան

հարսներ ու երեխեք կային, որ մի սուրու ոչխարից շատ։ Այնտեղից ուղարկեցին մորաքրոջս մոտ. հետո մեր սանամայրերի, որ չգիտեմ տասն էին—մեղա քեզ ասված—թե քսանը։ Հետո գնացի մեր կնքավորենց տուն, այնտեղից էլ հանդիպեցի Գյուլնազ տատին ու ասացի. «Տատի, մայրս ասեց՝ էգուց դու էլ, քո հարսներն ու թոռներն էլ համեցեք մեր բաղը, էգուց սկսում ենք քաղելը»։ Նա էլ պատասխանեց.

— Շատ լավ, չարդ տանեմ. դե արի քեզ մի սեր ուտացնեմ, շատ ժամանակ է մեր տուն չես եկել։ Ասացի՝ շնորհակալ եմ, պիտի գնամ ուրիշներին էլ իմաց տամ։ Բայց սուտ ասացի, գիտե՞ք. թեպետ սուտ ասելը լավ բան չէ, լավ էլ ախորժակ ունեի սերի. բայց ի՞նչ կանես, սաստիկ ամաչելուցս սուտ ասացի։

Հիմա պիտի ասեք, այդքան մարդկանցը որ կանչեցիր, հապա այդքանին ինչպե՞ս պիտի կերակրեք։ Մի՛ վախենաք, այդ շատ հեշտ է։ Դրանք իրենց կերակուրներն էլ իրանց հետն են բերում, դեռ մի բան էլ ավելի։

Մենք արդեն երկու մեծ ղոչ ունեինք, գիտությամբ այգեքաղի համար գիրացրած, մի քանի էլ թոխլի ու այծ։ Մայրս չորս թոնիր հաց թխեց, բավականաչափ էլ գաթա, նազուք։ Պանիր էլ շատ ունեինք, խաղողն ու մյուս մրգերն էլ այգին լիքը. էլ ուրիշ ի՞նչ էր հարկավոր։ Իսկ մեր հյուրերն էլ բերին ամեն մի տանից մի քանի եփած հավ, բոլ գաթա, բաղարջ, կաթնահունց։ Ամենից շատ մեր սանամայրերն էին բերել։

Հիմա էլ պիտի ասեք. այդ ի՞նչ այգեքաղ է. դա մի ուխտագընացության, սար գնալու, կամ հենց ուղիղն ասած, հարսանիքի պես բան է։

— Այո, հենց այդպես է. դեռ դրանցից մի բան էլ ավելի համարեցեք։

Այգեքաղի օրը բոլոր երեխեքն ու կնանիքը, բոլոր հարսներն ու աղջկերքը զուգվել-զարդարվել էին իրանց տոն օրվա ամենանոր ու գեղեցիկ հագուստներովն ու զարդարանքներովը։ Տղամարդիկն էին մնացել իրանց ամենօրյա հագուստումը, միայն գդակներն էին նոր դրել։ Տղամարդիկ չէին փոխել իրանց հագուստը, որովհետև նրանք պիտի կթոց շալակեին, շալակ տային, խաղողը կխճորեին,— կոխ տային, տակառները սարքեին։ Էլ վաղուցվա պես հնձանում չէին կոխ տալիս, այլ նոր, եվրոպական ձևով ամեն ուարքն ու կարգն ունեին, այսինքն մի քանի ահագին կիսատակառներ, նրանց վրա դրած՝ հատակը ծակծակոտ մեծ չան և էլի ուրիշ մի քանի տեսակ չաներ։ Խաղողն ածում են ծակծակոտ չանի մեջ, նրանում մեկը կանգնած, ոտները հանած, փոխկերքը վեր կապած, կոխոտում է և թափում կիսատակառը, որի մեջ գինին մնում է մի քանի օր, մինչև եփ է գալիս, ճաճան (չեչը) երեսին կանգնում, գինին պարզվում. այնուհետև կիսատակառի վարի ծորակը բաց են անում, գինին թափում են, ածում տակառների մեջ ու հետո տանում դնում մառանումը։ Բայց այս մանրամասնությունները հիմա թողնենք։

Առավոտը վաղ-վաղ հասանք այգին։ Ոչխարները մորթոտեցին, կրակ արին, պղնձները վրան դրին, շամփուրները շարեցին, գցեցին, որ նախաճաշիկի համար խորոված անեն։ Հետո մի-մի թաս արաղ խմեցին, մի-մի թիքա խորոված, մի-մի պատառ կաթնահունց կերան և սկսեցին իրանց գործը։

Մեծերը՝ մի-մի քաղելակ վազան տակը դրած, սուր դանակները ձեռքերին՝ կտրում էին խաղողի հասած ճութերը և գցում մեջը. փոքրերը այդ քաղլակները տանում էին մեծ կթոցներն ածում, իսկ երիտասարդները կթոցները շալակում էին տանում ածում կիսատակառի վրայի չանը։

Ամբողջ այգին իր կյանքից զրկվելիս մի նոր կյանք էր ստացել։ Ձայն էր, որ լսվում էր ամեն մի թուփի տակից, ամեն մի ծառի վրայից։ Մեկը կանչում էր.— Կթոցը լցվե՞լ է, եկեք տարե՞ք. մյուսը բղավում էր.— քաղլակները լցվել ե՞ն, շուտ արեք, կթոցը բերե՞ք։

Մանր երեխեքը փոքրիկ թռչունների պես անդադար դես ու դեն էին ընկնում, ամեն ճութից մի հատիկ պոկում, համը տեսնում, և որովհետև էլ ոչ ախորժակ ունեին և ոչ փորներումը տեղ, մյուս մրգեղենների ծառերի վրա էին մագլցում, կերածը մարսում, նրանց համն էլ տեսնում։ Մեկը բարձրանում էր խնձորենու վրա, մյուսը՝ սերկևիլի, երրորդը՝ տանձի. ավելի ճարպիկները բարձրանում էին ընկուզենու վրա և կապկի պես ճղնեճյուղ ոստոստալով՝ ուզում էին միմյանց բռնել։

Բարեսիրտ պտուղները ամենքն էլ ժպտում էին տղայոց երեսին, ամենքն էլ ձեռով անում, կանչում երեխաներին, երբեմն էլ, կարծես գիտությամբ, տերևների տակին թաք էին կենում, մեկ էլ հանկարծ երեսները բաց անում, երեխաներին «ծյուկ» անում։

Ճաշի ժամանակը հասավ։ Ամենքն էլ հավաքվեցին մեծ ըն-

կուզենու տակը. հացը, խաշլամեն փռեցին կանաչ խոտի վրա և երկարումեկ բոլորվեցին նրա շուրջը։ Բայց ո՞վ ուներ ախորժակ հաց ուտելու։ Ծիծաղ, խնդություն, զվարթություն, հանաքներ անել — այս էր նրանց ճաշը։

Ճաշից հետո էլի մի քիչ քաղեցին և երեկոյին բոլոր քաղվորները մի-մի քաղլակ խաղողով լցրին, իրանց հետ տարան։ Այսպես շարունակվեց երեք-չորս օր, և ամեն օր մի նոր ուրախություն, մի նոր զվարճություն էինք սարքում...

1884

ԶՄԵՌ

Զմեռը գալիս է թե չէ, նրա առաջին ամեն ինչ դողդողում, սարսռում է։ Գթառատ ձյունը միայն մերկացած գետնին օգնության է հասնում, իր հաստ վերմակով նրան ծածկում և այսպես պաշտպանում նրան ձմեռվա դառնաշունչ ցրտերից։

Կրակը դառնում է մի շատ սիրելի առարկա և ամեն բանից ավելի հարկավոր։ Ով որ դրսից տուն է մտնում, ամենից առաջ կրակին է բարևում։

Չքավորների ապրուստը տարվա ոչ մի եղանակին այնքան դժվար չի լինում, ինչպես ձմեռը։ Մեկի վառելիքն է հատնում, մյուսի ուտելիքը, մեկը տաք հագնելիք չունի, մյուսը ապահով բնակարան։ Քուրսին ու մանղալը թեպետ տաքացնում են դրանց, բայց շատ անգամ էլ իրանց ածխահոտովը գլխները շարունակ ցավացնում։ Այո՛, ածուխի կապույտ ծխից պետք է շատ և շատ զգույշ կենալ։ Քանի՛ քանի մարդիկ են մեռել նրանից, քանի անգամ ամբողջ ընտանիքով, մի գիշերվա մեջ, քնած ժամանակ թմրել, կոտորվել են։ Ածուխի կապույտ ծուխը մարդասպան է, երբ ամեն կողմից փակված տեղ է գտնվում։

Ձմեռվա եղանակին պետք է ունևորները հիշեն չունևորներին և նրանց օգնեն ինչով որ կարող են։

Պինդ ձմեռը վայրենի անասուններին ավելի է վնաս տալիս, քան թե մարդկանցը. գյուղացիներն ավելի են նեղություն քաշում,

քան թե քաղաքացիք. բայց եթե գյուղացիք մի փոքր կրթված ու աչքաբաց լինին, ձմեռը նրանց ոչ մի վնաս չի տալ և նույնքան օգտակար կլինի, ինչքան մյուս եղանակները։

Թեպետ ձմեռը համարվում է երեք ամիս, բայց լեռնային տեղերում մինչև հինգ ամիս պինդ ձմեռն է լինում։

Ձմեռվա ամիսներն են — դեկտեմբեր, հունվար և փետրվար։

1884

ԹՈՒԹԱԿՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Մի թութակ տան մեջ այնքան ճղղաց, շվշվաց, որ տանուտերը դուրս անել տվավ նրան։

Թութակի ինքնասիրությանը դիպավ այս բանը, և նա սկսեց գանգատվել սոխակին, որ եկել էր նրան տեսնելու։

— Աչքիս լույս,— ասաց թութակը սոխակին,— ես լսել եմ, որ դու լավ վարպետ ես երաժշտության մեջ. խնդրեմ լսես իմ երգերը և ասես ինձ, թե ինչ պակասություն կա նրանց մեջ, որ իմ տիրոջը չեն դուր գալիս։ Նա շատ սիրով լսում է արտույտին ու ծիծեռնակին, որոնց երգածը մկան ծվծվոցի է նման, բայց հենց որ ես եմ երգում և իմ բոլոր ճարտարությունը ցույց տալիս, իսկույն հրամայում է, որ ինձ հեռացնեն։

— Շատ լավ,— ասաց սոխակը,— երգիր, տեսնեմ ինչպե՛ս ես երգում։ Ես ուրախությամբ կլսեմ քեզ պես սիրուն թռչունի երգը։

Թութակն սկսեց իր բոլոր ճարտասանությունը թափել.— հավի պես կչկչաց, շան պես հաչեց, կատվի պես մլավեց, մի խոսքով՝ կրկնեց իր բերան արած բոլոր բառերն ու երգերը։

— Այժմ, սիրելիս,— ասաց նա սոխակին,— խնդրեմ ասես, դու լսած կա՞ս մի այսպիսի բան երբևիցե։

— Սիրուն թութակ,— պատասխանեց սոխակը.— դու ինձ կնեղե՞ս, եթե ես քեզ մի համեստ նկատողություն անեմ։ Դու երգում ես ուրիշների նման, ուրիշների ձայնով, ուրիշի երգեր ես երգում։ Եթե դու ունենաս քո սեփական երգը, էլ քեզ տանից դուրս չեն անիլ։

1884

ԵՐԿՈՒ ԱՅԾ

Երկու կամակոր այծ դեմ առ դեմ եկան մի նեղ գերանի վրա, ուր կամուրջ էր ձգված մի գետակի վրա։

Երկուսը միանգամից չէին կարող անցնել այդ նեղ կամուրջով. պետք է նրանցից մեկը ետ կանգներ և մյուսին ճանապարհ տար։

— Դու ետ գնա, որ ես անց կենամ,— ասաց մեկը։

— Ինչո՞ւ դու ետ չես քաշվում, քան թե ինձ ես առաջարկում,— պատասխանեց մյուսը։

— Քեզ ասում եմ, ետ քաշվիր, առաջ ես եմ բարձրացել կամրջի վրա։

— Ներողություն կանես։ Գիտե՞ս ում հետ ես խոսում, որ դեռ բարկանում էլ ես։

Այծերը ճակատ-ճակատի զարկեցին, իրար գլուխ պատռեցին, և վերջը երկուսն էլ կամուրջից սայթաքեցին, ջուրը թափվեցին։

1884

ՄԵՐ ԴՈՒՐՍՈՒՆԸ

(Մանկական հիշողությունից)

1

Մենք գոմեշներ շատ ունեինք՝ մինը քան զմյուսը գեղեցիկ և վայելչակազմ, բայց ամենին գերազանցում էր Դուրսունը՝ ոչ միայն յուր գեղեցկությունով, այլև յուր ուժովը, յուր խելքովն ու ճարպիկությունովը։

Բնավորության կողմանե մարդկանց պես անասուններն էլ են տարբերվում միմյանցից։ Նրանցում էլ մեկն ավելի աշխույժ է լինում, մյուսը դանդաղ, մեկը սրտոտ, մյուսը վախկոտ, մեկը բթամիտ, մյուսը սրամիտ։ Մեր Դուրսունը գոմեշների բոլոր լավ հատկություններն ուներ։

Դուրսունը գեղեցիկ էր իբրև գոմեշ, և շատ գեղեցիկ։ Նրա հայացքի մեջ ամեն ինչ արտահայտվում էր, երբեմն ուրախություն և հաճույք, երբեմն զարմացք և տխրություն, երբեմն զայրույթ և բարկություն, երբեմն խելք և ուշիմություն։ Երբ որ նա կանգնում էր իբրև մի առյուծ, պոչը շպրտում գցում մեջքի վերա, վիզը թեքում և նայում երեսիս, ես մնում էի հիացած, թեև անգիտակցաբար։

Նա ամեն բան հասկանում էր, ամեն ասած՝ լավ ըմբռնում էր. կանչում էիր՝ պատասխան էր տալիս. ափսոս միայն, որ յուր միտքն ու զգացմունքը հայտնելու համար միայն չորս ու հինգ բառաձայն ուներ, այն էլ այնպես դժվար արտասանելի, որ մեր տառերով չեն գրվում։

— Դուրսուն, հասկանո՞ւմ ես, ինչ եմ ասում,— հարցնում էի շատ անգամ։

— Վույի՜,— պատասխանում էր Դուրսունս և պոչկում։ Ինչքա՜ն քաղցր էր նրա պոչկալը։

— Դուրսուն, արի՛ այստեղ։

Դուրսունը հասկանում էր միտքս։ Գալիս էր մոտս, ցածրացնում էր գլուխը, ես երկու ոտքով կանգնում էի վերան, և նա բարձրացնում էր դնում մեջքին։

Բայց ինչո՞ւ Դուրսուն էր անունը, գուցե կհարցնեք, որ մի գեղեցկահնչյուն անուն չէ և ոչ իսկ հայերեն։ Ես այդ բառը կբացատրեմ ձեզ, եթե չեք ձանձրանալ։

Մեզանում վաղուց սովորություն է դառել կենդանիներին թուրքերեն անուն դնելը, շատ սակավ դնում են և հայերեն անուններ։ Բայց թե՛ թուրքերենը և թե՛ հայերենը ըստ մեծի մասին կենդանու արտաքին հատկություններից են վերցնում։ Աննշան սև գոմեշին ասում են Ղարա (սևուկ), եթե ճակատը դաշայ է, սպիտակ նշան ունի, ասում են Թափալ (դաշդա, նշանավոր), եթե կրծքին կամ վզին շեկ կամար ունի՝ Հեքյալ և այլն։ Գոմշակովերին ջոկ անուն են տալիս ու այն ավելի քնքուշ, ինչպես Մարջան (բուստ), Թելլի (հունավոր), Շեկիկ, Թուխծամ և այլն։ Եզներին ու կովերին էլ ուրիշ-ուրիշ անուններ են տալիս։ Այս անունների ընդհանուր կանոնից դուրս է Դուրսուն անունը, թեև բացառություն չէ։ Դուրսունը թուրքերենի մեջ նույնն է, ինչ որ մեզանում մնացական բառը։ Մնացական են անվանում այն երեխաներին, որոնք իրենց ծնողաց

միակն են լինում, որոնցից առաջ ծնվածները ապրած չեն լինում։ Այս տեսակ պատճառից է հառաջ եկել և մեր Դուրսուն-մնացականի անունը։

2

Դ ու ր ս ու ն ը ի բ ր և բ ե ռ ն ա կ ի ր։ Ամեն անգամ սար գընալիս և այնտեղից դառնալիս իմ ձին Դուրսունն էր։ Մեծ թաղիքը (ալաչուխի քեչան) ծալում գցում էինք վերան, երկու ջվալ էլ ամանշամանով լցնում, բարձում, ես էլ մեջին նստում էի և ճանապարհ էինք ընկնում դեպի սար։ Նա ինձանից լավ էր իմանում ճանապարհը և լավ էլ հասկանում էր, թե ուր են ուղարկում։ Շատ գոմեշներ առուների ու ցեխոտ լճակների մոտով անցնելիս, արևի շոգից և ճանճ-բոռից նեղանալով՝ ընկնում էին գյոլերի մեջ և ցեխի մեջ թավալվելով՝ բեռներն ապականում էին և մեջի ամանները կոտրատում։ Դուրսունս նրանց օրինակին չէր հետևում։ Նայում էր նրանց և գլուխը շարժում, որով պախարակում էր նրանց արարմունքը։ Անտառ մտած ժամանակն էլ՝ շատ գոմեշներ ծառերին էին քսվում, ցածրացած ճղների տակովն էին անցնում, որ իրենց բեռներից ազատվին, բայց Դուրսունը այդպես բան չէր անում, թեև խորամանկության գալով՝ նա կարող էր ամենին դաս տալ։ Երևի նրանք մի ոխ ունեին իրենց տերերի դեմ, բայց մեր Դուրսունը այդպիսի պատճառ չուներ, քանի որ նա մեր ամենիս սիրելին էր և ամենքիցս փայփայված։ Հայրս նրան ճանապարհ ձգելով՝ ասում էր. «Տես, Դուրսուն, քեզ եմ պահ տալիս այս բեռն էլ, այս երեխեն էլ, պիտի անվտանգ տեղ հասցնես»։— Վույ՛, պատասխանում էր Դուրսունը և իր խոստումը կատարում ամենայն հավատարմությունով։ Նա գլուխը քաշ գցած բոլոր ձիավորների առջևն էր գնում, այնքան արագաքայլ էր. թեև մասամբ էլ նրանից էր այդ, որ ինքը մեզանից շատ էր ցանկանում ժամ առաջ հով ու զով սարերն ընկնել ու ազատվել ճանճ ու մժեղից։

3

Դ ու ր ս ու ն ը ի բ ր և պ ա հ ա պ ա ն։ Գոմեշները առհասարակ գայլերից երկյուղ չունին։ Գայլերը գիտեն, որ գոմեշներն իրենց ժանիքի բանը չեն, և այդ պատճառով նրանց մոտենալ չեն հանդգնում։ Այդ բանը գիտեն և տավարները, այդ պատճառով գոմեշների մոտ իրենց միշտ ապահով են զգում։ Դուրսունը իբրև պահապան և պաշտպան տավարների՝ շատ գոմեշների գերազանցում էր յուր ասպետական քաջագործությունովը։ Գայլերի հարձակումներից նա ոչ միայն այն ժամանակն էր պաշտպանում տավարներին, երբ որ նրանց մոտն էր լինում, այլ հեռու եղած ժամանակն էլ, երբ որ ականջն էր հասնում հայտնի վտանգավոր գոռոցը, նա մի ակընթարթի մեջ կատաղի վագրի պես վազում էր և օգնություն հասցնում սարսափած նախիրին։ Նա շատ անգամ հարձակվում էր սովից հանդգնացած գայլերի վրա ու նրանց եղջերահար և ոտնահար անում։ Նրա օրինակին էին հետևում և մյուս գոմեշները, և այսպիսով հաղթությունը միշտ իրենց կողմն էր մնում։ Այսպիսով հաղթություններից հետո տավարները միշտ մոտենում էին Դուրսունին և հոտոտում նրանից, դրանով նրանք հայտնում էին իրենց շնորհակալությունը։

4

Դ ու ր ս ու ն ը ի բ ր և ը մ բ ի շ։ Գոմեշների մենամարտությունը մի զարհուրելի տեսարան է։ Մենամարտության ժամանակ մեր Դուրսունը յուր խելքը կորցնում էր՝ ոչ խելքով, ոչ ծեծով ուշքի չէր բերվում, այլ ավելի ևս տաքանում էր և դառնում մի կատաղի գազան։ Յուր ծանոթ գոմեշներից ոչ մեկը նրան չէր մենամարտում, փորձով գիտեին, թե ինչ գազանի հետ գործ ունին, բայց եթե հանդիպում էր նրան մի անծանոթ և յուր ուժի վերա մեծ համարում ունեցող ամբարտավան գոմեշ, նրան խրատում էր Դուրսունը և շատ անգամ ճանապարհ ձգում ուղղակի դեպի մյուս կյանքը։

Մեկ անգամ մի օտար անծանոթ գոմեշ հեռվից նկատելով Դուրսունին՝ իր քայլերն ուղղեց դեպի նա, բայց այնպիսի մի ձևով՝ որ կարծես գետինը պիտի դողդողա իր ոտների տակ։ Այդ ձևը շատ հարմար էր գալիս նրա հսկայամարմին հասակին։ Նրա եղջյուրները երկարումեկ ձգվել էին վզի ուղղությունով և հասել մինչև էրաթաթերը։ Ամբողջ ճակատը բաց և դուրս պրծած էր, ինչպես մի ահագին թումբ։ Սրա հակառակ Դուրսունի եղջյուրները դեպի առաջ էին թեքված և կեռացած, որ հարկավոր դեպքում վահանաձև գլխի երկու կողմից նիզակների պաշտոն կատարեն։

Անծանոթ գոմեշը քիչ-քիչ մոտենալով կանգ առավ, վիզն սկսեց ծաղրական ձևով ծռմռել, գլուխը թեքեց դեպի վեր և բարձրից մի արհամարհական հայացք ձգեց Դուրսունիս վրա։ Դուրսունը անշարժ նայում էր անծանոթի վերա, բայց այնպես, որ կարծես ասում լիներ յուր մեջ.— Այս հիմարն ի՞նչ է ուզում ինձանից։ Անծանոթը շարունակելով յուր ծամածռությունները, սկսեց մոտենալ։

— Վղղղ,— ասաց Դուրսունը, իբր՝ հասկացա քո միտքը, համեցեք, ես պատրաստ եմ, և յուր գլուխն սկսեց ավելի ևս բարձրացնել և խեթ-խեթ նայելով դիմավորեց անծանոթին կողմնակի ճանապարհով։ Գոմեշներն սկսեցին իրար նայելով մի ձվաձև պտույտ անել և շրջանը քիչ-քիչ փոքրացնելով հանդիպեցին իրար և գլուխ-գլխի զարկեցին։

Սովորաբար մի բոպեի մեջ գոմեշներն իրար հասկանում են։ Եթե կռվողներից մինը համեմատաբար թույլ է, նա առանց կատաղեցնելու յուր հակառակորդին՝ իսկույն հեռանում է, իսկ եթե ուժ ուժի է հանդիպում՝ կռիվը շարունակվում է և հետզհետե այնպես է թնդվում, որ էլ բաժանել չի լինում, և տևում է շարունակ մի քանի ժամ։ Դուրսունը, թեև զորավոր հակառակորդի էր հանդիպել, բայց փախուստ տվողներից չէր։ Նա իր կեռ-կեռ պոզերով հակառակորդի ականջատակերին ու քթին խփելով ու վիրավորելով ավելի շուտ զայրացրեց և կռիվը շատ շուտով թնդացրեց։ Հակառակորդը մի քանի անգամ չոքեց, բարձրացավ, տեսավ, որ բանը վատ է գնում, բայց ուշ էր, էլ ետ դառնալ չէր կարող, անճարացած մինչև վերջը պիտի տաներ Դուրսունի հարվածները։ Վախենում էր ետ քաշվիլ, որովհետև իր կատաղած թշնամին օգուտ քաղելով այդ հանգամանքից կարող էր նրան մահացու հարված հասցնել։ Գլուխը մի տեսակ վահան է, որով գոմեշը թե՛ կռվում և թե՛ պաշտպանում է իրեն. գլուխը հեռացնելուց հետո՝ նա զինաթափ է լինում ու մնում է անպաշտպան թշնամու հարձակմունքից։ Եթե փախչելու էլ լինի, պետք է այնպես շուտ և արագ կատարե այդ բանը, որ թշնամին չկարողանա հետևիցը հասնել։ Այս անգամ մեր օտարական գոմեշը լավ երազ չէր տեսել։ Նա երկար ընդդիմանալուց հետո փախչելու փորձ արավ, բայց կատաղած Դուրսունը հասավ նրա հետևից և իրեն հատուկ գոմեշային ուժով այնպես խփեց նրա փորին, որ խեղճը գլորվեց տակառի նման և ձորաբաշից ցած ընկնելով ջարդուփշուր եղավ։ Գոմեշի տերը, որ մի խեղճ գյուղացի էր, շատ ուշ վրա հասավ։ Բայց մեր գյուղացիք նորան չթողեցին

շինքը ծուռ, իսկույն իրենց մեջ փող ժողովեցին և նրա համար մի գոմեշ առան։ Այդ բանում իմ հայրս ավելի օգնեց, որովհետև մեղապարտը մեր Դուրսունն էր։

Դուրսունը լինելով քաջ ըմբիշ, միևնույն ժամանակ և ուժեղ լծկան էր։ Հարկավո՞ր էր արդյոք դժվար տեղից մի հսկայական գերան դուրս քաշել, ցեխում և զառիվայրի տակ մնացած ծանր սայլը վերև հանել, կարճ «առավել» ունեցող հողի ակուր մի լծով տեղ հասցնել. ահա այդպիսի նեղ և դժվար տեղերում Դուրսունի օգնությունը անհրաժեշտ էր։ Այդպիսի ծանր ուժ հարկավոր եղած տեղերում, Դուրսունի կողմի լծակաբաժինը միշտ կարճացնում էին, որ ասել է ծանրության երկու բաժինը միշտ նրան էին տալիս, որ ընկերը կարողանա հետը քաշել։ Նա ղալը չէր. դժվարությունից փախս տալու համար շատերի պես սամիք չէր կոտրատում։ Նրա ժամանակ գյուղումն էլ տուն չմնաց, որ Դուրսուն անունով մի շիշակ չունենար։ Ամենքն էլ անտեղի կերպով իրենց գոմշաձագերի անունը Դուրսուն էին դնում, որ նրա պես քաջ, նրա պես խելոք և ուժեղ լինի։

5

Դ ո ւ ր ս ո ւ ն ի վ ա ր ք ը։ Լավ վարք ու բարք ունենալը շատ օգտակար բան է։

Դողության սովոր շունը պահող չի ունենա, ղալը եզը շուտով սպանդանոց կուղարկվի։ Մեր Դուրսունը իր կյանքի վերջին օրերում, իր ավելի խելահաս ժամանակը մի տարօրինակ բնավորություն ստացավ։ Նա սկսեց գողություն անել և այն էլ ոչ թե գոմշավարի, այլ մարդավարի, հասկանալով, որ իր արածը մի արգելված բան է։ Շատ անգամ կեսգիշերին վեր էինք կենում և տեսնում, որ Դուրսունը տավարի մեջ չէ։ Երկյուղ չունենալով ո՛չ գայլից և ո՛չ գողից, էլ չէինք փնտրում, հուսալով, որ ցերեկով կերևա։ Բայց, ընդհակառակը, Դուրսունի կորուստը մինչև ցերեկ չէր տևում, նա դեռ լույսը չբացված՝ էլի գալիս էր իր տեղը նստում, որպես թե ոչ մի տեղ գնացած չլինի։ Սրա վերա հայրս ասաց, որ Դուրսունը գնում է գողության, բայց դա վտանգավոր բան է, կարող են սպանել, հարկավոր է գիշերները կապել։ Հորս նախազգուշությունը

երբեմն կատարում էինք և երբեմն մոռանում, բայց լավ ստուգեցինք, որ հիրավի մեր Դուրսունը, ամեն անգամ կեսգիշերին վեր է կենում սուսուփուս, կամաց-կամաց, առանց շփլթուն հանելու, բոլորովին գողավարի և գնում հարևան թուրքերի կորեկները մտնում, լավ արածում և գալիս էլ ետ իր տեղը նստում։

Մի գեղեցիկ լուսնյակ գիշեր ձի հեծա գնացի Դուրսունին գտա կորեկի մեջ։ Նա այնպես էր արածում, ինչպես մի վայրենի. ամեն մի փունջ հակոռելիս՝ գլուխը բարձրացնում, այս ու այն կողմն էր նայում, որ ապահով լինի, թե՝ իրեն տեսնող չկա։ Ինձ իսկույն նկատեց և այնպես դուրս ընկավ արտիցը, ինչպես մի եղջերու, և մինչև տուն մի շնչում վազեց։

Կորեկները հնձելուց հետո նա սովորություն արավ մտնել այգիքը։ Այգի մտնելիս՝ չափարը չէր ճմռռում, որ ձայն լսվի, այլ փնտրում էր ցածր տեղ և կապիկի ճարպկությունով ոստնում վրայից։ Սրա վերա շատ չանցավ, մեր Դուրսունը գողության պատիժը ստացավ, ըստ որում ասած է՝ «Տատն ամեն օր գաթա չի ուտիլ»։

Մի առավոտ՝ տավարը հանդ տանելու ժամանակ, Դուրսունիս գտա արյունի մեջ շաղախված։ Սկսեցի բղավել—վա՜յ, ա՜մի, վա՜յ, աղի... Ամիս ու աղիս եկան և զննելով տեսան, որ Դուսունի հետևի աջ օմբին այնպես են խփել կացնով, որ մինչև քուփը ներս է գնացել։ Հայտնի էր, որ մի որևիցե բաղում է պատահել այդ չարագործությունը, բայց ո՞վ կասեր, որ ինքն է արել։ Սկսեցինք դեղուդուղ անել, և վերքը շատ ուշ լավացավ։ Այնուհետև մեր Դուրսունը այլևս գողության չգնաց և իր խփողին էլ վերջ ի վերջո ինքը գտավ։

Մեկ անգամ տավարը տանում էի դեպի առուն ջուր տալու։ Երբ որ հասա առվի ափը, մի կնիկարմատ նոր լցրել էր կուժը և ուզում էր վերադառնալ։ Բոլոր տավարները վրա ընկան ջրին, իսկ Դուրսունը այդ կնկանը տեսավ թե չէ՝ իսկույն դուրս ընկավ տավարի միջից և մի քիչ տեղ փախչելով՝ ետ դառավ և սկսեց աչքերը պլշացնել կնկա վերա։ Կնիկն այնպես վախեցավ, որ կարծեց, թե հիմի ուր որ է Դուրսունը պիտի իրեն ոտնատակ տա։— Ա՛ գոմեշ, ինչի՞ ես էդպես մտիկ տալիս, ես խոմ չեմ խփել քեզ,—ասաց կնիկարմատը։ Ես այդ կնկանից Դուրսունի չափ վախեցա, ըստ որում նրանից ամեն բան սպասելի էր։ Վերադառնալով տուն, այս անցքը պատմեցի մորս։ Վերջն ստուգվեց, որ Դուրսունին կացնով խփողը հիշյալ կնիկարմատն էր եղել։

Դ ու ր ս ո ւ ն ի մ ա հ ը։ Մեր Դուրսունը դեռ մի առույգ հասակի մեջ էր, մի սարսափելի ցավ եկավ և անխնա կոտորեց բոլոր տավարներին։ Ահա այդ ցավին զոհ գնաց և մեր Դուրսունը։ Մեր գիտցած բոլոր հնարները գործ դրինք՝ թե արյուն առնել էր, թե՛ սառը ջուր ածել վերան, թե՛ սուրբի չորս կողմը պտտեցնել, թե՛ սուրբ հող և օրհնած աղ ուտեցնել, թե՛ մատաղ անել և ճրագ վառել, բայց բոլորը զուր անցավ, Դուրսունը չփրկվեց։ Ես հիշում եմ նրա հիվանդությունը, նրա քաշած չարչարանքը, նրա աղիողորմ նայվածքը։ Այդ տարին քառասուն գլուխ տավար կոտորվեց մեր տանից, բայց մենք ամենքս լաց եղանք միայն Դուրսունի վերա, այնքան սիրելի էր նա։ Հայրս նրա գլուխը չթաղեց մարմնու հետ, այլ կաշվից ու մսից մաքրելով չոր գագաթը ցցեց Աղալի գլուրի վերա։

Լավ կենդանի է գոմեշը և շատ օգտակար, բայց մենք մեր ունեցած բաների արժեքը ճանաչել չգիտենք։ Խելոք եվրոպացիների մոտ հիմար անասուններն էլ խելոք են, իսկ մեզ մոտ մեր իմաստուն անասուններն էլ են հիմարանում, որովհետև մենք չգիտենք նրանց գրավել, կրթել, խնամել։

1884

ՄԵՐ ԿԱՐՄԻՐ ՁԻՆ

(Հիշողություն)

1

«Լավ ձին մի մուրազ է», ասում է հայկական առածը։ Ես մեր ժամանակում չտեսա, որ խեղճ մարդը, մշակ ժողովուրդը, գյուղացին մի լավ բան ունենա, մի լավ տուն, մի լավ զարդ, մի լավ ձի, բայց նրա խոսք ու զրուցից երևում է, որ մի ժամանակ նա էլ է ունեցել շատ լավ բաներ, լավ տուն ու տեղ, լավ ապրանք, լավ

արդուզարդ։ Այդ եղել է երևի այն ժամանակ, երբ երկիրը տեր ու տիրական չի ունեցել, մարդիկ ապրել են ով ինչպես ուզեցել է։

Եվ ում որ երազումը տեսնում են լավ ձի հեծած, ասում են՝ նա իր մուրազին կհասնի։ Հարցրու քսան-քսանհինգ տարեկան գյուղացի երիտասարդին, թե ի՞նչ կփափագեիր ունենալ, կասե՝ մեկ լավ ձի ու լավ զենք։ Ծերերը երիտասարդանում են՝ լավ ձի նստելիս։ Ով մի հոգեկան վիշտ ունի, ցանկանում է մի լավ ձի ունենալ և նրանով քամուն տալ սրտի ցավերը։

Իմ հայրս լավ ձի ճանաչող էր, նա իմանում էր լավ ձիու բոլոր նշանները, գիտեր և լավ թալիմ տալ, այսինքն՝ կրթել, մարզել։ Հորս այս հմտությունից օգտվում էին և իր դրացիք, ձի գնելիս՝ միշտ նրա խորհրդին էին դիմում։ Հորս շնորհիվ վատ ձի չեմ տեսել ես մեր տանը, բայց մեկը մի կարգե դուրս բան էր. նա իսկական Քյոհլան էր, այսինքն՝ թոչկան, և հայրս գտել էր նրան պատահմամբ։ Եվ ահա ինչպես։

Մեկ տարի մեր գյուղի հացը շատ պակաս էր։ Գյուղացիք տունը մեկ մարդ վեր կացան գնացին Ախալքալաքի և Շիրակի գյուղերը՝ հունձ անելու հնձավարձով։ Հնձավարձ են ասում, երբ հնձի վարձն առնում են ոչ թե փողով, այլ իրենց հնձածից. քսան խուրձից 4 կամ էլ ավել խուրձ։ Այսպիսի դեպքերում գյուղացիք գիտեն ավելով շահել, որովհետև այդ բախտը կարող է իրանց վիճակվել. մի տարի էլ իրանք կերթան նրանց արտերը հնձելու։

Ահա այստեղ հայրս տեսնում է մեկի տանը մի նիհար քուռակ, մորից որբ մնացած, արտաքուստ ամեն շենք ու շնորհքից զուրկ և կարծես բարակացավով տանջվելիս լինի։ Հասակով էլ լինում է 5—6 ամսական։ Հայրս զննում է քուռակը, նայում է ոտ ու գլխին, ականջներին, վզին, բաշ ու պոչին, ինչպես բժիշկը կզննի իր հիվանդին և քյոհլա ասված ցեղի բոլոր նշանները գտնում է այս քուռակի վրա, թեև դեռ լավ չզարգացած։ Հարցնում է հոր ու մոր մասին, ասում են՝ չենք տեսել, մենք էլ մի տաճկից ենք առել, փոխարենը մի գառը տալով, բայց հիմա տեսնում ենք, որ սա ապրելու չէ։

Հայրս ասում է՝ սա կապրի, եթե լավ պահող ունենա. և եթե ինձ տաք, ես հինգ մանեթ կտամ։

Ասում են՝ քեզ փեշքեշ, կուզես փող էլ մի տուր։ Մեզ մոտ սա չի ապրիլ։

2

Քուռակը բարեփոխվում է։ Ես վեց տարեկան էի, որ հայրս մի քուռակ բերավ հեռու տեղից։ Այդ քուռակը նիհար և բրդոտ հորթի տպավորություն էր անում։ Բայց չանցավ մեկ թե երկու ամիս՝ այդ տգեղ մորթու միջից դուրս եկավ մի շատ գեղեցիկ կարմիր ձիուկ, սիրուն, զվարթ և խելոք աչքերով։ Սկսեց խաղալ մյուս քուռակների և նույնիսկ հորթերի ու երեխաների հետ։ Սկսեց ճանաչել ամենքին էլ և ընտելանալ ամենքի հետ։ Իսկ հորս տեսնելիս՝ մոտենում էր նրան, ինչպես ամեն ձագուկ իր մորը։ Իսկ հայրս փաղաքշում էր նրան և օրը երկու անգամ թիմարում,— քորիչով ու սրբիչով բոլոր մարմինը մաքրում։

Հայրս ասում էր, սա՝ թևեր ունի, բայց դրանք ներսումն են, դրսից չեն երևալ։ Մենք ուրիշ ձի էլ ունեինք, ուրիշ քուռակներ էլ իրանց մայրերի հետ։ Այս նորը նրանցից նույնպես էր տարբերվում, ինչպես բաղեն աղավնուց։ Ամենքիս համար նկատելի էր այդ խոշոր տարբերությունը կազմվածքի կողմից, իսկ քայլելիս մյուսների նման չորեքթաթ չէր տալիս, այլ լողում էր օդի մեջ այնպես, ինչպես ձուկը ջրումը։

Ամեն մարդ մի ջոկ տեսակ քայլել ու վազել ունի. այսպես են և անասունները, բայց մանավանդ ձիանը։ Ձիաների քայլելու ձևերը ջոկ-ջոկ անուն ունեն։ Ամենից լավը անվանվում է յորղա, բայց այս յորղան էլ շատ տեսակ է լինում, սկսած մանրաքայլ յորղայից մինչև խոշորաքայլ յորղան։ Կան յորղաներ, որոնք հեծնողին երերում են, և կա էլ, որ անշարժ են պահում այնպես, որ նա կարծում է, թե փափուկ աթոռի վրա է նստած՝ ձին սլանում է օդի մեջ և ոչ գետնի խորդուբորդ երեսին։ Ահա այս քայլքն է ամենալավը, և սա է հատուկ քյոհլանին։ Ձին հինգերորդ տարումն արդեն ցույց է տալիս յուր ուրույն քայլքը, իսկ յոթերորդ տարումը հասցնում է վերջին կատարելության։

Մեր Փաշիկոն ի ծնե և ի ջնե արդեն կատարյալ էր։ Եվ ամեն ձիու և ամեն կենդանու հետ էլ քայլում էր նրա նման, իսկ իր նման քայլում էր միայն մենակ ժամանակ։ Նա ենթարկվում էր հեծյալի ճաշակին։ Նա քյոհլան էր, երբ հայրս էր հեծնում կամ մեծ եղբայրս։ Երբ մայրս էր հեծնում, նա դառնում էր պսակ գնացող հարս։ Երբ հեծնում էի ես, որ տանեմ ջուրը, նա իմ կամքին չէր ենթարկվում և ավելի նա էր ինձ տանում ջուրը, քան թե ես նրան։

Ճանապարհին կանգ էր առնում, որտեղ ուզում էր։ Շատ անգամ նույնիսկ շեղվում էր ուղիղ ճամփից և մի ուրիշ տեղով էր գնում, և այսուամենայնիվ ինձ պահում էր վրան և անվնաս տուն հասցնում։

Նա իր թոչկանությունը իրացրեց 1847 թվականին, երբ խոլերայի համաճարակ կար։ Այդ տարին մեր տերտերը խոլերայից բռնվեց, հարկավոր էր դեղ և սառույց բերել քաղաքից։ Հայրս առավոտը 4 ժամին դուրս եկավ և 12 ժամին դեղն ու սառույցը հասցրեց։ Երկու ժամ հանգստացել էր ճամփին, ապա վեց ժամում անցել էր 172 վերստ։ Հայրս ասում էր, եթե ուզենայի, ավելի շուտ կգայի, բայց շատ էր շոգ, վախեցի ձին վնասվի. թույլ տվի, որ կամքովը գա։ Եվ իրավի՝ ձին այնպես վերադարձավ, որ կարծես երկար ճամփից չլիներ եկած։ Բայց տերտերը մահի ճանկից չփրկվեց և իբրև քավության նոխազ միայն նա մեռավ մեր գյուղումը։

1884

1890—1911

ԳՅՈՒԼՆԱԶ ՏԱՏԻ ԹՈՌՆԵՐԸ

Մեկ անգամ Գյուլնազ տատին շրջապատեցին իր թոռները և ստիպեցին, որ տատը թռչնիկներ շինի նրանց։

Տատն էլ վեր առավ փոքրիկներից մեկին, դրավ ծնկան վրա, երկու ձեռքից բռնեց և վեր ու վայր թափ տալով երգեց.

Ղո՜-ղո՜-ղո՜, ա-ղա՜-ղու,
Նա՜կ, նա՜կ, ա-ղու-նա՜կ, թը՜ռռ...

Հետո մի ուրիշն ընկավ տատիկի գիրկը և ասաց.
— Տատի՜կ ջա՜ն, տատիկ, ինձ էլ մի կաչաղակ շինե՜ս...
Տատիկը նրան էլ դրավ ծնկներին և առաջվա պես երգեց.

Ջա՜-չա՜-չա՜ կա-չա-չա՜,
Ղա՜կ, ղա՜կ, կա-չա-ղա՜կ, թը՜ռռ...

— Տատի՜կ ջան, տատիկ, ինձ էլ մի ծիտիկ շինե՜ս,— ասաց ամենից փոքրիկը։

Տատիկը նրան էլ վեր առավ և վեր ու վայր թռցնելով՝ երգեց.

Ծիա եմ, ծիտ եմ, ծլվլում եմ,
Ծի՜վ, ծի՜վ, ծի՜վ.
Ոստոստում եմ, թռչկոտում եմ,
Տի՜վ, տի՜վ, տի՜վ։
Արի՜, թեի՜կ, արի՜, փետրիկ,
Որ ես դառնամ փոքրիկ ծիտիկ,
Փոքրիկ ծիտիկ, պիծիկ-միծիկ, թը՜ռռ...

1890

ԳՅՈՒԼՆԱԶ ՏԱՏԻ ՀԵՔԻԱԹԸ

Ա

Զմեռն էր՝ գիշերը երկար։

Գյուլնազ տատիկը՝ գլուխը քուրսու վրա դրած՝ ննջում էր։ Մանուկները վրա թափվեցան, քունը փախցրին և ստիպեցին, որ իրանց համար մի հեքիաթ ասի։ Նա էլ սկսեց.

— Եղել է չի եղել՝ մի սիրուն արտուտիկ։
Կտուցը սուր՝ մեր Արշակի քթի նման։
Թևերը փափլիկ՝ Շողիկի կուների նման։
Բմբուլը խուճուճ՝ Տիգրանի մազերի նման,
Ահա այսպես սիրուն էր արտուտիկը։
— Բա ինձ նման ոչինչ չունե՞ր,— ասաց Վանին։
— Բա ի՞նձ,— ձայն տվավ Հռիփսիկը։
— Ինձ էլ չասացիր,— լաց էլավ Նազիկը։
— Սպասեցեք, սպասեցեք, երեխեք, դեռ չեմ վերջացրել. ամենքիդ էլ բաժին կտամ,— ասաց տատիկը և շարունակեց.
— Աչիկներն այնպես նախշուն էին, ինչպես Վանիկի աչքերը։
— Կատարն այնպես կարմիր էր, ինչպես Հռիփսիկի թշերը։

— Ոտներն այնպես բարակ էին, ինչպես Նազիկի մատները։

— Ես ոտները չեմ ուզում,— ասաց Նազիկը։

— Ախ, Նազիկ ջան, ես ուզում էի ասել տոտիկները,— ասաց տատիկը։

— Ձեմ ուզում ես, տոտիկներ էլ չեմ ուզում։

— Բա ի՞նչը կուզես։

— Աչիկներն եմ ուզում։

— Աչիկներն ինձ է տվել տատիկը, քեզ չեմ տալ,— գոչեց Վանին։

— Նազիկ, կուզե՞ս, կատարը դո՛ւ վերցրու, տոտիկները՝ ես,— ասաց Հռիփսիկը։

— Ձեմ ուզում. ես աչիկներն եմ ուզում,— պնդեց Նազիկը։

— Վանի, դու կատարը վե՛ր առ, ես տոտիկները, իսկ Նազիկը՝ աչիկները։

— Ի՞նչ եմ անում կատարը, տատիկն ում ինչ որ տվել է, ա՛յն էլ նրանը։

— Ճշմարիտ է ասում Վանին,— ամեն կողմից գոչեցին երեխեքը։

Նազիկը գոհ չմնաց, և վեճը երկար շարունակվեց։ Բայց տատիկը չէր լսում. նա գլուխը դրել էր բարձին և քնել, էլ չէին կարող զարթեցնել։ Վեր կացան, իրանք էլ մտան տեղերը։

Բ

Մյուս երեկոյին երեխեքը էլի հավաքվեցին տատիկի մոտ, որ շարունակե հեքիաթը։ Նա էլ սկսեց.

— Անցած գարնանը մեր պարտեզի ծառի վրա մի սիրուն կկու կար։ Ես նստած էի ծառի տակին, և դուք մեկ-մեկ եկաք ինձ մոտ։

Երբ որ Արշակը ներս մտավ, կկուն կանչեց.— Կո՛ւ-կո՛ւ։

Եկավ Շողիկը, կկուն կանչեց՝ Պո՛ւ-պո՛ւ։

Եկավ Տիգրանը, ասաց՝ Դո՛ւ-դո՛ւ։

Եկավ Վանին՝ ասաց՝ Գո՛ւ-գո՛ւ։

Եկավ Հռիփսիկը, ասաց՝ Բո՛ւ-բո՛ւ։

Եկավ Նազիկը՝ կկուն է՛լ ոչինչ չասաց, թռա՛վ գնա՛ց։

— Օ՜խ, օ՜խ, Նազիկ, օ՜խ, օ՜խ, կկուն քեզ համար ոչինչ չի ասե՛լ,— միաբերան ձայն տվին երեխեքը։

Նազիկը շատ նեղացավ, թե ինչու կկուն իր համար ոչինչ չի ասել և սկսեց լաց լինել։

Տատիկն ասաց.— Նազիկ, գիտե՞ս՝ ինչու կկուն քեզ համար բան չասաց։ Նա վախեցավ քեզ բան ասել։ Ինչ որ ասեր, դու չպիտի հավանեիր, ուրիշն էլ իրանը քեզ չէր տալ, ինչպես անցած երեկոյին։

— Տատիկ ջան, տատիկ, որ մեկ էլ կկուն գա, ասա՝ ինձ համար էլ մեկ բան ասի,— աղաչեց Նազիկը և այնուհետև շատ խելոքացավ։

1902

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Մեղուն մեկ անգամ հարցրեց իր տիրոջը։

— Քո կենդանիներից ո՞րն է ամենից օգտակարը։

— Գիտեմ, դու երևի կարծում ես, թե ամենից օգտակարը դու ես, բայց սխալվում ես,— պատասխանեց տերը։

— Ինչպե՞ս, տեր, ո՞րն է այն կենդանին, որ ինձանից ավելի օգտակար է։

— Ոչխարը։

— Այդ հաշիվ չէ, տեր. ոչխարը իմ հասակակիցը չէ։ Նա մի ահագին կենդանի է, իսկ ես մի միջատ եմ։ Դու պետք է ինձ իմ ընկերների հետ համեմատես։

— Շատ բարի. շերամը քեզ պես փոքր է, բայց քեզանից շատ օգուտ է տալիս։

— Շերամը ո՞րն է։

— Շերամն այն իմաստուն որդն է, որ մեզ համար աննման քնքուշ մետաքս է շինում։

— Հա՜, իմացա, այդ այն շատակեր ճիճուն չէ՞, որին անդադար կերակրում եք թթան տերևներով։

— Նա ինքն է։

— Բայց գիտե՞ս, տեր, նրա չափ որ մեզ էլ կերակրեք, մենք մեղրի տեղ ոսկի կշինենք ձեզ համար։ Դուք ոչ մի կենդանի չունեք, որ իր կերակուրը մեզ նման ինքը լինի շինելիս և ուրիշներին էլ բաժին լինի տալիս։ Այնպես չէ՞, պարոնս։

— Այո, այդ կողմից դու ուղիղ ես. մենք դեպի ձեզ շատ ապերախտ ենք, որովհետև բոլորովին անխնամ ենք թողնում ձեզ...

Մեղուն ուրախացավ տիրոջ պատասխանիցը և թռավ նստեց վարդենու վրա։

1902

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՀԱՎԸ

Հավը Մեղվի վրա ծիծաղելով ասաց մեկ անգամ.

— Ինչ անշնորհք ճանճ ես դու, ամբողջ օրը ծաղկից ծաղիկ ես թռչկոտում և ոչ մի բանի պետք չես գալիս։

— Իսկ դու, հավիկ-մարիկ, ի՞նչ ես շինում,— հարցրեց մեղուն։

— Մի՞թե չգիտես, թե ինչ եմ շինում, ես քեզ նման պարապարաշ չեմ ուզում։ Ես օրը մեկ ձու եմ ածում, մեկ ձու, գիտե՞ս մեկ ձուն քանիս է։

— Գիտեմ, գիտեմ, հասկացա։ Բայց ես մինչև հիմա կարծել եմ, թե դու օրը հարյուր ձու ես ածում։

— Ինչպե՞ս կարելի է օրը հարյուր ձու ածել, անխելք մեղու։

— Ապա եթե քո ածածդ ընդամենը մի ձու է, էլ ինչո՞ւ ես հարյուր անգամ կշկշում, թե հա՞յ, հարա՞յ, լսեցեք, որ ձու եմ ածել։ Իմ կարծիքով՝ այսքան կշկշալուն մի ձուն շատ քիչ է։ Այնպես չէ՞, իմաստուն հավիկ-մարիկ։

— Բայց դու ի՞նչ ես շինում, դու, որ իմ մի ձուն քիչ ես համարում։

— Ես ինչ որ շինում եմ, քեզ պես կշկշալով չեմ հայտնում ուրիշներին։ Ես գլուխս քաշ գցած, մեղր եմ շինում։ Գիտե՞ս ինչ է մեղրը։ Դա հավի կերակուր չէ, քո խելքի բանը չէ, հավիկ-մարիկ։

ՈՍԿԻ ԵՎ ԵՐԿԱԹ

Ոսկին երկաթին անարգելով, ասաց մեկ անգամ.

— Երանի գիտենամ, դու ինչացո՞ւ ես, որ մետաղների կարգն ես ընկել. քո սև ու ժանգոտ երեսովդ մարդու վրա գզվանք ես բերում։ Նայիր ինձ վրա, տես ինչպես գեղեցիկ եմ փայլում, ինչպես շողշողում։ Նայիր մեր սիրուն օրիորդների ու հարսների ականջներին ու մատներին, դու կտեսնես իմ փառքն ու պատիվը. նայիր նրանց ճակատների շարքերին, դու կտեսնես իմ փայլն ու գեղեցկությունը։ Չեմ հաշվում գինդերը, գնդասեղները. գիտեմ, որ դու այնքան կոշտ ու կոպիտ ես, որ այդպես քնքուշ բաների մասին ոչ ճաշակ ունիս, ոչ հասկացողություն։

Երկաթը պատասխանեց ոսկուն.

— Ես չեմ ուրանում, ոսկի աղա, որ դու գեղեցիկ ես, ամեն բանի զարդն ու զարդարանքը դու ես, գինդ շատ բարձր է, աղքատի բան չես, բայց ինչո՞ւ ես չափիցդ դուրս գոռոզանում։ Քո սիրուն ականջակներդ ոչ ականջի լսելիք են ավելացնում, ոչ մատներին ու կրծներին զորություն ու ժրություն են տալիս։ Ճակատների փայլուն շարքերը գլխին խելք չեն տալիս. ոչ կուրծքերի նուրբ մանյակները սրտին գութ ու խնամք։

Ի՞նչ ասեմ մեր օրիորդներին, քեզ այդչափ պատիվ են տալիս, քեզ համար հալվում, մաշվում ու բարակացավ ընկնում։ Իմ մի փոքրիկ ասեղը քո բոլոր զարդարանքներից ավելի է օգուտ տալիս։ Գիտե՞ս, ոսկի աղա, իմ փոքրիկ ասեղը քանի՞ տուն է պահում, քանի որբի կերակրում։ Իմ խոփն ու ձևիչը՝ ամբողջ աշխարհին հաց են տալիս։ Մարդիկ ինչ որ շինում են կամ պետք է կտրեն, կամ պետք է ծեծեն, կամ պետք է խարտոցեն, կամ պետք է կարկատեն։ Իմ ուրագն ու կացինը որ չինեն, իմ դուրն ու շաղափը, իմ սղոցն ու մուրճը, իմ կտրիչն ու թարտոցը, էլ կարո՞ղ էին մարդիկ քար քարի վրա դնել, փայտ փայտի վրա։

Ահա այդպես պարծենկոտ ես դու, ոսկի աղա, քո փայլից կուրացած՝ ուրիշի լավությունը չես տեսնում։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԵՃՔ

Եզը, կովը և շունը վիճում էին միմյանց հետ և ամեն մեկը պնդում էր, թե՝ մեր տերը ամենից շատ ինձ է սիրում։

— Իհարկե, նա ինձ ամենքիցդ շատ է սիրում,— ասում է եզը,— և գիտե՞ք ինչու համար։ Նրա համար, որ ես եմ նրա արորն ու տափանը քաշում, ես եմ նրա համար անտառից փայտ բերում։ Նա ինձ է լծում սայլին և իր ցորենը տանում ջաղաց, այնտեղ ալյուր շինում. հետո էլի ես եմ տանում քաղաք, ուր նա ծախում է այդ ալյուրը և իր տան համար առևտուր անում, երեխանց համար հագնելիք առնում։ Ուրեմն, դուք ի՞նչ եք կարծում, ես որ չլինեի, նա ինչպե՞ս կարող էր ապրել։

— Այդ ճշմարիտ ես ասում,— ասաց կովը։— Բայց մեր տերն ինձ ամենքիցդ ավելի է սիրում, այդ նրա համար է, որ նա իմանում է, թե քեզ նման աշխատասեր ու ժրաջան եզնուկին ես եմ պահել մեծացրել։

Այս մեկ։ Մեկ էլ որ՝ նրա գերդաստանը իմ կաթովս եմ պահում։ Այն մածունն ու կարագը, այն սերն ու կաթը, այն եղն ու պանիրը, այն տաք-տաք թանե սպասը, որ ամեն օր խպշտում են, ո՞ւմ տվածն է։ Տեսնո՞ւմ եք ուրեմն, որ եթե ես չլինեմ, բոլորը քաղցած կկոտորվեն։

— Դու էլ ես ճշմարիտ ասում, սիրուն կովիկ,— սկսեց շունը։— Ո՞վ կարող է ուրանալ քո լավությունը։ Շատ անգամ ես ինքս էլ եմ մասնակից լինում քո տված անուշ թանին։ Մեր տանտիկինը ամեն խնոցի հարելիս թանիցն ինձ բաժին է տալիս։ Ով որ քո լավությունն ուրանա, երկու աչքով կուրանա։ Ես շատ երախտագետ եմ, որ ոչ ոքի լավությունը չեմ կարող ուրանալ։ Բայց գիտեք ինչ կա։ Դուք մի նեղանաք, որ մեր տերն ինձ ամենքիցդ էլ շատ է սիրում. դրա համար մեծ պատճառ կա և ահա ասեմ, թե ինչ է դրա պատճառը...

Օվ շունն սկսեց մեկ-մեկ հաշվել, թե ինքն ինչ ու ինչ է անում։

Ասած է՝ շունը որ հաշել սկսի, էլ չի դադարիլ։ Այնքան հաշեց եզան ու կովի հետ, որ տերն իմացավ, գնաց նրանց մոտ, շան լեզվիցն ազատեց, ասելով. «Թող տուր դրանց, Բողար, դու չգիտե՞ս, որ ամենքդ էլ ինձ հարկավոր եք, ոչ մեկդ մյուսի արածը չեք կարող անել. այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցեք միմյանց»։

1902

ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ

Մեզանում ասում են. «Ով որ ընկուզենի բուսցնի, նրա պտղիցը չի ուտիլ», որովհետև մի քանի տարի է տևում մինչև նրա պտուղ տալը։

Քասի ապերը սովորություն ուներ ամեն տարի ընկույզներ ցանելու, և արդեն նորաբույս ընկուզենիներ ուներ մի քանի մարգ, որտեղից հանում ու տնկոտում էր այգու ափերում։

Քասի ապոր հարևան Կիրակոսը, որ թեև դեռ երիտասարդ, բայց մի անհեռատես և ծույլ մարդ էր, ծիծաղում էր ծերունու վրա և ասում.

— Ա՜յ հալևոր, ինչո՞ւ ես չարչարվում, ոտիդ մեկը գերեզմանումն է, դու հո դրա պտղիցը չե՞ս ուտելու, էլ ո՞ւմ համար ես տնկում այդ ծառերը։

— Քեզ համար եմ տնկում, Կիրակոս, քեզ համար,— պատասխանում է ալևոր Քասին,— քեզ ու քեզ նմանների համար եմ տընկում, որ սրա պտղիցն ուտեք և ինձ ողորմի տաք։

1906

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ

Գնացի ջաղաց։ Ջաղացպանն ինձ ուղարկեց փայտի։ Մանեկա, մանեկա, շատ փնտրեցի, փայտ չգտա։ Վերջը գտա մի քեթուկ (կոճղ)։ Խփեցի, խփեցի, շատ խփեցի ոտքով ու քարով, դուրս չեկավ տեղիցը։ Ասացի.

— Ա՜յ քեթուկ, ի՞նչ քաջ ես։ Ասաց.— Թե որ քաջ եմ, ինչո՞ւ է կացինն ինձ կտրում։

— Ա՛յ կացին, ի՞նչ քաջ ես.— Թե որ քաջ եմ, ինչո՞ւ է դարբինն ինձ ծեծում։

— Ա՛յ դարբին, ի՞նչ քաջ ես։— Թե որ քաջ եմ, ինչո՞ւ է երկինքն ինձ տանում։

— Ա՛յ երկինք, ի՞նչ քաջ ես.— Թե որ քաջ եմ, ինչո՞ւ է ամպը երեսս ծածկում։

— Ա՛յ ամպ, ի՞նչ քաջ ես.— Թե որ քաջ եմ, անձրևն ինչո՞ւ է մեջիցս վայր թափվում։

— Ա՛յ անձրև, ի՞նչ քաջ ես.— Թե որ քաջ եմ, ինչո՞ւ եմ գետնին թափվում։

— Ա՛յ գետին, ի՞նչ քաջ ես.— Թե որ քաջ եմ, ինձ վրա ինչո՞ւ է խոտ բուսնում։

— Ա՛յ խոտ, ի՞նչ քաջ ես.— Թե որ քաջ եմ, տավարն ինչո՞ւ է ինձ արածում։

— Ա՛յ տավար, ի՞նչ քաջ ես.— Թե որ քաջ եմ, ինչո՞ւ է գայլն ինձ ուտում։

— Ա՛յ գայլ, ի՞նչ քաջ ես.— Թե որ քաջ եմ, շունն ինչո՞ւ է փախցնում ինձ։

— Ա՛յ շուն, ի՞նչ քաջ ես.— Թե որ քաջ եմ, ինչո՞ւ է ծեծում ինձ պառավը։

— Ա՛յ պառավ, ի՞նչ քաջ ես.— Թե որ քաջ եմ, ինչո՞ւ ինձանից չի վախենում մուկը։

— Ա՛յ մուկ, ի՞նչ քաջ ես.— Թե որ քաջ եմ, ինչո՞ւ է բռնում ինձ կատուն։

— Ա՛յ կատու, ի՞նչ քաջ ես.— Այո՛, քաջ եմ, և այս մեծ տան պահողն եմ, մկներին մահ տվողն եմ, սուփրի ծայրին նստողն եմ, մեր ջան աչքի գրողն եմ։

1906

ԽԵԼՔՆ ՈՒ ԲԱԽՏԸ

Խելքն ու Բախտը վեճի բռնվեցին. Բախտն ասում էր.— Մարդիկ ինձանով են մարդ։ Խելքն ասում էր.— Ինձանով։ Թեպետ դատավորի չդիմեցին, բայց իրանց մեջ պայման դրին, որ մեկը մյուսի

արածին չխառնվի։ Եվ իրանց փորձը կատարեցին մի գյուղացու վրա։

Գյուղացին արորը լծեց և գնաց տափը վարելու։ Խոփը դեմ առավ մի պինդ բանի և կանգ առավ ակոսի մեջ։ Մարդը տեսավ, որ ահա՛ մի գուգում կա հողում, վերցրեց տեսավ, որ մեջը ոսկով լիքն է։

— Այս ինչ լավ եղավ,— մտածեց մարդը,— այսուհետև էլ ոչ մի նեղություն չեմ քաշիլ, ես էլ կընկնեմ հարուստ մարդոց կարգը, ինչի՞ր, ինչի՞ր չեմ անիլ, գյուղի համար աղբյուր հանել կտամ, եկեղեցի կշինեմ, աղքատներին առատ ողորմություն կտամ...— մեկ էլ հանկարծ փոխեց մտածելու եղանակը. և ասաց.

— Վա՛յ թե գողերն իմանան ու կեսգիշերին գան հափշտակելու և առաջ ինձ սպանեն, հետո իրանց կողոպուտն սկսեն։ Չէ՛, սրա շառը շատ է, քանց խերը։

Այս մտածության մեջ՝ տեսավ, որ իրանց դատավորն անցնում էր մոտովը։— Այս լավ եղավ, ասաց.— եկ ոսկիքը տամ սրան, իսկ ես հանգիստ իմ գործիս նայեմ։ Վազում է, կանչում դատավորին։

Բայց դատավորը որ գալիս է, մարդի խելքն էլ գլուխն է հավաքվում. ոսկին ծածկում է և ասում.— Աղա, դու դատավոր մարդ ես, գիտուն ես, ասա ինձ, խնդրեմ, իմ այս ջուխտ եղներից ո՞րին ես լավ համարում։

Սրա վրա դատավորը նեղանում է, բարկանում և թողնում հեռանում է։ Խելքն էլ մարդի գլխիցն է հեռանում և նա մտածում է, թե ինչո՞ւ ոսկիքը չտվավ, ի՞նչ պիտի անի, ո՞ւր պիտի պահի։ Մինչև երեկո անդործ է մնում և շարունակ սրա վրա է մտածում։ Մինչև այդ՝ դատավորը գնում է գյուղը և ետ դառնում, մարդն էլի գնում է առաջը կտրում, աղաչում, որ էլի մեկ անգամ գա վարածին նայի՛ ու երթա։ Դատավորն զգում է, որ մի բան պետք է լինի, գնում է։ Հենց այդ րոպեին մարդի խելքը գլուխն է գալիս՝ և ասում է.

— Աղաչում եմ, չնեղանաք, բարի դատավոր, եթե ձեզ մի բան հարցնեմ.— Ինչպե՞ս եք նկատում, երեկվա վարածս է շա՞տ, թե այսօրվան. դուք գիտուն մարդ եք, լավ կգիտենաք այդ բանը։

Դատավորը խենթի տեղ է դնում մարդին և ծիծաղելով հեռանում է։ Մարդի խելքն էլ է հեռանում և ցելի մի կողմը նստում։ Մարդը ծեծում է գլուխն ու ասում. Հիմա ի՞նչ անեմ, ինչպես անեմ, այս անիծած ոսկիքն ո՞ւր տանեմ, որտե՞ղ պահեմ։ Վերջը

գուգումը փաթաթում է հացի մեզարումը և շալակում, գնում տուն և ասում կնկանը.

— Ա՛յ կնիկ, եզնիքը կապոտիր, խոտ տուր, արորը տար ներս, ես պիտի երթամ դատավորի մոտ, բան ունիմ։

Կնիկը տեսնում է, որ մեզարը մարդի շալակին է և մեջումն էլ բան կա, բայց վայր չի դնում, մտածում է, որ մի նոր բան պիտի լինի, ասում է մարդին.

— Եզները կապելն իմ ի՞նչ գործն է, ի՞նչ կա այդպես շտապելու, դատավորը հո չի փախչում, բեռդ ցած դիր, եզներդ տեղավորիր, հետո ուր ուզում ես՝ գնա։

Մարդը ցած է դնում բեռը, եզները ներս է անում և մինչև կապոտելն ու դուրս գալը՝ կնիկը մեզարը բաց է անում, գուգումով ոսկին վերցնում է, նրա չափին մի քար է դնում մեզարումը։ Մարդը վերցնում է մեզարը և տանում դնում դատավորի առջևը և ասում.— Առ այս, քեզ ընծա եմ բերել։ Բաց են անում տեսնում — քա՜ր... Մարդն էլ է զարմանում։ Դատավորը բարկանում է և մարդին բանտարկելով՝ վրան հսկելու համար երկու պահապան է դնում, որ տեսնեն ինչ է անում և ի՞նչ խոսում, և գան իմաց տան։

Մարդն ինչ որ մտքումն ասում է, նույն մտքով ձեռքերն էլ շարժում.— գուգումն այսքան էր, բերանն այսքան, փորն այսքան, տակն այսքան, ու մեջի ոսկիքը այսքան։

Նայողները պատմում են դատավորին, թե երկու ձեռքով բան է չափում, բայց ոչինչ չի խոսում։— Կանչեցեք,— ասում է դատավորը։

Մարդին կանչում են, և դատավորը հարցնում է նրան, թե ինչ բան էիր չափում ձեռներովդ։ Մարդի խելքը գլուխն է գալիս, և պատասխան է տալիս, թե՝ «Ես քեզ էի չափում և ասում՝ քո գլուխն այսքան է, քո վիզն այսքան, քո փորն այսքան, քո մորուքն այսքան, ու ասում էի, թե արդյոք դու ես մե՞ծ, թե՞ մեր այծը»։

Սաստիկ բարկանում է դատավորը և հրամայում է, որ տանեն կախեն։ Տանում են, որ պարանը ճիտը ձգեն, ասում է. «Ինձ մի կախեք, ես կերթամ ուղիղը կասեմ»։ Դատավորը հրամայում է, որ ճշմարիտն ասե, թե ինչ էր չափում բանտումը։

Մարդն ասում է.— Ես ոչ այս գիտեմ և ոչ այն, հավատացեք, որ եթե ճոպանը իմ ճտից չհանեիք, ես հիմա խեղդված կլինեի, ահա ձեզ ճշմարիտը։

Սրա վրա ծիծաղում է դատավորը և ազատում մարդուն։

Մարդը գնում է տուն, ուր նրա Բախտն ու Խելքը ասում են միմյանց.— Ոչ մեկս չհաղթվեցինք, երևում է, որ Բախտն ու Խելքը հաջողության և ընդունակության պես միմյանցից անբաժան պետք է լինեին, և Բախտը Խելքով ու Խելքն էլ Բախտով կարող են մարդին մարդ շինել։

1906

ՄԱՅՐ ՈՒ ՈՐԴԻ

Ամառվա տապին մայրն ու իր որդին գնացին այգին։

Որդին՝ Սուրիկը՝ դեռ փոքր մանրիկ, բայց սիրուն, աշխույժ, կայտառ ու ճարպիկ, որսում էր այգում նախշուն թիթեռնիկ, իսկ նրա մայրը, բանվոր ժրաջան, քաղում էր կանաչ, վարունգ, բադրիջան։

Մեկ էլ մանկիկը հանկարծ լալիս է, ողբում, հառաչում և իր մայրիկին խնդրում, աղաչում, որ թիթեռնիկի պոկված թևերը կարի, կարկատի։

— Ես չգիտեի,— ասում է լալով,— որ սրա թևերն այսքան բարակ են. հենց որ բռնեցի, թևերի մեկը ձեռքումս մնաց, մյուսն էլ կտրվեց, մնաց վայր ընկած։ Մայրիկ ջան, մայրիկ, շո՛ւտ արա կարի։

— Այդ չի կարելի, Սուրիկ ջան, հոգիս, էլ ջուր մի սգալ, դա չի սաղանալ,— ասաց մայրիկը և ավելացրեց.

— Երանի դրանք բոլորն էլ ջնջվին... Դու դեռ չգիտես, թե դրանք առաջ ինչ բան են եղել. մեր բոլոր այդին, տանձն ու խնձորը դեռ կոկոնի մեջ դրանք են կերել։ Դեռ թիթեռ չեղած, դրանք լինում են իրիցի շներ[1], սև ու մազմզոտ և խիստ շատակեր, տգեղ ճիճուներ...

— Իսկ սա այդպես չէ, մայրիկ, այդպես չէ. տես ի՞նչ սիրուն է, ինչպե՞ս խատուտիկ. ես դեռ չեմ տեսել ոչ մի թիթեռնիկ այս-

1 Թրթուրներին շատ տեղերում անվանում են «իրիցի շուն»...

քան գեղեցիկ։ Ա՜խ, ափսո՜ս, ափսո՜ս... Մայրիկ ջան, մայրիկ, ինչպես էլ լինի... ի՞նչ վնաս ունի... բա սրանք մեղք չե՞ն...

— Դե, բավական է, զահլես մի՛ տանի.— մայրը բարկացավ, բայց ուրախացավ, որ իր Սուրիկը գիտե ցավակցել, գթալ ու խղճալ։ «Ուղիղ է ասում,— ասաց ինքն իրան,— չէ՞ որ սրանց էլ աստված է ստեղծել։ Նա որ մեզ այսքան բարիք է տվել, անշուշտ սրանց էլ փայ է հասցրել»։

1907

ԴԱՆԱԿՈՎ

Փոքրիկ Հրանտը նոր զարթնել էր քնից և լաց էր լինում հեկեկալով։

— Հրանտ ջան, ինչո՞ւ ես լաց լինում,— հարցնում է նրան մայրը։

— Դանա՜կս, մայրիկ, դանա՜կս չկա։

— Ի՞նչ դանակ, որտեղի՞ց է քեզ դանակ...

— Օ՜... գտա՜, մայրիկ, գտա՜... ձեռքումս պինդ պահած ունեի, բայց հենց որ զարթնեցի, մեկ էլ տեսնեմ, էլ ոչինչ չկա՜...

— Հա՜... հասկացա, երազումդ ես գտել։ Դե՛ լավ, լաց մի լինիր, երբ որ կմեծանաս, ես քեզ համար մի սիրուն դանակ կառնեմ, հիմա դեռ փոքր ես, ձեռքդ կկտրես։

— Ես արդեն մեծ եմ, մայրիկ, մե՛ծ. տես, արդեն սեղանից բարձր եմ... ես ուզում եմ դանակ ունենամ։ Արփիկը ինձանից փոքր է, բայց մկրատ ունի...

— Դու շատ բան կուզես, եթե քեզ դանակ տան, հետո էլ դաշույն կուզես։

— Հետո էլ, ատրճանա՜կ, մայրիկ...

— Օհո՜, է՛դ էր պակաս...

— Ոչ, մենակ էդ չէ պակաս, բա հրացա՞ն... Տիգրանը մի մեծ հրացան ունի, ես էլ կուզեմ ունենալ։

— Այդ բոլորը քեզ համար դեռ շատ վաղ է, հոգիս, դու պետք է գրել-կարդալ սովորես...

— Գրել-կարդալը թող Լուսիկը սովորի, ես պետք է զինվոր դառնամ։

— Լուսիկը իր համար կսովորի, իսկ դու՝ քեզ համար։

— Ոչ, թող Լուսիկը իր համար էլ սովորի, ինձ համար էլ։

— Ուրեմն դու էլ հաց չուտես, թող Լուսիկը իր համար էլ ուտի, քեզ համար էլ։

— Ո՛չ, մայրիկ, այդ ինչպես կարելի է։

— Իհարկե, չի կարելի։ Ուտողն ինքը կկշտանա, իսկ չուտողը կմնա քաղցած։ Այսպես, սովորողը ինքը կսովորի, կխելոքանա, իսկ չսովորողը կմնա անուսում, անգետ ու անխելք։ Ով աշխատի, նա կուտի։

— Հասկացա, մայրիկ։ Ով աշխատի, նա կուտի, իսկ ով որ չաշխատի, նրան հաց չեն տալ, որ ուտի։ Բայց որ զորով խլե՞ն, մայրիկ, էն ժամանակ ի՞նչ կարող ենք անել։

— Այն ժամանակ կպաշտպանվենք։

— Ինչո՞վ, ինչպե՞ս։

— Ձեռքով, ոտքով, քարով, փայտով...

— Իսկ ես, մայրիկ, դանակո՞վ։

1907

ԽՈԶ ՈՒ ՈՉԽԱՐ

Խոզը ոչխարի կշտին արմատներ էր ուտում։ Ոչխարը տեսնում է նրան ու ասում.

— Մերունիկ, ինչո՞ւ խոտ չես ուտում.

— Ես կուշտ եմ,— ասում է խոզը։

— Որ կուշտ ես, ինչո՞ւ արմատներ ես ուտում։

— Արմատները անուշ են, շարազ եմ անում,— ասում է խոզը, որ ամեն ինչ ուտում էր։

1908

ԱՔԼՈՐԻ ՀՐԱՎԵՐԸ

Աքլորը հարևանի հավին հրավիրում է կուտի. ասում է.

— Հավիկ-մարիկ, արի կուտ տամ, կե՛ր։

Հավը չի ընդունում աքլորի հրավերը։

— Կուտ ունենաս, քո հավերին կտաս,— ասում է ու կչկչում։

— Լավ,— ասում է աքլորը։— Դու հիմա կտեսնես, ինչքան կուտ ունեմ ես։— Էս ասում է ու կանչում իր հավերին.

— Կու-կու-ըի-կուտ... Կո՛ւտ, կո՛ւտ, կո՛ւտ...

Կուտի անունը որ լսում են հավերը, հավաքվում են շուտ և ուտում կուտ, իսկ հարևանի հավին դուրս են անում. նրան կուտ չեն տալիս։

1908

ԸՆԿԵՐԱՍԵՐ ԵՂՋԵՐՈՒՆԵՐԸ

Մի սարի վրա արածում էին երկու եղջերուներ։

Նրանցից մեկը մի քանի խոտ պոկեց մեկէլին տվավ՝ ասելով.

— Ընդունիր եղբայր, այս խոտը, թեև սա ոչ մեկիս պակաս չէ։

— Շատ և շատ շնորհակալ եմ,— պատասխանեց մեկէլը,— ինչո՞ւ չշահենք մեկ-երկու սիրտ, թեկուզ սարի խոտով։

1908

ԵՐԿՈՒ ՁԱԳԻԿ

Երկու փոքրիկ ձագիկ մի ծղնոտ գտան՝ հասկը վրան։

Հասկում շատ հատիկներ կային։ Ձագիկները բռնեցին ծղնոտի ծայրից և սկսեցին քաշել մեկը իր կողմը, մյուսը՝ իր։ Ծղնոտը

կտրվեց, և ձագիկները վայր թափվեցին ոտնիվեր։ Գող ծիտը վրա հասավ և հասկը ճանկեց ու թռավ։

1908

ԱՐԵՎԻ ՀՐԱՄԱՆԸ

Գարնանային մի սիրուն առավոտ արևը բարձրացավ և ասեց աստղերին.

— Դե, սիրուն աստղիկներ, երկնքի ճրագներ, հիմա գնացեք, գիշերը եկեք։

Ծաղիկներին ու թռչնիկներին ասաց.

— Զարթեցեք, ծաղիկներ, զարթեցեք թռչնիկներ։ Եվ զարթեցին բոլոր ծաղիկները, թռչնիկները։

«Ես պիտի երգեմ,— ասաց արտույտը։

«Ես պիտի ծաղկեմ,— ասաց վարդը։

«Իսկ ես ի՞նչ պիտի անեմ,— ասաց մութ ամպիկը.— չչրե՞մ երկիրը։

Արևը պատասխանեց.

— Թող երգի արտույտը, թող բացվի վարդը. իսկ մութ ամպիկը, ջրով լիքը, թող գնա հեռանա։

Ծաղիկները բացվեցին, թռչնիկները երգեցին, երեխեքն էլ զարթեցին և սկսեցին արևի երգը։

1908

ԽԵԼՈՔ ԳԼՈՒԽԸ

Բերանը ասաց.— Ես ամեն ինչ կուտեմ-կխմեմ։

Գլուխը ասաց.— Հը՛մ...

Լեզուն ասաց.— Ես ինչ ուզենամ, կասեմ, կխոսեմ։

Գլուխը ասաց.— Հը՛մ...

Ձեռները ասացին.

— Մենք ամեն ինչ կշինենք, կքանդենք։

Գլուխը ասաց.— Հը՞մ...

Ոտները ասացին.

— Մենք ամեն տեղ կերթանք, ման կգանք։

Գլուխը ասաց.— Հը՞մ...

Բերանը և լեզուն, ձեռքերը և ոտները ասացին գլխին։

— Ինչո՞ւ ես հըմ անում։

Գլուխը պատասխանեց.

— Ինչ անեք, չանեք՝ առաջ ինձ պիտի հարցնեք։

Ոտները և ձեռները կուչ եկան, բերանը մնաց բաց, իսկ լեզուն կակազելով ասաց.

— Հա՞... ղորդ է ասում գը-գը-գլուխը...

1908

ԱՐԵՎԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ

Պայծառ արևը բարձրացավ երկինք և ոսկեփայլ ճառագայթները տարածեց երկրի վրա։

Առաջին ճառագայթն ընկավ արտույտի վրա։ Արտուլտը թպրտաց, թափ տվեց թևերը, դուրս թռավ բնից, բարձրացավ վեր ու վեր և սկսեց երգել բարձրաձայն.—ճի՞վ, ճի՞վ, ճի՞վ. ճիլի-վիլի, ճիլի-վիլի. վո՞ւտ-վո՞ւտ-վո՞ւտ. ճը՞ռռ...

Երկրորդ ճառագայթը նապաստակի վրա ընկավ. նապաստակն ականջները խլշացրեց, նայեց դես ու դեն, ցատկելով մտավ ցողաթաթախ կանաչկուտը և սկսեց նախաճաշիկ անել մեղրածոր խոտերով։

Երրորդ ճառագայթը հավաբունն ընկավ։ Աքաղաղը թափ տվեց թևերը և կանչեց ծուղրուղու...Ղո՞ւ-ղո՞ւ-ղո՞ւ։ Կանչեց աքաղաղը հավերին, որ ցած իջնեն թառերից և առավոտյան նախաճաշիկն անեն։

Հավերը ցած թռան, կչկչացին և աքաղաղի հրավերով սկսեցին քուջուջ անել։

Չորրորդ ճառագայթը փեթակի վրա ընկավ։ Մեղուները տաքացան և դուրս ընկնելով դես ու դեն թռան տզտզալով, որ մեղրածոր ծաղիկներից իրենց սնունդն ստանան։

Հինգերորդ ճառագայթն ընկավ մի ժիր մանուկի անկողնու վրա և սկսեց նրա աչքերը ծակծկել. նա վեր թռավ տեղից և շտապով պատրաստվեց ուսումնարան գնալու։

ՄՐՋՅՈՒՆՆ ՈՒ ԼՈՒՆ

Մրջյունն ու լուն եղբայրացան և միասին գնացին դաշտ զբոսնելու։ Այդտեղ դրանք դեմ առան մի առվի։

Լուն ասաց.— Ես մի ոստյունով կարող եմ թռչել առվի մյուս կողմը, իսկ դու ի՞նչ կանես։

— Ես էլ կարող եմ ցատկել,— ասաց մրջյունը։

Լուն կուչ եկավ, բոլոր ուժը հավաքեց ու հանկարծ թռավ առվի մյուս կողմը։ Մրջյունը նույնպես բոլոր ուժը հավաքեց, ցատկեց ու ընկավ առուն։ Նրա քթախտիցը ջրի մեջ մի թուփ խոտ կար բռած, ընկավ խոտի վրա և խեղդվելուց ազատվեց, բայց տեսավ որ չպիտի կարողանա ցատկել մյուս կողմը, կանչեց լու եղբորը և ասաց.

— Սիրելի եղբայրս, ջուրը կմեծանա ու ինձ կխեղդի, մի ճար արա, այս փորձանքիցն ինձ ազատիր։

Լուն թռչկոտելով հասավ խոզին ու ասաց.

— Խոզիկ-խոզիկ, մազիկ տուր, մազից շինեմ մի պարան, պարանը գցեմ առուն, մրջյուն եղբորս ազատեմ։

Խոզը պատասխանեց.

— Եթե ինձ համար կաղին կբերե՞ս...

Լուն թռչկոտելով հասավ կաղնի ծառին ու ասաց.

— Կաղնի-կաղնի, կաղին տուր, կաղինը տամ խոզիկին. խոզիկը ինձ մազիկ տա, մազից շինեմ մի պարան, պարանը գցեմ առուն, մրջյուն եղբորս ազատեմ։

Կաղնին պատասխանեց.

— Եթե ագռավին իմ վրայից կքշե՞ս...

Լուն թռչկոտելով ագռավին հասավ և ասաց.

— Ագռավ-ագռավ, կաղնուն թող, կաղնին ինձ կաղին տա,

կաղինը տամ խոզիկին, խոզիկն ինձ մազիկ տա, մազից շինեմ մի պարան, պարանը գցեմ առուն, մրջյուն եղբորս ազատեմ։

Ագռավը պատասխանեց.

— Եթե ինձ համար հավի ձագիկ կբերե՞ս...

Լուն թռչկոտելով հասավ հավին և ասաց.

— Հավիկ-հավիկ, ձագիկ տուր, ձագիկը տամ ագռավին, ագռավը քաշվի կաղնուց, կաղնին ինձ կաղին տա, կաղինը տամ խոզիկին, խոզիկը ինձ մազիկ տա, մազից շինեմ մի պարան, պարանը գցեմ առուն, մրջյուն եղբորս ազատեմ։

Հավը պատասխանեց.

— Եթե ինձ համար կուտ կբերե՞ս...

Լուն թռչկոտելով հասավ ցորնահորի մոտ և ասաց.

— Հորիկ-հորիկ, կուտիկ տուր, կուտիկը տանեմ հավին տամ, հավիկը ինձ ձագիկ տա, ձագիկը տամ ագռավին, ագռավը քաշվի կաղնուց, կաղնին ինձ կաղին տա, կաղինը տամ խոզիկին, խոզիկը ինձ մազիկ տա, մազից շինեմ մի պարան, գցեմ առուն, մրջյուն եղբորս ազատեմ։

Հորը պատասխանեց.

— Եթե մուկը ինձանից կհեռացնե՞ս...

Լուն թռչկոտելով հասավ մկանը և ասաց.

— Մուկիկ-մուկիկ, ինձ լսի, ցորենի հորին մի դիպչիր, որ հորիկն ինձ կուտիկ տա, կուտիկը տամ հավիկին, հավիկը ինձ ձագիկ տա, ձագիկը տամ ագռավին, ագռավը քաշվի կաղնուց, կաղնին ինձ կաղին տա, կաղինը տամ խոզիկին, խոզիկը ինձ մազիկ տա, մազից շինեմ մի պարան, պարանը գցեմ առուն, մրջյուն եղբորս ազատեմ։

Մուկը պատասխանեց.

— Եթե ինձ կատվից կազատես...

Լուն թռչկոտելով հասավ կատվին և ասաց.

— Կատվիկ-կատվիկ, թող մուկին, մուկը քաշվի հորիցը, որ հորիկն ինձ կուտիկ տա, կուտը տանեմ հավին տամ, հավիկը ինձ ձագիկ տա, ձագիկը տամ ագռավին, ագռավը քաշվի կաղնուց, կաղնին ինձ կաղին տա, կաղինը տամ խոզիկին. խոզիկը ինձ մազիկ տա, մազից շինեմ մի պարան, պարանը գցեմ առուն, մրջյուն եղբորս ազատեմ։

Կատուն պատասխանեց.

— Եթե ինձ համար կաթ կբերե՞ս...

Լուն թռչկոտելով հասավ կովին և ասաց.

— Կովիկ-կովիկ, կաթիկ տուր, կաթը տանեմ կատվին տամ, կատուն մուկին չդիպչի, մուկը քաշվի հորիցը, հորիկը ինձ կուտիկ տա, կուտը տանեմ հավին տամ, հավիկը ինձ ձագիկ տա, ձագիկը տամ ագռավին, ագռավը քաշվի կաղնուց, կաղնին ինձ կաղին տա, կաղինը տամ խոզիկին, խոզիկը ինձ մազիկ տա, մազից շինեմ մի պարան, պարանը գցեմ առուն, մրջյուն եղբորս ազատեմ։

Կովը պատասխանեց.

— Եթե ինձ համար խոտ կբերե՞ս...

Լուն գնաց դաշտից մի խորոմ խոտ քաշեց, տարավ կովին տվավ։

Կովը նրան կաթ տվավ, կաթը տվավ կատվին, կատուն հաշտվեց մկան հետ, մուկը հորին չդիպավ, հորը լվին կուտ տվավ, կուտը տարավ հավիկին, հավը նրան ձագ տվավ, ձագը տարավ ագռավին, ագռավը թռավ կաղնուց, կաղնին էլ կաղին տվավ, կաղինը խոզին տվավ, խոզիկը մի մազ տվավ, մազից պարան շինեց, պարանը կամուրջ գցեց, մրջյուն եղբորն ազատեց։

ԱՇԽԱՏԱՍԵՐ ՇՈՒՆԸ

Շունը պահպանում էր իր տիրոջ տունը։ Նա տեսավ մի մուրացկան բակումը կանգնած, սկսեց վրան հաչել։

— Սիրելի,— ասաց աղքատը,— բարի եղիր և խղճա ինձ, ահա երկու օր է ոչինչ չեմ կերել։

— Ես էլ նրա համար եմ հաչում, որ տանեցիք լսեն ձայնս և քեզ բաժին բերեն,— ասաց շունը։

— Եթե այդպես է, խնդրեմ բերանդ դեպի տունը դարձնես և այնպես հաչես,— ասաց աղքատը, որ տնապահ շան աղքատասիրությանը չէր հավատում։

ԳԱՌՆ ՈՒ ԳԱՅԼԸ

(Կոիկուից)

Հնուց մնացած մի լավ առակ կա,
Եվ շատ ուղիղ է, ասված է վկա,
Որ՝ «Հզորի դեմ, թեև մեղավոր,
Անզոր արդարն է լինում հանցավոր»։

Այսպես՝ մեկ անգամ, շղթից նեղացած, հոտից մոլորված, մի ծարավ գառնուկ խայտալով վազեց դեպի առվակը, որ քիչ ջուր խմի, ծարավը կոտրի, փոքր-ինչ զովանա, վազե տուն գնա։

Այդ իսկ րոպեին, որտեղից որտեղ, մի գայլ դուրս պրծավ, կամաց-կամաց, սուս-փուս գողի պես, շան կերպարանքով գառին մոտեցավ.

Ի՞նչ ասել կուզի՝ թե ինչի համար,—

Քաղցած գազան,
Փափկիկ գառնուկ.
Կառներ կըտաներ
Եվ անուշ կաներ։

Բայց մեկենիմեկ նա այդպես չարավ,
Իսկույն չըհարավ.

Չգիտեմ որտեղ՝ մեր ծաղկաթավալն ուսում էր առել, օրենք սովորել, ուզեց իր գործը խեղճ գառնուկի հետ օրենքով տեսնել, որպեսզի չասեն, թե գառն արդար էր, գայլը՝ մեղավոր։

Բայց ինչ էլ լիներ, դարձյալ գազան է, կոպիտ բավական, հետք չկար վրան ուսման, կրթության, ինչպես կտեսնեք նրա խոսելից, վարվելու ձևից.

— Այ դու անպիտա՞ն,
Կենդանի անբան.—
Ասում է գառին
Գայլն իրավաբան։

Ի՞նչ իրավունքով, և ո՞ր օրենքով համարձակվել ես իմ մաքուր ջուրըս. պարզ խմելիքըս քո պիղծ բերանով այսպես պղտորել, ավազով, ցեխով և հազար տեսակ աղբ ու զիբիլով։ Քո այդ հանդուգն չարության համար գիտե՞ս ինչպիսի պատիժ կա գրած։

— Վսեմափա՞յլ տեր,— ասում է գառը,— ես գիր չգիտեմ, բայց թե թույլ կըտաս, այսքանը կասեմ, որ ջուրը ցածրից վերև չի գնալ, դու էլ կիմանաս։

— Ի՞նչ ես դուրս տալիս, ես չեմ հասկանում. ջուրը ներքևից վերև չի գնալ, այդ ո՞վ չգիտե, էլ ասելդ ի՞նչ է։

— Իմ ասելն այն է, վսեմափայլ տեր, որ դուք վերևից եկաք դեպի ինձ։ Այդ էլ չըլինի, մեկ լավ նայեցե՞ք, տեսեք ինչ պարզ է, ինչքան մաքուր է։ Ջուր է, ճշմարիտ, ձեր բարկությունը։

— Տեսեք, մեկ տեսե՞ք այս ըստահակին,
Սրրա ասածին,
Համարձակո՞ւմ ես, կենդանի անբան,
Տալ ինձ պատասխան.
Ես լավ եմ հիշում և չեմ մոռացել,
Որ մեկէլ տարին էլի դու էիր,
Որ հանդգնեցիր ինձ հակառակել,
Եվ հայհոյելով այստեղից փախար,
Ձեռիցըս պրծար։
— Ա՜խ, ինչ եք ասում,
Տեր իմ պատվական,
Դեռևըս չըկամ
Ես մեկ տարեկան...
— Ուրեմն եղբա՞յրդ էր.
Էլ ո՞վ կըլիներ
Այնքան քեզ նման,
Քեզ պես անպիտան։
— Ողորմա՞ծ տեր իմ,
Ես եղբայր չունիմ։
— Ինձ համար մեկ է,
Ով կուզի լինի,
Մի՞թե դու չունիս
Քավոր, խնամի։

Մի խոսքով, նա ձեր հիմար ցեղիցն է։ Դուք, ձեր շները, ձեր հովիվները, ինձ չսիրելով, իմ չարն ուզելով.

Ծրր որ կարենաք,
Միշտ վնաս կըտաք։
Այդ մեղքի համար
Ես հիմա պիտեմ,
Թե քեզ ինչ կանեմ...

— Ա՜խ, Աստված իմ, Աստված,— գառն աղաղակեց,— ի՞նչ է իմ մեղքը,— սա չհաստատեց... վսեմափա՞յլ տեր...

— Լռիր, անպիտան, ոչխարի լակոտ,
Իմ բան ու գործը խոմ չի կտրվել,
Որ քո հանցանքներդ սկսեմ քննել.
Եկ գնանք անտառ,
Ես այնտեղ կանեմ
քո դատաստանը,—
Ասաց գազանը,
Եվ մեր գառնուկին
Դրավ կռնակին...

1885

ՄԱՐԴՆ ՈՒ ՇԵՐԱՄԸ

(Փոխադրություն)

Շերամը մետաքս էր շինում և գույնզգույն կոկոնները կախ-կախում կաղնու թարմ ոստերից կապած խուրձի վրա, իսկ սարդը տան մի անկյունը քաշվա՛ծ՝ իր ցանցն էր հյուսում և ծիծաղում շերամի վրա, ասելով՝

— Շերամ եղբայր, դու շատ դանադաղ ես տանում քո գործը և շինածդ էլ մի բանի նման չէ. բայց ես՝ նայիր, տես ինչ գեղեցիկ բան եմ շինել, և տես ինչքան երկար են իմ թելերը։

Շերամը պատասխանեց.— Սարդ եղբայր, դու գիտե՞ս, ինչ կնշանակե բարություն։

— Ոչ, չգիտեմ։

— Այդ նրանից է, որ դու չար ես, քո գործն էլ չարության գործ է։ Դու քո երկայն թելերով մի թակարդ ես ցանցում, որ անմիտ ճանճերին որսաս և ծծես նրանց արյունը, իսկ իմ գործը բոլորովին ուրիշ բան է, սարդի բնությունից և խելքից վեր է։

Շերամն ու մեղուն են բարության նշան,
Իսկ սարդն ու բրեդը նշան չարության
Քնքուշ շերամի պես եղիր անարատ,
Թեկուզ չար սարդերը ծիծաղեն վրադ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկավոր է օգնել չքավորներին 3
Միտը և բազեն 5
Աքաղաղ 6
Առավոտը գյուղում 7
Հովվի անկողինը 7
Արեգակ 8
Ճախարակ 9
Սերմնացան 10
Տավարածի ճաշը 11
Պարտիզպան 12
Պառավի հորթը 13
Ամիսներ և չորս եղանակ 13
Ջաղացպանի ննջարանը 14
Մանուշակ 15
Հնձվորներ 15
Ցախավելի գաղտնիքը 17
Պարզամիտ հովիվ 20
Անվնաս հագուստ 21
1884 21
Ձմեռ 22
Արև 25
Գարունքի հաղթությունը 26
Լուսնահաչ 27
Նասրադդին խոջան 27
Հիշողություն 28
1887 29
Մանկական թոթովանք 30
Հոնի կորիզը 31
Մանկության բարեկամներ 32

Մանուշակ 34
Տիկնիկի 35
Առ Ղևոնդ հայր Ալիշան 39
Ուսումնարան 40
Հրավեր 40
Փիղն ու չստիկը 41
Արմիկն ու լուսինը 44
Սագ 44
Կատու 44
Գլո՞ւխ, թե գլխարկ 45
Աղվեսն ու գայլը 46
Անեծք 49
Ատամը փոխած 50
Հովվի սրինգը 51
Միծեռնակի գալուստը 53
Տորք Անգեղ և Հայկանուշ գեղեցիկ 55

ՎԵՊԵՐ

Արություն և Մանվել 87
Երկու քույր 233
Բաժանություն 305

ՀԵՔԻԱԹՆԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Անահիտ 343
Անտառի մանուկը 383
Օձամանուկ և Արևահատ 385
Արևամանուկ 395
Հնարագետ ջուլհակը 419
Աբեգնաղան կամ կախարդական աշխարհ 424
Մանկական աշխարհայացք կամ լուս ու մութ աշխարհները . . . 464
Քիչ է՞լ, քիչ է՞լ 475
Վիշապին հաղթողը 490
Այծատուր 512
Եղեգնուհի 522
Զանգի-Զրանգի 530
Ասլան-Բալա 539
Մանուկ-խան 551
Կախարդական պատկեր 557
Հազարան բուլբուլ 561
Խիզախը կամ Աներկյուղը 590
Վաճառականի խիղճը 600

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Ծառերի գանգատը 605
Մեղուն ու աղավնին 606
Ծույլ տղա 607
Գարուն 608
Ամառ 610
Աշունք 613
Այգեքաղ 615
Ձմեռ 618
Թութակն ու սոխակը 619
Երկու այծ 620
Մեր Դուրսունը 620
Մեր կարմիր ձին 627
Գյուլնազ տատի թոռները 630
Գյուլնազ տատի հեքիաթը 631
Մեղուն ու մարդը 633
Մեղուն ու հավը 634
Ոսկի և երկաթ 635
Կենդանիների վեճը 636
Ապագայի համար 637
Մանկական հեքիաթ 637
Խելքն ու բախտը 638
Մայր ու որդի 641
Գանակով 642
Խոզ ու ոչխար 643
Աքլորի հրավերը 644
Ընկերասեր եղջերուները 644
Երկու ձագիկ 644
Արևի հրամանը 645
Խելոք գլուխը 645
Արևի ճառագայթները 646
Մրջյունն ու լուն 647
Աշխատասեր շունը 649
Գայլն ու գառը 650
Մարդն ու շերամը 652

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

Երկեր

ГАЗАРОС АГАЯН

Сочинения

(На армянском языке)

Издательство «Советакан грох».
Ереван, 1979

Հրատ. խմբագիր՝ Լ. Ն. Առազյան
Նկարիչ՝ Մ. Վ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերստուգող սրբագրիչներ՝ Լ. Լ. Սիմոնյան,
Ք. Վ. Բարսեղյան

ИБ № 1956

Հանձնված է շարվածքի 9.10.78։
Ստորագրված է տպագրության 25.03.79։
Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ տպագրական № 1։
Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։
38,13 պայմ. տպ. մամ. 31,3 հրատ. մամ.։
Տպաքանակ՝ 51000։ Պատվեր՝ 2289։ Գինը՝ 2 ռ. 90 կ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.
Ереван — 1979

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.